



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ



## ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ  
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ**



**ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

**ԵՐԵՎԱՆ 2019**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 14

ԲԱԺԻՆ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՍՏՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ..... 16

ԳԼՈՒԽ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ..... 16

ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ.. 30

ԳԼՈՒԽ 3. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ..... 33

ԲԱԺԻՆ 2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... 49

ԲԱԺԻՆ 3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ..... 55

ԳԼՈՒԽ 1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ..... 55

1. Կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու հնարավորության սահմանափակումներ..... 55

1.1 Կենսաթոշակ նշանակելն արտոնյալ պայմաններով ..... 55

1.2 Մասնակի կենսաթոշակ նշանակելը..... 57

1.3 Երկարամյա ծառայության կենսաթոշակ ..... 63

1.4 Կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելը..... 65

1.5 Կենսաթոշակատուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի վճարումը ..... 68

1.6 Երեխայի ծննդյան միանվագ նպաստը ..... 70

1.7 ԱՊՀ երկրներում զինվորական կենսաթոշակ ստանալու հնարավորության բացակայությունը ..... 75

1.8 Միջպետական համաձայնագրի բացակայության պատճառով կենսաթոշակի ստացման անհնարինություն..... 76

1.9 Կենսաթոշակատուի իրավունքների խախտման այլ դեպքեր..... 77

1.10 Աշխատանքային ստաժի հաշվարկում..... 80

2. Մոցիլայական աջակցության իրավունք ..... 89

2.1 Ընտանիքների անապահովության գնահատումը..... 89

2.2 Վարկային բյուրոյից տեղեկանքի ստացում ..... 92

2.3 Նպաստի իրավունքից օգտվելիս գազի և էլեկտրաէներգիայի սահմանված չափաքանակն անցնելը ..... 94

2.4 Ավանդների փոխհատուցում ..... 98

3. Մոցիլայական ապահովության իրավունքն աշխատավայրում դժբախտ պատահարների, հիվանդության դեպքում ..... 100

<b>ԳԼՈՒԽ 2. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ</b> .....	<b>102</b>
1. Պետության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու արդյունքում սեփականության իրավունքի սահմանափակելը .....	102
2. 4-րդ աստիճանի վթարային սահմանամերձ բնակելի տների բնակիչներին փոխհատուցում չտրամադրելը .....	106
3. «Դալմայի» այգիների նախկին հողօգտագործողների օտարված հողատարածքների դիմաց փոխհատուցում չտրամադրելը .....	109
4. Ինքնակամ շինարարության շուրջ ծագած ոչ պատշաճ վարչարարություն իրականացնելը .....	111
5. Բազմաբնակարան շենքերում պարտադիր նորմերը չպահպանելը .....	115
6. Կոռպերատիվ հիմունքներով բազմաբնակարան շենք կառուցելու նպատակով կանխավճարային մուծումներ կատարելու և շենքերի կիսակառույց մնալու հետևանքով բնակարաններով չապահովելը .....	116
7. Հյուսիս-հարավ ավտոմայրուղու կառուցման հետևանքով սեփականությունից անարգել օգտվել չկարողանալը .....	117
8. Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին բնակարան չհատկացնելը .....	119
<b>ԳԼՈՒԽ 3. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ</b> .....	<b>121</b>
1. Աշխատանքային իրավունքների և օրենսդրության նկատմամբ պետական հսկողություն իրականացնող արտադատական մարմնի բացակայությունը և աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկման պակասը .....	121
2. Աշխատանքային իրավունքների ոտնահարման դեպքեր .....	124
3. Գործադուլի իրավունքի սահմանափակումը .....	130
4. Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության բավարար չափանիշների բացակայություն .....	132
5. Ոստիկանության ծառայողի նախաձեռնությամբ ոստիկանությունում ծառայությունից ազատվելու և նոր աշխատանքի անցնելու հնարավորության սահմանափակում .....	134
<b>ԳԼՈՒԽ 4. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ</b> .....	<b>136</b>
1. Կրթության իրավունքը նախադպրոցական կրթական հաստատություններում .....	136
2. Կրթության իրավունքի իրականացման խոչընդոտ հանդիսացող համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների վճարովիության հարցը .....	138
3. Կրթության իրավունքի իրացումը հանրակրթական ուսումնական հաստատություն երեխային ընդունելիս .....	139
4. Հանրակրթական ուսումնական հաստատություններում դասագրքերի օգտագործման համար ներդրումային գումարների գանձումը .....	140
5. Կրթության իրավունքի սահմանափակումը՝ կրթությունից դուրս մնալու հետևանքով .....	142
6. Ներառական և հատուկ կրթական ուսումնական հաստատություններում դասագրքերի հասանելիությունը .....	145
7. Կրթության իրավունքի իրացման սահմանափակումներ հանրակրթական ուսումնական հաստատություններում դրամահավաքի և այլ անօրինական գործողությունների պատճառով .....	147



8. Կրթության իրավունքի իրացման սահմանափակումները՝ կապված նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային և գույքային պայմանների, ինչպես նաև ջեռուցման հետ.....	148
9. Ջրի և սանիտացիայի հասանելիությունը նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում.....	151
10. Կրթության իրավունքի իրացման սահմանափակումները՝ կապված հանրակրթական ուսումնական հաստատություններում սննդի անվտանգության ապահովման հետ.....	156
11. Մտքի, խղճի և կրոնի ազատությունը հանրակրթական ուսումնական հաստատություններում.....	158
12. Կրթության իրավունքի իրացման սահմանափակումները՝ կապված բարձրագույն ուսումնական հաստատություններում (ԲՈՒՀ) ուսանողական խորհուրդների քաղաքականացվածության հետ.....	158
<b>ԳԼՈՒԽ 5. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ.....</b>	<b>161</b>
1. Անվճար բժշկական օգնության և սպասարկման կարգավորումներն օրենքով չնախատեսելը.....	161
2. Խտրական վերաբերմունքը պացիենտների նկատմամբ.....	163
3. Պալիատիվ բուժօգնությունը.....	164
4. Բժշկական գաղտնիքի պահպանումը.....	167
5. Ֆիզիկական անձի՝ փոստային ծառայության միջոցով սեփական օգտագործման համար այլ երկրից դեղեր ստանալը.....	169
6. Պետական պատվերի շրջանակներում սիրտ-անոթային վիրաբուժական բժշկական օգնություն.....	170
7. Մտումատուրգիական բժշկական օգնության բավարար չտրամադրում պետական պատվերի շրջանակներում.....	172
8. Մարդու առողջության պահպանման իրավունքի սահմանափակումը պետության կողմից երաշխավորված արտոնյալ պայմաններով իրականացվող բժշկական օգնության մասին իրազեկման պակասի, չարորակ նորագոյացություններով հիվանդների թերի կամ անբավարար հետազոտության, բժշկական օգնության և սպասարկման խնդիրների հետևանքով.....	174
9. Պացիենտին դեղորայքով չապահովելը, ՀՀ հիմնական դեղերի ցանկն ընդլայնելը, պետպատվերի շրջանակներում ձեռքբերվող դեղերի ոչ պատշաճ որակը.....	176
10. Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող մարդկանց անհրաժեշտ դեղերի ոչ բավարար հասանելիությունը.....	178
11. Բժշկական հաստատությունում տրամադրված պետական պատվերի միջոցների ոչ բավարար լինելը, հիվանդասենյակների անվճար չտրամադրումը, հիվանդանոցային պայմաններով բուժօգնություն ստանալիս դեղերով ամբողջովին չապահովումը.....	179
<b>ԳԼՈՒԽ 6. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ.....</b>	<b>181</b>
1. Հարկային օրենսդրության հակասահմանադրական կարգավորման հետևանքով գործարարների սեփականության իրավունքների իրացման սահմանափակումը.....	181
2. Ֆիզիկական անձանցից անձնական օգտագործման գույքն օտարելու դեպքում եկամտահարկի գանձումը.....	183
3. Մաքսակետերում գոյացող հերթերը.....	187

4. ՀՀ ԿԵ պետական եկամուտների կոմիտեի հեռախոսագանգերի կենտրոնի շուրջօրյա չգործելը .....	187
5. Մտուգումների գործընթացի թափանցիկության ապահովումը.....	189
6. Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կանոնները խախտելու համար կիրառվող տուգանքների անհամաչափությունը .....	191
7. Բացօթյա, շրջիկ և շրջածախ առևտրի կազմակերպում.....	194
8. Ապրանքի մաքսագերծումը գործարքի գնի մերժողով.....	197
<b>ԲԱԺԻՆ 4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ.....</b>	<b>199</b>
1. Քիմիական նյութերի և թափոնների անվտանգ հեռացումն ու ոչնչացումը. արտադատական մարմնի ստեղծում.....	199
2. Շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ հանրային իրազեկման և հանրության պատշաճ ներգրավվածության ապահովումը .....	201
3. Փոքր ՀԷԿ-երի կառուցմանը զուգահեռ՝ ջրային ռեսուրսների գերօգտագործումը. գետային էկոհամակարգեր.....	202
4. Ամուլսարի հանքավայրի շինարարություն և շահագործում.....	204
<b>ԲԱԺԻՆ 5. ՊԱՏՇԱՃ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ.....</b>	<b>208</b>
1. Վարչական մարմիններին օրենքով վերապահված հայեցողական լիազորությունները չարաշահելը.....	208
2. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կայացրած որոշումներն օրենքով սահմանված կարգով քաղաքացիներին չձանուցելը.....	211
3. Կատարողական վարույթի շրջանակներում կատարողական գործողությունները պատշաճ ժամկետներում չիրականացնելը.....	216
4. Դատական ակտը պետական իրավասու մարմինների կողմից չկատարելը.....	219
5. Պետական մեկ մարմնի՝ մեկ այլ մարմին ուղարկված հարցումներին ի պատասխան սխալ տեղեկությունների ներկայացման հետևանքով պատշաճ վարչարարության իրավունքի խախտում.....	221
6. Ոչ պատշաճ վարչարարության հետևանքով վարչական ակտի բողոքարկման հնարավորության սահմանափակումը .....	221
7. Պարտապանների գույքի և դրամական միջոցների վրա սահմանվածից ավելի չափերով բռնագանձում տարածելը .....	223
8. Կատարողական թերթով նշված գումարն ամբողջությամբ մարելուց հետո կատարողական վարույթը չկարճելը և արգելանքները չվերացնելը.....	225
9. Փոքր (կամ նվազ) գումարների բռնագանձման կատարողական վարույթներով պարտապանի ողջ շարժական կամ անշարժ գույքն իրացնելը.....	227
10. Իրավահաջորդներին կատարողական վարույթի մասնակից դարձնելու ընթացակարգերի բացակայությունը.....	228
11. Բռնագանձման ոչ ենթակա գույքի վրա բռնագանձում տարածելը .....	229
12. Ներխուժումը կանխելիս կամ վերացնելիս ՀՀ ոստիկանությանը վերապահված լիազորությունների իրականացումը դատական վեճի առկայության պայմաններում .....	234
<b>ԲԱԺԻՆ 6. ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ.....</b>	<b>238</b>
1. Ազգային ժողովի ընտրություններ.....	240

2. Երևանի ավագանու ընտրություններ	245
3. Համայնքների ղեկավարների արտահերթ ընտրություններ	250
4. 2017 թվականի տարեկան հաղորդման «Ընտրական իրավունք» բաժնում ներկայացված դեպքերի հետագա ընթացքը	251

**ԲԱԺԻՆ 7. ԿԱՐՕԻՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ254**

1. Տեղեկատվության ազատությունը. օրենսդրություն և իրավակիրառ պրակտիկա	254
2. Էրոտիկ կադրերով կամ բռնություն պարունակող, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների ցուցադրումը ցերեկային ժամերին	255
3. Հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ հեռարձակումների եթերաժամն ազգային փոքրամասնությունների լեզուներով	257
4. Սոցիալական ցանցերում վիրավորանքի, արժանապատվությունը վիրավորող ու ասելության խոսքը	258

**ԲԱԺԻՆ 8. ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ. 259**

1. Անմեղության կանխավարկածի պահպանումը հանցավորության դեմ պայքարում	259
2. Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալների օգտագործումը և դրանց չարաշահման վտանգը քրեական դատավարությունում	263
3. Քրեական գործի շրջանակներում մեղադրյալին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա դրվող կալանքի պրակտիկան	266
4. Մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման գործնական խնդիրներ	268
5. Կալանավորված անձին մերձավոր ազգականների, այդ թվում՝ ընտանիքի անդամների և օրինական ներկայացուցչի հետ տեսակցություններն ու հեռախոսային խոսակցություններն արգելելու պրակտիկան	270
6. Բացատրություն տալիս անձի իրավունքների երաշխավորման և գործնական ապահովումը	274
7. «Փաստացի քրեական հետապնդումից» անձի պաշտպանության օրենսդրական և գործնական երաշխիքները	278
8. Մտորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառման շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը վերցնելը և նրա ազատ տեղաշարժման իրավունքի սահմանափակման ոչ իրավաչափ պրակտիկան	281
9. Քրեական վարույթի շրջանակներում վկայի և տուժողի, ինչպես նաև դատավարության մասնակից չհանդիսացող անձանց անձնագրերը վերցնելը և նրանց նկատմամբ հանրապետությունից դուրս գալու արգելք սահմանելու ոչ իրավակիրառ պրակտիկան	286
10. Հանցագործությունների վերաբերյալ ֆիզիկական անձանց հաղորդումները չքննարկելու և հաղորդումն ընդունող մարմնի հայեցողության պրակտիկան	288
11. Քրեական գործով վարույթի շրջանակներում անձի ոչ պատշաճ ծանուցված լինելու և դրանով պայմանավորված՝ բերման ենթարկելու ոչ իրավաչափությունը	291
12. Ազատությունից զրկելիս անձի իրավունքների երաշխավորումը և գործնական ապահովումը	294
13. Ազատությունից զրկված անձի՝ փաստաբանի մատչելիության իրավունքի ապահովումը և փաստաբանների մասնագիտական գործունեության երաշխիքները	298

14. Քրեական գործով վարույթի շրջանակներում որպես իրեղեն ապացույց ճանաչված անձի սեփականությանն անհամաչափ միջամտությունը .....	301
15. Քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման պատճենը վարույթն իրականացնող մարմնի կողմից չտրամադրելը .....	304
16. Քրեական գործերի քննության ողջամիտ ժամկետի պահպանումը: Դատարանակազմական և դատավարական կանոնակարգումների լիարժեքությունը.....	305
17. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու պրակտիկան .....	312
18. Հանրային վստահության հատուկ բաղադրիչ ունեցող քրեական գործերով վարույթներ .....	316

**ԲԱԺԻՆ 9. 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼ-ՄԱՅԻՍ ԱՄԻՍՆԵՐԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ .....**

<b>1. 2018 թվականի ապրիլին տեղի ունեցած հավաքների շուրջօրյա մշտադիտարկումը. աշխատանքի հատուկ մեթոդաբանությունն ու կատարված աշխատանքները .....</b>	<b>330</b>
<b>2. 2018 թվականի ապրիլյան հավաքների մասնակից՝ ազատությունից զրկված անձանց իրավունքների երաշխավորումը: Խախտումների շարունակականությունն ու համակարգային բնույթը. օրենսդրական և գործնական խնդիրներ .....</b>	<b>332</b>
<b>3. Ոստիկանությանը չպատկանող տրանսպորտային միջոցներով, առանց համազգեստի կամ տարբերանշանի Ոստիկանության ծառայողների կողմից անձանց բերման ենթարկելու կամ ձերբակալելու խնդրահարույց պրակտիկան. իշխանության ներկայացուցչի գործողությունների անորոշությունն ու անկանխատեսելիությունը իրավունքների սահմանափակման ենթարկվող անձի ընկալմամբ.....</b>	<b>347</b>
<b>4. Վարչական ձերբակալման՝ օրենքով նախատեսված առավելագույն երեք ժամից ավել պահելը: Ձերբակալման ընթացակարգի պատշաճ արձանագրման հետ կապված խնդիրներ .....</b>	<b>352</b>
<b>5. Վարչական ձերբակալման կամ բերման ենթարկելու ընթացքում անձանց լուսանկարելու, մատնադրոշմներ վերցնելու, անձնական իրեր խուզարկելու պրակտիկայի իրավաչափությունը. իրավունքների սահմանափակման համաչափության հետ կապված խնդիրներ.....</b>	<b>354</b>
<b>6. Ազատությունից զրկված անձանց նվազագույն իրավունքների երաշխավորման ձախողումը՝ որպես զանգվածային ձերբակալումների և անհատական մոտեցում չցուցաբերելու հետևանք .....</b>	<b>358</b>
<b>7. Անչափահասներին բերման ենթարկելու կամ ձերբակալելու ընթացակարգերի առանձնահատկությունները: Ոստիկանության գործողությունների համապատասխանությունը միջազգային չափանիշներին.....</b>	<b>359</b>
<b>8. Վարչական իրավախախտման վարույթի շրջանակում հավաքի մասնակիցներին առանց իրավաչափ նպատակի ազատությունից զրկելու պրակտիկան .....</b>	<b>363</b>
<b>9. Վարչական իրավախախտում կատարելու հիմքով ազատությունից զրկված անձի նկատմամբ քրեական հետապնդման իրականացումը: Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ավարտից հետո անձին քրեական հետապնդման մարմնին ներկայացնելու և հարցաքննելու երաշխիքների չպահպանումը.....</b>	<b>365</b>
<b>10. Անձանց տրանսպորտային միջոցները Ոստիկանության պահպանվող հատուկ տարածք տեղափոխելու իրավաչափությունը .....</b>	<b>367</b>

11. Հավաքների ազատության իրավունքի իրավաչափ շրջանակները և այլոց իրավունքների հետ հավասարակշռման անհրաժեշտությունը .....	370
12. Առանձին դեպքերում հրահրումները ոստիկանության ծառայողների և հավաքի մասնակիցների միջև .....	381
13. Ոստիկանության կողմից հատուկ միջոցների կիրառման իրավաչափությունը. միջազգային և ներպետական չափանիշների պահպանման հետ կապված խնդիրներ.....	387
14. Ոստիկանության գործողությունների իրավաչափությունը՝ կապված հավաքի կազմակերպիչներին հավաքի անցկացման վայրից հեռացնելու և ազատությունից զրկելու հետ .....	392
15. Լրագրողների անխոչընդոտ գործունեության երաշխավորումը. արձանագրված խնդիրները .....	397
16. Ապրիլյան հավաքների ընթացքում արտահայտվելու ազատության չարաշահումները սոցիալական ցանցերում: Ատելության խոսք և անհանդուրժողականություն.....	401
17. Միջազգային գնահատականները Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքին	405
18. Մարդու իրավունքների պաշտպանի իրավական գնահատականներն ու առաջարկությունները 2018 թվականի ապրիլյան հավաքների ընթացքում մարդու իրավունքների և ազատությունների պահպանման վիճակի վերաբերյալ .....	407

**ԲԱԺԻՆ 10. ԱՅԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ..... 411**

1. Համաներման գործընթացն ու Մարդու իրավունքների պաշտպանի դիմումը Մահմանադրական դատարան.....	411
2. Դատարան ներկայացվող աժանցյալ և հիմնական պահանջների ընդդատությունը և փոխկապակցվածությունը.....	413
3. Աշխատավարձի նկատմամբ սնանկության վարույթում բռնագանձում տարածելու, սնանկության կառավարչի կողմի սնանկության վարույթի շրջանակներում պարտապանի գրություններին կամ հարցումներին պատասխանելու, ինչպես նաև սնանկության գործերով վարույթի հետ կապված այլ օրենսդրական խնդիրներ.....	416
4. Ճանապարհների անբարեկարգություն.....	418
5. Տրանսպորտի գերծանրաբեռնվածություն, սպասարկման որակ.....	420
6. Խտրականություն սեռական կողմնորոշման հիմքով.....	423
7. Արտաքին լուսավորությամբ ապահովելու անհրաժեշտություն.....	425
8. Ժամանակավոր-սեզոնային ծառայություն կազմակերպելու ընթացքում հարակից շենքերի բնակիչների հետ հարաբերվելու համակեցության կանոնների պահպանում.....	426
9. Մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումներ կազմակերպելը.....	428
10. Պետության կողմից երաշխավորված անվճար ախտաբանաանատոմիական հերձման իրականացման խոչընդոտներ.....	429
11. Ախտաբանաանատոմիական հերձման իրականացում պարտադրելը.....	430
12. Ճանապարհային երթևեկության կանոնի խախտման դեպքում տուգանքը տրանսպորտային միջոցի սեփականատիրոջն ուղարկելը.....	432
13. Աղբահանության գործընթացի ոչ պատշաճ իրականացում.....	433
14. Թափառող շների վնասագերծման և ստերիլիզացման խնդիր.....	435

**ԲԱԺԻՆ 11. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՅՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ..... 437**

1. Ինտերնետ շահումով խաղերի և վիճակախաղերի գովազդի սահմանափակումներ.....	437
2. Հեռուստատեսությամբ և ռադիոյով հեռարձակվող շահումով խաղերի վերաբերյալ՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև հարակից այլ օրենքներով կարգավորման բացակայություն ..... 437	437
3. Ֆիզիկական ներգործության միջոցով զազահաշվիչի խափանման կամ վնասման դեպքում ստանց մեղքի ապացուցման բաժանորդին պատասխանատվության ենթարկելը.....	438
4. Ջրամատակարարման ընդհատումներ.....	439
5. Մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի չվճարման դեպքում իրականացվող ջրանջատումների դեպքում ջրի նվազագույն քանակով չապահովելը.....	440
6. Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման կանոնների խախտման հիմքով վերահաշվարկ կատարելը.....	446

**ԲԱԺԻՆ 12. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ..... 448**

**ԳԼՈՒԽ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ..... 449**

1. Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության անկախ մեխանիզմ.....	449
2. Հանրային մարմինների և քաղաքացիական հասարակության հետ զինված ուժերում մարդու իրավունքների հարցերով համագործակցությունը.....	451
3. Միջազգային համագործակցությունը.....	453

**ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ..... 455**

1. Պարտադիր զինվորական ծառայության ներկայանալու համար գորակոչիկներին ծանուցելու գործընթացը.....	455
2. Զինվորական հաշվառման փաստաթղթեր ստանալու իրավունքը.....	456
3. Զինվորական գրքույկի պատշաճ լրացումը.....	457

**ԳԼՈՒԽ 3. ԶԻՆԱՊԱՐՏ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՊԱՏՇԱՃ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ..... 460**

1. Առողջական վիճակի պատշաճ բժշկական հետազոտության և փորձաքննության խնդիրները.....	460
2. Մի շարք հիվանդություններով զինվորական ծառայությանը սահմանափակումով պիտանի ճանաչված զինապարտների տարկետման իրավունքը.....	464
3. Զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկի վերանայում.....	465
4. Բժշկական և ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովների հայեցողության սահմանը.....	467
5. Բժշկական փաստաթղթերը ստանալու իրավունքը.....	470

**ԳԼՈՒԽ 4. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ..... 472**

ԳԼՈՒԽ 5. ՊԱՏՇԱՃ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ.....	477
1. Առողջության պահպանումը զինվորական ծառայության ընթացքում.....	477
2. Զինվորական ծառայության ավարտից հետո բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք.....	480
3. Զինվորական ծառայության ընթացքում առողջական վիճակին հակացուցված պայմանները պահպանելու իրավունք.....	481
ԳԼՈՒԽ 6. ԶԻՆԱՊԱՐՏ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՁԱԿՎԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ.....	483
1. Պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու իրավունքը.....	483
2. Պլանային փոխարինման կարգով ծառայության նոր վայր տեղափոխության իրավունք.....	486
3. Զինվորական ծառայությունից արձակվելու իրավունքը.....	488
4. Զինծառայողների իրավունքների պաշտպանությունը գործատուի նախաձեռնությամբ պայմանագիրը լուծելիս.....	490
ԳԼՈՒԽ 7. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ.....	495
1. Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես կարգապահական վարույթի մասնակիցների բողոքներ քննող անկախ մեխանիզմ.....	495
2. Կրկնակի պատասխանատվության հարցը կարգապահական և քրեական վարույթներում.....	497
3. «Հրաման չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը» կարգապահական տույժի կիրառման պրակտիկան.....	500
4. Վարժական հավաքներից խուսափելու համար սահմանված պատասխանատվությունը.....	504
5. Մշտական տեղակայման գորամասից այլ գորամաս տեղափոխելու հետ կապված պրակտիկայի որոշ հարցեր.....	505
ԳԼՈՒԽ 8. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	506
1. Հայաստանի Հանրապետության զինված ուժերում մահվան և ինքնավնասման դեպքերը.....	506
2. Հայաստանի Հանրապետության զինված ուժերում բռնության դեպքեր.....	509
ԳԼՈՒԽ 9. ԿԱՆԱՅՔ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ.....	511
1. Կանանց ընդհանուր վիճակը ՀՀ զինված ուժերում.....	511
2. Զինված ուժերում կանանց իրավունքների օրենսդրական երաշխիքները.....	512
3. Զինված ուժերում կանանց ցածր ներգրավվածությունը և առաջխաղացման խոչընդոտները.....	514
ԳԼՈՒԽ 10. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	517
1. Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովությունը.....	517
2. Զինծառայողների կենսաթոշակային իրավունքի ապահովումը.....	523



3. Պարզևավճար ստանալու իրավունք .....	532
4. Մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տրամադրելու հետ կապված խնդիրներ.....	535
5. Զինձառայողներին և նրանց ընտանիքների անդամների ոչ ֆինանսական բնույթի արտոնություններ .....	539
<b>ԲԱԺԻՆ 13. ԱՌԱՆՁԻՆ ԽՈՒՄԲ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ.....</b>	<b>542</b>
<b>ԳԼՈՒԽ 1. ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ.....</b>	<b>542</b>
1. Կանանց նկատմամբ բռնություն.....	544
1.1 Ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ ճշգրիտ վիճակագրական տվյալների բացակայություն .....	546
1.2 Ընտանիքում բռնության դեմ պայքարի ոլորտի օրենսդրական կարգավորման խնդիրներ.....	548
1.3 Ծառայությունների, ինչպես նաև պետական մարմինների միջև համագործակցության բացակայություն .....	552
1.4 Կարծրատիպեր, իրավագիտակցության ցածր մակարդակ և անվստահություն պետական մարմինների նկատմամբ.....	558
1.5 Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց անբավարար մասնագիտական պատրաստվածությունը և իրազեկման պակասը .....	560
2. Թրաֆիքինգ և շահագործում.....	561
3. Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումներ .....	563
4. Կանանց մասնակցությունը քաղաքական և հասարակական կյանքին.....	566
5. Առողջության պահպանման իրավունք.....	568
6. Աշխատանքային իրավունքներ.....	569
<b>ԳԼՈՒԽ 2. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ .....</b>	<b>575</b>
1. Հասարակությունում առկա կարծրատիպեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ.....	576
2. Հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների պաշտպանության իրավական համակարգ.....	578
3. Ֆիզիկական միջավայրի մատչելիություն.....	580
4. Փոխադրամիջոցների մատչելիություն.....	582
5. Տեղեկությունների և հաղորդակցության մատչելիություն .....	585
6. Մասնակցությունը մշակութային կյանքին, հանգստին, ժամանցային ու սպորտային միջոցառումներին.....	588
7. Կրթության իրավունք.....	591
8. Առողջապահական ծառայությունների մատչելիություն.....	597
9. Աշխատանք և զբաղվածություն.....	598
10. Հաշմանդամություն ունեցող երեխաների՝ ընտանեկան միջավայրում ապրելու իրավունք .....	600
11. Մասնագիտացված հատուկ մանկատների հաշմանդամություն ունեցող սաների համար համապատասխան կացարանների և խնամքի հաստատությունների բացակայությունը ....	601
12. Քաղաքական իրավունքներ.....	603

13. Հաշմանդամություն ունեցող կանայք .....	606
14. Հաշմանդամության սահմանման ոլորտում առկա խնդիրներ .....	607
15. Զինվորական անժամկետ հաշմանդամություն ունեցող մարդկանց հսկողական կարգով վերափորձաքննության ենթարկելը և անժամկետ սահմանված հաշմանդամությունը վերացնելը .....	614
<b>ԳԼՈՒԽ 3. ԵՐԵՒԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ .....</b>	<b>617</b>
1. Մշտադիտարկման այցեր երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ .....	618
1.1 Մեկ հաստատությունում տարբեր խնդիրներ ունեցող երեխաների գտնվելը .....	619
1.2 Ընդունելության համար օրենսդրությամբ անհրաժեշտ համարվող փաստաթղթերի ոչ լիարժեք լինելը .....	621
1.3 Շենքային և բնակության պայմանները .....	624
1.4 Բժշկական օգնություն և սպասարկում .....	631
1.5 Սննդի կազմակերպում .....	635
1.6 Վերաբերմունքը հաստատությունների սաների նկատմամբ .....	637
1.7 Հաստատության սաների բողոք ներկայացնելու իրավունքի ապահովումը .....	642
2. Երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող 18 տարեկանը լրացածների և շրջանավարտների հիմնահարցերը .....	644
3. Մանկական աղքատության հիմնախնդիրը .....	647
4. Երեխայի նկատմամբ վատ վերաբերմունքը, այդ թվում՝ բռնությունը .....	650
5. Երեխայի ինքնության իրավունքը .....	656
6. Խնամակալության և հոգաբարձության մարմինների (հանձնաժողովների) գործունեություն .....	659
7. Թափառաշրջիկ ու մուրացիկ երեխաներին հայտնաբերելը և աջակցություն տրամադրելը .....	661
<b>ԳԼՈՒԽ 4. ՓԱԽՍՏԱԿԱՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ .....</b>	<b>663</b>
1. Մահապատժի ենթարկվելու վտանգի առկայության պարագայում անձի արտաքսման կամ հանձման օրենսդրական արգելքի բացակայությունը .....	668
2. Փախստականի կարգավիճակի համար անհրաժեշտ չափանիշներին չբավարարող, սակայն չվերադարձելիության սկզբունքի պաշտպանությունից օգտվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար օրենսդրությամբ հաստուկ կարգավիճակի բացակայություն .....	669
3. Միասնական ապաստանի հայց ներկայացրած անձի փախստականի կարգավիճակը չեղյալ հայտարարելու և դադարելու դեպքում նրա ընտանիքի անդամների կամ խնամարկյալների կարգավիճակի դադարումը .....	671
4. Ապաստանի հայցեր ընդունող պետական մարմիններում հարցազրույցի ընթացքում անվճար թարգմանության բացակայություն .....	672
5. Ապաստան հայցող անձանց բացակայությունն առանց աշխատանքի թույլտվության աշխատելու իրավունք ունեցող անձանց ցանկում .....	673
6. Կացարանում բնակվելու իրավունք ստացած ապաստան հայցող անձանց ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու լիազորությունն օրենքով նախատեսված չլինելը .....	673
7. Բնակության և կենսաապահովման պայմաններին առնչվող խնդիրներ. Կացարանի գերբնակեցում .....	674

8. Կրոնի հիմքով հատուկ սննդի բացակայություն.....	676
9. Կացարանի սանիտարահիգիենիկ պայմանները.....	677
10. Փախստականների բնակապահովում.....	677
<b>ԳԼՈՒԽ 5. ՏԱՐԵՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ.....</b>	<b>680</b>
1. Օրենսդրությամբ տարեցների իրավունքների ճանաչման և հատուկ կարգավորումների բացակայությունը.....	680
2. Տարեցների իրավունքների պաշտպանության համար նախատեսված սոցիալական պաշտպանության հաստատություններ.....	683
2.1 Տարեցների բնակության պայմանները տուն-ինտերնատներում.....	684
2.2 Տարեցների անձնական խնամքը տուն-ինտերնատներում.....	687
2.3 Տարեցների սննդի կազմակերպումը, բժշկական օգնությունն ու սպասարկումը տուն-ինտերնատներում.....	689
2.4 Մշակութային կյանքին մասնակցությունը, զբաղվածությունը, կապն արտաքին աշխարհի հետ, ինչպես նաև բողոք ներկայացնելու իրավունքը.....	692
2.5 Խտրականությունը և վատ վերաբերմունքը, այդ թվում՝ բռնությունը տարեցների հանդեպ.....	694
3. Տարեցների եկամուտների պաշտպանությունը.....	696

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը՝ որպես Օմբուդսմանի ազգային ինստիտուտ և ամենաբարձր «A» կարգավիճակ ունեցող հաստատություն, գործում է Փարիզյան և միջազգային սկզբունքներին համապատասխան:

Պաշտպանի ինստիտուտի շարունակական զարգացման մասին են վկայում Պաշտպանին հասցեագրվող բողոքների և դրական լուծում ստացած գործերի աճը, ինչպես նաև միջազգային չափանիշներին համապատասխան օրենսդրական և գործնական երաշխիքները: 2018 թվականին Պաշտպանի ինստիտուտի գործունեությունն իրականացվել է հասարակական կազմակերպությունների, միջազգային գործընկերների և պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության և իրավունքի գերակայության սկզբունքի հիման վրա:

Մարդու իրավունքների պաշտպանն իրականացնում է իրավունքների երաշխավորման ու պաշտպանության սահմանադրական առաքելություն՝ դրանով իսկ նպաստելով երկրի իրավապաշտպան ողջ համակարգի արդյունավետ աշխատանքին: Սա իր հերթին ենթադրում է, որ Պաշտպանի ուշադրության ներքո գտնվող հիմնարար հարցերից են երկրում տեղի ունեցող ժողովրդավարական զարգացումները: Մարդու իրավունքների պաշտպանի այս առաքելությունն իրականացվում է սահմանադրական կարգավիճակի ուժով՝ առաջնորդվելով անաչառ ու ապաքաղաքական աշխատանքի հիմնարար սկզբունքներով:

2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին արձանագրված ժողովրդավարական զարգացումների ընթացքում Հայաստանի քաղաքացին հնարավորություն է ունեցել իր կամքի ազատ իրացման շնորհիվ ապահովել հիմնարար փոփոխություններ, որոնք անմիջականորեն առնչվում են մեզանից յուրաքանչյուրին: Տարին հարուստ էր ընտրական գործընթացներով, որոնք առաջընթաց արձանագրեցին երկրում ժողովրդավարության ամրապնդման հարցում:

Տարվա ընթացքում մեծագույն մարտահրավեր էր ասելության խոսքի աճը և հասարակության բնեռացումը: Մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք հաճախ արվում են առանց այդ հրապարակումների բովանդակությանը ծանոթ լինելու՝ հիմնվելով վերնագրերի վրա կամ միայն հաշվի առնելով հրապարակման հեղինակի անձը: Ընդ որում, ագրեսիվությամբ են առանձնանում առերևույթ կեղծ օգտատերերի գրառումները, որոնց թիվը զգալիորեն ավելացել է: Ժողովրդավարական այդ զարգացումների արդյունքները պետք է ծառայեցնել հանրային իշխանության համակարգն ինստիտուցիոնալ ամուր հիմքերի վրա դնելուն՝ հենվելով քաղաքացիների բարձր վստահության վրա: Քաղաքացիների վստահությունն էլ հենց իշխանության հիմքն է՝ լինելով պետության ամրության հիմնարար գրավականը: Բոլորիս խնդիրն է համատեղ ջանքերով նպաստել այդ վստահության ամրապնդմանն ու ամրության պահպանմանը:

Այս ամենով հանդերձ, երկրում պետք է երաշխավորված լինի պետական իշխանության իրականացումը Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա: Այդ իշխանություններից յուրաքանչյուրը պետք է հարգանքով վերաբերվի մյուսին և առաջնորդվի միայն իրեն վերապահված կարգավիճակի հրամայականով ու սահմաններով: Այս մոտեցումը հնարավորություն կտա բոլոր ջանքերն ուղղել իրավական պետության և ժողովրդավարական զարգացման որակապես նոր փուլի հաստատմանը: Պետք է բացառվի արձանագրված ձեռքբերումներից ցանկացած հետնահանջ:

Թվարկված հիմնարար նպատակները պահանջում են, որպեսզի երկրում տեղի ունեցող յուրաքանչյուր գործընթաց անվերապահ հիմնված լինի իրավունքի գերակայության վրա: Ցանկացած նախաձեռնության հիմքում պետք է լինի մարդու իրավունքը:

Պետք է հարգել այլոց իրավունքներն ու ազատությունները, չպետք է թույլ տալ դրանց ոչ իրավաչափ որևէ միջամտություն: Պետք է հարգանքով վերաբերվել յուրաքանչյուր մարդու արժանապատվությանը. այն անխախտելի է, մեզանից յուրաքանչյուրի իրավունքների և ազատությունների անփոխարինելի հիմքն է: Այս կերպ է ձևավորվում համերաշխությունը հասարակությունում ու ապահովվում փոխադարձ հարգանքի մթնոլորտ:

Երկրի ժողովրդավարական զարգացման հիմնարար ցուցիչներից է խոսքի ազատությունը: Այս բարձր արժեքի պաշտպանությունը բոլորիս պարտականությունն է: Մրա հետ էլ ուղղակիորեն կապվում է այլակարծության խթանումը: Դա մեր երկրին հիմա հատկապես անհրաժեշտ է:

Այս հիմնարար գաղափարները պետք է լինեն նաև Հայաստանի Հանրապետության իրավապաշտպան ողջ համակարգի զարգացման հիմքում:

**ԲԱԺԻՆ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ  
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԻՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

**ԳԼՈՒԽ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՈՐ  
ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ**

Վերջին մի քանի տարիներին Հայաստանի մարդու իրավունքների ազգային հաստատությունը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը<sup>1</sup> մեծ զարգացում ապրեց: Դա մեծամասամբ պայմանավորված էր օրենսդրական փոփոխություններով, ինչպես նաև հետագայում դրանց հիման վրա աշխատանքի նոր ուղղությունների զարգացմամբ:

Մասնավորապես, 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով Պաշտպանին դիմելն առանձին հոդվածով ամրագրվեց իբրև սահմանադրական բացարձակ իրավունք՝ սահմանվելով մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ 2-րդ գլխում: Ավելին, Սահմանադրությամբ սահմանվեց Պաշտպանին վերաբերյալ առանձին գլուխ, որով նախատեսվեցին Պաշտպանի գործառույթներին և լիազորություններին, ընտրությանը, ինչպես նաև գործունեության երաշխիքներին վերաբերող կարգավորումներ: Սահմանադրության փոփոխությունների հիմքով 2016 թվականին ընդունվել և 2017 թվականին ուժի մեջ է մտել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը<sup>2</sup>, որն ավելի բարձր իրավական ուժ ունի քան՝ մյուս օրենքները:

Նշված օրենսդրական փոփոխություններով ընդլայնվեցին Պաշտպանի և նրա աշխատակազմի գործունեության երաշխիքները, ինչպես նաև իրավասության ոլորտները: Օրինակ՝ նախատեսվեց, որ Պաշտպանը, բացի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց դեմ ներկայացված բողոքներից, իրավասու է քննարկել նաև հանրային ծառայության ոլորտում գործող, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պատվիրակած լիազորություններն իրականացնող կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ հարցերը: Ամրագրվեց, որ Պաշտպանը հանդիսանում է «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի՝ 1984 թվականի կոնվենցիայի 2002 թվականի դեկտեմբերի 18-ին ընդունված կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմ, ինչպես նաև «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև երեխաների իրավունքների խախտումների կանխարգելում և պաշտպանություն իրականացնող մարմին: Նշված օրենսդրական փոփոխություններն առավել մանրամասն քննարկվում են Պաշտպանի 2017 թվականի տարեկան հաղորդման մեջ:

Կատարված փոփոխություններից հետո՝ 2018 թվականի հունիսի 13-ին ընդունվել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքը: Դրանով նախատեսվել է, որ Պաշտպանն իրականացնում է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 2006 թվականի

<sup>1</sup> National Human Rights Institution (NHRI) of Armenia

<sup>2</sup> Սույն հաղորդման սույն բաժնում այսուհետ՝ Օրենք:

դեկտեմբերի 13-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների խախտումների կանխարգելում և պաշտպանություն: Նշվածը կարևորվում է հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների արդյունավետ պահպանության, նրանց իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ մեծ թվով անհատական բողոքների ուսումնասիրման, ինչպես նաև համակարգային խնդիրների և կանխարգելիչ գործառույթների արդյունավետ լուծման տեսանկյունից: Օրենքի նախագծով առանձին հոդվածով նախատեսվել են նաև Պաշտպանի լիազորությունները հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների պաշտպանության հարցում:

Պաշտպանին հասցեագրված անհատական դիմումների քննարկման ընթացքում արձանագրված գործնական խնդիրների հաշվառմամբ, քննարկվող փոփոխություններով առաջարկվել են հատուկ խմբերի անձանց վերաբերյալ դիմումների քննարկման օրենսդրական լուծումներ: Մասնավորապես, այլ անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով Պաշտպանին դիմելու իրավունք ունեցող անձանց շարքում ամրագրվել են նաև ազատությունից զրկված անձանց և զինծառայողների մերձավոր ազգականներին: Այսպիսի լուծումը թույլ կտա գործնականում իրականացնել նշված խմբերի անձանց իրավունքների առավել արդյունավետ պաշտպանություն՝ ապահովելով նրանց իրավունքների ենթադրյալ խախտումների դեպքում Պաշտպանի աջակցությունը ստանալու հնարավորությունը նաև այն դեպքերում, երբ վերջիններս հնարավորություն չեն ունենա անձամբ դիմելու Պաշտպանին:

## **1. Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության երաշխիքները**

Մինչ անդրադառնալը Պաշտպանի և աշխատակազմի՝ գործունեության հիմնական ուղղություններին և իրավական հիմքերին, անհրաժեշտ է քննարկել ինստիտուտի գործունեության երաշխիքները, որոնք հատկապես ուժեղացել են 2017 թվականին՝ Օրենքի ուժի մեջ մտնելուց հետո: Նախևառաջ, կարևոր էր Օրենքի մակարդակով ամրագրելը, որ Պաշտպանի աշխատակազմում<sup>3</sup> պաշտոն զբաղեցնող անձինք չեն կարող բացատրություն տալ կամ հարցաքննվել Պաշտպանին հասցեագրված դիմումների կամ բողոքների էության կամ դրանց ուսումնասիրությունների արդյունքում Պաշտպանի կայացրած որոշումների վերաբերյալ, ինչպես նաև դրանք այլ անձանց տրամադրել ծանոթացման՝ առանց Պաշտպանի գրավոր համաձայնությամբ: Ընդ որում, այս նույն պահանջը վերաբերում է նաև խոշտանգումների կանխարգելման ազգային մեխանիզմի շրջանակներում Պաշտպանի հետ համատեղ աշխատող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին և անկախ փորձագետներին: Այս նոր լուծումը կարևոր է հատկապես բողոք ներկայացրած անձանց վստահության տեսանկյունից:

Ավելին, ՀՀ քրեական օրենսգրքի 332.1-րդ հոդվածով սահմանվեց առանձին հանցակազմ, որը պատասխանատվություն է նախատեսում Պաշտպանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու, այդ թվում՝ նրա գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու, իսկ 2017 թվականից սկսած՝ նաև Պաշտպանի՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացման հետ կապված՝ նրա կամ նրա որոշմամբ հանդես եկող իրավասու անձի մուտքը ցանկացած վայր չթույլատրելու համար:

Սահմանադրությամբ և դրա հիման վրա ընդունված Օրենքով սահմանվեց Պաշտպանի ֆինանսական անկախության երաշխիքներ: Նախ, Սահմանադրության 193-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Պետությունն ապահովում է Պաշտպանի գործունեության պատշաճ ֆինանսավորումը:

<sup>3</sup> Սույն հաղորդման սույն բաժնում այսուհետ՝ Աշխատակազմ:



Դրանից բացի, յուրաքանչյուր տարի Պաշտպանի և Աշխատակազմի, ինչպես նաև Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի ֆինանսավորման համար **պետական բյուջեով նախատեսված հատկացման չափը չի կարող պակաս լինել նախորդ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացման չափից:**

Պաշտպանի համար նախատեսված երաշխիքներից գատ, օրենսդրությամբ գործում է Աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց և կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետների գործունեության երաշխիքները: Մասնավորապես, Օրենքով սահմանվում է, որ նրանց նկատմամբ որևէ հիմքով քրեական հետապնդում հարուցվելու կամ նրան ազատությունից որևէ կերպ զրկելու դեպքում վարույթն իրականացնող մարմինն այդ մասին պարտավոր է անհապաղ տեղեկացնել Պաշտպանին: Ավելին, ամրագրվում է նաև, որ Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձինք և կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետները կարող են բացատրություն տալ կամ հարցաքննվել Պաշտպանին հասցեագրված դիմումների կամ բողոքների էության կամ դրանց ուսումնասիրությունների արդյունքում Պաշտպանի կայացրած որոշումների վերաբերյալ՝ միայն Պաշտպանի գրավոր համաձայնությամբ:

Նշված երաշխիքներից գատ ներպետական օրենսդրությամբ նախատեսվում են Պաշտպանի և Աշխատակազմի գործունեության այլ երաշխիքներ, որոնք նպաստում են կառույցի լիազորությունների արդյունավետ իրականացմանը:

## **2. Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հիմնական ուղղությունները**

Ինչպես նախորդ տարիներին, 2018 թվականին նույնպես, Աշխատակազմի գործունեությունը բաղկացած է երկու հիմնական ուղղություններից՝ անհատական դեպքերի քննարկում և համակարգային խնդիրների լուծմանն ուղղված քայլեր: Վերջինն իր հերթին հետապնդում է նաև կանխարգելիչ նպատակ՝ բացառելու ապագայում իրավունքների խախտման դեպքերը:

Անհատական դեպքերի վերաբերյալ քննարկումներն իրականացվում են Օրենքով նախատեսված երկու ուղղությամբ՝ բողոքի և սեփական նախաձեռնությամբ հարցի քննարկման ընթացակարգերով: Հատկանշական է, որ չի բացառվում նման դեպքերի ուսումնասիրման ընթացքում բարձրացվեն նաև համակարգային խնդիրներ: Անհատական դեպքերի քննարկման շրջանակում իրականացվում են Օրենքով նախատեսված գործողությունները: Օրինակ՝ պարզաբանումներ են պահանջվում իրավասու պետական մարմիններից և կազմակերպություններից, իրականացվում են հարցերի՝ ներպետական և միջազգային վերաբերելի կարգավորումների վերլուծություններ և այլն: Իրականացված գործողությունները հետապնդում են Պաշտպանի սահմանադրական լիազորության՝ մարդու խախտված իրավունքների և ազատությունների վերականգնման իրականացում: Այս առումով անհրաժեշտ է արձանագրել, որ 2018 թվականի ընթացքում աճել է Պաշտպանին հասցեագրված բողոքների, ինչպես նաև դրական արդյունքով ավարտված գործերի թիվը:

Աշխատակազմի գործունեության երկրորդ հիմնարար ուղղությունը համակարգային խնդիրների վերհանումն ու դրանց լուծման համար անհրաժեշտ ուղիների նախանշումն է: Ինչպես արդեն նշվեց, նման խնդիրների հայտնաբերման հիմնական ուղղություններից է անհատական դիմումների քննարկումը: Այս առումով հատկանշական է, որ խնդրի համակարգային լինելու համար պարտադիր պայման չէ դիմումների մեծ քանակը, դա կարող է արձանագրվել նույնիսկ մեկ դիմումի քննարկման շրջանակում: Օրինակ՝ մարդու իրավունքների և ազատությունների խախտման առկայության մասին արձանագրված որոշումը կարող է նախանշել նաև օրենսդրական խնդիր:

## **2.1 Մարդու իրավունքների պաշտպանությանն ու հասարակության շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված գործողությունները**

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունն իր բնույթով նաև կանխարգելիչ է: Անհատական դիմումներից վերհանված խնդիրներին հաճախ կարիք է լինում ցուցաբերել համակարգային մոտեցում: Այդ առումով Աշխատակազմի գործառույթները կարելի է դասակարգել հետևյալ հիմնական ուղղությունների՝

1. օրենքների և ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակում.
2. օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով Սահմանադրական դատարան դիմումի հասցեագրում.
3. մինչև մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի ընդունումը դրանց վերաբերյալ իրավասու մարմին գրավոր կարծիքների տրամադրում.
4. Սահմանադրական դատարանում քննվող՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին հակասությանը վերաբերող դիմումների վերաբերյալ հատուկ կարծիքների ներկայացում:

Նշված հիմնական ուղղություններով աշխատանքն իրականացվում են Պաշտպանի՝ նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանն առնչվող լիազորության շրջանակում: Սա թույլ է տալիս ոչ միայն նպաստել ներպետական օրենսդրության զարգացմանը, այլ նաև անհատական դիմումներից, մշտադիտարկումներից և այլ աղբյուրներից վերհանված խնդիրների լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկել: Նշվածն իր հերթին Պաշտպանի այս գործառույթը դարձնում է կանխարգելիչ նպատակ հետապնդող:

### **2.1.1 Օրենքների և ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակում**

Աշխատակազմում 2017 թվականից սկսած գործադրվել է նոր պրակտիկա, որը ենթադրում է, որ մարդու իրավունքներին առնչվող համակարգային խնդիրների լուծման ուղղությամբ մշակվում են օրենսդրական նախագծեր, դրանք շրջանառվում են իրավասու պետական մարմինների, ինչպես նաև համապատասխան հասարակական կազմակերպությունների շրջանակներում և ներկայացվում կառավարության և խորհրդարանի քննարկմանը: Այս առումով անհրաժեշտ է կարևորել նաև Ազգային ժողովում Պաշտպանի ներկայացուցչի ինստիտուտի ներդրումը Սահմանադրական օրենքի մակարդակում:

Ստորև ներկայացվում է 2018 թվականին մշակված և շրջանառված նախագծերի հիմնական բովանդակությունը՝ ըստ ոլորտների՝

#### **➤ Ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանության կատարելագործում**

Նախագծերն ուղղված են ազատությունից զրկված անձանց կապի ամրապնդմանը մերձավոր ազգականների հետ, քրեակատարողական հիմնարկում նրանց վիճակի բարելավմանը:

Նախագծերով, մասնավորապես, առաջարկվում է՝

- ազատագրված և կալանավորված անձանց կարճատև և երկարատև տեսակցություններ, ինչպես նաև կարճատև մեկնումներ տրամադրելու հիմքում դնել ոչ թե անձի կատարած հանցագործության ծանրության աստիճանը, այլ հաշվի առնել վերջինիս անհատական վարքագիծը և ռիսկայնությունը,

- կալանավորված անձանց համար նախատեսել երկարատև տեսակցության հնարավորություն,

- մերձավոր ազգականների հետ կապն ապահովելու նպատակով նախատեսել դատապարտյալին քրեակատարողական մեկ հիմնարկից նույն տեսակի մեկ այլ հիմնարկ տեղափոխելու օրենսդրական հիմք,

- առանց խնամքի մնացած երեխա ունեցող դատապարտյալի համար նախատեսել կարճաժամկետ մեկնում տրամադրելու հնարավորություն՝ երեխային մանկատանը կամ ազգականի մոտ տեղավորելու նպատակով,

- քաղաքացիաիրավական գործարքներ կնքելու խնդրանքի հիման վրա վերցված ժամանակավոր վկայականը կամ նույնականացման քարտը տրամադրելու պարտականություն նախատեսել ոչ միայն ազատազրկման դատապարտված, այլ նաև կալանավորված և ձերբակալված անձանց համար,

- վերանայել ցմահ ազատազրկված անձանց անջատ պահելու օրենսդրական կանոնը,

- նախատեսել ստացիոնար բուժման մեջ գտնվելու ընթացքում անձի նկատմամբ կիրառված կարգապահական տույժի հետաձգման օրենսդրական պահանջ:

➤ Կալանավորված անձանց տեսակցությունների և հեռախոսային խոսակցությունների նկատմամբ արգելքի համակարգի բարեփոխում

Աշխատակազմը և Արդարադատության նախարարությունը համատեղ մշակել են օրենսդրական նախագծերի այս փաթեթով առաջարկվում է նախատեսել կալանավորված անձի՝ մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ տեսակցությունն արգելելու հստակ մեխանիզմ՝ մանրամասն օրենսդրական կարգավորման ենթարկելով տեսակցությունների արգելքի հիմքերը, որոշում կայացնելու իրավասություն ունեցող սուբյեկտը, գնահատման ենթակա հանգամանքները, ինչպես նաև խնդրո առարկա սահմանափակման ժամկետի երկարացման, դրա վերանայման, փոփոխման կամ վերացման ընթացակարգեր:

➤ Փաստաբանի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու քրեականացում

Նախագծով առաջարկվում է ընդլայնել փաստաբանի գործունեությանը խոչընդոտելու համար քրեական պատասխանատվության շրջանակները՝ պաշտոնատար անձից բացի որպես հանցակազմի սուբյեկտ ամրագրելով ցանկացած այլ անձի, ով կխոչընդոտի փաստաբանի օրինական գործունեությունը:

Բացի այդ, նախագծով առաջարկվում է առանձին դրույթով պատասխանատվություն նախատեսել փաստաբանի գործունեությունը խոչընդոտելու համար, եթե դա դրսևորվել է իր վստահորդին տեսակցելու նպատակով՝ ազատությունից զրկման ցանկացած վայր փաստաբանի մուտքն ապօրինի չթույլատրելով:

➤ Սահմանադրական դատարանի որոշումներում արձանագրված օրենսդրական բացերի ու թերությունների վերացում

Պաշտպանի և Սահմանադրական դատարանի աշխատակազմերն իրականացրել են ՀՀ սահմանադրական դատարանի 2015-2016 թվականների որոշումների կատարման վիճակի համատեղ ուսումնասիրություն: Այդ ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել Սահմանադրական դատարանի որոշումներ, որոնցում ներկայացված են մարդու իրավունքների ոլորտում օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտության վերաբերյալ իրավական պահանջներ, սակայն դրանք մինչ օրս կատարված չեն: Արդյունքում, մշակվել է օրենսդրական փոփոխությունների նախագիծ՝ ուղղված

Սահմանադրական դատարանի որոշումներում բարձրացված օրենսդրական բացերի ու թերությունների վերացմանը:

➤ *Ինտերնետ շահումով խաղերի և վիճակախաղերի (տոտալիզատոր) գովազդի սահմանափակում*

Նախագծերով առաջարկվում է ինտերնետ շահումով խաղերի և վիճակախաղերի (տոտալիզատոր) գովազդի մանրամասն իրավական կարգավորումներ՝ գովազդի բովանդակության և հեռարձակման սահմանափակումների ամրագրմամբ:

Մասնավորապես, նախագծերով առաջարկվում է հեռուստահաղորդակցության ալիքով վիճակախաղի և ինտերնետ շահումով խաղի, ինչպես նաև դրանց կազմակերպիչների գովազդի հեռարձակումը թույլատրել ժամը 24:00-ից մինչև 06:00-ն ներառյալ: Նախագծով առաջարկվում են նաև վիճակախաղի և ինտերնետ շահումով խաղի գովազդի բովանդակությանն առնչվող արգելքներ, ինչպես նաև ոչ սթափ կամ հոգեճնշող վիճակում խաղալու անթույլատրելիության վերաբերյալ նախագգուշացնող տեղեկատվություն պարունակելու պահանջ:

Նշված նախագծերի փաթեթները և հիմնավորումները ներկայացվել են պաշտոնական շրջանառության ինչպես իրավասու պետական մարմինների, այնպես էլ իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների շրջանում և ՀՀ փաստաբանների պալատ:

➤ *«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև հարակից այլ օրենքներով հեռուստատեսությամբ և ռադիոյով հեռարձակվող շահումով խաղերի կարգավորման բացակայություն*

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև հարակից այլ օրենքներով բացակայում է հեռուստատեսությամբ և ռադիոյով հեռարձակվող շահումով խաղերի հեռարձակման իրավական կարգավորումը, մինչդեռ այդ իրավական բացը գործնականում կարող է դառնալ քաղաքացիների իրավունքների խախտման պատճառ:

Այսպես, «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանվում է շահումով խաղի հասկացությունը: Մինևսյն ժամանակ, «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի գործողությունը չի տարածվում հեռահաղորդակցության որևէ կապի միջոցով շահումով խաղերի կազմակերպման գործունեության վրա, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի: Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ սահմանելով «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի կարգավորումները չեն կարող տարածվել «Օդից փող» հաղորդման վրա: Ավելին, հեռահաղորդակցության ոլորտը կարգավորող օրենսդրության, «Վիճակախաղերի մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքների համապատասխան դրույթների համապարփակ ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ հեռուստատեսությամբ և ռադիոյով հեռարձակվող շահումով խաղերի հեռարձակման և կազմակերպման գործունեությունը ՀՀ օրենսդրությամբ ներկայումս չի կարգավորվում:

Հաշվի առնելով վերոգրյալը պաշտպանի աշխատակազմում մշակվել է օրենքի նախագիծ, որով առաջարկվում է՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը փոփոխել այնպես, որ նման խաղերը հեռարձակել հնարավոր լինի միայն գիշերային ժամերին՝ 24:00-ից մինչև 06:00-ը: Դրանից բացի՝ առաջարկվում է սահմանել, որ հեռուստատեսությամբ կամ ռադիոյով հեռարձակողը պարտավոր է հրապարակել առկա զանգերի ծավալի և միացման հնարավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ողջ եթերի ընթացքում տեղյակ պահել զանգի վճարովի լինելու մասին և, դրա հետ մեկտեղ,

սակագնի վերաբերյալ հավաստի ինֆորմացիան պետք է լինի տեսանելի կամ լսելի: Առաջարկվում է սահմանել նաև նախագրուշացում անչափահասների մասնակցության արգելքի վերաբերյալ:

Նախագիծը ներկայացվել է շրջանառության, շահագրգիռ մարմինների նկատառումների ու առաջարկությունների հիման վրա կազմվել է ամփոփաթերթ, և նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:

➤ Զինվորական կարգապահության ամրապնդման, ինչպես նաև ծառայողական քննության ընթացքում զինծառայողների իրավունքների պաշտպանության ապահովման վերաբերյալ նախագծեր

Զինվորական կարգապահության ամրապնդման, ինչպես նաև ծառայողական քննության ընթացքում զինծառայողների իրավունքների պաշտպանության ապահովման նպատակով դեռևս 2017 թվականին Պաշտպանի աշխատակազմի կողմից մշակվել և շրջանառվել էր «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի

20-ի N 991-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» հրամանի նախագծերը:

Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» Հայաստանի Հանրապետության օրենքում՝

1. առաջարկվել է իրավախախտումը համարել ծանրացող միայն այն դեպքերում, երբ դատվածությունը հանված կամ մարված չէ.

2. կարգապահական տույժի ենթարկվելու մասին հրամանին ծանոթանալու պատշաճ ընթացակարգ և զինծառայողի կողմից այն բողոքարկելու իրավունքի ապահովման նպատակով սահմանել, որ կարգապահական տույժ տալու մասին գրավոր հրամանը և զինծառայողի հաշվառման (ծառայողական) քարտում կատարված գրառումը ստորագրությամբ ներկայացվում է զինծառայողի ծանոթացմանը: Զինծառայողի պահանջի դեպքում նրան տրամադրվում է նաև կարգապահական տույժ տալու մասին գրավոր հրամանի և զինծառայողի հաշվառման (ծառայողական) քարտում կատարված գրառման՝ հրամանատարի կողմից հաստատված պատճենները:

3. ծառայողական քննության ընթացքում զինծառայողների ընթացակարգային իրավունքների պաշտպանության նպատակով առաջարկվել է սահմանել, որ ծառայողական քննություն իրականացնող անձը կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող զինծառայողին գրավոր բացատրում է օրենքով նրան վերապահված իրավունքները և պարտականությունները.

4. բողոքարկման արդյունքում զինծառայողին տրված կարգապահական տույժը հանելու կառուցակարգի հստակեցման նպատակով առաջարկվել է սահմանել, որ բողոքարկման արդյունքներով վերադաս հրամանատարը (պետը) իրավունք ունի գրավոր հրաման ընդունել զինծառայողին տրված կարգապահական տույժը չեղյալ ճանաչելու կամ ուժի մեջ թողնելու մասին:

«Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N 991-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» հրամանում՝

1. առաջարկվել է զինծառայողների կողմից իրավախախտում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գրավոր հաղորդումը նախատեսել որպես ծառայողական քննության անցկացնելու հիմք:

2. առաջարկվել է նաև նշված հրամանով սահմանել ծառայողական քննությունը դադարեցնելու, ծառայողական քննությունը կասեցնելու և վերսկսելու հիմքերը և ընթացակարգը:

Պաշտպանության նախարարությունից տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2019 թվականի 1-ին եռամսյակում նախատեսված է մշակել և ներկայացնել «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ: Միաժամանակ նշվել է, որ ՀՀ պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանում փոփոխություններ չեն կատարվել, քանի որ ծառայողական քննությունների հետ կապված մի շարք հարաբերություններ նախատեսվում է կարգավորել «ՀՀ ԶՈՒ կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրինագծի շրջանակներում:

### **2.1.2 Իրավական ակտերի Սահմանադրության համապատասխանության հարցերով Սահմանադրական դատարան դիմումի հասցեագրում**

Օրենսդրության կատարելագործման սահմանադրական գործառնության իրականացման կարևոր ուղղությունն է Սահմանադրական դատարան դիմումների ներկայացումը, որոնցով վիճարկվում է օրենսդրական կոնկրետ կարգավորումների հակասությունը Սահմանադրության 2-րդ գլխով նախատեսված դրույթներին: 2018 թվականին ՀՀ սահմանադրական դատարան են հասցեագրվել 3 դիմումներ, որոնցով բարձրացվել են մի շարք դրույթների հակասությունը Սահմանադրությանը: Վերոնշյալ դիմումները մանրամասն ներկայացված են սույն հաղորդման համապատասխան բաժիններում: Ստորև ներկայացվում է դիմումների համառոտ նկարագրությունները՝

#### **➤ Պատժախուց տեղափոխված կալանավորված անձանց և դատապարտյալների արտաքին աշխարհի հետ կապից զրկման սահմանադրականության վերաբերյալ**

Պաշտպանին հասցեագրված բողոքների քննարկումը և կանխարգելման ազգային մեխանիզմի մշտադիտարկումը ցույց է տալիս, որ պատժախուց տեղափոխված կալանավորված անձանց և դատապարտյալների արտաքին աշխարհի հետ կապին առնչվող օրենսդրական կարգավորումները չեն համապատասխանում Սահմանադրությանը և միջազգային չափանիշներին:

Սահմանադրական դատարանին ուղղված դիմումի վիճարկման առարկա են դարձել «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի և ՀՀ քրեակատարողական օրենսգրքի, ինչպես նաև Կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու վերաբերյալ Կառավարության որոշման համապատասխան դրույթները:

Օրենսդրական կարգավորումներով կալանավորված անձի կամ դատապարտյալի նկատմամբ պատժախուց տեղափոխելը՝ որպես տույժի միջոց կիրառելու դեպքում նա մեխանիկորեն՝ անկախ որևէ հանգամանքից, բացառություն չնախատեսող արգելքի ուժով զրկվում է արտաքին աշխարհի հետ կապից: Այսպիսի կարգավորումների պայմաններում, ստացվում է, որ տույժի այդ միջոցն ունի լրացուցիչ զրկանքներ պատճառելու բնույթ, որոնք որևէ կապ չունեն տույժի նպատակների կամ պատճառների հետ: Ինքնին տույժի միջոցը կիրառվում է քրեակատարողական հիմնարկի պետի որոշմամբ, իսկ հաղորդակցությունից զրկելու հարցը հիմնավորման չի արժանանում: Ստեղծված պայմաններում չի ցուցաբերվում նաև անհատական մոտեցում ու չի գնահատվում ազատագրվածի վարքագծի ռիսկայնությունը:

Նշվածն առաջացնում է անձի մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, ինչպես նաև հաղորդակցության ազատության սահմանադրական իրավունքների իրացման խնդիր, քանի որ գրկումը նախատեսվում է պատժախուց տեղափոխելու յուրաքանչյուր դեպքում: Սահմանադրական դատարան ներկայացված դիմումում հիմնավորվում է նաև, որ վիճարկվող կարգավորումները հակասում են նաև Սահմանադրության համաչափության, ինչպես նաև հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությամբ ամրագրված դրույթները մեկնաբանելիս ՀՀ վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան հաշվի առնելու սահմանադրական սկզբունքներին:

Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանը հակասահմանադրական է ճանաչել պատժախուց տեղափոխված կալանավորված անձանց և դատապարտյալների արտաքին աշխարհի հետ կապից մեխանիկական գրկում նախատեսող օրենսդրական կարգավորումները: Դատարանն Ազգային ժողովի և Կառավարության համար վերջնաժամկետ է սահմանել 2019 թվականի հունիսի 5-ը՝ հնարավորություն տալով վիճարկված դրույթները համապատասխանեցնելու որոշման պահանջներին, այլապես դրանք կճանաչվեն ուժը կորցրած:

Դատարանի որոշմամբ արձանագրվել է, որ վիճարկվող կարգավորումները հակասում են Սահմանադրության այն հոդվածներին, որոնք երաշխավորում են մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, հաղորդակցության ազատության իրավունքները, ինչպես նաև համաչափության սկզբունքը:

Դատարանը հաստատել է Պաշտպանի հետևությունն այն մասին, որ պատժախուցում անձի միայնակ մնալը կարող է առաջացնել հոգեճնշող վիճակ, իսկ կրոնականից բացի այլ գրականություն տրամադրելը կարող է բարենպաստ ազդեցություն ունենալ անձի վրա:

Սահմանադրական դատարանը որոշման հիմքում դրել է նաև պատժախուց տեղափոխված կալանավորված անձանց և դատապարտյալների արտաքին աշխարհի հետ կապի իրավունքի ապահովման վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի վկայակոչած ԵՄ, ԵՍ, ՄԱԿ միջազգային չափանիշները, պրակտիկան և այլ երկրների փորձը:

➤ *Գործարար կազմակերպությունների սեփականության իրավունքի իրացման խոչընդոտների սահմանադրականության վերաբերյալ*

Մարդու իրավունքների պաշտպանի դիմում է հասցեագրել ՀՀ սահմանադրական դատարան Հարկային օրենսգրքի որոշ հոդվածների և դրանց հիման վրա ընդունված Կառավարության որոշման որոշ դրույթների սահմանադրականությունը որոշելու վերաբերյալ:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմում բողոքներն ու դրա հիման վրա արված ուսումնասիրությունները վկայում են, որ Հարկային օրենսգիրքը, սահմանելով շահութահարկի որոշման և վճարման կարգավորումները, բավականաչափ հստակորեն չի ամրագրում դրանում օգտագործվող որոշ եզրույթներ: Արդյունքում, այդ եզրույթները սահմանվում են առավել ցածր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտով՝ Կառավարության որոշմամբ: Ընդ որում՝ օրենքը չի նախատեսում դրանում կիրառված եզրույթների բացահայտումը Կառավարության որոշմամբ: Ստեղծված իրավիճակում խնդիր է առաջանում կազմակերպության սեփականության իրավունքի իրացման՝ Սահմանադրությամբ ամրագրված երաշխիքների տեսանկյունից:

Դիմումի քննությամբ Սահմանադրական դատարանը հակասահմանադրական է ճանաչել Կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1373-Ն որոշմամբ սահմանվող մի շարք դրույթներ:



Հաշվի առնելով դիմումով բարձրացված խնդիրը՝ Սահմանադրական դատարանը գտել է (ՄԴՈ-1436 որոշում), որ վիճարկվող կարգավորումների արդյունքում ոչ իրավաչափ կերպով միջամտություն է տեղի ունենում սեփականության իրավունքին: Նշվել է նաև, որ հարկի բովանդակությունը և հարկային պարտավորության ծավալները պետք է սահմանվեն օրենքով, իսկ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հարկային պարտավորությունը կհամարվի օրենքին համապատասխան սահմանված, եթե ոչ միայն գուտ ձևական առումով այն ամրագրվի օրենքով, այլև դրա բովանդակությունը կազմող տարրերն իրենց ամբողջական արտացոլումը գտնեն օրենքում:

Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ շահութահարկ վճարողների համար հարկվող շահույթը համախառն եկամտի և նվազեցումների դրական տարբերությունն է, ընդ որում, եթե համախառն եկամտից նվազեցվում են ձեռնարկատիրական ծախսերը, կորուստները և այլ նվազեցումները, իսկ հարկվող շահույթը որոշելիս հաշվի են առնվում եկամուտները և ծախսերը, ապա «եկամուտ չհամարվող տարրերը» և «ծախս չհամարվող տարրերը» չեն հաշվառվում և չեն արտացոլվում հարկային մարմին ներկայացվող շահութահարկի հաշվարկներում:

Մինևս ժամանակ, Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանվել 2019 թվականի մայիսի 1-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի՝ իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին՝ խուսափելու համար պետության կամ հանրության համար այնպիսի ծանր հետևանքների առաջացումից, որոնք կխաթարեն այդ պահին տվյալ նորմատիվ իրավական ակտի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը:

➤ *Համաներման մասին օրենքի որոշ դրույթների սահմանադրականության վերաբերյալ*

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ համաներման մասին օրենքում բացակայում են կարգավորումներ, որոնք հստակ կամրագրեն համաներման ակտի կիրառման հիմքերը և կատարման համար պատասխանատու դատական մարմնի իրավասությունն այն դեպքերում, երբ դատական ակտը բողոքարկվել է վերադաս ատյան, սակայն վերջինիս կողմից դեռևս չի որոշվել վարույթ ընդունելու հարցը: Արդյունքում, թե՛ Վերաքննիչ և թե՛ Վճռաբեկ դատարանները հնարավորություն չեն ունենում կիրառել համաներում և անձին ազատել պատժից:

Ստացվում է, որ վերջնական դատական ակտի բացակայության պայմաններում և նույն հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձը մի դեպքում կարող է ամբողջությամբ ազատվել պատժից, իսկ մեկ այլ դեպքում՝ համաներման արդյունքում նշանակված պատժաչափը միայն կրճատվում է:

Ըստ այդմ, Պաշտպանը դիմել է Սահմանադրական դատարան՝ արձանագրելով, որ նշվածն առաջացնում է օրենքի առջև ընդհանուր հավասարության և խտրականության արգելքի խախտում, ինչպես նաև հակասում է Սահմանադրության՝ որոշակիության, հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար օրենքներով անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելու, հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիության, ինչպես նաև հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությամբ ամրագրված դրույթները մեկնաբանելիս ՀՀ վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների

պրակտիկան հաշվի առնելու սահմանադրական սկզբունքներին: Դիմումում նշված հետևություններն ամրապնդված են միջազգային չափանիշների վերլուծությամբ:

### **2.1.3 Մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ գրավոր կարծիքի տրամադրում**

2018 թվականին Պաշտպանին կարծիքի է ներկայացվել Սահմանադրական օրենքների, օրենսգրքերի և նոր կարգավորման առարկա ունեցող կամ ամբողջովին փոփոխվող օրենքների և այլ իրավական ակտերի 148 նախագիծ, որոնց վերաբերյալ ներկայացվել է 512 առաջարկ՝ հաշվի առնելով միջազգային չափանիշները, ինչպես նաև ներպետական իրավական ակտերի կարգավորումները և իրավակիրառ պրակտիկան: Որպես օրինակ կարելի է առանձնացնել «Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների իրականացման մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին», ««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ՀՀ օրենքների նախագծերը և այլն: Ավելին, Աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են օրենքների նախագծերի քննարկման նպատակով կազմակերպված միջոցառումներին:

### **2.1.4 Սահմանադրական դատարանում քննվող դիմումների վերաբերյալ հատուկ կարծիքների ներկայացում**

Պաշտպանը մշտական ներկայացուցիչ ունի նաև ՀՀ սահմանադրական դատարանում: Նշված գործառույթը հատկապես կարևորվում է նրանով, որ Պաշտպանին են ներկայացվում սահմանադրականության հարցի որոշման վերաբերյալ դատարանին ուղղված՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին վերաբերող բոլոր դիմումները, որոնց վերաբերյալ ներկայացվում է հատուկ դիրքորոշում: Հաշվետու տարվա ընթացքում Սահմանադրական դատարանի կողմից վարույթ ընդունված մի շարք գործերով Աշխատակազմի կողմից ներկայացվել է 16 դիրքորոշում: Հատուկ դիրքորոշումներում ներառվում են Պաշտպանի կողմից անհատական բողոքների քննարկման, ինչպես նաև մշտադիտարկման արդյունքում իրավունքների և ազատությունների վերաբերյալ իրականացված վերլուծությունները, կոնկրետ հարցի սահմանադրականության մասին միջազգային սկզբունքներ և չափանիշներ:

2018 թվականին Պաշտպանը հրապարակել է 2017-2018 թվականներին Սահմանադրական դատարան ներկայացված Պաշտպանի հատուկ դիրքորոշումների հայերեն և անգլերեն սեղմագրերը: Դիրքորոշումներ ներկայացնելու շրջանակում ուսումնասիրվել են դատավարական ժամկետների միատեսակ կիրառության հարցը, վարչական դատավարության ընթացքում գանձվող պետական տուրքի, պետական տուրքից ազատելու վերաբերյալ կարգավորումները, զինծառայողների ծառայությունից կամ աշխատանքից ազատվելիս չօգտագործված բոլոր արձակուրդների համար դրամական հատուցում ստանալու խնդիրը և մի շարք այլ հարցեր<sup>4</sup>:

Նշված հիմնարար ուղղություններից գատ հատկանշական է, որ Պաշտպանին է վերապահված *«Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄՄԿ-ի՝ 1984 թվականի կոնվենցիայի 2002*

<sup>4</sup> Տե՛ս «2017-2018 թվականներին Սահմանադրական դատարան ներկայացված Պաշտպանի հատուկ դիրքորոշումների սեղմագրերը» հայերեն՝ [http://pashtpan.am/images/hye-pdf\\_1.pdf](http://pashtpan.am/images/hye-pdf_1.pdf), անգլերեն՝ [http://pashtpan.am/images/angl-pdf\\_4.pdf](http://pashtpan.am/images/angl-pdf_4.pdf):

թվականի դեկտեմբերի 18-ին ընդունած կամրնտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակը: Ավելին, Պաշտպանն իրականացնում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին, ինչպես նաև «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված կոնվենցիաների դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև երեխաների և հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների խախտումների կանխարգելում և պաշտպանություն: Ուստի, Պաշտպանի գործունեությունը խոշտանգումների կանխարգելման, ինչպես նաև երեխաների և հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների ապահովման ոլորտներում ունի հատուկ նշանակություն:

Պաշտպանի գործունեության հետ կապված զգալի ուշադրություն է ցուցաբերվել խոշտանգումների և վատ վերաբերմունքի դրսևորման մյուս ձևերի կանխարգելմանը: Մասնավորապես, խոշտանգումների կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակով իրականացվել է հստակ տարանջատում անհատական գանգատների քննության և պարբերական կամ մշտադիտարկման այցերի միջև՝ անկախ բողոքի առկայությունից: Նշվածը բխում է քննարկվող հարցի վերաբերյալ միջազգային փորձի պահանջներից:

Այս մոտեցումը հնարավորություն է տվել այցեր իրականացնել ազատությունից զրկման վայրեր և ձեռնարկել հիմնարար ստուգման աշխատանքներ՝ անկախ բողոքի կամ դիմումի առկայությունից: Ընդ որում, իրականացվող այցերին ներգրավվել են նաև կանխարգելման մեխանիզմի անկախ փորձագետները (հոգեբան, սոցիոլոգ, բժիշկներ, այդ թվում՝ հոգեբույժ): Կանխարգելման մեխանիզմի աշխատանքներին ներգրավվել են նաև Պաշտպանին առընթեր խորհրդի անդամները: Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության ուղղությունները, իրականացված գործողությունների արդյունքները, ինչպես նաև արձանագրված խնդիրներն առավել մանրամասն ներկայացվում են համապատասխան տարեկան հաղորդման մեջ:

2018 թվականին գործունեության հիմնարար ուղղություններից է նաև երեխաների իրավունքների պաշտպանությունը: 2017 թվականին Օրենքի ընդունմամբ նախատեսված նոր հիմնարար ուղղությունը՝ երեխաների իրավունքների պահպանությունը և ՄԱԿ-ի համապատասխան կոնվենցիայի դրույթների կիրարկման մոնիթորինգի իրականացումը: Այս ոլորտում հիմնական գործառույթներն են օրենսդրության՝ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներին համապատասխանության մշտադիտարկումը, պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության անարգել այցերի իրականացումը երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատություններ և օրենքով նախատեսված այլ գործառույթներ: Նշված ստորաբաժանման, ինչպես նաև ոլորտում իրականացվող գործողությունների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկությունը ներկայացվում է սույն հաղորդման մյուս հատվածներում:

Ինչպես արդեն նշվել է, 2018 թվականի օրենսդրական փոփոխություններով, ի թիվս այլնի, ամրագրվեց, որ Պաշտպանն իրականացնում է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների խախտումների կանխարգելում և պաշտպանություն: Հետևաբար, 2018 թվականի ընթացքում գործունեության կարևորագույն ուղղություններից էր նաև հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների պաշտպանությունը: Նշված կարգավիճակով պայմանավորված Պաշտպանն իրականացնում է ներպետական օրենսդրության՝ կոնվենցիայի դրույթների համապատասխանության մշտադիտարկում, պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության անարգել այցեր այն հաստատություններ, որտեղ գտնվում են հաշմանդամություն ունեցող մարդիկ, ինչպես նաև

օրենքով նախատեսված այլ լիազորություններ: Հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների պահպանության ոլորտում իրականացված քայլերը և արձանագրված խնդիրներն առավել մանրամասն ներկայացվում են սույն հաղորդման մյուս հատվածներում:

## **2.2 Համագործակցությունը իրավասու պետական մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ**

Չափազանց կարևոր է Պաշտպանի համագործակցությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև համատեղ աշխատանքը քաղաքացիական հասարակության հետ: Համատեղ ջանքերի արդյունքում դա նպաստում է քաղաքացիների իրավունքների վերականգնմանը: Իրավասու մարմինների հետ ձևավորվել է գործնական սերտ համագործակցության պրակտիկա, որը ենթադրում է առօրյա աշխատանքում տեղեկատվության օպերատիվ փոխանակման հնարավորություն: Գրեթե բոլոր մարմիններում առանձնացված են աշխատանքային խմբեր կամ պատասխանատու մասնագետներ, որոնք Աշխատակազմի ներկայացուցիչների հետ պարբերաբար իրականացնում են իրավունքների իրացման ապահովմանն ուղղված աշխատանքային քննարկումներ:

Առանցքային է Պաշտպանի աշխատանքն Ազգային ժողովի հետ, որտեղ Պաշտպանն ունի հատուկ ներկայացուցիչ: Այստեղ սերտ աշխատանք է տարվում թե՛ խորհրդարանական հանձնաժողովների հետ, թե՛ պատգամավորների հետ անհատական համագործակցության մակարդակում: Աշխատանքի այսպիսի մոտեցումը Պաշտպանի հաստատության զարգացման համար ունի կարևոր նշանակություն:

Նույն սկզբունքով, առանցքային է Մահմանադրական դատարանի հետ աշխատանքը: Այստեղ գործունեությունն իրականացվում է Մահմանադրական դատարանի դիմումներ ներկայացնելով, ինչպես նաև մարդու իրավունքներին կամ ազատություններին վերաբերող գործերով Մահմանադրական դատարան օժանդակ դիրքորոշումներ (*amicus curiae*) ներկայացնելով: Մահմանադրական դատարանում նույնպես գործում է Պաշտպանի ներկայացուցիչ ինստիտուտը: Այս ամենը հնարավոր եղավ իրացնել Մահմանադրական դատարանի հետ բարձր որակի համագործակցության շնորհիվ:

Որպես աշխատանքի նոր ուղղություն՝ կարևոր է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ համագործակցությունը: Եվրոպական դատարանի ձևավորած իրավական չափանիշները երկրի իրավական համակարգի զարգացման համար ունեն անկյունաքարային նշանակություն:

2018 թվականի ընթացքում կարևոր ձեռքբերում էր Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Պաշտպանի միջնորդության հաստատումը, և Պաշտպանի ներգրավումը Հակոբյանն ընդդեմ Հայաստանի գործով որպես երրորդ կողմ: Եվրոպական դատարանում գործի քննությանը մասնակցությունը հնարավորություն կտա Պաշտպանին իր լիազորությունների իրականացման արդյունքում ձեռք բերված՝ կոնկրետ գործին առնչվող տեղեկությունները ներկայացնել դատարանին: Մասնավորապես, Եվրոպական դատարանին կտրամադրվեն տեղեկություններ կապված պետության կողմից անազատության մեջ դիմողին պատշաճ և անհրաժեշտ բուժօգնություն տրամադրելու հետ: Դատարան կներկայացվեն նաև քրեակատարողական հիմնարկներում բժշկական օգնության ապահովմանն առնչվող խնդիրները, որոնք վերաբերում են գանգատով բարձրացված հարցերին:

2017 թվականի ընթացքում իրականացված քայլերը Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հետ: Մասնավորապես, 2018 թվականի ընթացքում Պաշտպանը Նախարարների կոմիտեի հատուկ դիրքորոշում է ներկայացրել Հայաստանի դեմ

Եվրոպական դատարանի վճիռների կատարման գործընթացին վերաբերյալ: Ձևավորված պրակտիկան շարունակվում է նաև 2019 թվականի ընթացքում:

Մշտական կապ է հաստատված ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի, Միավորված ազգերի Զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի և այլ միջազգային կառույցների հետ:

**ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ**

Կարևորելով Պաշտպանի գործունեության թափանցիկությունն ու հրապարակայնությունը՝ 2018 թվականին շարունակվել են աշխատանքները լրատվամիջոցների հետ համագործակցությունը զարգացնելու և կատարված քայլերի վերաբերյալ հասարակության իրազեկվածությունն ապահովելու ուղղությամբ:

Դեռևս 2017 թվականին Աշխատակազմում ստեղծված Հանրային կապերի բաժինը, շարունակել է ապահովել Պաշտպանի գործունեության հրապարակայնությունը զանգվածային լրատվության միջոցներով: Այս համատեքստում կարևորվել է նաև հանրային կարևորության բաղադրիչ ունեցող գործերի վերաբերյալ Պաշտպանի դիրքորոշումների, վերլուծությունների, ինչպես նաև կատարված աշխատանքի վերաբերյալ պարբերական հրապարակումները: Դրանց տարածման տեսանկյունից բարձր է գնահատվում զանգվածային լրատվության միջոցների հետ համագործակցությունը:

Շարունակական կատարելագործման է ենթարկվել Պաշտպանի պաշտոնական «[www.ombuds.am](http://www.ombuds.am)» կայքէջը, որի հիմնական նպատակն է հանրության շրջանում Պաշտպանի դերի և գործունեության վերաբերյալ իրազեկության բարձրացումը, ինչպես նաև տեղեկատվության առավել թափանցիկ ու մատչելի ներկայացումը: Այն պարունակում է տվյալներ Աշխատակազմի կառուցվածքի, պաշտոն զբաղեցնող անձանց կոնտակտային տվյալների և կենսագրության, ստորաբաժանումների գործառույթների և կատարած աշխատանքների, ինչպես նաև տարեկան հաղորդումների և հատուկ զեկույցների վերաբերյալ: Կայքում հրապարակվում են նաև Պաշտպանի գործունեության վերաբերյալ նորություններն ու պաշտոնական հաղորդագրությունները:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի հրապարակայնությունն ապահովելու համար այս պահին վերազինվում է [www.ombuds.am](http://www.ombuds.am) ինտերնետային կայքը, որը հնարավորություն կտա առանձին բաժիններով ծանոթանալ Պաշտպանի աշխատանքի ուղղություններին: Պատրաստվում է նաև հեռախոսային հավելված, որը բեռնելով քաղաքացիները կկարողանան ծանոթանալ ինչպես Պաշտպան գործունեությանը, այնպես էլ իրազեկման բնույթի նյութեր ստանալ:

Դեռևս 2017 թվականին Աշխատակազմի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի և «Կասպերսկի լաբորատորիա» ընկերության համագործակցությամբ գործարկվել էր երեխաների իրավունքների պաշտպանությանը նվիրված կայք՝ «[children.ombuds.am](http://children.ombuds.am)»: Կայքի հիմնական նպատակն է երեխաների իրավունքների և դրանց պաշտպանության իրավական հնարավորությունների վերաբերյալ մատչելի լեզվով ներկայացումը և դրանց վերաբերյալ շահագրգիռ կողմերի իրազեկվածության բարձրացումը:

Զանգվածային լրատվության միջոցների հետ սերտ աշխատանքի շրջանակներում ներդրվել է պրակտիկա, որի հիման վրա առանձին ուղղություններով լրագրողներ մասնակցում են Պաշտպանի համակարգմամբ կամ աջակցությամբ կազմակերպվող դասընթացների:

Պաշտպանի՝ որպես մարդու իրավունքների ազգային հաստատության առաքելությունն է նաև սերտ համագործակցությունը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: Հանդիսանալով պետական մարմին, Պաշտպանի հաստատությունը կարևոր օղակ է հասարակական կազմակերպությունների և պետական մարմինների միջև՝ պարբերաբար ստեղծելով հարթակներ համապատասխան ոլորտներում առկա խնդիրների վերհանման, դրանց քննարկման և լուծումների նախանշման համար: Ուստի, Պաշտպանի

գործունեության հիմնարար ուղղություն է այդ կազմակերպությունների աշխատանքի խթանումը, պետական մարմիններում նրանց գործունեությունը և բարձրացված հարցերը տեսանելի դարձնելը:

Հասարակական կազմակերպությունների և Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության համագործակցության շրջանակում է նաև առանձին ոլորտներում արձանագրված խնդիրների լուծմանն ուղղված համատեղ քայլերի ձեռնարկումը: Այս առումով կարևոր է նաև անհատական գործերի վերաբերյալ ըստ անհրաժեշտության տեղեկությունների օպերատիվ փոխանակումը:

Կարևորելով աշխատանքի այս առանձնահատկությունը, 2018 թվականին լայնածավալ աշխատանքներ են տարվել հասարակական կազմակերպությունների հետ ինչպես կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների պաշտպանության, խոշտանգումների կանխարգելման, փախստականների և ապաստան հայցող անձանց, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության, այնպես էլ այլ ոլորտներում<sup>5</sup>:

2018 թվականին շարունակվել է Պաշտպանի և Աշխատակազմի՝ մարզեր ու հատկապես՝ գյուղեր այցերի իրականացումը: Հատուկ ուշադրություն է դարձվել սահմանամերձ այն գյուղերին, որոնք պարբերական գնդակոծության են ենթարկվում: Այս այցերի ընթացքում հնարավորություն է ստեղծվում անմիջականորեն, փաստահավաք աշխատանքների միջոցով արձանագրել գնդակոծությունների դեպքերը և դրանց արդյունքում առաջացած վնասը տեղի խաղաղ բնակչությանը:

Ավելին, այդ այցերի ընթացքում քննարկվում են գյուղերի բնակիչների սոցիալական, տնտեսական և այլ խնդիրներին, ինչպես նաև իրավասության սահմաններում միջոցներ ձեռնարկել դրանց լուծմանը նպաստելու ուղղությամբ: Ընդ որում, այցերի ժամանակացույցը ձևավորելիս հաշվի են առնվում Պաշտպանին հասցեագրվող բողոքներն ու դրանցով բարձրացվող հարցերը: Այցերին ըստ անհրաժեշտության ներգրավվում են նաև Պաշտպանին առընթեր խորհուրդների անդամներ և մարզային ստորաբաժանումների ներկայացուցիչներ:

2018 թվականի ընթացքում տեղի են ունեցել Պաշտպանին առընթեր խոշտանգումների կանխարգելման խորհրդատվական խորհրդի նիստեր, այդ թվում՝ ընդլայնված, որոնց մասնակցել են ոլորտի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, անկախ մասնագետներ ու պաշտոնատար անձինք: Նիստերի ընթացքում քննարկման առարկա են դարձել պայմանական վաղաժամկետ ազատման նոր ընթացակարգին, պատժախուց տեղափոխված կալանավորված անձանց և դատապարտյալների արտաքին աշխարհի հետ կապի իրավունքների ապահովմանը և հոգեբուժական կազմակերպություններում ոչ հոժարակամ կամ հարկադիր բուժման հետ կապված, ինչպես նաև այլ օրենսդրական և պրակտիկ խնդիրներ:

2018 թվականին տեղի են ունեցել նաև Պաշտպանին առընթեր զինծառայողների իրավունքների հարցերով փորձագիտական խորհրդի նիստեր: Քննարկվել են զինապարտների առողջական վիճակի պատշաճ հետազոտման, զինվորական հաշվառման գործընթացում նախագորակոչիկների, ինչպես նաև կարգապահական վարույթի ընթացքում զինծառայողների իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցեր: Չորակոչիկների ծանուցման, զինվորական հաշվառման փաստաթղթերի տրամադրման, գորակոչի ընթացքում բժշկական հանձնաժողովների գործունեության արդյունավետության, կարգապահական վարույթի ընթացքում զինծառայողների իրավունքների պաշտպանության վերաբերյալ առաջարկներ են ներկայացրել խորհրդի անդամները և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Ընդգծվել է, որ զինծառայողների

<sup>5</sup> Մանրամասն տե՛ս «Կանանց նկատմամբ խտրականություն», «Հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքներ» և «Երեխաների իրավունքներ», «Մարդու իրավունքները զինված ուժերում» բաժիններում:



իրավունքների պաշտպանությունը պետք է լինի պետության և հասարակական կազմակերպությունների հատուկ ուշադրության կենտրոնում: Նիստերին մասնակցել են թե՛ խորհրդի անդամները, թե՛ Պաշտպանության նախարարության, թե՛ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:


Պաշտպանի գործունեության ուղղությունների զարգացմանը զուգահեռ քննարկվում են նաև այլ ուղղություններով խորհուրդներ ստեղծելու հարցը:

Խորհուրդների ձևաչափերից բացի, ակտիվորեն գործադրվել են համատեղ աշխատանքի այլ մեխանիզմներ: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է համատեղ քննարկումներին, վերապատրաստման դասընթացներին մասնակցությանը, հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերին մասնակցությանը, Աշխատակազմի համակարգմամբ իրականացվող ծրագրերին նրանց ներգրավմանը և այլն:


**ԳԼՈՒԽ 3. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ ԵՎ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ**

**1. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կառուցվածքը**

Օրենքի ընդունմամբ Աշխատակազմի՝ 2017 թվականին սահմանված կառուցվածքը հիմնականում շարունակել է գործել նաև 2018 թվականին: Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են մի քանի փոփոխություններ, որոնց հաշվառմամբ ստորև ներկայացվում է Աշխատակազմի կառուցվածքը՝



Ստորև ներկայացվում է Աշխատակազմի կառուցվածքը՝ ըստ դեպարտամենտների:



## 2. Պաշտպանի գործունեությունն առանձին ոլորտներում

### 2.1 Մարդու իրավունքների կրթություն և վերապատրաստումներ

2017 թվականին Օրենքի ընդունմամբ Պաշտպանին վերապահվեց լիովին նոր գործառույթ՝ մարդու իրավունքների կրթությունը: Դրանով պայմանավորված 2018 թվականի մարտի 1-ին Աշխատակազմում ստեղծվեց Հետազոտական և կրթական կենտրոնը, որի գործունեության նպատակն է նպաստել նորմատիվ իրավական ակտերի և դրանց կիրառության պրակտիկայի կատարելագործմանը:

Կենտրոնը Պաշտպանի աշխատակազմի, ինչպես նաև շահառու մարմինների և կազմակերպությունների համար իրականացնում է մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող հարցերով վերապատրաստումներ: Մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող գիտատեսական և կիրառական նյութերի, ձեռնարկների, տեղեկագրերի, մենագրությունների, ժողովածուների և այլ տեղեկատվական-վերլուծական աշխատությունների մշակման, ինչպես նաև հրատարակման աշխատանքները ևս կազմում են Կենտրոնի առօրյա աշխատանքի մի մասը:

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքի կարևորագույն ուղղություն է եղել վերապատրաստումների կազմակերպումն ու իրականացումը: Օրենքի ընդունմամբ նախատեսվեց, որ Պաշտպանը կարող է իրականացնել Աշխատակազմի, ինչպես նաև շահառու մարմինների և կազմակերպությունների՝ մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող հարցերով վերապատրաստումներ: Հիմք ընդունելով այս լիազորությունը, 2018 թվականին նույնպես իրականացվել են տարբեր խմբերի

վերապատրաստումներ և իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված հանդիպումներ:

Դրանց մասնակից են եղել ինչպես Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներ, այնպես էլ պաշտոնատար անձինք, հասարակական կազմակերպություններ, լրագրողներ, ինչպես նաև հատուկ խմբերի ներկայացուցիչներ, օրինակ՝ փախստականներ և ապաստան *հայցող անձինք*:

Մասնավորապես, 2018 թվականի ընթացքում աշխատակազմի ներկայացուցիչները Եվրոպայի խորհրդի աջակցությամբ ճանաչողական այցով գտնվել են Ստրասբուրգ քաղաքում մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական փորձն ուսումնասիրելու նպատակով՝ խտրականության բացառման վերաբերյալ:

Աշխատակազմի կարողությունների զարգացմանն ուղղված պարբերական վերապատրաստման դասընթացներ են կազմակերպվում նաև առանձին խումբ անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված թեմաներով: Մասնավորապես, հաշվի առնելով «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի ընդունումը և դրա ուժի մեջ մտնելու ժամկետները՝ 2018 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի միջև համագործակցության շրջանակում ազգային և տեղական փորձագետների մասնակցությամբ, կազմակերպվել է վերապատրաստման հատուկ դասընթացների շարք ընտանեկան բռնության դեմ պայքարում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքների իրականացման համար աշխատակիցների կարողությունների ամրապնդման նպատակով: Դասընթացի մասնակիցներին ներկայացվել է ներպետական օրենսդրությունը, ընտանիքում բռնության դեմ պայքարում միջազգային չափանիշները, այդ թվում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանությունն այս ոլորտում:

ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի աջակցությամբ մշակվել է ուղեցույց Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից ընտանեկան բռնության դեպքերի առնչությամբ ծառայությունների իրականացման համար: Ուղեցույց է մշակվել նաև թեժ գծի միջոցով խորհրդատվություն տրամադրող աշխատակիցների համար՝ կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության գործերի համար:

Եվրոպայի խորհրդի «HELP» հեռահար ուսուցման հարթակի միջոցով կազմակերպված հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ դասընթացին մասնակցության ապահովման միջոցով Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները ստացել են Եվրոպայի խորհրդի համապատասխան որակավորումը:

Միջազգային համագործակցության և տարբեր ծրագրերի արդյունքում իրականացված ուսումնական այցերից զատ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում արտասահմանյան փորձն ուսումնասիրելու նպատակով 2018 թվականին Աշխատակազմի ներկայացուցիչների այցեր են կազմակերպվել Գերմանիա և Ֆրանսիա Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի և Ֆրանկոֆոն օմբուդսմանների և հաշտարարների ասոցիացիայի աջակցությամբ:

Գերմանիայի մարդու իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող պառլամենտական մարմինների գործունեությանը ծանոթանալու և փորձի փոխանակում իրականացնելու նպատակով 2018 թվականի հոկտեմբեր ամսին Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի աջակցությամբ Աշխատակազմի ներկայացուցիչները Բեռլինում ծանոթացել են Բունդեսբադի Պետիցիայի հանձնաժողովի և զինծառայողների հարցերով հանձնակատարի գործունեությանը, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության գերմանական համակարգի առանձնահատկություններին:

2018 թվականի հոկտեմբերին Ֆրանսիա կատարած այցի ընթացքում, որը կազմակերպվել է Ֆրանկոֆոն օմբուդսմանների և հաշտարարների ասոցիացիայի աջակցությամբ, Աշխատակազմի ներկայացուցիչներն ուսումնասիրել են Ֆրանսիայի մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները և գործունեության ոլորտները, ինչպես նաև համագործակցության փորձը դատական իշխանության և հասարակական կազմակերպությունների հետ:

## **2.2 Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության միջազգային համագործակցությունը**

2018 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից միջազգային համագործակցության ոլորտում իրականացվել են ծրագրեր և փորձի փոխանակման այցեր, աշխատակազմի կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ և վերապատրաստման դասընթացներ, կազմակերպվել են Պաշտպանի հանդիպումներ, մշակվել և միջազգային գործընկեր կազմակերպություններին են ներկայացվել Պաշտպանի արտահերթ զեկույցներ և ծրագրային նոր առաջարկներ, իրականացվել են մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրման և այլ աշխատանքներ:

Պաշտպանի՝ միջազգային համագործակցության մեկ այլ հիմնարար ուղղության համար կարևոր նախապայման էր հաստատության գործունեության բարձր արդյունավետությունը տարբեր ոլորտներում: Մասնավորապես, դրանով պայմանավորված Պաշտպանի աշխատանքը համապատասխան ասպարեզներում ճանաչվելով լավագույններից մեկն աշխարհում և պատճառ է հանդիսացել, որպեսզի տարբեր երկրների մարդու իրավունքների ազգային հաստատություններ ուսումնասիրեն կառույցի փորձը:

Նման ոլորտներից է Պաշտպանի՝ որպես Կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեությունը, որի փորձը ճանաչվել է լավագույններից Եվրոպայի խորհրդի տարածքում: Ոլորտի օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև ներդրված աշխատանքային սկզբունքներն ուսումնասիրելու նպատակով հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են տարբեր երկրների մարդու իրավունքների ազգային հաստատությունների այցերը Հայաստան:

Նշված ոլորտում Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի փորձն ուսումնասիրելու նպատակով 2018 թվականին ՀՀ է այցելել Տաջիկստանի պատվիրակությունը: Ուսումնական այցը կազմակերպվել է Միջազգային բանտային բարեփոխումների (PRI) կազմակերպության Կենտրոնական Ասիայի գրասենյակի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում: Ծրագրի շրջանակում պատվիրակության անդամները ծանոթացել են Պաշտպանի՝ խոշտանգումների կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեությանը և ազատությունից զրկված վայրեր իրականացվող չհայտարարված մշտադիտարկման այցերի ժամանակ աշխատակազմի ներկայացուցիչների աշխատանքի մեթոդներին ու սկզբունքներին՝ իրենց երկրում ներդնելու նպատակով:

Ոլորտի ամբողջական ուսումնասիրության նպատակով՝ Պաշտպանի աջակցությամբ հանդիպումներ են տեղի ունեցել ԱՆ քրեակատարողական ծառայությունում, ՀՀ գլխավոր դատախազության Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչությունում և Պրոբացիայի ծառայությունում: Ուսումնական այցի ժամանակ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ համատեղ իրականացվել են նաև ճանաչողական բնույթի այցեր ՀՀ ոստիկանության Ձերբակալված անձանց պահման վայր և «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ:

Պաշտպանի հաստատության փորձն ուսումնասիրելու նպատակով Հայաստան է ժամանել նաև Թուրքմենստանի մարդու իրավունքների հանձնակատար Յագդուրսուն Գուրբաննազարովայի գլխավորած պատվիրակությունը: Դրա անդամները ԵԱՀԿ նախաձեռնությամբ ծանոթացել են Պաշտպանի լիազորություններին, աշխատանքի սկզբունքներին ու ուղղություններին, մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեությանը՝ դրանք իրենց երկրում ներդնելու նպատակով:

Այցի շրջանակում պատվիրակությունը մասնակցել է նաև Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության 10-ամյակին նվիրված երկօրյա միջազգային համաժողովին:

### **3.Ստորև ներկայացվում են 2018 թվականի ընթացքում Աշխատակազմի իրականացրած ծրագրերը.**

#### **3.1 Զինված ուժերում մարդու իրավունքների եվրոպական չափանիշների կիրառման ամրապնդումը Հայաստանում**

2018 թվականին Աշխատակազմը Միացյալ Թագավորության կառավարության և Եվրոպայի խորհրդի աջակցությամբ շարունակել է իրականացնել «Զինված ուժերում մարդու իրավունքների եվրոպական չափանիշների կիրառման ամրապնդումը Հայաստանում» ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում 2018 թվականի մարտ ամսին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների համար կազմակերպվել է ճանաչողական այց Ստրասբուրգ, որի նպատակն է եղել հարստացնել մասնակիցների գիտելիքները Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման ստորաբաժանման, Եվրոպական սոցիալական խարտիայի քարտուղարության, Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի (CPT), Մարդու իրավունքների հանձնակատարի գրասենյակի, ինչպես նաև Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի փորձագետների խմբի (GRETA) և Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (GRECO) գործունեության վերաբերյալ:

Զորակոչիկների շրջանում իրենց իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով 2018 թվականի հուլիսին ծրագրի աջակցությամբ Աշխատակազմը մշակել է տեղեկատվական թերթիկ, որում ներկայացված են այնպիսի հարցեր, ինչպիսիք են գորակոչիկների իրավունքները հետազոտությունների և փորձաքննությունների ընթացքում Պաշտպանին դիմելու կարգը, դիմումի քննարկման ընթացակարգը և այլն:

2018 թվականի օգոստոսին Աշխատակազմի համար կազմակերպվել է վերապատրաստման երկօրյա հատուկ դասընթաց միջազգային փորձագետների մասնակցությամբ՝ նվիրված ճգնաժամային և կոնֆլիկտային իրավիճակներում Պաշտպանի աշխատանքների կազմակերպմանը:

Միջազգային փորձագետների հետ քննարկումների արդյունքում դասընթացի մասնակիցները ձեռք են բերել նոր գիտելիքներ ճգնաժամային և ռազմական իրավիճակներում մարդու իրավունքների պաշտպանության միջազգային և եվրոպական ժամանակակից մեխանիզմների վերաբերյալ, ծանոթացել են նախակոնֆլիկտային, կոնֆլիկտային և հետկոնֆլիկտային իրավիճակներում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրներն առավել արդյունավետ լուծելու գործիքներին և մեխանիզմներին:

2018 թվականի օգոստոսին Երևանում նախաձեռնվել են խորհրդակցություններ զինձառայողների իրավունքների, կյանքի իրավունքի և խոշտանգումների արգելքին առնչվող

Հայաստանի վերաբերյալ ՄԻԵԴ վճիռների կատարման վերաբերյալ: Միջոցառման ընթացքում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման դեպարտամենտի ներկայացուցիչն Աշխատակազմին է ներկայացրել ՄԻԵԴ վճիռների կատարման ընթացակարգը և այդ գործընթացին մարդու իրավունքների ազգային հաստատության մասնակցության առանձնահատկությունները:

Զինժառայողների իրավունքների պաշտպանության ոլորտում Աշխատակազմի մասնագիտացված ստորաբաժանման կարողությունները զարգացնելու նպատակով նույն ծրագրի շրջանակում 2018 թվականի սեպտեմբերին կազմակերպվել է այց Նորվեգիայի Թագավորություն:

Այցի ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ Նորվեգիայի Թագավորության Զինված ուժերի օմբուդսմանի գրասենյակի ղեկավարության հետ, ուսումնասիրվել են զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության՝ աշխարհում լավագույններից համարվող նորվեգական մոդելը, ինչպես նաև քաղաքացիների գորակոչմանը և զինվորական ծառայության կազմակերպմանը վերաբերող նորվեգական փորձը: Բացի այդ, Նորվեգիայի զինված ուժերի զինավանդում այցի մասնակիցները ծանոթացել են նաև ռազմական ոստիկանության գորամասերում կրթական ծրագրերի անցկացման մեթոդաբանությանը:

Ծրագրի աջակցությամբ Աշխատակազմի քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի ղեկավարը մասնակցել է Զինված ուժերի օմբուդսմանների հաստատությունների 10-րդ միջազգային վեհաժողովին, որը տեղի է ունեցել Հարավային Աֆրիկայի Հանրապետության Յոհաննեսբուրգ քաղաքում:

Միջոցառման ընթացքում Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության Ժնևի կենտրոնի, Հարավային Աֆրիկայի Հանրապետության ռազմական օմբուդսմանի հաստատության և մոտ 40 երկրներից ժամանած օմբուդսմանների հաստատությունների ներկայացուցիչների միջև փորձի փոխանակման նպատակով տեղի են ունեցել մասնագիտական քննարկումներ ներքին և սահմանային անվտանգության, միգրացիայի, աղետների արձագանքման և խաղաղարարության ոլորտներում զինված ուժերի ներգրավվածության և դրանից բխող մարտահրավերների, ինչպես նաև այդ մարտահրավերների հաղթահարման գործում օմբուդսմանների հաստատությունների ունեցած դերի վերաբերյալ:

### **3.2 Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների ամրապնդում հանրային ծառայության բնագավառում գործող կազմակերպությունների կողմից սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում**

2018 թվականին մեկնարկել է Հայաստանում Բուլղարիայի Հանրապետության դեսպանության աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների ամրապնդում» ծրագիրը, որի նպատակն է ամրապնդել Աշխատակազմի կարողությունները՝ քննարկելու հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունների կողմից սպառողների իրավունքների խախտումների վերաբերյալ բողոքները, ինչպես նաև բարձրացնել Պաշտպանի դերի, մանդատի և նոր լիազորությունների վերաբերյալ իրազեկվածությունը շահառուների և հասարակության շրջանում:

Ծրագրի աջակցությամբ 2018 թվականին սկսվել են հանրային ծառայությունների ոլորտում սպառողների իրավունքների պաշտպանության վերաբերյալ Պաշտպանի արտահերթ զեկույցի մշակման աշխատանքները, ինչպես նաև պատրաստվել են սպառողների իրավունքներին առնչվող թեմաների վերաբերյալ նախատեսված 11

տեսանյութերից 2-ը, որոնք սոցիալական գովազդի տեսքով հեռարձակվելու են հեռուստաընկերությունների կողմից և տեղադրվելու են սոցիալական կայքերում:

Նույն ծրագրի շրջանակում 2018 թվականի հոկտեմբերին իրականացվել է Աշխատակազմի ներկայացուցիչների ճանաչողական այց Բուլղարիա, որի ընթացքում տեղի են ունեցել քննարկումներ հանրային ծառայությունների ոլորտում իրավունքների, սոցիալ-տնտեսական իրավունքների պաշտպանության ոլորտներում օմբուդսմանների դերի, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների հետ համագործակցության, կենտրոնում և շրջաններում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում օմբուդսմանների դերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման և այլ թեմաների վերաբերյալ: Բուլղարիայի օմբուդսմանի հաստատության, ինչպես նաև նշված ոլորտների այլ շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների հետ իրականացվել է փորձի և տեղեկատվության փոխանակում:

### **3.3 Հայաստանում պրոբացիոն համակարգի ներդրման և զարգացման մոնիթորինգի իրականացում և գնահատում**

Հայաստանում և Վրաստանում Նիդեռլանդների Թագավորության դեսպանության աջակցությամբ 2018 թվականին մեկնարկել է «Հայաստանում պրոբացիոն համակարգի ներդրման և զարգացման մոնիթորինգի իրականացում և գնահատում» ծրագիրը, որի նպատակն է աջակցել Աշխատակազմին՝ գնահատելու և մոնիթորինգի ենթարկելու Հայաստանում պրոբացիոն համակարգը և դրա զարգացումը, ինչպես նաև ուսումնասիրել ոլորտին առնչվող օրենսդրական կարգավորումները և դրանց գործնական կիրարկումը:

Ծրագրի շրջանակներում 2018 թվականին իրականացվել է Հայաստանում պրոբացիայի ծառայության գործունեության օրենսդրական և գործնական հարցերի համակողմանի ուսումնասիրություն, որի արդյունքներով կազմվել է ՀՀ պրոբացիայի պետական ծառայության գործունեության մշտադիտարկման վերաբերյալ Պաշտպանի արտահերթ զեկույցը, որը թարգմանվել է անգլերեն և տպագրվել է հայերեն և անգլերեն լեզուներով: 2018 թվականի դեկտեմբերին ծրագրի աջակցությամբ կազմակերպվել է վերոնշյալ զեկույցի ներկայացման և քննարկման միջոցառում, որին մասնակցել են շահագրգիռ պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:

### **3.4 Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության խթանում բոլորի համար**

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության աջակցությամբ 2018 թվականին մեկնարկած ծրագրի նպատակն է բարձրացնել Աշխատակազմի կարողությունները և համագործակցությունը մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների հետ, ինչպես նաև բարձրացնել հասարակության իրազեկվածությունը մարդու իրավունքների և մարդու իրավունքների պաշտպանության առկա մեխանիզմների վերաբերյալ:

Ծրագրի շրջանակներում 2018 թվականին Աշխատակազմի ներկայացուցիչների համար կազմակերպվել են վերապատրաստման պարբերական դասընթացներ: Մասնավորապես, 2018 թվականի մայիսին կազմակերպված երկօրյա դասընթացի շրջանակներում միջազգային փորձագետի կողմից ներկայացվել են հաշմանդամություն ունեցող անձանց և կանանց իրավունքների պաշտպանության, ինչպես նաև իրավաբանական գրին ու վերլուծությանը ներկայացվող միջազգային չափանիշները:

2018 թվականի սեպտեմբերին կազմակերպված «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության մշտադիտարկման և գնահատման



առանձնահատկությունները» խորագրով երկօրյա դասընթացի ընթացքում ուսումնասիրվել են հաշմանդամության բժշկական և սոցիալական մոդելները, իրականացվել են քննարկումներ հաշմանդամության և խտրականության, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունակության, շրջակա միջավայրի հասանելիության և սոցիալական իրավունքների պաշտպանության վերաբերյալ:

Նույն ծրագրի շրջանակում 2018 թվականի խորհրդարանական ընտրություններին ընդառաջ կազմակերպվել է «Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից ընտրությունների հետ կապված բողոքների և ՋԼՄ հրապարակումներին արձագանքելու ընթացակարգերը» խորագրով դասընթաց: Փորձագետի կողմից ներկայացվել են ընտրական իրավունքի հարցերով դիմողների հետ աշխատանքի հիմունքները, ինչպես նաև իրականացվել են ընտրողների, դիտորդների, լրագրողների, թեկնածուների և նրանց վստահված անձանց իրավունքների խախտումների փաստաթղթավորման և դրանց ընթացք տալու վերաբերյալ պրակտիկ քննարկումներ:

2018 թվականի դեկտեմբերին կազմակերպվել է նաև երկօրյա դասընթաց՝ նվիրված խտրականության բացառմանը և սոցիալ-տնտեսական իրավունքների պաշտպանությանը: Ոլորտի փորձագետի կողմից ներկայացվել են կրթության և աշխատանքի իրավունքի ապահովման առանձնահատկությունները Եվրոպական սոցիալական խարտիայի, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի, ինչպես նաև ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիայի լույսի ներքո:

### **3.5 Հայաստանում փախստականների և ապաստան հայցողների իրավունքների պաշտպանության ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացում**

Ծրագրի հիմնական նպատակն է զարգացնել Պաշտպանի կարողությունները՝ Հայաստանում փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների պահպանության մակարդակը բարձրացնելու համար: Նշված նպատակով Պաշտպանի աշխատակազմի իրավասու ներկայացուցիչներն իրականացրել են ճանաչողական այց Չեխիայի Հանրապետություն:

Մասնակիցները հանդիպում են ունեցել Չեխիայի հանրային իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների հետ: Քննարկվել են երկու կառույցների լիազորությունները, գործունեության ոլորտները, ինչպես նաև փախստականների ու ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ մի շարք հարցեր: Այցելություն է իրականացվել ապաստան հայցող անձանց համար նախատեսված «Զաստավկա ու Բոնա» հատուկ կացարան, հանդիպումներ են տեղի ունեցել Չեխիայում ՄԱԿ ՓԳՀ գրասենյակի ղեկավարի և «Աջակցություն փախստականներին» (OPU) հասարակական կազմակերպության ներկայացուցչի հետ:

Պաշտպանի զեկույցներում արձանագրված խնդիրների լուծման, ինչպես նաև դրանց վերաբերյալ առաջարկությունների կատարման վիճակի գնահատման նպատակով կատարվել են այցեր ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայության «Հատուկ կացարան» ՊՈԱԿ: Տեղում ստուգվել են ինչպես պայմանները, այնպես էլ տեղի են ունեցել ապաստան հայցող անձանց հետ առանձնազրույցներ:

Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ փախստականների, ապաստան հայցող անձանց և ուսանողների համար: Շարունակվել են պաշտոնատար անձանց՝ ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի, ինչպես նաև ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության ծառայողների վերապատրաստումները: Վերապատրաստման դասընթացներ են կազմակերպվել նաև ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության ծառայողների համար:

Նշված վերապատրաստումներն իրականացվել են ոլորտի իրավասու պետական մարմինների, ինչպես նաև հասարակական և միջազգային կազմակերպությունների սերտ համագործակցության շրջանակում:

### **3.6. Ջրի և սանիտարական պայմանների առկայությունը՝ որպես մարդու իրավունք. Կայուն զարգացման նպատակների իրականացման աջակցություն**

Ոլորտի վերաբերյալ նոր գիտելիքների և հմտությունների ձեռք բերման համար 2017 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները Ժնևում մասնակցել են «Մարդու իրավունքները և ջրի կառավարումը» թեմայով՝ հատուկ դասընթացի: Դասընթացը կազմակերպվել է Վոթերլեքս (WaterLex) միջազգային կազմակերպության կողմից: «Կայուն զարգացման նպատակների իրականացման աջակցություն, ջրի և սանիտարական պայմանների առկայությունը՝ որպես մարդու իրավունք» ծրագրի շրջանակում նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրամատակարարման և սանիտարական ծառայությունների հասանելիության մշտադիտարկում իրականացնելու նպատակով Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների և փորձագետների կողմից մշակվել է հստակ մեթոդաբանություն:

Այսպես, փորձագետների կողմից նախապես մշակվել են հատուկ հարցաշարեր, իսկ այցերը եղել են չհայտարարված: Այսպիսով, 2018 թվականի մայիս-հունիս ամիսներին Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մշտադիտարկման այցեր են իրականացրել Երևանի և մարզերի 201 ուսումնական և նախակրթական ուսումնական հաստատություն՝ 121 դպրոց և 80 մանկապարտեզ:

Ծրագրի շրջանակներում մշակվել և 2019 թվականին հրապարակվել է «Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքի ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը:

### **3.7 ԵՄ բյուջետային աջակցման ծրագիր**

ԵՄ բյուջետային աջակցման ծրագրի շրջանակներում ՄԱԿ-ի հիմնադրամների հետ համագործակցությամբ իրականացվել է կանանց իրավունքների և ընտանիքում բռնության կանխարգելման ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կարողությունների զարգացում: Այն իրենից ենթադրում է ինչպես վերապատրաստումների շարք, որոն իրականացրել են միջազգային և տեղեկան փորձագետները, այնպես էլ աշխատակազմի ներկայացուցիչների համար ձեռնարկների և ուղեցույցերի մշակում (ընտանիքում բռնության ենթարկված անձանց հետ աշխատանքի հմտություններ ապահովելու համար):

ԵՄ բյուջետային աջակցման ծրագրի շրջանակներում UNICEF-ի աջակցությամբ թարգմանվել, ադապտացվել և տպագրվել է «Երեխաներին անազատության մեջ պահելու վայրերի մշտադիտարկման գործնական ուղեցույց»-ը: Դրա նպատակն է աջակցել մշտադիտարկում իրականացնող մարմիններին հզորացնել նրանց կարողություններն արդյունավետ իրականացնելու երեխաներին անազատության մեջ պահելու վայրեր կատարվող այցելությունները: Ուղեցույցն այցի կազմակերպման և խնդիրների ուսումնասիրման վերաբերյալ կիրառական գործիքներով հագեցած փաստաթուղթ է:

ԵՄ բյուջետային աջակցման ծրագրի շրջանակներում գործողություններ են իրականացվել նաև խոշտանգումների կանխարգելման ոլորտում: Կազմակերպվել է կլոր-սեղան քննարկում ազատությունից զրկման վայրերում մարդու իրավունքների

պաշտպանության վերաբերյալ: Միջոցառմանը մասնակցել է Վրաստանի հանրային պաշտպանի գլխավորած պատվիրակությունը:

Ծրագրի շրջանակներում Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2017 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցը թարգմանվել է անգլերեն լեզվով: Զեկույցը տպագրվել է հայերերն և անգլերեն լեզուներով:

#### **4. Միջազգային կազմակերպությունների կողմից Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի գործունեության գնահատականները**

2018 թվականի ընթացքում Պաշտպանի և Աշխատակազմի գործունեությունը բարձր գնահատականի է արժանացել միջազգային տարբեր հարթակներում: Դրանք հիմնականում հնչել են Պաշտպանի՝ հանրապետությունում հաշվետու տարվա ապրիլ – մայիս ամիսներին տեղի ունեցած դեպքերի ընթացքում ցուցաբերած պրոֆեսիոնալիզմի և կատարած ծավալուն աշխատանքի վերաբերյալ:

Մասնավորապես, Վարչավայում տեղի ունեցած ԵԱՀԿ բարձրաստիճան համաժողովի ընթացքում 2018 թվականի սեպտեմբերի 17-ին Եվրոպական միության և դրա անդամ երկրների անունից Միացյալ Թագավորությունը հայտարարություն է հրապարակել, որում հատկապես ընդգծվել է Պաշտպանի և Աշխատակազմի դրական դերն 2018 թվականին տեղի ունեցած խաղաղ հավաքների մշտադիտարկման հարցում: **«Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքն օրինակ է մեզ բոլորիս համար»,- նշված է հայտարարությունում:**

ԵԱՀԿ մշտական խորհրդի ապրիլի 26-ի նիստում Եվրոպական միությունն իր դիրքորոշումն է ներկայացրել «Հայաստանում ժողովրդավարական գործընթացների վերաբերյալ»: ԵՄ-ն ողջունել է Աշխատակազմի աշխատանքը ոստիկանության բաժիններ, այցերի, բողոքների քննարկման և քաղաքացիների հետ առանձնազրույցների առնչությամբ կարևորելով խոսքի ու կարծիքի, ինչպես նաև միավորումների ու խաղաղ հավաքների հիմնարար ազատությունները:

2018 թվականի մայիսի 25-ին Պաշտպանն ընդունել է ԵՆԽՎ Մոնիթորինգային հանձնաժողովի Հայաստանի հարցով համազեկուցողներ Զուգեպե Գալատիին և Յուլիա Լովոչկինային: **ԵՆԽՎ համազեկուցողները բարձր են գնահատել այդ օրերին Պաշտպանի աշխատանքը և նշել են, որ իրենց հայտարարություններում այն նույնպես հաշվի են առել:**

2018 թվականի մայիսի 28-ին Պաշտպանը Ստրասբուրգում աշխատանքային հանդիպում է ունեցել Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության գլխավոր տնօրեն Քրիստոս Զիակունոպոլոսի հետ: Հայաստանում ապրիլ և մայիս ամիսներին տեղի ունեցած իրադարձությունների հետ կապված վերջինս ընդգծել է **Պաշտպանի կարևոր դերը հավաքների մասնակիցների իրավունքների երաշխավորման, հանդուրժողականության մթնոլորտի ապահովման հարցերում: Կարևորվել է Պաշտպանի ցուցաբերած անաչառ մոտեցումն ու արդյունավետ աշխատանքը, ինչպես նաև արագ արձագանքը խնդիրներին:**

Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինությունը շնորհակալություն է հայտնել Պաշտպանին Եվրոպայի խորհրդի հետ գերազանց համագործակցության համար և բարձր է գնահատել վերջինիս արդյունավետ ջանքերն այդ օրերին մարդու իրավունքների երաշխավորման հարցում՝ արտահայտելով հետագա համագործակցության պատրաստակամությունը մարդու իրավունքների կարևոր հարցերի առնչությամբ:

2018 թվականի մայիսի 28-ին Պաշտպանը Ստրասբուրգում աշխատանքային հանդիպում է ունեցել Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թորբյորն Յագլանդի հետ: Հանդիպման ընթացքում նախնառաջ քննարկվել է Պաշտպանի աշխատանքն ու

գնահատականներն ապրիլ և մայիս ամիսներին Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ: Մասնավորապես, քննարկման առարկա է դարձել Պաշտպանի գործունեությունը կապված խաղաղ հավաքների մասնակիցների իրավունքների պաշտպանության, ոստիկանության գործողությունների դեմ բողոքները քննարկելու ու գնահատականի արժանացնելու հետ և այլն: **ԵՄ գլխավոր քարտուղարը բարձր է գնահատել Պաշտպանի աշխատանքն այդ ժամանակաշրջանում և նշել, որ այն մարդու իրավունքների տեսանկյունից ունեցել է կարևոր նշանակություն քաղաքացիների իրավունքների երաշխավորման նպատակով:**

Պաշտպանն աշխատանքային այցի շրջանակում Վարշավայում հանդիպել է ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի տնօրեն Ինգիբյորգ Սոլրուն Գիսլադոտիրի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են խոշտանգումների կանխարգելման, Ոստիկանության բաժիններ բերման ենթարկված անձանց իրավունքների պաշտպանության, ինչպես նաև մի շարք այլ ոլորտներում Պաշտպանի կողմից իրականացվող աշխատանքը: **Ինգիբյորգ Սոլրուն Գիսլադոտիրը նշել է, որ տպավորված է Պաշտպանի աշխատանքով ու պրոֆեսիոնալիզմով:** Հանդիպման ավարտին կողմերը պայմանավորվածություն են ձեռք բերել ավելի խորացնել համագործակցությունը մարդու իրավունքներին առնչվող հարցերում:

2018 թվականի նոյեմբերին Դանիայի միջազգային համաժողովի ընթացքում **ընդգծվել է, որ Պաշտպանն իր գործունեությամբ ձևավորում է միջազգային լավագույն փորձ:** Բարձր են գնահատվել դրանց գործադրման մեթոդները: **Խոշտանգումների կանխարգելման ասոցիացիայի ներկայացուցիչը նշել է, որ Պաշտպանի փորձն այնպիսին է, որ կարող է օգտագործվել այլ երկրներում բարեփոխումներ իրականացնելիս:**

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի բարձր գնահատականներ են հնչել նաև տարեվերջին՝ Խոշտանգումների կանխարգելման ոլորտում Պաշտպանի 10-ամյա գործունեությանը նվիրված միջազգային համաժողովի ընթացքում: Մասնավորապես, Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար դեսպան Պյոտր Սվիտալսկին իր ելույթում նշել է, որ Պաշտպանի հաստատությունը կարող է լավ օրինակ ծառայել նաև այլ երկրների համար: Դեսպանն ընդգծել է Պաշտպանի արդյունավետ աշխատանքը և վերջինիս՝ որպես շարունակական հզորացող ինստիտուտի իրական ազդեցությունը երկրում մարդու իրավունքների համակարգի վրա:

ՄԱԿ-ի խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեի Եվրոպայի տարածաշրջանային թիմի ղեկավար Մարի Ամոսը իր ելույթում ևս ընդգծել է Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի կայացվածությունը՝ օրենսդրական բավարար երաշխիքներով ու կարողություններով:

Հայաստանի կանխարգելման ազգային մեխանիզմը ստացել է «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի՝ 1984 թվականի կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ Հատուկ հիմնադրամի դրամաշնորհը, որի շրջանակներում մշակվել է Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեի առաջարկությունների իրականացման ճանապարհային քարտեզ՝ Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեի անդամ հանդիսացող հրավիրված երկու փորձագետների մասնակցությամբ:

Պաշտպանի գործունեության օրենսդրական հիմքերի՝ միջազգային չափանիշներին լիարժեք համապատասխանեցումից հետո հաստատությունը դարձավ Երեխաների օմբուդսմանների եվրոպական ցանցի լիիրավ անդամ: Բացի այդ, Պաշտպանի ներկայացուցիչը Եվրոպայի խորհրդի Երեխաների իրավունքների կոմիտեի բյուրոյի անդամ է:

Հայաստանում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ ԱՄՆ պետական դեպարտամենտի 2018 թվականի զեկույցում անդրադարձ է կատարվել Պաշտպանի և Աշխատակազմի գործունեությանը: Դրանում, մասնավորապես, նշվում է, որ քաղաքացիական հասարակությունը գնահատել է Աշխատակազմի՝ ապրիլ-մայիս ամիսների գործունեությունը: Արձանագրվում է նաև, որ փաստաբանների՝ իրենց վստահորդներին հանդիպելու խոչընդոտները Պաշտպանի միջամտությունից հետո վերացվել են:

Առհասարակ, մարդու իրավունքների ազգային հաստատությունների գործունեության գնահատման և նրա նկատմամբ վստահության կարևորագույն ցուցանիշներից է քաղաքացիական հասարակության վերաբերմունքը դրա նկատմամբ: Այս առումով, Պաշտպանի գործունեությանը բարձր գնահատական է տրվել նաև քաղաքացիական հասարակության կողմից: Այսպես, «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ ղեկավար Լարա Ահարոնյանը 2018 թվականի ապրիլի 21-ին իր ֆեյսբուքյան էջում հայտարարություն է տարածել՝ նշելով, որ տպավորված է Պաշտպանի աշխատակազմի դրական ջանքերով Շենգավիթի ոստիկանության բաժնում ձերբակալված քաղաքացիներին և խաղաղ ցուցարարներին աջակցելու հարցում: Նա հավելել է, որ Աշխատակազմի ներկայացուցիչները մշտապես ներկա են եղել տարբեր ոստիկանական բաժիններում՝ ազատությունից զրկման պահից իրենց իրավունքների վերաբերյալ քաղաքացիներին իրազեկելու և վերջիններիս նկատմամբ ոստիկանության ցուցաբերած վերաբերմունքի վերաբերյալ տեղեկություն հավաքելու նպատակով:

Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի խորհրդի նախագահը Հայաստանում 2018 թվականի ապրիլին տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ գիրք է հրատարակել՝ «Հայկական թավշյա հեղափոխություն» խորագրով: Գրքում հատուկ անդրադարձ է կատարվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կարևոր աշխատանքին: «Հարկ է ընդգծել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ջանքերը: Շնորհիվ այն բանի, որ այս ինստիտուտը կայացել է, Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի և նրա թիմի ակտիվ գործողություններն իրենց էական և դրական ազդեցությունն ունեցան հայաստանյան ոստիկանության ցուցարարների նկատմամբ ուժի անհամաչափ գործադրումը կանխելու առումով», - նշված է աշխատության մեջ:

Ընդգծվել է Մարդու իրավունքների պաշտպանի մեծ դերակատարությունը խաղաղ ցուցարարների նկատմամբ ագրեսիվ գործողությունների զսպման առումով: Նշվել է Պաշտպանի հայտարարության կարևորությունը, որում Ոստիկանությանը պահանջ էր դրված՝ անհապաղ ազատ արձակել անչափահասներին ոստիկանության բաժիններից: Կարևորվել են այդ օրերին բերման ենթարկված անձանց պահելու վայրեր անձամբ Պաշտպանի և աշխատակազմի իրականացրած այցերը (էջեր 57, 89, 91, 92): Ընդ որում, Ստեփան Գրիգորյանն այդ օրերին ազատությունից զրկվել էր Ոստիկանության կողմից և ազատ է արձակվել հենց Պաշտպանի կողմից իշխանություններին ներկայացված անհապաղ ազատ արձակման պահանջից հետո:

## **5. Արտահերթ հրապարակային զեկույցներ, իրավական վերլուծություններ և փաստահավաք աշխատանքներ**

2018 թվականի սեպտեմբերին Տավուշի մարզի Կոթի, Բաղանիս, Վազաշեն, Չինարի, Ոսկեվան և Այգեհովիտ սահմանամերձ գյուղերում իրականացված փաստահավաք աշխատանքների արդյունքում անգլերեն լեզվով հրապարակվել է Պաշտպանի արտահերթ զեկույցը, որն իր մեջ ամփոփում է աղբյուրներից զինված ուժերի կողմից թիրախավորված շարունակական կրակոցների վերաբերյալ ձեռք բերված տվյալները:

Զեկույցը ներկայացվել է նաև միջազգային իրավապաշտպան կառույցներին, Հայաստանի իրավասու պետական մարմիններին ու հասարակական իրավապաշտպան կազմակերպություններին:

2018 թվականին Աշխատակազմն իրականացրել է մարդու իրավունքների առանձին ոլորտների ուսումնասիրություն: Դրանց հիման վրա հրապարակվել են արտահերթ զեկույցներ և իրավական վերլուծություններ, որոնք կազմվել են ներպետական և միջազգային չափանիշների վերլուծությամբ: Արտահերթ զեկույցների մշակումը թույլ է տալիս իրականացնել համապատասխան ոլորտում իրավունքների ապահովմանն առնչվող ձեռքբերումների և բացերի համապարփակ, խորն ուսումնասիրություն: Դրանցում արձանագրված խնդիրները վերաբերում են ոչ միայն իրավակիրառ պրակտիկային, այլ նաև օրենսդրական խնդիրներին, որոնցից յուրաքանչյուրի վերաբերյալ ներկայացվել են կոնկրետ առաջարկներ: Հաշվետու ժամանակահատվածում հրապարակվել է ընդհանուր առմամբ 8 արտահերթ զեկույց, ուղեցույց, սեղմագիր որոնց մի մասը թարգմանվել է նաև անգլերեն և ռուսերեն լեզուներով: Ստորև ներկայացվում են դրանց համառոտ նկարագիրները՝

### **5.1 «Հայաստանի Հանրապետության պրոբացիայի պետական ծառայության գործունեության մշտադիտարկում» արտահերթ հրապարակային զեկույց<sup>6</sup>**

Արտահերթ հրապարակային զեկույցի նպատակն է եղել Հայաստանի Հանրապետությունում Պրոբացիայի պետական ծառայության գործունեության ուսումնասիրությունը: Այս ծառայությունը գործում է արդեն ավելի քան երկու տարի, ու թեև մինչև այժմ Պրոբացիայի ծառայության վերաբերյալ հրապարակվել են ուսումնասիրություններ, սա առաջին համապարփակ զեկույցն է, որն անդրադառնում է Պրոբացիայի ծառայության գործունեությանը դրա հիմնադրումից մինչև սույն զեկույցի հրապարակումն ընկած ժամանակահատվածը: Ըստ այդմ, զեկույցը տրամադրում է Ծառայության գործունեության ամբողջական նկարագիրը 2016 թվականի սեպտեմբերից մինչև 2018 թվականի հոկտեմբերը:

### **5.2 «Հայեցակարգ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի դեմ պայքարի» արտահերթ զեկույց<sup>7</sup>**

Համակողմանի ուսումնասիրության և հատուկ սկզբունքներով մշտադիտարկման է ենթարկվել քրեակատարողական հիմնարկներում առկա քրեական ենթամշակույթը և դրա ազդեցությունն ազատությունից զրկված անձանց միջև հարաբերությունների և քրեակատարողական համակարգի վրա:

Հայեցակարգը նպատակ է հետապնդել վեր հանել այդ հիմնարկներում քրեական ենթամշակույթի գոյության բարենպաստ պայմանների բացառման, ենթամշակույթի ազդեցության նվազեցման և դրա տարածման կանխարգելման հնարավոր ուղիները, ներկայացնել խնդիրների լուծմանն ուղղված համալիր առաջարկություններ:

Հայեցակարգը և դրա հիմքում ընկած ուսումնասիրությունները վերաբերում են հետևյալ հիմնական հարցերին.

<sup>6</sup> Զեկույցը հայերենով հասանելի է հետևյալ հղումով.

<http://www.pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/c3fc33641c2871502066374406df2198.pdf>,  
անգլերեն լեզվով՝ հետևյալով.

<http://www.pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/0ad07d5101ac6668e76bd60f6f6afbbe.pdf>

<sup>7</sup> Զեկույցը հայերենով հասանելի է հետևյալ հղումով.

<http://www.pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/1d8761660add27b847ba0f11fb66aa6f.pdf>

- 1) ազատությունից զրկելը՝ որպես բացառիկ միջոց,
  - 2) քրեակատարողական համակարգում հաստիքների համալրում, քրեակատարողական ծառայողների պատշաճ սոցիալական և այլ երաշխիքներ,
  - 3) ազատությունից զրկված անձանց հետ տարվող աշխատանքներ,
  - 4) ազատությունից զրկված անձանց կրթություն և զբաղվածություն,
  - 5) քրեակատարողական հիմնարկներում պահման պայմաններ:
- Հետապնդվող նպատակներին հասնելու համար զեկույցում տեղ են գտել անմիջական լուծում պահանջող ինչպես գործնական, այնպես էլ օրենսդրական համալիր առաջարկներ:

**5.3 «Պատժախուց տեղափոխված կալանավորված անձանց և դատապարտյալների մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, հաղորդագրության ազատության իրավունքների վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույց<sup>8</sup>**

Սույն արտահերթ հրապարակային զեկույցը վերաբերում է ազատությունից զրկված անձանց՝ կալանավորների և դատապարտյալների իրավունքների երաշխավորմանը, երբ նրանք տեղափոխվում են պատժախուց: Այս ոլորտի օրենսդրությունը Հայաստանի Հանրապետությունում վկայում է, որ հիմնարկի պետի որոշմամբ կալանավորված անձի կամ դատապարտյալի նկատմամբ պատժախուց տեղափոխելը՝ որպես տույժի միջոց կիրառելու հետ միաժամանակ նա ցանկացած պարագայում, մեխանիկորեն՝ անկախ որևէ հանգամանքից, զրկվում է արտաքին աշխարհի հետ կապից՝ տեսակցություններից, հեռախոսազանգերից, նամակագրությունից, ինչպես նաև գրականությունից, լրատվության միջոցներից օգտվելուց և այլն: Ուստի, ստացվում է, որ տույժի այդ միջոցն ունի լրացուցիչ զրկանքներ պատճառելու բնույթ, որոնք որևէ կապ չունեն տույժի նպատակների կամ պատճառների հետ: Սա իր հերթին այդ արգելքները դարձնում է ինքնանպատակ:

Հետևաբար, անձին պատժախուց տեղափոխելիս և դրա հիմքով նրա նկատմամբ վերը նշված զրկումները կիրառելիս որևէ բացառություն չի քննարկվում, չի ցուցաբերվում անհատական մոտեցում: Այսինքն՝ գործող կարգավորումների պայմաններում անձին պատժախուց տեղափոխելն առաջացնում է սահմանադրական իրավունքների պարտադիր զրկում՝ առանց հնարավորություն տալու քննարկելու այդ զրկման նպատակահարմարության, համաչափության հարցերը: Որևէ քննարկման չի արժանանում նաև ազատությունից զրկված անձի վարքագծի ռիսկայնությունը: Այլ կերպ՝ գործող օրենսդրության բացարձակ բնույթ ունեցող արգելքի ուժով՝ յուրաքանչյուր դեպքում, երբ անձը տեղափոխվում է պատժախուց նա մեխանիկորեն զրկվում է արտաքին աշխարհի հետ կապից: Ուստի, նշվածն առաջացնում է կալանավորված անձի կամ դատապարտյալի՝ Սահմանադրությամբ ամրագրված մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության իրավունքներից անհամաչափ և մեխանիկական զրկում:

Պաշտպանին հասցեագրված բողոքների քննարկման, ինչպես նաև Կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակով Պաշտպանի մշտադիտարկումների արդյունքները վկայում են, որ նկարագրված օրենսդրական կարգավորումների պատճառով գործում է նույնանման խնդրահարույց պրակտիկա:

**5.4 «Հոգեբուժական կազմակերպություններում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույց<sup>9</sup>**

<sup>8</sup> Չեկույցը հայերենով հասանելի է հետևյալ հղումով.

<http://www.pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/3023fb5c4845dda4caae9167e10a0eaf.pdf>

2017 թվականի ընթացքում Պաշտպանի որպես՝ Կանխարգելման ազգային մեխանիզմի լիազորությունների շրջանակում Աշխատակազմը չհայտարարված այցեր է իրականացրել հոգեբուժական կազմակերպություններ: Մշտադիտարկման արդյունքում վեր են հանվել համակարգային խնդիրներ, որոնց ներպետական և միջազգային օրենսդրության վերլուծությամբ մշակվել և հրապարակվել է ոլորտի վերաբերյալ արտահերթ զեկույց:

**5.5 Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Տավուշի մարզի Կոթի, Բաղանիս, Վազաշեն, Չինարի, Ոսկեվան և Այգեհովիտ գյուղերում կատարված փաստահավաք աշխատանքների վերաբերյալ<sup>10</sup>**

Ձեկույցի մշակման նպատակով իրականացվել են փաստահավաք աշխատանքներ: Բացառապես իրավապաշտպան աշխատանք իրականացնելու և առաջնային աղբյուրից հավաստի տվյալներ ձեռք բերելու նպատակով՝ փաստահավաք խումբն արձանագրել է վնասվածքների բազմաթիվ հետքեր: Աշխատանքները վկայում են, որ կրակոցներն արվում են գյուղի խաղաղ բնակիչների, այդ թվում՝ երեխաների կյանքի և առողջության համար վտանգավոր եղանակով:

Դիտարկման արդյունքները տեղայնացվել են ընդհանուր հասանելիություն ունեցող քարտեզի վրա:

Տեսանյութում GoogleEarth ծրագրի օգտագործմամբ ինտերակտիվ եղանակով իրականացվել են համապատասխան նշագրումներ, որոնք ցույց են տալիս սեպտեմբեր ամսին գնդակոծության ենթարկված մանկապարտեզներն ու դպրոցները, քաղաքացիական տներն ու շենք-շինությունները, ինչպես նաև Վազաշեն գյուղում երեխաների պարի ժամանակ տեղի ունեցած կրակոցները:

**5.5 2017-2018 թվականներին ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հատուկ դիրքորոշումների սեղմագիր<sup>11</sup>**

Սահմանադրական դատարանի հատուկ դիրքորոշումներ ներկայացնելու պրակտիկան ներդրվել է 2016 թվականից: Հատուկ դիրքորոշումներում ներառվում են Պաշտպանի կողմից անհատական բողոքների քննարկման, ինչպես նաև մշտադիտարկման արդյունքում իրավունքների և ազատությունների վերաբերյալ իրականացված վերլուծությունները, կոնկրետ հարցի սահմանադրականության մասին միջազգային սկզբունքներ և չափանիշներ: Դիրքորոշումներ ներկայացնելու շրջանակում ուսումնասիրվել են դատավարական ժամկետների միատեսակ կիրառության հարցը, վարչական դատավարության ընթացքում գանձվող պետական տուրքի, պետական տուրքից ազատելու վերաբերյալ կարգավորումները, զինծառայողների ծառայությունից կամ աշխատանքից ազատվելիս չօգտագործված բոլոր արձակուրդների համար դրամական հատուցում ստանալու խնդիրը և մի շարք այլ հարցեր:

<sup>9</sup> Ձեկույցը եռալեզու տարբերակով՝ հայերենով, անգլերեն և ռուսերեն լեզուներով, հասանելի է հետևյալ հղումով.

<http://www.pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/74369f4bd6584c4f665b712b164ce129.pdf>

<sup>10</sup> Ձեկույցն անգլերեն լեզվով հասանելի է հետևյալ հղումով.

<http://www.ombuds.am/images/Report.pdf> փաստահավաք աշխատանքների արդյունքները տեղայնացվել են ընդհանուր հասանելիություն ունեցող քարտեզի վրա.

<https://www.youtube.com/watch?v=yMzYmf8GmvM&t=495s&fbclid=IwAR2d92ONLWnMPCmnfyhuwzB249iTp7e02GZ7Omrj53f0-4u10-Nsfc9rCI>

<sup>11</sup> Սեղմագիրը հայերենով հասանելի է հետևյալ հղումով.

<http://www.pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/b906b38cc98904d6e760ef1e73046278.pdf>,

անգլերեն լեզվով՝ հետևյալով.

<http://www.pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/58f43cd7810d966269cd65b464dc16da.pdf>



## **5.6 Երեխաներին անազատության մեջ պահելու վայրերի մշտադիտարկում» գործնական ուղեցույց<sup>12</sup>**

Ուղեցույցը նպատակ ունի բարելավել երեխաներին անազատության մեջ պահելու պայմանները՝ մշտադիտարկում իրականացնող մարմիններին ապահովելով կիրառական գործիքներով: Դրա հայերեն ադապտացված տարբերակը նախատեսված է երեխաներին անազատության մեջ պահելու վայրերում մանդատով, օրենքով կամ առանձնահատուկ համաձայնագրով մշտադիտարկում իրականացնելու կամ այցելելու իրավասություն ունեցող մասնագետների, ինչպես նաև երեխաներին անազատության մեջ պահելու վայրերի ղեկավարության, վարչակազմի և աշխատակիցների համար:

## **5.7 Թվային միջավայրում երեխայի իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրացնելու համար ուղեցույց<sup>13</sup>**

«Թվային միջավայրում երեխաների իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրացնելու համար» ուղեցույցն ընդունվել է վերջերս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից և այն պարունակում է առաջարկություններ Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունների համար, տրվում են օգտակար, թեմատիկ ուղղորդումներ:

Վերլուծության հիման վրա մշակված եզրահանգումներն ու առաջարկությունները, ուղարկվել են իրավասու պետական մարմիններին, ինչպես նաև ոլորտներում գործող հասարակական և միջազգային կազմակերպություններին:

## **5.8 Ուղեցույցներ ջրամատակարարման և գազամատակարարման ոլորտում սպառողների իրավունքների վերաբերյալ**

Նշված ուղեցույցները կազմվել են՝ հիմք ընդունելով Պաշտպանի աշխատակազմի դիտարկումների, ինչպես նաև Պաշտպանին հասցեագրված դիմումների և բողոքների ուսումնասիրության արդյունքները: Ուղեցույցների նպատակն է բարձրացնել սպառողների իրազեկվածության մակարդակը ջրամատակարարման և գազամատակարարման ոլորտներում:

Դրանցում փորձ է արվել ներառել այն հարցերի պատասխանները, որոնք առավել հաճախ են բարձրացվում Պաշտպանին հասցեագրվող բողոքներում: Հարցերի պատասխանները կազմելիս հիմք են ընդունվել ջրային ոլորտի և էներգետիկայի բնագավառի իրավական ակտերի կարգավորումները:

<sup>12</sup> Ուղեցույցը հայերենով հասանելի է հետևյալ հղումով.

<http://www.pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/191ea4436d7597179c981e055fa97a39.pdf>

<sup>13</sup> Ուղեցույցը հայերենով հասանելի է հետևյալ հղումով.

[http://www.pashtpan.am/images/CoE\\_IT\\_Guidelines\\_-\\_ARM\\_-\\_final.pdf](http://www.pashtpan.am/images/CoE_IT_Guidelines_-_ARM_-_final.pdf)

**ԲԱԺԻՆ 2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

*Բողոքների թվի համեմատական պատկերը ցույց է տալիս, որ 2014 թվականին դիմում-բողոքների թիվը կազմել է 6.326, 2015 թվականին՝ 5.214, 2016 թվականին՝ 5.113, 2017 թվականին հասցեագրված դիմումների ու բողոքների թիվը կազմել է 6.417, 2018 թվականին այդ ցուցանիշը գրեթե երկու անգամ ավելացել է՝ դառնալով 10.754 դիմում-բողոք:*

Բողոքների աճը կրում է շարունակական բնույթ և 2018 թվականի տվյալները վկայում են դրա շեշտակի աճի մասին: Մասնավորապես, հաշվետու տարվա հուլիս ամսին ստացած բողոքների թիվը շուրջ 10 անգամ ավելի է նախորդ երկու տարիների նույն ժամանակահատվածի համեմատությամբ: Այսպես, եթե 2016 թվականի հուլիս ամսին ստացվել է 103 բողոք, 2017 թվականի նույն ամսին՝ 158, ապա 2018 թվականին՝ 1093: Բողոքների թիվն ավելի քան 3 անգամ բարձր է նաև մայիս և հունիս ամիսներին նախորդ երկու տարիների նույն ամիսների համեմատությամբ:

*Բողոքների թվի աճով և մշտադիտարկման լիազորություններով պայմանավորված ավելանում են նաև իրականացվող այցերը:*

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում, նախորդ 4 տարիների հետ համեմատած, գրեթե կրկնակի աճել են ինչպես արագ արձագանքման, այնպես էլ ազատությունից զրկման վայրեր իրականացված այցերը:

*Այսպես, 2014 թվականին ընդհանուր առմամբ իրականացվել է 458 այց, 2015 թվականին՝ 586, 2016 թվականին՝ 415, 2017 թվականին՝ 614, 2018 թվականին՝ 864:*

Զուգահեռ աճում է նաև արդյունավետությունն ու դրական գործերի քանակը:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ զգալի աճել է անհատական գործերով աշխատանքի արդյունավետությունը՝ նախորդ տարիների գործունեության հետ համեմատած:


*Այսպես, Պաշտպանի իրավասությանը վերաբերող անհատական գործերով վերջին 5 տարիների տվյալների համեմատական պատկերը ցույց է տալիս, որ 2014 թվականին դրական լուծում ստացած բողոքների թիվը կազմել է 385, 2015 թվականին՝ 498, 2016 թվականին՝ 444, 2017 թվականին այդ ցուցանիշը շուրջ երկու անգամ ավելացել է՝ դառնալով 845, իսկ արդեն 2018 թվականին՝ 1593:*

Ընդ որում, նշված վիճակագրական տվյալները չեն ներառում Սահմանադրական դատարանի դիմելու համար քաղաքացիների և հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված դիմումների, ինչպես նաև պետական մարմիններից ստացված օրենսդրական փոփոխություններին ուղղված գործերի թիվը:


*Վիճակագրական տվյալները վկայում են նաև Պաշտպանին կարծիքի ներկայացված իրավական ակտերի նախագծերի թվի էական աճի մասին: Այսպես, 2016 թվականին Պաշտպանին կարծիքի են ներկայացվել մոտ 90 իրավական ակտերի նախագծեր, 2017 թվականին՝ 144, իսկ 2018 թվականին՝ 185 նախագիծ:*

Անհրաժեշտ է նաև նշել, որ բացի Պաշտպանին կարծիքի ներկայացված օրենքների, կառավարության որոշումների և այլ իրավական ակտերի նախագծերից՝ մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող օրենսդրության կատարելագործման նպատակով Պաշտպանի կողմից մշակվել և շրջանառության են ներկայացվել օրենսդրական նախագծերի մի շարք փաթեթներ (օրինակ՝ ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանության կատարելագործում, կալանավորված անձանց տեսակցությունների և հեռախոսային խոսակցությունների նկատմամբ արգելքի համակարգի բարեփոխում և այլն):

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ




**ԳՐԱՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ ԸՍՏ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ**




- Երևան - 6141
- Սյունիքի մարզ - 425
- Լոռու մարզ - 384
- Կոտայքի մարզ - 328
- Տավուշի մարզ - 169
- Վայոց ձորի մարզ - 40
- Գեղարքունիքի մարզ - 686
- Արմավիրի մարզ - 423
- Արարատի մարզ - 360
- Շիրակի մարզ - 262
- Արագածոտնի մարզ - 104
- Հասցե չպարունակող բողոքներ - 1432

## ՏՎՅԱԼՆԵՐ ԱՅՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ<sup>1</sup>




<sup>1</sup> Կանխարգելման ազգային մեխանիզմի ազատությունից զրկման վայրեր այցերի թվի նվազումը նախորդ տարվա համեմատ պայմանավորված է անհատական և մշտադիտարկման այցերի տարանջատմամբ


**ԳՐԱՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ԶԱՆԱԿԸ՝  
ԸՍՏ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**




**2014-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՈՂՈՔՆԵՐԻ  
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ**



**2014-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ  
ԴՐԱԿԱՆ ԼՈՒԾՎԱԾ ԳՈՐԾԵՐԻ  
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ**



**2014-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՅՅԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ**



### ԲԱԺԻՆ 3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

#### ԳԼՈՒԽ 1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Սոցիալական ապահովության իրավունքը Սահմանադրությամբ և միջազգային մի շարք փաստաթղթերով երաշխավորված իրավունք է: Այս իրավունքի էությունն է երաշխավորել յուրաքանչյուրի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովությունը (ՀՀ Սահմանադրության 83-րդ հոդված):

Սոցիալական ապահովությունն իր մեջ ներառում է պետական կենսաթոշակների, պետական նպաստների վճարումը դրա իրավունքն ունեցող մարդկանց: Տվյալ իրավահարաբերություններն առնչվում են նաև այլ իրավունքներին: Օրինակ՝ թե՛ Սահմանադրական դատարանի որոշմամբ, թե՛ միջազգային չափանիշներով ամրագրված է, որ կենսաթոշակի վճարումը գործնականում սեփականությունը սեփականատիրոջը փոխանցելու միջոց է<sup>14</sup>: Սոցիալական ապահովությունը նաև սերտորեն կապված է պատշաճ վարչարարության իրավունքի հետ:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բազմաթիվ բողոքներում բարձրաձայնվել են ոլորտում առկա թե՛ գործնական և թե՛ օրենսդրական խնդիրներ, որոնց հիման վրա վեր են հանվել այս իրավունքների իրացման ոլորտում առկա համակարգային խնդիրներ: Այդ խնդիրները ներկայացվում են ստորև:

#### ***1. Կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու հնարավորության սահմանափակումներ***

##### ***1.1 Կենսաթոշակ նշանակելն արտոնյալ պայմաններով***

Դեռևս լուծված չեն արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու հետ կապված խնդիրները, որոնց մասին 2018 թվականի ընթացքում ևս Պաշտպանին հասցեագրվել են բազմաթիվ բողոքներ: Խնդիրն այն է, որ ըստ Պաշտպանին հասցեագրված բողոքների՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու մասին անձանց դիմումները մերժվում են՝ պատճառաբանությամբ, որ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող նրանց աշխատանքային ստաժը չի բավականացնում, քանի որ ծանր, վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների, պաշտոնների և ցուցանիշների համապատասխան իրավական ակտում նրանց մասնագիտությունները տառացիորեն ներառված չեն:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակվում է օրենքով ամրագրված չափանիշներին բավարարող 55 տարին լրացած անձին: Տրամաբանությունն այն է, որ անձը ստանում է արտոնյալ կենսաթոշակի իրավունք, եթե օրենքով նախատեսված ժամկետում աշխատել է առանձնապես վնասակար, ծանր, արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող պայմաններում կամ կատարել է արտոնյալ կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք: Արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող արտադրությունների,

<sup>14</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ ՍԴՈ-649 որոշումը <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=27418> :



աշխատանքների, մասնագիտությունների, պաշտոնների և ցուցանիշների ցանկերը սահմանված են ՀՀ կառավարության 2012 թվականի հունվարի 12-ի թիվ 12-Ն որոշմամբ:

Ստացվում է, որ եթե կատարած աշխատանքը բառացիորեն ներառված չէ ցանկում, ապա մարդը զրկվում է կենսաթոշակից, անկախ նրանից, որ տարիներ շարունակ փաստացի կատարել է արտոնյալ կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք, աշխատել է առողջության համար վտանգավոր պայմաններում: Խնդիրն առաջանում է միայն այն պատճառով, որ աշխատանքային գրքույկում այլ գրառում է կատարվել (նույն աշխատանքը նշվել է այլ անվանմամբ):

Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով մարդն աշխատել է մետաղյա իրերի գործարանում որպես չոր եղանակով հղկող: ՀՀ կառավարության թիվ 12-Ն որոշմամբ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք ունեն այն բանվորները, ովքեր հղկաշրջանակի միջոցով չոր եղանակով կոպտատաշում, տաշում, կտրում, հղկում են մետաղյա իր և գործիք: Ըստ բողոքի՝ չնայած մարդն ավելի քան 24 տարի կատարել է նույն աշխատանքը, աշխատանքային գրքույկում նշվել է, որ նա աշխատել է որպես հղկող՝ առանց աշխատանքի չոր լինելու վերաբերյալ որևէ նշումի, որի պատճառով վերջինս զրկվել է համապատասխան կենսաթոշակից:

Ավելին, Պաշտպանին հասցեագրված բողոքները վկայում են նաև այս ոլորտում թերի վարչարարության մասին: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել: Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար: Հակառակ դեպքում անձի հաղորդած տվյալների հավաստի լինելու փաստի ուժով վարչական մարմինը պարտավոր է կենսաթոշակ նշանակել արտոնյալ պայմաններով:

Մինչդեռ բողոքների քննությունը ցույց է տվել, որ արտոնյալ պայմաններով աշխատանքային կենսաթոշակ նշանակելու դիմումի առթիվ հարուցված վարչական վարույթի ընթացքում վարչական մարմինը չի ապահովում փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում՝ պարզելու դիմում ներկայացրած ֆիզիկական անձի մոտ մասնակի կենսաթոշակ ստանալու համար անհրաժեշտ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված բոլոր պարտադիր պայմանների ու պահանջների առկայությունը կամ բացակայությունը: Փաստորեն, ծանր և վնասակար աշխատանքի *փաստացի* կատարումը բավարար չի լինում արտոնյալ կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու համար:

Օրինակ՝ մարդուն արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու բողոքներից մեկով՝ դիմողն աշխատել է հակատուրբերկույրոգային դիսպանսերում որպես հերթափոխային բուժքույր, ինչը նախատեսված է արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող պաշտոնների ցանկում: Առանց ճշտելու քաղաքացու կատարած աշխատանքի բնույթը, ինչպես նաև ծանր, վնասակար պայմաններում աշխատելու փաստը, արտոնյալ պայմաններով աշխատանքային կենսաթոշակ նշանակելու դիմումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ դիմողը չունի այդ կենսաթոշակը նշանակելու համար պահանջվող 20 տարվա աշխատանքային ստաժ:

Պաշտպանի միջամտությունից հետո սոցիալական ապահովության տարածքային բաժնին հանձնարարվել է կատարել հավելյալ ուսումնասիրություններ՝ ճշտելով դիմողի կատարած աշխատանքի բնույթը: Կատարված լրացուցիչ ստուգման արդյունքներով

հիմնավորվել է, որ դիմողը կատարել և կատարում է արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող պաշտոնների ցանկով նախատեսված աշխատանք: Պաշտպանի աջակցությամբ բարձրացված խնդիրը լուծվել է, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հանձնարարել է սոցիալական ապահովության տարածքային բաժնին դիմողին արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակել դիմելու օրվանից, բացի այդ, հաշվարկել և սահմանված կարգով վճարել նրան հասանելի չվճարված կենսաթոշակի գումարը:

Նշված դեպքն ապացույցն է, որ արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելը հաճախ պայմանավորված է սոցիալական ապահովության տարածքային բաժինների կողմից իրականացվող ոչ պատշաճ վարչարարության, փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում չիրականացնելու հետ:

Ավելին, անհրաժեշտ է հատուկ ընդգծել, որ չնայած գործնականում առաջացած այս խնդիրներն արդեն բարձրաձայնվում են տարիներ շարունակ՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների, պաշտոնների և ցուցանիշների ցանկերը սահմանող ՀՀ կառավարության 2012 թվականի հունվարի 12-ի թիվ 12-Ն որոշումը որևէ փոփոխության չի ենթարկվել, ինչը նշանակում է, որ այս խնդիրները շարունակական բնույթ են կրելու: Չի վերանայվել և փոփոխության ենթարկվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2012 թվականի հուլիսի 20-ի թիվ 66-Ն հրամանը, որով սահմանվել են արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող առանձնապես ծանր, առանձնապես վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների, պաշտոնների և ցուցանիշների թիվ 1 ցուցակը և արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ծանր, վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների, պաշտոնների և ցուցանիշների թիվ 2 ցուցակը կիրառելու կանոնները:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է՝

*1. արտոնյալ պայմաններով կենսաթոշակի նշանակման յուրաքանչյուր դեպքում ուղղորդվել ոչ միայն Կառավարության թիվ 12-Ն որոշմամբ սահմանված ցանկերում նշված մասնագիտությունների և պաշտոնների տառացի և նեղ մեկնաբանմամբ, այլև հաշվի առնել արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող յուրաքանչյուր մասնագիտության և պաշտոնի բուն էությունը՝ նմանատիպ յուրաքանչյուր դեպքի հիման վրա շարունակաբար կատարելագործելով Կառավարության թիվ 12-Ն որոշմամբ սահմանված ցանկը,*

*2. իրավակիրառ պրակտիկայում առաջացած յուրաքանչյուր դեպքի հիման վրա կատարելագործել ՀՀ կառավարության 2012 թվականի հունվարի 12-ի թիվ 12-Ն որոշմամբ հաստատված արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ցուցակները:*

## **1.2 Մասնակի կենսաթոշակ նշանակելը**

2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բազմաթիվ բողոքների ընդհանուր ուսումնասիրությունը վկայում է, որ համակարգային առումով շարունակում են չլուծված մնալ Պաշտպանի տարեկան հաղորդումներում մշտապես բարձրաձայնվող՝ մասնակի կենսաթոշակ նշանակելու հարցում առկա համակարգային խնդիրները:

Ստացված բողոքներով դիմողներն արդարացիորեն իրենց դժգոհությունն են հայտնել, որ մասնակի կենսաթոշակ նշանակելը մերժվել է՝ պատճառաբանությամբ, որ իրենց զբաղեցրած պաշտոնը, մասնագիտությունը կամ այն կազմակերպությունը, որտեղ աշխատել են, ներառված չեն համապատասխան իրավական ակտում: Խնդիրն այն է, որ շարունակում է խնդրահարույց մնալ Կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված ցանկում թվարկված կազմակերպությունների, մասնագիտությունների և պաշտոնների ամբողջական

չլինելը, ինչի հետևանքով մի շարք մասնագիտություններ ու կազմակերպություններ դուրս են մնում այդ ցանկից:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներ կարող են ձեռք բերել մասնակի կենսաթոշակ ստանալու իրավունք, եթե կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի համապատասխան ստորաբաժանում դիմելու պահին լրացել է նրանց 55 տարին, ունեն առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ և մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում առնվազն 12 օրացուցային տարի աշխատել են մասնակի կենսաթոշակի իրավունք տվող համապատասխան մասնագիտություններով կամ պաշտոններում: Ըստ այդմ, կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտությունների և պաշտոնների ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 665-Ն որոշմամբ:

Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկի համաձայն՝ քաղաքացուն մասնակի կենսաթոշակ չի նշանակվել՝ պատճառաբանությամբ, որ Կառավարության թիվ 665-Ն որոշմամբ հաստատված թիվ 6 հավելվածում ընդգրկված չեն ուսումնաարտադրական կոմբինատները, որտեղ վերջինս տևական ժամանակ աշխատել է: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության որակմամբ՝ ուսումնաարտադրական կոմբինատները չեն կարող համարվել այլ տեսակի պրոֆեսիոնալ տեխնիկական կրթության դպրոց և ուսումնարան, ինչպես նշված է վերը վկայակոչված ցանկում:

Փաստորեն, նշված ցանկում չընդգրկված ցանկացած այլ կազմակերպությունում անձի կատարած աշխատանքի ժամանակահատվածը չի հաշվառվում մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտական ստաժում՝ անկախ նրանից, որ անձը փաստացի կատարել է մասնակի կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք:

Մեկ այլ դեպքով քաղաքացուն մասնակի կենսաթոշակ չի նշանակվել՝ պատճառաբանությամբ, որ ՀՀ կառավարության թիվ 665-Ն որոշմամբ հաստատված թիվ 6 հավելվածի 9-րդ կետով սահմանված պաշտոնների ցանկում ավագ խմբագրի պաշտոնը նախատեսված չէ: ՀՀ կառավարության թիվ 665-Ն որոշմամբ հաստատված թիվ 6 հավելվածի 9-րդ կետի համաձայն՝ մասնակի կենսաթոշակի իրավունք են տալիս մատենադարանում, գրադարանում՝ անկախ գերատեսչական պատկանելությունից, ի թիվս այլնի, որպես *խմբագիր, առաջին կարգի, երկրորդ կարգի խմբագիրներ* կատարած աշխատանքն: Ակնհայտ է, որ իրավական ակտում թվարկված պաշտոնների ցանկում «խմբագիր», «առաջին կարգի, երկրորդ կարգի խմբագիրներ» պաշտոնների հետ մեկտեղ «ավագ խմբագիր» պաշտոնի չնախատեսումը չպետք է դիտվի և գնահատվի ի վնաս անձի, հետևաբար անձի՝ որպես ավագ խմբագիր աշխատած ժամանակահատվածը ևս ենթակա է հաշվառման մասնակի կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժում:

2018 թվականին Պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքի համաձայն՝ դիմողն ուսումնարանում աշխատել է որպես արտադրական ուսուցման վարպետ, մասնակի կենսաթոշակ նշանակվելը մերժվել է նշված պաշտոնը դիմողի՝ մասնակի կենսաթոշակ նշանակելու համար դիմելու օրվա դրությամբ ՀՀ կառավարության 665-Ն որոշմամբ հաստատված թիվ 6 հավելվածով սահմանված չլինելու պատճառով: Քաղաքացին սոցիալական ապահովության մարմնին դիմել է դեռևս 2014 թվականից: Ուշագրավ է այն, որ դիմողի՝ մասնակի կենսաթոշակ նշանակելու համար դիմելու օրվա դրությամբ ՀՀ կառավարության թիվ 665-Ն որոշմամբ հաստատված թիվ 6 հավելվածի 5-րդ կետով որպես մասնակի կենսաթոշակի իրավունք տվող պաշտոն, ի թիվս այլնի՝ նշված է եղել տնօրենը (դիրեկտոր), տնօրենի (դիրեկտորի) տեղակալը, դասատուն, ուսուցիչը, *մանկավարժը*:

Դիմողը մասնակի կենսաթոշակ նշանակելու դիմումից բացի ներկայացրել է նաև ՀՀ կրթության և գիտության նախարարությունից տրված տեղեկանք, որով Նախարարությունը պարզաբանել է, որ արտադրական ուսուցման վարպետը համարվում է *մանկավարժ*: Նախարարության տեղեկանքը կենսաթոշակ նշանակող մարմինն անտեսել է:

Բացի այդ, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ *արտադրական ուսուցման վարպետն* անձի արհեստագործական հմտություններ ապահովող, արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և (կամ) մասնագիտական ուսուցման համակարգի մանկավարժական աշխատող է: Նշվածը, սակայն, հաշվի չի առնվել և վերը նշված ցանկով նախատեսված պաշտոնների նեղ մեկնաբանման պատճառով դիմողին մերժվել է մասնակի կենսաթոշակ նշանակելը:

2016 թվականի հոկտեմբերի 20-ին ընդունվել է «ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 1082-Ն որոշումը, որով կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտությունների և պաշտոնների ցանկում ավելացել է «արտադրական ուսուցման վարպետ» պաշտոնը: Խնդիրը, սակայն այն է, որ մասնակի կենսաթոշակ նշանակվում կամ վերահաշվարկվում են 2016 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2017 թվականի մարտի 1-ը ներկայացված դիմումների հիման վրա: Ստացվում է, որ չնայած նրա, որ քաղաքացին փաստացի կատարել է այդ աշխատանքը, որն օրենսդրության մակարդակով ընդունել է նաև պետությունը, բայցևայնպես վերջինիս կենսաթոշակ նշանակվում է օրենսդրական փոփոխությունից հետո դիմելու ժամանակահատվածով: Ավելին, եթե բաց են թողնվում դիմելու վերը նշված ժամկետը, կենսաթոշակը նշանակվում է դիմելու օրվանից:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատարանների գնահատմամբ՝ արտադրական ուսուցման վարպետը՝ որպես մանկավարժական աշխատող նույնանում է ՀՀ կառավարության թիվ 665-Ն որոշման թիվ 6 հավելված հաստատված կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտությունների և պաշտոնների ցանկի 5-րդ կետում նշված մանկավարժ մասնագիտությանը (ՎԴ/6183/05/14, ՎԴ/2704/05/15 և այլն):

Համակարգային բնույթ կրող այս խնդրի կապակցությամբ ուշագրավ է ՀՀ վճռաբեկ դատարանի 2015 թվականի հուլիսի 17-ի թիվ ՎԴ2/0584/05/13 վարչական գործով կայացրած դիրքորոշումը, որով դատարանն անդրադարձել է մասնակի կենսաթոշակի վերաբերյալ համանման իրավական կարգավորմանը: Դատարանը, մասնավորապես, անդրադարձել է այն իրավական հարցադրմանը, թե կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող վարչական մարմինն իրավասու է արդյոք մերժել ֆիզիկական անձին մասնակի կենսաթոշակ նշանակելն այն պայմաններում, երբ տվյալ ֆիզիկական անձի աշխատանքային գրքույկում նշված պաշտոնն իր էությամբ համապատասխանում է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտությունների և պաշտոնների ցանկում նախատեսված պաշտոնի իրական անվանմանը:

Նույն որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ֆիզիկական անձի՝ մասնակի աշխատանքային կենսաթոշակ նշանակելու դիմումի առթիվ հարուցված վարչական վարույթի ընթացքում կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ պարզելու դիմում ներկայացրած ֆիզիկական անձի մոտ մասնակի կենսաթոշակ ստանալու համար անհրաժեշտ՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված բոլոր պարտադիր պայմանների ու պահանջների առկայությունը կամ բացակայությունը:

Մասնավորապես, վկայակոչված գործով անձի մասնակի կենսաթոշակ նշանակելը մերժվել է, քանի որ նրա մասնագիտական աշխատանքային ստաժում չի հաշվառվել այն ժամանակահատվածը, երբ նա աշխատել է որպես դպրոցի տնօրենի տեղակալ՝ արտադպրոցական և արտադասարանական դաստիարակության աշխատանքների գծով, քանի որ ՀՀ կառավարության 665-Ն որոշմամբ թիվ 6 հավելվածով հաստատված կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտությունների և պաշտոնների ցանկում, ի թիվս այլ պաշտոնների՝ ներառված է պետական հանրակրթական դպրոցի տնօրենի (դիրեկտորի) արտադրական ուսուցման գծով տեղակալի պաշտոնը: Վարչական մարմինը դարձյալ ցանկում նշված պաշտոններին տվել է տառացի և նեղ մեկնաբանություն՝ չանդրադառնալով անձի փաստացի կատարած աշխատանքի բուն էությանը: Մինչդեռ ՀՀ վճռաբեկ դատարանն անձի՝ արտադպրոցական և արտադասարանական դաստիարակության աշխատանքների գծով դպրոցի տնօրենի տեղակալի պաշտոնը գնահատել է որպես մասնակի կենսաթոշակի իրավունք տվող պաշտոն՝ այդպիսով անվավեր ճանաչելով նրան կենսաթոշակ նշանակելը մերժելու որոշումը:

Չնայած նշված դատական ակտով ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշմանը՝ 2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքները վկայում են, որ մասնակի աշխատանքային կենսաթոշակ նշանակելու դիմումի առթիվ հարուցված վարչական վարույթի ընթացքում վարչական մարմինը չի ապահովում փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ պարզելու դիմում ներկայացրած ֆիզիկական անձի մոտ մասնակի կենսաթոշակ ստանալու համար անհրաժեշտ՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված բոլոր պարտադիր պայմանների ու պահանջների առկայությունը կամ բացակայությունն: Առկա խնդիրները վկայում են նաև, որ իրավասու պետական մարմնի կողմից հաշվի չի առնվում ձևավորված դատական պրակտիկան:

Վերոգրյալի հիման վրա կարելի է եզրահանգել, որ այն մարդիկ, ովքեր ֆինանսական միջոցների սղությունից ելնելով չեն կարողանում մասնակի կենսաթոշակ ստանալու իրենց իրավունքի պաշտպանության նպատակով դիմել դատարան, զրկվում են պետական մարմինների առջև արդյունավետ պաշտպանության իրավունքից, քանի որ փաստացի պետական իրավասու մարմինը մերժում է անձին մասնակի կենսաթոշակ նշանակելն այն դեպքում, երբ նույն խնդրով դատարան դիմելու դեպքում դիմողը մեծ հավանականությամբ հաջողության կհասնի (այդ մասին է վկայում դատական պրակտիկան):

ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 665-Ն որոշման ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտությունների և պաշտոնների ցանկում վերջին անգամ փոփոխություն կատարվել է 2017 թվականին, այն է՝ երկու լրացում: Ներկայումս շրջանառվող փոփոխություններով նշված ցանկում նախատեսվում է կատարել ևս երկու լրացում, որոնցով նշված ցանկը լրացվելու է մեկ պաշտոնով և մշակույթի բնագավառի մեկ կազմակերպությունով: Փաստորեն, Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում վկայակոչված խնդրահարույց ձևակերպումների ու բացթողումների հարցը լուծում չի ստացել և չի արտացոլվել օրենսդրական փոփոխությունների և լրացումների նախագծում:

Մասնակի կենսաթոշակի նշանակման հարցում հանդիպող խնդիրներից է նաև համատեղությամբ աշխատած ժամանակահատվածը մասնագիտական աշխատանքային ստաժում չհաշվառելը: «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համատեղությամբ աշխատած ժամանակահատվածը մասնագիտական

աշխատանքային ստաժում չի հաշվառվում: Նույնպիսի պահանջ է բովանդակում նաև Կառավարության թիվ 665-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 28-րդ կետը:

Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով դիմողը տեղեկացրել է, որ 1988-1998 թվականներին աշխատել է դպրոցում որպես ուսուցիչ, իսկ 1991-1998 թվականներին համատեղությամբ աշխատել է գյուղական խորհրդում: Վերջինիս մասնակի կենսաթոշակ չի նշանակվել՝ պատճառաբանությամբ, որ մասնագիտական աշխատանքային ստաժը 12 օրացուցային տարի չի կազմում, քանի որ չի հաշվառվել համատեղության կարգով գյուղական խորհրդում աշխատած ժամանակահատվածն: Այս դեպքում սոցիալական ապահովության տարածքային բաժինը հաշվի չի առել, որ մասնակի կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքը եղել է դիմողի հիմնական աշխատանքն, իսկ ՀՀ կառավարության թիվ 665-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 28-րդ կետի համաձայն՝ մասնակի կենսաթոշակ նշանակելիս մասնագիտական աշխատանքային ստաժում հաշվարկվում է միայն հիմնական աշխատավայրում աշխատած ժամանակահատվածը:

Մեկ այլ դեպքով՝ մասնակի կենսաթոշակի իրավունք տվող ուսուցչի աշխատանքը դիմողը կատարել է իր հիմնական աշխատանքի հետ համատեղ, որպիսի փաստով պայմանավորված՝ այդ ժամանակահատվածը մասնակի կենսաթոշակ նշանակելիս նրա մասնագիտական աշխատանքային ստաժում չի հաշվառվել:

Հարկ է նկատել, որ համատեղությամբ կատարված աշխատանքի հասկացությունը սահմանված է ՀՀ աշխատանքային օրենսգրքով, որի 99-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համատեղությամբ աշխատանքը հիմնական աշխատանքից ազատ ժամանակ, մինչև գործատուի կամ այլ գործատուի մոտ աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատողի կատարած աշխատանքն է: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե օրենսդրության մեջ բացակայում է կոնկրետ հասարակական հարաբերությունը կարգավորող իրավական նորմը, սակայն օրենսդրությամբ սահմանված է համանման հարաբերությունները կարգավորող այլ իրավական նորմ, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ (եթե դա չի հակասում դրանց էությանը) կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող իրավական նորմերը (օրենքի անալոգիա): Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարելի է եզրակացնել, որ նշված հարաբերությունների նկատմամբ կիրառելի է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը: Նշվածն էլ իր հերթին նշանակում է, որ համատեղությամբ կատարված աշխատանքը չի կարող օբյեկտիվ իրականության մեջ բացառել հիմնական աշխատանքի ժամանակահատվածը և այդպիսով բացասական հետևանքներ առաջացնել անձի համար՝ այդ թվում սոցիալական ապահովության ոլորտում:

Օրենքի նման մեկնաբանման հետևանքով խտրականություն է դրվում միայն մասնակի կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք կատարած և մասնակի կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքին զուգահեռ այլ աշխատանք կատարած աշխատակիցների միջև այն դեպքում, երբ երկուսն էլ փաստացի կատարել են նույն աշխատանքն: Այս դեպքում չպետք է հիմք ընդունվի այն, որ անձը մասնակի կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքից զատ այլ աշխատանք էլ է կատարել. չէ որ օրենսդրությունը նրան տվել է այդ հնարավորությունն: Այդպիսով, կարծես նսեմացվում և արժեզրկվում է համատեղությամբ աշխատանք կատարած աշխատակիցների աշխատանքը:

Հարկ է նշել նաև, որ մասնակի կենսաթոշակի իրավունք տվող գործունեությունն իր բնույթով կարող է համատեղությամբ իրականացվել՝ առանց իմաստագրկելու կենսաթոշակի էությունն ու նպատակը: Օրինակ, եթե զուգահեռներ անցկացնենք արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող գործունեության հետ, կենսաթոշակի նշանակման կարևորագույն նախապայմանն արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող

աշխատանքն առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում և լրիվ աշխատանքային օրվա ընթացքում կատարելն է: Ստացվում է, որ կարևորվում է անձի միայն մի տեսակի աշխատանք կատարելը, քանի որ այս դեպքում կարևորագույն պայմանը լրիվ աշխատանքային օրը վնասակար աշխատանք կատարելն է: Հակառակ դեպքում արդարացված չի լինի հավասարապես արտոնյալ կենսաթոշակի իրավունք ընձեռել անձանց, որոնք համատեղությամբ օրվա մի մասը կատարել են վնասակար, իսկ մյուս մասը ոչ վնասակար աշխատանք:

Այսպիսով, օրենսդիրն արտոնյալ պայմաններով կենսաթոշակը նշանակելու հարցում կարևորել է աշխատանքը լրիվ աշխատանքային օրվա ընթացքում կատարելու փաստը, որպիսի պահանջ, սակայն, մասնակի կենսաթոշակի նշանակման դեպքում սահմանված չէ: Հետևաբար՝ այն դեպքերում, երբ անձը մասնակի կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքն *ամբողջ ծավալով* կատարել է աշխատանքային օրվա մի հատվածում, իսկ մյուս հատվածում կարողացել է այն համատեղել այլ աշխատանքի հետ, ապա այդ ժամանակահատվածը նրա մասնագիտական աշխատանքային ստաժում չհաշվառելն ինքնին վկայում է նրա նկատմամբ դրսևորված խտրականության մասին:

Խտրականության ինստիտուտին բազմիցս անդրադարձել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ նշելով, որ վերաբերմունքի տարբերակումը խտրական է, եթե չունի որևէ օբյեկտիվ և ողջամիտ արդարացում, այլ կերպ՝ եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ կամ համաչափ չէ հետապնդվող իրավաչափ նպատակին<sup>15</sup>: Մեկ այլ դիրքորոշման համաձայն՝ խտրականությունը տարբեր վերաբերմունքի դրսևորումն է համեմատաբար նույն իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ առանց որևէ օբյեկտիվ կամ հիմնավորված պատճառի<sup>16</sup>: ՀՀ սահմանադրական դատարանն իր 2008 թվականի հունվարի 29-ի ՍԴՈ-731 որոշման մեջ նշել է, որ պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու իրենց իրավունքները: Այն դեպքերում, երբ պետությունը նախատեսում է նպաստների կամ կենսաթոշակների վճարում, դա պարտավորություն է ստեղծում պետության համար և հանգեցնում է քաղաքացիների գույքային իրավունքների առաջացմանը, որոնք արդեն գտնվում են Կոնվենցիային կից թիվ 1 Արձանագրության ազդեցության ներքո<sup>17</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով բարձրացված խնդիրը՝ պետք է փաստել, որ միայն մասնակի կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք կատարող և մասնակի կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքի հետ համատեղ այլ աշխատանք կատարող աշխատակիցների նկատմամբ դրսևորված խտրականությունը չունի որևէ օբյեկտիվ և ողջամիտ արդարացում, և պարզ չէ, թե ինչ իրավաչափ նպատակ է հետապնդում համատեղությամբ աշխատած ժամանակահատվածը մասնագիտական աշխատանքային ստաժում չհաշվառելը:

ՀՀ Սահմանադրական դատարանի 2014 թվականի ապրիլի 2-ի թիվ ՍԴՈ-1142 որոշման համաձայն՝ սոցիալական ապահովությունն անձի իրավունք լինելուց զատ պետության

<sup>15</sup>Տե՛ս Ֆաբրիսն ընդդեմ Ֆրանսիայի (Fabris v. France) գործով 2013 թվականի փետրվարի 7-ի վճիռը, գանգատ թիվ 16574/08, կետ 56:

Մազուրեկն ընդդեմ Ֆրանսիայի (Mazurek v. France) գործով 2000 թվականի մայիսի 1-ի վճիռը, գանգատ թիվ 34406/97, կետ 46:

<sup>16</sup>Տե՛ս Վիլլիսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Willis v. United Kingdom) գործով 2002 թվականի հունիսի 11-ի վճիռը, գանգատ թիվ 36042/97, կետ 48:

Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, գանգատ թիվ 40094/05, կետ 199:

<sup>17</sup>Տե՛ս Ստեկը և ուրիշներն ընդդեմ Միացյալ Թագավորության (Stec and Others v. United Kingdom) գործով 2006 թվականի ապրիլի 12-ի վճիռը, գանգատ թիվ 65731/01, կետ 53:

պոզիտիվ պարտավորությամբ պայմանավորված նպատակային գործառույթ է, քանի որ ուղղված է հասարակության այն խավերի կենսագոյի ապահովմանը, ովքեր իրենցից անկախ պատճառներով դա անել չեն կարող<sup>18</sup>:

Նշվածի համատեքստում անդրադառնալով բարձրացված խնդրին՝ պետք է փաստել, որ համատեղությամբ աշխատած ժամանակահատվածը մասնակի կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժում չհաշվառվելով՝ չի ապահովվում անձանց կենսագոյի ապահովմանն ուղղված այն նպատակային գործառույթը, որը սոցիալական ապահովության բովանդակությունն է կազմում:

*Հաշվի առնելով վերոշարադրյալն՝ անհրաժեշտ է՝*

*1. մասնակի կենսաթոշակի նշանակման յուրաքանչյուր դեպքում առաջնորդվել ոչ միայն Կառավարության թիվ 665-Ն որոշմամբ սահմանված ցանկում նշված կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտությունների և պաշտոնների տառացի և նեղ մեկնաբանմամբ, այլև հաշվի առնել մասնակի կենսաթոշակի իրավունք տվող յուրաքանչյուր մասնագիտության և պաշտոնի բուն էությունը՝ նմանատիպ յուրաքանչյուր դեպքի հիման վրա շարունակաբար կատարելագործելով Կառավարության թիվ 665-Ն որոշմամբ սահմանված ցանկը,*

*2. մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտական աշխատանքային ստաժում հաշվառել նաև համատեղությամբ աշխատած ժամանակահատվածը:*

### **1.3 Երկարամյա ծառայության կենսաթոշակ**

2018 թվականի ընթացքում Պաշտպանին բազմաթիվ բողոքներ են հասցեագրվել երկարամյա ծառայության կենսաթոշակ չնշանակելու կապակցությամբ: Դիմողների դժգոհությունը պայմանավորված է նրանով, որ իրենց երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելը մերժվել է՝ պատճառաբանությամբ, որ իրենց զբաղեցրած պաշտոնը, մասնագիտությունը կամ այն կազմակերպությունը, որտեղ աշխատել են, ներառված չէ ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշմամբ հաստատված թիվ 5 հավելվածում:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ քաղաքացիական ավիացիայի ինժեներատեխնիկական ծառայության աշխատողները կարող են ձեռք բերել երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունք, եթե կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի համապատասխան ստորաբաժանում դիմելու պահին լրացել է նրա 55 տարին, և նա ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 20 օրացուցային տարին կատարել է երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք:

Ըստ այդմ, քաղաքացիական ավիացիայի աշխատողներին երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող պաշտոնների ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշմամբ հաստատված թիվ 5 հավելվածով: Մի շարք պաշտոններ դուրս են մնում այդ ցանկից՝ չնայած իրենց բնույթով և էությամբ նույնանում են դրանում նշված պաշտոններից որոշների հետ:

Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկի համաձայն՝ անձի երկարամյա ծառայության աշխատանքային ստաժում չի հաշվառվել ավիատեխնիկական բազայի դիագնոստիկ լաբորատորիայում որպես թռիչքային ապարատների և շարժիչների գծով ավիատեխնիկ աշխատած ժամանակահատվածը՝ պատճառաբանությամբ, որ ՀՀ կառավարության թիվ 665-Ն որոշմամբ հաստատված հավելված 5-ի 4-րդ կետի 1-ին

<sup>18</sup> Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=105512>:



ենթակետի համաձայն՝ *օդանավերի* տեխնիկական սպասարկումն իրականացնող ինժեներատեխնիկական ծառայության աշխատողներին «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող պաշտոններում ընդգրկված են բոլոր անվանումների ավիացիոն տեխնիկները, շարժիչագործները (մոտորիստները): Դիմողը սոցիալական ապահովության տարածքային բաժին է ներկայացրել նաև տեղեկանք, ըստ որի՝ ավիատեխնիկական բազայի դիագնոստիկայի լաբորատորիայում որպես ավիատեխնիկ աշխատելով՝ աշխատանքներ է իրականացրել նաև անմիջապես օդանավի վրա, մինչդեռ այդ տեղեկանքը տարածքային մարմինը պատշաճ չի համարել և հիմք չի ընդունել որպես թոխչքային ապարատների և շարժիչների գծով ավիատեխնիկ աշխատած ժամանակահատվածը նրա աշխատանքային ստաժում ներառելու համար:

Պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքի համաձայն՝ դիմողին մերժվել է երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելը, քանի որ աշխատանքային ստաժում չի հաշվառվել ավիատեխնիկական բազայի տեխնիկական վերահսկողության բաժնում որպես ինժեներ աշխատած ժամանակահատվածը՝ պատճառաբանությամբ, որ ՀՀ կառավարության թիվ 665-Ն որոշմամբ հաստատված հավելված 5-ի 4-րդ կետով նախատեսված ցանկով վերահսկողության բաժնի աշխատողները նախատեսված չեն: Մասնավորապես, վերը նշված որոշմամբ հաստատված հավելված 5-ի 4-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ օդանավերի տեխնիկական սպասարկումն իրականացնող ինժեներատեխնիկական ծառայության աշխատողների կազմում և համապատասխանաբար «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող պաշտոններում ընդգրկված են բոլոր անվանումների *ավիացիոն* ինժեներները, իսկ դիմողի աշխատանքային գրքույկում «ավիացիոն» բառը նշված չի եղել: Ուշագրավ է այն, որ դիմողը սոցիալական ապահովության տարածքային բաժին է ներկայացրել ՀՀ ԿԵ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունից տրված տեղեկանք, ըստ որի՝ իր աշխատանքային գրքույկում կատարված գրառումների պաշտոնները համապատասխանում են ավիացիոն ինժեների մասնագիտությանը, մինչդեռ ինչպես նախորդ օրինակում, այս դեպքում ևս ներկայացված տեղեկանքը տարածքային մարմինը հիմք չի ընդունել ավիատեխնիկական բազայի տեխնիկական վերահսկողության բաժնում որպես ինժեներ աշխատած ժամանակահատվածն անձի աշխատանքային ստաժում ներառելու համար: Փաստորեն, նախարարությունն անտեսել է լիազոր մարմնի այն դիրքորոշումը, ըստ որի՝ անձի փաստացի կատարած աշխատանքն իր էությանը համապատասխանում է երկարամյա ծառայության կենսաթոշակի ստաժի իրավունք տվող աշխատանքին:

Մարդու՝ որպես ինժեներ աշխատած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում գործել է ԽՍՀՄ քաղաքացիական ավիացիայի նախարարի 1983 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 241 հրամանով ուժի մեջ մտած ԽՍՀՄ քաղաքացիական ավիացիայում օդանավերի տեխնիկական սպասարկման և վերանորոգման ուղեցույցի մասին<sup>19</sup> հրահանգը, որի կարգավորումների համաձայն՝ ավիացիոն տեխնիկայի սպասարկմանը մասնակցող մասնագետները համարվում են ինժեներատեխնիկական անձնակազմ, ուստի այդ աշխատանքներում ներգրավված մասնագետները կամ *ավիացիոն ինժեներներ են կամ ավիացիոն տեխնիկներ*: Այսինքն՝ ավիացիոն տեխնիկայի սպասարկմանը մասնակցող մասնագետները, անկախ աշխատանքային գրքույկում կատարված գրառումներից՝ համարվել են *ավիացիոն* ինժեներներ, ինչը վկայում է այն մասին, որ աշխատանքային գրքույկում կատարված գրառումների տառացի և նեղ

<sup>19</sup> Ռուսերեն՝ «Наставление по технической эксплуатации и ремонту авиационной техники в гражданской авиации СССР»

մեկնաբանման հետևանքով խախտվել է անձի՝ երկարամյա ծառայության կենսաթոշակ ստանալու իրավունքը:

Նկարագրված երկու դեպքում էլ դարձյալ անտեսվել է վարչարարության հավաստիության կանխավարկածի սկզբունքը, որի ուժով վարչական մարմինը՝ սոցիալական ապահովության տարածքային բաժինն է պարտավոր անձի ներկայացրած փաստաթղթերի իսկության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար, հակառակ դեպքում անձի հաղորդած տվյալների հավաստի լինելու փաստի ուժով վարչական մարմինը պարտավոր է երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակել: Սոցիալական ապահովության տարածքային բաժիններում ձևավորված իրավակիրառ պրակտիկան հանգում է նրան, որ կենսաթոշակ նշանակելիս հաշվի չի առնվում և անտեսվում է իրավասու մարմինների տրված փաստաթուղթը, որոնք բովանդակում են վերջիններիս դիրքորոշումներն ու պարզաբանումներն այս կամ այն մասնագիտության, պաշտոնի կամ անձի կատարած փաստացի աշխատանքի վերաբերյալ, ինչը Պաշտպանի դիրքորոշմամբ՝ անթույլատրելի է:

Նկարագրված բոլոր դեպքերի առնչությամբ սոցիալական ապահովության տարածքային բաժինների ցուցաբերած մոտեցմամբ խախտվում է նաև ձևական պահանջների չարաշահման արգելքի սկզբունքը: Մասնավորապես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

*Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է՝*

*1. երկարամյա ծառայության կենսաթոշակները նշանակելիս առաջնորդվել այն սկզբունքով, որ, եթե տվյալ անձի աշխատանքային գրքույկում (համապատասխան փաստաթղթերում) նշված պաշտոնն իր էությամբ համապատասխանում է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք տվող պաշտոնների ցանկում նախատեսված պաշտոնի իրական անվանմանը կամ բնույթին, անձին նշանակել կենսաթոշակ,*

*2. իրավակիրառ պրակտիկայում առաջացած յուրաքանչյուր դեպքի հիման վրա կատարելագործել ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշմամբ հաստատված քաղաքացիական ավիացիայի աշխատողներին երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող պաշտոնների ցանկը:*

#### **1.4 Կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելը**

2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ կենսաթոշակային գործը Հայաստանի Հանրապետությունից այլ պետություն տեղափոխելու և հետագայում կենսաթոշակային գործը ՀՀ հետ վերադարձվելու դեպքում կենսաթոշակը նախկին չափով չստանալու խնդրի վերաբերյալ:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը *դադարեցվում է* Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքած պետություններ մշտական բնակության մեկնած անձանց կենսաթոշակի գործերն ուղարկելու հիմքով: Նույն հոդվածի 3-րդ մասում սպառիչ թվարկված են այն հիմքերը, որոնցով կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու դեպքում

կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելիս տվյալ կենսաթոշակի իրավունքը չի վերանայվում: Այդ հիմքերում, սակայն նշված չէ 41-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը:

Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկի համաձայն՝ 1998 թվականին դիմողին նշանակվել է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ, այնուհետև 2014 թվականից դիմողի կենսաթոշակի գործը տեղափոխվել է Ռուսաստանի Դաշնություն, որից հետո՝ 2017 թվականին, այն կրկին տեղափոխվել է ՀՀ: Ըստ բողոքի՝ Հայաստանի Հանրապետությունում ոչ թե վերսկսվել, այլ նորից նշանակվել է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ, իսկ կենսաթոշակի չափը հաշվարկվել է 2014 թվականի հուլիսի 1-ից հետո գործող կարգի համաձայն՝ հաշվի առնելով հիմնական կենսաթոշակի չափը, զինվորական ծառայության մեկ տարվա արժեքը և ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 1-ի թիվ 815 որոշման հիման վրա որոշված՝ զինծառայողի անձնական գործակիցը: Նոր նշանակված կենսաթոշակի չափը պակաս է եղել նախկինում նշանակված կենսաթոշակի չափից: Դիմողը, կենսաթոշակային գործը ՀՀ տեղափոխելիս օրինական ակնկալիք է ունեցել, որ իրեն կենսաթոշակ վճարվելու է այն չափով, ինչ չափով վճարվել է նախկինում, հետևաբար նրան նվազ չափով կենսաթոշակ վճարելը ոտնահարել է վերջինիս օրինական ակնկալիքները:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային որոշումներից մեկում նշել է, որ «սեփականություն» եզրույթը նշանակում է ոչ միայն «գոյություն ունեցող գույքը»<sup>20</sup>, այլև այն գույքը (իրավունքներն ու շահերը), որոնց նկատմամբ դիմումատուն առնվազն ողջամիտ կամ իրավաչափ սպասումներ կարող է դրսևորել<sup>21</sup>: Սեփական գույքից անարգել օգտվելու իրավունքի վերաբերյալ իրավաչափ սպասումը պետք է ունենա բավարար հիմք ներպետական օրենսդրության տեսանկյունից<sup>22</sup>: Կենսաթոշակը դասվում է գույքային այլ իրավունքների և շահերի շարքին, հետևաբար, կենսաթոշակի իրավունքը ևս սեփականություն է՝ Կոնվենցիայի իմաստով:

Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությունը պետք է համապատասխանի միջազգայնորեն ընդունված սկզբունքներին և լինի կառուցողական: Այս առումով կառուցողական օրենսդրությունը պահանջում է, որ առաջին հերթին ներկայացվեն այն նպատակները, որոնց ձգտում է պետությունը, և այն միջոցները, որոնք անհրաժեշտ են այդ նպատակներին հասնելու համար: Տվյալ դեպքում նպատակը սոցիալական ապահովության իրավունքի պատշաճ իրականացումը երաշխավորելն է: Նշված խնդրի պարագայում ևս կենսաթոշակ ստանալու նկատմամբ այդ իրավունքներից օգտվող անձն, անկասկած ունի ողջամիտ և իրավաչափ սպասումներ: Տվյալ դեպքում հրաժարվելով անձի կենսաթոշակը նախկին չափով տրամադրելուց՝ մերժվում է այդ իրավունքների իրականացման համար ողջամիտ երաշխիքների սահմանումը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ եթե կենսաթոշակի չափը նվազում է կամ կենսաթոշակը վերացվում է, ապա դա կարող է իրենից ներկայացնել գույքի նկատմամբ միջամտություն, որը ենթակա է հիմնավորման: Այդպիսի միջամտության գնահատման համար կարևոր է նաև այն, թե արդյոք այդ միջամտությունը եղել է այնպիսին, որ հանգեցրել է անձի կենսաթոշակային իրավունքի էության խաթարմանը<sup>23</sup>:

<sup>20</sup> Տե՛ս Վան դեր Մուսսելեն ընդդեմ Բելգիայի (Van der Musselle v. Belgium) գործով 1983 թվականի նոյեմբերի 23-ի վճիռը, գանգատ թիվ 8919/80, կետ 48:

<sup>21</sup> Տե՛ս Փայն Վալլեյ դեվելոպմենթս ընկերությունը և մյուսներն ընդդեմ Իռլանդիայի (Pine Valley Developments Ltd and Others v. Ireland) գործով 1991 թվականի նոյեմբերի 29-ի վճիռը, գանգատ թիվ 12742/87, կետ 51:

<sup>22</sup> Տե՛ս Կոպեցկին ընդդեմ Սլովակիայի (Kopecky v. Slovakia) գործով 2004 թվականի սեպտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 44912/98, կետ 52:

<sup>23</sup> Տե՛ս Վիսզորեկն ընդդեմ Լեհաստանի գործով (*Wieczorek v. Poland*) 2009 թվականի դեկտեմբերի 8-ի վճիռը, գանգատ թիվ 18176/05, կետ 57:

Բարձրացված խնդիրը բազմիցս քննարկման առարկա է դարձել նաև ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանը 2016 թվականի նոյեմբերի 29-ի թիվ ՄԴՌ-1325 որոշման մեջ նշել է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36-րդ և 41-րդ հոդվածներից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է միայն կենսաթոշակ *ստանալու իրավունքի դադարեցման, այլ ոչ թե կենսաթոշակի իրավունքի դադարեցման* հնարավորություն: Նույն որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշել է, որ Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու հիմքերը: Նույն հոդվածի 2-րդ մասը, մասնավորապես, նախատեսում է, որ կենսաթոշակ վճարելը դադարեցվում է կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարելու դեպքում: Օրենքի 41-րդ հոդվածում հետևողական ու տարբերակված մոտեցում չի դրսևորվում **«դադարում»** և **«դադարեցում»** եզրույթների նկատմամբ: Եթե «դադարումը» ենթադրում է իրավունքի ուժով առաջացող իրավական հետևանք, ապա *«դադարեցումը» որոշակի իրավական գործընթացի հետևանք է, պետաիշխանական լիազորությամբ օժտված մարմնի կամաարտահայտման հետևանք:* Նման պարագայում կարող է առաջանալ նաև ընդհուպ դատական կարգով անձի իրավունքների պաշտպանության խնդիր: Բացի դրանից, նույն հոդվածի 1-ին մասի իրավապայմաններից հետևում է, որ կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցման հիմքերը բխում են կենսաթոշակի իրավունքի դադարման հանգամանքից:

ՀՀ սահմանադրական դատարանի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ ՄԴՌ-723 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ եթե օրենքն արդեն սահմանել է կենսաթոշակի տեսակները, կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանները, *կենսաթոշակի չափը* և վճարման պայմանները, պետության համար ծագում է պարտականություն երաշխավորելու կենսաթոշակի իրավունքի առնչությամբ լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի և իրավական որոշակիության սկզբունքների իրացումը:

ՀՀ սահմանադրական դատարանը բազմիցս, այդ թվում՝ կենսաթոշակային հարաբերությունները կարգավորող նորմերի սահմանադրականությունը որոշելու վերաբերյալ գործերով արձանագրել է անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքին և այլ իրավական ակտերին հետադարձ ուժ հաղորդելու անթույլատրելիությունը (ՄԴՌ-649, ՄԴՌ-723, ՄԴՌ-758, ՄԴՌ-881, ՄԴՌ-1000): Այդ սկզբունքը իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք է: *Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա:* Նման պարտավորություն է նաև ստանձնել Հայաստանի Հանրապետությունը մի շարք միջազգային պայմանագրերով:

2013 թվականի ««Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՇՕ-121-Ն օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե հաշվարկված զինվորական կենսաթոշակի չափը ցածր է նախկին չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով: ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով: Վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ տվյալ դեպքում զինվորական կենսաթոշակի չափը նախկին չափից պակաս լինելու դեպքում կենսաթոշակը նախկին չափով վճարելն ուղղակիորեն նախատեսված է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով, հետևաբար դիմողին նախկին չափով կենսաթոշակ վճարելը բխում է

նան Սահմանադրության 73-րդ հոդվածի իրավական ակտերի հետադարձության ուժի կիրառելիությունից:

Բարձրացված խնդրի կապակցությամբ կատարված վերլուծությամբ արձանագրվել է, որ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակը պաշտպանվում է ՀՀ Սահմանադրության 83-րդ հոդվածով, Եվրոպական կոնվենցիային կից թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով: Կենսաթոշակային գործը Հայաստանի Հանրապետությունից այլ պետություն ուղարկելու, այնուհետև հետ վերադարձնելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունքը չվերականգնելը նախկին չափով և պայմաններով չի կարող հետապնդել իրավաչափ նպատակ, ուստի անհամաչափորեն սահմանափակում է անձի կենսաթոշակի իրավունքը: Այլ կերպ ասած՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստանալը, լինելով նախկինում կատարած ծառայության համար անժամկետ հատուցում, չպետք է վերացվի, քանի որ դա բերում է զինծառայողների կենսաթոշակի իրավունքի էության աղավաղմանը՝ հանգեցնելով նաև սոցիալական ապահովության իրավունքի իրականացման խախտման: Անհերքելի է, որ կենսաթոշակային գործը Հայաստանի Հանրապետությունից այլ պետություն ուղարկելու, այնուհետև հետ վերադարձնելու հիմքով անձի կենսաթոշակի չափը չի կարող նվազեցվել:

Վերոգրյալի համատեքստում պետք է նշել, որ օրենսդրական թերի կարգավորումները կամ համապատասխան կարգավորումների բացակայությունը չի կարող անձի իրավունքների խախտման պատճառ դառնալ: Բարձրացված հարցի կապակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացված պարզաբանումների համաձայն՝ շրջանառության մեջ կորվի ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություն նախատեսող իրավական ակտի նախագիծ, որն ընդունվելու դեպքում լուծում կտրվի նաև վերը նկարագրված խնդրին: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ անգամ ՀՀ կառավարության թիվ 665-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություններ կատարելը բարձրացված խնդիրն ամբողջությամբ չի լուծի, քանի որ կատարվելիք փոփոխությունների՝ հետադարձ ուժ չտալու հետևանքով կենսաթոշակի վերահաշվարկը կիրականացվի կառավարության որոշման համապատասխան փոփոխության ուժի մեջ մտնելուց հետո, մինչ այդ ժամանակահատվածը չստացված կենսաթոշակի գումարներ չեն հաշվարկվի և չեն վճարվի:

Մյուս կողմից էլ անհրաժեշտ է փոփոխություններ նախատեսել ոչ միայն ՀՀ կառավարության թիվ 665-Ն որոշման մեջ, այլև «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում, մասնավորապես՝ Օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասում կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու հիմքերին ավելացնել նաև կենսաթոշակն Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի հիմքով (կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքած պետություններ մշտական բնակության մեկնած անձանց կենսաթոշակի գործերն ուղարկելու հիմքով) դադարեցված լինելը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ՝ կարգավորումներ նախատեսելով առ այն, որ կենսաթոշակային գործը Հայաստանի Հանրապետությունից այլ պետություն ուղարկելու, այնուհետև հետ վերադարձնելու դեպքում անձի կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվի նախկին չափով և պայմաններով:*

### **1.5 Կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի վճարումը**

2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարները ստանալ

չկարողանալու խնդրի վերաբերյալ: «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կենսաթոշակառուի մահվան դեպքում չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է մահացածի **ամուսնուն** կամ 14 տարեկան և դրանից բարձր տարիքի անչափահաս երեխային՝ անկախ կենսաթոշակառուի մահվան օրվա դրությամբ նրա հետ համատեղ նույն վայրում (հասցեում) հաշվառված լինելու հանգամանքից, իսկ **ընտանիքի այլ անդամին**՝ եթե նա, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, կենսաթոշակառուի մահվան օրվա դրությամբ նրա հետ համատեղ հաշվառված է եղել նույն վայրում (հասցեում) (...):

Խնդիրը, մասնավորապես, դրսևորվել է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում՝ տուն-ինտերնատում: Հաստատությունում կան խնամյալներ, ովքեր փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ են մտնում միմյանց հետ, ապրում համատեղ, վարում ընդհանուր տնտեսություն: Նշվածն անհերքելի փաստ է, այդ մասին տեղյակ է հաստատության ղեկավարությունը: Ամուսիններից մեկի մահվան դեպքում մյուս ամուսինը սոցիալական ապահովության մարմնից ստացել է մերժում մահացած ամուսնու չստացած կենսաթոշակը ստանալու համար՝ օրենքով սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվելու պատճառաբանությամբ:

ՀՀ ընտանեկան օրենսգիրքը չի սահմանում ընտանիքի անդամների հասկացությունն, իսկ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ ընտանիքի անդամներ են համարվում անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինն, այդ թվում՝ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձր: Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն, իր որոշումներում անդրադառնալով փաստական ամուսնությանը, եզրակացրել է, որ ընտանեկան կյանքի հասկացությունը սահմանափակված չէ բացառապես ամուսնության վրա հիմնված հարաբերություններով և կարող է ներառել այլ «դե-ֆակտո» ամուսնական կապեր, որոնց շրջանակներում կողմերը բնակվում են միասին՝ առանց ամուսնության<sup>24</sup>: Ընտանեկան կյանքը հարգելու վերաբերյալ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի դրույթները վերաբերելի են ինչպես «օրինական», այնպես էլ «անօրինական» ընտանիքներին<sup>25</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով ստեղծված իրավիճակը՝ պետք է փաստել, որ սոցիալական ապահովության տարածքային բաժնի կողմից ամուսնու չստացած կենսաթոշակը ստանալու դիմողի պահանջը մերժելը եղել է անհիմն, քանի որ տարածքային բաժինը հաշվի չի առել ամուսինների՝ միմյանց հետ համատեղ ապրելու և համատեղ ամուսնական կյանք վարելու փաստը: Հաշվի չի առնվել նաև այն, որ դիմողը ոչ միայն որպես ամուսին, այլ որպես ընտանիքի այլ անդամ կարող է ստանալ կենսաթոշակառու ամուսնու մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը, քանի որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով ընտանիքի այլ անդամին ներկայացված միակ պահանջը կենսաթոշակառուի մահվան օրվա դրությամբ նույն վայրում (հասցեում) նրա հետ համատեղ հաշվառված լինելն է: Դիմողը և վերջինիս ամուսինը համատեղ հաշվառված են եղել «Երևանի թիվ 1 տուն ինտերնատ» ՊՈԱԿ-ում. փաստ, որը սոցիալական ապահովության տարածքային բաժինը կրկին անտեսել է: Պաշտպանի դիրքորոշման համաձայն՝ նշված

<sup>24</sup>Տե՛ս Կրոնը և ուրիշներն ընդդեմ Նիդերլանդների (Kroon and Others v. The Netherlands) գործով 1994 թվականի հոկտեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 18535/01, կետ 30: Տե՛ս Կիգանն ընդդեմ Իռլանդիայի (Keegan v. Ireland) գործով 1994 թվականի մայիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 16969/90, կետ 44:

<sup>25</sup>Տե՛ս Ջոնսթոնը և ուրիշներն ընդդեմ Իռլանդիայի (Johnston and Others v. Ireland) գործով 1986 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռը, գանգատ թիվ 9697/82, կետ 55:

դեպքով դիմողին նրա ամուսնու չստացված կենսաթոշակի գումարը վճարելը մերժելու հարցում անմասն չի մնացել դիմողի և նրա ամուսնու՝ տուն-ինտերնատում բնակվելու փաստը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն առաջադրվել էր այն հարցադրումը, թե փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող, հաստատությունից դուրս ապրող, միևնույն հասցեում հաշվառված և համատեղ բնակվող անձանցից որևէ մեկի մահվան դեպքում մյուս ամուսնուն մահացած կենսաթոշակատուի չվճարված կենսաթոշակի գումարը պրակտիկայում վճարվում է արդյոք դիմողին, որին սակայն Նախարարությունից ստացված պարզաբանումներում անդրադարձ չի կատարվել այս հարցին: Այսպիսով, հաստատությունից դուրս ապրող, միևնույն հասցեում հաշվառված և համատեղ բնակվող անձանցից որևէ մեկի մահվան դեպքում մյուս ամուսնուն մահացած կենսաթոշակատուի չվճարված կենսաթոշակի գումարի վճարման դեպքում կարճանագրվի խտրականության դրսևորում, հակառակ դեպքում օրենքի դրույթին կտրվի նեղ մեկնաբանություն: Փաստորեն, մահացած կենսաթոշակատուի չստացված կենսաթոշակի գումարները վճարելու հարցում խտրականություն կարող է դրսևորվել կենսաթոշակատուների միջև՝ կախված նրանից, թե որտեղ են բնակվում, բնակչության պաշտպանության պետական հաստատությունում, թե դրանից դուրս:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ կենսաթոշակատուների նկատմամբ դրսևորվող խտրականության հնարավոր դեպքերը բացառելու նպատակով անհրաժեշտ է նախատեսել հստակ ընթացակարգեր, որոնց կիրառությամբ տուն-ինտերնատներում հաշվառված և փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձինք ևս կարողանան օգտվել կենսաթոշակատուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարները ստանալու իրավունքից:*

### **1.6 Երեխայի ծննդյան միանվագ նպաստը**

Պաշտպանի 2017 թվականի տարեկան հաղորդմամբ բարձրացվել էր երեխայի ծննդյան միանվագ նպաստի մերժման հարցը՝ պայմանավորված վճարման դիմումն օրենսդրությամբ նախատեսված ժամկետներում չներկայացնելու հետ: Մինչև 2017 թվականի դեկտեմբերի 6-ի «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-240-Ն օրենքի ընդունումը «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ կետը սահմանում էր, որ երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստանալու իրավունքը դադարում է, այդ թվում երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստանալու իրավունք ունեցող ծնողին նպաստը նշանակելու ամսվան հաջորդող 12 ամսվա ընթացքում նպաստը չվճարելու դեպքում:

Սակայն 2017 թվականի դեկտեմբերի 6-ին կատարված օրենսդրական փոփոխություններով նախատեսվել է կարգավորում, ըստ որի՝ չաշխատող մարդու մայրության նպաստը և երեխայի ծննդյան միանվագ նպաստը (բացառությամբ նույն օրենքի 25-րդ հոդվածի 7-րդ մասում նշված գումարի) վճարվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով այն անձի անվամբ բացված միանվագ դրամական վճարների հաշվին մուտքագրելու միջոցով, որին նշանակվել է նպաստը: Նախատեսվել է նաև, որ եթե միանվագ դրամական վճարների հաշիվ բացելու համար անհրաժեշտ տվյալները բանկին փոխանցելու ամսվանից հաշված՝ 12 ամսվա ընթացքում, անձը չի ներկայացնում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 928.8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջն, ապա միանվագ դրամական վճարների հաշվին մուտքագրված նպաստի գումարը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 928.8-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով և ժամկետում վերադարձվում է ՀՀ պետական բյուջե:

Չնայած կատարված օրենսդրական փոփոխությունները լուծում են տվել բարձրացված խնդրին՝ այնուամենայնիվ հարկ է նկատել, որ օրենսդրական փոփոխությունների հետադարձ ուժ չունենալու փաստով պայմանավորված չի լուծվել մինչև կատարված փոփոխությունները նշանակված, սակայն բանկում հաշվեհամար չունենալու պատճառով անձանց չվճարված երեխայի ծննդյան միանվագ նպաստի գումարները վճարելու խնդիրը: Այս կապակցությամբ պետք է փաստել, որ օրենսդրական թերի կարգավորումները կամ համապատասխան կարգավորումների բացակայությունը, այնուամենայնիվ, չպետք է անձի իրավունքների խախտման պատճառ դառնան:

2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքներում բարձրացվել է երեխայի ծննդյան միանվագ նպաստի մերժման հարցը՝ պայմանավորված վճարման դիմումն օրենսդրությամբ նախատեսված ժամկետներում չներկայացնելու, նոր ծնված երեխայի կարգաթվի որոշման խնդիրը՝ կապված անչափահաս տարիքում նրա խնամքը վերջինիս հորը հանձնված լինելու հետ:

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունք ունեն երեխայի (որի ծննդյան կապակցությամբ ծագել է ծննդյան միանվագ նպաստի իրավունքը) ծնողը, որդեգրողը կամ խնամակալը: Սահմանված է նաև, որ երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում է, եթե դիմումը ներկայացվել է նոր ծնված երեխայի ծննդյան ամսվանից հետո՝ 12 ամսվա ընթացքում: Անդրադառնալով իրավունքի ծագումը որոշակի (տասներկուամսյա) ժամկետով սահմանափակելու խնդրին՝ տեղին է վկայակոչել ՀՀ սահմանադրական դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ ՍԴՈ-1167 որոշումը, որով Սահմանադրական դատարանն անդրադարձել է կենսաթոշակառուի մահվան դեպքում նրան չվճարված կենսաթոշակի գումարը վերջինիս ժառանգների կողմից ժառանգելու իրավունքի իրացմանը, որը պայմանավորվել է անձի մահվանից հետո ժառանգի 12 ամսվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացնելու փաստով: Դատարանը նշել է, որ օրենսդիրը չի նախատեսել տասներկու ամսվա ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու հնարավորություն, նման իրավակարգավորման բացակայությունը խոչընդոտում է սեփականության սահմանադրական իրավունքի լիարժեք իրականացմանը: Դատարանն արձանագրել է, որ վիճարկվող իրավակարգավորմամբ սահմանված տասներկու ամսվա ժամկետային սահմանափակումը չի պայմանավորվում հանրային արժեքների պահպանման պահանջով և նպատակաուղղված չէ սեփականատիրոջ և այլոց իրավունքների ու հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռության ապահովմանը:

Կիրառելով անալոգիա՝ պետք է փաստել, որ երեխայի նպաստի նշանակման համար սահմանված տասներկուամսյա ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու հնարավորության բացակայությունը ևս նպատակաուղղված չէ սեփականատիրոջ և այլոց իրավունքների ու հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռության ապահովմանը:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման համար սահմանված տասներկուամսյա ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու վերաբերյալ կարգավորում է նախատեսում ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 275-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 19-րդ կետը, որի համաձայն՝ տարածքային բաժինը նույն կարգի *17-րդ կետի 1-ին ենթակետով* սահմանված որոշման մասին՝ որոշումը կայացնելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ կարգով տեղեկացնում է ծնողին, բացառությամբ սույն կարգի 3.6-րդ կետում նշված դեպքի: Նույն կետով սահմանված դեպքում, եթե անհրաժեշտ լրացուցիչ փաստաթղթերը ներկայացվում են դիմումը ներկայացնելու օրվանից հետո վեց ամսվա ընթացքում, ապա դիմելու օր է համարվում



դիմումը ներկայացնելու օրը: Նույն կարգի 17-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ներկայացված փաստաթղթերի և առկա տեղեկատվության հիման վրա տարածքային բաժինը տասն աշխատանքային օրվա ընթացքում որոշում է մերժել նպաստ նշանակելը և դրա մասին տեղեկացնել ծնողին (ծնողին տեղեկացնել լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու անհրաժեշտության մասին):

Ստացվում է, որ 6-ամսյա ժամկետում լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու պահանջը վերաբերելի է միայն այն դեպքերին, երբ տարածքային բաժինը կայացրել է ՀՀ կառավարության թիվ 275-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 17-րդ կետի 1-ին ենթակետի որոշումն, այսինքն՝ մերժել է նպաստ նշանակելը և լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու անհրաժեշտության մասին տեղեկացրել է ծնողին, մինչդեռ նպաստ նշանակելը մերժելու մնացած դեպքերի նկատմամբ կիրառելի չեն պահանջված լրացուցիչ փաստաթղթերը 6-ամսյա ժամկետում չներկայացնելու հետևանքները:

Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրության և քննարկման հետևանքով վեր են հանվել նաև առկա օրենսդրական անկատարություններ: Այդպիսիներից են ՀՀ կառավարության թիվ 275-Ն որոշմամբ նպաստ նշանակելը մերժելու հիմքերի կապակցությամբ գործող օրենսդրական կարգավորումները:

Մասնավորապես, Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկի համաձայն՝ երեխայի հայրը «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված տասներկուամսյա ժամկետում երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստանալու պահանջով դիմել է սոցիալական ապահովության տարածքային բաժին: Նպաստ նշանակելը մերժվել է ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 275-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 3-րդ ենթակետի հիմքով, ըստ որի՝ նպաստ նշանակելը մերժվում է, եթե ծնողը ներկայացված (տարածքային բաժնի կողմից ճշտված) տվյալների և փաստաթղթերի հիման վրա չունի *նպաստի իրավունք*՝ անտեսելով այն փաստը, որ դիմողն իր երեխայի ծննդյան փաստի ուժով արդեն ձեռք է բերել երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունք:

Տեղին է անդրադառնալ «նպաստի իրավունք» և «նպաստ ստանալու իրավունք» ձևակերպումների տարբերությանը: Նշվածի կապակցությամբ հատկանշական է ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ ՍԴՈ-1061 որոշումը, որում Սահմանադրական դատարանն անդրադարձել է «կենսաթոշակի իրավունք» և «կենսաթոշակ ստանալու իրավունք» հասկացություններին՝ նշելով, որ կենսաթոշակի իրավունք ունեցող անձը կենսաթոշակ ստանալու իրավունք ունի, եթե օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել է կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի համապատասխան ստորաբաժանում (...) և նշանակվել է կենսաթոշակ (...): Ակնհայտ է, որ իրավունքի իրացումը ենթադրում է նաև պարտականությունների պատշաճ կատարում: ՀՀ սահմանադրական դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ ՍԴՈ-649 որոշմամբ արտահայտած դիրքորոշման համաձայն՝ երեխաների նպաստին անմիջապես վերաբերող դրույթ ՀՀ Սահմանադրությունը չի պարունակում, և այդ իրավունքը պետք է դիտարկել Սահմանադրության 37 հոդվածի համատեքստում, որում նշված է ընդհանրապես սոցիալական ապահովության իրավունքը՝ բացի հոդվածում թվարկվածից, նաև «օրենքով նախատեսված այլ դեպքերում», որոնց շրջանակում էլ գտնվում է երեխայի նպաստի իրավունքն: Այն պետք է դիտարկել նաև Սահմանադրության 34 հոդվածի համատեքստում, որում նշված է, որ «յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի [...] իրավունք», ինչպես նաև Սահմանադրության 48 հոդվածի 1-ին կետի առնչությամբ, որով պետության հիմնական խնդիր են հռչակվում ընտանիքի, մայրության և մանկության պաշտպանությունն ու հովանավորումը:

Կրկին անալոգիա կիրառելով՝ պետք է փաստել, որ «նպաստի իրավունք» և «նպաստ ստանալու իրավունք» եզրույթները տարբեր հասկացություններ են և առաջացնում են տարբեր հետևանքներ, դրանք չեն կարող նույնացվել: Այսպիսով, նպաստ ստանալու իրավունք չունենալու պայմաններում անձի դիմումը չի կարող մերժվել նպաստի իրավունք չունենալու հիմքով: ՀՀ կառավարության թիվ 275-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետում սահմանվածներն այն նվազագույն պայմաններն են, որոնք ապահովում են **նպաստ ստանալու իրավունքի** ծագումը, իսկ Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված պայմաններն անհրաժեշտ են և բավարար անձի մոտ **նպաստի իրավունքի** ծագման համար: Օրենքի 24-րդ հոդվածի 9-րդ մասի 1.1-րդ կետի համաձայն՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստանալու իրավունքը դադարում է երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունքը կորցնելու դեպքում, իսկ երեխայի ծնողը երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունքը կորցնում է երեխայից հրաժարվելու, երեխային բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպությունում (մանկատանը) տեղավորելու, երեխայի որդեգրվելու կամ երեխայի՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ ձեռք բերելու դեպքերում: Դիմողը երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունքը չի կորցրել. սա նշանակում է, որ բացակայում են նպաստ ստանալու իրավունքի դադարման՝ Օրենքի 24-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված հիմքերը, ինչն էլ իր հերթին նշանակում է, որ դիմողի նպաստ ստանալու իրավունքը ևս դադարած չի եղել: Բարձրացված խնդրի կապակցությամբ Պաշտպանի դիրքորոշման համաձայն՝ նպաստի իրավունք ունենալու և նպաստ նշանակելու խնդրով երեխայի ծննդյան օրվանից հետո 12 ամսվա ընթացքում տարածքային բաժին դիմելու պայմաններում անձի դիմումի մերժումը 12-ամսյա ժամկետը բաց թողնելու հիմքով իրավաչափ չի եղել:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ մայրական նպաստի վճարման մերժումը դիմումատուներին տարբերակված մոտեցում է, այդ իրավունքից օգտվող անձանց լայն շրջանակը հաստատում է, որ նպաստը տրամադրվում է նորածին երեխաներին և նրանց խնամող ողջ ընտանիքին օժանդակելու համար, այլ ոչ միայն մոր՝ ծննդաբերության հետևանքով առաջացած բարդությունների նվազեցման նպատակով<sup>26</sup>: Չնայած նրան, որ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը սոցիալական ապահովության որևէ վճար ստանալու իրավունք չի նախատեսում, սակայն եթե պայմանավորվող պետությունն ունի գործող օրենսդրություն, որի համաձայն՝ նման վճարումն իրենից ենթադրում է բարեկեցությանն ուղղված նպաստ ստանալու իրավունք, անկախ այն փաստից՝ պայմանական է այն, թե՛ ոչ, այդ օրենսդրությունը պետք է որակվի գույքային իրավունք առաջացնող և այդ հոդվածի պահանջները բավարարող անձանց համար պետք է դիտարկվի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում<sup>27</sup>:

Բարձրացված հարցի ընդհանուր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերոգրյալի հիմքում այլ խնդիր է ընկած, որն առնչվում է երեխայի հերթական կարգաթիվը որոշելու գործող մեխանիզմներին: Ընտանիքում ծնված երեխաների կարգաթիվ սահմանելու նպատակը, ըստ էության այն է, որ նոր ծնված երեխայի կարգաթիվն արտացոլում և պայմանավորվում է ընտանիքում խնամվող երեխաների քանակով, որով էլ պայմանավորվում է վճարվող նպաստի չափը: Այսպիսով, եթե ընտանիքում հոր խնամքին գտնվող նախկին ամուսնությունից ծնված երեխաներ կան, ապա նոր ծնված երեխայի

<sup>26</sup>Տե՛ս Վելլերն ընդդեմ Հունգարիայի (Weller v. Hungary) գործով 2009 թվականի հունիսի 30-ի վճիռը, գանգատ թիվ 44399/05, կետեր 30-31:

<sup>27</sup> Տե՛ս Անդրեյևան ընդդեմ Լատվիայի (Andrejeva v. Latvia) գործով 2009 թվականի փետրվարի 18-ի վճիռը, գանգատ թիվ 55707/00, կետ 77:

Տե՛ս Մոսկալն ընդդեմ Հոլանդիայի (Moskal v. Poland) գործով 2010 թվականի մարտի 1-ի վճիռը, գանգատ թիվ 10373/05, կետ 38:

ծննդյան միանվագ նպաստի իրավունքը պետք է ձեռք բերվի՝ հաշվի առնելով նոր ընտանիքում փաստացի խնամվող երեխաների քանակը:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման հարցում խնդրահարույց է ՀՀ կառավարության թիվ 275-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետի կարգավորումը, ըստ որի՝ նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս հաշվի են առնվում նպաստը նշանակելու համար դիմելու օրվա դրությամբ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված (անկախ բնակության (հաշվառման) վայրից)՝ նոր ծնված երեխայի հորից սերված երեխաները և զավակները, եթե (...)բ. դատարանի որոշմամբ նրանց խնամքն անչափահաս տարիքում հանձնվել է նոր ծնված երեխայի **հորը**:

Այս դրույթի կիրառության կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանին բազմաթիվ բողոքներ են հասցեագրվել, որոնց ուսումնասիրությունից պարզվել է, որ գործնականում ՀՀ կառավարության թիվ 275-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության կիրառելիության հետևանքով բազմաթիվ խնդիրներ են առաջանում: Օրինակ՝ բողոքներից մեկով դիմողը տեղեկացրել է, որ երկրորդ ամուսնության ընթացքում ծնված իր երրորդ երեխայի համար ծննդյան միանվագ նպաստը սահմանված չափով նշանակելու հարցով դիմել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի սոցիալական ապահովության պետական ծառայություն, սակայն ստացել է մերժում այն պատճառաբանությամբ, որ ինքը չի ներկայացրել համապատասխան դատական ակտ, որը կապացուցի, որ նախորդ ամուսնությունից ծնված երկու երեխաների խնամքն անչափահաս տարիքում հանձնվել է երեխաների հորն՝ անտեսելով երեխաների բնակության վայրը հոր բնակության վայրը սահմանելու վերաբերյալ դատական ակտը: Այսինքն, անգամ երեխայի բնակության վայրը սահմանելու վերաբերյալ դատական ակտը վերոնշյալ նորմի իմաստով բավարար չէ նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս անձի մյուս երեխաներին հաշվի առնելու համար:

Անվիճելի է այն, որ նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս պետք է կարևորվի այն փաստը, թե որ ծնողն է փաստացի իրականացնում երեխայի խնամքը: Երեխայի խնամքը հոր կողմից իրականացվելու դեպքում դրա վերաբերյալ դատական ակտի առկայության պահանջն անհարկի նեղացրել է երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստանալու ծնողի իրավունքը: Պրակտիկան պետք է ընթանա այնպես, որ երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելիս կարևորվի մեկ փաստ՝ արդյոք դիմողն է փաստացի իրականացնում երեխայի խնամքը, թե ոչ:

Նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս նրա հորից սերված երեխաներին և զավակներին հաշվի առնելու համար նրանց խնամքն անչափահաս տարիքում նոր ծնված երեխայի հորը հանձնելու վերաբերյալ դատարանի որոշման առկայության օրենսդրական պահանջ ներկայացված չէ նոր ծնված երեխայի մոր համար: Ավելին, Օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ հոդվածի իմաստով երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը տարբերակվում է նոր ծնված երեխայի հերթական կարգաթիվով՝ հաշվի առնելով նոր ծնված երեխայի ծնողների մյուս երեխաների և զավակների թիվը: Ըստ այդմ, հարցն անհրաժեշտ է առաջին հերթին դիտարկել տարբերակված մոտեցման և խտրականության տեսանկյունից:

Քննարկելով խտրականության արգելքի սկզբունքը՝ ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ այդ սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության արգելքի սկզբունքի խախտում է այն տարբերակված մոտեցումը, որը գուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից<sup>28</sup>:

<sup>28</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի մայիսի 4-ի ՍԴՌ-881 որոշումը, 4-րդ և 5-րդ կետեր:

Փաստորեն օրենսդրությամբ սահմանվել է այնպիսի դրույթ, որով հայր ծնողի նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում նույն իրավիճակում գտնվող մայր ծնողի համեմատությամբ, որի հետևանքով վերջինս գտնվում է ավելի բարենպաստ վիճակում: Ընդ որում, խիստ վիճելի է, թե օրինական որևէ նպատակ հետապնդում է արդյոք կամ ինչ առանձնահատկություններով է պայմանավորված նման տարբերակված մոտեցումը: Ուստի, սովյալ դեպքում տարբերակված կարգավորումներն օբյեկտիվ ու հիմնավոր չեն և հանգեցնում են նույն իրավիճակում հայտնված անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքի: Թեև մայրությունն ինքնին ներկայացնում է որոշ առանձնահատկություններ, որոնք պետք է հաշվի առնվեն, այնուամենայնիվ ներպետական օրենսդրության իրավակարգավորումները հնարավորություն են տալիս ծնողներին հավասարապես հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության և առողջության մասին:

Ուշագրավ է, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2019 թվականի հունվարի 15-ի թիվ ՄԴՌ-1438 որոշմամբ<sup>29</sup> ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 275-Ն որոշման թիվ 1 հավելվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությունը ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածին, 35 և 37-րդ հոդվածների 2-րդ մասերին հակասող և անվավեր: Նույն որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը նշել է նաև, որ երեխայի լավագույն շահերի առավել ապահովման նպատակով, մինչև վիճարկվող դրույթը նույն որոշման պահանջներին համապատասխանեցնելն իրավակիրառ պրակտիկան պետք է առաջնորդվի այնպիսի մոտեցմամբ, որ որևէ էական տարբերություն չպետք է լինի այն հարցում, թե նոր ծնված երեխայի հորից սերված երեխաների խնամքը հոր կողմից իրականացվել է դատարանի որոշմամբ, թե երեխայի մոր հետ փոխադարձ համաձայնությամբ:

*Այսպիսով, ելնելով երեխայի լավագույն շահի ապահովման կարևորությունից՝ անհրաժեշտ է՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու համար անհրաժեշտ լրացուցիչ փաստաթղթերը նախորդ դիմումը ներկայացնելու օրվանից հետո վեց ամսվա ընթացքում ներկայացվելու դեպքում նախորդ դիմումը ներկայացնելու օրը դիմելու օր համարել՝ նաև ՀՀ կառավարության թիվ 275-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետով սահմանված՝ նպաստ նշանակելը մերժելու որոշումների կայացման դեպքում:*

### **1.7 ԱՊՀ երկրներում զինվորական կենսաթոշակ ստանալու հնարավորության բացակայությունը**

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաղորդումներում դեռևս 2014 թվականից բարձրաձայնվել է հրշեջ ծառայության մի խումբ նախկին աշխատակիցների ԱՊՀ երկրներում զինվորական կենսաթոշակ ստանալու հնարավորությունից զրկված լինելու հարցն, ինչը շարունակում է խնդրահարույց մնալ նաև 2018 թվականի ընթացքում:

Խնդիրն այն է, որ «ԱՊՀ մասնակից պետությունների զինծառայողների և նրանց ընտանիքների կենսաթոշակային ապահովության և զինծառայողների պետական ապահովագրության կարգի մասին» համաձայնագրում (Համաձայնագիր) արտակարգ իրավիճակների նախարարության հրշեջ ծառայողների վերաբերյալ համապատասխան նշում առկա չէ, ինչի հետևանքով այդ անձինք զրկվում են ԱՊՀ երկրներում իրենց կենսաթոշակը ստանալու հնարավորությունից:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին բողոք ներկայացրած մարդիկ մինչև 2002 թվականն աշխատել են ՀՀ ներքին գործերի նախարարության հրշեջ պահպանության վարչության համակարգում, այնուհետև ՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 1-ի N

<sup>29</sup>Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=127838>

1142-Ն որոշման համաձայն՝ պետական հակահրդեհային ծառայության են անցել ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչությունում: Զինվորական կենսաթոշակի իրավունք ձեռքբերելուց հետո որպես հրշեջ հաշվառվել են ՀՀ զինկոմիսարիատի սոցիալական բաժնում: Վերջիններս հետագայում, ձեռք բերելով Ռուսաստանի Դաշնությունում ապրելու իրավունք և ՀՀ-ում դադարեցնելով կենսաթոշակային գործն, այն տեղափոխել են ՌԴ: Սակայն հրշեջ ծառայության նախկին աշխատակիցների ՌԴ-ում զինվորական կենսաթոշակի հաշվառման համար ներկայացրած դիմումները՝ համաձայնագրում ՀՀ ՆԳՆ հրշեջ պահպանության վարչության հրշեջ ծառայողներին կենսաթոշակի տրամադրման հնարավորության մասին նշման բացակայության պատճառաբանությամբ Ռուսաստանի Դաշնության իրավասու մարմինը մերժել է:

ՌԴ պաշտպանության նախարարի 1993 թվականի փետրվարի 12-ի թիվ 4468-1 և ԱՊՀ պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի 2003 թվականի դեկտեմբերի 10-ի որոշումների համաձայն՝ ԱՊՀ երկրների զինծառայողները կարող են իրենց կենսաթոշակներն օրինական կարգով ձևակերպել և ստանալ ԱՊՀ ցանկացած պետությունում, այդ թվում՝ ՌԴ-ում: Մինչդեռ, խնդիրը բարձրացրած անձանց զինվորական կենսաթոշակի հաշվառումը մերժվել է ՌԴ-ի համապատասխան մարմնի կողմից այն պատճառաբանմամբ, որ վերոնշյալ ԱՊՀ միջպետական համաձայնագրում բացակայում է նշում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հրշեջ ծառայողների մասին:

Խնդրի բարձրացման պահից ի վեր համաձայնագրում փոփոխություն չի կատարվել, որի հետևանքով հրշեջ ծառայության նախկին աշխատակիցները շարունակում են ԱՊՀ երկրներում զինվորական կենսաթոշակ ստանալու հնարավորությունից զրկված լինել՝ հանգեցնելով անձանց սոցիալական ապահովության իրավունքի խախտման:

*Ուստի, անհրաժեշտ է հնարավորինս սեղմ ժամկետում «ԱՊՀ մասնակից պետությունների զինծառայողների և նրանց ընտանիքների կենսաթոշակային ապահովության և զինծառայողների պետական ապահովագրության կարգի մասին» համաձայնագրում կատարել փոփոխություններ՝ սոցիալական ապահովության իրավունքի խախտման դեպքի վերացման և համապատասխանաբար ՀՀ նախկին ՆԳՆ հրշեջ պահպանության վարչության հրշեջ ծառայողներին կենսաթոշակի տրամադրման հնարավորությունն ապահովելու համար:*

**1.8 Միջպետական համաձայնագրի բացակայության պատճառով կենսաթոշակի ստացման անհնարինություն**

2018 թվականին շարունակում է չլուծված մնալ այլ երկրների հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում պայմանագրի (համաձայնագրի) բացակայության պատճառով կենսաթոշակի անցնելիս աշխատանքային ստաժում այդ պետություններում աշխատած ժամանակահատվածի չհաշվարկման խնդիրը, որի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանին են հասցեագրվում բազմաթիվ բողոքներ:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով սահմանված են աշխատանքային ստաժում հաշվառվող ժամանակահատվածները և դրանք հաշվառելու պայմանները: Մասնավորապես, աշխատանքային գործունեության ժամանակահատվածները հաշվառվում են աշխատանքային ստաժում, եթե վճարվել են եկամտային հարկ կամ կենսաթոշակային վճար, կամ սոցիալական վճարներ: Կենսաթոշակի իրավունքը փոխկապակցված է տվյալ պետությունում աշխատանքային գործունեությանը: Դիմողներն ունեն այլ պետություններում իրենց աշխատանքային գործունեության ժամանակահատվածների համար համապատասխան վճարումների կատարված լինելը

հավաստող փաստաթղթեր: Մինչդեռ, նշվածը բավարար չէ աշխատանքային ստաժում այդ ժամանակահատվածները ներառելու համար:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տեղեկությունների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը 2018 թվականին կենսաթոշակային ապահովության բնագավառին վերաբերող միջպետական համաձայնագիր է կնքել միայն ԱՊՀ-ի անդամ պետությունների հետ, որին չեն միացել Վրաստանը, Ադրբեջանը և Մոլդովան, որոնց հետ այդ բնագավառում Հայաստանի Հանրապետությունը չի կնքել նաև երկկողմ համաձայնագիր: Ավելին, ըստ առկա տվյալների՝ ներկայումս աշխատանքներ են տարվում ԵԱՏՄ անդամ պետությունների հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքելու ուղղությամբ: Նախատեսվում է պայմանագիրը կնքել 2019 թվականին: Մինչդեռ, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքները վկայում են, որ նաև այլ երկրների հետ համաձայնագրի կնքման անհրաժեշտություն է առաջանում:

Անհրաժեշտ է հատուկ ընդգծել նաև, որ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը չի վարում առանձնացված հաշվառում առ այն, թե քանի բողոք է հասցեագրվում նախարարությանը՝ այլ պետություններում աշխատած ժամանակահատվածներն ընդհանուր աշխատանքային ստաժում չհաշվառելու վերաբերյալ տվյալ պետության հետ համապատասխան պայմանագիր չունենալու պատճառով: Հարց է առաջանում, թե ինչպես են որոշվում այն երկրները, որոնց հետ կնքվում են կամ պայմանագրերի կնքում է նախատեսվում: Վիճակագրության վարումը թույլ կտա նախագծել առաջիկա քայլերը և նախանշել այն պետությունների ցանկը, որոնց հետ առաջնային կերպով պետք է աշխատանքներ սկսվեն համապատասխան համաձայնագրի կնքման ուղղությամբ:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝*

*1. վերանայել նշանակված կենսաթոշակները, վեր հանել դրանցում առկա այլ պետություններում աշխատած ժամանակահատվածները և տվյալ պետության հետ համապատասխան պայմանագիր չունենալու պատճառով կենսաթոշակ նշանակելիս ընդհանուր աշխատանքային ստաժում չհաշվառելու բոլոր դեպքերը,*

*2. վարել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացված դիմումների առանձին հաշվառում սույն բաժնում նկարագրված խնդրով,*

*3. վերանայման արդյունքներով ընդլայնել Հայաստանի Հանրապետության հետ համապատասխան համաձայնագիր ունեցող երկրների շրջանակը:*

### **1.9 Կենսաթոշակառուի իրավունքների խախտման այլ դեպքեր**

2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են նաև չվճարված կենսաթոշակի գումարների վճարման հետ կապված բողոքներ: Խնդիրն այն է, որ չվճարված կենսաթոշակը ստանալու համար վերջին անգամ վճարված լինելուց հետո 12-րդ ամսվա ընթացքում դիմելու դեպքում կենսաթոշակ վճարելն արդեն դադարեցված լինելու պատճառաբանությամբ կենսաթոշակի գումարի վճարումը մերժվում է:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ կենսաթոշակ վճարելը դադարեցվում է կենսաթոշակառուին (կամ նրա փոխարեն կենսաթոշակը ստանալու օրենքով այդ իրավունքն ունեցող անձին) տասներկու ամիս անընդմեջ կենսաթոշակ չվճարելու դեպքում: Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ կենսաթոշակ վճարելը դադարեցվում է կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվելու օրվանից, իսկ վերը նշված դեպքում՝ այդ հանգամանքներն առաջանալու ամսին **հաջորդող ամսվա 1-ից:**

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է կենսաթոշակ վճարելը վերսկսելու հիմքերը, որի 1-ին կետի համաձայն՝ կենսաթոշակ վճարելը վերսկսվում է կենսաթոշակ ստանալու իրավունքը, ի թիվս այլնի՝ նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 2.1-ին կետերի հիման վրա դադարեցված լինելու դեպքում՝ **դիմելու** (անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկատվությունը ստացվելու) **ամսին հաջորդող ամսվա 1-ից**, եթե կենսաթոշակատուն գրավոր դիմումը և անհրաժեշտ մյուս փաստաթղթերը ներկայացնում է **անձամբ**: Նույն օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է յուրաքանչյուր հաջորդ ամսվա կենսաթոշակի գումարի հետ *մինչև* նույն օրենքով սահմանված կարգով *կենսաթոշակ վճարելը դադարեցնելը*:

Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով՝ դիմողը կենսաթոշակատուի տրամադրած լիազորագրի հիման վրա 2017 թվականի նոյեմբեր ամսին դիմել է 2016 թվականի նոյեմբեր ամսից մինչև 2017 թվականի նոյեմբեր ամիսների չվճարված կենսաթոշակի գումարը ստանալու համար: Նշված ամիսների կենսաթոշակի գումարները վճարելը մերժվել է՝ պատճառաբանությամբ, որ կենսաթոշակը լիազորագրով վճարելու դիմումը ներկայացվել է 12-րդ ամսվա ընթացքում, երբ *արդեն ձևավորվել և վճարող կազմակերպություններին է հանձնվել 12-րդ Ընդհանրական ամսվա կենսաթոշակների վճարման ցուցակը*:

Փաստորեն, ստեղծված իրավիճակում տասներկուերորդ ամսվա ընթացքում կենսաթոշակի չվճարված գումարները ստանալու պահանջով դիմելու դեպքում օրենքի ուժով կենսաթոշակ վճարելը դադարեցված չի եղել, սակայն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատճառաբանությամբ 12-րդ ամսում կենսաթոշակը չվճարելը հանգեցրել է նրան, որ կիրառվել է Օրենքի այն դրույթը, ըստ որի՝ կենսաթոշակ վճարելը դադարեցվում է կենսաթոշակատուին տասներկու ամիս անընդմեջ կենսաթոշակ չվճարելու դեպքում:

Ստեղծված իրավիճակում, գործող կարգի համաձայն՝ կենսաթոշակի վճարումը վերսկսելու համար կենսաթոշակատուն պետք է անձամբ գրավոր դիմում ներկայացնի կենսաթոշակային մարմնին: Հարկ է նկատել, որ կենսաթոշակատուն բուժման նպատակով գտնվել է արտերկրում, այդ պատճառով 11 ամիս անընդմեջ չի կարողացել կենսաթոշակ ստանալ: Փաստորեն, կենսաթոշակի վճարումը դեռևս դադարեցված չլինելու պարագայում կենսաթոշակ վճարելն անհիմն մերժելու հետևանքով կենսաթոշակատուի վրա դրվում է կենսաթոշակի վճարումը վերսկսելու պահանջով կենսաթոշակային մարմնին անձամբ գրավոր դիմում ներկայացնելու պարտավորություն, ինչն անհնարին է դարձրել սոցիալական իրավունքի իրացումը: Մարդը փաստացի զրկվում է իրեն հասանելիք կենսաթոշակի կուտակված գումարներն ստանալու հնարավորությունից:

Կենսաթոշակի վճարման ժամկետները սահմանված են **ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 670-Ն որոշմամբ, որով հաստատված կարգի 8.1-րդ կետի համաձայն՝** ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը, հիմք ընդունելով շտեմարան մուտքագրված տվյալները (շտեմարանում կատարված փոփոխությունները), *յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային օրը* շտեմարանի համապատասխան ծրագրային գործիքի միջոցով ձևավորում է համապատասխան մարմնի համակարգի վճարման նախնական ցուցակն էլեկտրոնային տարբերակով: Նույն կարգի 8.3-րդ կետի համաձայն՝ համապատասխան մարմինն ուսումնասիրում է նախնական ցուցակը և, անհամապատասխանությունների (անճշտությունների) բացակայության դեպքում, շտեմարանի համապատասխան ծրագրային գործիքի միջոցով հաստատում է նախնական ցուցակը, ձևավորում է (տպում է) անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայտ-պահանջագիրը և կնքած հայտ-պահանջագիրը ներկայացնում է ծառայություն: Նախնական ցուցակում առկա

անհամապատասխանություններն (անճշտությունները) ճշտում է համապատասխան մարմինը՝ շտեմարանում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու միջոցով, որից հետո *ձևավորվում է նոր նախնական ցուցակ*:

**ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 670-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի համաձայն՝ կազմակերպությունը տվյալ ամսվա կենսաթոշակը վճարում է մինչև տվյալ ամսվա 20-ը և հիմնական պայմանագրով սահմանված կարգով, վճարման ցուցակի հիման վրա, կենսաթոշակների վճարման վերաբերյալ անձնավորված տեղեկատվություն է տրամադրում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը՝ թղթային և էլեկտրոնային տարբերակով: Ուշագրավ է, որ անձի մինչև տվյալ ամսվա 20-ը դիմելու դեպքում էլ չի ապահովվում կենսաթոշակի վճարումը:**

Քննվող դեպքում կենսաթոշակ ստանալու համար դիմելու պահին կենսաթոշակառուին կենսաթոշակի վճարումն օրենսդրությանը համապատասխան դադարեցված չի եղել, այսինքն՝ կենսաթոշակի վճարումը մերժվել է կենսաթոշակ վճարումը դեռևս դադարեցված չլինելու պարագայում, որպիսի պայմաններում չվճարված կենսաթոշակի գումարների վճարումը պետք է իրականացվեր սահմանված կարգին համապատասխան: Օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի ուժով կենսաթոշակի վճարումը պետք է վերսկսվեր դիմելու (անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկատվությունն ստացվելու) ամսին հաջորդող ամսվա 1-ից, տվյալ դեպքում՝ 2017 թվականի դեկտեմբերի 1-ից, ինչը սակայն չի կատարվել:

**Փաստորեն, անձին կենսաթոշակ վճարելը մերժվել է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի կարգավորումների խախտմամբ, տեխնիկական կամ ընթացակարգային որոշ առանձնահատկությունների, դրանց ոչ պատշաճ կիրառման և կազմակերպման հետևանքով: Սակայն պետք է արձանագրել, որ ոչ միայն օրենսդրական թերի կարգավորումները կամ համապատասխան կարգավորումների բացակայությունը, այլև գործող կարգավորումների ապահովմանն ուղղված ձեռնարկված միջոցները չպետք է անձի իրավունքների խախտման պատճառ դառնան: Ուստի, կենսաթոշակների վճարման ցուցակը պետք է ձևավորել և վճարող կազմակերպություններին հանձնել այնպիսի ժամկետներում, որ անձանց կենսաթոշակ ստանալու իրավունքը չտոնահարվի:**

Մյուս կողմից, անդրադառնալով վճարման ցուցակների ձևավորման ընթացակարգերին՝ պետք է փաստել, որ անհրաժեշտ է լիազորված անձի տվյալներն այդ ցուցակներում ներառելու գործընթացը կազմակերպել այնպես և այնպիսի ժամկետներում, որպեսզի չխախտվի կենսաթոշակ ստանալու՝ կենսաթոշակառուների իրավունքը:

Սոցիալական ապահովության համակարգի և դրա բաղկացուցիչ մասը կազմող կենսաթոշակի էության վերաբերյալ իրավական վերլուծությունն առավել մանրամասն ներկայացվել է սույն գլխի «Կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու հնարավորության սահմանափակումներ» ենթաբաժնում:

Վճռաբեկ դատարանը, 2007 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 3-1046(ՎԴ) վարչական գործով կայացված որոշման մեջ անդրադառնալով կենսաթոշակն ստանալու վերաբերյալ օրենսդրական կարգավորումներին, արձանագրել է, որ կենսաթոշակ ստանալը ոչ թե կենսաթոշակառուի՝ յուրաքանչյուր ամսվա կենսաթոշակը կոնկրետ որոշակի ժամկետում ստանալու իրավունքն է, այլ իրավասու պետական մարմնի՝ ոչ ուշ քան մինչև տվյալ ժամկետի ավարտը կենսաթոշակի գումարը կենսաթոշակառուին վճարելու պարտականությունը: Նույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը նշել է, որ քանի որ կենսաթոշակառուն արդեն իսկ սեփականության իրավունք ունի իրեն հասանելիք կենսաթոշակի նկատմամբ, ուստի օրենսդրական ձևակերպումը չի կարող մեկնաբանվել որպես նրա պարտականությունը հենց տվյալ ամսին ստանալու հասանելիք գումարը և



սահմանափակել վերջինիս՝ տվյալ ժամկետն անցնելուց հետո՝ իր սեփականությունն ստանալու իրավունքը<sup>30</sup>:

ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի համաձայն<sup>31</sup>՝ պետական մարմնին տրված է միայն կենսաթոշակ նշանակելու իրավասություն, սակայն որևէ օրենքում չկա պետական մարմնի կամ պաշտոնատար անձի համար սահմանված իրավասություն դադարեցնելու կենսաթոշակի վճարումը: Օրենքով նախատեսված դեպքերում և դրա հիմքերի առկայության պայմաններում յուրաքանչյուր անձի կենսաթոշակի վճարումը կարող է դադարեցվել **միայն դատական կարգով**<sup>32</sup>:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. ապահովել իրավակիրառ պրակտիկան օրենսդրության պահանջներին խիստ համապատասխան,*

*2. կենսաթոշակների վճարման ցուցակները ձևավորել և վճարող կազմակերպություններին հանձնել այնպիսի ժամկետներում, որ անձանց կենսաթոշակ ստանալու իրավունքը չոտնահարվի:*

### **1.10 Աշխատանքային ստաժի հաշվարկում**

Ա. 2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքներով մարդիկ իրենց մտահոգությունն են հայտնել իրենց կատարած աշխատանքի որոշակի ժամանակահատվածն աշխատանքային ստաժում չհաշվառելու խնդրի կապակցությամբ, ինչն էլ հանգեցնում է սոցիալական ապահովության իրավունքի իրացման դժվարությունների: Դիմողների դժգոհությունն արդարև պայմանավորված է նրանով, որ կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժում չհաշվառվող ժամանակահատվածում նրանք իրոք աշխատել են, սակայն կենսաթոշակ նշանակելիս չեն կարողանում ներկայացնել դա հաստատող և ապացուցող փաստարկներ, ինչն էլ իր հերթին հստակ սահմանված է օրենսդրությամբ:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ մինչև 2013 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթն աշխատանքային գրքույկն է կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած այլ փաստաթուղթ, *1992 թվականի հունվարից մինչև 2013 թվականի հունվարի 1-ը՝ նաև* սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերի: Հետևաբար 1992 թվականի հունվարից մինչև 2013 թվականի հունվարի 1-ը՝ աշխատանքային գործունեությունը հաստատելու համար անձանց աշխատանքային գրքույկից բացի անհրաժեշտ են համապատասխան լրացուցիչ փաստաթղթեր:

Նման կարգավորումը, թերևս, խնդիրներ չառաջացնել, եթե կենսաթոշակ նշանակելիս գործելիս լինեին բոլոր այն կազմակերպությունները, որտեղ անձինք աշխատել են: Զպետք է բացառել, որ կենսաթոշակ նշանակելիս գործատու-կազմակերպությունները կարող են այլևս չգործել (վերացված կամ լուծարված կարող են լինել), ուստի այդժամ անձանց համար առաջանում են աշխատանքային ստաժի հաստատման բազմապիսի խնդիրներ: Խնդիրն առաջանում է նաև սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթերի պահպանված չլինելու կամ արխիվ հանձնված չլինելու դեպքերում:

<sup>30</sup> Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=40464>:

<sup>31</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ ՎԴ/5088/05/09 վարչական գործ:

<sup>32</sup> Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=65069>:

Վիճելի ժամանակահատվածում աշխատած լինելու փաստն ապացուցելու բեռն ամբողջությամբ ընկնում է կենսաթոշակառուների վրա: Այս խնդիրը մեծամասամբ դեպքերում իր լուծումն է ստանում դատավարական ընթացակարգերի միջոցով: Այսինքն, երբ անձինք իրավաբանական նշանակություն ունեցող այս կամ այն փաստը հաստատելու պահանջով դիմում են դատարան: Սակայն խնդրի լուծման նման եղանակը ևս որոշ բարդությունների է հանգեցնում: Մասնավորապես, դատարանի կայացրած դատական ակտով մի դեպքում կարող է հաստատվել անձի՝ որոշակի ժամանակահատվածում աշխատած լինելու փաստը (օրինակ՝ թիվ ԱՐԱԴ/2592/02/18, ԼԴ1/0812/02/18, ԼԴ4/0558/02/18, ԼԴ4/0561/02/18 և այլ քաղաքացիական գործեր), մյուս դեպքում՝ որոշակի ժամանակահատվածում աշխատելու *աշխատանքային ստաժը* (օրինակ՝ թիվ ԱՐԴ/3654/02/18, ԼԴ1/0820/02/18, ԱՐԴ/3187/02/18, ԱՐԴ/3114/02/18 և այլ քաղաքացիական գործեր): Այն դեպքում, երբ դատական ակտով հաստատվում է անձի՝ որոշակի ժամանակահատվածում պարզապես աշխատած լինելը, այդ դատական ակտերն օրենսդրության ուժով կենսաթոշակային մարմնի համար բավարար հիմք չեն տվյալ ժամանակահատվածն անձի աշխատանքային ստաժում հաշվառելու համար, քանի որ դատական կարգով հաստատված չի լինում աշխատանքային ստաժը կամ աշխատավարձ ստանալը:

Դատական կարգով աշխատանքային ստաժը հաստատելն էլ իր հերթին այլ խնդիրների է հանգեցնում: Աշխատանքային ստաժը հաստատելու մասին դատական ակտը հիմք է այդ ակտով հաստատված ժամանակահատվածն աշխատանքային ստաժում հաշվառելու և ուժի մեջ մտած դատական ակտի կայացման օրվանից կենսաթոշակի վերահաշվարկ կատարելու համար: Որպեսզի մինչև դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը (դատավարությունը կարող է տևական ժամանակ ընթանալ) վճարված կենսաթոշակի վերահաշվարկ կատարվի և մինչ այդ կենսաթոշակի պակաս վճարված գումարները ևս վճարվեն կենսաթոշակառուին՝ անհրաժեշտ է, որ վերջինս իր օգտին քաղաքացիական դատավարության կարգով կայացված դատական ակտի կայացումից հետո էլ ՀՀ վարչական դատավարությամբ սահմանված կարգով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը կենսաթոշակի վերահաշվարկը կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու օրվանից կատարելուն պարտավորեցնելու պահանջով հանդես գա: Փաստորեն, գործատուների անփութության (սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթերը չպահպանելու կամ դրանք արխիվ չհանձնելու) և պետական ոչ պատշաճ վերահսկողության (սոցիալական վճարներ կատարելու ուղղությամբ) պատճառով կենսաթոշակառուներն ստիպված են անցնել դատավարական երկար և անմատչելի ընթացակարգերով:

Ուշագրավ է, որ բարձրացված խնդրին բախվում են նախկինում պետական հաստատություններում և կառույցներում համապատասխան ծառայության և աշխատանքային ստաժ ունեցող անձինք: Այսինքն, իրենց էությամբ պետական հիմնարկ, հաստատություն, գերատեսչություն հանդիսացած կազմակերպությունում աշխատած ժամանակահատվածները չեն հաշվառվում կենսաթոշակ նշանակելիս ընդհանուր աշխատանքային ստաժում միայն այն պատճառաբանությամբ, որ առկա չէ (չի պահպանվել) սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը: Նման մոտեցումով փաստորեն կասկածի տակ է դրվում պետական համակարգում կատարված գործունեության արժանահավատությունը: Այսպիսով՝ պետությունը՝ ի դեմս կենսաթոշակային մարմնի, կենսաթոշակ նշանակելիս կասկածի տակ է դնում իր այլ մարմնի գործունեությունը, մասնավորապես աշխատակիցներին աշխատավարձ վճարելը կամ սոցիալական վճարներ կատարելը, դրա ապացուցման պարտականությունը թողնելով քաղաքացու վրա:

*Ուստի անհրաժեշտ է սահմանել աշխատանքային ստաժի հաստատման առավել արդյունավետ մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան ապացուցման բեռը բաշխել կենսաթոշակային մարմնի վրա հավասարապես: Որպես առաջնային քայլ անհրաժեշտ է վերացնել 1992 թվականի հունվարից մինչև 2013 թվականի հունվարի 1-ն աշխատանքային գործունեությունը հաստատելու համար աշխատանքային գրքույկից բացի սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթեր ներկայացնելու պահանջն այն կենսաթոշակառուների համար, ովքեր նշված ժամանակահատվածում աշխատել են պետական հաստատություններում:*

Աշխատանքային ստաժի հաշվառման գործընթացում քաղաքացիները հանդիպում են դժվարությունների նաև այլ պատճառներով: Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով՝ կենսաթոշակային տարիքը լրանալու կապակցությամբ մարդը դիմել է սոցիալական ապահովության տարածքային բաժին իրեն տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու պահանջով, նրա աշխատանքային ստաժում չեն հաշվառվել կազմակերպությունում աշխատած ժամանակահատվածը, քանի որ այդ կազմակերպության աշխատակիցների աշխատավարձերի ցուցակներն արխիվ են հանձնվել էլեկտրոնային եղանակով խտասկավառակի վրա ԵԿ համակարգիչով, որը 2004 թվականից շարքից դուրս է եկել: Բոլոր փորձերն այն վերանորոգելու կամ խտասկավառակներն ընթերցող այլ համակարգիչ ձեռք բերելու ուղղությամբ ապարդյուն են եղել:

Փաստորեն, այս դեպքում որոշակի ժամանակահատված չի հաշվառվում անձի աշխատանքային ստաժում ինչ-որ տեխնիկական խնդիրների պատճառով, ինչի հետևանքով մարդը բնականաբար նվազ կենսաթոշակ է ստանում, քան կստանար այդ տարիները ևս նրա աշխատանքային ստաժում հաշվառելու դեպքում: Հարկ է արձանագրել, որ ոչ միայն օրենսդրական թերի կարգավորումները կամ համապատասխան կարգավորումների բացակայությունը, այլ տեխնիկական միջոցների և հնարավորությունների բացակայությունը ևս չպետք է անձի իրավունքների խախտման պատճառ դառնան:

Մեկ այլ դեպքով՝ ընդհանուր իրավասության դատարանի վճռով դիմումը բավարարվել է, որոշվել է հաստատել իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստը, որ անձը 1980 թվականից մինչև 2000 թվականն ընկած ժամանակահատվածում աշխատել է տվյալ ընկերությունում: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը վերաքննիչ բողոք է ներկայացրել, որով խնդրել է բեկանել ընդհանուր իրավասության դատարանի վճիռը՝ 01.01.1992 թվականից մինչև 02.02.2000 թվականն ընկած ժամանակահատվածում աշխատանքային ստաժ դիտարկելու մասով և թողնել առանց քննության: ՀՀ վերաքննիչ դատարանը մերժել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության ներկայացրած վերաքննիչ բողոքը, որոշվել է անփոփոխ թողնել ընդհանուր իրավասության դատարանի կայացրած վճիռը: Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո անձը կրկին դիմել է կենսաթոշակային մարմնին կենսաթոշակի վերահաշվարկ կատարելու նպատակով, սակայն մերժվել է այն պատճառաբանությամբ, որ մինչև ՀՀ վերաքննիչ դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելն իրեն նշանակվել է աշխատանքային կենսաթոշակ, որում հաշվարկվել է միայն 1980-1992 թվականների ժամանակահատվածի համապատասխան աշխատանքային ստաժը, քանի որ վճռով հաստատվել է ընկերությունում աշխատած լինելու փաստը, այլ ոչ թե աշխատանքային ստաժը հաստատելու փաստը: Այսպիսով՝ անձի համապատասխան աշխատանքային ստաժի հաշվառումը կենսաթոշակային մարմինը մերժել է՝ հիմքում դնելով դիրքորոշում, որն արդեն Վերաքննիչ դատարանը քննարկել և համարել է ոչ հիմնավոր: Պաշտպանի գրության հիման վրա ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը դիմողի կենսաթոշակը վերահաշվարկելու և վիճելի ժամանակահատվածը ևս նրա աշխատանքային

ստաժում հաշվառելու համապատասխան հանձնարարական է տվել սոցիալական ապահովության տարածքային բաժնին:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. կենսաթոշակ նշանակելու և կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժի հաշվառման յուրաքանչյուր դեպքի վարման համար ուժեղացնել սոցիալական ապահովության տարածքային բաժնիների աշխատակիցների նկատմամբ վերահսկողությունը:

2. նախատեսել աշխատանքային ստաժի հաստատման կենսաթոշակառուի համար մատչելի մեխանիզմ՝ ապացուցման բեռը կենսաթոշակառուի վրայից հնարավորինս թոթափելու նպատակով:

Բ. 2018 թվականին շարունակում է արդիական մնալ նախորդ տարիների ընթացքում Պաշտպանի տարեկան հաղորդումներում բարձրաձայնված խնդիրը, որը վերաբերում է գործատուների անհատական հաշվետվությունը ժամանակին (մինչև 2013 թվականի հուլիսի 1-ը) Սոցիալական ապահովության պետական ծառայություն չներկայացնելու պատճառով՝ այն պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան չներառելու հարցին: Խնդիրն այն է, որ ՀՀ կառավարության 2013 թվականի ապրիլի 18-ի թիվ 390-Ն որոշման 4-րդ կետի համաձայն՝ գործատուներն աշխատողների սոցիալական վճարումներին վերաբերող տվյալներն անհատական տվյալների հաշվառման շտեմարան ներառելու համար կարող էին 2005 թվականի մայիսի 12-ի թիվ 938-Ն որոշմամբ սահմանված կարգով Սոցիալական ապահովության պետական ծառայություն ներկայացնել մինչև 2013 թվականի հուլիսի 1-ը, իսկ Սոցիալական ապահովության պետական ծառայությունն այլևս նման լիազորություն չունի:

Փաստորեն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը չի կարող ներառել տվյալները շտեմարաններ, դրանց փակ լինելու, իսկ Պետական եկամուտների կոմիտեն՝ տվյալ ժամանակահատվածում հաշվետվություն չվարելու պատճառաբանությամբ: Այդ հաստատությունների աշխատակիցները կարող են գրկվել իրենց սոցիալական ապահովության իրավունքի իրականացումից: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պարզաբանումների համաձայն՝ մինչև 2013 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար կատարված սոցիալական վճարներին (պարտադիր սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտ համարվող եկամտին) վերաբերող տվյալներն ամփոփվել և պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան են ներառվել 2013 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առկա տեղեկությունների հիման վրա: Ներկայումս տարվում են համապատասխան աշխատանքներ ոչ հավաստի տվյալներ պարունակող փաստաթղթերի հիման վրա ստաժի հաշվարկման դեպքերը վերհանելու և բացառելու ուղղությամբ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների համաձայն՝ առաջիկայում ներդրվելու է աշխատանքային ստաժի հաշվարկման իրավաչափության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համակարգ, այդ թվում՝ ռիսկերի վրա հիմնված վերլուծություններ իրականացնելու միջոցով: Բարձրացված խնդրի լուծումը հնարավոր է ՀՀ կառավարության 2013 թվականի ապրիլի 18-ի թիվ 390-Ն որոշմամբ սահմանված՝ անհատական տվյալներն ամբողջացնելու ժամկետները փոփոխելու և (կամ) այլ ընթացակարգեր մշակելու եղանակով, սակայն, հաշվի առնելով զուգահեռ ընթացող աշխատանքները (առկա և հնարավոր ռիսկերը)՝ Նախարարության դիրքորոշմամբ՝ խնդրին պետք է անդրադառնալ ավելի ուշ՝ իրավիճակին վերջնական գնահատական տալուց և լուծման համապատասխան եղանակներ գտնելուց հետո: 2018 թվականին անհատական հաշվի քաղվածք ստանալու համար Սոցիալական ապահովության ծառայություն է դիմել 398

քաղաքացի: 19-ը քաղաքացու դիմում մերժվել է պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում տեղեկատվության բացակայության հիմքով: Երբեմն Մոցիալական ապահովության ծառայություն են դիմում քաղաքացիներ, որոնք անհատական հաշվի քաղվածքի միջոցով ցանկանում են այլ մարմիններում (կազմակերպություններում) հաստատել, որ որոշակի ժամանակահատվածում չեն գտնվել աշխատանքային հարաբերությունների մեջ:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է անհապաղ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ՀՀ կառավարության 2013 թվականի ապրիլի 18-ի թիվ 390-Ն որոշմամբ սահմանված՝ անհատական տվյալներն ամբողջացնելու ժամկետները փոփոխելու և (կամ) այլ ընթացակարգեր մշակելու ուղղությամբ:*

Գ. Խնդրահարույց է նաև կենսաթոշակ նշանակելիս անձի աշխատած ողջ ժամանակահատվածի հաշվառումը, սակայն հետագայում՝ տարիներ անց, կատարված ուսումնասիրությունների ժամանակ «բացահայտվում են» որոշ անճշտություններ և անհամապատասխանություններ աշխատանքային ստաժում հաշվառված որոշ ժամանակահատվածի վերաբերյալ: Ըստ այդմ՝ կատարվում է կենսաթոշակի վերահաշվարկ՝ նվազեցվելով մինչ այդ նշանակված և վճարվող կենսաթոշակի չափը: Այս դեպքում, ինչպես և կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժի որոշակի ժամանակահատվածի հաշվառման դեպքում՝ կենսաթոշակատուի վրա է ընկնում կոնկրետ ժամանակահատվածում աշխատած լինելու և այդ ընթացքում իրեն աշխատավարձ վճարված լինելու փաստի ապացուցման բեռը: Սակայն, եթե կենսաթոշակ նշանակելու փուլում աշխատանքային ստաժի հաստատումը հնարավոր է իրականացնել դատական կարգով՝ դատավարության ընթացքում անհրաժեշտ ապացույցներ (գրառումներ, քաղվածքներ և այլ փաստաթղթեր) ներկայացնելով, ապա կենսաթոշակի վերահաշվարկի փուլում այս գործընթացն ավելի է բարդանում, քանի որ այդ ժամանակ դատարան ներկայացման ենթակա ապացույցները կարող են այլևս պահպանված չլինել:

2018 թվականի ընթացքում ստացված բողոքների ընդհանուր ուսումնասիրությունը վկայում է, որ շարունակում է խնդրահարույց մնալ աշխատանքային ստաժի վերահաշվարկ կատարելու հետևանքով արդեն նշանակված կենսաթոշակի գումարի նվազեցման և մինչև վերահաշվարկ կատարելն ավել վճարված կենսաթոշակի գումարի հետ գանձման խնդիրն:

Աշխատանքային կենսաթոշակի վերահաշվարկման հիմքերն սպառիչ թվարկված են «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասում: Կենսաթոշակի չափը վերահաշվարկվում է նաև, եթե կենսաթոշակի գործում հայտնաբերվել է կեղծ (ոչ հավաստի) փաստաթուղթ, որի պատճառով նվազում է կենսաթոշակի չափը, կամ կենսաթոշակի գործում հայտնաբերվել է լրացուցիչ փաստաթուղթ (տեղեկատվություն), որի հետևանքով ավելանում է կենսաթոշակի չափը: «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է, որ կենսաթոշակից պահումներ կարող են կատարվել՝ սխալ տեղեկություններով փաստաթղթեր ներկայացնելու, ինչպես նաև կենսաթոշակատուի՝ նույն օրենքի 50-րդ հոդվածով սահմանված պարտականությունները չկատարելու հետևանքով կամ սխալմամբ (օրենքի խախտմամբ) նրան ավելի վճարված գումարները հետ գանձելու մասին կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման որոշման և կենսաթոշակատուի գրավոր համաձայնության հիման վրա, սակայն նշանակված կենսաթոշակի 15 տոկոսից ոչ ավելի, եթե ավելի վճարված կենսաթոշակի գումարի չափը չի գերազանցում որոշումը կայացնելու ամսվան հաջորդող ամսվա կենսաթոշակի գումարի կրկնապատիկը: Նույն հոդվածի 4-րդ մասի առաջին կետի համաձայն՝ սխալմամբ (օրենքի խախտմամբ) ավելի վճարված կենսաթոշակի գումարները կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման հետ *փոխհամաձայնեցված ժամանակացույցի* հիման վրա կարող են ՀՀ

պետական բյուջե վերականգնվել նաև կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման այն աշխատակցի կողմից, որի մեղքով (գործողությունների կամ անգործության հետևանքով) վճարվել են ավելի վճարված կենսաթոշակի գումարները:

Բարձրացված խնդիրը հետևանք է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության իրականացրած ոչ պատշաճ վարչարարության: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Անդրադառնալով աշխատանքային ստաժի վերահաշվարկի հետ կապված խնդրին՝ պետք է նշել, որ այն հիմնականում պայմանավորված է նրանով, որ վարչական մարմինը ժամանակին չի ձեռնարկել բավարար միջոցներ կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստական հանգամանքների ճշգրիտ և ամբողջական հավաքագրման համար, որոշակի ստաժի հաշվառմամբ անձին նշանակվել է կենսաթոշակ, որը, սակայն, հետագայում կատարվելիք վերահաշվարկի հետևանքով նվազեցվում է:

Անձն իրեն կենսաթոշակ նշանակելու մասին իրավասու մարմնի որոշմանը վստահելու իրավունք ունի՝ ըստ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 3-րդ մասի, որի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչական ակտը չի կարող անվավեր ճանաչվել, եթե ակտի հասցեատերն իրավունք ունի վստահելու վարչական ակտի գոյությանը, և վերջինիս գործողության մեջ գտնվելը չի կարող վնաս պատճառել որևէ անձի իրավունքներին, Հայաստանի Հանրապետությանը կամ որևէ համայնքի: Վարչական ակտի հասցեատերը վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունք ունի, եթե վարչական ակտի հիման վրա ստացածն արդեն իսկ օգտագործել կամ տնօրինել է, ինչպես նաև, եթե ակտի հիման վրա ստացածի հետ վերադարձնելը վնաս կպատճառի վարչական ակտի հասցեատիրոջը:

Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկի համաձայն՝ դիմողին տարիներ շարունակ տարիքային աշխատանքային կենսաթոշակ է նշանակված եղել և վճարվել է 34 տարվա աշխատանքային ստաժի հաշվառմամբ, սակայն հետագայում աշխատանքային ստաժի հիմքերի հավաստիության ստուգման հետևանքով որոշակի ժամանակահատվածում դիմողի աշխատած լինելու փաստը չի հիմնավորվել, որով պայմանավորված՝ այդ ժամանակահատվածը նվազեցվել է նրա ընդհանուր աշխատանքային ստաժից, իսկ կենսաթոշակը վերահաշվարկվել է: Որոշակի ժամանակահատվածում դիմողի աշխատելու փաստը չի հիմնավորվել՝ պատճառաբանությամբ, որ աշխատանքային գրքույկը լրացված է եղել սահմանված կարգի խախտումներով: Պաշտպանի աջակցությամբ սոցիալական ապահովության տարածքային բաժնի կատարած լրացուցիչ ուսումնասիրությունների հետևանքով վիճելի ժամանակահատվածում անձի աշխատած լինելու փաստը հաստատվել է՝ վերականգնվելով կենսաթոշակի նախկին չափը: Սակայն խնդիրը համակարգային առումով շարունակում է չլուծված մնալ:

Հետաքրքրական է, որ աշխատանքային գրքույկը բնականաբար սահմանված կարգի խախտումներով լրացված է եղել նաև կենսաթոշակ նշանակելիս, ուստի տրամաբանորեն հանգում ենք այն հարցին, թե այդ պայմաններում ինչպե՞ս է ստացվել, որ կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային գրքույկի՝ սահմանված կարգի խախտումներով լրացված լինելը չի նկատվել: Նմանատիպ դեպքերում ոչ իրավաչափ է եղել կամ վերահաշվարկի հետևանքով աշխատանքային ստաժից պակասեցված ժամանակահատվածն ի սկզբանե անձի աշխատանքային ստաժում հաշվառելը կամ էլ առհասարակ վերահաշվարկի հետևանքով որոշակի ժամանակահատվածի աշխատանքային ստաժը չհաշվառելը: Ընդ

որում, առաջին դեպքում իրականացված ոչ պատշաճ վարչարարություն, փաստական հանգամանքների ճշգրիտ հավաքագրում, ինչպես նաև բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրություն և քննարկում չիրականացնելու պատասխանատվությունը պետք է կրի վարչական մարմինն՝ ի դեմս սոցիալական ապահովության տարածքային բաժնի կոնկրետ աշխատակցի: Երկրորդ դեպքում մարդուն պետք է վճարվեն կատարված աշխատանքային ստաժի վերահաշվարկի հետևանքով նվազեցված կենսաթոշակի գումարներն:

Աշխատանքային ստաժի վերահաշվարկ կատարելիս վարչական մարմինը հաշվի չի առնում անձանց կենսաթոշակային ստաժում որոշակի ժամանակահատվածը «սխալմամբ» հաշվառելու գործում սոցիալական ապահովության տարածքային համապատասխան բաժինների աշխատակիցների ունեցած մեղքի առկայությունը: Մեկ այլ խնդիր է, որ այդ աշխատակիցներն իրենց պատասխանատվությունից ապահովագրելու նպատակով կենսաթոշակառուներից վերցնում են համաձայնագրեր նրանց ավել վճարված գումարները ժամանակացույցով գանձելու վերաբերյալ:

Անձանց կենսաթոշակ նշանակելու հարաբերություններում գործող հիմնական սկզբունքը պետք է լինի սոցիալական ապահովության տարածքային բաժինների աշխատակիցների անփույթ աշխատանքի պատճառով պետությանը պատճառված վնասի հատուցման պարտականությունը ոչ թե կենսաթոշակառուների, այլ հենց այդ աշխատակիցների վրա դնելը:

Կենսաթոշակային մարմինը ոչ պատշաճ վարչարարություն իրականացնում է ոչ միայն աշխատանքային ստաժի վերահաշվարկման ժամանակ, այլև կենսաթոշակ նշանակելու, վճարելու և նմանատիպ այլ հարցերում: Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկի համաձայն՝ անձը տարիքը լրանալու կապակցությամբ դիմել է իրեն արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու պահանջով սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժին, սակայն աշխատակիցը նրա դիմումը չի ընդունել (չի մուտքագրել), այնուհետև շուրջ 8 ամիս հետո նրան տեղեկացրել են, որ արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստանալու իրավունք ունի և նոր դիմում են ընդունել կենսաթոշակ նշանակելու համար: Կենսաթոշակային մարմնի պարզաբանումների համաձայն՝ տարածքային բաժնի աշխատակիցները դիմողին բանավոր խորհրդատվություն են տրամադրել կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի վերաբերյալ, այնուհետև դիմողը կենսաթոշակ ստանալու մասին դիմումը ներկայացրել է 8 ամիս անց:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը դիմումն ընդունելուց հետո՝ **տասն աշխատանքային օրվա ընթացքում**, հիմք ընդունելով ներկայացված փաստաթղթերը և պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալները, կայացնում է սահմանված 3 որոշումներից մեկը: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինն իրավունք չունի չընդունելու վարչական վարույթի մասնակիցների ներկայացրած՝ վարույթին առնչվող դիմումները և փաստաթղթերը, որոնց քննարկումը մտնում է իր իրավասության մեջ: Այսպիսով՝ երբ անձը տարիքը լրանալու կապակցությամբ դիմում է կենսաթոշակային մարմին, անհրաժեշտ է, որ ներկայացնի գրավոր դիմում և այն մուտքագրվի, քանի որ հակառակ դեպքում կենսաթոշակային մարմինը դիմում *չմուտքագրելու պատճառով* պարտավորված չի լինում կայացնել կենսաթոշակի նշանակման կապակցությամբ նախատեսված որոշումներից որևէ մեկը: Մինչդեռ անձի դիմումն ընդունելու և դրանով պայմանավորված՝ գրավոր պարզաբանում ստանալու դեպքում վերջինս ևս ակտիվ գործողություններ կձեռնարկի իր իրավունքի իրացման համար, տեղեկացված կլինի կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու և դրանք սահմանված ժամկետում չներկայացնելու հետևանքների մասին: Քննարկվող դեպքում, եթե

անգամ համարենք, որ քաղաքացու կենսաթոշակային մարմին դիմելու հետևանքով տրվել է ընդամենը խորհրդատվություն, ապա խնդրահարույց է նաև տրված խորհրդատվության որակը, քանի որ դրա պատճառով անձն ութ ամիս անց է կրկին դիմել *կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք* բերելու համար, այն դեպքում, երբ առաջին անգամ դիմելիս ունեցել է այդ իրավունքն, ավելին՝ հետագայում կենսաթոշակ նշանակելիս հաշվի առնված փաստաթղթերը թվագրված են առաջին անգամ դիմելու ամսվա ամսաթվերով: Այս փաստը կասկածի տակ է դնում նրան տրամադրված խորհրդատվության բովանդակությունը և ամբողջականությունը:

Նշվածից կարելի է հանգել հետևության, որ սոցիալական ապահովության տարածքային բաժինների աշխատակիցների՝ իրենց ստանձնած պարտավորությունների հանդեպ դրսևորած անբարեխիղճ մոտեցման պատճառով տուժում են քաղաքացիները: Մտահոգիչ է, որ այդ համակարգում աշխատող անձինք հաշվի չեն առնում, որ իրենց կատարած աշխատանքը գուտ թղթաբանություն չէ, այն ավելի քան պատասխանատու է՝ պայմանավորված քաղաքացիաիրավական հարաբերությունների մյուս կողմի խոցելիությամբ: Հաշվի առնելով Հայաստանում օրենսդրական գործող կարգավորումներին հասարակության տեղեկացվածության ոչ այնքան բարձր մակարդակը և հատկապես այն, որ կենսաթոշակային հարաբերություններին մասնակցում են տարեցներ՝ սոցիալական ապահովության տարածքային բաժինների աշխատակիցներն առավել հետևողական պետք է գտնվեն անձանց կենսաթոշակ նշանակելու, վճարելու և նմանատիպ այլ ընթացակարգերի վերաբերյալ անձանց խորհրդատվություն տրամադրելու հարցերում: Կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձանց հնարավորինս մանրամասն պետք է ներկայացվեն օրենսդրության առանձնահատկությունները, եթե կոնկրետ հարցերում կան բացառություններ, նաև այդպիսիք:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ կենսաթոշակ նշանակվում է կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալու օրվանից (բայց ոչ շուտ, քան կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու օրվանից), եթե կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացվել է այդ օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում: Այսինքն՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով կենսաթոշակ նշանակելու մասին դիմումն ստանալուց հետո Օրենքով սահմանված որոշումներից մեկը կայացնելու համար տասնօրյա ժամկետ սահմանելն ինքնանպատակ չէ, նման սահմանափակման էությունն այն է, որ կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ոչ բավարար լինելու դեպքում անձը հնարավորություն և ժամանակ ունենա դրանք հավաքելու և ներկայացնելու կենսաթոշակային մարմին, հակառակ դեպքում դրանք կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալուց 3 ամիս հետո ներկայացվելու դեպքում, այսինքն՝ այդ սահմանված եռամսյա ժամկետը բաց թողնելու դեպքում վերջինս զրկվելու է այդ ամիսների կենսաթոշակի գումարներն ստանալու իրավունքից:

Պաշտպանին հասցեագրված բողոքների ընդհանուր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շատ հաճախ անձինք վերը նշված եռամսյա ժամկետը բաց են թողնում հենց սոցիալական ապահովության տարածքային բաժինների աշխատակիցների անբարեհաճ, անփույթ և անբարեխիղճ աշխատանքի հետևանքով, քանի որ պատշաճ տեղեկացված չեն լինում անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու, կամ դրանք որևէ սահմանափակ ժամկետում չներկայացնելու և այդ ժամկետը բաց թողնելու հետևանքների մասին:

Ուստի՝ պետք է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սոցիալական ապահովության տարածքային բաժինների աշխատակիցների մոտ իրենց աշխատանքի հանդեպ պատասխանատվությունն ավելի բարձրացնելու, ինչպես նաև նրանց կողմից քաղաքացիներին կենսաթոշակային համակարգին առնչվող անհրաժեշտ և ամբողջական տեղեկատվություն տրամադրելու ուղղությամբ:



Սոցիալական ապահովության տարածքային բաժնի աշխատակիցների իրականացրած ոչ պատշաճ վարչարարության մեկ այլ դեպքով կենսաթոշակային տարիքը լրանալու օրը՝ 2018 թվականի **փետրվար** ամսին, մարդը դիմել է իրեն տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու պահանջով՝ ներկայացնելով երկու աշխատանքային գրքույկներից միայն մեկը, քանի որ մյուսը գտնվելիս է եղել գործատուի մոտ, սակայն այդ պահին չի հայտնաբերվել և դիմողը հնարավորություն չի ունեցել այն ևս ներկայացնելու սոցիալական ապահովության տարածքային բաժին: Տարածքային բաժինը 2018 թվականի **ապրիլ** ամսին դիմողին տեղեկացրել է, որ նրան տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելը ենթակա է մերժման, քանի որ վերջինիս 10 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ ունենալու փաստը չի հաստատվել: Այնուհետև դիմողը, Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությամբ գործատուից ստանալով իր աշխատանքային գրքույկը, այն 2018 թվականի հունիս ամսին ներկայացրել է տարածքային բաժին, որից հետո նրան նշանակվել է տարիքային աշխատանքային կենսաթոշակ, քանի որ ներկայացված աշխատանքային գրքույկի հիման վրա հաստատվել է առնվազն 10 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ ունենալու փաստը:

Քննարկվող դեպքում ուշագրավ է այն, որ տարիքային աշխատանքային կենսաթոշակ ստանալու համար դիմողի ներկայացրած դիմումի հիման վրա վարչական վարույթ հարուցվելուց հետո օրենքով սահմանված ժամկետներում դիմողը, չստանալով կենսաթոշակի նշանակումը մերժելու մասին որոշում, հավատացած է եղել, որ իրեն կենսաթոշակ կնշանակվի: Մինչդեռ, եթե օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը պահպաներ, այն է՝ դիմելուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում կայացվեր որևէ որոշում և այդ մասին պատշաճ տեղեկացվեր դիմողին, ապա վերջինս հնարավորություն կունենար եռամսյա ժամկետում ներկայացնել մյուս աշխատանքային գրքույկը և որպես հետևանք՝ կենսաթոշակը կնշանակվեր կենսաթոշակի իրավունքը ծագելու տարիքը լրանալու օրվանից: Այսպիսով, որպես իրականացված ոչ պատշաճ վարչարարության հետևանքով անձին պատճառված վնասի հատուցման եղանակ կարող է դիտարկվել մինչև իրավունքի խախտումը եղած դրության վերականգնումը, որի կապակցությամբ հատկանշական է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումներում արտահայտված այն դիրքորոշումը, ըստ որի՝ Կոնվենցիայի 41-րդ հոդվածի<sup>33</sup> շրջանակներում նախապատվությունը տրվում է *restitutio in integrum*-ին (մինչև իրավունքի խախտումը եղած դրության վերականգնում), քանի որ ակնկալվում է, որ պատասխանողը պետք է ձեռնարկի բոլոր հնարավոր միջոցները խախտման հետևանքներն այնպես վերացնելու համար, որ հնարավորության սահմաններում վերականգնվի նախքան խախտումը եղած իրավիճակը<sup>34</sup>:

Այսպիսով, պետք է փաստել, որ 2018 թվականին Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունները դարձյալ հիմք են տալիս եզրակացնելու, որ չեն գործում կենսաթոշակային մարմնի աշխատակիցների անբարեխիղճ և ոչ իրավաչափ աշխատանքի և գործելաճի վերացման և համապատասխանաբար վերջիններիս պատասխանատվության պատշաճ կառուցակարգեր: Կենսաթոշակային մարմնի նախաձեռնությամբ

<sup>33</sup> Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:

<sup>34</sup> Տե՛ս Միմոնյանն ընդդեմ Հայաստանի գործով 2016 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 18275/08, կետ 30 (<http://static.echr.am/judgments/1bea85a266a1e1679cd9d9606a0bf0c6.pdf>):

Պիերսակն ընդդեմ Բելգիայի (*Piersack v. Belgium*) գործով 1984 թվականի հոկտեմբերի 26-ի վճիռը, գանգատ թիվ 8692/79, կետ 12:

կենսաթոշակների վերահաշվարկման հետևանքով պատասխանատվությունն ընկնում է կենսաթոշակառուների վրա՝ անկախ նրանից, որ կենսաթոշակ նշանակելիս կենսաթոշակային մարմնի աշխատակիցների գնահատմամբ նշանակվել և հաշվարկվել է համապատասխան չափով կենսաթոշակ: Աշխատանքային ստաժի նվազեցման տասնյակ ինչպես վերը նշված, այնպես էլ այլ դեպքերով չի քննարկվել կենսաթոշակային մարմնի աշխատակցի մեղքի առկայության հարցը, համապատասխանաբար՝ վերջինիս պատասխանատվությունն ավել վճարված գումարի վերականգնման հարցում:

Աշխատանքային ստաժի վերահաշվարկի վերաբերյալ վերը ներկայացված խնդրի կապակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ներկայացված տեղեկությունների համաձայն՝ 2018 թվականին կատարվել է 460 շահառուի կենսաթոշակի գործերում առկա փաստաթղթերի ուսումնասիրություն և աշխատանքային ստաժի վերահաշվարկ, ինչի արդյունքներով նվազեցվել է 3540 տարի 6 ամիս 13 օրվա աշխատանքային ստաժ, ավել վճարված կենսաթոշակի գումարը կազմել է 69.089.399 (վաթսունինը միլիոն ութսունինը հազար երեք հարյուր իննսունինը) ՀՀ դրամ: Ծառայության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ շահառուները վերականգնել են 2.534.434 (երկու միլիոն հինգ հարյուր երեսունչորս հազար չորս հարյուր երեսունչորս) ՀՀ դրամ: Տեղեկացվել է նաև, որ շարունակական փուլում է գտնվում ավել վճարված կենսաթոշակի գումարների պետական բյուջե վերականգնման գործընթացը, այդ թվում՝ դատական կարգով, ինչպես նաև կողմերի միջև հաշտության համաձայնության հիմքով գումարի վերականգնումը:

*Այսպիսով, անհրաժեշտ է իրականացված վերահաշվարկների յուրաքանչյուր դեպքով իրականացնել վարչական վարույթի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում, բացահայտել վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր, այդ թվում՝ դիմողի օգտին առկա հանգամանքները, ինչպես նաև կենսաթոշակների վերահաշվարկների ժամանակ կիրառել աշխատանքային ստաժի հաշվառման գործընթացում անհատական պատասխանատվության հստակ մեխանիզմներ:*

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է նաև՝*

1. սահմանել մեխանիզմ, ըստ որի՝ 1992 թվականի հունվարից մինչև 2013 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում աշխատանքային գործունեությունը հաստատելու համար աշխատանքային գրքույկից բացի սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթեր ներկայացնելու պահանջ չներկայացվեն այն կենսաթոշակառուներին, ովքեր նշված ժամանակահատվածում աշխատել են պետական հաստատություններում,

2. կենսաթոշակ նշանակելու և կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժի հաշվառման յուրաքանչյուր դեպքի վարման համար ուժեղացնել սոցիալական ապահովության տարածքային բաժինների աշխատակիցների նկատմամբ վերահսկողությունը,

3. անհապաղ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ՀՀ կառավարության 2013 թվականի ապրիլի 18-ի թիվ 390-Ն որոշմամբ սահմանված՝ անհատական տվյալներն ամբողջացնելու ժամկետները փոփոխելու և (կամ) այլ ընթացակարգեր մշակելու ուղղությամբ:

## **2. Սոցիալական աջակցության իրավունք**

### **2.1 Ընտանիքների անապահովության գնահատումը**

2018 թվականի ընթացքում ստացված բողոքներում արտացոլված տվյալների ընդհանուր ուսումնասիրությունը վկայում է, որ շարունակում են արդիական մնալ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում առկա բազմաթիվ խնդիրներ:

Դրանք, մասնավորապես, վերաբերում են ոչ պատշաճ վարչարարություն իրականացնելու, սոցիալական աջակցության տարածքային բաժինների աշխատակիցների ոչ մասնագիտական մոտեցման և պահելաձևի, ընտանիքի անապահովության միավորի հաշվարկման բանաձևի կիրառման թերությունների և այլ հարցերին:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներում բազմիցս բարձրացվում է ընտանիքների անապահովության գնահատման միավորի վրա մարդկային գործոնի՝ սոցիալական աջակցության տարածքային բաժինների աշխատակիցների ունեցած մեծ ազդեցության խնդիրը: Դժգոհություններ են նաև ստացվել ընտանիքների անապահովության գնահատման ինքնաշխատ մեխանիզմի ճկուն չլինելու վերաբերյալ: Այս խնդիրները սերտորեն փոխկապակցված են միմյանց հետ: Մի կողմից խնդրահարույց է այն, որ անապահովության գնահատման համակարգում նպաստառուի վերաբերյալ տվյալներ մուտքագրելիս անձի անապահովության միավորը հաշվարկվում և պարբերաբար որոշվում է ինքնաշխատ եղանակով՝ առանց այս կամ այն հանգամանքը հաշվի առնելու: Մյուս կողմից էլ կարևոր է այս հարցում սոցիալական աջակցության տարածքային բաժինների աշխատակիցների ունեցած դերը, քանի որ որքան էլ համակարգն ինքնաշխատ եղանակով է հաշվարկում անապահովության միավորը, այդ միավորի հաշվարկման համար անհրաժեշտ տվյալները համակարգ մուտքագրում է տարածքային բաժնի աշխատակիցը, ով կարող է օբյեկտիվորեն չգնահատել անձի փաստացի սոցիալական վիճակը կամ պարզապես անուշադրության, անգործության, իրականացված ոչ պատշաճ վարչարարության պատճառով թերի տվյալներ մուտքագրել համակարգ: Հաշվարկված անապահովության միավորը չի արտահայտելու անձի սոցիալական իրական դրությունը:

Ընտանիքների անապահովության գնահատումն ինքնաշխատ եղանակով իրականացնելու մեխանիզմը թեև նախատեսված է անապահովության միավորը որոշելու հարցում մարդկային գործոնը բացառելու համար, սակայն երբեմն հենց այդ մեխանիզմն է նպաստառուների համար լրացուցիչ խնդիրներ առաջացնում: Բողոքների ընդհանուր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անապահովության համակարգում հաշվառված և նպաստառու ընտանիքի անդամների եկամուտների չնչին փոփոխությունը հանգեցնում է նպաստի իրավունքից զրկվելուն, այսինքն՝ նպաստի գումարի տրամադրումն անհամաչափ աջակցության է վերածվում:

Օրինակ, բողոքներից մեկով նպաստառու ընտանիքի անդամի աշխատավարձի չափը փոփոխվել է՝ ավելանալով 2.000 ՀՀ դրամով: Աշխատավարձի չափի փոփոխման վերաբերյալ տվյալն անապահովության գնահատման համակարգ մուտքագրելու հետևանքով դիմողի՝ նպաստ ստանալու իրավունքն անմիջապես դադարեցվել է, քանի որ ավելացված 2000 ՀՀ դրամի համար նրա անապահովության միավորը նվազել է: Փաստորեն, աշխատավարձի չափը 2000 ՀՀ դրամով ավելանալու պատճառով անձը զրկվել է ամսական 18.000 ՀՀ դրամ սոցիալական նպաստի գումարից: Այս անհամաչափությունը գործում է բոլոր տեսակի եկամուտների չափի փոփոխման դեպքում:

Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկի համաձայն՝ ընտանիքը 2014 թվականից հաշվառված է եղել ընտանիքների ապահովության գնահատման համակարգում և ստացել ընտանեկան նպաստ, քանի որ ընտանիքի կազմում առկա են 2 անչափահաս, որոնց հայրերը տարբեր են: 2018 թվականին նպաստի իրավունքի չդադարման համար ընտանիքի հերթական հայտարարագրման ժամանակ փաստաթղթեր ներկայացնելիս պարզվել է, որ ընտանեկան նպաստ ստանալու իրավունքը դադարեցվել է՝ պայմանավորված անապահովության սահմանային միավորի իջեցումով, իսկ սահմանային միավորն իջել է, քանի որ դիմողի որդու 5 տարին այդ ընթացքում լրացել է: Այնուհետև, դիմողի կողմից մյուս որդու հայրության ճանաչման վերաբերյալ տեղեկանք ներկայացնելու հետևանքով, կիրառվել է միայնակ մոր երեխայի ծածկագիրը (երեխաների հայրանունը նույնը չլինելու

հիմքով), անապահովության միավորը բարձրացել է, իսկ նպաստի իրավունքն անմիջապես վերականգնվել:

Փաստորեն, սոցիալական աջակցության տարածքային գործակալության աշխատակցի ոչ պատշաճ և անուշադիր աշխատանքի պատճառով 4 տարի շարունակ դիմողի անապահովության միավորը մոտ է եղել սահմանայինին՝ 30.11, և ստացել է 29000 դրամ նպաստ, մինչդեռ եթե աշխատակիցն ի սկզբանե ուշադրություն դարձներ այն փաստին, որ երեխաների ծննդյան վկայականներում նրանց հայրանունը նույնը չէ, կկիրառվեր «միայնակ մոր երեխայի» ծածկագիրը, ինչի հետևանքով ձևավորված անապահովության միավորի հետևանքով էլ նպաստի չափը համարժեք կլիներ անապահովության բարձր միավորին:

ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 145-Ն որոշմամբ հաստատված՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու կարգի (հավելված 1) կարգավորումների համաձայն՝ երեխայի հայրության որոշման վկայականի (եթե երեխայի ծնողները բնակվում են առանձին) հիման վրա երեխայի տվյալներում ամրագրվում է «ամուսնալուծված անձի երեխա» ծածկագիրը, իսկ ծննդյան վկայականի՝ որում հոր տվյալներին վերաբերող տողում չկա որևէ գրանցում, առկայության դեպքում երեխայի տվյալներում ամրագրվում է «միայնակ մոր երեխա» ծածկագիրը: Նշվածը հաստատվել է նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում կատարված լրացուցիչ ուսումնասիրությունների արդյունքում, որը տեղի է ունեցել Պաշտպանի կողմից հարցի բարձրացման հետևանքով:

Նշված դեպքում վարչական մարմնի՝ սոցիալական աջակցության տարածքային բաժնի աշխատակիցը չի ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը, ինչը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի խախտում է: Պաշտպանի աջակցությամբ 2018 թվականի ընթացքում դիմողի ընտանիքին նպաստի՝ պակաս վճարված գումարն ամբողջությամբ վճարվել է:

Նմանատիպ դեպքերում է, որ չարաշահումների ռիսկը բխում է գործընթացում առկա մարդկային գործոնից, ինչն էլ հաճախ հանգեցնում է կոռուպցիոն ռիսկերի: Խնդիրն ակնառու է նաև սոցիալական աջակցության տեսուչների կողմից տնային այցելություններ իրականացնելիս: Այս դեպքում չեն գործում անապահովության գնահատման գործընթացին անմիջականորեն մասնակցող տեսուչի գործողությունները գնահատելու պատշաճ վերահսկման մեխանիզմներ: Հետագայում չարաշահումներ հայտնաբերելիս պատասխանատվությունն ամբողջությամբ ընկնում է նպաստառուի վրա և վերջինս զրկվում է ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստանալու իրավունքից:

Ըստ Պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքի՝ նպաստառու միայնակ կենսաթոշակառուի նպաստի վճարումը կասեցվել է, քանի որ նպաստառուն հերթական վերափաստագրման ժամանակ որպես աշխատող է ներառվել: Բարձրացված խնդրի կապակցությամբ իրականացված ուսումնասիրությունների հետևանքով պարզվել է, որ նպաստառուն բազմաբնակարան շենքի տանիքին ալեհավաք տեղադրելու համար քաղաքացիաիրավական պայմանագիր է կնքել կազմակերպության հետ, ինչը համակարգում կիրառվել է որպես աշխատանքային պայմանագիր և մեկնաբանվել է որպես եկամտի աղբյուր: Դիմողը տվյալ կազմակերպությունում չաշխատելու վերաբերյալ համապատասխան տեղեկանք է ներկայացրել սոցիալական աջակցության տարածքային մարմին, որը, սակայն, բավարար չի համարվել աշխատակցի կողմից՝ պահանջելով տեղեկանք ներկայացնել նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեից: Պաշտպանի միջամտությունից հետո, թեև դիմողի ներկայացրած փաստաթղթերը կրկին ուսումնասիրվել են, և դիմողի նպաստի վճարումը վերականգնվել է, սակայն պետք է նշել, որ այդ գործընթացն

ամիսներ է տևել, որի ընթացքում դիմողը՝ որպես միայնակ տարեց և սոցիալապես անապահով անձ՝ զրկված է եղել սոցիալական աջակցությունից:

2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքների ընդհանուր ուսումնասիրությունը վկայում է, որ շարունակում է խնդրահարույց մնալ կյանքի դժվարին իրավիճակում, հատկապես ձմռան ամիսներին բնակության վայրը փոխելու հետևանքով նպաստ ստանալու իրավունքից զրկվելու խնդիրը: Մտահոգիչ է, որ որոշ նպաստառուներ տարբեր՝ հիմնականում ձմռան ամիսներին վառելիք չունենալու պատճառով հարկադրված են լինում բացակայել իրենց բնակության հասցեից և որոշ ժամանակ բնակվել այս կամ այն հարազատի տանն, ինչի հետևանքով զրկվում են նպաստ ստանալու իրավունքից: Նմանատիպ դեպքերում նպաստառուի նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով, որի համաձայն՝ սոցիալական նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է սոցիալական նպաստն անընդմեջ 3 ամիս անհարգելի պատճառով չստանալու դեպքում: Օրինակ՝ նպաստառու դիմողը Պաշտպանին տեղեկացրել է, որ վառելիք չունենալու պատճառով ձմռանը երկու ամսով տեղափոխվել է ազգականներից մեկի տանը բնակվելու, ինչի պատճառով չի ստացել այդ ամիսների նպաստը, իսկ իր բնակության հասցե վերադառնալուց հետո թեև նպաստի վճարումը վերսկսվել է, սակայն այդպես էլ անցած երկու ամիսների գումարը չի վճարվել: Պաշտպանի աջակցությամբ բարձրացված խնդիրը լուծվել է, դիմողին վճարվել է նպաստի երկու ամսվա չվճարված գումարը, սակայն պետք է փաստել, որ խնդիրը համակարգային առումով շարունակում է չլուծված մնալ:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. նախատեսել այնպիսի ճկուն մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան նպաստի չափը նվազեցնել եկամուտի ավելացված չափին համամասնորեն,*

*2. բարձրացնել համակարգի հասցեականությունը և թափանցիկությունը, վերահսկողությունը տեսուչների նկատմամբ՝ չարաշահումների վերհանման, կանխման և պատասխանատվության ենթարկելու նպատակով:*

## **2.2 Վարկային բյուրոյից տեղեկանքի ստացում**

2018 թվականի ընթացքում մի շարք քաղաքացիներ իրենց դժգոհությունն են հայտնել սոցիալական աջակցության տարածքային մարմիններին ԱՔՌԱ վարկային բյուրոյից ընտանիքի չափահաս անդամների տվյալ պահին առկա վարկային պարտավորությունների և ժամկետանց վարկերի մասին, ինչպես նաև հայտարարություն՝ ընտանիքի չափահաս անդամների բանկային ավանդների և դրանցից ստացված եկամուտների մասին տեղեկանքներ ներկայացնելու վերաբերյալ: 2018 թվականին բազմաթիվ քաղաքացիներ դժգոհել են, որ այն բանկային գաղտնիք է (լինում են դեպքեր, որ նպաստառու ընտանիքի անդամներից բանկում ավանդ կամ (ժամկետանց) վարկային պայմանագիր ունի, սակայն այդ մասին մյուս անդամներին չի հայտնել), մյուս մասն էլ տեղեկացրել է (հաշմանդամություն ունեցող մարդիկ, ծերեր, հենաշարժողական խնդիրներ ունեցող անձինք), որ այն ձեռք բերելը լրացուցիչ ֆինանսական բեռ է, քանի որ նշված տեղեկանքները կարող են ձեռք բերել նոտարի հաստատած լիազորագրով:

Վերը նշված պարտականությունը ծագել է 2018 թվականի փետրվարի 1-ին ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին թիվ 72-Ն որոշման ընդունմամբ, որի ուժով այսուհետ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու (փաստագրվելու) համար փաստաթղթերի հետ միասին անհրաժեշտ է պարտադիր կարգով ներկայացնել նաև տեղեկանք՝ ԱՔՌԱ վարկային բյուրոյից ստացված (այդ թվում՝ առևտրային բանկի

մասնաճյուղի միջոցով՝ ընտանիքի չափահաս անդամների՝ տվյալ պահին առկա վարկային պարտավորությունների և ժամկետանց վարկերի մասին, ինչպես նաև հայտարարություն՝ ընտանիքի չափահաս անդամների բանկային ավանդների և դրանցից ստացված եկամուտների մասին (բանկային ավանդ ունենալու դեպքում ներկայացվում է նաև տեղեկանք բանկից՝ ավանդի չափի և տվյալ հաշվետու տարվա ընթացքում դրա վրա հաշվեգրված տոկոսների մասին):

2018 թվականի փետրվարի 1-ի թիվ 72-Ն որոշման 3-րդ կետում նշվել է, որ այն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո: Այսինքն՝ սկսած 2018 թվականի օգոստոսի 7-ից՝ սոցիալական աջակցության տարածքային մարմինները փաստագրվողներից պահանջել են ներկայացնել վերոհիշյալ տեղեկանքը: Սակայն նշված տեղեկանքները դեռևս նշանակություն չունեն (քանի որ չեն կիրառվել) փաստագրված ընտանիքի անապահովության աստիճանը որոշելու, տվյալ ընտանիքին ընտանեկան նպաստ նշանակել կամ չնշանակելու հարցում:

Բողոքներից մեկով քաղաքացին հայտնել է, որ իր ընտանիքը հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում: 2019 թվականի հունվար ամսին վերափաստագրման ժամանակն է: Սոցիալական աջակցության մարմնից պահանջել են ներկայացնել տեղեկանք՝ ԱՔՌԱ վարկային բյուրոյից ստացված ընտանիքի յուրաքանչյուր չափահաս անդամի՝ տվյալ պահին առկա վարկային պարտավորությունների և ժամկետանց վարկերի մասին: Ըստ դիմողի՝ ընտանիքի անդամներից է ամուսնու մայրը, ով 96 տարեկան է, որը հիվանդության պատճառով չի կարող ներկայանալ բանկ՝ պահանջվող տեղեկանքն ստանալու համար: Դիմողին պարզաբանվել է, որ պահանջը սահմանված է իրավական ակտով և առաջարկվել է պահանջվող փաստաթուղթը ձեռք բերել լիազորագրով, ինչից էլ քաղաքացին հրաժարվել է նոտարական ծառայությունը վճարովի լինելու պատճառով:

Հասկանալի է, որ ընտանիքի անդամների վարկային պատմության և խնայողական միջոցների մասին տեղեկատվություն ստանալու նպատակն է ընտանիքի սոցիալ-տնտեսական պայմանները հնարավորինս ճիշտ բնորոշելը, ընտանիքների անապահովության գնահատման համակարգը կատարելագործելը և ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների հասցեականությունը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տեղեկատվության համաձայն՝ 2018 թվականի ընթացքում 114 թեժ գիծ ծառայություն դիմած քաղաքացիներից ստացվել է 471 հեռախոսագանգ՝ ԱՔՌԱ վարկային բյուրոյից տեղեկանքն առողջական վիճակից ելնելով սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին) ներկայացնելու նպատակով վերցնել չկարողանալու վերաբերյալ: Ըստ աշխատանքային և սոցիալական հարցերի նախարարության՝ անապահով ընտանիքների կողմից չափահաս անդամների՝ տվյալ պահին առկա վարկային պարտավորությունների և ժամկետանց վարկերի, ինչպես նաև ընտանիքի չափահաս անդամների բանկային ավանդների և դրանցից ստացված եկամուտների մասին փաստաթղթերի ստացումը և դրանցում առկա տվյալների վերլուծությունը խնդրահարույց է, քանի որ.

1. ներկայումս ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների չափահաս անդամների թիվը շուրջ 220000 է: Այսինքն 220000 անձ (այդ թվում՝ հաշմանդամներ, տարիքի և առողջական խնդիրներով պայմանավորված տեղաշարժման դժվարություններ ունեցողներ և այլն) ընտանիքների անապահովության գնահատման համակարգի հիման վրա տրվող օգնություններից (ընտանեկան, սոցիալական նպաստներ, հրատապ օգնություն, մարդասիրական օգնություններ և այլն) օգտվելու նպատակով առնվազն տարին մեկ անգամ, դիմում ներկայացնելու, այնուհետև տեղեկանք ստանալու համար, պետք է ներկայանան առևտրային բանկ, ինչն արդեն իսկ հանգեցրել է

դժգոհությունների աճի և առևտրային բանկերում հերթերի կուտակումների: Առավել խնդրահարույց է գյուղական բնակչության տեղեկանքների ստացումը, քանի որ վերջիններս այդ նպատակով այցելում են առևտրային բանկի գտնվելու վայրի համայնք (առնվազն շրջկենտրոն),

2. ներկայացվող տեղեկանքները թղթային են և հանրապետության 55 սոցիալական աջակցության տարածքային գործակալություններում (բաժիններում) հավաքված տեղեկանքներում առկա տվյալների ուսումնասիրությունն իրատեսական չէ: Բնակչության վարկային պարտավորությունների և ունեցած ավանդների վերաբերյալ տվյալների մշակումը, ուսումնասիրությունը, վերլուծությունը և դրա հիման վրա համապատասխան առաջարկի մշակման գործընթացն առավել արդյունավետ հնարավոր է իրականացնել կենտրոնացված՝ էլեկտրոնային տեղեկատվության հիման վրա:

Այդ ուղղությամբ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մշակել է ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով առաջարկվել է վարկային պատմության մասին տեղեկատվությունը ստանալ կենտրոնացված ձևով՝ Վարկային բյուրոյից, ապահովելով քաղաքացու գրավոր համաձայնությունը նշված տեղեկատվությունը ստանալու համար, որը հնարավորություն կստեղծի էլ ավելի մեծացնել ընտանիքների անապահովության գնահատման համակարգի հիման վրա իրականացվող ծրագրերի (ընտանեկան, սոցիալական նպաստներ, հրատապ օգնություն և այլն) հասցեականությունը: Մակայն վերը նշված նախագիծը սույն հաղորդման հրապարակման օրվա դրությամբ ընդունված չի եղել:

Այսպիսով, ճիշտ է պահանջվող տեղեկատվությունը կենտրոնացած ձևով ստանալը դյուրացնում է նոր կարգի կիրառումը, քաղաքացիներին ազատում լրացուցիչ պարտականությունից, սակայն խնդրահարույց է այն առումով, որ գործընթացի հետևանքով ընտանիքի մյուս անդամներն իրենց կամքից անկախ տեղեկանում են մյուս անդամների բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների մասին, ինչն էլ առաջացնում է անհանգստություններ ու դժգոհություններ:

Այնուամենայնիվ, ողջունելի է, որ կատարված փոփոխությունների և լրացումների նպատակն ընտանիքի սոցիալ-տնտեսական պայմանները հնարավորինս ճիշտ բնորոշելն է, ընտանիքների անապահովության գնահատման համակարգը կատարելագործելը և ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների հասցեականությունը բարձրացնելը, բայցևայնպես, չի բացառվում, որ դրա հետևանքով ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված բազմաթիվ ընտանիքներ զրկվեն նպաստի իրավունքից:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. *վարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ տեղեկանք ներկայացնելը համարել ոչ պարտադիր, ավանդներից ստացած եկամտի համար սահմանել հստակ չափ, որը գերազանցելու դեպքում միայն դիտարկել որպես ընտանիքի միջին ամսական ամբողջական եկամտի կազմի մեջ,*

2. *մշակել այնպիսի մեխանիզմ, որպեսզի ԱՔՌԱ վարկային բյուրոյից բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունը տիրապետի բացառապես տվյալ անձն ու լիազոր մարմինը:*

### **2.3 Նպաստի իրավունքից օգտվելիս գազի և էլեկտրաէներգիայի սահմանված չափաքանակն անցնելը**

2018 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներում բարձրացվել է ամառային ամիսների ընթացքում ընտանիքի սպառած էլեկտրաէներգիայի և

12 ամիսների ընթացքում ընտանիքի սպառած բնական գազի սահմանված չափաքանակն անցնելու պատճառով նպաստի իրավունքը դադարելու վերաբերյալ խնդիրն: Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով դիմողը հայտնել է, որ 2018 թվականի նոյեմբեր ամսից կասեցվել է նպաստի վճարումը՝ պատճառաբանությամբ, որ ամռան ամիսներին էլեկտրաէներգիայի ծախսը 36 կՎտ-ով ավել է եղել նախատեսված ծախսից, և փոփոխվել է ընտանիքի կազմը: Դիմողը տարածքային մարմնին է ներկայացրել բացատրագիր այն մասին, որ էլեկտրաէներգիայի ավել ծախսը կապված է եղել ջրի խողովակների գոյման աշխատանքներ իրականացնելու հետ, իսկ ընտանիքի կազմի փոփոխության վերաբերյալ հայտնել է, որ արտերկրում բնակվող որդին բժշկական հետազոտություններ անցնելու և փաստաթղթեր ձեռք բերելու նպատակով որոշակի ժամանակով է եկել Հայաստան, այժմ կրկին գտնվում է արտերկրում: Բացատրագիր ներկայացնելուց հետո Սոցիալական աջակցության գործակալության պետի հավաստմամբ՝ կատարվել է տունայց, որի հետևանքով չի արձանագրվել խիստ անապահովության կարգավիճակ և տրվել է բացասական եզրակացություն: Ընտանիքի նպաստի իրավունքը դադարել է օգտագործվող էլեկտրաէներգիայի քանակը սահմանված չափաքանակից 36 կՎտ-ով գերազանցելու պատճառով:

Հայտնի է, որ սոցիալապես անապահով ընտանիքներն (անապահովության գնահատման համակարգում քսանից բարձր անապահովության միավոր ունեցող) ունեն էլեկտրաէներգիայի և գազի սպառման սահմանափակում, և եթե սահմանված քանակը գերազանցվում է, ապա նրանք կարող են զրկվել նպաստից, ինչպես նաև սահմանված ցածր գներից: ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի թիվ 145-Ն որոշմամբ հաստատված հավելված 2-ի ընտանիքների անապահովության գնահատման կարգի 16-րդ կետի համաձայն՝ ամառային ամիսների ընթացքում ընտանիքի կողմից էլեկտրաէներգիայի սպառման հանգամանքն ազդում է ընտանիքի անապահովության միավորի վրա:

Նույն որոշմամբ սահմանված է, որ ընտանիքի ամառային ամիսների ընթացքում էլեկտրաէներգիայի՝ սահմանված չափաքանակից ավելի սպառած լինելու հանգամանքը կարող է չամրագրվել, եթե առկա են խորհրդի պատշաճ հիմնավորված առաջարկությունը դրա մասին և տարածքային կենտրոնի կազմակերպած տնային այցելության ընթացքում կատարված ուսումնասիրության մասին արձանագրությունը: Բարձրացված խնդրի կապակցությամբ պետք է դրական գնահատել խորհրդի ունեցած դերակատարությունը, քանի որ այդպիսով հնարավորություն է ստեղծվում սահմանված չափաքանակից ավելի էլեկտրաէներգիա սպառելու դեպքում անգամ անձին չզրկելու նպաստ ստանալու իրավունքից՝ հաշվի առնելով նպաստառուի օգտին առկա որոշակի հանգամանքներ: Մակայն չբացառելով խորհրդի անդամների և տարածքային կենտրոնի աշխատակիցների՝ իրենց լիազորությունները լայն հայեցողությամբ իրացնելու հնարավորությունը՝ անհրաժեշտ է ուժեղացնել վերահսկողությունն այդ աշխատակիցների նկատմամբ հնարավոր չարաշահումներից խուսափելու նպատակով:

2018 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանն ստացել է նաև բնական գազի սահմանված չափաքանակն անցնելու պատճառով նպաստի իրավունքից զրկվելու վերաբերյալ բողոքներ: Օրինակ՝ քննվող բողոքներից մեկով դիմողը հայտնել է, որ ունի երեք անչափահաս երեխա, ընտանիքը սոցիալապես անապահով է, գոյատևում է ամուսնու ժամանակ առ ժամանակ արտագնա աշխատանքի միջոցով: Տարիներ շարունակ դիմողի ընտանիքը ստացել է ընտանեկան նպաստ, սակայն 2017 թվականին նպաստի իրավունքը դադարել է ընտանիքի սպառած գազի քանակը սահմանային չափաքանակը գերազանցելու պատճառով: Դիմողի հավաստմամբ՝ սպառած գազի գերաժախսն առաջացել է գազի առևտրային հաշվառքի սարքի (գազահաշվիչ) անսարք լինելու պատճառով, որը սոցիալական աջակցության տարածքային մարմինը հաշվի չի առել: Նպաստի իրավունքը



դադարելուց հետո մի քանի անգամ բանավոր դիմել է սոցիալական աջակցության տարածքային բաժին ընտանիքների անապահովության գնահատման համակարգում կրկին հաշվառվելու (փաստագրվելու) համար, սակայն տեսուչը պատշաճ չի արձագանքել, ավելին՝ հրաժարվել է դիմում ընդունել:

Նշվածի կապակցությամբ իրավասու մարմինը պարզաբանել է, որ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված և նախորդ 12 ամիսների ընթացքում բնական գազի սահմանված չափաքանակից ավելի սպառում ունեցող ընտանիքների տվյալների համադրման արդյունքում՝ համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի թիվ 145-Ն որոշմամբ հաստատված կարգի, ընտանիքի անապահովության միավորը զրոյացվել է: Պաշտպանի աջակցությամբ դիմողի՝ նպաստ ստանալու իրավունքը վերականգնվել է:

Խնդրահարույց է նաև հանրապետության ամբողջ տարածքում կլիմայական տարբեր պայմաններով անապահովության նպաստ ստացող ընտանիքների սպառած բնական գազի սահմանված չափաքանակը նույն չափորոշիչով սահմանելը: Օրինակ, Գեղարքունիքի մարզի կլիման բնորոշվում է երկարատև և խստաշունչ ձմեռներով<sup>35</sup>: Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պաշտոնական կայքէջում տեղադրված՝ «Հիդրոոդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի 2018 թվականի հունվար ամսվա կլիմայական բնութագրի՝ Գեղարքունիքի մարզում հունվար ամսին օդի ամսական միջին ջերմաստիճանը  $-2...-5^{\circ}\text{C}$  է, որը  $3-4^{\circ}\text{C}$  բարձր է բազմամյա միջին արժեքից: Առանձին օրերին օդի ջերմաստիճանը գիշերն իջնում է մինչև  $-15...-20^{\circ}\text{C}$ : Համեմատության համար պետք է նշել, որ օրինակ՝ Արարատի, Արմավիրի, Կոտայքի մարզերում հունվարյան միջին ջերմաստիճանը  $0...-2^{\circ}\text{C}$  է, որը  $3-4^{\circ}\text{C}$  բարձր է բազմամյա միջին արժեքից: Առանձին օրերին օդի ջերմաստիճանը գիշերն իջնում է մինչև  $-10...-14^{\circ}\text{C}$ <sup>36</sup>:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից տեղեկացվել է, որ հաշվի առնելով ՀՀ բնակլիմայական պայմանները՝ տարբեր տարածաշրջաններում ձմեռային ամիսների տարբեր տևողությունը և խստությունը՝ ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսվել էր բնութագրիչի կիրառման չափորոշիչը (բնական գազի սպառման սահմանային չափաքանակը) սահմանել փորձնական ծրագրի իրականացման արդյունքների ամփոփմամբ: ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի թիվ 3-Ն որոշմամբ փորձնական ծրագրի իրականացման ավարտի ժամկետ սահմանվել էր 2018 թվականի հունվար ամիսը: Նախարարությունից տեղեկացվել է նաև, որ Հայաստանի Հանրապետությունում գործող սոցիալական աջակցության տարածքային բոլոր 55 գործակալություններից ստացվել են առաջարկություններ բնութագրիչի՝ ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակն առավել ճշգրիտ գնահատող չափորոշիչի մասին: Դրանց իրականացրած ուսումնասիրություններին զուգահեռ նախարարությունը նույնպես իրականացրել է նախարարության կազմած ցուցակներում ընդգրկված ընտանիքներից՝ առավել մեծ սպառում ունեցողների սոցիալ-տնտեսական պայմանների ուսումնասիրություն, որի արդյունքներով արված առաջարկությունները համընկնում են գործակալությունների կողմից արված առաջարկություններին այն տեսանկյունից, որ դրանք նույնպես վերաբերում են բանաձևի փոփոխությանը՝ կիրառման ժամկետի կամ հաշվարկային չափորոշիչի փոփոխություններին կամ դրանք կիրառել տարածաշրջանային առանձնահատկությունների հաշվառմամբ:

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 438-Ն որոշմամբ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընտանիքի սպառած

<sup>35</sup> Տե՛ս <http://geggharkunik.mtad.am/files/docs/3592.pdf> (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>36</sup> Տե՛ս <http://www.mes.am/hy/meteo-reports/> (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

բնական գազի սահմանային չափաքանակների կիրառման փորձնական ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգվել է մինչև 2018 թվականի օգոստոսի 15-ը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տեղեկությունների համաձայն՝ բնական գազի սահմանված չափաքանակն անցնելու պատճառով նպաստի իրավունքից զրկվելու վերաբերյալ բողոքների հաշվառում նախարարությունում չի իրականացվում: 2018 թվականի ընթացքում ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի թիվ 145-Ն որոշմամբ սահմանված կարգով սոցիալական աջակցության տարածքային գործակալություններին (բաժիններին) տրամադրվել են համապատասխան ցուցակներ՝ նախորդ 12 ամիսների ընթացքում սպառած բնական գազի՝ սահմանված չափաքանակից ավելի սպառած լինելու մասին շուրջ 133161 ընտանիքի վերաբերյալ, որոնցից սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների) կողմից գրոյացվել է՝ 107 նպաստառու և 168 ոչ նպաստառու ընտանիքների անապահովության միավորը:

Ընտանիքների անապահովության համակարգում ընդգրկված ընտանիքների 12 ամիսների ընթացքում բնական գազի՝ սահմանված չափաքանակն ավելացնելու ուղղությամբ նախարարությունից տեղեկացրել են, որ 2017-2018 թվականների ընթացքում իրականացվում է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում՝ ընտանիքի սպառած բնական գազի սահմանային չափաքանակների կիրառման փորձնական ծրագիր: Փորձնական ծրագրի շրջանակներում ընտանիքի անապահովության միավորի վրա 12 ամիսների ընթացքում ընտանիքի սպառած բնական գազի սահմանային չափաքանակի ազդեցությունը դիտարկվում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թվականի փետրվարի 27-ի N 36-Ա/1 հրամանով սահմանված կարգով (համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի N 3-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի): Իսկ նույն որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետով Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին հանձնարարվել էր մինչև 2018 թվականի օգոստոսի 15-ը, իրականացված փորձնական ծրագրի արդյունքների ամփոփմամբ, ՀՀ կառավարություն ներկայացնել առաջարկություն՝ ընտանիքի սպառած բնական գազի սահմանային չափաքանակի մասին: Փորձնական ծրագրի արդյունքներն ամփոփվել են և համապատասխան առաջարկը ներառվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծում, որով փոփոխություններ և լրացումներ են կատարվում նաև ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման մեջ: Ներկայացված նախագծով առաջարկվել է ընտանիքի անապահովության գնահատման ժամանակ հաշվի առնվող ցուցանիշներում դիտարկել նաև ընտանիքի մայիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում սպառած բնական գազի քանակը (գործող կարգի համաձայն՝ հաշվի է առնվում 12 ամիսների ընթացքում սպառած բնական գազ): Այս նախագծի վերաբերյալ շահագրգիռ մարմիններից ստացված կարծիքներն ամփոփվել են և նախագիծը ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական փորձագիտական եզրակացություն ստանալու նպատակով:

Նախագիծը, սակայն սույն հաղորդման հրապարակման օրվա դրությամբ ընդունված չի եղել, ուստի համակարգային առումով հարցը չի լուծվել 2018 թվականի ընթացքում:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. ամառային ամիսների ընթացքում ընտանիքի սպառած էլեկտրաէներգիայի և բնական գազի միջին ամսական սահմանային չափաքանակներն ավելացնել,*

*2. հանձնարարել սոցիալական աջակցության տարածքային գործակալություններին (բաժիններին) սպառած էլեկտրաէներգիայի և բնական գազի՝ սահմանված չափաքանակից ավելի սպառած լինելու տեղեկություն ստանալուց հետո ընտանիքի անապահովության միավորը գրոյացնելուց առաջ ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի,*

*լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:*

#### **2.4 Ավանդների փոխհատուցում**

2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքներում կրկին բարձրացվել է Պաշտպանի դեռևս 2017 թվականի տարեկան հաղորդմամբ մատնանշված՝ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված չլինելու փաստով պայմանավորված՝ նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման մերժման խնդիրը:

ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի թիվ 460-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 6-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ դիմումների հաշվառման գործընթացում սոցիալական աջակցության տարածքային բաժինը դիմումում նշված անձը հաստատող փաստաթղթի տվյալները *համեմատում է* բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական բազայի տվյալների հետ:

Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով ՀՀ քաղաքացին տեղեկացրել է, որ հաշվառված է Արցախի Հանրապետությունում, նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրած ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու վերաբերյալ դիմումը մերժվել է՝ պատճառաբանությամբ, որ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում հաշվառված չէ: Խնդրահարույց է այն, որ ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի թիվ 460-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 6-րդ կետի 3-րդ ենթակետը Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու ուղղակի պահանջ չի բովանդակում, հետևաբար անհիմն է Արցախի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում հաշվառված անձին ավանդների դիմաց փոխհատուցում տալը մերժելը ՀՀ-ում բնակչության պետական ռեգիստրում հաշվառված չլինելու պատճառաբանությամբ:

ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի թիվ 460-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 1-ին կետի համաձայն՝ նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեն նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը, ներառյալ՝ խորհրդային ռուբլով դրամական ավանդ ներդրած այն անձինք, ովքեր համապատասխանում են նույն կետի 1-4-րդ ենթակետերով սահմանված չափանիշներին: Սրանք այն պայմաններն են, որոնք անհրաժեշտ են և բավարար անձի ավանդների դիմաց *փոխհատուցում ստանալու իրավունքի* ծագման համար:

Փաստորեն, փոխհատուցման իրավունք ունեցող (ավանդ ներդրել է նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը) դիմողին, ով միաժամանակ բավարարել է ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի թիվ 460-Ն որոշմամբ սահմանված թիվ 1 հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված այդ պահին գործող պահանջը (ծնվել է մինչև 1931 թվականի դեկտեմբերի 31-ը) և ունեցել է փոխհատուցում ստանալու իրավունք, մերժվել է ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրումն այն հիմքով, որը թե ավանդների դիմաց փոխհատուցման իրավունքի, թե փոխհատուցում ստանալու իրավունքի ձեռք բերման պայման չէ:

Ուշագրավ է, որ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված հավելված 1-ի 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեն նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ

հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներառյալ խորհրդային ռուբլով դրամական ավանդ ներդրած Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1444-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի ցանկում ընդգրկված համայնքներում՝ բնակչության պետական ռեգիստրում 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ **հաշվառված անձինք**, այդ թվում, եթե ավանդը ներդրվել է մահացած ամուսնու կողմից՝ համատեղ ամուսնական կյանքի ընթացքում: Վերոգրյալից հետևում է, որ նշված որոշմամբ սահմանամերձ համայնքների բնակիչներին ավանդների դիմաց փոխհատուցում տրամադրելու համար սահմանամերձ համայնքներում հաշվառված լինելու հստակ պահանջ է նախատեսված:

Մինչդեռ, մինչև 1934 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված անձանց ավանդների դիմաց փոխհատուցում տրամադրելու համար նշված հարաբերությունները կարգավորող իրավական ակտում ամրագրված չէ ՀՀ բնակչության հասցեով բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու հստակ և որոշակի պահանջ, ինչը կարող է հիմք հանդիսանալ քաղաքացու այլ վայրում (այդ թվում՝ Արցախի Հանրապետությունում) հաշվառված լինելու պարագայում ավանդի փոխհատուցումը մերժելու համար և մարմնի ամրագրված պարտականությունը՝ դիմումում նշված անձի տվյալները համեմատել բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական բազայի տվյալների հետ: Նշվածը չի կարող մեկնաբանվել որպես պետական ռեգիստրի տեղեկատվական բազայում Հայաստանի Հանրապետությունում բնակչության վայրի հաշվառման հասցեով հաշվառված լինելու պահանջ կամ պարտականություն:

Նշված դեպքում նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում անձի ներդրած ավանդի դիմաց փոխհատուցումը չի կարող իրականացվել Արցախի Հանրապետությունում, քանի որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 130-ի «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերությունում ԼՂՀ քաղաքացիների 1993 թվականից արժեզրկված ավանդների նախնական փոխհատուցման կարգի մասին» թիվ 130 որոշման հիման վրա ԱՀ-ում փոխհատուցման ենթակա են միայն «Արցախբանկ» ՓԲԸ-ում ԼՂՀ քաղաքացիների ներդրած ավանդները: Հետևաբար՝ ավանդների դիմաց փոխհատուցումն Արցախի Հանրապետությունում կազմակերպելը՝ որպես բարձրացված խնդրի լուծման այլընտրանքային տարբերակ չի կարող դիտարկվել:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված համանման փաստական հանգամանքներով բողոքի կապակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից պարզաբանվել է, որ ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի թիվ 460-Ն որոշման մեջ առկա՝ տարընթերցման տեղիք տվող ձևակերպումների կապակցությամբ նախարարությունում աշխատանքներ են իրականացվում նշված որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու կապակցությամբ, որի համատեքստում կհստակեցվեն ավանդի փոխհատուցման ծրագրում հաշվառման գործընթացը, ավանդի փոխհատուցման, նշանակման, վճարման և մերժման հիմքերը:

Պետք է, սակայն, փաստել, որ խնդրի բարձրաձայնումից հետո ՀՀ կառավարության թիվ 460-Ն որոշման մեջ կատարված փոփոխություններով անդրադարձ չի կատարվել նշված խնդրին: Ողջունելի է, որ ՀՀ կառավարության 2019 թվականի հունվարի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի թիվ 460-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 24-Ն որոշմամբ ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք տվող տարիքային շեմը 1932-ից դարձել է 1934: ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 443-Ն որոշումը կարգավորումներ է նախատեսել զոհվածների ժառանգների վերաբերյալ՝ կրկին չանդրադառնալով ՀՀ կառավարության թիվ 460-Ն որոշման մեջ առկա տարընթերցման տեղիք տվող ձևակերպմանը և հաշվառման վերաբերյալ կարգավորումներին:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ավանդի փոխհատուցման՝ Հայաստանի Հանրապետությունում բնակության պայման հստակ սահմանված չլինելու պարագայում ապահովել այդ անձանց ավանդի դիմաց փոխհատուցման տրամադրումը:*

### **3. Սոցիալական ապահովության իրավունքն աշխատավայրում դժբախտ պատահարների, հիվանդության դեպքում**

2018 թվականին աշխատավայրում դժբախտ պատահարների, մասնագիտական հիվանդության դեպքում սոցիալական ապահովության իրավունքի սահմանափակման խնդիրը շարունակում է մնալ չլուծված, որի մասին տարիներ շարունակ բարձրաձայնվում է Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցներում և տարեկան հաղորդումներում: Նշված խնդրին անդրադարձ է կատարվել հիմք ընդունելով «ՀՀ քաղաքացիայի հաշմանդամ օդաչուների» հասարակական կազմակերպության դիմումները, որոնց ուսումնասիրությամբ պարզ է դարձել, որ 2004 թվականին տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունների հետևանքով մի շարք մարդիկ զրկվել են աշխատավայրում դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունքից:

Խնդիրն այն է, որ ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 22-ի N 1094-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 1992 թվականի նոյեմբերի 15-ի N 579 որոշմամբ հաստատված կանոնների 16-րդ կետը, որը սահմանում է, որ կազմակերպության լուծարման կամ վերակառուցման հետևանքով նրա գործունեության դադարեցման դեպքում վնասը փոխհատուցում է (վնասի փոխհատուցումը շարունակում է) նրա իրավահաջորդը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ սոցիալական ապահովության մարմինը՝ պետական բյուջեի հաշվին: Տվյալ փոփոխության հետևանքով փոխհատուցում ստանալու երաշխիքը վերացվել է այն դեպքերի համար, երբ պատճառված վնասի համար պատասխանատու կազմակերպությունները լուծարվել են 2004 թվականի օգոստոսի 1-ից հետո:

Միննույն ժամանակ, պետք է նշել, որ սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման կամ սնանկ ճանաչման դեպքում համապատասխան վճարների կապիտալացման և դրանք տուժողին վճարելու կարգը սահմանվել է ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի թիվ 914-Ն որոշմամբ: Մինչդեռ, սույն որոշումը կարգավորում է միայն դրա ընդունումից հետո նման հնարավոր դեպքերը: Միջազգային փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ նման դեպքերում հստակ պետք է ապահովվի անձի սոցիալական երաշխիքներից օգտվելու իրավունքը, ինչպես նաև այդ իրավունքների իրականացման ապահովման նպատակով պետության կողմից պետք է սահմանվեն հստակ կանոնակարգեր:

Մասնավորապես, ըստ «Արտադրական պատահարների դեպքում աշխատողներին փոխհատուցելու մասին» 1925 թվականի կոնվենցիայի<sup>37</sup> 11-րդ հոդվածի՝ ազգային օրենսդրությունը, հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները, նախատեսում է այնպիսի դրույթներ, որոնք գործատուի կամ ապահովագրողի անվճարունակության դեպքում բոլոր հանգամանքներում առավել համարժեք կերպով կապահովեն փոխհատուցման վճարումը պատահարից տուժածներին կամ, մահվան դեպքում, նրանց խնամքի տակ գտնվող անձանց: «Գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանության մասին» 1992 թվականի կոնվենցիայի 9-րդ հոդվածը սահմանում է, որ գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանությունն իրականացնում են երաշխիքային հաստատությունները:

<sup>37</sup> Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2004 թվականի դեկտեմբերի 17-ին:

Վերոնշյալ փաստաթղթերն ամրագրում են օրենսդրական հստակ և գործուն մեխանիզմների առկայություն, որպիսին Հայաստանում ներդրված չէ, իսկ նախկին մեխանիզմի ուժը կորցնելու պարագայում առաջացած բացի պատճառով անձինք փաստացի զրկվում են իրենց իրավունքն իրացնելու հնարավորությունից:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. 2004 թվականից հետո լուծարված կամ սնանկ ճանաչված իրավաբանական անձանց, այդ թվում՝ «Հայկական Ավիատոդիներ» ՓԲԸ-ի աշխատակիցներին տրամադրել աշխատավայրում դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցում,*

*2. սահմանել աշխատանքի վայրում աշխատողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը (դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների դեպքում) հատուցելու հստակ կարգ՝ գործատու կազմակերպության լուծարված լինելու դեպքում:*

## ԳԼՈՒԽ 2. ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀՀ սահմանադրությամբ և միջազգային հիմնարար փաստաթղթերով սեփականության իրավունքը մարդու հիմնական իրավունքներից է: Դրա էությունն այն է, որ յուրաքանչյուր ոք օրինական հիմքով ձեռք բերված սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք ունի (ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդված, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդված):

Մարդու իրավունքների պաշտպանին 2018 թվականին հասցեագրված բողոքները, ինչպես նաև տեղեկատվության հրապարակային աղբյուրներից ստացված տվյալները վկայում են, որ այս իրավունքի իրացման հարցում մարդիկ բախվում են մի շարք խնդիրների, որոնք ներկայացված են ստորև:

### ***1. Պետության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու արդյունքում սեփականության իրավունքի սահմանափակելը***

ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով մի շարք բնակելի տարածքներ պետության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու և ըստ այդմ՝ 2007 թվականից սկսած նշված տարածքները ձեռքբերող տարբեր կազմակերպություններին օտարելու, սակայն մինչ օրս այդ տարածքների նախկին բնակիչներին կազմակերպությունների կողմից փոխհատուցում չտրամադրելու հարցը համակարգային առումով շարունակում է չլուծված մնալ:

Բարձրացրած հարցի կարգավորման վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունից ստացվել է պարզաբանում, որ «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը<sup>38</sup> սահմանում է գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում անշարժ գույքի և գույքային իրավունքների փոխհատուցման կարգը և պայմաններն: Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ օտարվող սեփականության դիմաց պետք է տրվի նախնական և համարժեք փոխհատուցում, ինչն ըստ նույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի՝ օտարվող գույքի շուկայական արժեքից տասնհինգ տոկոս ավելի գումարն է: Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ սեփականությունը կարող է օտարվել՝ ձեռքբերողի և օտարման ենթակա սեփականության սեփականատիրոջ միջև կնքվող պայմանագրի համաձայն: Այս դեպքում կողմերի համաձայնությամբ են միայն որոշվում օտարվող սեփականության դիմաց տրվող համարժեք փոխհատուցման չափը, ձևը, կարգը, ժամկետները, պայմաններն ու կողմերի պատասխանատվությունը: Պետք է արձանագրել, որ համապատասխան տարածքներում նախկինում բնակվող անձանց և ձեռքբերող կազմակերպությունների միջև այդ տարածքների փոխարեն կառուցվելիք բազմաբնակարան շենքերում բնակարաններ տրամադրելու վերաբերյալ կնքված պայմանագրերի հիման վրա մինչ օրս չեն տրամադրվել ոչ բնակարանները, և ոչ էլ դրանց համարժեք փոխհատուցումը:

Պաշտպանի դեռևս 2017 թվականի տարեկան հաղորդմամբ նշվել էր, որ «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածների միջև առկա է հակասություն: Խնդրահարույց է, որ օրենքի մի հոդվածում օգտագործվում է «նախնական համարժեք փոխհատուցում» եզրույթը, համաձայն որի՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության

<sup>38</sup> Օրենքի վերանգիրը փոխվել է 2018 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ ՀՕ-405-Ն օրենքով, նախկինում կոչվել է «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենք

օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ, իսկ մյուս հոդվածում օգտագործվում է «համարժեք փոխհատուցում» եզրույթը: Կողմերի փոխադարձ հայեցողությանն է թողնված փոխհատուցման տրման չափը, ձևը, կարգը, ժամկետները, պայմաններն ու կողմերի պատասխանատվությունը որոշելը:

Հատկանշական է, որ ձեռք բերող կազմակերպությունների և օտարված տարածքների նախկին բնակիչների միջև կնքված պայմանագրերի ուսումնասիրման արդյունքում պարզվել է, որ վերոնշյալ իրավանորմի հիման վրա կողմերի երկուստեք համաձայնությամբ որոշվել է բողոք ներկայացրած անձանց սեփականության իրավունքով պատկանող օտարվող գույքերի դիմաց հետագայում կառուցվելիք բազմաբնակարան շենքերում տրամադրել բնակարաններ: Այսինքն՝ պայմանագրով, ըստ էության, տարածամկետվել է փոխհատուցման տրամադրումը հստակ կանխորոշված ժամկետով: Նշված ժամկետը սպառվել է, համարժեք փոխհատուցումը չի տրվել և պարզ էլ չէ, թե փոխհատուցումն ընդհանրապես կտրվի, թե՛ ոչ:

Ըստ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության պարզաբանման՝ հաշվի առնելով հանրության գերակա շահ ճանաչված տարածքներում ձեռք բերող կազմակերպությունների և օտարվող գույքերի սեփականատերերի միջև նշված օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն կնքվող՝ ապագայում կառուցվելիք շենքերից որպես փոխհատուցում անշարժ գույք տրամադրելու մասին պայմանագրեր կնքելու ձևավորված պրակտիկան, ներկայումս ՀՀ կառավարության հանրության գերակա շահ ճանաչելու մասին որոշումներում սահմանվում է, որ հանրության գերակա շահ ճանաչված տարածքներում օտարվող սեփականության սեփականատերերի կամ այլ իրավունքներ ունեցողների և սույն որոշման հավելվածներում նշված տարածքները ձեռք բերողի միջև կնքվող պայմանագրերում անհրաժեշտ է բացառել, որպես օտարվող տարածքի փոխհատուցման ձև, ապագայում կառուցվելիք շենքից բնակարանի տրամադրումը:

Այսպիսով, վերը նշվածի վերլուծությունից հետևում է, որ պետությունն 2018 թվականին ևս բավարար միջոցներ չի ձեռնարկել խնդրի համակարգային կարգավորման ուղղությամբ, քանի որ այն շարունակում է չլուծված մնալ:

Վերոնշյալի համատեքստում, 2006 թվականի ապրիլի 18-ի թիվ ՄԴՈ-630 որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ օրենքը պետք է համապատասխանի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ կտա քաղաքացուն դրա հետ համատեղել իր վարքագիծը:

2018 թվականին լուծում չի ստացել նաև դեռևս 2017 թվականից բարձրաձայնված այն հարցը, որ օտարված տարածքների նախկին բնակիչներին սեփականության իրավունքով պատկանող Կենտրոն վարչական շրջանի Արամի, Բուզանդի, Ֆիրդուսի, Հանրապետության, Խանջյան փողոցներում և Կոնդ թաղամասում գտնվող բնակելի տարածքները նախնական համարժեք փոխհատուցում տալու պայմանի խախտմամբ՝ համապատասխան պայմանագրերով, օտարվել են 30-ամսյա ժամկետում նորակառույց բազմաբնակարան շենքերում բնակարաններ, այն է՝ «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված նորմերի մեկնաբանման իմաստով համարժեք փոխհատուցում ստանալու օրինական ակնկալիքով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով՝ գույք է համարվում ոչ



միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլ նաև՝ նյութական միջոցը ձեռք բերելու օրինական ակնկալիքը<sup>39</sup>: Այս հարցի վերաբերյալ իր իրավական դիրքորոշումն է արտահայտել նաև ՀՀ սահմանադրական դատարանը 2008 թվականի մարտի 18-ի թիվ ՄԴՌ-741 որոշմամբ՝ նշելով, որ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք: Իր այս դիրքորոշումը ՀՀ սահմանադրական դատարանը վերահաստատել է նաև 2014 թվականի ապրիլի 2-ի թիվ ՄԴՌ-1142 որոշմամբ:

Վերոգրյալից հետևում է, որ հաշվի առնելով «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով պայմանագրերի կնքման ձևավորված բացասական պրակտիկան անհրաժեշտ է խնդիրը կարգավորել ոչ թե ՀՀ կառավարության յուրաքանչյուր գերակա շահ ճանաչելու մասին որոշումներում անհրաժեշտ համարելով բացառել, որպես օտարվող տարածքի փոխհատուցման ձև, ապագայում կառուցվելիք շենքից բնակարանի տրամադրումը, որը ևս ողջունելի է, այլ անհրաժեշտ է խնդիրը կարգավորել «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու միջոցով:

2018 թվականին շարունակել է արդիական մնալ նաև պետության սուբսիդիար պատասխանատվության խնդրահարույց հարցն, ինչի կապակցությամբ դեռևս Պաշտպանի 2017 թվականի տարեկան հաղորդմամբ առաջարկվել էր «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան փոփոխություն՝ կնքված պայմանագրերի կատարման նկատմամբ ևս սահմանելով պետության սուբսիդիար պատասխանատվություն: Պաշտպանին ներկայացված բազմաթիվ բողոքների ուսումնասիրությամբ պարզվել է, որ ձեռքբերող կազմակերպությունների և օտարված բնակելի տարածքների իրավատերերի միջև կնքվել են պայմանագրեր, որոնց ուժով նշված կազմակերպությունները պարտավորվել են պայմանագրերում սահմանված ժամկետներում կառուցել բազմաբնակարան շենքեր և տրամադրել բնակարաններ: Ձեռքբերող կազմակերպություններն օտարված տարածքների նախկին բնակիչներին մինչ օրս չեն տրամադրել օտարման պայմանագրերում նշված բնակարանները և ոչ էլ տրամադրում են նախկինում ունացած բնակավերքերին համարժեք բնակարան ձեռք բերելու համար գումարային տեսքով համարժեք փոխհատուցում, իսկ այդ մասով պետության սուբսիդիար պատասխանատվություն սահմանված չէ:

Այս պարագայում հարկ է վկայակոչել «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը, որի համաձայն՝ եթե ձեռք բերողը նույն օրենքի 10-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետում օտարվող սեփականության սեփականատիրոջը և գույքային իրավունք ունեցողին չի ուղարկում օտարման պայմանագրի նախագիծը կամ օրենքի 12-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետում դեպոզիտ հաշվին չի հանձնում փոխհատուցման գումարը կամ օրենքի 13-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետում չի դիմում դատարան սեփականության օտարման հայցով կամ օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում դեպոզիտ հաշվին չի փոխանցում դատարանի կողմից սահմանված փոխհատուցման լրացուցիչ գումարը, ապա համարվում է, որ ձեռքբերողը հրաժարվում է տվյալ սեփականությունը ձեռք բերելուց, և տվյալ սեփականության մասով բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին բոլոր

<sup>39</sup> Sté u Spqónú ðնդդեմ Խորվաթիայի (Trgo v. Croatia) գործով 2009 թվականի հունիսի 11-ի վճիռը, գանգատ թիվ 35298/04, կետ 44:

իրավական փաստաթղթերը համարվում են անվավեր: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ձեռքբերողը պարտավոր է հատուցել նշված հոդվածի առաջին մասի պահանջների խախտման հետևանքով օտարվող սեփականության սեփականատերերին, ինչպես նաև այդ սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներին պատճառված վնասները: Պետությունը սուբսիդիար պատասխանատվություն է կրում ձեռքբերողի կողմից նույն հոդվածի առաջին մասի պահանջների խախտման հետևանքով պատճառված վնասների համար: Այսպիսով, ևս մեկ անգամ պետք է փաստել, որ նշված հոդվածը պետության սուբսիդիար պատասխանատվության ոլորտը նեղացնում է՝ այն կապելով ձեռքբերողի որոշակի պարտականությունների չկատարման հետ, ինչը տվյալ դեպքում պետության կողմից անձանց սեփականության իրավունքի պաշտպանության բավարար երաշխիք չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ շատ կարևոր է ընդլայնել պետության սուբսիդիար պարտավորության շրջանակը և այն տարածել ձեռքբերող կազմակերպությունների և շահառուների միջև ոչ միայն ապագա, այլ նաև նախկինում ծագած իրավահարաբերությունների նկատմամբ՝ այդ մասով ևս կատարելով օրենսդրական համապատասխան փոփոխություն, քանզի ըստ ձևավորված բացասական պրակտիկայի՝ ձեռքբերող կազմակերպությունները բազմաթիվ դեպքերով մինչ օրս չեն կատարել օտարման պայմանագրերով ստանձնած պայմանագրային պարտավորությունները: Վերջինիս իրագործումը բխում է, ինչպես ՀՀ Սահմանադրությունից, այնպես էլ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում ամրագրված համապատասխան իրավանորմերից, որոնք սահմանում են, որ անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով: Փաստորեն, «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում պետության սուբսիդիար պատասխանատվության շրջանակը շատ նեղ է և բացակայում են օտարման գործընթացի նկատմամբ պետական լիարժեք վերահսկողության մեխանիզմները:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածն անհատներին կամ իրավաբանական անձանց պաշտպանում է վերջիններիս գույքային իրավունքների իրացմանը պետության կամայական միջամտություններից: Այդուհանդերձ, հոդվածը ճանաչում է պետության իրավունքը՝ վերահսկելու անհատներին կամ իրավաբանական անձանց պատկանող գույքի նկատմամբ իրավունքների իրականացումը կամ անգամ զրկելու նրանց այդ իրավունքից՝ հոդվածի դրույթներով սահմանված պահանջները պահպանելու պայմանով: Կոնվենցիան վավերացրած պետությունները պարտավոր են ապահովել, որպեսզի սեփականության իրավունքին ցանկացած միջամտություն կատարվի միայն հանրային շահից ելնելով: Հանրային շահի և անհատի շահերի միջև համամասնություն ապահովելու համար անհրաժեշտ է, որպեսզի միջամտությունը լինի ոչ կամայական և տեղավորվի օրենքի շրջանակներում:

Ինչ վերաբերում է միջամտության անհրաժեշտությանն, ապա հարկ է նշել, որ անհրաժեշտությունը գնահատելու հարցում Եվրոպական դատարանը պետությանն օժտել է լայն հայեցողությամբ: Չնայած թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը միանշանակ անդրադարձ չի կատարում գույքն առգրավելու կամ սեփականության իրավունքին այլ միջամտության դեպքում փոխհատուցում ստանալու իրավունքին՝ գործնականում դա անվերապահ ենթադրվում է<sup>40</sup>: Միայն բացառիկ դեպքերում փոխհատուցում տրամադրելու

<sup>40</sup> Sté u Հուլի Մոնասթերիս ընդդեմ Հունաստանի (Holy Monasteries v. Greece) գործով 1997 թվականի սեպտեմբերի 1-ի վճիռը, գանգատ թիվ 13092/87 13984/88, կետ 71:

մերժումը կարող է արդարացվել, օրինակ՝ Գերմանիայի վերամիավորման իրադարձությունների պարագայում<sup>41</sup>:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. *փոփոխել «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը՝ այս հոդվածում ևս ամրագրելով «նախնական համարժեք» փոխհատուցում եզրույթը,*

2. *հոդվածից հանել պայմանագրով (կողմերի համաձայնությամբ) համարժեք փոխհատուցման չափը, ձևը, կարգը, ժամկետները, պայմաններն և պատասխանատվությունը որոշելու հնարավորությունը,*

3. *«Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում կատարել հետևյալ փոփոխությունները,*

– *կնքված պայմանագրերի կատարման նկատմամբ ևս սահմանել պետության սուբսիդիար պատասխանատվություն՝ այն տարածելով ոչ միայն ձեռքբերող կազմակերպությունների և շահառու անձանց միջև ապագայում, այլ նաև նախկինում ծագած իրավահարաբերությունների նկատմամբ,*

– *սահմանել պետական վերահսկողության մեխանիզմներ սեփականության օտարման գործընթացում ձեռքբերողի կողմից շահառուի նկատմամբ ունեցած պարտավորությունների կատարման նկատմամբ՝ նախատեսելով համապատասխան պատասխանատվության միջոցներ,*

– *«փոխհատուցում» բառը ցանկացած հոդվածում օգտագործել «նախնական համարժեք» բառերի հետ միասին:*

## **2. 4-րդ աստիճանի վթարային սահմանամերձ բնակելի տների բնակիչներին փոխհատուցում չտրամադրելը**

2018 թվականին մի շարք բողոքներով կրկին բարձրացվել է սահմանամերձ բնակավայրերում սողանքների հետևանքով անհատական բնակելի տների բնակության համար ոչ պիտանի դառնալու և մինչ օրս գումարային և բնակարանային բարելավման ձևով պետության կողմից փոխհատուցում չտրամադրելու հարցը:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ներկայացված տեղեկությունների ու բողոքների հիման վրա 2018 թվականի մայիսի 21-ին Մարդու իրավունքների պաշտպանի գլխավորած աշխատանքային խումբն այցելել է ՀՀ Վայոց ձորի մարզի Խաչիկ վարչական բնակավայր: Այցի ընթացքում տեղում ուսումնասիրվել են համայնքի բնակիչների իրավունքներին առնչվող՝ առկա խնդիրներն ու դրանց լուծմանը նպաստելու իրավական հնարավորությունները: Խաչիկ վարչական բնակավայրի ղեկավարն իր մտահոգությունն է հայտնել, որ բնակավայրի 54 բնակելի տուն, ըստ տեխնիկական հետազննության արդյունքների, ճանաչվել է 4-րդ աստիճանի վթարային, որոնցից 27-ը գտնվում է ծայրահեղ վթարային վիճակում: Համայնքում առկա է նաև 70 բնակելի տուն, որոնց վնասվածության մակարդակը, ըստ 2006 թվականին կատարված տեխնիկական հետազննության արդյունքների, դասվել է 3-րդ աստիճանի վթարայինի: Ըստ բնակիչների՝ 3-րդ աստիճանի վթարային բնակելի տները ներկայումս շահագործման համար պիտանի չեն, սակայն ֆինանսական միջոցների բացակայության պատճառով կրկնակի հետազննության չեն ենթարկվել: Ըստ վարչական բնակավայրի ղեկավարի՝ ՀՀ կառավարությունը Խաչիկ վարչական բնակավայրի ծայրահեղ 4-րդ աստիճանի վթարային 27 բնակելի տներից 12-ի

<sup>41</sup> St´u Յանը և այլք ընդդեմ Գերմանիայի (Jahn and others v. Germany) գործով 2005 թվականի հունիսի 30-ի վճիռը, գանգատ թիվ 46720/99 72203/01 72552/01, կետ 94:

բարելավման համար նախատեսել է որպես փոխհատուցում հատկացնել 60 մլն ՀՀ դրամ գումար:

Նշվածի կապակցությամբ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունից պարզաբանվել է, որ ՀՀ Վայոց ձորի մարզի Խաչիկ բնակավայրում բարձրացված խնդիրները քննարկվել են Քաղաքաշինության կոմիտեի հետ, որից հետո ՀՀ կառավարության 2013 թվականի մարտի 7-ի N9 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել ՀՀ տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման ծրագրի շրջանակներում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող, ինչպես նաև քանդված բնակարանային ֆոնդի բնակիչներին անվտանգ բնակելի տարածությամբ ապահովման հայեցակարգը: Հայեցակարգի դրույթներով ամրագրվել է, որ պետական աջակցության շրջանակներում անհրաժեշտ է առաջնահերթ կարգով անդրադառնալ արդեն իսկ կատարված հետազննությունների արդյունքում ի հայտ եկած՝ տեխնածին և բնական աղետների հետևանքով վթարային դարձած, ինչպես նաև քանդված բնակարանային ֆոնդի բնակիչներին անվտանգ բնակելի տարածքով ապահովելու խնդրին: Հայեցակարգի ընդունումից հետո՝ դեռևս 2013 թվականին, ՀՀ մարզպետարաններից և Երևանի քաղաքապետարանի տեղեկատվության համաձայն՝ հանրապետության բնակավայրերում առկա է բնական և տեխնածին աղետների հետևանքով քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածության և քանդված մոտ 1115 բնակելի տուն, որից ավելի քան 220-ը՝ ՀՀ Վայոց ձորի մարզի բնակավայրերում (այդ թվում՝ մոտ 60-ը Խաչիկ համայնքում): ՀՀ Վայոց ձորի մարզի Խաչիկ համայնքի վթարային դարձած բնակելի տների բնակիչների բնակարանային պայմանների բարելավման հարցը դիտարկվում է հանրապետության տարածքում առկա նմանատիպ խնդիրների կանոնակարգման համատեքստում, և հարցի քննարկմանը հնարավոր է անդրադառնալ Հայեցակարգով ձևավորված առաջնահերթությունների և մոտեցումների համաձայն ծրագրերի իրականացման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: ՀՀ քաղաքաշինության կոմիտեում առկա տեղեկատվության համաձայն՝ ՀՀ կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետարանին հատկացված գումարների բաշխման մասին» թիվ 1272-Ս և 2013 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետարանին հատկացված գումարների բաշխման մասին» թիվ 457-Ս որոշումներով ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին հատկացված գումարների սահմաններում հնարավորություն է ընձեռվել անհատույց պետական ֆինանսական աջակցության տրամադրման միջոցով լուծել ՀՀ Վայոց ձորի մարզի Խաչիկ համայնքի 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող վթարային բնակելի տներում բնակվող համապատասխանաբար 7 և 12 ընտանիքի բնակարանային խնդիրները:

Անհրաժեշտ է արձանագրել, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն Խաչիկ վարչական բնակավայրի 4-րդ աստիճանի վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային պայմանների բարելավման համար որևէ լուծում չի առաջարկում: Մինչդեռ, ներկա պահին Խաչիկ վարչական բնակավայրի բնակելի տներից 27-ի վնասվածության մակարդակը վերին աստիճանի բարձր է:

Սահմանամերձ բնակավայրերում սողանքների հետևանքով անհատական բնակելի տների վնասվածության կապակցությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով Պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունից ներկայացվել է կառավարության վերը նշված որոշմամբ հավանության արժանացած ՀՀ տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման ծրագրի շրջանակներում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող,

ինչպես նաև քանդված բնակարանային ֆոնդի բնակիչներին անվտանգ բնակելի տարածքով ապահովման հայեցակարգի դրույթները: Նշվել է նաև, որ կարևորելով հայեցակարգի դրույթների համաձայն ծրագրերի իրականացումը՝ խնդիրը կոմիտեն մշտապես ներառել է պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի (այդ թվում՝ 2017-2019 և 2018-2020 թվականների) հայտերում, սակայն այդ ուղղությամբ ՀՀ տարեկան պետական բյուջեից կատարվելիք ծախսերի ֆինանսավորման չափաքանակներ չեն հաստատվել: Այդ պարագայում, հանրապետության սահմանամերձ բնակավայրերում սողանքների հետևանքով 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող անհատական բնակելի տների բնակիչներին բնակարանային խնդիրն հնարավոր է անդրադառնալ ՀՀ 2020-2022 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագծի մշակման ընթացքում, ՀՀ մարզպետարանների կողմից սահմանված կարգով հայտ ներկայացվելու դեպքում:

Հատկանշական է, որ Պաշտպանի աշխատակազմում վերոնշյալ հայեցակարգի ուսումնասիրությամբ պարզվել է, որ հայեցակարգի հավելված 2-ի համաձայն՝ հավանություն է տրվել ՀՀ տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման ծրագրի շրջանակներում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող, ինչպես նաև քանդված բնակարանային ֆոնդի բնակիչներին անվտանգ բնակելի տարածությամբ ապահովման հայեցակարգի կիրարկումն ապահովող միջոցառումների ժամանակացույցին, համաձայն որի՝ պետք է մշակվեր և դեռևս մինչև 2013 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակը ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացվեր «Քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող, ինչպես նաև քանդված բնակարանային ֆոնդի բնակիչներին անվտանգ բնակելի տարածքով ապահովման պետական աջակցության առաջնահերթ ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, իսկ 2014 թվականից պետք է սկսվեր քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող, ինչպես նաև քանդված բնակարանային ֆոնդի բնակիչներին անվտանգ բնակելի տարածքով ապահովման պետական աջակցության առաջնահերթ ծրագրի իրականացումը, ինչը մինչ օրս կյանքի չի կոչվել: ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 8-ի «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության և վկայագրավորման (անձնագրավորման) մեթոդական ցուցումները հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 1998 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 168 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 282-Ն հրամանով սահմանված հավելված 2-Ա-ի 2-րդ կետի «ե» ենթակետի համաձայն՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեն այն շենքերը, որոնց կոնստրուկցիաների վիճակը վթարային է, և այդ շենքերը վտանգավոր են հետագա շահագործման համար: Նույն հրամանի համաձայն՝ այդ շենքերի բնակիչները ենթակա են տարհանման, իսկ շենքերը ենթակա են քանդման, քանի որ դրանց վերականգնման-ուժեղացման աշխատանքների կատարումը տնտեսապես աննպատակահարմար է:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ հանրապետության բնակավայրերում առկա է բնական և տեխնածին աղետների հետևանքով քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածության և քանդված մոտ 1115 բնակելի տուն: Մտահոգիչ համարելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ քանդված բնակելի տների նախկին բնակիչներից շատերը, լքելով իրենց տները, դարձել են անօթևան, իսկ վթարային և ծայրահեղ վթարային բնակելի տների բնակիչները շարունակում են բնակվել իրենց տներում՝ վտանգելով իրենց կյանքը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝*

*1. սահմանամերձ բնակավայրերում իրականացնել պետական բյուջեով նախկինում 3-րդ աստիճանի վթարային դասված բնակելի տների կրկնակի հետազննություն,*

2. հետագա տարիների համար պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով հանրապետության 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բնակելի տների բնակիչների բնակարանային պայմանների բարելավմանն ուղղված ծրագրերի շարունակական իրականացման համար նախատեսել դրամական միջոցներ,

3. ընդունել «Քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող, ինչպես նաև քանդված բնակարանային ֆոնդի բնակիչներին անվտանգ բնակելի տարածքով ապահովման պետական աջակցության առաջնահերթ ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում:

### **3. «Դալմայի» այգիների նախկին հողօգտագործողների օտարված հողատարածքների դիմաց փոխհատուցում չտրամադրելը**

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2018 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ բողոքներ են ստացվել 1991 թվականից «Դալմայի» այգիներում հողամասեր վարձակալած և (կամ) զբաղեցրած անձանցից: Ըստ Պաշտպանին հասցեագրված բողոքների՝ ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ 2003-2004 թվականներին, առանց իրենց իմացության, համաձայնության և գնման նախապատվության իրավունքը հաշվի առնելու, հողամասերը Երևանի քաղաքապետարանն աճուրդային կարգով օտարել է առանձին անհատներին ու կազմակերպություններին առանց ֆինանսական և (կամ) գույքային որևէ փոխհատուցման:

Բողոքների քննարկման շրջանակներում Երևանի քաղաքապետարանից տեղեկացրել են, որ Երևանի «Դալմայի» այգիներում հողամասեր զբաղեցրած 48 անձից 31-ին հողամասերի ներկայիս սեփականատերերը տրամադրել են փոխհատուցում (ընդհանուր 10.607.900 ՀՀ դրամի և 237.500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով): Ըստ քաղաքապետարանի՝ Երևան համայնքը 4 անձի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի դիմաց տրամադրել է 3.6743 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ 5.328 քմ մակերեսով հողամասի համար (Պաշտպանին դիմած անձանցից մեկ հողօգտագործողի, Երևան համայնքը 364 քմ մակերեսով հողամասի համար տրամադրել է 1.820 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ):

Բողոք ներկայացրած անձինք Պաշտպանին ներկայացրել են նաև Երևանի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ին կայացած 4-րդ նստաշրջանի 4-րդ նիստի սղագրությունը, համաձայն որի՝ Երևանի քաղաքապետարանը դեռևս այդ ժամանակ խոստացել է փոխհատուցման գործընթացն ավարտին հասցնել: Փոխհատուցման գործընթացն ավարտին հասցնելու հնարավոր ժամկետների կապակցությամբ Երևանի քաղաքապետարանի տեղեկության համաձայն՝ Դալմայի այգիներում հողամասեր զբաղեցրած անձանց փոխհատուցման տրամադրման հարցում միջոցներ է ձեռնարկվում հողամասերի սեփականատերերի կողմից դրամական փոխհատուցման տրամադրման գործընթացն ավարտելու ուղղությամբ, սակայն, ելնելով նրանից, որ փոխհատուցման գումարները քաղաքացիներին հիմնականում պետք է տրամադրեն այլ անձինք՝ փոխհատուցման գործընթացն ավարտելու հնարավոր ժամկետների վերաբերյալ հնարավոր չէ տեղեկություններ հայտնել:

Հատկանշական է, որ Պաշտպանին բողոք ներկայացրած անձանցից մեկը հայցադիմում էր ներկայացրել Երևանի քաղաքապետարանի դեմ՝ Երևան քաղաքի Լենինգրադյան փողոցին հարող «Դալմայի այգիներ» տարածքում գտնվող 0,42 հա հողամասի աճուրդներն անվավեր ճանաչելու և մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու պահանջների մասին, սակայն հայցը մերժել է այն հիմքով, որ բողոք ներկայացրած անձի հետ կնքված վարձակալության պայմանագրերը կնքվել են ոչ պատշաճ կողմի, այն է՝

Շահումյանի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի հետ: Համաձայն նախկին ՀՀ հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի՝ քաղաքների և քաղաքատիպ ավանների սահմանագծի մեջ եղած բոլոր հողերը գտնվում են ժողովրդական պատգամավորների քաղաքային և ավանային խորհուրդների տնօրինության ներքո, իսկ նույն օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ ժողովրդական պատգամավորների քաղաքային (ավանային) խորհուրդները որպես սեփականություն և օգտագործման համար հողամասեր են տրամադրում իրենց տնօրինության տակ գտնվող հողերից, հետևաբար հողամասի վարձակալության պայմանագրերը վերը նշված իրավական հիմնավորմամբ պետք է կնքվեն ժողովրդական պատգամավորների Երևանի քաղաքային խորհրդի և հայցվորների միջև, հետևաբար օրենսդրությամբ նման լիազորություն չունեցող մարմնի կնքված պայմանագիրն անվավեր է:

Նշվածի կապակցությամբ հարկ է նկատել, որ գործող ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք պետության ու համայնքների հողերի այն հողամասերի նկատմամբ, որոնց տիրապետում են առանց իրավաբանական ձևակերպման և որոնցից օգտվում են անընդմեջ ու բացահայտ ավելի քան տասը տարի, ունեն օգտագործման իրավունքի ձեռքբերման վաղեմության իրավունք: Նշյալ իրավունքն այդ անձանց նախապատվության իրավունքն է՝ իրավաբանորեն ձևակերպելու այդ հողամասերի նկատմամբ իրենց օգտագործման իրավունքը՝ այդ հողամասերը նույն պայմաններով այլ անձանց տրամադրելու հնարավորության ծագման դեպքում: Նման հողամասերն այլ նպատակային նշանակության համար վերցնելու դեպքում ձեռքբերման վաղեմության իրավունք ունեցող անձանց պետք է փոխարենը տրամադրվեն այլ հողամասեր կամ պետք է հատուցվեն նրանց վնասները՝ նույն հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմքերով:

ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք, որոնք ավելի քան տասը տարի անընդմեջ, բարեխիղճ ու բացահայտ, սակայն առանց իրենց իրավունքների իրավաբանական ձևակերպման օգտվում են պետության կամ համայնքի հողերից, ունեն այդ հողերից սեփականության իրավունքով հողամասեր ձեռք բերելու նախապատվության իրավունք, եթե արգելված չէ սեփականության իրավունքով տվյալ հողամասերը ձեռք բերելը կամ, եթե դրանք վաճառվում կամ անհատույց փոխանցվում են միևնույն նպատակային նշանակության համար:

Նշվածից հետևում է, որ եթե վիճարկվող հողատարածքները քաղաքացիներն օգտագործել են առանց իրավաբանական ձևակերպման, ապա հաշվի առնելով վերոնշյալ իրավակարգավորումները՝ նշված հողամասերն այլ անձանց օտարելուց առաջ պետք է այգիների նախկին հողօգտագործողներին (հաշվի առնելով, որ կնքված պայմանագրերն անվավեր են) դրանք գնելու առաջարկություն արվեր: Հողօգտագործողների հրաժարվելու դեպքում միայն համապատասխան փոխհատուցման դիմաց դրանք կարող էին օտարվել այլ անձանց: Այսպիսով, չի պահպանվել նշված ընթացակարգը, ինչպես նաև չեն փոխհատուցվել նախկին հողօգտագործողների կրած վնասները:

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանվել է, որ Երևան համայնքը կամ Երևանի քաղաքապետարանն օրենքով կամ իրավական այլ ակտերով չի կրում փոխհատուցում տրամադրելու որևէ պարտականություն, սակայն հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ Երևանի քաղաքապետարանի իրականացրած համապատասխան աշխատանքների արդյունքում բազմաթիվ նախկին հողօգտագործողների հողամասերի ներկայիս սեփականատերերն օժանդակության գումարներ են տրամադրել, որոնց հետ քննարկումները շարունակվում են մնացած քաղաքացիներին որոշակի դրամական օժանդակության գումարներ տրամադրելու համար:

Բարձրացված հարցի կարգավորման շրջանակներում առկա է նաև Երևանի քաղաքապետարանի իրավահաջորդության հարցը: Մասնավորապես, ՀՀ կառավարության

2009 թվականի ապրիլի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1788-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 465-Ն որոշման 1-ին կետով ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 13-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Երևանի քաղաքապետարանի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 1788-Ն որոշումը: Նշված որոշման հիման վրա ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի Կենտրոնի տարածքային բաժինը «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը 2009 թվականի օգոստոսի 25-ին հանել է հաշվառումից:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 108-րդ հոդվածի 3-րդ մասի, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 7-րդ հոդվածի 2-րդ մասի, 11-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 18-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումների վերլուծությունից հետևում է, որ Երևան համայնքը «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի իրավահաջորդը չէ, այդ հիմնարկի իրավունքներն ու պարտականություններն օրենքի ուժով կրում է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս կառավարության:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ վճռաբեկ դատարանն իր 2009 թվականի հուլիսի 24-ի թիվ ԵՔԴ/0363/05/08 քաղաքացիական գործով կայացված նախադեպային որոշման մեջ արձանագրել է, որ ժողովրդական պատգամավորների խորհրդի պետական կառավարման մարմինների լուծարման դեպքում, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության ժողովրդական պատգամավորների Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի լուծարումից հետո վերջինիս ընդունած և իրենց իրավական ուժը պահպանած ակտերից բխող իրավունքների և պարտավորությունների կրողը պետությունն է՝ Հայաստանի Հանրապետությունն:

Ամփոփելով՝ անհրաժեշտ է նշել, որ թեև ներկայիս համայնքային կառավարչական հիմնարկ հանդիսացող Երևանի քաղաքապետարանը վերոնշյալ իրավակարգավորումների ուժով նախկին պետական կառավարչական հիմնարկ հանդիսացող Երևանի քաղաքապետարանի իրավահաջորդը չի համարվում, այնուամենայնիվ, դա չի կարող ազդել մարդու համապատասխան փոխհատուցում ստանալու իրավունքի իրացման վրա, և Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս ՀՀ կառավարության, պետք է ապահովի քաղաքացու իրավունքի իրականացումը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է պետության պարտավորության կատարման համար ստեղծել գործուն մեխանիզմ:*

#### ***4. Ինքնակամ շինարարության շուրջ ծագած ոչ պատշաճ վարչարարություն իրականացնելը***

2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ, որոնք վերաբերել են ինքնակամ շինարարության շուրջ ծագած տարատեսակ խնդիրներին: Պաշտպանին հասցեագրված բողոքով մարդը տեղեկացրել է, որ իրեն սեփականության իրավունքով պատկանող տան դիմաց գտնվող տարածքում կառուցապատող կազմակերպությունն ապօրինի իրականացում է բազմահարկ շենքի կառուցման շինարարական աշխատանքներ: Ըստ դիմողի՝ վերոնշյալ կազմակերպությանը Երևանի քաղաքապետարանը տվել է շինարարության թույլտվություն միայն ստորգետնյա հարկերի կառուցման համար, սակայն ընկերությունն առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի (ինքնակամ), կառուցում և արդեն գրեթե ավարտին է հասցնում ևս 2 վերգետնյա հարկ, ինչի հետևանքով զգալիորեն նվազել է արևի լույսի ներթափանցումն իր բնակելի տուն: Դիմողը նշված



ապօրինի շինարարությունը կասեցնելու նպատակով դիմել է Երևանի քաղաքապետարան, սակայն արդյունքի չի հասել:

Բողոքի ուսումնասիրությամբ պարզվել է, որ Երևանի քաղաքապետարանը նշված ընկերության անվամբ տվել է շինարարության թույլտվություն միայն ստորգետնյա հարկերի կառուցման համար: Պարզվել է նաև, որ համաձայնեցված նախագծի պահանջներից դուրս, վերգետնյա 2 հարկի կառուցման իրավախախտման և իրավախախտումը շարունակելու փաստերի առնչությամբ նշված ընկերության նկատմամբ Երևանի քաղաքապետարանը հարուցել է վարչական վարույթ, սակայն անհասկանալի պատճառներով շինարարությունը չի կասեցվել:

Նշված խնդրի կապակցությամբ, ըստ Երևանի քաղաքապետարանի տվյալների, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով՝ Երևանի քաղաքապետարանում հարուցվել են համապատասխան վարչական վարույթներ, որոնց հետևանքով շենքի կառուցման համար համաձայնեցված նախագծի պահանջներից դուրս վերգետնյա երկու հարկի կառուցման իրավախախտման և իրավախախտումը շարունակելու փաստերի առնչությամբ կառուցապատող նշված ընկերության նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջների շրջանակում կազմվել են համապատասխան արձանագրություններ: Նշված վարչական վարույթների շրջանակներում գրավոր նախագուշացնելով կառուցապատողին՝ առաջարկվել է շինարարությունը կասեցնել: Երևանի քաղաքապետարանի թե՛ գրավոր, և թե՛ բանավոր նախագուշացումներից հետո, կառուցապատողի կողմից շինարարական աշխատանքները շարունակելու փաստը հաշվի առնելով, Երևանի քաղաքապետարանում քննարկվել է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 315<sup>1</sup> հոդվածի պահանջների շրջանակում դրա հետագա ընթացքն ապահովելու համար, սակայն այն գլխավոր դատախազին չի ներկայացվել, քանի որ կառուցապատողին 200.000 ՀՀ դրամի չափով վարչական տույժ նշանակելու մասին որոշումը կառուցապատողը ներկայումս վիճարկում է ՀՀ վարչական դատարանում: Համապատասխան գրությամբ կրկին կառուցապատողին գրավոր նախագուշացվել է ամբողջությամբ շինարարությունը կասեցնելու համար, ինչպես նաև գրություն է ուղարկվել ՀՀ ոստիկանության համապատասխան բաժին՝ նշված հասցեում հսկողություն սահմանելու և շինարարական աշխատանքների իրականացման դեպքում Երևանի քաղաքապետարան հաղորդելու մասին: Սակայն պետք է ընդգծել շինարարությունը շարունակվում է:

Պաշտպանին հասցեագրած մեկ այլ բողոքով անձը տեղեկացրել է, որ Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի տարածքում շուրջ 4 ամիս առաջ ինքնակամ կառուցել է շինություն, բազմիցս դիմել է Երևանի քաղաքապետարան նշված շինությունն օրինականացնելու խնդրանքով, սակայն ստացել է մերժում, իսկ որոշ ժամանակ անց Երևանի քաղաքապետը կայացրել է որոշում իր կառուցած շինությունը քանդելու վերաբերյալ: Դիմողը նշված որոշումը վիճարկելու պահանջով հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան և այն դատարանի որոշմամբ ընդունվել է վարույթ: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի ուժով՝ վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը: Մինչդեռ, Երևանի քաղաքապետը կայացրել է դիմողի կառուցված շինությունը քանդելու վերաբերյալ լրացուցիչ որոշում, ինչի մասին ակտի հասցեատիրոջը պատշաճ չձանուցելու պարագայում նույն օրն իրականացվել է շինության քանդում: Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքէջում որպես այդ որոշման հիմնավորումներ ներկայացված է Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդել իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ինքնակամ կառույցները չեն կարող ճանաչվել օրինական, և դրանք ենթակա են քանդման, եթե կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա: Համաձայն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մասնագիտական եզրակացության՝ Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի տարածքում առանց թույլտվության ՄՊ ընկերության կողմից ինքնակամ շենքը (շինությունը), կառուցված է կոնստրուկտիվ լուծումների ակնհայտ խախտումներով՝ հակասելով ՀՀ ՇՆ-11-6.02-2006 թվականի նորմերի պահանջներին: Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի տարածքում գտնվող ընկերության վարձակալած Երևան համայնքի սեփականություն հանդիսացող 160 քմ մակերեսի վրա շինությունը կառուցված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասի վրա: Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի՝ անմիջական սպառնացող վտանգը կանխելու կամ արդեն իսկ առաջացած վտանգի հետևանքները վերացնելու, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում վարչական վարույթը կարող է սահմանափակվել միայն եզրափակիչ փուլով:

Որոշման ուսումնասիրությունից պարզվել է, որ այն կայացվել է առանց ընկերությանը պատշաճ ծանուցելու և անհապաղ կատարվել է այն հիմնավորմամբ, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի գրությամբ տրված մասնագիտական եզրակացությամբ առաջացել է անհապաղ կատարման անհրաժեշտություն: Մինչդեռ, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ լիցենզավորման ենթակա գործունեությամբ կարող են զբաղվել *պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին չհանդիսացող* պետական կամ համայնքի հիմնարկները, եթե այդ գործունեությամբ զբաղվելու իրավունքն ուղղակի նախատեսված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ նրանց կանոնադրությամբ: Նույն օրենքի 43-րդ հոդվածում ներկայացված է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկը (աղյուսակ), որում ներառված է նաև շենքերի կամ շինությունների տեխնիկական վիճակի հետազննությունը և համաձայն նույն աղյուսակի թիվ 8 և 9 սյունակների՝ նշված աշխատանքների իրականացման համար պահանջվում է համապատասխան որակավորում և հաշվետվության ներկայացում: Նշվածից բխում է, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետը գրությամբ մասնագիտական եզրակացություն տրամադրելու իրավասություն չունի, այդ իսկ պատճառով վերոնշյալ գրությունը չի կարող անհապաղ կատարման ենթակա վարչական ակտ ընդունելու հիմք լինել:

Երևանի քաղաքապետի վերոնշյալ վիճահարույց որոշմամբ վկայակոչվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերությամբ ամրագրված իրավական դրույթը, համաձայն որի՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը: Մինչդեռ, նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությամբ ամրագրված է, որ չօրինականացված ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման, իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերը նշված հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը և այդ իրավունքը կարող է իրացնել բացառապես դատարան հայցադիմում ներկայացնելու և դրա հիման վրա դատական ակտ կայացվելու արդյունքում:

Ներկայացված երկու խնդիրների ուսումնասիրությունից հետևում է, որ Երևանի քաղաքապետարանն իրականացրել է ոչ պատշաճ վարչարարություն: Մասնավորապես՝ եթե

ներկայացրած առաջին դեպքով Երևանի քաղաքապետարանն անհասկանալի պատճառներով չի կասեցրել իրականացվող ապօրինի շինարարությունը՝ չապահովելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջը, համաձայն որի՝ համայնքի ղեկավարը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում *կանխարգելում ու կասեցնում է* ինքնակամ շինարարությունը, չապահովելով նաև ինքնակամ շինարարության կանխարգելման իր գործառույթը, ապա ներկայացված երկրորդ դեպքով քաղաքապետարանն անտեսել է, որ առկա է ՀՀ վարչական դատարանի վարույթ ընդունած վիճարկման հայց, ինչն օրենքով կասեցնում է վիճարկվող վարչական ակտի (քանդման որոշում) կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը: Ընդ որում՝ պարզ չէ և իրավակիրառ պրակտիկայում տարակերպ մեկնաբանությունների տեղիք է տալիս, թե ո՞ր դեպքերում, ինչպիսի՞ փաստական հանգամանքներից ելնելով քաղաքապետարանն առանց դատարան հայցադիմում ներկայացնելու՝ սեփական նախաձեռնությամբ կայացնում ինքնակամ շինությունը քանդելու մասին որոշում և որ՞ դեպքերում պարտադիր պետք է դիմի դատարան ինքնակամ շինությունը քանդելուն պարտավորեցնելու պահանջով:

Ոլորտը կարգավորող ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ ՀՀ կառավարությունը հաստատել է ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը՝ համաձայն հավելվածի, ընդ որում, նույն որոշման համաձայն՝ այն ընդունվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածին համապատասխան: Նույն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը *սեփական նախաձեռնությամբ* ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ *քանդելու մասին*: Նշյալ որոշմամբ ամրագրված իրավանորմերի ուսումնասիրության արդյունքում կարող ենք ենթադրել, որ համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում միայն պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցները քանդելու մասին և դեպքում:

Հատկանշական է, որ համայնքի ղեկավարի համար «սեփական նախաձեռնությամբ» որոշում ընդունելու լիազորություն սահմանող այդ նորմն ամրագրելն ինքնաբերաբար ենթադրում է, որ նշված դեպքում քանդման որոշումը համայնքի ղեկավարը կարող է ընդունվել առանց դատարան հայցադիմում ներկայացնելու, սակայն նշված նորմի այդպիսի ամրագրումը հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ մասում ամրագրված իրավանորմերի շարադրանքին, որին համապատասխան ընդունվել է նշված որոշումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերությամբ ամրագրված իրավական դրույթը սահմանում է, որ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը: Մինչդեռ, նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությամբ ամրագրված իրավական դրույթը սահմանում է, որ չօրինականացված ինքնակամ կառույցը պետության, *համայնքի* կամ այլ շահագրգիռ անձի *հայցով*, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման, իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին: Իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերը նշված հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը և այդ իրավունքը կարող է իրացնել բացառապես դատարան հայցադիմում ներկայացնելու և դրա հիման վրա դատական ակտ կայացվելու արդյունքում: Փաստորեն, ոլորտը կարգավորող իրավական ակտերում ամրագրված նորմերի տարաբնույթ մեկնաբանումը բացառելու համար այդ նորմերն ունեն լրամշակման՝ որոշակիություն ապահովելու կարիք:

Նշվածի համատեքստում, 2008 թվականի մայիսի 13-ի թիվ ՄԴՈ-753 որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը:

Օրենքի կանխատեսելիությունը գնահատելու համար կարևոր գործոն է նաև տվյալ հարաբերությունները կանոնակարգող տարբեր կարգավորումների միջև հակասությունների առկայությունը կամ բացակայությունը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. *տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատշաճ և հետևողականորեն իրականացնել ինքնակամ շինարարության դեպքերի կանխարգելում, կասեցում և դրանց հետևանքների վերացում,*

2. *ուղորդ կարգավորող իրավական ակտերի տարբերությունը բացառելու համար միջոցներ ձեռնարկել դրանցում ամրագրված նորմերը փոփոխելու և որոշակիացնելու ուղղությամբ:*

### **5. Բազմաբնակարան շենքերում պարտադիր նորմերը չպահպանելը**

2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ բազմաբնակարան շենքերում պարտադիր նորմերը չպահպանելու հետևանքով առաջացած տարատեսակ խնդիրների վերաբերյալ:

Բողոքներից մեկով Երևան քաղաքի վարչական շրջաններից մեկում գտնվող բազմաբնակարան շենքում բնակվող անձը Պաշտպանին հասցեագրած բողոքով տեղեկացրել է, որ իրենց շենքի տանիքը գտնվում է անմխիթար վիճակում, ինչն անձրևաջրերի արտահոսքի պատճառ է հանդիսացել և հանգեցնելով իր բնակարանի գույքին, ինչպես նաև շենքի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող տարածքների վնասմանը: Նմանատիպ իրավիճակների վերաբերյալ բողոքներ են ստացվել նաև ՀՀ մարզերից:

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ շենքում պարտադիր նորմերի պահպանման ընդհանուր վերահսկողությունն իրականացնում է տվյալ համայնքի ղեկավարը: ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 4-ի «Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը սահմանելու մասին» թիվ 1161-Ն որոշմամբ սահմանված հավելված 1-ի համաձայն՝ բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության՝ շենքը կրող կառուցվածքների, շենքի միջհարկային ծածկերի (առաստաղների, հատակների), նկուղների, ձեղնահարկի, տեխնիկական հարկերի, տանիքի, ինչպես նաև մեկից ավելի շինություններ սպասարկող և բազմաբնակարան շենքի միասնական ամբողջական սպասարկման համար նախատեսված մուտքերի, աստիճանավանդակների, աստիճանների, վերելակների, վերելակային և այլ հորերի, մեխանիկական, էլեկտրական և այլ սարքավորումների ու տարածքների պահպանմանը ներկայացվող քաղաքաշինական, սանիտարական, հակահրդեհային և կոմունալ սպասարկման պահանջների ապահովմանն ուղղված պարտադիր նորմերը ներառում են այնպիսի նվազագույն ծավալի պարտադիր իրականացման ենթակա կազմակերպական և տեխնիկական համալիր միջոցառումներ ու աշխատանքներ, որոնց ժամանակին չիրականացումը կարող է ուղղակի վտանգ ներկայացնել շինությունների սեփականատերերի կամ այլ մարդկանց կյանքին, առողջությանը, անձանց գույքին, շրջակա միջավայրին:

Բազմաբնակարան շենքերում պարտադիր նորմերի պահպանման ուղղությամբ ընթացիկ տարում ձեռնարկված միջոցների վերաբերյալ Երևանի քաղաքապետարանից ստացվել է տեղեկություն, որ բազմաբնակարան շենքերի սեփականատերերից քաղաքապետարանի «Թեժ գծով» ու դիմումներով պետական և հասարակական կազմակերպություններից ստացված ահազանգերով ներկայացված, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանումների հայտնաբերած թերությունները, որոնք վերաբերել են շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանմանը, քաղաքապետարանի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվող վերահսկողության արդյունքում պատշաճ կերպով և ժամկետներում վերացվել են:

Պաշտպանի միջամտությամբ Երևանի քաղաքապետարան իրականացրել է տանիքի վերանորոգման աշխատանքներ, և խնդիրը վերացվել է:

ՀՀ Լոռու մարզի Ալավերդի քաղաքի բազմաբնակարան շենքերից մեկի բնակիչները Պաշտպանին հասցեագրած բողոքով տեղեկացրել են, որ տարիներ շարունակ իրենց շենքի տանիքը գտնվում է անմխիթար վիճակում, ինչը հանգեցնում է անձրևաջրերի ներթափանցման և քաղաքացիների գույքի վնասման:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բացի վերոգրյալ դեպքից, Ալավերդի քաղաքի տարածքում գտնվող շուրջ 54 շենքի տանիք ևս ունի հիմնանորոգման կարիք: Տարածքային կառավարման և զարգացման նախարարության տվյալների համաձայն՝ նշված շենքերի վթարայնությունը գնահատելու նպատակով ստեղծվել է հանձնաժողով, որը կարևորում է տանիքների վթարայնությունը, շահառուների քանակը, ինչպես նաև բնակիչների մասնակցությունը հիմնանորոգման աշխատանքներին՝ սպասարկման և բնակվարձերի տեսքով: Տեղական ինքնակառավարման մարմնից հավաստիացրել են, որ շենքի տանիքների հիմնանորոգման հարցը հաշվառված է և կընդգրկվի առաջիկա ծրագրերում:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է, որ Երևանի քաղաքապետը և Հայաստանի մարզերում ընդգրկված համայնքների ղեկավարները պատշաճ և հետևողական վերահսկողություն իրականացնեն համայնքների տարածքում ընդգրկված շենքերում պարտադիր նորմերի պահպանման նկատմամբ՝ առաջացած տարատեսակ խնդիրների և հատկապես տանիքների վերանորոգման ուղղությամբ ձեռնարկելով գործուն միջոցներ:*

**6. Կոռպերատիվ հիմունքներով բազմաբնակարան շենք կառուցելու նպատակով կանխավճարային մուծումներ կատարելու և շենքերի կիսակառույց մնալու հետևանքով բնակարաններով չապահովվելը**

2018 թվականի ընթացքում ևս Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ, որոնք վերաբերում են կոռպերատիվ հիմունքներով բազմաբնակարան շենք կառուցելու և բնակարաններ հատկացնելու նպատակով կանխավճարային մուծումներ կատարելու, Խորհրդային Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկման հետևանքով կառուցվելիք շենքերը կիսակառույց մնալու և բնակարաններով չապահովվելու խնդրին:

ՀՀ կառավարության 2000 թվականի օգոստոսի 2-ի «Անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոռպերատիվների փայատերերի կողմից Խորհրդային Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկումից փայատերերի կրած կորուստների դիմաց դրամական օգնության տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 432-Ն որոշման համաձայն՝ անավարտ շենքերի բնակարանաշինարարական կոռպերատիվների փայատերերին նախատեսվել էր տրամադրել համապատասխան դրամական օգնություն, ինչը, սակայն, կոռպերատիվների բազմաթիվ անդամների մինչ օրս չի վճարվել:

Ընդ որում՝ նշված դրամական օգնությունը նախատեսվել էր տրամադրել ՀՀ կառավարության 2002 թվականի մարտի 12-ի «Անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կողմից խորհրդային միության ռուբլով վճարված օգնության տրամադրման ժամանակացույցի մասին» թիվ 229 որոշմամբ հաստատված ժամանակացույցով նշված հերթականությամբ: Հարկ է նշել, որ ըստ այդ հերթականության՝ դրամական օգնության տրամադրման գործընթացն ընդհանուր առմամբ նախատեսվել էր ավարտել 2011 թվականին:

Այս հարցի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության պարզաբանման համաձայն՝ որ Հայաստանի Հանրապետության 2019-2021 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի՝ Խորհրդային Միության ռուբլով վճարած գումարի արժեզրկումից փայատերերի կրած կորուստների դիմաց պետության կողմից դրամական օգնության տրամադրման նպատակով միջոցներ նախատեսված չեն: Ըստ ֆինանսների նախարարության՝ իրականացվել է անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների վերաբերյալ առկա տեղեկատվության համադրման, ճշգրտման, թվայնացման աշխատանքներ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի ապրիլի 30-ի թիվ 110 և 2000 թվականի օգոստոսի 2-ի թիվ 432 որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 2000-Ն որոշմամբ սահմանված բանաձևով կատարվել է հաշվարկ, որի համաձայն՝ չվճարված անավարտ շինարարության բնակարանաշինարարական թվով 37 կոոպերատիվների փայատերերին վճարման ենթակա դրամական օգնության չափը մոտավոր հաշվարկներով կազմում է 731.000.000 (յոթ հարյուր երեսունմեկ միլիոն) ՀՀ դրամ:

Վերոնշյալ խնդրի համակարգային վերլուծության արդյունքում պարզվել է, որ անավարտ շենքերի բնակարանաշինարարական կոոպերատիվների անդամներն ունեն ոչ թե ուղղակի դրամական օգնություն տրամադրելու, այլ անավարտ շենքերի կառուցումն ավարտին հասցնելու աջակցության կարիք, քանի որ հանրապետությունում առկա անավարտ շենքերի բնակարանաշինարարական կոոպերատիվների անդամներից շատերը մինչ օրս ապահովված չեն բնակարաններով:

ՀՀ Սահմանադրությամբ սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունը սոցիալական պետություն է, իսկ որպես սոցիալական պետություն այն պետք է ունենա սոցիալական պաշտպանության համակարգ, որի գործունեությունը պետք է միտված լինի ապահովելու հասարակության բարեկեցությունը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. *հետագա տարիների համար պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսել դրամական միջոցներ անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվներին դրամական օգնություն տրամադրելու համար:*

2. *Կառավարության համաֆինանսավորմամբ, ինչպես նաև դոնոր կազմակերպությունների ներգրավմամբ միջոցներ հայթայթել անավարտ շենքերի կառուցումն ավարտին հասցնելու և կոոպերատիվների անդամներին բնակարաններով ապահովելու համար:*

## **7. Հյուսիս-հարավ ավտոմայրուղու կառուցման հետևանքով սեփականությունից անարգել օգտվել չկարողանալը**

2018 թվականին համակարգային առումով շարունակել է չլուծված մնալ Պաշտպանի դեռևս 2017 թվականի տարեկան հաղորդմամբ բարձրաձայնված՝ Հյուսիս-հարավ

միջպետական նշանակության ավտոճանապարհի կառուցման հետևանքով սեփականությունից անարգել օգտվել չկարողանալու խնդիրը: Մասնավորապես՝ 2018 թվականին Պաշտպանի աշխատակազմում քննարկվել է ՀՀ Արարատի մարզի Բաղրամյան, Բերքանուշ, Մրգավան և Դալար համայնքների բնակիչների խնդիրը՝ կապված «Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրան սահման» Հյուսիս-հարավ միջպետական նշանակության ավտոճանապարհի կառուցման հետևանքով ընդհանուր օգտագործման ճանապարհին հարող նախկին անցուղու փակման, դրա հետևանքով վերոնշյալ գյուղերի բնակիչների կողմից ավտոմայրուղու հակառակ կողմում գտնվող և իրենց կողմից մշակվող, գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ և արոտավայրեր համապատասխան գյուղատնտեսական տեխնիկա տեղափոխելու, ինչպես նաև խոշոր եղջերավոր անասուններին արոտավայրեր տանելու հարցի հետ:

Բարձրացված խնդրի կապակցությամբ 2018 թվականի մայիսի 10-ին Մարդու իրավունքներ պաշտպանի գլխավորած աշխատանքային խումբը եղել է Բերքանուշ համայնքում, որտեղ հանդիպել է նշված համայնքների ղեկավարների և բնակիչների հետ: Քննարկման ընթացքում համայնքների բնակիչները պնդել են, որ նշված ճանապարհի բացման և իրենց համար դրա մատչելիության հարցն ունի կենսական նշանակություն: Այդ ճանապարհի բացակայության պատճառով առաջանում են գյուղատնտեսական աշխատանքների իրականացման բարդություններ, որոնք հանգեցնում են ֆինանսական էական կորուստների և վնասների: Որպես միջանկյալ լուծում՝ բնակիչներն առաջարկում են հանել ավտոմայրուղու միջնագծում տեղադրված արգելափակոցները և տեղադրել համապատասխան ճանապարհային նշաններ, որոնց կիրառմամբ կարող է կարգավորվել հետիոտնի և տրանսպորտային միջոցների անխափան երթևեկությունը, ինչպես նաև որպես խնդրի հիմնական լուծում՝ ՀՀ Արարատի մարզի Բերքանուշ համայնքի հատվածում կառուցել վերգետնյա կամուրջ:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության տեղեկության համաձայն՝ ՀՀ Արարատի մարզի Բաղրամյան, Դալար, Մրգավան և Բերքանուշ համայնքների բնակիչների բարձրացրած խնդրի լուծման համար ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության առաջարկությունը վարչապետի 2018 թվականի հանձնարարականով ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարություններ՝ կարծիքի: ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը լրացուցիչ քննարկել է ՀՀ Արարատի մարզպետի հետ և գրությամբ հայտնել, որ խնդրի լուծման վերաբերյալ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի կողմից առաջարկվող լուծումների վերաբերյալ առարկություններ չունի: Բարձրացված հարցի կապակցությամբ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը խնդրի լուծման նպատակով ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունն առաջարկել է ՀՀ կառավարությանը դիտարկել Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ իրականացվող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրման ծրագրի Տրանշ 3 ծրագրի (վարկ համար՝ 2993-ARM) վարկային միջոցների խնայողությունների հաշվին Երևան-Աշտարակ ճանապարհահատվածի 27+230 կմ հատվածում ուղեանց կառուցելու հնարավորությունը:

2018 թվականին ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության պարզաբանման համաձայն՝ ՀՀ Արարատի մարզի վերոնշյալ համայնքների բնակչության պահանջած վերգետնյա ուղեանցի կառուցման համար, ըստ նախնական հաշվարկի՝ կպահանջվի շուրջ 1.39 մլրդ ՀՀ դրամ ֆինանսական ներդրում: Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Ծրագիր 1-ն ավարտվել է

դեռևս 2016 թվականին, ինչպես նաև լրացել է վարկային միջոցների հասանելիության ժամկետը, ուստի ուղեանցի կառուցումը կարող է իրականացվել միայն ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին, սակայն ՀՀ պետական բյուջեում նոր վերգետնյա ուղեանցի ֆինանսավորման համար միջոցներ նախատեսված չեն: Ֆինանսավորման խնդրի վերաբերյալ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարը տեղեկացրել է ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարին: Ըստ նախարարության՝ Երևան-Արտաշատ ճանապարհը 1-ին տեխնիկական կարգի միջպետական ավտոճանապարհ է, որի համար երթևեկության հաշվարկային արագությունը կազմում է 100 կմ/ժամ: ՀՀՇՆ-IV-11.05.02-99 «Ավտոմոբիլային ճանապարհներ» 6.16 կետում հստակ նշված է, որ 1-ին և 2-րդ կարգի միջպետական նշանակության ճանապարհների և հետիոտնային անցումների փոխհատումները պետք է նախատեսել տարբեր մակարդակներում, ինչը հնարավորություն չի տալիս ընդունել համայնքների բնակիչների առաջարկած միջանկյալ լուծման տարբերակը (հանել ավտոմայրուղու միջնագծում տեղադրված արգելափակոցները և տեղադրել համապատասխան ճանապարհային նշաններ, որոնց կիրառմամբ կարող է կարգավորվել հետիոտնի և տրանսպորտային միջոցների անխափան երթևեկությունը): Ավելին, առաջարկվող միջանկյալ լուծումը չի կարող ընդունվել նաև ճանապարհային անվտանգության ապահովման տեսանկյունից: Անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության պարագայում վերգետնյա ուղեանցի կառուցման խնդրին անմիջապես կտրվի համապատասխան ընթացք:

Հատկանշական է, որ Հյուսիս-հարավ ավտոմայրուղու հակառակ կողմում գտնվող և վերոնշյալ համայնքների բնակիչների կողմից մշակվող գյուղատնտեսական նշանակության հողամասերն այդ համայնքների բնակիչներին հիմնականում պատկանում են սեփականության իրավունքով: Իսկ կառուցապատողի կողմից իրականացվող շինարարության, այն է՝ գլխավոր ճանապարհի վերակառուցման հետևանքով ճանապարհին հարող նախկին անցուղին փակվել է, սակայն խնդիրը կարգավորող այլընտրանքային լուծումներ մինչ օրս չեն գտնվել, դրա հետևանքով խախտվել է անձի իր սեփականությունից անարգել օգտվելու, մասնավորապես՝ Սահմանադրությամբ ամրագրված այդ սեփականությունն օգտագործելու և տիրապետելու իրավունքը:

*Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է հնարավոր սեղմ ժամկետներում գործունե միջոցներ ձեռնարկել Հյուսիս-հարավ ավտոմայրուղու Բերքանուշ համայնքի հատվածում վերգետնյա կամուրջ կառուցելու ուղղությամբ:*

## **8. Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին բնակարան չհատկացնելը**

2018 թվականի շարունակել են Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել բողոքներ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին բնակարան հատկացնելու խնդիրների վերաբերյալ: Մասնավորապես, մարդիկ դիմել են Մարդու իրավունքների պաշտպանին՝ հայտնելով, որ հաշվառված են երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հերթացուցակում, սակայն իրենց բնակարան չի հատկացվել:

ՀՀ ԿԵ քաղաքաշինության պետական կոմիտեի համաձայն՝ ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 1329-Ն որոշմամբ սահմանված վերջնաժամկետում՝ մինչև 2011 թվականի նոյեմբերի 1-ը, ընտանիքներն անհրաժեշտ փաստաթղթերով համալրված ամբողջական փաթեթ չեն ներկայացրել, այդ իսկ պատճառով նրանց բնակապահովման հարցը երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային



խնդիրների լուծման նպատակով ներկայումս պետական աջակցությամբ իրականացվող բնակապահովման ծրագրի շրջանակներում չի դիտարկվել:

ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 1329-Ն որոշմամբ սահմանված է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքում և Ախուրյանի գյուղական համայնքում կառուցված ու բնակեցման ենթակա բազմաբնակարան շենքերի բնակարանները բաշխում է վիճակահանությամբ՝ նույն որոշման 1-ին կետի համաձայն՝ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, *բնակարան արտահերթ ստանալու համար սահմանված կարգով հաշվառված ընտանիքների կողմից ներկայացված անհրաժեշտ փաստաթղթերով համալրված փաթեթների* ուսումնասիրության արդյունքների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի «Աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիներին բնակարանների արտահերթ հատկացման կարգը հաստատելու մասին» N 432 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 18-րդ կետով սահմանված հերթականության համաձայն:

Մինչդեռ, ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 1329-Ն որոշմամբ նախատեսված չէ անհրաժեշտ փաստաթղթերով համալրված ամբողջական փաթեթ չներկայացնելու պատճառով բնակապահովման հարցը վերոհիշյալ ծրագրի շրջանակներում չդիտարկվելու դեպքում նշված անձանց բնակարանային խնդրի կարգավորումը: ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի թիվ 432 որոշման համաձայն՝ քաղաքացիները հաշվառումից հանվում են, եթե՝

ա) հաշվառման վերցված անձանց բնակարանային պայմանները բարելավվել են, որի կապակցությամբ վերացել են հաշվառման մեջ գտնվելու հիմքերը.

բ) հաշվառման վերցված անձինք մշտական բնակության են փոխադրվել այլ բնակավայր.

գ) բնակարանային պայմանների բարելավման կարիք ունենալու մասին ներկայացվել են իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ:

Հաշվառումից հանելու հիմքերը սպառիչ են նախատեսված վերոհիշյալ որոշմամբ, և անհրաժեշտ փաստաթղթերով համալրված ամբողջական փաթեթ սահմանված վերջնաժամկետում չներկայացնելը հիմք չէ հաշվառումից հանելու համար: Ստացվում է, որ մինչև 2011 թվականի նոյեմբերի 1-ն ամբողջական փաթեթ չներկայացրած անձինք շարունակում են մնալ հաշվառման մեջ, բայց բնակարան իրենց չի հատկացվում կարգավորման բացակայության պատճառով: Այսպիսով՝ պարզ չէ, թե պետությունն ունի արդյոք բնակապահովման պարտավորություն այն անօթևան ընտանիքների հանդեպ, որոնք սահմանված ժամկետում փաստաթղթերի ամբողջական փաթեթ չեն ներկայացրել:

*Ուստի՝ անհրաժեշտ է հստակ սահմանել, թե ինչպիսի կարգավիճակ ունեցող անօթևան ընտանիքների (չփոխհատուցված ընտանիքների, մասնակի փոխհատուցված ընտանիքների, երկրաշարժի ժամանակ աղետի գոտու բնակավայրերում վարձով կամ հանրակացարանում բնակված և երկրաշարժից հետո մշտապես աղետի գոտում ժամանակավոր կացարաններում բնակվող ընտանիքների, փաստաթղթերը սահմանված ժամկետում չներկայացրած ընտանիքների և այլն) հանդեպ է պետությունը ստանձնում բնակապահովման պարտավորություն:*

### ԳԼՈՒԽ 3. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ՀՀ Սահմանադրությամբ, մի շարք միջազգային պայմանագրերով և փաստաթղթերով, ինչպես նաև ներպետական օրենսդրությամբ սահմանվում են մարդու աշխատանքային իրավունքները և դրանց իրացման մեխանիզմներ և գործիքներ: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածով ամրագրված են աշխատանքի ընտրության ազատությունը և աշխատանքային իրավունքները, իսկ մի շարք միջազգային պայմանագրերում՝ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայում, Սոցիալ տնտեսական և մշակութային իրավունքների ՄԱԿ-ի դաշնագրում, ինչպես նաև Աշխատանքի միջազգային կազմակերպության մի շարք պայմանագրերում և փաստաթղթերում տեղ են գտել աշխատանքային իրավունքների իրացման հիմնական չափանիշները և ուղենիշերը:

Չնայած մարդու աշխատանքային իրավունքների պաշտպանությանը և անխաթար իրացումն ապահովելու համար վերոգրյալ փաստաթղթերում առկա են բազմաթիվ կարգավորումներ, սակայն ոլորտի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս փաստել, որ Հայաստանում աշխատողների իրավունքներն ամբողջությամբ պաշտպանված չեն, տարվա ընթացքում տեղի են ունենում աշխատանքային իրավունքների բազմաթիվ խախտումներ, իսկ օրենսդրական բացերը և թերի կարգավորումներն իրենց հերթին ևս հանգեցնում են մի շարք խնդիրների: Վերոնշյալից զատ աշխատանքային իրավունքների խախտման հիմնական պատճառներից է նաև աշխատանքային իրավունքների պաշտպանության մեխանիզմների մասին ոչ բավարար իրազեկումն, ինչպես նաև աշխատողների իրավունքների պաշտպանության թույլ աստիճանը:

Ավելին, աշխատանքային իրավունքների խախտման բազմաթիվ դեպքեր մնում են չբարձրաձայնված, քանի որ աշխատողները, շատ հաճախ գտնվելով սոցիալ-տնտեսական ծանր վիճակում, հասկանալով թափուր աշխատատեղերի բացակայության, աշխատաշուկայի փոքր լինելու և այլ աշխատանք գտնելու դժվարությունների մասին, սեփական աշխատանքը չկորցնելու համար աչք են փակում սեփական իրավունքների խախտման դեպքերի վրա: Ուստի՝ չափազանց կարևոր է նաև աշխատանքային իրավունքների խախտումների կանխարգելումը և դրանց բացառումը:

#### ***1. Աշխատանքային իրավունքների և օրենսդրության նկատմամբ պետական հսկողություն իրականացնող արտադատական մարմնի բացակայությունը և աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկման պակասը***

Տարիներ շարունակ Մարդու իրավունքների պաշտպանը ստանում է աշխատանքային իրավունքների ենթադրյալ խախտումների մասին բարձրաձայնող թե՛ բանավոր, թե՛ գրավոր բողոքներ և դիմումներ: Ինչպես ամենամյա հաղորդումներում, այնպես էլ հրապարակային ելույթներում Մարդու իրավունքների պաշտպանները բարձրաձայնել են աշխատողների իրավունքների խախտման մասին և դրա կանխարգելմանը և վերականգմանն ուղղված աշխատանքների անհրաժեշտության մասին: Տարիներ շարունակ բարձրացվել է աշխատանքային իրավունքների պահպանումը վերահսկող և այդ իրավունքների խախտումները կանխարգելող արտադատական մարմնի անհրաժեշտության մասին, միաժամանակ հստակ նշելով, որ գործող Առողջապահական պետական տեսչությունը չունի այնպիսի գործառույթներ, որոնց միջոցով հնարավոր կլիներ իրականացնել բավարար վերահսկողություն և միջոցներ ձեռնարկել աշխատողների խախտված իրավունքների վերականգման համար: Սույն խնդրի մասին բարձրաձայնվում է դեռևս 2015 թվականից:

2004 թվականին ստեղծված ՀՀ աշխատանքի պետական տեսչության հիմնական գործառույթը գործատուների կողմից ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ-իրավական ակտերի պահպանման նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական հսկողություն և վերահսկողություն իրականացնելն էր: Այլ կերպ ասած՝ վերջինս աշխատանքային իրավունքների պահպանումը վերահսկող արտադատական մարմին էր, որն աշխատանքային օրենսդրության խախտումներին առնչվող ստացվող բողոքների հիման վրա խախտված իրավունքների վերականգնման նպատակով ընդունում էր վարչական ակտեր: Սակայն 2013 թվականի օրենսդրական փոփոխությունների հետևանքով ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ աշխատանքի պետական տեսչության միաձուլման հետևանքով վերակազմակերպվել է ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի Առողջապահական պետական տեսչության<sup>42</sup>:

Չնայած ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի Առողջապահական պետական տեսչությունը ՀՀ աշխատանքի պետական տեսչության իրավահաջորդն է<sup>43</sup>, սակայն ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի Առողջապահական պետական տեսչությունը 2015 թվականի հունվարի 9-ից լիազորված է իրականացնելու միայն ՀՀ աշխատանքային օրենսգրքով և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերով սահմանված աշխատանքի անվտանգության ապահովման և առողջության պահպանության նորմեր պարունակող իրավական ակտերի կիրարկման նկատմամբ պետական հսկողություն և վերահսկողություն: Վերոհիշյալի պատճառն այն է, որ 2014 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունված և 2015 թվականի հունվարի 9-ին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու և «Աշխատանքի պետական տեսչության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ ուժը կորցրած է ճանաչվել 2004 թվականի նոյեմբերի 9-ի ՀՀ աշխատանքային օրենսգրքի 34-րդ հոդվածը, որը սահմանում էր Աշխատանքի պետական տեսչության կողմից ոլորտի նկատմամբ հսկողություն իրականացնելու լիազորություն:

Վերը նկարագրվածի հետևանքով այժմ առկա է մի իրավիճակ, երբ աշխատանքի անվտանգության ապահովման և առողջության պահպանության նորմեր պարունակող իրավական ակտերի կիրարկման նկատմամբ պետական հսկողություն իրականացնելուց զատ աշխատանքային հարաբերությունների ընթացքում և առհասարակ ոլորտում առկա այլ խնդիրների քննարկմամբ և լուծմամբ, հսկողության և վերահսկողության իրականացմամբ Առողջապահական պետական տեսչությունը չի զբաղվում և նմանատիպ խնդիրների առկայության պարագայում ծագող աշխատանքային վեճերի լուծման միակ հնարավոր տարբերակը դատարան դիմելն է:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ևս աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ պայմանագրերի պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողություն ու վերահսկողություն իրականացնելու լիազորություններ չունի, ինչի պատճառով, 2018 թվականին 78 դիմումատուի ներկայացրել է իրենց դիմումներում բարձրացված հարցերի առնչությամբ ՀՀ օրենսդրությամբ տրված կարգավորումների վերաբերյալ պարզաբանումներ և տեղեկացրել, որ բարձրաձայնված աշխատանքային

<sup>42</sup> Տե՛ս ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 857-Ն որոշում:

<sup>43</sup> Տե՛ս ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 857-Ն որոշում:

իրավունքների պաշտպանությունն իրականացնելու համար նրանք կարող են դիմել դատարան կամ աշխատողների ներկայացուցիչներին:

Օրենսդրության նորմերի պահպանման նկատմամբ առկա աշխատանքային պետական վերահսկողության նշված պակասը և աշխատանքային իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ գործատուների և աշխատողների իրազեկման գործողությունների անբավարարությունը սահմանափակում են նման դեպքերի կանխարգելումը:

Աշխատողների իրավունքների պաշտպանության և աշխատանքային հարաբերությունների մշտադիտարկման անհրաժեշտության վերաբերյալ նշվում է նաև մի շարք միջազգային փաստաթղթերում: Ըստ Աշխատանքի միջազգային կազմակերպության «Արդյունաբերությունում և առևտրում աշխատանքի տեսչության մասին» թիվ 81 կոնվենցիայի՝ անդամ պետությունները պարտավորվում են արդյունաբերական և առևտրի ձեռնարկություններում ստեղծել աշխատանքի տեսչության համակարգ, որը կոչված է ապահովելու աշխատանքի ընթացքում աշխատողների աշխատանքային պայմաններին ու պաշտպանությանը վերաբերող իրավանորմերի կիրառումը:<sup>44</sup> Ավելին, ըստ Հայաստանի Հանրապետության վավերացրած այս կոնվենցիայի՝ աշխատանքային հարաբերությունների վերահսկման լիազոր մարմինը կազմակերպական առումով պետք է ստեղծվի կենտրոնական մարմիններին կից, նրանց հսկողության ներքո: Սակայն ոլորտում իրականացված վերը նշված փոփոխությունների պատճառով Առողջապահական պետական տեսչությունը կենտրոնական մարմնի կարգավիճակից իջեցվելով դարձել է ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ստորաբաժանում:

Հարկ է նաև նշել, որ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայով ևս սահմանվում է, որ յուրաքանչյուր կողմ, ազգային պայմաններին համապատասխան, պետք է ունենա աշխատանքային վերահսկողության համակարգ<sup>45</sup>:

Կարևորելով խնդիրը՝ հարցի լուծման նպատակով համապատասխան գործողություն է նախատեսվել նաև «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի 4 մայիսի N 483-Ն որոշման հավելված 1-ով սահմանված գործողությունների ծրագրի 40-րդ կետով:

2018 թվականի հունիսի 11-ի ՀՀ վարչապետի N 755-Լ որոշմամբ հաստատվել և 2018 թվականի հուլիսի 19-ից ուժի մեջ է մտել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրությունը, սակայն դեռևս բացակայում է աշխատանքային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ ամբողջական պետական վերահսկողությունը: Ուստի՝ առկա համակարգային խնդիրների լուծման նպատակով 2018 թվականին շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը և «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Վարչապետի որոշման օրենսդրական նախագծերի փաթեթ, որը միտված է ապահովել աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ամբողջական պետական վերահսկողություն:

Չնայած վերը նշված քայլերին, որոնք ուղղված են եղել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի՝ որպես աշխատանքային իրավունքների պահպանում

<sup>44</sup> Տե՛ս «Արդյունաբերությունում և առևտրում աշխատանքի տեսչության մասին» ԱՄԿ թիվ 81 կոնվենցիա, հոդվածներ 1-3:

<sup>45</sup> Տե՛ս Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա, Մաս 3, հոդված Ա, կետ 4:

իրականացնող մարմնի կայացմանը, այնուամենայնիվ պետք է նշել, որ ՀՀ-ում անձանց աշխատանքային իրավունքների համակարգային խախտման խնդիրը շարունակում է չլուծված մնալ:

Նշվածի հետ անմիջականորեն կապված է նաև աշխատողների՝ իրենց իրավունքների վերաբերյալ իրազեկման պակասը: Մարդու իրավունքների պաշտպանին 2018 թվականին հասցեագրված բողոքները վկայում են, որ խնդիրը դեռևս համակարգային է: Աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկման պակասը հաճախ կարող է խոչընդոտել նման իրավունքների խախտումների կանխարգելմանը: Գործնականում բազմաթիվ են դեպքերը, երբ աշխատանքից ազատված անձը տեղյակ չլինելով իր իրավունքների մասին՝ չի կարողանում իրացնել, պաշտպանել իր աշխատանքային իրավունքները, հասնել վերջինիս վերականգնմանը, իսկ շատ դեպքերում իրազեկվածության պակասը հանգեցնում է աշխատանքային իրավունքների նոր խախտումների: Հարկ է նշել, որ աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունն ուղիղ համեմատական կարող է լինել աշխատանքային իրավունքների խախտումների նախականիմանը և խախտված իրավունքների վերականգնմանը:

*Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝*

*1. սեղմ ժամկետներում ՀՀ աշխատանքային օրենսգրքում և ոլորտի այլ իրավական ակտերում կատարել համապատասխան փոփոխություններ, որոնց հիման վրա կստեղծվի արտադատական մարմին, որը կունենա աշխատանքի պայմանների, աշխատողների աշխատանքային ազատությունների և իրավունքների պահպանման ու պաշտպանության ապահովման, աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերի խախտումների վերացման ու կանխարգելման նկատմամբ վերահսկողության իրականացման իրավասությունը,*

*2. գանգվածային լրատվության միջոցներով շարունակել հասարակությանն իրազեկել աշխատանքային իրավունքների և դրանց պաշտպանության ուղիների վերաբերյալ:*

## **2. Աշխատանքային իրավունքների ոստահարման դեպքեր**

2018 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են աշխատանքային իրավունքների խախտումների մասին բազմաթիվ բողոքներ: Վերջիններով վեր են հանվել հետևյալ համակարգային խնդիրները.

1) գործատուների կողմից վերջնահաշվարկի չկատարում,

2) աշխատանքից աշխատողի անհիմն ազատում կամ կարգապահական տույժերի կիրառում,

3) աշխատանքային պայմանագիրը լուծելուց առաջ այդ մասին աշխատողներին օրենքով սահմանված ժամկետներում ծանուցման չկատարում,

4) ամենամյա արձակուրդի սխալ հաշվարկի կիրառում,

5) աշխատողի ժամանակավոր անաշխատունակության վիճակում գտնվելու պայմաններում ժամանակավոր անաշխատունակության թերթիկը գործատուին ներկայացնելու կարգի և ժամկետների վերաբերյալ կարգավորումների բացակայություն,

6) առանց աշխատողի համաձայնության նրան այլ աշխատանքի փոխադրում,

7) ՀՀ քրեակատարողական ծառայության պետի հրամանով աշխատանքից ազատված քրեակատարողական ծառայողներին քրեակատարողական ծառայողների կադրերի ռեզերվում գրանցելու կարգի և ժամկետների վերաբերյալ կարգավորումների բացակայություն:

1) Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ընդհանուր վերլուծությունը հնարավորություն է տալիս փաստել, որ շարունակում է արդիական մնալ

աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում աշխատողների հետ վերջնահաշվարկ չկատարելու խնդիրը: Պետք է նշել, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում գործատուն աշխատանքային պայմանագրի լուծման օրը պարտավոր է աշխատողի հետ կատարել լրիվ վերջնահաշվարկ, եթե նույն օրենսգրքով, օրենքով կամ գործատուի և աշխատողի համաձայնությամբ վերջնահաշվարկի այլ կարգ նախատեսված չէ: Մինչդեռ Պաշտպանին հասցեագրված բողոքներն ու ահազանգերը վկայում են, որ վերջնահաշվարկ կատարելու գործատուների պարտավորությունը ոչ միշտ է պահպանվում, ավելին, որոշ գործատուներ սխալ են մեկնաբանում Օրենսգրքի 130-րդ հոդվածով սահմանված կարգավորումը: Կատարվող վերջնահաշվարկով ստացվում է այն գումարը, որը պետք է գործատուն վճարի աշխատողին կամ հակառակն:

Օրինակ՝ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված ահազանգերից մեկով դիմողը տեղեկացրել է, որ աշխատել է մասնավոր կազմակերպությունում, 2018 թվականի նոյեմբեր ամսին դուրս է եկել աշխատանքից, աշխատանքային պայմանագիրը լուծելիս վերջնահաշվարկ չեն կատարել՝ պատճառաբանելով, որ ընկերության ներքին կանոնակարգի համաձայն՝ վերջնահաշվարկ չի կատարվում ընկերության այն աշխատակիցների հետ, ովքեր աշխատանքից ազատվում են նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին: Հարկ է նշել, որ Օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ գործատուի և աշխատողի համաձայնությամբ այլ կարգ նախատեսելը վերաբերում է ոչ թե վերջնահաշվարկ կատարելու կամ չկատարելու կողմերի հայեցողությանը, այլ վերջնահաշվարկի կատարման կարգին, մասնավորապես՝ ժամկետին, քանի որ նույն մասով սահմանված է, որ աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողի հետ կատարել լրիվ վերջնահաշվարկ աշխատանքային **պայմանագրի լուծման օրը**: Գործատուն իր ներքին իրավական ակտերով իրավասու չէ սահմանափակելու աշխատողի՝ աշխատանքից ազատվելուց հետո վերջնահաշվարկ ստանալու անբակտելի իրավունքը:

Ավելին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հայտնել է դիրքորոշում առ այն, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլև նյութական միջոցը ձեռք բերելու լեզիտիմ ակնկալիքը<sup>46</sup>: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նշված դիրքորոշման լույսի ներքո գնահատելով բարձրացված խնդիրը՝ կարելի է փաստել, որ այն գործատուները, ովքեր աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելիս վերջնահաշվարկ չեն կատարում, խախտում են վերջինիս գույքային իրավունքները, այդ թվում՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքը:

2) 2018 թվականի ընթացքում ստացված ահազանգերով բազմաթիվ աշխատողներ բարձրացրել են աշխատանքից իրենց անհիմն ազատման խնդիրը՝ նշելով նաև, որ գործատուների կողմից ժամանակ առ ժամանակ հետապնդումների են ենթարկվել, ստացել են անհիմն նկատողություններ, երբեմն էլ գործատուների ճնշման հետևանքով աշխատանքից ազատման դիմումներ ներկայացրել:

Բողոքներից մեկով դիմողը, ով ուսուցչուհի է, տեղեկացրել է, որ դպրոցի տնօրենի ընտրության կապակցությամբ լարված հարաբերություններ են առաջացել դպրոցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի հետ, ով կարճ ժամանակահատվածում

<sup>46</sup> Sté u Spqոն ընդդեմ Խորվաթիայի (Trgo v. Croatia) գործով 2009 թվականի հունիսի 11-ի վճիռը, գանգատ թիվ 35298/04, կետ 44:

նկատողություններ է տվել դիմողին՝ նրան ազատելով աշխատանքից: Մարզպետարանի պարզաբանումների համաձայն՝ դպրոցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի՝ դիմողին աշխատանքից ազատելու մասին հրամանը մարզպետի որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել, և Պաշտպանի աջակցությամբ դիմողը վերականգնվել է նախկին աշխատանքում:

2018 թվականի ընթացքում ստացվել են նաև բողոքներ 2018 թվականի ապրիլ ամսին հանրապետությունում տեղի ունեցած իրադարձությունների շրջանակներում կազմակերպված երթերին և ցույցերին մասնակցելու համար քաղաքական դրդապատճառներով աշխատողներին կարգապահական պատասխանատվության ենթարկվելու վերաբերյալ: Կարգապահական տույժերը թեև տրվել են այլ ենթադրյալ խախտումների քողի տակ, այնուամենայնիվ, դրանց հիմքում դիմողները տեսնում են քաղաքական դրդապատճառներ (մասնավորապես՝ տեղի ունեցած երթերին և ցույցերին իրենց մասնակցությունը): Հաշվի առնելով, որ փաստացի առկա է աշխատանքային վեճ՝ դիմողներին ներկայացվել են իրենց խախտված աշխատանքային իրավունքները դատական կարգով իրացնելու հնարավորությունները:

Խնդիրն առավել նկատելի է եղել ուսումնական հաստատություններում: 2018 թվականի ապրիլ ամսին տեղի ունեցած իրադարձությունների շրջանակներում կազմակերպված երթերին և ցույցերին մասնակցության պատճառով հանրակրթական ուսումնական հաստատությունների աշխատակիցների նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառելու հարցով բողոքներ ստանալու կապակցությամբ ՀՀ կրթության տեսչական մարմնի պարզաբանումների համաձայն՝ նշված խնդրի կապակցությամբ ստացվել է ընդամենը երեք բողոք, որոնցից մեկը վերահասցեագրվել է ՀՀ ոստիկանությունը, մեկը՝ համապատասխան մարզպետարան, իսկ մյուսի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճվել է, քանի որ այդ դեպքի առթիվ արդեն իսկ հարուցված է եղել քրեական գործ:

Բողոքներով բարձրաձայնվել է նաև հաստիքների կրճատման հիմքով աշխատանքից ազատելիս կրճատվող հաստիքը զբաղեցնող աշխատակիցների միջև ընտրության չափանիշների բացակայության խնդիրը: Քաղաքացիների դժգոհությունն արդարև պայմանավորված է նրանով, որ հաստիքի կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվությունը որոշելիս գործատուն առաջնորդվում է սեփական հայեցողությամբ, ինչի հետևանքով լինում են դեպքեր, երբ աշխատանքից ազատվում է առավել երկար աշխատանքային ստաժ, առավել բարձր դասային աստիճան կամ կատարողականի գնահատման ավելի բարձր արդյունքներ ունեցող աշխատակիցը՝ տեղը զիջելով նվազ փորձառու աշխատակցի: Ուստի՝ անհրաժեշտ է հաստիքների կրճատման հիմքով աշխատողներին աշխատանքից ազատելու դեպքում սահմանել կրճատվող հաստիքը զբաղեցնող աշխատողների միջև ընտրության որոշակի չափանիշներ: Հարկ է նկատել, որ բողոքները վկայում են, որ հաստիքների կրճատումը շատ հաճախ «անցանկալի» աշխատողներից ազատվելու միջոց է գործատուների համար: Հետևաբար՝ հաստիքների կրճատման հիմքով աշխատողներին աշխատանքից ազատելու դեպքում կրճատվող հաստիքը զբաղեցնող աշխատողների միջև ընտրության որոշակի չափանիշներ սահմանելը մի կողմից լրացուցիչ երաշխիք կլինի առավել երկար աշխատանքային ստաժ, առավել բարձր դասային աստիճան կամ կատարողականի գնահատման ավելի բարձր արդյունքներ ունեցող աշխատակիցների համար, մյուս կողմից էլ նշված չափանիշներին չբավարարող աշխատակիցներին աշխատանքից ազատելիս նրանց նախապատվություն տալն արդարացված կլինի:

3) 2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքներում ներկայացված խնդիրների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ շարունակում է արդիական մնալ գործատուների կողմից սեփական նախաձեռնությամբ աշխատողներին աշխատանքից

ազատելիս ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածով սահմանված նախապես ծանուցման ժամկետների չպահպանման խնդիրը: Հարկ է նշել, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածը գործատուների համար սահմանում է սեփական նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելուց առաջ այդ մասին աշխատողներին կոնկրետ ժամկետներում ծանուցելու իմպերատիվ պահանջ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքով նախատեսված ժամկետները չպահպանելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողին վճարել տուժանք՝ ծանուցման յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար, որը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը: Բողոքների ընդհանուր ուսումնասիրությունը վկայում է, որ գործատուները ոչ պատշաճ ծանուցման դեպքում հրաժարվում են աշխատողներին վճարել անգամ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տուժանքը:

4) Բողոքների մի մասն էլ վերաբերել է ամենամյա արձակուրդի հաշվարկման և վճարման կարգին: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամենամյա արձակուրդն **աշխատանքային օրերով** հաշվարկվող ժամանակահատված է, որը տրամադրվում է աշխատողին հանգստանալու և աշխատունակությունը վերականգնելու համար, նույն օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ աշխատանքային օրենսդրության նորմերը պետք է մեկնաբանվեն դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների **տառացի** նշանակությամբ՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի պահանջները:

Օրինակ, ըստ Պաշտպանին հասցեագրված բողոքի, մարդն աշխատել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունում և 2015 թվականի փետրվարի 2-ից մինչև մարտի 3-ն ընկած ժամանակահատվածում (այսինքն՝ 30 օրացուցային օր) գտնվել է ամենամյա արձակուրդում: ՀՀ արդարադատության նախարարության պարզաբանումների համաձայն՝ դիմողի ամենամյա արձակուրդի ժամանակահատվածի հաշվարկը կատարվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 29-րդ հոդվածի 7-րդ մասով և մինչև 2017 թվականի դեկտեմբերի 16-ը գործող **«Ձինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին»** ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով սահմանված կարգով՝ **օրացուցային օրերով**: **«Ձինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին»** ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ ժամկետային զինձառայողներին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրվում է հերթական տարեկան արձակուրդ: Արձակուրդի տևողությունը մինչև 15 տարի ծառայած զինձառայողների համար կազմում է **30 օր**:

Վկայակոչված նորմում շեշտված չէ, որ ժամկետային զինձառայողների հերթական տարեկան արձակուրդը պետք է հաշվարկվի օրացուցային օրերով, հետևաբար առաջնորդվելով իրավական ակտի տառացի մեկնաբանման կանոններով՝ Պաշտպանն արձանագրել է, որ դիմողի 30 օր տևողությամբ ամենամյա արձակուրդը սկսվել է 2015 թվականի փետրվարի 2-ին և քանի որ հաշվարկվել է օրացուցային օրերով՝ ավարտվել է մարտի 3-ին, մինչդեռ *պետք է հաշվարկվեր աշխատանքային օրերով* և ավարտվեր 10 օր ու՛շ 2015 թվականի մարտի 13-ին: Նշված գործով Պաշտպանը կայացրել է «Մարդու իրավունքների և ազատությունների խախտման առկայության մասին» որոշում, որով ՀՀ արդարադատության նախարարությանն առաջարկվել է դիմողին հատուցել ամենամյա արձակուրդն աշխատանքային օրերով չհաշվարկելու համար վճարման ենթակա գումարը: Նախարարության պարզաբանումներում վկայակոչվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 29-րդ հոդվածի 7-րդ մասի կարգավորումը, որի համաձայն՝ օրերով հաշվարկվող ժամկետը հաշվարկվում է *օրացուցային օրերով*, եթե աշխատանքային օրենսդրությամբ կամ աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով **այլ բան նախատեսված չէ**:



Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ Նախարարության պարզաբանումներում վկայակոչված կարգավորումը վերաբերելի է ՀՀ աշխատանքային օրենսգրքի նորմերում տեղ գտած կարգավորումներին, այն կիրառելի չէ **«Զինժառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին»** ՀՀ օրենքի նկատմամբ, հետևաբար վերոնշյալ օրենսդրական վերլուծության արդյունքում եզրահանգում ենք, որ դիմողի ամենամյա արձակուրդի օրերի հաշվարկը կատարվել է օրենսդրության պահանջների խախտմամբ, ինչի պատճառով սխալ է կատարվել նաև ամենամյա արձակուրդի համար նախատեսված վճարի հաշվարկը, որպիսի փաստը ևս արձանագրվել է 2018 թվականին Պաշտպանի կայացրած «Մարդու իրավունքների և ազատությունների խախտման առկայության մասին» որոշմամբ:

5) Օրենսդրությամբ ժամանակավոր անաշխատունակության թերթիկը գործատուին ներկայացնելու ժամկետների և կարգի վերաբերյալ սահմանված ընթացակարգերի բացակայությունը ևս խնդրահարույց է: Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների հաշվարկման, նշանակման և վճարման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 1024-Ն որոշմամբ, որի հավելված 2-ի 7-րդ կետի համաձայն՝ վարձու աշխատողը նպաստի հաշվարկման և նշանակման համար գործատուին է ներկայացնում բժշկական հաստատության կողմից տրված անաշխատունակության թերթիկը: Նշված, ինչպես նաև ոլորտը կարգավորող օրենսդրության որևէ այլ նորմով սահմանված չեն ժամանակավոր անաշխատունակության թերթիկը գործատուին ներկայացնելու հստակ ժամկետներ կամ կարգ:

Առկա օրենսդրական բացի պատճառով՝ գործնականում առաջանում են բազմաթիվ խնդիրներ: Մասնավորապես, ժամանակավոր անաշխատունակության վիճակում գտնվելու առաջին իսկ օրվանից, երբ աշխատողն աշխատանքի չի ներկայանում, գործատուն հնարավորություն է ստանում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով նրան աշխատանքից ազատելու (գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու դեպքում)՝ չնայած ժամանակավոր անաշխատունակության վիճակում գտնվող աշխատողին աշխատանքից ազատելու օրենսդրական արգելքին (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ)՝ աշխատանքային պայմանագրի լուծումն արդարացնելով աշխատողի՝ ժամանակավոր անաշխատունակության վիճակում գտնվելու մասին տեղյակ չլինելու հանգամանքով:

Իրավացիորեն հետագայում գործատուին ժամանակավոր անաշխատունակության թերթիկի ներկայացումը հարգելի կդարձնի աշխատողի՝ ամբողջ աշխատանքային օրվա ընթացքում աշխատանքի չներկայանալը, սակայն չպետք է բացառել, որ դա գործատուի համար բավարար հիմք կհանդիսանա աշխատողին աշխատանքից ազատելու մասին հրամանն անվավեր ճանաչելու համար. ուստի այդժամ աշխատողը ստիպված է լինելու իր խախտված աշխատանքային իրավունքների պաշտպանությունն իրացնել դատական կարգով<sup>47</sup>:

<sup>47</sup> Դրական է գնահատվում 2018 թվականի ապրիլի 9-ին օրինական ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքով սահմանված այն կարգավորումը, ըստ որի՝ աշխատանքային վեճերն առաջին ատյանի դատարանում քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո 3 ամսվա ընթացքում:

Ժամանակավոր անաշխատունակության թերթիկը գործատուին ներկայացնելու սահմանված կարգի բացակայությունը խնդրահարույց է նաև նրանով, որ հստակեցված չէ, թե ինչ եղանակով պետք է գործատուն տեղեկանա աշխատողի՝ ժամանակավոր անաշխատունակության վիճակում գտնվելու մասին. գրավոր, բանավոր, հեռախոսազանգի միջոցով կամ որևէ այլ եղանակով: Ստեղծված իրավիճակը մյուս կողմից էլ ոտնահարում է այն գործատուի շահերը, ում աշխատակիցը չի ներկայանում աշխատանքի, իսկ գործատուն էլ տեղյակ չէ նրա գտնվելու վայրի մասին (աշխատողը գուցե ժամանակավոր անաշխատունակության վիճակում լինի, գուցե՝ ոչ): Նկարագրված իրավիճակները բացառելու նպատակով անհրաժեշտ է ժամանակավոր անաշխատունակության թերթիկը գործատուին ներկայացնելու ժամկետների և կարգի վերաբերյալ սահմանել օրենսդրական հստակ մեխանիզմներ՝ հիմքում ունենալով այն գաղափարը, որ ժամանակավոր անաշխատունակության վիճակում գտնվելու փաստով պայմանավորված աշխատողի աշխատանքի չներկայանալու դեպքում գործատուն չպետք է իրավունք ունենա նրան աշխատանքից ազատելու, և սա պետք է գործի իմպերատիվ կերպով:

6) Պաշտպանին հասցեագրված բողոքներով աշխատողները բարձրացրել են նաև առանց իրենց համաձայնության այլ աշխատանքի փոխադրելու հարցը: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ի թիվս այլնի՝ աշխատանքի էական պայման է աշխատանքի վայրը: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե աշխատանքի նախկին էական պայմանները չեն կարող պահպանվել, իսկ աշխատողը չի տվել իր գրավոր համաձայնությունն աշխատանքը նոր պայմաններում շարունակելու համար, ապա աշխատանքային պայմանագիրը լուծվում է նույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն: Նշված կարգավորումից հետևում է, որ առանց աշխատողի գրավոր համաձայնության չի թույլատրվում փոխել աշխատանքի էական պայմանները, այդ թվում՝ աշխատանքի վայրը:

Ըստ քննարկվող բողոքի՝ դիմողն աշխատել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային կազմակերպություններից մեկում, իսկ գործատուն առանց դիմողի համաձայնության՝ նրան տեղափոխել է այլ հաստիքում աշխատանքի: Պաշտպանի աջակցությամբ դիմողը վերականգնվել է իր նախկին աշխատանքում:

7) Օրենսդրությամբ կարգավորված չեն եղել ՀՀ քրեակատարողական ծառայության պետի հրամանով աշխատանքից ազատված քրեակատարողական ծառայողներին կադրերի ռեզերվում գրանցելու կարգն ու ժամկետները: «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեակատարողական ծառայության գլխավոր, առաջատար, միջին և քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի կրտսեր խմբի պաշտոններում նշանակում և պաշտոնից ազատում է *քրեակատարողական ծառայության պետը*, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի: 2018 թվականի օգոստոսի 21-ի խմբագրությամբ գործող ՀՀ արդարադատության նախարարի 2005 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ ՔՀ-60-Ն հրամանով սահմանված կարգի 5-րդ կետի համաձայն՝ կադրերի ռեզերվում գրանցումը կատարվում է «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-5-րդ կետերով նախատեսված որևէ հիմքով քրեակատարողական ծառայողին քրեակատարողական ծառայությունում զբաղեցրած *պաշտոնից ազատելու մասին ՀՀ արդարադատության նախարարի համապատասխան հրամանի արձակման օրվանից հնգօրյա ժամկետում*: Օրենսդրական նման կարգավորումից ենթադրվում է, որ ՀՀ արդարադատության նախարարի 2005 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ ՔՀ-60-Ն հրամանով սահմանված՝ կադրերի ռեզերվում գրանցելու կարգավորումները չեն տարածվում քրեակատարողական ծառայության այն աշխատողների վրա, ովքեր պաշտոնից ազատվում

են «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով, այն է՝ քրեակատարողական ծառայության պետի հրամանով:

Ըստ Պաշտպանին հասցեագրված բողոքի՝ քրեակատարողական ծառայողն աշխատանքից ազատվել է քրեակատարողական ծառայության պետի հրամանով, իսկ կադրերի ռեգերվում գրանցվել է աշխատանքից ազատվելուց 35 օր հետո, քանի որ այդ ընթացքում գտնվել է ամենամյա արձակուրդում: Բարձրացված խնդրի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարության պարզաբանումների համաձայն՝ քրեակատարողական ծառայության պետի հրամանով պաշտոնից ազատված քրեակատարողական ծառայողները ևս կադրերի ռեգերվում գրանցվում են ՀՀ արդարադատության նախարարի 2005 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ ՔՀ-60-Ն հրամանով սահմանված կարգով: Մինչդեռ պետք է փաստել, որ քրեակատարողական ծառայողներին կադրերի ռեգերվում գրանցելու հնգօրյա ժամկետը վերաբերում է միայն ՀՀ արդարադատության նախարարի հրամանով աշխատանքից ազատված ծառայողներին: Նշված խնդիրն արձանագրվել է Պաշտպանի «Մարդու իրավունքների և ազատությունների խախտման առկայության մասին» որոշմամբ, որով ՀՀ արդարադատության նախարարությանն առաջարկվել է միջոցներ ձեռնարկել բարձրացված օրենսդրական խնդրի կարգավորման կապակցությամբ:

ՀՀ արդարադատության նախարարի 2018 թվականի օգոստոսի 21-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2005 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ ՔՀ-60-Ն հրամանում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» թիվ 446-Ն հրամանով հավելված 1-ի 5-րդ կետում «արդարադատության նախարարի» բառերից հետո լրացվել են «կամ քրեակատարողական ծառայության պետի» բառերը, ինչի հետևանքով ստացվել է հետևյալ կարգավորումը. կադրերի ռեգերվում գրանցումը կատարվում է «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-5-րդ կետերով նախատեսված որևէ հիմքով քրեակատարողական ծառայողին քրեակատարողական ծառայությունում զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կամ քրեակատարողական ծառայության պետի համապատասխան հրամանի արձակման օրվանից հնգօրյա ժամկետում:

*Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝*

1. ՀՀ աշխատանքային օրենսգրքով հաստիքների կրճատման հիմքով աշխատողներին աշխատանքից ազատելու դեպքում կրճատվող հաստիքը զբաղեցնող աշխատողների միջև սահմանել ընտրության հստակ չափանիշներ,

2. օրենսդրությամբ հստակ ընթացակարգեր սահմանել ժամանակավոր անաշխատունակության թերթիկը գործատուին ներկայացնելու ժամկետների և կարգի վերաբերյալ:

### **3. Գործադուլի իրավունքի սահմանափակումը**

Ա. Դեռևս լուծում չի ստացել աշխատողների կողմից ոչ թե կոլեկտիվ աշխատանքային վեճի, այլ մեկ ուրիշ՝ սոցիալական, տնտեսական կամ այլ իրավունքների պաշտպանության համար գործադուլ իրականացնելու արգելքի օրենսդրական հարցը, որը տարիներ շարունակ բարձրացրել է Պաշտպանը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ գործադուլը կոլեկտիվ աշխատանքային վեճի լուծման նպատակով մեկ կամ մի քանի կազմակերպությունների աշխատողների կամ աշխատողների խմբի աշխատանքի լրիվ կամ մասնակի ժամանակավոր դադարեցումն է: Այսպիսով՝ գործադուլի հասկացությունը տվող

վերոնշյալ կարգավորման վերլուծության հետևանքով կարող են նշել, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանվում է աշխատողների գործադուլի իրավունքը, որը սահմանափակվում է կոլեկտիվ աշխատանքային վեճի առկայությամբ: Մինչդեռ, եթե աշխատողները ոչ թե կոլեկտիվ աշխատանքային վեճի, այլ մեկ ուրիշ՝ սոցիալական, տնտեսական կամ այլ իրավունքների պաշտպանության համար իրականացնեն գործադուլ, ապա վերջինիս իրականացումը կհամարվի անօրինական: Գործադուլի հասկացությունը տվող կարգավորման խնդրահարույց լինելու վերաբերյալ բարձրաձայնվել է Մարդու իրավունքների պաշտպանների նախորդ տարիներին հրապարակված զեկույցներում, սակայն, նշված խնդրի լուծման ուղղությամբ օրենսդրական որևէ նախաձեռնություն դեռևս չի իրականացվել:

Հարկ է նշել, որ գործող կարգավորումը և դրա կիրառմամբ ծավալվող պրակտիկան խնդրահարույց են ինչպես ՀՀ Սահմանադրության, այնպես էլ ՀՀ միջազգային պարտավորությունների տեսանկյունից<sup>48</sup>: ՀՀ Սահմանադրության 58-րդ հոդվածով սահմանվում է աշխատողների՝ իրենց տնտեսական, սոցիալական կամ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով գործադուլի իրավունքը: Ավելին, նույն հոդվածն ամրագրում է նաև, որ գործադուլի իրականացումը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով: Նշված հարցին է անդրադարձել Սահմանադրական դատարանը դեռևս 2007 թվականի փետրվարի 7-ի թիվ ՄԴՈ-677 որոշմամբ՝ աշխատողների գործադուլի իրավունքը մեկնաբանելիս՝ նշելով, որ վերջինս առնչվում է ոչ միայն «աշխատողներ-գործատու» իրավահարաբերություններին, այլև «աշխատողներ-երրորդ անձինք (հասարակություն)», «աշխատողներ-պետական մարմիններ», «գործատու-պետական մարմիններ» փոխհարաբերություններին<sup>49</sup>:

Տրամաբանությունն այն է, որ անձը պետք է գործադուլի իրավունք ունենա անգամ այն պարագայում, երբ առկա չէ կոլեկտիվ վեճ, այլ կերպ ասած, եթե մարդու բարձրացրած խնդիրը կապված չէ աշխատողի և գործատուի փոխհարաբերությունների հետ: 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին տեղի ունեցած բողոքի ակցիաների շրջանակներում բազմաթիվ աշխատողներ այդ ժամանակ գործող իշխանությունների դեմ իրենց բողոքի ձայնը լսելի դարձնելու համար հայտարարեցին գործադուլ, ինչի հիմքում, փաստացի չկար աշխատող-գործատու տիրույթի կոլեկտիվ աշխատանքային վեճ:

Ելնելով վերոգրյալից՝ հարկ է նշել, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքում աշխատողների գործադուլի անցկացման իրավունքն ընդլայնելու (գործադուլի անցկացման հնարավորության ընձեռում նաև կոլեկտիվ աշխատանքային վեճի բացակայության պայմաններում) ուղղությամբ օրենսդրական փոփոխություններ 2018 թվականին չեն իրականացվել:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք մշակել և ընդունել գործադուլի իրականացման ավելի լայն կարգ սահմանող օրենքի նախագիծ:*

Բ. Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմումներում բարձրացվում է գործադուլի կազմակերպման իրավունքի իրացման հնարավորության սահմանափակման հարցը՝ կապված օրենսդրությամբ նախատեսված պատշաճ ընթացակարգերի բացակայության հետ: Մասնավորապես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործադուլ հայտարարելու մասին որոշում ընդունելու իրավունք ունի

<sup>48</sup> Տե՛ս «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր», հոդված 8, Վերանայված էվրոպական սոցիալական խարտիա, մաս 2, հոդված 6:

արհեստակցական միությունը: Նույն հոդվածի 1.1-րդ մասի համաձայն՝ կազմակերպությունում արհեստակցական միության բացակայության դեպքում գործադուլ հայտարարելու գործառույթները կազմակերպության աշխատողների ժողովի (համաժողովի) որոշմամբ փոխանցվում են համապատասխան ճյուղային կամ տարածքային արհեստակցական միությանը: Օրենսդրական նման կարգավորումը գործնականում որոշակի դժվարություններ է առաջացնում հատկապես այն կազմակերպությունների համար, որոնցում բացակայում է արհեստակցական միությունը:

«Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա» արհեստակցական կազմակերպությունների հանրապետական միությունից ստացված պարզաբանումների համաձայն՝ այն կազմակերպություններում, որտեղ չկան արհեստակցական միություններ, այդ թվում նաև հանրակրթական ուսումնական հաստատություններում, աշխատողների ժողովի (համաժողովի) որոշմամբ գործադուլ հայտարարելու մասին գործառույթները համապատասխան ճյուղային կամ տարածքային արհեստակցական կազմակերպություններին փոխանցելու վերաբերյալ որոշում 2018 թվականի ընթացքում չի կայացվել: Չնայած նրան, որ որոշ հանրակրթական ուսումնական հաստատություններում գործող արհեստակցական կազմակերպություններ **բանավոր** խնդրանքով դիմել են ՀՀ կրթության և գիտության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության օգնությանն իրենց մոտ գործադուլ հայտարարելու գործընթացին օժանդակելու համար, գործադուլը տեղի չի ունեցել, քանի որ չի ապահովվել աշխատողների երկու երրորդի կողմից արհեստակցական կազմակերպության որոշումը հավանության արժանանալու վերաբերյալ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 74-րդ հոդվածով սահմանված պահանջը:

Հարկ է նկատել, որ գործադուլ հայտարարելու համար ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատողների ընդհանուր թվի երկու երրորդի համաձայնության պահանջը գործնականում հնարավորություն չի տալիս իրացնելու ՀՀ սահմանադրության 58-րդ հոդվածով սահմանված գործադուլի իրավունքը: Այդ իրավունքի իրացմանն էլ ավելի է խոչընդոտում կազմակերպությունների՝ արհեստակցական միություն չունենալը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է մշակել և ընդունել գործադուլի իրականացման ավելի լայն կարգ սահմանող օրենքի նախագիծ, որը թույլ կտա գործադուլ իրականացնել ոչ թե աշխատողների ընդհանուր թվի երկու երրորդի, այլ (օրինակ) մեկ երրորդի համաձայնությամբ:*

#### **4. Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության բավարար չափանիշների բացակայություն**

Համակարգային առումով լուծում չի ստացել հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների ընտրության հարցում հստակ մեխանիզմների ներդրման հարցը, որը բարձրացվել է Պաշտպանի կողմից դեռևս 2017 թվականից:

Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատվել է ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» թիվ 319-Ն որոշմամբ: Նշված որոշման կապակցությամբ առաջացող ընթացակարգային խնդիրների վերաբերյալ արդեն իսկ բարձրաձայնվել է Մարդու իրավունքների պաշտպանի հաղորդման շրջանակներում, սակայն պետք է փաստել, որ այս հարցը դեռևս շարունակում է մնալ չլուծված:

Վիճահարույց կարգավորումը հանգում է նրան, որ հավելվածի 28-րդ կետի համաձայն՝ եթե մրցույթին մասնակցելու համար դիմել է մեկ հավակնորդ և մրցույթում հաղթող չի

ճանաչվել, ապա կրկնակի քվեարկություն չի անցկացվում և, սույն կարգի համաձայն, հայտարարվում է նոր մրցույթ: Եթե հավակնորդների թիվը մեկից ավելի է, ապա՝ հավակնորդների թիվը 2 լինելու և տնօրեն չընտրվելու դեպքում կրկնակի քվեարկություն չի անցկացվում, և խորհուրդը երեք աշխատանքային օրվա ընթացքում մարզային ենթակայության ուսումնական հաստատությունների դեպքում ՀՀ փոխվարչապետին, ՀՀ կրթության և գիտության նախարարության, Երևանի քաղաքապետարանի ենթակայության ուսումնական հաստատությունների դեպքում համապատասխան լիազորված պետական մարմին է ներկայացնում խորհրդի նիստի արձանագրության և տնօրենի պաշտոնի հավակնորդների անձնական գործերի պատճենները:

Հավելվածի 28.1 կետի համաձայն՝ 28-րդ կետերով նախատեսված դեպքերում ներկայացված փաստաթղթերի հիման վրա, 5 աշխատանքային օրվա ընթացքում, հաստատության՝ մարզային ենթակայության դեպքում ՀՀ փոխվարչապետը լիազոր մարմնի ղեկավարին գրությամբ առաջարկում է հավակնորդներից որևէ մեկի թեկնածությունը՝ օրենքով սահմանված կարգով աշխատանքային պայմանագիր կնքելու համար: ՀՀ կրթության և գիտության նախարարության, Երևանի քաղաքապետարանի ենթակայության ուսումնական հաստատությունների դեպքում հավակնորդին ընտրում և օրենքով սահմանված կարգով աշխատանքային պայմանագիր են կնքում համապատասխան լիազոր մարմինները: Ընտրության արդյունքների մասին լիազոր մարմինը գրությամբ տեղեկացնում է հաստատության խորհրդին՝ հավակնորդներին պատշաճ կերպով տեղյակ պահելու համար: Վերը նշված կարգավորումների ուսումնասիրությամբ հարկ է փաստել, որ բաց է մնում ՀՀ փոխվարչապետի կողմից հավակնորդներից որևէ մեկի թեկնածությունն առաջարկելու չափորոշիչների և համապատասխան չափանիշների վերաբերյալ հարցը:

Նշվածն, անկասկած, խնդրահարույց է տնօրենի ընտրության համար անցկացվող մրցույթի բնույթի և նպատակայնության տեսանկյունից, քանի որ ներկայացված կարգավորումների լույսի ներքո պարզ չէ, թե մրցույթի մասնակիցներին առաջնայնությունն ինչ չափանիշների հիման վրա է տրվում:

Ինչ վերաբերում է ոլորտը կարգավորող իրավասու պետական մարմնի՝ Կրթության և գիտության նախարարության կողմից նշված խնդրի լուծմանն ուղղված քայլերի իրականացմանը, հարկ է նշել, որ ստացված տվյալները փաստում են հետևյալի մասին: Ըստ նախարարության տվյալների՝ 2018 թվականի վերջին եռամսյակի ընթացքում կազմվել է օրենսդրական փոփոխությունների նախագիծ, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման հավելվածով հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգ»-ը շարադրվել է նոր խմբագրությամբ: Բացի այդ, նշված փոփոխությամբ պայմանավորված՝ անհրաժեշտության էր առաջացել փոփոխություններ և լրացումներ կատարել նաև ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման հավելված N 3-ով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունում և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի 113-Ն հրամանի հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգ»-ում: Սակայն հարկ է նշել, որ 2018 թվականի ընթացքում վերը նշված օրենսդրական փոփոխությունների փաթեթը չի ներկայացվել շահագրգիռ գերատեսչությունների քննարկմանը և չի դրվել հանրային քննարկման: Թեև վերը նշված ձեռնարկված քայլերի, այնուամենայնիվ, պետք է փաստել, որ 2018 թվականի ընթացքում սույն հարցը դեռևս շարունակել է մնալ խնդրահարույց:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ներկայացված նախագծում սահմանել պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության հստակ չափանիշներ՝ հավակնորդներից որևէ մեկի թեկնածության առաջարկման և ըստ այդմ տնօրենի համապատասխան թեկնածուին ընտրելու համար, ինչպես նաև հնարավորինս սեղմ ժամկետներում ընդունել փոփոխությունների նախագիծը:*

**5. Ոստիկանության ծառայողի նախաձեռնությամբ ոստիկանությունում ծառայությունից ազատվելու և նոր աշխատանքի անցնելու հնարավորության սահմանափակում**

Համակարգային առումով 2018 թվականին շարունակվել է չլուծված մնալ դեռևս 2017 թվականից Պաշտպանի բարձրաձայնած ոստիկանության ծառայողի նախաձեռնությամբ ոստիկանությունում ծառայությունից ազատվելու և նոր պաշտոնի նշանակվելու հնարավորության սահմանափակման խնդիրը:

«ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 16.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոստիկանության ծառայողը, որի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում, մինչև քրեական հետապնդումը դադարեցնելը չի կարող նշանակվել նոր պաշտոնի, իր նախաձեռնությամբ ազատվել ոստիկանությունում ծառայությունից: «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսվում են ոստիկանության ծառայողի նկատմամբ կիրառվող վարձատրությամբ կատարվող աշխատանքի սահմանափակումներն: Ընդ որում՝ օրենքի 39-րդ հոդվածի իրավակարգավորումների վերլուծության արդյունքում ստացվում է, որ ոստիկանության ծառայողն այլ աշխատանք չի կարող կատարել, բացի՝ գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքը:

«Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի և «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 16.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոստիկանության ծառայողն իր նկատմամբ քրեական հետապնդում իրականացվելու դեպքում և ոստիկանությունում իր ծառայությունները կասեցվելու պարագայում միաժամանակ զրկված է լինում թե՛ սեփական նախաձեռնությամբ ոստիկանությունում ծառայությունից ազատվելու հնարավորությունից, թե՛ այլ պաշտոնի նշանակվելու կամ գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից բացի այլ աշխատանք կատարելու հնարավորությունից:

Ավելին, «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգով ոստիկանության ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում իրականացվելիս լիազորությունների ժամանակավորապես կասեցման պարագայում վերջինիս աշխատավարձը վճարվում է մինչև երկու ամսվա համար, իսկ մնացած վճարումը կատարվում է գործի՝ արդարացնող հիմքով ավարտի դեպքում:

Հիմք ընդունելով վերը նշված օրենքների իրավակարգավորումները՝ դրանց բովանդակային և համադիր վերլուծությամբ կարող ենք փաստել, որ ստեղծվում է մի իրավիճակ, երբ ոստիկանության ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու դեպքում վերջինս ստանում է աշխատավարձ ոչ թե ծառայությունների ժամանակավոր կասեցման ամբողջ ժամանակահատվածի, այլ միայն այդ ժամանակահատվածի մի մասի համար՝ այդ ընթացքում զրկված լինելով ոստիկանությունում ծառայությունից ազատվելու և այլ աշխատանք կատարելու միջոցով ապրուստի միջոց վաստակելու հնարավորությունից: Ներկայացվածը խոչընդոտ է առաջացնում անձի՝ Սահմանադրությամբ ամրագրված աշխատանքի ազատ ընտրության իրավունքի իրագործման համար:

Այսպես, աշխատանքի ազատ ընտրության և աշխատանքային իրավունքները հիմնարար իրավունքներ են, որոնք ամրագրված են ՀՀ Սահմանադրության 57-րդ և 82-րդ հոդվածներով: ՀՀ սահմանադրական դատարանը 2009 թվականի փետրվարի 29-ի թիվ ՄԴՈ-792 որոշմամբ արձանագրել է, որ աշխատանքի ընտրության ազատությունը պայմանավորված է, նախ՝ աշխատանքային հարաբերությունների հաստատման ու դադարման երկկողմ ազատ կամահայտնության ապահովման օրենսդրական հստակ երաշխիքների առկայությամբ, որոնք նաև անհրաժեշտ են ՀՀ Սահմանադրության ինչպես 32 հոդվածում (1-ին մաս) նախատեսված անձի իրավունքի իրացման, այնպես էլ 8 հոդվածում (2-րդ մաս) ամրագրված սկզբունքին համապատասխան տնտեսավարման շուկայական հարաբերությունների ազատ ու բազմակողմ զարգացման համար:

Աշխատանքային պայմանագրի, որպես երկկողմ իրավունքներով ու պարտականություններով պայմանավորված համաձայնության (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 83 հոդված), բովանդակությունից է անմիջականորեն բխում, ինչպես աշխատողի, այնպես էլ գործատուի նախաձեռնությամբ այն լուծելու իրավական հնարավորությունը (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109 հոդվածի 3-րդ, 4-րդ կետեր): Աշխատանքային պայմանագիրը կնքվում է ազատ կամահայտնությամբ, հետևաբար, կողմերը պետք է ազատ լինեն այն լուծելու ցանկություն դրսևորելու հարցում:

Անդրադառնալով աշխատանքի ազատ, անխտրական ընտրության և այդ իրավունքի իրացման միջազգային փորձին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ներպետական իրավակիրառական պրակտիկայում աշխատանքի նկատմամբ որևէ (այդ թվում՝ տարիքային) խտրականությունը, զբաղվածության ազատության ոչ իրավաչափ սահմանափակումները համատեղելի չեն իրավական, ժողովրդավարական, սոցիալական պետության հիմնարար սկզբունքների հետ:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 16.1-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսել այնպիսի կարգավորումներ, որոնք թույլ կտան ոստիկանության ծառայողներին օգտվել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված աշխատանքի ազատ ընտրության հնարավորությունից:*



#### ԳԼՈՒԽ 4. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Կրթության իրավունքն անձի հիմնական իրավունքներից է և ամրագրված է թե՛ ՀՀ Սահմանադրությամբ, թե՛ ՀՀ կողմից վավերացված մի շարք միջազգային փաստաթղթերով: ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածով սահմանվել է կրթության իրավունքը՝ որպես անձի հիմնական իրավունք, իսկ 15-րդ հոդվածով ամրագրվել է, որ պետությունը խթանում է կրթության և գիտության զարգացումն: Կրթության իրավունքն ամրագրված է նաև ՀՀ կողմից վավերացված մի շարք միջազգային պայմանագրերով՝ ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության «Կրթության բնագավառում խտրականության դեմ» կոնվենցիայով, «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի միջազգային կոնվենցիայով, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» ՄԱԿ-ի դաշնագրով և այլն:

Ոլորտի ուսումնասիրությունները վկայում են, որ դեռևս առկա են համակարգային խնդիրներ, որոնք խոչընդոտում են կրթության իրավունքի լիարժեք իրացումը:

#### *1. Կրթության իրավունքը նախադպրոցական կրթական հաստատություններում*

2018 թվականին շարունակվել է համակարգային առումով չլուծված մնալ նախադպրոցական կրթական հաստատությունների հասանելիության խնդիրը, որի մասին մշտապես բարձրացվել է ՀՀ մարդու իրավունքների հաղորդումներում և զեկույցներում:

Երեխայի զարգացման առաջին տարիները կարևոր են երեխայի սոցիալականացման և հետագա բնականոն զարգացման համար, ուստի՝ նախադպրոցական ուսումնական հաստատությունը վաղ հասակում երեխայի կրթության իրավունքի իրականացման կարևոր ինստիտուտ է: Խնդրի վերաբերյալ պետք է ընդգծել նաև ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների 4-րդ նպատակը, որի համաձայն՝ բոլոր աղջիկները և տղաները պետք է ունենան որակյալ վաղ մանկության զարգացում, խնամք և նախադպրոցական կրթություն, որպեսզի նրանք պատրաստ լինեն նախնական կրթության<sup>50</sup>: Մինչդեռ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների վերլուծությունը թույլ է տվել վերհանել մի քանի համակարգային խնդիր, որոնք խոչընդոտ են երեխայի՝ նախադպրոցական ուսումնական հաստատություն հաճախելուն:

Խնդիրներից մեկն այն է, որ Երևանում և որոշ մարզերում նախադպրոցական ուսումնական հաստատությունների գերծանրաբեռնվածության պատճառով երեխայի տարիքը լրանալուն պես հնարավոր չի լինում կազմակերպել վերջինիս կրթությունն: Ավելին, ներկայացվել են նաև մի շարք բողոքներ առ այն, որ ոչ բոլոր մանկապարտեզներն ունեն վաղ տարիքի երեխաների համար նախատեսված խմբեր, ինչի պարագայում մինչև երեխայի 3 տարին լրանալը հնարավոր չի լինում կազմակերպել երեխայի կրթությունը նախադպրոցական ուսումնական հաստատությունում: Խնդիրն այն է նաև, որ կան համայնքներ, որոնք նախադպրոցական ուսումնական հաստատություններ ընդհանրապես առկա չեն:

Օրինակ՝ ՀՀ Արարատի մարզի Այգեպատ համայնքում բնակիչների կողմից բարձրացվել է այն խնդիրը, որ մանկապարտեզի բացակայության պատճառով իրենց միակ հնարավորությունը երեխաներին հարևան Այգեգարդ գյուղի մանկապարտեզ տանելն է, սակայն գործնականում դա դառնում է անհնար, քանի որ իրենց բերվում է պատճառաբանություն այն մասին, որ այդտեղ ազատ տեղերը բացակայում են, մյուս կողմից՝

<sup>50</sup> ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներ, 4.1 նպատակ, անգլերեն՝ Sustainable Development Goals (SDG) Goal 4.1

ծնողները լրջագույն բարդություններ են ունենում այլ վայրի մանկապարտեզ երեխաներին տանելու հարցում՝ կապված ծախսերի ու ճանապարհների հետ: Պաշտպանի կատարած այցի ընթացքում պարզվել է նաև, որ նախատեսվող մանկապարտեզի շենքը գտնվում է կիսակառույց վիճակում, մինչ օրս կատարվել են միայն հիմքային հատվածի կառուցման աշխատանքներ:

Վիճակագրական տվյալները վկայում են թե՛ նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների ներգրավվածության ցածր մակարդակի, թե՛ վաղ խմբերի անբավարարության մասին: Այսպես, 2017 թվականին ՀՀ-ում գործել է 868 համայնքային, գերատեսչական և ոչ պետական նախադպրոցական հաստատություն (ՆԴՀ), որոնցից 666-ը՝ մանկապարտեզ և միայն 67-ը՝ մտուր-մանկապարտեզ, 135-ը՝ դպրոց-մանկապարտեզ<sup>51</sup>: Տվյալների վերլուծությունը վկայում է, որ երեխաների ընդգրկվածությունը հատկապես ցածր է մարզերում: Այսպես, երեխաների ընդգրկվածությունը ՆԴՀ-ներում 0-5 տարեկան բնակչության թվաքանակից ընդհանուր կազմել է 30.9% (քաղաքներում՝ 36.6%, գյուղերում՝ 20.6%), իսկ 0-2 տարեկան բնակչության 4.8%, 3-5 տարեկան բնակչության՝ 56.4%<sup>52</sup>:

Պետական իրավասու մարմինների ներկայացրած տվյալները ևս վկայում են հատկապես վաղ տարիքի երեխաների խմբերի անբավարարության մասին: Այսպես, Երևանի քաղաքապետարանի հայտնած տեղեկությունների համաձայն՝ 2018 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ մանկապարտեզներում հաշվառված է շուրջ 29704 և հերթագրված է շուրջ 7337 երեխա: Ըստ Երևանի քաղաքապետարանի տվյալների՝ 2018-2019 թվականների ուսումնական տարում Երևան քաղաքում գործում է թվով 160 մանկապարտեզ, որտեղ առկա է 77 վաղ տարիքի՝ մինչև 3 տարեկան երեխաների խումբ, 568՝ կրտսեր տարիքի երեխաների խումբ և 302 ավագ տարիքի խումբ: Համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների վերաբերյալ տվյալները վկայում են, որ պատկերը գրեթե նույնն է նաև մարզերում: Այսպես՝ Գեղարքունիքի մարզում վաղ տարիքի 250 երեխա է կրթություն ստանում, ի տարբերություն, օրինակ, կրտսեր խմբերի, որտեղ երեխաների թիվը 1896 է: Լոռու մարզում վաղ տարիքի կրթություն ստացող երեխաների թիվը 1167 է, մինչդեռ կրտսեր խմբերում՝ 1967-ն է, իսկ օրինակ՝ ավագ խմբերում՝ 1858: Շիրակի մարզում կրթություն է ստանում վաղ տարիքի 251 երեխա, իսկ կրտսեր տարիքի երեխաների թիվը 2797 է: Իսկ Վայոց ձորում վաղ տարիքի նախադպրոցական ուսումնական հաստատություն կրթություն ստացող երեխաներ առհասարակ չկան:

Նշյալ տվյալներից ևս ակնհայտ է դառնում, որ անհամեմատ փոքր է կրտսեր տարիքի երեխաների խմբերի քանակը: Մինչև երեխայի 3 տարին լրանալը վերջինիս կրթությունը կազմակերպել հաճախ հնարավոր չի լինում: Երևանի քաղաքապետարանը որոշ դեպքերում որպես այլընտրանք ծնողներին առաջարկել է երեխայի կրթությունը կազմակերպել ծնողի բնակության և աշխատանքի վայրից հեռու գտնվող նախադպրոցական ուսումնական հաստատություն, ինչն էլ իր հերթին հավելյալ բարդություններ է ստեղծում և որոշ դեպքերում անհնար դարձնում երեխայի կրթությունը մինչև 3 տարեկան լրանալը:

Հերթագրման հետ կապված խնդիրները, ըստ էության, պայմանավորված են նախակրթության ոլորտում առկա օրենսդրական թերի և ոչ միասնական կարգավորումներով, մասնավորապես՝ նախակրթական ուսումնական հաստատություն ընդունման միասնական կարգի բացակայությամբ: Այսպես, որևէ կենտրոնական մարմնի կողմից հաստատված չէ ՀՀ-ում նախնական ուսումնական հաստատություն ընդունման կարգը: Փոխարենը՝ յուրաքանչյուր համայնք ինքնուրույն է կարգավորում այդ խնդիրն:

<sup>51</sup> Տե՛ս [https://www.armstat.am/file/article/poverty\\_2018\\_a\\_4.pdf](https://www.armstat.am/file/article/poverty_2018_a_4.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>52</sup> Տե՛ս [https://www.armstat.am/file/article/poverty\\_2018\\_a\\_4.pdf](https://www.armstat.am/file/article/poverty_2018_a_4.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Ավելին, Երևանի քաղաքապետարանի պատասխանների վերլուծությունը վկայում է, որ 2015 թվականից գործածվող էլեկտրոնային համակարգի ամբողջական մշտադիտարկում և գնահատում չի իրականացվել: Այսպես, հարցմանն, առ այն, թե ի՞նչ տվյալներ են առկա 2015 թվականի նոյեմբերի 1-ից գործարկված քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզներում երեխաների հերթագրման և հաճախելիության հաշվառման էլեկտրոնային համակարգի արդյունքների վերաբերյալ 2018 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ, քաղաքապետարանից ներկայացվել է պատասխան, որ համակարգի գործածման հետևանքով կարգավորվել է երեխաների հաշվառման գործընթացը:

Մեկ այլ խնդիր արձանագրվել է դեռևս 2016 թվականից, որը 2018 թվականին ևս շարունակում է համակարգային առումով չլուծված մնալ: Մի շարք դեպքերում նախադպրոցական կրթություն իրականացնող հաստատություններում ավարտական հանդեսից հետո երեխաներին արգելում են հաճախել հաստատություն, չնայած նրա, որ որևէ իրավական ակտով նման արգելք նախատեսված չէ: Քաղաքապետարանի տեղեկացմամբ այս հարցը կքննարկվի առաջիկայում:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. ավելացնել նախադպրոցական ուսումնական հաստատությունների թիվը, հատկապես մինչև 3 տարեկան երեխաների նախադպրոցական կրթությունն ապահովելու համար,*

*2. ներդնել միասնական կենտրոնացված համակարգ և նախատեսել հստակ օրենսդրական կարգավորումներ երեխաների՝ նախակրթական ուսումնական հաստատություն ընդունման համար:*

***2. Կրթության իրավունքի իրականացման խոչընդոտ հանդիսացող համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների վճարովիության հարցը***

Պաշտպանին հասցեագրված բողոքներով բարձրացվել է նաև մարզային նախադպրոցական հաստատությունների վճարովի լինելու հարցը: Այսպես, ի տարբերություն Երևան քաղաքի, որտեղ նախադպրոցական կրթությունն անվճար է, մարզերում կրթությունը կատարվում է վճարովի: Ավելին, Երևանում հաշվառում չունեցող երեխաների համար ևս Երևանում նախադպրոցական կրթությունը վճարովի է:

Հաճախ վարձավճարների տրամադրման անհնարինության պատճառով մի շարք դեպքերում հնարավոր չի լինում երեխայի կրթությունը կազմակերպել նախադպրոցական ուսումնական հաստատությունում, որի վերաբերյալ 2018 թվականին Պաշտպանը ստացել է մի շարք ահազանգեր:

Այսպես, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում քաղաքապետը կազմակերպում է Երևանի ենթակայության դպրոցների, մանկապարտեզների գործունեությունը, դրանց շահագործման և նորոգման աշխատանքները: 2016 թվականի մարտի 4-ի թիվ 706-Ա որոշմամբ հաստատվել է «Երևանի քաղաքապետի 2011 թվականի մարտի 31-ի N 1101-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշումը, որի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Երևանի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխայի նախադպրոցական կրթությունն իրականացվում է անվճար, այդ թվում, եթե երեխայի ծնողները կամ ծնողներից մեկը կամ նրա օրինական ներկայացուցիչները կամ օրինական ներկայացուցիչներից մեկը մշտապես կամ փաստացի հաշվառված են Երևան քաղաքում:

Սակայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության դպրոցների, մանկապարտեզների, ակումբների, մշակույթի տների, երիտասարդական կենտրոնների, գրադարանների, կրթական, մշակութային և երիտասարդական այլ հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը, դրանց շահագործման և նորոգման աշխատանքները: Վերջինիս հետևանքով յուրաքանչյուր համայնք սահմանում է տարբեր վճարների չափեր նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար:

Տարբեր մարզերից ստացված տվյալները վկայում են, որ համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններն անվճար դարձնելու ուղղությամբ 2018 թվականին քայլեր չեն ձեռնարկվել մի շարք մարզերում: 2018 թվականին համայնքային ենթակայության տակ գտնվող նախադպրոցական ուսումնական հաստատություններն անվճար դարձնելու ուղղությամբ քայլեր չեն ձեռնարկվել Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի ու Տավուշի մարզերում: Իսկ օրինակ՝ Վայոց ձորի մարզում այդ ուղղությամբ իրականացվել են քննարկումներ, և պարզվել է, որ համայնքները դեռևս չունեն բավարար ֆինանսական միջոցներ նախադպրոցական ուսումնական հաստատություններն անվճար դարձնելու համար:

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ երեխաների անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներից է (ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 6-րդ կետ): Իսկ նախադպրոցական կրթության ոլորտում պետական քաղաքականության խնդիրներն են՝ նախադպրոցական կրթության զարգացմանն աջակցելը, պետական կրթական չափորոշիչների շրջանակներում նախադպրոցական կրթության ծրագրերում ընդգրկվածության ավելացումը, երեխայի կյանքի, առողջության պահպանմանը և ամրապնդմանը, ներդաշնակ ու համակողմանի զարգացմանը, ուսուցմանն ու դաստիարակությանը նպաստելը («Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված): Ուստի, ոլորտը պետք է հատուկ ուշադրության կենտրոնում լինի, և մշտական և պարբերական քայլեր պետք է ձեռնարկվեն նախադպրոցական կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար մատչելի և հասանելի դարձնելու ուղղությամբ:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է հատկացնել հավելյալ ֆինանսական միջոցներ՝ ապահովելու անվճար նախադպրոցական կրթություն Երևանում և մարզերում բոլոր երեխաների համար:*

### ***3. Կրթության իրավունքի իրացումը հանրակրթական ուսումնական հաստատություն երեխային ընդունելիս***

2018 թվականին շարունակվում է արդիական մնալ օրենսդրական թերի կարգավորումների հետևանքով երեխաների՝ իրենց բնակության վայրին մոտ հանրակրթական ուսումնական հաստատություն ընդունվելու անհնարինության հարցը: Հանրակրթական ուսումնական հաստատություններ ընդունելության ընթացակարգերի ուսումնասիրության արդյունքում բարձրացվել է երեխաների կրթության իրավունքի իրացումը սահմանափակող համակարգային խնդիր:

Այսպես, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 1640 հրամանի հավելվածի 2-րդ կետի համաձայն՝ ընդունելությունը դպրոցում, որպես կանոն, կազմակերպվում է երկու փուլով՝ տվյալ տարվա հունիսի 1-ից մինչև 30-ը և օգոստոսի 1-ից մինչև օգոստոսի 31-ը ներառյալ, իսկ նույն հավելվածի 14-րդ կետը

սահմանում է երեխային (սովորողին) դպրոց ընդունելու կամ տեղափոխելու դեպքում ծնողի կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկը: Մակայն իրավական ակտերի ուսումնասիրության ցույց են տալիս, որ ընդունելության ընթացակարգի վերաբերյալ որոշումների կայացման հստակ ընթացակարգեր սահմանված չեն. սահմանված չեն որոշումների կայացման ժամկետներ, չկան դպրոցի ընդունելության համար ծնողի կողմից անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու համար դպրոցի տնօրենի կողմից ծնողների իրազեկման վերաբերյալ սահմանված կանոնակարգեր:

Ավելին, 2017 թվականին բողոքների քննարկման արդյունքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը կայացրել է մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշում, որտեղ առաջարկվել է քննարկել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 1640 հրամանով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգում համապատասխան փոփոխություններ կատարելու հարցը: 2017 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից նախաձեռնվել է համապատասխան հրամանում փոփոխություններ կատարելու մասին հրամանի նախագծի մշակումը, սակայն անհրաժեշտ է ընդգծել, որ սույն հաղորդման ներկայացման դրությամբ նախագիծը չի ներկայացվել քննարկման և չի ընդունվել:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. ընդունել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 1640 հրամանի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հրամանը կամ այլ իրավական ակտերով սահմանել հանրակրթական ուսումնական հաստատություններում ընդունելության հստակ և միասնական ընթացակարգեր,*

*2. ապահովել հանրակրթական ուսումնական հաստատություններում ընդունելության ընթացակարգերի պահանջների կատարումը:*

#### **4. Հանրակրթական ուսումնական հաստատություններում դասագրքերի օգտագործման համար ներդրումային գումարների գանձումը**

2018 թվականին շարունակում է արդիական մնալ հանրակրթական ուսումնական հաստատություններում դասագրքերի օգտագործման դիմաց ներդրումային գումարների գանձման խնդիրը:

Ոլորտի իրավական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների առաջինից չորրորդ դասարանների աշակերտներին պետությունը պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար ապահովում է տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերով, իսկ այլ դասարանների աշակերտների դասագրքերի համար սովորողների ծնողների (օրինական՝ ներկայացուցիչների) կողմից դասագրքերի օգտագործման դիմաց վճարվում են ներդրումային գումարներ, որոնց չափը հաստատվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2009 թվականի օգոստոսի 21-ի «Հանրակրթական ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու, հանրակրթական առարկաների դասագրքերը հրատարակելու և հանրակրթության պետական չափորոշչին դասագրքերի համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման կարգը հաստատելու մասին» № 752-Ն հրամանի (սույն հաղորդման սույն բաժնում այսուհետ՝ Հրաման) հավելվածի 5-րդ կետի: Ընդ որում, այդ ներդրումային գումարների վճարումը դասագրքերի տրամադրման համար պարտադիր պայման է:

Ավելին, ներդրումային վճարների վերաբերյալ խոցելի խմբերի երեխաների դասագրքերի համար որևէ բացառություն նախատեսված չէ: ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերի հաշվարկման, պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում կատարվող վերաբաշխումների կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 25-ի N 773 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1262-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ բոլոր պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների, ըստ աշակերտների թվի, ֆինանսավորման իրականացման բանաձևը, որում ներառված է նաև սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարի համար փոխհատուցվող գումարի չափը: Ըստ այդմ՝ հանրակրթական ուսումնական հաստատության սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների ցուցակը քննարկվում և ձևավորվում է հաստատության մանկավարժական և ծնողական խորհուրդների համատեղ նիստում, որը հաստատվում է տնօրենի կողմից:

Սակայն իրավական ակտերով նախատեսված չեն այն հստակ չափանիշները, սկզբունքները և փաստերը, որոնց հաշվառմամբ պետք է ընտրվեն ծրագրի շահառու երեխաները: Նշված չափանիշների բացակայությունը լայն հայեցողություն է տալիս գործող իրավական ակտերը կիրառողներին՝ գործնականում առաջացնելով զգալի խնդիրներ: Ներկայիս թերի կարգավորումների պատճառով երեխաների սոցիալական կարիքների գնահատումը փաստորեն իրականացվում է երկակի չափորոշիչների հիման վրա, որոնք հենված են սուբյեկտիվ մոտեցումների վրա: Սա անընդունելի է և պարունակու են նաև կոռուպցիոն ռիսկեր:

Բացի լայն հայեցողության խնդրից՝ հաճախ երեխաները կամ նրանց ընտանիքները խուսափում են այդ արտոնությունից չօգտվելու մասին բարձրաձայնելուց, քանի որ հաճախ այս իրավիճակը հանգեցնում է խտրական վերաբերմունքի, նույնիսկ ուսումնական հաստատության անձնակազմի կողմից: Ավելին, նման իրավիճակում, երբ բացակայում են հստակ կողմնորոշիչ չափանիշներ, սոցիալական նույնանման պայմաններում ապրող երեխաները խտրականության են ենթարկվում, քանի որ մնան պարագայում ստացվում է, որ ներդրումային գումարների գանձումը տարբեր կերպ է իրականացվում հանրապետության տարբեր բնակավայրերում:

Անվճար միջնակարգ կրթության իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածով, որի համաձայն՝ պետությունը խթանում է կրթության և գիտության զարգացումն: Ավելին, ՀՀ Սահմանադրության՝ անձի հիմնարար իրավունքներն ամրագրող 2-րդ գլխի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է:

Ճանաչելով անվճար միջնակարգ կրթության իրավունքը և այդ իրավունքի իրացման համար անհրաժեշտ, դրա բաղկացուցիչ մասը կազմող դասագրքերի համար նախատեսվելով վճար՝ օրենսդրական որևէ տարանջատում չկա խոցելի խմբերի երեխաներին դասագրքերով ապահովելու վերաբերյալ: Ավելին, դասագրքերով սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ապահովելու առկա ծրագրային միջոցների իրականացմամբ ավելանում է առանձին խումբ երեխաների առանձնացումը տարիքակիցներից և խոցելիությունը՝ հանգեցնելով խտրական վերաբերմունքի: Խնդրի առնչությամբ պետք է նշել, որ ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներից է, ի թիվս այլնի, ապահովել կրթության բոլոր մակարդակներում ապահովել կրթության հավասար հասանելիությունը խոցելի խմբերի

անձանց, մասնավորապես, հաշմանդամություն ունեցող մարդկանց, համայնքաբնակ (indigenous) անձանց և խոցելի վիճակում գտնվող երեխաների համար<sup>53</sup>:

Խնդրի կապակցությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2017 թվականին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան, որի արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը 2018 թվականի հունիսի 12-ի ՄԴՈ 1419 որոշմամբ հայտնել է, որ պետությունը պարտավոր է երաշխավորել սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների համար դասագրքերի հասանելիությունն ապահովող բավարար որոշակի, թափանցիկ և հավասարության վրա հիմնված ընթացակարգեր: Ավելին, սահմանադրական դատարանը ևս ընդգծել է սոցիալապես անապահով ընտանիքի սովորողներին դասագրքերի անվճար հասանելիությունն ապահովելու կարգը, իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերը և կառուցակարգերը սահմանելու անհրաժեշտությունը: Մասնավորապես՝ ՀՀ սահմանադրական դատարանը դիրքորոշում է հայտնել, որ «Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում» ծրագրի շրջանակներում փոխհատուցման կարգը խնդրահարույց է դասագրքերի հասանելիությունը երաշխավորելու առումով առնվազն երկու պատճառով: Նախ՝ նշված կարգը չի հստակեցնում ընտանիքի՝ «սոցիալապես անապահով» կարգավիճակ ձեռքբերելու և այդ կարգավիճակով պայմանավորված՝ դասագրքերն անվճար կամ էականորեն նվազեցված գնով հասանելիությունն ապահովելու հստակ ընթացակարգեր: Երկրորդ՝ մարդու հիմնական իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերը և կառուցակարգերը՝ տվյալ դեպքում սոցիալապես անապահով ընտանիքի սովորողներին դասագրքերի անվճար հասանելիությունն ապահովելու կարգը, պետք է ամրագրվեն օրենքով և ի կատարումն այդ օրենքի ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով:

Հարցի կապակցությամբ դեռևս 2018 թվականի սեպտեմբերի 19-ին ՀՀ կրթության և գիտության նախարարության տեղեկացրել են, որ հիմք ընդունելով Սահմանադրական դատարանի 2018 թվականի հունիսի 12-ի ՄԴՈ-1419 որոշմամբ ներկայացված դիրքորոշումները՝ նախարարությունը մշակում է և շրջանառության մեջ կդնի սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում տրամադրելու և չափանիշներ սահմանելու վերաբերյալ կարգ, որով կերաշխավորվեն սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների համար դասագրքերի հասանելիությունն ապահովող որոշակի, թափանցիկ և հավասարության վրա հիմնված ընթացակարգեր:

Սակայն անհրաժեշտ է ընդգծել, որ 2019 թվականի մարտի 1-ի դրությամբ Սահմանադրական դատարանի դեռևս 2018 թվականի հունիսի 12-ին հայտնած դիրքորոշումների համաձայն 2018 թվականի ամբողջ ընթացքում և սույն տարեկան հաղորդման պատրաստման ընթացքում նախագիծը չի մշակվել և չի շրջանառվել:

*Ուստի, անհրաժեշտ է հստակ չափանիշներ ամրագրել խոցելի ընտանիքների կողմից դասագրքերի ներդրումային գումարների վճարման աջակցության տրամադրման համար՝ ապահովելով ՀՀ սահմանադրական դատարանի 2018 թվականի հունիսի 12-ի ՄԴՈ 1419 որոշման կատարումը:*

### ***5. Կրթության իրավունքի սահմանափակումը՝ կրթությունից դուրս մնալու հետևանքով***

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաղորդումներում և զեկույցներում մշտապես անդրադարձ է կատարվել կրթությունից դուրս մնացած երեխաների հարցին, որը 2018

<sup>53</sup> ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներ, 4.5 նպատակ, անգլերեն՝ Sustainable Development Goals (SDG) Goal 4.5

թվականին համակարգային առումով դեռևս լուծում չի ստացել: Խնդրին անդրադարձ է կատարվել նաև «Հայաստանի Հանրապետության կողմից Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ» 2018 թվականի Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցում:

Երեխաների՝ կրթությունից դուրս մնալու պատճառները տարբեր են, ինչպես օրինակ՝ ոչ բավարար սոցիալական պայմանները, երեխայի հաշմանդամությունը, երեխաների բացակայություններին իրավասու անձանց ոչ պատշաճ արձագանքը, երեխաներին աշխատանքի մեջ ներգրավելը, իսկ առանձին էթնիկ խմբերի դեպքում անգամ երեխաների վաղ ամուսնությունը:

Խնդիրն այն է, որ «Կրթությունից դուրս մնացած երեխա» հասկացությունը որևէ իրավական ակտով ամրագրված չէ, ինչն ինքնին առաջացնում է նաև այլ խնդիրներ: Օրենսդրական այս բացի արդյունքում բարդանում է նաև կրթությունից դուրս մնացած երեխաների վերաբերյալ հստակ և միասնական վիճակագրական տվյալների հավաքագրումը, որն էլ խոչընդոտ է խնդրի լուծմանն ուղղված արդյունավետ քայլերի իրականացման համար: Ավելին, ուսումնասիրությունները վկայում են, որ առ այսօր հանրապետական ուսումնական հաստատություններից դուրս մնացած երեխաներին հետևելու և ուղղորդելու գործող համակարգ ներդրված չէ<sup>54</sup>:

Չնայած ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից համակարգի ներդրման նպատակով մշակվել և դեռևս 2017 թվականին «e-draft.am» իրավական ակտերի հրապարակման միասնական կայքում շրջանառվել է ՀՀ կառավարության «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման, հաշվառման և ուղղորդման կարգը հաստատելու մասին» որոշման նախագիծը, սակայն առ այսօր նախագիծը չի ընդունվել, և խնդիրը շարունակում է չլուծված մնալ:

Այսպես, «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի 2018 թվականի զեկույցի համաձայն՝ 2017-2018 ուսումնական տարվա սկզբին Հայաստանում հանրակրթությունից դուրս է մնացել 274 երեխա<sup>55</sup>: Նույն զեկույցի համաձայն՝ դպրոցներում աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 85.7%, ընդ որում, տարրական դպրոցում այն կազմել է 91.3%, հիմնական դպրոցում՝ 90.1%, ավագ դպրոցում՝ 65.5%: Աշակերտների զուտ ընդգրկվածության ցուցանիշը տարրական դպրոցում կազմել է 89.4%, հիմնական դպրոցում՝ 88.9%: Աշակերտների «ճշգրտված զուտ ընդգրկվածության» ցուցանիշը տարրական դպրոցում կազմել է 89.5%, հիմնական դպրոցում՝ 89.2%: Սեռային հավասարության ցուցանիշը կազմել է 1.03, ընդ որում, տարրական դպրոցում այն կազմել է 1.00, հիմնական դպրոցում՝ 1.01, ավագ դպրոցում՝ 1.17<sup>56</sup>:

Նշված զեկույցի համաձայն՝ հանրակրթական դպրոցներից ուսումն անավարտ թողած աշակերտների թվաքանակն 2017/2018 ուսումնական տարվա սկզբին ամենաբարձր կազմել է Արագածոտնի մարզում՝ 63 աշակերտ, Երևան քաղաքում՝ 46 աշակերտ և Արմավիրի մարզում՝ 45 աշակերտ: Աշակերտների՝ ուսումն անավարտ թողնելու պատճառները տարբեր են, սակայն ըստ զեկույցի՝ սոցիալ-տնտեսական վատ պայմանների պատճառով ամենաշատ թվաքանակով աշակերտներն են դուրս մնում կրթությունից:

«Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» ՀՀ ազգային վիճակագրական ծառայության 2018 թվականի զեկույցի համաձայն՝ սոցիալ-տնտեսական վատ պայմանները

<sup>54</sup> Տե՛ս <http://www.unicef.am/am/articles/education>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>55</sup> Տե՛ս [http://www.armstat.am/file/article/poverty\\_2017\\_a\\_4.pdf](http://www.armstat.am/file/article/poverty_2017_a_4.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>56</sup> Տե՛ս [https://www.armstat.am/file/article/poverty\\_2018\\_a\\_4.pdf](https://www.armstat.am/file/article/poverty_2018_a_4.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):



կրթության իրավունքի իրականացման խոչընդոտման հիմնական պատճառն է, քանի որ կրթությունից դուրս մնացած 274 երեխայից 179 դուրս է մնացել հենց այդ պատճառով<sup>57</sup>:

Վաղ տարիքում աշխատելն արգելք է հանդիսանում երեխայի կրթության իրավունքի իրականացման համար հատկապես մարզերում: Այսպես, «Երեխաների կարծիքով...» համազգային հարցման համաձայն՝ Հայաստանի որոշ մարզերում երեխաները դասերից բացակայում են հենց նման պատճառաբանությամբ: Այսպես, աշխատանքում ներգրավված լինելու պատճառով դպրոց հաճախել չկարողացող աշակերտների ամենամեծ տոկոսները գրանցվել են Գեղարքունիքի (26%), Տավուշի (19%) և Վայոց Ձորի (15%) մարզերում<sup>58</sup>:

Կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերմանը, հստակ վիճակագրության վարմանը և խնդրի լուծմանն ուղղված քայլերի ձեռնարկմանը խոչընդոտում է նաև հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում հաշվառված և իրապես հանրակրթական ուսումնական հաստատություն հաճախող երեխաների թվի անհամապատասխանությունը: Վերջինս պայմանավորված է նրանով, որ ուսումնական հաստատությունների պետական ֆինանսավորումը պայմանավորված է երեխաների թվով, այդ է պատճառը, որ ուսուցիչները հաճախ աշակերտների բացակայություններին հետևողական չեն լինում կամ օբյեկտիվորեն չեն գրանցում<sup>59</sup>: Նույն խնդիրն առկա է նաև ներառական և հատուկ դպրոցներում, հատկապես հաշվի առնելով այն, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար դպրոցը ստանում է 3-4 անգամ ավել ֆինանսավորում, քան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաների համար<sup>60</sup>: Խնդրին անդրադարձ է կատարվել նաև Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեն իր եզրափակիչ դիտարկումներում<sup>61</sup>:

ՀՀ կրթության և գիտության նախարարության 2017 թվականի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ ԿԳՆ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման շրջանակներում ստեղծել է «Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների հաշվառման» ենթահամակարգ: Ավելին, խնդրի ուղղությամբ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից մշակվել է «Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Սակայն համաձայն նախարարության տեղեկության՝ նախագիծը չի հաստատվել կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենքներով համապատասխան լիազորող նորմ սահմանված չլինելու պատճառով: Նախարարությունը նախաձեռնել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի մշակման աշխատանքներ: Նախարարության տեղեկությունների համաձայն՝ լիազորող նորմի ընդունումից հետո կառավարության հաստատմանը կներկայացվի «Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, ինչի

<sup>57</sup> Տե՛ս [https://www.armstat.am/file/article/poverty\\_2018\\_a\\_4.pdf](https://www.armstat.am/file/article/poverty_2018_a_4.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>58</sup> Տե՛ս

[https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/YV\\_brief%20version\\_Final%20\\_%20arm.pdf](https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/YV_brief%20version_Final%20_%20arm.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>59</sup> Տե՛ս Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծություն. Հայաստան,

<https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/book-arm.pdf>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>60</sup> Տե՛ս Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծություն. Հայաստան,

<https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/book-arm.pdf>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>61</sup> Տե՛ս ՄԱԿ-ի՝ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի՝ Հայաստանի 5-6-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, 2016 թվականի նոյեմբերի 18, կետ 22 և 36:

<http://www.refworld.org/pdfid/583863b34.pdf>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

ընդունումից հետո ամբողջ ծավալով կգործարկվի կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման և արագ արձագանքման էլեկտրոնային համակարգը: Նախարարության պնդմամբ նշված համակարգը թույլ կտա հայտնաբերել ոչ միայն ուսումն անավարտ թողած, այլ ընդհանրապես կրթությունից դուրս մնացած երեխաներին: Սակայն անգամ այս պարագայում, 2018 թվականի ընթացքում ևս չեն ընդունվել նշված օրենսդրական փոփոխությունները, որոնք նախարարության պնդմամբ հենց ուղղված են տարիներ շարունակ չլուծվող այս խնդրի կարգավորմանը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. օրենսդրորեն ամրագրել «կրթությունից դուրս մնացած երեխա» հասկացությունը՝ նախատեսելով հստակ չափանիշներ, որոնցով հնարավոր կլինի գնահատել երեխայի կարգավիճակը,*

*2. վարել միասնական և տարանջատված վիճակագրություն կրթությունից դուրս մնացած երեխաների թվի, կրթությունից դուրս մնալու պատճառների վերաբերյալ,*

*3. ձեռնարկել քայլեր նման դեպքերը կանխելու համար: Այսպիսի քայլեր կարող են լինել՝*

*- աջակցությունը սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին՝ բնակության վայրից հեռու գտնվող ուսումնական հաստատություններ հասնելու գործում,*

*- հաշմանդամության հիմքով կրթությունից դուրս մնալու բացառումը՝ ապահովելով կրթական ծրագրերի և հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների մատչելիությունը:*

## **6. Ներառական և հատուկ կրթական ուսումնական հաստատություններում դասագրքերի հասանելիությունը**

Տարիներ շարունակ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրաձայնվել է հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության իրավունքի իրացման հարցում առկա խնդիրների մասին: Պաշտպանին ուղղված բազմաթիվ բողոքներով 2018 թվականին ևս ներկայացվել է երեխայի կրթության իրավունքի իրականացման սահմանափակման մասին, ինչն առաջացել է ներառական կրթություն իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքերի և ֆիզիկական միջավայրի անմատչելիության, ինչպես նաև հանրակրթական և հատուկ դպրոցներում հատուկ դասագրքերի սղության կամ առհասարակ բացակայության վերաբերյալ: Հարցը հատկապես խնդրահարույց է ներառական կրթություն իրականացնող դպրոցներում տեսողության և մտավոր խնդիրներ ունեցող երեխաների համար անհրաժեշտ բավարար դասագրքերի պարագայում:

Դեռևս 2017 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացվել է Բրայլյան համակարգով և խոսող դասագրքերի ցանկի ուսումնասիրություն, որի արդյունքները ևս վկայում են դասագրքերի մատչելիության խնդրի առկայության մասին: Խնդիրն այն է, որ որոշ դեպքերում դրանց միայն առկայությունն է ապահովված, քանի որ դասագրքերը ծրագրային առումով հին են:

Ի պատասխան 2018 թվականի ընթացքում ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում հատուկ կարիքներ ունեցող անձանց համար ուսուցչի օգնականի, ընթերցողի, ուղեկցողի, ժեստերի լեզվի թարգմանչի ծառայությունների մատուցում, ինչպես նաև ուսուցման գործընթացում հատուկ կարիքներ ունեցող անձանց համապատասխան սարքավորումներով և գրականությամբ ապահովմանն ուղղված քայլերի ձեռնարկման՝ նախարարությունից հայտնել են, որ 2018 թվականի ընթացքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար ձեռք է բերվել Բրայլյան համակարգով գրելու համար տետրեր (2000 հատ):

Ներառական կրթության անցումը հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության մաս է կազմում, ինչն ամրագրված է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում, որի 4-րդ հոդվածի 2.1 մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի իրականացումը, վերջինիս մատչելիությունը երաշխավորված է, ինչպես ներպետական, այնպես էլ՝ միջազգային փաստաթղթերով: Ավելին, պետությունը ստանձնել է ներառական և որակյալ կրթությանն առնչվող մի շարք պարտավորություններ: ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեն 2017 թվականի պարբերական զեկույցում հայտնել է, որ չնայած ներառական կրթության աճող միտմանը, մտահոգիչ են հաշմանդամություն ունեցող երեխաների համար հանրակրթական դպրոցների մատչելիության և խելամիտ հարմարեցումների, ինչպես նաև վարչական և ուսումնական կազմի ներառական կրթության մասին ոչ բավարար աջակցությունը և դասընթացների բացակայությունը, ինչպես նաև ներառական կրթությունը քաղաքային և համայնքային բնակավայրերում խթանող համապարփակ ռազմավարության բացակայության փաստով<sup>62</sup>:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի Հայաստանի 3-4-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ 2013 թվականի եզրափակիչ դիտարկումներում նշվում է, որ պետությունը պետք է շարունակի հաշմանդամություն ունեցող երեխաներին հիմնական կրթական համակարգում ներառմանն ուղղված իր ջանքերը, որն իրականացնելիս առանձին ուշադրության պետք է արժանանան հատուկ ուսումնական հաստատություններում ընդգրկված և մարզային շրջանների հաշմանդամություն ունեցող երեխաները:

Խնդրի առնչությամբ պետք է նշել, որ ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներից է նաև ապահովել կրթության բոլոր մակարդակներում ապահովել կրթության հավասար հասանելիությունը խոցելի խմբերի անձանց, մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց, համայնքաբնակ անձանց և խոցելի վիճակում գտնվող երեխաների համար, ինչպես նաև նպատակ է հետապնդել կառուցել և բարելավել կրթական հաստատությունները, որոնք երեխաների, հաշմանդամություն ունեցող մարդկանց և գենդերային զգայունություն ունեն և պետք է ապահովել անվտանգ, բռնությունից զերծ, ներառական և արդյունավետ կրթական միջավայրեր բոլորի համար<sup>63</sup>: Այսպես, 2014 թվականին ««Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ պետությունը որդեգրել է ներառական կրթության մատչելիության պետական քաղաքականություն, որն ուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը: Այն ենթադրում է ներառական կրթության և յուրաքանչյուրի համար կրթության մատչելիության ապահովմանն ուղղված մի շարք քայլերի ձեռնարկում: Սակայն խնդրի ուսումնասիրության արդյունքում կարելի է փաստել, որ չնայած ձեռնարկված քայլերի, այնուամենայնիվ, դրանք ևս գործնականում խնդիրներ են առաջացնում:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

<sup>62</sup>Տե՛ս

<http://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=6QkG1d%2fPPRiCAqhKb7yhspZQ2sppBOANJSxHHwrsEJbjcpUWkg%2bMkKIITZvW7JK%2buYWfpBtdMIEVnF0fSZiwodb8OBMgU4q3E3dlH%2fYkMw%2fe0juigiYWKOfVF6vzhs77>, 41-րդ պարբերություն, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>63</sup> ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներ, 4.5 և 4.a նպատակներ, անգլերեն՝ Sustainable Development Goals (SDG) 4.5 and 4.a Goals

1. ապահովել մատչելի դասագրքերի անհրաժեշտ քանակ ամբողջ հանրապետության ներառական, ինչպես նաև հատուկ կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում,

2. ավելացնել ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերին համապատասխան մատչելի դասագրքերի տպագրության ֆինանսավորումը:

**7. Կրթության իրավունքի իրացման սահմանափակումներ հանրակրթական ուսումնական հաստատություններում դրամահավաքի և այլ անօրինական գործողությունների պատճառով**

2018 թվականին շարունակել են արձանագրվել ուսումնական հաստատություններում անօրինական դրամահավաքի, ինչպես նաև ուսումնաստնօրինական կազմի իրավասությունների չարաշահման դեպքեր, որոնց վերաբերյալ ահազանգեր է ստացել նաև Մարդու իրավունքների պաշտպանը:

Համապատասխան ահազանգեր ստացել են նաև իրավասու պետական մարմինները: Այսպես, 2018 թվականին կրթության և գիտության նախարարության «Թեժ գիծ» հեռախոսակապով ստացվել է 288 բողոք-ահազանգ: Ստացված 288 ահազանգերից 260-ը վերաբերվել է հանրակրթական խնդիրներին, որոնցից 99-ը վերաբերվել են դպրոցներում իրականացվող անօրինական դրամահավաքներին, 64-ը՝ դպրոցի տնօրենի անօրինական գործողություններին, 50-ը՝ ուսուցչի դեմ, 4-ը՝ դպրոցի ջեռուցմանը վերաբերող հարց, 43-ը՝ այլ հարցեր (դասագրքեր, շենքային պայմաններ, ավարտական քննություններ և այլն): Ստացված բոլոր ահազանգերին սահմանված կարգով տրվել է համապատասխան ընթացք:

Առերևույթ հանցակազմի առկայության վերաբերյալ փաստարկներ պարունակող բոլոր դիմումներն ընթացք տալու համար հասցեագրվել են իրավապահ մարմիններ:

ՀՀ կրթության տեսչական մարմնում 2018 թվականին ևս ստացվել են ահազանգեր՝ թվով 354 դիմում- բողոքներ (ներառյալ՝ թեժ գիծն): Առաջին կիսամյակում ստացվել է 132, երկրորդ կիսամյակում՝ 222 դիմում բողոքներ: Ստացված դիմումներից 296-ը վերաբերում են դպրոցներին, 24-ը՝ մանկապարտեզներին, 6-ը՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություններին, 16-ը՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին, 12-ը՝ այլ բնույթի: Ընդ որում, այդ ահազանգերը, ի թիվս այլնի, վերաբերել են դպրոցում, մանկապարտեզում և քոլեջում տնօրենի կողմից թույլ տրված անօրինականություններին, վատ, անարդյունավետ աշխատանքին, դրամահավաքությանն:

2015-2018 թվականների հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի կրթության ոլորտի հատվածում առկա է «Կրթության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի համապարփակ ուսումնասիրություն» ընդգրկուն ձևակերպմամբ միջոցառումը, որը պետք է իրականացվեր Ռազմավարության գործողության առաջին տարվա՝ 2015 թվականի ընթացքում, իսկ 2016-2018 թվականների համար նախատեսված է կոռուպցիոն ռիսկերի ուսումնասիրության հիման վրա կրթության ոլորտում հակակոռուպցիոն ծրագրի մշակում և իրականացում: Հարկ է նշել, որ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թեպետ Կրթության և գիտության նախարարության կողմից 2016 թվականի ընթացքում մշակվել, շրջանառվել է կրթության ոլորտում հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի նախագիծը, սակայն այն 2019 թվականի մարտի 1-ի դրությամբ չի ընդունվել<sup>64</sup>:

Ավելին, 2018 թվականին շրջանառվել է «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի» նախագիծը, որի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ

<sup>64</sup> Տե՛ս <https://transparency.am/files/publications/1489693195-0-123422.pdf>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

առանձին կրթության ոլորտում կոռուպցիայի կանխարգելման և բացառման համար գործողություններ նախատեսված չեն<sup>65</sup>:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

- 1. մանրամասն ուսումնասիրել նման դեպքերի առաջացման հիմքերը և պատճառները.*
- 2. ուժեղացնել և թիրախավորել դպրոցներում անօրինականության, ներառյալ ցանկացած պատրվակով դրամահավաքության դեպքերի հայտնաբերման, կանխարգելման և սանկցավորման մեխանիզմները,*
- 3. ՀՀ ընտրական օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ արգելելով հանրակրթական ուսումնական հաստատությունների աշխատողներին մասնակցել նախընտրական քարոզչությանը կամ որևէ կերպ օգտագործել նրանց վարչական ռեսուրսն այս գործընթացում (այդ թվում՝ իրենց լիազորություններն իրականացնելուց դուրս):*

**8. Կրթության իրավունքի իրացման սահմանափակումները՝ կապված նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային և գույքային պայմանների, ինչպես նաև ջեռուցման հետ**

Հանրապետության որոշ կրթական ուսումնական հաստատություններում առկա շենքային և գույքային անբավարար պայմանների, ինչպես նաև ջեռուցման հետ կապված մի շարք խնդիրների հետևանքով կրթության իրավունքի սահմանափակումը շարունակում է մնալ խնդրահարույց: Խնդրի մասին մշտապես բարձրաձայնվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի թե՛ տարեկան զեկույցներում ու հաղորդումներում, թե՛ հատուկ զեկույցներում:

Նշված խնդրի վերաբերյալ 2018 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացվել են բողոքներ, ինչպես նաև այդ մասին են բարձրաձայնել մի շարք ուսումնական հաստատությունների աշակերտներ՝ Պաշտպանի ներկայացուցիչների հետ զրույցներում: Ավելին, հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության վերաբերյալ մշտադիտարկման ընթացքում նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններ կատարած այցերի ժամանակ նշված խնդիրը նաև արձանագրվել է Պաշտպանի ներկայացուցիչների կողմից: Խնդիրն այն է, որ մի շարք դեպքերում դպրոցների շենքերի վթարայնություն է հատկապես խնդրահարույց, ինչն անմիջական վտանգներ է ստեղծում երեխաների կյանքի և առողջության համար, իսկ մի շարք դեպքերում էլ դպրոցներում որոշ ենթակառուցվածքների բացակայությունը խոչընդոտում է կրթական ծրագրի լիարժեք իրականացմանը: Օրինակ՝ ոչ բավարար դասասենյակների առկայությունը կամ մարզական դահլիճի անբարեկարգ վիճակը և այլն:

Ուսումնական հաստատություններում շենքային անբավարար պայմաններից զատ կան նաև ջեռուցման, ջրամատակարարման, ջրահեռացման և այլ խնդիրներ: Այս խնդիրները ոչ միայն խոչընդոտում են դասապրոցեսի բնականոն ընթացքին կազմակերպումը և երեխայի կրթության իրավունքի իրականացմանը, այլև վտանգավոր են երեխայի առողջության, անվտանգության և զարգացման համար:

Այսպես, համաձայն Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը» 2017 թվականի տարեկան զեկույցի տվյալների՝ 2017-2018 թվականների ուսումնական տարում Հայաստանում գործող 1421 դպրոցներից միայն 928-ն (65%) ունեն բավարար շենքային պայմաններ: 330 դպրոցներ կարիք ունեն հիմնանորոգման, իսկ 163- դպրոց՝ ընթացիկ նորոգման<sup>66</sup>: Ավելին, ըստ առկա

<sup>65</sup>Տե՛ս <https://www.e-draft.am/projects/1439>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>66</sup> Տե՛ս [https://www.armstat.am/file/article/soc\\_vich\\_2017\\_2.pdf](https://www.armstat.am/file/article/soc_vich_2017_2.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

տվյալների՝ Հայաստանի 425 դպրոցներ սեյսմիկ անվտանգության բարելավման կարիք ունեն: Այդ դպրոցներից շուրջ 60-ը 3-րդ, 4-րդ կարգի վթարային են<sup>67</sup>:

Ըստ ՀՀ տարածքային կառավարման նախարարության տեղեկությունների՝ 2018 թվականի ընթացքում ահազանգ է ստացվել ՀՀ Արմավիրի մարզի Մրգաշատի N 1, Մրգաշատի N 2, Արաքսի և Հուշակերտի միջնակարգ դպրոցների սանհանգույցների վատթար վիճակի վերաբերյալ, որի լուծման նպատակով դպրոցների սանհանգույցները վերանորոգվել են: ՀՀ Գեղարքունիքի մարզի Ակունքի միջնակարգ դպրոցում դասընթացի խաթարման պատճառով դասերը 2 շաբաթ տեղափոխվել է գարնանային արձակուրդի և շաբաթ օրերին: Նույն տեղեկության համաձայն՝ դասընթացը խաթարվել են նաև ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում ջեռուցման համակարգի խաթարման պատճառով, որը հետագայում վերանորոգվել է:

Վերոնշյալ խնդիրների լուծման ուղղությամբ դեռևս 2015 թվականին ՀՀ կառավարության թիվ 797-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագիրը»: Որոշումը փոփոխվել է 2018 թվականին: Ծրագրի շրջանակում նախատեսված է 46 դպրոցների ուժեղացում կամ նորերի կառուցում<sup>68</sup>: 2018 թվականի դեկտեմբերի 13-ի դրությամբ շինարարություն է իրականացվել Վանաձորի թիվ 7 հիմնական դպրոցում, Երևանի թիվ 135 և 153 հիմնական դպրոցներում, Կապանի թիվ 7 հիմնական դպրոցում, Նոր Խարբերդի թիվ 1 միջնակարգ դպրոցում և Գավառի թիվ 2 միջնակարգ դպրոցում: Հաստատված 20 դպրոցից 5-ի նախագծանախահաշվային փաստաթղթերը մշակվել են և գտնվում են փորձաքննության փուլում (Երևանի թիվ 6, 18 և 51 դպրոցներ, Հերացու անվան ավագ դպրոց, Կոջոյանի անվան թիվ 15 կրթահամալիր)<sup>69</sup>:

Ծրագրի շրջանակներում առավելագույն սեյսմիկ խոցելիություն ունեցող 26 դպրոցների ցանկը հաստատելու և ընթացիկ աշխատանքները մշտադիտարկելու նպատակով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի հուլիսի 9-ի թիվ 193-Ա հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման, ՀՀ արտակարգ իրավիճակների, ՀՀ կրթության և գիտության նախարարությունների, Քաղաքաշինության կոմիտեի, Տարածքային զարգացման հիմնադրամի համապատասխան մասնագետների ընդգրկմամբ<sup>70</sup>:

ՀՀ մարզպետարաններից ներկայացված թվով 70 ամենառիսկային դպրոցների ցանկից աշխատանքային խմբի կողմից տեղում կատարված ուսումնասիրությունների արդյունքներով ընտրվել են «Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի» շրջանակներում կառուցվելիք կամ ամրացվելիք 26 դպրոց<sup>71</sup>:

Սակայն ուսումնական հաստատությունների մշտադիտարկման արդյունքների համադրված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ձեռնարկված քայլերը բավարար չեն, քանի որ հանրապետության հատկապես համայնքային մի շարք պետական ուսումնական հաստատությունների շենքային և գույքային պայմանները բավարար չեն դասընթացի բնականոն կարգի իրականացման համար, ինչը հանգեցնում է երեխայի կրթության իրավունքի իրականացման սահմանափակման:

<sup>67</sup>Տե՛ս <https://www.azatutyun.am/a/27221091.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>68</sup> Տե՛ս 2018 թվականի դեկտեմբեր 13-ի ՀՀ կառավարության նիստի օրակարգի 25-րդ հարցի հիմնավորումները <https://www.e-gov.am/sessions/archive/2018/12/13/>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>69</sup> Տե՛ս 2018 թվականի դեկտեմբեր 13-ի ՀՀ կառավարության նիստի օրակարգի 25-րդ հարցի հիմնավորումները <https://www.e-gov.am/sessions/archive/2018/12/13/>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>70</sup> Տե՛ս 2018 թվականի դեկտեմբեր 13-ի ՀՀ կառավարության նիստի օրակարգի 25-րդ հարցի հիմնավորումները <https://www.e-gov.am/sessions/archive/2018/12/13/>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>71</sup> Տե՛ս 2018 թվականի դեկտեմբեր 13-ի ՀՀ կառավարության նիստի օրակարգի 25-րդ հարցի հիմնավորումները <https://www.e-gov.am/sessions/archive/2018/12/13/>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Շարունակում է խնդրահարույց մնալ նաև հանրակրթական ուսումնական հաստատություններում ջեռուցման ապահովումը, որի վերաբերյալ 2018 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ևս ստացել է ահազանգեր: Տարիներ շարունակ ընդունված սովորությանին ուժով դպրոցը ջեռուցելը սկսվում է նոյեմբերի 15-ից, ինչը սակայն օրենսդրությամբ պարտադիր պահանջ չէ: Այսպես, ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 12-Ն հրամանի համաձայն՝ դասարաններում, ուսումնական կաբինետներում, դասախոսությունների լսարանում, գրադարանում, բուժկետում (բժշկի կաբինետ), մարզադահլիճի հանդերձարաններում, լաբորատորիաներում, խմբակային պարապմունքների սենյակներում, հանդիսությունների դահլիճում ապահովվում է օդի առնվազն 18-22 աստիճան ցելսիուս, իսկ ուսումնական արհեստանոցներում, նախասրահում, հանդերձարանում և ռեկրեացիաներում ցուրտ եղանակային պայմաններում՝ առնվազն 18-20 աստիճան ցելսիուս, իսկ մարզադահլիճում՝ 17-19 աստիճան ցելսիուս: ՀՀ առողջապահության նախարարի նշված հրամանով որևէ ամրագրում (այդ թվում՝ սահմանափակում) առկա չէ հանրակրթական ուսումնական հաստատությունը ջեռուցելու ժամանակի վերաբերյալ: Չնայած նշված օրենսդրական կարգավորմանը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում հանդիպումների ընթացքում աշակերտների կողմից մատնանշվել է ջեռուցումը նոյեմբերի 15-ից սկսելու, ինչպես նաև որոշ դեպքերում դրա բացակայության մասին: Գործնականում, ջեռուցումը նոյեմբերի 15-ից սկսելու դեպքում հաշվի չի առնվում հանրակրթական ուսումնական հաստատության տեղակայվածությունն (օրինակ՝ բարձրադիր համայնքներում տեղակայված դպրոցներում անհրաժեշտ է ջեռուցումը սկսել ավելի վաղ քան նոյեմբերի 15-ն), ինչպես նաև հաշվի չեն առնվում նաև տվյալ տարվա բնակլիմայական պայմաններն:

Ավելին, ըստ առկա տվյալների՝ հանրապետության 9 դպրոցներում առհասարակ ջեռուցում առկա չէ, իսկ 436 դպրոցներում ջեռուցումն իրականացվում է էլեկտրաջեռուցիչներով կամ վառարաններով<sup>72</sup>, որոնց օգտագործումն արգելված է ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 12-Ն հրամանով: Չնայած, որ հանրակրթական դպրոցների շենքային և գույքային պայմաններում խնդիրներ առկա են թե՛ քաղաքային, և թե՛ մարզային ու գյուղական դպրոցներում, սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առավել խոցելի են այս առումով գյուղական դպրոցները<sup>73</sup>:

Խնդրի մասին բարձրաձայնել են նաև ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն՝ հատուկ նշելով թե՛ շենքային և գույքային անբարեկարգ պայմանների, թե՛ ջեռուցման հետ կապված խնդիրներն ու հորդորել պետությանը ներդրումներ կատարել դպրոցների՝ ենթակառուցվածքների բարելավման նպատակով<sup>74</sup>: Նման առաջարկ է արել նաև ՄԱԿ-ի

<sup>72</sup> Տե՛ս [https://www.armstat.am/file/article/soc\\_vich\\_2017\\_2.pdf](https://www.armstat.am/file/article/soc_vich_2017_2.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>73</sup> Տե՛ս [http://www.osf.am/wp-content/uploads/2017/09/Educ\\_Equity\\_MainData\\_PPT.pdf](http://www.osf.am/wp-content/uploads/2017/09/Educ_Equity_MainData_PPT.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>74</sup> Տե՛ս ՄԱԿ-ի՝ Երեխայի իրավունքների կոմիտեի՝ Հայաստանի 3-4-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, 2013 թվականի մայիսի 27-ից հունիսի 14, <http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն՝ ընդգծելով ուսումնական հաստատությունների բարելավման համար հատկացված ֆինանսական միջոցների առավել արդյունավետ կերպով օգտագործման անհրաժեշտությունը<sup>75</sup>:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

- 1. ավելացնել հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային և գույքային պայմանների բարելավման համար հատկացվող ֆինանսական միջոցներ,*
- 2. ապահովել հանրակրթական ուսումնական հաստատություններում օդային և ջերմային ռեժիմի պահպանման պահանջների կատարումը՝ ուժեղացնելով վերահսկողությունը դրա խախտման դեպքերի բացահայտման ուղղությամբ:*

### **9. Ջրի և սանիտացիայի հասանելիությունը նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում**

Դեռևս տարիներ շարունակ Պաշտպանի կողմից բարձրացվել է նախադպրոցական ուսումնական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության հարցը: 2018 թվականին մշտադիտարկման աշխատանքներ են իրականացվել այդ հաստատություններում՝ ջրի և սանիտացիայի հասանելիության առկա վիճակին, բացերին, խնդիրներին և առաջնահերթություններին ծանոթանալու համար:

Երեխաները, կապված իրենց տարիքի և իրավունակության հետ՝ ունեն հատուկ վերաբերմունքի կարիք, իսկ նրանց իրավունքների իրացման ապահովումն ունի հիմնարար նշանակություն: Ջրի և սանիտացիայի հասանելիությունը երեխաների առողջության, հիգիենայի կանոնների պահպանման կարևորագույն առնվազնային է և երեխայի լավագույն շահի ապահովման միջոցներից:

Մարդու իրավունքների պաշտպանի իրականացրած մշտադիտարկման ընթացքում հաճախ են եղել դեպքեր, երբ հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիություն բավարար կերպով կամ առհասարակ ապահովված չի եղել<sup>76</sup>:

Այսպես, մշտադիտարկման այցերի ընթացքում վեր են հանվել փաստեր, որոնք վկայում են ջրամատակարարման բացակայության մասին: Մասնավորապես, մշտադիտարկված 121 դպրոցից շուրջօրյա խմելու տնտեսական հոսող ջրով ապահովված են եղել 105-ը, իսկ մնացած 16 դպրոցից 1-ի (Սյունիքի մարզի) ներսում ջուր չկա, իսկ մյուս դպրոցում 3 օրը մեկ անգամ գրաֆիկով (Սյունիքի մարզի), իսկ 14 դպրոցում տրվում է ժամային գրաֆիկով: Օրինակ, Սյունիքի Խնածախ համայնքի միջնակարգ դպրոցում կատարված այցելության ընթացքում, դպրոցի վարչակազմի կողմից ստացվել է տեղեկություն, առ այն, որ դպրոցի համար խմելու ջուրը բերվել է մոտակա աղբյուրից, իսկ երեք օրը մեկ անգամ տրվում է խմելու համար անպիտան ջուր (խողովակների հին լինելու պատճառով ջրի գույնը և համը փոխված են լինում), որը հավաքվելով բաքերում, օգտագործվում է սանհանգույցներում: Բացի աղբյուրից բերվող ջրից, երեխաները նաև սեփական շշերով են ջուր բերում դպրոց: Ջուրը գրաֆիկով է հասանելի նաև, օրինակ՝ Երևան քաղաքի թիվ 90 դպրոցում՝ առավոտյան 10-ին և երեկոյան ժամերին, Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի դպրոցում՝ յուրաքանչյուր օր առավոտյան 8:30-ից մինչև 14:00-ն, Վերնաշենի դպրոցում՝ 9:00-ից 12:00-ն:

<sup>75</sup> Տե՛ս ՄԱԿ-ի՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի՝ Հայաստանի 2-3-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, <http://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=4slQ6QSmlBEDzFEovLCuW0fp9m5PoYHYLH3qkguQgxwBODv54x9D%2FtTVTKgVIVcgKieaWt6S0CJmSRHd2YbUGKlROrDzjo9z47iNYCZgmYgv27A6%2F5Jw0ZBjno1vpNcA>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>76</sup> Մանրամասն տե՛ս «Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքի ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույց



Ընդ որում, ի տարբերություն քաղաքային համայնքների հաստատությունների, գյուղական համայնքներում խնդիրն առավել նկատելի է: Այսպես, ջրամատակարարումը բացակայում է բացառապես մարզային դպրոցներում (օրինակ՝ Արագածոտնի մարզի 15 դպրոցում, Գեղարքունիքի մարզի 13 դպրոցում, Շիրակի մարզի 12 դպրոցում)<sup>77</sup>: Նշվածը չափազանց խնդրահարույց է և ներկայացնում է ընդհանուր պատկերը Երևանում և մարզերում գործող հաստատությունների վերաբերյալ: Ստացվում է, որ Երևանում սովորող երեխաները մշտապես կարող են օգտվել խմելու հոսող ջրից, մինչդեռ մարզերում ջրի հասանելիության ապահովման համար կիրառվում են տարբեր մեթոդներ (հաճախ նաև անձնական միջոցների հաշվին):

Նշված խնդրի հետ մեկտեղ, հարկ է նշել նաև, որ ուսումնասիրված մի շարք դպրոցներում ջուրն անհասանելի էր ծորակների ոչ սարքին լինելու կամ դրանց բացակայության պատճառով: Ավելին, ուսումնասիրության ընթացքում հանդիպել են այնպիսի դեպքեր, երբ ամբողջ դպրոցում առկա է եղել ընդամենը մեկ ծորակ, ինչը բավարար չի կարող համարվել ջրի հասանելիության իրավունքի իրացման տեսանկյունից:

Ավելին, ի տարբերություն հանրակրթական ուսումնական հաստատությունների, գործող օրենսդրությամբ բացակայում են նախադպրոցական ուսումնական հաստատությունների, մասնավորապես՝ համապատասխան շինարարական նորմերի, ջրի որակի, անընդհատության և մատակարարվող ջրի ջերմաստիճանի, ինչպես նաև սանիտացիայի իրավական կարգավորումներ:

Ուսումնասիրության է ենթարկվել նաև խմելու նպատակով ջրի օգտագործման եղանակներն: Ուսումնական հաստատություններում խմելու ջրի հասանելիությունն ունի կենսարար նշանակություն: Մասնավորապես՝ հատուկ ուշադրության է արժանի այն, թե ինչպես են երեխաներն օգտվում խմելու ջրից: Վերջինս շատ կարևոր է երեխաների շրջանում ջրով փոխանցվող բակտերիալ, վիրուսային, սնկային և մակաբուծային հիվանդությունների առաջացման, դրա տարածման և ռիսկերի կառավարման տեսանկյունից<sup>78</sup>:

Այցերի ընթացքում վեր են հանվել այնպիսի դեպքեր, երբ երեխաները ջուր խմում են միայն ցայտադրյորից, քանի որ դա միակ հնարավորությունն է: Օրինակ, Սյունիքի մարզի միջնակարգ դպրոցներից մեկի ներսում ջուրը հասանելի չէ, ուստի երեխաները ջուր խմելու համար ստիպված են լինում օգտվել դպրոցի շենքից դուրս գտնվող ցայտադրյորից: Նշվածը, հատկապես խնդրահարույց է ձմեռային կամ ցուրտ եղանակին խմելու ջրից օգտվող երեխաների առողջության պահպանման տեսանկյունից:

Ավելին, մշտադիտարկված հաստատություններից որոշներում թեև դպրոցի ներսում կամ հաստատության բակում առկա էր ցայտադրյոր, սակայն դրանք սարքին չէին կամ ջուրը փակված էր լինում գլխավոր փականով: Դպրոցների վարչակազմի տրամադրած տվյալների համաձայն՝ որոշ դպրոցներում երեխաներն օգտվում են բուֆետներում առկա բաժակներից, իսկ որոշ դպրոցներում տրամադրվում են մեկանգամյա օգտագործման բաժակներ: Սակայն, այցերի ընթացքում հանդիպել են դեպքեր, երբ ջուր խմելու համար նախատեսված մեկանգամյա օգտագործման բաժակներն օգտագործվելուց հետո

<sup>77</sup> Տե՛ս [https://www.armstat.am/file/article/soc\\_vich\\_2017\\_2.pdf](https://www.armstat.am/file/article/soc_vich_2017_2.pdf), էջ 104, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>78</sup> Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների համաձայն՝ ինֆեկցիոն բնույթի հիվանդությունների 80%-ը հիմնականում պայմանավորված է ջրային գործոնով, որը կապված է ջրամատակարարման սանիտարահիգիենիկ նորմերի խախտման և խմելու ջրի անբավարար որակական ցուցանիշների հետ: Ջրի միջոցով տարածվող հիվանդությունները լինում են ինֆեկցիոն և ոչ ինֆեկցիոն: Ջրամատակարարման կազմակերպման և շահագործման սանիտարական նորմերի, կանոնների խախտումը բերում է ինֆեկցիոն հիվանդությունների բռնկմանը: Ջրի միջոցով տարածվում են խոլերան, որովայնային տիֆը և պարատիֆերը, դիզենտերիան, սալմոնելոզը և այլն: (նյութն ամբողջությամբ հասանելի է հետևյալ հղումով [http://www.armwater.am/files/adb/Gap/Gender%20training%20\\_2015.pdf](http://www.armwater.am/files/adb/Gap/Gender%20training%20_2015.pdf)), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

հավաքվում, լվացվում և նորից տրամադրվում էին երեխաներին: Որոշ դպրոցներ երեխաների համար բաժակներ առհասարակ նախատեսված չեն եղել:

Հաշվի առնելով ջրի հասանելիության կարևորությունը նախադպրոցական ուսումնական հաստատություններում՝ այստեղ ևս մշտադիտարկման ընթացքում ուսումնասիրվել են խմելու ջրից օգտվելու տարբեր եղանակները: Գյուղական նախադպրոցական հաստատություններում 34% դեպքերում երեխաները ջուր են խմում ընդհանուր բաժակից, իսկ քաղաքային հաստատություններում տվյալ տոկոսային հարաբերակցությունը կազմում է 22%:

Ուսումնասիրվել է նաև սանհանգույցների հասանելիությունը: Կատարված այցի և ուսումնասիրությունների արդյունքում վեր է հանվել մի իրավիճակ, երբ զուգարանակոնքերը թեև տեսողական առումով գտնվել են սարքին վիճակում, սակայն պարզվել է, որ ջրթող բաքերը գտնվել են անսարք վիճակում: Ինչ վերաբերում է հաստատության յուրաքանչյուր հարկում աղջիկների և տղաների առնվազն մեկական սանհանգույց տեղակայված լինելու պահանջին, ապա պարզվել է, որ հետազոտությանը մասնակցած 121 դպրոցի 35% շենքերի յուրաքանչյուր հարկում ըստ սեռերի առանձնացված սանհանգույցներ բացակայում են: Այցերի ընթացքում արձանագրվել են նաև մի շարք խնդրահարույց և անթույլատրելի դեպքեր, երբ սանհանգույցներում զուգարանակոնքերը տեղադրված չեն եղել փակ խցիկներում, ինչը ևս խնդրահարույց է մարդու անձնական կյանքի անձեռնմխելիության, սեռական դաստիարակության և հոգեբանական կերտվածքի տեսանկյունից: Ավելին, ներկայացվածն անընդունելի է նաև երեխայի լավագույն շահի տեսանկյունից: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից արձանագրվել է նաև, որ հաստատությունների սանհանգույցներում զուգարանակոնքերը միայնցից անջատված չեն եղել նույնիսկ միջնորմերով:

Առանձնացված սանհանգույցների բացակայությունը խնդրահարույց է երեխաների շրջանում առկա բռնության դեպքերի ռիսկի ավելացման տեսանկյունից: Հատկապես տարբեր տարիքային խմբերի երեխաների՝ նույն սանհանգույցից օգտագործումը կարող է ռիսկային լինել տարիքով ավելի փոքր երեխաների համար: Ավելին, բավարար իրազեկման պակասի պարագայում բռնության տեսանկյունից կարող է չափազանց ռիսկային լինել նաև դեռահաս աղջիկների և տղաների նույն սանհանգույցից օգտվելը:

Մշտադիտարկումների ընթացքում արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ շենքի ներսում չէր գործում սանհանգույց՝ դրսում տեղակայված լինելու պատճառով: Մույնի վերաբերյալ հարցմանն ի պատասխան՝ տեղեկություն է տրամադրվել ՀՀ կրթության և գիտության նախարարությունից, ըստ որի՝ վերջինիս ենթակայության տակ գտնվող հետազոտված 74 դպրոցից 3-ն ունի շենքից դուրս գտնվող սանհանգույց, որոնք հիմնականում օգտագործվում են որպես պահուստային: Զեկույցի մշակման շրջանակներում ուսումնասիրվել է նաև սանհանգույցների՝ ուսումնական հաստատության շենքից դուրս գտնվելու հարցն: Այսպես, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության տրամադրած տվյալների ամփոփման արդյունքում կարելի է փաստել, որ մարզերում գործող բազմաթիվ դպրոցների սանհանգույցներ տեղակայված են ուսումնական հաստատության շենքից դուրս: Ըստ ներկայացված տվյալների՝ Արագածոտնի մարզպետարանի ենթակայության 118 հանրակրթական ուսումնական հաստատության 13-ի սանհանգույցը գտնվում է հաստատության շենքից դուրս, Արարատի մարզպետարանի ենթակայության 107 դպրոցից 6-ի սանհանգույց գտնվում է դպրոցական շենքից դուրս, 16 դպրոց սանհանգույց ունի և՛ ներսում և՛ դրսում: ՀՀ Արմավիրի մարզպետարանի ենթակայությամբ գործող 111 հանրակրթական ուսումնական հաստատությունից և համայնքային ենթակայությամբ գործող 61 նախադպրոցական ուսումնական հաստատությունից 31 հանրակրթական ուսումնական և 6 նախադպրոցական հաստատություններում սանհանգույցը գտնվում

հաստատության շենքից դուրս: Շիրակի մարզպետարանների ենթակայության 148 ուսումնական հաստատությունից 33-ի սանհանգույցն է գտնվում հաստատությունների շենքերից դուրս: Սյունիքի մարզպետարանի ենթակայության 111 հանրակրթական ուսումնական հաստատությունից 21-ի սանհանգույցը գտնվում է հաստատության շենքից դուրս: Վայոց ձորի մարզում 45 հաստատությունից 10-ի սանհանգույցն է գտնվում շենքից դուրս, իսկ Տավուշի մարզպետարանի ենթակայության 46 հաստատությունից 30-ի սանհանգույցը գտնվում է հաստատության շենքից դուրս:

Ուսումնասիրվել է նաև ջրի և սանիտացիայի հասանելիությունը հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Այսպես, մշտադիտարկված 121 դպրոցից միայն 8-ում են առկա հաշմանդամություն ունեցող և սակավաշարժուն խմբերի երեխաների համար հարմարեցված սանհանգույցներ: Չնայած դրանց առկայությանը, այնուամենայնիվ, պետք է նշել, որ որոշ դեպքերում տվյալ սանհանգույցների մուտքերը և սակավաշարժուն խմբերի երեխաների համար առաջացնելու էին ինքնուրույն օգտվելու հետ կապված խոչընդոտներ, օրինակ՝ մուտքի դռան շրջանակը հատակի մակերևույթի նկատմամբ ուներ որոշակի բարձրություն:

Երևանի քաղաքապետարանի, Կրթության և գիտության նախարարության և Տարածքային կառավարման և զարգացման նախարարության տրամադրած տեղեկությունների ուսումնասիրության վկայում են, որ ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության վերաբերյալ պարբերական բնույթ կրող միասնական և տարբերակված վիճակագրություն չի վարվում: Ավելին, տեսչական մարմինների վերակազմակերպման գործընթացի պատճառով տեղեկատվությունը միասնական ձևով հասանելի չի դարձվել նաև այդ պարագայում: Այսպես, վերջին տարիների ընթացքում տեսչական մարմնի կողմից հանրակրթական և նախակրթական ուսումնական հաստատություններում ներպետական օրենսդրությամբ ամրագրված ջրամատակարարման և սանիտարական կանոնների վերաբերյալ ներկայացվող պահանջների պահպանման նկատմամբ համակարգային և լայնածավալ ստուգումներ չեն իրականացվել:

Ավելին, պետության կողմից հավաքագրված ոլորտում համապարփակ ուսումնասիրության և միասնական, ինչպես նաև սեգրեգացված (օրինակ՝ ըստ մարզերի, գյուղական համայնքների, դպրոցների մեծության) առկա վիճակագրական տվյալների պակասը թույլ է տալիս ենթադրել, որ անհրաժեշտ է ոլորտում իրականացնել ուսումնասիրություն առկա բոլոր խնդիրների և դրանց առաջացման պատճառների հստակ նախանշման համար: Ավելին, ոլորտը կարգավորող մի շարք իրավական ակտեր ընդունվել և/կամ փոփոխվել են վերջին տարիներին, օրինակ՝ 2014 և 2017 թվականներին և վերաբերում են նոր կառուցվող կամ վերակառուցվող հաստատություններին: Արդյունքում զգալի տարբերություն է նկատվում նոր կառուցվող և մինչև այդ նորմերի ընդունումը կառուցված հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության մակարդակների միջև: Նշված իրավիճակը բնականաբար անթույլատրելի է, քանի որ երեխայի առողջության պահպանումը պետք է ապահովված լինի նույն մակարդակներում և հիմնված լինի երեխայի լավագույն շահի սկզբունքի վրա: Ուստի՝ անհրաժեշտ է նաև հատուկ գնահատում իրականացնել այն հաստատությունների վերաբերյալ, որոնք կառուցվել են մինչև նորմերի թարմացումը:

Մշտադիտարկման արդյունքում պարզվել է նաև, որ ուսումնական հաստատություններում ներպետական օրենսդրությամբ սահմանված պահանջների չապահովվածության խնդիրը ոչ միայն հատկացված ֆինանսական միջոցների անբավարարության, այլ նաև ներպետական օրենսդրությամբ սահմանված սանիտարական կանոնների մասին իրազեկվածության պակասի արդյունք է: Մասնավորապես, հաստատություններում իրականացված հարցումների արդյունքում արձանագրվել է, որ

հաստատության անձնակազմը պատշաճ կերպով իրագեկված չէ մանկական նախադպրոցական օբյեկտների կառուցվածքի, գույքով ու սարքավորումներով ապահովման վերաբերյալ նորմատիվային դրույթների և դրանց չկիրառման հետևանքով հնարավոր բացասական հետևանքների մասին:

*Ուստի, անհրաժեշտ է՝*

1. օրենսդրությամբ շինարարական նորմերի, ջրի որակի, անընդհատության և մատակարարվող ջրի ջերմաստիճանի, ինչպես նաև սանիտացիայի իրավական կարգավորումներ ամրագրել նաև նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար,

2. քայլեր ձեռնարկել ջրանջատման բացառապես բոլոր դեպքերի մասին իրական իրագեկումն ապահովելու ուղղությամբ:

3. մշակել հստակ ժամանակացույց մինչև ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի N 12-Ն հրամանի ընդունումը կառուցված շենքերում ցայտադրյուրի առկայությունն ապահովելու համար,

4. որպես միջանկյալ լուծում՝ անհրաժեշտ է ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի N 12-Ն հրամանում կատարել փոփոխություն՝ հստակ կարգավորումներ նախատեսելով հանրակրթական ուսումնական հաստատությունում երեխաների կողմից խմելու ջրից օգտվելու համար՝ հաշվի առնելով վարակների տարածման ռիսկերը: Այդպիսին կարող է լինել մեկանգամյա օգտագործման բաժակների նախատեսումը,

5. վերանայել վերոնշյալ հրամանի 9-րդ կետի պահանջը, ցայտադրյուրի քանակի վերաբերյալ համապատասխան նորմեր նախատեսել՝ հաշվի առնելով դպրոցում երեխաների քանակը,

6. ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի N 857 հրամանում կատարել փոփոխություն՝ հստակ կարգավորումներ նախատեսելով նախադպրոցական ուսումնական հաստատությունում երեխաների կողմից խմելու ջրից օգտվելու համար՝ հաշվի առնելով վարակների տարածման ռիսկերը: Այդպիսին կարող է լինել հստակ ամրագրված նորը, ըստ որի երեխաներին կտրամադրվեն բացառապես անհատական օգտագործման այնպիսի բաժակներ, որոնք նրանց համար հեշտ տարանջատելի լինեն մյուս բաժակներից կամ մեկանգամյա օգտագործման բաժակներ:

7. որպեսզի ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը և Երևանի քաղաքապետարանը վարեն ջրի և սանիտացիայի հասանելիության տարբերակված վիճակագրություն՝ հիմնված տարբեր չափանիշների վրա,

8. «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «[www.emis.am](http://www.emis.am)» կայքում առկա «Դպրոցների էլեկտրոնային անձնագրերի քարտեզ» բաժնում ավելացնել յուրաքանչյուր դպրոցում ջրի և սանիտացիոն հասանելիության և մատչելիության վերաբերյալ տեղեկություններ,

9. «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «[www.emis.am](http://www.emis.am)» կայքում հասանելի դարձնել նախադպրոցական կրթական հաստատությունների վերաբերյալ տվյալները:

10. համակարգային ուսումնասիրության ենթարկել բոլոր հաստատություններում (այդ թվում մինչև համապատասխան նորմերի փոփոխությունը կառուցված և վերակառուցված) այսօրվա դրությամբ գործող նորմերին համապատասխանությունը,

11. մշակել գործողությունների ազգային ծրագիր, որը կհաստատվի կառավարության որոշմամբ և որը կնախատեսի միջոցառումներ առ այն, որպեսզի հստակ նշված ժամանակացույցում բոլոր հաստատությունները համապատասխանեցվեն գործող նորմերին,

12. գործողությունների ազգային ծրագրում ներառել նաև այլ միջոցառումներ՝ ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության բարձրացման ուղղությամբ: Ընդ որում, անհրաժեշտ է ներդնել հատուկ մեխանիզմ, որը կիրականացնի պարբերական և մշտական մշտադիտարկում՝ նորմերի յուրաքանչյուր փոփոխության պարագայում նախանշելով հաստատություններում համապատասխան գործողությունների անհրաժեշտությունը:

13. զանգվածային լրատվության միջոցներով, սոցիալական ցանցերով, ինչպես նաև կրթական համակարգերի միջոցով իրականացնել իրազեկման աշխատանքներ ուսումնական հաստատությունների աշակերտների, վերջիններիս ծնողների շրջանում ջրի և սանիտացիայի, հիգիենայի կանոնների վերաբերյալ,

14. քայլեր ձեռնարկել հաստատությունների անձնակազմի շրջանում օրենսդրական պահանջների վերաբերյալ տեղեկացվածության բարձրացման ուղղությամբ,

15. հաստատություններում երեխաների համար տեղադրել իրազեկող և մատչելի պաստառներ սանիտացիայի և հիգիենայի վերաբերյալ:

**10. Կրթության իրավունքի իրացման սահմանափակումները՝ կապված հանրակրթական ուսումնական հաստատություններում սննդի անվտանգության ապահովման հետ**

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից 2018 թվականի ընթացքում կրկին արձանագրվել են ուսումնական հաստատություններում սննդի անվտանգության խնդիրներ: Վերջիններս շարունակվում են չլուծված մնալ դեռևս 2014 թվականից, որի մասին բարձրաձայնվել է Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում և հաղորդումներում:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ՀՀ տարբեր մարզերի և Երևան քաղաքի ուսումնական հաստատությունների աշակերտների հետ հանդիպումների ընթացքում պարզ է դարձել, որ հանրապետության մի շարք ուսումնական հաստատությունների սննդի կետերում վաճառվում են այնպիսի սննդատեսակներ, որոնց վաճառքն ուսումնական հաստատություններում արգելվում է ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.3.1-02-2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 32-Ն հրամանի 26-րդ կետով: Ուսումնական հաստատություններում սննդի անվտանգության խնդրին անդրադարձել է նաև ՄԱԿ-ի՝ Երեխայի իրավունքների կոմիտեն<sup>79</sup>:

Հարցի առկայությունը նաև վեր է հանվել տարբեր հանրակրթական ուսումնական հաստատություններ Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների կողմից կատարված այցերի ընթացքում: Մասնավորապես՝ դեռևս բուժետներում վաճառվում է օրինակ՝ գազավորված ըմպելիքներ, պիստակ, նուշ, գետնանուշ, ծիրանի կորիզի միջուկ, կետչուպներ, մայոնեզ և այլ արգելված սննդամթերք:

Չնայած խնդրի առկայությանը՝ Երևանի քաղաքապետարանից և ՀՀ տարածքային կառավարման նախարարությունից, ի պատասխան խնդրի վերաբերյալ հարցման, տեղեկացրել են, որ հարցի շուրջ բողոքներ 2018 թվականի ընթացքում չեն ստացել:

ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի N 32-Ն հրամանի 48-րդ կետի համաձայն՝ ուսումնական հաստատության ղեկավարը սննդի կազմակերպման և

<sup>79</sup> Տե՛ս ՄԱԿ-ի՝ Երեխայի իրավունքների կոմիտեի՝ Հայաստանի 3-4-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, 2013 թվականի մայիսի 27-ից հունիսի 14, <http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

դրանում սովորողներին լիարժեք ընդգրկելու պատասխանատու անձն է: Ավելին, ըստ նույն հրամանի՝ ուսումնական հաստատությունում սովորողների առողջության պահպանմանն ուղղված կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու նպատակով հաստատության ղեկավարի կողմից ապահովվում են՝ սանիտարական կանոնների առկայությունը, սանիտարական կանոնների կատարման ապահովումը և այլն:

ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի «ՀՀ պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական հիմնարկները վերակազմակերպելու, պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերը սահմանելու, «ՀՀ պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 2179-Ն որոշմամբ հաստատված պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ հաստատության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, լիազորված պետական մարմինը և հիմնադրի կողմից լիազորված, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի համաձայն՝ ի թիվս այլ իրավասությունների, մարզպետը վերահսկում է նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումն:

Ըստ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ հանրակրթության բնագավառում տարածքային կառավարման մարմինը և Երևանի քաղաքապետը՝ ի թիվս այլ իրավասությունների, վերահսկում է ուսումնական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումն:

Ուսումնասիրվել է նաև հատուկ կրթահամալիրներում սննդի վերաբերյալ իրավիճակը: Մարդու իրավունքների պաշտպանի կողմից 2018 թվականին իրականացված մշտադիտարկման այցերի հետևանքով պարզվել է, որ մի շարք հաստատություններում առկա են խնդիրներ, կապված խոհանոցների սանիտարահիգիենիկ վիճակի, հացի պահման պայմանների, ճաշատեսակների նմուշների պահման, ճաշացանկերի հետ: Մշտադիտարկամ այցերի արդյունքում պարզվել է, որ մի քանի հաստատությունների խոհանոցներում առկա են սանիտարահիգիենիկ անբավարար պայմաններ: Մասնավորապես, Հանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիրի խոհանոցի տարբեր հատվածներում առկա էր կրծողների դեմ պայքարի համար նախատեսված դեղամիջոցներ, որոնք տարածվել էին նաև սենյակի ամբողջ հատակով: Սա անթույլատրելի է և վտանգավոր կրթահամալիրի սաների կյանքի և առողջության համար: Հարկ է նշել նաև, որ խոհանոցի և սննդամթերքի մշակման արտադրամասերում հատակը հակասանիտարահիգիենիկ վիճակում էր:

Այցեր իրականացրած գրեթե բոլոր հաստատություններում ապահովված չէին հացի պահպանման համար անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պայմանները: Հացը պահվում է պահարաններում, որտեղ չկան օդափոխության համար համապատասխան անցքեր: Պահարաններն ախտահանվում են սողայաջրով կամ քլորաջրով<sup>80</sup>:

*Ուստի, վերոնշյալ իրավական ակտերով սահմանված իրավասու պետական մարմինները պետք է ապահովեն հանրակրթական ուսումնական հաստատություններում*

<sup>80</sup> Մանրամասն տե՛ս սույն հաղորդման «Երեխաների իրավունքները» բաժնում

սննդի կազմակերպումը՝ «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.3.1-02-2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի N 32-Ն հրամանի պահանջների պահպանմամբ:

### **11. Մտքի, խղճի և կրոնի ազատությունը հանրակրթական ուսումնական հաստատություններում**

Տարիներ շարունակ բարձրաձայնվում է «Հայոց եկեղեցու պատմություն» դասընթացի ժամանակ ուսուցիչների կողմից որոշ դեպքերում պարտադրվում են ծիսական գործողություններ, օրինակ՝ աղոթք անել կամ խաչակնքվել, ինչը հակասում է որոշ անձանց կրոնական համոզմունքներին<sup>81</sup>: Խնդրին անդրադարձ է կատարվել նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանների նախորդ զեկույցներում: Նշվածը խնդրահարույց է մտքի, խղճի և կրոնի իրավունքի իրացման տեսանկյունից և այս խնդրի մասին դեռևս 2013 թվականին բարձրաձայնել է ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեն<sup>82</sup>:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության ժողովրդավարական և աշխարհիկ բնույթը», սակայն այդ պահանջի շրջանցման համար հիմքեր են ստեղծվել նույն հոդվածի 8-րդ կետում՝ սահմանելով, որ կրոնական գործունեությունը և քարոզչությունն ուսումնական հաստատություններում արգելվում են, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, որից ելնելով՝ նման հարցերը կարգավորվում են «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքով<sup>83</sup>:

*Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է արգելել ուսումնական գործընթացում պարտադիր բնույթ կրող աղոթքը և եկեղեցի այցելելն:*

### **12. Կրթության իրավունքի իրացման սահմանափակումները՝ կապված բարձրագույն ուսումնական հաստատություններում (ԲՈՒՀ) ուսանողական խորհուրդների քաղաքականացվածության հետ**

2018 թվականին ևս շարունակվում է խնդրահարույց մնալ հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողական խորհուրդների քաղաքականացվածության հարցը: Խնդիրը տարիներ շարունակ բարձրաձայնվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում և զեկույցներում: Խնդիրն այն է, որ գործող իրավական կարգավորումները չեն ապահովում կամ մասնակի են ապահովում ԲՈՒՀ-երի կազմակերպարարական ձևից ու կարգավիճակից կախված ԲՈՒՀ-երի կառավարման և ինքնուրույնության հետագա զարգացման ապահովման նպատակով նրանց ինքնավարության, ակադեմիական ազատությունների անհրաժեշտ լիարժեք մեխանիզմները:

Պետությունը, անդամակցելով ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրին, պարտավորություն է ստանձնել բոլորի

<sup>81</sup>Տե՛ս [http://www.coe.int/t/dg4/youth/Source/Resources/Publications/2014\\_Field\\_Study\\_Rights\\_of\\_Children\\_arm.pdf](http://www.coe.int/t/dg4/youth/Source/Resources/Publications/2014_Field_Study_Rights_of_Children_arm.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>82</sup>Տե՛ս

[http://tbinternet.ohchr.org/\\_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2fC%2fARM%2fCO%2f3-4&Lang=en](http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2fC%2fARM%2fCO%2f3-4&Lang=en), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>83</sup> Տե՛ս <http://armhels.com/wp-content/uploads/2016/01/Ditord-2016-01Armenian.pdf>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

համար հավասարապես մատչելի կազմակերպել բարձրագույն կրթություն:<sup>84</sup> Բացի այդ, ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի համոզմամբ ուսումնական հաստատությունների համեմատ ԲՈՒՀ-ի դասախոսները և ուսանողներն ավելի խոցելի են քաղաքական և այլ ճնշումների նկատմամբ, որոնք կարող են սպառնալ իրենց գիտական և ակադեմիական ազատությանն, ինչն անհրաժեշտ է կրթության իրավունքի լիարժեք իրացման համար<sup>85</sup>: Ավելին, ԲՈՒՀ-ի ինքնավարության ապահովման և ազատ գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու նպատակով ԲՈՒՀ-երում ակադեմիական ազատության ապահովման պահանջը նախատեսվում է նաև կրթական համակարգի բարեփոխման բոլոնյան գործընթացով, որին 2005 թվականից միացել է նաև Հայաստանի Հանրապետությունը:

Որպես խնդրի լուծում մշտապես մատնանշվում է դեռևս 2017 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ոլորտի արդիականացման, խնդիրների լուծման, միջազգային չափորոշիչներին համապատասխանության նպատակով մշակված «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերը: Նախագծերի շուրջ ներկայացվել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի նկատառումներն: Այսպես, խնդրի կարգավորման նպատակով շրջանառված նախագծում սահմանված են մի շարք դրույթներ, սակայն վերջիններս խնդրի լուծմանն ուղղված համապարփակ բնույթ չունեն: Ավելին, դեռևս 2017 թվականին շրջանառված նախագծերը 2019 թվականի մարտի 1-ի դրությամբ չեն ընդունել ՀՀ Ազգային ժողովի կողմից:

Այնուամենայնիվ, Պաշտպանին ներկայացված նախագծի կարգավորումներն ամբողջովին չեն կարող լուծել նշված հարցը: Հարցի կարգավորման նպատակով առաջարկվել է խորհրդի անդամների թվի համամասնություն, ինչպես նաև դրույթ, ըստ որի՝ խորհրդի անդամ չեն կարող լինել քաղաքական պաշտոն զբաղեցնող անձինք և մարգպետները: Ներկայացված նկատառումները հանգել են այն եզրահանգման, որ խորհրդի գործունեության անկախության ապահովման համար անհրաժեշտ են հավելյալ երաշխիքների, որոնց ապահովման նպատակով առաջարկվել է ապահովման նպատակով որպես խորհուրդների գործունեության սկզբունք, նախագծի հիշյալ կարգավորումները սահմանող դրույթներում նախատեսել քաղաքական կուսակցությունների ազդեցությունից անկախությունը, որն ուղենիշային կլինի բոլոր խորհուրդների գործունեության համար:

Միաժամանակ, պետք է նշել, որ խորհուրդներում քաղաքական կուսակցության ազդեցության նշաններ կարող է լինել առանց քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց՝ խորհրդում ուղղակիորեն ներկայացված լինելու: Այն կարող է դրսևորվել անձանց սեփական քաղաքական հայացքների կամ այլ դրդապատճառներով: Ուստի՝ հաշվի առնելով անձի ազատ քաղաքական հայացքների դրսևորման միջազգային փաստաթղթերով և ներպետական օրենսդրությամբ հաստատված իրավունքի իրականացման, ազատ դրսևորման կարևորությունը, սակայն պետք է նշել, որ այն պետք է դրսևորվի առանձ այլ անձանց իրավունքների կամ շահեր սահմանափակման կամ խախտման:

*Ուստի, անհրաժեշտ է՝ ԲՈՒՀ-երի կանոնադրություններում ամրագրել և արգելել ԲՈՒՀ-երի տարածքում և ԲՈՒՀ-երի օղակների ուղղակի մասնակցությամբ (ներառյալ՝ ուսանողական ինքնավարության կազմակերպությունների) ցանկացած քաղաքական գործունեության կազմակերպում և իրականացում, այդ թվում՝ ՈՒԽ-ների կողմից այս կամ*

<sup>84</sup> Տե՛ս ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիր, 3-րդ հոդված, [http://www.un.am/res/UN%20Treaties/III\\_3.pdf](http://www.un.am/res/UN%20Treaties/III_3.pdf), 2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>85</sup> Տե՛ս Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ՄԱԿ-ի կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն N13, 1999, <http://www.refworld.org/docid/4538838c22.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):



*այն քաղաքական ուժի ֆինանսավորմամբ ուսանողական ճամբարների, արտագնա արշավների կազմակերպումը:*

## ԳԼՈՒԽ 5. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Առողջության պահպանման իրավունքը հիմնական իրավունք է, որն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային մի շարք փաստաթղթերով: Մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածը սահմանում է յուրաքանչյուր անձի՝ օրենքին համապատասխան առողջության պահպանման իրավունքն: Ամրագրելով հիմնարար իրավունքը՝ բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումն, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը սահմանված են ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածով որպես տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներից:

Ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանման հասանելիության իրավունքը երաշխավորված է նաև «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածով: Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան իր հերթին ևս ճանաչում է առողջության պահպանման (11-րդ հոդված) և սոցիալական ու բժշկական օգնության իրավունքը (13-րդ հոդված): Առողջության իրավունքը պետք է ընկալվի որպես տարբեր միջոցների, ապրանքների, ծառայությունների և պայմանների ամբողջություն, որոնք անհրաժեշտ են առողջության պահպանման ամենաբարձր չափանիշների համար<sup>86</sup>: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը նույնպես երաշխավորում է բոլորի առողջության իրավունքը: Հռչակագրի 25 (1)-րդ հոդվածով երաշխավորված է, որ յուրաքանչյուր ոք իր և իր ընտանիքի առողջության ու բարեկեցության համար պատշաճ կենսամակարդակի և անհրաժեշտ սոցիալական ծառայությունների իրավունք ունի՝ ներառյալ սնունդը, հագուստը բնակարանն և առողջապահությունը:

2018 թվականին Պաշտպանին հասցեագրված բողոքները վկայում են, որ այս իրավունքի լիարժեք իրացման համար դեռևս առկա են մի շարք խոչընդոտներ, որոնք ներկայացվում են ստորև:

### ***1. Անվճար բժշկական օգնության և սպասարկման կարգավորումներն օրենքով չնախատեսելը***

2018 թվականին Պաշտպանին հասցեագրված բողոքներով բարձրացվել է ոլորտում առկա օրենսդրական անկատարությունների հարցը: Մասնավորապես՝ բարձրացվել է բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգն օրենքով չսահմանելու հետևանքով առողջության պահպանման իրավունքի ոչ լիարժեք ապահովման հարցը: Խնդիրն այն է, որ իրավունքների ապահովման և ծագման համար անհրաժեշտ մի շարք կարգավորումներ նախատեսված են ցածր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտով, ինչը գործնականում հանգեցնում է այդ իրավունքների իրացման խոչընդոտների:

Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք: Օրենսդրությամբ սահմանված է անվճար հիմնական բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգը: Սահմանադրության վերոնշյալ դրույթը գործնականում ապահովված չէ, քանի որ անվճար հիմնական բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգը սահմանված է ոչ թե օրենքով, այլ կառավարության որոշումներով և նախարարի հրամաններով:

<sup>86</sup> CESCR, General Comment No. 14 (2000) E/C.12/2000/4 [1] and [9].

Առողջության իրավունքը սուբյեկտիվ իրավունք է, հետևաբար ենթադրում է պետության որոշակի պարտականությունների իրականացում: Նշված ոլորտում պետության առավել ընդհանրացված պարտավորություններից են պետական բյուջեից անհրաժեշտ դրամական միջոցների հատկացումը և մատչելի բժշկական հաստատությունների ապահովումը: Հետևաբար՝ դրանք կյանքի կոչող բժշկական օգնության անվճար իրականացման կարգն օրենքով ամրագրելը հնարավորություն է տալիս պետության պարտականության կատարման առավել մեծ պաշտպանություն ապահովել:

Սահմանադրությունը երաշխավորում է յուրաքանչյուրի հիմնական բժշկական ծառայություններն անվճար ստանալու իրավունքը, որին համապատասխան պետությունը պարտավորվում է օրենքով սահմանել անվճար բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգը: Նշված հարցերը կարգավորվում են նաև «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով: Օրենքի համաձայն՝ առաջնային բժշկական օգնությունն անվճար է յուրաքանչյուր մարդու համար (հոդված 2): Բացի դրանից, օրենքի 4-րդ հոդվածում սահմանված է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու անվճար՝ պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակում, ինչպես նաև բժշկական ապահովագրական հատկացումների, անձնական վճարների և օրենսդրությամբ նախատեսված այլ աղբյուրների հաշվին: Օրենքը նախատեսում է նաև անվճար բժշկական օգնություն և սպասարկում որոշակի անձանց համար:

Անվճար բժշկական օգնության և սպասարկման հարցերի համապատասխան կարգավորման նպատակով և ի կատարումն օրենքի՝ ընդունվել է ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-Ն որոշումն: Այս որոշմամբ էլ հաստատվել է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկը, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին պետության կողմից երաշխավորված արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման կարգը, բուժհաստատություններում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման նպատակով բնակչության հերթագրման կարգը և այլ դրույթներ, որոնք կապված են հիմնական բժշկական ծառայությունների մատուցման հետ:

Առողջության պահպանման իրավունքի կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմում իրականացվել է միջազգային փորձի ուսումնասիրություն, մասնավորապես, Անգլիայում առողջապահական օրենսդրության և Անգլիայի ընդհանուր քաղաքականության պատասխանատվությունն իրականացվում է Խորհրդարանի, Առողջապահության պետական քարտուղարի և Առողջապահության դեպարտամենտի կողմից: Անգլիայում «Առողջության մասին» օրենքի (2006) համաձայն՝ Պետական քարտուղարի առջև դրված է պարտականություն խթանելու համապարփակ առողջապահական ծառայությունը, որը ներառում է անվճար առողջապահական բուժօգնությունը՝ տեղում իրականացվող սպասարկման ծառայություններից բացի: Ազգային առողջապահական ծառայության (NHS) իրավասության ներքո բուժօգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց իրավունքները տեղ են գտել Ազգային առողջապահական ծառայության օրենսդրության մեջ, որը ներառում է խնամքի մատչելիության իրավունքը՝ առանց խտրականության և որոշակի ժամանակահատվածում որոշ խմբերի համար արտակարգ և պլանավորված հիվանդանոցային խնամքը<sup>87</sup>:

<sup>87</sup> Տե՛ս <https://international.commonwealthfund.org/countries/england/>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ)

Տվյալ պարագայում կառավարության որոշմամբ հարցի սահմանումը նսեմացնում է կարգավորման ուժն: Ավելին, առավել դյուրին է դառնում փոփոխությունների կատարումն, ինչն անկանխատեսելի է դարձնում համակարգը և դրա շրջանակներում իրականացվող գործընթացները՝ շահառուների համար: ՀՀ առողջապահության նախարարության պարզաբանմամբ՝ այս առնչությամբ անհրաժեշտ քայլեր են ձեռնարկվում ոլորտը կանոնակարգող օրենսդրությունը ՀՀ Սահմանադրության նշված հոդվածի պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

*Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ անհրաժեշտ է սույն բաժնում նկարագրված հարցերի լուծումները տալ օրենքի մակարդակում:*

## **2. Խտրական վերաբերմունքը պացիենտների նկատմամբ**

Շարունակում է չլուծված մնալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից տարիներ շարունակ բարձրաձայնվող պացիենտների նկատմամբ խտրական վերաբերմունքի խնդիրը: 2018 թվականին ևս բողոքներ են ստացվել բժշկական հաստատություններում պացիենտների նկատմամբ խտրական վերաբերմունքի դեպքերի մասին, ինչպես նաև խնդիրների մասին բարձրաձայնվել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և աշխատակազմի ներկայացուցիչները հանրապետության տարբեր մարզեր այցերի ընթացքում:

Անձի առողջության պահպանման հիմնարար իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ և վավերացված միջազգային փաստաթղթերում: Հիմնարար այս իրավունքն ունի բաղկացուցիչներ, որոնցից է նաև խտրականության արգելքը: Խտրականության արգելքը մարդու իրավունքների հիմնարար սկզբունքներից է՝ ճանաչված ինչպես ներպետական և միջազգային չափանիշներով, և առողջության պահպանման իրավունքի հիմնական մասն է կազմում<sup>88</sup>:

Խտրականության արգելքն ամրագրված է նաև ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածով, որն առողջության պահպանման իրավունքի տեսանկյունից ամրագրվել է նաև «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով: Այսպես, նշյալ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, տարիքից, առողջական վիճակից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, Հայաստանի Հանրապետությունում ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք: Ավելին, նույն օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ բժշկական օգնության դիմելիս, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս յուրաքանչյուր ոք իրավունք ունի արժանանալ հարգալից վերաբերմունքի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից: Վերոնշյալ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետի համաձայն՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները պարտավոր են ապահովել հոգատար և հարգալից վերաբերմունք պացիենտների նկատմամբ:

Նշված իրավունքների պաշտպանության երաշխիքներ են ամրագրված նաև մի շարք միջազգային փաստաթղթերով: «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» ՄԱԿ-ի միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետությունները պարտավորվում են երաշխավորել, որ դաշնագրով հռչակված իրավունքներն իրականացվեն առանց որևէ խտրականության: Պետությունը ներպետական օրենսդրության համաձայն, ինչպես նաև վավերացնելով միջազգային մի շարք

<sup>88</sup> Տե՛ս <http://www.ohchr.org/Documents/Publications/Factsheet31.pdf>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ)

փաստաթղթեր՝ պարտավորվել է ապահովել անձի առողջության պահպանման հիմնարար իրավունքը՝ երաշխավորելով դրանց ազատ իրականացումն առանց որևէ արգելքի<sup>89</sup>:

Չնայած օրենսդրական այս կարգավորումների և ամրագրված երաշխիքների, այնուամենայնիվ, գործնականում շարունակում են խտրականության դրսևորման հետևանքով պացիենտների առողջության պահպանման իրավունքի սահմանափակման դեպքեր գրանցվել: 2018 թվականին ևս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներում բարձրաձայնվել են բուժաշխատողների կողմից մարդու նկատմամբ վերջինիս առողջական կամ այլ դրությամբ պայմանավորված (օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձանց (խնդիրը հատկապես բարձրաձայնել են Դաունի համախտանիշով ապրող երեխաների ծնողները), ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ով, ինչպես նաև Հեպատիտ B և C-ով ապրող) խտրական և անհարգալից վերաբերմունքի դեպքերի մասին:

Խտրական վերաբերմունքի դրսևորումն ուղղակի արգելք է հիմնարար այս իրավունքի իրականացման համար: Խնդիրն այն է, որ նման վերաբերմունքի հետևանքով մի շարք անձիք չեն ստանում պատշաճ բժշկական օգնություն կամ հաճախ մարդիկ ուղղակի հրաժարվում են դիմել բժշկական օգնության ծառայությունների՝ պայմանավորված բժշկական հաստատություններում տարբերակված վերաբերմունքի դրսևորումներով: Որոշ դեպքերում հենց բուժաշխատողներն են հրաժարվում ծառայություն մատուցել անձանց՝ պայմանավորված նրանց մոտ որոշակի հիվանդության առկայությամբ (օրինակ՝ Հեպատիտ B կամ C):

Գործնականում տարածված այս բացասական երևույթի դեմ պայքարում կարևոր է բուժաշխատողների կարողությունների զարգացմանն ուղղված քայլերի ձեռնարկումը, որպեսզի վերջիններս պացիենտների հետ շփումներում առավել նրբանկատ լինեն ու գործեն բժշկական էթիկայի կանոնների սահմաններում: Սակայն ի պատասխան հաշմանդամություն ունեցող անձանց հետ շփվելու և վերջիններիս սպասարկելու էթիկայի վերաբերյալ բժշկական հաստատության աշխատակիցների իրազեկվածության բարձրացման ուղղված քայլերի ձեռնարկումների անհրաժեշտության ընդգծման, ՀՀ առողջության նախարարության տեղեկությունները փաստում են, որ 2018 թվականի ընթացքում նշվածի վերաբերյալ Առողջապահության նախարարությունը միջոցառումներ չի իրականացվել:

*Հաշվի առնելով վերոնշյալը և այն, որ ՀՀ առողջապահության նախարարության նպատակներից և խնդիրներից է առողջապահության բնագավառում պետական քաղաքականության մշակումն ու դրա իրականացման ապահովումն, ինչպես նաև առողջապահության բնագավառում մարդու իրավունքների պահպանումն ու պաշտպանությունն՝ անհրաժեշտ է՝*

*1. մշակել համապատասխան ձեռնարկ որոշակի խմբերի (հաշմանդամություն ունեցող անձանց, ՄԻԱՎ/ՉԻԱՀ, Հեպատիտ B, C և այլ հիվանդ խտրականության ենթարկվող անձանց) հետ բուժաշխատողների աշխատանքի վերաբերյալ,*

*2. ավելացնել համապատասխան դասընթացների թիվը (դիպլոմային և հետդիպլոմային)՝ բուժաշխատողների տարբեր հիվանդությունների տարածման ուղիների և անվտանգության միջոցների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու համար:*

### **3. Պալիատիվ բուժօգնությունը**

Պալիատիվ բուժօգնության բացակայության և ներդրման արդյունավետության հարցը տարիներ շարունակ բարձրաձայնվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից, որը

<sup>89</sup> Օրինակ՝ «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի միջազգային կոնվենցիա (5-րդ հոդված), Երեխաների իրավունքների պաշտպանության մասին ՄԱԿ-ի կոնվենցիա:

2018 թվականին դեռ շարունակվում է չլուծված մնալ: Խնդրին մշտապես անդրադարձել են տարբեր հասարակական և միջազգային կազմակերպություններ<sup>90,91</sup>:

«Պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման զարգացման ռազմավարությանն ու պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման զարգացման ռազմավարության 2017-2019 թվականների միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ նշվում է, որ Հայաստանի Հանրապետությունում 2014 թվականին մահերի թվաքանակը կազմել է 27714, իսկ գրանցված մահերի 60-70%-ին՝ մոտ 20000 հիվանդի, անհրաժեշտ է եղել պալիատիվ բժշկական օգնություն և սպասարկում<sup>92</sup>: Մա վկայում է այն մասին, որ պալիատիվ բուժօգնության ներդրումը չափազանց կարևոր և արդիական հարց է:

Պալիատիվ բուժօգնության տրամադրման վերաբերյալ որոշակի կարգավորումներ նախատեսված են ներկայիս օրենսդրությամբ: Մասնավորապես՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 2.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պալիատիվ բժշկական օգնությունը կյանքին վտանգ սպառնացող կամ անբուժելի հիվանդություն ունեցող պացիենտի և նրա ընտանիքի կյանքի որակի բարելավմանն ուղղված բժշկական օգնության և սպասարկման տեսակ է, որը նպատակ ունի մեղմել պացիենտի ցավը, տառապանքը և հիվանդության հետ կապված ֆիզիկական, սոցիալ-հոգեբանական, հոգևոր և այլ խնդիրներ՝ դրանք վաղ հայտնաբերելու, գնահատելու և անհրաժեշտ միջամտություններ իրականացնելու միջոցով: Ավելին, նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման տրամադրման չափորոշիչները սահմանում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը:

Օրենսդրական նման կարգավորումները, սակայն բավարար չեն խնդրի լուծման և պալիատիվ խնամքի տրամադրման լիարժեք ապահովման համար: Ոլորտի ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ պացիենտների համար պալիատիվ խնամքի ապահովման համար անհրաժեշտ է իրականացնել թե՛ օրենսդրական, թե՛ գործնական մի շարք ձեռնարկումներ: Որոշ կարգավորումներ, ըստ ոլորտի մասնագետների, խրթին և ժամանակատար լինելու պատճառով ավելորդ բարդություններ են առաջացնում ծառայությունների լիարժեք ու արդյունավետ իրականացման համար: Ոլորտի մասնագետները նշում են նաև, որ Հայաստանում մորֆինի և վերջինիս այլընտրանքային միջոցների քանակը չի բավարարում դրա կարիքն ունեցող բոլոր հիվանդներին<sup>93</sup>, և խնդրահարույց է մնում տնային պայմաններում պալիատիվ խնամքի կազմակերպումը:

Պետք է նշել, որ վերջին տարիների ընթացքում առաջընթաց է արձանագրվել Հայաստանում պալիատիվ խնամքի ոլորտում, սակայն շատ խնդիրներ դեռևս չլուծված են: Հատկանշական է ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի N 4 արձանագրային որոշման ընդունումը: Վերոնշյալ փաստաթղթով առանձնացվել են ռազմավարական նպատակներ, որոնց իրագործումը կարող է ապահովել պալիատիվ բուժօգնության և սպասարկման տրամադրման մի շարք խնդիրների լուծում: Այդ պատճառով ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 45-Ն հրամանով հաստատվել է պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման տրամադրման

<sup>90</sup>Տե՛ս <http://www.who.int/mediacentre/factsheets/fs402/en/>

<sup>91</sup> Դեռևս 2011 թվականին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բարձր մակարդակով տեղի ունեցած հանդիպման ժամանակ մշակված քաղաքական հռչակագրով պետություններն ընդգծել են պալիատիվ խնամքի ներդրման անհրաժեշտությունը: [http://www.hrw.org/sites/default/files/wr2014\\_web\\_0.pdf](http://www.hrw.org/sites/default/files/wr2014_web_0.pdf), <http://apps.who.int/iris/bitstream/10665/250584/1/9789241565417-eng.pdf?ua=1>, <https://www.hrw.org/world-report/2017/country-chapters/armenia>

<sup>92</sup> Տե՛ս <https://www.e-gov.am/protocols/item/709/>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>93</sup> Տե՛ս <http://www.who.int/mediacentre/factsheets/fs402/en/>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

չափորոշիչը, որով սահմանվում են բնակչությանը ցուցաբերվող պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման տրամադրման հիմնական սկզբունքները և պալիատիվ բժշկական օգնության կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

ՀՀ կառավարության արձանագրային որոշման դրույթների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ծրագրի՝ «Ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների ղեկավարման, մոնիտորինգի և դրանց իրականացման ընթացակարգեր» վերստառությամբ բաժնում ամրագրվում է, որ բժշկական հաստատություններում պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման զարգացմանն ուղղված գործընթացների կանոնակարգումը, *մշտադիտարկումը*, ինչպես նաև մշտադիտարկման և գնահատման գործիքների մշակումն ու կիրարկումն իրականացնելու են Հայաստանի Հանրապետության առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության և գիտության նախարարությունները, Հայաստանի Հանրապետության մարզպետարանները և Երևանի քաղաքապետարանը՝ յուրաքանչյուրն իր իրավասության շրջանակներում: Ծրագրում նշվում է նաև, որ դրա իրականացման ընթացքում գործընթացի (արդյունքի) ցուցանիշների հաշվարկման համար անհրաժեշտ տվյալները պարբերաբար հավաքագրելու և վերլուծելու է ՀՀ առողջապահության նախարարությունը: Կարևորելով նման կարգավորումների սահմանումը՝ այդուհանդերձ, պետք է նշել, որ նշված կարգավորումները բավարար հստակ և գործուն մշտադիտարկման մեխանիզմ չեն նախատեսում, ինչը ռիսկի տակ է դնում ծրագրի արդյունավետ իրականացումը:

ՀՀ առողջապահության նախարարության տեղեկությունների համաձայն՝ նշված կարգավորումների ընդունումից հետո 2018 թվականի ընթացքում պալիատիվ բուժօգնության ներդրման ուղղությամբ իրականացվել են մի շարք գործողություններ: Մասնավորապես՝ Երևանում և ՀՀ մարզերում շարժական թիմերի ձևավորման նպատակով «Բաց հասարակության հիմնադրամներ Հայաստան» կազմակերպության աջակցությամբ, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ են անցել 39 բժիշկ և 36 բուժքույր, վերանայվել, պարզեցվել են «պալիատիվ բժշկական օգնություն և սպասարկում» մատուցելու, այդ թվում՝ շարժական (մոբիլ) ծառայության համար անհրաժեշտ տեխնիկական և մասնագիտական որակավորման պահանջներն ու պայմանները, կատարվել են փոփոխություններ Կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 1936-Ն որոշման մեջ, (հաստատվել են կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 857-Ն որոշմամբ), որն ուժի մեջ է մտել 2019 թվականի փետրվարի 15-ից: Ավելին, քրոնիկ ցավի արդյունավետ կառավարման նպատակով մշակվել և ՀՀ առողջապահության նախարարի 2018 թվականի մարտի 22-ի թիվ 751-Ա հրամանով հաստատվել է «Պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում պացիենտի ցավի գնահատման և կառավարման ուղեցույցը», իսկ «Մորֆին» դեղամիջոցի հեղուկ ներքին ընդունման ձևը (Օրամորֆը) ՀՀ առողջապահության նախարարի 2018 թվականի մարտի 17-ի թիվ 07-Ն հրամանով ընդգրկվել է ՀՀ հիմնական դեղերի ցանկում, մշակվել և ՀՀ առողջապահության նախարարի 2018 թվականի օգոստոսի 15-ի թիվ 17-Ն հրամանով հաստատվել է «Բժշկական նպատակներով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի օգտագործման կարգը և պայմանները», ինչպես նաև պալիատիվ բուժօգնության մատչելիության ապահովման նպատակով մշակվել և ՀՀ առողջապահության նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 29-Ն հրամանով կատարվել է փոփոխություն Առողջապահության նախարարի 2017 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 45-Ն հրամանում, որով նախատեսվել է նաև պալիատիվ բուժօգնության տրամադրումը պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում:

Չնայած պալիատիվ բուժօգնության ներդրման համար ձեռնարկված վերոնշյալ քայլերին՝ այնուամենայնիվ 2018 թվականին պալիատիվ բուժօգնությունը լիարժեքորեն հասանելի չի եղել դրա կարիքն ունեցող անձանց համար:

*Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է՝*

1. նախատեսել ծրագրի իրականացման մշտադիտարկում իրականացնող հստակ մեխանիզմ,

2. այդ մեխանիզմում նախատեսել նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը:

#### **4. Բժշկական գաղտնիքի պահպանումը**

Շարունակում է խնդրահարույց մնալ բժշկական գաղտնիքի պահպանության համար օրենսդրական երաշխիքների բացակայությունը, ինչը տարիներ շարունակ բարձրաձայնվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում և հաղորդումներում: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին 2018 թվականին ևս բողոքներ են հասցեագրվել առողջության պահպանման իրավունքի հիմնարար տարրերից մեկը հանդիսացող<sup>94</sup> բժշկական գաղտնիքի պաշտպանության խնդիրների մասին: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի՝ տեղեկության հրապարակային աղբյուրներից ստացված տվյալների ուսումնասիրության արդյունքները ևս ակնհայտ փաստում են խնդրի մասին: Հստակ օրենսդրական կարգավորումների բացակայության, իրազեկվածության պակասի կամ մասնագիտական թերի կարողությունների, բժշկական էթիկայի խախտման հետևանքով առ այսօր շարունակում են թե՛ զանգվածային լրատվության միջոցներում, թե՛ անհատների շրջանակում արձանագրվել բժշկական գաղտնիքի խախտման դեպքեր:

Խնդիրն այն է, որ նշվածի հետևանքով արձանագրվում են դեպքեր, երբ մի պացիենտին ներկայացվում է մեկ այլ պացիենտի բուժօգնության արդյունքը կամ անձի բժշկական գաղտնիք հանդիսացող տվյալները հասանելի են դառնում զանգվածային լրատվության միջոցներում կամ բժշկական հաստատությունում բուժօգնությունը կամ խորհրդատվությունը տրամադրվում է այլ պացիենտների ներկայությամբ: Խնդիրն ավելի է ահագնանում, երբ նման խախտումների դեպքում չկան դրանց դեմ պայքարի միջոցներ կամ առհասարակ իրավունքի պաշտպանության ու պահպանության գործունե մեխանիզմներ: Մի շարք դեպքերում անձինք կաշկանդված են բուժաշխատողից պահանջել տվյալների գաղտնիության պահպանում կամ զանգվածային լրատվության միջոցներով հրապարակված իրենց բժշկական տեղեկությունների արգելքը հնարավոր չէ իրականացնել, քանի որ դրա համար առկա չեն օրենսդրական բավարար մեխանիզմներ, ապա նաև իրավունքի պաշտպանության խոչընդոտ է այն, որ պացիենտին անհանգստացնում է իր համար վրա հասնող հավանական բացասական ազդեցությունը (օրինակ՝ վատ վերաբերմունքը):

Առողջության պահպանման իրավունքի հիմնարար տարրերից բժշկական գաղտնիքի պահպանությունը սահմանված է մի շարք միջազգային փաստաթղթերում: Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ (2015)5 հանձնարարականի հավելվածի 9.5-րդ կետի համաձայն՝ առողջական տվյալները, որոնց վրա տարածվում է բժշկական խորհրդապահություն պահպանելու անհրաժեշտություն, պետք է միայն հասանելի լինեն և մշակեն այն անձիք, որոնց համար ուղղակիորեն կամ մասնագիտական գաղտնիքի կամ խորհրդապահության այլ կանոններով սահմանված է նման պարտավորություն: Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ (89)14 հանձնարարականի 40-րդ կետի համաձայն՝ հանրային առողջապահական մարմնին խորհուրդ է տրվում խստորեն հարգանք դրսևորել խորհրդապահության պահպանման նկատմամբ՝ անհրաժեշտության դեպքում

<sup>94</sup> Տե՛ս <http://www.who.int/genomics/public/patientrights/en/>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):



առողջապահական ոլորտի աշխատողների համար իրականացնել հատուկ քաղաքականություն և առաջ քաշել կրթական ծրագրեր՝ հստակեցնելով ՄԻԱՎ վարակի խորհրդապահության անհրաժեշտության հետ կապված հարցերը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք վճիռներում անդրադարձել է բժշկական տվյալների պաշտպանության կարևորությանը: Մասնավորապես, Եվրոպական դատարանը նշել է, որ անձնական, այդ թվում՝ բժշկական տվյալների պաշտպանությունն ունի հիմնարար նշանակություն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված անձի անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի իրացման համար: Առողջական տվյալների խորհրդապահության հարգումը Կոնվենցիայի անդամ բոլոր երկրների իրավական համակարգերի կենսական սկզբունքներից մեկն<sup>95</sup> է: Ըստ Եվրոպական դատարանի՝ բժշկական տվյալների խորհրդապահության հարգումն ունի հիմնարար նշանակություն պացիենտի գաղտնիությունը պաշտպանելու համար<sup>96</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ մարդու մոտ ՄԻԱՎ առկայության վերաբերյալ տվյալների բացահայտումը կարող է կտրուկ ազդեցություն ունենալ վերջինիս, ինչպես մասնավոր և ընտանեկան կյանքի, այնպես էլ սոցիալական կյանքի և զբաղվածության վրա՝ ենթարկելով նրան մերժված լինելու վտանգին: Այս հանգամանքն այլ անձանց ևս կարող է հետ պահել ստուգվելու և բուժում ստանալու մտքից՝ այդպիսով վտանգելով հասարակության կանխարգելման անվտանգության միջոցառումների պահպանմանն ուղղված ջանքերն:<sup>97</sup>

Անձնական տվյալների պաշտպանությունը՝ որպես անձի հիմնական իրավունք, ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ, որի 34-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք: Սահմանադրական այս իրավունքն իր ամրագրումն է գտել նաև «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածում, որի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի պահանջել իր առողջական վիճակի, հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիության ապահովում: Ավելին, նույն օրենքի 19.3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով բուժաշխատողների համար ամրագրվում է բժշկական գաղտնիքը պահպանելու պարտականություն: Այս իրավունքը բացարձակ չէ և ենթակա է սահմանափակման: Այսինքն՝ որպես բացառություն օրենքով կարող են սահմանվել այդպիսի գաղտնիքը հրապարակելու դեպքեր, որոնք, սակայն պետք է լինեն հստակ, որոշակի և հետապնդեն իրավաչափ նպատակ: Կարևորելով հարցը՝ բժշկական գաղտնիքի մշակման և տարածման, ինչպես նաև բժշկական գաղտնիքի խախտման համար պատասխանատվություն սահմանող կարգավորումների համար միջոցառում է նախատեսված նաև «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 483-Ն որոշմամբ, ինչն իր հերթին վկայում է առկա կարգավորումների անբավարարության մասին:

Օրենքի վերոնշյալ կարգավորումները բնականաբար չեն կարող համարվել լիարժեք՝ բժշկական գաղտնիքի պաշտպանության ապահովման տեսանկյունից: Անհրաժեշտ է ընդգծել, որ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով

<sup>95</sup> Տե՛ս Զ-ն ընդդեմ Ֆինլանդիայի (Z v. Finland) գործով 1997 թվականի փետրվարի 25-ի վճիռը, գանգատ թիվ 22009/93, կետ 95, և Լ. Լ.-ն ընդդեմ Ֆրանսիայի ( L.L. v. France) գործով 2006 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 7508/02, կետ 44:

<sup>96</sup> Տե՛ս և Լ. Լ.-ն ընդդեմ Ֆրանսիայի ( L.L. v. France) գործով 2006 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 7508/02, կետ 23:

<sup>97</sup> Տե՛ս Զ-ն ընդդեմ Ֆինլանդիայի (Z v. Finland) գործով 1997 թվականի փետրվարի 25-ի վճիռը, գանգատ թիվ 22009/93, կետ 96:

ամրագրված չեն այնպիսի կարևոր դրույթներ, որոնք կնախատեսեն բժշկական գաղտնիքի սահմանումը, տրված չեն այն սուբյեկտներն, ում կարող է փոխանցվել բժշկական գաղտնիքն, ինչպես նաև այդ տեղեկատվության մշակման և փոխանցման կարգի առանձնահատկություններն: Օրենսդրորեն սահմանված չեն նաև պատասխանատվության հստակ մեխանիզմներ բժշկական գաղտնիքի ապօրինի տարածման համար:

Խնդրի լուծման ուղղությամբ 2018 թվականին վերստին շրջանառվել է դեռևս 2016 թվականին ՀՀ առողջապահության նախարարության մշակած «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը համապատասխան դրույթներ է պարունակում ուղղված վերոնշյալ հարցերի կարգավորմանը: Մակայն պետք է նշել, որ կարգավորումները խնդրի լուծմանն ուղղված համապարփակ լուծումներ չեն պարունակում: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը նախագծի վերաբերյալ ներկայացրել է մի շարք նկատառումներ: Նախագիծը 2019 թվականի մարտի 30-ի դրությամբ ընդունված չի եղել:

Նշված իրավիճակում վտանգվում է անձի առողջության պահպանման հիմնարար իրավունքի պաշտպանությունը, որի մասն է կազմում նաև բժշկական գաղտնիքի պահպանում:

*Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ անհրաժեշտ է՝*

- 1. հնարավորինս սեղմ ժամկետում ամրագրել բժշկական գաղտնիքը սահմանող, վերջինիս մշակման և տարածման վերաբերյալ օրենսդրական կարգավորումներ,*
- 2. լրատվության միջոցներով պացիենտներին իրազեկել բժշկական գաղտնիքի պահպանման և վերջինիս պահպանման իրավական կարգավորումների մասին,*
- 3. համապատասխան որակավորման դասընթացների միջոցով բուժաշխատողներին իրազեկել բժշկական գաղտնիքի պահպանման կարևորության և վերջինիս պահպանման իրավական կարգավորումների մասին:*

#### ***5. Ֆիզիկական անձի՝ փոստային ծառայության միջոցով սեփական օգտագործման համար այլ երկրից դեղեր ստանալը***

2018 թվականին ևս շարունակվել է չլուծված մնալ օրենսդրության թերի կարգավորումների հետևանքով փոստային առաքմամբ այլ երկրից դեղերի առաքման անհնարինության հարցը, որի վերաբերյալ Պաշտպանը ստացել է բողոքներ: Խնդիրն այն է, որ ֆիզիկական անձինք նույն դեղամիջոցը կարող են այլ երկրից ՀՀ տարածք ներմուծել անձամբ, իսկ նույն դեղամիջոցը փոստային առաքման միջոցով առաքելը հնարավոր չէ իրականացնել:

Համաձայն «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետությունում թույլատրվում է արտադրել, ներմուծել, բաշխել, բաց թողնել, իրացնել և կիրառել այն դեղերը, որոնք գրանցված են Հայաստանի Հանրապետությունում, բացառությամբ նույն օրենքով սահմանված դեպքերի: Նշված օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումք, հետազոտվող դեղագործական արտադրանք ներմուծել թույլատրվում է ներմուծման հավաստագրի հիման վրա, բացառությամբ նշված հոդվածով նախատեսված դեպքերի: Այսպես, ըստ նշված հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի՝ ներմուծման կամ արտահանման հավաստագիր չի պահանջվում օտարերկրյա պետություն մեկնող և օտարերկրյա պետությունից ժամանող ֆիզիկական անձի բուժման կուրսի կամ անձնական օգտագործման դեղերի համար՝ ՀՀ կառավարության սահմանած քանակներով: Ներկա ներպետական կարգավորումների պարագայում, փաստորեն, նշված դեղամիջոցը հնարավոր է ՀՀ տեղափոխել միայն ՀՀ

Ժամանելիս, բայց ոչ փոստային կամ առաքման այլ ճանապարհով ֆիզիկական անձի օգտագործման համար:

ՀՀ առողջապահության նախարարության տվյալների համաձայն՝ հարցի լուծման ուղղությամբ քննարկումների արդյունքում դեռևս 2017 թվականին մշակվել է ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության տարածք դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումք և հետազոտվող դեղագործական արտադրանք ներմուծելու և Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանելու, ներմուծման և արտահանման համար իրականացվող փորձաքննության կարգերը և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 20-ի N 581 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին դեղերի մասին» որոշման նախագիծ, որը 2019 թվականի փետրվարի 28-ին ընդունվել է ՀՀ կառավարության կողմից:

## ***6. Պետական պատվերի շրջանակներում սիրտ-անոթային վիրաբուժական բժշկական օգնություն***

2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են բազմաթիվ բողոքներ սիրտ-անոթային վիրաբուժական բժշկական օգնությունն անվճար՝ պետական պատվերի շրջանակներում չիրականացվելու վերաբերյալ: Մասնավորապես՝ բողոքներում բարձրաձայնվել է նշված վիրահատության թանկարժեքության և ըստ այդմ՝ անգամ միջին աշխատավարձով ապրող ընտանիքին դժվար հասանելի լինելու մասին: Ըստ բողոք ներկայացրած մարդկանց՝ բժշկական հաստատությունները շատ դեպքերում հրաժարվել են առողջության ծայրահեղ ծանր վիճակում գտնվող անվճարունակ քաղաքացիներին վիրահատել, ինչպես նաև հրաժարվում են կիրառել գեղչեր:

Պաշտպանին դիմած քաղաքացիների թվում են, մասնավորապես, ընտանիքների անապահովության համակարգում հաշվառված անապահով այնպիսի քաղաքացիներ, որոնց անապահովության միավորը չի բավարարել պետության կողմից երաշխավորված անվճար համապատասխան բուժօգնություն ստանալու համար: Խնդիրն այն է, որ անվճար բժշկական օգնություն ստանալու շեմը Հայաստանում շատ ցածր է, ինչի պատճառով վերջինից օգտվում են միայն ծայրահեղ աղքատները: Մինչդեռ հարկ է նշել, որ համեմատաբար ավելի բարձր եկամուտ ունեցող քաղաքացիների համար նման վիրահատական ծառայությունները ֆինանսական առումով անհասանելի են:

Բողոքներից մեկով բարձրացվել է այն խնդիրը, որ 3-րդ խմբի հաշմանդամ, տուն-ինտերնատի խնամյալը, ում ցուցված է եղել կորոնար անոթի շտապ ստենտավորում, հնարավորություն չի ունեցել պետական պատվերի շրջանակներում ենթարկվել համապատասխան վիրահատության: Այսինքն՝ չնայած դիմողը ծերանոցում խնամվող անձ է, ընդգրկված է ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշմամբ հաստատված բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում և կարող է օգտվել սահմանված արտոնություններից: Պատճառը սրտի կորոնար անոթների ստենտավորման անվճար հիմունքներով չիրականացումն է, քանի որ վերջինս ընդգրկված է ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 57-Ն հրամանով հաստատված նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով կիրառմամբ մատուցվող բժշկական ծառայությունների չափորոշիչով սահմանված ցանկում, և բնակչության բոլոր խմբերի համար կատարվում է վճարովի հիմունքներով:

Սիրտ-անոթային վիրաբուժական բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող ծառայությունների ցանկը հաստատված է վերը նշված հրամանի հավելված 2-ի 2-րդ կետով: Դրանք են՝

1) սրտի վիրահատություններ, կորոնար և աորտայի անևրիզմաների պատվածքների և շերտազատումների վիրահատություններ (բացառությամբ 0-7 տարեկան երեխաների, 7-18 տարեկան սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված երեխաների և ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված 36.00 և ավելի բարձր անապահովության միավորներ ունեցող ընտանիքների անդամների),

2) սրտի ռիթմը վարող սարքի իմպլանտացիա,

3) կարդիովերտեր-դեֆիբրիլատորի իմպլանտացիա,

4) արլացիա,

5) Սիներակի (Վ.Կավա/V.Cava) ֆիլտրի տեղադրում (բացառությամբ հղիների, ծննդաբերների և ծննդկանների՝ հետծննդյան 42 օրերի ընթացքում):

Ստացվում է, որ նշված ծառայություններից պետական պատվերի շրջանակներում կարող են օգտվել բացառապես ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված 36.00 և ավելի բարձր անապահովության միավորներ ունեցող ընտանիքի անդամները, մինչև 7 տարեկան երեխաները, սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում ընդգրկված 7-18 տարեկան երեխաները, Կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի թիվ 806-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 2-րդ կետում ընդգրկված զինծառայողները և նրանց հավասարեցված անձինք, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամները (բացառությամբ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության շարքային և կրտսեր ենթասպայական կազմի զինծառայողների), սոցիալական փաթեթի շահառուները:

ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հաստատած ծառայությունների շրջանակներում պետության երաշխավորած անվճար պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող բժշկական օգնության և սպասարկման իրավունքից օգտվում են բնակչության բոլոր խմբերը՝ սրտամկանի սուր ինֆարկտի անհետաձգելի վիրահատական (կորոնար անոթների ստենտավորում) բուժման դեպքում:

Հարկ է նկատել, որ տուն-ինտերնատներում խնամվող անձինք սիրտ-անոթային վիրաբուժական բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող ծառայություններից չեն կարող օգտվել անվճար հիմունքներով, չնայած, որ գտնվում են պետության խնամքի ներքո: Ներկայացված բողոքի շրջանակներում Պաշտպանի աջակցությամբ Առողջապահության նախարարությունից պատրաստակամություն են հայտնել բացառության կարգով դիտարկել խնամյալի վիրահատական բուժումը պետական պատվերի շրջանակներում՝ պետական մասնակցության չափով (365.000 ՀՀ դրամ) աջակցության հարցը: Սակայն անգամ նշվածի պարագայում, անձը ստիպված է եղել հրաժարվել վերոնշյալ աջակցությունից՝ գումարի մնացած մասը վճարել չկարողանալու պատճառով: Քննարկվող դեպքում, փաստորեն, անձը զրկվում է շտապ ցուցված բուժօգնությունից (կորոնար անոթի ստենտավորում), քանի որ ախտորոշումը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից հաստատված ցուցանիշներին համապատասխանող սրտամկանի սուր ինֆարկտ չէ, ինչպես նաև ձեռնարկներում խնամվող անձինք չեն օգտվում այդ արտոնությունից:

Ընդհանուր առմամբ խնդրի վերաբերյալ ՀՀ առողջապահության նախարարության պարզաբանումների համաձայն՝ 2018 թվականի ընթացքում ուսումնասիրվել են սրտի վիրահատական միջամտությունը պետական պատվերի շրջանակներում իրականացնելու վերաբերյալ 557 քաղաքացու դիմում: Ներկայացված դիմումներից 172-ը բավարարվել է, տվյալ անձանց սրտի վիրահատություններն իրականացվել են պետական պատվերի

շրջանակներում: Մնացած 385 դիմումով ներկայացված պահանջների վերաբերյալ սահմանված կարգով տրվել են պարզաբանումներ:

Չնայած նշվածին՝ ոլորտում տեղի են ունեցել մի շարք դրական տեղաշարժեր: Մասնավորապես՝ ՀՀ առողջապահության նախարարի 2018 թվականի հունիսի 29-ի թիվ 1666-Ա հրամանով 2018 թվականի հուլիսի 1-ից պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում «Սրտամկանի սուր ինֆարկտ» էլեկտրասրտագրության ST-էլևացիա ախտորոշման ժամանակ սրտի անհետաձգելի վիրահատական (ոչ դեղապատ ստենտի տեղադրում) ծառայությունների կազմակերպման ծրագիրը շարունակվել է արդեն դեղապատ ստենտի տեղադրմամբ:

Ողջունելի է նաև, որ 2019 թվականի հունվար ամսին կառավարությունն ընդունել է համապատասխան որոշում, որի համաձայն՝ ընդլայնվել է սիրտ-անոթային վիրաբուժական բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող ծառայություններից անվճար հիմունքներով օգտվող շահառուների շրջանակը:

Սակայն Պաշտպանին ուղղված բողոքները վկայում են, որ խնդիրը համակարգային առումով դեռևս լուծում չի ստացել:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝*

*1. պետության կողմից երաշխավորված անվճար, սրտի վիրահատական ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող անձանց շրջանակն ընդլայնել շարունակական տարբերակով,*

*2. վերանայել կորոնար անոթների ստենտավորման գնային քաղաքականությունը՝ հաշվի առնելով դրա մեծ պահանջարկը և բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակը:*

## ***7. Ստոմատոլոգիական բժշկական օգնության բավարար չտրամադրում պետական պատվերի շրջանակներում***

2018 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են մի շարք բողոքներ ստոմատոլոգիական բժշկական օգնությունը պետական պատվերի շրջանակներում կամ արտոնյալ պայմաններով չտրամադրելու վերաբերյալ: Մինչ ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 29-ի թիվ 355-Ն որոշման ընդունումը բնակչության սոցիալապես անապահով ու առանձին խմբերին ստոմատոլոգիական ծառայությունների որոշ տեսակներ տրամադրվում էին անվճար, սակայն նշված որոշման ընդունմամբ վերանայվել է շահառուների ցանկը, մատուցվող ծառայությունների փաթեթը և մինչ այդ անվճար տրամադրվող ստոմատոլոգիական ծառայությունների փոխարեն ներդրվել է բժշկական օգնության փոխհատուցման համավճարային եղանակ: Մասնավորապես՝ պետության մասնակցության մասը կազմել է ընդհանուր գնի 65 %-ը, իսկ շահառուի կողմից վճարվող համավճարի չափը՝ ընդհանուր գնի 35%-ը:

ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 29-ի թիվ 355-Ն որոշման համաձայն՝ ստոմատոլոգիական ծառայությունները՝ ատամի հեռացում, պուլպիտ, պերիօդոնտիտ, մասնակի շարժական թիթեղյա պրոթեզ, լրիվ շարժական թիթեղյա պրոթեզ, մատուցվում են անվճար ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված՝ 35.01 և ավելի բարձր անապահովության միավոր ունեցող նպաստառուներին: Այսինքն՝ մինչ վերոգրյալ փոփոխությունը, նշված ծառայություններն անվճար ստանալու իրավունք ունեին ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված՝ 30.01-35.00 անապահովության միավոր ունեցող մինչև 18 տարեկան երեխաներ և 65 տարեկան ու ավելի բարձր տարիքի անձինք: Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես

անապահով ու առանձին (հատուկ) խմբերին պատկանող մյուս անձանց նշված ծառայությունները մատուցվում էին համավճարային սկզբունքի կիրառմամբ, բացառությամբ ատամի հեռացումից, որը կատարվում էր անվճար:

Ընթացիկ տարում Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընդգրկված անձանցից, ովքեր, ունենալով ընտանիքների անապահովության 35.01-ից մեկ կամ երկու նիշով ցածր միավոր, հնարավորություն չեն ունեցել պետական պատվերի շրջանակներում ստանալ ատամնաշարի պրոթեզավորման, պուլպիտ ստոմատոլոգիական ծառայությունները: Պաշտպանին դիմել են նաև 65 տարեկանից բարձր տարիքի կենսաթոշակատուներ, ովքեր բարձրաձայնել են այն մասին, որ օրենսդրական կարգավորումների հետևանքով չեն կարողանում պետական պատվերի շրջանակներում օգտվել ատամնաշարի պրոթեզավորում ծառայությունից:

Նշվածի հետ մեկտեղ, բողոքներ են ստացվել նաև պետական պատվերի շրջանակներում կատարված ստոմատոլոգիական ծառայությունների որակի վերաբերյալ (ատամնաշարի անորակ պրոթեզավորում, անորակ պլոմբայության կիրառում): Բազմաթիվ բողոքներով նշվել է, որ չի իրականացվում պատշաճ իրազեկում ատամնաբուժական ծառայությունների անվճար կամ համավճարային սկզբունքով կատարման, ինչպես նաև դրանք տրամադրող բժշկական կազմակերպությունների վերաբերյալ: Մինչդեռ, անհրաժեշտ է, որ բժշկական հաստատությունները և առողջապահության լիազոր պետական մարմինը բավարար և պատշաճ միջոցներ ձեռնարկեն պետական պատվերի շրջանակներում տրամադրվող ծառայությունների, բժշկական օգնության և սպասարկման մասին հանրությանն իրազեկելու ուղղությամբ:

ՀՀ առողջապահության նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2018 թվականի ընթացքում առողջապահության նախարարություն մուտքագրված ստոմատոլոգիական բժշկական օգնության և սպասարկման հետ կապված քաղաքացիների դիմումների թիվը 106 է: Բոլոր դիմումներին տրվել են պարզաբանումներ՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունները (ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 29-ի թիվ 355-Ն որոշում, հավելված 1):

Ըստ Առողջապահության նախարարության պարզաբանումների՝ խնդրի լուծման կապակցությամբ ՀՀ կառավարության 2019 թվականի հունվարի 31-ի թիվ 53-Ն որոշմամբ փոփոխվել են պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերին մատուցվող ծառայությունների ծավալները և փոխհատուցման ձևերը:

Նշված փոփոխություններով ատամի հեռացում, պուլպիտի, պերիօդոնտիտի և կարիեսի բուժումները, լրիվ կամ մասնակի շարժական թիթեղային պրոթեզի, պրոթեզավորման համար անհրաժեշտ ատամնաշապիկի պատրաստում, տեղադրում և վերանորոգում ստոմատոլոգիական բժշկական ծառայությունները մատուցվում են անվճար, ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված 30.01 և ավելի բարձր անապահովության միավոր ունեցող բոլոր նպաստառուներին: Որոշման համաձայն՝ 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձանց, մինչև 7 տարեկան երեխաներին, մինչև 18 տարեկան սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված երեխաներին, նախագորակոչային և գորակոչային տարիքի անձանց ստոմատոլոգիական վերը նշված ծառայությունները կազմակերպվում են անվճար՝ գործող համավճարային սկզբունքի փոխարեն: Բացի այդ, ավելացել է մատուցվող ծառայությունների հետևյալ տեսակները՝ մինչև 18 տարեկան երեխաների լորձաթաղանթի հիվանդությունների բուժում, լրիվ կամ

մասնակի շարժական թիթեղային պրոթեզի վերանորոգում և պրոթեզավորման համար անհրաժեշտ ատամնաշապիկի պատրաստում ու տեղադրում (յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ):

Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) մյուս խմբերում ընդգրկված անձանց ստոմատոլոգիական վերը թվարկված ծառայությունները մատուցվում են արտոնյալ, իսկ ատամի հեռացումը՝ անվճար պայմաններով:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. վերահսկողություն իրականացնել պետական պատվերով կամ համավճարային եղանակով կատարված ստոմատոլոգիական ծառայությունների որակի նկատմամբ,*

*2. բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց իրազեկվածության բարձրացման նպատակով հանրապետությունում գործող այն ստոմատոլոգիական կլինիկաներում, որտեղ գործում է պետական պատվեր, տեսանելի մասերում փակցնել պաստառներ, որոնք կպարունակեն մատուցվող ստոմատոլոգիական ծառայությունների անվճար կամ համավճարային սկզբունքի կիրառման վերաբերյալ տեղեկություններ:*

***8. Մարդու առողջության պահպանման իրավունքի սահմանափակումը պետության կողմից երաշխավորված արտոնյալ պայմաններով իրականացվող բժշկական օգնության մասին իրազեկման պակասի, չարորակ նորագոյացություններով հիվանդների թերի կամ անբավարար հետազոտության, բժշկական օգնության և սպասարկման խնդիրների հետևանքով***

2018 թվականին Պաշտպանին հասցեագրված բողոքներով բարձրացվել է առողջապահության բնագավառի իրավական ակտերի հասանելիության և մատչելիության խնդիրը: Քաղաքացիների իրավունքներին անմիջականորեն վերաբերող նորմեր պարունակող կարգավորումները հաստատված են ՀՀ առողջապահության նախարարի անհատական հրամաններով: Խնդիրն այն է, որ անհատական հրամանները շատ դեպքերում հասանելի չեն լինում տեղեկատվության հրապարակային աղբյուրներում, ինչը քաղաքացիների համար լուրջ խոչընդոտ է դրանց ծանոթանալու համար: Խնդիրն առավել կարևորվում է պայմանավորված անվճար և արտոնյալ պայմաններով բուժօգնության բնագավառը կարգավորող իրավական ակտերի ոչ հասանելի լինելով:

Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով դիմողը տեղեկացրել է, որ 70-ամյա մայրը շտապ բուժօգնության ցուցումով չարորակ ուռուցքի վիրահատության է ենթարկվել բժշկական կենտրոնում: Վիրահատական բուժօգնության համար բժշկական հաստատությունը պահանջել է վճարել 500.000 ՀՀ դրամ և հավելյալ 120.000 ՀՀ դրամ՝ կատարած հետազոտությունների համար: Պաշտպանի աշխատակազմում կատարված ուսումնասիրություններով պարզ է դարձել, որ նշված բժշկական կենտրոնում ուռուցքաբանական հիվանդությունների բժշկական օգնությունն իրականացվում է միայն վճարովի հիմունքներով՝ ՀՀ առողջապահության նախարարության հետ պայմանագիր առկա չլինելու պատճառով:

2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքներով բարձրացվում է նաև վիրահատությունների, անգամ համավճարային սկզբունքով իրականացնելու դեպքում բավական թանկարժեք լինելու խնդիրը: Նախնական ախտորոշումներով հայտնաբերված չարորակ նորագոյացությունների հաստատման և բուժման հետագա ընթացքը որոշելու համար ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 53-Ն

հրամանով հաստատված հավելված 1-ի 2-րդ կետի համաձայն՝ բժշկական ցուցումների առկայության դեպքում չարորակ նորագոյացություն ունեցող պացիենտի հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների ուղեգրումներն իրականացվում են ուռուցքաբանական մասնագիտացված բժշկական կազմակերպությունները կամ կաբինետներն իրականացվում են անվճար հիմունքներով:

Նշված հետազոտություններն անցնելուց հետո շատ դեպքերում առաջանում է վիրահատական միջամտությունների անհրաժեշտություն, որպիսիք Հայաստանում, համաձայն ՀՀ կառավարության 2004 թվականի թիվ 318-Ն որոշման՝ բնակչության բոլոր խմբերին տրամադրվում են պետության կողմից երաշխավորված արտոնյալ պայմաններով՝ ՀՀ առողջապահության նախարարի կողմից սահմանված կարգով, այսինքն՝ ոչ ամբողջովին անվճար: Նշվածը խնդրահարույց է, քանի որ շատ դեպքերում քաղաքացիները հրաժարվում են վիրահատական միջամտությունից գումար չունենալու պատճառով, արդյունքում էլ առողջական վիճակը գնալով վատթարանում է: Օրինակ, բողոքներից մեկով քաղաքացին հայտնել է, որ առողջական վիճակի ծայրահեղ վատ լինելու պատճառով չի կարող աշխատել, սոցիալապես անապահով է, իր մոտ հայտնաբերվել է ստամոքսի չարորակ գոյացություն (հաստատված է համապատասխան հետազոտություններով), անհրաժեշտ է վիրահատություն: Ուղեգրի առկայությամբ, որտեղ ընդգծված է «բուժում հիվանդանոցային պայմաններում» գրառումն, այցելել է բուժհաստատություն, որտեղ հրաժարվել են ընդունել պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում՝ պատճառաբանելով, որ քաղաքացին ընդգրկված չէ բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում: Առաջարկվել է բուժօգնությունն իրականացնել համավճարային սկզբունքով, ինչից քաղաքացին հրաժարվել է գումար չունենալու պատճառով: Հետագայում Պաշտպանի աշխատակազմ ստացվել է տեղեկություն, որ քաղաքացին մահացել է:

Պաշտպանին հասցեագրված բողոքներում բարձրացվել է նաև քիմիաթերապևտիկ բուժօգնության, մասնավորապես՝ քիմիաթերապևտների բարձր գների խնդիրը: Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման հավելված 1-ում նշված սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերում չընդգրկված անձանց համար չարորակ ուռուցքաբանական հիվանդությունների քիմիաթերապևտների ծախսը կատարվում է ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված քիմիաթերապևտիկ միջոցառումների նվազագույն սխեմաների շրջանակներում, կազմակերպության միջոցներով գնված և հիվանդին հատկացված քիմիաթերապևտների փաստացի ծախսի չափով՝ ոչ ավելին՝ քիմիաթերապևտիկ 1 կուրսի համար 30 հազար դրամ, իսկ մեկ հիվանդի համար՝ տարեկան 150 հազար դրամ: Փոխհատուցումը կատարվում է մեկ տարվա ծախսի չափով: Կազմակերպության միջոցներով գնված և հիվանդին տրամադրված քիմիաթերապևտների ծախսը մեկ կուրսի համար 30 հազար դրամը կամ տարեկան կտրվածքով 150 հազար դրամը գերազանցելու դեպքում փոխհատուցում է հիվանդը:

Քաղաքացիները պնդում են, որ փոխհատուցումը չնչին է, քանի որ վերջիններիս պնդմամբ քիմիաթերապևտի մեկ կուրսի արժեքը սկսվում է 150 հազար դրամից և տարվա կտրվածքով անհրաժեշտ է միջինը մեկ միլիոնից մինչև երկու միլիոն դրամ գումար, ավելին, բուժման ծախսերն ավելանում են կախված հիվանդության բարդությունից:

Բուժօգնության արտոնյալ տրամադրման վերաբերյալ ոչ պատշաճ իրազեկման դեպքեր գրանցվել են նաև պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման տրամադրման ժամանակ: Բողոքներից մեկով՝ ոստիկանության երկարամյա ծառայության կենսաթոշակառու դիմողը բժշկական կենտրոնում սահմանված արտոնությունների մասին տեղյակ չլինելու արդյունքում չի



օգտվել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնությունից և սպասարկումից և կատարել վճարում: Պաշտպանի միջամտության արդյունքում քաղաքացու իրավունքները վերականգնվել են և ավել վճարված գումարը վերադարձվել է:

ՀՀ առողջապահության նախարարության պարզաբանումների համաձայն՝ «Ուռուցքաբանության և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության» ծրագրում քիմիաթերապևտիկ բուժօգնության վերաբերյալ գրանցվել է 94 դիմում-բողոք՝ գործող համավճարների, քիմիապրեպարատների բարձր գների, հերթագրումների, պետական պատվերի շրջանակներում իրականացվող ճառագայթման ապարատի ցածր հնարավորությունների հետ: Ըստ նախարարության տրամադրած տեղեկությունների՝ քննարկվող խնդիրների լուծման ուղղությամբ իրականացվում են մի շարք քայլեր: Մասնավորապես՝ Առողջապահության նախարարությունում սկսվել է առողջապահության նախարարի 2013 թվականի նոյեմբերի 18-ի N 73-Ն հրամանով հաստատված «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում չարորակ նորագոյացություններով հիվանդների հետազոտության, բժշկական օգնության և սպասարկման, դիսպանսերային (շարունակական) հսկողության ծառայության կազմակերպման և կազմակերպամեթոդական աշխատանքների իրականացման չափորոշիչը հաստատելու մասին» չափորոշիչի վերանայման գործընթացը: Մշակման փուլում է գտնվում չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ծառայությունների զարգացման հայեցակարգերը:

Չնայած վերոգրյալ քայլերին, այնուամենայնիվ, հարկ է փաստել, որ ոլորտում դեռևս առկա են բազմաթիվ չլուծված խնդիրներ:

*Հաշվի առնելով բարձրացված խնդիրների կարևորությունն՝ առաջարկվում է՝*

*1. գործուն միջոցներ ձեռնարկել պետական պատվերով և համավճարային սկզբունքի կիրառմամբ բուժօգնության տեսակներին, ինչպես նաև բժշկական հաստատությունների ցանկին տիրապետելու համար հասարակության իրազեկությունը բարձրացնելու ուղղությամբ,*

*2. անհապաղ քայլեր ձեռնարկել «Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների փոխհատուցման սկզբունքները փոխելու ուղղությամբ:*

**9. Պացիենտին դեղորայքով չապահովելը, ՀՀ հիմնական դեղերի ցանկն ընդլայնելը, պետպատվերի շրջանակներում ձեռքբերվող դեղերի ոչ պատշաճ որակը**

2018 թվականի ընթացքում շարունակել է արդիական մնալ անվճար դեղորայք ստանալու վերաբերյալ քաղաքացիների իրազեկվածության պակասի և այդ արտոնության վերաբերյալ բուժհաստատություններում վերջիններիս չտեղեկացնելու վերաբերյալ: Բարձրաձայնվել են նաև անվճար տրամադրվող դեղորայքի սպառվելու վերաբերյալ խնդիրներ:

Մասնավորապես՝ Պաշտպանին հասցեագրված բազմաթիվ բողոքներով անձինք տեղեկացրել են, որ սոցիալական վիճակից ելնելով, հնարավորություն չունեն այս կամ այն դեղորայքը ձեռք բերել: Բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ մարդկանց մեծ մասը պատկանում է անվճար կամ արտոնյալ պայմաններով ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատությունների միջոցով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերին: Արդյունքում՝ այդ անձինք իրազեկվել են իրենց իրավունքների մասին, և Պաշտպանի միջամտությամբ ստացել համապատասխան դեղորայքը:

Պաշտպանի աջակցությանն են դիմել նաև դեղորայք ստանալու իրենց իրավունքի մասին իրազեկ քաղաքացիներ, ովքեր, սակայն չեն կարողացել իրացնել նշված իրավունքը: Մասնավորապես՝ բողոքներից մեկի համաձայն՝ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձը տեղեկացրել է, որ ամիսներ շարունակ պոլիկլինիկայից որևէ դեղամիջոց չի ստացել՝ դրա բացակայության պատճառաբանությամբ:

Դեղամիջոց չտրամադրելու վերաբերյալ խնդիր է բարձրացրել նաև մարզի բնակիչ, որին պոլիկլինիկայի բժիշկը հաճախ հրաժարվել է տրամադրել «Կոլխեցին» դեղամիջոցն, իսկ տրամադրելուց՝ սահմանված քանակից քիչ: Նշված երկու ու բազմաթիվ այլ դեպքերում Պաշտպանի միջամտությամբ խնդիրը կարգավորվել է և քաղաքացիները ստացել են համապատասխան դեղամիջոցները:

Մեկ այլ դեպքով՝ դիմողը տեղեկացրել է, որ չորս ամսական որդին ունի ծանր առողջական խնդիրներ ու ստացիոնար պայմաններով ամիսներ շարունակ բուժօգնություն է ստանում բժշկական կենտրոնի վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի բաժանմունքում: Որդու համար նշանակված դեղամիջոցները ՀՀ առողջապահության նախարարի 2018 թվականի մարտի 17-ի թիվ 07-Ն հրամանով հաստատված հիմնական դեղերի ցանկում ներառված չէ, իսկ ինքը ֆինանսական միջոցների անբավարարության պատճառով դրանք ձեռք է բերում մեծ դժվարությամբ: Ներկայացվածի առթիվ Առողջապահության նախարարությունից ստացված պարզաբանումների համաձայն՝ «Էպիլեպսիա» հիվանդությունն ընդգրկված է ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1717-Ն որոշմամբ սահմանված այն հիվանդությունների ցանկում, որոնց առկայության դեպքում ամբուլատոր-պոլիկլինիկական, դիսպանսերային և հիվանդանոցային բժշկական հաստատությունների միջոցով դեղերը հիվանդներին տրվում են անվճար: Սակայն խնդրո առարկա անհրաժեշտ դեղերն ընդգրկված չեն պետության կողմից կենտրոնացված կարգով գնվող և համապատասխան հիվանդներին անվճար բաշխվող դեղերի ցանկում, ՀՀ առողջապահության նախարարությունը նշված դեղերի համարժեքները պարբերաբար ստանում է որպես մարդասիրական օգնություն և հատկացնում է համապատասխան բժշկական հաստատություններին: ՀՀ առողջապահության նախարարությունը պատրաստակամություն է հայտնել դեղերը՝ որպես մարդասիրական օգնություն ստանալու խնդրանքով դիմել բարեգործական կազմակերպություններին և որպես մարդասիրական օգնություն ստանալու դեպքում տրամադրել քաղաքացուն:

Վերևում նշված խնդիրների հետ մեկտեղ, սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձինք Պաշտպանին հասցեագրված բողոքներում բարձրացրել են նաև անվճար տրամադրվող դեղորայքի անարդյունավետության վերաբերյալ խնդիրը: Հաշմանդամություն ունեցող շատ քաղաքացիներ տեղեկացրել են, որ հրաժարվել են դրանցից՝ նախընտրելով սեփական միջոցներով ձեռք բերել ավելի որակյալ դեղեր:

Խնդրի առաջացման պատճառը, ըստ օրենքի, պետության կարիքների համար անհրաժեշտ դեղերի՝ ընդհանուր պետական գնումների ընթացակարգով գնումների իրականացումն է: Վերջինիս պարագայում մրցույթում հաղթում է, ի թիվս այլ պահանջներին համապատասխանող և միևնույն ժամանակ նվազագույն գին ներկայացրած հայտը: Պետական գնումների մրցույթներում գնվող դեղորայքի որակի պահանջը ստորադասված է առավել ցածր գնի պահանջին, ինչի պատճառով մրցույթը շահած դեղորայքի մատակարարը թեև ցածր գնով, սակայն ոչ պատշաճ որակի դեղ է մատակարարել:

ՀՀ առողջապահության նախարարության տեղեկությունների համաձայն՝ անվճար կամ արտոնյալ պայմաններով ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատությունների միջոցով դեղեր չտրամադրելու վերաբերյալ 2018 թվականին առողջապահության նախարարություն ստացվել է 67 դիմում-բողոք՝ պայմանավորված ՀՀ հիմնական դեղերի

ցանկում առկա չլինելու հանգամանքով: Առողջապահության նախարարության պարզաբանման համաձայն՝ Առողջապահության նախարարի 2018 թվականի մարտի 17-ի N 07-Ն հրամանով հաստատվել է ՀՀ հիմնական դեղերի համալրված նոր ցանկը, որտեղ հաշվի են առնվել քաղաքացիների պահանջները, բողոքները և առաջարկները:

Բողոքները վկայում են, որ քիչ չեն դեպքերը, երբ անվճար տրամադրվող դեղը դրական ազդեցություն չի ունենում առողջության պահպանման կամ վերականգնման և բուժման համար, ինչի հետևանքով անձինք ստիպված են լինում գնել արդյունավետ դեղամիջոցը, որի պատճառով չեն օգտվում անվճար դեղը ստանալու իրավունքից:

*Հետևաբար՝ անհրաժեշտ է՝*

*1. հանձնարարականներ տալ՝ արտոնյալ պայմաններով ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատությունների միջոցով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերին առանց խոչընդոտների անհրաժեշտ դեղորայք տրամադրելու վերաբերյալ,*

*2. արտոնություններ ունեցող անձանց իրազեկել դեղեր ստանալու իրենց իրավունքի վերաբերյալ,*

*3. սահմանել այնպիսի կարգ, որ տրամադրվող դեղերի գները սահմանվեն և այդ սահմանում դեղերը ձեռք բերվեն դեղատներից կամ բուժհաստատությունից, իսկ պետական պատվերի շրջանակներում սահմանված գումարը գերազանցելու դեպքում նշված դեղի համար պետության կողմից փոխհատուցվող գումարից տարբերությունը վճարի պացիենտը (այս դեպքում կարելի է ներդնել նաև հավաստագրի եղանակը),*

*4. վերանայել պետության կարիքների համար գնվող դեղերի գնումների գործընթացը, խստացնել վերահսկողությունը պետական գնումներով ձեռք բերվող դեղորայքին առաջադրված պահանջների կատարման, դեղերի որակի նկատմամբ, պատշաճ կերպով ուսումնասիրել հիվանդների բողոքները՝ պետական պատվերով տրամադրվող դեղերի որակի վերաբերյալ,*

*5. միջոցներ ձեռնարկել Հայաստանի Հանրապետության հիմնական դեղերի ցանկն ընդլայնելու ուղղությամբ:*

## **10. Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող մարդկանց անհրաժեշտ դեղերի ոչ բավարար հասանելիությունը**

Տարիներ շարունակ Պաշտպանը բարձրացրել է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց «Զիպրեքսա» դեղամիջոցի փոխարեն «Օլանգապին» դեղամիջոցը տրամադրելու հարցը: Խնդիրը շարունակել է արդիական մնալ նաև 2018 թվականին: Անհրաժեշտ է փաստել, որ «Օլանգապին» դեղամիջոցն ընդունելուց հետո, դիմողների պնդմամբ, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց մոտ առաջանում է ինքնազգացողության վատացում. ընդհանուր թուլություն, անքնություն, վերջույթների ջղաձգումներ, ֆիզիկական պասիվություն և այլն:

2018 թվականին Պաշտպանին է դիմել հասարակական կազմակերպությունը՝ տեղեկացնելով, որ հասարակական կազմակերպության 300 շահառուին գրեթե երկու տարի է որպես արտահիվանդանոցային բուժում չի մատակարարվում «Զիպրեքսա» դեղամիջոցը, փոխարենը տրամադրվում է հայկական արտադրության «Օլանգապին» դեղը, որն անարդյունավետ է, իսկ կողմնակի ազդեցությունը՝ խնդրահարույց: Բարձրացված խնդրի կապակցությամբ Պաշտպանը ՀՀ առողջապահության նախարարությանն ուղղված գրությամբ բարձրացրել է «Զիպրեքսա» դեղամիջոցի տրամադրման վերականգնման հնարավորության հարցը: Նախարարությունից ստացված պարզաբանումների համաձայն՝ պետության կողմից կենտրոնացված կարգով ձեռք բերված «Օլանգապին 10մգ» դեղի,

N1571701 խմբաքանակի դեղահաբերը համարժեք են ՀՀ-ում պետական գրանցման փորձաքննության անցած խմբաքանակին, հետևաբար կենսահամարժեք են Eli Lilly and Company (USA) ընկերության արտադրության Զիպրեքսա 10մգ դեղահաբերին: Ստացված պարզաբանման համաձայն՝ «Ավան հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ում դիսպանսեր հսկողության տակ գտնվող հայկական «Օլանգապին» դեղ ստացող 198 հիվանդների՝ սոցիումին ինտեգրման ցուցանիշը 30% է: Նշված դեղն ընդունելու ժամանակահատվածում ընդամենը 5%-ի մոտ է արձանագրվել հոգեկան վիճակի սրացում, որը սակայն պայմանավորված է եղել հիմնականում դեղի ոչ կանոնավոր ընդունման հետ: Արփիմեդ ՄՊԸ-ի արտադրած «Օլանգապին» 10 մգ. դեղը ձեռք է բերվել շուրջ 140 ՀՀ դրամով (10 անգամ էժան): Ելնելով դեղի ծախսարդյունավետությունից՝ Առողջապահության նախարարությունը 2018 թվականին ՀՀ ԱՆ կարիքների համար կենտրոնացված գնումներով ձեռք է բերել Արփիմեդ ՄՊԸ արտադրության «Օլանգապին» 10մգ N30 դեղը: 2019 թվականին պետության կարիքների համար հայտարարվել է մրցույթ «Օլանգապին» դեղի ձեռքբերման համար, որի արդյունքում հաղթող է ճանաչվել Արփիմեդ ՄՊԸ արտադրության «Օլանգապին» 10մգ N30 դեղը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է մշակել «Զիպրեքսա» դեղի մատակարարման կարգ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող այն անձանց տրամադրելու վերաբերյալ, որոնց մոտ «Օլանգապին» դեղն ընդունելու ժամանակահատվածում արձանագրվել է հոգեկան վիճակի սրացում:*

***11. Բժշկական հաստատությունում տրամադրված պետական պատվերի միջոցների ոչ բավարար լինելը, հիվանդասենյակների անվճար չտրամադրումը, հիվանդանոցային պայմաններով բուժօգնություն ստանալիս դեղերով ամբողջովին չապահովումը***

2018 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներով բարձրացվել է իրենց նախընտրած բժշկական հաստատությունում պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալ չկարողանալու հարցը՝ չնայած նրան, որ դիմողներն ունեն այդ օգնության և սպասարկման իրավունք:

Պետական պատվերի շրջանակներում փոխհատուցվող առանձին բժշկական ծառայությունների համար պետբյուջեից ուղղվող հատկացումները հատկապես հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին սպառվում են: Խնդիրը համապատասխան ծառայությունների համար պետական բյուջեից տրամադրված ֆինանսական միջոցների բացակայությունն է (սպառումը): ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշմամբ հաստատված հավելված 2-ի 4-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ֆինանսավորումն իրականացվում է սահմանափակված բյուջեի սկզբունքով՝ փաստացի կատարված աշխատանքների դիմաց, սակայն ոչ ավելի, քան կազմակերպության և ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորումն իրականացնող մարմնի կամ նրա լիազոր մարմնի միջև կնքված՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին բժշկական օգնության և սպասարկման իրականացման ու փոխհատուցման մասին պայմանագրով սահմանված գումարը: Սահմանափակված բյուջեի սկզբունքի գործարկման պայմաններում գործնականում առաջացնում են խնդիրներ, որոնք էլ բարձրաձայնվել են Պաշտպանին հասցեագրված բողոքներում: Գործնականում նշված խնդիրն առաջանում է տարվա վերջին ամիսներին: Մասնավորապես, Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով քաղաքացին հայտնել է, որ հիվանդանոցային բուժօգնություն ստանալու ցուցմամբ ինքը դիմել է այն բժշկական հաստատություն, որտեղ նախկինում ենթարկվել է վիրահատության, սակայն

տվյալ հաստատությունում պետական պատվերի սպառված լինելու պատճառով ստիպված է եղել դիմել մեկ այլ բժշկական հաստատություն:

Հարկ է նշել, որ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացին ինչպես բժշկի, այնպես էլ բժշկական կազմակերպության ընտրության իրավունք ունի: Փաստորեն, այս դեպքում քաղաքացին զրկվում է այդ իրավունքն իրացնելու հնարավորությունից: ՀՀ առողջապահության նախարարության տեղեկությունների համաձայն՝ տրամադրված լիմիտը սպառված լինելու վերաբերյալ առողջապահության նախարարությունում գրանցվել է 626 դիմում-բողոք:

2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքներով դիմողները տեղեկացրել են, որ հիվանդասենյակներն իրենց տրամադրվում են վճարովի հիմունքներով (մեկ օրը 3000-5000 դրամ), քանի որ տվյալ պահին անվճար հիվանդասենյակ առկա չէ: Պետական պատվերով բուժօգնություն ստացած անձինք հաճախ հայտնել են նաև, որ անվճար հիվանդասենյակների առկայության պարագայում կամավոր են ընտրել վճարովի հիվանդասենյակներ՝ անվճար հիվանդասենյակների սանիտարահիգիենիկ խիստ անբավարար պայմանների պատճառով:

Ստացված բողոքների մի մասն էլ վերաբերել է պետական պատվերով ստացիոնար բուժօգնություն ստանալու ընթացքում բուժհաստատությունում անհրաժեշտ (որակյալ) դեղորայք չտրամադրելու, երբեմն բժիշկների կողմից ցուցաբերվող անտարբեր և կոպիտ վերաբերմունքի խնդիրներին: Թվարկված դեպքերում փաստորեն ստացվում է, որ պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բուժման համար անհրաժեշտ միջոցների ամբողջ ծավալը չի ապահովվում. հիվանդանոցը չի պարտավորվում անվճար հիվանդասենյակ տրամադրել, բուժումն իրականացնելու համար հիվանդին առավել որակյալ դեղորայք տրամադրել (եթե անհրաժեշտ է առավել էֆեկտիվ դեղատեսակ և այն հնարավոր չէ ձեռք բերել գնումների միջոցով, բժշկի բանավոր ցուցումով և ուղղորդմամբ հիվանդն ինքն է ձեռք բերում անհրաժեշտ դեղորայքը (կատարվող վաճառքից կոնկրետ տոկոս ստանալու ակնկալիքով), ինչի հետևանքով անօրինական վճարներ են գանձվում հիվանդից):

Այս առնչությամբ ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշմամբ սահմանված է պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բուժման համար անհրաժեշտ միջոցների ամբողջ ծավալը: Համաձայն այս որոշման՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով հիվանդանոցային բժշկական օգնությունը և սպասարկումն ընդգրկում է բուժման համար անհրաժեշտ միջոցների ամբողջ ծավալը, մասնավորապես՝ հիվանդին հիվանդասենյակով ապահովումը, դեղերով ապահովումը, մասնագիտացված խորհրդատվությունները և այլն:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. բնակչության անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում ընդգրկված բնակչության համար հատկացվող պետական ֆինանսավորման ծավալներն ավելացնել կամ հատկացվող պետական պատվերի ծավալները կիսամյակային կամ եռամսյակային կտրվածքով վերանայել,*

*2. վերահսկել երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում ստացող անձանց հիվանդասենյակներն անվճար տրամադրելու գործընթացը,*

*3. անվճար հիվանդասենյակների սանիտարահիգիենիկ խիստ անբավարար պայմանները վերացնելու նպատակով ձեռնարկել քայլեր,*

*4. վերահսկել երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում ստացող անձանց դեղորայք տրամադրելու գործընթացը:*

## ՔԼՈՒԽ 6. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածով ամրագրված է որպես հիմնական իրավունք: Տնտեսական գործունեության ազատության սկզբունքն ազատ քաղաքացիական հասարակության կայուն գոյության նախադրյալ է, մարդու ազատության տնտեսական հիմքը: Տնտեսական գործունեության ազատությունը նշանակում է իրավաբանորեն երաշխավորված հնարավորություն՝ ազատորեն օգտագործելու սեփական ընդունակություններն ու գույքն օրենքով չարգելված տնտեսական գործունեության համար, այսինքն՝ իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն:

Սահմանադրականության զարգացման ժամանակակից միտումները վկայում են, որ տնտեսական հարաբերությունները կարգավորող սահմանադրական հիմնարար սկզբունքներն իրագործելի են միայն երկրում ժողովրդավարական ազատությունների և դրանց հուսալի իրավական պաշտպանվածության պարագայում, ինչպես նաև՝ տնտեսական գործունեության արդյունավետությունն այդ իսկ գործունեության սոցիալական հետևանքների հետ խելամիտ գուգորդելու պայմաններում:

2018 թվականին Պաշտպանին հասցեագրված բողոքների քննության ընթացքում վեր են հանվել ոլորտում առկա համակարգային խնդիրներ, որոնք ներկայացվում են ստորև:

### ***1. Հարկային օրենսդրության հակասահմանադրական կարգավորման հետևանքով գործարարների սեփականության իրավունքների իրացման սահմանափակումը***

Մարդու իրավունքների պաշտպանի 2017 թվականի տարեկան հաղորդման շրջանակում վերլուծության ենթարկելով ՀՀ հարկային օրենսգրքի և Կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1373-Ն որոշմամբ սահմանվող մի շարք դրույթներ՝ առաջարկվել էր Հարկային օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ՝ «կրեդիտորական պարտք» և «դեբիտորական պարտք» եզրույթների հասկացություններն օրենքով սահմանելու և, ըստ այդմ, օրենքով չնախատեսված կարգով սեփականության իրավունքին միջամտության հնարավորությունը բացառելու համար:

2018 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը դիմում ներկայացրեց Սահմանադրական դատարան, վիճարկելով ՀՀ հարկային օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ մասի 11-րդ կետ «ա» և 123-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետերի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ 1373-Ն որոշմամբ հաստատված Հավելված N1-ով սահմանված կարգի 3-րդ կետի 2-րդ և 15-րդ կետի 2-րդ ենթակետերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը:

Հաշվի առնելով դիմումով բարձրացված խնդիրը՝ Սահմանադրական դատարանը 2018 թվականի նոյեմբերի 27-ի ՄԴՈ-1436 որոշմամբ գտել է, որ վիճարկվող կարգավորումների արդյունքում ոչ իրավաչափ կերպով միջամտություն է տեղի ունենում սեփականության իրավունքին: Մասնավորապես, Սահմանադրական դատարանը նշել է, որ Օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետով սահմանվում է, որ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է շահութահարկ վճարողների (բացառությամբ նույն մասի 3-րդ կետով սահմանված դեպքերի) կողմից՝ անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման դեպքում Կառավարության սահմանած կարգով պահուստին կատարվող մասհանումների, իսկ այդ պարտքերի դուրսգրման դեպքում՝ այդ նպատակով ստեղծված պահուստին կատարված մասհանումների գերազանցող գումարի չափով:

Այս հոդվածով սահմանվել է նաև այն հարցերի շրջանակը, որոնք պետք է կարգավորվեն Կառավարության որոշմամբ: Ստացվում է, որ Կառավարությանը չի վերապահվել լիազորություն՝ սահմանելու, թե երբ պետք է դեբիտորական պարտքը

ճանաչվի անհուսալի, այսինքն՝ սահմանվի իրավունքի իրականացման կարգ, թեև հարկային ծառայության մարմնի իրավակիրառ պրակտիկան վկայում է, որ Կառավարությունը փաստացի սահմանել է և պրակտիկայում իրացվում է հենց այդ իմաստով՝ դուրս գալով օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակից: Սահմանադրական դատարանը գտնում է, որ դեբիտորական պարտքն անհուսալի ճանաչելու կարգը նույնպես պետք է սահմանվի օրենքով, այլ ոչ թե Կառավարության որոշմամբ, քանի որ դեբիտորական պարտքն անհուսալի ճանաչելուց է նաև կախված հարկման օբյեկտը, հետևաբար նաև անձի հարկային պարտավորությունների ծավալը, ինչը նշանակում է, որ դեբիտորական պարտքն անհուսալի ճանաչելու պայմանները պետք է ամրագրվեն օրենքով, իսկ Սահմանադրությամբ նախատեսված որևէ այլ մարմին իրավասու չէ ավելի ցածր իրավաբանական ուժ ունեցող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով կարգավորել դեբիտորական պարտքն անհուսալի ճանաչելու պայմանները, այդ կերպ ոչ իրավաչափ կերպով միջամտելով սեփականության իրավունքին:

Սահմանադրական դատարանը որոշմամբ նշել է նաև, որ հարկի բովանդակությունը և հարկային պարտավորության ծավալները պետք է սահմանվեն օրենքով, իսկ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հարկային պարտավորությունը կհամարվի օրենքին համապատասխան սահմանված, եթե ոչ միայն զուտ ձևական առումով այն ամրագրվի օրենքով, այլև դրա բովանդակությունը կազմող տարրերն իրենց ամբողջական արտացոլումը գտնեն օրենքում:

Անդրադառնալով Հարկային օրենսգրքի՝ «Շահութահարկով հարկման օբյեկտը, հարկման բազան և դրույքաչափերը» վերտառությամբ 22-րդ գլխով շահութահարկի հարկմանը վերաբերող իրավակարգավորումներին՝ Սահմանադրական դատարանը նշել է, որ Հարկային օրենսգրքի՝ «Շահութահարկով հարկման օբյեկտը» վերտառությամբ 104-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ շահութահարկով հարկման օբյեկտ է ռեզիդենտ կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից և (կամ) Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող կամ ստացման ենթակա համախառն եկամուտը, բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների անձնական եկամուտների: Իսկ շահութահարկով հարկման բազա է, ի թիվս այլնի, ռեզիդենտ շահութահարկ վճարողների համար՝ հարկվող շահույթը, որը որոշվում է որպես Օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված համախառն եկամտի և Օրենսգրքի 110-րդ հոդվածով սահմանված նվազեցումների դրական տարբերություն (Օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ):

Միաժամանակ, նույն Օրենսգրքի՝ «Օրենսգրքում կիրառվող հիմնական հասկացությունները» վերտառությամբ 4-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետով տրվում է նաև համախառն եկամտի հասկացությունը, այն է՝ հաշվետու ժամանակաշրջանում ստացված կամ ստացման ենթակա Օրենսգրքով սահմանված եկամուտների հանրագումար: Նույն հոդվածով սահմանվում է նաև, որ եկամուտ է ձեռնարկատիրական, անձնական և (կամ) պասիվ եկամուտը: Օրենսգրքով սահմանվում են նաև շահութահարկով հարկման բազայի որոշման սկզբունքները, ըստ որոնց շահութահարկով հարկման բազան որոշելիս հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված սկզբունքների և կանոնների հիման վրա, եթե Օրենսգրքի սույն բաժնով և Օրենսգրքի ընդհանուր մասով դրանց կիրառության առանձնահատկություններ սահմանված չեն:

Ինչ վերաբերում է հաշվառման առանձնահատկություններին, ապա Օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ հարկի կամ բնօգտագործման վճարի հաշվարկը

կատարվում է հաշվառման հաշվեգրման մեթոդով, եթե Օրենսգրքով չի նախատեսվում, որ հարկի կամ բնօգտագործման վճարի հաշվարկը կատարվում է հաշվառման դրամարկղային մեթոդով: Իսկ նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Հարկային օրենսգրքի կիրառության իմաստով հաշվառման հաշվեգրման մեթոդը մի կողմից նշանակում է, որ հարկ վճարողը եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացնում է՝ ելնելով իր կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ իր համար այդ ծախսերը ճանաչելու պահից՝ անկախ հատուցումների ստացման կամ վճարումների կատարման պահից: Մյուս կողմից՝ հաշվառման հաշվեգրման մեթոդը հարկ վճարողը հարկերի, բնօգտագործման վճարի և հարկերից հաշվանցվող (պակասեցվող) գումարների հաշվառումն իրականացնում է՝ ելնելով հարկային պարտավորության ծագման կամ հարկերից հաշվանցվող (պակասեցվող) գումարների առաջացման պահից՝ անկախ իր կողմից իրականացվող գործարքների դիմաց հատուցումների ստացման կամ հաշվանցվող (պակասեցվող) գումարների գծով մատակարարներին կամ հարկային կամ մաքսային մարմիններին վճարումների կատարման պահից:

Վերը նշվածի համադիր ուսումնասիրության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ շահութահարկ վճարողների համար հարկվող շահույթը համախառն եկամտի և նվազեցումների դրական տարբերությունն է, ընդ որում, եթե համախառն եկամտից նվազեցվում են ձեռնարկատիրական ծախսերը, կորուստները և այլ նվազեցումները, իսկ հարկվող շահույթը որոշելիս հաշվի են առնվում եկամուտները և ծախսերը, ապա «եկամուտ չհամարվող տարբերը» և «ծախս չհամարվող տարբերը» չեն հաշվառվում և չեն արտացոլվում հարկային մարմին ներկայացվող շահութահարկի հաշվարկներում:

Սահմանադրական դատարանը Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանվել 2019 թվականի մայիսի 1-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի իրավակարգավորումները համապատասխանեցնել ՄԴՈ-1436 որոշման պահանջներին<sup>98</sup>:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տեղեկության համաձայն՝ ի կատարումը վերջինի, ՀՀ ֆինանսների նախարարությանն առաջարկվել է ՀՀ հարկային օրենսգրքով նախատեսված կանոնակարգումների՝ իրավական որոշակիության կանոնների անհամապատասխանության մասով ներկայացված խնդիրները վերացնելու նպատակով կատարել անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ: Արդյունքում, ՀՀ ֆինանսների նախարարությունը 2019 թվականի սկզբին ներկայացրել է հարկային ոլորտի օրենսդրական փոփոխությունների փաթեթ, սակայն հարկ է փաստել, որ ՀՀ կառավարությունն և Ազգային ժողովը 2018 թվականի ընթացքում քայլեր չեն ձեռնարկել Պաշտպանի 2017 թվականի տարեկան զեկույցում ամրագրված համապատասխան խնդրի՝ օրենսդրական փոփոխությունների միջոցով լուծման ուղղությամբ:

*Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ հարկային օրենսդրությունը համապատասխանեցնել 2018 թվականի նոյեմբերի 27-ի ՄԴՈ-1436 որոշմամբ արտահայտված դիրքորոշումներով ներկայացված պահանջներին:*

## **2. Ֆիզիկական անձանցից անձնական օգտագործման գույքն օտարելու դեպքում եկամտահարկի գանձումը**

2018 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին բողոքներ են հասցեագրվել ֆիզիկական անձանցից իրենց անձնական օգտագործման գույքն օտարելու դեպքում եկամտային հարկի վճարման պահանջներ ներկայացնելու վերաբերյալ:

<sup>98</sup> Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=126792>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):



Ըստ բողոքի՝ մարդն անձնական կարիքներից էլնելով հարկային տարվա ընթացքում ձեռք է բերել և օտարել երկու բնակարան, որից հետո ՀՀ ԿԵ պետական եկամուտների կոմիտեից ստացել է եկամտային հարկի պարտավորությունների վճարման մասին ծանուցում:

Մեկ այլ բողոքի համաձայն՝ մարդն օտարել է հասարակական նշանակության տարածք և ՀՀ ԿԵ պետական եկամուտների կոմիտեից ստացել է եկամտային հարկի պարտավորությունների վճարման մասին ծանուցում:

ՀՀ հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում է համարվում անձնական, ընտանեկան կամ տնային օգտագործման (բնակարան, առանձնատուն (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց), գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հող, ավտոտնակ, ավտոմեքենա) նույն տեսակի գույքի՝ տարվա ընթացքում երկրորդ և ավելի թվով օտարումը, եթե դրանց և՛ ձեռքբերումը, և՛ օտարումը տեղի է ունեցել մեկ տարվա ընթացքում: Բացի այդ, ՀՀ հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում է համարվում արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույքի, ներառյալ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմասի օտարումը: Անհրաժեշտ է նշել, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի ուժը կորցնելուց հետո ՀՀ հարկային օրենսգիրքում նշյալ դրույթը գրեթե նույնությամբ պահպանվել է: Վերոնշյալ կարգավորմամբ օրենսդիրը նպատակ է հետապնդել հարկային պարտավորություն սահմանել այն անձանց համար, ովքեր, փաստացի զբաղվելով ձեռնարկատիրական գործունեությամբ, հարկ վճարելու պարտականություն օրենքով չեն ունեցել<sup>99</sup>:

Նշվածի համատեքստում կարևոր է «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության բացահայտումը:

Ֆիզիկական անձի կողմից իրականացվող գործունեության բնույթը (այդ թվում նաև՝ ձեռնարկատիրական լինելը) որոշելիս գնահատման առարկա դարձվելիք պարտադիր հատկանիշներին անդրադարձ է կատարել ՀՀ վճարելի դատարանը 2008 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ՎՂ3/0169/05/08 վարչական գործով կայացված որոշմամբ: Մասնավորապես, նշված որոշմամբ Վճարելի դատարանն արձանագրել է, որ անհրաժեշտ է հաշվի առնել, թե արդյոք գործունեությունն իրականացվել է անձի նախաձեռնությամբ և կամքով, արդյոք գործունեությունը կրում է պարբերական բնույթ, արդյոք գործունեությունն ի սկզբանե իրականացվել է հատկապես շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով, արդյոք գործունեությունն իրականացվում է որպես մասնագիտություն (արհեստ), որի արտաքին դրսևորումներից կարելի լինի համարել առևտրի իրականացման կամ ծառայությունների մատուցման հատուկ տարածքի (խանութ, սրահ, արհեստանոց, այլ արտադրական տարածք, հատուկ հարմարեցված տրանսպորտային միջոց), տեղեկատվական-գովազդային բնույթի միջոցառումների, ապրանքի մեծ քանակության և տեսականու առկայությունը, արդյոք քաղաքացու տնտեսական գործունեությունը (քաղաքացիաիրավական գործարքը) վերաբերում է նրա անձնական գույքին և այլ առանձնահատուկ հատկանիշներ: Վճարելի դատարանը վերոնշյալ դիրքորոշումն արձանագրել է նաև թիվ 3-1161 (ՏԴ) քաղաքացիական գործով 2007 թվականի օգոստոսի 1-ին կայացրած որոշմամբ:

<sup>99</sup> Տե՛ս <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=2968&Reading=0> (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

ՀՀ հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «ա» և «բ» ենթակետերում համապատասխան դրույթների ամրագրումը նպատակ է հետապնդել պայքարել ապօրինի ձեռնարկատիրության դեմ: Սակայն իրավակիրառ պրակտիկայում վտանգվում են մարդու սեփականության, պատշաճ վարչարարության իրավունքները և համաչափության սկզբունքը: ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք: Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

Սեփականության իրավունքի պաշտպանության հարցը, մասնավորապես պետության հարկային քաղաքականության շրջանակներում, քննարկման առարկա է դարձել նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում: Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, Ուկրաինայի դեմ կայացված վճռով անդրադառնալով հարկային օրենսդրությանը, արտահայտել է դիրքորոշում առ այն, որ իրավունքի գերակայությունը, որը ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից է, ընկած է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի բոլոր հոդվածների հիմքում: Ինչպես Կոնվենցիային կից թիվ 1 արձանագրությամբ, այնպես էլ Կոնվենցիայում ամրագրված ցանկացած իրավունքի նկատմամբ պետության միջամտությունը պետք է լինի «օրինական»: Օրինական միջամտությունը ենթադրում է, որ կիրառված միջոցը պետք է սահմանված լինի ներպետական օրենսդրությամբ, ինչն էլ իր հերթին պետք է լինի շահագրգիռ անձանց համար հասանելի, հստակ և կանխատեսելի իր կիրառման մեջ<sup>100</sup>:

Սահմանադրության 50-րդ հոդվածով սահմանվում է մարդու՝ վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունքը, մինչև ժամանակ սահմանելով անձի իրեն վերաբերող բոլոր փաստաթղթերին ծանոթանալու՝ բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիքների, և մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը վերջինիս լսված լինելու իրավունքները:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Վերոգրյալի կապակցությամբ՝ 2016 թվականի փետրվարի 23-ի թիվ ՄԴՈ-1256 և 2016 թվականի հուլիսի 12-ի թիվ ՄԴՈ-1293 որոշումներով Սահմանադրական դատարանն ամրագրել է դիրքորոշում առ այն, որ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները չպիտի խաթարեն ողջամիտ հավասարակշռությունը հետապնդվող նպատակի և այդ նպատակին հասնելու համար օգտագործված միջոցի միջև:

Հետապնդվող նպատակին հասնելու համար միջոցը պիտանի է այն դեպքում, եթե այն առնվազն կարող է նպաստել այդ նպատակին հասնելուն: Հիմնական իրավունքին միջամտել անհրաժեշտ է միայն այն դեպքում, երբ հետապնդվող նպատակին անհնար է հասնել մեկ այլ, սակայն նույնչափ արդյունավետ ճանապարհով, որն ավելի քիչ կսահմանափակի խնդրո առարկա հիմնական իրավունքով պաշտպանված իրավական բարիքը: Բացի այդ, միջամտությունը պետք է համարժեք կամ չափավոր լինի, այսինքն՝ միջամտության

100 Տե՛ս Շեոկինն ընդդեմ Ուկրաինայի (Shchokin v. Ukraine) գործով 2010թվականի հոկտեմբերի 14-ի վճիռը, զանգատներ թիվ 23759/03 և թիվ 37943/06, կետ 50:

սաստկությունը չպետք է անհամարժեք լինի սահմանափակվող հիմնական իրավունքի նշանակությանը և կշռին<sup>101</sup>:

Համաչափության սկզբունքն իր արտացոլումն է գտել նաև միջազգային մի շարք փաստաթղթերում, ինչպես նաև Եվրոպական դատարանի որոշումներում առ այն, որ միջամտության համաչափությունը պետք է գնահատվի «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտության տեսանկյունից»: Ընդ որում՝ «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ» կատեգորիայի գնահատումն իրականացվում է միասնական չափանիշներով, որոնք տրվում են Եվրոպական դատարանի պրակտիկայում: Այսպես՝ միջամտությունը պետք է պայմանավորված լինի հրատապ հասարակական պահանջներով, լինի համարժեք իրավական նպատակներին հասնելու համար, իսկ փաստարկները, որոնք բերում է պատասխանող պետությունը միջամտության օգտին, պետք է լինեն համոզիչ և անվիճելի: Նման մոտեցում է դրսևորել Եվրոպական դատարանը<sup>102</sup>:

Մինչդեռ, ներկայիս կարգավորումներով անձի կողմից արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույքի, ներառյալ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կամ գույքի օտարումը նույնպես համարվում է ձեռնարկատիրական գործունեություն՝ առանց հաշվի առնելու այն, որ դրանց օտարումը կարող է իրականացվել անձնական կարիքներից ելնելով, այլ ոչ՝ ձեռնարկատիրական նպատակով:

Այս առումով անհասկանալի է նաև գույքի տարբեր տեսակների նկատմամբ հարկման տարբերակված մոտեցումը: Մասնավորապես, գույքի մի տեսակի դեպքում ձեռնարկատիրական է դիտվում նույն տեսակի գույքի՝ տարվա ընթացքում երկրորդ և ավելի թվով օտարումը, եթե դրանց և՛ ձեռքբերումը, և՛ օտարումը տեղի է ունեցել մեկ տարվա ընթացքում, գույքի մյուս տեսակի դեպքում՝ ձեռնարկատիրական է դիտվում գույքի հենց առաջին օտարումը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. Հարկային օրենսգրքի դրույթները ձևակերպել իրենց նախնական նպատակին, այն է՝ ապօրինի ձեռնարկատիրության դեմ պայքարին համահունչ,*

*2. Հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 16-րդ կետով սահմանված ձեռնարկատիրական համարվող գործունեության հասկացությունը վերաձևակերպել և անձի կողմից անձնական, ընտանեկան կամ տնային օգտագործման (բնակարան, առանձնատուն (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց), գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հող, ավտոտնակ, ավտոմեքենա) նույն տեսակի գույքի օտարումը որակել ձեռնարկատիրական միայն պարբերական բնույթ կրելու դեպքում,*

*3. Հարկային օրենսգրքում բացառել ըստ գույքի նշանակության տեսակների հարկման նկատմամբ առկա տարբերակված մոտեցումը (արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույք, ներառյալ՝ շենքեր, շինություններ (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր կամ գույք), քանի որ վերոնշյալ գույքի տեսակների համար հարկման հատուկ մեխանիզմ սահմանելը խնդրահարույց է մի շարք տեսանկյուններից, օրինակ՝ տարբերակված մոտեցում, սեփականության իրավունքի անհիմն սահմանափակում (մասնավորապես խոսքը վերաբերում է հասարակական նշանակության գույքի օտարմանը):*

<sup>101</sup> Տե՛ս Վարդան Պողոսյան, Նորա Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015 թվականի խմբագրությամբ սահմանադրությունը.-Եր.: Տիգրան Մեծ, 2016, էջ 82:

<sup>102</sup> Տե՛ս «Մանդի թայմս» թերթն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Sunday Times v. United Kingdom) գործով 1979 թվականի ապրիլի 26-ի վճիռը, գանգատ թիվ 6538/74, կետ 47:

### **3. Մաքսակետերում գոյացող հերթերը**

2018 թվականի ընթացքում Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել մաքսագերծում իրականացնելիս մաքսակետերում առաջացող հերթերի, ինչպես նաև մաքսային ձևակերպումների գործընթացի խրթին լինելու, զննման և եզրակացությունների տրման աշխատաժամանակի երկար լինելուն ուղղված միջոցառումների իրականացման վերաբերյալ:

Մաքսային վարչարարության տեսանկյունից խնդրահարույց է մաքսագերծում իրականացնելիս մաքսակետերում հերթերի գոյացումը:

Ըստ Պաշտպանին հասցեագրած բողոքների՝ մաքսակետերում գոյացող հերթերի պատճառով մարդիկ հնարավորություն չունեն օրենքով սահմանված ժամկետում մաքսագերծման գործընթացն ավարտին հասցնել և ստիպված են ավտոմեքենաները կամ ապրանքները հանձնել մաքսային պահպանության տարածք:

Խնդիրն այն է, որ ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների տեխնոլոգիական սխեմայում ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական կենտրոնի մասնաճյուղի գործառույթը մաքսագերծման մյուս փուլերից տարանջատված չէ:

Բարձրացված հարցի կապակցությամբ ՀՀ ԿԵ պետական եկամուտների կոմիտեի պարզաբանումների համաձայն՝ «Նորագավիթ» մաքսատան մասնաշենքում տեղակայված է Արարատյան մաքսատուն-վարչության փաստաթղթային հսկողության թիվ 2 բաժինը, ինչպես նաև ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական կենտրոնի մասնաճյուղը: Ներմուծված ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումներն իրականացվում են նշված փորձագիտական կենտրոնի աշխատակիցների կողմից ավտոտրանսպորտային միջոցի զննման արդյունքում տված եզրակացության հիման վրա, ինչն էլ հերթերի գոյացման հիմնական պատճառ է: ՊԵԿ-ի ներկայացրած տեղեկությունների համաձայն՝ հերթերի գոյացման պատճառ է նաև ներմուծվող ավտոմեքենաների քանակի ավելացումը:

Տնտեսության զարգացման նախապայմաններից մեկը իրավական կարգավորման և մաքսային օրենսդրության փոփոխությունների արդյունքում մաքսային վարչարարության արդյունավետության բարձրացումն է: Յուրաքանչյուր պետությունում մաքսային վարչարարության արդյունավետությունը պայմանավորված է տվյալ հասարակարգում գոյություն ունեցող ինստիտուցիոնալ միջավայրով և դրա կայացվածության մակարդակով:

Պաշտպանին հասցեագրված բողոքների քննությունը ցույց է տալիս, որ խնդրի ուղղությամբ ձեռնարկված քայլերը բավարար չեն հարցին համակարգային լուծում տալու համար:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների գործընթացը պարզեցնելու, զննման և եզրակացությունների տրման աշխատաժամանակի կրճատմանն ուղղված միջոցներ ձեռնարկել: Նշված նպատակին հասնելու համար առաջարկվում է ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների տեխնոլոգիական սխեմայում տարանջատել ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական կենտրոնի մասնաճյուղի գործառույթը մաքսագերծման մյուս փուլերից, որը հնարավորություն կտա խուսափել անհարկի հերթերի գոյացումից և ավելի կարագացնի մաքսային ձևակերպումների գործընթացը:*

### **4. ՀՀ ԿԵ պետական եկամուտների կոմիտեի հեռախոսագանգերի կենտրոնի շուրջօրյա չգործելը**

2018 թվականի ընթացքում Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել ՀՀ ԿԵ պետական եկամուտների կոմիտեի հեռախոսագանգերի կենտրոնի շուրջօրյա չգործելու վերաբերյալ:

ՀՀ ԿԵ պետական եկամուտների կոմիտեի հեռախոսագանգերի կենտրոնի նպատակը կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկ վճարողների իրավունքների և պարտականությունների, հարկերի, մաքսատուրքերի, մաքսային և այլ պարտադիր վճարների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումն է:

Հեռախոսագանգերի կենտրոնն իրականացնում է նաև հարկային ու մաքսային մարմինների և դրանց պաշտոնատար անձանց իրավասությունների և լիազորությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում, ինչպես նաև ընդունում է առաջարկություններ և բողոքներ<sup>103</sup>:

Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով նշվում է, որ Բագրատաշենի սահմանային անցակետում մարդիկ, խնդիրներ ունենալով մաքսային ծառայության աշխատակիցների հետ, փորձել են ՀՀ ԿԵ պետական եկամուտների կոմիտեի հեռախոսագանգերի կենտրոնից իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ստանալ տեղեկատվություն, սակայն չեն կարողացել, քանի որ այն գիշերային ժամերին չի գործում:

Նույն խնդրի հետ առնչվում են նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կամ այլ պետական մարմինների աշխատակիցները, որոնք քաղաքացիների բարձրացրած հրատապ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու կամ ներկայացրած խնդիրներին արագ լուծում տալու համար հնարավորություն չեն ունենում կապ հաստատել ՀՀ ԿԵ պետական եկամուտների կոմիտեի հեռախոսագանգերի կենտրոնի հետ:

Այս առումով խնդրահարույց է, որ հեռախոսագանգերի կենտրոնն աշխատում է յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 09:00-ից 18:00-ը, իսկ շաբաթ օրը՝ ժամը 10:00-ից 16:00-ը: Մինչդեռ, մաքսային ծառայություն աշխատանքը շուրջօրյա է և օրվա տարբեր ժամերին Հայաստանի Հանրապետություն են ներկրվում և արտահանվում ապրանքներ: Շատ հաճախ անհրաժեշտություն է առաջանում մարդկանց բարձրացրած հարցերի վերաբերյալ իրականացնել արագ արձագանքում: Հեռախոսագանգերի կենտրոնի շուրջօրյա չգործելու պատճառով բողոքները տեղ չեն հասնում և հետևաբար, արագ չեն լուծվում:

Անհրաժեշտ է նշել, որ մի շարք երկրներում մաքսային ծառայության թե՛ գծի հեռախոսահամարը գործում է շուրջօրյա: Մասնավորապես, մաքսային մարմինների թե՛ գծի հեռախոսահամարը շուրջօրյա գործում է Մոլդովայում<sup>104</sup>, Ռուսաստանի Դաշնությունում<sup>105</sup>,

<sup>103</sup> Տե՛ս <http://www.petekamutner.am/si.aspx?itn=siCallCenter>

<sup>104</sup> Տե՛ս [http://www.vedomosti.md/news/Esli\\_Pogranichnik\\_Ili\\_Tamozhennik\\_Narushil\\_Vashi\\_Prava](http://www.vedomosti.md/news/Esli_Pogranichnik_Ili_Tamozhennik_Narushil_Vashi_Prava), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>105</sup> Տե՛ս

[http://customs.ru/index.php?option=com\\_content&view=article&id=3079:%D0%A4%D0%A2%D0%A1%20%D0%A0%D0%BE%D1%81%D1%81%D0%B8%D0%B8%20%D0%BE%D1%82%D0%BA%D1%80%D1%8B%D0%B2%D0%B0%D0%B5%D1%82%20%C2%AB%D0%B3%D0%BE%D1%80%D1%8F%D1%87%D1%83%D1%8E%20%D0%BB%D0%B8%D0%BD%D0%B8%D1%8E%C2%BB%20%D0%B2%20%D0%BA%D1%80%D1%83%D0%B3%D0%BB%D0%BE%D1%81%D1%83%D1%82%20%BE%D1%87%D0%BD%D0%BE%D0%BC%20%D1%80%D0%B5%D0%B6%D0%B8%D0%BC%D0%B5&catid=40:2011-01-24-15-02-45&Itemid=2055](http://customs.ru/index.php?option=com_content&view=article&id=3079:%D0%A4%D0%A2%D0%A1%20%D0%A0%D0%BE%D1%81%D1%81%D0%B8%D0%B8%20%D0%BE%D1%82%D0%BA%D1%80%D1%8B%D0%B2%D0%B0%D0%B5%D1%82%20%C2%AB%D0%B3%D0%BE%D1%80%D1%8F%D1%87%D1%83%D1%8E%20%D0%BB%D0%B8%D0%BD%D0%B8%D1%8E%C2%BB%20%D0%B2%20%D0%BA%D1%80%D1%83%D0%B3%D0%BB%D0%BE%D1%81%D1%83%D1%82%20%BE%D1%87%D0%BD%D0%BE%D0%BC%20%D1%80%D0%B5%D0%B6%D0%B8%D0%BC%D0%B5&catid=40:2011-01-24-15-02-45&Itemid=2055), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Ուկրաինայում<sup>106</sup>, Ավստրալիայում<sup>107</sup>, Ղազախստանի Հանրապետությունում<sup>108</sup>, ԱՄՆ-ում<sup>109</sup>, Գերմանիայում<sup>110</sup>, Հունկոնգում<sup>111</sup>, Իտալիայում<sup>112</sup>:

*Դրական գնահատելով հեռախոսագանգերի կենտրոնի ծառայության առկայությունը, որը քաղաքացիներին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումն ապահովելուց բացի իրականացնում է քաղաքացիներին և տնտեսավարողներին հուզող շատ խնդիրների օպերատիվ լուծումը, քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների լիարժեք պաշտպանության անհրաժեշտությունից ելնելով՝ անհրաժեշտ է ՀՀ ԿԵ պետական եկամուտների կոմիտեի հեռախոսագանգերի կենտրոնի աշխատանքը դարձնել շուրջօրյա:*

## **5. Ստուգումների գործընթացի թափանցիկության ապահովումը**

2018 թվականին Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հարկային և մաքսային ոլորտում առանձնակի կարևորություն ունի տեսչական ստուգումների բարելավումը:

Պաշտպանին հասցեագրված բողոքների մի մասը վերաբերում է մաքսային և հարկային մարմինների կողմից միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ անհավասար մոտեցում ցուցաբերելուն, հայեցողական լիազորությունները չարաշահելուն, անհամաչափ վարչարարություն իրականացնելուն:

Հարկ է նկատել, որ հարկային և մաքսային քաղաքականության իրականացման հիմնական լծակը հարկային և մաքսային վարչարարությունն է, որի գործառույթների մեջ առանձնանում է հարկային և մաքսային վարչարարության կազմակերպչական և վարչարարական գործառույթը:

Որքան բարձր է հարկային և մաքսային վարչարարությունը, այնքան հարկային մուտքերը կանխատեսելի և հավաքագրվող են, տնտեսավարող սուբյեկտները գրանցվում և հաշվառվում են հարկային մարմինների կողմից, հարկային ծառայողների և հարկ վճարողների միջև չեն առաջանում կոռուպցիոն հարաբերություններ:

Հարկային և մաքսային տեսչական համակարգի բարեփոխման համար անհրաժեշտ է ներդնել ստուգումների կանխատեսելի, պարզ և հստակ ընթացակարգեր, բարձրացնել տեսուչների որակավորումը, վերազինել հարկային և մաքսային մարմինների նյութատեխնիկական բազան, ներդնել նոր ծրագրեր:

Հակառակ դեպքում կարող են առաջանալ ոչ ֆորմալ հարաբերություններ, ստվերային տնտեսություն և բյուրոկրատական ռիսկեր:

Կարևոր է հատկապես հարկային և մաքսային ստուգումների իրականացման գործընթացը, որտեղ առավել ակներև է մարդկային դերակատարությունը: Այս առումով անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել տեսչական ստուգումների իրականացման ցանկացած փուլում տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորության կիրառումը:

<sup>106</sup>Տե՛ս <https://www.ukrinform.ru/rubric-society/2040064-grazdane-obrasautsa-na-goracuu-liniu-kabmina-po-voprosam-tamoznogo-kontrola.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>107</sup>Տե՛ս <http://www.visabureau.com/australia/news/09-11-2011/australian-government-and-customs-hotline-launched.aspx>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>108</sup> Տե՛ս <https://www.zakon.kz/4569552-kazakhstanskie-tamozhenniki-zapustili.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>109</sup> Տե՛ս <https://www.usa.gov/federal-agencies/u-s-customs-and-border-protection>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>110</sup> Տե՛ս [https://www.zoll.de/EN/Contact/Other\\_contacts/other\\_contacts\\_node.html](https://www.zoll.de/EN/Contact/Other_contacts/other_contacts_node.html), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>111</sup> Տե՛ս [https://www.customs.gov.hk/en/consumer\\_protection/trade\\_desc/contact\\_us/index.html](https://www.customs.gov.hk/en/consumer_protection/trade_desc/contact_us/index.html), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>112</sup> Տե՛ս <http://www.gdf.gov.it/servizi-per-il-cittadino/contatti/come-contattare-la-guardia-di-finanza>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Վերջին տարիներին իրավապահ մարմինների գործունեության մեջ լայնորեն կիրառվում են տեխնոլոգիական նորամուծություններ: Նշված նորամուծություններից է, օրինակ, ճանապարհային ոստիկանության անձնակազմի հանդերձավորումը դյուրակիր տեսախցիկներով: Ճանապարհային ոստիկանության նման տեխնիկական հագեցումը թույլ է տալիս տեղում տուգանել ճանապարհային երթևեկության կանոնները խախտած վարորդներին, ինչը ժամանակին կասեցվել էր կոռուպցիոն ռիսկերից խուսափելու նկատառումով:

Համապատասխան կառուցակարգերի անհրաժեշտությունը բխում է նաև միջազգային չափանիշների տեսանկյունից: ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայով սահմանվում է, որ յուրաքանչյուր պետություն իր օրենսդրության հիմնական սկզբունքների համաձայն՝ միջոցներ ձեռնարկի հանրային կառավարման ոլորտում թափանցիկության ապահովման համար<sup>113</sup>:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի պլանի իրագործման վերաբերյալ իրականացրած մոնիթորինգի արդյունքում Հայաստանի վերաբերյալ զեկույցում նշվում է, որ Հայաստանը պետք է ակտիվացնի կոռուպցիայի դեմ պայքարը՝ ապահովելով օրենքների արդյունավետ կիրարկումն ու հաստատություններին համապատասխան ռեսուրսներ տրամադրելով<sup>114</sup>:

Ոստիկանության աշխատակիցների հանդերձանքի վրա դյուրակիր տեսախցիկների կիրառումը նպաստում է ոստիկանության գործունեության թափանցիկության բարձրացմանը, կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, ոստիկանության աշխատակիցների և քաղաքացիների վարքագծի բարելավմանը: Նշված տեսախցիկներում առկա ապացույցները նպաստում են քաղաքացիների բողոքներում բարձրացված հարցերի, ինչպես նաև դատական գործերի արագ լուծմանը:

Բարձրացված հարցի կապակցությամբ ՀՀ ԿԵ պետական եկամուտների կոմիտեի պարզաբանումների համաձայն՝ մաքսային հսկողությունն իրականացվում է ԵՏՄ մաքսային օրենսգրքով սահմանված ընթացակարգերին համապատասխան՝ մաքսային հսկողության գործիքների կիրառմամբ, որոնք, ըստ էության, իրականացվում են մաքսային մարմինների կայացրած որոշումների կիրառմամբ, որոնք ստանում են ձևակերպումներ կամ էլեկտրոնային համակարգում կամ փաստաթղթային վարչական ակտերով: Հետևաբար, արդյունավետության տեսանկյունից բացակայում է նշված գործընթացի տեսաձայնագրման անհրաժեշտությունը:

Հարկ է նկատել, որ դյուրակիր տեսախցիկները՝ որպես ոստիկանության և հասարակության փոխհարաբերությունների վերահսկման նոր մեթոդ, կիրառվում են շատ երկրներում: Նշված մեթոդները կիրառելի են նաև մաքսային և հարկային մարմինների ծառայողների աշխատանքում:

Այսպես, ԱՄՆ-ի խոշորագույն իրավապահ կազմակերպություն հանդիսացող մաքսային և սահմանային պաշտպանության գործակալությունը (CBP) 2013 թվականից ի վեր կիրառում է տեսախցիկներ ինչպես գործակալության փոխադրամիջոցների, այնպես էլ սպաների հանդերձանքի վրա հաշվի առնելով այն, որ կարող են լինել իրավիճակներ, երբ սպաներն ավտոմեքենաներից և փոխադրամիջոցներից հեռու կգտնվեն, իսկ դյուրակիր տեսախցիկները կուղեկցեն նրանց<sup>115</sup>:

<sup>113</sup> Տե՛ս [http://www.unodc.org/documents/treaties/UNCAC/Publications/Convention/08-50028\\_R.pdf](http://www.unodc.org/documents/treaties/UNCAC/Publications/Convention/08-50028_R.pdf), (2016 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>114</sup> Տե՛ս <https://www.oecd.org/corruption/acn/istanbulactionplan/48965498.pdf>, (2016 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>115</sup> Տե՛ս "Strengthening CBP with the Use of Body-Worn Cameras"

Նմանատիպ կարգավորումներ են առկա նաև Ֆրանսիայում<sup>116</sup>, Մեծ Բրիտանիայում<sup>117</sup>, Բելգիայում<sup>118</sup>, Սլովակիայում<sup>119</sup>, Թունիսում<sup>120</sup> և այլ երկրներում: Օրինակ՝ Ֆրանսիայի Ներքին անվտանգության օրենսգիրքը սահմանում է, որ տեսանկարահանումներ և ձայնագրություններ կարող է իրականացվել միայն համապատասխան պետական մարմինների կողմից և սահմանափակ թվով դեպքերում:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ստուգումների գործընթացի թափանցիկությունն ապահովելու, կոռուպցիայի, անհամաչափ վարչարարության բացառման նպատակով քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների հետ անմիջական շփում ունեցող հարկային և մաքսային տեսուչների համազգեստի վրա տեղակայել դյուրակիր տեսախցիկներ:*

## **6. Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կանոնները խախտելու համար կիրառվող տուգանքների անհամաչափությունը**

2018 թվականի ընթացքում Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կանոնները խախտելու համար սահմանված տուգանքների վերաբերյալ:

Մասնավորապես, բողոքներով բարձրացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կանոնները խախտելու համար սահմանված տուգանքների միասնական չափերի արդյունքում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց կողմից տնտեսական գործունեությամբ զբաղվելու ոչ համաչափ սահմանափակման հարցը: Բողոքների հիմնական մասը վերաբերում է տուգանելիս կոնկրետ իրավախախտման հանգամանքները և չափերը հաշվի չառնելուն: Նշվածի հետևանքով նշանակվող տուգանքները չեն անհատականացվում, ինչի արդյունքում տնտեսվարողը հայտնվում է ծանր իրավիճակում, ընդհուպ մինչև գործունեությունը դադարեցնելու սպառնալիքի առջև:

Այսպես, Պաշտպանին հասցեագրած բողոքներով մարդիկ բարձրաձայնել են գյուղական համայնքներում տնտեսական գործունեություն ծավալող անձանց համար խնդրո առարկա իրավակարգավորումների բացասական հետևանքների մասին: Օրինակ՝ բողոքներից մեկով ներկայացվել է, որ տնտեսվարող սուբյեկտը ՀՀ գյուղական համայնքներից մեկում ունի փոքր մթերային խանութ՝ ծավալում է տնտեսական գործունեություն: Վերջինիս պնդմամբ՝ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտմամբ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության համար նշանակվել է 150 հազար դրամի չափով տուգանք, ինչը ծանր տնտեսական հետևանքներ է առաջացրել իր համար: Ըստ բողոքի՝ գյուղական համայնքում տեղակայված խանութի պարագայում 150 հազար և երկրորդ անգամ 300 հազար դրամի չափով տուգանք նշանակելն իրատեսական չէ, քանի որ սահմանված շեմը բավականին բարձր է: Այն հանգեցնելու է իրականացվող տնտեսական գործունեության դադարեցմանը: Տվյալ պարագայում հիմնական մտահոգությունը հարկային տուգանքների անհատականացման բացակայությունն է: Դրանք չեն նշանակվում՝ հիմք ընդունելով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտի շրջանառության

<sup>116</sup> Sté u Code de la Sécurité Intérieure, art. L-251 and following

<sup>117</sup> Sté u Gary Cutlack, 'Police "body cams" make criminals 90 per cent more likely to confess' (Gizmodo, 21 August 2013) [accessed 18 March 2015]

<sup>118</sup> Sté u Body-worn cameras for police accountability: Opportunities and risks: p 754

<sup>119</sup> Sté u Act No. 652/2004 Coll. on State Administration Bodies in Border Control.

<sup>120</sup> Sté u [http://procurement-notices.undp.org/view\\_notice.cfm?notice\\_id=51998](http://procurement-notices.undp.org/view_notice.cfm?notice_id=51998), 2019 թվականի մարտի 29-ի դրությամբ:



ծավալը, ինչի հետևանքով որոշ տնտեսվարող սուբյեկտների համար այն հանգեցնում է ընդհուպ մինչև ձեռնարկատիրական գործունեության դադարեցմանը:

Մի խումբ քաղաքացիներ բարձրաձայնել են նորաբաց տնտեսական գործունեություն իրականացնող հաստատության համար իրավանորմերի կիրառության հետևանքով վրա հասած բացասական հետևանքների մասին: Այսպես, նորաբաց սրճարանի սեփականատերը տեղեկացրել է, որ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտմամբ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության համար նշանակվել է 600 հազար դրամի չափով տուգանք: Վերջինիս պնդմամբ բացման օրվանից իր գուտ եկամուտն անգամ չի հասել 600 հազար դրամի շեմին, ուստի տուգանքի նման չափի պարագայում այլևս հնարավորություն չի ունենալու շարունակել զբաղվել այդ գործունեությամբ: Բացի տուգանքի չափերի բարձր լինելը, քաղաքացին բարձրաձայնել է նաև այն մասին, որ տարբերակված մոտեցման բացակայության պայմաններում՝ նույն չափի տուգանք նշանակելու պարագայում, նորաբաց և/կամ փոքր հաստատություններն ի տարբերություն տարիներ շարունակ գործող և մեծ հաստատությունների, հայտնվում են առավել անբարենպաստ վիճակում: Վերջինի պարագայում փոքր և/կամ նորաբաց հաստատությունները, չդիմանալով տուգանքների չափերի ծանրությանը, դուրս են մղվում շուկայից:

Տեղեկատվության զանգվածային միջոցներում ևս բազմաթիվ են նույն խնդրի շուրջ առկա հրապարակումները, որոնց բովանդակությամբ բարձրաձայնվում են վերևում ներկայացված խնդիրները<sup>121</sup>:

Բացի վերոնշյալը, տնտեսվարողները բարձրաձայնում են նաև այն մասին, որ առաջին անգամ իրավախախտումը հայտնաբերելիս տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտի նկատմամբ անմիջապես կիրառվում է տուգանք՝ անկախ նրանց կողմից խախտումը կատարելու օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գործոններից: Ավելին, տարանջատում իրականացված չէ նաև փոքր և խոշոր գումարի չափով գնումներ կատարելու դեպքում հսկիչ դրամարկղային մեքենաների կտրոնները չտրամադրելու համար: Չնայած տնտեսվարող սուբյեկտները ներկայացնում են տուգանքի կիրառման հարցում անհատական մոտեցման կիրառման խնդրանք, այնուամենայնիվ ՀՀ ԿԵ պետական եկամուտների կոմիտեն այդ խնդրանքը չի բավարարում:

Ներկայացվածի վերաբերյալ առավել հանգամանալից պատկերացում ունենալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել և վերլուծել համապատասխան օրենսդրական կարգավորումները:

Այսպես, Հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-5.1-րդ մասերի իրավակարգավորման համալիր վերլուծությունից պարզ է դառնում, որ օրենսգրքով ամրագրված են հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելու դեպքում տուգանքների հստակ չափեր:

Ըստ օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով դրամական հաշվարկներ իրականացնելու պահին և վայրում հարկային մարմնում այդ վայրի հասցեով գրանցված՝ տեխնիկական պահանջները բավարարող հսկիչ դրամարկղային

<sup>121</sup> Տե՛ս «Հարկայինը տեռորի է ենթարկում փոքր բիզնեսին. Ահազանգ ՓՄՁ-ից» հոդվածը: Հասանելի է <https://www.lragir.am/2018/07/21/366092/> հղումով: «Արտաշատում մի խումբ առևտրականներ բողոքի ակցիա են իրականացնում. նրանց հետ հանդիպեց ՊԵԿ նախագահը» հոդվածը: Հասանելի է <https://www.lragir.am/2018/08/13/371016/> հղումով: «Լարված ու պայթյունավտանգ իրավիճակ Սևանում. 200-ից ավելի բնակիչներ սպառնում են փակել ճանապարհը. պատճառը որոշ բնապահպանների «գառանցանքներն» են. պահանջում են տարածքային կառավարման, առողջապահության, բնապահպանության նախարարներին»: Հասանելի է <http://shamshyan.com/hy/article/2018/08/07/1102576/> հղումով, (2016 թվականի մարտի 29-ի դրությամբ):

մեքենայի բացակայության կամ հարկային մարմնում այդ վայրի հասցեով տեխնիկական պահանջները բավարարող հսկիչ դրամարկղային մեքենա գրանցված չլինելու համար կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում է 300 հազար դրամի չափով, բացառությամբ նույն մասի 2-րդ կետով սահմանված դեպքի: Նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը նախատեսում է տուգանքի չափը հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով, այն է՝ մեկ միլիոն դրամի չափով: Նույն հոդվածի 2-րդ մասով արդեն նախատեսվում է տուգանք մեկ տարվա ընթացքում խախտումը կրկնելու դեպքում՝ 600 հազար դրամի չափով, և կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունն այդ վայրում և այդ մասով կասեցում մինչև սահմանված կարգով այդ վայրի հասցեով գործունեության այդ մասով հարկային մարմնում գրանցված հսկիչ դրամարկղային մեքենայի ապահովումը: Նույն մասով տուգանքի համար սահմանված չափը երկու միլիոն դրամ է՝ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով, և նրա գործունեությունն այդ վայրում և այդ մասով կասեցվում է մինչև սահմանված կարգով այդ վայրի հասցեով գործունեության այդ մասով հարկային մարմնում գրանցված հսկիչ դրամարկղային մեքենայի ապահովումը: Հարկ է նշել, որ նշված կարգավորումները, կապված ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձի եկամտի կամ ֆինանսական վիճակի հաշվառմամբ, չեն նախատեսում տարբեր չափի տուգանքներ:

Հարկ է նշել, որ օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասը տուգանք է նախատեսում հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների (բացառությամբ սույն հոդվածի 5.1-ին մասում նշված դեպքի) խախտմամբ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության համար՝ 150 հազար դրամի չափով, իսկ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով՝ 600 հազար դրամի չափով: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերոնշյալ խախտումներն արձանագրվելուց հետո մեկ տարվա ընթացքում խախտումն առաջին անգամ կրկնելու դեպքում՝ կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում է՝ տվյալ գործունեության իրականացման վայրում (առևտրի օբյեկտում կամ ծառայության մատուցման վայրում) տեղադրված հսկիչ դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության 0.7 տոկոսի չափով, բայց ոչ պակաս՝ 300 հազար դրամից, և կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունն այդ վայրում և այդ մասով կասեցվում է հինգ օրով: Ինչ վերաբերվում է հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությանը, ապա նշված խախտման դեպքում սահմանված է տուգանք տվյալ գործունեության իրականացման վայրում տեղադրված հսկիչ դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության 0.7 տոկոսի չափով, բայց ոչ պակաս՝ մեկ միլիոն դրամից, և նրա գործունեությունն այդ վայրում և այդ մասով կասեցվում է հինգ օրով:

Մինևույն ժամանակ, վերոնշյալ արարքը երկրորդ և ավելի անգամ կատարելու դեպքում տուգանք է նշանակվում տվյալ գործունեության իրականացման վայրում (առևտրի օբյեկտում կամ ծառայության մատուցման վայրում) տեղադրված հսկիչ դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության 0.7 տոկոսի չափով, բայց ոչ պակաս՝ 600 հազար դրամից, և կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունն այդ վայրում և այդ մասով կասեցվում է տասն օրով, իսկ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով՝ տվյալ գործունեության իրականացման վայրում տեղադրված հսկիչ դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության 0.7 տոկոսի չափով, բայց ոչ պակաս՝ 2 միլիոն դրամից, և նրա գործունեությունն այդ վայրում և այդ մասով կասեցվում է տասն օրով: Այստեղ նկատելի է, որ կրկին միակ տարբերակված մոտեցումը պայմանավորված է ձեռնարկության՝ հանրային սննդի օբյեկտ լինել կամ չլինելու փաստով: Խնդրո առարկա

կարգավորումներով արարքը կրկնելու դեպքում որպես առավելագույն սանդղակ, թեև ամրագրված է կազմակերպության արձանագրած շրջանառության 0.7 տոկոսը, բայց այս դեպքում ևս նվազագույն շեմի՝ 300 հազար կամ մեկ միլիոն դրամի, իսկ սահմանված դեպքերում՝ համապատասխանաբար 600 հազար կամ 2 միլիոն դրամի նշանակման պարագայում հանրային սննդի օբյեկտների դեպքում կրկին հաշվի չի առնում կազմակերպության ֆինանսական դրությունը:

Ավելին, նույն հոդվածի 5.1-րդ մասի համաձայն՝ ՀԴՄ-ի ծրագիրն արտաքին (առևտրային) ծրագրերի հետ ինտեգրված լինելու դեպքում կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի կողմից այդ ծրագրերի և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենայի ծրագրի միջամտության արդյունքում հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնում տպագրված կամ փաստացի վաճառված ապրանքի, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության անվանման, ապրանքային դիրքի, աշխատանքի կամ ծառայության կողի, քանակի և (կամ) ծավալի վերաբերյալ տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն հարկային մարմին ուղարկելու համար կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում են հինգ միլիոն դրամի չափով:

Նշված իրավակարգավորումների համադրումից պարզ է դառնում, որ օրենքը նախատեսում է տարբերակում միայն սննդի օբյեկտների համար, իսկ կախված ձեռնարկատիրական գործունեության այլ պայմաններով, օրինակ՝ նորաբաց լինելով, գյուղական համայնքում աշխատելով, որևէ տարբերակում նախատեսված չէ: Ստեղծված իրավիճակում համանման տուգանք կիրառելը կարող է տարբեր աստիճանի ներգործություն ունենալ մեծ և փոքր ձեռնարկատիրությունների համար: Ավելին, այն դեպքերում, երբ մեծ ձեռնարկատիրության համար այդ տուգանքի չափը կարող է չնչին համարվել, հաշվի առնելով ձեռնարկատիրության ֆինանսական դրությունը, փոքր ձեռնարկատիրության համար այն կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ առհասարակ և հանգեցնել ձեռնարկատիրական գործունեության ծավալման արգելքի: Տուգանքի և ձեռնարկատիրության ֆինանսական դրության անհամապատասխանությունը կարող է պատճառ հանդիսանալ այդ գործունեության հետագա շարունակման անհնարինության համար: Խնդրի լուծման կապակցությամբ Պաշտպանը դիմել է Սահմանադրական դատարան:

*Ուստի, անհրաժեշտ է՝ փոփոխություն կատարել ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-5.1-րդ մասերում՝ սահմանելով տուգանքների նշանակման այնպիսի մեխանիզմ, որի արդյունքում չվտանգվի ձեռնարկատիրությամբ զբաղվելու անձի իրավունքը:*

## **7. Բացօթյա, շրջիկ և շրջածախ առևտրի կազմակերպում**

2018 թվականի ընթացքում Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել Երևանի քաղաքապետարանի կողմից առանց թույլտվության բացօթյա առևտուրն արգելելու, ինչպես նաև շրջածախ առևտրի և բացօթյա առևտրի հասկացությունների տարանջատման վերաբերյալ:

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով սահմանված են բացօթյա առևտրին ներկայացվող պահանջները, որի համաձայն՝ բացօթյա առևտուր կարող են իրականացնել միայն օրենսդրությանը համապատասխան թույլտվություն ստացած իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը: Նույն հոդվածով նախատեսվում է նաև, որ թույլատրվում է միայն ծաղիկների, տնկիների, ամանոթյա տոնակատարությունների համար նախատեսված եղևնիների և սոճիների, պաղպաղակի, ջրի, այդ թվում՝ հանքային, հյութերի և զովացուցիչ ըմպելիքների բացօթյա առևտուրը, իսկ բացօթյա առևտուր իրականացնողները պետք է պահովեն պայմաններ՝

վաճառվող ապրանքների ապրանքային տեսքը, անվտանգությունը և որակն ապահովելու համար:

2018 թվականին Երևանի քաղաքապետարանը վերջնաժամկետ է ներկայացրել բանջարեղենի և մրգի բացօթյա առևտրով զբաղվողներին, որից հետո օրինախախտ առևտրականները ենթարկվել են պատասխանատվության<sup>122</sup>:

Չնայած առանց թույլտվության բացօթյա առևտուրն իրականացնելու Երևանի քաղաքապետարանի արգելքը բխում է «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներից՝ այն բազմաթիվ դժգոհությունների առիթ է դարձել: Մասնավորապես, առևտուր իրականացնողները նշում են, որ բացօթյա առևտրից ստացված եկամուտն իրենց ապրուստի միակ միջոցն է: Բացի այդ, ըստ առևտուր իրականացնողների՝ իրենց առաջարկվել է առևտրային գործունեություն ծավալել արդեն գործող վաճառակետերում և շուկաներում՝ առաջին ամսում՝ անվճար, իսկ այնուհետև՝ 500 դրամ օրավճարով: Սակայն առևտուր իրականացնողները չեն ցանկանում տեղափոխվել՝ նշելով, որ քաղաքային իշխանությունների առաջարկած վաճառակետերն առևտրի իրականացման համար բարենպաստ վայրերում չեն գտնվում և այդ վայրերում առևտրի իրականացումն իրենց համար շահավետ չի լինի: Փոխարենն առաջարկում են որոշակի պայմաններ ստեղծել կամ իրենց տաղավարներ տրամադրել այն վայրերում, որտեղ իրենք տվյալ պահին առևտուր են իրականացնում:

Նշված խնդրի վերաբերյալ Պաշտպանը Երևանի քաղաքապետարանին առաջարկել է քննարկել Երևան քաղաքում գյուղատնտեսական արտադրանքի վաճառքի նոր վայրեր կազմակերպելու հնարավորությունը: Երևանի քաղաքապետարանից տեղեկացրել են, որ վարչական շրջանների և բացօթյա ապօրինի առևտուր իրականացրած քաղաքացիների հետ կքննարկվի Երևան քաղաքում նոր գյուղատնտեսական արտադրանքի փոքրածավալ շուկաներ կազմակերպելու հնարավորությունը:

Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել շրջաձախ առևտրի և բացօթյա առևտրի հասկացությունների տարանջատման հետ կապված, ինչի հետևանքով ՀՀ ոստիկանությունը, որոշ դեպքերում, խոչընդոտներ է ստեղծում առևտուր իրականացնողների համար, քանի որ բացօթյա առևտուր կարող են իրականացնել միայն օրենսդրությանը համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների թույլտվությունը ստացած իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը, իսկ շրջաձախ առևտուր կարող են իրականացնել նաև ֆիզիկական անձինք: Քաղաքացիների պնդմամբ՝ իրենք իրականացնում են ոչ թե բացօթյա, այլ շրջաձախ առևտուր:

Մինչդեռ, տվյալ ոլորտը կարգավորող օրենսդրությամբ հստակ տարանջատված չեն բացօթյա և շրջաձախ առևտուր հասկացությունները, ինչն էլ խոչընդոտներ է ստեղծում քաղաքացիների կողմից սահմանադրորեն ամրագրված տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքի իրացման համար:

Այսպես, «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածում տրված է բացօթյա և շրջաձախ առևտրի հասկացությունները, համաձայն որի՝ բացօթյա առևտուրն առևտրի օբյեկտներից, այդ թվում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերից և առևտրի իրականացման վայրերից դուրս՝ օրենսդրությամբ թույլատրված ապրանքների առևտուրն է, իսկ շրջաձախ առևտուրն՝ առևտրի օբյեկտներից դուրս, վաճառողի հանձնարարությամբ, աշխատողի կողմից սպառողի տանը, հիմնարկներում, կազմակերպություններում, տրանսպորտում կամ փողոցում գնորդի հետ անմիջական շփմամբ իրականացվող մանրածախ առևտուրն է:

<sup>122</sup> Տե՛ս <https://hraparak.am/post/123904893>, 2019 թվականի հունվարի 11-ի դրությամբ:

Նույն օրենքի 5<sup>1</sup>-րդ հոդվածի համաձայն՝ բացօթյա առևտուր կարող են իրականացնել միայն օրենսդրությանը համապատասխան թույլտվություն ստացած իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը: Նույն հոդվածով սահմանվում են նաև բացօթյա առևտուր իրականացնելու որոշակի կանոններ:

«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքով սահմանվում են «շրջիկ առևտրի կետեր» և «շրջիկ առևտուր» հասկացությունները, ինչպես նաև սահմանվում է, որ մանրածախ առևտուրը կարող է իրականացվել նաև շրջիկ առևտրի կետերի միջոցով: Այսպիսով, շրջիկ առևտուրը նշյալ օրենքով դիտարկվում է որպես մանրածախ առևտրի տեսակ, սակայն օրենքով որևէ այլ կարգավորում չի նախատեսվում, մասնավորապես՝ բացակայում են դրույթներ, թե ովքեր և ինչ ընթացակարգով կարող են զբաղվել նշված գործունեության տեսակով, ինչը գործնականում բազմաթիվ խնդիրներ է առաջացնում տնտեսավարողների համար:

Նշյալ օրենքում ամրագրված իրավանորմերի վերլուծությունից հետևում է նաև, որ շրջիկ և շրջածախ առևտուրը կարող է իրականացվել առանց համապատասխան թույլտվության, իսկ բացօթյա առևտրի պարագայում թույլտվությունը պարտադիր է: Անհրաժեշտ է նշել, որ օրենքով չի կարգավորվում, օրինակ, թե ինչ ապրանքատեսակներ կարող են վաճառվել շրջիկ և շրջածախ առևտրի միջոցով: Բացի այդ, անհասկանալի է բացօթյա առևտուր իրականացնելու համար թույլտվություն ունենալու պահանջը, իսկ շրջիկ և շրջածախ առևտրի համար՝ ոչ, ինչպես նաև նշված չէ, թե որ վայրերում է հնարավոր իրականացնել շրջիկ և շրջածախ առևտուր:

Օրենքով տրված չէ նաև «տակդիրների» հասկացությունը, մասնավորապես անհասկանալի է, թե օրենսդիրն ինչ է ներառել տակդիրների հասկացության ներքո, ինչն անորոշություն է առաջացնում տնտեսավարողների համար:

Շրջիկ առևտրի կետերն՝ ըստ «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի, ապրանքների պահման և մանրածախ առևտրի համար համապատասխան սարքավորումներով ապահովված ավտոկրպակները, մոտոկրպակները, ավտոսայլակները, մոտոսայլակները, ավտոցիստեռներն են և այլն: Որևէ կարգավորում առկա չէ այն մասով, որ նշված շարժական գույքի օգտագործմամբ առևտուր իրականացնելիս, վերջիններս պետք է ստատիկ կերպով տեղակայվեն թույլատրված վայրերում: Շրջիկ առևտրի պարագայում, դրա նախաձեռնողն օրենսդրորեն կաշկանդված չէ տեղաշարժվել այս կամ այն վայր և իրականացնել իր գործունեությունը: Այս դեպքում արդյոք շրջիկ առևտրի կետի միջոցով վաճառքի կազմակերպման գործունեությամբ զբաղվող անձը յուրաքանչյուր անգամ, մի տեղից մյուս տեղ փոխադրվելիս, պարտավոր է տեղեկացնել համայնքի ղեկավարին: Խնդիրն առավել ընդգծված կլինի նաև այն դեպքում, երբ օրվա ընթացքում գործունեության իրականացման վայրը բազմիցս փոխվի:

Համապատասխան կարգավորումներ նախատեսված չեն նաև գործունեությունը դադարեցնելու կամ մի քանի օր շարունակ չծավալու դեպքերի համար:

*Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. Բացօթյա, շրջիկ և շրջածախ առևտրի հարաբերությունները կարգավորող օրենսդրության մեջ նախատեսել այնպիսի փոփոխություններ, որով կտրվի առևտրի նշված տեսակների հստակ սահմանազատումը և իրականացման հստակ պայմանները,*

*2. շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությամբ քննարկել Երևան քաղաքում առևտրի կազմակերպման նոր վայրեր սահմանելու հնարավորության հարցը:*

## **8. Ապրանքի մաքսագերծումը գործարքի գնի մեթոդով**

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը տարիներ շարունակ բարձրաձայնել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մաքսային մարմնի կողմից ապրանքի գործարքի գնի մեթոդով մաքսագերծումն անհիմն մերժելու և դրա արդյունքում առաջացած մի շարք խնդիրների մասին:

Խնդրի առնչությամբ 2018 թվականին ևս բողոքներ են ստացվել, որոնց ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ գործնականում հաճախ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մաքսային մարմնի կողմից տրանսպորտային միջոցների ձեռքբերման գնով մաքսագերծումը մերժվում է, և որպես քննարկվող մեթոդի կիրառմամբ մաքսագերծման մերժման պատճառաբանություն՝ նշվում է փաստաթղթերում առկա ոչ էական, շտկելի թերությունների առկայությունը, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերի արժանահավատության վերաբերյալ մաքսային մարմնի ունեցած կասկածները:

Այս դեպքում հարկ է անդրադարձ կատարել «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքին, որի 86-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ տարածաշրջանային, մասնագիտացված կամ սահմանային մաքսային մարմինները մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելու մերժման վերաբերյալ մինչև վերջնական որոշում ընդունելը, բայց ոչ ուշ, քան նշված օրենքի 78-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերը հայտարարատուի կողմից ներկայացվելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, հայտարարատուին գրավոր ներկայացնում են գործարքի գնի մեթոդով հաշվարկված մաքսային արժեքի ընդունմանը խանգարող հանգամանքները և առաջարկում են հայտարարատուին հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ներկայացնել լրացուցիչ փաստաթղթեր և (կամ) տեղեկություններ, որոնց քննության արդյունքում, նշյալ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները ներկայացվելուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, կայացնում են որոշում մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելը մերժելու վերաբերյալ կամ ընդունում են հայտարարատուի ներկայացրած մաքսային արժեքը:

Ավելին, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի՝ մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդը սահմանող 78-րդ հոդվածի 3-րդ մասը, համաձայն որի՝ անկախ նույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված դրույթներից, եթե մաքսային մարմինները հիմքեր ունեն համարելու, որ հայտարարատուի ներկայացրած փաստաթղթերը հավաստի չեն կամ կեղծ են, ապա նրանք այդ փաստաթղթերի հավաստիության ստուգման նպատակով օգտվում են սույն օրենքի 79-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված տեղեկատվությունից՝ սույն օրենքի 86-րդ հոդվածով նախատեսված մերժման ժամանակ գրավոր ներկայացնելով մերժման հիմք համարվող տեղեկատվությունը և դրա աղբյուրները: Վերջինս խնդրահարույց է նաև որոշակիության տեսանկյունից, քանի որ նշյալ կարգավորումների «մաքսային մարմինները հիմքեր ունեն համարելու, որ հայտարարատուի ներկայացրած փաստաթղթերը հավաստի չեն կամ կեղծ են» դրույթները գործնականում

Պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տվյալների համաձայն՝ 2018 թվականի ընթացքում գործարքի գնի մեթոդը կիրառվել է մաքսային ձևակերպումների 44% դեպքերում, նույնական ապրանքների վերաբերյալ գործարքի գնի մեթոդը կիրառվել է մաքսային ձևակերպումների 0.4% դեպքերում, համանման ապրանքների վերաբերյալ գործարքի արժեքի մեթոդը կիրառվել է 7.9% դեպքերում և նվազեցման մեթոդը 3.3%, գումարման մեթոդը կիրառվել է 0.01%, իսկ պահուստային մեթոդը՝ 44.4% դեպքերում: Ինչ վերաբերվում է ապրանքի մաքսային արժեքը որոշելիս գործարքի գնի մեթոդը չկիրառելուն, ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը ստացել է 54 բողոք, որից

8 դեպքով բողոքը բավարարել է, 39 դեպքով՝ մերժվել, իսկ 7 դեպքով բողոքի քննարկման վարույթը տարբեր պատճառներով կարճվել է:

Այսպես, 2008 թվականի հունվարի 25-ին ընդունված «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» համաձայնագրի համաձայն՝ ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի որոշման համար առավելագույն հնարավոր չափով հիմք պետք է ծառայի այդ ապրանքների հետ կատարվող գործարքի արժեքը, այսինքն՝ ներմուծվող ապրանքների հետ կատարվող գործարքի արժեքի մեթոդը: Այն դեպքում, եթե ներմուծվող ապրանքների արժեքն այդ ապրանքների հետ կատարվող գործարքի գնի հիման վրա հնարավոր չէ որոշել, ապա ապրանքների մաքսային արժեքը որոշվում է հիշյալ համաձայնագրով սահմանված մյուս մեթոդներին համապատասխան՝ ըստ հերթականության:

Ավելին, ՀՀ սահմանադրական դատարանը 2014 թվականի թիվ ՍԴՈ-1176 որոշմամբ արտահայտել է հստակ դիրքորոշում այն մասին, որ մաքսագերծման ժամանակ մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդն ընդհանուր կանոն է, իսկ մաքսային արժեքի որոշման այլ մեթոդները՝ բացառություն ընդհանուր կանոնից, մինչդեռ, գործնականում հակառակ պատկերն է:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք նշել, որ հարցը շարունակում է դեռևս մնալ խնդրահարույց:

*Ուստի, ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է ոլորտը կարգավորող օրենսդրության կատարելագործման և գործնականում դրա պատշաճ կիրարկումն ապահովող քայլերի ձեռնարկման միջոցով ստեղծել գործուն մեխանիզմներ, որպեսզի ապահովվի անհիմն պատճառներով գործարքի գնի մեթոդով մաքսագերծման իրականացման մերժման բացառումը:*

#### ԲԱԺԻՆ 4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության համար: Վերջինիս պահպանումը, բարելավումը և վերականգնումը պետության առջև դրված առանցքային նպատակներից մեկն է: Պետությունը, հաշվի առնելով ապագա սերունդների առջև պատասխանատվությունը, պետք է որդեգրի հստակ քաղաքականություն և, ըստ այդմ, իրականացնի քայլեր ուղղված շրջակա միջավայրի պահպանության, բարելավման և վերականգնման, բնական պաշարների ողջամիտ օգտագործման խթանմանը՝ դրա հիմքում անշեղորեն պահպանելով կայուն զարգացման սկզբունքը: Վերը նշվածն իր արտացոլումն է գտել ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածում, իսկ նշված նպատակներին հասնելու համար ՀՀ կողմից վավերացվել են ոլորտը կարգավորող մի շարք միջազգային պայմանագրեր, ընդունվել են մի շարք օրենսդրական ակտեր: Այս ամենի հետ մեկտեղ, սակայն, պետք է փաստել, որ ոլորտում առկա են համակարգային խնդիրներ, որոնք արդիական են եղել 2018 թվականի ընթացքում ևս:

##### ***1. Քիմիական նյութերի և թափոնների անվտանգ հեռացումն ու ոչնչացումը. արտադատական մարմնի ստեղծում***

Թափոնների անվտանգ հեռացման ու ոչնչացման հարցը շարունակում է մնալ լուրջ խնդիր: Համակարգային առումով խնդրահարույց է նաև այն, որ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում առկա չէ ոլորտը համակարգող միասնական մարմին: Խնդիրն այն է, որ ոլորտում իրավասությունները բաշխված են տարբեր գերատեսչությունների միջև, ինչի պատճառով առկա չէ միասնական մշտադիտարկում իրականացնող, ոլորտում առկա խնդիրների և դրության միասնական պատկերը ներկայացնող մարմին:

Շրջակա միջավայրի պահպանությանը խոչընդոտող բազմաթիվ գործոններից են թափոնները, որոնք պոչամբարներում պարունակվող ծանր մետաղներ են և կուտակվում են ջրամբարներում, գետերի հուններում: Շրջակա միջավայրի վրա վատ են անդրադառնում ոչ միայն հանքարդյունաբերության հետևանքով առաջացող քիմիական նյութերն ու թափոնները, այլև կենցաղային թափոնները: Թափոնները շրջակա միջավայրին հասցնում են անդառնալի վնասներ՝ աղտոտված մթնոլորտային օդ, ընդերք, ջրեր և հողեր: Նշվածն իր հերթին բացասաբար է անդրադառնում մարդու կենսագործունեության և արժանապատիվ կյանքի ու առողջության պահպանման իրավունքների իրացման վրա:

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության՝ վտանգավոր թափոնների ոչնչացման կամ հեռացման գործունեությունն իրականացվում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» թիվ 121-Ն որոշմամբ սահմանված կարգով լիցենզավորված կազմակերպությունների կողմից: Նույն կարգի համաձայն՝ լիցենզիայի պահանջների և պայմանների կատարման նկատմամբ վերահսկողությունն օրենքով սահմանված կարգով իրականացնում են ՀՀ բնապահպանության և առողջապահության նախարարությունների համապատասխան տեսչական մարմինները:

Միննույն ժամանակ շրջակա միջավայրի վրա թափոնների բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով ձեռնարկվել են քայլեր, այդ թվում՝ 2018 թվականի ընթացքում Սյունիքի մարզի Կապան քաղաքում փորձ է արվել ուղղված թափոնների տեսակավորմանը հետազայում նաև վերամշակման նպատակով, որն էլ իրականացվում է «Բնապահպանական մարտահրավերի վերածումը հնարավորությունների. պլաստիկ թափոններից շինանյութի



ստացում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Եվրոպական միության և ՀՀ Կառավարության համաֆինանսավորմամբ: Աղբի տեսակավորման նպատակով աղբավայրում կենցաղային թափոնների տեսակավորման ենթակառուցվածքներ են ստեղծվում «Առկա լավագույն տեխնոլոգիայի կամ բնապահպանական իմաստով լավագույն գործունեության մեթոդաբանության կիրառումը՝ բաց այրման աղբյուրներից կայուն օրգանական աղտոտիչների ոչ կանխամտածված արտանետումների նվազեցման համար» ծրագրի շրջանակներում<sup>123</sup>:

«Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 483-Ն որոշման հավելված 1-ով սահմանված՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում իրականացվելիք միջոցառումներից է ՀՀ բնապահպանության նախարարության կողմից շրջակա միջավայրի օրենսդրությունը և ոլորտի քաղաքականության համապատասխանեցումն Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ կայացրած որոշումներին, մասնավորապես, շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության ազատության, որոշումների ընդունմանը հանրության արդյունավետ մասնակցության և դատական մատչելիության հարցերում:

Այս միջոցառման շրջանակներում գործողությունները նախատեսվում են իրականացվել 2017-2019 թվականների ընթացքում՝ պարբերաբար: Ուսումնասիրելով ՀՀ բնապահպանության նախարարության 2018 թվականի հաշվետվությունները՝ պարզ է դարձել, որ Օրհուսի կոնվենցիայի կողմերի հանդիպման V/9A որոշմամբ և դրանից բխող Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի կողմից՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում հանրության կողմից դիտողություններ և առաջարկություններ ներկայացնելու ժամկետները երկարաձգելու նպատակով ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 9-ի N 357-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ, համաձայն որի հանրությանն իրավունք է վերապահվել ներկայացնել ցանկացած դիտողություն և առաջարկություն, որը նրա կարծիքով առնչվում է հիմնադրությային փաստաթղթին և նախատեսվող գործունեությանը, և վերացվել են հանրության կողմից ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի առնելու սահմանափակումները:

Չնայած իրականացված որոշակի քայլերին՝ պետք է փաստել, որ քննարկվող ոլորտը կարգավորող միասնական համակարգ և կենտրոնացված մշտադիտարկող մարմին 2019 թվականի մարտի 29-ի դրությամբ ստեղծված չէ: Ելնելով վերոգրյալից, հարկ է նշել, ոլորտի խնդիրների համակարգային լուծման ուղղությամբ դեռևս պետք է իրականացնել շարունակական գործողություններ:

*Ելնելով վերոգրյալից առաջարկվում է՝*

1. *ստեղծել շրջակա միջավայրի պահպանության ոլորտի միասնական կառավարման համակարգ՝ ստեղծելով նաև կենտրոնացված մշտադիտարկող անկախ մարմին:*

2. *օրենսդրական փոփոխությունների հետևանքով ստեղծել արտոնություններ տրամադրող ու տնտեսական խրախուսանքի այլ միջոցներ կիրառող ծրագիր (քաղաքականություն) այն տնտեսվարողների նկատմամբ, ովքեր կներդնեն, կկիրառեն կամ կիրականացնեն առավելագույն անթափոն միջոցներ, մեխանիզմներ կամ տեխնոլոգիաներ,*

<sup>123</sup> Տե՛ս <https://www.euneighbours.eu/hy/east/eu-in-action/stories/hayastanowm-arajin-angam-plastik-taponnerits-sinanyowt-kstanan>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

կամ կրնտրեն դրանց այն տեսակները, որոնք էկոլոգիապես անվտանգ են և շրջակա միջավայրի վրա ունեն նվազագույն վնասակար ազդեցություն:

## **2. Շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ հանրային իրազեկման և հանրության պատշաճ ներգրավվածության ապահովումը**

Շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ հանրային իրազեկման և հանրության պատշաճ ներգրավվածության ապահովման խնդիրը, որի մասին նշվել է «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի որոշումներում, տարիներ շարունակ բարձրաձայնվում է նաև Մարդու իրավունքների պաշտպանների կողմից:

Մասնավորապես, Հայաստանի՝ Օրհուսի կոնվենցիայի պահանջներին համապատասխան լինելու վերաբերյալ Կոմիտեի VI/8ա որոշմամբ առաջարկվում է որպեսզի շարունակվեն աշխատանքներն ուղղված հանրային լսումների պատշաճ իրականացմանը<sup>124</sup>, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում հանրության կողմից դիտողություններ և առաջարկություններ ներկայացնելու համար ավելի երկար ու ողջամիտ ժամկետներ սահմանելուն<sup>125</sup>, ինչպես նաև ազգային օրենսդրությունը համապատասխանեցնել Օրհուսի կոնվենցիայի արդարադատության մատչելիությունն ամրագրող 9-րդ հոդվածի 2-րդ կետին<sup>126</sup>: Միաժամանակ Կոմիտեն նշել է, որ չնայած մի շարք քայլեր են կատարվել կոնվենցիոն պարտավորությունների կատարման ուղղությամբ, այնուամենայնիվ, Հայաստանը դեռևս չի կատարել կոմիտեի որոշման մի շարք պահանջներ<sup>127</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում անդրադարձ է կատարվել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և Հայաստանի կողմից վավերացված Օրհուսի կոնվենցիայի պահանջների միջև առկա որոշակի հակասությունների, որոնք շարունակվել են նաև 2018 թվականին: Այսպես, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանրության ծանուցումն իրականացնում է լիազոր մարմինը՝ ձեռնարկողի ներկայացրած հայտի, հաշվետվությունների և փորձաքննական եզրակացության նախագծի մասին լսումներից առնվազն 7 աշխատանքային օր առաջ:

Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ մինչև 2014 թվականին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի ընդունումը ՀՀ-ում գործում էր 1995 թվականին ընդունված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը, որով նախատեսվում էր առավել երկար ժամկետներ:

<sup>124</sup> Տե՛ս Հայաստանի՝ Օրհուսի կոնվենցիայի պահանջներին համապատասխան լինելու վերաբերյալ Կոմիտեի VI/8ա որոշում, կետ 3(ա),

[https://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/compliance/MoP6decisions/Compliance\\_by\\_Armenia\\_VI-8a.pdf](https://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/compliance/MoP6decisions/Compliance_by_Armenia_VI-8a.pdf)

<sup>125</sup> Տե՛ս Հայաստանի՝ Օրհուսի կոնվենցիայի պահանջներին համապատասխան լինելու վերաբերյալ Կոմիտեի VI/8ա որոշում, կետ 3(բ),

[https://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/compliance/MoP6decisions/Compliance\\_by\\_Armenia\\_VI-8a.pdf](https://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/compliance/MoP6decisions/Compliance_by_Armenia_VI-8a.pdf)

<sup>126</sup> Տե՛ս Հայաստանի՝ Օրհուսի կոնվենցիայի պահանջներին համապատասխան լինելու վերաբերյալ Կոմիտեի VI/8ա որոշում, կետ 3(գ),

[https://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/compliance/MoP6decisions/Compliance\\_by\\_Armenia\\_VI-8a.pdf](https://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/compliance/MoP6decisions/Compliance_by_Armenia_VI-8a.pdf)

<sup>127</sup> Տե՛ս Հայաստանի՝ Օրհուսի կոնվենցիայի պահանջներին համապատասխան լինելու վերաբերյալ Կոմիտեի VI/8ա որոշում,

[https://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/compliance/MoP6decisions/Compliance\\_by\\_Armenia\\_VI-8a.pdf](https://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/compliance/MoP6decisions/Compliance_by_Armenia_VI-8a.pdf)

Մասնավորապես, օրենքով սահմանվում էր, որ ազդակիր համայնքի ղեկավարները և ձեռնարկողը ծանուցումը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, կազմակերպում են նախատեսվող գործունեության վերաբերյալ հասարակական լուսմներ (որի արարողակարգը որոշում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը)՝ լրատվական միջոցներով տեղեկություններ հաղորդելով նախատեսվող գործունեության, լուսմների տեղի և ժամկետի մասին<sup>128</sup>: Նույն օրենքի համաձայն՝ լիազորված մարմինը, ազդակիր համայնքի ղեկավարները և ձեռնարկողը 30 օրացուցային օրվա ընթացքում կազմակերպում ու ապահովում են հասարակայնության կողմից փաստաթղթերի ուսումնասիրությունը և լուսմները<sup>129</sup>: 2014 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների հետևանքով հանրության ծանուցումն իրականացնում է լիազոր մարմինը՝ ձեռնարկողի ներկայացրած հայտի, հաշվետվությունների և փորձաքննական եզրակացության նախագծի մասին լուսմներից առնվազն 7 աշխատանքային օր առաջ : Ինչպես տեսնում ենք, նոր օրենքում վերը նշված 30 օրը դարձել է 7 օր, և կարծիք հայտնելու համար ժամկետ ընդհանրապես չի սահմանվել: Մինչդեռ, Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեն իր կայացրած որոշումներում<sup>130</sup> օրենքի հիշյալ դրույթների վերաբերյալ նույնպես ներկայացրել էր վերջինիս և կիրառվող պրակտիկայի անհամապատասխանությունը կոնվենցիային<sup>131</sup> և խնդրահարույց էր համարել օրենքով նախատեսված ժամկետները:

2018 թվականի օրենքում փոփոխություններ չեն կատարվել, ուստի խնդիրը շարունակում է մնալ չլուծված:

*Հիմք ընդունելով վերոգրյալը և ի կատարումն Կոմիտեի հանձնարարականների՝ անհրաժեշտ է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ՝ վերջինիս 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի կարգավորումները համապատասխանեցնելով Օրհուսի կոնվենցիային և սահմանելով հանրային լուսմների վերաբերյալ հանրությանը ծանուցելու առավել երկար ժամկետներ:*

### **3. Փոքր ՀէԿ-երի կառուցմանը զուգահեռ՝ ջրային ռեսուրսների գերօգտագործումը. գետային էկոհամակարգեր**

Ջուրը կյանքի աղբյուր է, մաքուր ջուրը և սանիտացիայի պահպանումը՝ կարևոր երաշխիք առողջության պահպանման համար: Ջրի և սանիտացիայի հասանելիության ապահովումն այն առաջնային հարցերից է, որը դրված է բազմաթիվ պետությունների և միջազգային կազմակերպությունների քննարկման սեղանին: Վերջինի խոսուն փաստը «Կայուն զարգացման 2030 օրակարգն» է, որն ընդունվել է աշխարհի երկրների առաջնորդների կողմից 2015 թվականի սեպտեմբերին կայացած ՄԱԿ-ի գագաթնաժողովի ժամանակ: Օրակարգում ներառված 17 նպատակներում անմասն չեն մնացել նաև այնպիսի հարցեր, որոնք անդրադառնում են ջրի և սանիտացիայի հասանելիության խնդրին: Մասնավորապես, «Օրակարգ 2030»-ով նպատակ է դրված բոլորի համար ապահովել ջրի ու սանիտարական պայմանների հասանելիությունը և վերջիններիս կայուն ձևով կառավարումը, այդ ճանապարհին լուծելով անվտանգ և մատչելի խմելու ջրի համընդհանուր, հավասար հասանելիությունից ընդհուպ մինչև բոլորի համար համարժեք և

<sup>128</sup> Տե՛ս «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք (1995 թվական), հոդված 6:

<sup>129</sup> Տե՛ս «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք (1995 թվական), հոդված 8:

<sup>130</sup> Տե՛ս <http://www.unece.org/env/pp/ccimplementation.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>131</sup> Տե՛ս <http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/documents/cep43e.pdf>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

հավասար սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման և ջրամատակարարման ու ջրահեռացման կառավարման բարելավման ոլորտներում առկա խնդիրները<sup>132</sup>:

Հայաստանի Հանրապետությունում առկա են գետային էկոհամակարգերի հետ կապված խնդիրներ, ինչին հանգեցնում են ջրային ռեսուրսների գերօգտագործումն ու վատնումը: Վերջինիս հիմնական պատճառներից մեկը ՓՀԵԿ-երն են և դրանց շահագործման ժամանակ տեղ գտած խախտումները: Շրջակա միջավայրի վրա նման բացասական ազդեցությունների և, ըստ այդմ, առաջացող հետևանքների մասին մշտապես բարձրաձայնվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից:

Խնդիրների մասին բարձրաձայնել են նաև ոլորտի մասնագետները: Այսպես, «Աջակցություն նոր բարեփոխումներին փոքր ՀԵԿ-երի բնագավառում ՔՀԿ-կառավարություն երկխոսության միջոցով» ծրագրի տվյալների ամփոփման արդյունքում պարզվել է, որ 0-1 Մվտ հզորությամբ ՓՀԵԿ-երը չեն անցնում բնապահպանական փորձաքննություն, թեպետ իրենց գործունեությամբ էական վնաս են պատճառում գետային էկոհամակարգին, առկա է փոքր ՀԵԿ-երի գործունեության թափանցիկության և վերահսկողական մեխանիզմների անբավարարություն, բացակայում են ՓՀԵԿ-երի կառուցման համար արգելված գոտիները, ինչպես նաև չի ապահովվում բնապահպանական թողքը և բացակայում է թողքի նկատմամբ վերահսկողությունը<sup>133</sup>:

2018 թվականի ընթացքում սույն ոլորտում առկա խնդիրների լուծման և վիճակի բարելավման համար իրականացվել են որոշակի քայլեր: Այսպես, ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ներկայացված տեղեկությունների համաձայն՝ Կառավարության 2018 թվականի մարտի 1-ին կայացած նիստի N8 արձանագրության 6-րդ կետով հավանության է արժանացել փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման համար շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման չափորոշիչները:

Կառավարության 2018 թվականի հունվարի 25-ի N57-Ն որոշմամբ հաստատվել է էկոլոգիական թողքի հաշվարկման նոր մեթոդիկան: Բացի այդ, ՀՀ բնապահպանության նախարարությունից տեղեկացրել են, որ մշակվել է «ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվել են նոր ՓՀԵԿ-երի կառուցման համար արգելված գոտիները և կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայաններին տրամադրվող ջրօգտագործման թույլտվությունների հայտերի մերժման հիմքերը: Նախագիծն առաջին ընթերցմամբ ընդունվել է Ազգային ժողովի 2018 թվականի հոկտեմբերի 23-ի նիստում:

2018 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության աշխատակիցների կողմից գնություն է իրականացվել Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր՝ 188 ՓՀԵԿ-ում, ինչի հետևանքով բացահայտվել է 170 խախտում, մասնավորապես՝ ուսումնասիրված ՓՀԵԿ-երում բացակայել են ջրաչափական սարքերը, չի պահպանվել էկոլոգիական թողքը, բացակայել են ձկնապաշտպան կառույցները և ձկնանցարանները: Նշված խախտումների մասին սահմանված կարգով տեղեկացվել է բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին:

2018 թվականի սեպտեմբերի 5-ի Վարչապետի թիվ 1177-Ա որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որն ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետությունում գործող թիրախային փոքր հիդրոէլեկտրակայանները, որոնց արտադրած էլեկտրաէներգիայի, դրա դիմաց փաստացի ջրառի և բնապահպանական օրենսդրության պահանջների խախտման այլ փաստերը, ինչի հետևանքով պարզվել է, որ գրեթե բոլոր ուսումնասիրված ՓՀԵԿ-երում բացակայել են ջրաչափական սարքերը, ինչը

<sup>132</sup> Տե՛ս <http://un.am/hy/p/sustainable-development-goal-6>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>133</sup> Տե՛ս <https://www.ecolorg.org/hy/news/energy/-/10244/>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

հակասում է ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված պահանջին: Հիմնականում չեն պահպանվել բնապահպանական թողքերի ծավալները, մի քանի անգամ չապահովելով թույլատրված չափաքանակները, ինչպես նաև գետի հունում բացակայել են ձկնապաշտպան կառույցները և ձկնանցարանները, կամ էլ, առկայության դեպքում, չեն ծառայել իրենց նպատակին: Արձանագրվել են նաև փաստեր, երբ ՓՀԵԿ-երում տեղակայված ագրեգատները չեն համապատասխանել լիցենզիայում ամրագրված պայմաններին, ինչպես նաև տվյալ ժամանակահատվածի համար ջրօգտագործման թույլտվությամբ տրված ջրառի չափաքանակների բազմակի գերազանցման փաստեր:

Վերոնշյալ փաստերը վկայում են, որ խնդիրը համակարգային և պարբերական ուսումնասիրման պետք է ենթարկվի:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է ուժեղացնել փոքր ՀԵԿ-երի շահագործման նկատմամբ վերահսկողությունը, որպեսզի կանխվեն և վերացվեն դրանց շահագործման հետևանքով առաջացող ջրային ռեսուրսների գերօգտագործումն ու էկոհամակարգերի հետ կապված խնդիրները:*

#### **4. Ամուլսարի հանքավայրի շինարարություն և շահագործում**

Բնապահպանների և քաղաքացիական հասարակության կողմից բազմիցս բարձրաձայնվել է Ամուլսար լեռան վրա կատարվող ոսկու հանքի շինարարական աշխատանքների և հետագայում հանքավայրի շահագործման հետևանքով շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության խնդիրը: Խնդրի մասին բազմաթիվ բողոքներ են հասցեագրվել նաև Մարդու իրավունքների պաշտպանին 2018 թվականին: Պաշտպանին դիմել են ինչպես շրջակա տարածքների բնակիչները, այնպես էլ հանքի շահագործման համար թույլտվություն ստացած ընկերությունը և վերջինիս աշխատակիցները:

Բազմաթիվ բնապահպանների և փորձագետների կողմից բազմիցս բարձրացվել է «Լիդիան Ինթերնեյշնլ» ընկերության կազմած «Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի հանքարդյունահանման համալիր փոփոխված նախագծի՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում» փաստաթղթին տրված դրական եզրակացությունն առոչինչ ճանաչելու և հանքավայրի շինարարական աշխատանքները կասեցնելու հարցը, այն պնդմամբ, որ պետական փորձաքննական եզրակացությունը տրվել է առանց փորձաքննության իրականացման, և որ Ամուլսարի հանքի շահագործումը կարող է հանգեցնել բազում էկոլոգիական վտանգների առաջացմանը<sup>134</sup>: Ամուլսարի հանքավայրի շահագործման համար ՀՀ բնապահպանության նախարար կողմից տրվել է դրական եզրակացություն հաստատված թիվ ԲՓ-35 պետական փորձաքննական եզրակացությամբ դեռ 2016 թվականի ապրիլի 29-ին:

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից ներկայացվել են իրականացված ստուգումների արդյունքները: Այսպես, 2018 թվականի հուլիսի 6-ից օգոստոսի 2-ն ընկած ժամանակահատվածում «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ում իրականացված ստուգումների արդյունքում պարզվել է, որ 2016 թվականի շահագործման փոփոխված նախագծի գլխավոր հատակագծում նշված «PL-4» կոնվիեր հարթակի շինարարական աշխատանքների ընթացքում «PL-12» ջարդիչ կայանի հարթակից կոնվիերի ուղղությամբ 1,5 կմ դեպի «PL-3» մանր հանքաքարի կույտի /բեռնատարների բեռնաթափման հարթակի/ հատվածում լեռնային զանգվածն ընկերության կողմից տեղադրվել է նշված հարթակի հարավ արևմտյան հատվածում գտնվող գյուղատնտեսական նշանակության մոտավորապես 1,1 հա հողատարածքի վրա: Ինչպես նաև Տեսչական մարմինը տեղեկացրել է, որ պարզվել է,

<sup>134</sup> Տե՛ս <https://www.econews.am/?p=8721&l=am>, <https://www.ecolur.org/hy/news/mining/--/10594/>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

որ ընկերությունը չունի սահմանային թույլատրելի արտանետումների նախագիծ, որի համաձայն սահմանված կլինե՝ անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար արտանետումների նորմատիվային սահմանված չափաքանակները և արտանետման թույլտվությունը:

Ստուգումների արդյունքում պարզվել է նաև, որ շինարարական աշխատանքների արդյունքում մթնոլորտ է արտանետել 60,566 տոննա փոշի, իսկ հասցված վնասը կազմել է 7 699 160 (յոթ միլիոն վեց հարյուր իննսունինը հազար հարյուր վաթսուն) դրամ, ինչպես նաև արձանագրվել է հողային աշխատանքների խախտում, համաձայն որի՝ ազդեցության գնահատականը կազմել է՝ 21 250 231 (քսանմեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար երկու հարյուր երեսունմեկ) դրամ:

Տեսչական մարմինը տեղեկացրել է նաև, որ ստուգումներով արձանագրվել է, որ ընկերության կողմից շինարարական աշխատանքների ընթացքում շինարարական հրապարակները չեն պատսպարվել, ընկերությունը չունի ավտոմեքենաների լվացման կայան, շինարարական հրապարակից դուրս եկող մեքենաների անվաղողերը չեն լվացվել, շինարարական աշխատանքների ընթացքում սորուն նյութերը չեն տեղադրվել փակ տարածքներում և ծածկված չեն անթափանց թաղանթով: Նշված խախտումները վերացնելու նպատակով տրվել է հանձնարարական:

Ըստ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տեղեկությունների՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի կողմից 2016 թվականին տրված պետական փորձաքննական ԲՓ-35 եզրակացությունը ուժը կորցրած ճանաչելու առաջարկություն է ներկայացվել, որի համար հիմք են հետևյալ հանգամանքները.

1. «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ում իրականացված ստուգման ընթացքում ներգրավված մասնագետների կողմից, համաձայն վերջիններիս ներկայացված մասնագիտական եզրակացությունների (հաշվետվությունների), Ամուլսարի տարածքում առաջին անգամ հայտնաբերվել է Հայաստանի Հանրապետության բույսերի կարմիր գրքում գրանցված երկու տեսակի բարձրակարգ բույսեր, որոնցից մեկն ամենայն հավանականությամբ Ոգնաթուփ մեխակին է (*Acantholimon caryophylaceum* Boiss.) և Հայաստանի Հանրապետության կենդանիների կարմիր գրքում գրանցված 5 տեսակի կենդանիներ, որոնցից մեկը՝ ապոլոն տեսակի թիթեռը (*Parnassius apollo*):

2. «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ն ԼՎ-245 լեռնահատկացման ակտով տրամադրված տարածքները զրկել է հողային և բուսական ծածկույթից և լրիվ խախտել է կենսացենոզը, որը կարող է շրթայական բացասական ազդեցություն ունենալ Ամուլսարի բույսերի և կենդանիների բազմազանության. նրանց քանակի և կենսունակության վրա: Նշվածով պայմանավորված ընկերության գործունեությունը կարող է հանգեցնել Հայաստանի Հանրապետության բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված վերը նշված տեսակների թվի կրճատմանը, ինչպես նաև այդ բույսերի աճելավայրերի և կենդանիների ապրելավայրերի վատթարացմանը:

Վերոնշյալ խնդրի շրջանակներում, ըստ ՀՀ բնապահպանության նախարարության՝ նախատեսվում է իրականացնել նաև միջազգային փորձաքննություն, մասնավորապես առկա են տվյալներ, որ մրցույթ է հայտարարված՝ միջազգային ընկերության ներգրավման նպատակով, ինչի արդյունքում կառավարությունն ավելի լիարժեք տեղեկատվություն կունենա շրջակա միջավայրի հիմնական բաղադրիչների վրա Ամուլսարի ազդեցության վերաբերյալ<sup>135</sup>:

Հարկ է նաև նշել, որ Ջերմուկ խոշորացված համայնքի ավագանին 2018 թվականի դեկտեմբերի 18-ին որոշում է ընդունել, որով հավանություն է տվել համայնքի բնակիչների

<sup>135</sup> Տե՛ս <http://www.mnp.am/am/post/3603>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

կողմից համայնքի ավագանուն ներկայացրած կոլեկտիվ հանրագրում նշված «Ջերմուկ համայնքն էկո-տնտեսական տարածք դարձնելու և համայնքում մետաղական հանքարդյունաբերությունն արգելելու վերաբերյալ» առաջարկությանը: Հանրագրում բնակիչները նշել էին նաև հետևյալի մասին, որ Ամուլսարում ոսկու արդյունահանմանը դրական եզրակացություններ տալով՝ մինչև 2016 թվական Ջերմուկը չի համարվել Ամուլսարի ծրագրի ազդակիր, իսկ 2016 թվականին ազդակիր հայտարարվելուց հետո էլ այնտեղ պատշաճ կարգով չեն կազմակերպվել հանրային լսումներ<sup>136</sup>:

2018 թվականին Պաշտպանին բողոք են հասցեագրել «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության 174 կին աշխատակիցները, որոնցով բողոք ներկայացրած մարդիկ տեղեկացրել են, որ մի խումբ անձինք գրեթե երկու ամիս փակել են իրենց աշխատավայր տանող ճանապարհը, ինչի հետևանքով իրենք չեն կարողանում մուտք գործել աշխատավայր: Բողոք ներկայացրած անձանց պնդմամբ՝ Ամուլսարի հարակից համայնքներում, հատկապես՝ Ջերմուկում և Գնդևագում, վերոնշյալ անձանց կողմից ենթարկվում են հարձակումների, իրենց հասցեին հնչեցվում են սպառնալիքներ և գործադրվում են ճնշումներ: «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության ևս 192 աշխատակիցներ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրել են նույնաբովանդակ բողոք:

Բացի այդ, նույն ընկերության տնօրենը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրել է բողոք այն մասին, որ «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությանը պատկանող տարածքներ տանող ճանապարհը մի խումբ անձանց կողմից ապօրինի փակելու կապակցությամբ հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության Ջերմուկի բաժին: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ նշված հաղորդման հիման վրա նախապատրաստվել են նյութեր, և 2018 թվականի օգոստոսի 6-ին անհիմն որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին: Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքին կից ներկայացված փաստաթղթի ուսումնասիրմամբ պարզվել է նաև, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին հիշյալ որոշման դեմ նշված ընկերության տնօրենի կողմից բողոք է ներկայացվել նաև ՀՀ գլխավոր դատախազություն:

Այնուհետև, բողոքի ուսումնասիրության ընթացքում Պաշտպանի աշխատակազմ է մուտքագրվել նաև «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության աշխատակիցների 46 մերձավոր ազգականների բողոքն այն մասին, որ 2018 թվականի օգոստոսի 27-ին ընկերության աշխատակիցները փորձել են մուտք գործել աշխատավայր, սակայն ենթարկվել են ծեծի, ինչի հետևանքով մի քանի մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ և տեղափոխվել բժշկական հաստատություններ: Բողոք ներկայացրած անձանց պնդմամբ՝ հարձակում գործած անձինք եղել են զինված, թմրանյութերի և ալկոհոլի ազդեցության տակ, իսկ միջադեպին ականատես Ոստիկանության բարձրաստիճան ծառայողները որևէ գործողություն չեն ձեռնարկել միջադեպը կանխելու ուղղությամբ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին բողոք են հասցեագրել «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության կին աշխատակիցները, որոնց հասցեագրած բողոքի քննարկման շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազություն ուղարկված գրությանն ի պատասխան՝ Դատախազությունից տեղեկություն է տրամադրվել, որ բողոքում նշված դեպքի առթիվ 2018 թվականի օգոստոսի 28-ին Վայոց ձորի մարզի դատախազությունում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով հարուցվել է քրեական գործը և նախաքննությունը կատարելու նպատակով ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչություն:

<sup>136</sup> Տե՛ս <https://www.ecolor.org/hy/news/amulsar/-/10701/>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Բողոքի քննարկման շրջանակներում ՀՀ ոստիկանությունից տեղեկություն է ստացվել այն մասին, որ ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության և ենթակա բաժինների ծառայողների արարքների առթիվ 2018 թվականի սեպտեմբերի 14-ին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործը:

Ավելին, ըստ Դատախազության տվյալների՝ հաղորդումների առթիվ 2018 թվականի օգոստոսի 28-ին Վայոց ձորի մարզի դատախազությունում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործը, որն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչություն նախաքննություն կատարելու: Հիշյալ քրեական գործով ներգրավված է մեկ մեղադրյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով: Բացի այդ, ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության և ենթակա բաժինների ծառայողների գործողությունների /անգործության/ դեպքի առթիվ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է քրեական գործը՝ որով նախաքննությունը շարունակվում է, որպես մեղադրյալ ներգրավված անձ չկա: Քրեական գործերով նախաքննությունը շարունակվել է 2018 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ:

*Վերոնշյալ տվյալներից կարելի է հետևություն անել, որ առկա է համակարգային խնդիր. մի կողմից անհրաժեշտ է հաշվի առնել հարակից համայնքների բնակիչների իրավունքները և իրականացնել իրավիճակի անկախ և համալիր գնահատում, մյուս կողմից էլ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել աշխատակիցների իրավունքների ոտնահարման և վերջիններիս ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության դեմ ոտնձգությունների բացահայտման ուղղությամբ:*



## ԲԱԺԻՆ 5. ՊԱՏՇԱՃ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Վարչարարության օրինականության, ձևական պահանջները չարաշահելու արգելքի, հայեցողական լիազորությունների սահմանափակման, կամայականության արգելքի, վարչարարության համաչափության, տնտեսվարության, հավաստիության կանխավարկածի և առավելագույնի սկզբունքի պահպանմամբ յուրաքանչյուր ոք վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք ունի: Այն իր ամրագրումն է ստացել ինչպես ՀՀ սահմանադրության 50-րդ հոդվածով, այնպես էլ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի կարգավորումներով:

Չնայած օրենսդրական երաշխիքներին՝ 2018 թվականի ընթացքում ևս շարունակվել են արձանագրվել պատշաճ վարչարարության իրավունքի սահմանափակման բազմաթիվ դեպքեր:

### ***1. Վարչական մարմիններին օրենքով վերապահված հայեցողական լիազորությունները չարաշահելը***

2018 թվականի ընթացքում ստացված բողոքներում արտացոլված տվյալների ընդհանուր ուսումնասիրությունը վկայում է, որ վարչական մարմիններն իրենց գործունեության ընթացքում հաճախ են չարաշահում օրենքով սահմանված հայեցողական այնպիսի լիազորություններ, որոնք ուղղակիորեն ազդում են անձի իրավունքների վրա:

Վարչարարությունը՝ որպես վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն, եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, որն էլ անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ: Վարչարարության այս կարևորագույն առանձնահատկությունը հաշվի առնելով՝ պետք է փաստել, որ վարչական մարմինն իրեն վերապահված հայեցողական լիազորությունները պետք է իրացնի այնպես, որ դրանք բխեն վարչարարության օրինականության սկզբունքից, իսկ անձանց համար առաջացած հետևանքները չտոնահարեն նրանց իրավունքները:

Հայեցողությունը մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից մեկն ընտրելու հնարավորությունն է. ավելին, այն հասցեատիրոջ համար լավագույնն ընտրելու վարչական մարմնի անուղղակի պարտականությունն է: Մակայն խնդրահարույց է, որ օրենսդրությամբ վարչական մարմիններին այնպիսի հարցերում է վերապահված հայեցողական լիազորություն, որոնցում վարչական մարմինն ընտրության որևէ հնարավորություն չունի, այսինքն՝ չկան խնդրի լուծման հնարավոր իրավաչափ լուծումներ, որոնց շրջանակներում վարչական մարմինը կարողանա դրսևորել իր հայեցողությունը, ինչի հետևանքով էլ հայեցողությունը դրսևորվում է հասցեատիրոջ խնդրի հայցվող լուծում տալով կամ մերժելով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայեցողական լիազորությունն օրենքով վարչական մարմնին վերապահված իրավունք է՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը: Այս ձևակերպումից հետևում է, որ՝

ա) հայեցողական լիազորությունը պետք է վարչական մարմնին վերապահված լինի որևէ օրենքով,

բ) այդ լիազորությունը վարչական մարմնի՝ մեկ հարցի մի քանի լուծումներից մեկն ընտրելու և այն իրականացնելու մեջ է, իսկ այդ ընտրությունը վարչական մարմնի իրավունքն է, այսինքն՝ կախված օրենքի կարգավորումից և կոնկրետ իրավիճակից՝ դա կարող է նշանակել նաև վարչական մարմնի գործելու կամ չգործելու, որոշում ընդունելու կամ ընդհանրապես որևէ որոշում ընդունելուց ձեռնպահ մնալու հայեցողություն,

գ) բոլոր այդ լուծումները պետք է լինեն հնարավոր և իրավաչափ:

Հարկ է նկատել, որ վարչական մարմինների հայեցողական լիազորությունները բնավ էլ չի կարելի դիտարկել որպես կամայականության հիմք և հայեցողությունը հասկանալ որպես վարչական մարմնի բացարձակ ազատություն: ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադառնալով հայեցողական լիազորությունների իրացման հարցին՝ 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ԵՇԴ/3780/02/14 քաղաքացիական գործով կայացված որոշման մեջ նշել է, որ պետաիշխանական լիազորություններով օժտված յուրաքանչյուր պետական մարմին հայեցողական լիազորություն իրականացնելիս պարտավոր է թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրությունն իրականացնել՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կամայականության արգելքի սկզբունքներով՝ ապահովելով գործի ըստ էության ճիշտ քննությունը և լուծումը:

Հայեցողական լիազորությունների իրացման հարցի կապակցությամբ հատկանշական է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ԳԴ4/0504/02/14 քաղաքացիական գործով կայացված որոշումը, որով դատարանն արձանագրել է, որ «հայեցողություն» եզրույթի ներքո պետք է նկատի ունենալ *նպատակահարմարության* և *օրինականության* ողջամիտ հարաբերակցություն: Պետաիշխանական լիազորություններով օժտված սուբյեկտներին վերապահված «հայեցողությունը» վերջիններիս՝ թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման իրավական նորմերով կանխորոշված հնարավորությունն է: ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումից հետևում է, որ սուբյեկտի՝ օրենքով իրեն վերապահված հայեցողական լիազորությունն իրացնելը պետք է լինի օրինական և նպատակահարմար:

Վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորության չարաշահման օրինակ է վարչական ակտի օտար լեզվով թարգմանությունը վարչական ակտի հասցեատերերին չտրամադրելը:

Մասնավորապես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթն իրականացվում, և վարչական ակտն ընդունվում է հայերենով: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթի իրականացման հետ կապված փաստաթղթերը կազմվում են, և ամբողջ գործավարությունն իրականացվում է հայերենով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վարչական ակտն ընդունված վարչական մարմինը, գրավոր վարչական ակտի հասցեատիրոջ խնդրանքով, նրան **կարող է տրամադրել** նաև վարչական ակտի օտար լեզվով թարգմանված պատճենը, որը պետք է հաստատված լինի համապատասխան վարչական մարմնի պաշտոնական կնիքով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է վարչական մարմնի հայեցողական լիազորությունների սահմանները, նշելով, որ հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ:

Ըստ Պաշտպանին հասցեագրված բողոքների՝ մարդիկ դիմել են ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայություն իրենց նկատմամբ կայացված վարչական ակտի իրենց հասկանալի լեզվով ստանալու պահանջով, սակայն այն իրենց չի տրամադրվել:

Բարձրացված հարցի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարության պարզաբանումների համաձայն՝ վարչական մարմինն վերապահվել է վարչական ակտի օտար լեզվով թարգմանված պատճենի տրամադրման հայեցողական լիազորություն, ինչի շրջանակներում հարկադիր կատարման ծառայությանը նշված գործողությունը կատարելուն պարտավորեցնելու հիմքերը բացակայում են: Նախարարության պարզաբանումների համաձայն՝ պետք է նաև նկատի ունենալ նշված լիազորությունն իրականացնելու փաստացի հնարավորությունների առկայությունը, որից ելնելով նշված լիազորության չիրականացումն ինքնանպատակ չի կարող գնահատվել:

Մարդու համար հասկանալի և ընդունելի լեզվով տեղեկությունների ստացման վերաբերյալ կարգավորումներ և երաշխիքներ նախատեսված են նաև այլ իրավական ակտերով: «Լեզվի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպություններն այլ երկրների պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ հաղորդակցվում են **փոխադարձաբար ընդունելի լեզվով**: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում *ազգային փոքրամասնությունների լեզուներին* տիրապետող անձինք, օրենքով սահմանված կարգով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, վարչական վարույթի իրականացման համար դիմումը և դրան կից փաստաթղթերը կարող են ներկայացնել համապատասխան փոքրամասնության լեզվով:

«Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների Եվրոպական խարտիայի»<sup>137</sup> 10-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի համաձայն՝ պետության վարչական տարածքների ներսում, որտեղ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսող բնակչության քանակն արդարացնում է ներքոնշյալ միջոցները, և, համաձայն յուրաքանչյուր լեզվի վիճակի՝ Կողմերը հնարավորության սահմաններում պարտավորվում են **լայնորեն կիրառվող** վարչական տեքստերը և ձևերը մատչելի դարձնել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսող բնակչության համար կամ ներկայացնել դրանք *երկլեզու տարբերակներով*:

Վերոգրյալ օրենսդրական կարգավորումների համադրմամբ՝ պետք է փաստել, որ վարչական մարմինն վերապահված՝ վարչական ակտի օտար լեզվով թարգմանված պատճենը տրամադրելու հայեցողությունը գործադրվել է ի վնաս ազգային փոքրամասնության լեզուներից մեկին տիրապետող քաղաքացու, քանի որ ակտի օտար լեզվով թարգմանված պատճենը տրամադրելիս վարչական մարմինը հաշվի չի առել, որ պահանջ է ներկայացվել վարչական ակտը թարգմանելու ազգային փոքրամասնության լեզվով՝ ներկայացված դեպքում՝ ռուսերենով, որը համարվում է փոխադարձաբար ընդունելի լեզու:

Վարչական ակտի օտար լեզվով թարգմանությունը վարչական ակտի հասցեատերերին տրամադրելն այն դեպքերից է, երբ վարչական մարմինն վերապահված հայեցողությունն իրացնելու համար վերջինիս չի ընձեռնում խնդրի կարգավորման հնարավոր իրավաչափ լուծումների շրջանակներում ընտրություն կատարելու հնարավորություն, քանի որ, ըստ էության, սահմանված չեն այդպիսի հնարավոր իրավաչափ լուծումներ: Ստեղծված իրավիճակում, փաստորեն, ընտրություն պետք է կատարվի լուծման երկու տարբերակների

<sup>137</sup> Խարտիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2002 թվականի մայիսի 1-ից: Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է Խարտիան կիրառել ասորերենի, եզդիերենի, հունարենի, ռուսերենի և քրդերենի նկատմամբ:

միջև՝ վարչական ակտի օտար լեզվով թարգմանությունը տրամադրելու կամ տրամադրելը մերժելու միջև: Սակայն պետք է նշել, որ վարչարարության ընթացքում վարչական ակտի հասցեատիրոջ այս կամ պահանջը մերժելը չպետք է դիտարկվի որպես խնդրի լուծման հնարավոր իրավաչափ լուծում: Ուստի, պետք է փաստել, որ նմանատիպ դեպքերում վարչական մարմինն այս կամ խնդրի լուծման հարցում հայեցողություն վերապահելը չի բխում վարչարարության սկզբունքներից: Հաշվի առնելով վարչական ակտի այնպիսի կարևորագույն հատկանիշը, ինչպիսին անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելը, փոփոխելը, վերացնելը և ճանաչելն է՝ հարկ է նշել, որ վարչական ակտն անձի համար հասկանալի լեզվով չտրամադրելը վերջինիս գրկում է այդ ակտից բխող իր իրավունքների և պարտականությունների մասին տեղեկանալու և դրանով պայմանավորված՝ իր այլ իրավունքներից (վարչական ակտը բողոքարկել վարչական կամ դատական կարգով, կատարել վարչական ակտով սահմանված գործողությունը և այլն) օգտվելու հնարավորությունից: Այսինքն՝ պետք է վարչական ակտը և դրանից բխող հետևանքներն ի սկզբանե դրա հասցեատիրոջ համար հասկանալի լինեն, որպեսզի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով նրանց վերապահված իրավունքները ձևական բնույթ չկրեն, իսկ ստեղծված իրավիճակում վարչական մարմինը հնարավոր իրավաչափ լուծումների միջև ընտրություն կատարելու հնարավորություն չունի: Օրինակ՝ նախատեսված չէ կարգավորում՝ հասցեատիրոջն ակտը հասկանալի լեզվով տրամադրելու հնարավորությունների բացակայության դեպքում վարչական վարույթի լուծումների անցկացման փուլը կազմակերպել այնպես (մասնավորապես՝ ներգրավել թարգմանիչ), որ վարչական ակտի հասցեատիրոջ համար նախապես կանխատեսելի լինի լուծումների արդյունքում կայացվելիք վարչական ակտի բովանդակությունը: Հետևաբար, վարչական ակտի օտար լեզվով թարգմանությունը տրամադրելը պետք է սահմանվի որպես իմպերատիվ նորմ: Հարկ է նշել նաև, որ բարձրացված խնդրի առնչությամբ ՀՀ արդարադատության նախարարությունում առանձնացված վիճակագրություն չի վարվում, ինչը պրակտիկայում առկա խնդրահարույց նման դեպքերի իրական պատկեր ներկայացնելու հնարավորություն չի տալիս:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

- 1. գործնականում վարչական մարմիններին տրված հայեցողությունն իրացնելիս առաջնորդվել օրինականության և նպատակահարմարության սկզբունքներով՝ նախապատվությունը տալով հասցեատիրոջ համար լավագույն իրավաչափ լուծմանը,*
- 2. վարչական ակտի օտար (հասցեատիրոջը հասկանալի) լեզվով տրամադրումը վարչական մարմնի համար սահմանել որպես պարտադիր պահանջ:*

## ***2. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կայացրած որոշումներն օրենքով սահմանված կարգով քաղաքացիներին չծանուցելը***

Համակարգային առումով շարունակում է չլուծված մնալ դեռևս 2017 թվականին Պաշտպանի բարձրաձայնած՝ հարկադիր կատարողների որոշումների մասին կատարողական վարույթի կողմերին պատշաճ տեղեկացնելու խնդիրը: Այդ մասին են վկայում 2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բազմաթիվ բողոքները, որոնցով մարդիկ տեղեկացրել են, որ իրենց նկատմամբ կատարողական վարույթ հարուցելու, իրենց գույքի և դրամական միջոցների վրա արգելանք դնելու և հարկադիր կատարողի այլ որոշումների մասին չեն ծանուցվել:

Ստացված բողոքների ուսումնասիրության արդյունքում հնարավորություն ենք ստանում փաստել, որ կատարողական վարույթի կողմերին ծանուցելու վերաբերյալ օրենսդրական գործող կարգավորումներն անարդյունավետ են, քանի որ դրանց կիրարկման

պայմաններում շատ հաճախ քաղաքացիները փաստացի չեն ծանուցվում հարկադիր կատարողի կայացրած որոշումների մասին՝ չնայած, որ օրենսդրության տեսանկյունից համարվում են պատշաճ ծանուցված:

Պատշաճ ծանուցման հիմնախնդրին անդրադարձել են Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, ՀՀ սահմանադրական և վճռաբեկ դատարանները: Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ անձը պարտավոր չէ վարչական ակտի ընդունման մասին տեղեկանալ պաշտոնական տեղեկագրից (էլեկտրոնային եղանակով), այլ պետք է անձամբ ծանուցվի իր նկատմամբ կայացված վարչական ակտի և հարուցված վարչական վարույթի մասին<sup>138</sup>:

ՀՀ սահմանադրական դատարանը 2015 թվականի մայիսի 26-ի թիվ ՄԴՈ-1210 որոշման մեջ արձանագրել է, որ պատշաճ ծանուցման ինստիտուտը, որը հնարավորություն է տալիս փաստացի իրազեկված լինել վարչական տուգանքների նշանակման մասին, կարևոր երաշխիք է անձի իրավունքների պաշտպանության հարցում, այդ թվում՝ ինչպես դատական, այնպես էլ պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության հարցերում:

Բարձրացված խնդրի կապակցությամբ հատկանշական է ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ ՎԴ/5086/05/09 վարչական գործով կայացված դիրքորոշումը, որով դատարանը նշել է, որ վարչական մարմնի ծանուցման ձևն ընտրելու հայեցողությունը պետք է համապատասխանի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին, որի համաձայն՝ հայեցողական լիազորություններ իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշման պատճենը, ոչ ուշ, քան որոշումը կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, պատշաճ ձևով ուղարկվում է պահանջատիրոջը և պարտապանին, ինչպես նաև նույն օրենքով նախատեսված այլ անձանց և մարմիններ: Նույն մասի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշումը կողմերին է ուղարկվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված պատշաճ ծանուցմամբ՝ կատարողական թերթում կամ յուրաքանչյուր կողմի նշված հասցեով: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատական ծանուցագիրը՝

- 1) ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ,
- 2) հանձնվում է առձեռն,

3) ուղարկվում է էլեկտրոնային՝ սույն օրենսգրքի 97-րդ հոդվածով սահմանված կարգով:

Նույն օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե դատավարության մասնակիցը հրաժարվել է ստանալ ծանուցագիրը կամ նրա հայտնած հասցեով ուղարկված ծանուցագիրը վերադարձվել է դատարան կամ ուղարկելու օրվանից երկշաբաթյա ժամկետում դատարանը չի ստացել հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը) կամ դատավարության մասնակցի հասցեն անհայտ է, ապա դատարանը դատական ծանուցագիրն ուղարկում է՝ ֆիզիկական անձի հաշվառման, աշխատանքի վայրի հայտնի հասցեով և անձի վերջին հայտնի բնակության վայրի

<sup>138</sup> St' u Մերիսիդեսը և Քրիստոֆորուսը ընդդեմ Կիպրոսի (Serghides and Christoforou v. Cyprus) գործով 2002 թվականի նոյեմբերի 5-ի վճիռը, գանգատ թիվ 44730/98, կետ 69:

համապատասխան համայնքի կամ վարչական շրջանի ղեկավարին, իսկ գործի նյութերում ֆիզիկական անձի այլ հասցեների, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի վերաբերյալ տվյալների առկայության դեպքում՝ նաև այդ հասցեներով: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նշված գործողությունները կատարելու հետ միաժամանակ դատական ծանուցագիրը տեղադրվում է ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (<http://www.azdarar.am>):

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, սակայն, որ «azdarar.am» կայքում հրապարակվում են միայն կատարողական վարույթը կասեցնելու, ինչպես նաև գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին հարկադիր կատարողի կայացրած որոշումները: Մինչդեռ անհրաժեշտ է իրավակիրառ պրակտիկական համապատասխանեցնել օրենսդրական գործող կարգավորումներ «azdarar.am» կայքում հարկադիր կատարողի բոլոր որոշումների հրապարակումն ապահովելու համար:

Նշվածից բացի, խնդրահարույց է նաև, որ հարկադիր կատարողի կայացրած ոչ բոլոր որոշումներն են կողմերին ուղարկվում պատվիրված փոստով, ինչն ակնհայտորեն հակասում է հարկադիր կատարողի որոշումների ծանուցման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորումներին: Այս կապակցությամբ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից ստացված պարզաբանումների համաձայն՝ հարուցված կատարողական վարույթի շրջանակներում կայացված ոչ բոլոր որոշումներն են պատվիրված նամակով ուղարկվում կատարողական վարույթի կողմերին, քանի որ հաշվի առնելով հարկադիր կատարման ծառայություն մուտքագրվող կատարողական թերթերի, կատարողական մակագրության թերթերի և վարչական որոշումների մեծաքանակ ծավալը և ծառայության գերձանրաբեռնված լինելը, թե՛ ֆիզիկապես, և թե՛ նյութապես հնարավոր չէ բոլոր որոշումները կատարողական վարույթի կողմերին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ և 95-րդ հոդվածներով սահմանված կարգով ուղարկել: Ներկայումս հարկադիր կատարման ծառայությունում գործող պրակտիկայի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշումները և ծանուցումներն ուղարկվում են պատվիրված նամակով, եթե օրենքով որոշակի ժամկետի հաշվարկը պայմանավորված է համապատասխան որոշումը կամ ծանուցումն ստանալու փաստով, այսինքն՝ բացի «Կատարողական վարույթը կասեցնելու մասին» և «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումներից պատվիրված նամակով ուղարկվում են այլ որոշումներ և ծանուցումներ ևս:

Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ հարկադիր կատարողի կայացրած որոշումները կատարողական վարույթի կողմերին պատվիրված փոստով չուղարկելը չի կարող արդարացվել հարկադիր կատարման ծառայության գերձանրաբեռնված լինելու պատճառով: Մյուս կողմից, եթե «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը, օրինակ՝ «Կատարողական վարույթ հարուցելու մասին» որոշումը ստանալու փաստը չի պայմանավորել որոշակի ժամկետի հաշվարկով, ապա դա դեռևս չի նշանակում, որ այդ որոշումը կարող է և պատվիրված փոստով չուղարկվել:

2017 թվականի հոկտեմբերի 25-ին ընդունվել է ««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասը լրացվել է նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Պարտապանի գույքի վրա արգելանք դնելուց կամ սահմանափակում կիրառելուց հետո անհապաղ այդ մասին ծանուցում է ուղարկվում անձի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով, իսկ դրա բացակայության դեպքում՝ անձի համաձայնությամբ՝ վերջինիս մատնանշած էլեկտրոնային փոստի հասցեով կամ բջջային հեռախոսին կարճ

հաղորդագրություն ուղարկելու միջոցով»: Հիշյալ կարգավորումն ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 1-ին: «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ պաշտոնական էլեկտրոնային փոստն անձին նույնականացման քարտի հետ մեկտեղ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով տրված էլեկտրոնային փոստն է (ֆիզիկական անձի դեպքում):

ՀՀ արդարադատության նախարարության պարզաբանումների համաձայն՝ փոխվել է նաև էլեկտրոնային ծանուցումն ուղարկված անձի հավաստում չստանալու դեպքում գործողությունների հաջորդականությունը, որը հնարավորություն է տալիս ևս մեկ անգամ էլեկտրոնային ծանուցումից հետո միայն անցնել ծանուցման փոստային տարբերակի: Բացի այդ, նոր կարգավորմամբ անձը պատշաճ ծանուցված է համարվում նաև ծանուցմամբ պահանջվող գործողությունն ամբողջությամբ կամ մասնակի կատարելու պարագայում: Դրական է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ծանուցումների այլընտրանքային համակարգի ներդրումը: Հարկ է փաստել սակայն, որ այդ համակարգերից օգտվելը հասարակության որոշ ներկայացուցիչների համար կարող է դժվարություններ ստեղծել, ուստի անհրաժեշտ է զուգահեռաբար ծանուցումն իրականացնել նաև թղթային եղանակով:

Պաշտոնական էլեկտրոնային փոստի գործնական կիրառման հարցում գոյություն ունեցող դժվարությունները հաշվի առնելով՝ կարող ենք եզրակացնել, որ հարկադիր կատարողի կայացրած որոշումների մասին պատշաճ ծանուցման խնդիրը շարունակելու է արդիական մնալ այդ որոշումների մասին կատարողական վարույթի կողմերի ծանուցումը պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով իրականացնելու դեպքում: Այս խնդրի կապակցությամբ առաջացած մտահոգությունը պայմանավորված է նրանով, որ պաշտոնական էլեկտրոնային փոստի գործնական կիրառումն ապահովելու և քաղաքացիների շրջանում դրա կիրառումը մատչելի դարձնելու ուղղությամբ դեռևս բավարար միջոցներ չեն ձեռնարկվել:

Պաշտոնական էլեկտրոնային փոստի համակարգից կարող են օգտվել ՀՀ ոստիկանության տրամադրած նույնականացման քարտ ունեցող ՀՀ քաղաքացիները<sup>139</sup>:

Ակնհայտ է, որ պաշտոնական էլեկտրոնային փոստի ակտիվացումն այնպիսի գործընթաց է, որը հաջողությամբ կազմակերպելու համար անհրաժեշտ է տիրապետել համապատասխան տեղեկատվությանը և ճշգրտությամբ կատարել թվարկված քայլերը: Անգամ կատարյալ օրենսդրության պայմաններում, եթե քաղաքացիները չկարողանան գործնականում կիրառել իրենց պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեները (օրինակ՝ չհաջողվի ակտիվացնել պաշտոնական էլեկտրոնային փոստը՝ կապված ակտիվացման գործընթացի բարդության հետ), ապա այդ օրենսդրական նորմերը ձևական բնույթ կկրեն և չեն ծառայի իրենց նպատակին: Ուստի, անհրաժեշտ է ձեռնարկել անհրաժեշտ և բավարար միջոցներ պաշտոնական էլեկտրոնային փոստի կիրառումը հասարակության շրջանում մատչելի դարձնելու նպատակով, իսկ դրա պաշտոնական գործարկումից հետո անհրաժեշտ է հարկադիր կատարողի որոշումների ծանուցման ձևի հարցում դարձյալ նախապատվությունը տալ պատվիրված նամակին, որով ծանուցումը չապահովվելու դեպքում միայն ծանուցումն իրականացնել պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով:

<sup>139</sup> Նույնականացման քարտի հետ միասին անձնագրային բաժանմունքում փակ ծրարով տրամադրվում են նաև նույնականացման քարտի PIN և PUK կոդերը: Նախևառաջ անհրաժեշտ է ակտիվացնել PIN կոդը, այնուհետև նույնականացման քարտն անհրաժեշտ է տեղադրել ընթերցող սարքի մեջ և սպասել մինչև հավաստագիրն ընթերցվի: Այնուհետև անհրաժեշտ է մուտք գործել «e-citizen.am» կայք, սեղմել «Մուտք» կոճակը, որից հետո բացվող «Մուտք նույնականացման քարտով» բաժնից անհրաժեշտ է ընտրել «Մուտք» կոճակը, որից հետո բացվող պատուհանում անհրաժեշտ է մուտքագրել նույնականացման քարտի PIN գաղտնաբառը և սեղմել «OK» կոճակը [https://www.ekeng.am/file\\_manager/eCitizen\\_AM\\_Guide\\_version%201.6%20new.pdf](https://www.ekeng.am/file_manager/eCitizen_AM_Guide_version%201.6%20new.pdf):

2018 թվականի ընթացքում հարկադիր կատարման ծառայության պաշտոնական կայքէջում ներդրվել է «Կատարողական վարույթների տեղեկատու» պատուհանը, որի միջոցով պարտապան-ֆիզիկական անձը կարող է ստուգել իր վերաբերյալ հարկադիր կատարման ծառայությունում հարուցված կատարողական վարույթ(ներ)ի առկայությունը՝ պատուհանում ներբեռնելով իր հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական քարտի 10-նիշանոց թիվը):

Դրական է պարտապանների նկատմամբ հարուցված կատարողական վարույթների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նման համակարգի ներդրումը: Մտեղծված մեխանիզմի հետագա կատարելագործման ժամանակ, սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ առավել նպատակահարմար և արդյունավետ կլինի, եթե համակարգը «Վարույթի կող», «Հարուցման ամսաթիվ», «Պահանջատեր», «Որոշման համար կամ կատարողական թերթի համար», «Մնացորդ գումար», «Վիճակը» դաշտերից բացի համալրվի նաև «Հարկադիր կատարող» դաշտով, որտեղ կարող է նշվել տվյալ կատարողական վարույթով հարկադիր կատարողի անուն-ազգանունը, ինչպես նաև վերջինիս տարածքային բաժնի և ներքին հեռախոսահամարները: Բացի այդ, հարուցված կատարողական վարույթի ընթացիկ վիճակի վերաբերյալ ավելի հստակ պատկերացում կազմելու տեսանկյունից նպատակահարմար կլինի, որ «Վիճակը» դաշտը վարույթի ավարտված, կարճված կամ կասեցված լինելու մասին տեղեկություններից բացի նշում պարունակի նաև դրանց կոնկրետ հիմքերի վերաբերյալ:

«Harkadir.am» կայքում «Կատարողական վարույթների տեղեկատու» պատուհանից օգտվելը դյուրացնելու նպատակով առավել արդյունավետ կլինի դրա գործարկումը կապել ոչ միայն հանրային ծառայությունների համարանիշի, այլև անձնագրային տվյալների ներբեռնման հետ: Նշված լրացումներն ավելի արդյունավետ կդարձնեն հարուցված կատարողական վարույթների մասին կողմերի իրազեկման խնդիրը, քանի որ վստահաբար կարելի է նշել, որ հարկադիր կատարման ծառայության պաշտոնական կայքէջում ներդրված «Կատարողական վարույթների տեղեկատու» պատուհանից օգտվելն ավելի դյուրին է, քան պաշտոնական էլեկտրոնային փոստն ակտիվացնելն ու դրանից օգտվելը:

2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքների քննության պատշաճ ընթացքն ապահովելու և քաղաքացիների բարձրաձայնած հարցերին հնարավոր լուծումներ տալու նպատակով Պաշտպանը մշտապես համագործակցել է մի շարք պետական մարմինների, այդ թվում՝ հարկադիր կատարման ծառայության հետ, ձևավորվել է համատեղ աշխատանքային խումբ, որի իրականացրած աշխատանքների ընթացքում քննարկման առարկա են դարձել ոլորտին առնչվող բազմաթիվ համակարգային խնդիրներ (Ծառայության կայացրած որոշումների մասին առանց քաղաքացիներին պատշաճ ծանուցելու, նրանց գույքի և դրամական միջոցների վրա արգելանք դնելու, կատարողական թերթի շրջանակից դուրս գալու և այլ խնդիրներ):

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ուժեղացնել հարկադիր կատարողների՝ օրենքի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը:*

*Միաժամանակ, հարկադիր կատարման ծառայության կայացրած որոշումների՝ օրենքով սահմանված կարգով քաղաքացիներին պատշաճ ծանուցումն ապահովելու և այդ որոշումների մասին քաղաքացիների չճանուցման հնարավոր դեպքերը բացառելու նպատակով անհրաժեշտ է՝*

*1. անկախ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին կամ բջջային հեռախոսին կարճ հաղորդագրություն ուղարկելու ձևից, հարկադիր կատարողի որոշումներն ու ծանուցումներն ուղարկել նաև պատվիրված նամակով,*

*2. իրավակիրառ պրակտիկան համապատասխանեցնել օրենսդրական գործող կարգավորումներին, որպեսզի ապահովվի «azdarar.am» կայքում հարկադիր կատարողի կատարողական վարույթի շրջանակներում կայացրած բոլոր որոշումների հրապարակումը,*



3. *իրավակիրառ պրակտիկան համապատասխանեցնել օրենսդրական գործող կարգավորումներին, որպեսզի ապահովվի հարկադիր կատարողի՝ կատարողական վարույթի շրջանակներում կայացրած բոլոր որոշումների ծանուցումը պատվիրված նամակով,*

4. *պաշտոնական էլեկտրոնային փոստից օգտվելը քաղաքացիների շրջանում մատչելի և հասանելի դարձնելու նպատակով ձեռնարկել անհրաժեշտ և բավարար միջոցներ (օրինակ՝ իրազեկման թերթիկների, ուղեցույցների հրապարակում, տեղեկատվական տեսահոլովակների պատրաստում, սեմինար-քննարկումների կազմակերպում և այլն):*

### **3. Կատարողական վարույթի շրջանակներում կատարողական գործողությունները պատշաճ ժամկետներում չիրականացնելը**

2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ կատարողական վարույթների շրջանակներում անհրաժեշտ կատարողական գործողությունների կատարումը ձգձգելու և դրա պատճառով ոչ պատշաճ վարչարարություն իրականացնելու դեպքերի վերաբերյալ:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական գործողությունների իրականացման համար սահմանվում է *երկամսյա ժամկետ*, բացառությամբ նույն մասի երկրորդ, երրորդ և չորրորդ պարբերություններով նախատեսված դեպքերի: Նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ աշխատավարձից, կենսաթոշակից, այլ եկամուտներից, ալիմենտային պարտավորություններից բխող բոնագանձումների կատարումը, ինչպես նաև հարկադիր կատարման պարբերական բնույթ ունեցող կատարողական գործողությունները (երեխայի տեսակցություն և այլն) իրականացվում են *պարբերական կատարման միջոցով*:

Ըստ Պաշտպանին հասցեագրված բողոքների՝ հարուցված կատարողական վարույթի շրջանակներում պարտապանի աշխատավարձից ամեն ամիս հարկադիր կատարման ծառայությանն է փոխանցվել կատարողական թերթով վճարման ենթակա գումարը, որը, սակայն հարկադիր կատարողը մեկ տարի շարունակ չի փոխանցել պահանջատիրոջ՝ հաշվեհամարին: Ըստ Հարկադիր կատարման ծառայության պարզաբանումների՝ կատարողական վարույթն ավարտված է եղել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիմքով, որով պայմանավորված՝ հարկադիր կատարողը գումարի բաշխումն իրականացրել է տարբեր ժամանակներում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ հարկադիր կատարողն ավարտում է կատարողական վարույթը, եթե պարտապանի գույքի բացակայության կամ անբավարարության պատճառով կամ պարբերական վճարումների վերաբերյալ վճռի կատարման դեպքում բոնագանձումը տարածվել է պարտապանի աշխատավարձի, կենսաթոշակի և այլ եկամուտների վրա, և պահանջատիրոջ օգտին *կատարվում են գումարի պարբերաբար վճարումներ*: Վկայակոչված նորմում խոսքը եկամուտի այն տեսակների մասին է (աշխատավարձ, կենսաթոշակ), որոնք վճարվում են ամիս-ամիս: Հետևաբար՝ դրանց վրա բոնագանձում տարածելու հիմքով կատարողական վարույթն ավարտելը ենթադրում է, որ գումարի պարբերական բոնագանձումները կատարվում են ամեն ամիս:

Կատարողական վարույթն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիմքով ավարտելու պայմաններում կատարողական թերթի պատշաճ կատարման ապահովումը պայմանավորվում է երկու փուլով. առաջին փուլում գործատուն պարտապանի եկամուտներից ամեն ամիս փոխանցումներ պետք է կատարի ծառայության դեպոզիտ հաշվեհամարին, իսկ երկրորդ

փուլում՝ ծառայության դեպոզիտ հաշվեհամարին փոխանցված գումարները դրանք ստանալուն պես արդեն հարկադիր կատարող պետք է փոխանցի պահանջատիրոջ հաշվեհամարին:

Օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը ներառում է գույքի վրա *արգելանք դնելը*, սահմանափակում կիրառելը, *այն առգրավելը* և *հարկադիր իրացնելը* (աճուրդ կամ ուղղակի վաճառք): Սահմանափակումը կիրառվում է պարտապանի շարժական գույքի նկատմամբ: Այսինքն՝ բռնագանձման բովանդակությունը ներառում է հարկադիր կատարողի իրականացնելիք երեք գործողություն՝ գույքի (այդ թվում՝ դրամական միջոցների) վրա արգելանք դնել, այն առգրավել և հարկադիր իրացնել: Այսպիսով, պրակտիկայում բռնագանձման իրականացումն ամբողջությամբ չի ապահովվում, քանի որ պարտապանի աշխատավարձի վրա արգելանք է կիրառվում, այն առգրավվում է, սակայն հարկադիր կարգով չի իրացվում, այն է՝ չի փոխանցվում պահանջատիրոջը, որից հետո միայն ավարտված պետք է համարվի բռնագանձման գործընթացը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումներից մեկով դատարանն արձանագրել է, որ տվյալ գործով դիմումատուն չի ունեցել կատարողական գործողություններն արագացնելու կամ այդ գործողությունների ձգձգման հետևանքով առաջացած ցանկացած վնասի մասով փոխհատուցում ստանալու համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, ինչը Կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջ է<sup>140</sup>:

Կատարողական վարույթը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիմքով ավարտելու դեպքում պարտապանից ամեն ամիս բռնագանձված գումարները պահանջատիրոջը փոխանցելու հաճախականության առնչությամբ հարկադիր կատարման ծառայությունից ստացված պարգաբանումների համաձայն՝ կատարողական վարույթների շրջանակներում պարտապաններից բռնագանձված և (կամ) հարկադիր կատարման ծառայության դեպոզիտ հաշվին փոխանցված գումարների բաշխումը հնարավորինս արագ կազմակերպելու և հետագայում պահանջատերերին փոխանցելու համար ծառայությունում սահմանվել է աշխատանքային կարգ: Յուրաքանչյուր աշխատանքային օր ծառայության ֆինանսական բաժինը վարույթն իրականացնող բաժնին է տրամադրում տվյալ օրվա գումարային փոխանցումների վերաբերյալ տեղեկատվություն, որի հիմքով վարույթ իրականացնող հարկադիր կատարողը կատարում է գումարի բաշխում:

Մեկ այլ դեպքով՝ հարկադիր կատարման ծառայությունում կատարողական վարույթ է հարուցվել 2015 թվականին, սակայն գրավադրված ոսկյա իրերի առկայության պարագայում գրավն իրացնելուն ուղղված կատարողական գործողություններն իրականացվել են օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ, և գրավն իրացնելու նպատակով «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը կայացվել է միայն 2018 թվականին՝ շուրջ երեք տարի անց: Հարկադիր կատարողի դրսևորած անգործության հետևանքով պարտապանի նկատմամբ կուտակված պարտքը կազմել ավելի շատ, քան կլինեք աճուրդը ժամանակին կազմակերպելու դեպքում:

Հիմք ընդունելով ՀՀ արդարադատության նախարարության վերահսկողական ծառայության և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրությունները՝ ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի ժամանակավոր պաշտոնակատարի հրամանով տվյալ կատարողական վարույթով նշանակվել է ծառայողական քննություն, որի արդյունքում ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի հրամանով տվյալ կատարողական վարույթի պատշաճ

<sup>140</sup> Տե՛ս Ավաքեմյանն ընդդեմ Հայաստանի (Avakemyan v. Armenia) գործով 2017 թվականի մարտի 30-ի վճիռը, զանգատ թիվ 39563/09, կետ 45:

կատարումն ապահովող հարկադիր կատարողի նկատմամբ հայտարարվել է նկատողություն:

Հարկ է նկատել, որ ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2018 թվականի ընթացքում ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության գլխավոր հարկադիր կատարողը հարկադիր կատարման ծառայության 1 բաժնի պետի, 1 բաժնի պետի տեղակալ, 1 ավագ հարկադիր կատարողի, 7 հարկադիր կատարողի, 1 հաշվապահի և 1 գործավարի տվել է նկատողություն, 1 հարկադիր կատարողի՝ խիստ նկատողություն, ինչպես նաև իջեցվել է 1 բաժնի պետի տեղակալի պաշտոն:

Վերը նկարագրված դեպքերում հարկադիր կատարողների իրականացրած ոչ պատշաճ վարչարարության պատճառով անձանց պատճառվել է վնաս, որը ենթակա է հատուցման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի կարգավորումներին համապատասխան: Մասնավորապես՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 96-րդ հոդվածի համաձայն՝ վնասի հատուցում չի իրականացվում, քանի դեռ վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել, սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել, բացառությամբ նույն օրենքի 109-րդ հոդվածով նախատեսված դեպքերի (խոսքն իրավաչափ վարչարարության պատճառով անձին պատճառված վնասի համար պատասխանատվության դեպքերին է վերաբերում): Նույն օրենքի 98-րդ հոդվածի համաձայն 1-ին մասի համաձայն՝ եթե վնասը որևէ փաստացի դրության՝ ի վնաս անձի փոփոխության մեջ է, ապա պատասխանատվություն կրողը պարտավոր է վերացնել դրա առաջացրած հետևանքները՝ նախկին դրության, իսկ եթե դա անհնար կամ անարդյունավետ է, ապա՝ դրան համարժեք այլ դրության վերականգնման միջոցով:

Այս կապակցությամբ հետաքրքրական է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումը, որի համաձայն՝ Կոնվենցիայի 41-րդ հոդվածի<sup>141</sup> շրջանակներում նախապատվությունը տրվում է *restitutio in integrum*-ին (մինչև իրավունքի խախտումը եղած դրության վերականգնում), քանի որ ակնկալվում է, որ պատասխանողը պետք է ձեռնարկի բոլոր հնարավոր միջոցները խախտման հետևանքներն այնպես վերացնելու համար, որ հնարավորության սահմաններում վերականգնվի նախքան խախտումը եղած իրավիճակը<sup>142</sup>:

Պաշտպանը կայացրել է «Մարդու իրավունքների և ազատությունների խախտման առկայության մասին» որոշում, որում խախտումը կատարած իրավասու մարմնին առաջարկվել է վերականգնել մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը, իսկ դրա անհնարինության կամ անարդյունավետության դեպքում՝ ձեռնարկել արդյունավետ և բավարար միջոցներ ոչ պատշաճ վարչարարության հետևանքով պատճառված վնասը հատուցելու ուղղությամբ:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ կատարողական գործողությունների կատարման ձգձգման հետևանքով կատարողական վարույթի կողմերին ոչ պատշաճ վարչարարությամբ վնաս հասցնելու հնարավոր դեպքերը բացառելու նպատակով անհրաժեշտ է ուժեղացնել*

<sup>141</sup> Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:

<sup>142</sup> Տե՛ս Միմոնյանս ընդդեմ Հայաստանի գործով 2016 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 18275/08, կետ 30 (<http://static.echr.am/judgments/1bea85a266a1e1679cd9d9606a0bf0c6.pdf>):

Պիերսակն ընդդեմ Բելգիայի (*Piersack v. Belgium*) գործով 1984 թվականի հոկտեմբերի 26-ի վճիռը, գանգատ թիվ 8692/79, կետ 12:

հարկադիր կատարողների՝ օրենքի պահանջների հստակ և ժամանակին կատարման նկատմամբ վերահսկողությունը:

#### 4. Դատական ակտը պետական իրավասու մարմինների կողմից չկատարելը

Վարչական մարմինների իրականացրած ոչ պատշաճ վարչարարության մասին են վկայում ընթացիկ տարում Պաշտպանին հասցեագրված՝ դատական ակտերը պետական իրավասու մարմինների կողմից չկատարելու խնդրով բողոքները: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, ինչպես նաև դատարանի պահանջները կատարման համար պարտադիր են դրանց հասցեատերերի համար և ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Դատական ակտի կատարման հարցին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ ձևավորելով դիրքորոշում, ըստ որի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված արդար դատաքննության իրավունքը ներառում է նաև վերջնական պարտադիր դատական ակտերի կատարման իրավունքը<sup>143</sup>:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքն անիրական կլիներ, եթե պետության իրավական համակարգը թույլ տար, որ վերջնական և պարտադիր ուժ ունեցող դատական որոշումներն անկատար մնային: Ավելին, եթե Կոնվենցիայի 6-րդ հոդվածն առանց պաշտպանության թողներ դատական ակտերի կատարումը, ապա դա, հավանաբար, կհանգեցներ այնպիսի իրողության, որն անհամատեղելի կլիներ իրավունքի գերակայության սկզբունքների հետ, որը Պայմանավորվող պետությունները պարտավորվել են պահպանել Կոնվենցիան վավերացնելիս<sup>144</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ ցանկացած դատարանի կայացրած վճռի կատարումը պետք է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով դիտվի որպես դատական քննության անբաժանելի մաս<sup>145</sup>: Պետությունը պարտավոր է իր իրավական համակարգի աշխատանքը կազմակերպել այնպես, որ դատական որոշումների կատարման համար պատասխանատու պետական իշխանության տարբեր մարմինների միջև ապահովվի փոխհամագործակցություն և երաշխավորվի ողջամիտ ժամկետում դատական որոշումների կատարումը<sup>146</sup>:

Պարտադիր կատարման ենթակա լինելու տեսանկյունից որևէ տարբերակում չկա միջանկյալ և գործն ըստ էության լուծող դատական ակտերի միջև: Այս կապակցությամբ հատկանշական է ՀՀ սահմանադրական դատարանի 2008 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ ՄԴՈ-758 որոշումը, որտեղ դատարանը նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում օգտագործվում է «դատական ակտ» հասկացությունը, և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթների բովանդակային

<sup>143</sup> Տե՛ս Օզունիսը և ուրիշներն ընդդեմ Հունաստանի (Ouzounis and others v. Greece) գործով 2002 թվականի ապրիլի 18-ի վճիռը, գանգատ թիվ 49144/99, կետ 21:

<sup>144</sup> Տե՛ս Հորնսբին ընդդեմ Հունաստանի (Hornsby v. Greece) գործով 1997 թվականի մարտի 19-ի վճիռը, գանգատ թիվ 18357/91, կետ 40:

<sup>145</sup> Տե՛ս Դի Պեդեյն ընդդեմ Իտալիայի (Di Pede v. Italy) գործով 1996 թվականի սեպտեմբերի 26-ի վճիռը, գանգատ թիվ 15797/89, կետ 20:

<sup>146</sup> Տե՛ս Գլուշակովան ընդդեմ Ռուսաստանի Դաշնության (Glushakova v. Russian Federation) 2007 թվականի օգոստոսի 10-ի վճիռը, գանգատ թիվ 23287/05, կետ 17:

մեկնաբանությունն է միայն հնարավորություն տալիս պարզելու, որ խոսքը վերաբերում է ոչ միայն գործն ըստ էության լուծող դատական ակտին, այլ նաև միջանկյալ դատական ակտին:

Այսպես, ըստ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքի՝ դիմողը ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե է ներկայացրել սնանկության գործի շրջանակներում դատարանի կայացրած միջանկյալ դատական ակտը, որով ամրագրված է եղել իր գույքի նկատմամբ կիրառված բոլոր արգելանքներն ու սահմանափակումները վերացնելու ուղղակի պահանջ: Կոմիտեն միջանկյալ դատական ակտի հիման վրա չի իրականացրել անշարժ գույքի նկատմամբ կիրառված սահմանափակումների դադարման պետական գրանցում: ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի տեղեկությունների համաձայն՝ գրանցված (կիրառված) սահմանափակման դադարման պետական գրանցում կարող է իրականացվել միայն սնանկության գործն ավարտելու վերաբերյալ դատարանի սահմանված կարգով կայացված վճռի հիման վրա:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ սահմանված կարգով գրանցված սահմանափակումների դադարման պետական գրանցումն իրականացվում է սահմանափակումը վերացնելու (դադարեցնելու) մասին համապատասխան փաստաթղթի հիման վրա, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև այնպիսի հանգամանքների երևան գալով, որոնք օրենքի հիման վրա դադարեցնում են կիրառված սահմանափակման գործողությունը:

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի՝ բարձրացված խնդրին առնչվող կարգավորումների ուսումնասիրությունից հետևում է, որ թեև սնանկության գործն ավարտելու վերաբերյալ դատարանի կայացրած վճիռը հիմք է գրանցված սահմանափակման դադարման պետական գրանցում իրականացնելու համար, սակայն դա ամեննին չի սահմանափակում այլ հիմքերի առկայության դեպքում ևս սահմանափակման դադարման պետական գրանցում իրականացնելու հնարավորությունը:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի և «Մնանկության մասին» ՀՀ օրենքի՝ բարձրացված հարցին առնչվող կարգավորումների ընդհանուր վերլուծությունը թույլ է տալիս հանգելու հետևության, ըստ որի՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասում տեղ գտած «համապատասխան փաստաթղթի» ձևակերպումը չի կարող վերաբերել միայն սնանկության գործն ավարտելու վերաբերյալ դատարանի կայացված վճռին, մինչդեռ Կոմիտեն, այդ ձևակերպմանը նման նեղ մեկնաբանություն տալով, անհարկի սահմանափակել է այն փաստաթղթերի շրջանակը, որոնց հիման վրա հնարավոր է իրականացնել սահմանված կարգով գրանցված սահմանափակումների դադարման պետական գրանցում:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր բազմաթիվ (2010 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ ՎԴ/4066/05/09 վարչական գործը, 2006 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 3-1640(ՎԴ) քաղաքացիական գործը, 2008 թվականի ապրիլի 23-ի թիվ 3-247(ՎԴ) քաղաքացիական գործը և այլն) որոշումներում արձանագրել է, որ Կոմիտեն միայն ծագած իրավունքները գրանցող պետական մարմին է և չի կարող անձանց համար սահմանել Օրենքով չնախատեսված փաստաթղթեր կամ հիմնավորումներ ներկայացնելու պարտականություններ: Այսինքն՝ օրենքի նորմի ճիշտ գործադրումը պահանջում է իրականացնել անշարժ գույքի նկատմամբ կիրառված սահմանափակումների դադարման պետական գրանցում անգամ միջանկյալ դատական ակտի հիման վրա:

*Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝*

*1. ձեռնարկել հստակ միջոցներ դատական ակտերի պահանջների ժամանակին և պատշաճ կատարումն ապահովելու համար,*

*2. պետական իրավասու մարմիններին զերծ պահել դատական ակտի անհարկի մեկնաբանումից:*

**5. Պետական մեկ մարմնի՝ մեկ այլ մարմին ուղարկված հարցումներին ի պատասխան սխալ տեղեկությունների ներկայացման հետևանքով պատշաճ վարչարարության իրավունքի խախտում**

2018 թվականի ընթացքում ստացվել են բողոքներ այն խնդրի մատնանշմամբ, երբ պետական մեկ մարմնի հարցումներին ի պատասխան մեկ այլ մարմին տրամադրել է սխալ տեղեկություններ, ինչն էլ խնդիրներ է առաջացրել պատշաճ վարչարարության իրականացման տեսանկյունից:

Նշվածի համատեքստում անհրաժեշտ է անդրադառնալ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ոչ պատշաճ վարչարարության իրականացման այլ դեպքերի: Խնդիրը վերաբերում է այն դեպքերին, երբ հարկադիր կատարման ծառայության՝ պարտապանի գույքի հայտնաբերման նպատակով ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե ուղարկված հարցումներին ի պատասխան՝ Կոմիտեից ստացված գրություններում տեղ են գտնում որոշակի անճշտություններ, որոնք անձանց իրավունքների խախտման պատճառ են դառնում: Մասնավորապես, դեպքերից մեկով հարկադիր կատարողն արգելանք է դրել պարտապանի ամուսնու աշխատավարձի վրա, քանի որ պարտապանի անվամբ գույք և դրամական միջոցներ չեն հայտնաբերվել, մինչդեռ Կադաստրի կողմից դիմողին տրված տեղեկանքով հավաստվում է այն, որ պարտապանի անվամբ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով գույք կա գրանցված: Հետաքրքրականն այն է, որ նույն անձի՝ պարտապանի վերաբերյալ հարկադիր կատարման ծառայության կատարած հարցմանն ի պատասխան՝ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեից ստացված գրությամբ պարզվել է, որ պարտապանի անվամբ անշարժ գույք չկա գրանցված: Մտացվում է, որ նույն անձի վերաբերյալ քաղաքացու և հարկադիր կատարման ծառայության հարցումներին Կադաստրը տվել է տարբեր, իրարամերժ պատասխաններ: Նշված դեպքում Կադաստրի տեղեկության ոչ հավաստի լինելու պատճառով արգելանք է կիրառվել պարտապանի աշխատավարձի վրա, ինչն, իհարկե, Պաշտպանի աջակցությամբ վերացվել է:

*Այնուամենայնիվ, նմանատիպ դեպքերը բացառելու նպատակով անհրաժեշտ է՝*

*1.բարձրացնել վերահսկողությունը ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակիցների նկատմամբ և հարկադիր կատարման ծառայությանը կամ այլ մարմիններին յուրաքանչյուր ոչ հավաստի տվյալ տրամադրելու դեպքի համար կիրառել անհատական պատասխանատվության միջոցներ,*

*2.ուժեղացնել վերահսկողությունը Հարկադիր կատարման ծառայությանը տրամադրվող տեղեկությունների իսկությունը և ճշգրտությունն ապահովելու ուղղությամբ:*

**6. Ոչ պատշաճ վարչարարության հետևանքով վարչական ակտի բողոքարկման հնարավորության սահմանափակումը**

Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ վարչական ակտերի բողոքարկման հնարավորության սահմանափակ լինելու կապակցությամբ: Մասնավորապես, ոչ պատշաճ վարչարարության իրականացման մի դեպքով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն կայացրել է վարչական ակտ, որը փոստային ծառայության միջոցով ուղարկվել է հասցեատիրոջը՝ հարկ վճարողին: Որոշումը հետ է վերադարձվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե «Մերժված» նշագրումով, որպիսի փաստը հաշվի չառնելով՝ 2 ամիս անց վարչական ակտը Կոմիտեի գնահատմամբ դարձել է անբողոքարկելի և համապատասխան գրությամբ ներկայացվել հարկադիր կատարման ծառայություն հարկ

վճարողից որոշակի գումար բռնագանձելու պահանջով: Կոմիտեի գրության հիման վրա հարկադիր կատարման ծառայությունում հարուցվել է կատարողական վարույթ, որը սակայն հետագայում կարճվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի հիմքով այն հիմնավորմամբ, որ Կոմիտեի կայացրած վարչական ակտը ոչ իրավաչափ եղանակով է դարձել անբողոքարկելի:

Ստեղծված իրավիճակում հարուցված կատարողական վարույթի կարճումից հետո Կոմիտեն հրաժարվել է վերացնել հարկ վճարողի դրամական միջոցների վրա կիրառված արգելանքը՝ վկայակոչելով իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ 30.2-րդ հոդվածի կարգավորումները, որոնց համաձայն՝ արգելադրված գույքն արգելանքից հանվում է, եթե վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում հարկային մարմինը չի ներկայացրել ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի պարզաբանումների համաձայն՝ կատարողական վարույթը կարճելու մասին որոշումը հիմք չէ «Հարկերի մասին» ՀՀ 30.2-րդ հոդվածի հիման վրա որոշակի գումարի չափով կիրառված արգելանքը վերացնելու համար, քանի որ բացակայում են նշված օրենքով նախատեսված գույքի և դրամական միջոցների վրա կիրառված արգելանքը վերացնելու հիմքերը:

Նշված դեպքում թեև վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո այն հարկադիր կատարման ծառայությանը ներկայացնելու օրենսդրական պահանջը պահպանվել է, սակայն դա իրականացվել է ոչ իրավաչափ եղանակով. այդ մասին է վկայում հարուցված կատարողական վարույթը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի հիմքով կարճվելու մասին հարկադիր կատարողի կայացրած որոշումը, որը թեև բողոքարկվել է, սակայն անփոփոխ է մնացել, որպիսի պայմաններում չբեկանված վարչական ակտի (կատարողական վարույթը կարճվելու մասին որոշման) գոյությունը փաստում է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի որոշումը ոչ իրավաչափ կերպով է անբողոքարկելի դարձել:

Այս կապակցությամբ ուշագրավ է ՀՀ վճարեկ դատարանի մի շարք որոշումներում արտահայտված դիրքորոշումն առ այն, որ չլիճարկված վարչական ակտն իրավաչափ է և որևէ անձ, այդ թվում՝ պետական մարմինը, *չի կարող կասկածի տակ դնել դրա իրավաչափությունը* (2009 թվականի մայիսի 27-ի թիվ ՎԴ/2068/05/08, 2010 թվականի փետրվարի 5-ի թիվ ՎԴ/7615/05/08, 2010 թվականի ապրիլի 2-ի թիվ ՎԴ/0332/05/09, 2010 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/6725/05/08 վարչական գործերը և այլն)<sup>147</sup>: Մինչդեռ կատարողական վարույթը կարճվելու մասին որոշման բողոքարկման և դրա անփոփոխ մնալու պայմաններում ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, կիրառված արգելանքները չվերացնելով, այդպիսով կասկածի տակ է դրել հարկադիր կատարողի կայացրած որոշման իրավաչափությունը:

Խնդրահարույց է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի վերը նշված կարգավորման այնպիսի մեկնաբանումը, որի հետևանքով իրավակիրառողը շեղվում է օրենսդրական կարգավորման բուն էությունից և «անբողոքարկելի» դարձած վարչական ակտը հարկադիր կատարման ծառայությանը ներկայացնելով՝ միայն ձևականորեն է պահպանում օրենքի պահանջները՝ այդպիսով մի կողմից հանգեցնելով այդ նորմի տարակերպ մեկնաբանման, մյուս կողմից՝ բողոք ներկայացրած անձի սեփականության իրավունքի սահմանափակման: Արգելանքների պահպանումը պետք է իրավաչափ նպատակ հետապնդի, մինչդեռ ոչ իրավաչափ կերպով անբողոքարկելի դարձած ակտի հիման վրա կիրառված արգելանքները չեն կարող այդպիսի նպատակներ հետապնդել:

<sup>147</sup> Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=58376>:

Ստեղծված իրավիճակում վարչական մարմինը պետք է կարևորի ոչ միայն վարչական ակտի անբողոքարկելի դառնալուց հետո այն հարկադիր կատարման ծառայությանը ներկայացնելու փաստը, այլև դրան նախորդող և հաջորդող գործողությունները և դրանց իրավաչափությունը, քանի որ, եթե վարչական ակտը ոչ իրավաչափ եղանակով է անբողոքարկելի դարձել, որից հետո ներկայացվել է հարկադիր կատարման ծառայությանը, ապա կատարողական վարույթը կարճելու մասին հարկադիր կատարողի կայացրած որոշումը պետք է հիմք լինի անձի սեփականության վրա կիրառված սահմանափակումները վերացնելու համար: Օրենսդրական խնդիրը չի լուծվել նաև 2018 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ հարկային օրենսգրքով, որի 432-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նույնությամբ պահպանվել են «Հայաստանի Հանրապետությունում հարկերի մասին» ՀՀ 30.2-րդ հոդվածի՝ գույքն արգելանքից հանելուն վերաբերող կարգավորումները: Ուստի նմանատիպ իրավիճակները բացառելու նպատակով անհրաժեշտ է կատարել օրենսդրական համապատասխան փոփոխություններ՝ մինչ այդ իրավակիրառ պրակտիկան զարգացնելով այնպես, որ օրենքի նորմերին չտրվի այն աստիճան նեղ մեկնաբանություն, որը կհանգեցնի մի իրավիճակի, երբ կիրառված արգելանքները վերացնելու համար հաշվի չառնվի այն փաստը, որ դրանք ոչ իրավաչափ եղանակով են կիրառվել (վարչական ակտը ոչ իրավաչափ եղանակով է դարձել անբողոքարկելի):

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ՀՀ հարկային օրենսգրքի 432-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետով. «Նույն հոդվածով սահմանված կարգով արգելանքի դրված գույքն արգելանքից հանվում է, եթե հարկ վճարողի վերաբերյալ ընդունված անհատական իրավական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում և կարգով հարկային մարմինը համապատասխան պահանջ է ներկայացրել հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, սակայն կատարողական վարույթ չի հարուցվել կամ հարուցված կատարողական վարույթը կարճվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով սահմանված հիմքերից որևէ մեկով»:*

## **7. Պարտապանների գույքի և դրամական միջոցների վրա սահմանվածից ավելի չափերով բռնագանձում տարածելը**

Պատշաճ վարչարարության խնդրի շրջանակներում հարկ է անդրադառնալ նաև կատարողական գործողությունների ընթացքում պարտապանների գույքի և դրամական միջոցների վրա բռնագանձում տարածելու չափերի և սահմանների հետ կապված մտահոգություններին: «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտապանի գույքի վրա բռնագանձումը տարածվում է այն չափով, որն անհրաժեշտ է կատարողական թերթի պահանջների կատարման համար, ներառյալ՝ կատարման ծախսերը: Նույն օրենքի 44.3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե այլ բան նախատեսված չէ կատարողական թերթով, ապա, որպես հայցի ապահովում հայցագնի չափով արգելանք է դրվում պարտապանին պատկանող՝ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված գույքի վրա: Խնդրի կապակցությամբ Պաշտպանին հասցեագրված բողոքները վկայում են, որ հարկադիր կատարողները պարտապանների գույքի վրա արգելանք են դնում ավելի չափով, քան անհրաժեշտ է կատարողական թերթի պահանջների կատարման համար:

Հարկ է նկատել, որ հայցագնի չափը գերազանցող գույքն արգելանքից հանելու ընթացակարգ թեև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված է, սակայն այն պարտապանների համար որոշ դժվարություններ է ստեղծում



պրակտիկայում: Մասնավորապես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.3-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ պարտապանը, որի գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների վրա, որպես հայցի ապահովում, հայցագնի չափով արգելանք է կիրառվել, կարող է միջնորդություն ներկայացնել հարկադիր կատարողին արգելանքն այլ գույքի վրա դնելու կամ հայցագնի չափը գերազանցող գույքն արգելանքից հանելու մասին՝ կցելով այլ գույքի կամ արգելադրված գույքի լիկվիդացիոն արժեքի՝ հայցագնի չափը գերազանցելու վերաբերյալ գնահատման եզրակացությունը և միջնորդությունն ու գույքի գնահատման եզրակացությունը պարտատիրոջ կողմից ստանալը հավաստող փաստաթուղթ: Մինչդեռ պարտապաններին նշված փաստաթղթերը ձեռք բերելու և դրանք հարկադիր կատարողին ներկայացնելու լրացուցիչ պարտավորություններով ծանրաբեռնելու փոխարեն անհրաժեշտ է մեխանիզմներ նախատեսել ոչ թե հայցագնի չափը գերազանցող գույքն արգելանքից հանելու, այլ կատարողական վարույթի շրջանակներում պարտապանի գույքի և դրամական միջոցների վրա հայցագնի չափով արգելանք դնելու կապակցությամբ:

Կատարողական գործողությունների ընթացքում պարտապանների գույքի և դրամական միջոցների վրա բռնագանձում տարածելու չափի կապակցությամբ մեկ այլ խնդիր է կիրառված արգելանքները մասնակի վերացնելու ընթացակարգերի բացակայությունը: Պրակտիկայում, երբ պարտապանի կողմից իր պարտավորությունները մասնակի կատարվում են, նրա դրամական միջոցների վրա կատարողական վարույթի հարուցման պահին դրված արգելանքները համամասնորեն չեն նվազեցվում, դրանք շարունակում են պահպանվել սկզբնական չափով: Ընդ որում, եթե կատարողական վարույթի շրջանակներում պարտապանի անվամբ հայտնաբերվում են դրամական միջոցներ տարբեր բանկերում, ապա բռնագանձումը հայտնաբերված դրամական միջոցներից մեկի վրա տարածելու պայմաններում մնացած հաշվեհամարների վրա կիրառված արգելանքները դարձյալ շարունակում են նույն (սկզբնական) չափով պահպանվել: Սա խնդիր է, որին հնարավոր է լուծում տալ օրենսդրական փոփոխություններ կատարելու դեպքում: Այս կապակցությամբ ողջունելի է, որ առկա օրենսդրական բացը լրացվել է ներկայումս շրջանառվող՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով<sup>148</sup>, որով նախատեսվող կարգավորումների համաձայն՝ պարտապանի կողմից իր պարտավորությունը մասնակի կատարվելու դեպքում հարկադիր կատարողը պարտապանի հաշիվներն սպասարկող բանկին կամ այլ վարկային կազմակերպությանն ուղարկվող էլեկտրոնային հաղորդագրության միջոցով կատարված պարտավորության չափով հանում է պարտապանի ունեցած դրամական միջոցների վրա դրված արգելանքը: Ողջունելի է օրենսդրական նման նախաձեռնությունը, որը հնարավորություն կտա պարտապաններին իրենց պարտավորությունները մասնակի կատարելու դեպքում ազատորեն տնօրինելու իրենց հաշվեհամարներին առկա մնացած դրամական միջոցները:

Կատարողական գործողությունների ընթացքում կատարողական թերթում նշված գույքից բացի պարտապանների այլ գույքի և դրամական միջոցների վրա բռնագանձում տարածելու խնդրի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարության տեղեկությունների համաձայն՝ բոլոր այն դեպքերում, երբ կատարողական թերթի պահանջի հարկադիր կատարումն ապահովվելու համար բռնագանձումը տարածվում է կատարողական թերթում նշված բռնագանձման ենթակա գույքի վրա, սակայն տվյալ գույքը հարկադիր իրացնելուց հետո ամբողջությամբ չի բավարարում կատարողական թերթի պահանջը, ապա

<sup>148</sup> Նախագիծը 2018 թվականի հոկտեմբերի 24-ին ՀՀ ազգային ժողովում ընդունվել է 1-ին ընթերցմամբ, ներկա պահին գտնվում է ՀՀ 6-րդ գումարման Ազգային ժողովի նիստերի օրակարգում, [http://www.parliament.am/draft\\_history.php?id=10091](http://www.parliament.am/draft_history.php?id=10091):

վարույթն իրականացնող հարկադիր կատարողը կատարողական գործողությունները շարունակում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի դրույթներին համապատասխան՝ միջոցներ ձեռնարկելով պարտապանին պատկանող այլ գույք հայտնաբերելու և դրա վրա բռնագանձում տարածելու ուղղությամբ:

Այն դեպքերում, երբ վճռում դատարանն ուղղակիորեն և հստակ նշում է գրավի առարկա հանդիսացող կամ չհանդիսացող այն գույքը, որի վրա պետք է բռնագանձում տարածվի, դրանով դատարանն արտահայտում է վճռի կատարումն ապահովելու համար պարտապաններին պատկանող այլ գույքի վրա բռնագանձում տարածելու արգելքը: Մինչդեռ գործնականում հարկադիր կատարման ծառայությունը վճռով ուղղակիորեն նախատեսված գույքի հարկադիր իրացումից և կատարողական թերթի պահանջի ամբողջական չբավարարումից հետո միջոցներ է ձեռնարկում պարտապանին պատկանող այլ գույք հայտնաբերելու և դրա վրա ևս բռնագանձում տարածելու ուղղությամբ՝ դրանով իսկ յուրովի մեկնաբանություն տալով կայացված դատական ակտին: Սակայն հարկ է նկատել, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2016 թվականի մարտի 22-ի թիվ ՍԴՈ-1262 որոշման համաձայն՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության իրավասությունն է կատարողական թերթի ժամանակին, լրիվ և ճիշտ կատարման համար միջոցներ ձեռնարկելը, այլ ոչ թե դատական ակտի և կիրառման ենթակա օրենքի մեկնաբանությունը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. *նախատեսել օրենսդրական մեխանիզմներ, ըստ որի՝ եթե գրավով ապահովված կամ չապահովված պարտավորության վերաբերյալ կատարողական թերթի կատարման ընթացքում պարզվում է, որ գրավի առարկայի կամ վճռում ուղղակիորեն նշված գույքի արժեքն անբավարար է պահանջի բավարարման համար կամ կատարողական թերթի կատարման ընթացքում հնարավոր չի եղել հայտնաբերել վճռում նշված գույքը, ապա պարտապանի այլ գույքի վրա բռնագանձում կարող է տարածվել միայն կատարողական թերթում այդ մասին նշված լինելու դեպքում,*

2. *սահմանել մեխանիզմներ կատարողական վարույթի շրջանակներում պարտապանի գույքի և դրամական միջոցների վրա ի սկզբանե մարման ենթակա գումարի չափով արգելանք դնելու կապակցությամբ:*

## **8. Կատարողական թերթով նշված գումարն ամբողջությամբ մարելուց հետո կատարողական վարույթը չկարճելը և արգելանքները չվերացնելը**

2018 թվականի ընթացքում բազմաթիվ բողոքներ և ահազանգեր են ստացվել առ այն, որ կատարողական թերթով նշված գումարն ամբողջությամբ մարելուց հետո հարկադիր կատարողները հրաժարվել են կարճել կատարողական վարույթը և վերացնել արգելանքները դիմողների գույքի և դրամական միջոցների վրայից՝ պահանջելով պահանջատիրոջ կողմից պարտքի մարված լինելու վերաբերյալ տրված լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնել: Բարձրացված հարցի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը սեփական նախաձեռնությամբ սկսել է քննարկման ընթացակարգ:

Ստացված բողոքների ընդհանուր ուսումնասիրությունը վկայում է, որ հարկադիր ծառայությունում ձևավորվել է պրակտիկա, ըստ որի՝ կատարողական թերթի փաստացի կատարման հիմքով կատարողական վարույթը կարճելու համար հարկադիր կատարողները կատարողական թերթի փաստացի կատարումը հավաստող համապատասխան փաստաթուղթ (տեղեկանք) ներկայացնելու լրացուցիչ պարտականություն են դնում պարտապանների վրա: Ստացված բողոքների համաձայն՝ բռնագանձման ենթակա ամբողջ գումարը հարկադիր կատարման ծառայության դեպոզիտ հաշվին վճարելուց հետո հարկադիր կատարողներն անձանց գույքի և

դրամական միջոցների վրա դրված արգելանքները չեն վերացնում՝ պարտապաններից պահանջելով պահանջատեր բանկերից իրենց պարտքի մարման մասին համապատասխան տեղեկանք ներկայացնել ծառայություն: Խնդրահարույց է այն, որ հարկադիր կատարողները պարտապաններից պահանջում են ներկայացնել բանկի գլխամասային գրասենյակներից տրամադրված տեղեկանքները՝ չընդունելով մասնաճյուղերի տրամադրածները: Դիմողների դժգոհությունն արդարացիորեն պայմանավորված է նրանով, որ իրենց գույքի և դրամական միջոցների վրա դրված արգելանքի վերացման համար ստիպված են լինում մարզերից (օրինակ՝ Տավուշ, Սյունիք) ներկայանալ պահանջատեր բանկի գլխամասային գրասենյակ (ք. Երևան) պահանջվող տեղեկանքը վերցնելու համար այն դեպքում, երբ հարկադիր կատարման ծառայությունը կարող է ինքնուրույն ճշտել պարտավորությունը կատարված լինելու հարցը:

Հարկադիր ծառայությունում ձևավորված պրակտիկան ոչ միայն անհարկի ծանրաբեռնում է պարտապաններին և լրացուցիչ պարտավորություններ դնում նրանց վրա, այլև շատ դեպքերում հավելյալ գումարներ վճարելու պարտավորություն է առաջացնում նրանց համար, քանի որ գումարը հարկադիր ծառայության դեպոզիտ հաշվին վճարելուց հետո պահանջատեր բանկի հաշվեհամարին փոխանցելու ժամանակահատվածում այդ գումարի վրա հաշվեգրվող տոկոսների հաշվարկը շարունակվում է, այնինչ կատարողական թերթի փաստացի կատարման, այն է՝ հարկադիր ծառայության դեպոզիտ հաշվին պարտքի գումարի վճարման հետ մեկտեղ պետք է դադարի նաև այդ գումարի վրա հաշվեգրվող տոկոսների հաշվարկը:

Բարձրացված խնդրի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարությունից ստացված պարզաբանումների համաձայն՝ եթե կատարողական գործողությունների ընթացքում ձեռք են բերվում բավարար հիմքեր կատարողական թերթի պահանջն ամբողջական կատարված լինելու փաստի վերաբերյալ, ապա կատարողական վարույթի կողմերից լրացուցիչ տեղեկատվության ներկայացում չի պահանջվում և հարուցված կատարողական վարույթը կարճվում է, իսկ կիրառված արգելանքները վերացվում են: Սակայն լինում են դեպքեր, երբ կատարողական թերթով սահմանված է նաև հաշվեգրվող տոկոսագումարների բռնագանձում, որի հաշվարկն անհատական է և պայմանավորված է կողմերի միջև կնքված պայմանագրով, և որի պայմանները կատարողական թերթում մանրամասն արտացոլված չեն, ուստի անհրաժեշտություն է առաջանում պահանջատիրոջից ճշտելու կատարողական թերթի պահանջն ամբողջությամբ կատարված լինելու փաստը:

Հարկ է նկատել, սակայն, որ գործնականում բռնագանձման ենթակա գումարի վճարումից հետո պահանջատիրոջ պարտքի մարման նկատմամբ հետևողականությունը դրվում է պարտապանի վրա, մինչդեռ նրա պարտավորությունն ավարտվում է ծառայության դեպոզիտ հաշվին կամ այլ համապատասխան հաշվեհամարին կատարողական թերթով բռնագանձման ենթակա ամբողջ գումարը վճարելով, իսկ այդ գումարի՝ պահանջատիրոջը փոխանցելու և պարտքի փաստացի մարման նկատմամբ հետևողականությունն (հսկողություն) արդեն պետք է դրսևորվի հարկադիր ծառայության կողմից:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է նախատեսել մեխանիզմ, ըստ որի՝ կատարողական թերթը փաստացի կատարելու վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթեր հարկադիր կատարման ծառայություն ներկայացվելուց հետո հարկադիր կատարողը պահանջատիրոջը կատարվելիք հարցման միջոցով պարզի պահանջատիրոջ պարտքի մարման փաստը:*

**9. Փոքր (կամ նվազ) գումարների բռնագանձման կատարողական վարույթներով պարտապանի ողջ շարժական կամ անշարժ գույքն իրացնելը**

2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքներով բարձրացվել է նաև փոքր (կամ նվազ) գումարներ բռնագանձելու վերաբերյալ կատարողական վարույթներով պարտապանի գույքի հետախուզում իրականացնելու, ավելին՝ բռնագանձում տարածելու վերաբերյալ խնդիրը: Մասնավորապես, պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ կատարողական վարույթներով բռնագանձման ենթակա գումարները չեն գերազանցում 50 հազար ՀՀ դրամը, սակայն հարկադիր կատարողն իրականացնում է պարտապանի գույքի հետախուզում: Ավելին, եղել են դեպքեր, երբ հետախուզման հետևանքով հայտնաբերված գույքն առգրավվել է: Այսպես, օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկի համաձայն՝ 18.000 ՀՀ դրամ գումարի բռնագանձման կատարողական վարույթով հարկադիր կատարողը պարտապանի գույքի նկատմամբ հետախուզում է հայտարարել, ինչի հետևանքով հայտնաբերվել է պարտապանին պատկանող ավտոմեքենան, առգրավվել և տարվել է Հարկադիր կատարման ծառայության տուգանային հրապարակ: Պաշտպանի աջակցությամբ խնդիրը կարգավորվել է, ավտոմեքենան տուգանային հրապարակից վերադարձվել է պարտապանին: Սակայն շարունակում է խնդրահարույց մնալ հարկադիր կատարման ծառայությունում ձևավորված՝ օրենսդրական կարգավորումներին հակասող իրավակիրառ պրակտիկան:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտապանի գույքի հետախուզում չի իրականացվում մինչև 50.000 դրամ պահանջի բավարարմանն ուղղված գույքային բնույթի կատարողական վարույթներով և ոչ գույքային բնույթի կատարողական վարույթներով, բացառությամբ քրեական գործերով տուգանքների բռնագանձման և գույքի բռնագրավման, ալիմենտային, աշխատավարձի բռնագանձման և կյանքին ու առողջությանը պատճառված վնասի հատուցման վերաբերյալ կատարողական վարույթներով:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածը սահմանում է պարտապանի և (կամ) նրա գույքի հետախուզում հայտարարելու կարգը, մասնավորապես, թվարկվում են պետական այն մարմինները, որոնց հարցումներ կատարելու միջոցով հայտնաբերվում է պարտապանին պատկանող գույքը: Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությամբ սահմանված է բանկերին գույքի վերաբերյալ հարցումներ կատարելու կարգը: Այսպիսով, օրենքի 40-րդ հոդվածի ընդհանուր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրամական միջոցներն էլ են գույք դիտարկվում այդ հոդվածի իմաստով, ինչի հետևանքով մինչև 50.000 դրամ պահանջի բավարարմանն ուղղված կատարողական վարույթներով հետախուզում է հայտարարվում նաև պարտապանի դրամական միջոցների նկատմամբ, մինչդեռ գործնականում չի կարող այդ դեպքում հետախուզում հայտարարվել: Ասվածը հաստատվում է նաև օրենքի 40-րդ հոդվածի վերնագրով, որը նախատեսում է գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու կարգը: Բացի այդ, հետախուզման եղանակների մեջ, ի թիվս այլնի՝ նշված է նաև առևտրային բանկերին գույքի հայտնաբերման նպատակով հարցումներ կատարելը: Ուստի անհրաժեշտ է հստակ տարբերակում դնել դրամական միջոցների հայտնաբերման նպատակով հետախուզում հայտարարելու դեպքերի և արգելքների միջև:

Այս կապակցությամբ հարկադիր կատարման ծառայությունում ձևավորված իրավակիրառ պրակտիկան այնպիսին է, որ, օրինակ, փոքր (կամ նվազ) գումարների բռնագանձման վերաբերյալ անբողոքարկելի դարձած վարչական ակտերի հիման վրա հարուցված կատարողական վարույթներով հետախուզում է հայտարարվում պարտապանի դրամական միջոցների նկատմամբ՝ առևտրային բանկերին համապատասխան հարցումներ ուղարկելով, ինչպես նաև իրականացվում է բռնագանձում: Մինչդեռ, «Դատական ակտերի

հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է նորմ, ըստ որի՝ պարտապանի աշխատավարձի և այլ տեսակի եկամուտների վրա տարածվում է բռնագանձում, եթե պարտապանը չունի գույք կամ եղած գույքը բավարար չէ բռնագանձվող գումարը լրիվ մարելու համար:

*Ուստի, էլնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝*

1. օրենսդրական եղանակով տարանջատել դրամական միջոց չհամարվող գույքի նկատմամբ հետախուզում իրականացնելու դեպքերը՝ փոքր (կամ նվազ) գումարների բռնագանձման կատարողական վարույթներով սահմանելով դրամական միջոցների հետախուզման և բռնագանձման հստակ կարգավորումներ,

2. փոքր (կամ նվազ) գումարների բռնագանձման կատարողական վարույթներով գույքի (բացառությամբ դրամական միջոցների) նկատմամբ հետախուզում հայտարարելու կապակցությամբ ձևավորված իրավակիրառ պրակտիկան համապատասխանեցնել օրենսդրական գործող կարգավորումներին,

3. համապատասխան օրենսդրական հստակեցումից հետո հարկադիր կատարման ծառայությունում բարձրացնել վերահսկողությունն օրենսդրական պահանջների կատարման ուղղությամբ և բացառել մինչև 50.000 դրամ պահանջի բավարարմանն ուղղված կատարողական վարույթներով պարտապանի գույքի, բացառությամբ դրամական միջոցների նկատմամբ հետախուզում իրականացնելու հնարավոր դեպքերը,

4. օրենսդրական եղանակով նախատեսել գումարի համապատասխան չափ, որի բռնագանձման դեպքում կնախատեսվի հնարավորություն բռնագանձումն առաջնահերթ աշխատավարձի կամ այլ եկամուտների վրա տարածել պարտապանի դիմումի հիման վրա՝ անկախ շարժական և անշարժ գույքի առկայությունից՝ պարտապանի աշխատավարձի և այլ եկամուտների վրա բռնագանձումն առաջնահերթության կարգով իրականացնելու համար պահանջատիրոջ համաձայնությունը ստանալով:

## **10. Իրավահաջորդներին կատարողական վարույթի մասնակից դարձնելու ընթացակարգերի բացակայությունը**

2018 թվականի ընթացքում ստացված ահազանգերի և բողոքների ընդհանուր ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ օրենսդրական մեխանիզմների բացակայությունը որոշ դեպքերում հանգեցնում է կատարողական վարույթի կողմերի շահերի ոտնահարման և դատական ակտի չկատարման: Խնդիրն այն է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում մեխանիզմներ կատարողական վարույթի կողմերից մեկի մահվանից հետո վերջինիս իրավահաջորդներին կատարողական վարույթի մասնակից դարձնելու ընթացակարգերի վերաբերյալ: Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական վարույթի կողմերից մեկի դուրս գալու դեպքում (քաղաքացու մահ, իրավաբանական անձի վերակազմակերպում, պահանջի զիջում, պարտքի փոխանցում) հարկադիր կատարողը պարտավոր է կատարել նրա փոխարինում՝ օրենքով, դատարանի վճռով կամ պայմանագրով որոշված իրավահաջորդով: Կատարողական վարույթի կողմերի մահը նախատեսվել է կատարողական վարույթի կասեցման կամ կարճման հիմքերի շարքում՝ կախված նրանից, թե դատական ակտով սահմանված պահանջները կամ պարտականություններն իրավահաջորդության կարգով կարող են փոխանցվել, թե ոչ:

Կատարողական վարույթի կողմերից մեկի մահվանից հետո վերջինիս իրավահաջորդներին կատարողական վարույթի մասնակից դարձնելու օրենսդրական ընթացակարգերի բացակայությունը հանգեցնում է մի իրավիճակի, երբ, օրինակ՝ պահանջատերը մահանում է, վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս

իրավահաջորդություն, սակայն հարկադիր կատարողը չի կարողանում պահանջատիրոջը նրա իրավահաջորդով փոխարինել, քանի որ նա հայտնվում է պահանջատիրոջ բոլոր իրավահաջորդներին հայտնաբերելու խնդրի առաջ, որպիսի մեխանիզմի բացակայությունն էլ հենց հանգեցնում է տվյալ դեպքում պարտապանի շահերի ոտնահարման (պահանջատիրոջը նրա իրավահաջորդով փոխարինելու դեպքում պարտապանը գուցե հաշտության համաձայնության գա վերջինիս հետ, ինչը կատարողական վարույթը կարճելու հիմք է, որն էլ իր հերթին հիմք է պարտապանի գույքի և դրամական միջոցների վրա կիրառված արգելանքները վերացնելու համար):

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. նախատեսել օրենսդրական մեխանիզմներ կատարողական վարույթի կողմերից մեկի մահվանից հետո վերջինիս իրավահաջորդներին կատարողական վարույթի մասնակից դարձնելու ուղղությամբ, մասնավորապես՝ կատարողական վարույթի կողմերի մահվան փաստը հայտնի դառնալուց հետո ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն վարույթի կողմի մահվանից 6 ամիս հետո կատարվելիք հարցման միջոցով պարզել վերջինիս իրավահաջորդների առկայության փաստը,*

*2. հարցման արդյունքներով պայմանավորված՝ օրենսդրական մեխանիզմներ նախատեսել հայտնաբերված իրավահաջորդների՝ կատարողական վարույթին մասնակցությունն ապահովելու համար:*

### **11. Բռնագանձման ոչ ենթակա գույքի վրա բռնագանձում տարածելը**

2018 թվականին ստացվել են բազմաթիվ բողոքներ, որ հարկադիր կատարման ծառայությունն արգելանք է դրել օրենքի ուժով բռնագանձման ոչ ենթակա գումարների վրա: Այս խնդիրը տարիներ շարունակ Պաշտպանը բարձրացնում է, սակայն, դեռևս համակարգային առումով այն չի լուծվել:

Խնդրի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարությունից պարզաբանվել է, որ հարկադիր կատարման ծառայությունում կատարողական վարույթ հարուցելուց հետո, երբ արգելանքի որոշումներ են ուղարկվում Հայաստանի Հանրապետության գործող առևտրային բանկեր, արգելանքի որոշման ձևանմուշի համապատասխան դաշտում, որպես կանոն, լրացվում են այն հաշվեհամարները, որտեղից փոխանցված գումարները բռնագանձման ոչ ենթակա գումարներ են: Այսինքն՝ հարկադիր կատարողն արգելանքի որոշում կայացնելիս ի սկզբանե իր որոշմամբ արգելանք չի կիրառում բռնագանձման ոչ ենթակա գումարների վրա: ՀՀ արդարադատության նախարարությունից բանկի միջոցով աշխատավարձ կամ կենսաթոշակ ստանալու խնդրի առնչությամբ պարզաբանվել է, որ այդ փաստը հարկադիր կատարողի որևէ ձևով պարզելուց կամ պարտապանի գրավոր տեղեկացնելուց հետո, կայացվում է նոր որոշում՝ աշխատավարձը կամ կենսաթոշակը սահմանված չափով արգելադրելու կամ ամբողջությամբ ազատելու վերաբերյալ:

Չնայած բռնագանձման ոչ ենթակա գումարների վրա արգելանք չկիրառելու ուղղությամբ հարկադիր կատարման ծառայության ձեռնարկած միջոցներին՝ այնուամենայնիվ պետք է նշել, որ է 2018 թվականի ընթացքում աշխատավարձի, կենսաթոշակի, հաշմանդամության կենսաթոշակի կամ պետական նպաստների վրա կիրառված արգելանքները վերացնելու խնդրով Պաշտպանին հասցեագրված բազմաթիվ բողոքներն ու ահազանգերը վկայում են, որ խնդիրը դեռևս լուծում չի ստացել:

Ըստ Պաշտպանին հասցեագրած բողոքների՝ հարկադիր կատարման ծառայության հարուցած կատարողական վարույթի շրջանակներում բռնագանձում է տարածվել դիմողների հաշմանդամության կենսաթոշակի հաշվեհամարների վրա: Մինչդեռ,

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ կատարողական թերթով բռնագանձում չի կարող տարածվել այն դրամական գումարների վրա, որոնք վճարվում են հաշմանդամություն ունեցող անձանց: Պաշտպանի աջակցությամբ, իհարկե, հաշմանդամության կենսաթոշակի հաշվեհամարների վրա դրված արգելանքները վերացվել են: Սակայն պետք է փաստել, որ հարկադիր կատարողների ձեռնարկած միջոցները բավարար չեն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի իմպերատիվ նորմերի պահպանումն ապահովելու համար:

Օրենքի 60-րդ հոդվածի դրույթների չպահպանման կապակցությամբ ստացված բողոքներից մեկի քննության շրջանակներում հարկադիր ծառայությունից ստացված պարզաբանումների համաձայն՝ «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» որոշման ձևանմուշի մեջ նշվում են սոցիալական ապահովության պետական ծառայության տրամադրած այն հաշվեհամարները, որոնց վրա «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի հիմքով բռնագանձում չի տարածվում, սակայն պրակտիկայում լինում են դեպքեր, երբ նշված գումարները փոխանցվում են փոփոխվող կամ անհատական հաշվեհամարներից, որոնց մասին հարկադիր կատարողը չէր կարող տեղեկություն ունենալ: Հարկ է նկատել, որ սոցիալական ապահովության պետական ծառայության տրամադրած՝ բռնագանձման ոչ ենթակա հաշվեհամարներ նախատեսելու մեխանիզմն ուղղված է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածով նախատեսված դրամական միջոցների բռնագանձումը կանխելուն, մինչդեռ պայմանավորված այդ գումարները փոփոխվող կամ անհատական հաշվեհամարներից փոխանցվելու դեպքերով՝ բռնագանձման ոչ ենթակա հաշվեհամարների գործարկումն արդյունավետ և բավարար չէ: Ուստի, հաշմանդամության կենսաթոշակի վրա բռնագանձում տարածելու հնարավոր դեպքերը բացառելու նպատակով անհրաժեշտ է լրացուցիչ միջոցներ ձեռնարկել հաշմանդամության կենսաթոշակի հաշվեհամարները բացահայտելու ուղղությամբ, մասնավորապես՝ «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» որոշման ձևանմուշի մեջ բռնագանձման ոչ ենթակա հաշվեհամարները նշելուց բացի պարտապաններին ծանուցել Օրենքի 60-րդ հոդվածով նախատեսված բռնագանձման ոչ ենթակա գումարներն այլ անհատական հաշվեհամարներով ստանալու դեպքում այդ հաշվեհամարների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը հարկադիր կատարողին ներկայացնելու մասին:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի համաձայն՝ պարտապանի հաշիվների սպասարկում իրականացնող բանկի կամ այլ վարկային կազմակերպության կողմից կատարողական թերթով սահմանված պարտապանից դրամական միջոցներ բռնագանձելու պահանջները չկատարելը հիմք է հարկադիր կատարողի կողմից այդ բանկին կամ վարկային կազմակերպությանը բռնագանձվող գումարի հիսուն տոկոսի չափով տուգանելու համար: Հարկ է, սակայն նկատել, որ օրենսդրությամբ սահմանված չեն հարկադիր կատարողի բանկին կամ վարկային կազմակերպությանը տուգանելու հստակ ընթացակարգեր: Ավելին, Հարկադիր կատարման ծառայությունից ստացված պարզաբանումների համաձայն՝ 2018 թվականի ընթացքում բանկերին կամ վարկային կազմակերպություններին «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի հիմքով տուգանելու գործընթաց չի իրականացվել հարկադիր կատարման ծառայության կողմից: Փաստորեն, բանկերին տուգանելու Օրենքի 73-րդ հոդվածով սահմանված կարգավորումները ձևական բնույթ են կրում և գործնականում չեն կենսագործվում: «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» որոշման ձևանմուշի մեջ նշված հաշվեհամարների հայտնաբերման, սակայն բանկի կողմից դրանք արգելադրելու հնարավոր դեպքերը

բացառելու նպատակով անհրաժեշտ է օրենսդրությամբ բանկերին տուգանելու հստակ ընթացակարգեր նախատեսել: Խնդիրն այն է, որ բոլոր այն դեպքերում, երբ անձի հաշմանդամության կենսաթոշակի վրա արգելանք է կիրառվում բանկի կողմից այդ հաշվեհամարները հայտնաբերելու, սակայն դրանք չարգելադրելու պատճառով, և եթե հաշմանդամության կենսաթոշակի հաշվեհամարին առկա գումարները հարկադիր կատարման ծառայությունը բռնագանձի և փոխանցի պահանջատիրոջը, ապա այլևս հնարավոր չի լինի դրանք պահանջատիրոջից հետ պահանջել. այդ դեպքերում բռնագանձման ոչ ենթակա գումարները պարտապանին վերադարձնելու պարտականությունը դրվում է հարկադիր կատարման ծառայության վրա, մինչդեռ այն պետք է բանկը կրի:

Հանդիպում են նաև իրավիճակներ, երբ պարտապաններն իրենք են հարկադիր կատարողին տեղեկացնում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի ուժով բռնագանձման ոչ ենթակա դրամական միջոցների վրա արգելանք դնելու փաստի մասին, ինչին սակայն հարկադիր կատարող պատշաճ ուշադրության չի արժանացնում, քանի որ հարկադիր կատարողները պարտապաններից պահանջում են նշված փաստը հիմնավորող ապացույցներ ներկայացնել: Հարկ է հաստատել այն, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ հիմնավոր կասկածներ ունենալու դեպքում, վարչական մարմինն ինքն է պարտավոր ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար: Մյուս կողմից, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները: Նշված դեպքերում հարկադիր կատարողն անգործություն է դրսևորում՝ չբացահայտելով վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Նույն օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

«ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում,

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա: Հարկ է նկատել, որ հաշվեհամարի՝ կենսաթոշակային կամ հաշմանդամության լինելու վերաբերյալ տեղեկությունը հարկադիր կատարողը կարող է ստանալ ոչ միայն անձի միջոցով, այլև համապատասխան պետական մարմնին հարցում կատարելու միջոցով: Ուստի նշված իրավիճակը վերոնշյալ նորմով սահմանված այն բացառիկ դեպքը չէ, երբ պահանջվող տեղեկությունը հարկադիր կատարողը կարող է ստանալ միայն կոնկրետ անձի միջոցով:

Ելնելով վերոգրյալից՝ հարկ է նշել, որ անհրաժեշտ է ապահովել վարչական վարույթների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ իրականացումը, որի շրջանակներում չպետք է բացառել նաև պարտապանի հայտնած տեղեկությունների հիման վրա հարկադիր կատարողների կողմից նրանց օգտին առկա փաստերը հայտնաբերելուն ուղղված գործողություններ իրականացնելու հնարավորությունը:



«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 51-րդ և 60-րդ հոդվածները սահմանում են կատարողական վարույթի շրջանակներում բռնագանձման ոչ ենթակա գույքերի և դրամական միջոցների սպառիչ ցանկը: Բռնագանձման ոչ ենթակա գույքերի և դրամական միջոցների ցանկերի սպառիչ լինելը գործնականում բազմաթիվ խնդիրների է հանգեցնում, մասնավորապես, պրակտիկայում լինում են դեպքեր, երբ հարկադիր կատարողը բռնագանձում է տարածում այնպիսի գույքի կամ դրամական միջոցի վրա, որը թեև նախատեսված չէ վերը նշված ցանկով, սակայն իր էությունից համարվում է այդ ցանկին, քանի որ սոցիալական աջակցության միջոց է:

Օրինակ՝ Օրենքի 60-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ կատարողական թերթով բռնագանձում չի կարող տարածվել այն դրամական գումարների վրա, որոնք վճարվում են որպես պետական նպաստ: Օրենսդրությամբ ամրագրված են նաև սոցիալական աջակցության այլ միջոցներ (բնաիրային, դրամական), որոնք նման կարգավորման պայմաններում դուրս են մնում բռնագանձման ոչ ենթակա գույքերի շրջանակից: Նշվածի արդյունքում հարկադիր կատարողն օրենքի տառացի մեկնաբանման հետևանքով հնարավորություն է ստանում բռնագանձում տարածել դրանց վրա: Օրինակ՝ ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 1042-Ն որոշման 4-րդ կետով հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ 37 բնակավայրի գյուղատնտեսությամբ զբաղվող հողօգտագործողներին սեփականության կամ համայնքային հողերի վարձակալության իրավունքը հաստատող փաստաթղթի հիման վրա նախատեսվում է փաստացի ցանված աշնանացան հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների համար *պետական աջակցության* տրամադրման կարգով փաստացի ցանված յուրաքանչյուր հեկտարի հաշվով անհատույց տրամադրել 60000 ՀՀ դրամ:

Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով՝ դիմողը հաշվառված է եղել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության տարածքային կենտրոնում, որպես հաշմանդամ և աշխատաշուկայում անմրցունակ գործազուրկ՝ ընդգրկված է եղել սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսության աջակցության տրամադրման ծրագրում, որի շրջանակներում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացել է որոշակի դրամական աջակցություն, ինչը, սակայն, հարուցված կատարողական վարույթի շրջանակներում հարկադիր կատարողի կողմից բռնագանձվել է: Մեկ այլ դեպքով՝ դիմողն առաջնագծում մարտական գործողություններին մասնակցելու համար ՀՀ երկրապահ կամավորական միության կողմից ստացել է որոշակի գումար, որը ևս հարուցված կատարողական վարույթի շրջանակներում բռնագանձվել է հարկադիր կատարողի կողմից:

«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ սոցիալական աջակցությունը կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու կամ հաղթահարելու նպատակով անձին (ընտանիքին, սոցիալական այլ խմբին) Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված մեկ կամ մի քանի սոցիալական ծառայությունների տրամադրումն է Հայաստանի Հանրապետության և (կամ) տեղական ինքնակառավարման մարմնի կողմից: Ուստի ելնելով սոցիալական աջակցության տրամադրման՝ օրենսդրությամբ ամրագրված նպատակների կարևորությունից՝ անհրաժեշտ է բռնագանձման ոչ ենթակա գույքի կամ դրամական միջոցների ցանկը սահմանելիս ավելի ճկուն մեխանիզմներ նախատեսել՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում օրենքով չնախատեսված, սակայն էությամբ սոցիալական աջակցության միջոց համարվող գույքի կամ դրամական միջոցի վրա բռնագանձում չտարածելու հնարավորություն ընձեռելով հարկադիր կատարողին:

Բռնագանձման ոչ ենթակա գույքերի շրջանակը ևս ենթակա է ընդլայնման: «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ բռնագանձում չի կարող տարածվել հաշմանդամների համար նախատեսված հատուկ փոխադրամիջոցների վրա: Օրենքով ամրագրված «հատուկ փոխադրամիջոցների» սահմանումը ձևակերպված է ոչ հստակ, անորոշ, ինչը գործնականում կարող է տարբերակումներ և տարակերպ մեկնաբանություններ առաջացնել: Նման ձևակերպմամբ պարզ չէ, թե հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված որ փոխադրամիջոցներն են համարվում հատուկ: Մասնավորապես, հստակեցված չէ, թե արդյոք այն տրանսպորտային միջոցները, որոնք հարմարեցված են հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորություններին համարվում են հատուկ փոխադրամիջոցներ, թե խոսքը միայն անվասայլակի մասին է: Օրինակ՝ ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 31-ի թիվ 1055-Ն որոշմամբ ամրագրվել են լուծումներ, որոնք անհրաժեշտ են տրանսպորտային միջոցն անձի հնարավորություններին հարմարեցված համարելու և, ըստ այդմ, նրան վարորդական իրավունքի վկայական տրամադրելու համար (օրինակ՝ մեկ աչքի բացակայության դեպքում հարմարեցված է համարվում կայանման ձայնային ազդանշանային համակարգով կահավորված տրանսպորտային միջոցը): Բացի այդ, որոշ դեպքերում հաշմանդամություն ունեցող անձի տեղափոխության համար կարող է հարմարեցված լինել այնպիսի փոխադրամիջոց (օրինակ՝ մեքենա հատուկ անվասայլակով անձի տեղափոխությունը կազմակերպելու համար), որի բացակայության պատճառով հաշմանդամություն ունեցող անձը կգրկվի տեղաշարժվելու հնարավորությունից կամ կկրի առանձնահատուկ բարդություններ:

Վերոգրյալը հիմք ընդունելով՝ պետք է Օրենքի 51-րդ հոդվածով նախատեսել նաև հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորություններին հարմարեցված փոխադրամիջոցները, որոնց վրա ևս բռնագանձում չպետք է տարածվի: Մյուս կողմից անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ հաշմանդամություն ունեցող անձանց ինքնուրույնությունն ապահովելու համար գոյություն ունեն նաև այլ տեխնիկական միջոցներ: Օրինակ՝ լսողական խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված լսողական սարքերը համարվում են հաշմանդամություն ունեցող անձանց համար առաջին անհրաժեշտության առարկա:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բռնագանձման ոչ ենթակա գույքը չի սահմանափակվում միայն հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված հատուկ փոխադրամիջոցներով: Օրինակ՝ Չեխիայի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի համաձայն՝ բռնագանձում չի կարող տարածվել բժշկական գործիքների և այլ առարկաների վրա, որոնք անհրաժեշտ են անձին պայմանավորված վերջինիս հիվանդության կամ մարմնի թերությամբ<sup>149</sup>: Իսկ Ֆրանսիայի Հանրապետության Քաղաքացիական գործերի հարկադիր կատարման մասին օրենսգրքի L112-2 հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ այն իրերը, որոնք անհրաժեշտ են հաշմանդամություն ունեցող անձանց կամ ուղղված են հիվանդների առողջացմանը, չեն կարող հարկադիր կատարման առարկա համարվել<sup>150</sup>:

Հայաստանում համապատասխան կարգավորումների բացակայությունը կարող է հանգեցնել հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքի, քանի որ Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, նախատեսելով անձի համար

<sup>149</sup>Տե՛ս [https://is.muni.cz/el/1422/jaro2008/SOC026/um/99-1963\\_EN.pdf](https://is.muni.cz/el/1422/jaro2008/SOC026/um/99-1963_EN.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>150</sup>Տե՛ս

[https://www.legifrance.gouv.fr/affichCode.do;jsessionid=7A2A23A38B5F441419EFEE3CFFAC6534.tplgfr36s\\_3?idSectionTA=LEGISCTA000025026737&cidTexte=LEGITEXT000025024948&dateTexte=20181018](https://www.legifrance.gouv.fr/affichCode.do;jsessionid=7A2A23A38B5F441419EFEE3CFFAC6534.tplgfr36s_3?idSectionTA=LEGISCTA000025026737&cidTexte=LEGITEXT000025024948&dateTexte=20181018), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

անհրաժեշտ իրերի ցանկը՝ որպես բռնագանձման ոչ ենթակա գույք (գործածության մեջ գտնվող տնային օգտագործման առարկաներ, հագուստեղեն, կոշիկեղեն և այլն), մինևույն ժամանակ չի սահմանում հաշմանդամություն ունեցող անձանց ինքնուրույնության համար անհրաժեշտ առարկաները: Ուստի անհրաժեշտ է «հատուկ փոխադրամիջոց» ձևակերպումը փոխարինել «օժանդակ միջոց» ձևակերպմամբ:

*Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝*

1. «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» որոշման ձևանմուշի մեջ բռնագանձման ոչ ենթակա հաշվեհամարները նշելուց բացի պարտապաններին ծանուցել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածով նախատեսված բռնագանձման ոչ ենթակա գումարներն այլ հաշվեհամարներով ստանալու դեպքում այդ հաշվեհամարների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը հարկադիր կատարողին ներկայացնելու մասին,

2. «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» որոշման ձևանմուշի մեջ նշված հաշվեհամարները հայտնաբերելու, սակայն դրանք արգելադրելու դեպքերի համար բանկերին տուգանելու օրենսդրական մեխանիզմներ սահմանել,

3. օրենսդրական եղանակով Օրենքի 51-րդ հոդվածի 5-րդ կետում նշված «հաշմանդամների համար նախատեսված հատուկ փոխադրամիջոցներ» ձևակերպումը փոփոխել «հաշմանդամների համար նախատեսված օժանդակ միջոցներ» ձևակերպմամբ,

4. բռնագանձման ոչ ենթակա գույքի կամ դրամական միջոցների ցանկը չսահմանափակել՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում օրենքով չնախատեսված, սակայն էությանը սոցիալական աջակցություն հանդիսացող գույքի կամ դրամական միջոցի վրա բռնագանձում չտարածելու հնարավորություն ընձեռելով հարկադիր կատարողին:

## **12. Ներխուժումը կանխելիս կամ վերացնելիս ՀՀ ոստիկանությանը վերապահված լիազորությունների իրականացումը դատական վեճի առկայության պայմաններում**

Ինչպես նախորդ տարի, 2018 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են անշարժ գույքի տարածք մուտք գործելը կանխելու կամ վերացնելուն ուղղված Ոստիկանության գործողությունների իրավաչափությանը վերաբերող բողոքներ:

Այսպես, բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ Ոստիկանության ծառայողներն անշարժ գույքի տարածքից դուրս գալու համար իրեն և ընտանիքին տրամադրել են ժամկետ, սակայն ինքը մինչև ժամկետի լրանալը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ վտարելուն ուղղված գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալուն պարտավորեցնելու պահանջի մասին և միաժամանակ միջնորդել է հայցի ապահովման միջոց կիրառելու մասին: Չնայած նրան, որ հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին միջնորդությունը բավարարվել է տրամադրված ժամկետի ավարտման նախորդ օրը, սակայն այն հայցվորին ուղարկվել է փոստային ծառայության միջոցով, ուստի ժամկետի ավարտման օրը հայցվորը չի կարողացել այդ որոշումը ներկայացնել Ոստիկանության ծառայողներին, արդյունքում՝ իրականացվել են ներխուժումը վերացնելուն ուղղված գործողություններ:

Մեկ այլ դեպքում անձը նշել է, որ չնայած տվյալ անշարժ գույքը հանդիսանում է վեճի առարկա, ընթանում է դատաքննություն, և դատարանը դեռևս վերջնական որոշում չի կայացրել, այնուամենայնիվ Ոստիկանության կողմից իրականացվել են ներխուժումը կանխելուն կամ վերացնելուն ուղղված գործողություններ:

«Ներխուժումը կանխելու կամ վերացնելու նպատակով անշարժ գույքի օրինական տիրապետողի կողմից ոստիկանությանը լիազորելու կարգն ու պայմանները սահմանելու

մասին» ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 10-ի թիվ 797-Ն որոշման 7-րդ, 8-րդ և 9-րդ կետերով սահմանվում են այն դեպքերը, որոնց բացահայտման պարագայում Ոստիկանությունն իրավասու չէ կատարելու ներխուժումը կանխելուն կամ վերացնելուն ուղղված գործողություններ: Այսպես, թիվ 797-Ն որոշման 7-րդ կետով՝ եթե ոստիկանը պարզում է, որ գույքի տարածք մուտք գործող կամ գործած՝

1) անձը տվյալ անշարժ գույքի օրինական տիրապետող է, կամ՝

2) անձը գրավոր կնքված քաղաքացիաիրավական կամ աշխատանքային կամ ամուսնաընտանեկան կամ այլ պայմանագրի կամ լիազորագրի համաձայն իրավունք ունի մշտապես կամ որոշակի ժամանակով գտնվելու տվյալ անշարժ գույքի տարածքում, կամ՝

3) անշարժ գույքի օրինական տիրապետողի պահանջն օրենքով սահմանված կարգով կողմերի միջև կնքված և տվյալ պահին գործող քաղաքացիաիրավական կամ այլ պայմանագրից կամ ամուսնաընտանեկան հարաբերություններից ծագող վեճ է, կամ

4) անձն անշարժ գույքի տարածք մուտք է գործել կամ գտնվում է անշարժ գույքի օրինական տիրապետողի գրավոր կամ բանավոր համաձայնությամբ, ընդ որում, բանավոր համաձայնության դեպքում այն պետք է հավաստվի անշարժ գույքի օրինական տիրապետողի կողմից, կամ՝

5) անձը հանդիսանում է բնակելի տարածքն օրինական տիրապետող անձի անչափահաս երեխան, ապա ոստիկանն իրավունք չունի կողմերի նկատմամբ կիրառելու որևէ միջոց կամ պահանջ: Այս դեպքում ոստիկանի կողմից կազմվում է արձանագրություն, որում, մասնավորապես, պետք է նշվեն արձանագրությունը կազմելու ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը, արձանագրությունը կազմող անձի անունը և ազգանունը, նրա պաշտոնը, ոստիկանությանը դիմելու օրը և ժամը, դիմող անձի անունը, ազգանունը, հայրանունը (դիմողի անձը հաստատող փաստաթղթում հայրության գրառման առկայության դեպքում), բնակության վայրը, անշարժ գույքի տիրապետման տեսակը, երբ և ում կողմից է տրվել տիրապետման փաստը հաստատող փաստաթուղթը, անշարժ գույքի տարածք մուտք գործող կամ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը (նրա անձը հաստատող փաստաթղթում հայրության գրառման առկայության դեպքում), բնակության վայրը, անշարժ գույքի տարածք մուտք գործելու կամ այնտեղ գտնվելու իրավունքը վերապահող փաստաթղթի տեսակը, երբ և ում կողմից է տրվել կամ վավերացվել այն կամ այն պայմանագրի տեսակը և կնքման ամսաթիվը կամ այլ հիմքեր, որից բխում է վեճը և ոստիկանի եզրակացությունը:

Վերը նշված կարգավորումներից թվում է, թե թիվ 797-Ն որոշումը սպառնիչ նախատեսել է այն հանգամանքները, որոնց առկայության պայմաններում Ոստիկանությունն իրավասու չէ կատարել ներխուժումը կանխելուն կամ վերացնելուն ուղղված գործողություններ: Մակայն դա չի նշանակում, որ այդ ցանկը սպառնիչ է և չեն կարող լինել իրավիճակներ, երբ Ոստիկանությունը հարկադրված լինի ձեռնպահ մնալ որոշակի հատվածում իր ներխուժումը կանխելուն կամ վերացնելուն ուղղված գործողությունների կատարման լիազորությունից: Պրակտիկայում բազմաթիվ են դեպքերը, երբ անշարժ գույքի տիրապետողը վտարման գործողություն իրականացնելն արգելելու պահանջով հայցադիմում է ներկայացնում դատարան՝ միաժամանակ միջնորդելով հայցի ապահովման միջոց կիրառելու մասին:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքներից ակնհայտ է, որ որոշ դեպքերում անշարժ գույքի տիրապետողը դիմում է դատարան, սակայն Ոստիկանության կողմից ներխուժումը վերացնելուն ուղղված գործողություններն իրականացվում են ավելի վաղ, քան դատարանը որոշում է կայացնում: Չնայած, եթե դատարանն ավելի շուտ կայացնի այդ որոշումն, ապա վտարումը չի իրականացվի: Այլ խոսքով, ըստ էության, դատարանի կողմից որոշում կայացնելու արագությունից կախված

դիմողները փաստացի կարող են հայտնվել բարենպաստ կամ անբարենպաստ վիճակում: Դիցուք՝ Պաշտպանի աշխատակազմում քննարկվող բողոքներից մեկով, երբ դատարանի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելու և հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշում է կայացվել, այդ որոշումը եղել է ուշացած, և այն չի իրականացվել: Ստացվում է, որ անձը Ոստիկանության գործողությունների ավարտից հետո ունեցել է որոշում, որի առկայության դեպքում Ոստիկանությունն իրավասու չէր լինի կատարել նման գործողություններ:

Այնուամենայնիվ, դատական նման որոշման post factum առկայությունը որևէ նշանակություն չի ունենում դիմողի համար, քանզի Թիվ 797-Ն որոշմամբ սահմանված չէ իրավական համապատասխան գործիքակազմ՝ մինչև Ոստիկանության գործողությունների կատարումը եղած դրությունը վերականգնելու համար:

Վերը նշված հանգամանքների կապակցությամբ Պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ օրենսդրական համապատասխան կարգավորումների բացակայությունը, այնուամենայնիվ, չպետք է անձի իրավունքի սահմանափակման պատճառ հանդիսանա:

Պաշտպանն արձանագրում է նաև, որ Ոստիկանության նախաձեռնած վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրության իրականացման համար Ոստիկանությունը որպես վարչական մարմին, պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ և բավարար միջոցներ իր գործողությունների արգելք համարվող դեպքերի հնարավոր առկայությունը կամ բացակայությունը պարզելու ուղղությամբ: Չնայած դրան, Պաշտպանի աշխատակազմում քննարկված բողոքներից կարելի է նկատել, որ անձի՝ լսվելու իրավունքի ապահովումը Ոստիկանության կողմից գործնականում որոշ դեպքերում կրում է սուկ ձևական բնույթ, քանի որ Ոստիկանության ծառայողները, լսելով, օրինակ՝ դատարան հայցի ապահովման միջոցի վերաբերյալ միջնորդություն ներկայացված լինելու մասին անձի հայտարարությունը, բավարար և անհրաժեշտ քայլեր չեն ձեռնարկում այդ հանգամանքի մանրամասները պարզելու համար:

Հարցը հատկապես սուր է դրված այն իմաստով, որ երբ պետությունը՝ հանձին դատարանի, ուսումնասիրում է իրավական վեճին հնարավոր միջամտության անհրաժեշտության հարցը, այդ ընթացքում նույն պետությունը՝ իշխանության համակարգի մեկ այլ մարմնի միջոցով ձեռնարկում է այնպիսի միջոցներ, որոնք ուղղակի անհնար են դարձնում դատարանի կողմից կայացվելիք որոշման կատարումը հետագայում ապահովելու հարցը:

Պետական միասնական համակարգի երկու տարբեր մարմինների կողմից միևնույն հարցի համաժամանակյա ուսումնասիրությունը և գործողությունների կատարումը ոչ միայն իրական վտանգ է ստեղծում ապագայում իրարամերժ դիրքորոշումների կայացման դեպքում դրանց կատարումն ապահովելու համար, այլև փաստացի իմաստագրվում է անձի՝ դատարան դիմելու իրավունքը, որպիսին պետք է առկա լինի իրավական պետությունում:

Պաշտպանն արձանագրում է, որ հայցի ապահովման միջոցի առկայության պայմաններում Ոստիկանության կողմից անձին վերաբնակեցնելու իրավական կառուցակարգերի բացակայությունն ավելի խոցելի է դարձնում հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդությամբ դիմած անձի փաստացի վիճակը: Ավելին՝ նման կառուցակարգի բացակայությունը որոշ դեպքերում իմաստագրվում է հայցի ապահովման միջոցի ողջ ինստիտուտը:

Վերը նշվածի հիման վրա՝ Պաշտպանն արձանագրում է, որ քննարկվող իրավիճակներում Ոստիկանությունը պետք է պատշաճ ջանասիրություն դրսևորի դատարանի կողմից կայացված որոշման առկայությունը, առկայության դեպքում՝ դրա բովանդակությունը ստուգելու և դրանով պայմանավորված միայն՝ իր գործողությունները

կատարելու համար: Ընդ որում՝ եթե դեռևս դատարանի կողմից առկա չի լինում որոշումը, ապա ողջամիտ ժամկետի տրամադրմամբ Ոստիկանությունը կարող է կանխել հետագայում դատարանի կողմից կայացվելիք որոշման պատշաճ կատարումը՝ հատկապես, որ ներպետական օրենսդրությամբ այդ գործողությունների իրականացման համար սահմանված ժամկետներ չկան:

Ի հավելումն վերոնշյալի՝ Պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ Ոստիկանության կողմից իրականացվող գործողությունների հետ կապված մտահոգությունները միայն իրավակիրառման խնդիր չեն, այլ առկա է նաև Կառավարության վերը նշված որոշման կարգավորումների հստակության և որոշակիության հարց: Ոստիկանհրաժեշտ է նաև նախաձեռնել փոփոխություններ՝ սեփականատիրոջ և տիրապետողի օրինական շահերի հավասարակշռմամբ:

Միաժամանակ, Պաշտպանն առաջարկում է պրակտիկան զարգացնել այն ուղղությամբ, որ նախքան ներխուժումը կանխելու կամ վերացնելուն ուղղված գործողությունների կատարումն անձի կողմից դատական իշխանություններին դիմած լինելու մասին հայտարարության դեպքում, անգամ եթե առկա չեն համապատասխան փաստաթղթեր, իրականացվի ստուգման ընթացակարգ՝ հետագա գործողությունների իրականացման հարցը որոշելու նպատակով:

## ԲԱԺԻՆ 6. ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ընտրական իրավունքը որպես մարդու հիմնական իրավունք, ամրագրված է ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային մի շարք փաստաթղթերում և իրավական ակտերում: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 21-րդ հոդվածով սահմանվում է յուրաքանչյուրի՝ անմիջականորեն կամ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով իր երկրի կառավարմանը մասնակցելու իրավունքը: Յուրաքանչյուր քաղաքացու ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև անմիջականորեն կամ ընտրված ներկայացուցչի միջոցով հանրային կառավարմանը մասնակցելու և հանրային ծառայության ընդունվելու իրավունքը սահմանված է նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածով:

Պետությունների ընտրական համակարգի ձևավորման վերաբերյալ դիրքորոշումներ են հայտնել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն<sup>151</sup>, Վենետիկի հանձնաժողովը<sup>152</sup>, առ այն, որ միջազգային իրավական կարգավորումներով պետությունների համար որևէ ընտրական համակարգ չի կանխորոշվում, ավելին, պետությունն ինքն է որոշում իր ընտրական համակարգը, որը պետք է հարգվի որպես ազգային մակարդակով որոշվող խնդիր: Նշվածի վերաբերյալ 2012 թվականի մարտի 13-ի՝ Սակոմանոն և այլոք ընդդեմ Իտալիայի գործով դիրքորոշումներ է հայտնել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ նշելով, որ ընտրական համակարգ որոշելու հարցում ճանաչում է պետության հայեցողական լիազորության բավականին լայն շրջանակները<sup>153</sup>:

Հայաստանի Հանրապետությունում քննարկվող իրավունքի ակտիվ և պասիվ իրացումն ապահովվում է ՀՀ Սահմանադրությամբ և մի շարք օրենսդրական ակտերով:

Այսպես, ըստ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ հոդվածի՝ ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածն էլ իր հերթին նախատեսում է ընտրական և հանրաքվեին մասնակցելու իրավունքը:

Ընտրական իրավունքի իրացման շնորհիվ են երկրում ձևավորվում ժողովրդավարական ինստիտուտներն ու երկրի կառավարման համակարգը: Որքան ազատ ու անխոչընդոտ է ընտրական իրավունքի իրացման հնարավորությունն, այնքան մեծ է քաղաքացու կամքի հրապարակային արտահայտման արդյունքում նոր ձևավորված մարմնի նկատմամբ վստահությունը:

Սահմանադրական վերը նշված նորմերի էության բացահայտմամբ հնարավորություն ենք ունենում փաստել, որ ընտրություններն ու հանրաքվեներն են այն առանցքային և անմիջական գործիքները, որոնց միջոցով իրականացվում է ժողովրդաիշխանությունը: Ընտրությունների միջոցով ժողովուրդը հնարավորություն է ստանում անմիջականորեն մասնակցել պետության կառավարման գործընթացին՝ այդ կերպ ուրվագծելով և հաստատելով սեփական կամքը: Ընտրական գործընթացներում առկա ցանկացած բացթողում և խախտում ուղղակիորեն ազդում է դրանց միջոցով ձևավորված իշխանությունների նկատմամբ վստահության ձևավորման վրա: Հարկ է նշել նաև, որ հենց ընտրություններն են, որ ամրապնդում են ժողովրդավարությունը:

<sup>151</sup> Տե՛ս ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե, 1981-2014թթ. 25-րդ մեկնաբանություն, 21-րդ պարբերություն:

<sup>152</sup> Տե՛ս Վենետիկի հանձնաժողով, 2002թ., Ուղենիշներ, բաժին 2.4-րդ:

<sup>153</sup> Տե՛ս Սակոմանոն և այլք ընդդեմ Իտալիայի (Saccomanno and Others v. Italy) գործով 1999 թվականի մայիսի 12-ի վճիռը, գանգատ թիվ 36719/97, կետ 51:

Նշվածների իրագործման հրամայականով է պայմանավորված ներպետական օրենսդրությունում միջազգային չափանիշներին համապատասխան իրավական կարգավորումների ամրագրումն ու դրանց անշեղ պահպանումը:

2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին երկրում տեղի ունեցած ժողովրդավարական զարգացումների միջոցով Հայաստանի Հանրապետությունում հնարավոր եղան արձանագրել հիմնարար փոփոխություններ: Այդ իրադարձությունների շնորհիվ հենց այդ ժամանակահատվածում ակնհայտորեն աճեց հանրային իշխանությունների նկատմամբ վստահությունը, ինչն էլ իր հերթին հանգեցրեց նաև ընտրական ոլորտում դրական զարգացումների: Մասնավորապես՝ հստակեցվեցին ընտրակաշառքների կամ ընտրողների նկատմամբ ապօրինի ազդեցություն գործադրելու արատավոր դեպքերի դեմ պայքարի ուղղությունները, հռչակվեց քաղաքական գործընթացներին դպրոցների ու մանկապարտեզների ներգրավումը բացառելու հրամայական, իսկ տեղի ունեցած ընտրությունների պատկերը հնարավորություն տվեց արձանագրել, որ զգալիորեն նվազել են ընտրական գործընթացի հետ կապված Ոստիկանության գործողությունների դեմ բողոքները:

Ընտրություններով և ընտրական գործընթացներով է ձևավորվում իշխանության և կառավարման մարմինների նկատմամբ վստահությունը: Ուստի այս գործընթացը չափազանց մեծ կարևորություն ունի: Կարևոր է, որ այն իրականացվի միջազգային և Մահմանադրական չափանիշներին համահունչ և վայելի բարձր վստահություն մարդկանց շրջանում:

Նախկին տարիներին տեղի ունեցած տեղական և համապետական ընտրությունների ընթացքում տեղի ունեցած տարաբնույթ խախտումները կամ արատավոր երևույթները ձևավորված իշխանությունների նկատմամբ ցածր վստահության պատճառ էին դառնում: Խոսքը համակարգային բնույթ կրող այնպիսի արատավոր երևույթների մասին է, ինչպիսիք էին նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների ներգրավվածությունը քաղաքական գործընթացներին, լրագրողների ու դիտորդների աշխատանքների խոչընդոտները և այլն:

2018 թվականը հարուստ էր թե՛ համապետական, թե՛ տեղական մակարդակներում տեղի ունեցող ընտրական գործընթացներով: Ընտրական այս գործընթացներն ուղեկցվում էին դրանց մասին սկզբունքորեն փոխված հանրային պատկերացումներով ու այդ գործընթացների նկատմամբ հանրային բարձր վստահությամբ: Սա նաև նույն տարվա ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունների արդյունք էր, որոնք էլ հենց բարձրացրին քաղաքացիների վստահությունը հանրային իշխանության նկատմամբ: Ընդ որում, այս մասին ու ընդհանրապես ընտրական գործընթացի ու քվեարկության ակնհայտորեն փոխված որակի մասին դրական գնահատականներ հետազայում տվել են նաև միջազգային կառույցները, օրինակ՝ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ը<sup>154</sup>:

Ժողովրդավարական այդ զարգացումների արդյունքները ծառայում են հանրային իշխանության համակարգն ինստիտուցիոնալ ամուր հիմքերի վրա դնելուն՝ հենվելով քաղաքացիների բարձր վստահության վրա: Քաղաքացիների վստահությունն էլ, լինելով պետության ամրության հիմնարար գրավականը, հենց իշխանության հիմքն է, դրա լեգիտիմության աղբյուրը: Յուրաքանչյուրի խնդիրն է համատեղ ջանքերով նպաստել այդ վստահության ամրապնդմանն ու ամրության պահպանմանը:

Հարկ է նշել, որ 2018 թվականին տեղի ունեցած Երևանի ավագանու և խորհրդարանի ընտրությունների ընթացքում՝ ինչպես քվեարկության օրերին, այնպես էլ նախընտրական և հետընտրական գործընթացներում, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը որպես հաստատված աշխատելաճ գործել է արտակարգ ռեժիմով՝ հետևելով և

<sup>154</sup> Տե՛ս <https://www.osce.org/odihr/elections/armenia/413555>,



արձագանքելով մարդու իրավունքների ենթադրյալ խախտումների, իրավունքների իրացման խնդիրների առաջացման, լրագրողների աշխատանքային գործունեության խոչընդոտման դեպքերին: Ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում, Մարդու իրավունքների պաշտպանին օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում, ընտրական իրավունքների երաշխավորումն ու արդյունավետ պաշտպանությունն ապահովելու նպատակով Պաշտպանի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ: Վերջինիս և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, ինչպես նաև իրավապահ մարմինների, մասնավորապես՝ ՀՀ դատախազության հետ իրականացված համագործակցությունն էլ ուղղված է եղել ընտրական իրավունքի անշեղ իրացումն ապահովելուն:

Անմիջականորեն ընտրական գործընթացների հետ մեկտեղ, 2018 թվականին քայլեր ձեռնարկվեցին նաև «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ: Այս պարագայում ևս Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացվեց նախագծի փաթեթի հետևողական և մանրակրկիտ ուսումնասիրություն, կատարվեցին վերլուծություններ, ինչի արդյունքում վեր հանված խնդիրների վերաբերյալ ներկայացվեցին հստակ նկատառումներ և առաջարկություններ: Թեև նշված օրենքը ՀՀ ազգային ժողովը չընդունեց, այնուամենայնիվ, Պաշտպանի աշխատակազմի ներկայացրած նկատառումներն իրենց արտացոլումը գտան այդ նախագծում: Ազգային ժողովի կողմից օրենքի չընդունելու պատճառով ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի և Վենետիկի հանձնաժողովի նախկինում տված մի քանի հանձնարարականներ մնացել են անկատար, այդ թվում՝ նրանք, որոնք առնչվում են քարոզարշավի ֆինանսական հաշվետվություններից կազմակերպչական ծախսերի բացառմանը, ընտրական հարցերով բողոք բերելու իրավունքի նեղ սահմանմանը, թեկնածուների համար քաղաքացիության և բնակության վայրի Սահմանադրությամբ սահմանված պահանջներին, խորհրդարան անցնելու համար դաշինքների համար սահմանված նվազագույն շեմերին և ընտրությունների առաջին փուլից հետո ձևավորվող կոալիցիաների մասնակիցների թվի սահմանափակումներին:

### ***1. Ազգային ժողովի ընտրություններ***

2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայացած Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների ողջ գործընթացի մշտադիտարկման, ընտրական իրավունքի երաշխավորման և ապահովման նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ստեղծված աշխատանքային խմբում ընդգրկվել են ինչպես Երևանի, այնպես էլ Շիրակի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզային ստորաբաժանումների աշխատակիցներ: Աշխատանքային խումբն իրականացրել է ընտրական իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների ուսումնասիրություններ, ապահովվել է բանավոր և գրավոր բողոքների պատշաճ քննարկումը, իրականացվել են արագ արձագանքման աշխատանքներ, իրականացվել է քաղաքացիների ընդունելության և իրավական խորհրդատվության տրամադրում:

Աշխատանքների իրականացման ողջ գործընթացում աշխատանքային խմբի և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների, դիտորդական առաքելություն իրականացնող տեղական ու միջազգային կազմակերպությունների հետ տեղի է ունեցել սերտ համագործակցություն: Խոսքի ազատության իրավունքի իրացման ապահովման ու պաշտպանության նպատակով՝ բողոքների և հրապարակումների քննարկման ընթացքում ուշադրության կենտրոնում են

պահվել դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերը:

Վերը նշված հարցերի քննարկման համար ևս սերտ համագործակցություն է իրականացվել իրավապահ մարմինների հետ, իսկ Քննչական կոմիտեի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ դիտորդի կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի լիազորությունների իրականացմանը կամ նրանց ընտրական փաստաթղթերին սահմանված կարգով և դեպքերում ծանոթանալուն խոչընդոտելուն կամ ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճենները, քաղվածքները չտալու դեպքի առթիվ նյութ չի նախապատրաստվել, քրեական գործ չի հարուցվել:

Չնայած ընտրական գործընթացները տեղի ունեցան սկզբունքորեն փոխված իրավիճակում, այնուամենայնիվ, մտահոգիչ էր սոցիալական մեդիայում ձևավորված մթնոլորտը: Մասնավորապես, այդ օրերին Մարդու իրավունքների պաշտպանի կողմից արձանագրվեցին անհանդուրժողականության և վիրավորանքի վտանգավոր տարածվածություն, ու դա ակնհայտորեն ուներ աճի միտումներ: Այդ ժամանակ էր, որ սկսվեցին առավել մեծ դրսևորում ունենալ հասարակությունը խմբերի բաժանելու միտումները, ինչն առավել էր խորացնում անհանդուրժողականությունը:

Իհարկե, յուրաքանչյուր պետության ժողովրդավարական զարգացման հիմնարար ցուցիչներից մեկը խոսքի ազատությունն է, որի պաշտպանությունը յուրաքանչյուրի պարտականությունն է: Սրա հետ էլ ուղղակիորեն կապվում է այլակարծության խթանումը, ինչն աներկբայորեն անհրաժեշտ է մեր երկրին: Դրանով հանդերձ, այլոց իրավունքներն ու ազատությունները հարգելու հետ մեկտեղ, անհրաժեշտ է թույլ չտալ դրանց ոչ իրավաչափ որևէ միջամտություն: Պետք է հարգանքով վերաբերվել յուրաքանչյուր մարդու արժանապատվությանը, քանի որ այն անխախտելի է և յուրաքանչյուրի իրավունքների և ազատությունների անփոխարինելի հիմքն է: Այս կերպ է ձևավորվում համերաշխությունը հասարակությունում ու ապահովվում փոխադարձ հարգանքի մթնոլորտ: Այս հարցերն, իհարկե, արձանագրվեցին Մարդու իրավունքների պաշտպանի կողմից, որոնց վերաբերյալ Պաշտպանը ներկայացրեց հրապարակային հայտարարություններ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ընտրություններին նախորդող ժամանակահատվածում ստացվել են պատգամավորության թեկնածուների կամ վերջիններիս սատարող անձանց նկատմամբ հնչեցված սպառնալիքների վերաբերյալ տեղեկություններ պարունակող ահազանգեր: Նման տեղեկություններ են նաև վեր հանվել տեղեկատվության հրապարակային միջոցներով տարածված հաղորդագրություններով: Յուրաքանչյուր պարագայում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը համապատասխան գրություն է հասցեագրել ՀՀ գլխավոր դատախազություն:

Գլխավոր դատախազություն հասցեագրվել է գրություն առ այն, որ 6-րդ գումարման ՀՀ ազգային ժողովի նախագահի տեղակալ Արփինե Հովհաննիսյանը 2018 թվականի հոկտեմբերի 4-ին «Ֆեյսբուք» (Facebook) սոցիալական ցանցի իր էջում, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցներով տեղեկություն է հրապարակել այն մասին, որ պարբերաբար ստանում է իր և իր ընտանիքի անդամների կյանքի դեմ ուղղված սպառնալիքներ: Վերոգրյալի վերաբերյալ Ա. Հովհաննիսյանը տեղեկացրել է նաև Մարդու իրավունքների պաշտպանին և հանցագործության մասին հաղորդում ներկայացրել ՀՀ ոստիկանություն: Գլխավոր դատախազության տեղեկությունների համաձայն՝ սպառնալիքներ պարունակող նամակներն Արփինե Հովհաննիսյանի էլեկտրոնային փոստին և վերջինիս քրոջ Ֆեյսբուքյան էջին ուղարկող քաղաքացին հայտնաբերվել է և տվել բացատրություններ: Նամակների ուսումնասիրությամբ պարզվել է, որ դրանք Արփինե Հովհաննիսյանին ուղղված սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույքը ոչնչացնելու որևէ իրական և կոնկրետ սպառնալիք չեն պարունակում և վերաբերել են

վերջինիս քաղաքական գործունեությանը: Վարույթն իրականացնող մարմինը, գտնելով, որ նախապատրաստված նյութերով տվյալներ ձեռք չեն բերվել տվյալ անձի կողմից Արփինե Հովհաննիսյանին սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույքը ոչնչացնելու որևէ իրական և կոնկրետ սպառնալիք տալու վերաբերյալ, 2018 թվականի հոկտեմբերի 15-ի որոշմամբ քրեական գործի հարուցումը մերժվել է՝ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի բացակայության հիմքով:

2018 թվականի դեկտեմբերի 4-ին «Ֆեյսբուք» (Facebook) սոցիալական ցանցում իր և ընտանիքի անդամներին ուղղված սպառնալիքներ բովանդակող գրառումների վերաբերյալ բարձրաձայնել է նաև ՀՀ ազգային ժողովի 2018 թվականի արտահերթ ընտրություններին պատգամավորի թեկնածու առաջադրված Վահան Բաբայանը՝ նշելով, որ այդ գրառումները կատարվում են՝ կապված իր քաղաքական գործունեության հետ: Նույն օրը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը հեռախոսակապ է հաստատել Վ. Բաբայանի հետ: Վերջինս հայտնել է, որ հրապարակման կապակցությամբ հրավիրվել է ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն, որտեղ ներկայացրել է հանցագործության մասին հաղորդում: Գլխավոր դատախազություն ուղարկված գրությանն ի պատասխան ստացվել է տեղեկություն այն մասին, որ Վ. Բաբայանի հրապարակման հիման վրա ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունում նյութեր են նախապատրաստվել, իսկ 2018 թվականի դեկտեմբերի 13-ին որոշում է կայացվել նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով և 149.1-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Մեկ այլ պարագայում, ՀՀ գլխավոր դատախազություն ներկայացվել է գրություն 2018 թվականի դեկտեմբերի 4-ին «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցության «Ֆեյսբուք» (Facebook) սոցիալական ցանցում հրապարակված այն տեղեկության մասին, որ նույն օրն Ապարան քաղաքում խոչընդոտվել է կուսակցության կողմից թիվ 7 ընտրատարածքում առաջադրված պատգամավորի թեկնածուներ Մարիամ Զախոյանի և Ռոբերտ Դավթյանի քարոզարշավը: Հրապարակման համաձայն՝ անհայտ անձինք թեկնածուներին հորդորել են հեռանալ տարածքից, հարվածել են բջջային հեռախոսին նկարահանում իրականացնելու ընթացքում, վերցրել այն: Ըստ հրապարակման՝ նույն վայրում եղել է նաև Ոստիկանության ծառայող, ով չի միջամտել միջադեպին: Գրառմանը կից հրապարակվել է նաև նշված դեպքի տեսագրությունը: Նկարագրվածի կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը հեռախոսակապ է հաստատել Մարիամ Զախոյանի հետ, ով տեղեկացրել է, որ ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչությունում դեպքի կապակցությամբ նախապատրաստվող նյութերի շրջանակներում արդեն իսկ տվել է բացատրություններ:

2018 թվականի դեկտեմբերի 4-ին «Ֆեյսբուք» (Facebook) սոցիալական ցանցի օգտատերերից մեկը տեսանյութ է հրապարակել այն մասին, որ Արմավիրի մարզի Մրգաստան համայնքում «Իմ քայլը» դաշինքի քարոզարշավի ընթացքում նույն համայնքի ղեկավարը մի խումբ անձանց հետ փորձել է խոչընդոտել դաշինքի թեկնածուների քարոզարշավը: Տեսանյութի համաձայն՝ թեկնածուների հասցեին հնչել են սպառնալիքներ, այդ թվում՝ դանակի գործադրմամբ: Վերոնշյալի կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազությունից ստացած տեղեկությունների համաձայն՝ Արագածոտնի մարզի Ապարան քաղաքում տեղի ունեցած դեպքի կապակցությամբ «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ Մարիամ Զախոյանի 2018 թվականի դեկտեմբերի 4-ին ՀՀ ոստիկանություն կատարած ահազանգի հիման վրա ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներով սահմանված կարգով նախապատրաստվում են նյութեր: Ինչ վերաբերում է Արմավիրի մարզի Մրգաստան համայնքում տեղի ունեցած դեպքին, ապա Գլխավոր դատախազությունից տեղեկացրել են, որ ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժին, որտեղ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներով սահմանված կարգով նախապատրաստվում են նյութեր:

Նման դրսևորումներն անթույլատրելի են, խաթարում են ընտրական գործընթացի իրացումը և հարիր չեն ժողովրդավար հասարակության որդեգրած սկզբունքներին:

ՀՀ ԱԺ արտահերթ ընտրությունների նախընտրական փուլում ՀՀ ոստիկանությունն արձանագրել է քարոզչական պաստառների օրենքի խախտմամբ փակցնելու, դրանք փչացնելու վերաբերյալ 19 իրավախախտման դեպք, որից 2-ը եղել են հանցագործությունների վերաբերյալ ստացված հաղորդումներ, որոնց ընթացքը լուծվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով (2-ով որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին), իսկ 17 հաղորդումներն առերևույթ հանցագործության հատկանիշներ չեն պարունակել, դրանք ստուգմամբ չեն հիմնավորվել և թողնվել են անհետևանք: Ըստ Ոստիկանության բոլոր հաղորդումները ստացվել են կուսակցությունների անդամներից և ՁԼՄ-ներից:

Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների օրը՝ դեկտեմբերի 9-ին, Մարդու իրավունքների պաշտպանի հրամանով ստեղծված աշխատանքային խմբի ներկայացուցիչները գործուղվել են Շիրակի, Գեղարքունիքի, Սյունիքի Լոռու, Արագածոտնի և Տավուշի մարզեր՝ ընտրական իրավունքների իրացմանն առնչվող հնարավոր բողոքները տեղում ուսումնասիրելու և ըստ անհրաժեշտության արագ արձագանքելու նպատակով:

Պաշտպանի աշխատակազմի թեժ-գիծ հեռախոսահամարներին ստացվել է ընտրական գործընթացին վերաբերող 89 ահազանգ, որոնք վերաբերել են տեղամասային կենտրոններ ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող (այդ թվում տուն-ինտերնատում բնակվող, բժշկական կենտրոնում բուժվող, անկողնային հիվանդ, ինքնուրույն տեղաշարժվելու խնդիր ունեցող) անձանց ընտրական իրավունքի իրացմանը՝ 22 դեպք, քվեարկության ավարտից հետո ընտրատեղամասի հոսանքազրկմանը, մարզերում հաշվառված, սակայն տևական ժամանակ քաղաք Երևանում փաստացի բնակվող անձանց ընտրական իրավունքի իրացմանը՝ 11-ական դեպք, ընտրության կարգի, մասնավորապես՝ քվեաթերթիկների քանակի և քվեարկության կարգի հետ կապված խնդիրների՝ 7 դեպք, անձնագրի հետ կապված հարց, մասնավորապես՝ ԽՍՀՄ անձնագրով, վավերականությունն անցած, կորցրած անձնագրերով ընտրություններին մասնակցելու վերաբերյալ՝ 5 դեպք, դեսպանատուն կամ այլ հիմնարկ ՀՀ անձնագիր հանձնման պատճառով քվեարկությանը մասնակցելու անհնարիությանը, քվեարկության օրն ընտրողների ցուցակում չընդգրկված անձանց ընտրական իրավունքի իրացմանը, ընտրական իրավունքի իրացմանը վերաբերող այլ հարցեր՝ 4-ական դեպք, ՀՀ-ից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների ընտրական իրավունքի իրացման, ընտրատեղամասի մատչելիության, կահավորման (լուսավորության, տրանսպորտի հետ կապված խնդիրների՝ 3-ական դեպք:

Երկուական ահազանգ է ստացվել ՀՀ-ում հաշվառված չլինելու պատճառով ընտրել չկարողանալու, ընտրատեղամասերում և դրան հարակից տարածքներում կուտակումների վերաբերյալ, քվեարկության գաղտնիության վերաբերյալ, (մասնավորապես՝ քվեախցիկի հետնամասում տեղադրված հայելու առկայություն, քաղաքացիների ուղղորդում): Ահազանգերով բարձրացվել են նաև հաշվառում չունեցող անձանց ընտրական իրավունքի իրացման, ընտրական իրավունքի իրացման խոչընդոտելու, առանց նախապես ծանուցելու ընտրական տեղամասի վայրի փոփոխության, ընտրատեղամասի համարի և հասցեի վերաբերյալ տեղեկություններ ստանալու, ուրիշի կողմից իր ընտրական իրավունքի

իրացման, մարտական դիրքերում գտնվող զինճառայողի ընտրական իրավունքի իրացման, ընտրական ընթացակարգի խախտման վերաբերյալ: Ահազանգեր են գրանցվել նաև տեղամասային կենտրոններ ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող կամ քվեարկության օրն ընտրողների ցուցակում չընդգրկված անձանց ընտրական իրավունքի իրացմանը վերաբերող հարցերի վերաբերյալ:

Աշխատանքային խումբն առանձին ուսումնասիրել և վերլուծել է լրատվամիջոցներում Երևանի և մարզերի տեղամասերում հնարավոր իրավախախտումների վերաբերյալ տեղ գտած ավելի քան 870 հրապարակում: Ստացված հաղորդումների և արձանագրված հրապարակումների արդյունքներով անհրաժեշտ պարզաբանումների համար գրություններ են ուղարկվել իրավասու պետական մարմիններ, այդ թվում՝ Գլխավոր դատախազություն և Ոստիկանություն:

ՀՀ ոստիկանությունը տեղեկացրել է, որ 2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայացած ՀՀ ԱԺ արտահերթ ընտրությունների նախընտրական ժամանակահատվածում արձանագրվել է իրավախախտման 111 դեպք, որից 26-ը եղել են հանցագործությունների վերաբերյալ ստացված հաղորդումներ և ընթացքը լուծվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով (18-ով որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին, իսկ 8-ով քննությունը վարել է ՀՀ քննչական կոմիտեն): Արձանագրված մյուս 85 հաղորդումներն առերևույթ հանցագործության հատկանիշներ չեն պարունակել (82-ը՝ ստուգմամբ չեն հիմնավորվել և թողնվել են անհետևանք, իսկ 3-ը՝ քննարկման համար ուղարկվել է ընտրական հանձնաժողով): 2018 թվականի ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների ընթացքում ընտրական գործընթացներին առնչվող դեպքերի կապակցությամբ 9 դեպքի կապակցությամբ հարուցվել է քրեական գործ, որից 1-ը կարճվել է ՀՀ ՔԴՕ 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

ՀՀ ԱԺ արտահերթ ընտրությունների օրը և հետընտրական գործընթացներում արձանագրվել է իրավախախտման 383 դեպք, որից 159-ը եղել են հանցագործությունների վերաբերյալ ստացված հաղորդումներ և ընթացքը լուծվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով (82 գործով կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում), իսկ 51-ով քննությունը վարել է ՀՀ քննչական կոմիտեն, իսկ 25-ն ուղարկվել է այլ մարմին): Արձանագրված մյուս 224 հաղորդումներն առերևույթ հանցագործության հատկանիշներ չեն պարունակել (203 հաղորդում ստուգմամբ չի հիմնավորվել և թողնվել է անհետևանք, 4-ը՝ քննարկման համար ուղարկվել է ընտրական հանձնաժողով, 11-ը՝ վերագրանցվել է որպես հանցագործություն, իսկ 6-ը՝ միացվել են իրար և դարձել 2 նյութ):

Ըստ Ոստիկանության տվյալների՝ ՀՀ ԱԺ արտահերթ ընտրությունների քվեարկության օրն արձանագրվել են այլ անձի անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու 25 իրավախախտման դեպք, որոնք եղել են հանցագործությունների վերաբերյալ ստացված հաղորդումներ և ընթացքը լուծվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով (13-ով որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին, իսկ 12-ով քննությունը վարել է ՀՀ քննչական կոմիտեն):

ՀՀ ԱԺ արտահերթ ընտրությունների քվեարկության օրն արձանագրվել է կրկնակի գրանցման 92 իրավախախտման դեպք, որից 82-ը եղել են հանցագործությունների վերաբերյալ ստացված հաղորդումներ, որոնց ընթացքը լուծվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով (33-ով որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին, 24-ով քննությունը վարել է ՀՀ քննչական կոմիտեն, իսկ 25-ն ուղարկվել է այլ մարմին), իսկ 10-ը՝ ստուգմամբ չեն հիմնավորվել և թողնվել են անհետևանք: 2018 թվականին տեղի ունեցած ընտրությունների

քվեարկությունների օրը տեղի ունեցած կրկնակի քվեարկության դեպքերով ՀՀ քրեական օրենսգրքի 153 հոդվածով հարուցվել է 2 քրեական գործ՝ Արագածի և Արթիկի ոստիկանության բաժիններում:

ՀՀ գլխավոր դատախազության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2018 թվականի ՀՀ ազգային ժողովի արտահերթ ընտրությունների ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 149-154.8-րդ հոդվածներով նախատեսված առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող 165 հաղորդում է ներկայացվել: Ստացված հաղորդումներից 11-ի հիման վրա հարուցվել է քրեական գործ, իսկ 134-ի դեպքում՝ մերժվել է քրեական գործի հարուցումը: Նշված 11 քրեական գործերից՝ 1 քրեական գործի վարույթը կասեցվել է անձը հայտնի չլինելու հիմքով, 3 քրեական գործի վարույթը կարճվել է, 7 քրեական գործի նախաքննությունը շարունակվում է: Նշված քրեական գործերից 4-ը վերաբերել են դիտորդի կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելուն:

Ինչ վերաբերում է քննչական կոմիտեի տրամադրած տեղեկություններին, ապա ըստ վերջինի՝ 2018 թվականի ՀՀ ազգային ժողովի արտահերթ ընտրությունների ընթացքում տրվել է 92 հաղորդում, հարուցվել է 8 քրեական գործ, որից 2-ը՝ դատախազության կողմից, նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին կայացվել է 86 որոշում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետով: Մերժված 86 նյութերից 2-ով Դատախազության կողմից քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացվել է և հարուցվել է քրեական գործ, իսկ 8 քրեական գործից 5-ով նախաքննությունը շարունակվում է Կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում, 3 քրեական գործ ըստ ենթակայության ուղարկվել է ՀԲՕ:

Ավելին, ըստ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի զեկույցի՝ պաշտոնական քարոզարշավի ընթացքում մշտադիտարկված հեռուստատեսությունների մեծ մասը տեսանելի ջանքեր են գործադրել բոլոր ընտրական մասնակիցներին անկողմնակալ լուսաբանելու համար՝ նպաստելով ընտրողներին տեղեկացված ընտրություն կատարելու համար անհրաժեշտ հասանելի տեղեկատվության բազմազանության ապահովմանը: Այնուամենայնիվ, զեկույցում ընդգծվում է նաև, որ այն հեռուստատեսությունները, որոնք փոխկապակցված են այս կամ այն կուսակցության հետ դրսևորել են կողմնակալ մոտեցում ի օգուտ սվյալ մրցակիցների<sup>155</sup>:

## ***2. Երևանի ավագանու ընտրություններ***

2018 թվականին տեղի ունեցած նաև Երևանի ավագանու արտահերթ ընտրություններ: Թե՛ ընտրությունների օրը՝ սեպտեմբերի 23-ին, թե՛ դրան նախորդող ժամանակահատվածում Պաշտպանի աշխատակազմն իրականացրել է ընտրական ողջ գործընթացի շուրջօրյա դիտարկում՝ հիմքում ունենալով անաչառ ու ապաքաղաքական աշխատանքի հիմնարար սկզբունքները: Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ ևս Մարդու իրավունքների Պաշտպանի հրամանով և անմիջական ղեկավարությամբ ստեղծվել է աշխատանքային խումբ, որն իրականացրել է բազմակողմ ուսումնասիրություններ, ապահովել բոլոր ահազանգերի ու բողոքների քննարկում՝ քաղաքացիներին տրամադրելով շուրջօրյա խորհրդատվություն: Այս դեպքում ևս ընտրական ողջ գործընթացում Պաշտպանի աշխատակազմն արդյունավետ համագործակցել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և իրավապահ մարմինների հետ:

<sup>155</sup> Տե՛ս <https://www.osce.org/hy/odihr/elections/armenia/405962?download=true>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Հատկապես նախընտրական գործընթացներում չափազանց խնդրահարույց էր ատելության կոչերի, հասարակությունում անհանդուրժողականության մթնոլորտի առկայության խնդիրը, որոնք արձանագրվել են Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից սոցիալական ցանցերի օգտատերերի հրապարակային գրառումների ու մեկնաբանությունների մշտադիտարկման արդյունքում: Այդ ժամանակաշրջանի դիտարկումն արձանագրել էր, որ «որևէ կողմին», հատկապես գործադիր իշխանությանն ուղղված քննադատություն, իսկ որոշ դեպքերում՝ պարզապես այլակարծություն պարունակող հրապարակումների ներքո սոցիալական ցանցերի օգտատերերի կողմից արվում էին վիրավորանք ու ատելության խոսք, սպառնալիք և նույնիսկ բռնության կոչեր պարունակող մեկնաբանություններ: Ընդ որում, ագրեսիվությամբ էին առանձնանում այն գրառումները, որոնք կատարում էին այդ ժամանակահատվածում սոցիալական ցանցերում զգալիորեն ավելացած առերևույթ կեղծ օգտատերերը: Մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այդպիսի մեկնաբանությունները հաճախ արվում էին առանց այդ հրապարակումների բովանդակությանը ծանոթ լինելու՝ հիմնվելով վերնագրերի վրա կամ միայն հաշվի առնելով հրապարակման հեղինակի անձը: Այս վիճակն ակնհայտ բացասական էր ազդում նաև լրագրողների մասնագիտական անկաշկանդ աշխատանքի վրա: Շատ վիրավորական բնույթի մեկնաբանություններ հենց ուղղված էին լրագրողներին: Ավելին, դիտարկումը ցույց էր տալիս, որ սոցիալական ցանցերի օգտատերերը հաճախ նույնացնում էին լրագրողին կամ լրատվամիջոցին այն անձի հետ, ով, ասենք, հարցազրույց էր տվել լրագրողին: Նախընտրական քարոզարշավի վերջին օրերին արձանագրվել է նաև այդ ժամանակ գործող Ազգային ժողովի պատգամավորներին ուղղված այդպիսի մեկնաբանությունների շեշտակի աճ, ինչը մտահոգիչ է հասարակությունում ԱԺ պատգամավորի դերի ու հեղինակության տեսանկյունից:

Ակնհայտ է, որ այս իրավիճակն անհանդուրժողականությունը խորացնող գործոն է: Այն բացասական է ազդում հասարակությունում համերաշխության ապահովման վրա: Ուստի, Մարդու իրավունքների պաշտպանը ողջունել է այն հանրային գործիչների կոչերը, որոնք ուղղված են վիրավորանքի ու ատելության խոսքի բացառմանը: Նկատվել են նաև հասարակությունը խմբերի բաժանելու միտումներ, ինչը սկզբունքորեն անթույլատրելի է: Այս երևույթը խնդրահարույց է երկրում մարդու իրավունքների պաշտպանության ողջ համակարգի տեսանկյունից: Այն կարող է ունենալ խորը բացասական հետևանքներ, որոնց վերացումը կպահանջի երկարաժամկետ ջանքեր: Բացի այդ, այդ ժամանակաշրջանում արձանագրվեցին, որ առկա են եղել նաև հասարակությունը «նախկինների» ու «նորերի» բաժանելու փորձեր: Առավել խնդրահարույց էր այն, որ դրանք որոշ դեպքերում արվում էին հանրային գործիչների կողմից: Մա նույնպես խաթարում էր համերաշխության մթնոլորտը և առաջ բերում լարվածություն:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից արձանագրվել է, որ քվեարկությունն ընդհանուր առմամբ տեղի է ունեցել հանգիստ ու խաղաղ մթնոլորտում՝ առանց լարվածության, ինչը հնարավորություն է տվել քաղաքացիներին անխոչընդոտ իրականացնել ընտրելու իր իրավունքն ու դրանով իսկ ձևավորել մեր երկրի մայրաքաղաքի՝ որպես միասնական համայնքի կառավարման հիմքերը: Առանձնակի ուշադրություն է դարձվել դիտորդական ու լրագրողական աշխատանքների ապահովմանը: Իրականացված դիտարկումը վկայում է, որ ապահովված են եղել դիտորդների ու լրագրողների անխոչընդոտ աշխատանքի պայմաններ՝ բացառությամբ ստորև ներկայացված մի քանի դեպքերի: Չեն արձանագրվել ընտրողներին սպառնալիքներ ներկայացնելու, նրանց նկատմամբ այլ տեսակի ճնշում գործադրելու ու առհասարակ ընտրական իրավունքի ազատ իրականացմանը խոչընդոտելու դեպքեր:

Ընտրության օրը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ է ստացվել 46 ահազանգ, որոնցից 16-ը վերաբերել է Երևանում 6 ամսից պակաս հաշվառում ունենալուն և ընտրություններին մասնակցելու հնարավորություն չունենալուն, 12-ը՝ հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի ապահովմանը, այդ թվում՝ ընտրատեղամասերի անմատչելիությանը, 3-ը՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի գտնվելու վայրին:

Բերման ենթարկելու, սահմանված ժամից ավելի Ոստիկանության բաժնում անձին պահելու, նույնականացման քարտով ընտրություններին մասնակցելու հնարավորության մասին տեղեկություններ ստանալու, իրազեկման թերթիկ չստանալու, լիազորագրով քվեարկելու վերաբերյալ ստացվել են 2-ական ահազանգեր: Ահազանգեր են ստացվել նաև ընտրակաշառք բաժանելու, այլ երկրի քաղաքացի հանդիսանալու և ընտրելու իրավունք ունենալու, հեռուստատեսությամբ քարոզարշավ իրականացնելու, մատնահետք տրամադրելու, տեխնիկական սարքի հետ կապված խնդրի, անձնագիր չունենալուն և այլ փաստաթղթով ընտրություններին մասնակցելու հնարավորության, ինչպես նաև ընտրությունները կայացված համարվելու նվազագույն ցուցանիշի վերաբերյալ:

Հարկ է նշել, որ այս ընտրություններում մարդու իրավունքների պաշտպանը չի արձանագրել դպրոցների կամ մանկապարտեզների քաղաքական գործընթացներին ներգրավվածության դեպքեր: Տեղեկատվության հրապարակային աղբյուրների ուսումնասիրությամբ, սակայն, վեր են հանվել դիտորդի կամ լրագրողի գործունեությանը խոչընդոտելու վերաբերյալ դեպքեր: Այսպես, ըստ ՀՀ քննչական կոմիտեի տրամադրած տվյալների՝ դիտորդական առաքելության իրականացման խոչընդոտելու վերաբերյալ նախապատրաստվել է 1 նյութ, որը վերաբերել է «Իրազեկ քաղաքացիներ» ՀԿ անդամ, դիտորդ Ա. Առաքելյանի դիտորդական առաքելության իրականացմանը խոչընդոտելուն: Մեկ այլ դեպքում Երևանի Ակսել Բակունցի անվան քոլեջում տեղակայված թիվ 8/05 ընտրատեղամասում թիվ 8 տարածքային հանձնաժողովի նախագահ Նորիկ Երանյանը, հարվածել է «1in.am» լրատվական կայքի լրագրող Դիանա Դավթյանի ձեռքին՝ պահանջելով հեռու տանել խոսափողը, երբ լրագրողը, հարցազրույց վերցնելով տեղամասային հանձնաժողովի քարտուղարից, փորձել է գրուցել նաև «Բմ քայլը» դաշինքի վստահված անձի հետ<sup>156</sup>:

«Առավոտ» լրատվական ծառայության տարածած հրապարակման համաձայն՝ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի 3/19 ընտրատեղամասում հանձնաժողովի նախագահը դեռ առավոտից ուշադրության կենտրոնում է պահել դիտորդին նրա տարբերվող արտաքինի պատճառով: Նույն դիտորդը նկատել է խախտում, որ քվեախցիկում երկու մարդ է եղել, իսկ երբ փորձել է արձանագրել և հանձնաժողովի նախագահը թույլ չի տվել, ապա վերջինս շարունակել է հոգեբանական ճնշում գործադրել և վիրավորանքներ հնչեցնել դիտորդի հասցեին: Ընդհանուր առմամբ ստեղծվել է այնպիսի մթնոլորտ, որի պայմաններում դիտորդը չի կարողացել շարունակել աշխատանքն ու հեռացել է ընտրատեղամասից<sup>157</sup>: Երևանի ավագանու արտահերթ ընտրությունների օրը՝ ժամը 11:00-ի սահմաններում, ըստ «armtimes.com» լրատվական ծառայության տարածած հրապարակման, միջադեպ է գրանցվել թիվ 138 դպրոցում տեղակայված 6/26 ընտրատեղամասում: «Բարգավաճ Հայաստան» կուսակցության վստահված անձն ընտրատեղամասում իրարանցում է ստեղծել, սպառնացել «Անկախ դիտորդ» դաշինքի ներկայացուցչին: Պատճառը եղել է այն, որ դիտորդը նկատել է, որ ԲՀԿ վստահված անձը չի կրում համապատասխան վկայականը և առաջարկել է հանձնաժողովի նախագահին խնդրին լուծում տալ, ինչն էլ դարձել է վեճի պատճառ<sup>158</sup>: Հարկ է նշել, որ անթույլատրելի է

<sup>156</sup> Տե՛ս <https://www.1in.am/2430889.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>157</sup> Տե՛ս <https://www.aravot.am/2018/09/23/982780/>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>158</sup> Տե՛ս <https://armtimes.com/hy/article/144782>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):



դիտորդների և լրագրողների գործունեությանը որևէ անօրինական միջամտություն, քանի որ նրանց միջոցով ապահովվում է ընտրական գործընթացների թափանցիկությունը և հրապարակայնությունը:

Վիրավորական խոսքերի մասին բարձրաձայնել է նաև ԵԱԿՀ ԺՀՄԻԳ-ը: Ձեկույցում մասնավորապես նշվում է, որ առաքելության որոշ գրուցակիցներ նշել են նաև, որ ֆեյսբուքյան «կեղծ» հաշիվների միջոցով իրականացվել է սադրանք, ինչպես նաև տարածվել է ապատեղեկատվություն և առանձին թեկնածուների դեմ ուղղված վիրավորական խոսքեր:

Ընտրությունների օրը և դրան նախորդող ժամանակահատվածում տեղեկություններ են տարածվել նաև ընտրակաշառք բաժանելու դեպքերի մասին: Մասնավորապես, 2018 թվականի սեպտեմբերի 18-ին Երևան քաղաքի մի բնակչուհի Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնում հաղորդում է ներկայացրել այն մասին, որ իրեն ընտրակաշառք է առաջարկվել՝ Երևանի ավագանու արտահերթ ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերից մեկին ընտրելու համար: Հաղորդման հիման վրա նյութերի նախապատրաստման ընթացքում տվյալներ են ձեռք բերվել առ այն, որ 2018 թվականի սեպտեմբերի 13-ին՝ ժամը 18-ի սահմաններում, կուսակցություններից մեկի՝ ավագանու անդամի թեկնածուն վերոնշյալ քաղաքացուն առաջարկել և խոստացել է 10.000 ՀՀ դրամ՝ սեպտեմբերի 23-ին կայանալիք Երևանի ավագանու ընտրություններին իրենց օգտին քվեարկելու համար: Նշված դեպքի առթիվ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազի տեղակալի որոշմամբ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 154.2. հոդվածի 2-րդ մասով: Քրեական գործը նախաքննություն կատարելու համար ՀՀ գլխավոր դատախազությունից ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն<sup>159</sup>:

Մեկ այլ դեպքում Երևան քաղաքի ավագանու ընտրություններին առաջադրված «Իմ քայլը» կուսակցությունների դաշինքի ցուցակի 62-րդ համարի ներքո հանդես եկած թեկնածու Գրիգորի Երիցյանը մամուլում հայտարարություն է տարածել առ այն, որ Արաբկիրում «Բարգավաճ Հայաստան» կուսակցության թեկնածուն գումար է բաժանել քաղաքացիներին<sup>160</sup>: Ըստ ՀՀ գլխավոր դատախազության տարածած տեղեկատվության՝ հրապարակումը Երևան քաղաքի դատախազությունից ուղարկվել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչություն՝ դրանում նշվող հանգամանքներն ստուգելու նպատակով:

Ընտրության օրը գրանցվել են նաև այլ անձի փոխարեն քվեարկության, քվեարկության համար կրկնակի գրանցման, քվեախցիկում մեկից ավելի անձանց գտնվելու, ընտրացուցակներում տվյալների բացակայության դեպքեր: Ընտրության օրը չեն արձանագրվել ընտրողներին սպառնալիքներ ներկայացնելու, նրանց նկատմամբ այլ տեսակի ճնշում գործադրելու ու առհասարակ ընտրական իրավունքի ազատ իրականացմանը խոչընդոտելու դեպքեր:

Այս ամենի հետ մեկտեղ, սակայն պետք է արձանագրել, որ քվեարկության նախորդող ժամանակահատվածում տեղի ունեցած ուսումնասիրությունների արդյունքում նկատվել է անհանդուրժողականության, վիրավորանքի ու անգամ սպառնալիքների աճ, որոնք առավել ցայտուն արտահայտվեցին սոցիալական ցանցերում (հիմնականում առերևույթ կեղծ օգտատերերի կողմից) և տարածում ստացան հատկապես քվեարկությանը նախորդող ժամանակահատվածում: Այս երևույթը չէր կարող անհետևանք մնալ՝ իր հետ չառաջացնելով լարվածություն: Վերջինի նաև հասարակությունը խմբերի բաժանելու միտման պատճառ հանդիսացավ, ինչն անթույլատրելի է և նման երևույթները պետք է ի սպառ բացառել: Այսպիսի դրսևորումները վտանգավոր ազդեցություն են ունենում մարդու իրավունքների ողջ արժեհամակարգի վրա՝ սովորելով երկրում համերաշխության մթնոլորտը:

<sup>159</sup> Տե՛ս <https://armtimes.com/hy/article/144626>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>160</sup> Տե՛ս <https://armtimes.com/hy/article/143921>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Ավելին, հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի իրացման ապահովումը դեռևս շարունակում է խնդրահարույց լինել: Ընտրատեղամասերի մեծագույն մասը դեռևս շարունակում է անմատչելի մնալ հաշմանդամություն ունեցող անձանց համար: Պաշտպանի աշխատակազմի թեժ գծի հեռախոսահամարին ստացվել է 11 ահազանգ ընտրողի կողմից քվեարկությանը մասնակցել չկարողանալու վերաբերյալ: Այս խնդիրը վերաբերելի է ոչ միայն Երևանի ընտրատեղամասերին, այլ ողջ երկրի տարածքում գործող ընտրատեղամասերին: Մարդու իրավունքների պաշտպանը բազմիցս անդրադարձել են վերը նշված խնդրին, նշելով, որ ընտրատեղամասերի մատչելիությունն ապահովելու ու հաշմանդամություն ունեցող ընտրողների իրավունքի իրականացման համար բոլորի հետ հավասար հնարավորություններ ստեղծելու ուղղությամբ անհրաժեշտ է գործադրել ջանքեր (առավել մանրամասն վերլուծություն տե՛ս «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ» վերտառությամբ գլխում):

Վերոգրյալ ահազանգերից բացի, ԱԺ պատգամավոր, Երևանի քաղաքապետի թեկնածու Նաիրա Զոհրաբյանը Մարդու իրավունքների պաշտպանին է ուղղել ահազանգ՝ կապված անձին ընտրակաշառք տալու համար Ոստիկանության բաժին բերման ենթարկելու հետ: Այս հաղորդման հիման վրա Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներն այց են իրականացրել Ոստիկանության բաժին և անձանց ներկայացրել իրենց իրավունքները:

«Առավոտ» լրատվական ծառայության տարածած մեկ այլ հրապարակման համաձայն՝ Երևանի ավագանու արտահերթ ընտրությունների օրը երկու անգամ Ոստիկանությունը խուզարկություն է իրականացրել «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ակտիվիստ Անահիտ Ավագյանի տանը: «Առավոտ» լրատվական ծառայության հետ զրույցում ՀՀ ԱԺ պատգամավոր Շաքե Իսայանն ասել է, որ ոստիկանությունը եկել է ահազանգի հետքերով, որ Ա. Ավագյանի տնից ընտրակաշառք է բաժանվում: Պատգամավորի խոսքով. «Երկու անգամ եկել են, ոչինչ չի հայտնաբերվել, ցուցմունք են վերցրել նաև հարևաններից, արձանագրություն են կազմել և գնացել»: Անահիտ Ավագյանն «Aravot.am»-ի լրագրողին հայտնել է, որ առավոտյան Ոստիկանության ծառայողներն այցելել են իր բնակարան պարզաբանումներ պահանջել և համոզվել, որ ահազանգը կեղծ է: Ավելի ուշ՝ կրկին այցելել են և բացատրություններ ստացել հարևաններից<sup>161</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն արձանագրել է նաև սոցիալական ցանցերում առկա գրառումներ այն մասին, որ քվեարկողներին պարտադրվում կամ կոչ է արվում լուսանկարել քվեարկած քվեաթերթիկն ու այդ կերպ ապացուցել քվեարկության կոնկրետ արդյունքը:

Մարդու իրավունքների պաշտպանի իրականացրել է բացատրական և իրազեկման աշխատանքներ, որ ներկայացված գործողությունը պարունակում է հանցագործության հատկանիշներ և պատժվում տուգանքով՝ 500.000-700.000 դրամի չափով, կամ ազատազրկմամբ՝ 2-5 տարի ժամկետով:

ՀՀ ոստիկանության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2018 թվականի Երևան քաղաքի ավագանու արտահերթ ընտրությունների ընթացքում ընտրական գործընթացներին առնչվող 12 դեպքի կապակցությամբ հարուցվել է քրեական գործ, որից 5-ը կարճվել է Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ արարքի մեջ հանցակազմ չլինելու հիմքով:

Ըստ ՀՀ քննչական կոմիտեի տրամադրած տեղեկությունների՝ Երևան քաղաքի ավագանու արտահերթ ընտրությունների ընթացքում ընտրական գործընթացներին առնչվող դեպքերի առթիվ նախապատրաստվել է 23 նյութ: Նախապատրաստված բոլոր

<sup>161</sup>Տե՛ս <https://www.aravot.am/2018/09/23/982782/>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

նյութերով քրեական գործ հարուցելը մերժվել է, որից 19-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 4-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով:

ՀՀ գլխավոր դատախազության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2018 թվականի Երևան քաղաքի ավագանու արտահերթ ընտրությունների ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 149-154.8-րդ հոդվածներով նախատեսված առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող 60 հաղորդում է ներկայացվել: Ստացված հաղորդումներից 9-ի հիման վրա է հարուցվել քրեական գործ, իսկ 51-ի դեպքում մերժվել է քրեական գործի հարուցումը: Հարուցված 9 քրեական գործերից՝ 2 քրեական գործ 2 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 5-ը՝ կարճվել է հանցակազմի բացակայության հիմքով, 1-ը՝ կասեցվել է անձը հայտնի չլինելու հիմքով, 1-ի նախաքննությունը շարունակվում է:

Նշվածներից 7 քրեական գործ վերաբերել է դիտորդի կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելուն: Դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին սահմանված դեպքերում և կարգով ծանոթանալուն խոչընդոտելու, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճենները, քաղվածքները չտալու դեպքեր չեն արձանագրվել:

### ***3. Համայնքների ղեկավարների արտահերթ ընտրություններ***

2018 թվականը լի էր նաև համայնքների ղեկավարների, ավագանիների անդամների ընտրություններով: Այս ընտրությունների պարագայում ևս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն իրականացրել է հետևողական աշխատանքներ, մշտադիտարկումների միջոցով ընտրական իրավունքի լույսի ներքո՝ ապահովելով մարդու այլ հիմնարար իրավունքների իրացումը: Աշխատակազմն ընտրությունների օրերին աշխատել է արտակարգ ռեժիմով, համագործակցելով իրավասու պետական մարմինների հետ: Աշխատակազմի թեժ գծին ստացվել են ահազանգեր կապված ընտրական իրավունքի առերևույթ խախտումների վերաբերյալ:

Մասնավորապես, ստացված ահազանգերից մեկով նշվել է, որ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն համայնքի թիվ 21/4 ընտրատեղամասում առկա են քաղաքացիների կուտակումներ և ընտրողների ուղղորդումներ: Հարցն անմիջապես ուսումնասիրվել է Պաշտպանի աշխատակազմում և տեղեկությունը փոխանցվել է ՀՀ ոստիկանություն:

Այս ընտրությունների օրերին ևս առանձին ուշադրություն է դարձվել ընտրությունների վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներում տեղ գտած նյութերին: Ուսումնասիրվել է ավելի քան 270 հրապարակում: Արձանագրվել են ընտրողների ուղղորդման, քաղաքացիների կուտակումների և մյուս միջադեպերի վերաբերյալ հրապարակումներ: Մասնավորապես, ընտրողների ուղղորդման մասին հրապարակում է եղել կապված Կոտայքի մարզի Սոլակ գյուղի հետ: Արձանագրվել է նաև Ոստիկանության ծառայողի կողմից Հրազդանի 26/14 ընտրատեղամասից գրանցամատյանի հեռացման վերաբերյալ հրապարակումը: Մեկ այլ հրապարակման համաձայն՝ Էջմիածնի թիվ 14/07 ընտրատեղամասում քվեարկության պահին ընտրողի մոտ հայտնաբերվել է երկու քվեաթերթիկ: Արձանագրվել են նաև մի շարք թեկնածուների վարչական լծակներ գործադրվելու վերաբերյալ հրապարակային պնդումներ: Հատուկ ուշադրություն է դարձվել լրագրողական աշխատանքների ապահովմանը: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը լրագրողական աշխատանքի խոչընդոտի դեպք չի արձանագրել:

#### **4. 2017 թվականի տարեկան հաղորդման «Ընտրական իրավունք» բաժնում ներկայացված դեպքերի հետագա ընթացքը**

Պաշտպանի 2017 թվականի տարեկան հաղորդման շրջանակներում անդրադարձ էր կատարվել նույն թվականին տեղի ունեցած Ազգային ժողովի և Երևանի ավագանու ընտրությունների ընթացքում տեղի ունեցած միջադեպերին: Պաշտպանը բացի տեղեկատվության հրապարակային միջոցներով և թեժ գծով ստացած առերևույթ հանցագործությունների վերաբերյալ նյութերն իրավապահ մարմիններին փոխանցելը, յուրաքանչյուր գործով հետամուտ է լինում գործի քննության ընթացքին՝ հետևելով մարդու իրավունքների և հիմնական ազատությունների անշեղ պահպանմանը:

2017 թվականի տարեկան հաղորդմամբ ներկայացված գործերի ընթացքի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազությունից ստացվել են տեղեկություններ:

Այսպես, նախորդ տարվա տարեկան հաղորդմամբ արտացոլվել էր 2017 թվականի մարտի 24-ին «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության տարածած «ՀՀԿ-ն չարաշահում է վարչական ռեսուրսը դպրոցներում ու մանկապարտեզներում (114 ձայնագրություններ)» վերտառությամբ հրապարակումը, որը ներկայացնում էր 114 դպրոցի և մանկապարտեզի տնօրենների հեռախոսային խոսակցությունների ձայնագրություններ: Գլխավոր դատախազության ներկայացրած տեղեկությունների համաձայն՝ նշված ձայնագրություններից մեկն առերևույթ պարունակել է հանցագործության հատկանիշներ, որը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածով սահմանված կարգով քրեական գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելը ստուգելու նպատակով ուղարկվել է հետաքննության մարմին, որով որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

Մարդու իրավունքների պաշտպանը հարկ է համարում հատուկ շեշտել, որ այսպիսի դեպքերը հանրային վերաբերմունքի վրա են ազդում, դրանք արատավոր երևույթներ են, որ խաթարում են վստահությունը հանրային իշխանության նկատմամբ: Ավելին, հարցն առավել զգայուն է դառնում, քանի որ խոսքը կոնկրետ դեպքում վերաբերում է հանրակրթական ուսումնական հաստատությունների ու երեխաների լավագույն շահի երաշխավորմանը պետության կողմից: Այս տեսանկյունից էլ հենց անհրաժեշտ է բացառել նմանատիպ որևէ երևույթ, ուսումնական այդ հաստատությունները քաղաքականացնելու որևէ փորձ և գործադրել առավելագույն ջանքեր, որպեսզի դրանք կատարող անձինք բացահայտվեն ու ենթարկվեն պատասխանատվության: Այս մասին Մարդու իրավունքների պաշտպանը մանրամասն դիրքորոշումներ է ձևավորել 2017 թվականի տարեկան հաղորդման մեջ: Ուստի, արդարացի էր այս գործով քրեական հետապնդման մարմնի կողմից նշված որոշման կայացումը հարուցել քաղաքացիական հասարակության տարակուսանքը:

Նախորդ տարվա տարեկան հաղորդմամբ նշվել էր, որ «Հայկական ժամանակ» օրաթերթի լրագրող Աննա Զախարյանը 2017 թվականի մայիսի 12-ին Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժնում հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել այն մասին, որ 2017 թվականի մայիսի 11-ի երեկոյան տուն գնալիս ականատես է եղել, թե ինչպես են Երևան քաղաքի Կուրդինյան փողոցում գտնվող քաղաքապետի թեկնածու Տարոն Մարգարյանի նախընտրական շտաբում ընտրողներին կաշառք և քվեաթերթիկներ բաժանում: Ըստ Զախարյանի՝ երբ փորձել է նկարահանել, մի երիտասարդ, խոչընդոտելով մասնագիտական օրինական գործունեությունը, ձեռքից իլլել է «Նոկիա» մոդելի բջջային հեռախոսը, մտել նշված շտաբ և բջջային հեռախոսից հեռացրել հեռախոսահամարներն ու կարճ հաղորդագրությունները, իսկ դրանից մոտ 15 րոպե անց մեկ այլ երիտասարդ անվնաս վիճակում վերադարձրել է իր բջջային հեռախոսը: Դեպքի առթիվ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազությունում 2017 թվականի մայիսի 16-

ին ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասով և 154.2-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է քրեական գործը, որը նույն օրն ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն՝ նախաքննություն կատարելու նպատակով: Ըստ Գլխավոր դատախազության՝ նշված քրեական գործի վարույթը 2017 թվականի հունիսի 1-ին կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքով:

2017 թվականի Երևանի ավագանու ընտրությունների ժամանակահատվածում դիտորդ Վ. Գասպարիի նկատմամբ բռնություն գործադրելու, «www.azatutyun.am», «www.hraparak.am» լրատվամիջոցների լրագրողներ Տ. Խաչատրյանի, Ս. Գաբրիելյանի և Ս. Աղամյանի, ինչպես նաև լրագրողների և դիտորդների գործունեությանը խոչընդոտելու վերաբերյալ գործերով 2017 թվականի տարեկան հաղորդման շրջանակներում նշվել էր, որ ըստ Գլխավոր դատախազության տվյալների՝ վերոգրյալի վերաբերյալ մամուլի բոլոր հրապարակումները ՀՀ գլխավոր դատախազության աշխատանքային խումբն ուսումնասիրել և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով նյութեր նախապատրաստելու հանձնարարությամբ 2017 թվականի մայիսի 14-ին ուղարկել են ՀՀ ոստիկանության, ՀՀ քննչական կոմիտեի տարածքային բաժիններ և ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

Գլխավոր դատախազության տրամադրած նոր տվյալների համաձայն՝ նշված բոլոր դեպքերով ՀՀ ոստիկանությունը նախապատրաստել է նյութեր, սակայն, բոլոր դեպքերում էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով կայացվել է քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում՝ անձի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

2017 թվականի Երևանի ավագանու ընտրությունների ժամանակահատվածում ընտրակաշառք բաժանելու և իր վստահված անձին մարմնական վնասվածք հասցնելու, հեռախոսը կտրելու վերաբերյալ «Ելք» դաշինքի քաղաքապետի թեկնածու Նիկոլ Փաշինյանի տարածած հրապարակային տեղեկությունների վերաբերյալ գործը ևս տեղ էր գտել Պաշտպանի 2017 թվականի տարեկան հաղորդմամբ: Այսպես, 2017 թվականի մայիսի 12-ին «armtimes.com» էլեկտրոնային կայքում հրապարակվել էին «Մարգարյանի շտաբում ՀԺ-ի լրագրողը բռնության է ենթարկվել» և «Տարոն Մարգարյանի շտաբում հարձակվում են ՀԺ-ի լրագրողների վրա, հայիդում» վերտառությամբ հոդվածներն այն մասին, որ նույն օրը՝ ժամը 14:00-ի սահմաններում, «armtimes.com» էլեկտրոնային կայքի լրագրողներ Տիրայր Մուրադյանը և Տաթևիկ Խաչատրյանն ընտրակաշառքի բաժանման վերաբերյալ ստացած ահազանգը ստուգելու նպատակով այցելել են Երևան քաղաքի Կոմիտասի պողոտայի 56 հասցեում տեղակայված Երևանի ավագանու թեկնածու Տարոն Մարգարյանի նախընտրական շտաբ, որտեղ մի խումբ անձինք խոչընդոտել են վերջիններիս աշխատանքը, քաշքշել են, հայիդել, փորձել վերցնել լրագրողների հեռախոսները և հրելով նրանց հեռացրել են շտաբի տարածքից:

Դեպքի առթիվ 2017 թվականի մայիսի 16-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 5-րդ կետերով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է քրեական գործը:

ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչի 2017 թվականի մայիսի 17-ի որոշմամբ ընտրողներին կաշառք տալու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 154.2-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել և վարույթ է ընդունվել քրեական գործը:

2017 թվականի մայիսի 25-ին որոշում է կայացվել քրեական գործի վարույթը կարճելու և Տարոն Մարգարյանի նախընտրական շտաբում Տիրայր Մուրադյանի և Տաթևիկ Խաչատրյանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու, ինչպես նաև ընտրողների՝ թեկնածուներից կաշառք ստանալու կամ կաշառք տալու դեպքերով որևէ

անձի, այդ թվում՝ Հայկ Սարգսյանի, Անուշավան Գյուլամիրյանի, Արսեն Կարապետյանի, Հովհաննես Սարգսյանի, Հրայր Հովհաննիսյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ նրանց գործողություններում ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ, 154.2-րդ և 164-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի բացակայության հիմքով:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի մայիսի 10-ի որոշմամբ վերոհիշյալ որոշման դեմ դիմող Նիկոլ Փաշինյանի ներկայացրած բողոքը ճանաչվել է հիմնավորված և պարտավորեցվել է վարույթն իրականացնող մարմին վերացնել բողոքաբերի իրավունքների և ազատությունների խախտումները:

ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազի՝ 2018 թվականի հունիսի 7-ի որոշմամբ քրեական գործով վարույթը կարճելու մասին ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչի 2017 թվականի հուլիսի 25-ի որոշումը վերացվել է:

Քրեական գործը վարույթ ընդունած քննիչի 2018 թվականի սեպտեմբերի 11-ի որոշմամբ թիվ 62211317 քրեական գործից անջատվել է թիվ 62230118 քրեական գործը, որը 2018 թվականի սեպտեմբերի 19-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան: Արդյունքում՝ դատարանի 2019 թվականի փետրվարի 4-ի դատավճռով երկու անձ մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 154.2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքում և դատապարտվել տուգանքի՝ 2.500.000 ՀՀ դրամ գումարի չափով: Նույն դատավճռով ևս 9 անձ մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-154.2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքում և դատապարտվել տուգանքի՝ 2.300.000 ՀՀ դրամ գումարի չափով:

Չնայած վերոնշյալի՝ դեռևս խնդիր է նմանատիպ քրեական վարույթներով հանրությանը պարբերաբար անհրաժեշտ ծավալի տեղեկությունների տրամադրումը, ինչը կարևոր է քաղաքացիների և հասարակության հետ հետադարձ կապի ու քրեական գործի քննություն մարմինների նկատմամբ վստահության տեսանկյունից: Վերոնշյալ գործերն անմիջական կապ ունեն երկրում ժողովրդավարության ամրապնդման հետ: Ուստի, չափազանց կարևոր է դրանց ընթացքի մասին իրազեկման ապահովումը, ինչը բավարար կերպով չի իրականացվել 2018 թվականին:

**ԲԱԺԻՆ 7. ԿԱՐԾԻՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՍԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ**

***1. Տեղեկատվության ազատությունը. օրենսդրություն և իրավակիրառ պրակտիկա***

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության կարևոր ուղղություններից է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիների դիմումներին, նրանց բարձրացրած խնդիրներին պատշաճ արձագանքումն ապահովելը: Աշխատանքի այս ուղղությունը ներառում է նաև լրագրողական հարցումներին պատասխան տրամադրելու հարցում աջակցելը: Այս կարևոր ուղղությունը նպատակ ունի շարունակաբար ամրապնդել պետության և քաղաքացիների կապը, իսկ լրագրողների միջոցով՝ իրացնել քաղաքացիների տեղեկություններ ստանալու իրավունքը:

Այսպես, 2003 թվականի սեպտեմբերի 23-ին ընդունվել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները, սահմանում է տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը, ինչպես նաև տեղեկություններ ստանալու կարգը, ձևերը և պայմանները:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում վարվում է առանձին վիճակագրություն տեղեկատվության ազատության ոլորտում գրավոր և բանավոր բողոքների վերաբերյալ անհրաժեշտության դեպքում առաջարկներ ներկայացնելու նպատակով:

Մասնավորապես, եթե 2016 թվականին քաղաքացիների դիմումներին չպատասխանելու վերաբերյալ ստացվել է 38 բողոք, 2017 թվականին՝ 46, ապա 2018 թվականին բողոքների թիվը կրկնակիից ավելի աճել է՝ հասնելով 109-ի:

2018 թվականի հունվար ամսից մինչև մայիս ամիսն ընկած ժամանակահատվածում 45 բողոքների հիմնական մասն ուղղված է եղել Ոստիկանության, Պաշտպանության նախարարության, Հայաստանի ազգային արխիվի, Կառավարության աշխատակազմի դեմ, իսկ հունիսից-դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում 64 բողոքների մեծ մասն ուղղված է եղել Առողջապահության նախարարության, Երևանի քաղաքապետարանի, Ոստիկանության, Արդարադատության նախարարության մարմինների, այդ թվում՝ Քրեակատարողական ծառայության դեմ:

Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ պետական մարմինները քաղաքացիների տեղեկություն ստանալու հարցումներին պատասխանում են օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ, որի հետևանքով խախտվում է անձի՝ սահմանված ժամկետներում պատշաճ պատասխան ստանալու իրավունքը: Ավելին, տեղեկությունների տրամադրումը հաճախ մերժվում է այն պատճառաբանությամբ, որ պահանջվող տեղեկատվության մեջ առկա են մարդու անձնական կյանքին վերաբերող տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն: Այսինքն, տեղեկություն տնօրինողը տեղյակ չէ, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե պահանջվող տեղեկատվության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ:

Մինչդեռ, տեղեկություն տնօրինողը պետք է տրամադրի այն տեղեկությունները, որոնց տրամադրումն արգելված չէ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով (տվյալ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված տվյալները պարունակող հատվածները ծածկելու միջոցով):

Իրականում, խնդիրն այն է, որ տեղեկատվություն տնօրինողները տեղեկատվություն չեն տրամադրում օրենքով իրենց վրա դրված պարտականությունների մասին բավարար չափով իրազեկված չլինելու և օրենքը կիրառելու համար անհրաժեշտ գիտելիք և հմտություններ չունենալու պատճառով:

Ոլորտի հասարակական կազմակերպությունները ևս բարձրաձայնում են տեղեկատվության ազատության իրավունքին առնչվող խախտումների մասին:

Այսպես, 2018 թվականին Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը հրապարակել է ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից «Տեղական ինքնակառավարման մասին» և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքներով սահմանված թափանցիկության, հանրային հաշվետվողականության և մասնակցության ապահովման պարտավորությունների կատարման մոնիթորինգի զեկույցը<sup>162</sup>: Մշտադիտարկման արդյունքում պարզվել է, թե որքանով են համայնքային իշխանություններն ապահովում իրենց գործունեության թափանցիկությունը «Տեղական ինքնակառավարման մասին», «Տեղեկատվության ազատության մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքներով, ինչ խնդիրներ կան այդ պարտականությունները կատարելիս: Օրինակ՝ 2018 թվականի հարցումների ամբողջ մոնիթորինգի ընթացքում չեն պատասխանել Հայաստանի համայնքապետերի մոտավորապես 53,78%-ը, մինչդեռ, օրենքով սահմանված ժամկետում պատասխանել է Հայաստանի համայնքների 22,9%-ը<sup>163</sup>:

*Այսպիսով, ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝*

*1. կազմակերպել վերապատրաստման դասընթացներ պետական մարմինների աշխատակազմերի տեղեկատվության հարցերով պատասխանատու անձանց համար, որի արդյունքը կլինի տեղեկատվություն յուրաքանչյուր տնօրինողի՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ու վերջինիս կիրարկման մեխանիզմների վերաբերյալ բավարար գիտելիքների ստացումը,*

*2. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում մանրամասն կառուցակարգեր նախատեսել հաշմանդամություն ունեցող անձանց կողմից տեղեկությունների հայցման և ստացման կարգի վերաբերյալ:*

***2. Էրոտիկ կադրերով կամ բռնություն պարունակող, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների ցուցադրումը ցերեկային ժամերին***

2018 թվականին շարունակվել է չլուծված մնալ սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող, անչափահասների զարգացման վրա բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների՝ ցերեկային ժամերին հեռարձակման հարցը: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը խնդիրը բարձրացնում է դեռևս 2014 թվականից:

Հեռուստատեսությամբ ցուցադրվող տեղեկությունը չափազանց կարևոր է հասարակության յուրաքանչյուր ներկայացուցչի՝ հատկապես երեխաների զարգացման և որպես իրավունքի սուբյեկտ կայացման համար: Տեղեկությունը, որը քարոզում է բռնություն, բռնության դեմ պայքարի հարցում իրական մարտահրավեր է պետության և հասարակության համար: Ուստի՝ չափազանց կարևոր է ցերեկային ժամերին բացառել բռնության, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող

<sup>162</sup> Տե՛ս <http://www.mtad.am/files/docs/1992.pdf>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>163</sup> Տե՛ս <http://www.mtad.am/files/docs/1992.pdf>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):



հաղորդումների հեռարձակումը, քանի որ դրանց թիրախ լսարան կարող են լինել նաև երեխաները:

Խնդրի վերաբերյալ ստացվել են բազմաթիվ բողոքներ մի շարք քաղաքացիներից: Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանի և ներկայացուցիչների կողմից թե՛ մարզային, թե՛ Պաշտպանի աշխատակազմում կազմակերպված հանդիպումներից բոլորի ընթացքում քաղաքացիները բարձրաձայնում են հեռուստատեսությամբ եթեր հեռարձակվող հաղորդումներում բռնության առկայության վերաբերյալ:

Հայաստանն, ըստ էության, ստանձնել է պարտավորություն ապահովել երեխայի սոցիալական, հոգևոր և բարոյական բարեկեցությանն ու նրա ֆիզիկական և հոգեկան առողջ զարգացմանն ուղղված տեղեկատվության ու նյութերի մատչելիությունը և խրախուսում է երեխայի բարեկեցությանը վնասող տեղեկատվությունից և նյութերից երեխային պաշտպանելու համապատասխան ուղենիշերի զարգացումը («Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 17-րդ հոդված): Այսինքն՝ կոնվենցիան վավերացրած պետությունները պետք է երեխաների զարգացմանն ուղղված քայլեր ձեռնարկեն՝ ըստ այդմ վերջիններիս ապահովագրելով իրենց հոգեկան առողջության վրա բացասաբար ազդող տեղեկություններից: Նշյալ սկզբունքը նաև ամրագրված է «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածում ևս:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ երոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումների և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի որոշմամբ: Հաշվի առնելով հարցի կարևորությունը և ոլորտի՝ օրենսդրական կարգավորումների անհրաժեշտությունը՝ համապատասխան միջոցառում է նախատեսվել նաև 2017 թվականին հաստատված «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 483-Ն կառավարության որոշմամբ: Ըստ որոշման 1-ին հավելվածի 27-րդ կետի՝ նախատեսվում է մինչև 2018 թվականի չորրորդ եռամսյակ վերանայել երոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումների, սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր, ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների բովանդակության գնահատման չափորոշիչները:

Ըստ այդմ՝ 2018 թվականին մշակվել է համապատասխան որոշման նախագիծը, որը ներկայացվել է նաև Պաշտպանին՝ կարծիքի: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում համապարփակ ուսումնասիրություն է կատարվել և միջազգային չափանիշների քննարկման աշխատանքների արդյունքում ներկայացվել է կարծիք: Վերջինս պարունակել է մի շարք առաջարկներ նախագծով սահմանված անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների ցանկին, որն առաջարկվել է լրացնել մի շարք բացասական ազդեցություն ունեցող հաղորդումներով՝ հաշվի առնելով այլ երկրների լավագույն փորձը:

Բացասական հաղորդումների շարքն առաջարկվել է լրացնել խտրականություն և տարբեր խմբերի նկատմամբ կարծրատիպեր պարունակող հաղորդումներով ևս կամ հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների ցանկով սահմանվում են նաև այն հաղորդումները, որոնք երեխաների մոտ ցանկություն են առաջացնում օգտագործել թմրամիջոցներ, հոգեմետ և այլ թունավոր նյութեր, զբաղվել

մարմնավաճառությամբ կամ մուրացկանությամբ: Բացասական այս երևույթների ցանկում առաջարկվել է ավելացնել նաև արկոհոլի և ծխախոտի օգտագործելու ցանկություն առաջացնող հաղորդումները, որոնք նախագծով ամրագրված արգելքների շարքում բացակայում էին:

Կարծիքում անդրադարձ է կատարվել նաև հեռուստատեսությամբ հեռարձակվող «Օդից փող» կամ այլ շահումով խաղերի հետ կապված խնդիրներին, որոնց պատճառած վնասների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանին են հասցեագրվել բազմաթիվ բողոքներ: Պարզվել է, որ շահումով խաղերի և ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին և հեռուստատեսության և ռադիոյի մասին ՀՀ օրենքներում, ինչպես նաև հարակից այլ օրենքներում բացակայում են հեռուստատեսությամբ և ռադիոյով հեռարձակվող շահումով խաղերի հեռարձակման իրավական կարգավորումը, ինչը գործնականում հանգեցնում է անձանց իրավունքների խախտման: Չնայած առանձին մշակված և շրջանառված օրենքում փոփոխություններ սահմանող օրենքի նախագծի առկայությանը՝ շահումով խաղերին անչափահասների մասնակցությունը հնարավորինս բացառելու նպատակով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովին առաջարկվել է հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների ցանկում նախատեսել նաև այդպիսի հաղորդումների հեռարձակման սահմանափակումը:

Ըստ հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի տրամադրած տվյալների՝ նախագիծը դեռևս գտնվում է շրջանառության և իրավասու և շահագրգիռ մարմինների հետ քննարկումների փուլում: Ուստի, 2018 թվականին հարցը շարունակել է մնալ չլուծված:

*Հաշվի առնելով հարցի կարևորությունն՝ անհրաժեշտ է՝*

*1. ոլորտի վերաբերյալ իրականացնել համապարփակ ուսումնասիրություններ՝ նախագիծն ամբողջական դարձնելու համար,*

*2. նախագիծը մշակելիս հատուկ ուշադրություն դարձնել «անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների» որոշման չափորոշիչներին, առ այն, որ դրանք ներառեն խտրականություն և տարբեր խմբերի նկատմամբ կարծրատիպեր պարունակող հաղորդումները ևս, նաև այն հաղորդումները, որոնք արկոհոլի և ծխախոտի օգտագործելու ցանկություն են առաջացնող հաղորդումները,*

*3. հրատապ կերպով ընդունել էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանող հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի որոշումը:*

**3. Հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ հեռարձակումների եթերաժամն ազգային փոքրամասնությունների լեզուներով**

2018 թվականին լուծվել է Մարդու իրավունքների պաշտպանի կողմից դեռևս 2014 թվականից բարձրաձայնվող այն խնդիրը, որով սահմանափակվում էր ազգային փոքրամասնությունների լեզուներով հեռարձակվող հաղորդումների քանակը: Մինչև 2018 թվականի մարտի 23-ը «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի «դ» ենթակետի համաձայն՝ Հանրային հեռուստառադիոընկերությունը պարտավոր է եթերային ժամանակ տրամադրել ՀՀ ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերի և հաղորդումների հեռարձակման համար, ընդ որում՝ այդ հաղորդումների ընդհանուր ժամաքանակը չպետք է գերազանցի հեռուստատեսությամբ շաբաթական մինչև 2 ժամը, իսկ ռադիոյով՝ օրական մինչև 1 ժամը: Ստացվում էր, որ

հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ ազգային փոքրամասնությունների լեզուներով հեռարձակումների եթերաժամի համար օրենսդրությամբ սահմանված են սահմանափակումներ: Նշվածը խնդրահարույց էր միջազգային չափանիշների և փոքրամասնությունների համար լրատվամիջոցների համընդհանուր հասանելիության ապահովման տեսանկյունից և անհարկի սահմանափակում էր նրանց մուտքը հանրային լրատվամիջոցներ:

#### ***4. Սոցիալական ցանցերում վիրավորանքի, արժանապատվությունը վիրավորող ու ատելության խոսքը***

Կարևորելով այն, որ երկրի ժողովրդավարական զարգացման հիմնարար ցուցիչներից է խոսքի ազատությունը՝ 2018 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ուսումնասիրության են ենթարկվել զանգվածային լրատվության միջոցների, այդ թվում՝ սոցիալական ցանցերի հրապարակումները: Արդյունքում, ուսումնասիրությունները վկայել են վիրավորանքի, արժանապատվությունը վիրավորող ու ատելության խոսքի զգալի աճի մասին<sup>164</sup>:

Հատկապես մտահոգիչ է սոցիալական ցանցերում մարդու արժանապատվությունը նվաստացնող, ընդհուպ՝ ատելություն քարոզող, իսկ առանձին դեպքերում՝ կոնկրետ անձանց դեմ նույնիսկ թշնամանք հրահրող հասարակության տարբեր խմբերի բաժանման ու հակադրման միտումը, իսկ որոշ դեպքերում՝ դա արվում է մասնագիտական քննարկումներն ու պաշտոնական իրավական ընթացակարգերն անտեսելու ու հարցադրումներն առավելապես հուզական դիտանկյունից քննարկելու պայմաններում:

Մասնավորապես, դրանք հաճախ արվում են առանց այդ հրապարակումների բովանդակությանը ծանոթ լինելու՝ հիմնվելով վերնագրերի վրա կամ միայն հաշվի առնելով հրապարակման հեղինակի անձը: Հաճախ հաշվի չի էլ առնվում արտահայտվող խոսքի բովանդակությունը կամ դա արվում է միայն կարծիք հայտնողի անձը հաշվի առնելով: Մինչդեռ, այն վտանգավոր է երկրում համերաշխության ու հանդուրժողականության և ի վերջո մարդու իրավունքների համակարգի տեսանկյունից:

Ավելին, մարդիկ շատ հաճախ տեղեկացված չեն կարծիքի արտահայտման իրավունքի և ատելության խոսքի սահմանագծի մասին, ինչն ավելի է դժվարացնում դրա դեմ պայքարը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է լայնամասշտաբ արշավներ իրականացնել ատելության խոսքի, դրա բացասական ազդեցության և այլակարծության նկատմամբ հարգանքի անհրաժեշտության վերաբերյալ:*

<sup>164</sup> Մանրամասն տե՛ս «Ապրիլյան հավաքների ընթացքում արտահայտվելու ազատության չարաշահումները սոցիալական ցանցերում: Ատելության խոսք և անհանդուրժողականություն» բաժնում

## **ԲԱԺԻՆ 8. ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ**

Քրեական արդարադատության ոլորտում մարդու իրավունքների և ազատությունների ապահովման խնդիրները քննարկելուց առաջ անհրաժեշտ է արձանագրել, որ 2018 թվականի ընթացքում դատական ու իրավապահ համակարգի մարմինների՝ Դատախազության, Հատուկ քննչական ծառայության, Քննչական կոմիտեի, Ազգային անվտանգության ծառայության, Ոստիկանության, Արդարադատության նախարարության, ինչպես նաև Դատական դեպարտամենտի հետ համագործակցությունն ընդհանուր առմամբ արդյունավետ է եղել: Նշված մարմինները մշտապես համագործակցել են Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ թե՛ անհատական բողոքների շրջանակներում, թե՛ համակարգային խնդիրների լուծման ուղղությամբ:

Կարևոր է հատկապես այն, որ բազմաթիվ խնդիրներ լուծում են ստացել անհապաղ՝ իրավասու պետական մարմնի ներկայացուցչի հետ բանավոր քննարկմամբ: Նման համագործակցությամբ լուծում են ստացել, օրինակ, «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցի վերացած լինելու դեպքում սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՄԷԿՏ) համակարգի կիրառմամբ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի ոչ համաչափ սահմանափակման կապակցությամբ առաջացած խնդիրները: Այդ բովանդակությամբ հարցերն անհապաղ լուծումներ են ստացել ՀՀ դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի և Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության հետ համագործակցության շրջանակներում:

Հարկ է ընդգծել նաև, որ ոլորտի պատասխանատու պետական մարմինների կողմից լիարժեք ծավալով տեղեկություններ են տրամադրվել ինչպես գրավոր ընթացակարգով քննարկված անհատական բողոքների վերաբերյալ, այնպես էլ 2018 թվականի տարեկան ամփոփիչ հաղորդման համար Մարդու իրավունքների պաշտպանի կողմից առաջադրված հարցադրումների կապակցությամբ:

### ***1. Անմեղության կանխավարկածի պահպանումը հանցավորության դեմ պայքարում***

Հանցավորության դեմ պայքարը պետության կարևորագույն հանձնառությունն է: Այն կոչված է ապահովել մարդու իրավունքներն ու ազատությունները հանցավոր ոտնձգություններից: Հենց այդ պայքարի արդյունավետությամբ է մեծապես պայմանավորված երկրում իրավակարգի հաստատումը, սոցիալական արդարության վերականգնումն ու, ի վերջո, իրավունքի գերակայության արմատավորումը:

Իրավական պետության գաղափարը պահանջում է այդ գործընթացում իրավական սկզբունքների և ընթացակարգերի պահպանում, որոնցից շեղումը չի կարող արդարացվել անգամ հանցավորության դեմ պայքարի իրավաչափ նպատակով: Ասվածը, նախևառաջ նշանակում է, որ պետության, իսկ կոնկրետ դեպքում՝ իրավապահ մարմինների ու դատարանների ակտերը, այդ թվում՝ գործողությունները, պետք է խարսխված լինեն մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները հարգելու սահմանադրական պահանջի վրա:

Քրեական գործով ցանկացած ընթացակարգի անկյունաքարային սկզբունք է անմեղության կանխավարկածի հարգումը: Անմեղության կանխավարկածը՝ որպես արդար դատաքննության իրավունքի կարևորագույն բաղադրիչ, ենթադրում է, որ հանրային իշխանության մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են ձեռնպահ մնալ անձի մեղավորության մասին կանխակալ ու վաղաժամ գնահատականներից՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտի բացակայության պայմաններում:

Միջազգային իրավաբանությունը, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը մեծ պատասխանատվություն է դնում պետությունների վրա նման իրավիճակներ թույլ չտալու համար: Անգամ, եթե պետությունն ինքը չի նպաստել հասարակական կանխակալ ընկալումների, դրա արդյունքում արդարադատություն իրականացնող և դրանց օժանդակող մարմինների նկատմամբ ճնշման ձևավորմանը, միևնույնն է՝ այդպիսի իրավիճակի դեպքում պարտավոր է համապատասխան մարմինների միջոցով գործադրել առավելագույն ջանքեր իրավիճակը մեղմելու, դատական իշխանության անկախության բարձր արժեքի երաշխավորումը, ինչպես նաև այդ գործընթացի մասնակիցների մասնագիտական աշխատանքն ապահովելու ուղղությամբ:

Անմեղության կանխավարկածի չպահպանումը կարող է խաթարել արդարադատության ողջ գործընթացը, ինչպես նաև ձևավորել անձի մեղավորության՝ որպես հաստատված փաստի մասին հասարակական ընկալում կամ նպաստել դրան: Դա էլ իր հերթին առաջացնում է այլ հետևանքներ. բարդություններ փաստաբանի աշխատանքում, քանի որ որոշ դեպքերում նրանց հանրությունը սկսում է ընկալել՝ որպես «հանցագործների պաշտպաններ», բարդություններ լրագրողի աշխատանքում, ճնշում դատարանի նկատմամբ և այլն: Օրինակ՝ փաստաբանների հետ կապված՝ Պաշտպանը բազմիցս է հայտարարել, որ չի կարելի փաստաբանին նույնացնել իր վստահորդի հետ և որ փաստաբանի մասնագիտական աշխատանքը չի կարելի ընկալել՝ որպես անպատժելիության խրախուսում կամ հանցավորության պաշտպանություն: Փաստաբանը պարզապես կատարում է իր մասնագիտական պարտքը՝ նպատակ ունենալով պաշտպանել ենթադրյալ հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձին հնարավոր ապօրինի հետապնդումից կամ ազատագրելուց: Ուստի, անմեղության կանխավարկածի սկզբունքը պետք է անշեղորեն պահպանվի ցանկացած քրեական գործով վարույթի ընթացքում՝ անկախ նրանից, թե ինչ հանցավոր արարքի մասին է խոսքը, հասարակության շրջանում ինչ վարկ ունի անձը և այլն:

Մյուս կողմից, հանրային իշխանությունը պետք է գործի թափանցիկության և հաշվետվողականության պահանջների պահպանմամբ: Այս առումով, ողջունելի է այն միտումը, որ իրավապահ մարմիններն առավել մեծ ծավալի տեղեկություններ են տրամադրում հանրությանը իրենց կողմից քննվող գործերի ու դրանց ընթացքի մասին: Հատկապես կարևոր է օբյեկտիվ տվյալներ պարունակող նյութերի տարածումը (օրինակ՝ տեսանյութեր, որոնք հասարակությանը հնարավորություն են տալիս պատկերացում ձևավորել կոնկրետ հանցավոր արարքով պատճառված վնասի չափի կամ բնույթի մասին և այլն): Այսպիսի պրակտիկան ուղղակիորեն բխում է այդ գործերի նկատմամբ հանրային վստահության ապահովման հիմնարար գաղափարից: Ասվածը, սակայն, չի նշանակում, որ կատարված դատավարական գործողություններն ու արդյունքները կարող են ներկայացվել՝ դրանց անհերքելիության և ապացուցված փաստեր լինելու հաստատմամբ: Սա լրջորեն կարող է խաթարել հիմնարար իրավական պահանջն այն մասին, որ որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, և դրանով հանդերձ՝ ապացույցների գնահատման քրեադատավարական սկզբունքները:

Իրավապահ մարմինների կողմից տարածվող իրազեկող տեսանյութերում կամ թեկուզ հենց տեքստային հայտարարություններում հաճախ են լինում վիճահարույց, այդ թվում՝ մինչև դատավճռի կայացումը անձին՝ որպես հաստատված փաստ հանցանքի կատարում վերագրող, անմեղության կանխավարկածը խախտող ձևակերպումներ: Ավելին, 2018 թվականին արձանագրվեցին հանցավորության դեմ պայքարի ոլորտի պատասխանատու պաշտոնատար անձանց կողմից այնպիսի հայտարարություններ, որոնք հասարակությունում ստեղծում էին կոնկրետ քրեական հետապնդման ենթարկվող անձի մեղավորության մասին կանխակալ պատկերացումներ: Համատարած խնդրահարույց պրակտիկա են գրեթե յուրաքանչյուր հայտարարության վերջում ծանուցման ձևով անմեղության կանխավարկածի մասին

**մեջբերումները:** Մինչդեռ, ակնհայտ է, երբ հայտարարության տեքստն ինքնին պարունակում է անմեղության կանխավարկածը խախտող ձևակերպումներ, այդ ծանուցումները պարզապես կրում են ձևական բնույթ և չեն ծառայում նպատակին:

Այսպես, Պաշտպանին դիմել է փաստաբան՝ նշելով, որ չնայած ՀՀ ոստիկանության լրատվական ծառայության հաղորդագրությունը տարածելու օրվա դրությամբ իր պաշտպանյալը նույնիսկ կասկածյալի կարգավիճակ չի ունեցել, և նրա մասնակցությամբ քննչական որևէ գործողություն կատարված չի եղել, այնուամենայնիվ հաղորդմամբ ուղղակիորեն մեղադրվել է հանցագործության կատարման մեջ: Նշվածի կապակցությամբ Պաշտպանը պարզաբանումներ է պահանջել Ոստիկանությունից, միաժամանակ առաջարկելով քննարկել տեսանյութը վերախմբագրելու կամ Ոստիկանության պաշտոնական կայքէջից հեռացնելու հարցը:

Ի պատասխան՝ Ոստիկանությունը պարզաբանել է, որ անմեղության կանխավարկածի մասին իրազեկումը կատարվում է «վազող տողի» միջոցով, հավաստիացնելով, որ եթե ապագայում տեսանյութում ներկայացված նախնական տվյալները չհաստատվեն օրինական ուժի մեջ մտած դատավճռով, ապա Ոստիկանությունը հանդես կգա համապատասխան հայտարարությամբ:

Իհարկե, ողջունելի է հրապարակված տեղեկությունները իրավական համապատասխան ընթացակարգով ստուգվելուց հետո, դրա մասին օրինական ուժ ստացած որոշման հաշվառմամբ կրկին հայտարարությամբ հանդես գալու Ոստիկանության պատրաստակամությունը, այնուամենայնիվ պետք է արձանագրել, որ անմեղության կանխավարկածի վերաբերյալ օրենսդրական դրույթի մեխանիկական վերարտադրումից զատ պետք է լինեն լրացուցիչ չափանիշներ, որոնցով պետական իրավասու բոլոր մարմինները, այդ թվում՝ Ոստիկանությունը, առաջնորդվեն ենթադրյալ հանցանք կատարած անձանց վերաբերյալ տվյալներ հրապարակելիս:

Հարկ է նկատել, որ անմեղության կանխավարկածի սկզբունքը պետք է խստորեն պահպանվի ոչ միայն Ոստիկանության կամ դատարանի, այլև պետական մյուս բոլոր մարմինների կողմից: Սա նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայուն իրավաբանության հրամայականն է:

Այսպես, Ալենտ դե Ռիբեմոնն ընդդեմ Ֆրանսիայի գործով Եվրոպական դատարանը եկել է այն հետևության, որ խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասը (Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան): Տվյալ գործով Ֆրանսիայի պառլամենտի պատգամավորի սպանության քննության վերաբերյալ հասարակությանը տեղեկություններ տալու նպատակով հրավիրված մամլո ասուլիսի ընթացքում Ֆրանսիայի իրավապահ մարմնի ներկայացուցիչներից մեկը հայտարարել էր, որ տվյալ անձը հանցակցել է սպանությանը<sup>165</sup>: Չնայած դրան՝ Ֆրանսիայի Կառավարությունը Եվրոպական դատարանում պնդել էր, որ տվյալ հայտարարությունը վնաս չի հասցրել անձի անմեղության կանխավարկածի իրավունքին, քանի որ այն կրել է տեղեկատվական բնույթ և չի կաշկանդել դատարանին, ավելին՝ բոլոր պնդումները կարող էին հերքվել հետագա քննության ընթացքում:

Եվրոպական դատարանը, սակայն, չի համաձայնել նման մեկնաբանմանը, քանի որ, Դատարանի դիրքորոշմամբ, բարձրաստիճան պաշտոնատար անձինք առանց որևէ պարզաբանման կամ ենթադրության համոզել են հասարակությանը հավատալ, որ դիմողը մեղավոր է, չնայած նրան, որ դատարանի կողմից գործի փաստական հանգամանքները դեռ հետազոտված չեն եղել: Տվյալ գործով Եվրոպական դատարանը հաստատել է, որ

<sup>165</sup> St' u Ալենտ դե Ռիբեմոնն ընդդեմ Ֆրանսիայի (Allenet de Ribemont v. France) գործով 1995 թվականի փետրվարի 10-ի վճիռը, գանգատ թիվ 15175/89, կետեր 36-37:

պաշտոնատար անձանց իրավունք է տրված հանրությանը տեղեկացնելու քննության ընթացքի մասին, սակայն միշտ անհրաժեշտ է նշել, որ այս կամ այն անձը, ճիշտ է, կասկածվում կամ մեղադրվում է հանցագործության կատարման մեջ, բայց նրա մասնակցությունը հանցագործության կատարմանը պետք է հաստատի դատարանը: Այդ պարագայում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Կոնվենցիայի խախտում չի տեսնում:

Հատկանշական է, որ վերը նշված դիրքորոշմանը հանգելիս Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննարկել է անմեղության կանխավարկածի ու արտահայտվելու ազատության հարաբերակցությունը, նշելով, որ անմեղության կանխավարկածի պահպանման սկզբունքը չի կարող խոչընդոտ հանդիսանալ իշխանությունների համար հանրությանը քննվող քրեական գործերի մասին տեղեկություններ տրամադրելու համար, այնուամենայնիվ իշխանությունները դա պետք է անեն զուսպ և նրբանկատորեն, ինչպես որ պահանջում է անմեղության կանխավարկածի նկատմամբ ունեցած հարգանքը:

Ընդ որում, Եվրոպական դատարանի որոշումից հետևում է, որ ոստիկանության, ինչպես նաև մյուս գերատեսչությունների պաշտոնատար անձանց կողմից զանգվածային լրատվության միջոցներում արվող հայտարարությունները, որոնցում մինչև դատական քննությունը պնդում են որոշակի անձի հանցագործ լինելու մասին, համարվում է անմեղության կանխավարկածի խախտում: Եվրոպական դատարանն առանձին շեշտել է, որ անմեղության կանխավարկածը կարող է խախտվել ոչ միայն դատարանի կամ դատավորի, այլև պաշտոնատար այլ անձանց կողմից:

Քննարկման է արժանի նաև այն հարցը, թե արդյոք անձի մեղավորության մասին զանգվածային լրատվության միջոցների հրապարակումները խախտում են անմեղության կանխավարկածի սկզբունքը, թե՛ ոչ: Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության որոշմամբ Եվրոպական դատարանը եկել այն եզրահանգման, որ «Հանձնաժողովը նաև հնարավոր համարեց, որ մեղադրյալի դեմ որոշ անբարենպաստ հրապարակումներ, որ գրվում են մինչև դատական քննությունը, օրինակ՝ ի դեմս մամուլում անողոք արշավի, վնասում են անմեղության կանխավարկածի սկզբունքը: Նման դեպքերում անհրաժեշտ է պարզել, թե արդյոք զանգվածային լրատվության միջոցների նմանօրինակ արշավներն ազդել են դատավորների կամ երդվյալների վրա այն աստիճան, որ նրանք մոռացել են անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանության մասին»: Փաստորեն, ըստ Եվրոպական դատարանի՝ մեղադրյալի վերաբերյալ անբարենպաստ հրապարակումները հնարավոր է, որ անմեղության կանխավարկածի խախտման հանգեցնեն, եթե դրանք որևէ կերպ ազդեն դատարանի կարծիքի վրա:

Հասարակության իրազեկվածության և հավաստի տեղեկություններ ստանալու իրավունքի ապահովման տեսանկյունից կարևորագույն առաքելություն ունեն լրագրողները, ովքեր իրենց մասնագիտական աշխատանքով ապահովում են հասարակության մոտ պատկերացումների ձևավորումը երկրում ընթացող գործընթացների վերաբերյալ և այդպիսով քաղաքացիական վերահսկողության առկայությունը: Լրագրողներն ապահովում են պաշտոնական տեղեկատվության փոխանցումը հանրությանը և այդ կերպ դառնում հանրային կարծիքի ձևավորմանը նպաստող կարևորագույն օղակ՝ ապահովելով պետության և հասարակության միջև ինֆորմացիոն պատշաճ հաղորդակցությունը:

Դրա հետ մեկտեղ, լրագրողի աշխատանքը պետք է հիմնված լինի իրավունքի գերակայության ու քրեական վարույթին ներգրավված անձի իրավունքների նկատմամբ հարգանքի վրա:

Այդ թվում Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրում է, որ *պետական իրավասու մարմինները պետք է առավել ուշադիր լինեն անձի մեղավորության վերաբերյալ գնահատականներում՝ բացառելով մինչև*

իրավասու դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայությունը նրա մեղավորության վերաբերյալ որևէ կանխակալ վերաբերմունք: Ասվածը հատկապես կարևորվում է պետական մարմինների, մասնավորապես իրավապահ առաքելություն իրականացնող մարմնի, պաշտոնական լրատվական միջոցներով որոշակի գնահատականի մասով:

Անհրաժեշտ է արձանագրել նաև, որ անմեղության կանխավարկածի օրենսդրական ձևակերպումը «վազող տողի» միջոցով հրապարակման վերջում տեղադրելը դեռևս բավարար երաշխիք չէ անմեղության կանխավարկածի պահպանման տեսանկյունից: Ուստի անհրաժեշտ է հետամուտ լինել, որ հրապարակումների բովանդակությունը, դրանում առկա ձևակերպումները լինեն այնպիսին, որ ընթերցողը հստակ գիտակցի, որ դրանք զուտ նախնական տեղեկություններ են և ենթակա են քննարկման դատարանի կողմից:

## **2. Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալների օգտագործումը և դրանց չարաշահման վտանգը քրեական դատավարությունում**

2018 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ այն մասին, որ անձի իրավունքի սահմանափակում ենթադրող դատավարական գործողություններն ու որոշումները կայացվել են բացառապես օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալների հիման վրա: Խոսքը, հատկապես վերաբերում է մեղադրյալի գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ կայացվող որոշումներին:

Մեկ այլ բողոքով անձը տեղեկացրել է, որ կասկածյալի դատավարական կարգավիճակ է ձեռք բերել միայն օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալների հիման վրա:

Նույնաբովանդակ բողոքներ Պաշտպանի ներկայացուցիչները ստանում են հատկապես ազատությունից զրկված անձանց հետ առանձնազրույցների ընթացքում:

Հարկ է նկատել, որ 2018 թվականին արձանագրվել է Պաշտպանին հասցեագրված նման բողոքների աճ: Ստացված բողոքների կապակցությամբ Պաշտպանը բարձրացրել է քրեական վարույթն իրականացնող և Դատախազության՝ որպես վարույթի նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինների կողմից ստուգելու հարց՝ արդյոք օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ձեռք բերված տվյալները ստուգվել են Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և արդյոք այդ տվյալից զատ քրեական գործի նյութերում առկա են եղել նշված տեղեկությունները հիմնավորող այլ նյութեր:

Հաշվի առնելով օպերատիվ-հետախուզական գործունեության առանձնահատկությունները, դրանց արդյունքում ստացված տվյալների կարևորությունն ու չարաշահման հնարավոր վտանգները՝ սույն հաղորդմամբ անդրադարձ է կատարվել նաև օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալների օգտագործման խնդիրներին:

Դատախազությունը պարզաբանել է, որ միջոցներ է ձեռնարկում միայն օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ստացված տվյալների հիման անձի իրավունքների սահմանափակում ենթադրող դատավարական որոշումների կայացումը բացառելու ուղղությամբ: Որպես օրինակ՝ նշվել է, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին աստիանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի կողմից միայն օպերատիվ տեղեկությունների հիման վրա բնակարանի խուզարկությունը թույլատրելու վերաբերյալ որոշում կայացնելու փաստի առթիվ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազը հաղորդում է ներկայացրել Դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովին, հաղորդման արդյունքներով հարուցվել է



կարգապահական վարույթ, այնուհետև՝ կարճվել՝ դատավորի արարքում դատավարական իրավունքի նորմի կոպիտ խախտման բացակայության պատճառաբանությամբ: Ըստ տեղեկությունների՝ Գլխավոր դատախազի կողմից նույն փաստի առթիվ Արդարադատության նախարարին կրկին հաղորդում է ներկայացվել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ, որի հիման վրա դատավորի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ:

Պաշտպանի դիտարկմամբ՝ օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալների օգտագործման ու դրանով պայմանավորված անձի իրավունքների երաշխավորման խնդիրը պայմանավորված է հենց այդ տվյալների գաղտնիությամբ: Իսկ վարույթն իրականացնող մարմիններն, օգտվելով առիթից, որ դրանք գաղտնի են անձի համար, ուստի վերջինս չունի նաև դրանից պաշտպանվելու արդյունավետ միջոց, չարաշահում են այդ տվյալներն ու օրենսդրական ընդհանրական ձևակերպումներով կայացնում են որոշումներ, որոնք հանգեցնում են անձի իրավունքի ոչ համաչափ սահմանափակման:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով որպես օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման սկզբունք, ի թիվս այլնի, նախատեսված է նաև գործունեության բացահայտ և գաղտնի մեթոդների ու միջոցների համակցության, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցների, աշխատանքի ձևերի, մեթոդների, ուժերի և միջոցների գաղտնապահության սկզբունքները: Բացի այդ, նույն օրենքի 4-րդ հոդվածի ուժով՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների ուժերի, միջոցների ու աղբյուրների, մեթոդների, պլանների, այդ միջոցառումների արդյունքների, դրանց ֆինանսավորման, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցների, ինչպես նաև այդ մարմինների հետ գաղտնիության հիման վրա համագործակցող և համագործակցած անձանց մասին տեղեկությունները հանդիսանում են պետական գաղտնիք:

Գործնականում ստացվում են իրավիճակներ, երբ վարույթն իրականացնող մարմնի գործողության հիմքում դրվում է բացառապես օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալը: Նման պրակտիկան, իհարկե, վիճահարույց է մարդու իրավունքների տեսանկյունից, քանի որ փաստորեն օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալի ձեռքբերման ընթացքը, դրա արդյունքը գաղտնի է մնում անձի համար, ում իրավունքի սահմանափակում ենթադրող որոշում է կայացվում:

Վարույթն իրականացնող մարմինը պետք է համակողմանիորեն գնահատի օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ստացված տվյալն ու որոշի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում միայն այդ տվյալի հիման վրա քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարելու կամ որոշում կայացնելու իրավաչափությունը:

Թեև օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ստացված տվյալի գնահատման և դրանով պայմանավորված դրանց օգտագործման թույլատրելիության կանոններ օրենսդրությամբ նախատեսված չեն, սակայն այդ հարցը մանրամասն քննարկման առարկա է դարձվել ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշմամբ<sup>166</sup>: Վկայակոչված որոշմամբ հարցը քննարկվել է օպերատիվ-հետախուզական տվյալի հիման վրա բնակարանի խուզարկության համար տրված թույլտվության իրավաչափության տեսանկյունից:

<sup>166</sup> Տե՛ս Մեպուհ Թադևոսյանի և Սիրուն Նաչարյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵՇԴ/0073/07/15 գործով կայացված որոշումը:

Վճռաբեկ դատարանը որոշմամբ նախ արձանագրել է, որ այդ տվյալները ապացույցների նկատմամբ ստորադաս բնույթ ունեն, սակայն որոշ դեպքերում անփոխարինելի և եզակի տվյալներ կարող են պարունակել որոշակի բնակարանում գործի համար նշանակություն ունեցող առարկաների կամ անձանց գտնվելու վերաբերյալ, հետևաբար, ըստ Վճռաբեկ դատարանի, օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալները վարույթն իրականացնող մարմնի կողմից անտեսելն անթույլատրելի է:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օպերատիվ-հետախուզական գործունեության առանձնահատկություններով պայմանավորված՝ մի շարք դեպքերում վարույթն իրականացնող մարմինը զրկված է գնահատելու օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ձեռք բերված տվյալները, հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ստացված տվյալը հնարավոր է գնահատման ենթարկել, այն կարող է հանդես գալ որպես խուզարկության կատարման ինքնուրույն հիմք:

Վճռաբեկ դատարանն ավելի է կոնկրետացրել իր դիրքորոշումը՝ առանձնացնելով օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ստացված տվյալների գնահատման հստակ չափորոշիչներ: Այսպես, Վճռաբեկ դատարանի դիրքորոշմամբ՝ տվյալները գնահատելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է հաշվի առնի միջոցառման՝

- կոնկրետ տեսակին օրենքով առաջադրվող պահանջները,
- արդյունքների ամրագրման եղանակը,
- աղբյուրի՝ օրենքով սահմանված կարգով բացահայտման հանգամանքը և այլն:

Այն դեպքում, երբ օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալի գնահատումն անհնար է, այն ինքնին խուզարկության հիմք չի կարող հանդիսանալ, սակայն այլ տվյալների (այդ թվում՝ օպերատիվ-քննչական իրադրության) հետ համակցությամբ կարող է հաշվի առնվել խուզարկության կատարման անհրաժեշտության հարցը լուծելիս, հատկապես քննության վաղ փուլերում, երբ համապատասխան ապացույցներ դեռ ձեռք չեն բերվել: Ի հավելումն, անհրաժեշտ է ընդգծել, որ Լագուտինն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանն արձանագրել է արդար դատաքննության իրավունքի խախտում այն բանի հաշվառմամբ, որ բոլոր դիմումատուների գործերով ազգային դատարանները ոչ մի քայլ չեն ձեռնարկել օպերատիվ տվյալների բովանդակությունը ստուգելու համար<sup>167</sup>:

Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ դիրքորոշումը համահունչ է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանությանը: Այսպես, Ռատուշնան ընդդեմ Ուկրաինայի գործով Եվրոպական դատարանը հաստատել է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված տվյալները բավարար են եղել կասկածը հաստատված համարելու, դրանով պայմանավորված՝ քննչական գործողություն կատարելու համար<sup>168</sup>:

Չնայած նրան, որ Վճռաբեկ դատարանը վերոնշյալ դիրքորոշումներին հանգել է բնակարանի խուզարկության իրավաչափության համատեքստում, սակայն, ըստ էության Դատարանի դիրքորոշումներն ընդհանրական բնույթ ունեն և ենթակա են կիրառման օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալի հաշվառմամբ անձի իրավունքի սահմանափակում ենթադրող քննչական կամ այլ դատավարական գործողություններ կատարելիս և դատավարական որոշումներ կայացնելիս:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս օպերատիվ-հետախուզական գործունեության

<sup>167</sup> Տե՛ս Լագուտինն ընդդեմ Ռուսաստանի (Lagutin and others v. Russia) գործով 2014 թվականի ապրիլի 24-ի վճիռ, գանգատներ թիվ 6228/09, 19123/09, 19678/07, 52340/08, 7451/09, կետեր 124-125:

<sup>168</sup> Տե՛ս Ռատուշնան ընդդեմ Ուկրաինայի (Ratushna v. Ukraine) գործով 2010 թվականի դեկտեմբերի 2-ի վճիռ, գանգատ թիվ 17318/06, կետեր 76-77, 80:

արդյունքում ստացված տվյալը դատարանի համար ենթակա է բացահայտման: Ի հակառակ դրան՝ վարույթն իրականացնող մարմնի համար դա չի կարող բացահայտվել: Այլ խոսքով, վարույթն իրականացնողի համար, ի տարբերություն դատարանի, օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալը բացահայտված չէ, ուստի այս պարագայում մարդու իրավունքի ապահովման տեսանկյունից գործ ունենք երաշխիքների ավելի ցածր շեմի հետ: Հենց սրանով է պայմանավորված Պաշտպանի դիրքորոշումն առ այն, որ օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալի բացահայտված չլինելու դեպքում է հատկապես անհրաժեշտ այն համադրել վարույթում առկա այլ փաստական տվյալների հետ:

*Վերոնշյալի հաշվառմամբ Պաշտպանն ընդգծում է, որ գործնականում առկա է օպերատիվ-հետախուզական տվյալների չարաշահման վտանգավոր միտում: Նշվածի հաշվառմամբ անհրաժեշտ է քրեական վարույթի ընթացքում օպերատիվ-հետախուզական տվյալներն օգտագործելիս դրանք համադրել ձեռք բերված այլ փաստական հանգամանքների, փաստական տվյալների հետ կամ դրանք բացառապես օգտագործել Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ստուգողական ընթացակարգերն ապահովելուց հետո:*

### **3. Քրեական գործի շրջանակներում մեղադրյալին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա դրվող կալանքի պրակտիկան**

2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված քրեական գործերի նախնական քննությանն առնչվող բողոքների մի մասը վերաբերել է նախաքննության ընթացքում մեղադրյալին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա դրվող կալանքին: Օրինակ՝ բողոքներից մեկով մեղադրյալը հայտնել է, որ կալանք է դրվել իրեն պատկանող ողջ գույքի և դրամական միջոցների վրա, չնայած նրան, որ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառված քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա գույքային վնասի չափն անհամեմատ ավելի փոքր է:

Բողոքներից մեկով տեղեկություններ են ստացվել, որ քրեական վարույթի շրջանակներում կալանք է դրվել ընդհուպ մինչև մեղադրյալի կենսաթոշակային հաշվեհամարի վրա:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածների վերլուծությունից ակնհայտ է, որ կանխարգելիչ բնույթ կրող քրեադատավարական հարկադրանքի այս միջոցը կոչված է սեփականության (կամ այլ գույքային) իրավունքների սահմանափակման միջոցով ապահովելու՝

1. քաղաքացիական հայցը,
2. գույքի հնարավոր բռնագրավումը,
3. դատական ծախսերը:

Անդրադառնալով քննարկվող քրեադատավարական ինստիտուտին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սեփականություն հանդիսացող գույքն իր հայեցողությամբ տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու՝ անձի սահմանադրական իրավունքը սահմանափակող քրեադատավարական հարկադրանքի այս միջոցի իրավաչափ կիրառման համար վարույթն իրականացնող մարմինն ընդհանուր շահի և անհատի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության պահանջների միջև պարտավոր է ապահովել արդարացի հավասարակշռություն<sup>169</sup>: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն իր այս

<sup>169</sup> Տե՛ս Ալլա Մեկոյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0185/11/11 քրեական գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի որոշում:

դիրքորոշումը հիմնավորել է հղում կատարելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին:

Մասնավորապես, Բորժոնովն ընդդեմ Ռուսաստանի գործով կայացված վճռում, մեկնաբանելով Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի դրույթները, Եվրոպական դատարանը նշել է, որ պետք է լինի ողջամիտ հավասարակշռություն պետության կողմից կիրառվող, այդ թվում՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը վերահսկելու հետ կապված միջոցների և այդ միջոցների կիրառման արդյունքում ակնկալվող նպատակների միջև: Այս պահանջն արտահայտվում է «արդարացի հավասարակշռություն» ձևակերպմամբ, որը պետք է առկա լինի հասարակության ընդհանուր շահի պահանջների և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության միջև: Եվրոպական դատարանն ընդգծել է, որ մեղադրյալի գույքի վրա կալանք դնելն ինքնին ենթակա չէ քննադատության՝ հաշվի առնելով, մասնավորապես, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը, սակայն պետք է հաշվի առնել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից օգտվելու սահմանափակմամբ անձի վրա չափազանց ծանր բեռ դնելու ռիսկը և, հետևաբար, պետք է ապահովել համապատասխան դատավարական երաշխիքներ՝ համոզվելու համար, որ անձի սեփականության իրավունքի վրա առկա ազդեցությունը կամայական կամ ոչ կանխատեսելի չէ<sup>170</sup>:

Չնայած նշված «արդարացի հավասարակշռության» պահանջին, վարույթն իրականացնող մարմինների կողմից երբեմն արգելանք է կիրառվում մեղադրյալին պատկանող ամբողջ գույքի վրա: Նման պրակտիկան, իհարկե, անընդունելի է՝ հատկապես, որ Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրմամբ հաճախ պարզվում է, որ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառված քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա գույքային վնասի չափն անհամեմատ ավելի փոքր է:

Սա ոչ իրավաչափորեն անբարենպաստ հետևանքներ է առաջացնում մեղադրյալի համար, քան իրականում անհրաժեշտ է քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը կամ դատական ծախսերն ապահովելու համար:

Ի պատասխան ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հարցումներին՝ ՀՀ դատախազությունը պարզաբանել է, որ մեղադրյալին պատկանող գույքի արժեքը որոշվում է դատաապրանքագիտական փորձաքննության նշանակմամբ և կոնկրետ գործի հանգամանքներով պայմանավորված՝ հաշվի է առնվում գույքի կազմը, արժեքը, պատճառված վնասի չափը, դատական ծախսերը, գույքի ընդհանուր զանգվածում մեղադրյալի մասնաբաժինը, ներկայացված քաղաքացիական հայցի հայցագնի չափը: Դատախազության պարզաբանմամբ՝ 2018 թվականի ընթացքում մեղադրյալի գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի 19 որոշում է բողոքարկվել, որոնցից 2 որոշում է վերացվել դատախազի կողմից:

Ի գիտություն ընդունելով քրեական վարույթի նկատմամբ հսկողության հանձնառություն ունեցող մարմնի պարզաբանումները՝ *Պաշտպանն ընդգծում է, որ անհրաժեշտ է միասնական պրակտիկայի ապահովման նպատակով խստորեն հետևել ՀՀ վճռաբեկ դատարանի՝ վերը նշված որոշմամբ ամրագրված դիրքորոշումներին և բոլոր հնարավոր միջոցների կիրառմամբ բացառել մեղադրյալին պատկանող ամբողջ գույքի վրա անհամաչափ կալանք դնելու՝ պրակտիկայում դեռևս շարունակվող դեպքերը:*

Ինչպես վերը նշվեց, Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ մեղադրյալի կենսաթոշակային հաշվեհամարի վրա կալանք դնելու դեպքերի վերաբերյալ: Այդ

<sup>170</sup> St' u Բորժոնովն ընդդեմ Ռուսաստանի (Borzhonov v. Russia) գործով 2009 թվականի հունվարի 22-ի վճիռը, զանգատ թիվ 18274/04, կետեր 59-60:

կապակցությամբ անհրաժեշտ է քննարկել այն հարցը, թե կալանքի տակ գտնվող կենսաթոշակային հաշվեհամարից ինչ չափով է հնարավոր հետագայում բռնագանձում իրականացնել:

Այսպես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի ուժով քրեական գործերով դատարանի դատավճիռները և որոշումները՝ տուգանքների, գույքի բռնագրավման և գույքային բռնագանձումների մասով ենթակա են հարկադիր կատարման Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից: Նույն օրենքի 58-րդ հոդվածի 3.1-րդ մասի համաձայն՝ կատարողական թերթի կատարման ընթացքում պարտապանի պետական կենսաթոշակից կարող է պահվել երեսուն տոկոսից ոչ ավելի՝ մինչև բռնագանձվող գումարների լրիվ մարումը:

Օրենսդրական այս կարգավորումներից բխում է, որ անկախ նրանից, թե քրեական գործի մինչդատական վարույթում մեղադրյալի կենսաթոշակի վրա ինչ չափով է կալանք դրվել, հետագայում՝ մեղադրական դատավճռով անձի վրա ֆինանսական պարտավորություններ դրվելու դեպքում դրանք ենթակա են կատարման կենսաթոշակի երեսուն տոկոսից ոչ ավելի չափով: Ուստի, մեղադրյալի ամբողջ ծավալով պետական կենսաթոշակի վրա կալանքը կարող է առաջ բերել սեփականության իրավունքին ոչ համաչափ միջամտության խնդիր:

Նշվածի հաշվառմամբ Պաշտպանն ընդգծում է, որ մեղադրյալի կենսաթոշակային հաշվեհամարի վրա նախաքննական մարմնի կողմից կալանք դնելու իրավաչափությունը քննարկելիս անհրաժեշտ է ուշադրության արժանացնել վարույթն իրականացնող մարմնի կողմից հետապնդվող նպատակը և այդ նպատակի իրագործման համար նախատեսված օրենսդրական համապատասխան գործիքակազմը: Ուստի կենսաթոշակային հաշվեհամարի վրա ամբողջությամբ կալանք դնելն այն պայմաններում, երբ բռնագանձելիս նույնիսկ հնարավոր չի լինելու դա ամբողջ ծավալով բռնագանձել, առնվազն համահունչ չէ գործող օրենսդրությանը:

Այսպիսով, վերը նշվածի հաշվառմամբ, կարելի է պնդել, որ *անհրաժեշտ է բացառել քրեական գործով վարույթի շրջանակներում այնպիսի գույքի վրա կալանքի կիրառությունը, որն օրենքով ենթակա չէ բռնագանձման կամ կալանքը պետք է դնել այն չափով, որ չափով ենթակա է բռնագանձման:*

#### **4. Մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման գործնական խնդիրներ**

Մարդու իրավունքների պաշտպանին 2018 թվականի ընթացքում հասցեագրվել են նաև բազմաթիվ բողոքներ՝ քրեական գործերի նախաքննության ընթացքում քննչական մարմինների գործողությունների կապակցությամբ:

Այսպես, մի դեպքում անձը բողոք է ներկայացրել այն մասին, որ նախաքննության սկզբում, երբ ինքը դեռևս փաստաբան չի ունեցել, առերեսվել է վկաներից մեկի հետ, սակայն հետագայում վարույթում ներգրավվել է փաստաբան և ցանկություն է հայտնել փաստաբանի ներկայությամբ կրկին առերեսվել, սակայն վարույթն իրականացնող մարմինը մերժել է առերեսման իրականացման վերաբերյալ պաշտպանական կողմի միջնորդությունը:

Նախաքննության ընթացքի կապակցությամբ ներկայացված բողոքների քննությունն ունի որոշակի բարդություն՝ նկատի ունենալով քրեական դատավարության սուբյեկտակազմը և նրանց հստակ իրավունքներն ու պարտականությունները: Այս իմաստով, բնականաբար, Պաշտպանի աշխատակազմում անհատական բողոքները քննարկվում են այնպես, որ քրեական գործի արդյունավետ քննությանը որևէ խոչընդոտ կամ միջամտություն չարվի: Մինևնույն ժամանակ, քաղաքացիները անհատական ընդունելությունների և խորհրդատվությունների ժամանակ Պաշտպանի

ներկայացուցիչներին հաղորդում են այնպիսի տեղեկություններ, որոնք թույլ են տալիս դիտարկել քննչական մարմինների գործողություններում առկա պրակտիկ խնդիրներն ու իրավական դաշտը:

Այսպես, ստացված տեղեկությունների հաշվառմամբ, որոշում է կայացվել հերթական տարեկան հաղորդմամբ անդրադարձ կատարել մեղադրյալի հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) իրավունքի ապահովմանը:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները. (...), դ. հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության (...):»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ եթե մեղադրյալին դատավարության որևէ փուլում հնարավորություն չի տրվել հարցեր ուղղելու իր դեմ ցուցմունք տված անձին, ապա նա զրկվում է արդար դատաքննության իրավունքից<sup>171</sup>:

Անձի դատապարտումը չի կարող ամբողջապես կամ վճռական չափով հիմնվել այնպիսի անձի հայտնած տվյալների վրա, որին հարցեր ուղղելու համարժեք հնարավորություն պաշտպանության կողմը չի ունեցել<sup>172</sup>:

Հակընդդեմ հարցման իրավունքով չապահովված ապացույցը մեղադրական դատավճռի հիմքում դնելու իրավաչափության հարցին անդրադարձել է նաև Վճռաբեկ դատարանը<sup>173</sup>:

Վճռաբեկ դատարանն, ի թիվս այլնի, արձանագրել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը հնարավորություն է ընձեռում իրավակիրառողին մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքն իրացնել նաև նախաքննության փուլում՝ առերեսում քննչական գործողության միջոցով: Ավելին, ըստ Վճռաբեկ դատարանի դիրքորոշման՝ ցուցմունք տալուց հրաժարվելու՝ մեղադրյալի սահմանադրական իրավունքի իրացումն ինքնին չի բացառում առերեսման (հակընդդեմ հարցման) հնարավորությունը<sup>174</sup>:

Ինչ վերաբերում է արդեն դատական վարույթի ընթացքում այդ իրավունքի ապահովմանն, ապա, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հենց Հայաստանի դեմ կայացված վճիռներից մեկում՝ Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի վճռի 42-րդ կետում վկայակոչել է կոնֆրոնտացիայի հիմք հանդիսացող սկզբունքը, որի համաձայն՝ բոլոր ապացույցները, որպես կանոն, պետք է ներկայացվեն մեղադրյալի մասնակցությամբ գործի հրապարակային քննության ընթացքում հակափաստարկ ունենալու հնարավորությամբ:

<sup>171</sup> St' u Ունտերպենտինգերն ընդդեմ Ավստրիայի (Unterpentinger v. Austria) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1986 թվականի նոյեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 9120/80, 31-33-րդ կետեր, Հուլյի Գյունեշն ընդդեմ Թուրքիայի (Hulki Güneş v. Turkey) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2003 թվականի հունիսի 19-ի վճիռը, գանգատ թիվ 28490/95, 53-54-րդ կետեր, Գոսսան ընդդեմ Լեհաստանի (Gossa v. Poland) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2007 թվականի հունվարի 9-ի վճիռը, գանգատ թիվ 47986/99, 54-55-րդ կետեր, Բալսիտե-Լիդեիկյենեն ընդդեմ Լիտվայի (Balsytė-Lideikienė v. Lithuania) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2008 թվականի նոյեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 72596/01, 86-րդ կետ, Չական ընդդեմ Ալբանիայի (Caka v. Albania) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 8-ի վճիռը, գանգատ թիվ 44023/02, 102-րդ կետ, և այլն:

<sup>172</sup> St' u Սադակը և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի (Sadak and others v. Turkey) (թիվ 1) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2001 թվականի հուլիսի 17-ի վճիռը, գանգատներ թիվ 29900/96 և այլն, 65-րդ կետ:

<sup>173</sup> St' u mutatis mutandis Համայակ Զալիկոյի Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԼԴ/0212/01/10 որոշման 22-24-րդ կետերը:

<sup>174</sup> St' u mutatis mutandis Մարիբեկ Վարազդասի Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԱՔԴ/0189/01/12 որոշման 27-28-րդ կետերը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նաև մշակել է մեղադրյալի կոնֆրոնտացիայի իրավունքի խախտումը ստուգելու թեստը: Թեստն ամփոփել է Մեծ պալատի՝ *Al-Khawaja and Tahery v. the United Kingdom* և *Schatschaschwili v. Germany* վճիռներում:

Տվյալ թեստը ներառում է հետևյալ երեք հարցերը.

ա) արդյո՞ք առկա է վկայի բացակայության հարգելի պատճառ,

բ) արդյո՞ք բացակայող վկայի նախկինում տված ցուցմունքը մեղադրյալի դատապարտման համար ունի վճռորոշ նշանակություն կամ բացառապես հիմնված է դրա վրա,

գ) արդյո՞ք առկա են բավարար հակակշռող հանգամանքներ, այդ թվում քրեադատավարական երաշխիքներ, որոնք չստուգված ապացույցի ընդունման արդյունքում կկոնպենսացնեն պաշտպանության բացերը:

Թեստի առաջին հարցի բացասական պատասխանը դեռևս չի կարող բավարար լինել անձի իրավունքի խախտումը ճանաչելու համար: Այս հարցի պատասխանը ենթակա է գնահատման երկրորդ հարցի համատեքստում՝ պարզելու նպատակով, թե մեղադրյալի դատապարտումը վճռորոշ չափով կամ բացառապես հիմնված է եղել այդ ցուցմունքի վրա, թե ոչ: Վկայի բացակայության պատճառը դատաքննության ընթացքում համարվում է «հարգելի», եթե այն, ըստ էության, օբյեկտիվ դիտորդի համար ցույց է տալիս բացակայության պատճառի փաստական կամ իրավական հիմքերը: Այդպիսին կարող է լինել, օրինակ, այդ վկայի վատառողջ լինելը կամ այլ պատճառներ: Միևնույն ժամանակ դատական նիստին չներկայանալու հարգելի պատճառ չի կարող գնահատվել այն պայմաններում, երբ դատարանների կողմից միջոցներ չեն ձեռնարկվել նրա գտնվելու վայրը պարզելու և ներկայությունն ապահովելու ուղղությամբ: Թեստի երկրորդ հարցը վերաբերում է գործով ձեռք բերված ապացույցներին, մասնավորապես, թե տվյալ ցուցմունքը մեղադրյալի դատապարտման համար միակ ապացույցն է, թե ունի վճռորոշ նշանակություն: Երրորդ հարցադրումը վերաբերում է այն հարցին, թե արդյո՞ք պետությունը որևէ այլ եղանակով կարող է հաստատել տվյալ ապացույցի արժանահավատությունը:

*Վերը նշվածի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է առավելագույն ջանքեր գործադրել, այդ թվում՝ մեղադրյալի լռելու պարագայում վերջինիս հակընդդեմ հարցման իրավունքի արդյունավետ իրացման համար: Վերը քննարկված իրավական պահանջները պետք է անվերապահորեն կատարվեն անկախ քրեական գործի բնույթից, ծավալից կամ այլ հանգամանքներից:*

***5. Կալանավորված անձին մերձավոր ազգականների, այդ թվում՝ ընտանիքի անդամների և օրինական ներկայացուցչի հետ տեսակցություններն ու հեռախոսային խոսակցություններն արգելելու պրակտիկան***

2018 թվականի ընթացքում մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ բազմաթիվ բողոքներ են ստացվել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից կալանավորված անձին մերձավոր ազգականների, այդ թվում՝ ընտանիքի անդամների և օրինական ներկայացուցչի հետ տեսակցություններն ու հեռախոսային խոսակցություններն արգելելու մասին:

Այդ բողոքների, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմինների կողմից կայացված որոշումների ուսումնասիրությունները վկայում են, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ կալանավորված անձի տեսակցություններն արգելող որոշումները ոչ միշտ են բավարար չափով պատճառաբանված: Մեծամասամբ վարույթն իրականացնողը բավարարվում է օրենսդրական նորմերի վկայակոչմամբ, և առհասարակ չի կատարվում

համադրում գործի փաստական հանգամանքների, գործով ձեռք բերված փաստական տվյալների հետ: Ինչ վերաբերում է կայացված որոշման վերանայմանը, ապա որոշ դեպքերում քրեական վարույթն իրականացնող մարմինն անհարկի ձգձգում է կամ ընդհանրապես չի քննարկում հիշյալ սահմանափակման շարունակական կիրառման անհրաժեշտության հարցը:

Արտաքին աշխարհի հետ կապ պահպանելու և մերձավոր ազգականների հետ տեսակցելու իրավունքի իրացման օրենսդրական և գործնական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ իրավակիրառ պրակտիկայում առաջ եկող խնդիրները, ի թիվս այլնի, նաև օրենսդրական թերի և ոչ հստակ կարգավորումների արդյունք են:

ՀՀ օրենսդրությունն այս առումով թեև բովանդակում է որոշակի կարգավորումներ, այնուհանդերձ դրանք բավարար չեն իրավունքի իրական երաշխավորման համար: Այսպես, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասը սահմանում է, որ քննության շահերից ելնելով՝ ձերբակալված կամ կալանավորված անձանց տեսակցություններն ու հեռախոսային խոսակցություններն օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, կարող է արգելվել քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ այդ մասին գրավոր իրազեկելով ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ այն չի պարունակում կալանավորված անձի՝ օրինական ներկայացուցչի կամ մերձավոր ազգականների հետ տեսակցության և հեռախոսային խոսակցությունների արգելքի կիրառելիության հստակ չափանիշներ՝ այն կապելով միայն «քննության շահ» գնահատողական և որոշակիության սկզբունքին չհամապատասխանող եզրույթի հետ: Միաժամանակ, հոդվածը չի բովանդակում տեսակցությունների արգելքի պատճառաբանության և հիմնավորվածության, ինչպես նաև որոշման պարբերական վերանայման վերաբերյալ հստակ պահանջներ:

Չնայած դրան, ոլորտը կանոնակարգող միջազգային օրենսդրության ուսումնասիրությունը թույլ է տալիս վեր հանել անձի նկատմամբ արգելքի կիրառման հստակ չափանիշները:

Այսպես, Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի (այսուհետ՝ ԽԿԿ-ն) իրավաբանության համաձայն՝ ազատագրված անձանց համար շատ կարևոր է բավարար շփումն արտաքին աշխարհի հետ: Առաջին հերթին կալանավորված անձը պետք է հնարավորություն ստանա պահպանելու հարաբերություններն իր ընտանիքի և մերձավոր ազգականների հետ: Ղեկավար սկզբունք պետք է լինի՝ արտաքին աշխարհի հետ շփման աջակցությունը: Այդպիսի շփման որևէ սահմանափակում պետք է հիմնավորված լինի միմիայն անվտանգության շահերի ողջամիտ պաշտպանությամբ (...)<sup>175</sup>:

Այս առումով, ԽԿԿ-ն Հայաստանի վերաբերյալ 2011 թվականի զեկույցում նշել է, որ *անհրաժեշտ է ձեռնարկել արդյունավետ քայլեր՝ ապահովելու համար, որ ազատությունից զրկված անձանց՝ տեսակցություններ ունենալու և հեռախոսակապից օգտվելու իրավունքներն անհիմն կերպով չսահմանափակվեն*<sup>176</sup>:

Կալանավորված անձանց ընտանիքի և արտաքին աշխարհի հետ կապն ապահովելու կարևորությունն ընդգծվել է նաև «Եվրոպական բանտային կանոնների մասին» Եվրոպայի

<sup>175</sup>Տե՛ս 1991 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ԽԿԿ-ի գործունեության մասին 2-րդ ընդհանուր հաշվետվության 51-րդ կետը:

<sup>176</sup>Տե՛ս ԽԿԿ-ի զեկույցը 2010 թվականի մայիսի 10-ից 21-ը Հայաստան կատարած այցի վերաբերյալ: Փաստաթուղթ թիվ CPT/Inf (2011) 24, կետ 124-126: Ձեկույցի ամբողջական տեքստը հասանելի է հետևյալ հղումով. <http://www.cpt.coe.int/documents/arm/2011-24-inf-eng.pdf>:



խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2006)2 հանձնարարականի 2-րդ մասի 24.1-րդ կանոնում, ըստ որի՝ *ազատությունից զրկված անձանց պետք է թույլատրվի հնարավորին չափ հաճախ նամակների, հեռախոսակապի կամ հաղորդակցության այլ ձևերով հաղորդակցվել իրենց ընտանիքների, այլ անձանց և արտաքին կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև տեսակցել թվարկված անձանց հետ:*

Դրա հետ մեկտեղ, ըստ 24.2-րդ կանոնի՝ *հաղորդակցությունները և տեսակցությունները կարող են ենթարկվել սահմանափակումների կամ վերահսկման, ելնելով քրեական գործի քննությունը շարունակելու անհրաժեշտությունից՝ կարգուկանոնի պահպանման, ապահովության և անվտանգության, ինչպես նաև հանցագործության կանխարգելման և հանցագործությունից տուժածների պաշտպանության համար: Այնուհանդերձ, այդ սահմանափակումները, ներառյալ՝ դատական մարմինների որոշումներով նախատեսված կոնկրետ սահմանափակումները, պետք է ցանկացած պարագայում թույլատրեն շփումների թույլատրելի նվազագույն մակարդակ:*

Միաժամանակ, 99-րդ կետի համաձայն՝ *ազատությունից զրկված անձինք պետք է ունենան տեսակցություններ և պահպանեն կապն ընտանիքի և այլ անձանց հետ այնպես, ինչպես դա նախատեսված է դատապարտյալների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ առանձին գործով դատական մարմնի կողմից որոշակի ժամանակահատվածով կիրառվել է արգելք:*

Հիշյալ կանոնների մեկնաբանությունների համաձայն՝ այն կանոնները, որոնց հիման վրա կիրառվում է սահմանափակումն ունեն կարևոր նշանակություն: Դրանք պետք է հստակ ձևակերպված լինեն, «համապատասխանեն գործող օրենսդրությանը», ինչպես պահանջում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասը և չպետք է թողնվեն ազատությունից զրկման վայրի վարչակազմի հայեցողությանը<sup>177</sup>: Սահմանափակումները պետք է հասցվեն նվազագույնի և համապատասխանեցվեն անձի անհատական ռիսկայնության աստիճանին: Այսպես, օրինակ՝ նամակագրությունը կարող է ենթարկվել ստուգման (արտաքին գնման)՝ արգելված առարկաների կամ նյութերի փոխանցումը բացառելու նպատակով, սակայն նամակագրության բովանդակությանը ծանոթանալը հնարավոր է միայն այն դեպքում, երբ առկա է հստակ տեղեկություն այն մասին, որ նամակագրության բովանդակությունը հակաիրավական բնույթ է կրում: Այն դեպքում, երբ առկա է անվտանգության սպառնալիք պետք է ոչ թե չտրամադրել տեսակցություններ, այլ ուժեղացնել հսկողություն դրանց անցկացման ընթացքում<sup>178</sup>:

Հանցագործությունների կանխմանն ու իրավախախտների հետ վարվեցողությանը նվիրված ՄԱԿ-ի առաջին կոնգրեսի կողմից 1955 թվականի օգոստոսի 30-ին ընդունված «Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները» նույնպես պարունակում են դրույթներ ազատությունից զրկված անձանց շփումն արտաքին աշխարհի հետ ապահովելու նպատակով: Այսպես, ըստ ստանդարտ կանոնների 37-րդ կետի՝ *ազատությունից զրկված անձանց պետք է հնարավորություն տալ ինչպես գրավոր հաղորդակցության կարգով, այնպես էլ այցելությունների ընթացքում, կանոնավոր ժամանակահատվածների ընդմիջումով և հարկ եղած վերահսկողության տակ կապ պահպանել իրենց ընտանիքների և անբասիր վարկ ունեցող ընկերների հետ:*

<sup>177</sup> St´u Lարիտան ընդդեմ Իտալիայի (Labita v. Italy) գործով 2000 թվականի ապրիլի 6-ի վճիռը, գանգատ թիվ 26772/095

<sup>178</sup> St´u Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Եվրոպական բանտային կանոնների մասին» թիվ (2006)2 հանձնարարականի մեկնաբանությունները, էջ 13 (հասանելի է հետևյալ կայքում <http://www.refworld.org.ru/docid/55c36e8b4.html>):

Հատկանշական է, որ ազատությունից զրկված անձանց տեսակցության իրավունքն ուղղակիորեն փոխկապակցված է վերջիններիս երեխաների հիմնարար իրավունքների հետ, որոնք, մասնավորապես, սահմանված են «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 9-րդ հոդվածով, որի համաձայն՝ *համապատասխան պետական մարմինները պետք է ապահովեն երեխաների՝ իրենց ծնողների հետ կապ պահպանելու իրավունքի իրականացումը (...)*:

Հեռախոսագանգերի կամ տեսակցությունների հնարավորության բացարձակ արգելքի վերաբերյալ ԽԿԿ-ն նշել է, որ *նման ցանկացած սահմանափակում պետք է հստակորեն հիմնավորվի նախաքննության պահանջներով, ենթակա լինի հաստատման վարույթին առնչություն չունեցող մարմնի կողմից և կիրառվի հստակ ժամանակահատվածի համար: Գրավոր որոշումը պետք է պարունակի կիրառված յուրաքանչյուր սահմանափակման հիմքերը և պետք է տրամադրվի ազատությունից զրկված անձին և (կամ) նրա փաստաբանին: Սահմանափակումները պետք է պարբերաբար վերանայվեն՝ դրանց շարունակական անհրաժեշտության առկայությունը քննարկելու համար<sup>179</sup>:*

Այսպիսով, միջազգային և ներպետական իրավական կարգավորումների լույսի ներքո մանրագնին վերլուծության ենթարկելով ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելն արգելելու հարցերը՝ կարելի է ենթադրել, որ.

1. ինքնին քրեական գործի քննության փաստը չի կարող հանդիսանալ ընտանիքի կամ մերձավոր ազգականների հետ տեսակցության իրավունքի սահմանափակման հիմք: Նման հաղորդակցման ցանկացած սահմանափակում պետք է ունենա հատուկ և անհատականացված հիմնավորում,

2. տեսակցելու իրավունք ունեցող անձանց շրջանակից պետք է առանձնացնել ազատությունից զրկվածի ընտանիքի անդամներին կամ մերձավոր ազգականներին ու նրանց հետ տեսակցելու իրավունքը սահմանափակելու հնարավորության համար նախատեսել ավելի խիստ պահանջներ.

3. ընտանիքի կամ մերձավոր ազգականների հետ ձերբակալվածի կամ կալանավորվածի տեսակցության իրավունքը սահմանափակելու լիազորությամբ չպետք է օժտված լինի վարույթն իրականացնող մարմինը,

4. այս իրավունքը սահմանափակող որոշումները պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված,

5. դրանք պետք է անհապաղ հանձնվեն կալանավորվածին և/կամ նրա փաստաբանին՝ բողոքարկման իրավական հնարավորությունից լիարժեք օգտվելու նպատակով,

6. ընտանիքի կամ մերձավոր ազգականների հետ տեսակցության իրավունքը սահմանափակող որոշումը պետք է պարբերաբար վերանայվի՝ անկախ ազատությունից զրկված անձի ցանկությունից կամ վերաբերմունքից:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Պաշտպանի աշխատակազմը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հետ համատեղ մշակել է օրենսդրական փոփոխությունների նախագիծ: Նախագծով առաջարկվում են կարգավորումներ, որոնք ուղղված են կալանավորված անձի՝ մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ տեսակցությունն արգելելու հստակ մեխանիզմի նախատեսմանը, ազգային օրենսդրության միջազգային չափանիշներին համապատասխանության ապահովմանը:

Մասնավորապես՝ առաջարկվում է՝

1) կալանավորված անձանց տեսակցությունը մերձավոր ազգականների հետ արգելելը նախատեսել որպես դատավարական հարկադրանքի միջոց,

<sup>179</sup> Տե՛ս ԽԿԿ-ի 2010 թվականի փետրվարի 5-ից 15-ը Վրաստան կատարած այցի վերաբերյալ զեկույցը, կետ 108:

2) նշված դատավարական հարկադրանքի միջոցը մինչդատական վարույթում կիրառել միայն քննիչի պատճառաբանված միջնորդությամբ՝ դատախազի որոշմամբ կամ դատախազի սեփական նախաձեռնությամբ,

3) դատական քննության փուլում կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի հետ արգելելու ձևով դատավարական հարկադրանքի միջոցը կիրառել դատարանի որոշմամբ,

4) սահմանել կալանքի տակ գտնվելու ընթացքում մերձավոր ազգականի հետ մեղադրյալի տեսակցությունն արգելելու հստակ հիմքեր,

5) դատավարական հարկադրանքի նշված միջոցը կիրառել միայն կալանավորված անձի այն մերձավոր ազգականի նկատմամբ, ում տվյալները հստակ նշված են որոշման մեջ,

6) նախատեսել դատավարական հարկադրանքի նշված միջոցը կիրառելու վերաբերյալ որոշումն անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում կալանավորված անձին, նրա պաշտպանին՝ քրեական գործով վարույթին մասնակցության դեպքում, ինչպես նաև կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին ուղարկելու հստակ պահանջ,

7) նախատեսել քննիչի միջնորդությամբ կամ դատախազի նախաձեռնությամբ հարկադրանքի նշված միջոցի ժամկետի երկարացման անհրաժեշտության և իրավաչափության հարցերը վերանայելու և այդ մասին պատճառաբանված որոշում կայացնելու պահանջ,

8) դատավարական հարկադրանքի միջոցի հետագա կիրառման անհրաժեշտության վերացման դեպքում նախատեսել դատախազի կամ դատախազի համաձայնությամբ՝ քննիչի կողմից այն վերացնելու պարտականություն,

9) նախատեսել դատական քննությունն նշանակելու մասին որոշման մեջ կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի հետ արգելելը վերացնելու, փոխելու կամ ընտրելու մասին որոշումներ բովանդակելու պահանջ:

Միաժամանակ, հարկ է նշել, որ նախագծի ընդունման արդյունքում անհրաժեշտություն կառաջանա փոփոխություն կատարել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 137-րդ կետում:

Պաշտպանն ընդգծում է, որ մինչև օրենսդրական համապատասխան փոփոխություններն *անհրաժեշտ է պրակտիկան զարգացնել այն ուղղությամբ, որ վարույթն իրականացնողի կողմից կայացված յուրաքանչյուր որոշմամբ հստակ ամրագրվի անձանց շրջանակ, որոնց հետ արգելվում են կալանավորված անձանց տեսակցությունների ու հեռախոսային խոսակցությունները: Միաժամանակ անհրաժեշտ է պարբերաբար վերանայել որոշումն ու արգելքի անհրաժեշտության վերացման դեպքում վերացնել կայացված որոշումը:*

## **6. Բացատրություն տալիս անձի իրավունքների երաշխավորման և գործնական ապահովումը**

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 65-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ: Լռություն պահպանելու և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքները Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի անկյունաքարն են հանդիսանում:

Անձի հիմնական իրավունքները և ազատություններն օրենքով սահմանափակելիս սահմանադրաիրավական սկզբունքների հետևողական կենսագործման հրամայականը հատկապես կարևորվում է քրեական արդարադատության ոլորտում, որտեղ անձի իրավունքների խախտման վտանգն ավելի մեծ է:

Այս առումով, հարկ է անդրադառնալ քրեական գործով վարույթի շրջանակներում բացատրություններ տալիս համապատասխան դատավարական երաշխիքների ապահովման խնդրին:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի համաձայն՝ նախքան քրեական գործ հարուցելը վարույթն իրականացնող մարմինը կարող է պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի զննություն, հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում կարող են բերման և անձնական խուզարկության ենթարկվել անձինք, հետազոտման համար վերցվել նմուշներ, նշանակվել փորձաքննություն:

Մեջբերված նորմից բխում է, որ հանցագործության մասին ներկայացված հաղորդման հիման վրա քրեական գործ հարուցելու հարցը լուծելիս վարույթն իրականացնող մարմինը կարող է, ի թիվս այլնի, պահանջել նաև բացատրություններ: Այլ կերպ՝ քրեական գործ հարուցելու առիթն օրինական և հիմքերը բավարար լինելու հարցը որոշելու տեսանկյունից վերցված բացատրությունը կարող է էական նշանակություն ունենալ և հիմք հանդիսանալ քրեական գործ հարուցելու համար: Շատ հաճախ նյութերի նախապատրաստման փուլում բացատրություն տված անձինք էլ հետագայում՝ արդեն իսկ հարուցված վարույթի շրջանակներում, հայտնվում են կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակում:

**Ակնհայտ է, որ բացատրությունները վերցվում են հարուցված քրեական գործի շրջանակներից դուրս և այն անձանցից, ովքեր դեռևս չունեն որևէ դատավարական կարգավիճակ, իսկ քրեական դատավարության օրենսդրությամբ բացատրություն վերցնելու ընթացակարգ նախատեսված չէ:** Բացակայում են անհրաժեշտ օրենսդրական լծակները, որոնք կպարտավորեցնեն վարույթն իրականացնող մարմնին անձին տեղեկացնելու իր իրավունքների և պարտականությունների (հատկապես՝ լռություն պահպանելու, բացատրություն չտալու իրավունքի), համապատասխան գործողության արդյունքում վրա հասնող հնարավոր հետևանքների վերաբերյալ:

Ուստի, այս առումով, **համապատասխան կանոնակարգումների բացակայությունը կարող է հանգեցնել բացատրություն տված անձի իրավունքների անհամաչափ սահմանափակման, քանի դեռ օրենսդրորեն անձին իր նվազագույն իրավունքների մասին իրազեկելու և դրանց իրացումն ապահովելու անհրաժեշտ երաշխիքներ չեն նախատեսվել:**

Բացատրություն տալիս անձի իրավունքների երաշխավորման և գործնական ապահովման պատշաճ մեխանիզմների բացակայության մասին անդրադարձ է կատարվել նաև Պաշտպանի 2017 թվականի տարեկան հաղորդմամբ:

2018 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ շարունակվել են ստացվել բողոքներ, հատկապես՝ Պաշտպանի աշխատակազմի թեժ գծի միջոցով, այն մասին, որ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում չեն պահպանվում բացատրություններ տվողի համապատասխան դատավարական երաշխիքները: Այլ խոսքով, բացատրություն տվող անձինք մինչ փաստի առթիվ իրենց հայտնի տեղեկությունները տրամադրելը պատշաճ կերպով չեն տեղեկացվում Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ: Չնայած դրանց, գերակշիռ դեպքերում նյութերի նախապատրաստման փուլում բացատրություն տված անձինք կամ նրանց մերձավոր ազգականները հետագայում՝ արդեն իսկ հարուցված վարույթի շրջանակներում, հայտնվում են կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակում:

Անհրաժեշտ է նկատել, որ թեև նյութերի նախապատրաստության ընթացքում անձի տված բացատրությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով ապացույցի ինքնուրույն տեսակ չէ, այնուամենայնիվ Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքների քննարկումը վկայում է, որ առկա են դեպքեր, երբ բացատրությունը ճանաչվում է որպես այլ փաստաթուղթ և օգտագործվում որպես ապացույց, ինչն անթույլատրելի է: Այդ մասին են վկայում նաև դատական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքները: Այսպես, օրինակ, 2018 թվականին կայացված դատավճիռներից մեկով առաջին ատյանի դատարանն արդարացիորեն այն ճանաչել է անթույլատրելի ապացույց՝ ընդգծելով որ « (...) Դատաքննությամբ հետազոտվել են նաև որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչված (...) բացատրություն վերցնելու և (...) լրացուցիչ բացատրություն վերցնելու արձանագրությունները:

Դատարանը գտնում է, որ նշված արձանագրությունները չեն կարող օգտագործվել որպես թույլատրելի ապացույց հետևյալ պատճառաբանությամբ. Դատարանն արձանագրում է, որ որպես այլ փաստաթուղթ ապացույց կարող են ճանաչվել այն փաստաթղթերը կամ այլ տեսակի կրիչները, որոնք պատրաստվել, կազմվել և լրացվել են ոչ դատավարական գործունեության ժամանակ: Տվյալ դեպքում ակնհայտ է, որ նշված անձանցից բացատրություններ և լրացուցիչ բացատրություն վերցվել են հետաքննության մարմնի աշխատակցի կողմից դատավարական գործունեություն իրականացնելու պայմաններում և քննիչը, նշված արձանագրությունների վերաբերյալ որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչելու մասին որոշում կայացնելով, դատավարական գործողության էական խախտում է թույլ տվել: Վերոգրյալի հիման վրա դատարանը որոշում է հաստատել որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչված (...),բացատրություն վերցնելու ու (...) լրացուցիչ բացատրություն վերցնելու արձանագրությունները որպես ապացույց օգտագործելու անթույլատրելիությունը և դրանք հանել ապացույցների ծավալից»<sup>180</sup>:

Այլ քրեական գործով պաշտպանական կողմը միջնորդել է անթույլատրելի ճանաչել այլ փաստաթուղթ ճանաչված փաստացի կասկածյալի կարգավիճակում գտնվելու ընթացքում անձի կողմից տրված բացատրության արձանագրությունը: Այս կապակցությամբ դատարանն արձանագրել է, որ « (...) Դատարանը փաստում է, որ տվյալ դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը բացատրություն վերցնելիս պարտավոր է ապահովել արդար դատաքննության իրավունքի մաս կազմող երաշխիքների կենսագործման իրական հնարավորություն և այդ դեպքում միայն բացատրությունը որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչելը և օգտագործելը չի կարող համարվել անթույլատրելի: Սույն գործի փաստերը վերլուծելով վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Դատարանն արձանագրում է, որ (...) դեռևս սույն գործով նյութերի նախապատրաստման փուլում, երբ հետաքննության մարմնի կողմից բերման է ենթարկվել ոստիկանության բաժին փաստացի լինելով կասկածյալի կարգավիճակում, սակայն քրեական գործ հարուցված չլինելու պայմաններում չունենալով իրավական կարգավիճակ, տեղեկացվել է մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող իրավունքների մասին (...), որպիսի պայմաններում բացատրությունն այլ փաստաթղթի ձևով ապացույցի տեսակ ճանաչելը չի կարող հանգեցնել արդար դատաքննության իրավունքի խախտման, ուստի Դատարանը գտնում է, որ բացատրությունը որպես այլ փաստաթուղթ ապացուցողական զանգվածում ընդգրկելը տվյալ դեպքում իրավաչափ է, ուստի պաշտպանի միջնորդությունը ենթակա է մերժման»<sup>181</sup>:

<sup>180</sup> Թիվ՝ ՄԴ/0035/01/18 գործով կայացված դատավճիռը հասանելի է [http://datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=35465847065579997](http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=35465847065579997) հղումով:

<sup>181</sup> Թիվ՝ ՏԴ/0008/01/18 գործով կայացված դատավճիռը հասանելի է [http://datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=32369622321748403](http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=32369622321748403) հղումով:

Մեկ այլ՝ 2013 թվականին կայացված դատավճիռներից մեկով ևս առաջին ատյանի դատարանն արդարացիորեն այն ճանաչել է անթույլատրելի ապացույց՝ ընդգծելով. «(...) Դատարանը հարկ է համարում նշել, որ նման պրակտիկայի դեպքում մեղադրյալի կողմից ցուցմունքներ չտալու իրավունքը կամ «լռություն պահպանելու» իրավունքը՝ երաշխավորված ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով, դառնում է վերացական ու ոչ իրական, քանի որ համանման հանգամանքներում անձի կողմից տրված բացատրությունը տվյալ դեպքում առանց որևէ պատճառաբանության օգտագործվում է նրա դեմ՝ մասնավորապես՝ առանց վերջինիս պարզաբանելու բացատրություններ տալուց հրաժարվելու իրավունքի և նրա կողմից տրված բացատրությունը նրա դեմ օգտագործելու հնարավորության մասին»<sup>182</sup>:

ՀՀ դատախազության կոլեգիան, 2016 թվականի դեկտեմբերի 16-ի նիստում անդրադառնալով անձից բացատրություն վերցնելու արձանագրությունն այլ փաստաթուղթ ճանաչելու վերաբերյալ առկա պրակտիկայի թույլատրելիության հարցին, արձանագրել է, որ բացատրության արձանագրությունը որպես այլ փաստաթուղթ, այլ ապացույցների թվում կարող է դրվել մեղադրանքի հիմքում, եթե բացատրություն տված անձի հարցաքննությունը հնարավոր չի եղել իրականացնել այնպիսի պատճառներով, որոնք բացառել են նրա՝ նախաքննական մարմին ներկայանալու հնարավորությունը:

Փաստորեն, գործնականում ըստ էության չեն բացառվում նյութերի նախապատրաստման ժամանակ անձի տված բացատրությունն այլ փաստաթուղթ ճանաչելը և որպես ապացույց մեղադրանքի հիմքում դնելը: Կարծում ենք՝ **քրեադատավարական օրենսդրությամբ համապատասխան կարգավորումներ, հստակ ընթացակարգեր ու անհրաժեշտ իրավական երաշխիքներ նախատեսված չլինելու պայմաններում նման պրակտիկան անթույլատրելի է, քանի որ անխուսափելիորեն հանգեցնելու է անձի հիմնարար իրավունքների, մասնավորապես՝ պաշտպանության իրավունքի խախտման:**

Պետք է նկատել նաև, որ եթե նույնիսկ բացատրությունները չդրվեն մեղադրանքի և կայացվող դատական ակտերի հիմքում, այնուամենայնիվ դրանք վարույթի համար ունեն առանցքային նշանակություն, քանի որ շատ հաճախ հենց անձի տված բացատրությունն է քրեական գործ հարուցելու հիմք հանդիսանում, երբեմն նաև քրեական հետապնդում իրականացնելու համար: Ստացվում է, որ առանց հիմնական իրավունքների վերաբերյալ պատշաճ կերպով ծանուցվելու, պաշտպանի բացակայությամբ տրված բացատրությունը կարող է հետագայում օգտագործվել հենց բացատրություն տված անձի դեմ: Բացի այդ, քրեական գործի նյութերում անձի տված բացատրության առկայությունն ինքնին անձի մեղավորության հարցը լուծելիս կարող է որոշակի ազդեցություն ունենալ վարույթն իրականացնող մարմնի մոտ համապատասխան ներքին համոզմունք ձևավորելու հարցում, թեպետ ֆորմալ առումով այն որպես ապացույց չի կարող օգտագործվել: Հետևաբար՝ անձի իրավունքների անհամաչափ սահմանափակումները բացառելու համար անհրաժեշտ է օրենսդրորեն նախատեսել նյութերի նախապատրաստության ընթացքում անձից բացատրություն վերցնելու համապատասխան կառուցակարգ, որը կապահովի վերջինիս՝ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով ամրագրված իրավունքների իրացումը ու կսահմանի համարժեք դատավարական երաշխիքներ:

Միննույն ժամանակ, բացատրության արձանագրությունը կարող է օգտագործվել քրեական վարույթի ընթացքում, եթե այն տրվել է քրեադատավարական համապատասխան երաշխիքների պահպանմամբ: Համանման դիրքորոշում է արտահայտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Հովհաննեսյանն ընդդեմ Բուլղարիայի գործով

<sup>182</sup> Տե՛ս Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ԵԱՆՂ/0092/01/12 գործով 2013 թվականի մայիսի 15-ին կայացված դատավճիռը:

կայացրած վճռում<sup>183</sup>: Դատարանը, մասնավորապես նշել է, որ երբ քրեական վարույթն իրականացնող մարմինը բացատրություն վերցնելիս կասկածյալի հնարավոր կարգավիճակ ունեցող անձի համար ապահովել է արդար դատաքննության իրավունքի բաղադրիչը կազմող երաշխիքների կենսագործման իրական հնարավորություն, ապա բովանդակային առումով այդ ապացույցը չի կարող արժեզրկվել, որպիսի պարագայում այն այլ փաստաթղթի ձևով ապացույցի տեսակ ճանաչելը չի կարող հանգեցնել քրեական վարույթի արդարացիության ապահովման սկզբունքի խախտմանը:

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի ուսումնասիրությունից երևում է, որ բացատրություն վերցնելու ընթացակարգ նախագծով չի սահմանվում: Դա առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ, ի տարբերություն գործող օրենսդրության, նախագծում քրեական գործի հարուցման փուլ առանձնացված չէ, և հանցագործության մասին հաղորդում ստանալու պահից նախաձեռնվում է քրեական վարույթ՝ դրանով իսկ վարույթն իրականացնող մարմնին հնարավորություն ընձեռելով գործի դնել քրեադատավարական ողջ գործիքակազմը, իրականացնել բոլոր այն անհրաժեշտ քննչական և դատավարական գործողությունները, որոնց զգալի մասն այսօր կարող են իրականացվել բացառապես հարուցված քրեական գործի պայմաններում՝ մինևույն ժամանակ անձի իրավունքների ապահովման տեսանկյունից նախատեսելով գործուն դատավարական երաշխիքներ:

*Վերը նշվածի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ՝*

1. *որպես հարցի արագ լուծում՝ անհրաժեշտ է քրեական դատավարության օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություններ՝ ուղղված բացատրություն վերցնելու այնպիսի հստակ ընթացակարգ սահմանելուն, որը կապահովի անձի՝ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված իր իրավունքների և պարտականությունների վերաբերյալ պատշաճ կերպով իրազեկված լինելու, բացատրության հնարավոր բացասական հետևանքների մասին տեղեկացվելու իրավունքի կենսագործումը,*

2. *որպես խնդրի երկարաժամկետ լուծում՝ օրենսդրական կարգավորումները պետք է տրվեն ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքով որդեգրված՝ դատավարության փուլերի հայեցակարգային նոր մոտեցումներին համահունչ՝ քրեական գործի հարուցման նախապատրաստման փուլի և դրանով հանդերձ բացատրություն վերցնելու ինստիտուտի վերացմամբ:*

## **7. «Փաստացի քրեական հետապնդումից» անձի պաշտպանության օրենսդրական և գործնական երաշխիքները**

Քրեական գործերի քննության ու լուծման գործընթացը պետք է ընթանա հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանությամբ: Այս կարևորագույն սկզբունքի կիրառությունը ենթադրում է, որ քրեական վարույթի շրջանակներում անձի դատավարական կարգավիճակով պայմանավորված՝ վերջինս պետք է ապահովվի համարժեք իրավունքներով ու երաշխիքներով: Ընդ որում, որքան անձի դատավարական կարգավիճակի բովանդակությունը կանխորոշում է վերջինիս իրավունքներին առավել մեծ միջամտություն, այնքան անձի իրավունքների լայն շրջանակ պետք է երաշխավորվի: Ասվածի համատեքստում Մարդու իրավունքների պաշտպանը հարկ է համարում անդրադառնալ, այսպես կոչված, «փաստացի քրեական հետապնդման» ոչ իրավաչափ պրակտիկային:

2016 և 2017 թվականների ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի

<sup>183</sup> Տե՛ս Հովհաննեսյան ընդդեմ Բուլղարիայի (Hovhannesyanyan v. Bulgaria) գործով գործով 2010 թվականի դեկտեմբերի 21-ի վճիռը, գանգատ թիվ 31814/03, կետեր 36-44:

մասին տարեկան հաղորդումներում խնդիրը ներկայացվել է թե՛ սահմանադրաիրավական և միջազգային իրավական մոտեցումների վերլուծությամբ, թե՛ քրեադատավարական կարգավորումների լիարժեքության տեսանկյունից<sup>184</sup>:

2018 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանին շարունակվել են հասցեագրվել բողոքներ, որ, օրինակ, անձինք, հարցաքննվելով որպես վկա, այնուհետև միևնույն գործով վարույթի շրջանակներում ներգրավվել են որպես մեղադրյալ:

Մրա հետ կապված, Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է, որ անձի՝ միևնույն քրեական գործով վարույթի շրջանակներում կարգավիճակի փոփոխությունն ինքնին խնդրահարույց չէ, եթե վարույթն իրականացնող մարմնի կողմից քննչական և այլ դատավարական գործողությունների իրականացման, այդ թվում՝ անձին հարցաքննելու ընթացքում ապահովվել են վերջինիս՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքներն ու համարժեք դատավարական երաշխիքները:

Այլ է իրավիճակը, երբ օրինակ՝ անձը հարցաքննության է կանչվում վկայի դատավարական կարգավիճակով՝ դրանից բխող իրավունքների և պարտականությունների համապատասխան ծավալով, սակայն վարույթն իրականացնող մարմնի մոտ արդեն իսկ առկա է քրեական օրենքով չթույլատրված արարքի կատարման անձի առնչության վերաբերյալ կասկած: Խնդրահարույց է, երբ այդպիսի «կասկածի» առկայությամբ անձի՝ վկայի դատավարական կարգավիճակով մասնակցությամբ իրականացվում են քննչական և այլ դատավարական գործողություններ, որոնք նպատակ ունեն ձեռք բերելու այդ անձի կողմից հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցներ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ «մեղադրվող» և «քրեական մեղադրանք» եզրույթներն ունեն ինքնավար հասկացություն և պետք է մեկնաբանվեն ոչ այնքան ֆորմալ, որքան օբյեկտիվ իրականության հաշվառմամբ:

Այս համատեքստում մեղադրանքը ենթադրում է ոչ միայն հանցագործություն կատարած լինելու կասկածանքի առկայության մասին պաշտոնական հայտարարություն, այլև ցանկացած միջոց, որն էականորեն ազդում է կասկածյալի կարգավիճակի վրա<sup>185</sup>:

Ընդ որում, «քրեական մեղադրանքի» սկզբնական պահի որոշումը սկզբունքային նշանակություն ունի, քանի որ այն կանխորոշում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի ծագման պահը՝ «քրեական մեղադրանքի» առնչությամբ:

Ի տարբերություն 2005 թվականի Սահմանադրությամբ *«ձերբակալման, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանքի առաջադրման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունքի»* երաշխավորմանը՝ 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 67-րդ հոդվածն ամրագրում է «հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուրի» մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը՝ դրա առանձին տարրերի մատնանշմամբ (այդ թվում՝ անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքը): Սահմանադրական այս դրույթը, կրկնելով Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի երաշխիքները, ըստ էության ելնում է *անձի՝ «հանցագործության համար մեղադրվողի» կարգավիճակի ինքնավարության գաղափարից*:

Մինչդեռ, ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգիրքը «քրեական մեղադրանքի» բնորոշման ոչ ֆորմալ մեկնաբանության իրավական կառուցակարգեր չի նախատեսում:

<sup>184</sup> Առավել մանրամասն տե՛ս 2016 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 122-125:

<sup>185</sup> Տե՛ս Էկլեն ընդդեմ Գերմանիայի (Eckle v. Germany) գործով 1982 թվականի հուլիսի 15-ի վճիռը, Քասսն ընդդեմ Լյուքսեմբուրգի (Casse v. Luxembourg) գործով 2006 թվականի ապրիլի 27-ի վճիռը, գանգատ թիվ 40327/02, կետ 71,

Գեստոսոն ընդդեմ Իսպանիայի (Gestoso v. Spain) գործով որոշումը, գանգատ թիվ 39519/98:



Բանն այն է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 62-րդ և 64-րդ հոդվածներով ամրագրված՝ կասկածյալի և մեղադրյալի օրենսդրական բնորոշումներից բխում է, որ անձը համապատասխան դատավարական կարգավիճակ, հետևաբար նաև օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանությունն իրականացնելու իրավունք է ձեռք բերում քրեական հետապնդման մարմնի կողմից դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու կամ անձին մեղադրանք առաջադրելու դեպքերում: Այլ կերպ ասած, անձի՝ կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակի ձեռքբերումը կախվածության մեջ է դրվում անձին ներկայացված պաշտոնական մեղադրանքից կամ վերջինիս համար ակնհայտ՝ իրավունքների սահմանափակում ենթադրող հարկադրանքի միջոցների կիրառումից:

Սրա հետ կապված, դեռևս 2016 և 2017 թվականների տարեկան հաղորդումներում Մարդու իրավունքների պաշտպանը եզրակացրել էր, որ խնդրի օրենսդրական կարգավորմանն ուղղված հայեցակարգային փոփոխություններ են նախատեսված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծով<sup>186</sup>:

Ասվածի կապակցությամբ՝ հարկ է անդրադառնալ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ նախատեսող օրենսդրական փոփոխությունների նախաձեռնմանը<sup>187</sup>, որոնցով ամրագրվեցին ազատությունից զրկված անձի իրավունքների ապահովման հետ կապված կառուցակարգերը՝ անձին արգելանքի վերցնելու պահից: Նախ, օրենսդրորեն ամրագրվեցին «արգելանքի վերցված անձի» իրավունքները՝ այդպիսով կարգավորելով ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքով լրացվող օրենսդրական բացը<sup>188</sup>: Բացի այդ, օրենսդրորեն ամրագրվել է փաստի ուժով անձի իրավունքների ձեռքբերման՝ Քրեական դատավարության օրենսգրքի նախագծով որդեգրված մոտեցումը: Մասնավորապես, օրենսդրական փոփոխություններով ամրագրվում է *մինչև ձերբակալման արձանագրությունը նրան հայտարարելն արգելանքի վերցված անձի իրավունքները, այդ թվում՝ լռություն պահպանելու իրավունքը: Նույն դրույթի համաձայն՝ անկախ ձերբակալման արձանագրությունն անձին հայտարարելու հանգամանքից փաստացի արգելանքի վերցվելուց չորս ժամ հետո անձը ձեռք է բերում կասկածյալի վերաբերելի իրավունքները և պարտականությունները:*

Օրենսդրական այս փոփոխություններն, իհարկե, դրական քայլ են՝ ազատությունից զրկված անձի՝ այդպիսի սահմանափակման սկզբնական փուլից սկսած իրավունքների ամրագրման տեսանկյունից: Մինևույն ժամանակ, «փաստացի քրեական հետապնդման» դեմ արդյունավետ իրավական կառուցակարգերը պետք է ենթադրեն նաև դրա հետևանքները չեզոքացնելուն ուղղված օրենսդրական հնարավորություն:

Կարծում ենք, որ յուրաքանչյուր դեպքում, երբ բարձրացվում է «փաստացի քրեական հետապնդման» խնդիր, քննարկման առարկա պետք է հանդիսանա նաև դրա շրջանակներում ձեռք բերված ապացույցների թույլատրելիության հարցը: Ասվածի օրենսդրական ուղղակի ամրագրման մոտեցումը դրսևորվել է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով, որի 97-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ *օրենքի էական*

<sup>186</sup> Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի 110-րդ հոդվածն ամրագրում է, որ ձերբակալված անձը ձերբակալման որոշումը ստանալու պահից, իսկ եթե օրենքով սահմանված ժամկետում այն չի հանձնվել, ապա իրեն ազատությունից փաստացի զրկելուց հետո վեց ժամը լրանալու պահից ձեռք է բերում սույն օրենսգրքով մեղադրյալի համար նախատեսված բոլոր վերաբերելի իրավունքները և պարտականությունները: Մինչև մեղադրյալի վերաբերելի իրավունքները ձեռք բերելը ձերբակալված անձն ունի նվազագույն իրավունքներ, այդ թվում՝ լռություն պահպանելու իրավունք, [http://www.parliament.am/draft\\_docs5/K-084lr\\_19102016.pdf](http://www.parliament.am/draft_docs5/K-084lr_19102016.pdf)

<sup>187</sup> Հարկ է նկատել, որ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից նշված նախագծի վերաբերյալ ներկայացվել են մի շարք սկզբունքային նկատառումներ, այդ թվում՝ անձի անձնական ազատության սահմանադրական իրավունքի երաշխավորման դատավարական կառուցակարգերի լիարժեքության տեսանկյունից:

<sup>188</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Գ. Միքայելյանի գործով 2009 թվականի դեկտեմբերի 18-ի որոշումը:

խախտմամբ ստացված են համարվում այն տվյալները, որոնք *inter alia* ձեռք են բերվել մեղադրյալի կարգավիճակ չունեցող անձից, ում նկատմամբ փաստացի իրականացվել է քրեական հետապնդում՝ առանց այդ մասին նրան պատշաճ ծանուցելու:

Գործող քրեադատավարական օրենսդրությունը «փաստացի քրեական հետապնդման» հետևանքով ձեռք բերված ապացույցի անթույլատրելիության մասին ուղղակի դրույթ չի պարունակում: Փոխարենը, վերոնշյալ օրենսդրական փոփոխությունների համաձայն՝ *որպես ապացույց չեն կարող օգտագործվել այն նյութերը, որոնք, մասնավորապես, ձեռք են բերվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական՝ քրեական դատավարության մասնակիցների հիմնական իրավունքների և ազատությունների կամ քրեական դատավարության սկզբունքների խախտմամբ:*

Վերը նշվածի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ անկախ անձի՝ քրեադատավարական օրենքի իմաստով կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ձեռք բերելուց՝ վերջինս պետք է օգտվի քրեական հետապնդման ենթարկվող անձի վերաբերելի բոլոր իրավունքներից այն դեպքում, երբ վարույթն իրականացնող մարմնի գործողությունները (որոշումները) հիմք են տալիս ողջամտորեն ենթադրելու, որ առկա է տվյալ անձի կողմից հանցանք կատարած լինելու կասկածանք: Ավելին, «փաստացի քրեական հետապնդման» պրակտիկայի կանխարգելումը պետք է իրականացվի ոչ միայն գերատեսչական վերահսկողության շրջանակներում, այլև պետք է քննարկման առարկա դառնա կոնկրետ քրեական գործով վարույթի շրջանակներում դրա բացասական հետևանքների չեզոքացումը:

**8. Ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառման շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը վերցնելը և նրա ազատ տեղաշարժման իրավունքի սահմանափակման ոչ իրավաչափ պրակտիկան**

Քրեական գործով վարույթի շրջանակներում անձի իրավունքների ապահովման տեսանկյունից շարունակում է սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՄԷԿՏ) համակարգի կիրառմամբ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի ոչ համաչափ սահմանափակման խնդրահարույց պրակտիկան: Խնդիրն այն է, որ քրեական գործով վարույթի շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցի կիրառման հիմքով սահմանային անցման կետերում սահմանափակվում է անձի՝ հանրապետությունից դուրս գալու իրավունքը, որը սակայն, պահպանվում է այդ խափանման միջոցի վերացված լինելու պայմաններում: Ընդ որում, անձն այդ մասին տեղեկացվում է միայն այն ժամանակ, երբ փաստացի առնչվում է կիրառված արգելքի հետ, այսինքն՝ երբ ցանկանում է դուրս գալ երկրից:

Ինչպես 2017, այնպես էլ 2018 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից քննության առնված դեպքերում չնայած անձինք կրած են եղել դատարանի կողմից նշանակված պատիժը (անկախ պատժի տեսակից՝ տուգանք, ազատազրկում և այլն), սակայն վերջիններիս՝ ՄԷԿՏ համակարգով հանրապետությունից դուրս գալու իրավունքի սահմանափակումը չէր հանվել՝ դեռևս նախաքննության փուլում կիրառված արգելանքի հիման վրա: Օրինակ՝ անձը Պաշտպանին տեղեկացրել է, որ իր նկատմամբ դատավճռով նշանակված տուգանքն ամբողջությամբ մուծվել է, անդորրագիրը՝ ներկայացվել դատարան, սակայն հանրապետությունից դուրս գալու իրավունքի սահմանափակումը չի հանվել:

Մեկ այլ դեպքում քրեական գործով ամբաստանյալը Պաշտպանին ներկայացրել է Դատարանի թույլտվությունը որոշակի ժամանակահատվածով իր մշտական բնակության վայր մեկնելու մասին: Ոստիկանության հետ բանավոր քննարկմամբ պարզվել է, որ

Դատավորի՝ նման թույլտվությունը վկայող փաստաթուղթը դեռևս չի ստացվել, իսկ անձի ներկայացված փաստաթղթի ուսումնասիրմամբ պարզվել է, որ այդ փաստաթուղթը Դատարանից ուղարկվել է նախորդ օրը՝ փոստային ծառայության միջոցով, ուստի մեկ օր անց չէր էլ կարող այն ստացված լինել Ոստիկանությունում: Փաստաթղթի՝ քաղաքացուն հանձնված օրինակի հիման վրա՝ բանավոր ընթացակարգի արդյունքում հարցը անհապաղ լուծում է ստացել, և անձը լքել է ՀՀ-ն:

Ներկայացված բողոքների շարունակականության, ինչպես նաև խնդրի համակարգային բնույթի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը համակողմանի ուսումնասիրության առարկա է դարձրել անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի ապահովման սահմանադրաիրավական հիմքերն ու միջազգային իրավական սկզբունքները, արտասահմանյան երկրների օրենսդրական փորձը, ոլորտի ներպետական օրենսդրական կարգավորումների որոշակիությունն ու կանխատեսելիությունը: Արդյունքում, Պաշտպանը խնդիրը ներկայացրել է օրենսդրության և իրավակիրառման սահմանադրականության տեսանկյունից՝ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու գործառույթի իրացմամբ: Արդյունքում, ՀՀ սահմանադրական դատարանը 2017 թվականի ապրիլի 4-ի ՄԴՈ-1360 որոշմամբ արտահայտել է իրավակիրառ պրակտիկայի իրավաչափությունը կանխորոշող պայմաններ՝ նշելով, որ «նման կանոնակարգման առկայության պայմաններում և նման կառուցակարգի միջոցով անձի տեղաշարժման ազատությունը սահմանափակելու պարագայում այն պետք է իրացվի բացառապես խափանման միջոցի վերացման մասին որոշում ընդունելու վերաբերյալ տեղեկատվությունը ևս նույն համակարգում տեղադրելու՝ իրավասու մարմնի հստակ պարտականության իրացման և անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի խոչընդոտները վերացնելու պայմանով»՝ միաժամանակ արձանագրելով օրենսդրության մեջ այս պահանջի՝ վարույթն իրականացնող մարմնի վրա դրված հստակ պարտականության տեսքով ուղղակի ամրագրման բացակայությունը:

Ավելին, Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքների բովանդակության<sup>189</sup> ուսումնասիրության արդյունքում Սահմանադրական դատարանը եզրահանգել է, որ ՀՀ կառավարության խնդրո առարկա որոշման<sup>190</sup> մեջ խափանման միջոցի վերացման մասին որոշման վերաբերյալ տեղեկատվությունը ՍԷԿՏ համակարգ ուղարկելու ուղղակի պարտականության բացակայությունը հարցականի տակ է դնում այդ ընթացակարգի որոշակիությունը, քանի որ կոնկրետ իրավասու մարմնի վրա դրված այդպիսի պարտականություն չկա:

*Ասվածի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ իրավակիրառ պրակտիկան պետք է ընթանա այն սկզբունքով, որ խափանման միջոցի կիրառմամբ տեղեկություններ տրամադրելու պարտականությանը զուգահեռ ապահովվի հակառակի՝ խափանման միջոցի վերացման վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու պարտականությունը:*

«Ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցի կիրառման շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի իրավունքների ապահովման մեկ այլ խնդիր է վերջինիս անձնագիրը վերցնելու իրավաչափության շրջանակները, որը ևս քննարկման առարկա է դարձել Սահմանադրական դատարան ներկայացված դիմումի շրջանակներում: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և «Քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի<sup>191</sup> համադրության մեջ դիտարկման

<sup>189</sup> Բողոքների նկարագրությունը Սահմանադրական դատարան է ներկայացվել առանց անհատականացնող տվյալների մատնանշման:

<sup>190</sup> Տե՛ս ՀՀ կառավարության 2006 թվականի 22 հունիսի «Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ ստեղծելու, դրա շահագործման կարգը և համակարգից օգտվողների ցանկը սահմանելու մասին» N 884-Ն որոշումը:

<sup>191</sup> «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է.

արդյունքներով Մարդու իրավունքների պաշտպանը եզրակացրել է, որ քրեական դատավարության կամ դրա առանձին փուլերի խնդիրների իրագործմանն ուղղված վարույթն իրականացնող մարմնի ցանկացած գործողություն, այդ թվում՝ դատավարական կարգավիճակ ունեցող անձի անձնագիրը վերցնելը, պետք է իրավական հիմք ունենա հենց քրեական դատավարության օրենսգրքում:

Ավելին, «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» օրենքի խնդրո առարկա հոդվածի կարգավորումը, համաձայն որի՝ կասկածյալի և մեղադրյալի անձնագիրը վերադարձվում է հարուցված քրեական հետապնդումը դադարեցվելուց հետո անմիջապես, ևս վկայում է, որ անձի անձնագիրը վերցնելու՝ օրենքով ամրագրված այդպիսի կառուցակարգը չի համապատասխանում ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի քրեադատավարական կարգավորումներին:

Բանն այն է, որ Քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ քրեական հետապնդման դադարեցումը քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի որոշումն է առաջադրված մեղադրանքը վերացնելու կամ մեղադրանքից հրաժարվելու մասին:

Օրենսգրքի 151-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ խափանման միջոցը վերացվում է, երբ վերանում է դրա անհրաժեշտությունը: Դատավարական այս կարգավորումները հիմք են տալիս եզրակացնելու, որ ընտրված խափանման միջոցը կարող է վերացվել նաև քրեական հետապնդման իրականացման պայմաններում: Մտացվում է, որ «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորմամբ անձի անձնագիրը կարող է հետ չվերադարձվել անգամ այն ժամանակ, երբ վերացվել է վերջինիս նկատմամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը:

Քննարկելով կասկածյալի, մեղադրյալի նկատմամբ «Ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոց կիրառելու դեպքում անձնագիրը վերցնելու կանոնակարգման սահմանադրականության հարցը՝ Սահմանադրական դատարանը հստակ դիրքորոշում է արտահայտել, որ այն դեպքերում, երբ քրեական հետապնդում իրականացնող մարմնի կողմից, առանց խափանման միջոցի (ստորագրություն չհեռանալու մասին) կիրառման, վերցվում է կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը, բացակայում է նաև կասկածյալի կամ մեղադրյալի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու, նրանց կողմից դատավճռի կատարմանը խոչընդոտելու վերաբերյալ ողջամիտ կասկածը: Հետևաբար՝ բացակայում է նաև հանցագործությունները կանխելու կամ բացահայտելու, այլոց և, մասնավորապես, տվյալ քրեական գործով տուժողների իրավունքները և ազատությունները պաշտպանելու նպատակով անձնագիրը վերցնելու միջոցով կասկածյալի կամ մեղադրյալի իրավունքների սահմանափակման անհրաժեշտությունը:

Արդյունքում, Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ **անձնագիրը կասկածյալից կամ մեղադրյալից կարող է վերցվել բացառապես խափանման միջոցի կիրառման դեպքում: Եվ խափանման միջոցի վերացման պահին անձի անձնագիրը ենթակա է անհապաղ վերադարձման:**

Վերահաստատելով Մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումը՝ Սահմանադրական դատարանը նշել է, որ «Ներկայումս ձևավորված պրակտիկան, երբ անձի անձնագիրը պահվում է իրավասու մարմնի մոտ «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցը վերացնելու դեպքում, խախտում է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը»:

---

«4. Կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը ժամանակավորապես վերցնում է հետաքննության կամ նախաքննության մարմինը: (...) Կասկածյալի և մեղադրյալի անձնագիրը պահվում է վարույթ իրականացնող պաշտոնատար անձանց մոտ և վերադարձվում է հարուցված քրեական հետապնդումը դադարեցվելուց հետո անմիջապես»:

Բացի այդ, քրեական գործով վարույթի շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը վերցնելը դիտարկվել է անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին միջամտության համաչափության տեսանկյունից:

Մինչդեռ, հարկ է նշել, որ Պաշտպանի դիմումը Սահմանադրական դատարանում քննության ընդունվելուց հետո անձնագիրը վերցնելիս փոխարինող փաստաթղթի տրամադրման վերաբերյալ բարձրացված խնդրի օրենսդրական կարգավորումները փոփոխվեցին: Կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» թիվ 821-Ն որոշման 19-րդ կետի 3-րդ պարբերությունը ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի թիվ 4-Ն որոշմամբ ուժը կորցրած ճանաչվեց:

Մինչ փոփոխությունները՝ ուժը կորցրած դրույթը սահմանում էր, որ *կալանքի տակ չգտնվող կասկածյալներին և մեղադրյալներին հետաքննության կամ նախաքննության մարմիններն անձնագրի փոխարեն տալիս են անձը հաստատող փաստաթուղթ՝ առանց Հայաստանի Հանրապետությունից մեկնելու թույլտվության, որի ձևը մշակում և հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը:*

Խնդիրը Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրել էր քաղաքացու անձնագիրը վերցնելիս անձը հաստատող ժամանակավոր փաստաթղթի տրամադրման վերաբերյալ այս դրույթի գործնական կիրարկումն ապահովող օրենսդրական կառուցակարգերի ոչ լիարժեքության տեսանկյունից:

Այսպես, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի 2012 թվականի փետրվարի 13-ի թիվ 2-Ն հրամանով հաստատվել են Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը և նույնականացման քարտը վերցնելու փաստը հավաստող տեղեկանքների ձևերը, որոնք, պարունակելով անձի անձնագիրը վերցնելու փաստի, դրա հիմքերի, ժամանակի, անձնագիրը վերցրած պաշտոնատար անձի մասին տվյալներ, այդուհանդերձ, չեն կարող հանդես գալ որպես անձը հաստատող փոխարինող փաստաթուղթ՝ անձն անհատականացնող բավարար տվյալներ չպարունակելու պատճառով (օրինակ, լուսանկարի բացակայությունը): Բացի այդ, հրամանի ընդունման իրավական հիմքը «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին և «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասերի՝ անձնագիրը կամ նույնականացման քարտն անվավեր ճանաչելու վերաբերյալ դրույթներն են: Հետևաբար, հրամանի կարգավորման շրջանակները ևս սահմանափակվում են այդ դեպքերով՝ չանդրադառնալով խնդրո առարկա հարցին:

Անձի անձնագիրը վերցնելու դեպքում տրամադրվող ժամանակավոր փաստաթղթի նմուշը սահմանող՝ ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ նախատեսված անձնագիրը կորցնելու կամ փոխանակման ներկայացնելու դեպքում քաղաքացու ցանկությամբ ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթի տրամադրման կարգը և ձևը սահմանելու մասին» թիվ 1660-Ն որոշման կարգավորումները տարածվում են միայն այն դեպքերի վրա, երբ քաղաքացին ինքը դիմում է ներկայացնում այդպիսի փաստաթուղթ ստանալու խնդրանքով՝ անձնագիրը կորցնելու կամ փոխանակման ներկայացնելու դեպքերում:

Մինչդեռ, կատարված փոփոխությունների արդյունքում, փաստորեն, կասկածյալին կամ մեղադրյալին անձնագրի փոխարեն անձը հաստատող փաստաթուղթ տրամադրելու վերաբերյալ դրույթն ուղղակի հանվեց՝ առանց փոխարենը նոր կառուցակարգերի

ամրագրման: Քննարկվող դրույթի գործողության դադարեցման պայմաններում Սահմանադրական դատարանն, այդուհանդերձ, որոշման եզրափակիչ մասում արձանագրել է, որ *Կառավարության որոշման 19-րդ կետի 3-րդ պարբերությունը (Կառավարության 2008 թվականի հուլիսի 31-ի թիվ 823-Ն որոշման խմբագրությամբ) «համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի բովանդակության շրջանակներում, համաձայն որի՝ հետաքննության կամ նախաքննության մարմինների կողմից անձնագրի փոխարեն անձը հաստատող փաստաթուղթ պետք է տրվի կալանքի տակ չգտնվող այն կասկածյալներին և մեղադրյալներին, ում նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն՝ չհեռանալու մասին»:*

Ստացվում է, որ քննարկվող դեպքերում կասկածյալին կամ մեղադրյալին անձը հաստատող փաստաթուղթ տրամադրելու օրենսդրական կարգավորումների բացակայությունն այնքանով, որքանով արդեն իսկ չկան որևէ սահմանադրաիրավական ընկալման և մեկնաբանության հիմքեր, խնդիրներ կարող է առաջացնել Սահմանադրական դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների կատարման տեսանկյունից: Ուստի, խնդրի լուծումը պետք է տրվի օրենսդրական բացի հաղթահարման ճանապարհով՝ համապատասխան ընթացակարգերի ամրագրմամբ:

Դրական է, որ ոլորտի պատասխանատուների կողմից ջանքեր են գործադրվում օրենսդրության բարելավման նպատակով: Մասնավորապես, Ոստիկանության կողմից մշակվել և Մարդու իրավունքների պաշտպանին կարծիքի է ուղարկվել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու և Հայաստանի Հանրապետությունից ելքի մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթը, որի վերաբերյալ Պաշտպանի կողմից ներկայացվել են մի շարք դիտարկումներ: Դրանցից ամենակարևորն այն է, որ նախատեսվող դրույթների ուսումնասիրության արդյունքում պարզ չէ, թե անձի ելքի արգելքի մասին որոշումը իրավասու մարմնի կողմից կայացված խափանման միջոցի կիրառման մասին որոշման բաղկացուցիչ մաս է կազմելու, թե՛ ոչ: Պարզ չէ նաև դրա հիմնավորվածության և բողոքարկման հնարավորության հարցը: Այս հարցերը վտանգում են անձի իրավունքների իրացումը: Պաշտպանի դիրքորոշմամբ՝ անձը պետք է իրավունք ունենա ծանոթանալ ՍԷԿՏ համակարգով հանրապետությունից դուրս գալու իրավունքի սահմանափակման վերաբերյալ որոշմանը, որի անհրաժեշտությունը պետք է պատշաճ հիմնավորված լինի, ինչպես նաև քաղաքացուն պետք է պարզաբանվի իր իրավունքներն ու պարտականությունները և հնարավորություն ընձեռվի բողոքարկել այդ որոշումը:

Չնայած գործադրվող ջանքերին, այդուհանդերձ, պետք է արձանագրել, որ Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված նույնաբովանդակ բողոքների շարունակականությունն ինքնին վկայում է ոչ միասնական իրավակիրառ պրակտիկայի մասին: Սա առաջին հերթին արդյունք է այն բանի, որ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումները վերացվելու դեպքում ՍԷԿՏ համակարգում տեղեկատվությունը տեղադրելու կառուցակարգերը դեռևս բացակայում են: Այլ խոսքով՝ դեռևս հստակեցված չէ, թե որ մարմինը պետք է հանձն առնի անձի նկատմամբ կիրառված արգելքի սահմանափակման մասին ՍԷԿՏ համակարգը վարող մարմին տեղեկացնելու պարտականությունը:

Ուստի, Պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ խնդրի լուծումը պետք է տրվի օրենսդրական բացի հաղթահարման ճանապարհով՝ համապատասխան ընթացակարգերի ամրագրմամբ:

Միաժամանակ, անհրաժեշտ է նկատել, որ, եթե անձն ունի որևէ դատավարական կարգավիճակ, օրինակ՝ մեղադրյալի, սակայն նրա նկատմամբ խափանման միջոց կիրառված

չէ, ապա որևէ կերպ չի կարող սահմանափակվել հանրապետությունից դուրս գալու նրա իրավունքը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ *անհրաժեշտ է՝*

1. *ապահովել ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի վերացման պահին այդպիսի սահմանափակման վերացման վերաբերյալ տեղեկությունների պարտադիր տրամադրումը ՄԷԿՏ համակարգին.*

2. *հնարավորին սեղմ ժամկետում ընդունել օրենսդրական վերը նշված կարգավորումները՝ հստակ ամրագրելով իրավասու մարմնի կոնկրետ պարտականությունը նաև այն դեպքերում, երբ արգելանքը վերացվում է դատաքննության փուլում, ինչպես նաև պատժի կրումից հետո,*

3. *բացառել քրեական գործով վարույթի ընթացքում խափանման միջոցի կիրառման շրջանակներից դուրս կասկածյալի և մեղադրյալի անձնագիր վերցնելու կամ պահելու պրակտիկան.*

4. *ամրագրել ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառման շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը վերցնելիս դրա փոխարեն անձը հաստատող փաստաթուղթ տրամադրելու օրենսդրական պահանջ և դրա ապահովմանն ուղղված ընթացակարգեր:*

**9. Քրեական վարույթի շրջանակներում վկայի և տուժողի, ինչպես նաև դատավարության մասնակից չհանդիսացող անձանց անձնագրերը վերցնելը և նրանց նկատմամբ հանրապետությունից դուրս գալու արգելք սահմանելու ոչ իրավակիրառ պրակտիկան**

Քրեական գործով վարույթի շրջանակներում անձի անձնագիրը վերցնելու և ՄԷԿՏ համակարգի կիրառմամբ ազատ տեղաշարժվելու իրավունքին միջամտելու պրակտիկան ոչ իրավաչափ դրսևորումներ է ունեցել նաև այն առումով, որ այդպիսի սահմանափակումները կիրառվել են քրեական վարույթի շրջանակներում վկայի կամ տուժողի դատավարական կարգավիճակ ունեցող, կամ առհասարակ դատավարական կարգավիճակ չունեցող անձանց նկատմամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ այդպիսի գործողության իրավական հիմքերի բացակայության պայմաններում: Այս մասին Մարդու իրավունքների պաշտպանը տարիներ շարունակ բարձրաձայնում է տարեկան հաղորդումներում: 2018 թվականի ընթացքում խնդրի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանին բողոքների հասցեագրումը շարունակական է եղել:

Այսպես, օրինակ, քրեական գործով դատավարական կարգավիճակ չունեցող անձը Պաշտպանին ներկայացված բողոքում տեղեկացրել է, որ ցանկացել է մեկնել այլ երկիր, սակայն «Զվարթնոց» օդանավակայանում տեղեկացրել են, որ սահմանափակված է ՀՀ-ից դուրս գալու իր իրավունքը: Անձը հայտնել է, որ երբևէ որևէ քրեական գործով չի հարցաքննվել անգամ որպես վկա:

Մեկ այլ դեպքում ահագանգ է ներկայացրել փաստաբանը, ով ևս նշել է, որ այն անձը, ում ներկայացուցիչն է հանդիսանում որևէ քրեական գործի շրջանակներում չի հարցաքննվել կամ կարգավիճակ չի ստացել:

Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է իր եզրահանգումն առ այն, որ քրեական գործով որպես վկա կամ տուժող հանդես եկող, դատավարական կարգավիճակ չունեցող անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքը ՄԷԿՏ համակարգի կիրառմամբ առանց որևէ իրավական հիմքերի սահմանափակելու արատավոր պրակտիկան կրում է շարունակական բնույթ, ինչն անընդունելի է: Քրեական գործով որպես վկա կամ տուժող հանդես եկող անձանց նկատմամբ այդպիսի սահմանափակումների կիրառման

պրակտիկան, անգամ եթե այն վարույթի մասնակցի դատավարական պարտականությունների ապահովման իրավաչափ նպատակ է հետապնդում, օրինական և հիմնավորված կարող է լինել միայն, եթե այդ նպատակի իրագործմանն ուղղված ընթացակարգն ունի քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված հիմքեր:

Ի լրումն ասվածի, անհրաժեշտ է նշել, որ Ոստիկանության կողմից մշակված և Մարդու իրավունքների պաշտպանին կարծիքի ուղարկված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու և Հայաստանի Հանրապետությունից ելքի մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթով առաջարկվում է սահմանել, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացու ելքի իրավունքը կարող է ժամանակավորապես սահմանափակվել, եթե քաղաքացին հանցագործության կասկածանքի հիման վրա բերման ենթարկվելու կամ քրեադատավարական ձերբակալման նպատակով հետապնդվում (որոնվում) է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող կամ քրեական հետապնդման մարմնի կողմից: Մինչդեռ, վերոնշյալ ձևակերպումը մտավախության տեղիք է տալիս:

Այսպես, քրեական գործով որպես վկա կամ տուժող հանդես եկող անձանց նկատմամբ այդպիսի սահմանափակումների կիրառման պրակտիկան, անգամ եթե այն վարույթի մասնակցի դատավարական պարտականությունների ապահովման իրավաչափ նպատակ է հետապնդում, օրինական և հիմնավորված կարող է լինել միայն, եթե այդ նպատակի իրագործմանն ուղղված ընթացակարգն ունի քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված հիմքեր: Հարցի կապակցությամբ ՀՀ Սահմանադրական դատարանը 2017 թվականի ապրիլի 4-ի ՄԴՈ-1360 որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ որևէ իրավական ակտով վկայից, տուժողից անձնագիր վերցնելու կամ այդ անձի վերաբերյալ տեղեկությունները ՄԷԿՏ համակարգ տեղադրելու պահանջ չի նախատեսվում: Ասվածը հիմք ընդունելով՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է, որ քրեական գործով վարույթին որպես վկա կամ տուժող հանդես եկող կամ դատավարական կարգավիճակ չունեցող անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը որևէ դեպքում չի կարող սահմանափակվել՝ վերջինիս անձնագիրը վերցնելու կամ ՄԷԿՏ համակարգով հանրապետությունից դուրս գալու արգելքի հիման վրա դրա օրենսդրական հիմքերը բացակայում են, ինչպես նաև անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի նմանատիպ ցանկացած խախտում պետք է օրենսդրությամբ սահմանված կարգով առաջ բերի պատասխանատու պաշտոնատար անձի պատասխանատվության հարց:

Ասվածը հիմք ընդունելով՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է՝

*1. քրեական գործով վարույթին որպես վկա կամ տուժող հանդես եկող կամ դատավարական կարգավիճակ չունեցող անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը որևէ դեպքում չի կարող սահմանափակվել՝ վերջինիս անձնագիրը վերցնելու կամ ՄԷԿՏ համակարգով հանրապետությունից դուրս գալու արգելքի հիման վրա. դրա օրենսդրական հիմքերը բացակայում են.*

*2. անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի նմանատիպ ցանկացած խախտում պետք է օրենսդրությամբ սահմանված կարգով առաջ բերի պատասխանատու պաշտոնատար անձի պատասխանատվության հարց:*



## **10. Հանցագործությունների վերաբերյալ ֆիզիկական անձանց հաղորդումները չքննարկելու և հաղորդումն ընդունող մարմնի հայեցողության պրակտիկան**

Հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման՝ օրենքով նախատեսված ընթացակարգերի գործնական ապահովման խնդիրներին ևս Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձ է կատարել 2017 թվականի տարեկան հաղորդում<sup>192</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ 2018 թվականին ևս ահազանգեր են ստացվել իրավապահ մարմինների կողմից հանցագործության մասին հաղորդումն ընդունելուց և գրանցելուց հրաժարվելու վերաբերյալ: Նման դեպքերում անձին ներկայացվել են նույնաբովանդակ պատճառաբանություններ, որ ենթադրյալ կոնկրետ հանցագործության քննությունը ենթակա չէ տվյալ մարմնին կամ օրինակ, ընդդատյա չէ այդ մարմնի տարածքային բաժնին:

Նույնաբովանդակ բոլոր ահազանգերով բարձրացված խնդիրները՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և Ոստիկանության ներկայացուցիչների հետ սերտ համագործակցության արդյունքում ստացել են լուծում, արդյունքում՝ անձից ընդունվել է հանցագործության մասին հաղորդում:

Բացի դրանից, հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման վերաբերյալ բողոքներ են ստացվել, որ Ոստիկանության ծառայողների կողմից հանցագործության մասին հաղորդումները քննարկելիս ոչ բոլոր դեպքերում է կայացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով կայացման ենթակա որոշումներից որևէ մեկը:

Չնայած առանձին դեպքերով հաղորդում ներկայացրած անձանց իրավունքների վերականգնմանն ու խախտում թույլ տված պաշտոնատար անձանց պատասխանատվության կիրառմանը՝ Պաշտպանին ներկայացված բողոքները փաստում են, որ հանցագործության մասին հաղորդումը չընդունելու կամ այն որպես ահազանգ դիտարկելու, ստուգման ընթացակարգը եզրակացությամբ ավարտելու, հաղորդում ներկայացրած անձին չպատասխանելու կամ գրությամբ պատասխանելու ոչ իրավաչափ դեպքերը շարունակվում են:

Ամփոփելով Պաշտպանին հասցեագրված բողոքներում վեր հանված հարցերը անհրաժեշտ է անդրադառնալ հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման՝ օրենքով նախատեսված ընթացակարգերի գործնական ապահովման խնդիրներին: Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացված բողոքների ուսումնասիրության շրջանակներում իրավակիրառ պրակտիկայի դիտարկումը թույլ է տալիս վեր հանել հանցագործության մասին հաղորդումների քննարկման հետ կապված հետևյալ խնդիրները՝

- հանցագործության մասին հաղորդումները չընդունելը և դրանց ընթացք չտալը,
- հանցագործության մասին հաղորդումները «ստուգման» ընթացակարգի շրջանակներում քննարկելը, այն եզրակացությամբ ավարտելը և անձին գրությամբ պատասխանելը՝ առանց քրեադատավարական օրենքով նախատեսված որոշումներից որևէ մեկի կայացման:

Հանցագործության մասին հաղորդումներին ընթացք տալու օրենսդրական կարգավորվածության առումով հարկ է առանձնացնել ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու,

<sup>192</sup> Առավել մանրամասն տե՛ս 2017 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 194-199:

հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը սահմանելու մասին» թիվ 1495-Ն որոշման ընդունումը<sup>193</sup>: Մասնավորապես, որոշման 5-րդ կետի համաձայն՝ հաղորդումները, անկախ իրավախախտումների կատարման կամ պատահարների առաջացման վայրից և ժամանակից, ինչպես նաև դրանցում պարունակվող տեղեկությունների ամբողջականությունից, պարտադիր ենթակա են ընդունման ոստիկանության տարածքային մարմիններում և գրանցման ոստիկանության՝ հերթապահ մաս ունեցող տարածքային մարմիններում:

Որոշման 62-րդ կետն ամրագրում է, որ հանցագործության մասին հաղորդումների ստուգումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ, որի արդյունքում ընդունվում է նույն օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը:

Որպես խնդրի լուծմանն ուղղված կարգավորում՝ Կառավարության որոշմամբ նախատեսվում է նաև քաղաքացիների իրավունքների պարզաբանմամբ կտրոն-ծանուցագրերի տրամադրում՝ անձանց իրազեկվածությանը նպաստելու նպատակով: Կառավարության վերը նշված որոշման ընդունումն ինքնին դրական է այն առումով, որ այդպիսով ամրագրվեցին իրավախախտումների ընդունման, գրանցման, հաշվառման և ստուգման ոչ դատավարական հարցերի կարգավորման իրավական հիմքերը<sup>194</sup>: Հարկ է նկատել, որ Կառավարության որոշմամբ ամրագրված՝ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների պահպանմամբ ստուգում իրականացնելու պահանջը վերաբերում է հանցագործության մասին հաղորդմանը: Մինչդեռ, Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքներում բարձրացված բուն խնդիրն էլ այն է, որ անձանց հաղորդումները, որպես այդպիսին, չեն դիտարկվել իբրև հանցագործության մասին հաղորդում:

Ասվածի հետ կապված, Կառավարության որոշման՝ հասկացությունները սահմանող 3-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության մասին հաղորդումները՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 177-179-րդ հոդվածներով նախատեսված քրեական գործ հարուցելու առիթներն են:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածը սահմանում է, որ. «Քրեական գործ հարուցելու առիթներն են՝

- 1) հանցագործությունների մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին,
- 2) հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները,
- 3) հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս:»:

Իսկ օրենսգրքի 177-179-րդ հոդվածներով կարգավորվում են քրեական գործ հարուցելու վերը նշված առիթներին ներկայացվող առավելապես տեխնիկական պահանջները (ռեկվիզիտները): Ասվածը նշանակում է, որ հանցագործության մասին հաղորդմանը, որպես այդպիսին, ներկայացվող բովանդակային պահանջ օրենսդրորեն նախատեսված չէ:

Այդ բովանդակային պահանջները հստակեցված են ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշումներով: Մասնավորապես՝

- քրեական գործ հարուցելու առիթ կարող է հանդիսանալ ոչ թե ցանկացած, այլ միայն հանցագործության մասին արված հաղորդումը.

<sup>193</sup> Որոշումն ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի 1-ից:

<sup>194</sup> Բանն այն է, որ մինչև Կառավարության վերոնշյալ որոշման ընդունումը՝ այդպիսի իրավական հիմք էին ծառայում ՀՀ գլխավոր դատախազի և Ներքին գործերի նախարարի 1999 թվականի թիվ 12/354 համատեղ հրամանի պահանջները: Մինչդեռ, այդ հրամանի՝ որպես նորմատիվ իրավական ակտի պետական գրանցումն ապահովված չէր «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

• առիթը պայման է, որի առկայության դեպքում օրենքը լիազորում է իրավասու մարմիններին և պաշտոնատար անձանց մտնել իրավահարաբերությունների մեջ, կատարել գործողություններ, որոնք իրենց միասնությամբ ներկայացնում են քրեական դատավարության սկզբնական փուլի գործունեություն.

• կոնկրետ հանցագործության մասին տվյալներ բովանդակելու պահանջը, սակայն, չի նշանակում, որ անձն իր հաղորդման մեջ պետք է ներկայացնի այնպիսի փաստական տվյալներ, որոնք իրենց բնույթով բավարար լինեն հանցագործության հատկանիշների առկայությունն առերևույթ հաստատված համարելու համար.

• հաղորդման մեջ պարունակվող տեղեկությունները կարող են բավարար լինել այն քննարկելուն, ստուգելուն և լուծելուն ուղղված օրենսդրական կարգավորումները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներ) գործողության մեջ դնելու համար, եթե ողջամիտ հավանականություն կա, որ դրանց ստուգման արդյունքում կարող են հայտնաբերվել, այլ ոչ թե հաստատապես հայտնաբերվելու են քրեական գործ հարուցելու բավարար հիմքեր.

• այդ չափանիշին համապատասխանող յուրաքանչյուր հաղորդում առաջացնում է վարույթ իրականացնող մարմնի պարտականությունը դրա կապակցությամբ կայացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը<sup>195</sup>:

Ասվածի հաշվառմամբ, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ **հաղորդումների քննարկման և լուծման դատավարական ընթացակարգի նախաձեռնումը պայմանավորված է ոչ թե հանցագործության մասին ներկայացված տեղեկության արժանահավատության և հավաստիության գնահատման արդյունքներով, այլ դրա վերաբերելիության նախնական ստուգմամբ, այսինքն՝ այն եզրահանգմամբ, որ ներկայացված հաղորդման մեջ առկա են տվյալներ, որոնք կարող են որևէ կերպ առնչվել քրեական օրենքով արգելված արարքին:**

Այս առումով, կարծում ենք, որ հաղորդումն ընդունող մարմնի հայեցողությունը, դրա հիման վրա ընթացակարգ նախաձեռնելու առումով, պետք է սահմանափակվի միայն ներկայացված տեղեկության՝ ենթադրյալ հանցագործության հետ հնարավոր կապի ստուգմամբ՝ առանց իրավական գնահատական տալու դրանց ճշմարտացիությանն ու հիմնավորվածությանը:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բազմաթիվ բողոքների ուսումնասիրմամբ կարելի է արձանագրել նաև, որ մարդիկ իրազեկ չեն Վճռաբեկ դատարանի դիրքորոշումներին: Բազում դեպքերում անձինք դիմում են Ոստիկանություն, համոզված լինելով, որ իրենց կողմից ներկայացվածը հանցագործության մասին հաղորդում է՝ անտեղյակ լինելով Վճռաբեկ դատարանի կողմից հստակեցված՝ հանցագործության մասին հաղորդմանն առաջադրվող չափանիշներին: Ուստի նաև ակնկալում են, որ այն կընդունվի որպես հանցագործության մասին հաղորդում և օրենքով սահմանված կարգով ընթացք կտրվի: Նման դեպքերում Պաշտպանի աշխատակազմի կողմից անձանց պարզաբանվում են Վճռաբեկ դատարանի համապատասխան դիրքորոշումները: Հետևաբար, անհրաժեշտ է Ոստիկանություն դիմած անձին որևէ եղանակով իրազեկել Վճռաբեկ դատարանի որոշումներով հստակեցված՝ հանցագործության մասին հաղորդումներին առաջադրվող չափանիշների մասին:

Հատկանշական է նաև, որ հանցագործության մասին հաղորդմամբ բովանդակվող տեղեկությունների օրենսդրական կարգավորման մոտեցում է որդեգրվել Քրեական

<sup>195</sup> Հանցագործությունների մասին հաղորդումների ընդունման և քննարկման քրեադատավարական կարգավորումների, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի վերլուծությունն տե՛ս նաև 2016 թվականի տարեկան զեկույցի էջեր 137-140:

դատավարության նոր օրենսգրքի նախագծով, որի 173-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համապատասխան հաղորդումը համարվում է առերևույթ հանցանքի մասին, եթե դրանով փաստվում է այնպիսի գործողություն կամ անգործություն, որին ողջամտորեն կարող է տրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցավոր արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական:

Խնդրի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավական գնահատականներն ու գործող քրեադատավարական օրենքի պահանջները, կարծում ենք, ապահովում են բավարար որոշակիություն՝ հանցագործության մասին հաղորդման ստուգման և քրեադատավարական ընթացակարգերի կիրառման առումով: Այդուհանդերձ, «հանցագործության մասին հաղորդման» հասկացության օրենսդրական ամրագրումը՝ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքով սահմանված տարրերի ու հատկանիշների արտացոլմամբ, կարող է նպաստել իրավակիրառ պրակտիկայում բարձրացված խնդիրների բացառմանը:

*Վերը նշվածի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է՝*

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ամրագրել «հանցագործության մասին հաղորդման» հասկացությունը՝ օրենսդրական մակարդակում հստակեցնելով հաղորդման բովանդակությանը ներկայացվող պահանջները՝ իբրև քրեական գործ հարուցելու առիթ դիտարկելու առումով:

2. հանցագործությունների վերաբերյալ քաղաքացիների հաղորդումները քննարկելիս՝ գործնականում ապահովել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջները՝ Վճռաբեկ դատարանի կողմից տրված իրավամեկնաբանման հաշվառմամբ: Քրեադատավարական օրենքի դրույթները պետք է անվերապահորեն կիրառվեն հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների ընդունման հենց սկզբնական փուլից:

3. որևէ եղանակով հաղորդում ներկայացնող անձին իրազեկել Վճռաբեկ դատարանի որոշումներով հստակեցված՝ հանցագործության մասին հաղորդումներին առաջադրվող չափանիշների մասին (օրինակ՝ Ոստիկանության բաժիններում տեսանելի վայրերում փակցնել այդ մասին տեղեկատվական թերթիկներ):

#### **11. Քրեական գործով վարույթի շրջանակներում անձի ոչ պատշաճ ծանուցված լինելու և դրանով պայմանավորված՝ բերման ենթարկելու ոչ իրավաչափությունը**

Քրեական դատավարությանը մասնակցող անձինք օրենքով սահմանված կարգով կրում են քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալու պարտականություն:

2018 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի թեժ գիծ հեռախոսահամարին բազմաթիվ անգամ ահազանգեր են ստացվել հարցաքննության կանչելու մասին ծանուցագրի ձևին և բովանդակությանը ներկայացվող օրենսդրական պահանջները չպահպանելու մասին:

Մասնավորապես, անձինք հայտնել են, որ հեռախոսազանգի միջոցով իրենք հրավիրվել են քննչական բաժին՝ հարցաքննության, սակայն չեն տեղեկացվել՝ կոնկրետ ինչ գործի շրջանակներում, ինչ կարգավիճակով, և թե այդ կարգավիճակից բխող ինչ իրավունքներ և պարտականություններ ունեն: Թեժ գծին ստացված բանավոր բողոքներով անձինք ցանկացել են տեղեկանալ, թե արդյոք այդ եղանակով հարցաքննության կանչելն իրավաչափ է, և արդյոք իրենք այդպիսի դեպքերում պարտավոր են ներկայանալ վարույթն իրականացնող մարմին:

Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքների ուսումնասիրության արդյունքներով վեր են հանվել հետևյալ խնդիրները՝

- անձին՝ որպես առանց հարգելի պատճառի քննության չներկայացող

դատավարության մասնակցին բերման ենթարկելն այն դեպքում, երբ ծանուցագիրը սահմանված ժամկետում վերջինիս հանձնված չի եղել.

- հարցաքննության կանչելու մասին ծանուցագրի ձևին և բովանդակությանը ներկայացվող օրենսդրական պահանջները չպահպանելը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ հարցաքննության կանչելու կարգն ամրագրող 205-րդ հոդվածի համաձայն.

«1. Վկան, տուժողը, կասկածյալը և մեղադրյալը քննիչի մոտ կանչվում են ծանուցագրով: Ծանուցագրում նշվում է, թե ով է կանչում, ում, դատավարական ինչպիսի կարգավիճակով, ուր և երբ (օրն ու ժամը) պետք է ներկայանա կանչվողը, ինչպես նաև անհարգելի պատճառներով չներկայանալու հետևանքները:

(...)

3. Հարցաքննության կանչված անձը պարտավոր է քննիչին ներկայանալ նշանակված ժամկետում կամ նրան նախապես իրազեկել չներկայանալու պատճառները: Անհարգելի պատճառով չներկայանալու դեպքում հարցաքննության կանչված անձը կարող է բերման ենթարկվել սույն օրենսգրքի 153-րդ հոդվածով նախատեսված հիմքով, իսկ կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կարող են կիրառվել նաև սույն օրենսգրքով նախատեսված դատավարական հարկադրանքի այլ միջոցներ(...):»:

Օրենսգրքի 153-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ բերման ենթարկելն առանց հարգելի պատճառի քննության չներկայացող կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին, դատապարտյալին, վկային և տուժողին հարկադրաբար քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելն է՝ նրա նկատմամբ սույն օրենսգրքով նախատեսված համապատասխան դատավարական գործողություններ կատարելու համար, որը կարող է զուգորդվել բերման ենթարկվող անձի իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակմամբ:

Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պատշաճ ծանուցման և դրանով պայմանավորված բերման ենթարկելու քրեադատավարական կարգավորումների վերլուծությունը հիմք է տվել եզրակացնելու, որ՝

- վարույթն իրականացնող մարմին ծանուցագրով կանչելու պահանջը, ինչպես նաև ծանուցագրի բովանդակությանը ներկայացվող պահանջները, անձանց շրջանակը, ում կարող է հանձնվել ծանուցագիրը, ամրագրված են միայն հարցաքննության կանչելու դատավարական կարգի շրջանակներում.

- «ծանուցագիր» եզրույթի գործածումն ու դրա բովանդակությանը ներկայացվող օրենսդրական պահանջները կանխորոշում են դրա գրավոր ձևի պարտադիրությունը, իսկ անձին բանավոր ծանուցելու պրակտիկան հակասում է քրեադատավարական օրենքի պահանջներին.

- վարույթն իրականացնող մարմին ներկայանալու ծանուցագիրն անձին ժամանակին հանձնելու, վերջինիս կողմից այդ ծանուցագիրը ստացած լինելու և հետևաբար նաև չներկայանալու պատճառների մեջ հավաստիանալու դատավարական որևէ կարգավորում նախատեսված չէ.

- վարույթն իրականացնող մարմին ծանուցագրով կանչելու պահանջը, ինչպես նաև ծանուցագրի բովանդակությանը ներկայացվող պահանջները, անձանց շրջանակը, ում կարող է հանձնվել ծանուցագիրը, թերևս ամրագրված են միայն հարցաքննության կանչելու դատավարական կարգի շրջանակներում.

- մինչդեռ, բերման ենթարկելը՝ որպես անձի իրավունքների և ազատությունների սահմանափակմամբ զուգորդվող դատավարական հարկադրանքի միջոց, կարող է ուղղված լինել նաև բերման ենթարկվողի՝ օրենսգրքով նախատեսված այլ դատավարական գործողությունների մասնակցության ապահովմանը.

- անձին բերման ենթարկելու վարույթն իրականացնող մարմնի որոշման պատճառաբանվածության պահանջը ենթադրում է, որ այդպիսի որոշում կարող է կայացվել միայն անձի պատշաճ ծանուցման և նշանակված ժամկետում ներկայանալուն խոչընդոտող հարգելի պատճառների առկայության մասին անձի կողմից չտեղեկացնելու դեպքում:

- վարույթն իրականացնող մարմին ներկայանալու անհրաժեշտության մասին անձին ծանուցելու պատշաճությունն իր հերթին պետք է կանխորոշվի ոչ միայն ծանուցագիրն անձին հանձնելու փաստով, այլև դրա ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջների պահպանմամբ, ինչպես նաև ծանուցագիրն այնպիսի ողջամիտ ժամկետում հանձնելով, որ անձը ժամանակին ներկայանալու կամ չներկայանալու պատճառների մասին հայտնելու հնարավորություն ունենա:

Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է, որ անձի պատշաճ ծանուցման և վերջինիս բերման ենթարկելու որոշման իրավաչափության ապահովման նպատակով քրեական գործով վարույթի շրջանակներում ծանուցման հետ կապված հարաբերությունները պետք է հստակ կանոնակարգման ենթարկվեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով<sup>196</sup>:

Սրա հետ կապված, հարկ է արձանագրել, որ վերոնշյալ խնդրի օրենսդրական կանոնակարգումների ամրագրման նպատակով 2017 թվականին նախաձեռնվել է «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ: Նախագծով առաջարկվող լուծումներով նպատակ է հետապնդվում կանոնակարգելու քրեական գործով վարույթի շրջանակներում դատավարությանը մասնակցող անձանց ծանուցման հետ կապված հարաբերությունները՝ մասնավորապես ամրագրելով դատավարական գործողության կամ դատական նիստի մասին ծանուցման եղանակները, ծանուցագրի բովանդակությունը և այն հանձնելու կարգը: Եվ այս առումով, նախագծով առաջարկվող լուծումները սկզբունքորեն ընդունելի են: Մինևույն ժամանակ, Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքին ներկայացված նշված նախագծի կապակցությամբ մի շարք առանցքային նկատառումներ են ներկայացվել, որոնք հանգում են հետևյալին՝

- ծանուցագրի բովանդակությունը վարույթն իրականացնող մարմնին ներկայանալու պարտականություն ունեցող անձի համար որոշակիության ապահովման տեսանկյունից, կարծում ենք, պետք է ներառի նաև տեղեկություններ հարուցված քրեական գործով վարույթի վերաբերյալ:

- պետք է օրենսդրորեն ամրագրվի կոնկրետ գործի շրջանակներում տվյալ կարգավիճակով առաջին անգամ ծանուցվող անձին վերջինիս դատավարական իրավունքների և պարտականությունների ցանկն ուղարկելու պահանջ:

- օրենքով նախատեսված դեպքերում անձին սահմանված ժամկետից ուշ ծանուցելը չի կարող բացառել անձի դատավարական իրավունքների իրացումը, այդ թվում՝ կատարման ենթակա դատավարական գործողության շրջանակներում, ինչպես նաև վերջինիս՝ չներկայանալու հարգելի պատճառների մասին վարույթն իրականացնող մարմնին հայտնելու հնարավորության իրացումը:

- պետք է օրենսդրորեն ամրագրվեն ծանուցման պատշաճության առարկայական չափանիշները, այսինքն՝ կոնկրետ ծանուցման եղանակով պայմանավորված՝ այն գործողությունները (փաստերը), որոնց իրականացմամբ (առկայությամբ) ծանուցումը համարվում է պատշաճ:

Ասվածի հաշվառմամբ՝ *Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ՝*

*1. Քրեական դատավարության օրենսգրքում անհրաժեշտ է ամրագրել վարույթն իրականացնող մարմնին ներկայանալու վերաբերյալ անձին ծանուցելու ընթացակարգերը՝*

<sup>196</sup> Տե՛ս նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2016 թվականի տարեկան հաղորդման էջեր 146-149:

ծանուցման ժամկետների, եղանակների, ծանուցագրի բովանդակության և դրանց առնչվող անձի իրավունքների ու երաշխիքների հետ կապված հարցերի կարգավորմամբ,

2. գործնականում բացառել դեպքերը, երբ անձը բերման է ենթարկվում առանց վարույթն իրականացնող մարմին ներկայանալու պատշաճ ծանուցման,

3. քրեական հետապնդման մարմինների համապատասխան ներկայացուցիչների համար կազմակերպել հատուկ դասընթացներ՝ ուղղված նշված խնդիրների լուծմանը:

## **12. Ազատությունից զրկելիս անձի իրավունքների երաշխավորումը և գործնական ապահովումը**

Անձնական ազատության իրավունքի երաշխավորման հետ կապված համակարգային խնդիրներին մանրամասն անդրադարձ է կատարվել ինչպես Մարդու իրավունքների պաշտպանի 2016 և 2017 թվականների գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումներում, այնպես էլ 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների վերաբերյալ արտահերթ հրապարակային զեկույցի շրջանակներում<sup>197</sup>:

2018 թվականի ընթացքում ևս ազատությունից զրկելիս անձի նվազագույն իրավունքների ապահովման վերաբերյալ բողոքներ կրկին ստացվել են: Օրինակ, բողոքներից մեկով քաղաքացին տեղեկացրել է, որ 10:00-ի սահմաններում բերման է ենթարկվել Ոստիկանության բաժին, որտեղ պահվել է մինչև ժամը 20:30-ը: Քաղաքացու պնդմամբ՝ այդ ընթացքում չի ծանուցվել իր իրավունքների մասին, չի ապահովվել փաստաբան ունենալու իր իրավունքը, իսկ զանգի հնարավորությունից օգտվել է միայն բաժին բերման ենթարկվելուց 6 ժամ անց:

Մեկ այլ դեպքում քաղաքացին տեղեկացրել է, որ թմրանյութ օգտագործած վիճակում բերման է ենթարկվել Ոստիկանության բաժին, ինքնազգացողությունն այդ ընթացքում վատացել է, գիտակցության է եկել քննչական բաժնում: Ըստ քաղաքացու քննչական բաժնում պահվել է 90 ժամ:

Անձի անձնական ազատության իրավունքի պաշտպանության միջազգային իրավական մոտեցումների և սահմանադրաիրավական երաշխիքների հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից առաջ են քաշվել հետևյալ իրավական չափանիշները՝

- անձի անձնական ազատության իրավունքին միջամտության՝ «ազատությունից զրկման» փաստը որոշելիս որոշիչ գործոններ են ազատությունից զրկելու բնույթը, ազատությունից զրկելու օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերը: Օբյեկտիվ կողմը ներառում է ազատությունից զրկման վայրը և պահման ժամանակը, սուբյեկտիվ կողմը՝ անձի համաձայնությունը<sup>198</sup>.

- ազատությունից զրկել է համարվում, երբ իրավապահ մարմինը, ուժի գործադրմամբ կամ առանց դրա, անձին արգելում է լքել իր գտնվելու վայրը կամ պահանջում է իր հետ գնալ մեկ այլ վայր կամ անձը ստիպված է հետևել ոստիկանի կամքին: «Ազատությունից զրկել» է համարվում նաև անձին փողոցում մի քանի ժամով կանգնեցնելը և հեռանալն արգելելը<sup>199</sup> կամ օրինակ, ոստիկանության բաժնից դուրս գալն արգելելը,

<sup>197</sup> Տե՛ս 22 մարդու իրավունքների պաշտպանի 2016 թվականի տարեկան հաղորդման էջեր 149-154, ինչպես նաև 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների վերաբերյալ արտահերթ հրապարակային զեկույցի էջեր 41-59:

<sup>198</sup> Տե՛ս Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի վերաբերյալ ուղեցույցի 5-ից 7-րդ էջերը՝ [http://www.echr.coe.int/Documents/Guide\\_Art\\_5\\_ENG.pdf](http://www.echr.coe.int/Documents/Guide_Art_5_ENG.pdf):

<sup>199</sup> Տե՛ս Գիլլանն ու Քուինթոնն ընդդեմ Միացյալ Թագավորության (Gillan & Quinton v. the United Kingdom) գործով 2010 թվականի հունվարի 12-ի վճիռը, զանգատ թիվ 4158/05, կետ 57:

նույնիսկ, եթե անձն այնտեղ է գնացել իր կամքով՝ առանց իրավապահ մարմինների կողմից ուժի գործադրման<sup>200</sup>։

- ազատությունից զրկված լինելու փաստի գիտակցումն այս հարցում որոշիչ չէ։ Որոշիչ է միայն այն հանգամանքը, որ անձն այլևս չի կարող լքել իր գտնվելու վայրը<sup>201</sup>, որը կարող է լինել ոչ միայն իր նպատակային նշանակությամբ որպես այդպիսին օգտագործվող տարածքը (օրինակ՝ խուցը), այլև ցանկացած վայր, այդ թվում՝ տրանսպորտային միջոց<sup>202</sup>։

- անձն ազատությունից զրկվածի կարգավիճակ է ձեռք բերում անգամ այն դեպքերում, երբ կամովին ներկայանալով ոստիկանություն՝ հնարավորություն չի ունենում լքել այն։

- անձի անձնական ազատության իրավունքին ցանկացած միջամտություն, անկախ դրա իրականացման՝ օրենքով նախատեսված հիմքերից և ընթացակարգերից, պետք է ենթադրի իրավունքի սահմանափակման բնույթին ու աստիճանին համարժեք իրավական երաշխիքների տրամադրում։

- իրավասու պետական մարմինների գործունեության հիմքում պետք է ընկած լինի այն սկզբունքային մոտեցումը, ըստ որի՝ անձն ազատությունից զրկվելու փաստի ուժով՝ անկախ վարությանն առանձնահատկություններից (քրեական, վարչական), ֆորմալ ընթացակարգերի առկայությունից կամ բացակայությունից, օպերատիվ միջոցառումների իրականացումից, պետք է ապահովվի իրավունքների՝ սահմանադրությամբ և միջազգային իրավական նորմերով երաշխավորված իրավունքների նվազագույն ծավալով։

- այլ կերպ ասած, անձին ազատությունից զրկելը՝ անկախ նրանից, թե դա իրականացվել է, ասենք, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի կամ քրեական դատավարության շրջանակներում, ձերբակալման կամ բերման ենթարկելու ինստիտուտների շրջանակներում, պետք է ապահովվի անձին որոշակի նվազագույն իրավունքներ տրամադրելով և միասնական երաշխիքներ ամրագրելով։

Ընդ որում, նվազագույն իրավունքների ապահովման պահանջն ուղղված է ոչ միայն անձի անձնական ազատության իրավունքի, այլև վատ վերաբերմունքի չենթարկվելու բացարձակ իրավունքի ապահովմանը։ Այս պահանջից ելնելով՝ Եվրոպայի խորհրդի խոշտանգումների կանխարգելման կոմիտեի (ԽԿԿ) չափանիշներում ամրագրված են ոստիկանության կողմից ձերբակալված անձանց երեք իրավունքները. փաստաբանի և բժշկի մատչելիության իրավունքները և ձերբակալության մասին ազգականին կամ իր ընտրությամբ երրորդ անձին տեղեկացնելու իրավունքը։

- ներպետական օրենսդրությամբ սահմանված ցանկացած ընթացակարգի շրջանակներում ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք, միջազգային պահանջների ձևակերպմամբ, պետք է ունենա առնվազն հետևյալ իրավունքները։

1. անհապաղ տեղեկացվել ազատությունից զրկվելու պատճառների մասին՝ իրեն հասկանալի լեզվով։

2. պահպանել լռություն,

3. իրեն ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվի իր ընտրած անձը,

4. հրավիրել փաստաբան,

<sup>200</sup> Տե՛ս Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ ուղեցույցի 17-ից 18-րդ էջերը՝ [http://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRHAND/DG2-EN-HRHAND-05\(2004\).pdf](http://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRHAND/DG2-EN-HRHAND-05(2004).pdf),

Շիմովոլոսն ընդդեմ Ռուսաստանի (Shimovolos v. Russia) գործով 2011 թվականի նոյեմբերի 28-ի վճիռը, գանգաստ թիվ 30194/09, կետ 49։

<sup>201</sup> Տե՛ս Դե Ուալդը, Ումսը և Վերսիպյան ընդդեմ Բելգիայի (De Wilde, Ooms and Versyp v. Belgium) գործով 1971 թվականի հունիսի 18-ի վճիռը, գանգաստներ թիվ 2832/66, 2835/66, 2899/66, կետ 65։

<sup>202</sup> Տե՛ս Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ ուղեցույցի էջ 18՝ [http://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRHAND/DG2-EN-HRHAND-05\(2004\).pdf](http://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRHAND/DG2-EN-HRHAND-05(2004).pdf)։



5. իր պահանջով ենթարկվել բժշկական զննման, այդ թվում՝ իր նախընտրած բժշկի կողմից,

6. իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկել և դատարանի կողմից ազատ արձակվել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է:

Մինչդեռ, վարչական իրավախախտման վերաբերյալ գործով վարույթի շրջանակներում անձին ազատությունից զրկելու՝ օրենքով ամրագրված հստակ կառուցակարգերը և ընթացակարգերը բացակայում են: Իսկ ոստիկանության կողմից ազատության իրավունքի սահմանափակմամբ պայմանավորված՝ անձի իրավունքների ցանկն ու դրանց ծանուցման կարգն իրենց ամրագրումն են ստացել ենթաօրենսդրական ակտով՝ ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 14-ի «Մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը հաստատելու մասին» թիվ 818-Ն որոշմամբ:

Մինչդեռ, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, գործնականում չեն ապահովվում անգամ Կառավարության վերը նշված որոշման պահանջները:

Խնդրի համակարգային բնույթի, ինչպես նաև օրենսդրական կարգավորումների անկատարության հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը բարձրացրել էր վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում անձին ազատությունից զրկելու ոչ լիարժեք կանոնակարգումների և դրանով պայմանավորված՝ իրավակիրառ պրակտիկայի սահմանադրականության հարց: Արդյունքում, Սահմանադրական դատարանի 2017 թվականի հունվարի 24-ի որոշմամբ տրվեցին անձի անձնական ազատության երաշխավորման վերոնշյալ չափանիշներին համահունչ իրավական հստակ գնահատականներ: Մասնավորապես, Սահմանադրական դատարանն արձանագրեց, որ ներպետական իրավական կարգավորումները համապատասխանում են ՀՀ սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ, համաձայն որի՝ «խախտողի բերում», «վարչական ձեռքակալում», «բերման ենթարկում» միջոցառումների դեպքում անձնական ազատությունից փաստացի զրկելու պահից սկսած ազատությունից զրկված անձի համար ապահովվում են ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով և 64-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավունքները՝ որպես անմիջականորեն գործող իրավունքներ, և ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի ծանուցման ենթակա իրավունքների ցանկում միջոց պետք է ներառված լինեն առնվազն ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով (Անձնական ազատությունը) և 64-րդ հոդվածի 1-ին մասով (իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը) սահմանված իրավունքները:

Ավելին, Սահմանադրական դատարանը, անդրադառնալով վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում անձին ազատությունից զրկելու ընթացակարգերի օրենսդրական կանոնակարգման անկատարությանը, ընդգծել է, որ «անձի ազատության իրավունքի ապահովման բնագավառում ձևավորվել է ոչ պատշաճ իրավակիրառ պրակտիկա՝ հնարավոր դարձնելով անգամ Սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված իրավադրույթի՝ ոստիկանության կողմից շարունակական կիրառումը, ինչն իր հերթին երկրում սահմանադրական օրինականությանն ուղղված լուրջ սպառնալիք է»՝ ըստ այդմ երկրում սահմանադրական օրինականության հաստատման տեսանկյունից անհետաձգելի համարելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի ընդունումը<sup>203</sup>:

<sup>203</sup> Առավել մանրամասն տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ – 1339 որոշումը: <http://concourt.am/armenian/decisions/common/2017/pdf/sdv-1339.pdf>

Նման պրակտիկայի շարունակականությունը փաստվում է նաև 2017 թվականի ընթացքում արձանագրված խնդիրներով<sup>204</sup>:

Մասնավորապես, Պաշտպանին ներկայացված բողոքները վերաբերել են Ոստիկանության բաժիններ առանց հիմքերի պարզաբանման անձանց բերման ենթարկելուն: Արձանագրվել են դեպքեր, երբ ոստիկանության բաժին կամովին կամ ոստիկանի «հրավերով» ներկայացած քաղաքացիները ժամեր շարունակ պահվել են այնտեղ և դուրս գալու հնարավորություն չեն ունեցել:

Բացի այդ, բողոքների ուսումնասիրությունը հիմք է տալիս արձանագրելու, որ անձանց ոստիկանության բաժին «հրավիրելու» և վերջիններիս՝ ազատությունից փաստացի զրկմամբ պայմանավորված իրավունքները չապահովելու պրակտիկան իրավապահ մարմինների կողմից որոշ դեպքերում արդարացվում է այն հիմնավորմամբ, որ անձին բերման ենթարկելու մասին որոշում չի կայացվել, քանի որ նրան հրավիրել են բաժին օպերատիվ միջոցառում իրականացնելու շրջանակներում:

Մարդու իրավունքների պաշտպանն այս կապակցությամբ վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ նման դեպքերը նույնպես պետք է համարվեն ազատությունից զրկում, և այդ անձինք պետք է օժտվեն անհրաժեշտ իրավունքներով ու դրանք ապահովող երաշխիքներով: Մա պետք է դառնա իրավապահ մարմինների գործունեության սկզբունք: Ինչ վերաբերում է «օպերատիվ միջոցառումներ իրականացնելու» պետական մարմնի արդարացումներին, դրանք չեն կարող ընդունելի լինել, իսկ նման պրակտիկան պետք է պարզապես բացառել:

Ոստիկանություն «հրավիրելու» ընթացակարգի կիրառության հետ կապված՝ ՀՀ ոստիկանության կողմից տեղեկություն է ներկայացվել, որ մշակվել է «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որով նախատեսվել է «հրավիրման» կամավորությունը, ինչպես նաև ծանուցման կարգը: Սրա հետ կապված, կարևոր է նկատել, որ «հրավիրելու» որպես ոստիկանություն կամավոր ներկայանալու գործընթացի՝ օրենքով ամրագրումը որևէ կերպ չի կարող ընդգրկել փաստացի ազատությունից զրկման վերը նշված և ոչ մի դեպք:

Այսպիսով, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության արդյունքում իրականացրած անմիջական դիտարկումների և կատարված իրավական վերլուծության արդյունքները փաստում են վարչական ձեռքարկման, բերման ենթարկելու և խախտողի բերման՝ ազատությունից զրկում ենթադրող ընթացակարգերի՝ օրենքով հստակ կանոնակարգման անհրաժեշտությունը:

Ուստի, ազատությունից զրկված անձանց իրավունքների երաշխավորման առաջնահերթությամբ պայմանավորված՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ *անհրաժեշտ է՝*

*1. ապահովել ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին համապատասխան իրավակիրառում: Մինևույն ժամանակ, անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել վարչական իրավախախտման վերաբերյալ գործով վարույթի շրջանակներում անձին ազատությունից զրկելու հստակ և որոշակի ընթացակարգեր,*

*2. անհրաժեշտ է նաև համապատասխան փոփոխություններ կատարել Ոստիկանության գործունեության ներքին կանոնակարգման ակտերում, ինչպես նաև Ոստիկանության՝ քաղաքացիների հետ անմիջականորեն շփվող ծառայողների*

<sup>204</sup> Քրեական գործով վարույթի շրջանակներում ազատությունից զրկման ընթացակարգերի (արգելանքի վերցվելու պահից իրավունքների երաշխավորում, բերման ենթարկվածի կարգավիճակ և այլն) հստակեցմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների մասին խոսվել է սույն զեկույցի՝ «Փաստացի քրեական հետապնդումից» անձի պաշտպանության՝ օրենսդրական երաշխիքների և գործնական միջոցառումների բավարարությունը:

վերապատրաստումն իրականացնել այնպես, որ յուրաքանչյուր ուստիկան տիրապետի քաղաքացիների նվազագույն իրավունքներին ու դրանց թղթակցող իր պարտականություններին:

### **13. Ազատությունից զրկված անձի՝ փաստաբանի մատչելիության իրավունքի ապահովումը և փաստաբանների մասնագիտական գործունեության երաշխիքները**

Փաստաբանի կարգավիճակն ու նրա դերի ճիշտ ընկալումը հասարակությունում Մարդու իրավունքների պաշտպանի առաջնահերթ ուշադրության արժանի հարցերից են: Փաստաբանի պաշտպանված մասնագիտական գործունեությունը երկրում մարդու իրավունքների պաշտպանության համակարգը պայմանավորող գործոններից է, արդարադատության համակարգում և իրավունքի գերակայության ապահովման գործում այն ունի առանցքային կարևորություն:

Ինչպես նշել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, առանց անհարկի խոչընդոտների իրենց մասնագիտական գործունեությամբ զբաղվելու փաստաբանների ազատությունը ժողովրդավարական հասարակության էական բաղադրիչ է և անհրաժեշտ նախապայման Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի պահանջների իրագործման համար<sup>205</sup>:

Փաստաբանի մատչելիության իրավունքի ապահովման հարցին անդրադարձ է կատարվել նաև ՀՀ վճռաբեկ դատարանի դատական պրակտիկայում: Մասնավորապես, Գ. Միքայելյանի վերաբերյալ գործով 2009 թվականի դեկտեմբերի 18-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է ձերբակալման սկզբնական փուլում գտնվող անձի կոնկրետ իրավունքների ծավալը, որն այլ իրավունքների թվում ներառում է նաև իր փաստաբանին հրավիրելու իրավունքը:

Փաստաբանի մատչելիության իրավունքի տեսանկյունից կարևոր է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում 2018 թվականին ուժի մեջ մտած փոփոխությունների արդյունքում ամրագրվեց, որ մինչև ձերբակալման արձանագրությունը անձին հայտարարելն արգելանքի վերցված անձն, ի թիվս այլնի, իրավունք ունի փաստաբան հրավիրելու:

Չնայած դրան, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների շարունակականությունը վկայում է, որ իրավակիրառ պրակտիկայում դեռևս առկա են իր վստահորդին տեսակցելու նպատակով ազատությունից զրկման վայր փաստաբանի մուտքը խոչընդոտելու դեպքեր:

Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի գործունեության ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ փաստաբանին թույլ չի տրվել մուտք գործել ազատությունից զրկման վայր, այդ թվում՝ Ոստիկանության համապատասխան բաժին: Վստահորդների իրավունքների պաշտպանությունը ստանձնելու նպատակով Ոստիկանության բաժիններ այցելած փաստաբանների մուտքը արգելելու վերաբերյալ իրավապահ մարմնի ներկայացուցիչները ներկայացրել են տարաբնույթ պատճառաբանություններ:

Մի քանի այլ դեպքերում, փաստաբանները տեղեկացրել են, որ վստահորդին բերման են ենթարկել ՀՀ քննչական կոմիտեի տարածքային բաժին, և իրենց չեն թույլատրում հանդիպել նրանց հետ:

Փաստաբանի մուտքի խոչընդոտման վերաբերյալ Պաշտպանին ներկայացված յուրաքանչյուր բողոքի դեպքում, նկատի առնելով մարդու իրավունքների պաշտպանության

<sup>205</sup> St´u Eլչին ու ուրիշներն ընդդեմ Թուրքիայի (Elci and others v. Turkey) գործով 2004 թվականի ապրիլի 24-ի վճիռը, գանգատներ թիվ 23145/93 և 25091/94, կետ 669:

տեսանկյունից դրա կարևորությունը, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացվում է անհապաղ միջամտություն:

Այլ կերպ ասած բարձրացված հարցն անհապաղ բանավոր ընթացակարգով քննարկվում է իրավասու պետական մարմնի ներկայացուցչի հետ, իսկ նման ընթացակարգով հարցի չլուծման դեպքում՝ արագ արձագանքման ձևով կազմակերպվում է այց տվյալ բաժին: Նույնաբնույթ խնդիրները հատկապես կարևոր են, քանի որ փաստաբանի մուտքն ու վստահորդին տեսակցելն ինքնանպատակ չէ, այն ուղղված է ապահովելու իրավաբանական օգնության կարիք ունեցող անձի իրավունքների լիարժեք իրացմանը և մի շարք դեպքերում կարող է ուղղակիորեն հանգեցնել անձի պաշտպանության իրավունքի ոտնահարմանը:

Դեռևս 2016 և 2017 թվականների տարեկան հաղորդումների շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանը, անդրադառնալով նշված խնդրին, դիրքորոշում է արտահայտել, որ անհրաժեշտ է **փաստաբանական անխոչընդոտ գործունեության ապահովման նպատակով վերջինիս կողմից իր լիազորությունների իրականացմանը խոչընդոտող վարքագծի քրեականացում:**

Բանն այն է, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 332<sup>3</sup> -րդ հոդվածի առաջին մասը հանցագործություն է համարում պաշտոնատար անձի կողմից փաստաբանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը:

Մեջբերված նորմի այսպիսի կարգավորումը սուբյեկտային առումով քրեաիրավական ազդեցության նեղ շրջանակ է սահմանում: Մինչդեռ, փաստաբանի գործունեությունը խոչընդոտող սուբյեկտների շրջանակը գործնականում կարող է շատ ավելի լայն լինել: Առկա օրենսդրական կարգավորումը չի ընդգրկում այն իրավիճակները, երբ, օրինակ, ոչ թե պաշտոնատար անձն է ուղղակիորեն խոչընդոտում փաստաբանի աշխատանքը, այլ պաշտոնատար անձ չհանդիսացող անձինք՝ վերջիններիս դրդմամբ կամ հրահրմամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի համանման կարգավորումների համեմատական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ խնդրահարույց է նաև 332<sup>3</sup>-րդ հոդվածով նախատեսված սանկցիան: Մասնավորապես, կարծում ենք, փաստաբանների կողմից իրենց գործունեության պատշաճ իրականացման համար առկա է անհրաժեշտություն ավելի բարձր մակարդակի պաշտպանություն ապահովել նշված հոդվածի սանկցիայի շրջանակներում:

Առկա խնդիրների օրենսդրական կանոնակարգման անհրաժեշտության հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից դեռևս 2017 թվականի ընթացքում մշակվել և շրջանառության է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ նախատեսող օրենքի նախագիծ<sup>206</sup>: Նշված նախագծով առաջարկվում է՝

- ՀՀ քրեական օրենսգրքի 332<sup>3</sup>-րդ հոդվածի 1-ին մասը ենթարկել այնպիսի փոփոխության, որով այս հանցակազմի սուբյեկտ պաշտոնատար անձից բացի կհամարվի ցանկացած այլ այնպիսի անձ, ով խոչընդոտել է փաստաբանի օրինական գործունեությանը.

- ՀՀ քրեական օրենսգրքի 332<sup>3</sup>-րդ հոդվածով պաշտոնատար անձի կողմից փաստաբանի կամ նոտարի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու համար նախատեսված պատժաչափը համապատասխանեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ և 319-րդ հոդվածներին՝ խստացնելով փաստաբանի գործունեությանը խոչընդոտելու համար նախատեսված սանկցիան.

- նշված հոդվածը լրացնել նոր մասով, որը պատասխանատվություն կնախատեսի փաստաբանի գործունեությունը խոչընդոտելու համար, եթե դա դրսևորվել է իր վստահորդին տեսակցելու նպատակով՝ ազատությունից զրկման ցանկացած վայր փաստաբանի մուտքն ապօրինի չթույլատրելով:

<sup>206</sup> Առավել մանրամասն տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքէջում՝ <http://pashtpan.am/media/nakhagcer-pastaban.html>:

Հարկ է նկատել, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծով փորձ է արվել ամրապնդել ազատությունից զրկված անձի՝ փաստաբանի մատչելիության իրավունքի ապահովման քրեաիրավական երաշխիքները: Մասնավորապես, նախագծի 447-րդ հոդվածով քրեական պատասխանատվություն է սահմանվել իրավասու անձի կողմից՝ քրեական հետապնդման ենթարկված անձի պաշտպանության իրավունքի իրականացմանը խոչընդոտելու՝ իր դատավարական իրավունքների, իրեն առաջադրվող մեղադրանքի, ձերբակալման կամ կալանավորման պատճառների մասին վերջինիս հասանելի եղանակով չտեղեկացնելու, իրավաբանական օգնություն ստանալու, պաշտպան ունենալու կամ վերջինիս հետ հանդիպելու իրավունքի իրականացմանը խոչընդոտելու համար: Նախագծով նշված արարքի կատարման համար սահմանվել է նաև առավելագույնը չորս տարի ժամկետով ազատագրկման ձևով պատիժ<sup>207</sup>:

Փաստաբանների մասնագիտական գործունեության երաշխիքների տեսանկյունից չափազանց կարևոր է հանրության շրջանում փաստաբանի դերի և գործառույթների ճիշտ ընկալումը և համապատասխան վերաբերմունքը նաև նրա անձի նկատմամբ:

Գաղտնիք չէ, որ 2018 թվականի ընթացքում կտրուկ աճեցին հանրային հետաքրքրություն ունեցող քրեական գործերի թիվը:

Տվյալ քրեական գործերի հետ կապված ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ առանձին դեպքերում պաշտոնատար անձինք հանդես են գալիս այնպիսի հայտարարություններով ու գնահատականներով, որոնք ակնհայտորեն առաջացնում են անձի մեղավորության՝ որպես հաստատված փաստի վերաբերյալ հասարակական ընկալում:

Սա իր հերթին նպաստում է նաև փաստաբանների մասնագիտական աշխատանքի վերաբերյալ սխալ ընկալումների ձևավորմանը, սոցիալական մեղիայում փաստաբաններին ուղղված վիրավորական մեկնաբանություններին ու նույնիսկ սպառնալիքներին: Այսպիսի մեկնաբանություններ են արձանագրվել նաև իրավապաշտպան գործունեություն իրականացնող մի շարք անձանց կողմից<sup>208</sup>:

Սոցիալական ցանցերի նպատակային դիտարկումը ևս վկայում է, որ հաճախակի են դարձել դեպքերը, երբ մասնագիտական աշխատանք կատարող փաստաբանը նույնացվում է իր վստահորդի հետ: Մասնավորապես, սոցիալական մեղիայում արձանագրվում են վիրավորանք ու նույնիսկ սպառնալիք պարունակող մեկնաբանություններ: Ագրեսիվություն է նկատվում հատկապես այն մեկնաբանություններում, որոնք արվում են առերևույթ կեղծ օգտատերերի կողմից: Սրան գումարվում է նաև այն, որ ներկայում ակնհայտորեն բարձր է սոցիալական ցանցերում ընդգրկված քաղաքացիների թիվը<sup>209</sup>: Այս մասին Մարդու իրավունքների պաշտպանը հանդես է եկել հրապարակային հայտարարություններով:

Որոշ քրեական գործերով ներգրավված փաստաբանների և նրանց ընտանիքների անդամների հասցեին հատկապես սոցիալական ցանցերում ատելության խոսք ու նրանց արժանապատվությունը վիրավորող գրառումներ, սպառնալիքներ ու անգամ բռնության կոչեր են արձանագրվել: Ավելին, Պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված դիտարկումը վկայում էր, որ այդ մեկնաբանություններն ու գրառումները դրսևորում են աճի միտումներ, և յուրաքանչյուր դատական նիստը լուսաբանող կամ գործին առնչվող ցանկացած հրապարակման հետ նման գրառումների նոր ալիք էր բարձրանում:

Ստեղծված իրավիճակը խնդրահարույց է հատկապես փաստաբանների մասնագիտական անկաշկանդ աշխատանքի տեսանկյունից:

<sup>207</sup> ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծ, <https://www.e-draft.am/projects/496>:

<sup>208</sup> Այս մասին Պաշտպանի հրապարակային հայտարարությունն հասանելի է <http://www.ombuds.am/media/qreakan-gorceri-qnnutyayn-veraberyal.html> հղումով:

<sup>209</sup> Այս մասին Պաշտպանի հրապարակային հայտարարությունն հասանելի է <http://www.ombuds.am/media/46659.html> հղումով:

Ժողովրդավարական կարևոր արժեք է փաստաբանի հանրային հեղինակությունը: Այն ձեռք է բերվում փաստաբանի բարդ աշխատանքի շնորհիվ և դառնում կարևոր երաշխիք ոչ միայն նրա վստահորդի իրավունքների արդյունավետ պաշտպանության, այլև երկրում իրավապաշտպան աշխատանքի զարգացման անհրաժեշտ գրավական: Սա է իրավունքի գերակայության վրա հիմնված ժողովրդավարական պետություն կայացնելու հիմնարար ցուցիչներից մեկը:

Այս հարցում կարևոր է նաև զանգվածային լրատվամիջոցների դերը: Ուստի, Մարդու իրավունքների պաշտպանը բոլոր լրատվամիջոցներին պարբերաբար հորդորել է հեռացնել վիրավորանք, ծաղրանք կամ ատելության խոսք պարունակող մեկնաբանությունները՝ անկախ նրանից դրանք արվում են առերևույթ կեղծ, թե իրական օգտատերերի կողմից<sup>210</sup>:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ փաստաբանը ներկայացնում ու պաշտպանում է անձի, ում պետությունը կասկածում կամ մեղադրում է կոնկրետ, բայց ենթադրյալ հանցանքի կատարման մեջ: Փաստաբանի առաքելությունն է այդ անձի համար քրեական վարույթի ընթացքում ապահովել որակյալ իրավաբանական օգնություն, իրավական պատշաճ պաշտպանություն մեղադրանքից: Սա որևէ կերպ չի նշանակում, թե փաստաբանն արդարացնում է հանցագործությունները կամ ապահովում անպատժելիություն: Փաստաբանի մասնագիտական գործունեությունն ուղղված է հնարավոր ապօրինի հետապնդումից կամ ապօրինի ազատազրկումից յուրաքանչյուրի պաշտպանությանը:

Միջազգային իրավաբանությունը, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, մեծ պատասխանատվություն է դնում պետությունների վրա նման իրավիճակներ թույլ չտալու համար: Անգամ, եթե պետությունն ինքը չի նպաստել հասարակական կանխակալ ընկալումների, դրա արդյունքում դատարանի ու փաստաբանների նկատմամբ ճնշման ձևավորմանը, միևնույն է՝ այդպիսի իրավիճակի դեպքում պարտավոր է համապատասխան մարմինների միջոցով գործադրել առավելագույն ջանքեր իրավիճակը մեղմելու, դատական իշխանության անկախության բարձր արժեքի երաշխավորումը, ինչպես նաև փաստաբանների անխոչընդոտ մասնագիտական աշխատանքն ապահովելու ուղղությամբ:

Դա անհրաժեշտ է անել հենց այն նկատառումից ելնելով, որ նման իրավիճակները կարող են ձևավորել դատական իշխանության անկախությանը միջամտության վտանգավոր նախադեպ<sup>211</sup>:

Վերը նշվածի հաշվառմամբ՝ *անհրաժեշտ է բացառել փաստաբանի մուտքի արգելք ցանկացած դրսևորում, նկատի ունենալով այն հանգամանքը, որ այն ունի երկու հիմնարար բաղադրիչ՝ անձի պաշտպանության իրավունքի և փաստաբանի մասնագիտական օրինական աշխատանքի անխոչընդոտ, պատշաճ ապահովում:*

#### **14. Քրեական գործով վարույթի շրջանակներում որպես իրեղեն ապացույց ճանաչված անձի սեփականությանն անհամաչափ միջամտությունը**

Մարդու իրավունքների պաշտպանի 2016 և 2017 թվականների տարեկան հաղորդումներով մանրամասն անդրադարձ է կատարվել անձի սեփականության իրավունքի և հանրային շահի ողջամիտ հավասարակշռության ապահովման, սեփականության իրավունքին միջամտության համաչափության խնդիրներին:

<sup>210</sup> Այս մասին Պաշտպանի հրապարակային հայտարարությունն հասանելի է <http://www.ombuds.am/media/human-rights.html> հղումով:

<sup>211</sup> Այս մասին Պաշտպանի հրապարակային հայտարարությունն հասանելի է <http://www.ombuds.am/media/65489.html> հղումով:

Մասնավորապես, իրականացնելով սահմանադրական, կոնվենցիոն և ներպետական օրենսդրական համապատասխան նորմերի համակարգված վերլուծություն, այդ հաղորդումներում արձանագրվել է, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ որպես իրեղեն ապացույց ճանաչված առարկաները պահվում են քրեական վարույթն իրականացնող մարմնի մոտ մինչև գործով վերջնական դատական ակտի կամ որոշման կայացումը:

Միևնույն ժամանակ, սեփականության օբյեկտ հանդիսացող որոշակի առարկաների դեպքում օրենսդիրը նախատեսել է իրեղեն ապացույցների պահպանման նշված կանոնից բացառություն, համաձայն որի՝ գույքը սեփականատիրոջը կամ օրինական տիրապետողին վերադարձվում է քրեական գործի քննության ընթացքում:

Սրա հետ կապված, հարկ ենք համարում նշել, որ թեև քրեադատավարական օրենքը վարույթն իրականացնող մարմնի՝ իրեղեն ապացույցները նախքան քրեական գործով վարույթի ավարտը վերադարձնելու պարտականության որևէ կոնկրետ դատավարական ժամկետ չի սահմանում, այդուհանդերձ, օրենսդրական այս պահանջի՝ սեփականության իրավունքի պաշտպանության կարևորությունից բխում է, որ վարույթն իրականացնող մարմինը պետք է պատշաճ ջանասիրություն ցուցաբերի իրեղեն ապացույց ճանաչված անձի սեփականության հետ կապված քննչական և այլ դատավարական գործողությունները ողջամիտ ժամկետներում իրականացնելու և գույքը սեփականատիրոջ տիրապետմանը վերադարձնելու ուղղությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանն այս կապակցությամբ շարունակում է ստանալ թե գրավոր և թե բանավոր բողոքներ: Բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ քրեական վարույթի շրջանակներում իրեղեն ապացույց ճանաչված իր տրանսպորտային միջոցը քննչական կամ այլ դատավարական գործողություններ կատարելու պատճառաբանությամբ ի պահ չի հանձնվել իրեն: Անձն ընդգծել է, որ տրանսպորտային միջոցը պահվում է բաց տարածքում, առանց ծածկի, և հսկողության (օրինակ՝ առկա չեն տեսախցիկներ կամ տարածքը ցանկապատված չէ):

Մեկ այլ դեպքում, թեև տրանսպորտային միջոցը ի պահ է հանձնվել սեփականատիրոջը, սակայն շուրջ հինգ ամիս նշանակված փորձաքննության եզրակացությունը չի ստացվել, որպես հետևանք՝ անձը չի կարողացել ապահովագրական ընկերությունից փոխհատուցում ստանալ, վերանորոգել այն և օգտագործել իր ամենօրյա աշխատանքում:

Բողոքների ուսումնասիրությունից երևում է, որ քաղաքացիներն ու իրավապահ մարմինները հաճախ են բխվում նշված խնդրին գլխավորապես այն պատճառով, որ փորձաքննության նշանակման դեպքում դրանց եզրակացությունները սովորաբար ստացվում են տևական ժամանակ հետո: Այսպես՝ օրինակ վերը նշված բողոքով անձը նշել է, որ քրեական գործով իրեղեն ապացույց ճանաչված և փորձաքննության ուղարկված ավտոմեքենան իր ապրուստի միջոցն է, քանի որ աշխատում է որպես առաքիչ: Տվյալ բողոքի քննարկման շրջանակներում վարույթն իրականացնող մարմինը ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչությունում նշանակել է դատաձգաբանական, դատաքիմիական, դատահետքաբանական համալիր փորձաքննություն, և ավտոմեքենան տրամադրվել է փորձագետներին: Այս կապակցությամբ ՀՀ քննչական կոմիտեից ստացվել են տեղեկություններ այն մասին, որ 2018 թվականի ընթացքում վարույթն իրականացնող մարմինների կողմից քրեական գործով իրեղեն ապացույց ճանաչված 50 տրանսպորտային միջոց մինչև նախաքննության ավարտն ի պահ են հանձնվել սեփականատերերին:

Միաժամանակ Քննչական կոմիտեն տեղեկացրել է, որ քրեական գործերով իրեղեն ապացույցների, առգրավված իրերի, առարկաների և այլ արժեքների կորուստը, սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի գույքային իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակումները բացառելու նպատակով 2018 թվականի դեկտեմբերի 18-

ին տրվել է համապատասխան շրջաբերական: Դրանով, մասնավորապես, հանձնարարվել է քրեական գործերով իրեղեն ապացույցների, առգրավված իրերի, առարկաների և այլ արժեքների հաշվառման, պահպանման հետ կապված աշխատանքներն իրականացնել և տնօրինման վերաբերյալ հարցերը լուծել պահպանելով օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի պահանջները (մասնավորապես խոսքը վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, Կոմիտեի նախագահի 2015 թվականի մայիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մինչդատական վարույթ իրականացնող մարմիններում և ստորաբաժանումներում վարման ենթակա հաշվառման մատյանների տեսակները սահմանելու և ձևերը հաստատելու մասին» թիվ 46-Լ հրամանի և ՀՀ գլխավոր դատախազի, ՀՀ ներքին գործերի, ՀՀ ազգային անվտանգության, ՀՀ պետական եկամուտների նախարարների, ՀՀ դատարանների նախագահների խորհրդի, ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի 2002 թվականի օգոստոսի 2-ի «Քրեական գործերով իրեղեն ապացույցների, առգրավված արժեքների և այլ առարկաների ու փաստաթղթերի հաշվառման, պահպանման, տնօրինման կարգը հաստատելու մասին» համատեղ հրամանով սահմանված կարգի դրույթների պահանջներին):

Պաշտպանը կարևորում է ՀՀ քննչական կոմիտեի նախաձեռնողականությունը գործնականում առաջացող խնդիրների լուծման ուղղությամբ: Միաժամանակ, Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծում է, որ քրեական գործով վարույթի շրջանակներում անձանց իրավունքների սահմանափակման վարույթն իրականացնող մարմնի ցանկացած գործողություն պետք է ունենա քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված հիմքեր: Ընդ որում, թեև այդպիսի սահմանափակումը «օրենքով նախատեսված լինելու» և «իրավաչափ նպատակ հետապնդելու» պահանջներին բավարարելու ուժով սկզբնապես կարող է իրավաչափ լինել, այդուհանդերձ, դրա շարունակականությունը կարող է առաջ բերել այդ իրավունքին միջամտության համաչափության խնդիր: Ավելին, անթույլատրելի և օրենքին հակասող է իրավակիրառ պրակտիկայի ցանկացած դրսևորում, երբ անձի սեփականության իրավունքի սահմանափակումը պահպանվում է՝ դրա փաստական և իրավական հիմքերի բացակայության պայմաններում:

Ուստի, վերը նշվածի հաշվառմամբ, կարելի է պնդել, որ՝

*1. քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված՝ իրեղեն ապացույցները քրեական գործի հետ պահելու ընդհանուր կանոնից բացառության առկայության դեպքում վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է քննարկել այդ գույքը սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի պահպանմանը թողնելու հարցը, իսկ չթողնելու պարագայում պետք է ներկայացնի պատշաճ հիմնավորում,*

*2. վարույթն իրականացնող մարմնի կողմից պետք է ցուցաբերվի բավարար ջանասիրություն և բարեխղճություն՝ իրեղեն ապացույց ճանաչված՝ անձի սեփականության հետ կապված քննչական և այլ դատավարական գործողությունները ողջամիտ ժամկետներում իրականացնելու և գույքը սեփականատիրոջ տիրապետմանը վերադարձնելու պարտականության ապահովման ուղղությամբ,*

*3. պետք է բացառվի քրեական գործով վարույթի շրջանակներում գույքի վրա կալանքի կիրառությամբ անձանց սեփականության իրավունքին ցանկացած միջամտություն, որը հիմնված չէ փաստական և իրավական հիմքերի վրա:*



**15. Քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման պատճենը վարույթն իրականացնող մարմնի կողմից չտրամադրելը**

Քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշման պատճենը շահագրգիռ անձանց չտրամադրելու խնդրին Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է նաև նախորդ տարիների գործունեության ամփոփման ընթացքում<sup>212</sup>:

Խոսքը, մասնավորապես, վերաբերում է, քրեական գործի ելքով շահագրգռված վարույթի մասնակիցներին վարույթը կասեցնելու մասին գրավոր տեղեկացնելու նախաքննական մարմնի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պարտականությանը պրակտիկայում տրված նեղ մեկնաբանությանը: Նման մեկնաբանությունը, ըստ էության, հանգում է նրան, որ «գրավոր տեղեկացնելը» չի ենթադրում որոշման տրամադրման հնարավորություն: Արդյունքում, նշված անձանց նույնիսկ իրենց միջնորդությամբ չի տրամադրվում որոշման պատճենը՝ չնայած քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը բողոքարկելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նրանց իրավունքին:

Այս առումով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման միասնական պրակտիկան ապահովելու նպատակով դեռևս 2013 թվականին ՀՀ գլխավոր դատախազը հանձնարարել էր կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումները ղեկավարող դատախազներին ապահովել տուժողին, նրա ներկայացուցչին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին քրեական գործով վարույթը կասեցնելու մասին իրազեկումը: Ըստ հանձնարարականի՝ իրազեկումը պետք է լինի գրավոր, որում միաժամանակ պետք է պարզաբանվի, որ վերոնշյալ անձանց կողմից գրավոր պահանջի դեպքում նրանց կարող է տրամադրվել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշումը՝ այն ՀՀ քրեական դատավարության կարգով բողոքարկելու նպատակով:

Չնայած դրան, 2016 և 2017 թվականների ընթացքում ևս խնդիրը բարձրացվել էր այն առումով, որ ըստ քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշումը տուժողին չտրամադրելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության պարզաբանման՝ քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման պատճենը տուժողին ուղարկելու լիազորություն դատավարական օրենքը քննիչին չի վերապահում, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով քննիչը պարտավոր է, այդ թվում՝ տուժողին, տեղեկացնել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին, ինչն ապահովվել է քննիչի գրությամբ<sup>213</sup>:

2017 թվականի տարեկան հաղորդմամբ նշվել է, որ խնդիրը պետք է լուծվի օրենսդրական կարգավորումների հստակեցման ճանապարհով: Բանն այն է, որ ի տարբերություն քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքն ուղղակիորեն չի նախատեսում քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման պատճենը հոդվածում նշված վարույթի մասնակիցներին ուղարկելու պարտականություն:

Նման իրավիճակը, երբ օրենսդրությամբ ամրագրվել է անձի բողոքարկման իրավունքը, սակայն բացակայում են դրա իրացման համար անհրաժեշտ երաշխիքները, կարող է

<sup>212</sup> 2013 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին տարեկան զեկույց, էջեր 85-87, 2016 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 161-163, 2017 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 224-226:

<sup>213</sup> Տե՛ս 2016 թվականի տարեկան հաղորդման էջեր 161-162:

հանգեցնել ՀՀ սահմանադրությամբ և միջազգային իրավական փաստաթղթերով հռչակված՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի անհամաչափ սահմանափակման:

Ըստ այդմ, Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է այն դիրքորոշումը, որ համապատասխան դատավարական ակտի բողոքարկման իրավունքը կարող է կյանքի կոչվել միայն այդ որոշման պատճենը բողոքարկման իրավունք ունեցող անձին տրամադրվելու դեպքում:

Ողջունելի է, որ բարձրացված հարցը ստացավ օրենսդրական ամրագրում: Այնուամենայնիվ, թեև օրենսգրքի 258-րդ հոդվածի իրավակարգավորման փոփոխության արդյունքում ամրագրվեց քննիչի՝ քրեական գործով վարույթը կասեցնելու մասին տեղեկացնելու պարտականությունը, Պաշտպանին հասցեագրված բողոքները, սակայն, վկայում են պրակտիկայում շարունակվող խնդիրների մասին:

*Այսպիսով, ասվածի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է գործնականում ապահովել անկախ շահագրգիռ անձի պահանջի՝ քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման պատճենի տրամադրումը՝ Օրենսգրքի 258-րդ հոդվածում արված փոփոխությունների լույսի ներքո:*

#### **16. Քրեական գործերի քննության ողջամիտ ժամկետի պահպանումը: Դատարանակազմական և դատավարական կանոնակարգումների լիարժեքությունը**

Ինչպես նախորդ տարիներին, 2018 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բազմաթիվ բողոքներ քրեական գործերի քննության ձգձգման վերաբերյալ:

Այսպես, բողոքներից մեկով ամբաստանյալը տեղեկացրել է, որ քրեական գործը դատարանը վարույթ է ընդունել 2015 թվականի դեկտեմբերի 21-ին և մինչ այդ օրը տվյալ գործով վերջնական դատական ակտ չի կայացվել: Միաժամանակ բողոք ներկայացրած անձը հայտնել է, որ դատական նիստերը շարունակ անհիմն հետաձգվում են, ընդհանուր առմամբ շուրջ 50 դատական նիստեր չեն կայացվել:

Մեկ այլ դեպքում փաստաբանը տեղեկացրել է, որ 2017 թվականի սեպտեմբերի 26-ին հարուցված թիվ քրեական գործի շրջանակներում իր վստահորդին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասով: Փաստաբանի տեղեկացմամբ՝ մեկ տարուց ավել կատարվող նախաքննության ընթացքում վարույթն իրականացնող մարմնի կողմից նշանակվել են դատաբժշկական առաջնային, լրացուցիչ, կրկնակի, հանձնաժողովային փորձաքննություններ և ստացվել են համապատասխան եզրակացություններ, որոնցում հակասություններ չկան: Ի պատասխան՝ ՀՀ գլխավոր դատախազությունից տեղեկություններ են ստացվել այն մասին, որ նշանակված փորձաքննություններով համապատասխան հարցադրումների բացակայության պատճառով չեն պարզաբանվել նաև քրեական գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ, ուստի վարույթն իրականացնողի կողմից նշանակվել են նոր փորձաքննություններ:

Խնդիրը հատկապես սուր է դրված այն քրեական գործերով, որոնց շրջանակներում մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց է ընտրված կալանավորումը: Կալանավորված անձանց հետ առանձնազրույցների և իրականացված դիտարկման արդյունքները վկայում են, որ իրավակիրառ պրակտիկայում նմանօրինակ դեպքերը բացառիկ չեն:

Կոնկրետ դատական վարույթին և դատավորի լիազորությունների իրականացմանը չմիջամտելու օրենսդրական պահանջից ելնելով՝ առանձին գործերով ողջամիտ ժամկետում դատական քննության իրավունքի ենթադրյալ խախտման հարցերը Պաշտպանի կողմից

քննության առարկա չեն դարձել: Այդուհանդերձ, երկրում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակին ընդհանուր անդրադարձը պայմանավորում է նաև քրեական գործի քննության ողջամիտ ժամկետների պահպանման խնդրի ուսումնասիրություն՝ միջազգային իրավական չափանիշների, դատարանակազմական և դատավարական օրենսդրական կանոնակարգումների վերլուծություն: Նշվածի հաշվառմամբ 2017 թվականի տարեկան հաղորդմամբ<sup>214</sup> կատարվել էր ներպետական և միջազգային իրավական ակտերի մանրամասն վերլուծություն:

ՀՀ սահմանադրության 63-րդ հոդվածը երաշխավորում է, որ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Սահմանադրական այս իրավունքի բովանդակության անքակտելի և կարևորագույն տարր է գործի քննության և եզրափակիչ ակտի կայացման ողջամիտ տևողության պահպանումը:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 6-րդ հոդվածի ուժով՝ «Յուրաքանչյուր ոք, (...) իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի (...) դատարանի կողմից ողջամիտ ժամկետում (...) դատաքննության իրավունք»:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ 1987 թվականի սեպտեմբերի 17-ի քրեական արդարադատության պարզեցմանն ուղղված թիվ R(87)18 հանձնարարականը նշում է, որ հանցագործությունների բացահայտման հապաղումը վարկաբեկում է քրեական դատավարությունը և ընդհանուր առմամբ բացասաբար է անդրադառնում արդարադատության պատշաճ իրականացման վրա<sup>215</sup>:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն DH (97) հանձնարարականում, որն ընդունվել է Իտալիայում ձևավորված քաղաքացիական գործերի քննության ողջամիտ ժամկետների խախտման պրակտիկայի կապակցությամբ, ընդգծել է, որ «արդարադատության իրականացման չափազանց ձգձգումը լուրջ վտանգ է ներկայացնում իրավունքի գերակայության համար»: Ներպետական մարմիններում դատաքննության կամ այլ իրավական վարույթի տևողության ժամկետը գնահատելիս Եվրոպական դատարանն առաջնորդվում է նաև այն սկզբունքով, որ ողջամիտ ժամկետի պահանջի խախտումը կարող է կատարվել միայն պետության մեղքով տեղի ունեցած ձգձգումներով:

Ողջամիտ ժամկետում գործի քննության երաշխիքի նպատակը դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունն է քննության չափից ավելի ձգձգումներից, որոնք կարող են խաթարել արդարադատության իրականացման արդյունավետությունը կամ դրան կատմամբ վստահությունը<sup>216</sup>:

Եվրոպական դատարանը, խոսելով պատշաճ քննության մասին, սահմանում է նաև գործը ողջամիտ ժամկետում քննելու պետության պարտականությունը<sup>217</sup>՝ այն դիտարկելով

<sup>214</sup> 2017 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 235-241:

<sup>215</sup> Տե՛ս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ 1987 թվականի սեպտեմբերի 17-ի քրեական արդարադատության պարզեցմանն ուղղված թիվ R(87)18 հանձնարարականը՝ [http://www.barobirlik.org.tr/dosyalar/duyurular/hsykkanunteklifi/recR\(87\)18e.pdf](http://www.barobirlik.org.tr/dosyalar/duyurular/hsykkanunteklifi/recR(87)18e.pdf):

<sup>216</sup> Տե՛ս ՄԻԵԴ նախադեպային իրավունքի հիմնահարցերը քրեական գործերով, դասավանդման նյութ, Դ. Մելքոնյան:

<sup>217</sup> Տե՛ս Յասան ընդդեմ Թուրքիայի (Yasa v. Turkey) գործով 1998 թվականի սեպտեմբերի 2-ի վճիռը, գանգատ թիվ 22495/93, կետեր 102-104:

իբրև պետական մարմինների գործողությունների նկատմամբ հասարակական վստահության կարևոր պայման<sup>218</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Էկլեն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության գործով փաստում է, որ քրեական գործով «ողջամիտ ժամկետը» սկսում է հաշվվել այն պահից, երբ առաջադրվում է մեղադրանքը: Դա կարող է տեղի ունենալ ավելի շուտ, քան գործն ուղարկվում է դատարան: Այդ ժամկետը կարող է հաշվվել անձին ձերբակալելու պահից, կամ այն պահից, երբ տվյալ անձը պաշտոնապես տեղեկացվել է, որ իր նկատմամբ քրեական գործ է հարուցվել, կամ նախնական քննությունը սկսելու պահից:

Ժամկետի հաշվարկն ավարտվում է, երբ ավարտվում է քննությունն ամենաբարձր աստիճանի դատարանում, այն է՝ երբ կայացվում է վերջնական որոշում: Այսինքն՝ գործի քննության ընդհանուր տևողության ողջամտությունը գնահատելիս պետք է հաշվի առնվի նաև վարույթների տևողությունը վերաքննիչ և վճռաբեկ աստիճաններում<sup>219</sup>:

Գործի քննության ողջամիտ ժամկետի պահանջի խախտումը չի կարող արդարացվել, անգամ եթե համապատասխան դատավարական որոշումներն ընդունվել են անձի օգտին (քրեական գործի վարույթի կարճում, պատժի մեղմացում, հայցադիմումի (դիմումի) բավարարում և այլն)<sup>220</sup>:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում Եվրոպական դատարանը ներպետական վարույթի տևողության ողջամտությունը յուրաքանչյուր դեպքում գնահատում է՝ ելնելով քննության առարկա գործի կոնկրետ հանգամանքներից: Չնայած դրան՝ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը ողջամիտ ժամկետի վիճարկմանը վերաբերող մի շարք գործերի քննության արդյունքում ձևավորել է որոշակի չափանիշներ, որոնք դատաքննության ողջամտությունը գնահատելիս կիրառելի են բոլոր գործերի նկատմամբ:

Ըստ այդմ, ողջամիտ ժամկետի հետ կապված՝ Եվրոպական դատարանը ելնում է հետևյալ չափանիշներից՝

1. գործի բարդությունը.

Գործի բարդությունը որոշելիս՝ Եվրոպական դատարանը ելակետային է համարում մի շարք չափանիշներ, նշելով, որ բարդությունը կարող է կապված լինել ինչպես փաստի, այնպես էլ իրավական տեսակետների հետ: Դատարանը մեծ նշանակություն է տալիս հետևյալ գործոններին՝ հաստատման ենթակա փաստերի բնույթը, մեղադրյալների և վկաների թվաքանակը, միջազգային գործոնները, դատավարությանը նոր անձանց ներգրավումը, հաշվարկները, փորձագետների անհրաժեշտությունը և այլն:

2. դիմողի համար ողջամիտ ժամկետի չպահպանման հետևանքները.

Դիմողի համար այդպիսի հետևանքները վերջինիս իրավունքների ապահովման այն հնարավոր ռիսկերն են, որոնք կարող են վրա հասնել դատավարական ժամկետների ձգձգման պատճառով:

3. համապատասխան մարմինների աշխատանքի օպերատիվությունը.

<sup>218</sup> Տե՛ս Մահմուտ Կայան ընդդեմ Թուրքիայի (Mahmut Kaya v. Turkey) գործով 2000 թվականի մարտի 28-ի վճիռը, գանգատ թիվ 22535/93, կետեր 106-107:

<sup>219</sup> Տե՛ս Ողջամիտ ժամկետում արդար դատաքննության և դատավարություններում դատավորի դերի վերաբերյալ (հաշվի առնելով վեճերի լուծման այլընտրանքային միջոցները) Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդի (CCJE) կողմից Նախարարների կոմիտեի ուշադրությանը ներկայացնելու համար 2004 թվականի Նոյեմբերի 22-ից 24-ն ընդունված թիվ 6 (2004) կարծիքը, կետ 98:

<sup>220</sup> Տե՛ս Էկլեն ընդդեմ Գերմանիայի (Eckle v. Germany) գործով 1982 թվականի հուլիսի 15 վճիռը, գանգատ թիվ 8130/78, կետ 73:

Համապատասխան մարմինների աշխատանքի օպերատիվությունն ասելով ի նկատի է առնվում վարույթն իրականացնող մարմնի կողմից գործի բոլոր հանգամանքների լրիվ, բազմակողմանի և ժամանակին ուսումնասիրումը: Ընդ որում, միջազգային իրավական մոտեցումների համաձայն՝ պետք է արձանագրել, որ գործի քննության ձգձգումը հանգեցնում է ողջամիտ ժամկետների խախտման, եթե դա պայմանավորված է սուբյեկտիվ պատճառներով, ինչպիսիք են, օրինակ, դատարանների գերծանրաբեռնվածությունը, դատավորների ոչ արհեստավարժությունը և այլն. նման դեպքերում պետությունն է կրում որակյալ և արագ արդարադատությունն ապահովելու պարտականությունը:

#### 4. դիմողի սեփական վարքագիծը.

Դիմողի սեփական վարքագծի հետ կապված՝ Եվրոպական դատարանն արձանագրում է, որ վերջինս պետք է «ցուցադրի քննության՝ իրեն անմիջականորեն վերաբերող բոլոր փուլերին մասնակցելու պատրաստակամություն, ձեռնպահ մնա դատավարությունը ձգձգող հնարքներից, ինչպես նաև դատավարությունն արագացնելու նպատակով առավելագույնս օգտագործի ներպետական օրենսդրությամբ նախատեսված բոլոր միջոցները<sup>221</sup>: Եթե գործի քննության ձգձգումը տեղի է ունենում դիմողի մեղքով, ապա դա, անկասկած, վերջինիս բողոքի արդյունավետությունը նվազեցնող գործոն է<sup>222</sup>:

Արդար դատաքննության իրավունքի, մասնավորապես՝ ողջամիտ ժամկետների երաշխավորումն առաջին հերթին կանխորոշվում է դատարանակազմական և դատավարական լիարժեք կառուցակարգերով և դրանց պատշաճ գործադրմամբ: Հետևաբար, դատավարական ողջամիտ ժամկետների պահպանումն իր հերթին փոխապայմանավորված է մի շարք ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ գործոններով, ինչպիսիք են, օրինակ, դատարանների ծանրաբեռնվածության համաչափությունը, գործի քննության անխոչընդոտ ընթացքն ապահովելու դատավարական հստակ կառուցակարգերը, դատավարությանը մասնակցող անձանց պատշաճ վարքագիծը և այն ապահովող օրենսդրական լծակները, դատավարական ժամկետների սահմանումը:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ ողջամիտ ժամկետը վերացական հասկացություն չէ. այն մեծապես կախված է կոնկրետ գործի առանձնահատկություններից, և տևողության միևնույն թվային ցուցանիշը կարող է մի դեպքում համարվել ողջամիտ, մյուս դեպքում՝ ոչ:

Հարցի առնչությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատավարական ժամկետների պահպանումը կարևոր նշանակություն ունի նաև դատավարության տևողության ողջամտության ապահովման համար, իսկ ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքը Մարդու իրավունքների միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից է<sup>223</sup>:

Գործի քննության ողջամիտ ժամկետների միջազգային իրավական մոտեցումների տրամաբանությամբ՝ ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն իր հերթին արձանագրել է, որ գործի քննությունը պետք է իրականացվի հնարավորին սեղմ ժամկետում: Խորհուրդը արձանագրել է, որ գործի քննության ժամկետները որոշելիս գործի քննության ժամկետի սկիզբ քրեական գործերով պետք է համարել այն պահը, երբ առաջադրվում է մեղադրանքը, որը կարող է տեղի ունենալ ավելի շուտ, քան գործն ուղարկվում է դատարան, այդ ժամկետը կարող է հաշվվել անձին ձերբակալելու պահից, կամ այն պահից, երբ տվյալ անձը

<sup>221</sup> Տե՛ս Ալիմենտարիա Մանդերս ընդդեմ Իսպանիայի (Alimentaria Sanders S. A. V. Spain) գործով 1989 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 11681/85, կետ 35:

<sup>222</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Երևան, 2010թ., էջ 232-233՝ <https://www.osce.org/hy/yerevan/74940?download=true>:

<sup>223</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԳԴ1/0012/13/09 և ԼԴ/0082/13/09 որոշումները:

պաշտոնապես տեղեկացվել է, որ իր դեմ քրեական գործ է հարուցվել, կամ նախնական քննություն սկսելու պահից<sup>224</sup>:

Օրենսդրական մակարդակում դատավարական ողջամիտ ժամկետների պահպանման խնդիրն անհրաժեշտ ենք համարում դիտարկել երկու հարթությունում՝

1. դատական իշխանության կազմակերպման և գործունեության հիմունքների ու սկզբունքների տեսանկյունից

Գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանումն ուղղակիորեն կապված է դատական համակարգի կառուցվածքից, դատավորների թվաքանակից, դատարանների նստավայրերի, դրանց սպասարկման տարածքների և դատավորների բաշխման ու թվակազմի սահմանումից և այլն:

Այս առումով թերևս ողջունելի է ՀՀ դատական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2018 թվականի հունվարի 25-ին ուժի մեջ մտած օրենքով ստեղծվեց Երևան քաղաքում առաջին աստյանի ընդհանուր իրավասության մեկ դատարանը, որի դատական տարածքը Երևան քաղաքի տարածքն է, իսկ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի ընդունմամբ սահմանվեց, որ առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանների դատավորների թվակազմը ֆիքսված չէ, և Բարձրագույն դատական խորհրդին տրվեց առանձին դատարանների դատավորների թվակազմը Կառավարության համաձայնությամբ ավելացնելու լիազորություն:

Միաժամանակ, վերը նշված սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածով Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների հաշվառմամբ ամրագրվեցին դատարանում գործի քննության տևողության ողջամտությունը որոշելու չափանիշների ամրագրումը: Մասնավորապես, հոդվածի առաջին մասով ամրագրվեց, որ գործի քննությունը և լուծումը պետք է իրականացվեն ողջամիտ ժամկետում: Նույն հոդվածի 2-րդ մասով՝ դատարանում գործի քննության տևողության ողջամտությունը որոշելիս հաշվի են առնվում՝

1) գործի հանգամանքները, ներառյալ՝ իրավական և փաստական բարդությունը, վարույթի մասնակիցների վարքագիծը և վարույթի մասնակցի համար գործի տևական քննության հետևանքները,

2) հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով դատարանի կատարած գործողությունները և դրանց արդյունավետությունը,

3) գործի քննության ընդհանուր տևողությունը,

4) Բարձրագույն դատական խորհրդի սահմանած՝ գործի քննության միջին ուղենիշային տևողությունը:

2. քրեադատավարական ընթացակարգերի օրենսդրական կարգավորումների տեսանկյունից.

Գործող քրեադատավարական կառուցակարգերը քրեական գործերի քննության ժամկետների պահպանման առումով լիարժեք չեն: Այսպես, օրենսգրքի՝ դատավարական ժամկետներ ամրագրող կարգավորումները հանգում են հետևյալին՝

1. հետաքննությունն ավարտվում է քրեական գործ հարուցելու պահից 10 օրվա ընթացքում,

2. քրեական գործով նախաքննությունը պետք է ավարտվի ոչ ուշ, քան երկամսյա ժամկետում: Այդ ժամկետը հաշվվում է քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելու օրվանից և ավարտվում է գործը դատարան ուղարկելու մասին կամ գործով վարույթի կարճման մասին որոշման կայացման օրը.

3. միննույն ժամանակ, նախաքննության ժամկետը քննիչի պատճառաբանված

<sup>224</sup> Տե՛ս ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2006 թվականի հունիսի 13-ի թիվ 98 որոշում. [http://www.court.am/files/news/101\\_am.pdf](http://www.court.am/files/news/101_am.pdf):

միջնորդության հիման վրա կարող է երկարացնել հսկող դատախազը՝ միջնորդությունը լրիվ կամ մասնակիորեն բավարարելու վերաբերյալ որոշում կայացնելով: Նախաքննության ժամկետի մասնակի երկարացումը ենթակա է պատճառաբանման: Նախաքննության ժամկետը յուրաքանչյուր դեպքում կարող է երկարացվել մինչև երկու ամիս ժամանակով:

Ստացվում է, որ թեև մինչդատական վարույթի փուլերի՝ հետաքննության և նախաքննության առավելագույն ժամկետներն օրենքով ամրագրված են, այդուհանդերձ, վարույթն իրականացնող մարմինն իրավասու է նախաքննության երկամսյա ժամկետը երկարացնել՝ ընդ որում առանց օրենսդրական սահմանափակման: Չնայած յուրաքանչյուր դեպքում նախաքննության ժամկետը երկարացնելու պատճառաբանվածության պահանջին՝ օրենսդրական այդպիսի կառուցակարգը կարող է խնդրահարույց լինել քրեական հետապնդման ենթարկվող անձի իրավունքների, այդ թվում՝ իր գործի քննության ողջամիտ ժամկետների երաշխավորման տեսանկյունից:

4. գործի դատական քննության նախապատրաստման փուլի հետ կապված օրենսգրքի 292-րդ հոդվածն ամրագրում է, որ քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորը հետագոտում է գործում եղած նյութերը և քրեական գործն իր վարույթն ընդունելու պահից 15 օրվա ընթացքում կայացնում է որոշում:

5. օրենսգրքի 293-րդ հոդվածի համաձայն՝ դատական քննությունը պետք է նշանակվի դատական քննություն նշանակելու մասին որոշում կայացնելու պահից 10 օրվա ընթացքում:

6. քրեադատավարական օրենքը գործի դատական քննության առավելագույն ժամկետներ չի նախատեսում՝ միաժամանակ ամրագրելով անձի՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունք:

Ի տարբերություն գործող օրենսգրքի՝ Քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 194-րդ հոդվածի առաջին մասն ամրագրում է, որ մինչդատական վարույթում հանրային քրեական հետապնդումն այն հարուցելու պահից չի կարող տևել ավելի, քան՝

- երկու ամիս՝ ոչ մեծ ծանրության հանցանքի վերաբերյալ վարույթով.
- չորս ամիս՝ միջին ծանրության հանցանքի վերաբերյալ վարույթով.
- ութ ամիս՝ ծանր հանցանքի վերաբերյալ վարույթով.
- տասը ամիս՝ առանձնապես ծանր հանցանքի վերաբերյալ վարույթով:

Իսկ երկրորդ մասով՝ բացառիկ դեպքերում, երբ դա է պահանջում արդարադատության շահը, նախատեսված ժամկետները վերադաս դատախազի կողմից կարող են երկարացվել առավելագույնը երկու ամսով:

Նախագծի վերոնշյալ լուծումները, փաստորեն, ամրագրում են անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու առավելագույն ժամկետները:

2018 թվականին Պաշտպանի աշխատակազմ ստացված տվյալների արդյունքում առանձնացվել է քրեական գործերի քննության ձգձգման պատճառներից մեկը՝ իրավական օգնության կարգով ստացված հարցումների թարգմանությունների ապահովման կապակցությամբ: Պաշտպանի համար մտահոգիչ է եղել քրեական գործով տուժողի դատավարական կարգավիճակ ունեցող անձի հայտարարությունն առ այն, որ շուրջ վեց ամիս առաջ համապատասխան քննչական կամ այլ դատավարական գործողություններ կատարելու խնդրանքով հարցում է ուղարկվել ՌԴ, ըստ իր ունեցած տեղեկությունների՝ հարցման պատասխանը ստացվել է, սակայն դրանց հայերեն թարգմանությունները պատրաստ չեն եղել, ուստի քրեական գործի վարույթը տևական ժամանակ մնացել է կասեցված:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը իրավապահ մարմինների համար հնարավորություն է նախատեսում քրեական վարույթներ իրականացնելիս համագործակցել այլ պետությունների իրավապահ մարմինների հետ: Նույն օրենսգրքի 474-րդ հոդվածի

համաձայն՝ Հայաստանի Հանրապետության դատարանների, դատախազների, քննիչների, հետաքննության մարմինների հանձնարարությամբ կամ խնդրանքով օտարերկրյա պետության տարածքում հարցաքննության, զննության, առգրավման, խուզարկության, փորձաքննության և սույն օրենսգրքով նախատեսված այլ դատավարական գործողությունների կատարումը, ինչպես նաև օտարերկրյա պետության իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց հարցումով Հայաստանի Հանրապետության տարածքում սույն օրենսգրքով նախատեսված դատավարական գործողությունների կատարումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան՝ այդ պայմանագրերով և նույն օրենսգրքով սահմանված կարգով:

Վերը քննարկվող քրեական գործի նախաքննության ավարտից հետո քրեական գործի ուսումնասիրմամբ պարզվել է, որ նախաքննության ընթացքում իրավական օգնության կարգով ՌԴ ուղարկված հարցումների պատասխանները ստացվել են շուրջ վեց ամիս անց, իսկ 97 թերթից բաղկացած նյութերի թարգմանությունը կատարվել է հարցման պատասխանը ստանալուց հետո շուրջ չորս ամիս անց:

Քրեական գործի նյութերի թարգմանությունների տևական լինելու փաստը Մարդու իրավունքների պաշտպանին անհանգստացնում է հատկապես քրեական գործի քննության ողջամիտ ժամկետների պահպանման պահանջի ապահովման տեսանկյունից:

Հասկանալու համար թարգմանությունների իրականացման կարգը, դրանց ժամկետները, դրա համար պատասխանատու սուբյեկտների շրջանակը և ընդհանուր առմամբ այդ սուբյեկտների ծանրաբեռնվածությունը՝ համապատասխան հարցումներ են ուղարկվել ՀՀ քննչական կոմիտե:

ՀՀ քննչական կոմիտեի կողմից տեղեկություններ են տրամադրվել այն մասին, որ քրեական գործերի շրջանակներում այլ պետությունների հետ իրավական օգնության կարգով իրականացվող հաղորդակցության արդյունքում ստացված նյութերի, ինչպես նաև այլ պետություններ ուղարկվող նյութերի (ինչպես նաև ամբողջական քրեական գործերի) ռուսերեն և անգլերեն լեզուներով թարգմանությունները կատարում է Քննչական Կոմիտեի դեպարտամենտի արտաքին կապերի բաժինը: Ինչ վերաբերում է այլ լեզուներով թարգմանություններին, ապա, պարզաբանման համաձայն, դրանք կատարվում են թարգմանչական ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից: Միաժամանակ տեղեկություններ են տրամադրվել այն մասին, որ Արտաքին կապերի բաժնում առկա է 7 հաստիք՝ պետ, պետի տեղակալ, 5 ծառայող (թարգմանիչ), իսկ միջինում տարվա կտրվածքով բաժնում ստացվում է 30.000 թերթ նյութ: Փաստորեն, մեկ ծառայողը, այդ թվում՝ պետի տեղակալը, օրական կատարում է 10-15 թերթ թարգմանչական աշխատանք՝ կախված թարգմանչի հմտությունից և նյութի բարդությունից: Ընդ որում, ըստ պարզաբանման՝ թարգմանությունները կատարվում են ժամանակագրական հերթականությամբ, բացառությամբ՝ հանձնման փաթեթների կամ այլ հրատապ նյութերի:

Քննչական կոմիտեի կողմից ներկայացված տվյալներից ակնհայտ է, որ մասնագիտացված ստորաբաժանումն աշխատում է գերծանրաբեռնված ռեժիմով, ուստի նման պայմաններում աշխատանքի պատշաճ կատարման համար նաև ժամանակ է անհրաժեշտ, որն էլ իր հերթին անխուսափելիորեն խնդիրներ է առաջացնում քրեական գործի քննության ողջամիտ ժամկետի պահպանման՝ կոնվենցիոն պահանջի տեսանկյունից:

Վերը նշվածի հաշվառմամբ՝ կարծում ենք, որ քրեական գործերի քննության ողջամիտ ժամկետների ապահովման հարցում դատական պրակտիկայի կատարելագործման նպատակով *անհրաժեշտ է՝*

*1. Քրեական դատավարության օրենսգրքի մոտեցումներին համահունչ՝ ամրագրել քրեական հետապնդման առավելագույն ժամկետներ,*



2. ապահովել «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի՝ գործի քննության տևողության ողջամտության ապահովմանն առնչվող պահանջների պատշաճ կենսագործումը,

3. վերանայել թարգմանություն իրականացնող ստորաբաժանման հաստիքների քանակը, կամ, ռուսերեն և անգլերեն լեզուներից թարգմանությունները ևս, ըստ ծանրաբեռնվածության, կազմակերպել թարգմանչական ծառայություններ մատուցող ընկերությունների միջոցով,

4. ուսումնասիրել ՀՀ քննչական կոմիտեի և քննչական մյուս մարմիններում քննիչների թվակազմը՝ գործերի քանակի համադրմամբ և ըստ անհրաժեշտության ավելացնել հաստիքներ կամ թափուր հաստիքների առկայության դեպքում՝ համալրել դրանք:

## **17. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու պրակտիկան**

Կալանավորումը՝ որպես խափանման միջոց ընտրելու պրակտիկայի հարցը շարունակում է մնալ արդիական: Արդիականությունը պայմանավորված է ոչ միայն այն հանգամանքով, որ այն գործող օրենսդրությամբ սահմանված խափանման միջոցներից ամենախիստն է, որն ուղեկցվում է անձին անձնական ազատությունից զրկելով և դրանից բխող այլ իրավունքների սահմանափակումով, այլ նաև, առանձին դեպքերում կրում է շարունակական բնույթ և նույնիսկ գործնականում դեպքեր են լինում, երբ մինչև վերջնական դատական ակտի կայացումը անձը գտնվում է նախնական կալանքի տակ: Ակնհայտ է, որ բազմաթիվ դեպքերում կալանավորումը՝ որպես խափանման միջոց է ընտրվում մեղադրյալի պատշաճ վարքագծի ապահովման նպատակից ելնելով, և այդ խափանման միջոցի ընտրությունը, ի թիվս այլնի, պայմանավորված է այլընտրանքային արդյունավետ խափանման միջոցների բացակայությամբ:

2018 թվականի ընթացքում կալանքի կիրառելիության վերաբերյալ վիճակագրական տվյալներ են ստացվել ՀՀ դատախազությունից և ՀՀ քննչական կոմիտեից:

Այսպես, Դատախազության կողմից տրամադրված տեղեկություններով՝ 2018 թվականի ընթացքում ներկայացվել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ 1866 միջնորդություն, որից 1799-ը բավարարվել է, (այսինքն՝ ներկայացված միջնորդությունների 96.4%-ը բավարարվել է): 2018 թվականի ընթացքում քննիչի կողմից կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ դատարան ներկայացված միջնորդություններից դատախազի կողմից հետ է վերցվել 8 միջնորդություն:

Համեմատության համար նշենք, որ 2017 թվականին կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ ներկայացված միջնորդությունների քանակը կազմել է 2363, այսինքն 2018 թվականին այդ միջնորդությունները նվազել են շուրջ 497-ով կամ 21%-ով:

Ինչ վերաբերում է դատախազի կողմից կալանքը որպես խափանման միջոց վերացնելուն, ապա, Դատախազության հավաստմամբ 2018 թվականի ընթացքում սեփական նախաձեռնությամբ այդպիսի 1328 որոշում է կայացվել: Սակայն հարկ է նկատել, որ տվյալ ցուցանիշը չի վերաբերում միայն 2018 թվականի ընթացքում ընտրված խափանման միջոցներին: Այլ խոսքով, դատախազների կողմից 2018 թվականի ընթացքում կայացվել է նախորդ տարիներին և 2018 թվականին որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը վերացնելու մասին 1328 որոշում:

Միաժամանակ, Դատախազությունից տեղեկացրել են, որ 2018 թվականին 200 անձի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոխարինվել է գրավով: Ինչպես Պաշտպանի կողմից նշվել է 2017 թվականի Տարեկան հաղորդմամբ՝ անձին կալանքից

գրավով ազատելու դեպքերի քանակական հարաբերակցությունը 2011 թվականից մինչև 2017 թվականներին շարունակել է տատանվել 4-7% միջակայքում<sup>225</sup>: Այս առումով կարելի է արձանագրել, որ 2018 թվականին գրավի կիրառման դեպքերն աճել են՝ հասնելով 11.1%-ի:

Քննչական կոմիտեի կողմից տեղեկություններ են տրամադրվել այն մասին, որ 2018 թվականի ընթացքում 1663 մեղադրյալի նկատմամբ միջնորդություն է հարուցվել խափանման միջոց կալանք ընտրելու մասին, որից 62-ը դատարանների կողմից մերժվել են: 62-ից 29-ը, ըստ Քննչական կոմիտեի, դատախազների կողմից բողոքարկվել է, բողոքներից 14-ը բավարարվել է: 152 մեղադրյալի նկատմամբ կալանքը փոխարինվել է գրավով, ընդ որում, գրավի ձևով ընտրված խափանման միջոցը դատախազի համաձայնությամբ քննիչի կողմից վերացվել է ընդամենը 2 դեպքում:

Դատախազության և քննչական կոմիտեի կողմից ստացված տվյալների համադրմամբ ստացվում է, որ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների 89%-ը հարուցվել են Քննչական կոմիտեում քննվող քրեական գործերով:

Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու դեպքերի նվազմանը զուգընթաց նկատվում է այլընտրանքային խափանման միջոցների կիրառման դեպքերի աճ: ՀՀ քննչական կոմիտեի տվյալների համաձայն 2018 թվականի ընթացքում չհեռանալու մասին ստորագրությունը որպես խափանման միջոց է ընտրվել 1062 անձի նկատմամբ, հրամանատարության հսկողությանն է հանձնվել 501 անձ, անձնական երաշխավորությունը կիրառվել է 3 անձի նկատմամբ:

Ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոցների վերաբերյալ Պաշտպանին հասցեագրվող բողոքները հիմնականում վերաբերում են դրա հիմքերի բավարարությանն ու արժանահավատությանը, իսկ ավելի հաճախ՝ դրա շարունակականությանը: Այսպես, օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքով անձը նշել է, որ վերացել են խափանման միջոց կալանքի հիմքերը, սակայն դեռևս շարունակվում է պահվել կալանքի տակ: Մեկ այլ դեպքում, փաստաբանը հայտնել է, որ իր պաշտպանյալն ունի մշտական բնակության վայր, չի թաքնվել քննությունից, ամուսնացած է, ընտանիքը, այդ թվում՝ անչափահաս երեխաներն ու առողջական խնդիրներ ունեցող մայրն իր խնամքին են, բացի այդ, մեղադրյալը ևս առողջական խնդիրներ ունի, չնայած դրան, անձը շարունակաբար կալանքի տակ է պահվում: Ավելի հաճախ՝ կալանավորված անձինք նշել են, որ քրեական գործի շրջանակներում իրենց մասնակցությամբ որևէ քննչական գործողություն չի իրականացվում կամ այլևս առհասարակ որևէ քննչական կամ այլ դատավարական գործողություն չի իրականացվում, չնայած դրան՝ ինքը շարունակվում է պահվել կալանքի տակ:

Այս առումով, Պաշտպանը հարկ է համարում անդրադառնալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին:

Եվրոպական դատարանի կայուն իրավաբանությամբ՝ հանցագործության համար մեղադրվողը մինչդատական վարույթի ընթացքում միշտ պետք է ազատ արձակվի, քանի դեռ պետությունը չի կարողացել ցույց տալ, որ շարունակական կալանավորման համար գոյություն ունեն «հիմնավոր և բավարար» պատճառներ<sup>226</sup>: Ընդ որում, այս դիրքորոշումն

<sup>225</sup> Առավել մանրամասն տե՛ս 2017 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջ 231:

<sup>226</sup> Տե՛ս Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի (Piruzyan v. Armenia) գործով 2012 թվականի հունիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 33376/07, կետ 91, տե՛ս նաև Սմիրնովան ընդդեմ Ռուսաստանի (Smirnova v. Russia) գործով 2003 թվականի հոկտեմբերի 24-ի վճիռը, գանգատներ թիվ 46133/99 և 48183/99, կետ 58, Բեսսինն ընդդեմ Մոլդովայի (Becciev v. Moldova) գործով 2005 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 9190/03, կետ 53,

առաջ է քաշվել նաև Հայաստանի դեմ կայացված վճիռներից մեկում: Այսպես, Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանն ամրագրել է, որ ներպետական դատարանները պետք է քննության առնեն բոլոր փաստերը, որոնք կողմ կամ դեմ են այնպիսի հանրային շահի իրական պահանջի առկայությանը, որն արդարացնում է անձի ազատությունը հարգելու կանոնից կատարվող շեղումը: Դատարանի արձանագրմամբ դրանք պետք է ամրագրեն անձին ազատ արձակելու միջնորդությունների վերաբերյալ իրենց որոշումներում<sup>227</sup>, ընդ որում, ազատ արձակելուն կողմ կամ դեմ արված փաստարկները պետք է ընդհանուր և վերացական բնույթ չունենան<sup>228</sup>:

Եվրոպական դատարանի կողմից ամրագրված «համարժեքությունն» ըստ իրավական չափանիշների կարող է արտահայտվել հետևյալով՝

- ա) փախուստի վտանգ,
- բ) արդարադատության նկատմամբ անիրավաչափ ազդեցության վտանգ,
- գ) հետագա հանցավոր գործունեություն իրականացնելու վտանգ,
- դ) հանրային անկարգության վտանգ:

Փախուստի վտանգը գնահատելու համար Եվրոպական դատարանը համակողմանի քննարկման առարկա է դարձնում անձի բնավորությունը, նրա բարոյականությունը, բնակության և աշխատանքի պայմանները, ունեցվածքը, ընտանեկան կապերը և հետապնդման երկրի հետ ունեցած բոլոր տեսակի այլ կապերը<sup>229</sup>:

Ընդ որում, Եվրոպական դատարանը հստակ արձանագրել է, որ օրինակ, մշտական բնակության վայր չունենալն ինքնին չի կարող բավարար համարվել փախուստի վտանգի մասին հետևություն կատարելու համար<sup>230</sup>:

Փախուստի վտանգը գնահատելու համար կարևոր է անձին սպառնացող պատժի խստությունը, սակայն այս հանգամանքը ևս չի կարող արդարացնել անձի երկարատև նախնական կալանքը<sup>231</sup>:

Եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ արդարադատության նկատմամբ անիրավաչափ ազդեցության վտանգը չի կարող վերացական լինել: Այն պետք է հիմնված լինի հստակ փաստական տվյալների վրա<sup>232</sup>: Այսպես, Խանզադյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանն իրավաչափ է համարել վարույթի նկատմամբ միջամտություն կատարելու վտանգի առկայության մասին ազգային դատարանների հետևությունը՝ վկայակոչելով այն հանգամանքը, որ լինելով նախկին քննիչ, անձը մեղադրվել է իր գործունեության հետ առնչվող հանցագործության կատարման համար, որը ենթադրաբար կատարել է ոստիկանության այլ ծառայողների հետ<sup>233</sup>:

---

Խոդորկովսկին ընդդեմ Ռուսաստանի (Khodorkovskiy v. Russia) գործով 2011 թվականի մայիսի 31-ի վճիռը, զանգատ թիվ 5829/04, կետ 182:

<sup>227</sup> Տե՛ս Լեթելիերն ընդդեմ Ֆրանսիայի (Letellier v. France) գործով 1991 թվականի հունիսի 26-ի վճիռը, զանգատ թիվ 12369/86, կետ 35:

<sup>228</sup> Տե՛ս Քլութն ընդդեմ Բելգիայի (Clooth v. Belgium) գործով 1991 թվականի դեկտեմբերի 12-ի վճիռը, զանգատ թիվ 12718/87, կետ 44:

<sup>229</sup> Տե՛ս Բեկլինն ընդդեմ Մոլդովայի (Becciev v. Moldova) գործով 2005 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռը, զանգատ թիվ 9190/03, կետ 58:

<sup>230</sup> Տե՛ս Սուլաոջան ընդդեմ Էստոնիայի (Sulaoja v. Estonia) գործով 2005 թվականի փետրվարի 15-ի վճիռը, զանգատ թիվ 55939/00, կետ 64:

<sup>231</sup> Տե՛ս Իդալովն ընդդեմ Ռուսաստանի (Idalov v. Russia) գործով 2012 թվականի մայիսի 22-ի վճիռը, զանգատ թիվ 5826/03, կետ 145, տես նաև Իլիժկովն ընդդեմ Բուլղարիայի գործով 1997 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, զանգատ թիվ 33977/96, կետ 80-81:

<sup>232</sup> Տե՛ս Բեկլինն ընդդեմ Մոլդովայի (Becciev v. Moldova) գործով 2005 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռը, զանգատ թիվ 9190/03, կետ 59:

<sup>233</sup> Տե՛ս Խանզադյանն ընդդեմ Հայաստանի (Khanzadyan v. Armenia) գործով 2014 թվականի մորտի 11-ի որոշումը, զանգատ թիվ 68571/11, կետ 39:

Հետագա հանցավոր գործունեություն իրականացնելու վտանգը, ըստ Եվրոպական դատարանի, պետք է գնահատվի յուրաքանչյուր կոնկրետ գործով՝ հաշվի առնելով մեղադրյալի անցյալը և նրա անձը<sup>234</sup>, ընդ որում՝ նախկինում դատապարտված լինելը կարող է ողջամիտ հիմնավորում լինել նոր հանցանք կատարելու մտավախության համար<sup>235</sup>: Միաժամանակ, ընտանիք և աշխատանք չունենալը դեռևս չի կարող վկայել այն մասին, որ մեղադրյալը հակված է նոր հանցանք կատարելուն<sup>236</sup>:

Հանրային անկարգության վտանգը, որն ի դեպ, ազգային օրենսդրությամբ նախատեսված չէ, վերաբերում է այն դեպքերին, երբ հանցագործության առանձնակի ծանրությունը և դրա նկատմամբ հանրային արձագանքը կարող են հանգեցնել հասարակական հուզումների: Ընդ որում, անհրաժեշտ է, որ ներկայացվեն փաստեր առ այն, որ մեղադրյալի ազատ արձակումը իսկապես խաթարելու է հանրային կարգը<sup>237</sup>:

*Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել շարունակական կալանքի պրակտիկան Եվրոպական դատարանի իրավաբանությանը համահունչ դարձնելու հարցում:*

Խափանման միջոցների կիրառման առումով ողջունելի է, որ Դատախազությունը ևս գործնական և օրենսդրական մակարդակում խնդիրներ է մատնանշում և փորձում նաև առաջարկել խնդիրների լուծման հնարավոր եղանակները: Այսպես, Դատախազության կայքում 2018 թվականի հունիսի 25-ին տեղեկություններ են հրապարակվել այն մասին, որ ՀՀ դատախազության կոլեգիայի հունիսի 12-ի նիստում ՀՀ գլխավոր դատախազի կողմից տրված հանձնարարականի համաձայն մշակվել է կալանավորման՝ որպես խափանման միջոցի կիրառման իրավակարգավորումների, այդ թվում՝ այլընտրանքային խափանման միջոցների ներդրմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների փաթեթ<sup>238</sup>:

Նախագծի փաթեթը նաև ներկայացվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին՝ կարծիք ներկայացնելու համար:

Դրական է, որ Նախագծով առաջարկվում է ներդնել այլընտրանքային խափանման միջոցներ, որով կնվազեցվեն կալանքը որպես խափանման միջոց ընտրելու բարձր ցուցանիշները: Այլընտրանքային խափանման միջոցների գործուն համակարգի, մեղադրյալի պատշաճ վարքագիծն ապահովելու նպատակով այդպիսի այլընտրանքային միջոցների կիրառման առաջնահերթության ուղղակի պահանջի բացակայության խնդրին անդրադարձ է կատարվել նաև Պաշտպանի կողմից ներկայացված տարեկան հաղորդմամբ<sup>239</sup>:

Միաժամանակ, կարևոր է, որ Նախագծի համաձայն՝ կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ խափանման այլ միջոցների կիրառումը բավարար չէ մեղադրյալի անօրինական վարքագիծը կանխելու համար: Նշված կարգավորման անհրաժեշտության մասին նշվել է ինչպես Պաշտպանի կողմից

<sup>234</sup> Տե՛ս Քլութն ընդդեմ Բելգիայի (Clooth v. Belgium) գործով 1991 թվականի դեկտեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 12718/87, կետ 40:

<sup>235</sup> Տե՛ս Սելչուկն ընդդեմ Թուրքիայի (Selçuk v. Turkey) գործով 2006 թվականի հունվարի 10-ի վճիռը, գանգատ թիվ 21768/02, կետ 34:

<sup>236</sup> Տե՛ս Սուվաոջան ընդդեմ Էստոնիայի (Sulaoja v. Estonia) գործով 2005 թվականի փետրվարի 15-ի վճիռը, գանգատ թիվ 55939/00, կետ 64:

<sup>237</sup> Տե՛ս Պրենսիպն ընդդեմ Մոնակոյի (Prencipe v. Monaco) գործով 2009 թվականի հուլիսի 16-ի վճիռը, գանգատ թիվ 43376/06, կետ 79:

<sup>238</sup> Հասանելի է <http://www.prosecutor.am/am/mn/7167/> (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>239</sup> Տես, 2017 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, 234-235 էջեր:

ներկայացված տարեկան հաղորդումներում<sup>240</sup>, այնպես էլ հրապարակային հայտարարություններում:

Ինչ վերաբերում է ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոցներին, ապա Նախագծով առաջարկվում է որպես խափանման միջոց ներդնել տնային կալանքն ու վարչական վերահսկողության հանձնելը: Սակայն, որպես խնդիր, պետք է նշել, որ Նախագծով գրավը որպես այլընտրանքային խափանման միջոց չի ներդրվում:

Այլընտրանքային խափանման միջոցների անխափան կիրառման, մեղադրյալի վարքի նկատմամբ պատշաճ հսկողության իրականացման համար կարևոր է էլեկտրոնային հսկողության միջոցների լիարժեք կիրառման ապահովումը: Էլեկտրոնային հսկողության միջոցների տեխնիկական, կազմակերպական և մեթոդաբանական անհրաժեշտ նախադրյալների վերաբերյալ խնդիրները մանրամասն արձանագրվել և վերլուծվել են Մարդու իրավունքների պաշտպանի «Պրոբացիայի պետական ծառայության գործունեության մշտադիտարկում» արտահերթ հրապարակային զեկույցում<sup>241</sup>: Ուստի, էլեկտրոնային հսկողության կիրառման օրենսդրական հիմքերի ամրագրումը միայն բավարար չէ դրանով հետապնդվող նպատակի իրագործման տեսանկյունից: Ավելին, այլընտրանքային խափանման միջոցների և էլեկտրոնային հսկողության՝ միայն Քրեական դատավարության օրենսգրքում ամրագրված լինելը՝ ոչ պատշաճ իրավակիրառմամբ, կարող է հանգեցնել պետության պարտականության չկատարման՝ առաջ բերելով այդպիսի հսկողության ներքո գտնվող անձի արդարացի բողոքի:

*Ընդհանուր առմամբ կարելի է արձանագրել, որ Նախագիծը պարունակում է կարևոր իրավադրույթներ, որոնք էականորեն կարող են բարելավել խափանման միջոցների ընտրության պրակտիկան: Դրա հաշվառմամբ՝ Պաշտպան ընդգծում է սեղմ ժամկետներում Նախագծի ընդունման անհրաժեշտությունը:*

### **18. Հանրային վստահության հաստուկ բաղադրիչ ունեցող քրեական գործերով վարույթներ**

2018 թվականն առանձնահատուկ էր արդարադատության ոլորտին առնչվող գործընթացներով: Անցնող տարին առանձնացավ ոչ միայն արդեն իսկ հարուցված և քննվող քրեական գործերով արձանագրված առաջընթացով, այլև նոր հարուցված քրեական գործերով, որոնց շրջանակներում նախաձեռնվեցին հանրային մեծ արձագանք ստացած մի շարք քրեական վարույթներ:

Հանրային ճանաչում ունեցող անձանց ներգրավումը քրեական գործերում անխուսափելիորեն հանգեցնում է այդ քրեական գործերի հանրային հետաքրքրության աճին: Այս գործերի արդյունավետ քննությունն ու դրանց ընթացքի մասին հանրությանը պատշաճ իրազեկելը դառնում են այդ գործերի, իսկ առանձին դեպքերում նաև երկրի ողջ իրավապահ ու դատական համակարգերի նկատմամբ հանրության վստահության ապահովման հրամայականը:

Անհրաժեշտ է արձանագրել, որ ի տարբերություն նախորդ տարիների, 2018 թվականին պետական իրավասու մարմինների կողմից հանրային մեծ հետաքրքրություն վայելող քրեական վարույթների վերաբերյալ պարբերաբար տրամադրվել են որոշակի ծավալով տեղեկություններ:

<sup>240</sup> Տես, օրինակ, 2017 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ 229:

<sup>241</sup> Տե՛ս <http://pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/c3fc33641c2871502066374406df2198.pdf>, էջեր 101-104:

Հասարակության համար կարևոր նշանակություն ունեցող իրադարձությունների վերաբերյալ հանրությանն իրազեկելու անհրաժեշտությունը նաև միջազգային պահանջ է: Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է, որ նմանօրինակ դեպքերում պետության հայեցողությունը սահմանափակվում է ժողովրդավար հասարակության շահերով, ապահովելու համար լրատվության՝ որպես «հասարակական դիտորդի» (“public watchdog”) դերը հասարակության լուրջ մտահոգության առարկա հանդիսացող գործերի վերաբերյալ տեղեկության տարածելու հարցում<sup>242</sup>: Հանրային հնչելություն ունեցող քրեական վարույթների վերաբերյալ հասարակության իրազեկվածությունը, իրավապահ մարմինների հիմնական գործողությունների մասին տեղեկությունների պարբերաբար տրամադրման անհրաժեշտությունը և զանգվածային լրատվության միջոցների կարևորությունն ընդգծվել է նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Մամուլի միջոցով քրեական վարույթին վերաբերող տեղեկությունների տրամադրման վերաբերյալ» 2003 թվականի հուլիսի 10-ի թիվ Rec(2003)13 հանձնարարականով:

**2008 թվականի մարտի 1-ի 10 գոհերի մահվան վերաբերյալ և դրան փոխկապակցված մյուս քրեական գործերի քննությունը.** 2008 թվականի մարտի 1-ի տասը գոհերի մահվան փաստով կատարվող նախաքննության և դրա վերաբերյալ հասարակության իրազեկվածությանն առնչող հարցին անդրադարձ է կատարվել Մարդու իրավունքների պաշտպանի 2011, 2012, 2013, 2014, 2015 թվականների տարեկան հաղորդումներում: Այն իր առանձին տեղն է ունեցել նաև 2016 և 2017 թվականների տարեկան հաղորդումներում:

Այս կապակցությամբ հարկ է ընդգծել, որ նախորդ տարիների ընթացքում հանրային նման հետաքրքրություն ունեցող գործերի քննության վերաբերյալ հանրությանը չեն տրամադրվել բավարար տեղեկություններ՝ չնայած դրա հանրային մեծ պահանջին: 2018 թվականը առանձնացավ զգալի զարգացումներով:

2018 թվականի տարեկան հաղորդման պատրաստման շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից համապատասխան հարցումներ են արվել ՀՀ գլխավոր դատախազություն և ՀՀ հատուկ քննչական ծառայություն: Ըստ ստացած տեղեկությունների՝ 2008 թվականի մարտի 2-ին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասով<sup>243</sup> և 235-րդ հոդվածի 2-րդ մասով<sup>244</sup> նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է քրեական գործ: ՀՀ քրեական օրենսգրքում 2009 թվականի մարտի 18-ին կատարված փոփոխությունների արդյունքում՝ 2008 թվականի մարտի 1-ին և 2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների ժամանակ անհայտ անձանց կողմից 10 անձանց մահվան դեպքերի առթիվ 2009 թվականի մարտի 24-ին ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով<sup>245</sup> նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է քրեական գործ, որը միացվել է վերը նշված քրեական գործին:

2018 թվականին արձանագրվեցին նաև մարտի 1-ի դեպքերին առնչվող քրեական վարույթի նոր զարգացումներ: Մասնավորապես, ըստ քրեական հետապնդման մարմնի պարզաբանումների՝ 2018 թվականի հուլիսի 3-ին նույն քրեական գործին է միացվել նաև

<sup>242</sup> Տե՛ս Տոնսբեռգս Բլանդ Աս և Հաուկոմն ընդդեմ Նորվեգիայի գործով 2007 թվականի մարտի 1-ի վճիռը, զանգատ թիվ 510/04, կետեր 82:

<sup>243</sup> Զանգվածային անկարգություններ կազմակերպելը, որոնք ուղեկցվել են բռնությամբ, ջարդերով, հրկիզումներով, գույք ոչնչացնելով կամ վնասելով, հրազեն, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր գործադրելով կամ իշխանության ներկայացուցչին զինված դիմադրություն ցույց տալով և որոնք զուգորդվել են սպանությամբ կամ նշված արարքներն անմիջականորեն կատարելը, որոնք զուգորդվել են սպանությամբ:

<sup>244</sup> Ապօրինի կերպով հրազեն, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ:

<sup>245</sup> Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը:

2008 թվականի փետրվարի 23-ից մարտի 2-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ գործադիր մարմնի ղեկավար անձի՝ ՀՀ պաշտպանության նախարարի կողմից, այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ, ՀՀ սահմանադրական կարգը տապալելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով<sup>246</sup> նույն օրը հարուցված քրեական գործը:

Ըստ պաշտոնական պարզաբանման՝ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալներ են ներգրավվել ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ՀՀ ՊՆ գլխավոր շտաբի պետ Սեյրան Օհանյանը և պաշտպանության նախարարի սպառազինության գծով տեղակալ Յուրի Խաչատուրովը, իսկ ՀՀ նախագահի աշխատակազմի նախկին ղեկավար Արմեն Գևորգյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-300.1-րդ հոդվածի 1-ին մասով<sup>247</sup>: ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ է ներգրավվել նաև ՀՀ պաշտպանության նախկին նախարար Միքայել Հարությունյանը, ում նկատմամբ հայտարարվել է հետախուզում և դատարանի որոշմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը:

Բացի դրանից, պետական ծառայություն իրականացնող այլ պաշտոնատար անձանց կողմից պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, բռնություն և հատուկ միջոցներ գործադրելով զուգորդված պաշտոնեական լիազորություններն անցնելու, ինչպես նաև պաշտոնեական կեղծիք կատարելու դեպքերի առթիվ Հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է քրեական գործ, որը միացվել է նշված քրեական գործին և որի շրջանակներում քննչական խմբի նախկին ղեկավար Վահագն Հարությունյանը և ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության փորձագետ Արթուր Հովհաննիսյանը ներգրավվել են որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-349-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով<sup>248</sup>, իսկ նույն քննչական խմբի քննիչ Արմեն Հակոբյանը որպես մեղադրյալ է ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով<sup>249</sup>:

Քրեական գործին է միացվել նաև Հատուկ քննչական ծառայությունում քննված քրեական գործով դատապարտված անձի կողմից տրված հաղորդման հիման վրա հարուցված քրեական գործը, որով մասնավորապես քննվում է տվյալ անձին Հատուկ քննչական ծառայություն բերման ենթարկելու և ծեծի ենթարկելով ցուցմունք տալուն հարկադրելու ենթադրյալ փաստը:

Դատախազության և Հատուկ քննչական ծառայության պարզաբանումների համաձայն՝ նախաքննության ընթացքում քրեական գործով քննչական խմբի կողմից գործով օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու, մեղավոր անձանց շրջանակը պարզելու և նրանց գործողություններին իրավական գնահատական տալու նպատակով հարցաքննվել են վկաներ, հետաքննության մարմիններին տրվել են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ հանձնարարություններ, կատարվել են խուզարկություններ, ազդարարումներ, նշանակվել են փորձաքննություններ, մասնավորապես, որպես վկա հարցաքննվել են 1000-ից ավելի անձինք, քաղաքացիներից և պետական տարբեր հիմնարկներից կատարվել են թվով 85 ազդարարումներ, կատարվել են 40-ից ավելի խուզարկություններ, նշանակվել է թվով 23 փորձաքննություն, փորձաքննության է ներկայացվել ավելի քան 146 միավոր հրազեն և մեծ քանակությամբ զինամթերք:

<sup>246</sup> Սահմանադրական կարգը տապալելը՝ Սահմանադրության 1-ից 5-րդ հոդվածներով կամ 6-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված որևէ նորմը փաստացի վերացնելը, որն արտահայտվում է իրավական համակարգում այդ նորմի գործողության դադարեցմամբ:

<sup>247</sup> Սահմանադրական կարգը տապալելուն հանցակցելը:

<sup>248</sup> Հետաքննություն կատարող անձի, քննիչի, դատախազի կամ պաշտպանի կողմից քրեական գործով ապացույցներ կեղծելուն հանցակցելը, որն անգոյությունամբ առաջացրել է ծանր հետևանքներ:

<sup>249</sup> Հետաքննություն կատարող անձի, քննիչի, դատախազի կամ պաշտպանի կողմից քրեական գործով ապացույցներ կեղծելը, որն անգոյությամբ առաջացրել է ծանր հետևանքներ:

Պաշտպանը ցուցաբերում է մշտական հետևողականություն, որպեսզի այս գործընթացն իրականացվի մարդու իրավունքների առաջնայնության և իրավունքի գերակայության սկզբունքի խստիվ պահպանմամբ:

Քննարկվող քրեական գործերի քննությունը հանրային հետաքրքրության ակնհայտ նոր ալիք բարձրացրեց նաև այն պատճառով, որ դրա շրջանակներում որպես մեղադրյալ ներգրավվեց և հետագայում կալանավորվեց Հայաստանի Հանրապետության պաշտոնաթող նախագահ, Արցախի Հանրապետության պաշտոնաթող նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Հանրային քննարկումներն առավել ակտիվացան այն բանից հետո, երբ հրապարակվեցին բարձրաստիճան պաշտոնատար անձանց հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումները, որոնց առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանն անմիջապես ներկայացրեց իր հրապարակային դիրքորոշումները<sup>250</sup>:

Ռոբերտ Քոչարյանի կալանավորումից անմիջապես հետո Մարդու իրավունքների պաշտպանն այցելեց նրան ՀՀ արդարադատության նախարարության «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկ, ուսումնասիրվեցին պահման պայմաններն ու Պաշտպանի իրավասությանն առնչվող այլ հարցեր:

Պաշտպանի կողմից Ռոբերտ Քոչարյանի իրավունքների պաշտպանության առնչությամբ նախաձեռնված քննարկման ընթացքում Պաշտպանի աշխատակազմը մշտական կապի մեջ է եղել և համագործակցել է նաև նրա փաստաբանների հետ: Այսպիսի աշխատանքը Պաշտպանին տվել է անմիջականորեն տեղեկությունների տիրապետելու ու իր իրավասության շրջանակներում համապատասխան լիազորություններն արդյունավետ գործադրելու հնարավորություն:

Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ անգամ կալանքի տակ գտնվելու ընթացքում Ռոբերտ Քոչարյանի կողմից չեն ներկայացվել դժգոհություններ քրեակատարողական հիմնարկի ծառայողների վերաբերմունքից:

Պաշտպանի հետ առանձնազրույցի ընթացքում Հանրապետության երկրորդ Նախագահի կողմից բարձրացվել են մի շարք հարցեր, որոնք սահմանադրական օրենքով Պաշտպանին վերապահված իրավասության շրջանակներում ուղղվել են համապատասխան պետական մարմինների:

Մասնավորապես, այդ հարցերի թվում քննարկման առարկա են դարձվել՝ քրեակատարողական հիմնարկի խցում համակարգիչ կամ էլեկտրոնային համարժեք միջոց ունենալու, ողջ գույքի, այդ թվում՝ կենսաթոշակի հաշվեհամարի վրա կիրառված արգելանքի իրավաչափության, ինչպես նաև մերձավոր ազգականների, այդ թվում՝ ընտանիքի անդամների հետ սահմանված տեսակցությունների և հեռախոսային խոսակցությունների արգելքի հարցը:

Այս հարցերի հետ կապված՝ Պաշտպանը նախաձեռնել է մանրամասն ուսումնասիրություն, որի արդյունքում այդ արգելքների վերացմանն ուղղված առաջարկները համապատասխան իրավական վերլուծությունների հետ միասին ներկայացվել են Արդարադատության նախարարություն ու Հատուկ քննչական ծառայություն՝ ըստ նրանցից յուրաքանչյուրի իրավասության: Մարդու իրավունքների պաշտպանը բազմիցս նշել է, որ հատկապես ընտանիքի անդամների հետ տեսակցությունների և հեռախոսային խոսակցությունների արգելմանն առնչվող ՀՀ օրենսդրությունն ու պրակտիկան համակարգային առումով խնդրահարույց են և համահունչ չեն մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշներին:

Իրականում, միջազգային իրավաբանությունը, այդ թվում՝ Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունները պետության համար սահմանում են հատուկ

<sup>250</sup> Պաշտպանի դիրքորոշումները հասանելի են հետևյալ հղումներով՝ <http://www.ombuds.am/media/79846.html>, <https://armenpress.am/arm/news/957141/> ((2019 թվականի մարտի 29-ի դրությամբ)):



պահանջներ, որոնք վերաբերում են ազատությունից զրկված անձանց սոցիալական շփումներին, մերձավոր ազգականների, այդ թվում՝ ընտանիքի հետ կապին, քրեակատարողական հիմնարկում ու խցում նրանց զբաղվածությանը:

Ազատությունից զրկված անձի և հատկապես կալանավորված անձի համար զբաղվածությունը, սոցիալական շփումների երաշխավորումը դիտարկվում է նրա նկատմամբ վատ վերաբերմունքի տեսանկյունից: Ընդ որում, կալանավորված անձի դեպքում, ի տարբերություն դատապարտյալի, այս պահանջներն ունեն առավել մեծ նշանակություն, իսկ պետությունն էլ դրանք երաշխավորելու մեծ բեռ: Վատ վերաբերմունք թույլ չտալու տեսանկյունից ազատությունից զրկված անձի բավարար սոցիալական շփումների ապահովման պարտականության չկատարումը չի կարող արդարացվել, ասենք, համակարգիչ ունենալու անթույլատրելիության օրենսդրական ֆորմալ արգելքով: Ընդ որում, այս հարցը Մարդու իրավունքների պաշտպանը դիտարկել է սոցիալական կապերի ու շփումների համար պետության ստեղծած պայմանների համակցության մեջ: Ավելին, օրենսդրական այսպիսի դրույթների կիրառությունն իր հերթին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության տրամաբանությամբ, կարող է առաջ բերել «օրենքի որակի» հարց՝ այդպիսով առաջացնելով կոնվենցիոն պահանջների չպահպանման խնդիր: Այլ կերպ ասած, հավաքական առումով պետության պարտականությունների բովանդակային ընդգրկումը ներառում է թե՛ օրենսդրական կարգավորումների նախատեսումը, թե՛ պատշաճ իրավակիրառումը: Ըստ այդմ էլ, անձի իրավունքի երաշխավորման ձախողումը չի կարող արդարացվել օրենսդրական «օբյեկտիվ» խոչընդոտներով<sup>251</sup>:

Արդարադատության նախարարության սկզբնական հավաստմամբ՝ դիմումի ներկայացման դեպքում անձին կթույլատրվի փոխանցել ոչ թե համակարգիչ, այլ, Նախարարության ձևակերպմամբ, էլեկտրոնային գիրք, այն դեպքում, երբ էլեկտրոնային գիրքը չունենա հասանելիություն համացանցին և ընթերցվող գրականությունն արդեն իսկ ներբեռնված լինի էլեկտրոնային գրքում:

Պաշտպանի դիտարկմամբ սա կարող էր լինել միայն հարցի մասնակի լուծում, քանի որ խցում Նախարարության նշած էլեկտրոնային գրքի առկայությունը դեռևս չի լուծում անձի զբաղվածության խնդիրը, քանի որ չէր տալիս, օրինակ, գրելու հնարավորություն: Այդուհանդերձ, կարևոր էր, որ Պաշտպանի միջամտությամբ Ռոբերտ Քոչարյանին տրամադրվել է խցում առանց ինտերնետ համացանցի հասանելիության համակարգիչ կամ համարժեք էլեկտրոնային միջոց ունենալու թույլտվություն (հարկ է նշել, որ այս հարցը բարձրացրել են նաև փաստաբանները):

Ընտանիքի հետ կապի հետ կապված՝ Հատուկ քննչական ծառայությունից տեղեկություններ են ստացվել դրական զարգացման մասին առ այն, որ մերձավոր ազգականների նկատմամբ կիրառված տեսակցությունների և հեռախոսային խոսակցությունների արգելքը վարույթն իրականացնող մարմնի կողմից մասնակի վերացվել է: Արգելքը պահպանվել է միայն մերձավոր ազգականներից մեկի նկատմամբ, ով քրեական գործով վկայի դատավարական կարգավիճակ ունի:

Հատուկ քննչական ծառայություն ուղարկված գրությամբ Պաշտպանը քննարկման առարկա է դարձրել նաև Ռոբերտ Քոչարյանի կենսաթոշակային հաշվեհամարի վրա դրված կալանքի իրավաչափության հարցը: Մասնավորապես, առաջարկի հիմքում, ի թիվս այլ փաստարկների, դրվել են նաև ներպետական օրենսդրական կարգավորումներն առ այն, որ անկախ նրանից, թե քրեական գործի մինչդատական վարույթում մեղադրյալի կարգավիճակ ունեցող անձի կենսաթոշակի վրա ինչ չափով է կալանք դրվել, հետագայում՝ մեղադրական

<sup>251</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2018 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցի 4.11 ենթապալիում:

դատավճռով անձի վրա ֆինանսական պարտավորություններ դրվելու դեպքում դրանք ենթակա են կատարման կենսաթոշակի երեսուն տոկոսից ոչ ավելի չափով: Ուստի, մեղադրյալի ամբողջ ծավալով պետական կենսաթոշակի վրա կալանքը կարող է առաջ բերել սեփականության իրավունքին պետության կողմից ոչ համաչափ միջամտության խնդիր:

Ի պատասխան՝ Հատուկ քննչական ծառայությունից պարզաբանվել է, որ վերացվել է Ռոբերտ Քոչարյանի կենսաթոշակային հաշվեհամարի վրա դրված կալանքը:

Պաշտպանի սեփական նախաձեռնությամբ սկսված քննարկման ընթացակարգը շարունակվում է:

Ձեռնպահ մնալով քրեական վարույթի ընթացիկ գործով որևէ գնահատական տալուց՝ Մարդու իրավունքների պաշտպանն, այնուամենայնիվ, անհրաժեշտ է համարում ընդգծել, որ հանրային բարձր հետաքրքրություն ունեցող քրեական գործեր քննելիս պետությունը ստանձնում է առավել պատասխանատվություն հետևողականորեն երաշխավորելու քրեորեն հետապնդելի արարքում մեղադրվող ցանկացած անձի անմեղության կանխավարկածը: Դա միայն ցույց է տալիս՝ որքան բարձր է պետությունը գնահատում հանցավորության դեմ պայքարի իր հանձնառությունը՝ այդ պայքարի արդյունքների կայուն հավաստիությունը ապահովելու տեսանկյունից: Ավելին, քրեական արդարադատության համակարգը կրում է քրեական վարույթին առնչվող անհրաժեշտ տեղեկություններ հանրությանը տրամադրելու և այդ կերպ հաշվետու քննություն ապահովելու պարտադիր բեռը: Սա իր հերթին կոչված է երաշխավորելու հանրության վստահությունն առ այն, որ քրեական կոնկրետ վարույթն իրականացվում է իրավունքի գերակայության մշտական պահպանմամբ:

**2016 թվականի հուլիսյան իրադարձությունների կապակցությամբ քննվող քրեական գործերը.** Հուլիսյան իրադարձությունների շրջանակում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ քննությունը շարունակում է հանրային մեծ հետաքրքրվածություն վայելել: 2016 թվականի հուլիսյան իրադարձություններն, իհարկե, մարդու իրավունքների տեսանկյունից լուրջ մարտահրավերների առաջ կանգնեցրին մեր երկիրը: Դրա հետ միասին, այդ իրադարձությունները լրացուցիչ ազդակ էին հասկանալու երկրում առկա համակարգային խնդիրները, դրանց նպաստող պատճառներն ու պայմանները: Այդ նպատակով էր նաև, որ 2017 թվականին հրապարակվեց «2016 թվականի հուլիսյան իրադարձությունների վերաբերյալ» Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը: Ձեկույցում հանգամանորեն քննարկվեցին հուլիսյան դեպքերը, ինչպես նաև դրանց առնչությամբ ներկայացվեցին մանրամասն գնահատականներ: Արձանագրվեցին նաև հուլիսի 17-ից 31-ի իրադարձությունների ընթացքում տեղի ունեցած՝ մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող խնդիրներ, որը բարձր գնահատվեց նաև միջազգային գործընկերների կողմից<sup>252</sup>:

Ինչպես 2017 թվականի տարեկան հաղորդմամբ, սույն հաղորդմամբ ևս անդրադարձ է կատարվել 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների ընթացքում Ոստիկանության գործողությունների առնչությամբ հարուցված քրեական գործերի քննությանը: Սա պայմանավորված է հատկապես այն հանգամանքով, որ Պաշտպանն անհրաժեշտ է համարում տվյալ գործերի ընթացքի մասին հանրային բարձր իրազեկվածությունը: Պաշտպանի աշխատակազմին քրեական գործերի քննության առնչությամբ ամբողջական տեղեկություններ են տրամադրվել Դատախազության և Հատուկ քննչական ծառայության կողմից:

<sup>252</sup> Տե՛ս «2016 թվականի հուլիսյան իրադարձությունների վերաբերյալ» ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը, հասանելի է հետևյալ հղումով՝ <http://pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/e014052ce8bdca5513f5a7d68deb6224.pdf>:

Այսպես, ստացված տեղեկությունների համաձայն՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում 2016 թվականի հուլիսի 17-ին տեղի ունեցած իրադարձությունների առթիվ հարուցված քրեական գործի նախաքննությունը շարունակվում է ՀՀ հատուկ քննչական ծառայությունում՝ նախաքննությունն իրականացվում է քննչական խմբի կողմից:

Սույն քրեական գործին են միացվել ՀՀ ոստիկանության ՊՊԾ գնդի վրա զինված հարձակման և դրան հաջորդող դեպքերի կապակցությամբ հարուցված 4 քրեական գործեր: Դրանք են՝

1. Ոստիկանության ծառայողի կողմից ՊՊԾ գնդի տարածքը զավթած խմբի անդամներին միանալու դիտավորությամբ մարտական հենակետից նոնակ վերցնելու և հենակետը լքելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործը,

2. Անդրիաս Ղուկասյանի և մյուսների կողմից Ոստիկանության ՊՊԾ գունդը զավթած կազմակերպված խմբի անդամներին միանալու նպատակով Երևան քաղաքի Սարի թաղում զանգվածային անկարգություններ կազմակերպելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործը,

3. Երևան քաղաքի Սարի թաղում տեղի ունեցող զանգվածային անկարգությունների ժամանակ, հանրավտանգ եղանակով ուրիշի գույքը վնասելու դիտավորությամբ, կազմակերպված խմբի կողմից զավթած ՀՀ ոստիկանության պարեկապահակետային ծառայության գնդից անհայտ անձանց կողմից Սարի թաղում գտնվող վեց տրանսպորտային միջոցների ու մեկ գրահամերթնայի վրա կրակոցներ արձակելու և դրանք վնասելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործը,

4. Երևան քաղաքի Սարի թաղում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների ժամանակ, մարմնական վնասվածք պատճառելու դիտավորությամբ, կազմակերպված խմբի կողմից զավթած ՀՀ ոստիկանության պարեկապահակետային ծառայության գնդի տարածքից անհայտ անձի կողմից կրակոց արձակելու և հիշյալ վայրում ծառայություն իրականացնող Ոստիկանության ծառայողի առողջությանը, կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս պատճառելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործը:

Բացի վերը նշված քրեական գործից, ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվում է մեկ այլ գործ ևս: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացված տեղեկությունների համաձայն՝ քրեական գործը հարուցված է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՊՊԾ ոստիկանության գնդի վարչական շինությունները զավթելուց հետո՝ 2016 թվականի հուլիսի 17-ից 27-ն ընկած ժամանակահատվածում Ոստիկանության ծառայողների կողմից կատարված ենթադրյալ ապօրինի արարքների առթիվ:

Հիշյալ քրեական գործով տուժող են ճանաչվել 95 անձ, որոնցից 6-ը լրագրողներ են, 3-ը փաստաբաններ, 86-ը՝ հավաքի մասնակիցներ և այլ անձինք: Քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

Հատուկ քննչական ծառայությունում է քննվում նաև այդ օրերին Ոստիկանության ծառայողների կողմից իրենց լիազորությունների շրջանակներից դուրս գալու, Մ. Խորենացու փողոցում և Սարի թաղում հատուկ միջոցների գործադրման հետևանքով անձանց մարմնական վնասվածքներ պատճառելու, Ոստիկանության Երևան քաղաքում գտնվող ստորաբաժանումներ անձանց բերման ենթարկելիս և դրանից հետո նրանց նկատմամբ բռնություն գործադրելու, մարմնական վնասվածքներ պատճառելու վերաբերյալ ենթադրյալ դեպքերը:

Քննության ընթացքում հարցաքննվել է 185 անձ, որից 106-ը որպես վկա (այդ թվում՝ 3 լրագրող, 69 Ոստիկանության ծառայող), 79-ը տուժող (այդ թվում՝ 21 լրագրող):

Կատարված քննության արդյունքում 8 անձի և Ոստիկանության մեկ ծառայողի առաջադրվել են մեղադրանքներ, որոնցից՝

1. չորս անձի մեղադրանք է առաջադրվել Սարի թաղում խմբի կազմում խուլիգանություն կատարելու և «Արմենիա» հեռուստաընկերության լրագրող Ալբերտ Գալստյանի մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելու համար: Բոլոր մեղադրյալների նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը, իսկ 2016 թվականի սեպտեմբերի 7-ին նրանց մասով գործն ուղարկվել է դատարան,

2. մեկ անձի մեղադրանք է առաջադրվել «Ազատություն» ռադիոկայանի լրագրող Հովհաննես Մովսիսյանի մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելու համար: Մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին, իսկ 2016 թվականի հոկտեմբերի 5-ին նրա մասով գործն ուղարկվել է դատարան,

3. երկու անձի մեղադրանք է առաջադրվել գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու և «news.am» կայքի լրագրող Խորեն Գրիգորյանի մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելու համար: Նշված մեղադրյալների նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է ստորագրություն չհեռանալու մասին, իսկ 2016 թվականի հոկտեմբերի 31-ին նրանց մասով գործն ուղարկվել է դատարան,

4. մեկ անձի մեղադրանք է առաջադրվել գույքը դիտավորությամբ վնասելով խոշոր չափերի վնաս պատճառելու և լրագրող Դավիթ Հարությունյանի մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելու համար: Մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է ստորագրություն չհեռանալու մասին, իսկ 2017 թվականի հունիսի 22-ին նրա մասով քրեական գործն ուղարկվել է դատարան,

5. Ոստիկանության մեկ ծառայողի մեղադրանք է առաջադրվել բռնությամբ պաշտոնեական լիազորություններն անցնելու, այն է՝ ոտքով քաղաքացու դեմքին հարվածելով միջին ծանրության մարմնական վնասվածք պատճառելու համար: Մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է ստորագրություն չհեռանալու մասին, իսկ 2018 թվականի հուլիսի 17-ին նրա մասով քրեական գործն ուղարկվել է դատարան:

Ըստ տեղեկությունների՝ մյուս դրվագներով քրեական գործով վարույթը կասեցվել է: Միննույն ժամանակ տեղեկություններ են տրամադրվել այն մասին, որ 2018 թվականի ընթացքում հիշյալ քրեական գործերով 18 մեղադրյալների նկատմամբ արարքում հանցակազմի բացակայության հիմքով որոշում է կայացվել քրեական հետապնդումը դադարեցնելու մասին:

Հուլիսյան իրադարձություններին առնչվող քրեական գործերի մի մասն, ինչպես նշվեց, արդեն գտնվում է դատաքննության փուլում: Հրապարակային դատաքննության պայմաններում հասարակությունը հնարավորություն ունի հետևելու գործերի ընթացքին՝ ամենայն մանրամասնությամբ: Տեղի ունեցող դատական նիստերը մշտապես գտնվում են զանգվածային լրատվության միջոցների ուշադրության կենտրոնում և ակտիվ լուսաբանվում են: Նկատի ունենալով այս քրեական գործերի առանձնահատկությունը, հասարակության վերաբերմունքն ու հետաքրքրվածությունը, ինչպես նաև դատավարության մասնակիցների, գործի հետ առնչություն ունեցող անձանց իրավունքներն ու օրինական շահերը, դատավարության մասնակիցների միջև առկա լարվածությունն ու հուզականությունը, Պաշտպանը հորդորում է թեմային առնչվող տեղեկություններ հրապարակելիս առավել զգույշ լինել՝ ընդհուպ մինչև ձևակերպումների ընտրության հարցում:

**Դատարանի շենքում ամբաստանյալների նկատմամբ ֆիզիկական բռնություն գործադրելու ենթադրյալ դեպքի առթիվ քննվող քրեական գործը.** Հուլիսյան իրադարձությունների շրջանակներում անհրաժեշտ է անդրադարձ կատարել հանրային նշանակության մեկ այլ՝ 2017 թվականի հունիսի 28-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Ավան նստավայրի շենքում Ոստիկանության ծառայողների

կողմից ամբաստանյալներին ենթադրաբար ծեծի ենթարկելու տեղեկությունների առնչությամբ հարուցված քրեական գործի քննությանը:

ՀՀ գլխավոր դատախազության կողմից Պաշտպանին ներկայացված տեղեկության համաձայն՝ պաշտոնատար անձանց կողմից բռնություն գործադրելով գուցորդված պաշտոնեական լիազորություններն անցնելու ենթադրաբար տեղի ունեցած վերոնշյալ դեպքի առթիվ 2017 թվականի հուլիսի 3-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է քրեական գործ: Նախաքննության ընթացքում Արեգ Կյուրեղյանը, Սմբատ Բարսեղյանը, Արայիկ Խանդոյանը, Միխիթար Ավետիսյանը և Գագիկ Եղիազարյանը ճանաչվել են տուժող: Արեգ Կյուրեղյանն ու Միխիթար Ավետիսյանը հրաժարվել են ցուցմունք տալ, իսկ Սմբատ Բարսեղյանը, Արայիկ Խանդոյանն ու Գագիկ Եղիազարյանը հարցաքննվել են և դեպքի վերաբերյալ տվել ցուցմունքներ:

2018 թվականի ընթացքում ևս Պաշտպանը մշտապես ուշադրության ներքո է պահել հարուցված քրեական գործի ընթացքը՝ այդ մասին իրավասու մարմիններից պարբերաբար տեղեկություններ պահանջելով և նրանց տրամադրելով դեպքի առթիվ Պաշտպանի աշխատակազմում առկա տեղեկությունները:

Բացի դրանից, 2018 թվականի մայիսի 16-ին տեղի ունեցող դատական նիստի ընթացքում փաստաբան Լուսինե Հակոբյանը Պաշտպանի աշխատակազմ ներկայացրած ահազանգով իր մտահոգությունն է հայտնել այն մասին, որ 2016 թվականին ՊՊԾ գունդ մուտք գործած խմբի կալանավորված անդամները դատարանի խցում գտնվելու ընթացքում հնարավոր է ենթարկվեն բռնության: Այս մտավախությունն ահազանգերով ներկայացրել են նաև փաստաբաններ Տիգրան Եգորյանը, Դավիթ Գյուրջյանը և Հարություն Բաղդասարյանը:

Մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարությամբ արագ արձագանքման խումբ է այցելել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայր:

Թեև այցի ընթացքում դատարանի շենքում գտնվող բոլոր կալանավորված անձինք Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին հայտնել են, որ բռնության չեն ենթարկվել, այդուհանդերձ, ներկայացրել են մտավախություն բռնության կամ այլ տեսակի վատ վերաբերմունքի ենթարկվելու հնարավորության մասին: Մասնավորապես, ըստ կալանավորվածների, իրենց մտավախությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության ուղեկցող գումարտակի հրամանատարը դեռևս 2017 թվականի հունիսի 28-ին իրենց ծեծի է ենթարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Ավան նստավայրի շենքում:

Հաշվի առնելով այս տեղեկությունը, փաստաբանների մտահոգությունները, ինչպես նաև կալանավորված ամբաստանյալների պնդումներն այն մասին, որ հենց Ոստիկանության այդ ծառայողն է նշվում որպես նրանց ծեծի ենթարկող անձ՝ Մարդու իրավունքների պաշտպանն անթույլատրելի է համարել Ոստիկանության այդ ծառայողի կողմից ՊՊԾ գունդ մուտք գործած խմբի կալանավորված անդամներին ուղեկցելը: Այդ իսկ պատճառով համապատասխան գրություն է հասցեագրվել Ոստիկանությանը՝ նշելով, որ պետք է անհապաղ բացառել Ոստիկանության տվյալ ծառայողի կողմից կալանավորվածներին ուղեկցելը կամ նրանց հետ առհասարակ որևէ առնչություն ունենալը: Այդ երաշխիքի գործադրման նպատակը արդյունավետ քննության և ծեծի կամ այլ վատ վերաբերմունքի ենթադրյալ տուժող հանդիսացող անձի պաշտպանությունն է: Ընդ որում, այս դիրքորոշումն ուղղակիորեն բխում է Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորություններից (Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Խոշտանգումների կանխարգելման Եվրոպական կոմիտեի իրավական չափանիշներ և այլն):

Ի պատասխան՝ Ոստիկանությունից տրամադրվել են տեղեկություններ, որ դադարեցվել է Երևանի վարչության ուղեկցող գումարտակի հրամանատարի կողմից Արայիկ Խանդոյանի,

Արեգ Կյուրեղյանի, Գագիկ Եղիազարյանի, Սմբատ Բարսեղյանի և Միխայիլ Ավետիսյանի ուղեկցումն ու առնչությունը:

Ինչ վերաբերում է քրեական գործի ընթացքին, ապա Պաշտպանի աշխատակազմ Դատախազության կողմից տրամադրված պարզաբանման համաձայն՝ որոշում է կայացվել Երևանի վարչության ուղեկցող գումարտակի հրամանատարին որպես մեղադրյալ ներգրավելու մասին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով (խոշտանգումը մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից): Ըստ Պաշտպանին ներկայացված տեղեկատվության՝ նախաքննությունը շարունակվում է:

**Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցի նկատմամբ սպառնալիքների առնչությամբ գործի քննությունը.** Հանրային վստահության հատուկ բաղադրիչ ունեցող պետք է համարել նաև հանրային ճանաչում ունեցող՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցի նկատմամբ սպառնալիքների առնչությամբ գործի քննությունը:

Մասնավորապես, 2017 թվականի հունիսի 6-ին Ա.Սաքունցը տեղեկություններ էր հրապարակել իրեն կյանքից զրկելու սպառնալիքների վերաբերյալ<sup>253</sup>: Հրապարակված տեղեկությունների համաձայն՝ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի էջում կատարած գրառման կապակցությամբ ցանցի մեկ այլ օգտատեր մեկնաբանություն է տեղադրել դիմահար կրակոցով Ա.Սաքունցին կյանքից զրկելու վերաբերյալ:

Նշված հրապարակումների հիման վրա՝ հաշվի առնելով իրավապաշտպան գործունեության հանրային նշանակությունն ու նման ցանկացած դեպքի անթույլատրելիությունը՝ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից սեփական նախաձեռնությամբ սկսվել է քննարկման ընթացակարգ: Պաշտպանի կողմից անձամբ հարցը քննարկվել է Ա.Սաքունցի հետ:

Կատարված ուսումնասիրության արդյունքներով Պաշտպանը նույնպես անմիջապես դիմել է ՀՀ գլխավոր դատախազին՝ առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող վերոնշյալ դեպքերով վարույթ նախաձեռնելու խնդրով: Հարուցված քրեական գործով իրավապաշտպանը ճանաչվել է տուժող: Դրանից հետո, Ա.Սաքունցը Պաշտպանին է ներկայացրել մտահոգություններ՝ կապված քրեական գործի դանդաղ ընթացքի, ինչպես նաև գործի շրջանակներում քննչական գործողությունների հարցի հետ:

Հետագայում Պաշտպանին տրամադրած պարզաբանումների համաձայն՝ քրեական գործի վարույթը կասեցվել է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը հայտնի չլինելու հիմքով:

Պաշտպանի համար մեծ կարևորություն ունի յուրաքանչյուր վարույթի արդյունավետ քննության հարցն, առավել ևս, երբ այն ուղղակիորեն առնչվում է իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձանց իրավունքների ապահովմանը: Հարցը խնդրահարույց է հատկապես իրավապաշտպանների անկաշկանդ աշխատանքի տեսանկյունից: Պատասխանատվության անխուսափելիությունն ապահովելու և հետագայում այդպիսի ոտնձգությունները կանխարգելելու պահանջը ենթադրում է, որ իրավասու մարմինների կողմից պետք է ձեռնարկվեն օրենքով նախատեսված բոլոր միջոցները՝ դեպքի հանգամանքները պարզելու և ոտնձգություն կատարած անձանց հայտնաբերելու ուղղությամբ:

Նման քրեական գործերը գտնվում են Պաշտպանի անմիջական ուշադրության ներքո, այդ իսկ պատճառով քննության վերաբերյալ պարբերաբար տեղեկություններ են պահանջվում քրեական հետապնդման մարմիններից:

<sup>253</sup>Տե՛ս <http://www.armtimes.com/hy/article/114198>, <http://www.lin.am/2153667.html> (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

**Զանգվածային լրատվության միջոցների գործունեության երաշխիքների ապահովումը.** Լրագրողների գործունեությունը նպատակ ունի նպաստելու հասարակության տեղեկացված լինելու իրավունքին և պետական մարմինների գործունեության հաշվետվողականությանը, ուստի դրանով այդ գործունեությունը ձեռք է բերում հանրային նշանակություն:

Լրագրողական գործունեությունը խոչընդոտելու ցանկացած դրսևորում անթույլատրելի է և պետք է պատշաճ իրավական գնահատական ստանա: Այդպիսի ցանկացած ոտնձգություն վտանգում է ոչ միայն լրագրողի իրավունքները, այլև իր բացասական ազդեցությունն է թողնում հասարակության տեղեկացվածության իրավունքի լիարժեք ապահովմանը:

Լրագրողներն ու լրատվության ոլորտի ներկայացուցիչները կարևոր դեր ունեն ժողովրդավարական հասարակությունում հանրային բանավեճերի և որոշումների կայացման գործընթացներում՝ իբրև հանրային կամ սոցիալական դիտորդներ (watchdogs) հանդես գալու և տեղեկատվության ու գաղափարների փոխանակման, դրանց քննարկման ընդհանուր հարթակներ ստեղծելու միջոցով:

Դրանից բացի, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Մամուլի միջոցով քրեական վարույթին վերաբերող տեղեկությունների տրամադրման վերաբերյալ» 2003 թվականի հուլիսի 10-ի թիվ Rec(2003)13 հանձնարարականի 5-րդ սկզբունքով՝ «Ընդգծվում է զանգվածային լրատվության միջոցների կողմից արձանագրման կարևորությունը՝ հանրությանը քրեական վարույթի ընթացքի վերաբերյալ տեղեկություններ հաղորդելու, քրեական օրենքի կանխարգելիչ նշանակության տեսանկյունից, ինչպես նաև քրեական արդարադատության համակարգի նկատմամբ հասարակական վերահսկողությունն ապահովելու տեսանկյունից»:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ լրատվամիջոցների ու լրագրողների մասնագիտական աշխատանքի, նրանց գործունեությանը ցանկացած տեսակի միջամտության հետ կապված հարցերը գտնվում են Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո:

Պաշտպանի անմիջական ուշադրությանն արժանացան «Yerevan.Today» լրատվական կայքի խմբագրության գրասենյակում խուզարկություն կատարելու վերաբերյալ հրապարակված տեղեկությունները:

ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության և ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների կողմից «Yerevan.Today» լրատվական կայքի խմբագրության գրասենյակում խուզարկություն կատարելու վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը տեղեկություններ է ստացել զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներից: Մասնավորապես, համաձայն հրապարակված տեղեկությունների՝ առավոտյան ժամը 8:30-ին, Ոստիկանության և Քննչական կոմիտեի ծառայողները մուտք են գործել լրատվամիջոցի խմբագրություն, ներկայացրել խուզարկություն կատարելու վերաբերյալ դատարանի որոշումը, փնտրել գաղտնալսող սարքեր, ստուգումներ իրականացրել համակարգիչների մեջ: Ըստ հրապարակումների՝ խուզարկությունը նպատակ է հետապնդել պարզել, թե ինչպես է խմբագրությունը ստացել և իր կայքում հրապարակել ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի և ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի հեռախոսազրույցի գաղտնալսման «YouTube.com» կայքի հղումը:

Ավելի ուշ՝ խուզարկության ավարտից հետո, լրատվամիջոցի գլխավոր խմբագիրը, պատասխանելով լրագրողների հարցերին, հայտարարել է, որ խուզարկությունը կատարվել է կոպիտ խախտումներով և այն նպատակ է հետապնդել վնասել իրենց լրագրողական գործունեությանը: Ըստ գլխավոր խմբագրի՝ խուզարկությունն ավարտելուց հետո Քննչական կոմիտեի ծառայողներն արձանագրել են, որ նախաքննությանը հետաքրքրող որևէ առարկա

չի հայտնաբերվել, այնուամենայնիվ առգրավել են իր աշխատանքային համակարգիչը, ինչպես նաև խմբագրության աշխատակիցների համակարգիչների կոշտ սկավառակները արդյունքում անորոշ ժամկետով խաթարվել է իրենց բնականոն աշխատանքը:

Մինչ այդ «Yerevan.Today» լրատվական կայքը հերքում էր տարածել, որ նախորդ օրերին այլ լրատվական ծառայությունների կողմից հրապարակված տեղեկությունները, թե նշված հեռախոսագրույցի ձայնագրությունն իրենց կայքում հայտնվել է մյուս լրատվականներից մի քանի օր առաջ, չի համապատասխանում իրականությանը: Ըստ խմբագրականի՝ «Google» համացանցային փնտրողական համակարգից ստացված տվյալները, որոնք ներկայացվել են որպես հիմնավորում, նույն համակարգում առկա խնդրի արդյունք են: Մասնավորապես, նշել են, որ ըստ համակարգից ստացված տվյալների՝ հեռախոսագրույցի գաղտնալսման մասին հրապարակումն իրենք կատարել են այլ լրատվական կայքերում տարածվելուց 2 օր առաջ, մինչդեռ նույն տվյալների համաձայն՝ իրենց խմբագրականն այդ նույն օրը կատարել է նաև ապագայում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ հրապարակումներ:

Նշվածի հաշվառմամբ, հաշվի առնելով, որ խոսքը վերաբերում է լրատվամիջոցի խմբագրությունում իրականացված խուզարկությանը, Պաշտպանի սեփական նախաձեռնությամբ սկսվել է քննարկման ընթացակարգ, որի շրջանակներում քրեական վարույթի ընթացքում լրատվամիջոցի լրատվական գործունեության բնականոն ընթացքի ապահովման կապակցությամբ, այդ թվում՝ լրագրողական գործունեության համար անհրաժեշտ առգրավված իրերը վերադարձնելու հարցի քննարկման նպատակով գրություն է հասցեագրվել ՀՀ Դատախազություն: Նախաձեռնված քննարկման շրջանակներում ի գիտություն է ընդունվել նաև ՀՀ քննչական կոմիտեի հայտարարությունն այն մասին, որ խմբագրությունում կատարվող խուզարկությունը որևէ առնչություն չունի իրականացվող լրագրողական գործունեության հետ: Քննարկման ընթացքում Պաշտպանի աշխատակազմը համագործակցել է նաև լրատվական կայքի շահերը ներկայացնող փաստաբանի հետ:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ միջազգային իրավաբանությունն այն դեպքում, երբ հետապնդումը կապված է լրագրողական գործունեության հետ, պետությունների համար սահմանում է բարձր պարտավորություններ և ապացուցողական առավել բարձր շեմ:

Ի պատասխան՝ Դատախազությունը տեղեկություններ է տրամադրել այն մասին, որ կատարված խուզարկությունների արդյունքում «Yerevan.Today» լրատվական կայքի գրասենյակից առգրավվել է մեկ պրոցեսոր և հիշողության կոշտ կրիչներ, որոնցով նշանակվել է դատահամակարգչատեխնիկական փորձաքննություն: Պարզաբանվել է նաև, որ իրականացված խուզարկությունը չի հետապնդել լրագրողական գործունեությունը խաթարելու նպատակ, քանի որ վարույթն իրականացնող մարմինը խուզարկության ընթացքում առգրավվել է միայն քննությանը հետաքրքրող հիշողության կոշտ սկավառակները և համակարգչի պրոցեսորը՝ չնայած, որ գրասենյակում առկա են եղել բազմաթիվ համակարգիչներ: Ինչ վերաբերում է առգրավված իրերը լրատվական կայքին վերադարձնելուն, ապա, Դատախազության պարզաբանմամբ, հարցը կարող է քննարկվել համապատասխան փորձաքննության արդյունքները ստանալուց հետո:

Շարունակական գրագրության ընթացքում Դատախազությունը լրացուցիչ տեղեկություններ է ներկայացրել այն մասին, որ խուզարկություն իրականացնելու վերաբերյալ Դատարանի որոշումը բողոքարկվել է վերաքննության կարգով, և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից բողոքը մերժվել է: Միաժամանակ պարզվել է, որ քրեական գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ պարզելու նպատակով իրավական օգնության համապատասխան միջնորդություններ են ուղարկվել արտերկիր:

Ավելի ուշ տեղեկություններ են տրամադրվել այն մասին, որ դատահամակարգչատեխնիկական փորձաքննության եզրակացությունը դեռևս չստացված



լրատվական կայքի գրասենյակից առգրավված և փորձաքննությանը տրամադրված առարկաները վերադարձվել են լրատվամիջոցին:

Բացի դրանից, լրատվամիջոցի աշխատանքին վերաբերող մեկ այլ դեպք ևս արձանագրվել է: Այսպես, 2018 թվականի դեկտեմբերի 7-ին «News.am» լրատվական կայքում հրապարակված հոդվածի<sup>254</sup> համաձայն՝ նախընտրական քարոզարշավի ընթացքում լրատվամիջոցի կողմից հրապարակվել են քաղաքական ուժերի ներկայացուցիչների ֆեյսբուքյան ուղիղ միացումները և գրառումները, որոնց կապակցությամբ խմբագրություն է այցելել Ոստիկանության Քրեական հետախուզության գլխավոր վարչության ծառայողն ու պահանջել տրամադրել հրապարակումների բովանդակությունը հաստատող ապացույցներ:

Հրապարակման համաձայն՝ Ոստիկանության ծառայողը լրատվամիջոցի ներկայացուցչին հանձնել է գրություններ և հայտնել, որ իր այցը վերջինը չէ, տարբեր հրապարակումների հետ կապված Ոստիկանությունից պարբերաբար այցելելու են խմբագրություն՝ պահանջելով նմանատիպ ապացույցներ, իսկ Ոստիկանության ծառայողի այցի վերաբերյալ լրատվամիջոցի գլխավոր խմբագրի ֆեյսբուքյան էջում համապատասխան գրառումից հետո խմբագրություն են այցելել Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժնի երկու ծառայող՝ փորձելով վստահեցնել, որ իրենք տեղյակ չեն՝ ով և ինչ նպատակով է այցելել գրասենյակ և հայտնել, որ հնարավոր է՝ այցելողը ոստիկանության ծառայող չի եղել:

Հրապարակմանը կից ներկայացվել են նաև Ոստիկանության գրությունները, որոնց ուսումնասիրմամբ պարզվել է, որ «News.am» լրատվական կայքում հրապարակված «Արդեն սկսել են մարդիկ փնտրել, որոնք ցուցմունք կտան մեր թեկնածուների դեմ. Շարմազանովն անուն տվեց» և «ՀՀԿ-ի աջակիցներին հրավիրում են ոստիկանություն՝ բացատրական գրույցների. Շարմազանով» վերտառությամբ հրապարակումներում ներառված տեղեկությունները ստուգելու նպատակով Քրեական հետախուզության գլխավոր վարչությունում նյութեր են նախապատրաստվում:

Հրապարակման կապակցությամբ ի գիտություն է ընդունվել նաև Ոստիկանության պարզաբանումը<sup>255</sup> նշված դեպքի կապակցությամբ, այդ թվում՝ նշված գրությունն այլ լրատվամիջոցի ևս փոխանցված լինելու մասին:

Միջադեպի կապակցությամբ 2018 թվականի դեկտեմբերի 10-ին հայտարարություն<sup>256</sup> է տարածել նաև Երևանի մամուլի ակումբը, նշելով նաև, որ ավելի վաղ՝ նոյեմբերի 20-ին, նույնաբովանդակ պահանջ է ներկայացվել նաև «Aysor.am» լրատվամիջոցի խմբագրությանը:

Վերոգրյալի հաշվառմամբ ՀՀ ոստիկանությունից պարզաբանվել է, որ ՀՀ գլխավոր դատախազի գրության հիման վրա Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչությունը միջոցներ է ձեռնարկել ստուգելու վերը նշված հրապարակման մեջ տեղ գտած տեղեկությունների իսկությունը: Պարզաբանման համաձայն՝ «News.am» լրատվամիջոցի խմբագրությանը հասցեագրված գրությունը Ոստիկանության ծառայողն անձամբ ներկայացրել է լրատվամիջոցի խմբագրություն, որևէ պահանջ չի ներկայացրել, լրատվամիջոցի գործունեությանն այլ կերպ չի միջամտել: Պարզաբանվել է նաև, որ Ոստիկանության Շենգավիթի բաժնի ծառայողները «News.am» կամ այլ լրատվամիջոցների խմբագրություններ չեն այցելել, ավելին՝ տեղեկությունների ստուգման առթիվ որևէ այլ լրատվամիջոցի խմբագրություն ոստիկանության ծառայողները չեն այցելել և գործողություն չեն իրականացրել:

Պաշտպանն ընդգծում է, որ պետության կողմից լրագրողական գործունեությանն առնչվող ցանկացած գործողություն միշտ պետք է իրականացվի օրինականության սկզբունքին

<sup>254</sup>Տե՛ս [https://news.am/arm/news/485124.html?fbclid=IwAR19aITWcdWKHbi5j2YxsnaPY\\_vvjynDkkgTvDfRS5-begK4QKH9kjbweV0](https://news.am/arm/news/485124.html?fbclid=IwAR19aITWcdWKHbi5j2YxsnaPY_vvjynDkkgTvDfRS5-begK4QKH9kjbweV0) (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>255</sup> Տե՛ս <http://www.police.am/news/view/parzabanum071218.html> (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>256</sup> Տե՛ս <https://www.aysor.am/am/news/2018/12/10/%D4%B6%D4%BC%D5%84-%D5%A6%D5%A5%D6%80%D5%AE/1502090>

(2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

համապատասխան՝ առանց լրագրողի գործունեությունը խոչընդոտելու կամ միջամտելու: Լրագրող-քրեական հետապնդման մարմին փոխհարաբերակցության հարցի զգայունության հաշվառմամբ, ինչպես նաև գիտակցելով, որ վերը նշված դեպքերը կարող են դառնալ վտանգավոր նախադեպեր՝ Մարդու իրավունքների պաշտպանն անհրաժեշտ է համարում վերահաստատել իր դիրքորոշումն առ այն, որ պետության ներկայացուցիչը պարտավոր է ղեկավարվել լրագրողի օրինավորության և բարեխղճության կանխավարկածով: Խոսքի ազատությունը պետք է լայն պաշտպանություն ունենա՝ ընդգրկելով այնպիսի երաշխիքներ, ինչպիսիք են՝ լրագրողի տեղեկատվության աղբյուրի գաղտնիությունը, լուրերի և տեղեկությունների հավաքման գործընթացի պաշտպանվածությունը, խմբագրման ու ներկայացման ինքնավարությունը և այլն: Միաժամանակ, հարցազրույցի ընթացքում կամ լրագրողին գրավոր փոխանցված տեղեկությունների տարածմանը նպաստելու համար լրագրողին պատասխանատվության ենթարկելը կամ որևէ այլ ներգործությունը լրջորեն կխաթարեն մամուլի ներդրումը հանրային հետաքրքրության հարցերի քննարկմանը, և այն չպետք է նախատեսված լինի, քանի դեռ դրա համար հատուկ ծանրակշիռ պատճառներ չկան:

**ԲԱԺԻՆ 9. 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼ-ՄԱՅԻՍ ԱՄԻՍՆԵՐԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

***1. 2018 թվականի ապրիլին տեղի ունեցած հավաքների շուրջօրյա մշտադիտարկումը. աշխատանքի հատուկ մեթոդաբանությունն ու կատարված աշխատանքները***

2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին երկրում տեղի ունեցան կարևորագույն իրադարձություններ: Քաղաքացին հնարավորություն ստացավ իր կամքի ազատ իրացման շնորհիվ ու ժողովրդավարական ճանապարհով հասնել սկզբունքային փոփոխությունների: Նախադեպը չունեցող այս իրադարձություններն ակնհայտորեն բարձրացրին քաղաքացու վստահությունը հանրային իշխանության նկատմամբ, ինչն էլ փոխադարձաբար հանգեցրեց հանրային իշխանության հաշվետվողականության բարձրացման:

Դեռ մարտի 31-ին՝ Ազգային ժողովի պատգամավոր Նիկոլ Փաշինյանի կողմից Գյումրի քաղաքից «Իմ քայլը» շարժման նախաձեռնումից անմիջապես հետո, Մարդու իրավունքների պաշտպանը սահմանեց գործընթացի մշտադիտարկում:

Ապրիլյան հավաքների սկզբից սկսած առաջնահերթ խնդիր դարձավ հավաքների այն մասնակիցների իրավունքների երաշխավորումը, ովքեր Ոստիկանության կողմից ենթարկվում էին վարչական ձերբակալման կամ բերման էին ենթարկվում Ոստիկանության բաժիններ: Հարցն այն էր, որ ձերբակալումները կամ բերման ենթարկելը հաճախ տարերային էր ու չհամակարգված: Հավաքների կազմակերպիչները նույնպես անկանխատեսելի գործողությունների էին դիմում: Օրինակ՝ հավաքների կազմակերպիչները կարող էին հանկարծակի հայտարարել նախապես չնշված որևէ փողոց փակելու մասին: Այսինքն՝ իրադարձությունները զարգանում կամ փոխվում էին արագ, հաճախ հնարավոր չէր էլ լինում կանխորոշել՝ որ ուղղությամբ կարելի է նախապես որոշել ու ուղղել ռեսուրսները, մշտապես առաջանում էր ռեսուրսների վերադասավորումներ իրականացնելու անհրաժեշտություն:

Այս ամենն իհարկե նշանակում էր, որ այդ պատասխանատու ժամանակահատվածում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից դրվագային կամ հատվածական աշխատանքը՝ հնարավորություն չէր տա լիարժեք պատկերացում կազմելու իրավիճակի ու դրանից բխող Պաշտպանի ճիշտ և թիրախային միջամտության համար:

Ուստի, միակ էլքը մնում էր ամբողջական կամ տոտալ մշտադիտարկումը՝ շուրջօրյա աշխատանքի սկզբունքով, ինչպես նաև այդ մշտադիտարկումից բխող այցերն ու գրավոր ընթացակարգերը: Պետք էր հաշվարկել յուրաքանչյուր աշխատանքի յուրաքանչյուր հնարավոր ուղղություն, որոշել դրա համար անմիջականորեն պատասխանատու աշխատակցին ու սահմանել նրա պատասխանատվության ոլորտը: Ըստ այդմ, Մարդու իրավունքների պաշտպանից կողմից ստեղծվեցին աշխատանքային խմբեր, որոնք գործում էին շուրջօրյա արտակարգ գրաֆիկով: Նրանք, ըստ մասնագիտական ուղղությունների, իրականացնում էին թե՛ հավաքների և ՋԼՄ-ների հրապարակումների ու սոցիալական ցանցերի շուրջօրյա դիտարկում, թե՛ այցեր՝ կապված հավաքների մասնակիցներին ոստիկանության կողմից մեկուսացնելու կամ նրանց ազատությունից զրկելու փաստերի հետ:

Աշխատանքային բոլոր խմբերը գործել են Պաշտպանի անմիջական ղեկավարությամբ, ով նաև անձամբ է իրականացրել այցեր ազատությունից զրկման վայրեր:

Իհարկե, Մարդու իրավունքների պաշտպանը չէր կարող արդյունավետ գործունեություն ծավալել, եթե համագործակցություն չապահովեր համապատասխան գործընկերների հետ: Խոսքը վերաբերում է պետական ու տեղական ինքնակառավարման

մարմիններին (Ոստիկանություն, Դատախազություն, Կրթության և գիտության նախարարություն և այլն), քաղաքացիական հասարակության կազմակերպություններին ու փաստաբաններին, ինչպես նաև միջազգային կառույցներին: Նրանցից բոլորի հետ կար հաստատված անմիջական կապ:

Ժողովրդավարական հասարակությունում հավաքների ազատության կարևորությունն ու հավաքի մասնակիցների իրավունքների առավելագույնս երաշխավորումը պահանջում էր այդ օրերին Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ռեսուրսների ու կարգավիճակի առավելագույն հնարավորությունների գործադրում:

Իրավունքների խախտումները տեղում արձանագրելու, իրավունքների վերականգնման ուղղությամբ անմիջական քայլեր ձեռնարկելու տեսանկյունից մեծ կանխարգելիչ նշանակություն ուներ Մարդու իրավունքների պաշտպանի, ինչպես նաև Պաշտպանի հանձնարարությամբ՝ աշխատակազմի արագ արձագանքման այցերը Ոստիկանության բաժիններ, ինչպես նաև այդ այցերի մասին հանրությանն անմիջապես տեղեկացնելը: Այդ այցերը լինում էին նաև այնքան հաճախ, որ Պաշտպանի ներկայացուցիչները ողջ օրն անցկացնում էին Ոստիկանության նույն բաժնում՝ բաժին բերվող կամ ձերբակալված մարդկանց իրավունքները երաշխավորելու նպատակով: Ընդ որում, երկրում ստեղծված իրավիճակից ելնելով՝ գրեթե յուրաքանչյուր հայտարարություն բացի հանրությանը օբյեկտիվ տվյալներ տրամադրելուց, պարունակում էր նաև օգտակար տեղեկություններ քաղաքացիների իրավունքների ու իրավապահ մարմինների պարտականությունների վերաբերյալ:

Թե՛ Մարդու իրավունքների պաշտպանի այդ օրերին իրականացրած արտակարգ ռեժիմով աշխատանքների, արագ արձագանքման և Պաշտպանի անհապաղ աջակցությունը ստանալու հնարավորությունների վերաբերյալ, թե՛ բերման ենթարկվածի՝ ազատությունից զրկվածի իր կարգավիճակը գիտակցելու, ըստ այդմ իր իրավունքներին և Ոստիկանության հանդիպակաց (թղթակցող) պարտականությունների մասին իրազեկ լինելը իրավունքների երաշխավորման կարևորագույն նախադրյալներից է:

Այդ օրերին Ոստիկանության կողմից ձերբակալված կամ բերման ենթարկված անձանց իրավունքների ապահովման կարևորության հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը մշտադիտարկման այցերի հետ մեկտեղ իրականացրել է նաև ազատությունից զրկված անձանց իրավունքների իրազեկման լայնածավալ աշխատանքներ: Հաշվի առնելով մշտադիտարկման ընթացքում Ոստիկանության բաժիններում գտնվող անձանց նվազագույն իրավունքների երաշխավորման համատարած խնդիրը՝ Պաշտպանի կողմից հատուկ պարզաբանվել է, որ «բերման ենթարկվածը՝ անկախ նրանից՝ Ոստիկանության բաժին է տարվել վարչական, թե քրեական վարույթի շրջանակում, օգտվում է միջազգայնորեն ամրագրված և 2015 թվականի ՀՀ սահմանադրական փոփոխություններով առավել երաշխավորված իրավունքներից: Այդ իրավունքներն առնվազն հետևյալն են.

- բերման ենթարկելու վայրում դրա պատճառների մասին իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվելը,

- լռելը,

- իր ընտրած անձի անհապաղ տեղեկացվելը բերման ենթարկվածի գտնվելու վայրի մասին,

- փաստաբանի իրավունքը,

- բժշկական հետազոտության ենթարկվելը, այդ թվում՝ սեփական միջոցների հաշվին իր նախընտրած բժշկի կողմից,

- իրավունքների մասին ծանուցվելը:»:

Օրինակ՝ այցեր են իրականացվել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի, Արաբկիրի, Քանաքեռ-Զեյթունի, Մալաթիայի, Մաշտոցի, Էրեբունու,

Շենգավիթի և Նոր Նորքի բաժիններ: Այցեր են իրականացվել նաև Ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Աշտարակի, Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի և Արմավիրի, Արարատի մարզային վարչության Արտաշատի, Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Կումայրիի, Կոտայքի մարզային վարչության Կոտայքի և Հրազդանի, ինչպես նաև Սյունիքի մարզային վարչության Կապանի բաժիններ:

Ընդամենը երկշաբաթյա ժամկետում թե՛ զծին ստացվել է հավաքների մասնակիցների իրավունքներին առնչվող **459 ահազանգ**:

Ոստիկանության բաժիններ և ձեռքակալվածներին պահելու վայրեր կատարած **90 այցի** ընթացքում Պաշտպանն ինքը և աշխատակազմի ներկայացուցիչներն առանձնազրույց են ունեցել բերման ենթարկված **974 անձի** և ձեռքակալվածի կարգավիճակ ունեցող **22 անձի** հետ:

**2018 թվականի ապրիլ-մայիս ամիսների իրադարձությունների ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի՝ իբրև մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատության սահմանադրական կարգավիճակի առավելագույնս գործադրման արդյունքում է, որ վերջինս ոչ միայն հանդես եկավ իբրև մարդու իրավունքները և ազատությունները կոնկրետ խախտումների դեպքում պաշտպանող, դրանց ապահովման հարցերը մշտադիտարկող, այլև շատ դեպքերում ստանձնեց իրավունքների խախտումների կանխման, խախտված իրավունքների վերականգնման երաշխավորի և այդպիսով չարաշահումները զսպողի կարևոր դերակատարություն:** Ասվածն առավել առարկայական դրսևորվեց հատկապես հավաքի մասնակիցների, ազատությունից զրկված անձանց իրավունքների, ինչպես նաև լրագրողների մասնագիտական գործունեության, երեխաների իրավունքների երաշխավորման հարցում կատարված աշխատանքներով ու առկա համակարգային խնդիրների վերհանմամբ, որոնք հանգամանալից արձանագրվել և վերլուծվել են սույն տարեկան հաղորդման շրջանակներում:

***2. 2018 թվականի ապրիլյան հավաքների մասնակից՝ ազատությունից զրկված անձանց իրավունքների երաշխավորումը: Խախտումների շարունակականությունն ու համակարգային բնույթը. օրենսդրական և գործնական խնդիրներ***

***1. Վարչական ձեռքակալման կամ բերման ենթարկված անձի լռելու իրավունքը: Վարչական իրավախախտման վարույթի շրջանակում անձին ազատությունից զրկելու իրավաչափությունը՝ անձի կողմից ինքնությունը չբացահայտելու հիմքով***

Ձեռքակալված կամ բերման ենթարկված անձանց իրավունքների ապահովման խնդիր է վեր հանվել, երբ ազատությունից զրկված անձի՝ լռելու իրավունքից օգտվելու և ինքնությունը չներկայացնելու պատճառով անձինք զրկվել են ազատությունից կամ պահվել են սահմանված ժամկետից ավելի երկար:

Այսպես, արձանագրված դեպքերից մեկով վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում ազատությունից զրկված անձը Պաշտպանին տեղեկացրել է, որ Ոստիկանության ծառայողներին չի հայտնել իր անուն, ազգանունը, ինչի պատճառով էլ, ըստ իրեն տրված պարզաբանման, Ոստիկանությունը կարող է անձին պահել բաժնում մինչև 12 ժամ: Մեկ այլ դեպքում հավաքի մասնակիցը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի թե՛ զծին ահազանգել է՝ տեղեկացնելով, որ գտնվում է Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Քանաքեռ-Զեյթունի բաժնում, իրեն բերման ենթարկելու ժամկետը լրացել է, սակայն Ոստիկանության ծառայողներն ազատ չեն արձակում, քանի որ ինքը հրաժարվում է Ոստիկանության բաժնում ասել իր անունն ու ազգանունը:

Անձի կողմից իր ինքնությունը չբացահայտելու և դրանով պայմանավորված՝ ազատությունից զրկվելու հարցն անհրաժեշտ է դիտարկել թե՛ առհասարակ օրենքով ինքնությունը ներկայացնելու պարտականություն ամրագրված լինելու և ըստ այդմ, դրա չկատարման հիմքով անձին ազատությունից զրկելու իրավաչափության և թե՛ իբրև ազատությունից զրկված անձ՝ բերման ենթարկվածի լռելու իրավունքի ապահովման տեսանկյունից:

Ներպետական իրավական կարգավորումների առումով՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (ՎԻՎՕ) 259-րդ հոդվածի համաձայն՝ ԽՍՀ Միության և Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերով ուղղակիորեն նախատեսված դեպքերում, *վարչական իրավախախտումները կանխելու նպատակով, եթե սպառվել են ներգործության մյուս միջոցները, անձը պարզելու, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու նպատակով, եթե տեղում այն կազմելը հնարավոր չէ և եթե արձանագրություն կազմելը պարտադիր է, գործերի ժամանակին ու ճիշտ քննումը և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով որոշումների կատարումը ապահովելու նպատակով թույլատրվում են անձի վարչական ձեռքակալում, անձնական զննում, իրերի զննում և իրերի ու փաստաթղթերի վերցնում:*

ՎԻՎՕ 262-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *վարչական իրավախախտում կատարած անձի վարչական ձեռքակալումը կարող է տևել ոչ ավելի, քան երեք ժամ*, բացառիկ դեպքերում, հատուկ անհրաժեշտության կապակցությամբ ԽՍՀ Միության և Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերով կարող են սահմանվել վարչական ձեռքակալման այլ ժամկետներ:

Օրենսդրական մեջբերված կարգավորումների համակարգային դիտարկումը թույլ է տալիս եզրակացնելու, որ նախ, վարչական ձեռքակալման՝ օրենքով նախատեսված առավելագույն ժամկետը երեք ժամ է, որից բացառություն նախատեսող որևէ դրույթի բացակայության պայմաններում այն իմպերատիվ բնույթ է կրում: Բացի այդ, թեև վարչական ձեռքակալման նպատակներից մեկն անձի ինքնությունը պարզելն է, իրավասու մարմնի պահանջով ինքնությունը չներկայացնելն ինքնին չի կարող դիտարկվել իբրև վարչական ձեռքակալման ինքնուրույն և բավարար հիմք: Այլ կերպ ասած, **Ոստիկանի պահանջով անձի կողմից անուն, ազգանունը չհայտնելն ինքնին վարչական իրավախախտում չէ, և վարչական ձեռքակալման նյութաիրավական հիմք չէ:** Այլ բան է, որ օրինակ, ՎԻՎՕ 182-րդ հոդվածով (Ոստիկանության գործերի զինձառայողի կամ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելը) ամրագրված վարչական իրավախախտման հիմքով է, որ վարչական պատասխանատվության հարց է առաջ գալիս: Առավել ևս անձի չներկայանալու հանգամանքը որևէ կերպ չի կարող արդարացնել վերջինիս օրենքով նախատեսված առավելագույն ժամկետից ավել պահելը:

Ինչ վերաբերում է ազատությունից զրկված անձի՝ լռություն պահպանելու իրավունքի ամրագրմանը, հարկ է նկատել, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործով վարույթի շրջանակներում ազատությունից զրկված անձի նվազագույն իրավունքներն ամրագրվել են ոչ թե օրենքով, այլ ենթաօրենսդրական ակտով՝ ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 14-ի «Մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը հաստատելու մասին» թիվ 818-Ն որոշմամբ, որով ամրագրվում է անձի՝ բացատրություններ տալու փաստաբանի ներկայությամբ կամ բացատրություններ տալուց հրաժարվելու իրավունքը:

Ոստիկանության պահանջով ինքնությունը չբացահայտելու հիմքով անձին ազատությունից զրկելու հարցի հետ կապված՝ Վասիլևան ընդդեմ Դանիայի գործով վճռում Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետի իմաստով «օրենքով նախատեսված պարտավորության կատարումն

ապահովելու» հիմքը ենթադրում է այնպիսի պարտավորություն, որն ամրագրված է օրենքով: Հետևաբար, անձին ազատությունից զրկման նման դեպքում առնվազն պետք է առկա լինի չկատարված պարտավորություն, և ձերբակալումը պետք է նպատակ հետապնդի ապահովելու դրա կատարումը և իր բնույթով չլինի պատժիչ: Անձի պարտավորության կատարման պահից սկսած՝ Կոնվենցիայի նշված դրույթի իմաստով ձերբակալման հիմքը դադարում է<sup>257</sup>:

Ավելին, հավաքների մասնակիցների ձերբակալման հարցը Դատարանը քննարկման առարկա է դարձրել հավաքների ազատության իրավունքին միջամտության համաչափության համատեքստում: Այսպես, Հայդ Փարքը և այլք ընդդեմ Մոլդովայի գործով վճռում Դատարանն արձանագրել է, որ հավաքի մասնակիցների ինքնությունը և հավաք անցկացնելու հետ կապված փաստաթղթային ստուգման նպատակով ձերբակալումն անհամաչափ միջամտություն էր հավաքների ազատության իրավունքին<sup>258</sup>:

Կ.-Ֆ.-ն ընդդեմ Գերմանիայի գործով անձն ազատությունից զրկվել էր Ոստիկանության կողմից վերջինիս ինքնությունը պարզելու անհրաժեշտությամբ պայմանավորված, որի առավելագույն ժամկետը ներպետական օրենսդրությամբ 12 ժամ էր: Մինչդեռ, անձը պահվել էր օրենքով սահմանված առավելագույն ժամկետից մոտ 45 րոպե ավելի: Արդյունքում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է Կոնվենցիայի՝ անձնական ազատության իրավունքը երաշխավորող 5-րդ հոդվածի խախտում՝ նշելով, որ Ոստիկանության ծառայողներն են պարտականություն կրում ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ միջոցառումները օրենքի պահանջը երաշխավորելու համար<sup>259</sup>:

Այդպիսով, միջազգային իրավական չափանիշներն ու Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը կանխորոշում են անձի ինքնությունը պարզելու նպատակով ազատությունից զրկելու իրավաչափության հետևյալ պայմանները՝

- իրավասու մարմնի պահանջով ինքնությունը ներկայացնելու անձի պարտականությունը պետք է ուղղակիորեն նախատեսված լինի օրենքով:

- ձերբակալումը պետք է համաչափ լինի կոնկրետ իրադրությանը և նպատակ հետապնդի ապահովելու նշված պարտականության կատարումը և իր բնույթով չլինի պատժիչ:

- ինքնությունը չպարզված անձի ձերբակալումը յուրաքանչյուր դեպքում պետք է համաչափ լինի կոնկրետ իրադրությանը, այդ թվում՝ ձերբակալման տևողության առումով:

- հավաքի մասնակցի ձերբակալման իրավաչափությունը քննարկման առարկա պետք է դառնա ինչպես անձնական ազատության, այնպես էլ հավաքների ազատության հիմնարար իրավունքներին միջամտության տեսանկյունից:

- ամեն դեպքում ազատությունից զրկվելու փաստի ուժով պետք է երաշխավորվեն անձի նվազագույն իրավունքները, այդ թվում՝ լռելու իրավունքը:

- անկախ անձի ինքնությունը պարզելու կամ չպարզելու հանգամանքից՝ անձի ձերբակալման ժամկետը չի կարող գերազանցել ներպետական օրենքով նախատեսված առավելագույն ժամկետը:

## 2. Ձերբակալելու կամ բերման ենթարկելու հիմքերի չպարզաբանումը

<sup>257</sup> Վասիլևան ընդդեմ Դանիայի (Vasileva v. Denmark) գործով 2003 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ 52792/99, կետեր 32-43:

<sup>258</sup> Հայդ Փարքը և այլք ընդդեմ Մոլդովայի (Hyde Park and Others v. Moldova) (h. 5 և 6) գործով 2010 թվականի սեպտեմբերի 14-ի վճիռը, գանգատներ թիվ 6991/08 և 15084/08:

<sup>259</sup> Տե՛ս Կ.-Ֆ.-ն ընդդեմ Գերմանիայի (K-F. v. Germany) գործով 1997 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 25629/94, կետեր 71-73:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկմամբ վեր հանված համատարած խնդիրներից էր անձին ազատությունից զրկելու հիմքերը չներկայացնելու, վերջինիս իրավունքներն ու պարտականությունները չպարզաբանելու ոչ իրավաչափ պրակտիկան:

Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք պետք է իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվի ազատությունից զրկվելու պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին: Սա ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ մասով երաշխավորված իրավունք է, որն ուղղակիորեն բխում է Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածից:

Այս կանոնը կոչված է ապահովելու, որպեսզի ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ հստակ իմանա՝ ինչու է ինքը զրկվել ազատությունից: Այն նաև երաշխիք է մյուս իրավունքների իրացման համար և հանդիսանում է այդ համակարգի բաղկացուցիչ մասը: Օրինակ՝ երբ անձը տեղեկացնում է փաստաբան հրավիրելու իրավունքի մասին, դա ստեղծում է իրական հնարավորություն օգտվելու իրավաբանական օգնությունից վարույթի սկզբնական փուլերում, որոնք իրավունքների երաշխավորման տեսանկյունից ռիսկային են:

Պետք է պարզ, անձի համար հասկանալի լեզվով բացատրվեն իրեն ազատությունից զրկելու հիմքերը, որոնք պետք է ունենան փաստական և իրավական հիմնավորում: Դա պետք է արվի այնպես, որ ազատությունից զրկվող անձն, անհրաժեշտության դեպքում, կարողանա, օրինակ, հրավիրել փաստաբան կամ դիմել դատարան՝ ազատությունից զրկման իրավաչափությունը վիճարկելու համար: Մեխանիկական մոտեցումն այստեղ անթույլատրելի է: Այն, թե արդյոք ազատությունից զրկելու պատճառներն անհապաղ են հայտնվել, յուրաքանչյուր դեպքում պետք է որոշվի՝ հաշվի առնելով կոնկրետ գործի հանգամանքները:

Քննարկվող իրավունքի գործնականում երաշխավորումը, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի լույսի ներքո, պետք է դիտարկել «անհապաղ» և «անձին հասկանալի լեզվով» եզրույթների իրավական բովանդակության համատեքստում: Այսպես, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ «անհապաղությունը» պետք է գնահատվի կոնկրետ գործի առանձնահատուկ հանգամանքների հաշվառմամբ: Այս տեղեկատվությունը պետք է հաղորդվի «անհապաղ», սակայն պարտադիր չէ, որ այն ամբողջությամբ բացահայտվի ձերբակալությունն իրականացնող ոստիկանի կողմից անմիջապես ձերբակալման պահին: Անձը պետք է պարզ, ոչ տեխնիկական՝ իրեն հասկանալի լեզվով տեղեկացվի իր ձերբակալության հիմնական իրավական և փաստական հիմքերի մասին<sup>260</sup>:

Մինչդեռ, ապրիլյան հավաքների ընթացքում այս իրավունքի խախտումների վերլուծությունը ցույց տվեց, որ դրանք պրակտիկայում ստանում են հետևյալ հիմնական դրսևորումները, որպիսիք, ընդ որում, արձանագրվել էին նաև 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների մշտադիտարկման արդյունքներով:

Բազմաթիվ են արձանագրված դեպքերը, երբ չնայած ազատությունից զրկված անձին ազատությունից զրկելու պատճառների մասին անհապաղ տեղեկացնելու սահմանադրական ուղիղ պահանջին, ընդհանրապես որևէ հիմք չի պարզաբանվում: Նույն կերպ, այդ օրերին տարածված պրակտիկա էր, երբ ազատությունից զրկելու պահին պատճառները պարզաբանելու փոխարեն նշվում է, որ դա կարվի ոստիկանության բաժնում կամ բաժին տանելու ճանապարհին:

<sup>260</sup> Ֆոքսը, Քեմփբելը և Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Fox, Campbell and Hartley v. the United Kingdom), 1990թ. օգոստոսի 30-ի վճիռը, Շարք Ա թիվ 182, էջ 19, կետ 40, և Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության (Murray v. the United Kingdom), 1994թ. հոկտեմբերի 28-ի վճիռը, Շարք Ա թիվ 300-Ա, էջ 31, կետ 72:



Օրինակ՝ ապրիլի 17-ին և 18-ին Ոստիկանության Շենգավիթի և Էրեբունու բաժիններ բերման ենթարկված տասնյակ անձինք առանձնագրույցի ընթացքում հայտնել են, որ իրենք որևէ հակաիրավական գործողություն չեն իրականացրել, բերման ենթարկելուց առաջ Ոստիկանության ծառայողներն իրենց որևէ պահանջ չեն ներկայացրել, ինչպես նաև չեն ներկայացրել բերման ենթարկելու հիմքերը և պատճառները: Անձանց մի մասը նշել է, որ Ոստիկանության բաժին բերվելուց հետո իրենց պարզաբանվել է, որ իրենց արգելանքի են վերցրել վարչական իրավախախտում կատարելու կասկածանքով, իսկ մյուսները նշել են, որ նույնիսկ Ոստիկանության բաժին բերվելուց հետո իրենց չի պարզաբանվել, թե ինչ իրավախախտման համար են արգելանքի վերցվել: Իսկ մի մասի պնդմամբ էլ Ոստիկանության բաժին բերվելուց հետո պարզաբանվել է, որ իրենց արգելանքի են վերցրել 2018 թվականի ապրիլի 16-ին տեղի ունեցած զանգվածային անկարգությունների մասնակցելու կասկածանքով<sup>261</sup>:

Նույն խնդիրն արձանագրվել է նաև ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնում, որտեղ բերման ենթարկված անձի պնդմամբ՝ ինքը հստակ չի տեղեկացվել, թե ինչի համար է բերվել Ոստիկանության բաժին: Անձը նշել է նաև, որ Ոստիկանության ծառայողներից տեղեկացել է, որ բաժին է բերվել վարչական իրավախախտման համար, սակայն ավելի ուշ իրեն հայտնել են, որ բերվել է քրեական գործի շրջանակներում:

Ազատությունից զրկված անձանց հետ առանձնագրույցների արդյունքները վկայում են, որ որոշ դեպքերում անձանց գրավոր և բանավոր կարգով պարզաբանվել է իրենց իրավունքներն ու պարտականությունները՝ Ոստիկանության բաժին բերվելուց հետո:

Բերման ենթարկելու հիմքերը չպարզաբանելու խնդիրը համատարած է եղել: Որոշ դեպքերում Ոստիկանության ծառայողների նշմամբ՝ անձանց ներկայացվել են իրենց ազատությունից զրկելու հիմքերը Ոստիկանության բաժին բերելուց հետո: Այդուհանդերձ, 2018 թվականի ապրիլյան հավաքների մշտադիտարկումը վկայում է, որ **անձին արգելանքի վերցնելու պահին նրա նկատմամբ իրավունքների սահմանափակման փաստական և իրավական հիմքերի ներկայացման խնդիրը համակարգային առումով մնում է չլուծված**: Ընդ որում, խոսքը չի վերաբերում անձին «վարչական իրավախախտման կատարման կասկածանքի» ոչ անհատականացված, տիպային ձևակերպմամբ անձին տեղեկացնելուն, քանի որ այդպիսով իրեն ազատությունից զրկելու պատճառներն իմանալու անձի իրավունքը կարծես ինքնանպատակ է դառնում:

Ասվածի համատեքստում Ոստիկանության գործողությունների որոշակիության խնդիրն առավել ցայտուն էր դրսևորվում ՎԻՎՕ 182-րդ հոդվածի հիմքով վարչական իրավախախտման վարույթների դեպքում:

Բանն այն է, որ վարչական ձեռքարկման կամ բերման ենթարկված անձանց հետ առանձնագրույցներից պարզ դարձավ, որ գերակշիռ դեպքերում մինչ արգելանքի վերցնելը, որպես այդպիսին, ոստիկանության ծառայողների կողմից որևէ պահանջ չի ներկայացվել: Մրա հետ կապված, հարկ է անդրադառնալ խնդրո առարկա՝ *Ոստիկանության գործերի զինծառայողի կամ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու* զանցակազմի օրենսդրական բնորոշման և դրա գործնական կիրառության հետ կապված խնդիրներին:

<sup>261</sup> Անձանց արգելանքի վերցնելու հիմքերի՝ քրեաիրավական կամ վարչաիրավական բնույթի վերաբերյալ հակասական պարզաբանումները թերևս վկայում են, որ իրավունքների ապահովման խնդիր առկա է ոչ միայն ազատությունից զրկված անձին տեղեկացնելու առումով, այլև առհասարակ վարույթների տարանջատման և դրանցում ներգրավված անձի կարգավիճակի անորոշության տեսանկյունից: Այս խնդիրները քննարկման առարկա են դարձել սույն բաժնի շրջանակներում:

Այսպես, ՎԻՎՕ 182-րդ հոդվածի համաձայն՝ *«Հասարակական կարգի պահպանության, հասարակական անվտանգության ապահովման, օբյեկտների պահպանության պարտականությունները կատարելու ընթացքում ոստիկանության զորքերի զինձառայողի կամ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելը՝*

*առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով»:*

Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-1291 որոշմամբ, անդրադառնալով խնդրո առարկա զանցակազմի բովանդակությանը, նախանշել է դրա կիրառության շրջանակները: Մասնավորապես, դատարանն արձանագրել է, որ հոդվածում ամրագրված «օրինական պահանջ» եզրույթի բովանդակային ծավալն ընդգրկում է փոխկապակցված հետևյալ բաղադրատարրերը.

ա) պահանջը պետք է ներկայացվի իրավասու սուբյեկտի, կոնկրետ դեպքում՝ ոստիկանության զորքերի զինձառայողի, ոստիկանության ծառայողի կողմից,

բ) իրավասու սուբյեկտի կողմից ներկայացվող պահանջը պետք է ունենա համապատասխան իրավական հիմք, այսինքն՝ իրավասու սուբյեկտի հանրային-իրավական վարքագիծը պետք է բխի իր լիազորություններից, կոնկրետ դեպքում՝ հասարակական կարգի պահպանության, հասարակական անվտանգության ապահովման, օբյեկտների պահպանության ոստիկանության զորքերի զինձառայողի, ոստիկանության ծառայողի լիազորություններից:

Խնդրո առարկա դրույթի սահմանադրաիրավական բովանդակության իմաստով պահանջի օրինականությունը, մեր համոզմամբ, պետք է կանխորոշվի ոչ միայն իշխանության ներկայացուցչի լիազորությունների հետ կապի առկայության հավաստմամբ, այլև նման պահանջի բովանդակությամբ, այսինքն՝ որքանով է անձին ներկայացված պահանջն ուղղված, մասնավորապես, *հասարակական կարգը խախտող վարքագիծը դադարեցնելուն կամ հասարակական կարգը պահպանող վարքագիծ ապահովելուն:*

Ինչպես վկայում են ապրիլյան հավաքների ընթացքում և ազատությունից զրկման վայրերում ոստիկանական գործողությունների մշտադիտարկումը, քննարկվող դրույթը՝ իբրև գերակշիռ դեպքերում անձանց ձերբակալելու կամ բերման ենթարկելու նյութաիրավական հիմք<sup>262</sup>, չէր կիրառվում դրա սահմանադրաիրավական բովանդակությանը համահունչ: Այլ կերպ ասած, մշտադիտարկման շրջանակներում ազատությունից զրկված անձանց բարձրաձայնած խնդիրների առնչությամբ **Ոստիկանության ծառայողների խիստ ընդհանրական, չանհատականացված պարզաբանումներն առնվազն չփարատված են թողնում մտահոգությունն առ այն, որ խնդիրը շատ դեպքերում ոչ միայն անձանց ազատությունից զրկելիս իրավական հիմքերի չներկայացնելն է, այլև առհասարակ նման հիմքի՝ ՎԻՎՕ 182-րդ հոդվածով ամրագրված զանցակազմի առկայությունը՝ Սահմանադրական դատարանի առաջ քաշած պայմանների հավաստմամբ**<sup>263</sup>:

Խնդրո առարկա վարչական ձերբակալման և բերման ենթարկելու ընթացակարգերի իրավաչափ գործադրման խնդիրները Մարդու իրավունքների պաշտպանի կողմից դեռևս

<sup>262</sup> Ոստիկանության ներկայացրած պարզաբանումների համաձայն՝ ապրիլյան հավաքների օրերին վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթները հիմնականում հարուցվել են ՎԻՎՕ 182-րդ և 180.1-րդ հոդվածներով, որոնց վերաբերյալ դեռևս որոշումներ չեն կայացվել (2019 թվականի մարտի 1-ի դրությամբ):

<sup>263</sup> Հավաքի մասնակիցներին առանց իրավական հիմքի բերման ենթարկելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազություն է ներկայացվել հաղորդում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից, որում, մասնավորապես, նշվում էր, որ 2018 թ. ապրիլի 17-ին մի խումբ ոստիկաններ, չարաշահելով իրենց պաշտոնական դիրքը, առանց որևէ իրավական հիմքի, բերման են ենթարկում մոտ երկու տասնյակ խաղաղ ցուցարարների (ուսանողների)՝ բռնի ուժով նստեցնելով ոստիկանական ավտոբուս: <https://factor.am/47044.html> (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

բարձրացվել և քննարկման առարկա են դարձել 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների վերաբերյալ արտահերթ հրապարակային գեկույցում: Ավելին, հաշվի առնելով այդ օրերին արձանագրված խախտումների կրկնվող բնույթը և դրանց հետագա կանխարգելման հրատապ անհրաժեշտությունը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից դիմում ներկայացվեց Սահմանադրական դատարան՝ վիճարկելով բոլոր այն օրենսդրական կարգավորումների ու պրակտիկայի սահմանադրականությունը, որոնց հետևանքով տեղի էին ունենում իրավունքների խախտումները: Խոսքը վերաբերում է անձին ազատությունից զրկելու հիմքերը չներկայացնելու, վերջինիս իրավունքներն ու պարտականությունները չպարզաբանելու, այդ թվում՝ այլ անձին իր գտնվելու վայրի մասին տեղեկացնելու, փաստաբանի և բժշկի մուտքը ոստիկանության բաժին չթույլատրելու, վարչական ձերբակալման ժամկետը սխալ հաշվելու հետ կապված հարցերին և այլն: Այս դիմումի հիման վրա 2017 թվականի հունվարի 24-ի ՄԴՈ-1339 որոշմամբ արձանագրվեց, որ «անձի ազատության իրավունքի ապահովման բնագավառում ձևավորվել է ոչ պատշաճ իրավակիրառ պրակտիկա՝ հնարավոր դարձնելով անգամ Սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված իրավադրույթի՝ ոստիկանության կողմից շարունակական կիրառումը, ինչն իր հերթին երկրում սահմանադրական օրինականությանն ուղղված լուրջ սպառնալիք է»: Ավելին, Սահմանադրական դատարանը նույն որոշմամբ արձանագրեց, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի ընդունման հետաձգումը և, ըստ այդմ, շարունակվող պրակտիկան Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի անվտանգության սպառնալիք են:

Չնայած դրան, արձանագրված խնդիրների շարունակականությունը վկայում է, որ անգամ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների առկայության պայմաններում գործող օրենսդրական կարգավորումները չեն ապահովում պատշաճ իրավակիրառում, և օրհասական է դառնում Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի՝ իրավունքներին միջամտություն ենթադրող վարչական ձերբակալման, բերման ենթարկելու և իրավախախտի բերման ընթացակարգերի սկզբունքային վերանայման անհրաժեշտությունը:

### *3. Ոստիկանության բաժիններ փաստաբանների մուտքը խոչընդոտելը*

Անթույլատրելի պրակտիկա է, որ ապրիլյան օրերին արձանագրվեցին փաստաբանի մուտքը ոստիկանության բաժիններ խոչընդոտելու դեպքեր: Իրականում, ոստիկանության ծառայողը փաստաբանի մուտքը ոստիկանության բաժին կամ բերման ենթարկվածի պահման վայր խոչընդոտելու իրավունք չունի: Այս պահանջը խախտած պաշտոնատար անձը ենթակա է քրեական պատասխանատվության: Պաշտպանի ներկայացուցիչների կողմից Ոստիկանության բաժիններ իրականացվող այցերի առաջնահերթ նպատակներից մեկն էր ապահովել այդ իրավունքի իրացումը<sup>264</sup>:

Այսպես, փաստաբան Հայկուհի Հարությունյանը 2018 թվականի ապրիլի 17-ին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի թեժ գծի հեռախոսահամարին ներկայացրած ահազանգով տեղեկացրել է, որ իր վստահորդներին իրավական աջակցություն տրամադրելու նպատակով ցանկանում է մուտք գործել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Նոր Նորքի բաժին, սակայն Ոստիկանության ծառայողները չեն թույլատրում: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների միջամտության արդյունքում փաստաբան

<sup>264</sup> Այսպիսի խնդիր արձանագրվել է նաև 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների մշտադիտարկման արդյունքներով, ինչը վկայում է նման ոչ իրավաչափ պրակտիկայի շարունակականության մասին:

Հ. Հարությունյանը մուտք է գործել Ոստիկանության Նոր Նորքի բաժին և իրավական աջակցություն տրամադրել իր վստահորդներին:

Ապրիլի 17-ին Ոստիկանության Նոր Նորքի բաժնում բերման ենթարկվածի հետ առանձնազրույցի ընթացքում նրա ներկայացուցիչ փաստաբան Էդգար Հակոբյանը նշել է, որ իր վստահորդի հետ զրուցել է Ոստիկանության ծառայողի ներկայությամբ և խնդրել է միջոցներ ձեռնարկել իր վստահորդի հետ առանձնազրույց ունենալու իրավունքն ապահովելու ուղղությամբ: Բացի այդ, Է. Հակոբյանը նշել է, որ ցանկություն է հայտնել հանդիպել նաև իր երեք վստահորդներին, սակայն Ոստիկանության ծառայողները թույլ չեն տվել:

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները ոստիկանության ծառայողի մոտ բարձրացրել են նաև փաստաբան Է. Հակոբյանի և նրա վստահորդի առանձնազրույցն ապահովելու, ինչպես նաև Է. Հակոբյանին նրա կողմից նշված քաղաքացիներին հանդիպելու հնարավորություն տրամադրելու անհրաժեշտության հարցերը, որոնք անմիջապես լուծում են ստացել:

Ապրիլի 17-ին փաստաբան Հայարփի Մարգարյանի մուտքը Ոստիկանության բաժին և վերջինիս վստահորդին տեսակցելուն խոչընդոտելու դեպք է արձանագրվել Ոստիկանության Արաբկիրի բաժնում: Խնդիրը լուծում է ստացել Պաշտպանի աշխատակազմի միջամտության արդյունքում: Փաստաբանը բողոք է ներկայացրել նաև իր նկատմամբ Ոստիկանության անբարեկիրթ վերաբերմունքի հետ կապված:

Փաստաբան Մառլեն Սմբատյանը 2018 թվականի ապրիլի 22-ին Պաշտպանի աշխատակազմի թեժ գծի հեռախոսահամարին ներկայացրած ահազանգով տեղեկացրել է, որ իր վստահորդներին իրավական աջակցություն տրամադրելու նպատակով ցանկանում է մուտք գործել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Նոր Նորքի բաժին, սակայն Ոստիկանության ծառայողները չեն թույլատրում: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների միջամտության արդյունքում փաստաբան Մ. Սմբատյանը մուտք է գործել Ոստիկանության Նոր Նորքի բաժին և իրավական աջակցություն տրամադրել իր վստահորդներին:

Ապրիլյան հավաքների օրերին Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների՝ Ոստիկանության բաժիններում անմիջական մշտադիտարկման նպատակներից է եղել նաև տեղում ազատությունից զրկված անձանց իրավունքների խախտման կանխարգելումը, ինչը հատկապես ցայտուն դրսևորվել է փաստաբանի մատչելիության իրավունքի ապահովման հարցում: Բանն այն է, որ իր վստահորդին տեսակցելու նպատակով ազատությունից զրկման վայր փաստաբանի մուտքը չթույլատրելն արձանագրված դեպքերում որևէ կերպ չփաստարկված օրինաչափություն է եղել, ինչը վկայում է, որ Ոստիկանության ծառայողները գործել են փաստաբանի մուտքը չթույլատրելը իբրև կանոն կիրառելու սկզբունքով: **Ոչ իրավաչափ այս պրակտիկայով պայմանավորված՝ նույնիսկ դեպքեր են արձանագրվել, երբ փաստաբանները, ելնելով Ոստիկանության բաժին մուտք գործելը չթույլատրելու կանխավարկածից, նախապես տեղեկացրել են Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին՝ ակնկալելով վերջիններիս միջամտությունն ազատությունից զրկված անձանց՝ փաստաբանի մատչելիության իրավունքի երաշխավորման հարցում:**

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների անհապաղ միջամտության արդյունքում փաստաբանի մուտքը խոչընդոտելու փորձերի կանխումը՝ առանց իրավասու պաշտոնատար անձանց՝ նման փորձերն արդարացնող իրավական պարզաբանումների, հիմնավոր ենթադրության տեղիք է տալիս, որ Ոստիկանության կողմից ևս գիտակցվել է փաստաբանի մուտքն ապահովելու իրենց պարտականության չկատարման ոչ իրավաչափությունը:

Մինչդեռ, հարկ է ընդգծել, որ փաստաբանի մասնագիտական գործունեությունը կենտրոնական դեր ունի արդարադատության համակարգում և իրավունքի գերակայության ապահովման գործում: Փաստաբանի ազատ մուտքը ոստիկանության բաժիններ և այնտեղ անխոչընդոտ աշխատանքը չափազանց կարևոր երաշխիք են անձի նկատմամբ անհիմն քրեական հետապնդում չիրականացնելու, ինչպես նաև ազատությունից զրկված անձին հնարավոր ճնշումներից և բռնություններից պաշտպանելու տեսանկյունից:

Անհրաժեշտ է արձանագրել, որ փաստաբանների մասնագիտական աշխատանքը և հատկապես՝ նրանց աշխատանքն ազատությունից զրկման վայրերում ենթակա է բարձր պաշտպանության՝ որպես իրավաբանական օգնության կարիք ունեցող անձի իրավունքների լիարժեք իրացման երաշխիք:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ևս մի շարք վճիռներում հատուկ ընդգծել է փաստաբանի մասնագիտության կենտրոնական դերն արդարադատության համակարգում և իրավունքի գերակայության ապահովման գործում: Ինչպես նշել է Եվրոպական դատարանը, առանց անհարկի խոչընդոտների իրենց մասնագիտական գործունեությամբ զբաղվելու փաստաբանների ազատությունը ժողովրդավարական հասարակության էական բաղադրիչ է և անհրաժեշտ նախապայման Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի պահանջների իրագործման համար<sup>265</sup>:

*4. Ոստիկանության ծառայողների վերաբերմունքը բերման ենթարկված կամ ձերբակալված անձանց նկատմամբ: Բերման ենթարկվածների նկատմամբ ոչ համաչափ ֆիզիկական ուժի գործադրման դեպքեր*

Խաղաղ հավաքների ազատության երաշխավորումը, ոստիկանության գործողությունների իրավաչափությունն ու մարդու իրավունքների հարգման առաջնային պարտականության անշեղ կատարումը պետության ժողովրդավարության ցուցիչ են: Հավաքների ազատության իրացման դեպքում առավելագույնս դրսևորվում են ինչպես հասարակական իրավագիտակցությունը՝ իրավունքների իրացման իրավական հնարավորությունները ճիշտ գործադրելու առումով, այնպես էլ պետության՝ ի դեմս հասարակական կարգի պահպանության և պետություն-քաղաքացի անմիջական շփման առաջնային օղակ հանդիսացող Ոստիկանության պատրաստվածությունը՝ ցանկացած իրավիճակում առաջնորդվելու մարդու իրավունքների հարգման հիմնարար գաղափարով, դրսևորելու առավելագույնս հանդուրժողականություն և հարգանք յուրաքանչյուր անձի նկատմամբ, ինչպես նաև յուրաքանչյուր իրավիճակում պահպանելու իր գործողությունների օրինականությունն ու համաչափությունը՝ հանրային և մասնավոր շահերի հավասարակշռմամբ:

Յուրաքանչյուր պաշտոնատար անձ պարտավոր է միշտ հիշել մարդու արժանապատվությունն անխախտելիության և իրավունքների ու ազատությունների հիմքում ընկած լինելու սահմանադրական բացարձակ կանոնները և պահպանել դրանք իր ամենօրյա աշխատանքում: Այդ կանոնները պետք է դրվեն բոլոր մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումների հիմքում:

Պաշտոնատար անձը պարտավոր է քաղաքացու նկատմամբ ցուցաբերել հարգանք և նրա հետ հարաբերություններում լինել հանդուրժող: Միայն այս սկզբունքների պահպանմամբ է հնարավոր հասնել ժողովրդավարական երկրում իրավունքների իրական երաշխավորման հաստատուն պրակտիկայի: Այդ պրակտիկան ենթադրում է նաև

<sup>265</sup> Էլչին ու ուրիշներն ընդդեմ Թուրքիայի (Elçi v. Turkey) գործով 2003 թվականի նոյեմբերի 13-ի վճիռը, զանգատներ թիվ 23145/93 և 25091/94, կետ 669:

արդյունավետ պայքար իրավախախտումների դեմ ու դրա հետ միասին՝ պատասխանատվության անխուսափելի ու խիստ միջոցների կիրառում լիազորությունները գերազանցած կամ ապօրինի գործադրած պաշտոնատար անձանց նկատմամբ:

Ավելի կոնկրետ՝ իրավախախտումը կամ հանրության համար վտանգ ներկայացնող արարքը կանխելու նպատակով պետության իրավասու մարմինների կողմից անձի նկատմամբ ֆիզիկական ուժի կամ հատուկ միջոցի գործադրման ցանկացած դեպք պետք է կոնկրետ իրավիճակի տեսանկյունից լինի պատշաճ հիմնավորված: Այն պետք է լինի անհրաժեշտ և համաչափ՝ կանխելու համար այն իրավախախտումը կամ վտանգը, որն այլ եղանակով հնարավոր չէր անել:

Պետք է բացառել օրենքով արգելված վերաբերմունքի որևէ դրսևորում պետության կողմից ենթադրյալ իրավախախտում կատարելու մեջ կասկածվող կամ մեղադրվող՝ ազատությունից զրկված ցանկացած անձի նկատմամբ: Այս բացարձակ արգելքը պայմանավորված է նաև այն հիմնարար գաղափարով, որ պետությունը, զրկելով այդ անձին ազատությունից, ստանձնում է նաև նրա երաշխավորված պաշտպանության հանձնառություն: Ուստի, այս բացարձակ կանոնից ցանկացած շեղում պետք է դառնա քրեական վարույթի առարկա<sup>266</sup>:

Մինչդեռ, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի՝ այդ օրերի մշտադիտարկումն արձանագրեց հավաքների մասնակիցների նկատմամբ Ոստիկանության կողմից արգելված վերաբերմունքի գործադրման դեպքեր: Այսպես, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժին բերման ենթարկված անձը նշել է, որ բերման ենթարկելու ընթացքում Ոստիկանության ծառայողները հարվածներ են հասցրել իր գլխին, որի հետևանքով ստացել է «զանգուղեղային տրավմա», սակայն Ոստիկանության բաժին ժամանած շտապ բժշկական օգնության խմբի անդամներին հնարավորություն չի տրվել իրեն բժշկական օգնություն տրամադրել:

Ապրիլի 17-ին Ոստիկանության Նոր Նորքի բաժնում բերման ենթարկված անձի պնդմամբ՝ աջ ձեռքի ափի թեթև վնասվածքը ստացել է, երբ փորձել է ազատվել Ոստիկանության ծառայողներից և վայր է ընկել: Ազատությունից զրկված մի խումբ անձինք նշել են, որ Ոստիկանության ծառայողները բերման ենթարկելիս ոլորել են ձեռքերի դաստակները, քերծվածքներ առաջացրել, երբ վերջիններս փորձել են ազատվել Ոստիկանության ծառայողներից:

Ապրիլի 17-ին Շենգավիթի բաժին բերման ենթարկվածն առանձնազրույցի ընթացքում հայտնել է, որ Ոստիկանության բաժին բերվելուց հետո Ոստիկանության ծառայողներից մեկն ապտակել է իրեն նախօրեին հավաքին մասնակցելու պատճառով:

Արձանագրվել են նաև անձանց հագուստը վնասելու կամ պատռելու դեպքեր, որոնք, ըստ ազատությունից զրկված անձանց, Ոստիկանության ծառայողների կողմից են կատարվել բերման ենթարկելու ընթացքում:

Ապրիլի 19-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժին բերման ենթարկվածը բարձրացրել է հարց, որ իրեն բերման են ենթարկել քաղաքացիական մեքենաներով: Բաժնում գտնվող բերման ենթարկվածների պնդմամբ՝ այդ ընթացքում նրանց նկատմամբ ոստիկանների կողմից կիրառվել է ուժ և դրսևորվել է անհարգալից վերաբերմունք: Ավելին, նրանցից մեկի ձախ ձեռքի դաստակին առկա էին քերծվածքներ, որոնք իր պնդմամբ առաջացել էին ոստիկանի կողմից ուժ գործադրելու արդյունքում:

<sup>266</sup> Առավել մանրամասն տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների վերաբերյալ արտահերթ հրապարակային զեկույցը, էջեր 60-67.  
<http://pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/e014052ce8bdca5513f5a7d68deb6224.pdf>

Բերման ենթարկված մեկ այլ անձ տեղեկացրել է, որ ոստիկանը սպառնացել է հարվածել իրեն:

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներն առանձնագրույց են ունեցել բերման ենթարկված անձի հետ, ում պնդմամբ Գյումրի քաղաքում ոստիկանության աշխատակիցներն իր նկատմամբ բռնություն են գործադրել՝ հարվածել են ոտքին:

Ապրիլի 17-ին Շենգավիթի բաժին բերման ենթարկված երեք անձինք նշել են, որ Ոստիկանության բաժին տեղափոխելու ընթացքում իրենց ուղեկցող Ոստիկանության ծառայողներից մեկի հրամանով ավտոմեքենայի նստարաններից ուժի գործադրմամբ իրենց նստեցրել են հատակին: Բացի այդ, Ոստիկանության ծառայողներից մեկը ոտքով բերման ենթարկվածներից մեկին սեղմել է ավտոմեքենայի հատակին:

Բերման ենթարկելիս Ոստիկանության կողմից ոչ համաչափ ուժի գործադրման դեպքեր արձանագրվել են նաև լրագրողների կողմից: Այսպես, Factor.am-ի լրագրողի տեսանկարահանմամբ արձանագրվել է դեպք, երբ ոստիկանության ծառայողն անձին արգելանքի վերցնելուց հետո՝ ոստիկանական մեքենայում, ուժ է գործադրել բերման ենթարկվածի նկատմամբ, որն ակնհայտ չէր բխում բերման ենթարկելու անհրաժեշտությունից<sup>267</sup>:

Ազատությունից զրկված անձանց հետ առանձնագրույցներն արձանագրել են նաև Ոստիկանության ծառայողի կողմից բերման ենթարկվածների նկատմամբ ոչ բարեկիրթ, երբեմն արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք, վիրավորանքներ:

Այսպես, ազատությունից զրկված երկու անձանց հետ առանձնագրույցների ընթացքում արձանագրվել են, որ բերման ենթարկելու ժամանակ Ոստիկանության ծառայողները հայտնել են վերջիններիս, ինչպես նաև կսմթել մարմինը և ամուր սեղմել են նրա պարանոցը:

Ըստ բերման ենթարկվածներից մեկի ներկայացրած տեղեկության՝ Ճանապարհային ոստիկանության ծառայողների հարցին ի պատասխան՝ ինքը նշել է, որ բնակվում է Մարմաշեն համայնքում, ինչից հետո առանց իր համաձայնության, ոստիկանության ծառայողները որոշել են իրեն տուն տեղափոխել: Ճանապարհին անձը հայտնել է, որ բժշկական օգնության կարիք ունի, քանի որ աջ ոտքի հատվածում սուր ցավեր է զգում, իսկ ոստիկանությունը իրեն թողել է ճանապարհին և հեռացել: Անհրաժեշտ բժշկական օգնություն ստանալու նպատակով վերջինս տեղափոխվել է «Գյումրու բժշկական կենտրոն» ընկերների օգնությամբ:

Ապրիլի 18-ին Նոր Նորքի բաժին բերման ենթարկված անձանց կողմից ևս տեղեկություններ են հաղորդվել, որ Ոստիկանության ծառայողների կողմից հնչել են վիրավորական արտահայտություններ, իրենց արգելել են խոսել, իսկ խոսելու դեպքում՝ սեղմել են ձեռնաշղթաները, որի հետևանքով ձեռքերի դաստակների ավային հատվածներում առաջացել են կարմրավուն հետքեր: Վերջիններիս մոտ արձանագրվել են նաև այտուցների վրա առկա քերծվածքներ, վնասվածքներ ուսերի և ծնկների հատվածում, որոնք, ըստ բերման ենթարկվածների, ստացվել են բերման ենթարկելիս ոստիկանության կողմից ուժ գործադրելու արդյունքում:

Ապրիլի 22-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի ձեռքհարկավորման անձանց պահելու վայրում առանձնագրույցի ընթացքում հավաքի կազմակերպիչներից մեկը նշել է, որ իրեն բերման ենթարկելու ժամանակ ոստիկանության ծառայողներից մեկը հարվածել է իր ձախ աչքին, ինչի կապակցությամբ էլ նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից 2018 թվականի ապրիլի 20-ին Ոստիկանության Արաբկիրի բաժնում արտառոց դեպք է արձանագրվել: Անմիջական դիտարկման արդյունքում պարզվել է, որ բաժնի մուտքի մոտ

<sup>267</sup> Տե՛ս <https://factor.am/47429.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

հավաքված են եղել շուրջ 10 ուստիկան, որոնցից մի քանիսը բարձր բղավել են, իսկ մուտքի դռանը հենված են եղել բերման ենթարկված երկու անձ: Նրանցից մեկը շարունակաբար բղավել է, թե ինչու են իրեն ծեծում, իսկ առաջին հարկի աստիճաններին մոտենալով կորցրել է հավասարակշռությունը և ուշագնաց եղել: Ուստիկանության Արաբկիրի բաժնի աշխատակիցները ջրի միջոցով վերջինիս սթափեցնելուց և որոշակի ժամանակ հանգստանալու հնարավորություն տալուց հետո տեղափոխել են բաժնի սենյակներից մեկը: Առանձնագրույցի ընթացքում անձը տեղեկացրել է, որ Ուստիկանության ծառայողներն իրեն բերման են ենթարկել Արաբկիրի բաժնին հարող տարածքից, իսկ բերման ենթարկելու հիմքերը և պատճառները չեն ներկայացրել: Նշել է, որ Արաբկիրի բաժին մուտք գործելուց հետո մուտքի մոտ Ուստիկանության ծառայողներն իրեն ծեծի են ենթարկել և իր հասցեին հնչեցրել են սեռական բնույթի հայեցողություններ: Անձի պնդմամբ՝ ուստիկանության ծառայողների կողմից դեմքին հասցված հարվածների հետևանքով առաջացել են նաև ատամի հետ կապված խնդիրներ: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից արձանագրվել են անձի դեմքի, ականջի և պարանոցի հատվածներում կարմրածություն, շրթունքների այտուցվածություն, իսկ ձախ աչքի ստորին հատվածում՝ կապտուկ:

Անձանց բերման ենթարկելիս կամ Ուստիկանության բաժիններում ոչ համաչափ ուժի գործադրման դեպքերից զատ արձանագրվել են նաև այնպիսիք, երբ անձը բժշկական օգնության կարիք է ունեցել, սակայն վերջինիս պահանջը՝ ապահովել անհրաժեշտ օգնություն, մնացել է անարձագանք:

Այսպես, Նոր Նորքի բաժին բերման ենթարկված անձն առանձնագրույցի ընթացքում տեղեկացրել է, որ ինքը ծեծի է ենթարկվել իրեն բերման ենթարկող Ուստիկանության հինգ ծառայողի կողմից, ովքեր հարվածներ են հասցրել մեջքին: Ըստ անձի՝ ինքը ցավեր է ունեցել մեջքի հատվածում, սակայն բժշկական օգնություն չի տրամադրվել: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների միջամտության արդյունքում կանչվել է շտապ բժշկական օգնության ծառայություն, և անձին տրամադրվել է անհրաժեշտ բուժօգնություն:

Ապրիլի 21-ին Էրեբունու բաժին բերման ենթարկված անձը տեղեկացրել է, որ բերման ենթարկելիս Ուստիկանության ծառայողները ոչ համաչափ ուժ են կիրառել և բազմաթիվ հարվածներ հասցրել իր մարմնի տարբեր հատվածներին, քաշել են իր մազերից, որի արդյունքում ոտքի և գլխի հատվածում ստացել է քերծվածքներ: Անձը հայտնել է նաև, որ ունի բժշկական օգնության կարիք: Պաշտպանի աշխատակիցների միջնորդությամբ հրավիրվել է շտապ բժշկական օգնության խումբ, բժիշկների կողմից ցուցաբերվել է առաջին բուժօգնություն:

Ապրիլի 21-ին ՀՀ ուստիկանության Երևան քաղաքի վարչության Նոր Նորքի բաժին բերման ենթարկված անձը հայտնել է, որ ցավեր ունի ազդրերի ու մեջքի շրջանում և բժշկական օգնության կարիք ունի: Այս դեպքում ևս Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների միջամտության արդյունքում է անձին բժշկական օգնություն ցուցաբերվել:

Ազատությունից զրկված անձանց՝ ուստիկանության կողմից ֆիզիկական ուժի գործադրման վերաբերյալ պնդումները՝ դրանց բովանդակային համընկնման, ենթադրյալ վատ վերաբերմունքի դրսևորման որոշակի օրինաչափությունների բացահայտման, ինչպես նաև կոնկրետ իրավիճակների անմիջական դիտարկման պայմաններում, հիմք են տալիս եզրահանգելու, որ դրանք առնվազն բավարարում են Եվրոպական դատարանի «վիճարկելի բողոքի» (arguable claim) չափանիշը, իսկ մի շարք դեպքերում այդ պնդումների արժանահավատությունը հավաստվում էր հենց մարմնական վնասվածքների առկայության անմիջական դիտարկմամբ: Մտահոգիչ են արձանագրված դեպքերը, երբ չնայած ազատությունից զրկված անձանց՝ բժշկական օգնության անհրաժեշտության մասին



**պնդումներին՝ Ոստիկանության ծառայողների կողմից քայլեր են ձեռնարկվել միայն Պաշտպանի ներկայացուցիչների միջամտության արդյունքում:**

Ազատությունից զրկված անձին անհրաժեշտ բժշկական օգնության երաշխավորման հարցում Ոստիկանության նման անգործությունն ինքնին խնդրահարույց է՝ անկախ մարմնական վնասվածքների առաջացման աղբյուրից ու Ոստիկանության ծառայողի պատասխանատվությունից: Պետք է նկատի ունենալ, որ անգամ այն դեպքում, երբ ազատությունից զրկված անձի մարմնական վնասվածքները Ոստիկանության կողմից ուժի կիրառման արդյունք չեն, միևնույն է, պետությունը կրում է ազատությունից զրկված անձի ֆիզիկական և հոգեկան բարեկեցությունն ապահովելու պարտականություն, ինչպես նաև արգելված վերաբերմունքի բացառումն ապացուցելու բեռը:

Բացի այդ, բերման ենթարկելիս Ոստիկանության ծառայողների կողմից ֆիզիկական ուժ գործադրելու, անձանց վիրավորելու մասին ազատությունից զրկված անձանց պնդումներն արդարացված մտահոգություն էին առաջացնում, որ որոշ դեպքերում խնդիրը ոչ թե ֆիզիկական ուժի համաչափության հարթությունում էր, այլ խոսքը վերաբերում էր անձին ձերբակալելու կամ բերման ենթարկելու գործողությունների հետ առնչություն չունեցող՝ մարդու կյանքի, առողջության և արժանապատվության դեմ ոտնձգություններին:

Նման գնահատականը համահունչ է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որդեգրած մոտեցմանը, համաձայն որի՝ եթե համապատասխան իրադարձություններն ամբողջությամբ կամ մեծ մասամբ գտնվում են իշխանությունների բացառիկ իմացության դաշտում, ինչպես, օրինակ, ազատությունից զրկման մեջ իշխանությունների հսկողության ներքո գտնվող անձանց պարագայում է, այդ մարմնական վնասվածքների առնչությամբ կծագեն փաստերին վերաբերող լուրջ կանխավարկածներ: Եթե իշխանությունները չեն ներկայացնում մարմնական վնասվածքների պատճառի գոհացուցիչ և համոզիչ բացատրություն, ապա Եվրոպական դատարանը հակված է լինում ընդունել առերևույթ վատ վերաբերմունքի մասին գանգատաբերի ներկայացրած պնդումները:

Այս սկզբունքը, ըստ Դատարանի, տարածվում է նաև ոստիկանության բաժնում անձի ինքնությունը ստուգելու նպատակով նրան ազատությունից զրկելու կամ նման տարածքներում պարզ հարցազրույց անցկացնելու իրավիճակների նկատմամբ: Այն կիրառելի է նաև հասարակական վայրերի կամ բոլոր այլ տարածքների նկատմամբ, որոնցում իրավապահ մարմիններն իրականացնում են այն գործողությունը, որի ընթացքում գործադրել են ուժ:

Ֆիզիկական ուժի ցանկացած գործադրում՝ անգամ ապտակը, որը խիստ անհրաժեշտ չի դարձել տվյալ անձի վարքագծի պատճառով, և կիրառվել է իրավապահ համակարգում աշխատող անձանց կողմից, նսեմացնում է մարդու արժանապատվությունը և առաջացնում Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում<sup>268</sup>:

Բացի այդ, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ ուժի կամ հատուկ միջոցների գործադրմամբ մարմնական վնասվածքներ կամ այլ վնասներ պատճառելուց հետո հնարավորինս կարճ ժամկետում պատշաճ բուժօգնություն չցուցաբերելը առաջ է բերում Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման հարց<sup>269</sup>:

Բժշկի և բուժօգնության հասանելիությունից զատ, որը ներառում է ժամանակին բուժօգնության ցուցաբերելու պահանջն ուժի և հատուկ միջոցների գործադրման դեպքում, Եվրոպական դատարանը վատ վերաբերմունքի կանխարգելման առումով կարևորել է նաև

<sup>268</sup> Բույիդն ընդդեմ Բելգիայի (Bouyid v Belgium) գործով 2015 թվականի սեպտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 23380/09, Մուրադովան ընդդեմ Ադրբեյջանի (Muradova v. Azerbaijan) գործով 2009 թվականի ապրիլի 2-ի վճիռը, գանգատ թիվ 22684/05:

<sup>269</sup> Շամանև և այլք ընդդեմ Վրաստանի և Ռուսաստանի (Shamayev and Others v Georgia and Russia) գործով 2005 թվականի ապրիլի 12-ի վճիռը, գանգատ թիվ 36378/02:

պատշաճ հաշվետվությունների ներկայացումը միջադեպերին մասնակցող համապատասխան ոստիկանների կամ պետության այլ ներկայացուցիչների կողմից<sup>270</sup>:

*Հետևաբար, ազատությունից զրկված անձին անհրաժեշտ բժշկական օգնության ապահովումը պետության երկակի պարտականությունն է՝ թե՛ ազատությունից զրկվածի նվազագույն իրավունքների երաշխավորման պահանջի, թե՛ ազատությունից զրկման ընթացքում ենթադրյալ վատ վերաբերմունքի պատճառով հասցված մարմնական վնասվածքների կամ այլ հետքերի կապակցությամբ ապացուցման բեռի տեսանկյունից:*

Այլ կերպ ասած, անձին ազատությունից զրկելու պահից սկսած՝ պետությունն ստանձնում է վերջինիս իրավունքների երաշխավորման հանձնառություն, իսկ իշխանությունների պատասխանատու հսկողության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի նկատմամբ վատ վերաբերմունքի մասին ցանկացած պնդում առաջ է բերում մարմնական վնասվածքների պատճառի գոհացուցիչ և համոզիչ բացատրության խնդիր:

*5. Ազատությունից զրկված անձի՝ իր գտնվելու վայրի մասին իր նախընտրած անձին տեղյակ պահելու իրավունքն անհապաղ չապահովելը*

Ապրիլյան հավաքների ընթացքում ձերբակալված կամ բերման ենթարկված անձանց իրավունքների երաշխավորման խնդիր է արձանագրվել՝ կապված ազատությունից զրկված անձի զանգի իրավունքի ապահովման ձգձգումների հետ:

Այսպես, ապրիլի 17-ին Ոստիկանության Նոր Նորքի բաժին բերման ենթարկված անձինք դժգոհություն են հայտնել, որ Ոստիկանության բաժնում հնարավորություն չի տրվել հարազատներին տեղեկացնել իրենց գտնվելու վայրի մասին:

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները բարձրացրել են բերման ենթարկված քաղաքացիներին զանգ կատարելու հնարավորություն ընձեռելու հարցը, որից անմիջապես հետո Ոստիկանության ծառայողները ձեռնամուխ են եղել բերման ենթարկված քաղաքացիներին զանգի հնարավորություն տրամադրելուն:

Ապրիլի 18-ին Նոր Նորքի բաժնում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները արձանագրել են, որ շուրջ երկու ժամ բաժնում գտնվելու ընթացքում բերման ենթարկված 21 քաղաքացիներին դեռևս ընձեռված չի եղել հեռախոսազանգ կատարելու հնարավորություն, և Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից հարցը բարձրացվելուց հետո միայն Ոստիկանության ծառայողները սկսել են ապահովել քաղաքացիների նշված իրավունքի իրականացումը:

Անձին ազատությունից զրկելու իրավական կառուցակարգերի և երաշխիքների ամրագրման պահանջն ուղղված է նաև Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով երաշխավորված՝ վատ վերաբերմունքի չենթարկվելու բացարձակ իրավունքի ապահովմանը: Այսպես, Եվրոպայի խորհրդի խոշտանգումների կանխարգելման կոմիտեի (ԽԿԿ) չափանիշներում ոստիկանության կողմից ձերբակալված անձանց երեք հիմնարար իրավունքների թվում, փաստաբանի և բժշկի մատչելիության իրավունքների հետ մեկտեղ, ամրագրված է անձի՝ ձերբակալության մասին ազգականին կամ իր ընտրությամբ երրորդ անձին տեղեկացնելու իրավունքը:

Ներպետական մակարդակում ազատությունից զրկված անձի այս իրավունքն ամրագրում է ստացել ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 3-րդ մասում, համաձայն որի՝ անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ այդ մասին անհապաղ տեղեկացվի իր ընտրած անձը: Այս իրավունքի իրականացումը կարող է

<sup>270</sup> Յուսիվն ընդդեմ Լիտվայի (Yusiv v Lithuania) գործով 2016 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռը, զանգատ թիվ 55894/13, Մուրադովան ընդդեմ Ադրբեյջանի (Muradova v. Azerbaijan) գործով 2009 թվականի ապրիլի 2-ի վճիռը, զանգատ թիվ 22684/05:

հետաձգվել միայն օրենքով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետով՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով:

Ընդ որում, Սահմանադրության 27-րդ հոդվածը, ազատությունից զրկված անձի այդ իրավունքի իրականացման հետաձգման հնարավորություն նախատեսելով հանդերձ, ամրագրում է դրա իրավաչափության պայմաններ՝ հետաձգումը միայն օրենքով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետով՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով: Սահմանադրական դրույթից փաստորեն բխում է այդ իրավունքի հետաձգման իրավաչափությունը պայմանավորվում է հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակի առկայությամբ, այսինքն՝ քրեական վարույթի շրջանակներում:

Ստացվում է, որ վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում իրեն ազատությունից զրկելու վերաբերյալ իր նախընտրած անձին տեղեկացվելու անձի իրավունքի ապահովման անհապաղության պահանջից որևէ բացառություն ուղղակիորեն հակասում է սահմանադրական պահանջին:

Ասվածի հաշվառմամբ Սահմանադրական դատարանը 2017 թվականի հունվարի 24-ի ՄԴՈ-1339 որոշմամբ արձանագրել է, որ «Սահմանադրությունը չի բացառել այն, որ անհապաղ տեղեկացումը կարող է հանգեցնել նաև այլ անձանց կողմից համապատասխան տեղեկատվություն ստանալուն, ինչը կարող է դժվարացնել հանցագործությունների կանխումը կամ բացահայտումը: Հնարավոր հանցագործությունները կարող են առնչվել պետական անվտանգությանը, հասարակական կարգին, այլոց հիմնական իրավունքներին և ազատություններին, որոնց պաշտպանությունը ևս պետության խնդիրն է: Միաժամանակ, հաշվի առնելով ազատությունից զրկելու հարկադիր միջոցառման բնույթը, չի կարող բացառվել այդպիսի միջոցառման իրականացմանը խոչընդոտող հանգամանքների գոյությունը, որոնք օբյեկտիվորեն դժվարացնում են անձի իրավունքների իրացմանն ուղղված պարտականությունների անհապաղ կատարումը: Այլ խնդիր է, որ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասը չի վերաբերում միայն ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված տվյալ նպատակին, այլ վերաբերում է անձնական ազատությունից զրկելու բոլոր դեպքերին, այդ թվում՝ վարչական իրավախախտումներին, ինչն անհամատեղելի է ՀՀ Սահմանադրության պահանջների հետ:»:

Արդյունքում, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասը, որով ամրագրվում էր Ոստիկանության պարտականությունը ոստիկանություն բերելու պահից սկսած՝ երեք ժամվա ընթացքում, տեղյակ պահել նրանց հարազատներին, իսկ նրանց բացակայության դեպքում՝ աշխատանքի կամ ուսման վայրի վարչակազմին՝ նրանց գտնվելու վայրի մասին, ճանաչվել են Սահմանադրության պահանջներին հակասող և անվավեր այն մասով, որով չեն ապահովվում ազատությունից փաստացի զրկված անձանց համար այդ իսկ պահից իրավունքների պաշտպանության՝ սահմանադրորեն նախատեսված շրջանակներում անհրաժեշտ իրավական երաշխիքներ:

Նշվածով հանդերձ, սակայն, պետք է արձանագրել, որ իրավակիրառ պրակտիկայում դեռևս շարունակական են ազատությունից զրկված անձի քննարկվող իրավունքի անհարկի ձգձգումները, որոնք փաստացի հակասում են սահմանադրական պահանջներին:

**3. Ոստիկանությանը չպատկանող տրանսպորտային միջոցներով, առանց համազգեստի կամ տարբերանշանի Ոստիկանության ծառայողների կողմից անձանց բերման ենթարկելու կամ ձերբակալելու խնդրահարույց պրակտիկան. իշխանության ներկայացուցչի գործողությունների անորոշությունն ու անկանխատեսելիությունը իրավունքների սահմանափակման ենթարկվող անձի ընկալմամբ**

Ապրիլյան հավաքների ընթացքում Ոստիկանության գործողությունների ոչ իրավաչափ դրսևորումներ արձանագրվեցին՝ կապված քաղաքացիական հագուստով ծառայողների ներգրավվածության, ինչպես նաև այլ անձանց պատկանող տրանսպորտային միջոցների օգտագործման հետ:

Այսպես, ապրիլի 17-ին Ոստիկանության Նոր Նորքի բաժին բերման ենթարկված քաղաքացիների պնդմամբ՝ իրենց բերման ենթարկած Ոստիկանության ծառայողների մեջ եղել են նաև քաղաքացիական հագուստով անձինք, որոնց հագուստի վրա որևէ տարբերանշան չի եղել: Քաղաքացիներն իրենց դժգոհությունն են հայտնել առ այն, որ Ոստիկանության բաժնում հնարավորություն չի տրվել հարազատներին տեղեկացնել իրենց գտնվելու վայրի մասին:

2018 թվականի ապրիլի 18-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնում բերման ենթարկված անձը Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների հետ առանձնազրույցի ընթացքում նշել է, որ Արուսյան փողոցում քաղաքացիական հագուստով անձինք մոտեցել են իրեն և փորձել նստեցել «Opel» մակնիշի ավտոմեքենա, ինքը օգնություն է կանչել, շրջակա շենքերի բնակիչները դուրս են եկել և չեն թողել, որ իրեն նստեցնեն ավտոմեքենա, սակայն այդ անձինք վերցրել են իր բջջային հեռախոսը: Անձի պնդմամբ՝ ինքն այցելել է Ոստիկանության Կենտրոնականի բաժին դեպքի վերաբերյալ հաղորդում տալու, բաժնում իրեն վերադարձրել են հեռախոսը և տեղեկացրել, որ ինքը բերման ենթարկված է: Ոստիկանության ներկայացուցչի պարզաբանմամբ՝ անձին Ոստիկանության ծառայողները զանգվածային անկարգություններ կազմակերպելու կասկածանքով փորձել են բերման ենթարկել, սակայն այլ քաղաքացիական անձինք խոչընդոտել են:

Նույն պատկերը դիտարկվել է Ոստիկանության այլ բաժիններում ևս: Այսպես, ապրիլի 18-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Նոր Նորքի բաժին բերված մի խումբ անձանց պնդմամբ՝ իրենց բերման ենթարկած Ոստիկանության ծառայողների մեջ եղել են նաև քաղաքացիական հագուստով անձինք, որոնց հագուստի վրա որևէ տարբերանշան չի եղել: Ազատությունից զրկված անձանց մի մասը նշել է, որ բերման ենթարկվելիս իրենց նկատմամբ կիրառվել է ձեռնաշղթա, ինչպես նաև հնարավորություն չի տրվել հարազատներին տեղեկացնել իրենց գտնվելու վայրի մասին:

Ապրիլի 21-ին Արաբկիրի բաժին բերման ենթարկված անձը տեղեկացրել է, որ իրեն և իր դստերը բերման են ենթարկել Բաղրամյան պողոտայից քաղաքացիական մեքենայով: Քաղաքացու պնդմամբ՝ ոստիկանության ծառայողները չեն ներկայացրել բերման ենթարկելու հիմքերը և պատճառները: Ավելին, ըստ անձի, իր նկատմամբ կիրառվել է անհամաչափ ֆիզիկական ուժ, վերցրել են հեռախոսը և թույլ չեն տվել կապ հաստատել փաստաբանի հետ: Նույն բաժին բերման ենթարկված մի խումբ այլ անձանց պնդմամբ ևս իրենց բերման են ենթարկել քաղաքացիական ավտոմեքենայով: Վերը նշված բոլոր քաղաքացիների պնդմամբ՝ Ոստիկանության ծառայողները չեն ներկայացրել և չեն պարզաբանել իրենց իրավունքները, ինչպես նաև՝ բերման ենթարկելու հիմքերն ու պատճառները:

Ապրիլի 22-ին Երևան քաղաքի վարչության Քանաքեռ-Զեյթունի բաժին բերման ենթարկված 8 քաղաքացիների պնդմամբ՝ իրենք բերման են ենթարկվել քաղաքացիական մեքենայով, որի վարորդը եղել է քաղաքացիական հագուստով:

Ապրիլի 22-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի Էրեբունու բաժնում բերման ենթարկված անձինք նշել են, որ ականատես են եղել, թե ինչպես են դիմակավորված անձինք Էրեբունի փողոցում բռնություն կիրառել նույն փողոցում հավաք իրականացնող անձանց նկատմամբ: Բերման ենթարկված հավաքի կազմակերպիչներից մեկը ևս նշել է, որ իրեն արգելանքի վերցնող ոստիկանության ծառայողները համազգեստ չեն կրել:

Դեռևս 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցում բարձրացվել էր մտահոգություն հավաքների մասնակիցների իրավունքների սահմանափակման գործողություններին քաղաքացիական հագուստով անձանց ներգրավման պրակտիկայի վերաբերյալ: Զեկույցում, մասնավորապես, նշվում էր, որ. «Հասարակության մեջ լարվածություն առաջացրած հարցերից եղավ այն, որ լայնորեն հրապարակվել էին տեղեկություններ այն մասին, որ ցուցարարներին բերման ենթարկելուն, նրանց նկատմամբ բռնություն կիրառելուն մասնակցել են նաև քաղաքացիական հագուստով ոստիկաններ:

Հատկանշական է, որ Սարի թաղի բռնությունները լրագրողների նկատմամբ մեծամասամբ իրականացվել են քաղաքացիական հագուստով անձանց խմբերի կողմից: Թեև այդ խմբերը գործում էին ոստիկանների տեսադաշտում, ոստիկաններից ոչ մեկը, այդ թվում նաև շրջակայքում գտնվող ոստիկանության ղեկավար անձինք, փորձ չեն արել կանխել այդ բռնությունները: Դա թույլ է տալիս ենթադրել, որ քաղաքացիական հագուստով այդ անձինք ամենայն հավանականությամբ գործել են տեղում գտնվող ոստիկանության աշխատակիցների անմիջական թողսվությամբ: Քրեական գործով քննությունը պետք է պարզի այդ անձանց ինքնությունը, ինչպես նաև՝ թե արդյոք նրանք քաղաքացիական հագուստով ոստիկաններ էին կամ գործում էին ոստիկանության աշխատակիցների հրահանգով:

Հատկապես կարևոր է պարզելը քաղաքացիական հագուստներով անձանց ինքնությունը, նրանց հնարավոր կապը ոստիկանության հետ և, եթե վերաբերելի է, նաև այն անձի (անձանց) ինքնությունը, ով հրաման է տվել ընդգրկել նման մարդկանց ոստիկանական գործողություններում»:

Անձանց բերման ենթարկելիս ոստիկանության ծառայողների կողմից համազգեստ կամ տարբերանշան չկրելու հետ կապված Ոստիկանության պարզաբանումների համաձայն՝ հավաքների ընթացքում ոստիկանության ծառայողները հասարակական կարգի պահպանությունից բացի իրականացրել են նաև «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ խնդիրներ: Մասնավորապես, քաղաքացիական հագուստներով ոստիկանության ծառայողները հասարակական կարգի պահպանության խնդիր չեն իրականացրել, մինչդեռ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ ոստիկանության ծառայողին անձնապես նույնականացնելու հնարավորություն տվող տարբերանշաններով համազգեստ կրելու պարտականությունը կրում են հասարակական կարգի պահպանությունն ապահովող ծառայողները:

Իհարկե, ընդունելի է, որ ոստիկանության իբրև իրավապահ մարմնի գործունեությունը միշտ չէ, որ պետք է լինի հրապարակային և տեսանելի. վերջինս, իր առջև դրված խնդիրների առանձնահատկություններով պայմանավորված, իրականացնում է բնույթով գաղտնի հետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեություն: Այդուհանդերձ, քաղաքացիական հագուստով անձանց կողմից հավաքի մասնակիցներին (որոշ դեպքերում՝ նաև ոչ մասնակից անձանց) բերման ենթարկելու պրակտիկան հավաքների ընթացքում իրավախախտումների կանխարգելման և հասարակական կարգի պահպանության գործառնությունների տարանջատմամբ հիմնավորելը, մեր համոզմամբ, առնվազն վկայում է խնդրին ցուցաբերած մեխանիկական օրենքի զուտ տառացի կիրառությունն ապահովող մոտեցման մասին:

Բանն այն է, որ **նստիկանության ծառայող-քաղաքացի հարաբերություններում** **նստիկանի՝ իբրև իշխանության ներկայացուցչի անհատականացումն** ու վերջինիս կարգավիճակի ճիշտ ընկալումն ինքնանպատակ չէ. այն կանխորոշում է թե՛ անձի համար կանխատեսելի վարքագիծ և թե՛ երաշխիք է **ծառայողի գործողությունների իրավաչափության և հնարավոր չարաշահումների կանխման առումով**:

Այլ կերպ ասած, անձի իրավունքների ապահովման տեսանկյունից առաջնայինը կամ որոշիչն այն չէ, թե կոնկրետ **նստիկանության ծառայողի** առջև առաջնահերթ ինչ **ծառայողական խնդիր** է դրված եղել: Պետք է նկատի ունենալ, որ **նստիկանության ծառայողն**, անկախ իրեն տրված «հանձնարարականի» բնույթից, օրենքի ուժով կրում է հասարակական կարգի պահպանության պարտականություն: Նույն տրամաբանությամբ էլ Ոստիկանության ծառայողն օրենքի ուժով ունի նաև անձի իրավունքների սահմանափակում ենթադրող միջոցառումներ ձեռնարկելու, այդ թվում՝ անձանց ազատությունից զրկելու և համաչափ ուժ գործադրելու իրավասություն:

Ավելին, Ոստիկանության ծառայության հետ նույնացնելու որևէ արտաքին տարբերանշան չունեցող տրանսպորտային միջոցներով և քաղաքացիական հագուստով անձանց կողմից բերման ենթարկելու տարերային բնույթը, բերման ենթարկելիս ոչ համաչափ ուժի գործադրման՝ ազատությունից զրկված անձանց պնդումները չփարատված են թողնում այն մտահոգությունը, որ հավաքի բնականոն ընթացքը, հավաքի մասնակիցների անվտանգությունն ապահովելու գործընթացից անկախ՝ գաղտնի միջոցառումների շրջանակում է, որ գործել են առանց համազգեստի **նստիկանության ծառայողները**: Համենայն դեպս, այդ օրերի մշտադիտարկմամբ վեր հանված դեպքերի ուսումնասիրությունն առավել ամրապնդում է մտահոգությունն առ այն, որ **անձնական ազատության սահմանափակման ենթարկվող անձի կողմից նստիկանության ծառայողին, իբրև այդպիսին, ընկալելու հնարավորության բացակայությունն առաջացրել է արդարացված երկյուղ՝ վերջինիս գործողությունների իրավաչափության վերաբերյալ**: Ավելին, քաղաքացիական հագուստով **նստիկանների կողմից բերման ենթարկելու դիտարկված գրեթե բոլոր դեպքերում բարձրացվել է ազատությունից զրկվածի իրավունքները չպարզաբանելու, ազատությունից զրկելու հիմքերը չներկայացնելու խնդիր, ինչն ուղղակիորեն ազատությունից զրկված անձի՝ միջազգայնորեն երաշխավորված նվազագույն իրավունքների ապահովման պահանջի խախտում է**:

**Անձին ազատությունից զրկելու ընթացակարգերում քաղաքացիական անձանց կամ իբրև այդպիսին ընկալվող իշխանության ներկայացուցչի ներգրավումը** ոչ միայն չի նվազեցնում ազատությունից զրկվածի իրավունքները և ընթացակարգային երաշխիքներն ապահովելու պետության պարտավորվածությունը, այլև, ճիշտ հակառակը, բարձրացնում է այդ **գործողությունների նկատմամբ պետական խիստ վերահսկելիության, հնարավոր չարաշահումների, ազատությունից զրկվածի նկատմամբ վատ վերաբերմունքի կանխարգելման և բոլոր բացասական հետևանքները կրելու պետության բեռը**:

Քաղաքացիական հագուստով **նստիկանների կողմից բերման ենթարկելու** մի շարք մտահոգիչ դեպքեր են արձանագրվել անմիջապես հավաքների անցկացման վայրերում լուսաբանող լրագրողների կողմից: Այդպիսի տեսանյութերից մեկում պարզ է դառնում, թե ինչպես է ինքնությունը չներկայացած քաղաքացիական հագուստով անձը «բերման ենթարկում» հավաքի մասնակցի՝ առանց որևէ պատճառաբանության<sup>271</sup>:

Քաղաքացիական հագուստով **նստիկանների գործողությունների հետ կապված Ոստիկանության հայտարարության համաձայն՝ քաղաքացիական համազգեստներով բերման ենթարկելու գործողություն իրականացնող անձինք նստիկանության ծառայողներ**

<sup>271</sup> Տե՛ս <https://factor.am/47398.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

են, որոնց գործողությունների համար ամբողջ պատասխանատվությունը կրում է ոստիկանությունը:

Ավելին, Ոստիկանությունը պարզաբանել է հավաքի մասնակիցներին, որ ոստիկանության կողմից բազմաթիվ նախազգուշացումները, կոչերը և հայտարարությունները դրանք հրապարակելու ուժով արդեն իսկ հանդիսանում են պաշտոնապես ներկայացված օրինական պահանջներ, որպիսի փաստի առկայությամբ՝ դրանց չկատարումը իրավաչափորեն հանգեցնելու է բացասական իրավական հետևանքների<sup>272</sup>:

Քաղաքացիական հագուստով և իշխանության ներկայացուցչի անհատականացման որևէ նշան չունեցող անձանց գործողությունները՝ որպես Ոստիկանության գործողություններ հայտարարելը և այդպիսով պատասխանատվություն ստանձնելը՝ առանց դեպքերի կոնկրետացման, ոչ միայն քաղաքացի-իշխանության ներկայացուցիչ հարաբերություններում չէր ապահովում որոշակիություն, այլև ավելի էր մեծացնում որոշակի խմբերի կողմից հրահրումների ու հավաքի մասնակիցների նկատմամբ ոչ իրավաչափ գործողությունների հավանականությունը և դրանք Ոստիկանության քաղաքացիական համազգեստով ծառայողներին վերագրելու վտանգը:

Այս մտահոգությունը գործնականում ամրապնդվեց հենց ապրիլյան հավաքների այդ օրերին արձանագրված նմանատիպ դեպքերով<sup>273</sup>:

Ավելին, ի հակառակ Ոստիկանության քաղաքացիական հագուստով անձանց՝ որպես ոստիկանության ծառայողների գործողությունների համար պատասխանատվություն ստանձնելու հայտարարությանը՝ ապրիլի 29-ին Ոստիկանությունը «Ազատություն» ռադիոկայանի ուղիղ եթերում մայրաքաղաքի առևտրի կենտրոններից մեկի մոտ կազմակերպված ակցիայի մասնակիցներին քաղաքացիական հագուստով ոստիկանների մոտենալու և «բացատրական աշխատանքներ տանելու» առնչությամբ պաշտոնապես հայտարարեց, որ տվյալ պահին ակցիայի մասնակիցների անվտանգությունն ապահովում են բացառապես համազգեստով ոստիկաններ, գործողության մեջ քաղաքացիական հագուստով ոստիկաններ ներգրավված չեն<sup>274</sup>:

Հավաքների ընթացքում ոստիկանության գործողությունների կանխատեսելիության ու որոշակիության պահանջը բխում է նաև միջազգային իրավական պահանջներից: Այսպես, Խաղաղ հավաքների վերաբերյալ ԵԱՀԿ (ԺՄԻՀԳ) ուղեցույցի համաձայն՝ հավաքների ընթացքում ոստիկանական պրակտիկայի ընդհանուր սկզբունքներից է, որ իրավակիրառ մարմնի ծառայողներին հնարավոր լինի հստակորեն և անհատապես նույնականացնել: Համազգեստ կրող ծառայողները պետք է անհատականացնող որևէ բան ցուցադրեն կամ կրեն (օրինակ՝ ազգանվամբ կամ համարանիշով ցուցանակ) և չպետք է անհատականացնող այդ տեղեկությունը հեռացնեն կամ ծածկեն կամ խոչընդոտեն հավաքների ընթացքում այլ անձանց համար դրա հասանելիությանը:

Պատշաճ համազգեստը կարևոր է հանրությանը ճիշտ ուղերձ հղելու համար: Բոլոր համազգեստները և սաղավարտները պետք է պարունակեն ոստիկանության ծառայողի ծառայողական համարանիշ՝ ծառայողի ոչ իրավաչափ գործողությունների դեպքում վերջինիս անհատականացնելու, ինչպես նաև բարեկեցության, բժշկական օգնության կամ հրահանգավորման նկատառումներից ելնելով:

Քննարկվող խնդիրը դիտարկելով վատ վերաբերմունքի կանխարգելման տեսանկյունից՝ Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեն (ԽԿԿ)

<sup>272</sup> Տե՛ս <https://factor.am/47980.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>273</sup> Տե՛ս <https://factor.am/48018.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ): <https://factor.am/48004.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>274</sup> Տե՛ս <https://factor.am/50493.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

մտահոգություն է հայտնել ձերբակալումներ, հարցաքննություններ իրականացնելիս կամ քրեակատարողական հիմնարկներում անկարգությունների ժամանակ իրավակիրառ մարմինների կամ վարչակազմերի ծառայողների կողմից դիմակ կամ բալակլավա (ողջ գլուխը ծածկող դիմակ) կրելու պրակտիկայի վերաբերյալ: ԽԿԿ-ն նշել է, որ սա կարող է դժվարացնել ենթադրյալ իրավախախտների անհատականացումը վատ վերաբերմունքի վերաբերյալ պնդումները քննելիս: Նման պրակտիկան պետք է խստորեն սահմանափակվի և կիրառվի միայն բացառիկ դեպքերում՝ պատշաճ հիմնավորմամբ<sup>275</sup>:

Ինչ վերաբերում է Ոստիկանության կողմից անձանց բերման ենթարկելիս այլ անձանց անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների կամ հասարակական տրանսպորտի օգտագործմանը, ըստ Ոստիկանության պարզաբանման՝ դրա իրավական հիմքը «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածն է՝ **կամավորության սկզբունքով քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից ոստիկանության խնդիրների իրականացմանը մասնակցելը**: Իսկ տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշերի բացակայությունը պայմանավորված է եղել տրանսպորտային միջոցների նույնականացում թույլ չտալու և այդպիսով դրանց սեփականատերերի կյանքին ու առողջությանը հնարավոր վտանգը կանխելու անհրաժեշտությամբ:

Մինչդեռ, ապրիլյան հավաքների մշտադիտարկման արդյունքներ ցույց են տալիս, որ ոստիկանության ծառայողների կողմից թույլ են տրվել նման ոչ իրավաչափ գործողություններ, երբ, օրինակ, փորձ էր արվում հասարակական տրանսպորտի վարորդին ներկայացնել արգելանքի վերցված և ավտոբուսում գտնվողներին Ոստիկանության բաժին տեղափոխելու պահանջ<sup>276</sup>:

Խնդիրն անհրաժեշտ է դիտարկել մի կողմից՝ ոստիկանության գործառույթների իրականացմանը քաղաքացիների կամավոր մասնակցության շրջանակների որոշակիացման, մյուս կողմից՝ այլ անձանց տրանսպորտային միջոցները ոստիկանության ծառայողի կողմից օգտագործելու իրավական կարգավորումների տեսանկյունից:

Այսպես, «Ոստիկանության մասին» օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝

Ոստիկանությունը, արտակարգ իրադրության պայմաններում, ինչպես նաև հատուկ միջոցառումներ իրականացնելիս, իրավունք ունի՝ (...)

2) օրենքով սահմանված կարգով և նախապես ներկայացնելով ծառայողական վկայականը՝ (...)

բ) օգտագործել կազմակերպություններին կամ քաղաքացիներին, ինչպես նաև պաշտոնատար անձանց պատկանող տրանսպորտային միջոցները *տարերային աղետի վայր հասնելու, շտապ բժշկական օգնության կարիք ունեցող քաղաքացիներին բժշկական հաստատություններ տեղափոխելու, հանցագործներին հետապնդելու, ինչպես նաև վթարի պատճառով վնասված տրանսպորտային միջոցները տեղափոխելու և դեպքի վայր հասցնելու կամ ոստիկանության անձնակազմին տազնապի ազդանշանով հավաքատեղի հասցնելու համար*՝ անհրաժեշտության դեպքում հեռացնելով վարորդներին տրանսպորտային միջոցները վարելուց: Վերոնշյալ նպատակներով կարող են օգտագործվել նաև կազմակերպություններին կամ քաղաքացիներին, ինչպես նաև պաշտոնատար անձանց պատկանող կապի միջոցները:

Օրենքի վերը նշված դրույթի բովանդակությունից պարզ է դառնում, որ այլ անձանց պատկանող տրանսպորտային միջոցների օգտագործման իրավասությունն ամրագրված է ոչ թե իբրև օրինաչափություն կամ կանոն, այլ արտակարգ իրադրության կամ հատուկ միջոցառումների շրջանակում ոստիկանության խնդիրների իրականացման անհրաժեշտությամբ պայմանավորված բացառություն՝ օրենքով ուղղակիորեն

<sup>275</sup> Տե՛ս [https://www.echr.coe.int/Documents/Handbook\\_European\\_Convention\\_Police\\_ENG.pdf](https://www.echr.coe.int/Documents/Handbook_European_Convention_Police_ENG.pdf), էջ 143:

<sup>276</sup> Տե՛ս [https://www.youtube.com/watch?v=NTAbfD-\\_S1s](https://www.youtube.com/watch?v=NTAbfD-_S1s), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):



կանխորոշված դեպքերում: Այլ կերպ ասած, քննարկվող դրույթի կիրառության շրջանակներից դուրս այլ անձանց տրանսպորտային միջոցների օգտագործումը հնարավոր է միայն ոստիկանություն-քաղաքացի համագործակցային եղանակով՝ կամավորության և ոչ թե ոստիկանության ծառայողի պահանջի ուժով:

Ոստիկանության խնդիրներին այլ անձանց կամավոր մասնակցության սկզբունքն իր հերթին որևէ դեպքում չի կարող այնչափ տարածական մեկնաբանվել և կիրառվել, որ փաստացի ոստիկանության ծառայող չհանդիսացող անձանց մասնակցությունը ոստիկանության խնդիրների իրականացմանը վերաձվի ոստիկանական լիազորությունների «վերալիազորման»: Հասկապես անթույլատրելի է, երբ ոստիկանության ծառայող չհանդիսացող անձը ներգրավվում է անձի իրավունքներին միջամտություն ենթադրող միջոցառումներին, օրինակ՝ վարչական ձերբակալմանը կամ բերման ենթարկելուն: Ոստիկանության ցանկացած նման պահանջ իրավաչափ չէ:

#### **4. Վարչական ձերբակալման՝ օրենքով նախատեսված առավելագույն երեք ժամից ավել պահելը: Ձերբակալման ընթացակարգի պատշաճ արձանագրման հետ կապված խնդիրներ**

Վարչական ձերբակալման ընթացակարգի օրենսդրական պահանջների չպահպանման խնդիր է վեր հանվել կապված օրենքով նախատեսված առավելագույն ժամկետից ավելին անձին անազատության պահելու հետ:

Այսպես, ապրիլի 17-ին Էրեբունու բաժնում արձանագրվել է, որ այցի ավարտին՝ ժամը 13:00-ի սահմաններում, բաժին բերված որևէ քաղաքացի դեռևս ազատ արձակված չի եղել այն պարագայում, երբ առանձնազրույցի ընթացքում ըստ բերման ենթարկված երեք անձանց պնդումների՝ իրենք բերման են ենթարկվել ժամը 08:00-08:10-ի սահմաններում, իսկ մեկ այլ անձ՝ ժամը 09:30-ի սահմաններում, որպիսիք հաստատվել են նաև ոստիկանության ներկայացուցչի կողմից:

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների՝ սահմանված առավելագույն ժամը լրացած լինելու հիմքով անձանց ազատ արձակելու պահանջին ի պատասխան՝ ոստիկանության ներկայացուցիչը նշել է, որ դեռևս առկա է համապատասխան գործողություններ կատարելու, այդ թվում՝ ազատ արձակվելու ժամի վերաբերյալ համապատասխան գրառումներ կատարելու և ստորագրությամբ ազատ արձակման փաստը հավաստելու անհրաժեշտություն, որից հետո միայն քաղաքացիները կարող են ազատ արձակվել:

Ապրիլի 17-ին Շենգավիթի բաժնում հինգ անձանց բերման ենթարկելու կապակցությամբ կազմված փաստաթղթերից պարզվել է, որ վերջիններս բերման ենթարկվել ժամը 09:40-ին: Քանի որ ժամը 12:40-ի դրությամբ նշված անձանց անձնական ազատությունը դեռևս սահմանափակված է եղել, նշվածի կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները պարզաբանումներ են պահանջել Ոստիկանության բաժնի պետից: Վերջինս տեղեկացրել է, որ դեռևս անհրաժեշտ է կատարել լրացուցիչ գործողություններ նշված անձանց մասնակցությամբ, ինչի պատճառով վերջիններս ազատ չեն արձակվում: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները, վկայակոչելով համապատասխան իրավակարգավորումները, նշել են առանց իրավական հիմքերի անձանց անձնական ազատությունը սահմանափակելու անթույլատրելիության մասին և առաջարկել նշված անձանց անհապաղ ազատ արձակել: Չնայած դրան, ժամը 13:10-ի դրությամբ այդ անձինք դեռևս գտնվել են Ոստիկանության բաժնում:

Անձանց վարչական ձերբակալման առավելագույն ժամկետների չպահպանման խնդիրը դիտարկվել է նաև՝ անձին արգելանքի վերցնելու պահի արձանագրման ճշտության հետ կապված:

Այսպես, ապրիլի 17-ին և 19-ին Ոստիկանության Նոր Նորքի բաժնում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները նշել են, որ ըստ քաղաքացիների՝ փաստացի արգելանքի են վերցվել որոշակի կոնկրետ ժամերի, սակայն ոստիկանության ներկայացուցիչը պնդել է, որ քաղաքացիների ներկայացրած տեղեկությունը իրականությանը չի համապատասխանում: «Բերման ենթարկված անձանց հաշվառման» մատյանի ուսումնասիրությունից պարզվել է, որ անձանց բերման ենթարկելու ժամ է արձանագրվել Ոստիկանության ներկայացուցչի մատնանշած՝ կես ժամով ավելի ուշ ժամը:

Մեկ այլ դեպքում վարչական ձերբակալման առավելագույն ժամկետը լրացած լինելու պատճառով բերման ենթարկված անձանց ազատ արձակելու պահանջին ի պատասխան՝ ոստիկանության ներկայացուցիչը նշել է, որ հնարավոր է՝ բերման ենթարկված քաղաքացիների արարքների կապակցությամբ քրեական վարույթ նախաձեռնվի, ուստի չեն կարող նրանց ազատ արձակել:

Ոստիկանության Մաշտոցի բաժնում բերման ենթարկված անձանց հաշվառման մատյանի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 12:15-ին արգելանքի վերցված 3 քաղաքացիները ստորագրել են, որ բաժնից դուրս են եկել 15:15-ին, սակայն այցի պահին դեռևս գտնվում էին Մաշտոցի բաժնում, իսկ նրանց՝ քննչական մարմնին ներկայացման մասին մատյանում որևէ նշում չկար: Այս հանգամանքն ինքնին **մտահոգիչ է այն առումով, որ անձանց ազատությունից զրկելու՝ օրենքով սահմանված առավելագույն ժամկետից փաստացի ավելի պահելու պարագայում մատյաններում կատարվում են իրականությանը չհամապատասխանող գրառումներ:**

Արձանագրվել են դեպքեր, երբ ազատությունից զրկելու՝ օրենքով սահմանված ժամկետից ավելին անձին պահելը Ոստիկանության կողմից արդարացվել է փաստաթղթերի լրացման անհրաժեշտությամբ, իսկ որոշ դեպքերում՝ բերման ենթարկված անձանց մեծաքանակությամբ պայմանավորված՝ արձանագրման տևականությամբ: Այսպես, օրինակ, ապրիլի 22-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժին այցի ընթացքում արձանագրվել է, որ բերման ենթարկված 34 անձինք Ոստիկանության բաժնում պահվել են սահմանված 3 ժամից ավելի (մեկ ժամը չգերազանցող, որոշ դեպքերում նաև մեկ ժամից ավելի): Ոստիկանության ծառայողների ներկայացրած պարզաբանման համաձայն՝ որոշ դեպքերում սահմանված ժամկետի խախտումը հիմնական պայմանավորված է միևնույն ժամանակահատվածում մեծ թվով բերման ենթարկված անձանց վերաբերյալ փաստաթղթերի կազմմամբ, ինչպես նաև Ոստիկանության հերթապահ մասում բերման ենթարկված անձանց հաշվառման մատյանում կատարվող գրառումներով:

Ոստիկանության բաժինների իրականացված մշտադիտարկման այցերի արդյունքներով խախտումներ են արձանագրվել՝ կապված վարչական ձերբակալման ընթացակարգի, ինչպես նաև անձի մոտ առկա մարմնական վնասվածքների, անձնական իրերի ազդրավման պատշաճ արձանագրման հետ:

Այսպես, օրինակ, ապրիլի 17-ին Էրեբունու բաժնում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներն ուսումնասիրել են «Բերման ենթարկված անձանց հաշվառման» մատյանը, որտեղ գրառումներ են առկա եղել միայն երեք անձի վերաբերյալ՝ չնայած բաժնում բերման ենթարկվածների ավելի մեծ քանակին:

Ապրիլի 17-ին Ոստիկանության Կենտրոնականի բաժին բերման ենթարկվածը տեղեկացրել է, որ աջ ձեռքի վիրակապը դրվել է Ոստիկանության ծառայողների կողմից հասցրած վնասվածքի հետևանքով: Բաժնի հերթապահ մասում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները ծանոթացել են բերման ենթարկվածների հաշվառման մատյանին, որի ժամանակ անձը տեղեկացրել է, որ մատյանում նշված է, որ առողջ է, սակայն ստացած վնասվածքի մասին նշում չկա: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների միջամտությամբ է, որ ստացած վնասվածքի մասին կատարվել է գրառում:

Ոստիկանության Էրեբունու բաժին բերման ենթարկված անձանց մատյանի ուսումնասիրությունից նաև պարզվել է, որ բերման ենթարկված անձանց վերաբերյալ գրառումները կատարված են եղել թերի. համապատասխան էջերում լրացված են եղել միայն անձանց անձնական տվյալները, սակայն առկա են եղել տվյալ անձանց ստորագրությունները, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ անձանց ծանոթացման ներկայացնելուց և վերջիններիս ստորագրելուց հետո էին լրացվելու վարչական ձեռքարկման սկիզբն ու ավարտը: Բացի այդ, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից մատյանների ուսումնասիրությամբ մտահոգիչ օրինաչափություն է վեր հանվել, որ շատ դեպքերում անձանց բերման ենթարկելու սկիզբն ու ավարտը լրացվել են ճիշտ երեք ժամվա կտրվածքով՝ ընդ որում իբրև ելակետեր արձանագրելով կլորացված ժամերը (օրինակ՝ ժամը 15:00-ից 18:00):

Նման արձանագրումների հավաստիությունը որոշակի տարակուսանքի տեղիք է տալիս՝ թեկուզև այն բանի հաշվառմամբ, որ տեխնիկապես գրեթե անհնար է անձանց արգելանքի վերցնելու սկզբնական և ազատ արձակելու պահերի՝ րոպեների համընկնմամբ արձանագրումը, երբ խոսքը վերաբերում է զանգվածային՝ միաժամանակ տասնյակից ավելի անձանց ձեռքարկումներին:

Ապրիլի 22-ին Նոր Նորքի բաժնում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից արձանագրվել է, որ բերման ենթարկելու զեկուցագրերը կազմվում էին ոչ թե բերման ենթարկված Ոստիկանության ծառայողների, այլ Ոստիկանության բաժնի աշխատակիցների կողմից, որոնք բերման ենթարկված Ոստիկանության ծառայողները ստորագրում են օրվա վերջում: Արդյունքում, հնարավոր չէր լինում բերման ենթարկելու հիմքերը ներկայացնել բերման ենթարկված անձանց:

Եվրոպական դատարանն Անգելովան ընդդեմ Բուլղարիայի գործով վճռում Դատարանն արձանագրել է, որ անձի չհաստատված կալանավորումը Կոնվենցիայի 5-րդ հոդվածում առկա հիմնարար երաշխիքների կատարյալ ժխտում է և հանդիսանում է այդ դրույթի ամենակոպիտ խախտում: Այնպիսի տվյալների գրանցման բացակայությունը, ինչպիսիք են՝ ձեռքարկման օրը, ժամանակը և տեղը, ձեռքարկվածի անունը, ձեռքարկման պատճառները, ձեռքարկող անձի անունը, պետք է դիտվեն որպես հակասող՝ օրինականությանը և Կոնվենցիայի 5-րդ հոդվածի նպատակին<sup>277</sup>:

Ասվածի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ սկզբունքային է, որ քաղաքացու հետ առնչվող իրավապահ մարմնի յուրաքանչյուր ներկայացուցչի պարտականությունը պետք է լինի բոլոր այն գործողությունների անհապաղ արձանագրումը, որոնք ինքը կատարում է քաղաքացու հետ կամ նրա մասնակցությամբ:

***5. Վարչական ձեռքարկման կամ բերման ենթարկելու ընթացքում անձանց լուսանկարելու, մատնադրոշմներ վերցնելու, անձնական իրեր խուզարկելու պրակտիկայի իրավաչափությունը. իրավունքների սահմանափակման համաչափության հետ կապված խնդիրներ***

Ազատությունից զրկված անձանց իրավունքների երաշխավորման տեսանկյունից խնդրահարույց էր անձանց լուսանկարելու, մատնադրոշմներ վերցնելու, անձնական իրեր խուզարկելու պրակտիկան, ինչի հետ կապված խնդիրներն արձանագրվել են ազատությունից զրկված անձանց հետ առանձնագրույցների արդյունքում:

Այսպես, ըստ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի Էրեբունու բաժնի բերված 9 անձանց՝ Ոստիկանության բաժնում իրենց լուսանկարահանել են, սակայն իրենց համաձայնությունը

<sup>277</sup> Անգելովան ընդդեմ Բուլղարիայի (Anguelova v Bulgaria) գործով 2002թ. հունիսի 13-ի վճիռը, զանգատ թիվ 38361/97, կետ 154:

չեն հարցրել: Մեկ այլ դեպքում Ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնում բերման ենթարկված 6 քաղաքացիների վերաբերյալ վարչական վարույթի ավարտին նրանց տեղափոխել են բաժնի հերթապահ մաս, որտեղ լուսանկարել են, և նրանցից վերցվել են մատնահետքեր: Նշված գործողությունը առանձին դեպքերում տևել է շուրջ տասը րոպե, ինչի արդյունքում նրանցից յուրաքանչյուրը փաստացի ազատությունից զրկված է եղել 3 ժամից ավելի: Այնուամենայնիվ, Ոստիկանության ծառայողները մատչանում որպես ազատ արձակման ժամ՝ նշել են վարչական վարույթի ավարտը՝ այն է՝ 15:00-ն բոլորի համար: Նշվածի կապակցությամբ բաժնի պետի կողմից ներկայացվել է պարզաբանում առ այն, որ նախապես իրենց ներկայացված իրավունքների համաձայն՝ 3 ժամ անց իրենք պետք է ազատ արձակվեն և իրենք իրավունք ունենին հրաժարվել լուսանկարվելուց, ինչպես նաև մատնահետք հանձնելուց: Միննույն ժամանակ, Ոստիկանության իրավասու ներկայացուցիչը համաձայնել է ներկայացված այն փաստարկին, որ ոստիկանների կողմից նման պահանջի ներկայացումն արդեն իսկ անձի մոտ առաջ է բերում դրա օրինականության և պարտադիրության վերաբերյալ համոզմունք: Ընդ որում, հենց արձանագրված դեպքերից մեկում անձը Ոստիկանության բաժնից դուրս գալուց հետո տեղեկացրել է, որ ինքը համաձայնել է մատնադրոշման ենթարկվել և լուսանկարվել, քանի որ Ոստիկանության ծառայողներն իրեն ասել էին, որ դա իր պարտականությունն է: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ չնայած Ոստիկանության ծառայողներն անձանց առաջարկել են մատնադրոշման ենթարկվել, սակայն վերջիններս հրաժարվել են:

Ապրիլի 22-ին Շիրակի մարզային վարչության Մուշի բաժին բերման ենթարկված անձը նշել է, որ իրեն բերման ենթարկելիս քաղաքացիական հագուստով ոստիկանը վերցրել է մեքենայի բանալին և հեռախոսը՝ չկազմելով համապատասխան արձանագրություն: Արձանագրվել են նաև բերման ենթարկված անձանց բջջային հեռախոսներն առգրավելու և անձնական նամակագրություններն ուսումնասիրելու դեպքեր:

Ապրիլյան հավաքների ընթացքում բերման ենթարկված կամ ձերբակալված անձանց իրավունքների ապահովման մշտադիտարկումը հիմք է տալիս եզրահանգելու, որ ոչ պատշաճ իրավակիրառ պրակտիկա է ձևավորվել ոչ միայն ազատությունից զրկված անձի նվազագույն իրավունքների ապահովման, այլև ազատությունից զրկելու ընթացակարգի շրջանակներում այլ իրավունքների սահմանափակման և անձի վրա օրենքից չբխող պարտականություններ դնելու տեսանկյունից: Առավել մտահոգիչ է դիտարկված այն պրակտիկան, երբ իրավակիրառողը՝ ի դեմս անձի իրավունքները սահմանափակող ոստիկանության ծառայողի, ինքը տեղեկացված չէ վարչական ձերբակալման կամ բերման ենթարկելու ընթացակարգերի օրենսդրական կարգավորումներից: Որոշ դեպքերում էլ իբրև այդ գործողությունների իրավական հիմք՝ ներկայացվում էին ոչ թե նորմատիվ օրենսդրական դրույթները, այլ պարտադիր կատարման ենթակա հանձնարարականը: Այսպես, օրինակ, մշտադիտարկված դեպքերից մեկում Ոստիկանության պատասխանատու ծառայողի պարզաբանմամբ՝ թեև վարչական ձերբակալման ենթարկված անձինք իրավունք ունեն հրաժարվել մատնադրոշման ենթարկվելուց և լուսանկարվելուց, ինքը չի կարող երաշխավորել, որ այդ անձինք չեն ենթարկվի մատնադրոշման և լուսանկարման, քանի որ հրահանգ ունեն բոլորին լուսանկարել և վերցնել մատնադրոշման, սակայն նշել է, որ միջոցներ կձեռնարկեն, որպեսզի նրանք բաժնում երեք ժամից ավելի չպահվեն:

Վերը նշված գործողությունների ներպետական կարգավորումների առումով՝ ՎԻՎՕ «Վարչական ձերբակալումը, իրերի զննումը, իրերի և փաստաթղթերը վերցնելը» վերստառությամբ գլխի 263-րդ հոդվածի համաձայն՝ «... Անձնական զննություն կարող է կատարել զննության ենթարկվողի հետ նույն սեռին պատկանող լիազորված անձը՝ և նույն սեռին պատկանող երկու ընթերակների ներկայությամբ:

(...)

Իրերի, ձեռնածանրոցի, բազաժի, որսի և ձկնորսության գործիքների, որսի արդյունքների և այլ առարկաների զննությունը, որպես կանոն, կատարվում է այն անձի ներկայությամբ, որի սեփականության կամ տնօրինության տակ են գտնվում դրանք: Հետաձգում չհանդուրժող դեպքերում նշված իրերը, առարկաները կարող են զննության ենթարկվել սեփականատիրոջ (տիրապետողի) բացակայությամբ՝ երկու ընթերակաների մասնակցությամբ:

Անձնական զննության և իրերի զննության մասին կազմվում է արձանագրություն կամ համապատասխան նշում է արվում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կամ վարչական ձեռքարկալման վերաբերյալ արձանագրության մեջ: (...)»:

Վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում իրեր և փաստաթղթեր վերցնելու ընթացակարգն ամրագրող 264-րդ հոդվածն ամրագրում է, որ «Ձեռքարկալման, անձնական զննության կամ իրերի զննության ժամանակ հայտնաբերված իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող իրերի և փաստաթղթերը վերցվում են սույն օրենսգրքի 261 և 263 հոդվածներում նախատեսված մարմինների պաշտոնատար անձանց կողմից: Վերցված իրերն ու փաստաթղթերն ընդհուպ մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը պահվում են այն մարմինների (պաշտոնատար անձանց) կողմից որոշվող տեղերում, որոնց իրավունք է վերապահված վերցնելու իրերը և փաստաթղթերը, իսկ գործը քննելուց հետո, նայած գործի քննության արդյունքներին, դրանք սահմանված կարգով բռնագրավվում կամ վերադարձվում են տիրոջը կամ ոչնչացվում, իսկ իրերը հատուցմամբ վերցնելու դեպքում իրացվում են: (...)

Իրեր և փաստաթղթեր վերցնելու դեպքում այդ մասին կազմվում է արձանագրություն կամ համապատասխան նշում է արվում վարչական իրավախախտման վերաբերյալ, իրերի զննության կամ վարչական ձեռքարկալման վերաբերյալ արձանագրության մեջ: (...)»:

ՎԻՎՕ ընդհանուր իրավակարգավորումների և մասնավորապես վերոնշյալ դրույթների համեմատական ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրահանգելու, որ վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում անձնական և իրերի զննությունները պետք է բավարարեն որոշակի ընթացակարգային կանոնների, իսկ անձանց լուսանկարելու, խուզարկելու և մատնադրոշման ընթացակարգեր առհասարակ նախատեսված չեն:

Անձնական հեռախոսների առգրավման և դրանցում առկա տվյալներին և տեղեկություններին ծանոթանալու իրավասության առումով՝ նախ, ՎԻՎՕ 264-րդ հոդվածն առգրավման ենթակա իրերի և փաստաթղթերի շրջանակը պայմանավորում է միայն իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող իրերով և փաստաթղթերով, այսինքն՝ ենթադրյալ իրավախախտման հետ առնչություն ունենալու հանգամանքով: Բացի այդ, օրենքն ամրագրում է նաև առգրավման փաստի արձանագրման պարտադիր պահանջ:

Հեռախոսներում պահպանվող անձնական տվյալների, այդ թվում՝ անձի նամակագրության ուսումնասիրությունն ինքնին առաջ է բերում իրավունքներին ոչ իրավաչափ միջամտության խնդիր մի շարք առումներով՝

1. ՎԻՎՕ իրավակարգավորումներով նախատեսվում է անձնական և իրերի զննության ընթացակարգի կիրառության հնարավորություն, ինչը չի կարող նույնացվել «խուզարկության» գործընթացին՝ ներպետական օրենսդրությամբ այդ երկու եզրույթների տարանջատման և ինքնուրույն կիրառության, ինչպես նաև իրավունքներին միջամտության ծավալի և բնույթի տարբերության ուժով<sup>278</sup>,

<sup>278</sup> «Զննություն» և «խուզարկություն» ընթացակարգերի իրավական բովանդակությունների բացահայտման և դրանց հարաբերակցության հստակեցման խնդիրը համապարփակ ներկայացված է Փաստաբանի մասնագիտական գործունեության մի շարք երաշխիքների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի իրավական վերլուծությամբ:

2. անձի հաղորդակցության գաղտնիության իրավունքին հնարավոր միջամտությունը ոչ միայն նախատեսված չէ օրենքով, այլև առաջ է բերում սահմանադրական այդ իրավունքի սահմանափակման համարժեք երաշխիքների չապահովման խնդիր:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 33-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝

*«2. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:*

3. Հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ երբ դա անհրաժեշտ է պետական անվտանգության պաշտպանության համար և պայմանավորված է հաղորդակցվողների՝ օրենքով սահմանված առանձնահատուկ կարգավիճակով:»:

Սահմանադրական այս պահանջն իր արտացոլումն է գտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված անձի նամակագրության և հեռախոսային խոսակցությունների վերահսկման ընթացակարգերում՝ պարտադիր դատական վերահսկողության, դատավարական կարգավիճակով պայմանավորված՝ անձանց շրջանակի կանխորոշման երաշխիքների ամրագրմամբ: Ասվածը նշանակում է, որ անգամ քրեորեն հետապնդելի արարքների դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը կաշկանդված է անձի հաղորդակցության գաղտնիության իրավունքին միջամտության սահմանադրական պահանջներով՝ օրենքով նախատեսված կլինելը, հանրային շահի պաշտպանության նպատակը, դատական որոշումը:

Նման պայմաններում, երբ խոսքը վերաբերում է ոչ թե քրեական, այլ վարչական իրավախախտման վարույթին, անձի հաղորդակցության գաղտնիության միջամտությունը, օրենքով նախատեսված չլինելու փաստից գատ, չի բխում վարչական պատասխանատվության ապահովման նպատակից և հետևաբար, չի կարող համաչափ լինել վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում:

Վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում ոստիկանության գործողությունների, առավել ևս՝ անձի իրավունքներին միջամտություն կամ սահմանափակում ենթադրող ընթացակարգերի օրենսդրական կարգավորումների շրջանցումն առնվազն վկայում է ազատությունից զրկված անձի իրավունքների խախտման մասին: Առավել մտահոգիչ է, որ որպես վարչական ձեռքարկման կամ բերման ենթարկելու շրջանակներում անձանց լուսանկարելու կամ մատնադրոշմներ վերցնելու արդարացում՝ օրենքով չնախատեսված միջոցառումների իրականացման՝ Ոստիկանության պատասխանատու ծառայողների կողմից փորձ է արվել այնպիսի հիմնավորումներ ներկայացնել, ինչպիսին, օրինակ, դրանց կամավոր բնույթն է կամ իրենց տրված նման հանձնարարականը: Նման «արդարացումները» ոչ միայն չեն կարող ազդել այդ գործողություններին՝ իբրև անձի իրավունքներին ոչ իրավաչափ միջամտությանը տրված իրավական գնահատականի վրա, այլև, ճիշտ հակառակը, այդպիսով վկայում են Ոստիկանության ծառայողների՝ իբրև հասարակական կարգի պահպանության պատասխանատու անձանց իրավական կարգավիճակի շրջանակի, միայն օրենքով գործելու պարտավորության և դրանից բխող հետևանքների ոչ բավարար գիտակցման կամ արժևորման մասին:

Անդրադառնալով խնդրո առարկա ընթացակարգերի «կամավոր» բնույթին և միայն անձի համաձայնության դեպքում գործադրելուն՝ նախ, սկզբունքորեն պետք է նկատի

ունենալ, որ անկախ անձի համաձայնությունից կամ անհամաձայնությունից՝ պաշտոնատար անձի (իշխանության ներկայացուցչի) իրավական կարգավիճակից բխող լիազորությունները, միևնույն է, չեն կարող գերազանցել օրենքով նախատեսված շրջանակները:

Եվ առհասարակ, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման սահմանադրական և միջազգային իրավական հիմքերն ամրագրում են այն հիմնարար սկզբունքը, որ **իրավունքի յուրաքանչյուր սահմանափակում պետք է լինի օրենքով նախատեսված, հետապնդի իրավաչափ նպատակ և համաչափ լինի հետապնդվող նպատակին**: Մինչդեռ, կոնկրետ քննարկվող իրավիճակում ազատությունից զրկված անձի համաձայնությունը, առավել ևս իր իրավունքների ու պարտականությունների մասին չտեղեկացված անձի համաձայնությունը որևէ կերպ չի կանխորոշում ո՛չ այդ ընթացակարգերի օրինական հիմքը, ո՛չ էլ դրանցով հետապնդվող իրավաչափ նպատակի առկայությունը: Ավելին, չպետք է անտեսել նաև այն հանգամանքը, որ տվյալ դեպքում խոսքն ազատությունից զրկված և այդպիսով իր իրավունքներն ինքնուրույն իրացնելու սահմանափակ հնարավորություն ունեցող անձի մասին է, ով ենթադրաբար առաջնորդվում է իշխանության ներկայացուցչի գործողությունների՝ օրենքից բխելու և դրանց պարտադիրության կանխավարկածով:

Երկրորդ, անձի իրավունքներին ոչ իրավաչափ միջամտությունը որևէ պարագայում չի կարող արդարացվել նման «հանձնարարականի»՝ իբրև խնդրահարույց գործողությունների իրավական հիմքի վկայակոչմամբ:

Այս հանգամանքն ինքնին ցուցիչ է առ այն, որ իշխանության ներկայացուցչի՝ ի դեմս հավաքի մասնակիցների անվտանգության և հասարակական կարգի պահպանության առաջնահերթ պարտականություն ունեցող Ոստիկանության ծառայողն «ամեն գնով» իրեն հանձնարարականը կատարելու գերխնդիր է ունեցել: Մինչդեռ, այստեղ է, որ պետք է գործի գիտակցումն առ այն, որ Ոստիկանության ծառայողի գործողությունների իրավաչափությունը կանխորոշվում է միայն ու միայն օրենքով՝ իրավունքների երաշխավորման ընդհանուր սկզբունքների լույսի ներքո դրա մեկնաբանությամբ ու կիրառությամբ: Ավելին, «հանձնարարականի» կատարումը, որպես այդպիսին, իրավունքների խախտում թույլ տված Ոստիկանության ծառայողի հանրային-իրավական, այդ թվում՝ քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք չէ:

#### ***6. Ազատությունից զրկված անձանց նվազագույն իրավունքների երաշխավորման ձախողումը՝ որպես զանգվածային ձերբակալումների և անհատական մոտեցում չցուցաբերելու հետևանք***

Ապրիլյան հավաքների ընթացքում տեղի ունեցան նաև զանգվածային բերման ենթարկելու դեպքեր: Ընդ որում, թե՛ անձին արգելանքի վերցնելու հիմքերն անհապաղ չհայտարարելու, թե՛ վարչական ձերբակալման առավելագույն երեք ժամից ավելի անձանց պահելու դեպքերը հաճախ հենց բացատրվում էին միաժամանակյա ձերբակալումների մեծաքանակությամբ: Վերջինը թեև կարող է վկայել կոնկրետ ոստիկանության ծառայողի՝ անձի իրավունքները խախտող գործողությունների կատարման չարամտության բացակայության մասին, այն ոչ մի պարագայում չի կարող դիտարկվել իբրև այդ գործողություններն իրավաչափ դարձնող հանգամանք:

Իրականում, ազատությունից զրկելու զանգվածային դեպքերը կամ զանգվածային ձերբակալությունները պետք է լինեն բացառություն: Միջազգային պրակտիկայում դրանց ներկայացվում են համապատասխանության բարձր պահանջներ: Պետության իրավասու մարմինների, իսկ կոնկրետ պարագայում՝ ոստիկանության կողմից յուրաքանչյուր դեպքում պետք է գործադրվեն բոլոր ջանքերը՝ խուսափելու համար այդպիսի ձերբակալումներից կամ

բերման ենթարկելու դեպքերից: Այդպիսի պրակտիկան վտանգավոր է իրավունքների ապահովման տեսանկյունից, քանի որ տարերային գործողությունները հնարավորություն չեն տալիս անհատական մոտեցում ցուցաբերել ազատությունից զրկելիս, ինչը մեծացնում է կամայականության դրսևորումները: Այսպիսի պրակտիկան հակասում է նաև խաղաղ հավաքների ազատության իրավունքին, քանի որ դրա արդյունքում չի իրացվում հենց այդ իրավունքը:

Հավաքների մասնակիցները չպետք է զրկվեն խաղաղ հավաքների ազատության իրավունքից միայն այն պատճառով, որ իրավապահ մարմինները չունեն բավարար ռեսուրսներ կամ որակյալ անձնակազմ՝ անհատական (թիրախային) ձերբակալություններ իրականացնելու համար: Հավաքների մասնակիցները կարող են ձերբակալվել միայն այն դեպքում, երբ առկա են անհրաժեշտ հիմքեր ազատությունից զրկելու համար:

**Ցուցարարի կամ ցանկացած այլ անձի հետ շփվող յուրաքանչյուր ոստիկան պետք է սպառնիչ տիրապետի այն իրավունքներին, որ իր կողմից բերման ենթարկվողը կամ ձերբակալվողն ունի, ինչպես նաև այդ իրավունքների իրացումն ապահովող պարտականություններին:** Ոստիկանության ծառայողը նաև պետք է հստակ գիտակցի, թե որ պահից ազատությունից զրկված կհամարվի այն անձը, ում նա մոտեցել է, և որ պահից նա պետք է այդ անձի համար երաշխավորի իրավունքներից օգտվելը: Ընդ որում, դա պետք է արվի այնպես, որ յուրաքանչյուր մարդ իր վրա զգա ոստիկանության այդ գիտելիքի սպառնիչ արդյունքը: Այս գիտելիքների բացակայությունը պետք է հիմք լինի ոստիկանության ծառայողին զբաղեցրած պաշտոնից ազատելու կամ պատասխանատվության խիստ միջոցների ենթարկելու համար<sup>279</sup>:

Ցանկացած պարագայում պետական մարմնի ռեսուրսների ոչ բավարար լինելը չի կարող արդարացնել, օրինակ, անձին օրենքով սահմանված ժամկետից ավելի անազատության մեջ պահելը: Ոստիկանության բաժիններում համապատասխան մատյանները պետք է պատշաճ լրացվեն՝ անկախ նրանից, թե անձը որքան ժամանակ է պահվել բաժնում, քանի բերման ենթարկված անձ կա և այլն:

Ստացվում է, որ զանգվածային ձերբակալումների դեպքում պետության վրա երկակի պատասխանատվություն է դրվում այն առումով, որ մի դեպքում՝ հավաքների մասնակիցներին մասսայաբար ազատությունից զրկելով առաջ է գալիս հավաքների ազատության իրավունքին անհամաչափ միջամտության հարց, մյուս կողմից՝ ազատությունից զրկված անձի՝ իր կարգավիճակից բխող իրավունքների երաշխավորումն ու անազատության մեջ պահելու առավելագույն ժամկետների պահպանումը «տեխնիկապես» դառնում են անիրատեսական:

### ***7. Անչափահասներին բերման ենթարկելու կամ ձերբակալելու ընթացակարգերի առանձնահատկությունները: Ոստիկանության գործողությունների համապատասխանությունը միջազգային չափանիշներին***

2018 թվականի ապրիլյան հավաքների մասնակիցների, հատկապես ազատությունից զրկված անձանց իրավունքների ապահովման մշտադիտարկման շրջանակներում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել անչափահասներին, ինչը պայմանավորված էր ոչ միայն երեխաների իրավունքների առավելագույնս երաշխավորման անհրաժեշտությամբ, այլև բերման ենթարկված անչափահասների մեծ տեսակարար կշռով: Այսպես, ապրիլի 17-ից 25-ը ներառյալ Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից իրականացվել են

<sup>279</sup> Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների վերաբերյալ արտահերթ հրապարակային զեկույցը, էջեր 45-46:



առանձնագրույցներ 974 անձի հետ, որոնցից 90-ը եղել են հիմնականում վարչական իրավախախտում կատարելու հիմքով բերման ենթարկված անչափահասներ:

Իրավախախտ անչափահասների իրավունքները սահմանափակելիս վերջիններիս նկատմամբ վարվեցողության հատուկ կանոններն ամրագրված են անչափահասների գործերով արդարադատության ոլորտը կարգավորող մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, որոնց ընդհանուր տրամաբանությունն այն է, որ **պետությունը պարտականություն է կրում ոչ միայն ապահովելու առհասարակ իրավունքների սահմանափակման ենթարկվող, այդ թվում՝ ազատությունից զրկված անձանց համընդհանուր իրավունքները, այլև հաշվի առնելու անչափահասի անձն ու բոլոր գործողություններում առաջնորդվելու երեխայի լավագույն շահի առաջնահերթության սկզբունքով:** Սա նշանակում է, որ բոլոր այն դեպքերում, երբ պետական մարմնի գործողությունների հասցեատերն անչափահաս է, միջազգային իրավաբանությամբ այդ գործողությունների իրավաչափությանը ներկայացվում են առավել բարձր չափանիշներ՝ անչափահասի անձով պայմանավորված:

Այսպես, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ «Անչափահասների հանցավորությանը սոցիալական արձագանքների վերաբերյալ» թիվ R(87)20 հանձնարարականը սահմանում է, որ անչափահասի նկատմամբ իրականացվող բոլոր գործողություններում պետք է հաշվի առնվեն վերջինիս անձն ու հատուկ կարիքները, և պետք է ապահովվի անչափահասի նկատմամբ մասնագիտացված մոտեցում: Բացի այդ, հանձնարարականն ամրագրում է, որ օրինակ՝ ոստիկանության կողմից հարցաքննվելիս անչափահասը պետք է հնարավորություն ունենա իրացնելու ինչպես չափահասների համար կոնվենցիոն և ներպետական ամրագրում ստացած բոլոր իրավունքները (իրավաբանական օգնության, հակընդդեմ հարցման, բողոքարկման իրավունքներ և այլն), այնպես էլ լրացուցիչ երաշխիքներ պետք է լինեն՝ կապված **իրավասու մարմնի գործողությունների անհապաղության, ձգձգումների անթույլատրելիության, ընթացակարգի սկզբնական փուլում իսկ ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի ներկայության ապահովման առումով:**

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ «Անչափահասների հանցավորությանն արձագանքելու նոր ուղիների և անչափահասների գործերով արդարադատության դերի վերաբերյալ» թիվ Rec(2003)20 հանձնարարականի համաձայն՝ երբ անչափահասը ձերբակալվում է, վերջինիս՝ որպես անչափահասի կարգավիճակը, տարիքը, խոցելիությունն ու հասունության աստիճանը պետք է հաշվի առնվեն: Անչափահասը պետք է անհապաղ, իր հասկացողությանը համապատասխան ձևով տեղեկացվի իր իրավունքների և երաշխիքների մասին: Հարցաքննության ենթարկվելիս անչափահասի ծնողը կամ իրավասու ներկայացուցիչը սկզբունքորեն պետք է ներկա գտնվեն: Պետք է ապահովվեն նաև փաստաբանի և բժշկի մատչելիության իրավունքները:

Պատիժների կամ այլ միջոցների ենթարկված անչափահաս իրավախախտների վերաբերյալ Եվրոպական կանոնները ևս սահմանում են անչափահասի տարիքային և անձնային առանձնահատկությունները հաշվի առնելու Ոստիկանության պարտականությունը, ինչպես նաև իր իրավունքների մասին հասկանալի ձևով տեղեկացվելու, ծնողի կամ անչափահասի համար վստահելի այլ անձի ներկայության ապահովման և այլ երաշխիքներ:

Մարդու իրավունքների կոմիտեի թիվ 35-րդ ընդհանուր մեկնաբանությունը, բացահայտելով Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի՝ ազատության և անձեռնմխելիության իրավունքը երաշխավորող 9-րդ հոդվածի բովանդակությունն ու պաշտպանության շրջանակները, սահմանել է անչափահասի՝ իրեն ազատությունից զրկելու պատճառների մասին տեղեկացվելու իրավունքի ավելի բարձր չափանիշ, համաձայն որի՝ որոշակի խոցելի անձանց դեպքում ազատությունից զրկման մասին վերջիններիս անմիջականորեն տեղեկացնելը պարտադիր է, բայց ոչ բավարար: **Երբ**

**անչափահասներն են ձերբակալվում, ձերբակալման և դրա պատճառների մասին տեղեկացում պետք է տրվի նաև նրանց ծնողներին, խնամակալներին կամ իրավաբանական ներկայացուցչություն իրականացնողին:**

Մինչդեռ, 2018 թվականի ապրիլյան հավաքների մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ անչափահասներին, այդ թվում՝ վարչական պատասխանատվության տարիքի չհասած անչափահասներին ազատությունից զրկելիս ոչ միայն չեն երաշխավորվել այդ հատուկ կանոնները, այլև վերջիններիս կարգավիճակից բխող նվազագույն իրավունքները:

Այսպես, ըստ 16 տարեկան մի խումբ բերման ենթարկվածների՝ արգելանքի վերցնելիս Ոստիկանության ծառայողներն իրենց որևէ պահանջ չեն ներկայացրել, ինչպես նաև չեն տեղեկացրել բերման ենթարկելու հիմքերը և պատճառները: Վերջիններս դժգոհություն են հայտնել, որ մինչև բացատրություն տալը Ոստիկանության բաժնում հնարավորություն չի տրվել հարազատներին տեղեկացնել իրենց գտնվելու վայրի մասին: Անչափահասները տեղեկացրել են, որ բաժնում առանց իրենց համաձայնության լուսանկարել են:

Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժին բերման ենթարկված անչափահաս անձինք տեղեկացրել են, որ Ոստիկանության ծառայողներն իրենցից ընտանիքի չափահաս անդամի հեռախոսահամար են պահանջում և նշում են, որ միայն նրանց՝ բաժին այցելելուց հետո իրենց հնարավորություն կտրվի բաժնից դուրս գալու: Իսկ Ոստիկանության ներկայացուցիչների պարզաբանմամբ՝ վարչական ձերբակալման ենթարկված անչափահաս անձանց ընտանիքի չափահաս անդամներին տեղեկացնում են նրանց գտնվելու վայրի մասին և պահանջում են այցելել բաժին, որպեսզի անչափահասներն ապահով տուն հասնեն, իսկ եթե ընտանիքի չափահաս անդամները չգան, դա խոչընդոտ չի հանդիսանա բերման ենթարկված անձին ազատ արձակելու համար:

16 տարեկան իգական սեռի բերման ենթարկվածը տեղեկացրել է, որ իր կարծիքով՝ բերման է ենթարկվել, քանի որ ինքը փորձել է օգնել բերման ենթարկվող մի աղջկա: Անչափահասի նկատմամբ ուժ կիրառելու արդյունքում վերջինիս աջ արմունկին կային նկատելի քերծվածքներ, որոնք տեղում արձանագրվել են Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից:

Մեկ այլ դեպքում՝ ապրիլի 23-ին Ոստիկանության Էրեբունու բաժնում անչափահասը, ում հետ առանձնագրույցին ներկա է եղել նրա մայրը, նշել է, որ ոստիկանության ծառայողներն իրեն մինչև ոստիկանության ավտոմեքենա են տեղափոխել գետնին քարշ տալով, բացի այդ ոստիկանության ծառայողների գործողությունների արդյունքում արմունկը քերծվել է:

Ոստիկանության բաժիններում անչափահասների առկայությունը հատկապես բարդացնում էր նրանց իրավունքների երաշխավորման վիճակը: Մարդու իրավունքների պաշտպանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ **անչափահասների հարցում պետք է գործել հատուկ կանոններով՝ հաշվի առնելով կոնկրետ իրավիճակում նրանց տարիքային ու հոգեբանական առանձնահատկությունները, բացառել նրանց նկատմամբ բռնության գործադրումը:**

Դիտարկված խնդրահարույց պրակտիկան որոշակիորեն պայմանավորված է վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում ազատությունից զրկման ընթացակարգերի խիստ ընդհանրական, բավարար որոշակիություն չունեցող կարգավորումներով և մասնավորապես՝ անչափահասների իրավունքների երաշխավորման տեսանկյունից հատուկ երաշխիքների և կանոնների բացակայությամբ:

Բանն այն է, որ միայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 260-րդ հոդվածի 3-րդ մասն է, որ անչափահասի դեպքում ամրագրում է վարչական ձերբակալման ընթացակարգային առանձնահատկություն, համաձայն որի՝ *անչափահասի ձերբակալման մասին նրա ծնողներին կամ նրանց փոխարինող անձանց տեղյակ պահելը պարտադիր է:*

Միննույն ժամանակ, հարկ է նկատել, որ վերոնշյալ հատուկ նորմի առկայությունը պայմանավորված էր ՎԻՎՕ նույն հոդվածի՝ հակասահմանադրական ճանաչված<sup>280</sup> այն կարգավորմամբ, որ չափահասի դեպքում անձին ազատությունից զրկելու վերաբերյալ այլ անձի տեղեկացվելու իրավունքի երաշխավորումն իմպերատիվ ամրագրում չի ստացել և պայմանավորված է եղել իրավասու մարմնի կամահայտ վերաբերմունքով: Մինչդեռ, ազատությունից զրկված անձի նվազագույն պարտադիր իրավունքների ապահովման սահմանադրաիրավական երաշխիքները ենթադրում են, որ խնդրո առարկա իրավունքը, անկախ ազատությունից զրկվածի տարիքից, պետք է անվերապահ ապահովվի պետական մարմնի կողմից:

Բացի այդ, դիտարկված մի շարք դեպքերում անչափահասին ազատությունից զրկելու վերաբերյալ ծնողը կամ այլ օրինական ներկայացուցիչը տեղեկացվել է, որպեսզի վերջինս Ոստիկանության բաժնից անձամբ վերցնի երեխային, ինչը, ոստիկանության իրավասու ներկայացուցիչների պարզաբանմամբ, բխել է անչափահասի անվտանգության նկատառումներից:

Սրա հետ կապված, միջազգային կանոնները սահմանում են, որ ծնողը կամ այլ իրավասու ներկայացուցիչը պետք է տեղեկացվի անչափահասին ազատությունից զրկելու փաստի, դրա պատճառների մասին, և պետք է ապահովվի վերջինիս ներկայությունը անչափահասի մասնակցությամբ վարութային գործողություններին: Ակնհայտ է, որ ծնողի կամ այլ իրավասու ներկայացուցչի՝ անչափահասին ազատությունից զրկելու սկզբնական փուլից մասնակցության ապահովումը լրացուցիչ ընթացակարգային երաշխիք է անչափահասի իրավունքների հնարավոր խախտումների կանխման առումով: Մինչդեռ, զուտ անչափահասին ոստիկանության բաժնից վերցնելու նպատակով վերջինիս գտնվելու վայրի վերաբերյալ ծնողին տեղյակ պահելը, առանց ապահովելու ծնողի ներկայությունը վարչական ձերբակալման ընթացքում իրականացված գործողություններին, համահունչ չէ միջազգային կանոններին:

Մշտադիտարկման արդյունքներով արձանագրվել են նաև դեպքեր, երբ վարչական իրավախախտման հիմքով բերման են ենթարկվել առերևույթ վարչական պատասխանատվության տարիքի չհասած անչափահասներ: Այսպես, ապրիլի 23-ին Ոստիկանության Արաբկիր բաժին բերման է ենթարկվել 12-ամյա անչափահաս, և ում տարիքը պարզելուց հետո Ոստիկանության ծառայողը կապ է հաստատել վերջինիս օրինական ներկայացուցչի հետ, որից հետո էլ անչափահասն ազատ է արձակվել:

Վարչական պատասխանատվության տարիքի չհասած անչափահասների ձերբակալման կամ բերման ենթարկելու իրավաչափության հետ կապված հետևյալ հարցադրումներն են առաջ գալիս՝

1. արդյոք անչափահասին բերման ենթարկելիս վերջինիս՝ վարչական պատասխանատվության տարիքի հասած չլինելը Ոստիկանության կողմից տեղում պարզելու հնարավոր այլ եղանակներ առկա չէին, և անչափահասին ազատությունից զրկելը միակ հնարավոր միջոցն էր,

2. արդյոք Ոստիկանության կողմից առավելագույն ջանքեր են գործադրվել՝ անչափահասի տարիքը և, ըստ այդմ, վարչական պատասխանատվության բացառման հարցն անհապաղ պարզելու ուղղությամբ,

3. անչափահասի՝ վարչական պատասխանատվության սուբյեկտ չհանդիսանալու հանգամանքի գիտակցման պայմաններում արդյոք իրավաչափ է եղել վերջինիս անազատության մեջ պահելը՝ նրա անվտանգության և օրինական ներկայացուցչին հանձնելու նկատառումներից ելնելով:

<sup>280</sup> Տե՛ս նաև ՀՀ Սահմանադրական դատարանի 2012 թվականի նոյեմբերի 23-ի ՍԴՈ-1059 որոշումը:

Անչափահասների դեպքում հատկապես մտահոգիչ էին արձանագրված այն տեղեկությունները, համաձայն որոնց՝ Ոստիկանության ծառայողները՝ առանց մանկավարժի կամ հոգեբանի կամ ծնողի դպրոցահասակ երեխաներից առանձնացված զրույցների ընթացքում փորձել են պարզել, թե ով է իրենց համոզել կամ հարկադրել մասնակցել հավաքների ու երթերի: Երեխաների՝ խաղաղ հավաքներին մասնակցության հարցից անկախ՝ անընդունելի է ոստիկանության ծառայողների կողմից երեխաներին նմանատիպ հարցեր ուղղելը՝ չունենալով այդ իրավասությունը և այն էլ կատարելով առանց անչափահասի հարցաքննության լրացուցիչ ընթացակարգային երաշխիքների պահպանման՝ օրինական ներկայացուցչի, հոգեբանի կամ մանկավարժի մասնակցության ապահովման:

***8. Վարչական իրավախախտման վարույթի շրջանակում հավաքի մասնակիցներին առանց իրավաչափ նպատակի ազատությունից զրկելու պրակտիկան***

Այդ օրերին հավաքների մասնակիցներին վարչական ձեռքարկման կամ բերման ենթարկելու դեպքերի մշտադիտարկման արդյունքները, հիմնված լինելով ազատությունից զրկված անձանց պնդումների, իրավասու պաշտոնատար անձանց պարզաբանումների և քանակական ցուցանիշների որոշակի հարաբերակցության ուսումնասիրության վրա, նախանշում են օրինաչափություն՝ նույն անձանց մասնակցությամբ վարչական իրավախախտման և քրեական վարույթների նախաձեռնման կապակցությամբ:

Ընդ որում, վարույթների՝ միմյանց հաջորդելու կամ անգամ դրանց միաժամանակյա առկայությունն ինքնին անձի իրավունքների ոտնահարման միանշանակ եզրահանգման հիմք չի կարող լինել: Հետևաբար, վարույթի քրեական կամ վարչական լինելու հանգամանքը չէ, որ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրացված խնդրի որոշիչ գործոն է, այլ անձի փաստացի կարգավիճակով պայմանավորված՝ իրավունքների երաշխավորումն ու օրենսդրական կառուցակարգերի գործադրման՝ օրենքով կանխորոշված իրավաչափ նպատակի առկայությունը: Այլ կերպ ասած, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի իրականացրած մշտադիտարկման արդյունքում ձեռք բերված մեծածավալ փաստական տվյալների համադրումն ու վերլուծությունը հիմք են տալիս եզրակացնելու, որ շատ դեպքերում վարչական իրավախախտման վարույթի նախաձեռնումը, վարչական ձեռքարկումն իրականացվել են այնպես, որ թեև առերևույթ բխել են օրենքի տառացի մեկնաբանությունից՝ պահպանելով իրավական ֆորմալիզմը, բայց և այնպես դրանց կիրառությունը չի հետապնդել այն իրավաչափ նպատակը, որի կենսագործմանը պետք է ուղղված լինեք վարչական իրավախախտման վարույթն առհասարակ և վարչական ձեռքարկմանն ու բերման ենթարկելու ընթացակարգերը՝ մասնավորապես:

Այսպես, օրինակ, ապրիլի 19-ին Նոր Նորքի բաժնում ոստիկանության ծառայողը տեղեկացրել է, որ քաղաքացիները բերման են ենթարկվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ զանգվածային անկարգություններին մասնակցելու կասկածանքով: Միաժամանակ, Ոստիկանության ներկայացուցչի պարզաբանմամբ՝ քաղաքացիների վերաբերյալ կազմվել են համապատասխան նյութեր, որոնք պետք է փոխանցվեն ՀՀ քննչական կոմիտեի համապատասխան ստորաբաժանմանը, իսկ քննչական բաժնի պետը տեղեկացրել է, որ ստացել է բերման ենթարկված քաղաքացիների վերաբերյալ նյութերը, և նրանք պետք է որպես վկա հարցաքննության ենթարկեն:

Մեկ այլ դեպքում բերման ենթարկված անձանց տեղեկացմամբ՝ Ոստիկանության ծառայողները հայտնել են, որ վերջինիս հագուկապը և պայուսակը կասկած են հարուցել, և անձանց բերման են ենթարկել ինքնությունը պարզելու նպատակով: Քաղաքացիների պնդմամբ՝ բերման ենթարկելու պահին նրանք չէին մասնակցում քաղաքացիական անհնազանդության որևէ միջոցառման: Ավելին, վերջիններս տեղեկացրել են, որ նաև

Ոստիկանության ծառայողները չեն ներկայացրել իրենց իրավունքները: Առանձնագրույցներից հետո Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները պարզաբանումներ են ստացել Արաբկիրի բաժնի ոստիկանության ներկայացուցիչ, ում տեղեկացմամբ՝ քաղաքացիների նկատմամբ վարչական բերում է իրականացվել ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված՝ Ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու համար: Վարչական ձերբակալման՝ օրենքով նախատեսված 3 ժամվա վարչական ձերբակալումից հետո վերը նշված անձինք ներգրավվել են որպես վկա զանգվածային անկարգությունների վերաբերյալ նախկինում հարուցված քրեական գործի շրջանակներում:

Ներկայացված իրավիճակի մասսայականությունը հաշվի առնելով՝ կարելի է ենթադրել, որ նման դեպքերում վարչական ձերբակալումն իրականացվել է ոչ այնքան այդ ընթացակարգով հետապնդվող, այն է՝ վարչական պատասխանատվության հարցի քննարկման նպատակով, որքան իբրև գործիք գործադրվել է քրեական վարույթի շրջանակներում նախաքննության մարմնին այդ անձանց ներկայացնելու համար: Ընդ որում, *Մարդու իրավունքների պաշտպանի իրավական կարգավիճակի հաշվառմամբ՝ իրավական գնահատական չի տրվում, թե որքանով է հիմնավորված կամ նպատակահարմար եղել անձին քրեական վարույթին մասնակից դարձնելը, ինչ առնչություն է ունեցել անձը ենթադրյալ հանցանքին: Միննույն ժամանակ, Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում են անձանց ազատությունից զրկելու ցանկացած դեպքում իրավական և փաստական հիմքերի պարզումը, անձի իրավունքների սահմանափակման իրավաչափ նպատակն ու համաչափությունը, իրավունքների և ազատությունների մասին տեղեկացվածությունը:* Հենց այս սկզբունքային հարցերի դիտանկյունից էլ Մարդու իրավունքների պաշտպանը մշտադիտարկել է 2018 թվականի ապրիլին հավաքների ընթացքում անձանց իրավունքների երաշխավորման վիճակը:

**Անձին ազատությունից զրկելու իրավաչափ նպատակի անհստակությունը որոշ դեպքերում դրսևորվել է հենց իրավունքների սահմանափակումը կիրառողի պարզաբանումներից:** Այսպես, արձանագրված դեպքերից մեկում, օրինակ, անձն առանձնագրույցի ընթացքում տեղեկացրել է, որ բաժին բերվելուց հետո Ոստիկանության ծառայողները տեղեկացրել են, որ բերման ենթարկվելու պատճառը եղել է իր մոտ առկա պայուսակի կասկածելի լինելը: Մինչդեռ, ոստիկանության ներկայացուցիչ տեղեկացմամբ՝ քաղաքացիների նկատմամբ վարչական բերում է իրականացվել ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված՝ Ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու համար:

2018 թվականի ապրիլի 19-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Քանաքեռ-Զեյթունի բաժին բերման ենթարկված անձը հայտնել է, որ Ոստիկանության ծառայողները տեղեկացրել են, որ բերման ենթարկվելու պատճառը եղել է իր մոտ առկա պայուսակի կասկածելի լինելը: Մինչդեռ, ոստիկանության ներկայացուցիչ տեղեկացմամբ՝ քաղաքացիների նկատմամբ վարչական բերում է իրականացվել ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված՝ Ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու համար:

Հետաքրքրական է ապրիլի 21-ին Ոստիկանության Էրեբունու բաժնում արձանագրված դեպքը, որ Ոստիկանության ներկայացուցիչ պարզաբանմամբ, որ մինչ բաժին մուտք գործելը պարզելով 2 բերման ենթարկվածի՝ լրագրող լինելու հանգամանքը (armlur.am և aseko.se.am) նրանց անհապաղ ազատ են արձակել: Սա անուղղակի վկայում է նաև անձանց արգելանքի վերցնելու պահին վերջիններիս ազատությունից զրկելու հիմքերն ու պատճառները չներկայացնելու մասին՝ մանավանդ ոստիկանության ծառայողի օրինական պահանջին չենթարկվելու վարչական իրավախախտման կատարման հիմքով:

Եվրոպական դատարանի իրավաբանությամբ անձին ազատությունից զրկելու ընթացակարգի իրավաչափությունը կանխորոշող հանգամանք է դրանով փաստացի

հետապնդվող նպատակը: Այսպես, Խոդորկովսկին ընդդեմ Ռուսաստանի գործով վճռում Դատարանն արձանագրել է, որ անձի ձերբակալումը կարող է ոչ իրավաչափ լինել, եթե դրա առերևույթ նպատակը տարբերվում է իրականից: Կոնկրետ դեպքում, Դատարանը փաստել է, որ դիմումատուի ձերբակալման հանգամանքներն այնպիսին են, որ թեև ձևականորեն անձն արգելանքի է վերցվել որպես վկա, և ներպետական օրենսդրության տառը պահպանվել է, նախաքննության մարմնի իրական նպատակն էր անձին քրեական հետապնդման ենթարկել՝ այդպիսով անձի կալանավորման հարցի քննարկումը տեղափոխելով ավելի հարմար վայր: Դատարանն անձին ազատությունից զրկելու իրավաչափության հարցը քննարկելիս վերաբերելի հանգամանք է դիտարկել նաև այն, որ անձին վկայի կարգավիճակով հարցաքննելուց անմիջապես հետո նախաքննության մարմինը կալանավորման միջնորդություն է ներկայացրել դատարան՝ եզրահանգելով, որ գործողությունների նման արագության պայմաններում քննիչը փաստացի պատրաստվել էր նման զարգացման և անձին դիտարկել է ոչ թե որպես վկա, այլ մեղադրյալ<sup>281</sup>:

***9. Վարչական իրավախախտում կատարելու հիմքով ազատությունից զրկված անձի նկատմամբ քրեական հետապնդման իրականացումը: Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ավարտից հետո անձին քրեական հետապնդման մարմնին ներկայացնելու և հարցաքննելու երաշխիքների չպահպանումը***

Պաշտպանի աշխատակազմի թեժ գծին ահազանգերի ուսումնասիրության և Ոստիկանության բաժիններ այցերի արդյունքում արձանագրվել են դեպքեր, երբ վարչական իրավախախտման կասկածով բերման ենթարկված անձինք սահմանված ժամի ավարտից հետո շարունակում են պահվել բաժնում՝ քրեական վարույթի շրջանակում հիմնականում վկայի, իսկ մի շարք դեպքերում՝ նաև կասկածյալի կարգավիճակով հարցաքննության ենթարկվելու նպատակով: Այսպիսի յուրաքանչյուր դեպք արձանագրվել է և պարզաբանման պահանջով անհապաղ ներկայացվել Ոստիկանությանը:

Ոստիկանության բաժիններում մշտադիտարկման այցերով, մասնավորապես, արձանագրվել է, որ ապրիլի 21-ին Ոստիկանության Էրեբունու, Մալաթիայի և Մաշտոցի բաժիններում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների հետ առանձնազրույց ունեցած 29 անձանցից 14-ը, բերման ենթարկվելով վարչական իրավախախտում կատարելու հիմքով, ներկայացվել են նախաքննության մարմնին՝ քրեական գործով վարույթի շրջանակներում: Այս միտումն առավել տարերային բնույթ ստացավ ապրիլի 22-ին: Այսպես, Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների անմիջական դիտարկմամբ՝ Ոստիկանության Արաբկիրի, Քանաքեռ-Զեյթունի, Մալաթիայի, Էրեբունու և Շենգավիթի բաժիններում սկզբնապես վարչական ձերբակալման ենթարկված 122 անձանցից քննչական մարմնին են ներկայացվել 97 անձինք, որոնց թվում եղել են նաև քրեադատավարական ձերբակալման ենթարկված անձինք:

Դիտարկված այս պրակտիկան խնդրահարույց է թե՛ վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում անձին ազատությունից զրկելու նպատակի իրավաչափության, թե՛ քրեական վարույթի շրջանակներում ընթացակարգային երաշխիքների չպահպանման առումով:

Այսպես, դիտարկված օրինաչափություններն անձի իրավունքների ապահովման տեսանկյունից առնվազն առաջ են բերում հետևյալ հարցադրումները՝

<sup>281</sup> Խոդորկովսկին ընդդեմ Ռուսաստանի (Khodorkovskiy v. Russia) գործով 2011 թվականի մայիսի 31-ի վճիռը, զանգատ թիվ 5829/04, կետեր 141-142:

1. արդյոք վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում անձին բերման ենթարկելը որևէ կերպ պայմանավորված է եղել ենթադրյալ հանցագործությանն անձի հնարավոր առնչությունը ստուգելու հանգամանքով,

2. արդյոք անձին արգելանքի վերցնելուց հետո՝ վարչական ձերբակալման երեք ժամվա ընթացքում է վեր հանվել քրեական գործով վարույթին անձին ներգրավելու անհրաժեշտությունը, և եթե այո, ապա վարչական ձերբակալման ընթացքում ՎԻՎՕ-ում ամրագրված որ ընթացակարգերի կիրառմամբ են բացահայտվել նման փաստական և իրավական հիմքերը,

3. նախաքննության մարմնին ներկայացվելիս արդյոք անձի համար բավարար չափով որոշակի է եղել իր դատավարական կարգավիճակը՝ քրեական և ոչ թե վարչական վարույթին վերջինիս ներգրավման առումով,

4. վարչական ձերբակալման ավարտից անմիջապես հետո՝ առանց Ոստիկանությանը պատկանող տարածքը լքելու, անձին քրեական գործով վարույթին ներգրավելիս արդյոք պահպանվել է հարցաքննության կանչելու դատավարական կարգը՝ ծանուցման պատշաճության, անձի դատավարական կարգավիճակի, իրավունքների և պարտականությունների ներկայացման առումով:

2018 թվականի ապրիլյան հավաքների ընթացքում անձանց բերման ենթարկելու ընթացակարգերի՝ քրեական կամ վարչական բնույթի հետ կապված՝ Ոստիկանության պարզաբանման համաձայն՝ անձինք, որոնց նկատմամբ վարչական վարույթ է հարուցվել, արձանագրության կազմելուց հետո բաց են թողնվել: Մյուս անձինք, որոնք բաժիններ բերվել են զանգվածային անկարգություններին՝ առնչություն ունենալու կասկածանքով, ներկայացվել են նախաքննության մարմնին՝ անհրաժեշտ գործողություններ կատարելու նպատակով: Իսկ վարչական ձերբակալման կամ բերման ենթարկելուց հետո ձերբակալման քրեադատավարական ընթացակարգերի շրջանակներում, ըստ Ոստիկանության տվյալների, արգելանքի են վերցվել 107 անձինք:

Չնայած դրան, անձանց վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում բերման ենթարկելուց հետո քրեական վարույթին ներգրավվելու պրակտիկայի կապակցությամբ այդ օրերին Ոստիկանությունը տարածել էր հայտարարություն, համաձայն որի՝ Ոստիկանությունը շարունակելու է օրենքով սահմանված կարգով բերման ենթարկել բոլոր այն անձանց, ովքեր թույլ են տալիս հասարակական կարգի դեմ ուղղված իրավախախտումներ: Եթե վարչական ձերբակալման օրենքով սահմանված ժամկետում բերված անձինք ազատ չեն արձակվում, ապա ընդունել ի գիտություն, որ նախաքննության մարմնի միջոցով ստուգվում է նրանց մասնակցությունը կատարված հանցագործություններին<sup>282</sup>:

Չնայած վարույթային առանձնահատկություններից անկախ՝ ազատությունից զրկման փաստով պայմանավորված՝ անձի նվազագույն իրավունքների միասնականության գաղափարին՝ պետք է նկատի ունենալ, որ վարույթի տարանջատումը քրեականի կամ վարչականի ամեննին տեսական բնույթ չի կրում ազատությունից զրկվածի այլ իրավունքների և ընթացակարգային երաշխիքների ապահովման առումով:

Ի տարբերություն վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում անձին ազատությունից զրկելու ընթացակարգերի կիրառման հիմքերի ու պայմանների՝ խիստ ընդհանրական կարգավորումների՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը վկայի կարգավիճակով վարույթն իրականացնող մարմնին ներկայանալու գրավոր ծանուցման պարտադիր ընթացակարգ է սահմանում՝ ըստ այդմ բերման ենթարկելը կիրառելի դարձնելով միայն *պատշաճ ծանուցված և առանց հարգելի պատճառի չնեղայացած վկայի նկատմամբ*:

<sup>282</sup> Տե՛ս <https://factor.am/47669.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Իսկ ձեռքբերված քրեադատավարական ընթացակարգը ենթադրում է, որ ձեռքբերված փաստով պայմանավորված՝ անձը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի ուժով ձեռք է բերում կասկածյալի կարգավիճակ, ում՝ որպես քրեական հետապնդման ներքո գտնվող անձի կարգավիճակն ընդգրկում է նաև պաշտպանության իրավունքի բովանդակային ամբողջ ծավալը:

Այլ կերպ ասած, քրեադատավարական օրենքը նախատեսում է անձի ազատությունից զրկմանն ուղղված հանրային իշխանության կողմից՝ ի դեմս Ոստիկանության գործողությունների իրավաչափության առավել խիստ պայմաններ: Մինչդեռ, **անմիջական դիտարկումները փաստում են, որ 2018 թվականի ապրիլյան հավաքների ընթացքում որոշ դեպքերում վարչական ձեռքբերում-վկայի կարգավիճակով նախաքննության մարմնին ներկայացում-քրեադատավարական ձեռքբերում մեխանիզմի գործադրմամբ շրջանցվել են վերը նշված քրեադատավարական պահանջները:**

### ***10. Անձանց տրանսպորտային միջոցները Ոստիկանության պահպանվող հատուկ տարածք տեղափոխելու իրավաչափությունը***

Ապրիլյան հավաքների ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ՝ կապված տրանսպորտային միջոցները Ոստիկանության պահպանվող հատուկ տարածք տեղափոխելու իրավաչափության հետ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների անմիջական մշտադիտարկման, առանձնագրույցների արդյունքներով արձանագրվել են դեպքեր, երբ անձը վարչական իրավախախտման հիմքով բերման է ենթարկվել, միաժամանակ նրան պատկանող տրանսպորտային միջոցը տարհանվել է պահպանվող հատուկ տարածք, և վերջինս չի տեղեկացվել իր տրանսպորտային միջոցի գտնվելու վայրը:

Բացի այդ, Մարդու իրավունքների պաշտպանին բողոքներ են հասցեագրվել առ այն, որ առանց հիմքերի ոստիկանության ծառայողների կողմից տրանսպորտային միջոցներ են տեղափոխվել Ոստիկանության պահպանվող հատուկ տարածք: Պաշտպանին այդպիսի տեղեկություն էր փոխանցել նաև հավաքի կազմակերպիչներից Արայիկ Հարությունյանը:

Բողոքներ են ներկայացվել նաև, որ տրանսպորտային միջոցները պահպանվող հատուկ տարածք տարհանելու իրավական հիմքերը Ոստիկանության կողմից չեն ներկայացվել, փոխարենը վարորդին պարզաբանվել է, որ ունեն համապատասխան հրաման:

Բարձրացված խնդիրների կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմում նախաձեռնվել է քննարկման ընթացակարգ: Ոստիկանության պարզաբանումների համաձայն՝ այդ ավտոմեքենաները տեղափոխվել են պահպանվող հատուկ տարածք, քանի որ երթևեկության մասնակիցների համար խոչընդոտներ են ստեղծել կամ արգելված տեղերում կայանում են իրականացրել, և վարորդները տեղում չեն եղել:

Միննույն ժամանակ, վարչական իրավախախտումների վարույթների ընթացքի հետ կապված՝ պարզաբանվել է, որ ըստ վարորդների՝ իրավախախտումը թույլ է տրվել հարկադրված և ոչ միտումնավոր: Արդյունքում, Ոստիկանության կողմից կազմվել են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություններ, ավտոմեքիլները բաց են թողնվել պահպանվող հատուկ տարածքից: *Վարույթները մեծամասամբ ավարտվել են կարճամամբ՝ վարորդներին վարչական պատասխանատվության չենթարկելով զանցակազմի բացակայության պատճառով:*

Դրանով հանդերձ, Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների դիտարկումներով ապրիլյան հավաքների օրերին տրանսպորտային միջոցների բերման ենթարկման պրակտիկայի ոչ իրավաչափ դրսևորումներ են եղել՝ կապված վարորդին տրանսպորտային միջոցի գտնվելու վայրի մասին ծանուցելու պարտականության ոչ պատշաճ կատարման և



վարչական իրավախախտման հատկանիշների բացակայության պայմաններում՝ ազդանշաններ տալու հիմքով նման հարկադիր միջոց կիրառելու հետ:

Ազդանշաններ տալու իրավախախտման հիմքով տրանսպորտային միջոցները պահպանվող հատուկ տարածք տարհանելու հետ կապված՝ հարկ է անդրադառնալ խնդրառարկա վարչական իրավախախտման շրջանակների, ինչպես նաև տրանսպորտային միջոցները Ոստիկանության կողմից բերման ենթարկելու դեպքերի օրենսդրական կարգավորումներին:

Այսպես, ՎԻՎՕ 180-րդ հոդվածը վարչական պատասխանատվություն է սահմանում լուրջությունը խախտելու համար, ինչը, ի թիվս այլնի, դրսևորվում է գիշերային ժամանակ (ժամը 23.00-ից մինչև 7.00-ն) ձայնային ազդանշաններ տալով:

ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» N 955-ն որոշման՝ արգելող նշանների ցանկում ամրագրված է «Ձայնային ազդանշան տալն արգելվում է» նշանը, որի համաձայն՝ *արգելվում է օգտվել ձայնային ազդանշաններից՝ բացի այն դեպքերից, երբ այն տրվում է ճանապարհատրանսպորտային պատահար կանխելու համար*: Ձայնային ազդանշանի կիրառման կանոնները խախտելը ՎԻՎՕ 124-րդ հոդվածի 19-րդ մասի ուժով վարչական պատասխանատվության է հանգեցնում:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ճանապարհային երթևեկության անվտանգությանն սպառնալու կամ ճանապարհային երթևեկության կանոնները խախտվելու դեպքերում (...) ոստիկանությունն, ի թիվս այլնի, իրավունք ունի՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով արգելել տրանսպորտային միջոցների և դրանց կցորդների շահագործումը:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածում թվարկվում են տրանսպորտային միջոցի վարորդի կողմից թույլ տված այն իրավախախտումները, որոնց դեպքում տրանսպորտային միջոցի երթևեկությունն արգելվում է: Իրավախախտումների, որոնց պարագայում Ոստիկանության ծառայողը պարտավոր է տրանսպորտային միջոցը բերման ենթարկել, թվարկման տրամաբանությամբ ստացվում է, որ այդ իրավախախտումները հիմնականում կա՛մ կապված են վարորդի՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունքի բացակայության կամ դրա չհավաստման հետ, կա՛մ տրանսպորտային միջոցի տեխնիկական բնութագրիչների կամ կահավորանքի՝ օրենքի պահանջներին անհամապատասխանության հետ: Այլ կերպ ասած, վարչական իրավախախտումները վերաբերում իրենց բնույթով այնպիսի հանգամանքների, որոնք բացառում են իրավախախտի կողմից տրանսպորտային միջոցի հետագա շահագործումը:

Դրանից բացի, օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ *երթևեկության մասնակիցների համար խոչընդոտ ստեղծող կամ կայանումն արգելված տեղերում կանգնած տրանսպորտային միջոցները տեղափոխվում են հատուկ տարածք, եթե վարորդը տեղում չէ կամ հրաժարվում է վերացնել խոչընդոտը կամ կայանման կանոնների խախտումը*:

Որպես այդ արգելքի ապահովմանն ուղղված միջոց՝ օրենքի 18.1-րդ հոդվածն ամրագրում է տրանսպորտային միջոցները հատուկ տարածք բերման ենթարկելու և արգելանքի տակ դնելու՝ Ոստիկանության իրավասությունը: Ընդ որում, *բերման ենթարկումը, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն, տրանսպորտային միջոցի օգտագործումը դադարեցնելու ժամանակավոր հարկադիր միջոց է, որը ենթադրում է վերջինիս տեղափոխումը հատուկ տարածք այն դեպքում, երբ անհնար է վերացնել վարչական իրավախախտման հայտնաբերման տեղում արգելանքի տակ դնելու պատճառը*:

Ինչ վերաբերում է տրանսպորտային միջոցի գտնվելու վայրի մասին տեղեկացնելու խնդրին՝ օրենքի 18.1-րդ հոդվածի 5-րդ մասն ամրագրում է, որ տրանսպորտային միջոցի

վարորդի բացակայության դեպքում այն հատուկ տարածք բերման ենթարկելու մասին բերման ենթարկողն անհապաղ հայտնում է ոստիկանության՝ տվյալ տարածքը սպասարկող ստորաբաժանում: *Ստորաբաժանումը տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը կամ նրա ներկայացուցչին տեղեկացնում է տրանսպորտային միջոցի գտնվելու վայրի մասին:*

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Տրանսպորտային միջոցը հատուկ տարածք բերման ենթարկելու և արգելանքի տակ դնելու վերաբերյալ իրավասու պաշտոնատար անձը կազմում է արձանագրություն, որի ձևը սահմանվում է ոստիկանության պետի հրամանով<sup>283</sup>:

Արձանագրության մեջ նշվում է բերման ենթարկված տրանսպորտային միջոցի մեջ գտնվող իրերի ցուցակը: Արձանագրության կրկնօրինակը հանձնվում է այն անձին, որի նկատմամբ կիրառվել է հարկադրանքի միջոցը, իսկ հատուկ տարածք տրանսպորտային միջոցի տեղափոխման դեպքում՝ նաև հատուկ տարածքում տրանսպորտային միջոցի պահպանման համար պատասխանատու անձին:»:

Հարկ է նկատել, որ *ապրիլյան հավաքների օրերին վարորդին տեղեկացնելու պարտականության չկատարումը խնդրահարույց է ոչ միայն վարչական իրավախախտման վարույթին անձին պատշաճ ներգրավվածության և սեփականության իրավունքի լիարժեք իրացման տեսանկյունից, այլև կարող է առաջ բերել տրանսպորտային միջոցի շահագործման համար պատասխանատու անձի համար որոշակի ֆինանսական հետևանքներ՝ կապված տրանսպորտային միջոցի պահպանման ծախսերը մարելու պարտականության հետ:*

Մեջբերված օրենսդրական կարգավորումների համակարգային դիտարկման արդյունքներով ստացվում է, որ՝

1. ազդանշան տալը՝ որպես վարչական իրավախախտում, կարող է դրսևորվել կա՛մ արգելող նշանի առկայության դեպքում՝ դրա պահանջը խախտելով, կա՛մ գիշերային ժամանակ լուրջությունը խախտելով.

2. տրանսպորտային միջոցները պահպանվող հատուկ տարածք տեղափոխելու փաստական հիմքը վարորդի կատարած վարչական իրավախախտումն է, իսկ վարորդի արարքում զանցակազմի բացակայությունը, ըստ էության, բացառում է տրանսպորտային միջոցի տարհանումը.

3. տրանսպորտային միջոցներն արգելանքի տակ դնելու Ոստիկանության իրավասությունը սահմանափակվում է միայն որոշակի՝ օրենքում թվարկված վարչական իրավախախտումներով և այն էլ արգելանքի պատճառները տեղում վերացնելու անհնարինության դեպքում: Չայնային ազդանշանի կիրառման կանոնների խախտումն այդ իրավախախտումների ցանկում ամրագրված չէ.

4. տրանսպորտային միջոցն արգելանքի տակ դնելու վերաբերյալ պետք է տեղեկացվի այն անձը, որի նկատմամբ կիրառվել է հարկադրանքի միջոցը, իսկ վերջինիս բացակայությամբ խնդրո առարկա միջոցի կիրառման դեպքում՝ տրանսպորտային միջոցի սեփականատերը կամ նրա ներկայացուցիչը:

<sup>283</sup> ՀՀ ոստիկանության պետի 2016 թվականի մայիսի 10-ի «Տրանսպորտային միջոցը հատուկ տարածք բերման ենթարկելու և արգելանքի տակ դնելու վերաբերյալ արձանագրության ձևը և հատուկ տարածք բերման ենթարկված և արգելանքի տակ դրված տրանսպորտային միջոցների հաշվառման կարգը սահմանելու մասին» թիվ 5-Ն հրամանը

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=106007>

**11. Հավաքների ազատության իրավունքի իրավաչափ շրջանակները և այլոց իրավունքների հետ հավասարակշռման անհրաժեշտությունը**

Հավաքների ազատության իրավունքը ժողովրդավարական հասարակությունում հիմնարար իրավունք է և այդպիսի հասարակության հիմնաքարերից է: Այն հիմնարար արժեք է: Հավաքների ազատության իրավունքի պաշտպանությունն էական նշանակություն ունի հանդուրժող և բազմախոհ հասարակություն ստեղծելու համար, որտեղ տարբեր հայացքներ ու մտադրություններ ունեցող մարդիկ, այդ թվում՝ փոքրամասնություն կազմող խմբերը կարող են խաղաղ գոյակցել: ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է, որ յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներին ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունք:

Միննույն ժամանակ, հավաքների ազատության իրավունքի իրացումը ենթադրում է, որ հավաքի ընթացքում պետք է գործել այլոց հիմնական իրավունքների և ազատությունների անհամաչափ սահմանափակումներ թույլ չտալու սկզբունքով: Այսպես,

1. Երեխայի՝ հավաքների մասնակցության իրավունքը. «Երեխայի լավագույն շահ» և «գիտակցված մասնակցություն» իրավական կատեգորիաները՝ որպես իրավունքների հավասարակշռման ելակետեր

2018 թվականի ապրիլյան հավաքների ընթացքում արձանագրված հարցերից են երեխաներին հավաքների մասնակցության և կրթության իրավունքների ճիշտ հավասարակշռումն ու երաշխավորումը: Այսպես, հավաքների օրերին Մարդու իրավունքների պաշտպանին են հասցեագրվել դպրոցների տնօրենների և ուսուցիչների ահազանգեր, որ տարբեր անձինք շրջում են դպրոցներով, պահանջում են ապահովել իրենց մուտքը դպրոցներ՝ դասերին մասնակցող երեխաներին քաղաքական բնույթ կրող հավաքներին ու երթերին ներգրավելու նպատակով: Ըստ ահազանգերի՝ այդ անձինք բարձրաձայն կոչերի, այդ թվում՝ բարձրախոսով վանկարկումների միջոցով երեխաներին դուրս են հրավիրում դպրոցներից, ուսուցչական կազմերի ու տնօրենների հասցեին հնչեցնում վիրավորական արտահայտություններ և երեխաներին կոչ անում չենթարկվել դասերին մասնակցելու ուսուցիչների կամ տնօրենների պահանջներին: Ստացած ահազանգերից մեկով էլ հանրակրթական դպրոցի ուսուցիչը տեղեկացրել է, որ դպրոց այցելած անձինք այդ պահին բազմազան գտնվող երեխաներին փորձել են տանել իրենց հետ: Այս տեղեկությունները վերաբերել են ինչպես հիմնական, այնպես էլ ավագ դպրոցներին:

Այդ օրերին Պաշտպանին են հասցեագրվել բողոքներ ու ահազանգեր նաև ծնողների կողմից, ովքեր մտահոգված են եղել իրենց երեխաների անվտանգությամբ, ինչպես նաև դասապրոցեսների խաթարմամբ: Բողոքների ուսումնասիրությամբ պարզվել էր, որ այս մտավախություններից ելնելով՝ ծնողները նախընտրում էին երեխաներին այս օրերին դպրոց չտանել կամ չուղարկել: Ավելին, այդ օրերին հավաքի մասնակիցների և Ոստիկանության միջև առանձին դեպքերում տեղի ունեցող հրահրումներն ու Ոստիկանության կողմից անձանց մեկուսացնելու կամ բերման ենթարկելու դեպքերն առավել ամրապնդում էին ծնողների մտահոգությունները, որոնց առջև երեխաների անվտանգությունն ապահովելու պարտականություն է կրում պետությունը՝ ի դեմս ուսումնական հաստատության տնօրինության և ուսուցչական կազմի:

Ստեղծված իրավիճակում արձանագրվել են խնդրահարույց իրավիճակներ, երբ երեխաների անվտանգությունն ապահովելու նպատակով ոստիկանությունը շրջափակել էր դպրոցների տարածքները՝ արգելելով ելումուտը, ինչը, սակայն, լրացուցիչ խոչընդոտներ էր ստեղծել հենց ծնողների համար, ովքեր չէին կարողացել վերցնել իրենց երեխաներին:

Ստացվել են նաև ահազանգեր այն մասին, որ Ոստիկանության ծառայողներն առանց մասնավարժի կամ հոգեբանի մասնակցության կամ ներկայության հարցման են ենթարկել երեխաներին՝ հավաքների նրանց մասնակցելու հարցում նպաստողների կամ հրահրողների վերաբերյալ: Ոստիկանության ներկայացուցիչների կողմից այսպիսի ցանկացած դեպք անթույլատրելի է, քանի որ դա չի բխում նրանց լիազորություններից:

Նման խիստ անհանգստացնող դեպքերի շարունակականության հնարավոր հետևանքների գիտակցմամբ և հաշվի առնելով, որ խոսքը վերաբերում է երեխաների իրավունքներին՝ բողոք ներկայացրած անձանց, համապատասխան դպրոցների ու Կրթության և գիտության նախարարության իրավասու ներկայացուցիչների հետ անմիջական քննարկումներով Մարդու իրավունքների պաշտպանի կողմից այդ օրերին անհապաղ քայլեր են ձեռնարկվել յուրաքանչյուր իրավիճակի հանգամանքները պարզելու ու երեխաների շահերի պաշտպանությանը նպաստելու ուղղությամբ:

Ավելին, երեխայի հավաքների մասնակցության իրավունքի բովանդակության իրավական ընկալման հետ կապված ոչ միանշանակ մեկնաբանությունները պայմանավորեցին նաև երեխայի իրավունքների, դրանց իրացման պայմանների և երեխայի անվտանգության համար պատասխանատու անձանց գործողությունների իրավաչափության պայմանները նախանշելու անհրաժեշտությունը: Երեխաների՝ հավաքներին մասնակցության շուրջ ստեղծված իրավիճակը ցույց տվեց, որ իսկապես առկա է երեխաների իրավունքների իրացման, այդ հարցում ծնողների, երեխաների անվտանգության կամ կրթական հաստատության պատասխանատու ներկայացուցիչների պարտականությունների և պատասխանատվության ճիշտ ընկալման խնդիր:

Այսպիսով, ծնողների արդարացի մտահոգությունների, ինչպես նաև ստեղծված իրավիճակի վերաբերյալ ոչ միանշանակ հասարակական ընկալման հաշվառմամբ և քաջ գիտակցելով երեխայի իրավունքների առաջնահերթությունը՝ Մարդու իրավունքների պաշտպանն առաջ քաշեց երեխայի իրավունքների երաշխավորման միջազգային իրավական մոտեցումներից բխող իրավական որոշակի կանոններ ու պայմաններ:

Ըստ ՄԱԿ-ի միջազգային մարմինների իրավական չափանիշների՝ երեխաներն ունեն խաղաղ, այդ թվում՝ քաղաքական բնույթ կրող հավաքներին գիտակցված մասնակցելու իրավունք:

Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան թեև երեխայի իրավունքների երաշխավորման նվազագույն տարիք չի նախատեսում, սակայն ամրագրում է այսպես կոչված «երեխայի զարգացող հնարավորությունների» գաղափարը, երբ երեխայի զարգացմանը զուգահեռ մեծանում է սեփական իրավունքներն ինքնուրույն իրացնելու վերջինիս կարողությունը: Մինևույն ժամանակ, երեխաների իրավունքների երաշխավորման հարցում առանցքային է համարվում ընտանիքի և ծնողների դերակատարությունը: Կոնվենցիոն մակարդակում ընտանիքը հռչակվում է իբրև հասարակության հիմնարար խմբային միավոր և երեխայի աճի ու բարեկեցության բնական միջավայր, ինչպես նաև վերջինիս դերակատարությունն իր իրավունքներն իրականացնելիս երեխային ուղղություն տալու հարցում:

Երեխայի հիմնարար իրավունքները, այդ թվում՝ խաղաղ հավաքներին մասնակցության իրավունքը երաշխավորող ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության ուղենշային սկզբունքներից է նաև երեխայի մասնակցության իրավունքը: Այն առարկայանում է որոշումների կայացման գործընթացներին երեխայի մասնակցության և դրանց վրա ներազդելու իրավունքի ապահովմամբ՝ լինի դա ընտանիքում, դպրոցում, թե հասարակության մեջ: Այս սկզբունքն ամրապնդում է երեխայի՝ հասարակության լիարժեք անդամ լինելու իրավունքը, ով ունի իրեն վերաբերող ցանկացած հարցի առնչությամբ կարծիքն արտահայտելու, այն լսելի դարձնելու և պատշաճ ուշադրության իրավունք՝ իր

տարիքին և հասունությանը համապատասխան: Երեխայի մասնակցության սկզբունքը հռչակում է վերջինիս ներուժը՝ որոշումների կայացմանը նպաստելու, իր հեռանկարները կիսելու և իբրև քաղաքացի ու փոփոխությունների դերակատար մասնակցելու առումներով:

Միևնույն ժամանակ, ըստ միջազգային իրավական մոտեցումների՝ երեխայի մասնակցությունն իսկական չէ (non-genuine participation), եթե վերջինս հնարավորություն չունի հասկանալու իր արտահայտած կարծիքի ազդեցությունն ու հետևանքները, ինչպես նաև երբ երեխայի մտահոգություններն ու առաջարկությունները քննության առարկա չեն դառնում<sup>284</sup>:

Եվ այս առումով, երեխաների իրավունքները երաշխավորող միջազգային փաստաթղթերը կարևորում են երեխայի տեղեկացված մասնակցությունը, երբ վերջինս, մասնավորապես, գիտակցում է որոշակի գործընթացներին իր մասնակցության նպատակը, ում կողմից է կայացվել իր մասնակցության վերաբերյալ որոշումը և ինչու, իր դերակատարությունը բովանդակային, այլ ոչ թե ձևական առումով, և ի վերջո տեղեկացված լինելու պայմաններում վերջինիս կամահայտնությունը:

Միևնույն ժամանակ, նույն միջազգային փաստաթղթերն անընդունելի են համարում երեխաների՝ որոշակի գործընթացներին մասնակցության այնպիսի դրսևորումներ, երբ երեխան մասնակից է դառնում մի գործընթացի, որի էությունն ու նպատակը չի գիտակցում, կամ երբ երեխաները մեծահասակների կողմից ներգրավվում են ոչ թե այն պատճառով, որ խնդիրն առնչվում է նրանց շահերին, այլ այդպիսով ապահովվում է խնդրի ցուցադրականությունը (միջազգային իրավական տերմինաբանությամբ նման ոչ իրավաչափ դրսևորումները բնորոշվում են «մանիպուլյացիա», «դեկորացիա» և «տոկենիզմ» անվանումներով)<sup>285</sup>:

«Մեյվ դը չիլդրենի» մշակած՝ երեխաների մասնակցության գործնական չափանիշների շարքում ամրագրված է **երեխայի մասնակցության վերաբերելիության և կամավորության չափանիշը** (Չափանիշ 2): Ըստ դրա՝ երեխաները մասնակցում են գործընթացներին և բարձրացնում հարցեր, որոնք ուղղակի կամ անուղղակի իրենց առնչվում են, և մասնակցության հարցում ընտրության հնարավորություն ունեն: Այս չափանիշը նպատակ է հետապնդում ապահովելու, որ երեխաների մասնակցությունը հիմնված լինի վերջիններիս անձնական գիտելիքների՝ սեփական կյանքի, միջավայրի և իրենց առնչվող հարցերի վերաբերյալ երեխաների ունեցած տեղեկությունների և աշխարհայացքի վրա:

Բացի այդ, նույն փաստաթղթում նախանշվում են երեխայի մասնակցության չափանիշի ապահովման նախապայմանները, որոնք են, մասնավորապես, երեխայի կողմից գործընթացին մասնակցության որոշում կայացնելու համար բավարար ժամանակ և հնարավորություն՝ արտահայտելու իր անձնական և իրազեկված համաձայնությունը, երեխաների այլ պարտականությունների (օրինակ՝ տանը, դպրոցում կամ աշխատավայրում) հաշվառում ու համատեղում և այլն<sup>286</sup>:

Այսպիսով, իբրև ելակետային իրավական արժեքներ՝ մի կողմից պետք է հաշվի առնվեն երեխայի իրավունքների՝ իր տարիքին ու հասունությանը համապատասխան ծավալով երաշխավորման պահանջը, մյուս դեպքում՝ երեխայի համար անվտանգ միջավայրի ապահովումն ու այդ հարցում ծնողի, ինչպես նաև պետության ու հասարակության պարտականությունները:

<sup>284</sup> Տե՛ս <https://www.unicef.org/crc/files/Right-to-Participation.pdf>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>285</sup> Տե՛ս «Երեխաների մասնակցությունը. տոկենիզմից մինչ քաղաքացիություն» էջ 9,

[https://www.unicef-irc.org/publications/pdf/childrens\\_participation.pdf](https://www.unicef-irc.org/publications/pdf/childrens_participation.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>286</sup> Տե՛ս [https://www.unicef.org/publications/files/A\\_Human\\_Rights\\_Based\\_Approach\\_to\\_Education\\_for\\_All.pdf](https://www.unicef.org/publications/files/A_Human_Rights_Based_Approach_to_Education_for_All.pdf), էջեր 131-133:

Երեխայի՝ իբրև անհատի իրավունքների միջազգայնորեն ճանաչումն ու երաշխավորումը նպատակ ունեն սպահովելու երեխայի մտավոր, ֆիզիկական ու բարոյական լիարժեք զարգացումը: Հետևաբար, երեխայի իրավունքների իրացման բարենպաստ պայմանների սպահովումը՝ իբրև պետության առաջնահերթ պարտականություն, պետք է նպատակ ունենա երաշխավորելու երեխայի անհատականության լիարժեք զարգացումը:

Երեխայի իրավունքների երաշխավորման ընդունելի մոտեցումների ու սկզբունքների հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը հանրակրթական դպրոցներում այդ օրերին ծավալվող գործընթացների առնչությամբ արձանագրում է, որ.

- *երեխայի իրավունքներն առաջնահերթ են ցանկացած իրավիճակում. որևէ իրավունքի կամ ազատության իրականացում չի կարող իբրև արդարացում վկայակոչվել, եթե այն սպառնում է երեխայի անվտանգությանն ու պաշտպանվածությանը,*

- *պետության, հասարակության և յուրաքանչյուր չափահաս քաղաքացու պարտականությունն է զերծ պահել երեխաներին ցանկացած գործընթացի մեջ ներքաշվելուց՝ առանց վերջիններիս՝ գործընթացին մասնակցության նպատակի և դրա հնարավոր հետևանքների բավարար գիտակցման: Առավել ևս խնդրահարույց է, երբ դպրոցահասակ երեխաները թիրախավորվում են քաղաքական բնույթ կրող գործընթացներին մասնակցելու համար,*

- *երեխայի հավաքների ազատության իրավունքի իրացման հարցը գնահատելիս պարտադիր է երեխայի լավագույն շահով դեկլարվելը՝ հաշվի առնելով կոնկրետ իրավիճակի հանգամանքները: Երեխայի իրավունքների իրացման անհրաժեշտ նախապայմաններն են՝ երեխայի տեղեկացված մասնակցության սկզբունքը, իր տարիքին և հասունությանը համապատասխան իրավունքների իրացումը, ծնողների և օրենքով երեխայի համար պատասխանատու անձանց կարևոր դերակատարությունն ու պատասխանատվությունն իր իրավունքներն իրականացնելիս երեխային ուղղություն տալու հարցում և այլն,*

- *երեխայի իրավունքների իրացումը որևէ դեպքում չի կարող ինքնանպատակ լինել. այն պետք է ուղղված լինի հենց երեխայի՝ հասարակական կյանքին լիարժեք ներգրավվածության սպահովմանը,*

- *դպրոցում գտնվող երեխաների համար պատասխանատու անձանց՝ տնօրենի և ուսուցչական կազմի, ինչպես նաև ոստիկանության ներկայացուցիչների գործողությունները պետք է բացարձակապես ուղղված լինեն երեխաների անվտանգությունն սպահովելուն. նրանք առաջնահերթ պատասխանատու են երեխաներին իրենց վստահած ծնողների առջև,*

- *խաղաղ հավաքներին մասնակցության իրավունքի իրացում չէ, երբ դպրոցներ ինքնակամ մուտք գործելու փորձերով երեխաներին քաղաքական բնույթ կրող հավաքի կամ երթի ներգրավելու նպատակով նրանց բաց թողնելու պահանջներ են ներկայացվում առանց ծնողների տեղեկացվածության ու համաձայնության, ինչպես նաև առանց հաշվի առնելու տնօրենների ու ուսուցիչների պահանջները,*

- *միննույն ժամանակ, խոսք չի կարող լինել բավարար տարիքային հասունություն և գիտակցված կամահայտնություն ցուցաբերած անչափահասների հավաքների ազատության իրավունքի սահմանափակման մասին: Խնդիրն այլ է, երբ այդպիսի գործընթացներին մասնակցության կոչերը հնչում են հանրակրթական դպրոցներում՝ դասադուր իրականացնելու քարոզով, ինչպես նաև մասնակից դարձնելով ցածր տարիքի դպրոցահասակ երեխաների: Նման պայմաններում առաջնահերթ է դառնում երեխաների անվտանգության սպահովման ու նրանց պաշտպանվածության, բնականոն կրթական պրոցեսի սպահովման հարցը:*

Երեխայի իրավունքների իրացման՝ միջազգայնորեն ամրագրված երաշխիքներն ու պայմանները պետք է ապահովվեն յուրաքանչյուրի կողմից՝ անկախ նրանից, թե անձը պետության անունից հանդես եկող պաշտոնատար անձ է, թե ոչ:

Ուստի, Մարդու իրավունքների պաշտպանի գնահատմամբ՝ պետք է գործնականում բացառվեն երեխաներին հավաքներին ու երթերին ներգրավելու ոչ իրավաչափ բոլոր դրսևորումները:

## 2. Ճանապարհներ փակելն ու շենքեր արգելափակելը

«Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հավաքների ազատությունը կարող է սահմանափակվել միայն այն դեպքում, երբ ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության և հասարակական կարգի պահպանումը, հանցագործությունների կանխումը, հանրության առողջության ու բարոյականության (այսուհետ՝ հանրության շահեր), այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը (այսուհետ՝ այլ անձանց հիմնական իրավունքներ) գերակայում են հավաքի ազատության նկատմամբ:

2. Արգելվում է հավաքների ազատության օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով:»:

Օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ իրազեկման նպատակը պետության կողմից հավաքի բնականոն և խաղաղ ընթացքն ապահովելու, ինչպես նաև այլ անձանց հիմնական իրավունքների ու հանրության շահերի պաշտպանության համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելն է:

Միննույն ժամանակ, օրենքի 33-րդ հոդվածի ուժով Ոստիկանության կողմից հավաքը կարող է դադարեցվել միայն այն դեպքում, եթե այլ կերպ հնարավոր չէ կանխել այլ անձանց հիմնական իրավունքների կամ հանրության շահերի անհամաչափ սահմանափակումը, կամ երբ հավաքի անցկացման վայրում սկսվել են զանգվածային անկարգություններ:

Ստացվում է, որ իրազեկումը, որպես այդպիսին, ոչ թե հավաքների ազատության իրավունքի իրացման նախապայման է, այլ հավաքների բնականոն ընթացքի ապահովմանն ուղղված ընթացակարգ:

Օրենքը սահմանում է, որ նույնիսկ եթե հավաքն անցկացվում է առանց իրազեկման և այդ իմաստով հավաքն անօրինական է, ոստիկանությունը պարտավոր է ոչ թե ցրել հավաքը, այլ աջակցել դրա իրականացմանը, եթե հավաքը խաղաղ է: **Այսինքն՝ Օրենքը գերապատվություն է տալիս հավաքների ազատության իրավունքը պաշտպանելու կարևորությունը նույնիսկ այն դեպքում, երբ հավաքն անօրինական է և պատճառում կամ սպառնում է պատճառել որոշ անհարմարություններ ու անհանգստություններ այլոց կյանքին:** Ամենակարևոր պայմանն այն է, որ հավաքը կազմակերպված լինի խաղաղ մտադրությամբ և անցկացվի խաղաղ կերպով: Քանի դեռ հավաքը խաղաղ է, պետական մարմինները պարտավոր են գործադրել բոլոր ջանքերը, որպեսզի հավաքի մասնակիցները շարունակեն իրականացնել իրենց իրավունքը: Այդ իմաստով օրենքը հստակորեն սահմանում է նաև իրավունքի չարաշահման դրույթը՝ բռնությունը, ատելության խոսքը և ռասիզմը հստակորեն սահմանված են որպես հավաքների ազատության իրականացման բացարձակ արգելք:

Հավաքների ազատության իրավունքի իրավաչափ շրջանակների և այլոց ազատ տեղաշարժման իրավունքի անխոչընդոտ իրացման հարաբերակցության հարցի կապակցությամբ Եվրոպական դատարանի իրավաբանությամբ որոշակի իրավական չափանիշներ են առաջ քաշվել: Այսպես.

1. Հավաքների ազատության իրավունքը ժողովրդավարական հասարակությունում հիմնարար իրավունք է, որը խոսքի ազատության հետ միասին այդպիսի հասարակության հիմնասյուններից է:

2. Հավաքների ազատության նպատակներից է ստեղծել հանրային բանավեճի և բողոքի ազատ արտահայտման հարթակ՝ երաշխավորելով անձնական կարծիքի արտահայտումը<sup>287</sup>:

3. Պետությունը պարտավորություն է կրում ոչ միայն երաշխավորելու հավաքների ազատության իրավունքը, այլև ձեռնպահ մնալու այդ իրավունքին անուղղակի սահմանափակումների անհիմն կիրառումից<sup>288</sup>:

4. Հանրային վայրերում հավաքները կարող են որոշակիորեն խաթարել կյանքի, այդ թվում՝ ճանապարհային երթևեկության բնականոն ընթացքը: Այն դեպքում, երբ հավաքի մասնակիցների կողմից բռնի գործողություններ չեն իրականացվում, իշխանությունները պարտավոր են ցուցաբերել հանդուրժողականություն խաղաղ հավաքների կոնվենցիոն իրավունքի իրացման նկատմամբ, քանի դեռ այդ իրավունքի ողջ էությունը չի կորսվել:

5. Ինքնաբուխ հավաք անցկացնելու իրավունքը կարող է գերակայել հանրային հավաքների վերաբերյալ նախնական ծանուցում տալու պարտականությանը միայն առանձնահատուկ հանգամանքների ներքո, մասնավորապես, երբ հանրահավաքի եղանակով անհրաժեշտ է անմիջապես արձագանքել ընթացքի մեջ գտնվող իրադարձությանը: Ավելին, ընդհանուր կանոնից նման շեղումը կարող է արդարացված լինել, եթե հապաղումը կարող է նման արձագանքը դարձնել ժամանակավրեպ: Նման պայմաններում բռնի գործողություններից զերծ և խաղաղ հավաքը ցրելը՝ զուտ իրազեկման բացակայության հիմքով, առաջ է բերում հավաքների ազատության իրավունքին ոչ համաչափ միջամտության խնդիր<sup>289</sup>:

6. Միևնույն ժամանակ, վերը նշված սկզբունքը չի կարող տարածական կիրառվել, որ նախնական իրազեկման բացակայությունն առհասարակ չդիտվի իբրև ամբոխը ցրելու իրավաչափ հիմք:

Նախնական իրազեկումը նպատակ ունի ոչ միայն ներդաշնակեցնելու մի կողմից՝ հավաքների ազատության իրավունքը, մյուս կողմից՝ այլոց իրավունքներն ու օրինական շահերը (ներառյալ ազատ տեղաշարժվելու իրավունքը), այլև կանխարգելելու անկարգություններն ու հանցագործությունները: Երկու հակադիր շահերի հավասարակշռման նպատակից ելնելով՝ նախնական վարչական ընթացակարգերի ամրագրումը ԵՄ անդամ պետություններում ընդունված պրակտիկա է: Նման ընթացակարգը չի հակասում Կոնվենցիայի 11-րդ հոդվածում ամրագրված սկզբունքներին, քանի դեռ այն խաղաղ հավաքների ազատությանը թաքնված խոչընդոտ չի պարունակում:

7. Եվա Մոլնարն ընդդեմ Հունգարիայի գործով հավաքները ցրելուն ուղղված գործողությունները Դատարանի կողմից ճանաչվել են իրավաչափ՝ համակցության մեջ գնահատելով այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝ հավաքի մասին նախապես իրազեկված չլինելու պայմաններում Ոստիկանության կողմից դրսևորած հանդուրժողականությունը, հասարակական կարգի և երթևեկության խաթարումը, հավաքի մասնակիցների կողմից իրենց իրավունքը մի քանի ժամ շարունակ իրացնելու հնարավորությունը և ի սկզբանե հավաքը չցրելը<sup>290</sup>:

<sup>287</sup> Տե՛ս Էզելինն ընդդեմ Ֆրանսիայի գործով 1991 թվականի ապրիլի 26-ի վճիռը, գանգատ թիվ 11800/85, կետ 37:

<sup>288</sup> Տե՛ս Բուդահազին ընդդեմ Հունգարիայի գործով (Budaházy v Hungary) վճիռը, գանգատ թիվ 41479/10, կետեր 33-34:

<sup>289</sup> Տե՛ս Բուկտան և այլք ընդդեմ Հունգարիայի (Bukta and Others v Hungary) գործով 2007 թվականի հուլիսի 17-ի վճիռը, գանգատ թիվ 25691/04, կետեր 36-38:

<sup>290</sup> Տե՛ս Եվա Մոլնարն ընդդեմ Հունգարիայի (Éva Molnár v. Hungary) գործով 2008 թվականի հոկտեմբերի 7-ի վճիռը, գանգատ թիվ 10346/05, կետ 37:



8. Դրանով հանդերձ, պետությունը՝ իբրև ժողովրդավարական գործընթացի մասնակից, իրավասու է կիրառել հավաքների ազատության իրավունքի իրավաչափ սահմանափակումներ՝ պահանջելով հավաքի մասնակիցներից պահպանել գործընթացի գործող իրավակարգավորումները:

9. Խաղաղ հավաքներին մասնակցելու ազատությունը չի ներառում անձի ընտրության հնարավորությունը՝ այդ առիթով իրականացնելու դատապարտելի գործողություններ<sup>291</sup>:

10. Մեկ այլ դեպքում հավաքների ազատության իրավունքին միջամտության համաչափությունը գնահատելիս Դատարանը հիմնվել է ազգային դատարանի իրավական գնահատականի վրա, ըստ որի՝ դիմումատուն (հավաքի կազմակերպիչը) պատճառել է շրջափակման հետ կապված ավելի մեծ խոչընդոտներ, քան սովորաբար կառաջանար խաղաղ հավաքների իրավունքն իրացնելիս: Ի համեմատ հավաքի միջոցով քաղաքական մտահոգությունն արտահայտելու մտադրության՝ դիմումատուի վարքագիծը, ըստ Դատարանի գնահատման, եղել է անհամաչափ և ճանապարհային երթևեկության մասնակիցներին զգալի անհարմարություն պատճառել: Միաժամանակ, անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը դիտարկելիս կարևորել է, որ անձի դատապարտման հիմքում ընկած է եղել ոչ թե հավաքներին վերջինիս մասնակցությունը, այլ երթևեկության խաթարումը: Արդյունքում, Դատարանը համաչափ է գնահատել անձի նկատմամբ պատասխանատվության միջոցի կիրառումը՝ հավասարակշռելով անկարգությունը կանխելու հանրային շահն ու հավաքների անցկացման կոնկրետ եղանակի ընտրության դիմումատուի շահը<sup>292</sup>:

11. Դրան հակառակ, Պատյին և այլք ընդդեմ Հունգարիայի գործով վճռում Եվրոպական դատարանը երթևեկության խաթարման վտանգը կանխելու նպատակով հավաքների ազատության իրավունքին միջամտությունը ոչ իրավաչափ է համարել՝ գնահատման առարկա դարձնելով հավաքի մասնակիցների փոքրաթվությունը, մայթերի լայն լինելը, հավաքի անցկացման և ավտոբուսների աշխատանքային ժամանակի չհամընկնումը<sup>293</sup>:

2018 թվականի ապրիլյան հավաքների շուրջօրյա մշտադիտարկումը վկայում էր, որ այդ միջոցառումները կազմակերպվում էին որոշակի տրամաբանությամբ և օրակարգով, ինչով պայմանավորված էին ապրիլյան հավաքների՝ որպես մարդու սահմանադրական իրավունքի իրացման որոշակի առանձնահատկությունները՝ թե՛ հավաքների նպատակի, թե՛ հավաքների անցկացման վայրի, թե՛ մասնակիցների շրջանակի, թե՛ շենքերի և փողոցների շրջափակման ընտրված մարտավարության առումով:

2018 թվականի ապրիլյան հավաքների առաջին իսկ օրերից հավաքի մասնակիցները սկսեցին փակել Երևան քաղաքի փողոցները: Նիկոլ Փաշինյանը, որպես երթի կազմակերպիչ, երթի մասնակիցներին ուղղորդեց Երևան քաղաքի Ֆրանսիայի հրապարակ՝ դադարեցնելով հրապարակին հարող ճանապարհների երթևեկությունը: Ապրիլի 13-ին Ոստիկանության հայտարարության համաձայն՝ Ֆրանսիայի հրապարակում հատվող փողոցները մայրաքաղաքի համար կենսական նշանակության ճանապարհներ են, որոնցով երթևեկող ՀՀ քաղաքացիների համար արդեն իսկ առաջացել են տեղաշարժման սահմանափակումներ և անհարմարություններ<sup>294</sup>:

Ապրիլի 13-ին Նիկոլ Փաշինյանի կողմից հայտարարվեց, որ քայլերի ընթացքում իրենք նախատեսում են թե՛ փողոցների, թե՛ շենքերի շրջափակում՝ նշելով, որ քաղաքացիներն

<sup>291</sup> Տե՛ս Բարրակոն ընդդեմ Ֆրանսիայի (Barraco v. France) գործով 2009 թվականի մարտի 5-ի վճիռը, գանգատ թիվ 31684/05, կետ 42:

<sup>292</sup> Տե՛ս Բուդահազին ընդդեմ Հունգարիայի (Budaházy v. Hungary) գործով վճիռը, գանգատ թիվ 41479/10, կետ 43:

<sup>293</sup> Տե՛ս Պատյին և այլք ընդդեմ Հունգարիայի (Patyi and Others v. Hungary) գործով 2008 թվականի հոկտեմբերի 7-ի վճիռը, գանգատ թիվ 5529/05, կետեր 40-42:

<sup>294</sup> Տե՛ս <http://www.armtimes.com/hy/article/135419>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

ունեն առանց զենքի՝ խաղաղ քաղաքացիական անհնազանդության իրավունք: Ընդ որում, հավաքների ընթացքում այդպիսի գործողությունները, ըստ հավաքի կազմակերպչի, պայմանավորված են քաղաքացիների ակտիվությամբ: Ապրիլի 13-ին քայլերը շարունակվեց դեպի Ազատության հրապարակ, որտեղ հավաքի մասնակիցները պատրաստվում էին գիշերել՝ չնայած Երևանի քաղաքապետարանի հավաքի ժամանակի, վայրի կամ եղանակի նկատմամբ սահմանափակումներ սահմանելու մասին որոշմանը<sup>295</sup>:

Այսպես, հավաքների անցկացման իրազեկման հետ կապված՝ Երևանի քաղաքապետարանի հայտարարության համաձայն՝ *2018 թվականի ապրիլի 13-18-ն ընկած ժամանակահատվածում հանրային հավաք և երթ անցկացնելու համար Նիկոլ Փաշինյանը և Վահագն Հովակիմյանը գրավոր իրազեկումներ են ներկայացրել Երևանի քաղաքապետարան, որոնց հիման վրա կայացվել են համապատասխան որոշումներ, սակայն հավաքը և երթը անցկացվել են իրազեկման պահանջների, այդ թվում՝ որոշումներում նշված սահմանափակումների խախտմամբ (հավաքները և երթերը անցկացվել են այլ վայրերում և փողոցներով, իսկ ապրիլի 19-ին անցկացվող հանրային հավաքի և երթի համար «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքին համապատասխան Երևանի քաղաքապետարան իրազեկում չի ներկայացվել, հավաք և երթ անցկացնելու վերաբերյալ ի գիտություն ընդունելու մասին որոշում չի կայացվել<sup>296</sup>:*

Փողոցները փակելու գործելաոճը շարունակվեց նաև հավաքների հաջորդ օրերին: Ապրիլի 14-ին Հանրային ռադիոյից Խանջյան փողոցով դեպի Արշակունյաց պողոտա երթով շարժված «Իմ քայլը» և «Մերժիր Մերժին» նախաձեռնության անդամներն ու նրանց աջակիցները փակեցին Արշակունյաց պողոտան: Կրկեսի և Մամուլի շենքի հարակից հատվածում Արշակունյաց պողոտան արգելափակած ընդդիմադիրների անունից Նիկոլ Փաշինյանը, ներողություն խնդրելով վարորդներից, կոչ արեց նրանց միանալ Ազատության հրապարակում կայանալիք հանրահավաքին: Մոտ 15 րոպե պողոտան փակ պահելուց հետո՝ ցուցարարներն այն բացեցին և շարժվեցին առաջ՝ դեպի Երևանի քաղաքապետարանի շենք<sup>297</sup>: Հավաքի կազմակերպիչներից Դավիթ Սանասարյանը կոչ արեց գործադուլ անել, միանալ հրապարակին՝ 1-2 օրվա ընթացքում առաջացնելով կոլապս<sup>298</sup>: Նույն օրը երեկոյան Նիկոլ Փաշինյանը կոչ արեց քաղաքացիներին գալ Ֆրանսիայի հրապարակ ու գիշերել այնտեղ, քանի որ միայն բազմամարդ Ֆրանսիայի հրապարակը կարող է լինել երաշխիքն այն բանի, որ ոստիկանությունը որևէ գործողություն չի անի<sup>299</sup>:

**Անչափ կարևոր էր, որ հավաքների օրերին կազմակերպիչների ու հատկապես Նիկոլ Փաշինյանի կողմից պարբերաբար հիշեցվում էր, որ դրանք պետք է կրեն բացառապես խաղաղ բնույթ, բոլոր գործողությունները լինելու են իրավունքի շրջաններում, առանց օրենքի խախտումների, խաղաղ քաղաքացիական անհնազանդության տարբերակով<sup>300</sup>:**

Ապրիլի 15-ին Նիկոլ Փաշինյանը հրապարակեց գործողությունների հստակ ծրագիրը, համաձայն որի՝ կաթվածահար կարվի Երևանի երթևեկությունը, կամուրջներից հնարավոր չի լինի անցուղարձ կատարել, մետրոպոլիտենը չի գործի, մարդիկ չեն ներկայանա աշխատանքի ու փոխարենը կշարժվեն դեպի Ազգային ժողովի շենք, որտեղ կայանալու է Մերժ Սարգսյանի պաշտոնական առաջադրումը<sup>301</sup>:

<sup>295</sup> Տե՛ս <https://factor.am/45970.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>296</sup> Տե՛ս <http://www.armtimes.com/hy/article/135782>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>297</sup> Տե՛ս <https://factor.am/46276.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>298</sup> Տե՛ս <https://factor.am/46309.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>299</sup> Տե՛ս <https://factor.am/46318.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>300</sup> Տե՛ս, օրինակ, <http://www.armtimes.com/hy/article/135459>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>301</sup> Տե՛ս <http://www.armtimes.com/hy/article/135459>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Ապրիլի 15-ի առավոտյան Նիկոլ Փաշինյանը հավաքի մասնակիցներին ներկայացրեց այն կոնկրետ գործողությունները, որոնք պետք է ուղղված լինեն Երևան քաղաքում երթևեկությունը պարալիզացնելուն և այլ անձանց ներգրավվելուն:

Ըստ հավաքի կազմակերպչի՝ հավաքի մասնակիցները պետք է արգելափակեն Երևան քաղաքի ծայրամասերը կենտրոնին միացնող կամուրջներն ու ճանապարհները՝ տրանսպորտային միջոցները հենց փողոցներում կանգնեցնելով և երթևեկության մյուս մասնակիցներին իրազեկելով հանրահավաքի մասին: Նույն կերպ, հավաքի կազմակերպիչը հորդորեց կանգնեցնել մետրոպոլիտենի աշխատանքը: Ընտրված մարտավարությունը նպատակ ուներ մի կողմից՝ համալրելու հավաքի մասնակիցների շարքերը, մյուս կողմից՝ հնարավորինս նվազեցնելու Ոստիկանության կողմից միջամտության և հավաքը ցրելու վտանգը: Հավաքի կազմակերպչի կողմից հնչեցին համատարած դասադուլի և գործադուլի հորդորներ<sup>302</sup>:

**Ապրիլյան հավաքների ընթացքում փողոցները փակելուն, տրանսպորտի երթևեկությունը կանգնեցնելուն ուղղված գործողություններն ինքնին ոչ թե հավաքների անցկացման անխուսափելի արդյունք էին, այլ նպատակաուղղված էին հենց հավաքների մասնակիցների շարունակական համալրմանը՝ ըստ էության հանդիսանալով օրակարգի հիմնական միջոցառում:**

Ապրիլի 16-ի դրությամբ Երևան քաղաքում հավաքի մասնակիցները փակել էին Արովյան-Խանջյան խաչմերուկը, «Հաղթանակ» կամուրջը, Մետրոպոլիտենի Գարեգին Նժդեհի կայարանը, Հերացի փողոցը, Կոմիտասի պողոտան, Թումանյան, Սարյան, Արցախի փողոցները, Մաշտոցի պողոտան՝ իր բոլոր ուղղություններով, Բաղրամյան, Արշակունյաց պողոտաները<sup>303</sup>: Գյումրիում ևս փակվել էր կենտրոնական փողոցներից մեկը, որպես աջակցություն Երևանում տեղի ունեցող զարգացումների<sup>304</sup>: Վանաձորում ևս Ուսանողները փակել էին Տիգրան-Մեծ-Նժդեհ կենտրոնական խաչմերուկը, կասեցրել երթևեկությունն այդ ուղղությամբ ու կոչ էին անում միանալ բողոքին ու այն դարձնել համահայկական անհնազանդություն<sup>305</sup>:

Ապրիլի 16-ի հիմնական օրակարգը ՀՀ Ազգային ժողովի շենքի շրջափակումն էր ու վարչապետի ընտրության գործընթացի խափանումը<sup>306</sup>: Բաղրամյան պողոտայում հավաքի կազմակերպիչը կոչով դիմեց արգելապատնեշ կառուցած ոստիկաններին՝ նշելով, որ իրենց պայքարը խաղաղ է, բռնություն չեն կիրառելու՝ հավաքի մասնակիցներին հիշեցնելով ոստիկանների նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորելու պարտականության մասին<sup>307</sup>:

Ապրիլի 16-ին նախատեսվող միջոցառումների առնչությամբ Ոստիկանությունը հայտարարեց, որ *դրանց զգալի մասը «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի ակնհայտ խախտում են և իրենց դրսևորման պարագայում առերևույթ իրավախախտման հատկանիշներ են պարունակելու՝ առաջացնելով օրենքով սահմանված պատասխանատվություն: Ըստ Ոստիկանության՝ այդ գործողությունների որոշ մասը, բացի այն, որ էական վնաս են հասցնելու մայրաքաղաքի բնակիչների ազատ տեղաշարժի, դրանից բխող այլ իրավունքներին, կազմակերպությունների բնականոն գործունեությանը, առանձին դեպքերում իրական սպառնալիք են պարունակում քաղաքացիների կյանքի և առողջության համար: Կոչ ենք անում հավաքի կազմակերպիչներին և որոշ մասնակիցներին զերծ մնալ*

<sup>302</sup> Տե՛ս <http://www.armtimes.com/hy/article/135464>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Տե՛ս <https://factor.am/46467.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>303</sup> Տե՛ս <https://factor.am/46518.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>304</sup> Տե՛ս <https://factor.am/46630.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>305</sup> Տե՛ս <http://www.armtimes.com/hy/article/135496>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>306</sup> Տե՛ս <https://www.azatutyun.am/a/29171096.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>307</sup> Տե՛ս <https://factor.am/46526.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

իրավախախտումներ պարունակող գործողություններից՝ չվտանգելով քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, կազմակերպությունների օրինական շահերը<sup>308</sup>:

Ապրիլի 16-ին Ոստիկանությունը հանդես եկավ այլ հայտարարություններով ևս: Դրանցից մեկում, մասնավորապես նշվում էր. «Այսօր առավոտից ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Նիկոլ Փաշինյանը կազմակերպել է Երևանի համար կենսական նշանակություն ունեցող մի շարք փողոցներ փակելու գործողություն՝ կաթվածահար անելով երթևեկությունը և սահմանափակելով հարյուրավոր քաղաքացիների ազատ տեղաշարժելու սահմանադրական իրավունքը: ՀՀ ոստիկանությունը նախազգուշացնում է, որ նման գործողությունները կարող են ծնել հանցագործություններ՝ ուղղված քաղաքացիների կյանքի, առողջության և գույքի դեմ:

ՀՀ ոստիկանությունը ևս մեկ անգամ պարզաբանում է, որ խաղաղ, սակայն հասարակական կարգի խմբային խախտումներով ուղեկցվող հավաքի իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների՝ իրավիճակից բխող համաչափ ոստիկանական գործողություններով, ընդհուպ մինչև հավաքի դադարեցման որոշման ընդունում<sup>309</sup>»: Ոստիկանությունը կոչ արեց հավաքի կազմակերպիչ Նիկոլ Փաշինյանին՝ «անվերապահորեն կատարել «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքով նախատեսված հավաքի կազմակերպչի պարտականությունները, մասնավորապես՝ դադարեցնել փողոցների շրջափակումը և ապահովել հավաքի բնականոն ընթացքը»<sup>310</sup>:

Երևանի քաղաքապետարանի հայտարարության համաձայն՝ «Վերջին օրերին մայրաքաղաքում տեղի ունեցող հավաքների ընթացքում արձանագրվել են քաղաքային գույքի, այդ թվում՝ նստարանների և աղբամանների կամայական տեղափոխման ու ոչ նպատակային օգտագործման, նաև դրանք վնասելու դեպքեր: Այս մասին ասված է Երևանի քաղաքապետարանի տարածած հայտարարությունում:

«Միաժամանակ բազմաթիվ դժգոհություններ և ահազանգեր են ստացվել մեր համաքաղաքացիներից առ այն, որ հավաքների մասնակիցների կողմից անհարկի խոչընդոտվում է հասարակական տրանսպորտի բնականոն աշխատանքի իրականացումը:

Հաշվի առնելով վերոնշյալը, հավաքների կազմակերպիչներին ու մասնակիցներին կոչ ենք անում զերծ մնալ քաղաքային գույքը կամայական տեղաշարժելու, տեղափոխելու և դրանք վնասելու քայլերից, ինչպես նաև հասարակական տրանսպորտի բնականոն աշխատանքը խոչընդոտելուց»<sup>311</sup>:

Չնայած Ոստիկանության՝ քաղաքացիների իրավունքներին և օրինական շահերին սպառնացող վտանգի մասին հայտարարություններին՝ հետագա օրերին հավաքները նույնպես շարունակվեցին առանց զենքի, խաղաղ քաղաքացիական անհնազանդության սկզբունքով:

Ապրիլի 17-ին՝ ՀՀ Ազգային ժողովում վարչապետի ընտրության օրը ևս հավաքի մասնակիցների կողմից շարունակվեց ճանապարհները փակելու մարտավարությունը: Հավաքի կազմակերպիչ Նիկոլ Փաշինյանը մանրամասնեց, որ դեպի պառլամենտի շենք տանող փողոցները պետք է փակվեն, որպեսզի, ըստ հնարավորության, կարողանան մի քանի կողմերից շրջափակել շենքը<sup>312</sup>:

Ապրիլի 17-ի առավոտյան Նիկոլ Փաշինյանը նաև կոչ արեց պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում համատարած նստացույցեր անել, չթողնել որևէ մեկին

<sup>308</sup> Տե՛ս <https://factor.am/46501.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>309</sup> Տե՛ս <http://www.armtimes.com/hy/article/135476>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>310</sup> Տե՛ս <http://www.armtimes.com/hy/article/135499>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>311</sup> Տե՛ս <http://www.armtimes.com/hy/article/135491>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>312</sup> Տե՛ս <https://www.azatutyun.am/a/29171096.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

աշխատանքի անցնել, շրջափակել հասարակական տրանսպորտը՝ առանց որևէ վիրավորանքի, բռնության կամ գույքի վնասման<sup>313</sup>:

Ապրիլի 20-ին Երևան քաղաքի տարբեր հատվածներում ճանապարհների շրջափակման հետ մեկտեղ քաղաքացիներն ամբողջությամբ փակել էին Երևան-Էջմիածին և «Զվարթնոց» օդանավակայանի ճանապարհը<sup>314</sup>, ինչն առաջ բերեց երկրից մեկնող անձանց համար որոշակի անհարմարություններ, ովքեր ստիպված էին օդանավակայան հասնել առանց տրանսպորտային միջոցների<sup>315</sup>: Երթևեկությունը կաթվածահար էր եղել նաև Մաշտոցի, Կոմիտասի և Արշակունյաց պողոտաներում<sup>316</sup>:

Ոստիկանության ներկայացուցիչ Վալերի Օսիպյանը հավաքի ղեկավարին հանձնեց հավաքը ցրելու մասին Ոստիկանության որոշումը՝ հրապարակային հայտարարությամբ իբրև հավաքը ցրելու հիմք նշելով, որ «*հասարակական կարգի խմբային խախտումներով ուղեկցվող հավաքի տեսականությունը, երթևեկությունը կաթվածահար անելուն ուղղված դիտավորյալ գործողությունները և մայրաքաղաքի բոլոր բնակիչների համար լայնածավալ անհարմարությունների ստեղծումը, և, վերջապես, հավաքի որոշ մասնակիցների կողմից զանգվածային անկարգությունների կատարումը, դրա հետևանքով ֆիզիկական և գույքային վնաս պատճառելը այլևս գերակա են դարձնում այլոց սահմանադրական իրավունքները և հանրային շահը, ընդ որում՝ այլ կերպ հնարավոր չէ կանխել դրանց անհամաչափ սահմանափակումները՝ նկատի ունենալով, որ ոստիկանության բազմաթիվ կոչերը, նախազգուշացումները և օրինական պահանջները կատեգորիկ անտեսվել են հավաքի ղեկավարի և մասնակիցների կողմից*»<sup>317</sup>:

Հայաստանի տարբեր քաղաքներում քայլերից են ու հանրահավաքները, փողոցների արգելափակումը շարունակվեցին նաև ապրիլի 23-ից՝ այդ ժամանակ ՀՀ գործող վարչապետ Սերժ Սարգսյանի հրաժարականից հետո<sup>318</sup>:

Ապրիլի 26-ին Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ Երևանում և հանրապետությունում չպետք է լինի առանց հաշվառման համարանիշի ոչ մի ավտոմեքենա՝ մտահոգություն հայտնելով, որ որոշ անձանց կողմից հավաքները իբրև առիթ են օգտագործվում իրավախախտումներ կատարելու համար<sup>319</sup>:

Ժամանակավոր դադարեցված հավաքները վերսկսվեցին ապրիլի 29-ից: Ըստ Ն. Փաշինյանի հայտարարության՝ ՀՀ ողջ տարածքով, Երևանում վերսկսում են քաղաքացիական անհնազանդության զանգվածային գործողությունները: Բոլոր ուսումնական հաստատությունները հայտարարում են դասադուլ, բոլոր ճանապարհները փակվում են<sup>320</sup>:

Մայիսի 1-ի հանրահավաքին Նիկոլ Փաշինյանը հայտարարեց գործադուլի, դասադուլի, բոլոր ճանապարհներն ու բոլոր տեսակների տրանսպորտի աշխատանքի արգելափակման մարտավարությունը շարունակելու մասին, որն ուղղված էր այն ժամանակվա իշխող կուսակցական ապարատի հրաժարական պահանջելուն: Նրա դիտարկմամբ՝ հասարակության աջակցությունն այնքան մեծ էր, որ այլևս ճանապարհներ փակելու և

<sup>313</sup> Տե՛ս <https://factor.am/46965.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>314</sup> Տե՛ս <http://www.armtimes.com/hy/article/135921>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>315</sup> Տե՛ս <https://factor.am/48432.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>316</sup> Տե՛ս <http://www.armtimes.com/hy/article/135872>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>317</sup> Տե՛ս <https://factor.am/46981.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>318</sup> Տե՛ս <https://factor.am/49467.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Տե՛ս <https://factor.am/49479.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Տե՛ս <https://factor.am/49608.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Տե՛ս <https://factor.am/49611.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>319</sup> Տե՛ս <https://factor.am/49830.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>320</sup> Տե՛ս <https://factor.am/50355.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

պատճառված անհարմարությունների համար հասարակության անդամների ներողամտության կարիքն անգամ չկար<sup>321</sup>:

Եթե հավաքները դիտարկենք՝ որպես հասարակության անդամների կոնկրետ խմբի սահմանադրական իրավունքի իրացում, որը որոշակի անհարմարություններ պատճառելով հակադրվում և այդպիսով մրցակցում է հասարակական կարգի, այլոց իրավունքների և ազատությունների հետ, ըստ միջազգային իրավաբանության՝ պետք է կիրառվեր հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման բանաձևը: Մինչդեռ, ապրիլյան հավաքների ընթացքում ճանապարհները փակելու ու երթևեկության արգելափակման համատարած բնույթը կասկած չէր թողնում, որ հասարակական կյանքի սովորական ընթացքը կանգ էր առել՝ վերափոխվելով «հասարակական շարժման»:

Մինչդեռ, արձանագրվեցին նաև առանձին դեպքեր, երբ ճանապարհների փակ լինելու պատճառով առաջացավ անձանց առողջության պահպանման և կենսական կարևորության այլ իրավունքների իրացման խնդիր: Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանն այս կապակցությամբ հայտարարությամբ հանդես եկավ՝ մտահոգիչ համարելով քաղաքացիների կողմից Պաշտպանին ուղղվող ահազանգերը, որոնք վերաբերում են բժշկական օգնություն ստանալու, քաղաքացիների կողմից իրենց բնակարաններ կամ տներ, աշխատավայրեր հասնելու դժվարություններին և այլն:

Այդ օրերին խիստ մտահոգիչ տեղեկություններ ստացվեցին նաև, որ ցուցարարները շտապ բժշկական օգնության ավտոմեքենաները կանգնեցնում, ստուգում ու դրանից հետո նոր միայն, սեփական հայեցողությամբ, թույլատրում էին տեղաշարժվել: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ են ստացվել ահազանգեր, որ ճանապարհների փակ լինելու պատճառով բժիշկները չեն կարողանում հասնել կանչի վայրեր<sup>322</sup>:

Ընդհանուր առմամբ, հավաքների մշտադիտարկումը ցույց տվեց, որ ապրիլյան իրադարձությունները կարծես թե դուրս էին եկել հավաքների ազատության իրավունքի կոնվենցիոն բովանդակությունից և շրջանակներից այն առումով, որ երթևեկության դադարեցումը, Երևան քաղաքի տասնյակ փողոցների փակումն չառաջացրեց հանրային և մասնավոր շահերի հակազդման խնդիր. նման գործելաձևը, մասնակի բացառություններով հանդերձ, հասարակական կոնսենսուսի արդյունք էին: Հետևաբար, ճանապարհները փակելը, գործադուլն ու դասադուլը հանրային շահի հասցեատիրոջ՝ հասարակության անդամների համաձայնեցված գործողություններն են եղել: Նույն կերպ, հավաքների ազատության և այլոց իրավունքների առերևույթ հակադրման խնդիր առաջ չեկավ, երբ հավաքի մասնակիցների բարձրագույն ուսումնական հաստատություններում իրենց շարժմանը միանալու կոչեր էին անում: Այստեղ ևս երկու շահերի՝ հավաքների ազատության և կրթության իրավունքի հավասարակշռումը տեղի ունեցավ ոչ թե հավաքների ազատության սահմանափակումների, այլ հենց մրցակցող իրավունքի կրողների՝ ուսանողների կողմից իրենց հավաքի ազատության իրավունքն իրացնելու ճանապարհով:

## ***12. Առանձին դեպքերում հրահրումները ռստիկանության ծառայողների և հավաքի մասնակիցների միջև***

Ապրիլյան հավաքները բացառապես խաղաղ անցկացնելու, Ռստիկանության նկատմամբ որևէ հակաօրինական գործողություն չկատարելու սկզբունքների պահպանման պայմաններում, այդուհանդերձ, առանձին դեպքերում արձանագրվեցին հրահրումներ Ռստիկանության ուժերի և հավաքի մասնակիցների միջև:

<sup>321</sup> Տե՛ս <https://www.newsinfo.am/arm/article/view/EkTTa5bpV>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>322</sup> Տե՛ս <http://www.pashtpan.am/media/vtangvac-e-aroxjutyanyan-pahpanman-iravunqy.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Միևնույն ժամանակ, թե՛ հավաքի կազմակերպիչների, թե՛ իրավապաշտպանների կողմից նշվեց սադրիչ խմբերի առկայության մասին, ովքեր փորձում էին բախումներ հրահրել՝ այդպիսով Ոստիկանության կողմից խաղաղ հավաքի մասնակիցների նկատմամբ սահմանափակումների իրավական հիմքեր ստեղծելով<sup>323</sup>:

Ապրիլի 16-ին Բաղրամյան պողոտայում՝ Ազգային ժողովի շենքի մոտակայքում, Ոստիկանության հետ հրահրումներ տեղի ունեցան, երբ հավաքի կազմակերպիչ Նիկոլ Փաշինյանը ցանկանում էր մուտք գործել Ազգային ժողովի շենք, ոստիկանները համաձայնեցին թույլ տալ միայն նրա և մյուս երեք պատգամավորների մուտքը: Փաշինյանը հայտարարեց, որ իրեն պայմաններ չպետք է թելադրեն՝ նշելով, որ ցանկանում է որպես պատգամավոր ընդունել իր մոտ ընդունելության եկած քաղաքացիներին՝ ցուցարարներին: Այս նա փորձեց արգելափակոցի վրայով անցնել դեպի ոստիկանության պատնեշը: Ոստիկանները խոչընդոտեցին նրա և նրան հետևող ցուցարարների առաջխաղացումը, ինչին հաջորդեց քաջքույրը, ոստիկանությունը հատուկ միջոցներ օգտագործեց: Փաշինյանը և ևս երեք ոստիկան վնասվածքներով տեղափոխվեցին բժշկական հաստատություն<sup>324</sup>:

Այդ դեպքերից հետո Գլխավոր դատախազությունը հայտարարություն տարածեց Քրեական օրենսգրքի 225-րդ և 225.1-րդ հոդվածների հատկանիշներով քրեական գործեր հարուցելու կապակցությամբ, որում, մասնավորապես, նշված էր, որ «Մկսած 2018 թվականի ապրիլի 13-ից՝ ՀՀ ԱԺ պատգամավոր Նիկոլ Փաշինյանը Երևան քաղաքում կազմակերպել և իրականացրել է հավաքներ, որոնց ընթացքում բազմիցս խախտվել են «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջները՝ խոչընդոտելով մայրաքաղաքի բնակիչների ազատ տեղաշարժի և այլ իրավունքների իրացմանը, կազմակերպությունների բնականոն գործունեությանը. տեղեկացնում է ՀՀ դատախազության հանրային կապերի բաժինը: Չհետևելով ոստիկանության բազմաթիվ հայտարարություններին, այդ ընթացքում հավաքի մասնակիցները կազմակերպված կերպով ապրիլի 13-ին ներխուժել են ԵՊՀ, իսկ ապրիլի 14-ին՝ Հանրային ոստիկանության շենքերի տարածքները, որպիսի գործողությունները զուգորդվել են այդ ընկերությունների գույքը վնասելով, իրենց ծառայությունն իրականացնող քաղաքացիներին մարմնական վնասվածքներ պատճառելով՝ վտանգելով հասարակական անվտանգությունը: Ապրիլի 16-ին առավոտվանից շարունակելով նույն հակաօրինական գործողությունների իրականացումը՝ հավաքի մասնակիցները կազմակերպված կերպով շարժվել են Բաղրամյան պողոտայով՝ փորձելով շրջանցել ծառայություն իրականացնող ոստիկաններին՝ չկատարելով վերջիններիս օրինական պահանջները: Կազմակերպված հավաքի մասնակիցները, վնասելով Բաղրամյան պողոտայում գտնվող պետական, ինչպես նաև քաղաքացիների մասնավոր գույքը, բռնություն են գործադրել ծառայություն իրականացնող ոստիկանների նկատմամբ՝ վտանգելով հասարակական անվտանգությունը<sup>325</sup>:

Ապրիլի 18-ին Ոստիկանությունը հանդես եկավ հավաքը ցրելու հայտարարությամբ՝ նշելով, որ «Այդ հավաքներն արդեն իսկ ուղեկցվել են բազմաթիվ զանգվածային անկարգություններով, որոնց ընթացքում անձանց նկատմամբ բռնության գործադրմամբ, գույք ոչնչացնելով ու վնասելով վտանգվել է քաղաքացիների կյանքն ու առողջությունը, հասարակական անվտանգությունը<sup>326</sup>:

Ապրիլի 20-ի Ոստիկանության հայտարարություններից մեկում հավաքի կազմակերպիչներին կոչ էր արվում քաղաքացիների իրավունքների և ազատությունների անհամաչափ սահմանափակումները դադարեցնելու, մայրաքաղաքի բնակիչների կյանքն ու

<sup>323</sup> Տե՛ս <https://factor.am/47531.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>324</sup> Տե՛ս <https://www.azatutyun.am/a/29170656.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>325</sup> Տե՛ս <https://factor.am/46812.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>326</sup> Տե՛ս <https://factor.am/47401.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

առողջությունը վտանգող գործողություններից խուսափելու նպատակով հավաքները տեղափոխել այնպիսի տարածքներ, որտեղ կբացառվեն իրավախախտումները հնարավորություն կտան Ոստիկանությանն աջակցություն ցուցաբերել հավաքին և ապահովել վերջինիս մասնակիցների անվտանգությունը<sup>327</sup>:

Մամուլի ուսումնասիրությամբ պարզ դարձավ, որ արձանագրվել են նաև անձանց կողմից Ոստիկանության ծառայողների նկատմամբ բռնություն կիրառելու դեպքեր: Երևանում տեղի ունեցող զանգվածային միջոցառումների կապակցությամբ Քրեական օրենսգրքի 225-րդ (Զանգվածային անկարգությունները) և 225.1-րդ (Օրենքով սահմանված կարգի խախտմամբ հավաք կազմակերպելը և անցկացնելը) հոդվածների հատկանիշներով հարուցված քրեական գործերի հետ կապված՝ մամուլում հրապարակվել էին տեսագրություններ, որոնցում երևում էր, թե ինչպես հավաքի մասնակիցները, չենթարկվելով ոստիկանության ծառայողների օրինական պահանջներին, բռնություն էին գործադրում նրանց նկատմամբ, արգելափակոցներ, քարեր և այլ առարկաներ նետում ոստիկանների ուղղությամբ՝ նրանց պատճառելով մարմնական վնասվածքներ<sup>328</sup>: Բացի այդ, ապրիլի 17-ին Մաշտոցի պողոտայում մի խումբ անձանց կողմից վնասվեցին ճանապարհային նշաններ ու լուսացույց, ինչից հետո վիճաբանություններ, քաջքույրներ սկսվեցին քաղաքացիների միջև: Այդ խումբ անձանց կողմից փորձ էր արվել նաև խոչընդոտել Factor.am-ի գլխավոր խմբագրի լրագրողական գործունեությանը<sup>329</sup>:

Տեղի ունեցած միջադեպի կապակցությամբ ՀՀ դատախազության հայտարարությամբ՝ Մաշտոց-Թումանյան խաչմերուկի հատվածում ապրիլի 17-ին զանգվածային անկարգություններ են կազմակերպվել հավաքի մասնակիցների կողմից՝ հայտնելով ՀՀ Քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով քրեական գործի հարուցման մասին:

Բաղրամյան պողոտայում հրահրումներից հետո հավաքների կազմակերպիչը դիմեց Ոստիկանությանը՝ բարի ծառայություն մատչելով և **վերահաստատելով շարժման մասնակիցների խաղաղ մոտեցումները**<sup>330</sup>:

Նիկոլ Փաշինյանը Բաղրամյան պողոտայում հայտարարեց, որ **շարժման մասնակիցները ցուցաբերում են հարգանք և քաղաքավարություն ոստիկանների նկատմամբ, որևէ բռնություն բացառվում է, սաղրանքը բացառվում է, որևէ վնասվածք՝ թե՛ ֆիզիկական, թե՛ բարոյական բացառվում է**<sup>331</sup>:

Այսպես, ապրիլի 16-ին, երբ Ոստիկանության ներկայացուցիչը հայտարարեց, որ մի խումբ ցուցարարներ ոստիկանության ծառայողների ուղղությամբ իրեր են նետում, որին ի պատասխան՝ հավաքի կազմակերպիչներից Ազգային ժողովի պատգամավոր Արարատ Միրզոյանը նշեց, որ նման գործողություններ իրականացրած անձինք հեռացվել են դեպքի վայրից: Այնուհետև Նիկոլ Փաշինյանը հորդորեց հանրահավաքի մասնակիցներին ոստիկանների ուղղությամբ որևէ իր չնետել, հետ գնալ փշալարերից<sup>332</sup>:

Նիկոլ Փաշինյանը, դիմելով ոստիկանության ծառայողներին, **վերահաստատեց հավաքի խաղաղ նպատակները՝ նշելով, որ բացառվում է իրենց շարժման որևէ մասնակցի կողմից որևէ ոստիկանի դեմ բռնության գործադրումը՝ անգամ ոստիկանության կողմից նման բռնության գործադրման դեպքում**<sup>333</sup>:

<sup>327</sup> Տե՛ս <http://www.armtimes.com/hy/article/135869>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>328</sup> Տե՛ս <http://www.armtimes.com/hy/article/135599>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>329</sup> Տե՛ս <https://factor.am/47315.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>330</sup> Տե՛ս <https://factor.am/46818.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>331</sup> Տե՛ս <https://factor.am/47364.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>332</sup> Տե՛ս <https://armenpress.am/arm/news/930159.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>333</sup> Տե՛ս <https://www.youtube.com/watch?v=hjwlsGrVTa0>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):



Հավաքների մասնակիցների խաղաղ նպատակներն ու Ոստիկանության ծառայողների հետ որևէ բախման չգնալու սկզբունքային մոտեցումը հավաքի կազմակերպչի կողմից հայտարարվեց նաև միջադեպի հետ կապված, երբ հավաքված ամբոխից վիրավորական արտահայտություններ հնչեցին ոստիկանության ծառայողների հասցեին, և շիշ նետվեց վերջիններիս ուղղությամբ: Հավաքի կազմակերպիչն ինչպես ոստիկանության ծառայողների, այնպես էլ հավաքի մասնակիցների ներկայությամբ աներկիմաստ հայտարարեց, որ նման գործելաոճը դեմ է իրենց շարժման նպատակներին ու սկզբունքներին՝ **խստորեն պահանջելով ցուցաբերել հարգալից մոտեցում ոստիկանության ծառայողների նկատմամբ, անձամբ ստանձնելով պատասխանատվություն անմիջապես հեռացնելու նման սաղորիչ գործողություններ կատարող անձանց հավաքի անցկացման վայրից**<sup>334</sup>:

Հավաքների ոչ խաղաղ բնույթի մասին հայտարարություն տարածվեց Ոստիկանության կողմից, որում, մասնավորապես, նշվում էր, որ *հավաքի կազմակերպիչները և մասնակիցները ոչ միայն շարունակում են չենթարկվել իրենց ապօրինի գործողությունները դադարեցնելու մասին ոստիկանության օրինական պահանջներին, այլև բռնի գործողություններ են կատարում նրանց նկատմամբ: Նման վարքագիծն ակնհայտորեն դուրս է խաղաղ հավաքների բովանդակությունից և ևս մեկ անգամ ապացուցում է, որ կազմակերպիչների արտաքուստ «խաղաղ» կոչերով փորձ է արվում քողարկել ակնհայտ ապօրինի գործողությունները*<sup>335</sup>:

Ապրիլի 16-ին Բաղրամյան պողոտայում տեղի ունեցածի կապակցությամբ՝ Ոստիկանության պարզաբանման համաձայն՝ «Հավաքի կազմակերպիչները պարբերաբար կոչեր են հնչեցնում պատգամավորների մուտքը Ազգային ժողով արգելելու և Ազգային ժողովի շենքը շրջափակելու վերաբերյալ: Չնայած այն հանգամանքին, որ մարդկանց իրավունքների ապօրինի սահմանափակումները և հասարակական կարգը խախտող խմբային գործողությունները կրել են շարունակական բնույթ, ՀՀ ոստիկանությունը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքով, շուրջ 3 օր սահմանափակվել է բացառապես հավաքի կազմակերպիչներին և մասնակիցներին բանավոր նախազգուշացումներ տալով և պահանջներ ներկայացնելով, որոնք, սակայն, ամբողջությամբ անտեսվել են հավաքի ղեկավարի և մասնակիցների կողմից:

Ոստիկանության հայտարարության համաձայն՝ հավաքի ազատության իրավունքին միջամտող այլ գործողություններ չեն կատարել, քանի որ հավաքը հիմնականում կրել է խաղաղ բնույթ: Հավաքը որոշակի ժամանակահատված դադարել է խաղաղ լինելուց, հատկապես, երբ ապրիլի 16-ին Նիկոլ Փաշինյանը հավաքի մասնակիցներին ուղղորդել է դեպի Բաղրամյան պողոտա՝ փորձելով ձեռքով հասարակական կարգի պահպանություն իրականացնող ոստիկանական պատնեշը: Հրահրված բախումների արդյունքում տեղի են ունեցել զանգվածային անկարգություններ, որոնց արդյունքում վնաս է պատճառվել անձանց առողջությանը, հանրային սեփականություն հանդիսացող գույքին:

Ոստիկանությունը հայտարարում է, որ հասարակական կարգի խմբային խախտումներով ուղեկցվող հավաքի տնականությունը, երթնեկությունը կաթվածահար անելուն ուղղված դիտավորյալ գործողությունները և մայրաքաղաքի բոլոր բնակիչների համար լայնածավալ անհարմարությունների ստեղծումը, և, վերջապես, հավաքի որոշ մասնակիցների կողմից զանգվածային անկարգությունների կատարումը, դրա հետևանքով ֆիզիկական և գույքային վնաս պատճառելը այլևս գերակա են դարձնում այլոց

<sup>334</sup> Տե՛ս <https://www.facebook.com/hetqonline/videos/1850905301632778/?v=1850905301632778>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):  
<sup>335</sup> Տե՛ս <https://factor.am/47706.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

սահմանադրական իրավունքները և հանրային շահը, ընդ որում՝ այլ կերպ հնարավոր չէ կանխել դրանց անհամաչափ սահմանափակումները՝ նկատի ունենալով, որ ոստիկանության բազմաթիվ կոչերը, նախազգուշացումները և օրինական պահանջները կատեգորիկ անտեսվել են հավաքի ղեկավարի և մասնակիցների կողմից: Հիմք ընդունելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածը, Ոստիկանությունը 2018 թվականի ապրիլի 16-ին որոշում է կայացրել դադարեցնել հավաքը և պահանջել է հավաքի ղեկավարից կատարել այն, այդ մասին անմիջապես տեղեկացնել հավաքի մասնակիցներին<sup>336</sup>:

Ավելի ուշ՝ ապրիլի 21-ին, Ոստիկանությունը տարածեց հայտարարություն՝ կապված Ոստիկանության ծառայողների կողմից անձանց գույքին վնաս պատճառելու իրավաչափության և այդ գործողությունների՝ որպես քաղաքացիների սեփականության անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ ոտնձգություն ներկայացնելով հասարակությանն ապատեղեկացնելու հետ<sup>337</sup>:

Հավաքների «խաղաղ» և «ոչ խաղաղ» բնույթի վերաբերյալ միջազգային իրավական մոտեցումների համաձայն՝ իբրև «խաղաղ հավաքներ» չբնորոշվող իրադարձությունները գործնականում միայն այնպիսիք են, որոնցում կազմակերպիչներն ու մասնակիցները բռնություն կիրառելու նպատակ են հետապնդում: Մասնակիցների փոքր խմբի կողմից բռնության գործադրումը չի կարող ինքնաբերաբար հանգեցնել հավաքը որպես ոչ խաղաղ որակելուն: Հետևաբար, հավաքը պետք է համարվի խաղաղ, եթե կազմակերպիչները խաղաղ նպատակներ են հետապնդում, և պետք է գործի այդ կանխավարկածը, քանի դեռ չկան համոզիչ և ակնհայտ ապացույցներ, որ կոնկրետ միջոցառումների կազմակերպումն ու մասնակցությունն ինքնին նպատակ ունեն գործադրելու, քարոզելու կամ հրահրելու բռնություն:

Հավաքների ընթացքում անձը չի զրկվում խաղաղ հավաքների ազատության իր իրավունքն իրացնելուց այլ անձանց կողմից հաճախակի բռնությունների (sporadic violence) կամ այլ պատժելի արարքների պատճառով, եթե այդ անձի մտադրություններն ու վարքագիծը խաղաղ են:

Իրավակիրառողը պարտավոր է տարբերակել խաղաղ և ոչ խաղաղ մասնակիցներին: Ո՛չ բռնությունների մեկուսացված դեպքերը, ո՛չ այլ մասնակիցների բռնի գործողություններն ինքնին բավարար հիմք չեն խաղաղ մասնակիցների նկատմամբ լայնածավալ սահմանափակումների կիրառման համար: Հետևաբար, անձանց ձերբակալելիս կամ ծայրահեղ դեպքերում հավաքը ցրելիս իրավակիրառողը չպետք է հավաքի մասնակիցներին դիտարկի իբրև միատարր զանգված<sup>338</sup>:

Ապրիլյան հավաքների ողջ ընթացքին Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական դիտարկումները, տեղում ազատությունից զրկված անձանց իրավունքների ապահովման վիճակի գնահատումը հնարավորություն ընձեռեցին եզրահանգելու, որ քաղաքացիական անհնազանդության հաջողման և արձանագրված ձեռքբերումների կարևորագույն նախադրյալ էր հավաքների խաղաղ բնույթը, իսկ այդ հարցում մեծ դեր ունեցավ այդ ժամանակ «Իմ քայլը» շարժման առաջնորդ, ԱԺ պատգամավոր Նիկոլ Փաշինյանը: Նա իր

<sup>336</sup> Տե՛ս <https://armeniasputnik.am/armenia/20180417/11488082/armenia-cuyc-pashinyan-vostikanutyun.html>

Հավաքը դադարեցնելու Ոստիկանության հայտարարություններ հաջորդեցին նաև հաջորդ օրերին.

Տե՛ս, <https://factor.am/48272.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Տե՛ս <https://factor.am/48566.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>337</sup> Տե՛ս <https://factor.am/48504.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>338</sup> ԵԱՀԿ/ԺՄԻԶԳ և Վենետիկի հանձնաժողովի ուղեցույցները խաղաղ հավաքների ազատության վերաբերյալ (2-րդ հրատարակություն)

[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2010\)020-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2010)020-e)

կոչերով անընդհատ հորդորում էր հավաքների մասնակիցներին պահպանել հանդուրժողականություն, խաղաղ վարքագիծ և թույլ չտալ բռնություն<sup>339</sup>:

Կարևոր է նաև արձանագրել, որ չնայած հավաքների ընթացքում Ոստիկանության՝ հավաքի ոչ օրինական լինելու, հավաքի մասնակիցների գործողությունների ոչ իրավաչափության և ըստ այդմ՝ հավաքը ցրելու հիմքերի առկայության վերաբերյալ՝ հայտարարություններին՝ ոստիկանությունը չդիմեց մասշտաբային գործողությունների՝ ուղղված հավաքի վայրից մասնակիցներին հեռացնելուն և հավաքը ճնշելուն, որպիսի մոտեցումը ևս նպաստեց հավաքի օրերին զանգվածային ընդհարումների կանխմանը: Մասկնհայտ դրական նշանակություն ունեցող երկրում տեղի ունեցող ժողովրդավարական զարգացումների առումով:

Դրանով հանդերձ, պետք է նկատի ունենալ, որ «խաղաղ հավաքների» բովանդակության, ոստիկանության գործողությունների համաչափության միջազգային իրավական ընկալումները հուշում են, որ անգամ այն դեպքերում, երբ հավաքների ընթացում դրվագային կամ առանձին խումբ անձանց կողմից բռնություններ են հրահրվում, պետական արձագանքը՝ հավաքի ազատության սահմանափակումների առումով, պետք է լինի թիրախային՝ ուղղված բռնությունների դեպքերի կանխմանն ու այդպիսով նաև խաղաղ ցուցարարների անվտանգության ապահովմանը: Ապրիլյան խաղաղ հավաքների պայմաններում Ոստիկանության և առհասարակ պետական որևէ մարմնի անհանդուրժող արձագանքը կհակասեր խաղաղ հավաքների ազատության գաղափարին:

2018 թվականի ապրիլյան հավաքների խաղաղ բնույթի, դրա արձանագրված ժողովրդավարական ձեռքբերումների վերաբերյալ գնահատականներ տրվեցին նաև միջազգային հարթակներում: Այսպես, օրինակ, ԵԱՀԿ Մշտական խորհրդի նիստում ԱՄՆ ժամանակավոր հավատարմատարը հատուկ ընդգծել է, որ Միացյալ Նահանգները գովաբանում է Հայաստանի ժողովրդին՝ երկխոսության մեջ մտնելու և սեփական ինքնիշխան ապագան ժողովրդավարական ու խաղաղ մեթոդներով ամրապնդելու համար: Ողջունելի է համարվել, որ թե՛ ոստիկանությունը, թե՛ խաղաղ հավաքների իրենց իրավունքն իրացնող քաղաքացիները զապվածություն են ցուցաբերել և երաշխավորել, որ ապրիլյան իրադարձությունները լինեն հիմնականում խաղաղ և առանց բռնությունների<sup>340</sup>:

Կարևոր է, որ հավաքի մասնակիցների նկատմամբ բռնության գործադրման, ինչպես նաև պայթուցիկ միջոցների ոչ իրավաչափ կիրառման դեպքերի կապակցությամբ քրեական գործով վարույթներ են նախաձեռնվել:

Այսպես, Գլխավոր դատախազության ներկայացրած պարզաբանումների համաձայն՝ 2018 թվականի ապրիլի 16-ից ապրիլի 23-ն ընկած ժամանակահատվածում պետական ծառայություն իրականացնող ՀՀ ոստիկանության և իրավապահ մարմինների այլ աշխատակիցները, պաշտոնատար անձինք Երևան քաղաքի Մ. Բաղրամյան պողոտայից, Արցախի, Էրեբունու, Աբովյան և այլ փողոցներից ու վայրերից քաղաքացիներին՝ հեռացնելիս, բերման ենթարկելիս, ինչպես նաև դրանից առաջ գործադրել են բռնություն՝ նրանց պատճառելով մարմնական վնասվածքներ, կիրառել են հատուկ միջոցներ, սահմանված կարգի խախտմամբ ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումներ բերման են ենթարկել ու թույլատրելի ժամկետից ավելի պահել մի շարք քաղաքացիների, ինչը գուցարդվել է վերջիններիս մի շարք իրավունքների սահմանափակմամբ:

<sup>339</sup> Տե՛ս նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի ելույթը ԵԱՀԿ/ԺՄԻԳ հատուկ հրավերով Վարշավայում ընթացող բարձրաստիճան համաժողովին <https://armtimes.com/hy/article/144462>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>340</sup> Տե՛ս <https://www.azatutyun.am/a/29194515.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Ընդհանուր առմամբ, հարուցված քրեական գործով ընթացք է տրվել 104 քաղաքացիների նկատմամբ իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց վատ վերաբերմունքի, բռնությունների վերաբերյալ հայտարարությունների, դիմումների:

2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին Երևան քաղաքում, ինչպես նաև ՀՀ մի շարք մարզերում իրականացված բազմամարդ հավաքների ընթացքում պետական ծառայություն իրականացնող ՀՀ իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց կողմից ենթադրյալ հանրորեն վտանգավոր արարքներ կատարելու առթիվ նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում չի կայացվել:

### ***13. Ոստիկանության կողմից հատուկ միջոցների կիրառման իրավաչափությունը. միջազգային և ներպետական չափանիշների պահպանման հետ կապված խնդիրներ***

Ապրիլի 16-ին Բաղրամյան պողոտայում՝ Ազգային ժողովի շենքի մոտակայքում, տեղի ունեցան հրահրումներ հավաքի մասնակիցների և Ոստիկանության ծառայողների միջև: Ոստիկանության ուժերը կառուցել էին արգելապատնեշներ, իսկ հրահրումների պահին հատուկ միջոցի կիրառման արդյունքում Բաղրամյան պողոտայում պայթյուն հնչեց, որի հետևանքով եղան վիրավորներ, իսկ տարածքում շտապօգնության մեքենա չկար<sup>341</sup>: Բժշկական օգնության կարիք ունեցող անձանց օգնության էին հասնում ցուցարարները<sup>342</sup>:

Մտահոգիչ է, որ Ոստիկանության կողմից ապրիլի 16-ին պայթուցիկ հատուկ միջոցների կիրառման արդյունքում հավաքի մասնակիցներ վիրավորվեցին, ում, սակայն, օգնություն ցուցաբերելու համար մոտակայքում շտապ բժշկական օգնության մեքենա չկար, իսկ շտապօգնություն կանչելու ցուցարարների կոչերին Ոստիկանության ծառայողները չէին արձագանքում<sup>343</sup>:

Ըստ Բաղրամյան պողոտայում գտնվող անձանց հավաստման՝ ծխարձակիչ պայթուցիկներ նետվեցին, որոնք սարսափելի աղմուկով ճայթեցին, ցուցարարների շրջանում խուճապ սկսվեց: Մարդիկ սկսեցին, միմյանց հրելով, հետ գալ դեպի Բաղրամյան պողոտայի սկզբնամաս<sup>344</sup>:

Ապրիլի 22-ին Արցախի պողոտայում ևս կիրառվեցին հատուկ միջոցներ, որոնք գործադրումը, ըստ հրապարակված տեսանյութի, հավաքի մասնակիցներին անակնկալի բերեց՝ առաջացնելով տազնապ և իրարանցում<sup>345</sup>:

Պայթյունների արդյունքում վիրավորվածների առկայության փաստն արձանագրվեց նաև Ոստիկանության հրապարակային հայտարարությամբ՝ մինևույն ժամանակ տեղի ունեցածը որակելով իբրև հավաքի մասնակիցների բռնի գործողությունների և Ոստիկանության ուժերի հետ բախման հետևանք<sup>346</sup>:

Հատուկ միջոցների կիրառման արդյունքում տասնյակ անձանց, այդ թվում՝ ոստիկանության ծառայողների ստացած վնասվածքների և ցուցաբերված բուժօգնության վերաբերյալ տեղեկություններ ներկայացվեցին նաև Առողջապահության նախարարության կողմից<sup>347</sup>:

<sup>341</sup> Տե՛ս <https://factor.am/46744.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>342</sup> Տե՛ս <https://factor.am/46748.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>343</sup> Տե՛ս <https://factor.am/46748.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>344</sup> Տե՛ս <https://factor.am/46781.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>345</sup> Տե՛ս <https://factor.am/48575.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>346</sup> Տե՛ս <http://www.armtimes.com/hy/article/135513>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>347</sup> Տե՛ս Առողջապահության նախարարության հայտարարությունը՝ Բաղրամյան պողոտայում վիրավորվածների վիճակի մասին <https://factor.am/46835.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ): Տե՛ս <https://factor.am/46883.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Ըստ Մարդու իրավունքների պաշտպանին Ոստիկանության ներկայացրած պարզաբանման՝ ապրիլյան հավաքների ընթացքում Ոստիկանության կողմից հատուկ միջոցներ են կիրառվել երկու անգամ՝ ապրիլի 16-ին և ապրիլի 22-ին: Գործադրվել են լուսաձայնային նոնակներ (Զարյա-2) և լուսաձայնային արկեր (Մվիրել –ԱՍԶ 40) և փշալար՝ ղեկավարվելով «Ոստիկանության մասին» օրենքի 31-րդ և «Ոստիկանության զորքերի մասին» օրենքի 18-րդ հոդվածներով:

Ապրիլյան հավաքների ընթացքում հատուկ միջոցների կիրառման իրավաչափությունը գնահատման առարկա է դարձել ոչ միայն դրանց գործադրման իրավական հիմքերի, այլև տեխնիկական, առողջապահական չափանիշների և ընթացակարգային պահանջներին համապատասխանության առումով:

Այսպես, ՀՀ ոստիկանության պետի 2009 թվականի հոկտեմբերի 23-ի «Ոստիկանության զորքերի կողմից հատուկ միջոցներ օգտագործելու և հատուկ միջոցները ոստիկանության զորքերի զինձառայողներին հատկացնելու կարգը սահմանելու մասին» թիվ 5-Ն հրամանի 26-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ *ձեռքի լուսաձայնային նոնակ «Զարյա-2»՝ նախատեսված է իրավախախտների վրա հոգեֆիզիոլոգիական ազդեցության համար՝ հզոր լուսային և ձայնային ազդակների միջոցով: Բեկորային վնասվածքներ չի պատճառում:*

Նույն կետի 12-րդ ենթակետը սահմանում է, որ *«Մվիրել» ԱՍԶ-40 լուսաձայնային կրակոցը ևս բեկորային վնասվածքներ չի պատճառում:*

Հատուկ միջոցների նշանակության ու մարտավարատեխնիկական բնութագրերից զատ ՀՀ օրենսդրությամբ ամրագրված են նաև հատուկ միջոցների գործադրման իրավաչափության որոշակի առողջապահական չափանիշներ: Այսպես, ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի ապրիլի 20-ի «Մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցների կիրառման համար թույլատրելի չափանիշները սահմանելու մասին» N 09-Ն հրամանի հավելվածի 4-րդ և 18-րդ կետերի համաձայն՝ *«Անբեկոր լուսաձայնային նոնակ «Զարյա-2»-ի կիրառման թույլատրելի չափանիշներն են՝ քաշը 0,175 կիլոգրամից ոչ ավելի, գործարկումը միայն բաց տեղանքում՝ մարդուց նվազագույնը 2,5 մետր հեռավորության վրա: (...)*

*Լուսաձայնային գործողության նոնակով կրակոց ԱՍԶ-40-ի կիրառման թույլատրելի չափանիշներն են՝ ձայնային ճնշման մակարդակը 10 մետր հեռավորության վրա՝ 120 դեցիբելից ոչ ավելի, գործարկման նվազագույն հեռավորությունը՝ 100 մետր:»:*

Վերը նշված հրամանով «Մվիրել» անվանմամբ լուսաձայնային կրակոցի կիրառման պայման նախատեսված չէ, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ Լուսաձայնային գործողության նոնակով կրակոց ԱՍԶ-40-ի գործադրման իրավաչափության պայմաններն են կիրառելի կամ «Մվիրել» կրակոցի առանձնահատկությունների դեպքում՝ պետք է այդպիսիք ուղղակիորեն ամրագրված լինեն:

**Ամեն դեպքում, թե՛ քննարկվող հատուկ միջոցի գործարկման որոշակի հեռավորության օրենսդրական ամրագրման բացակայությունը, թե՛ 100 մետր հեռավորության չափանիշի կիրառելիության դեպքում՝ դրա չպահպանումն ինքնին առաջ են բերում Ոստիկանության գործողությունների ոչ իրավաչափ լինելու վերաբերյալ մտահոգություն:**

Ոստիկանության կողմից հատուկ միջոցների գործադրման սկզբունքների ու իրավաչափության պայմանների գործնական կիրառությունն ապահովելու առումով ուղենշային է «Հասարակական կարգի պահպանության մեջ ներգրավված ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների գործողությունների, զանգվածային անկարգությունների ժամանակ նրանց կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման ուղեցույցը»<sup>348</sup>:

<sup>348</sup> Հաստատվել է ՀՀ ոստիկանության պետի 2011 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 2760-Ս հրամանով.  
<https://www.osce.org/hy/yerevan/85134?download=true>

Ըստ ուղեցույցի 22-րդ կետի՝ *յուրաքանչյուր հատուկ միջոցի գործադրման կամ տակտիկական հնարքի կիրառման ժամանակ **նստիկանության գործողությունները պետք է լինեն հնարավորինս նպատակաուղղված՝ պահպանելով իրավաչափության և համաչափության սկզբունքների պահանջները, իսկ վտանգավոր իրավիճակներում, որոնք սպառնում են մարդկանց կյանքին ու առողջությանը, նախքան ոչ նպատակաուղղված հատուկ միջոցների գործադրմանն անցնելը, պետք է գործադրվեն ռետինե գնդակներով փամփուշտներ (բացառությամբ այն դեպքերի, երբ ամբոխի ագրեսիվության աստիճանն այնքան բարձր է, որ հնարավոր չէ առանձնացնել կոնկրետ իրավախախտների գործողությունները)***:

Ուղեցույցի մեջբերված դրույթի բովանդակությունից բխում է, որ ոչ նպատակաուղղված հատուկ միջոց<sup>349</sup> կարող է կիրառվել միայն նպատակաուղղված միջոցների գործադրման անարդյունավետության կամ անհնարինության դեպքում:

Մինչդեռ, **նպատակաուղղված միջոցների գործադրման հնարավորությունը սպառված չլինելու պայմաններում նստիկանությունը անմիջապես նախապատվություն է տվել ոչ նպատակաուղղված, ազդեցության մեծ տարածություն ունեցող հատուկ միջոցների կիրառմանը, ինչը վերոհիշյալ ուղեցույցով հատուկ միջոցի կիրառման կարգի խախտում է, և ցույցերի խաղաղ մասնակիցների իրավունքներն ապահովելու տեսանկյունից անթույլատրելի է<sup>350</sup>:**

Ուղեցույցի 24-րդ կետի համաձայն՝ *եթե ամբոխը չունի ելքի ճանապարհ (հատկապես՝ երբ ամբոխը փակված կամ շրջապատված է), ապա չպետք է գործադրվեն այնպիսի հատուկ միջոցներ, որոնց ազդեցությունը կարող է խուճապ կամ ամբոխի հանկարծակի տեղաշարժ առաջացնել. օրինակ՝ նստիկանությունը ամբոխը ցրելու կամ մասնատելու նպատակով գործադրում է արցունքաբեր գազով փամփուշտներ, ընդ որում՝ ամբոխը շրջապատված է նստիկաններով, փշալարերով և այլ արգելապատնեղներով կամ անձանց տեղաշարժը սահմանափակված է փողոցի լայնությամբ: Արցունքաբեր գազի ազդեցությամբ՝ ամբոխը կտեղաշարժվի դեպի առավել ազատ տարածք (կամ դեպի նստիկանության ծառայողները), ինչը կմեկնաբանվի որպես հերթական ագրեսիվ գործողություն՝ հանգեցնելով գործադրվող ուժի սաստկացմանը: Մրանից պարզ է դառնում, թե նստիկանության ոչ հեռատես գործողություններն ինչպես կարող են բարդացնել իրավիճակը: Այդ նկատառումից ելնելով՝ **նախքան որևէ տակտիկական հնարք կիրառելը կամ հատուկ միջոց գործադրելը պետք է օբյեկտիվ կերպով գնահատվեն ոչ միայն նստիկանության մտադրությունները, այլ նաև հավաքի մասնակիցների հավանական գործողությունները (վարքագիծը)**:*

Մինչդեռ, ապրիլի 16-ին Բաղրամյան պողոտայում և ապրիլի 22-ին Արցախի պողոտայում Ոստիկանության կողմից հատուկ միջոցների՝ տեղում գտնվող անձանց համար անակնկալ գործադրումը, մարդկանց անկանոն շարժումները, առաջացրած խուճապն ու մարմնական վնասվածքների պատճառումը վկայում են, որ Ոստիկանության

<sup>349</sup> Ըստ ուղեցույցի 21-րդ կետի՝ *հատուկ միջոցների որոշ տեսակներ (հատկապես՝ հատուկ միջոցառումների իրականացման միջոցները), պայմանավորված իրենց բնույթով (մարտավարատեխնիկական բնութագրով), գործադրման իմաստով ունեն ավելի նպատակաուղղված ազդեցություն, քան մյուսները, օրինակ՝ ռետինե գնդակներով փամփուշտներով կարող են վնասագերծվել առանձին իրավախախտներ, քանի որ սպառազինության այդ տեսակը թույլ է տալիս խոցել նպատակաուղղված ձևով, իսկ որոշ հատուկ միջոցների գործադրումից առաջացող զազաժխային ամպի, լուսաձայնային էֆեկտի (աղմուկի) և արցունքաբեր գազի ազդեցությունը տարածվում է ողջ բազմության վրա, հաճախ նաև՝ մերձակայքում գտնվող և իրավախախտման (զանգվածային անկարգության) հետ առնչություն չունեցող մարդկանց վրա:*

<sup>350</sup> Ոստիկանության կողմից հատուկ միջոցների կիրառման այդպիսի ոչ իրավաչափ պրակտիկական դիտարկվել և բարձրաձայնվել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների վերաբերյալ արտահերթ հրապարակային զեկույցում, էջեր 67-72:

կողմից խախտվել է նաև հատուկ միջոցի գործադրման պայմանը՝ կապված հավաքի մասնակիցների՝ այլ տարածք տեղափոխվելու հնարավորության հետ:

Բացի այդ, հատուկ միջոցների գործադրումից հետո ոստիկանության անգործությունը՝ մարմնական վնասվածքներ ստացած անձանց առաջին բուժօգնություն ցուցաբերելու կամ ապահովելու ուղղությամբ, օրենքով ամրագրված ուղղակի պահանջի խախտում էր:

Ոստիկանությունը ձախողել է նաև ցուցարարներին հատուկ միջոցների կիրառման մասին տեղեկացնելու պարտականության կատարումը:

Այսպես, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ **«Ոստիկանության ծառայողը ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն գործադրելուց առաջ պարտավոր է նախազգուշացնել դրանք գործադրելու մասին՝ բավարար ժամանակ տրամադրելով օրինական պահանջները կատարելու և իրավախախտումը դադարեցնելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց գործադրման հապաղումն անմիջական սպառնալիք է ստեղծում քաղաքացիների կամ ոստիկանության ծառայողի կյանքի ու առողջության համար կամ կարող է առաջացնել այլ ծանր հետևանքներ, կամ երբ ստեղծված իրավիճակում այդպիսի նախազգուշացումն անհնար է»:**

Օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով արգելվում է, **մասնավորապես, հատուկ միջոցների գործադրումը հղիության նկատելի նշաններով կանանց, ակնհայտ հաշմանդամների և անչափահասների նկատմամբ (բացառությամբ նրանց կողմից զինված հարձակում գործելու, զինված դիմադրության, մարդկանց կյանքին ու առողջությանը սպառնացող խմբակային հարձակման դեպքերի), ինչպես նաև խաղաղ, առանց զենքի և օրենքով սահմանված կարգի խախտմամբ անցկացվող հավաքները և հանրային միջոցառումները դադարեցնելու ժամանակ<sup>351</sup>:**

Ըստ ուղեցույցի 26-րդ և 27-րդ կետերի՝ *ոստիկանության ծառայողների կողմից զանգվածային անկարգությունների ժամանակ հատուկ միջոցներ գործադրելու մտադրության մասին նախազգուշացումներ անելու առաջարկելի ձևակերպումները հետևյալն են.*

ա) *«Խոսում է ոստիկանությունը: Դադարեցրե՛ք զանգվածային անկարգությունը և հեռացե՛ք տարածքից, այլապես կգործադրվեն հատուկ միջոցներ (նշել տեսակը):»:*

բ) *«Խոսում է ոստիկանությունը: Դադարեցրե՛ք զանգվածային անկարգությունը և հեռացե՛ք տարածքից, այլապես կգործադրվեն հատուկ միջոցներ (նշել տեսակը): Այլևս նախազգուշացում չի լինելու»:*

Ոստիկանության նախազգուշացումները պետք է արվեն մարդկանց հասկանալի արտահայտություններով և առավել նպատակահարմար ձևով, օրինակ՝ բարձրախոսի, բարձրաձայնման համակարգի, ցուցանակի, պաստառի, էլեկտրոնային էկրանի և այլնի միջոցով: Հնարավորության դեպքում ամբոխին ուղղված առանձին նախազգուշացումների միջև պետք է տրվի ողջամիտ ժամանակահատված, որպեսզի ամբոխը ցուցաբերի համապատասխան արձագանք: Անհրաժեշտ է նաև էլեկտրոնային կրիչի վրա տեսաձայնագրել արված նախազգուշացումները և անհատների կամ ամբոխի կողմից հնչած պատասխանները:

Մինչդեռ, հատուկ միջոցների կիրառման նախազգուշացման պայմանը Ոստիկանության կողմից փորձ էր արվել ապահովվել ՀՀ ոստիկանության ընդհանրական հրապարակային հայտարարություններով, որոնցում նշվում էր, որ *Ոստիկանությունն օրենքով թույլատրելի բոլոր՝ ընդհուպ հատուկ միջոցների և ֆիզիկական ուժի կիրառման միջոցով*

<sup>351</sup> Նույնաբովանդակ կարգավորում նախատեսված է նաև «Ոստիկանության զորքերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասում:

*իրականացնելու է տեղ գտնող իրավախախտումները կանխելուն, կամ խափանելուն ուղղված համաչափ գործողություններ<sup>352</sup>:*

Նման հայտարարությունները, սակայն, հատուկ միջոցների տեսակի, կիրառման տեղի, ժամանակի չմատնանշման, հատուկ միջոցների կիրառման և դրանց հնարավոր ներգործության տարածքում գտնվող անձանց *անմիջականորեն* չտեղեկացնելու պայմաններում չեն կարող դիտարկվել իբրև նախազգուշացում:

Հատուկ միջոցների գործադրման նման ընդհանրական հայտարարությունները, որոնց բովանդակությունը սահմանափակվում է Ոստիկանության լիազորությունների և դրա նորմատիվ իրավական հիմքերի վկայակոչմամբ, ինքնին չեն կարող դիտարկվել որպես Ոստիկանության հետագա գործողությունների իրավաչափությունն ապահովող բավարար նախադրյալ: Ի վերջո, հատուկ միջոցների գործադրումից առաջ նախազգուշացման պայմանը նպատակ ունի ոչ թե առհասարակ իրազեկելու Ոստիկանության կողմից ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն գործադրելու իրավասության մասին, այլ կոնկրետ իրավիճակում նախանշելու և կանխատեսելի դարձնելու վերջինիս գործողությունները՝ ըստ այդմ նվազագույնի հասցնելով անցանկալի հետևանքների առաջացման վտանգը:

2018 թվականի ապրիլյան հավաքների ընթացքում զանգվածային լրատվության միջոցներով նաև տեղեկություններ էին տարածվել ՀՀ ոստիկանության կողմից Երևան քաղաքի Մելիք-Ադամյան փողոցում և Բաղրամյան պողոտայում զրահամեքենաներ տեղակայելու մասին<sup>353</sup>: Այս կապակցությամբ Ոստիկանության պարզաբանումների համաձայն՝ դրանք տեղակայվել են կանխարգելիչ նպատակներով՝ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» կետի և 1-ին մասի 2-րդ կետի հիմքերով, այսինքն՝ զրահամեքենայի գործադրումը ոստիկանության ծառայողին կամ հասարակական կարգի պահպանության և հանցագործությունների դեմ տարվող պայքարին աջակցող, իրենց հասարակական կամ ծառայողական պարտականությունները կատարող անձանց նկատմամբ ցուցաբերվող դիմադրությունը խափանելիս կամ նրանց օրինական պահանջներին չենթարկվելու դեպքում:

Միննույն ժամանակ, ՀՀ ոստիկանության պետի 2011 թվականի մայիսի 30-ի «ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հատուկ միջոցները գործադրելու և դրանք ոստիկանության ծառայողներին հատկացնելու, պահպանելու և պիտանելիությունը պարբերաբար ստուգելու կարգը սահմանելու մասին» թիվ 1-Ն հրամանի համաձայն՝ *զրահամեքենաները նախատեսված են զինված հանցագործների ձերբակալմանն ուղղված հատուկ միջոցառումներ իրականացնելու, իրավախախտ անձանց տեղաշարժի ճանապարհները փակելու, արգելապատնեշները ձեռքբերելու և ոստիկանության ծառայողներին դժվար անցանելի տարածքներ հասցնելու համար:*

Ստացվում է, որ զրահամեքենայի՝ որպես հատուկ միջոցի կիրառման դեպքերը, դրա նպատակային գործածումը չեն կարող պայմանավորվել հոգեբանաֆիզիոլոգիական ազդեցության միջոցով իրավախախտների նկատմամբ կանխարգելիչ և վնասազերծող գործողությունների իրականացման հետ:

Հետևաբար, նշված դեպքերում զրահամեքենաների տեղակայումը կանխարգելիչ նպատակներով, բռնությունների կամ զինված ընդհարումների անմիջական սպառնալիք չպարունակող խաղաղ հավաքների անցկացման պայմաններում, համարժեք չէր իրավիճակին: Ճիշտ հակառակը, նման պայմաններում զրահամեքենաների տեղակայման փաստն ինքնին կարող էր բացասական հոգեբանական ներգործություն ունենար խաղաղ հավաքի մասնակիցների վրա:

<sup>352</sup> Տե՛ս <https://factor.am/48504.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>353</sup> Տե՛ս <https://factor.am/47607.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):



Եվրոպական դատարանն իր վճիռներից մեկում, անդրադառնալով հատուկ միջոցի՝ նոնականետի միջոցով արցունքաբեր գազ պարունակող նոնակի կիրառման իրավաչափությանը, նշել է, որ տվյալ հատուկ միջոցի բնույթի, անձի առողջությանը վնաս պատճառելու հնարավորության հաշվառմամբ՝ պետք է կիրառելի լինեն մահաբեր ուժի՝ իր կողմից ձևավորած չափանիշները:

Եվրոպական դատարանն ընդգծել է, որ թեև խնդրո առարկա ոստիկանական գործողություններն արտոնված են, այնուամենայնիվ, դրանք պետք է բավականաչափ կարգավորված լինեն ներպետական օրենսդրությամբ՝ կամայականության դեմ համաչափ և արդյունավետ երաշխիքների շրջանակներում: Ըստ դատարանի, անհրաժեշտ է ունենալ նոնակների գործադրման ուղեցույցեր, ինչպես նաև, որ ոստիկանության աշխատակիցները չպետք է ունենան հատուկ միջոցները կիրառելու չափազանց լայն հայեցողություն և հատուկ միջոցների կիրառման չկանոնակարգված նախաձեռնություն ցուցաբերելու հնարավորություն, որի համար անհրաժեշտ է, որ ոստիկաններն անցնեն անհրաժեշտ պատրաստություն և ուսուցում և ունենան հատուկ միջոցի կիրառման հստակ ցուցումներ<sup>354</sup>:

Ասվածի հիման վրա Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ **Ոստիկանության ծառայողների կողմից հատուկ միջոցների կիրառման իրավաչափության պայմանների խստագույնս պահպանումը ենթադրում է, որ ցանկացած նմանատիպ խախտում պետք է համարժեք իրավական գնահատական ստանա:**

Այս առումով, հարկ է նշել, որ Գլխավոր դատախազության ներկայացրած տեղեկության համաձայն՝ 2018 թվականի ապրիլի 16-ին և ապրիլի 22-ին համապատասխանաբար՝ Երևան քաղաքի Բաղրամյան և Արցախի պողոտաներում ՀՀ ոստիկանության զորքերի ծառայողների կողմից պայթուցիկ և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ սարքերի, առարկաների կամ նյութերի հետ վարվելու կանոնները խախտելու և դրանով մարդու առողջությանն անգուշությամբ թեթև և միջին ծանրության վնաս պատճառելու դեպքերի առթիվ Հատուկ քննչական ծառայությունում նախաձեռնվել է քրեական վարույթ, և ՀՀ ոստիկանության զորքերի նախկին հրամանատարին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի (պաշտոնեական լիազորություններն անցնելու) 2-րդ մասով և 309-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքների համար<sup>355</sup>:

Միևնույն ժամանակ, Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է սկզբունքային դիրքորոշումն առ այն, որ **ցուցարարի կամ ցանկացած այլ անձի հետ շփվող յուրաքանչյուր ոստիկան պետք է սպառնիչ տիրապետի ինչպես անձի իրավունքներին, այնպես էլ այդ իրավունքների իրացումն ապահովող Ոստիկանության պարտականություններին: Խոսքը հատկապես վերաբերում է անձի իրավունքներին միջամտություն ենթադրող ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների, հրազենի և մարտական տեխնիկայի գործադրմանը, որոնք պահանջում են, որ ոստիկանության ծառայողը նմանատիպ իրադրություններում գործելու ունակությունը որոշող ստուգումներ անցնի և ունենա հատուկ որակավորում:**

**14. Ոստիկանության գործողությունների իրավաչափությունը՝ կապված հավաքի կազմակերպիչներին հավաքի անցկացման վայրից հեռացնելու և ազատությունից զրկելու հետ**

Ապրիլի 22-ին Արցախի պողոտայում անցկացվող հավաքի վայրից ձերբակալվեց հավաքի կազմակերպիչ՝ Ազգային ժողովի պատգամավոր Նիկոլ Փաշինյանը<sup>356</sup>: Ապրիլի 22-ի

<sup>354</sup> Աբդուլլահ Յասա և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի (*Abdullah Yasa and Others v. Turkey*), գանգատ թիվ 44827/08, 16/07/13:

<sup>355</sup> Տե՛ս նաև Հատուկ քննչական ծառայության 2019 թվականի մարտի 20-ի հայտարարությունը. <http://www.ccc.am/hy/1428493746/3/6045>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>356</sup> Տե՛ս <https://factor.am/48557.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

գիշերը բերման ենթարկվեցին նաև Դավիթ Սանասարյանն ու Արմեն Գրիգորյանը<sup>357</sup>: Նույն օրը բերման ենթարկվեցին հավաքի կազմակերպիչներ՝ Ազգային ժողովի պատգամավորներ Արարատ Միրզոյանը, Սասուն Միքայելյանը<sup>358</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանի՝ հավաքների մշտադիտարկման և ազատությունից զրկված անձանց իրավունքների երաշխավորմանն անմիջականորեն հետևելու սկզբունքների պահպանմամբ՝ Պաշտպանի կողմից անմիջապես իրականացվեցին այցեր՝ հավաքի կազմակերպիչների հետ առանձնազրույցների նպատակով:

Այսպես, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանն ապրիլի 21-ի լույս 22-ի գիշերը ժամը 03:30-ի սահմաններում անձամբ այցելեց Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Ձերբակալված անձանց պահման վայրում պահվող Դավիթ Սանասարյանին: Ուսումնասիրվեցին վերջինիս ազատությունից զրկելու հիմքերը, ինչպես նաև բժշկական հետազոտության և նրա մյուս իրավունքների ապահովման վիճակը: Դրանից բացի, առանձնազրույցի ընթացքում Սանասարյանի կողմից բարձրացվեցին իր իրավունքներին առնչվող մի շարք հարցեր, այդ թվում՝ ռադիոընդունիչի տրամադրման հարց, որը տեղում լուծում ստացավ: Դավիթ Սանասարյանի իրավունքների, այդ թվում՝ պաշտպանության իրավունքի ապահովման նպատակով անմիջապես հետո կապ հաստատվեց նաև նրա փաստաբան Ինեսա Պետրոսյանի հետ:

Նույն սկզբունքով Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի ղեկավար Լևոն Բարսեղյանի ձերբակալումից անմիջապես հետո այդ մասին Մարդու իրավունքների պաշտպանին պատշաճ կերպով տեղեկացրել էր նրա փաստաբան Հայկուհի Հարությունյանը: Պաշտպանն անձամբ կապի մեջ է եղել փաստաբանի հետ և իր իրավասության սահմաններում աջակցություն ցուցաբերել փաստաբանին՝ Լևոն Բարսեղյանի ազատ արձակման հարցում<sup>359</sup>:

Ապրիլի 22-ի առավոտյան Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները Ոստիկանության Ձերբակալվածների պահման վայրում առանձնազրույց ունեցան Արմեն Գրիգորյանի հետ, ստուգվեցին վերջինիս պահման պայմաններն ու իրավունքների ապահովման վիճակը:

Ապրիլի 23-ի վաղ առավոտյան Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանն այցելեց նաև Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Ձերբակալված անձանց պահելու վայր՝ տեսակցելու Ազգային ժողովի պատգամավոր Նիկոլ Փաշինյանին: Առանձնազրույցի ընթացքում քննարկվեցին Նիկոլ Փաշինյանի իրավունքների ապահովմանն առնչվող հարցեր, այդ թվում՝ կապված նրան ձերբակալելու, փաստաբանի իրավունքից օգտվելու և այլ հարցերի հետ<sup>360</sup>: Նույն օրը Պաշտպանն այցելեց նաև Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Ձերբակալված անձանց պահման վայրում գտնվող ՀՀ ԱԺ պատգամավորներ Արարատ Միրզոյանին, Սասուն Միքայելյանին, ինչպես նաև Դավիթ Սանասարյանին, Արմեն Գրիգորյանին և ձերբակալված մի շարք այլ անձանց:

357

Տե՛ս

<https://hraparak.am/post/5adc258caa33b34bf33098cf?posts/5adc258caa33b34bf33098cf/%D5%A4%D5%A1%D5%BE%D5%AB%D5%A9-%D5%BD%D5%A1%D5%B6%D5%A1%D5%BD%D5%A1%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6%D5%AB%D5%B6-%D5%B1%D5%A5%D6%80%D5%A2%D5%A1%D5%AF%D5%A1%D5%AC%D5%A5%D6%81%D5%AB%D5%B6>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>358</sup> Տե՛ս <https://factor.am/48604.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>359</sup> Տե՛ս <http://www.pashtpan.am/media/pashtpann-aycelel-e-davit-sanasaryanin.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>360</sup> Տե՛ս <http://www.pashtpan.am/media/pashtpany-voghchunum-e-azat-arzakumy.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ազատությունից զրկված անձանց իրավունքների մշտադիտարկման հատուկ սկզբունքներից էլնելով՝ Պաշտպանն առանձնագրույցներ ունեցավ նշված բոլոր անձանց հետ՝ հատուկ ուշադրություն դարձնելով վերջիններիս պահման պայմաններին, համապատասխան փաստաթղթերի արձանագրման պատշաճությանը, ձեռքակալվածներին պահելու վայրի աշխատակիցների դրսևորած վերաբերմունքին: Արձանագրվեց, որ ձեռքակալվածները պահման պայմաններից և իրենց նկատմամբ վերաբերմունքից դժգոհություն չունեն: Նորություններին ծանոթանալու նպատակով պատգամավորներին ռադիոընդունիչ տրամադրելու հարցը տեղում բարձրացվեց և լուծում ստացավ: Երկու ձեռքակալվածի դեպքում տեղում բարձրացվեց և լուծում ստացավ նաև զանգի իրավունքի ապահովման հարցը<sup>361</sup>:

Խիստ մտահոգիչ էր այն, որ ապրիլի 22-ին ձեռքակալվեց նաև Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի խորհրդի նախագահ Ստեփան Գրիգորյանը<sup>362</sup>: Անմիջապես, Պաշտպանի հանձնարարությամբ, տեղի ունեցավ այց Ս.Գրիգորյանին: Առանձնագրույցի ընթացքում Գրիգորյանի տեղեկացմամբ՝ ինքն արգելանքի է վերցվել, երբ ժողովրդից առանձնացել է, ձեռքերը վեր բարձրացրել և վանկարկել է «Ազատություն Նիկոլին»:

Մարդու իրավունքների պաշտպանը նույն օրը իշխանություններին ներկայացրեց Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի նախագահ Ստեփան Գրիգորյանին անհապաղ ազատ արձակելու պահանջ, որից հետո վերջինս ազատ արձակվեց<sup>363</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանի դիտարկմամբ՝ **2018 թվականի ապրիլյան հավաքների կազմակերպիչների գործողություններին՝ որպես հակաիրավական, այդ թվում՝ քրեական օրենքով արգելված արարքներին տրված գնահատականները, դրանցով պայմանավորված՝ վերջիններիս ձեռքակալումներն ու քրեական հետապնդումները կարող էին առաջ բերել հավաքների ազատության իրավունքին ոչ համաչափ միջամտություն:**

Ասվածը հիմնավորվում է հավաքի կազմակերպիչների նկատմամբ քրեական հետապնդման հիմքում ընկած հանգամանքների և խնդրո առարկա իրավունքի բովանդակության և իրավաչափ շրջանակների համեմատության հիման վրա:

Այսպես, իրավունքի գերակայության սկզբունքը պահանջում է, որ իրավունքի ցանկացած սահմանափակում, նույնիսկ եթե օրինական է և հետապնդում է իրավաչափ նպատակ, լինի **համաչափ վերը նշված իրավաչափ նպատակներից որևէ մեկին հասնելու համար:** Համաչափության սկզբունքը պահանջում է, որպեսզի **ցանկացած սահմանափակում պայմանավորված լինի հասարակական սուր պահանջով, և սահմանափակման համար ընտրված միջոցները լինեն անհրաժեշտ ու բավարար, առկա լինի ռացիոնալ կապ միջոցի ու հետապնդվող նպատակի միջև:** Այլ կերպ՝ յուրաքանչյուր առանձին դեպքում անհրաժեշտ է սահմանել արդարացի հավասարակշռություն սահմանափակման և հետապնդվող իրավաչափ նպատակի, հավաքի մասնակիցների և ընդհանուրի շահերի միջև:

**Համաչափության սկզբունքը նաև ենթադրում է, որ նույնիսկ եթե հավաքն անօրինական է, սակայն իր բնույթով խաղաղ, պետական մարմինները կրում են այս իրավունքի իրականացումն ապահովելու պոզիտիվ պարտականություն:** Հիմնական բաժանարար գիծը պետք է լինի բռնության անխուսափելի վտանգի առկայությունը<sup>364</sup>:

<sup>361</sup> Տե՛ս <http://www.pashtpan.am/media/pashtpan-aycelel-e-patgamavornerin.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>362</sup> Տե՛ս <https://factor.am/48610.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>363</sup> Տե՛ս <http://pashtpan.am/media/stepan-grigoryan.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>364</sup> Առավել մանրամասն տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների վերաբերյալ, էջեր

Հավաքների ազատության իրավունքի սահմանափակման համաչափության ունիվերսալ սկզբունքի միջազգային իրավական ընկալումը հիմք է տալիս պնդելու, որ բոլոր այն իրավիճակներում, երբ հավաքների ազատության էությունը չի խաթարվել, առկա չեն բռնության կամ դրա անմիջական վտանգի՝ իրավունքի չարաշահման դրսևորումներ, պետությունը կրում է հավաքների ազատության իրացումը երաշխավորելու պարտականություն, իսկ նման պայմաններում այդ իրավունքն իրացնող անձանց նկատմամբ քրեական հետապնդումն ու ազատությունից զրկումն անխուսափելիորեն առաջ են բերում իրավունքին ոչ համաչափ միջամտության հարց:

Խաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքի հարցերով ՄԱԿ հատուկ զեկուցողը, 2012 թվականի զեկույցում անդրադառնալով հավաքների ազատության իրավունքի երաշխավորման և պահպանման միջազգային լավագույն փորձին, մասնավորապես նշել է, որ հավաքների անցկացման վերաբերյալ նախնական իրազեկման ընթացակարգի տրամաբանությունն այն է, որ իշխանությունները հնարավորություն ունենան նպաստելու հավաքի անցկացմանը և պաշտպանելու հասարակական կարգն ու անվտանգությունը, այլոց իրավունքներն ու ազատությունները: Հետևաբար, հավաքի կազմակերպիչների՝ իրազեկման պարտականության չկատարումն ինքնաբերաբար չի կարող հիմք ծառայել ո՛չ հավաքը ցրելու, ո՛չ հավաքի կազմակերպիչների նկատմամբ քրեական կամ վարչական պատժամիջոցների կիրառման համար, որոնք կառաջացնեն տուգանք կամ ազատազրկում<sup>365</sup>:

Հավաքների ազատության իրավունքն իրացնելիս անձի նկատմամբ պատժամիջոցների կիրառման համաչափության խնդրին անդրադարձել է նաև Եվրոպական դատարանը՝ մասնավորապես, վերահաստատելով, որ Կոնվենցիայի 11-րդ հոդվածով երաշխավորված հավաքների ազատության իրավունքի պաշտպանության տիրույթում են նաև ցույցերը, որոնք կարող են անհանգստացնել կամ վիրավորել անձանց, ովքեր դեմ են հավաքի առաջ քաշած գաղափարներին կամ պահանջներին: Դատարանն ընդգծել է, որ **հավաքների ազատությանը միջամտող միջոցները, բացառությամբ բռնության հրահրման և ժողովրդավարական սկզբունքները մերժելու դեպքերի, վնասում և հաճախ վտանգում են ժողովրդավարությունը, որքան էլ հնչած տեսակետներն ու ձևակերպումները ցնցող կամ անընդունելի լինեն իշխանությունների համար:**

Դատարանն իրավունքների սահմանափակման համաչափության գնահատման վերաբերելի գործոններ է դիտարկել նաև կիրառված պատժամիջոցների բնույթն ու խստությունը՝ նշելով, որ **ցուցարարների նկատմամբ քրեական բնույթի պատժամիջոցների կիրառումը պահանջում է կոնկրետ պատճառաբանվածություն (particular justification): Մկզբունքորեն, խաղաղ հավաքները չպետք է քրեական պատժի, հատկապես՝ ազատազրկման կիրառման վտանգի ենթարկվեն:** Նման դեպքերը, երբ ոչ բռնի վարքագծի արդյունքում կիրառվում է ազատազրկում, Դատարանի կողմից ուսումնասիրվում են հատուկ ուշադրությամբ<sup>366</sup>:

Ընդ որում, հարկ է նշել, որ 2018 թվականի ապրիլյան իրադարձությունների վերաբերյալ Եվրամիության հայտարարությամբ մտահոգություն արտահայտվեց ձերբակալումների արդյունքում հավաքների ազատության իրավունքին ոչ համաչափ միջամտության առումով՝ հորդորելով, որ Հայաստանի իշխանությունները լիովին հարգեն այդ իրավունքը և ապահովեն օրենքի արդար, համաչափ կիրառումը, ինչպես նաև Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունները՝ ներառյալ՝ Մարդու իրավունքների և հիմնարար

<sup>365</sup>Տե՛ս [https://www.ohchr.org/Documents/HRBodies/HRCouncil/RegularSession/Session20/A-HRC-20-27\\_en.pdf](https://www.ohchr.org/Documents/HRBodies/HRCouncil/RegularSession/Session20/A-HRC-20-27_en.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>366</sup> Տե՛ս *U. Lashmankin v. Russia* և այլքն ընդդեմ Ռուսաստանի (*Lashmankin v. Russia*) գործով 2017 թվականի փետրվարի 7-ի վճիռն, զանգատ թիվ 57818/09:

ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի համաձայն: Նշվեց նաև, որ բոլոր նրանք, ովքեր ձերբակալվել են օրենքով սահմանված կարգով իրենց հիմնարար իրավունքի իրականացման ընթացքում, պետք է անհապաղ ազատ արձակվեն<sup>367</sup>:

Հատուկ քննչական ծառայության հայտարարության համաձայն՝ 24 ցուցարարներ, որոնց թվում՝ հավաքի կազմակերպիչները, ձերբակալվել են ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 225.1-րդ հոդվածի 1-ին մասով քննվող՝ զանգվածային անկարգությունների և անօրինական հավաքների վերաբերյալ քրեական գործի շրջանակներում<sup>368</sup>:

Հավաքի կազմակերպիչների ձերբակալման հիմքը, ըստ ՀՀ գլխավոր դատախազության հայտարարության<sup>369</sup>, ՀՀ քրեական օրենսգրքի 225.1-րդ հոդվածով նախատեսված հանցանքի՝ օրենքով սահմանված կարգի խախտմամբ հավաք դիտավորությամբ կազմակերպելու և անցկացնելու անմիջականորեն ծագած կասկածանքն է, իսկ ձերբակալումն իրականացվել է հանցագործության կատարումը կանխելու նպատակով:

Հավաքի կազմակերպիչների նկատմամբ քրեական հետապնդման հիմք ծառայած անօրինական գործողությունները, ըստ Դատախազության, դրսևորվել են նրանում, որ *«վերջիններս «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգի խախտմամբ ապրիլի 13-ից կազմակերպել և անցկացրել են հավաքներ՝ անտեսելով լիազոր մարմնի՝ Երևանի քաղաքապետարանի կողմից սահմանված սահմանափակումները: Իսկ 2018 թվականի ապրիլի 19-ից 22-ը Երևան քաղաքի տարբեր վարչական շրջաններում կազմակերպել են հավաքներ, որոնց մասին օրենքով սահմանված կարգով չեն իրազեկել լիազոր մարմնին: (...): խոչընդոտել են հավաքի անցկացման վայրում գտնվող կամ դրան հարող շենքերի, շինությունների կամ այլ տարածքների ազատ մուտքն ու ելքը, հավաքի ընթացքում անհրաժեշտ միջոցներ չեն ձեռնարկել հավաքի բնականոն ընթացքն ապահովելու համար, հավաքը դադարեցնելու մասին ոստիկանության պահանջի մասին չեն տեղեկացրել հավաքի մասնակիցներին:*

*Ավելին, անօրինական հավաքների, ներառյալ՝ երթերի ընթացքում Նիկոլ Փաշինյանը Արարատ Միրզոյանը և Սասուն Միքայելյանը պարբերաբար հորդորել են հավաքի մասնակիցներին և այլ անձանց շրջափակել քաղաքի փողոցները, արգելափակել պետական մարմինների շենքերի մուտքերը, ներխուժել նշված, այդ թվում՝ հատուկ պահպանության ենթակա շենքերի տարածքներ, կազմալուծել դրանց աշխատանքը (...):»:*

Հավաքի կազմակերպիչներին և մասնակիցներին (Քրեական օրենսգրքի 225.1-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի շրջանակներում) ձերբակալելու հիմքում, փաստորեն, ի թիվս այլնի, քրեական հետապնդման մարմնի կողմից հաշվի են առնվել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝ հավաքի անցկացման վերաբերյալ սահմանափակումները խախտելը կամ դրա մասին պատշաճ չիրազեկելը, փողոցները շրջափակելը, պետական մարմինների շենքեր մուտք գործելն ու դրանց աշխատանքի կազմալուծումը:

Ստացվում է, որ հավաքի կազմակերպիչների և մասնակիցների վերոնշյալ գործողությունները դիտարկվել են որպես ՀՀ քրեական օրենսգրքի 225.1-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի՝ *օրենքով սահմանված կարգի խախտմամբ հավաքը դիտավորությամբ կազմակերպելու և անցկացնելու* օբյեկտիվ կողմի դրսևորումներ:

Մինչդեռ, քրեական հետապնդման մարմինների կողմից **խնդրո առարկա հանցակազմի շրջանակների այնչափ լայն մեկնաբանությունը, որ քրեաիրավական արգելքի ներքո կարող են ներառվել նաև հավաքների ազատության իրավունքի պաշտպանության տիրույթում**

<sup>367</sup> Տե՛ս <https://www.azatutyun.am/a/29185304.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>368</sup> Տե՛ս <http://www.ccc.am/hy/1428493746/3/5833>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>369</sup> Տե՛ս <http://www.prosecutor.am/am/mo/7072/>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

գտնվող գործողություններ, որոշակիորեն հակասում էր հավաքների ազատության իրավունքի սահմանադրաիրավական և միջազգային իրավական բովանդակությանը:

Ուստի, հավաքների ազատության իրավունքին անհամաչափ միջամտության անթույլատրելիությամբ պայմանավորված՝ Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակավ ողջունեց Ազգային ժողովի պատգամավորներ Նիկոլ Փաշինյանի, Մասուն Միքայելյանի և Արարատ Միրզոյանի ազատ արձակումը ձերբակալումից: Հավաքի կազմակերպիչների քրեական հետապնդման խնդրի հետ կապված՝ Մարդու իրավունքների պաշտպանն ի գիտություն է ընդունել վարույթն իրականացնող մարմնի՝ 2018 թվականի հունիսի 21-ի որոշումը՝ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին՝ վերը նշված անձանց արարքներում հանցակազմի բացակայության հիմքով<sup>370</sup>:

### ***15. Լրագրողների անխոչընդոտ գործունեության երաշխավորումը. արձանագրված խնդիրները***

2018 թվականի ապրիլյան իրադարձությունների լարված և արտակարգ պայմաններում անփոխարինելի նշանակություն ունեցան զանգվածային լրատվության միջոցներն ու լրագրողների աշխատանքը: Կարևոր էր նաև սոցիալական ցանցերի դերը, որոնք նույնպես ազատ խոսքի բաղադրիչ են:

Լրագրողների՝ հավաքների անցկացման վայրերում մշտապես գտնվելու ու իրական ժամանակում տեսանկարահանումների շնորհիվ ոչ միայն ապահովվեց հասարակության լիարժեք տեղեկացվածությունն ապրիլյան իրադարձությունների զարգացումների վերաբերյալ, այլև բարձրացավ Ոստիկանության գործողությունների հանրային հաշվետվողականությունը:

Այս առումով, Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է սկզբունքային դիրքորոշումը, որ կարծիքի արտահայտման և խոսքի ազատության ամուր պաշտպանվածությունը ժողովրդավարական հասարակությունում ունի կարևորագույն նշանակություն: Սա իր հերթին կարող է ապահովվել մամուլի դերի ու նշանակության արժևորմամբ, լրագրողների ազատ գործունեության երաշխավորմամբ:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2016 թվականի ապրիլի 13-ի «Լրագրողական գործունեության և լրագրողների ու մամուլի մասնակիցների ապահովության պաշտպանության մասին» թիվ CM/Rec(2016)4[1] հանձնարարականը սահմանում է, որ խոսքի ազատության համար բարենպաստ միջավայրը պետք է ունենա մի շարք առանցքային հատկանիշներ, որոնք համակցության մեջ խոսքի և տեղեկատվության ազատության և ակտիվ հանրային բանավեճերի զարգացման պայմաններ կստեղծեն: Տեղեկություններ ստանալու իրավունքը ներառում է տեղեկությունների հասանելիության իրավունքը: Հասարակությունն իրավունք ունի ստանալու հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկություններ և գաղափարներ, որոնք լրատվական գործունեություն իրականացնողները խնդիր ունեն տարածելու: Տեղեկությունների հավաքագրումը լրագրողական գործունեության կարևոր նախապատրաստական քայլ է և մամուլի ազատության պաշտպանության ենթակա բաղկացուցիչ մասը: Լրագրողների և մամուլի այլ ներկայացուցիչների մասնակցությունը հանրային իրավաչափ մտահոգության հարցերով հանրային բանավեճերին չպետք է խոչընդոտվի, օրինակ, տեղեկությունը հասանելի դարձնելու միջոցները ծանրաբեռնելով կամ կամայական սահմանափակումներով, որոնք կարող են դառնալ անուղղակի գրաքննության եղանակներ:

<sup>370</sup> Տե՛ս <http://www.ccc.am/hy/1428493746/3/5898>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Հանձնարարականի՝ հանրային բանավեճին նպաստելու սկզբունքն ամրագրող 30-րդ կետի համաձայն՝ ժողովրդավարական հասարակությունում լրագրողների և լրատվական ոլորտի այլ ներկայացուցիչների անխոչընդոտ գործունեությունն ապահովելու տեսանկյունից Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ վերջիններին խոսքի ազատությունը պետք է լայնորեն պաշտպանված լինի: Այսպիսի պաշտպանությունը պետք է ընդգրկի նրանց գործունեության հետ գործառության կապ ունեցող երաշխիքներ, որոնց թվում առանձնացված են տեղեկատվության աղբյուրի գաղտնիությունը, լուրերի և տեղեկությունների հավաքման գործընթացի պաշտպանվածությունը, խմբագրման ու ներկայացման ինքնավարությունը և այլն: Այս սկզբունքը ենթադրում է նաև, որ լրագրողի գործառնական կամ գործառության կապ ազատությունները, որոնք ներառում են լուրերը, տեղեկությունների հավաքումը, մշակումն ու տարածումը, անհրաժեշտ են լրագրողի խոսքի ազատությունը գործնական և արդյունավետ դարձնելու համար:

Հանձնարարականի «Սկզբունքներ» բաժնի 2-րդ կետի համաձայն՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված խոսքի և տեղեկատվության ազատության իրավունքը ժողովրդավարական հասարակության առանցքային հիմքերից է, դրա առաջընթացի և յուրաքանչյուր անհատի զարգացման պայմաններից մեկը: Խոսքի ազատությունը կիրառելի է ոչ միայն ընդունելի, անվնաս կամ չեզոք տեղեկությունների կամ գաղափարների, այլև այնպիսի տեղեկությունների նկատմամբ, որոնք վիրավորում, ցնցում կամ անհանգստացնում են պետությանը կամ հասարակության որոշակի խմբին: Այդպիսով, խոսքի ազատությունը նպաստում է ողջամիտ հանրային բանավեճին, որն իր հերթին բազմակարծության, հանդուրժողականության վրա հիմնված ժողովրդավարական հասարակության նախադրյալ է: Լրագրողների ու մամուլի մասնակիցների այդ իրավունքին ցանկացած միջամտություն ունենում է սոցիալական հետևանքներ, քանի որ նման սահմանափակումը միջամտում է նաև տեղեկություններ փնտրելու և ստանալու այլոց իրավունքին ու հանրային բանավեճին<sup>371</sup>:

Այսպիսով, միջազգային իրավաբանությունը վկայում է, որ լրագրողներն ու լրատվության ոլորտի ներկայացուցիչները կարևոր դեր ունեն ժողովրդավարական հասարակությունում հանրային բանավեճերի և որոշումների կայացման գործընթացներում՝ իբրև հանրային կամ սոցիալական դիտորդներ (watchdogs) հանդես գալու և տեղեկատվության ու գաղափարների փոխանակման, դրանց քննարկման ընդհանուր հարթակներ ստեղծելու միջոցով:

Ապրիլյան հավաքների օրերին Մարդու իրավունքների պաշտպանը մշտապես հատուկ ուշադրությամբ է հետևել լրագրողների բնականոն աշխատանքի ապահովմանն այն բանի գիտակցմամբ, որ վերջիններին անխոչընդոտ մասնագիտական աշխատանքն ու պաշտպանվածությունը մեր երկրում ժողովրդավարության զարգացման գրավականներից է:

Այս առումով, 2018 թվականի ապրիլի 21-ին Մարդու իրավունքների պաշտպանը հայտարարություն տարածեց՝ հրապարակավ մտահոգություն հայտնելով «Ազատություն» ռադիոկայանի լրագրողի մասնագիտական աշխատանքը խոչընդոտելու ու նրա նկատմամբ բռնությունը կիրառելու դեպքի կապակցությամբ, ինչպես նաև կարևորելով դրա առթիվ քննության նախաձեռնումը<sup>372</sup>:

<sup>371</sup> Տե՛ս նաև 2017 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 171-176:

<sup>372</sup> Տե՛ս <http://www.ombuds.am/media/bacarel-brnutyun.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Հաշվի առնելով ապրիլյան օրերին հաճախակի դարձող բռնությունների դեպքերը՝ Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակավ հորդորեց լրագրողներին չզստնվել բռնության գործադրման կամ բռնության իրական վտանգ պարունակող վայրում: Միննույն ժամանակ, ասվածը չի նշանակում, թե պետությունն այդպիսով ազատվում է լրագրողի մասնագիտական օրինական գործունեության երաշխավորման իր պարտականությունից՝ դրա բեռը բաշխելով իրավունքի հասցեատիրոջ՝ լրատվական գործունեություն իրականացնողի վրա: Պետությունն ամեն դեպքում կրում է, հատկապես հավաքների և հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի լուսաբանման ընթացքում, լրագրողների իրավունքների երաշխավորման պարտականություն, ինչը երկակի բովանդակություն ունի՝ թե՛ որպես պետության նեգատիվ պարտականություն (պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից վատ վերաբերմունքի դրսևորումից ձեռնպահ մնալու պարտականությունը), թե՛ որպես պոզիտիվ պարտականություն (լրագրողների գործունեության անվտանգ պայմանների ստեղծումը, խախտման յուրաքանչյուր դեպքով արդյունավետ քննության իրականացում) և այլն:

Այսպես, 2018 թվականի ապրիլի 20-ին և 21-ին զանգվածային լրատվության միջոցներով տեղեկություններ էին հրապարակվել, որ քաղաքացիական հագուստով անձինք բռնություն կիրառելու միջոցով խոչընդոտել են նաև «Iragir.am», «Azatutyun.am» կայքերի լրագրողների նկատմամբ<sup>373</sup>:

Զանգվածային լրատվության միջոցներով տեղեկություններ են հրապարակվել, որ 2018 թվականի ապրիլի 19-ին Կառավարական 3-րդ շենքի մոտ մասնագիտական գործունեությունն իրականացնելիս քաղաքացիական հագուստով երկու անձինք բռնություն են կիրառել լրագրող Տիրայր Մուրադյանի նկատմամբ, որի արդյունքում Տ. Մուրադյանը գլխի սալջարդ է ստացել և տեղափոխվել հիվանդանոց: Առավել մտահոգիչ է, որ ըստ տուժած լրագրողի՝ իր նկատմամբ բռնության գործադրման ականատես էին եղել ոստիկանության ծառայողները<sup>374</sup>:

**Ընդ որում, հրապարակված տեղեկությունները վկայում են, որ լրագրողների նկատմամբ բռնությունները որոշ դեպքերում ուղեկցվել էին լրագրողական տեխնիկայի վնասմամբ, ինչը վկայությունն է այն բանի, որ լրագրողները թիրախավորվել են, և նրանց նկատմամբ ոստիկանություններն իրականացվել են հենց լրագրողական գործունեությունը խոչընդոտելու նպատակով:**

Այսպես, ապրիլի 18-ին տեղեկություններ են տարածվել նաև, որ Թումանյան փողոցի խաչմերուկում բռնություն է կիրառվել Factor TV-ի գլխավոր խմբագրի և օպերատորի նկատմամբ: Մասնավորապես, փորձել են վերջիններիս ծեծի ենթարկել, քաշքշել են, պոկել լրագրողական բեյջը և վնասել տեխնիկան<sup>375</sup>:

Ապրիլի 22-ին Երևան քաղաքի Աճառյան փողոցում բժշկական դիմակներով մի խումբ անձինք հարվածներ են հասցրել Հանրային ռադիոյի լրագրող, պրոդյուսեր Վրույր Թադևոսյանի գլխի շրջանում, նրանից խլել հեռախոսն ու պլանշետային համակարգիչը, վնասել են ավտոմեքենան<sup>376</sup>:

Լրագրողները վնաս են կրել նաև Ոստիկանության կողմից հատուկ միջոցների կիրառման արդյունքում: Ըստ հրապարակված տեղեկությունների վնասվել է Factor.am ինտերնետային լրատվամիջոցի օպերատորի ձեռքը, կոտրվել է տեսախցիկը և ուղիղ

<sup>373</sup> Տե՛ս <http://www.lin.am/2338344.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Տե՛ս <https://www.azatutyun.am/a/29184006.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>374</sup> Տե՛ս <http://www.armtimes.com/hy/article/135750>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>375</sup> Տե՛ս <http://armtimes.com/hy/article/135659>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>376</sup> Տե՛ս <http://hetq.am/arm/news/87999/Iragrox-vruyr-tadevosyani-handep-brnutyan-depqi-artiv-qreakan-gorts-chi-harucvel.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<https://www.azatutyun.am/a/29201929.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):



հեռարձակման սարքը, ինչպես նաև վնասվել է 168.am լրատվամիջոցի լրագրող Անի Քեշիշյանի ձեռքը, ոտքը և պարանոցի հատվածը<sup>377</sup>:

Վերը նշված բոլոր գործողությունները լրագրողական ազատության անօրինական միջամտություն են: Լրագրողական գործունեությունը ենթադրում է հանրային միջոցառումների, այդ թվում՝ հանրային միջավայրում ոստիկանական գործողությունների տեսանկյան հանում, քանզի դրանով լրագրողը իրականացնում է հանրային նշանակության կարևոր գործառույթ՝ տարածում է տեղեկատվություն հանրությանը հուզող դեպքերի վերաբերյալ, իսկ հանրությունն իր հերթին ունի նման տեղեկատվություն ստանալու իրավունք: **Հետևաբար, լրագրողական գործունեությունը խոչընդոտելու ցանկացած դրսևորում անթույլատրելի է և պետք է պատշաճ իրավական գնահատական ստանա: Այդպիսի ցանկացած ոտնձգություն վտանգում է ոչ միայն լրագրողի իրավունքները, այլև իր բացասական ազդեցությունն է թողնում հասարակության տեղեկացվածության իրավունքի լիարժեք ապահովման վրա:**

Ասվածի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը, լրագրողների նկատմամբ բռնությունների մասին մամուլում հրապարակված տեղեկությունների, ինչպես նաև քաղաքացիներից և կազմակերպություններից ստացված հաղորդումների հիման վրա, ղեկավարվելով «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով, ապրիլի 17-ին որոշում կայացրեց սեփական նախաձեռնությամբ հարցի քննարկում սկսելու մասին, որի շրջանակներում քննարկման առարկա դարձան նաև հետագա օրերին մարդու իրավունքների խախտումների հետ կապված հարցեր:

Մարդու իրավունքների պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ Գլխավոր դատախազության պարզաբանումների համաձայն<sup>378</sup>, 2018 թվականի ապրիլին անցկացված հավաքների ընթացքում լրագրողների մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելու դեպքերի առթիվ նախապատրաստվել են տասը նյութեր՝ տասնմեկ լրագրողի վերաբերյալ: Մեկ դեպքի առթիվ նախապատրաստված նյութերով կայացվել է հանցակազմի բացակայության հիմքով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում: Տասը լրագրողների վերաբերյալ դեպքերի առթիվ նախապատրաստված նյութերով հարուցվել է ինը քրեական գործ: Քրեական գործերի մի մասը հարուցվել է Քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասի՝ *լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու կամ նրան տեղեկություններ տարածելուն կամ տարածելուց հրաժարվելուն հարկադրելու* հանցակազմի հատկանիշներով, իսկ մնացածը՝ վերը նշված հոդվածի և Քրեական օրենսգրքի այլ հոդվածների հատկանիշներով:

Երեք լրագրողների նկատմամբ կատարված ոտնձգությունների առնչությամբ քրեական գործով երեք վարույթներն ավարտվել են՝ չորս անձի նկատմամբ մեղադրական դատավճիռների կայացմամբ: Երկու քրեական գործեր միացվել են մեկ վարույթում, որի շրջանակներում մեկ անձի առաջադրվել է մեղադրանք: Մեկ այլ վարույթ կասեցվել է հանցանք կատարած անձը հայտնի չլինելու հիմքով:

Մարդու իրավունքների պաշտպանի հարցումներին ի պատասխան՝ ներկայացվել են նաև տեղեկություններ լրագրողի կամ նրա մերձավորի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու կամ դա գործադրելու սպառնալիքի դեպքերի կապակցությամբ վարույթների նախաձեռնման և դրանց ընթացքի վերաբերյալ:

Այսպես, 2018 թվականի ապրիլյան հավաքների ընթացքում լրագրողի կամ նրա մերձավորի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու կամ դա գործադրելու սպառնալիքի դեպքերով նախաձեռնվել են երկու վարույթներ՝ ՀՀ քրեական

<sup>377</sup> Տե՛ս <https://168.am/2018/04/16/936882.html>,

<https://factor.am/46792.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>378</sup> Տեղեկությունները տրամադրվել են 2019 թվականի փետրվարի 14-ի դրությամբ:

օրենսգրքի 164-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով (Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը) և ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 3-րդ մասի, 308-րդ հոդվածի 1-ին մասի (Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը) և 309-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով (Պաշտոնեական լիազորություններն անցնելը): Ըստ պարզաբանումների՝ այս վարույթներից մեկը գտնվում է դատական քննության փուլում, մյուսը կասեցվել է՝ հանցանք կատարած անձը հայտնի չլինելու հիմքով:

Ապրիլյան հավաքների ժամանակ տուժած լրագրողական գործունեությամբ զբաղվող անձանց վերաբերյալ դեպքերի մասին ստացված տվյալները Հատուկ քննչական ծառայությունում քննության առարկա են դարձել ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 1-ին մասով (Զենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը) և 309-րդ հոդվածի 3-րդ մասով հարուցված քրեական գործի նախաքննության շրջանակում, իսկ Քննչական կոմիտեում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի (Զանգվածային անկարգությունները) հատկանիշներով քննվող քրեական գործի շրջանակներում:

Քննվող կամ քննված քրեական բոլոր գործերով լրագրողները ստացել են տուժողի դատավարական կարգավիճակ:

Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է 2018 թվականի ապրիլյան հավաքների օրերին լրագրողների գործունեությանը խոչընդոտելու բարձրացված յուրաքանչյուր դեպքով իրավապահ մարմինների կողմից քրեական վարույթների նախաձեռնումն այն առումով, որ նման հանցավոր ոտնձգությունների դեպքում քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի գործնական երաշխավորումն է, որ պետք է կանխարգելի լրագրողների մասնագիտական օրինական գործունեության խոչընդոտումը՝ լինի դա պաշտոնատար անձի, թե այլ անձի կողմից:

#### ***16. Ապրիլյան հավաքների ընթացքում արտահայտվելու ազատության չարաշահումները սոցիալական ցանցերում: Ատելության խոսք և անհանդուրժողականություն***

2018 թվականի ապրիլյան իրադարձությունների ընթացքում սոցիալական ցանցերը ծառայեցին իբրև տեղեկությունների արագ և արդյունավետ տարածման փոխակտիվ հարթակ: Միևնույն ժամանակ, ապրիլյան հավաքների օրերին զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների ուսումնասիրությունը վկայում էր, որ առանձին դեպքերում դրանցում առկա էին բախումների կամ այլ միջադեպերի այնպիսի ձևակերպումներով նկարագրություններ, որոնք սոցիալական ցանցերում հանգեցնում էին ատելության խոսքի ու բռնության կոչերի: Այդ հրապարակումների ներքո սոցիալական ցանցերի առանձին օգտատերերի կողմից խրախուսվում էր բռնությունը, այդ թվում՝ զենքի միջոցով հարցեր լուծելը, իսկ մի շարք դեպքերում կոչ էր արվում «ֆիզիկապես ոչնչացնել», «կյանքից զրկել» ոստիկանության ծառայողների: Սոցիալական ցանցերի ու մյուս հրապարակումների շուրջօրյա ուսումնասիրությունները վկայում էին ատելության խոսքի ու բռնության, այդ թվում՝ զենքի միջոցով հարցեր լուծելու կոչերի ակնհայտ աճի մասին, ինչը նպաստում էր իրավիճակի լարմանը և այդ առումով խիստ անթույլատրելի էր:

Ուստի, Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակային հայտարարությամբ հորդորեց լրատվամիջոցներին նման բոլոր դեպքերում հեռացնել ատելություն կամ բռնության կոչ պարունակող ցանկացած մեկնաբանություն՝ անկախ նրանից դրանք արվում են առերևույթ կեղծ, թե իրական օգտատիրոջ կողմից<sup>379</sup>:

Հատկապես մտահոգիչ էին սոցիալական ցանցերում Ոստիկանության գործողությունները նկարագրող նյութերի ներքո հայտնված մեկնաբանությունները,

<sup>379</sup> Տե՛ս <http://www.ombuds.am/media/bacarel-brnutyun.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

որոնցով արվում են Ոստիկանության ծառայողների նկատմամբ բռնություն գործադրելու, իսկ առանձին դեպքերում նրանց կյանքից զրկելու կոչեր<sup>380</sup>: Ընդ որում, Մարդու իրավունքների պաշտպանի դիտարկումը վկայում է, որ այդ նպատակի համար օգտագործվում էին նաև մի քանի տարի առաջվա տեսանյութեր ու լուսանկարներ:

Խիստ անթույլատրելի ու մտահոգիչ էր այն, որ ատելության խոսքն առավելապես ուղղված էր հավաքների անցկացման վայրում գտնվող ոստիկանության ծառայողների դեմ՝ նրանց արժանապատվությունը նվաստացնող համեմատություններով: Ոստիկանության ծառայողների նկատմամբ վիրավորական նման արտահայտությունները, անգամ սպառնալիքները, թեև պայմանավորված էին երկրում տեղի ունեցող իրադարձություններով, սակայն Ոստիկանության ծառայության նկատմամբ հարգանքի, զայվածության և խաղաղ քաղաքացիական անհնազանդության՝ հավաքների կազմակերպիչների հոչակած սկզբունքների ճիշտ հակառակ պատկերն էին ստեղծում:

Սոցիալական ցանցերում ատելության կոչերի օրեցօր տարածման վտանգը հաշվի առնելով՝ Մարդու իրավունքների պաշտպանն ապրիլյան օրերին հանդես եկավ մի քանի հայտարարություններով՝ ընդգծելով այլոց արժանապատվությունն ու իրավունքները հարգելու յուրաքանչյուրի պարտականությունն ու մամուլի կարևոր դերակատարությունը ատելության խոսքը կանխելու առումով:

Պաշտպանը հրապարակային մտահոգություն հայտնեց, որ այդ օրերին չէին նվազում անհանդուրժողականությունը, ատելության քարոզը, բռնության կոչերը, ընդհուպ՝ ներքին թշնամանքի հրահրումը, որոնց մի մասը թվում է ուղղորդված: Բանն այն է, որ սոցիալական ցանցերում մտահոգիչ միտում էր նկատվել, որ ատելության քարոզն ու բռնության կոչերն արվում էին հատուկ այդ նպատակով բացված խմբերի կողմից՝ որպես կանոն օգտագործելով Ոստիկանության ծառայողների կողմից թույլ տված, այդ թվում՝ նախորդ տարիների ընթացքում ֆիզիկական ուժի գործադրման տեսանյութեր ու լուսանկարներ, ինչպես նաև առկա էին մեկնաբանություններ պայթուցիկ սարքերի կամ հարմարանքների լուսանկարներով:

Դրանից բացի, սոցիալական ցանցերի այդ խմբերում տարածվում էին տեղեկատվական թերթիկներ, որոնք ուղղված են հավաքի մասնակիցներին, եթե նրանց բերման ենթարկեն Ոստիկանության բաժիններ: Այդ թերթիկներում պարունակվող տեղեկությունների զգալի մասը պարունակում էր ակնհայտ ծաղրանք, մարդու արժանապատվությունը նվաստացնող, ինչպես նաև բռնություն հրահրող արարքների կոչեր:

Այդ օրերի մամուլի դիտարկումներն առերևույթ վկայում էին, որ ատելության խոսքը հաճախ տարածվում էր կեղծ օգտատերերի կողմից<sup>381</sup>:

Հատկապես մտահոգիչ էր սոցիալական ցանցերում հասարակության տարբեր խմբերի բաժանմանն ու հակադրմանն միտումը: Այն հաճախ դրսևորվում էր ընդդիմախոսների կարծիքն ընդհանրապես չհանդուրժելով և մարդու արժանապատվությունը նվաստացնող, ընդհուպ՝ ատելություն քարոզող, իսկ առանձին դեպքերում՝ կոնկրետ անձանց դեմ նույնիսկ թշնամանք հրահրող հակադարձումներով:

Մրանք հասարակությունում լարվածության աճին ակնհայտորեն նպաստող գործոններ էին՝ հատկապես հաշվի առնելով, որ մարդկանց ներգրավվածությունը սոցիալական ցանցերում ծավալվող քննարկումներին օրեցօր աճում էր, իսկ զանգվածային հավաքներն ու երթերը դեռ շարունակվում էին:

Մարդկային արժանապատվության ու անձնական կյանքի գաղտնիության լիարժեք պաշտպանության տեսանկյունից մտահոգիչ էին, օրինակ, Ազգային ժողովի

<sup>380</sup> Տե՛ս <http://www.ombuds.am/media/xist-larvac-mtnolort.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>381</sup> Տե՛ս <http://www.ombuds.am/media/chen-nvazum-anhandurjoxakanutyuny.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

պատգամավորների անձնական կյանքին վերաբերող տվյալների, այդ թվում՝ անձնական հեռախոսահամարների խմբային հրապարակումները: Սոցիալական մեդիայի այն տիրույթներում, որոնցում հրապարակվել են այդ հեռախոսահամարները, ակնհայտ էր ծաղրանքը, վիրավորանքն ու ատելության խոսքը: Մարդու իրավունքների պաշտպանն այդ ժամանակ հայտարարեց, որ սա կարող է ստեղծել հանրային գործիչների անձնական տվյալների չսանկցիավորված տարածման միջոցով հոգեբանական ներգործության վտանգավոր նախադեպ:

Այս բարդ իրավիճակում չափազանց կարևոր էր զանգվածային լրատվամիջոցների դերը: Ուստի, Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակավ հորդորեց լրատվամիջոցներին **անհապաղ հեռացնել անհանդուրժողականություն կամ ատելություն քարոզող կամ բռնության կոչ պարունակող ցանկացած մեկնաբանություն՝ անկախ նրանից դրանք արվում են առերևույթ կեղծ, թե իրական օգտատիրոջ կողմից:** Նշվեց նաև, որ ցանկացած հրապարակում անելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել տեղեկությունների ստուգվածությանը և գործել պատասխանատու լրագրության սկզբունքների պահպանմամբ:

Բացի այդ, Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծեց, որ լարվածության ցանկացած աճ կարող էր հանգեցնել մարդու իրավունքների տեսանկյունից վտանգավոր զարգացումների, ինչը պահանջում էր բացառիկ ջանքեր՝ ապահովելու հանդուրժողականությունը և համերաշխությունը<sup>382</sup>:

Եվ այս առումով, հարկ է ընդգծել, որ սոցիալական ցանցի կեղծանունով կամ անանուն աղբյուրից վերցված տեղեկությունների տարածումը լրատվամիջոցների կամ լրագրողների կողմից հակասում է «պատասխանու լրագրություն» և «բարեխիղճ հայտարարություն» (fair comment) լրագրողական մասնագիտական, ինչպես նաև օրինականության և կոնվենցիոն պահանջներին: Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *«հաշվի առնելով, որ արտահայտվելու ազատության իրականացումը կապված է «պարտավորությունների» և «պատասխանատվության» հետ, ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող դեպքերի վերաբերյալ լրատվություն տարածելու 10-րդ հոդվածով սահմանված լրագրողի պաշտպանությունը գործում է, եթե [լրագրողները] գործում են բարեխղճորեն՝ լրագրողական վարքագծի նորմերի հիման վրա ճշգրիտ և վստահելի տեղեկատվություն տրամադրելու նպատակով»*:<sup>383</sup> Պատասխանատու լրագրության սկզբունքը պահանջում է, որ լրատվամիջոցները օգտվեն վստահելի աղբյուրներից, քանի որ առաջին, առաջնահերթ է, որ տարածված տեղեկությունը լինի ճշգրիտ ու վստահելի, երկրորդ, անանուն աղբյուրից վերցրած տեղեկության համար պատասխանատվության կարող է ենթարկվել լրատվամիջոցը՝ հատկապես ատելության խոսքի դեպքում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, ճանաչելով համացանցի «կարևոր դերը» «հանրության համար լուրերի մատչելիությունն ապահովելու և ընդհանրապես տեղեկությունների ավելի արագ տարածման գործում, այնուամենայնիվ, նշել է, որ համացանցը տպագիր մամուլից տարբերվող տեղեկատվության և հաղորդակցության միջոց է: Համացանցում տեղադրվող բովանդակությունն ու դրա միջոցով կատարվող հաղորդակցությունները մարդու իրավունքների և ազատությունների իրացմանը վնաս պատճառելու ավելի մեծ սպառնալիք են պարունակում, քան մամուլը<sup>384</sup>:

Դեյֆի ԱՄ-ն ընդդեմ Էստոնիայի գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ **օգտատերերի կողմից համացանցում արտահայտչական գործունեության ծավալումը**

<sup>382</sup> Տե՛ս <http://www.ombuds.am/media/anhrajesht-e-bacarik-handurjoghakanutyun.html> մայիսի 1, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>383</sup> Բլադետ Տրոմսոն ու Սթենսասան ընդդեմ Նորվեգիայի (Bladet Tromsø and Stensaas v. Norway) գործով 1999 թվականի մայիսի 20-ի վճիռը (ՄՊ), զանգատ թիվ 21980/93, կետ 65:

<sup>384</sup> Տե՛ս «Պրավոյե Դելոյի» խմբագրական խորհուրդը և Շտեկելն ընդդեմ Ուկրաինայի (Editorial Board of Pravoye Delo and Shtekel v. Ukraine) գործով 2011 թվականի մայիսի 5-ի վճիռը, զանգատ թիվ 33014/05, կետ 63:

արտահայտվելու ազատության աննախադեպ հնարավորություն է ստեղծում: Մա անվիճելի է և նախկինում այլ առիթների ժամանակ Դատարանի կողմից արդեն ճանաչվել է<sup>385</sup>: Մակայն, այս առավելությունների հետ մեկտեղ որոշակի վտանգներ ևս կարող են ստեղծվել: **Զրպարտիչ և այլ ակնհայտորեն ոչ իրավաչափ խոսքը, այդ թվում նաև՝ ատելության խոսքը և բռնություն հրահրող կոչերը կարող են վայրկյանների ընթացքում աշխարհով մեկ տարածվել ավելի արագ, քան նախկինում երբևէ տարածվել են, իսկ երբեմն նույնիսկ կայուն մնալ համացանցում:** Այս երկու միմյանց հակասող իրականություններն ընկած են այս գործի հիմքում: Գիտակցելով Կոնվենցիայի հիմքում ընկած արժեքների պաշտպանության անհրաժեշտությունը և հաշվի առնելով այն, որ Կոնվենցիայի 10-րդ և 8-րդ հոդվածներով ամրագրված իրավունքները արժանի են հավասար հարգանքի, անհրաժեշտ է այս երկուսը հավասարակշռել այնպես, որ դրանց էությունը պահպանվի: Այսպիսով, չնայած Դատարանը ճանաչում է այն հանգամանքը, որ **խոսքի ազատության իրացման տեսանկյունից համացանցը կարևոր առավելություններ է տալիս, այն նաև հաշվի է առնում, որ զրպարտիչ կամ այլ անօրինական բովանդակության համար պատասխանատվությունը պետք է սկզբունքորեն պահպանվի և հանդիսանա անձնական իրավունքների խախտման համար արդյունավետ միջոց:**

Դատարանը, սույն գործով անդրադառնալով նաև համացանցում ատելության խոսքի և բռնության հրահրող կոչերի տարածումը սահմանափակելու պարտականությանը, նշել է, որ ատելության խոսքի արդյունքում պոտենցիալ տուժողի՝ համացանցը անընդմեջ մշտադիտարկելու հնարավորությունները շատ ավելի սահմանափակ են, քան ընդարձակ կոմերցիոն համացանցային լրատվական պորտալի՝ այդպիսի մեկնաբանությունների տեղադրումը կանխելու կամ դրանք արագ հեռացնելու հնարավորությունները՝ կարևորելով իր կողմից ներդրված «նկատելուն պես հեռացնելու» համակարգի (notice-and-take-down system) կիրառումը<sup>386</sup>:

Ատելության խոսքի տարածումը կանխելու հարցում լրագրողների և մամուլի դերակատարության հետ ուղղակիորեն կապված է վերջիններիս մասնագիտական գործունեության պաշտպանվածությունը: Այս առումով, պետք է արձանագրել նաև, որ սոցիալական ցանցերում ատելության խոսքի և անհանդուրժողականության տարածումը հանգեցրեց նրան, որ անընդունելի այս երևույթի թիրախում հայտնվեց հենց լրատվամիջոցը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է «Հրապարակ» օրաթերթի նկատմամբ սոցիալական ցանցերում առկա՝ վիրավորանք ու ազատ խոսքի նկատմամբ ոտնձգություն պարունակող վերաբերմունքին: Սոցիալական մեդիայի մշտադիտարկումը ցույց տվեց, որ 2018 թվականի հունիսի 22-ից սկսած՝ արագորեն տարածվում էին կոչեր, որոնք ուղղված էին լրատվամիջոցը «մերժելուն», ու դրանց թվում նշվող պատճառներից էր լրատվամիջոցի «ոչ օբյեկտիվ քննադատությունը»: «Հրապարակ» օրաթերթի էլեկտրոնային կայքի հրապարակումների ներքո առկա էին այդ լրատվամիջոցի ու լրագրողների նկատմամբ վիրավորանք և անձնական բնույթի սպառնալիք պարունակող մեկնաբանություններ:

Խնդրի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանն իր հրապարակային մտահոգությունն արտահայտեց՝ ընդգծելով հատկապես նման երևույթների նկատմամբ իրավասու պետական մարմինների անգործության և հանդուրժող վերաբերմունքի վտանգավոր հետևանքները՝ լրատվամիջոցների ու ընդհանրապես խոսքի ազատության

<sup>385</sup> St' u Ահմեդ Յիլդիրիմն ընդդեմ Թուրքիայի (Ahmet Yıldırım v. Turkey), թիվ 3111/10, կետ 48, ՄԻԵԴ 2012, և (թիվ 1 և 2)Թայմս Նյուսփեյթներն ընդդեմ Միացյալ Թագավորության (Times Newspapers Ltd v. UK), թիվ 3002/03 և 23676/03, կետ 27:

<sup>386</sup> St' u Դելֆի ԱՄ-ն ընդդեմ Էստոնիայի (Delfi AS v. Estonia) գործով 2015 թվականի հունիսի 16-ի վճիռը, զանգատ թիվ 64569/09, կետեր 110, 157-159 (հայերեն թարգմանությամբ):

նկատմամբ ոչ իրավաչափ միջամտության համար նպաստավոր մթնոլորտ ձևավորելու առումով<sup>387</sup>:

### **17. Միջազգային գնահատականները Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքին**

Մարդու իրավունքների պաշտպանի կամ օմբուդսմանի աշխատանքի կարևորության գիտակցումն ու հանրային բարձր վստահությունը, միջազգային հեղինակությունը երկրում մարդու իրավունքների պաշտպանության համակարգի կայացվածության կարևորագույն ցուցիչ են:

Այսպես, Վարչապետում տեղի ունեցած ԵԱՀԿ բարձրաստիճան համաժողովի ընթացքում 2018 թվականի սեպտեմբերի 17-ին Եվրոպական միության և դրա անդամ երկրների անունից Միացյալ Թագավորության կառավարության ներկայացուցիչը հայտարարություն է հրապարակել, որում հատկապես ընդգծվել է Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի և նրա աշխատակազմի դրական դերն այս տարի տեղի ունեցած խաղաղ հավաքների մշտադիտարկման հարցում: «Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքն օրինակ է մեզ բոլորիս համար», - նշված է հայտարարությունում:

Ապրիլ-մայիս ամիսների հավաքների ընթացքում Եվրոպայի Խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարը մշտական կապի մեջ է եղել Պաշտպանի հետ: 2018 թվականի ապրիլի 23-ին Միյատովիչի նախաձեռնությամբ տեղի ունեցած քննարկման ընթացքում **հանձնակատարը բարձր է գնահատել այս օրերին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքը և խնդրել է տեղեկացնել հետագա զարգացումների մասին**<sup>388</sup>:

ԵԱՀԿ մշտական խորհրդի ապրիլի 26-ի նիստում Եվրոպական միությունը ներկայացրել է իր դիրքորոշումը «Հայաստանում ժողովրդավարական գործընթացների վերաբերյալ»:

ԵՄ-ն ողջունել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատանքը ոստիկանության բաժիններ այցերի, բողոքների քննարկման և քաղաքացիների հետ առանձնազրույցների առնչությամբ կարևորելով խոսքի ու կարծիքի, ինչպես նաև միավորումների ու խաղաղ հավաքների հիմնարար ազատությունները<sup>389</sup>:

ԵՄԽՎ Մոնիթորինգային հանձնաժողովի Հայաստանի հարցով համագեկուցողները բարձր են գնահատել այդ օրերին Պաշտպանի աշխատանքը և նշել են, որ իրենց հայտարարություններում այն նույնպես հաշվի են առել<sup>390</sup>:

Հայաստանում ապրիլ և մայիս ամիսներին տեղի ունեցած իրադարձությունների հետ կապված՝ Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության գլխավոր տնօրենը ևս ընդգծել է **Մարդու իրավունքների պաշտպանի կարևոր դերը հավաքների մասնակիցների իրավունքների երաշխավորման, հանդուրժողականության մթնոլորտի ապահովման հարցերում**: Կարևորվել է Պաշտպանի ցուցաբերած անաչառ մոտեցումն ու արդյունավետ աշխատանքը, ինչպես նաև արագ արձագանքը խնդիրներին<sup>391</sup>:

Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինությունը շնորհակալություն է հայտնել Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանին Եվրոպայի խորհրդի հետ գերազանց համագործակցության համար և **բարձր**

387

[http://pashtpan.am/media/2365.html?fbclid=IwAR0HxjyuXbFkCS8Evi50gzED40GCgeYKKUw\\_cxrJ9clIy8wG5\\_7J-WO0i7c](http://pashtpan.am/media/2365.html?fbclid=IwAR0HxjyuXbFkCS8Evi50gzED40GCgeYKKUw_cxrJ9clIy8wG5_7J-WO0i7c), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

388 Տե՛ս <https://twitter.com/CommissionerHR/status/988376744699842560?fbclid=IwAR0CyLyg-AFE4AIWsc6eLS0svigQuSEkKvK4hC2NehmSyugzxpZRGqenlGA>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

389 Տե՛ս [http://www.ombuds.am/media/eu\\_welcome.html](http://www.ombuds.am/media/eu_welcome.html), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

390 Տե՛ս [http://www.ombuds.am/media/111\\_12\\_88.html](http://www.ombuds.am/media/111_12_88.html), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

391 Տե՛ս [http://www.ombuds.am/media/265\\_442\\_45.html](http://www.ombuds.am/media/265_442_45.html), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

գնահատել վերջինիս արդյունավետ ջանքերն այդ օրերին մարդու իրավունքների երաշխավորման հարցում՝ արտահայտելով հետագա համագործակցության պատրաստակամությունը մարդու իրավունքների կարևոր հարցերի առնչությամբ<sup>392</sup>:

2018 թվականի մայիսի 28-ին Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի և Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թորբյորն Յագլանդի հանդիպման ընթացքում ԵՄ գլխավոր քարտուղարը բարձր է գնահատել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքն այդ ժամանակաշրջանում և նշել, որ այն մարդու իրավունքների տեսանկյունից ունեցել է կարևոր նշանակություն քաղաքացիների իրավունքների երաշխավորման նպատակով<sup>393</sup>:

ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի տնօրեն Ինգիբյորգ Սոլրուն Գիսլադոտիրը նշել է, որ տպավորված է Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքով ու պրոֆեսիոնալիզմով<sup>394</sup>:

ԱՄՆ պետական դեպարտամենտը, «Հայաստանի վերաբերյալ Մարդու իրավունքների 2016 թվականի զեկույցում» անդրադարձ կատարելով 2016 թվականի հուլիսյան իրադարձություններին, նշել է, որ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը հանդես եկավ իբրև իրավունքների պաշտպանության արդյունավետ ջատագով՝ հրապարակելով մարդու իրավունքների հետ կապված խնդիրների վերաբերյալ կոնկրետ և պարբերական զեկույցներ: Մասնավորապես, այն կառավարության ուշադրությունը հրավիրեց մարդու իրավունքների խախտումների, ոչ օրինական ձերբակալումների և հուլիսին ցուցարարներին բռնի հեռացնելու ընթացքում խախտումների վրա<sup>395</sup>:

Հայաստանում ԱՄՆ դեսպանությունը հրապարակել է ԱՄՆ պետական դեպարտամենտի հայտարարությունը, որով ողջունելի են համարվել Մարդու իրավունքների պաշտպանի ջանքերը հավաքների մասնակիցների, լրագրողների և անցորդների նկատմամբ բռնության դեպքերի արձանագրման, ինչպես նաև ազատությունից զրկված անձանց իրավունքների ապահովման տեսանկյունից<sup>396</sup>:

Օմբուդսմանի և մասնավորապես՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության գնահատման և նրա նկատմամբ վստահության կարևորագույն ցուցանիշներից է քաղաքացիական հասարակության վերաբերմունքը նրա նկատմամբ: Այս առումով, Պաշտպանի գործունեությանը բարձր գնահատական է տրվել նաև քաղաքացիական հասարակության կողմից: Այսպես, «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ ղեկավար Լարա Ահարոնյանը 2018 թվականի ապրիլի 21-ին իր ֆեյսբուքյան էջում հայտարարություն է տարածել՝ նշելով, որ տպավորված է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի դրական ջանքերով Շենգենյանի ոստիկանության բաժնում ձերբակալված քաղաքացիներին և խաղաղ ցուցարարներին աջակցելու հարցում: Աշխատակազմի ներկայացուցիչները մշտապես ներկա են եղել տարբեր ոստիկանական բաժիններում՝ ազատությունից զրկման պահից իրենց իրավունքների վերաբերյալ քաղաքացիներին իրազեկելու և վերջիններիս նկատմամբ ոստիկանության ցուցաբերած վերաբերմունքի վերաբերյալ տեղեկություն հավաքելու նպատակով:

Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի խորհրդի նախագահ Ստեփան Գրիգորյանը Հայաստանում 2018 թվականի ապրիլին տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ գիրք է հրապարակել՝ «Հայկական թավջյա

<sup>392</sup> Տե՛ս [https://twitter.com/CoE\\_HRightsRLaw/status/1001865219709206533](https://twitter.com/CoE_HRightsRLaw/status/1001865219709206533), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>393</sup> Տե՛ս <http://www.ombuds.am/media/strasburg-ekh-glkhavor-qartughar-handipum.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>394</sup> Տե՛ս <http://www.ombuds.am/media/65135.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>395</sup> Տե՛ս <https://www.state.gov/documents/organization/265604.pdf>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>396</sup> Տե՛ս <https://am.usembassy.gov/statement-u-s-embassy/>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

հեղափոխություն» խորագրով: Գրքում հատուկ անդրադարձ է կատարվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կարևոր աշխատանքին: «Հարկ է ընդգծել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ջանքերը: Շտրեհիվ այն բանի, որ այս ինստիտուտը կայացել է, Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի և նրա թիմի ակտիվ գործողություններն իրենց էական և դրական ազդեցությունն ունեցան հայաստանյան ոստիկանության ցուցարարների նկատմամբ ուժի անհամաչափ գործադրումը կանխելու առումով», - նշված է աշխատության մեջ: Ընդգծվել է Մարդու իրավունքների պաշտպանի մեծ դերակատարությունը խաղաղ ցուցարարների նկատմամբ ագրեսիվ գործողությունների զսպման առումով: Նշվել է Մարդու իրավունքների պաշտպանի հայտարարության կարևորությունը, որում Ոստիկանությանը պահանջ էր դրված՝ անհապաղ ազատ արձակել անչափահասներին ոստիկանության բաժիններից: Կարևորվել են այդ օրերին բերման ենթարկված անձանց պահելու վայրեր անձամբ Պաշտպանի և աշխատակազմի իրականացրած այցերը (էջեր 57, 89, 91, 92): Ընդ որում, Ստեփան Գրիգորյանն այդ օրերին ազատությունից զրկվել էր Ոստիկանության կողմից և ազատ է արձակվել հենց Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իշխանություններին ներկայացված անհապաղ ազատ արձակման պահանջից հետո:

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի գործունեությանը տրված այս բարձր գնահատականները վկայությունն են այն բանի, որ կատարված աշխատանքը թե՛ երկրում ժողովրդական զարգացումներն ու ձեռքբերումներն արձանագրող, թե՛ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակն ու մարտահրավերները նախանշող օբյեկտիվ և հավաստիության բարձր աստիճան ունեցող աղբյուր է: Եվ այս առումով, միջազգային մարմինների ու կազմակերպությունների դրական արձագանքն ու Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի հետ համագործակցության պատրաստակամությունը պետության միջազգային վարկանիշը պայմանավորող կարևորագույն գործոն են:

***18. Մարդու իրավունքների պաշտպանի իրավական գնահատականներն ու առաջարկությունները 2018 թվականի ապրիլյան հավաքների ընթացքում մարդու իրավունքների և ազատությունների պահպանման վիճակի վերաբերյալ***

Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես իրավունքների երաշխավորման ու պաշտպանության սահմանադրական առաքելությունն ունեցող ինստիտուտ, կոչված է նպաստելու երկրի իրավապաշտպան ողջ համակարգի արդյունավետ աշխատանքին: Մարդու իրավունքների պաշտպանի այս առաքելությունն իրականացվում է սահմանադրական կարգավիճակի ուժով՝ առաջնորդվելով անաչառ ու ապաքաղաքական աշխատանքի հիմնարար սկզբունքներով:

Սրանով պայմանավորված, Պաշտպանի անմիջական ուշադրության ներքո են գտնվել 2018 թվականին երկրում տեղի ունեցած կարևորագույն իրադարձությունները: Դրանք հետագայում ստացան նաև «Թավշյա հեղափոխություն» լայնորեն օգտագործվող անվանումը:

Ապրիլ-մայիս ամիսներին մեր երկրում տեղի ունեցած ժողովրդավարական զարգացումների ընթացքում Հայաստանի քաղաքացին հնարավորություն ունեցավ իր կամքի ազատ իրացման շնորհիվ ապահովել հիմնարար փոփոխություններ, որոնք անմիջականորեն առնչվում են մեզանից յուրաքանչյուրին: Հավաքների խաղաղ բնույթը մեծապես կանխեց իրականացվող քաղաքացիական անհնազանդության ընթացքում մասշտաբային բախումների ու բռնությունների վտանգը:

2018 թվականին արձանագրված ձեռքբերումներով հանդերձ՝ Մարդու իրավունքների պաշտպանի իրավունքների և ազատությունների ապահովման վիճակի այդ օրերի



մշտադիտարկումները ցույց տվեցին, որ դեռևս շարունակվում են խնդիրները խաղաղ հավաքների ազատության, այդ հավաքների մասնակիցների իրավունքների, ազատությունից զրկված անձանց նվազագույն իրավունքների և երաշխիքների, ինչպես նաև խոսքի ազատության և հատկապես լրագրողների անխոչընդոտ աշխատանքի ապահովման հարցում, որոնք առաջնահերթություն են դարձնում ոլորտի օրենսդրության և իրավակիրառման կատարելագործումը: Այսպես, կատարված ուսումնասիրությունների արդյունքներով Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ.

1. Վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում ազատությունից զրկված անձի նվազագույն իրավունքները չապահովելու ոչ իրավաչափ պրակտիկան դեռևս շարունակվեց 2018 թվականին ևս, ինչը վերահաստատում է վարչական ձեռքարկման, բերման ենթարկելու ու իրավախախտի բերման՝ որպես ազատությունից զրկելու գործընթացների օրենսդրական կարգավորումների սկզբունքային վերանայման առաջնահերթ անհրաժեշտությունը:

2. Զանգվածային ձեռքարկումների հետևանքով ոստիկանության կազմակերպական և մարդկային ռեսուրսների անբավարարությունը չի կարող արդարացնել ազատությունից զրկված անձանց իրավունքների չապահովումն ու օրենքով նախատեսված ժամկետից ավել անազատության մեջ պահելը:

3. Ապրիլյան հավաքների ընթացքում համատարած պրակտիկա էր, որ Ոստիկանության ծառայողի օրինական պահանջին չենթարկվելու (ՎԻՎՕ 182-րդ հոդված) զանցակազմը մեկնաբանվում և կիրառվում էր դրա սահմանադրաիրավական մեկնաբանությանը ոչ համապատասխան: Մա փաստվում էր հավաքի մասնակիցների նկատմամբ վարչական իրավախախտման վարույթների հանգամանքների դիտարկմամբ: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է «օրինական պահանջին»՝ որպես հանրային իշխանություն-քաղաքացի կոնկրետ փոխհարաբերությունից բխող և կոնկրետ բովանդակություն ունեցող պահանջին, որն իր հերթին պետք է բխի ոստիկանության ծառայողի գործառույթներից և ուղղված լինի դրանց ապահովմանը:

4. Սկզբունքային է, որ հատկապես խաղաղ հավաքների ընթացքում մասնակիցների նկատմամբ վարչաիրավական միջոցները, այդ թվում՝ վարչական ձեռքարկումներն ու բերման ենթարկելը լինեն խիստ համաչափ՝ բացառելու համար խաղաղ հավաքների ազատությանը չարդարացված որևէ միջամտություն:

5. Գործնականում պետք է բացառվի օրենքով չնախատեսված դեպքերում ոստիկանության ծառայողի կողմից այլ անձին պատկանող տրանսպորտային միջոցը տրամադրելու որևէ պահանջ: Առավել ևս անընդունելի է ոստիկանության ծառայող չհանդիսացող անձին վարչական ձեռքարկման գործընթացի իրականացմանը մասնակից դարձնելու ցանկացած փորձ:

6. Ոստիկանության ծառայողի՝ իշխանության ներկայացուցչի կարգավիճակն ու գործողություններն ընկալելի և կանխատեսելի պետք է լինեն իրավունքների սահմանափակման, այդ թվում՝ վարչական ձեռքարկման կամ բերման ենթարկվող անձի համար:

7. Գործնականում պետք է բացառվի վարչական ձեռքարկման կամ բերման ենթարկելու ընթացակարգերի օրենսդրական կարգավորումներից չբխող որևէ գործողություն, ինչպիսիք են՝ անձանց լուսանկարումը, մատնադրոշմներ վերցնելը, անձնական իրերի խուզարկությունը: Անձի համաձայնությունը չի կարող դիտարկվել իբրև ոստիկանության ծառայողի իրավական կարգավիճակից և լիազորություններից չբխող գործողությունների կատարման բավարար իրավական հիմք:

8. Օրենսդրորեն պետք է ամրագրվեն անչափահասների նկատմամբ վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում ազատությունից զրկման ընթացակարգերի հատուկ կանոններ՝ միջազգային իրավական պահանջների արտացոլմամբ:

9. Անձի անձնական ազատության և պաշտպանության իրավունքների երաշխավորման տեսանկյունից անընդունելի պրակտիկա է անձի վարչական ձերբակալումը՝ քրեական գործով վարույթին վերջինիս ներգրավվածությունն ապահովելու նպատակով: Պետք է բացառել վարչական ձերբակալում-վկայի կարգավիճակով նախաքննության մարմնին ներկայացում-քրեադատավարական ձերբակալում մեխանիզմի գործադրումը՝ քրեադատավարական պահանջները շրջանցելու նպատակով:

10. Գործնականում պետք է բացառվի տրանսպորտային միջոցները պահպանվող հատուկ տարածք բերման ենթարկելու և արգելանքի տակ դնելու պրակտիկան բոլոր այն վարչական իրավախախտումների դեպքում, որոնք օրենքով նման հարկադիր միջոց կիրառելու հիմք չեն հանդիսանում: Նման հարկադիր միջոց կիրառելու յուրաքանչյուր դեպքում տրանսպորտային միջոցի սեփականատերը կամ նրա ներկայացուցիչը պետք է պատշաճ տեղեկացվի տրանսպորտային միջոցի գտնվելու վայրի մասին:

11. Երեխայի հավաքների ազատության միջազգայնորեն երաշխավորված իրավունքը պետք է ապահովվի՝ երեխայի լավագույն շահի և գիտակցված մասնակցության սկզբունքների պահպանմամբ: Յուրաքանչյուր դեպքում առաջնահերթ է երեխայի անվտանգության ապահովումը: Պետք է բացառել երեխաներին հավաքների անցկացմանը ներքաշելու ցանկացած փորձ, որը կհակասի սույն հաղորդման շրջանակում վերը նշված միջազգային սկզբունքներին:

12. Խաղաղ հավաքների նկատմամբ պետության հանդուրժողականության պահանջը ենթադրում է, որ անգամ այն դեպքերում, երբ հավաքների ընթացում դրվագային կամ առանձին խումբ անձանց կողմից բռնություններ են հրահրվում, պետական արձագանքը՝ հավաքի ազատության սահմանափակումների առումով, պետք է լինի թիրախային՝ ուղղված բռնությունների դեպքերի կանխմանն ու այդպիսով նաև խաղաղ ցուցարարների անվտանգության ապահովմանը:

13. Գործնականում պետք է բացառել հավաքների ընթացքում Ոստիկանության կողմից հատուկ միջոցների այնպիսի գործադրման պրակտիկան, որը կհակասի այդ միջոցների կիրառման տեխնիկական և առողջապահական չափանիշներին: Հատուկ միջոցների գործադրման վերաբերյալ Ոստիկանության իրազեկումը պետք է միշտ լինի կոնկրետ և հասցեական՝ բացառելով նման միջոցներ կիրառելու ոստիկանության իրավասության վերաբերյալ միայն ընդհանրական հայտարարությունները:

14. Լրագրողական գործունեությունը խոչընդոտելու ցանկացած դրսևորում անթույլատրելի է և պետք է պատշաճ իրավական գնահատական ստանա: Հատկապես անթույլատրելի է, երբ լրագրողները թիրախավորվում են, և նրանց նկատմամբ ոտնձգություններն իրականացվում են հենց լրագրողական գործունեությունը խոչընդոտելու նպատակով: Պետությունը բարձր պատասխանատվություն է կրում հատկապես հավաքների ընթացքում մասնագիտական գործունեություն իրականացնող լրագրողների պաշտպանվածությունն ապահովելու հարցում:

15. Ապրիլյան հավաքների և դրան հաջորդող օրերին սոցիալական մեդիայում խիստ մտահոգիչ էին ստեղծության խոսքն ու անհանդուրժողականությունը: Նման միտումների շարունակականությունը սպառնալիք էին պարունակում մարդու իրավունքների պաշտպանության ողջ համակարգի համար՝ թիրախավորելով ոչ միայն հանրային գործիչներին, Ոստիկանության ծառայողներին, այլև այլակարծություն պարունակող ցանկացած դիրքորոշում՝ անկախ այն արտահայտողի անձից: Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է սկզբունքային դիրքորոշումն առ այն, որ իրավունքի

գերակայության և ժողովրդավարական սկզբունքներին հակասող այս երևույթն իսպառ պետք է վերացվի: Այս հարցում կարևոր դերակատարություն պետք է ունենան պատասխանատու լրագրությամբ ղեկավարվող լրատվամիջոցները, ինչպես նաև հանրային իշխանության ողջ համակարգն ու հասարակությունն առհասարակ:

## ԲԱԺԻՆ 10. ԱՅԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

### **1. Համաներման գործընթացն ու Մարդու իրավունքների պաշտպանի դիմումը Մահմանադրական դատարան**

Հանրությունը հաճախ համաներումն ընկալում է որպես պետության կողմից ներողամտության դրսևորում, իսկ պետության շատ օղակներում՝ որպես ազատագրկման վայրերի մեխանիկական բեռնաթափման գործընթաց: Նման պատկերացումների հետևանքով երկար տարիներ արդյունավետ չի կիրառվել պատժի կրումից վաղաժամկետ ազատման գործընթացը: Խնդիր է նաև այն, որ համաներման գործընթացի անկատարության արդյունքում աճեց հանցավորությունը: Մինչդեռ, հարկ է նշել, որ մարդասիրական այս գործընթացն ուղղված է պետության տնտեսական բեռի թեթևացմանը, պատիժ կրողների սոցիալական, հոգեբանական և այլ խնդիրների բարեհաջող հաղթահարմանը, հասարակությանը վերաինտեգրմանը:

2018 թվականին Ազգային ժողովն ընդունել է «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում տարածելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Նշված օրենքի դրույթների կիրառման վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանին են հասցեագրվել բազմաթիվ բողոքներ:

Բողոքների հիման վրա Պաշտպանը դիմել է Մահմանադրական դատարան՝ վիճարկելով Օրենքի 4-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի և 3-րդ կետի՝ ՀՀ Մահմանադրության 28-րդ, 29-րդ, 75-րդ, 79-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին համապատասխանությունը, այնքանով, որքանով նախատեսված չէ համաներման արդյունքում պատժի կրումից ազատել այն անձանց, ովքեր ներկայացրել են վճռաբեկ բողոք, սակայն Վճռաբեկ դատարանը բողոքը վարույթ ընդունելու, մերժելու, վերադարձնելու կամ առանց քննության թողնելու վերաբերյալ համապատասխան որոշում դեռևս չի կայացրել:

Այսպես, Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առավելագույնը չորս տարի ժամկետով ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտված անձինք համաներման արդյունքում *ենթակա են պատժից ազատման*: Նույն հոդվածի 7-րդ և 8-րդ մասերի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով նշանակված *պատժաչափը համաներման արդյունքում կրճատվում է*:

Օրենքը նախատեսում է նաև առաջին ատյանի կամ վերաքննիչ քրեական դատարանի, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի կողմից համաներման կիրառման դեպքերը: Այսպես, Օրենքի 4-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերը Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի կամ վերաքննիչ քրեական դատարանում են, սակայն մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը չեն քննվել, կամ *այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերը քննվել են, բայց դատավճիռներն օրինական ուժի մեջ չեն մտել*, համաներումը պետք է կիրառի համապատասխանաբար ընդհանուր իրավասության առաջին ատյանի կամ վերաքննիչ քրեական դատարանը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերով վճռաբեկ բողոքներն ընդունվել են Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարույթ*, համաներումը պետք է կիրառի Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը:

Ստացվում է, որ Օրենքով հստակ սահմանված չեն համաներումը կիրառող մարմինը և համապատասխան կառուցակարգերն այն դեպքերում, *երբ անձը բողոքարկել է վերաքննիչ*

*քրեական դատարանի դատավճիռը, սակայն Վճռաբեկ դատարանը բողոքը վարույթ ընդունելու, մերժելու, վերադարձնելու կամ առանց քննության թողնելու համապատասխան որոշում դեռևս չի կայացրել: Նշված դեպքերում համաներումը չի կիրառվում, անձը չի ազատվում պատժից: Արդյունքում, դատավճիռը մտնում է օրինական ուժի մեջ, և համաներմամբ անձը ոչ թե ազատվում է պատժից, այլ նշանակված պատժաչափը կրճատվում է: Ստացվում է, որ անձը կրում է ազատագրկման ձևով այն պատիժը, որի կրումից կարող էր ազատվել:*

Սահմանադրական դատարան ներկայացված դիմումում միջազգային չափանիշների և ներպետական օրենսդրության համադիր վերլուծության հիման վրա հիմնավորվել է, որ ստեղծված իրավիճակը հանգեցրել է նյութական հիմնական իրավունքի խախտման՝ խտրականության: Հետևաբար, օրենսդրական թերի կարգավորումների և համապատասխան կառուցակարգերի բացակայության պատճառով անհավասար մոտեցում է դրսևորվում միևնույն իրավիճակում հայտնված անձանց նկատմամբ, ընդ որում՝ *տվյալ դեպքում տարբերակված կարգավորումներն օբյեկտիվ ու հիմնավոր չեն:*

Ըստ այդմ, Պաշտպանը դիմել է Սահմանադրական դատարան՝ արձանագրելով, որ նշվածն առաջացնում է օրենքի առջև ընդհանուր հավասարության և խտրականության արգելքի խախտում, ինչպես նաև հակասում է Սահմանադրության՝ որոշակիության, հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար օրենքներով անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելու, հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիության, ինչպես նաև հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությամբ ամրագրված դրույթները մեկնաբանելիս ՀՀ վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան հաշվի առնելու սահմանադրական սկզբունքներին:

Մեկ այլ խնդրով Պաշտպանը դիրքորոշում է ներկայացրել Վերաքննիչ դատարանի կողմից Սահմանադրական դատարան ներկայացված՝ «Համաներման մասին օրենքի» 4-րդ հոդվածի 2-րդ մասի և 2-րդ հոդվածի 10-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշման գործով: Վերաքննիչ դատարանի դիմումում Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի և 2-րդ հոդվածի 10-րդ մասի սահմանադրականության հարցը քննարկվել է այնքանով, որքանով համաներման կիրառմամբ պատժից ազատելու դեպքում պարտադիր պայման սահմանված չէ տուժողին պատճառով վնասը հատուցած լինելու վերաբերյալ, ավելին՝ Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված է, որ դատավճռով հաստատված տուժողին պատճառով վնասի հատուցման հարցը կարող է լուծվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Պաշտպանի ներկայացրած դիրքորոշման մեջ նշվել է, որ Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի և 2-րդ հոդվածի 10-րդ մասի բովանդակության համադիր վերլուծությունից կարելի է փաստել, որ տուժողին պատճառով վնասի հատուցումը համաներում կիրառելու համար պարտադիր պայման չէ:

Ստացվում է, որ մի կողմից պետությունը համաներման մասին օրենքով անձին տալիս է արտոնություն օրենքով ամրագրված որոշակի պայմաններին բավարարելու դեպքում ազատվել պատժից, միևնույն ժամանակ, շարունակում են գործել տուժողի իրավունքները, որոնցից է նաև պատճառով վնասի դիմաց հատուցում ստանալու իրավունքը: Տվյալ պարագայում հարցն անհրաժեշտ է դիտարկել համաներմամբ պատժից ազատվող անձի և տուժողի իրավունքների համադրման տեսանկյունից: Տուժողի՝ վնասի հատուցման իրավունքի իրացման եղանակներից է դատարանի միջոցով վնասի հատուցում ստանալը,

ուստի խնդիրն անհրաժեշտ է դիտարկել արդար դատաքննության իրավունքի տեսանկյունից:

Տվյալ պարագայում տուժողի իրավունքների պաշտպանությունը կատարվում է քրեական դատավարության շրջանակներում, որի ընթացքում քննվում է հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի մեղավորությունը և նրա պատճառած վնասի հատուցման հարցերը: Մինչդեռ, ստացվում է, որ համաներման կիրառման դեպքում, չնայած նրան, որ տուժողն արդեն իսկ անցել է քրեական դատավարության տարբեր փուլերով, ինչի արդյունքում առկա է օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, ստիպված է լինում իր իրավունքների պաշտպանության համար կրկին անցնել դատական վարույթով:

Սահմանադրական դատարան ներկայացված դիմումում միջազգային չափանիշների և ներպետական օրենսդրության համադիր վերլուծության հիման վրա հիմնավորվել է, որ եթե անձը քրեական վարույթի շրջանակներում դիմել է իրեն պատճառված վնասի հատուցում ստանալու խնդրանքով, հետագայում նրան չի կարելի ուղղորդել նույն հարցով դիմել քաղաքացիական դատարան: Բացի այդ, դիմումում հիմնավորվել է, որ Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասից պարզ չէ, թե համաներման կիրառման դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ինչ կարգով պետք է լուծվի օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ տուժողին պատճառված վնասի հատուցման հարցը: Տվյալ դեպքում, մասնավորապես, տուժողի համար կարող է հարց ծագել, թե ինչ քայլեր պետք է ձեռնարկվեն վերջինիս կողմից ուղղված պատճառված վնասի հատուցմանը, եթե պատճառված վնասը հատուցելու հարցը լուծելու հետ կապված որևէ այլ իրավական կառուցակարգ, քան հայց հարուցելն է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում:

Ըստ այդմ, Պաշտպանն արձանագրել է, որ նշված կարգավորումներն առաջացնում են Սահմանադրությամբ ամրագրված՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների, ինչպես նաև որոշակիության սկզբունքի խախտումների:

## ***2. Դատարան ներկայացվող ածանցյալ և հիմնական պահանջների ընդդատությունը և փոխկապակցվածությունը***

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված մի շարք բողոքների ուսումնասիրությամբ վեր է հանվել օրենսդրական բացի խնդիր, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով կարգավորված չէ այն դեպքը, երբ ՀՀ վարչական դատարան է ներկայացվում բնույթով ածանցյալ նշանակություն ունեցող պահանջ, որը թեպետ ՀՀ վարչական դատարանի իրավասության տիրույթում է, այնուհանդերձ, չի կարող արդյունավետ գնահատվել առանց հիմնական (քաղաքացիաիրավական) իրավահարաբերությունները գնահատելու:

Այսպես, Վարչական դատավարության օրենսգրքի 13-րդ գլուխը նախատեսում է գործերի ընդդատության կանոնները: Նշյալ օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ միմյանց հետ փոխկապակցված մի քանի պահանջներով գործը, եթե այդ պահանջներից մեկն ընդդատյա է վարչական դատարանին, իսկ մյուսը՝ ընդհանուր իրավասության դատարանին, քննում է այն դատարանը, որին ընդդատյա է հիմնական պահանջը: Միաժամանակ, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ գլուխն ամրագրում է գործերի ենթակայությունը և ընդդատությունը: 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ միմյանց հետ փոխկապակցված մի քանի պահանջներով գործը, եթե այդ պահանջներից մեկը ենթակա է առաջին ատյանի դատարանին, իսկ մյուսը՝ վարչական դատարանին, քննում է այն դատարանը, որին ենթակա է հիմնական պահանջը: Անհրաժեշտ

է նկատել, որ նշված օրենսգրքերում օգտագործվում են տարբեր տերմիններ՝ ընդդասություն և ենթակայություն, որին անդրադարձ կկատարվի հետագա շարադրանքում:

Միաժամանակ, երկու օրենսգրքերը նախատեսում են միևնույն կանոնը հիմնական գործի որոշման հարցում: Այսպես, Վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի, և Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասերի համաձայն՝ հիմնական է այն պահանջը, որի լուծման արդյունքում կայացված դատական ակտը կանխորոշում է դրանից ածանցվող պահանջների լուծման ելքը:

Ստացվում է, որ երկու օրենսգրքերը տալիս են համանման կարգավորումներ այն դեպքերի վերաբերյալ, երբ դատարանին ներկայացվում է մեկից ավելի պահանջ և պետք է որոշվի, թե որ դատարանն է քննելու գործը: Հիմնական պահանջի հաշվառմամբ գործի բաշխման տրամաբանությունը ևս մասնագիտական և ընթացակարգային առանձնահատկությունների ապահովմամբ դատական պաշտպանության իրավունքի իրացումն է: Կարևոր է նշել նաև, որ հիմնական և ածանցյալ պահանջների պարագայում ցանկայի է այդ երկուսի միասին քննությունը, որպեսզի ապահովվի գործի լիարժեք քննությունը:

Չնայած վերոնշյալ կանոնների՝ Պաշտպանին հասցեագրված դիմումները վկայում են, որ այնուամենայնիվ, օրենսդրական կարգավորում չեն ստացել բոլոր դեպքերը, ինչի արդյունքում գործը կարող է քննվել այն դատարանի կողմից, որը նման իրավասություն չունի:

Ներկայացված դիմումներից մեկով ներկայացված դեպքի շրջանակներում անձը պահանջը ներկայացրել է գործի՝ բացառապես Վարչական դատարանին ընդդասյա մասի պահանջով: Գործի քննության ընթացքում պարզվել է, որ այդ պահանջի լուծումը կարելի է տալ բացառապես խնդրի մնացյալ հատվածին՝ տվյալ պարագայում իր բնույթով հիմնական քաղաքացիաիրավական հարցին անդրադառնալով: Ստացվում է, որ եթե անձը ներկայացներ երկու պահանջով հայցադիմում, ապա գործը կքննվեր քաղաքացիական դատավարության կանոններով, բայց, քանի որ ներկայացվել է միայն ածանցյալ պահանջի մասով, գործը քննվել է վարչական դատավարության կանոններով՝ միաժամանակ Վարչական դատարանն անդրադարձել է նաև հիմնական՝ քաղաքացիաիրավական բնույթ ունեցող պահանջին:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածով սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք: Միաժամանակ, Սահմանադրության 63-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք: Արդար դատաքննության իրավունքն ամրագրված է նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 6-րդ հոդվածով: Դատարան դիմելու և արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ իրավական կարգավորումների ուսումնասիրությունը և վերլուծությունը հնարավորություն է տալիս փաստել, որ անձն իր իրավունքի ենթադրյալ խախտման դեպքում կարող է դիմել դատարան՝ ներկայացնելով վերջինիս վերականգնման կամ այլ պահանջներ: Դատարան դիմելու համար իրավական ակտերով ամրագրված են որոշակի կանոններ, որոնց պահպանումը պարտադիր է դատարան դիմող անձի համար:

Օրինակ՝ դատարան դիմելիս, հայցվորը դիմում է ոչ թե ցանկացած դատարան, այլ պարտավոր է դիմել այն դատարան, որն իրավասու է ըստ էության քննել և լուծել առկա վեճը: Այսինքն՝ կարող ենք նշել, որ արդար դատաքննության իրավունքի իրացման համար առաջին քայլն ընդդասությունը որոշելն է: Իրավական վեճերը լուծելու ծանրաբեռնվածության համաչափ և գիտականորեն հիմնավորված տարբեր իրավասություն ունեցող դատարանների միջև բաշխումը կարևոր նախապայման է արդարադատության

մատչելիության տեսանկյունից: Դատարանների միջև գործերի բաշխումը նաև կարևոր է գործի մասնագիտական առանձնահատկությունների հաշվի առնման և ընթացակարգային հատուկ կարգավորումների նախատեսման տեսանկյունից: Այսինքն՝ ընդդատությունն ինքնանպատակ չէ և այն ապահովում է մասնագիտական մոտեցում գործի քննության հարցում:

Վերոնշյալ տրամաբանության տեսանկյունից էլ դատավարական օրենսգրքերում նախատեսված են կարգավորումներ գործերի ընդդատության և դատարանների միջև գործերի բաշխման տեսանկյունից:

Ըստ այդմ, ստացվում է, որ խնդրո առարկա հոդվածի իրավակարգավորման առարկայում չեն ներառվում այն իրավիճակները, երբ ՀՀ վարչական դատարան է ներկայացվում բնույթով ածանցյալ նշանակություն ունեցող մեկ պահանջ, որն ինքնին թեպետ ձևական իմաստով ներառվում է Վարչական դատարանի իրավասության տիրույթում, սակայն դրա իրավաչափությանն ու հիմնավորվածությանը գնահատական տալու համար անհրաժեշտ է քննարկել և վերլուծել նաև հիմնական՝ բնույթով քաղաքացիական իրավահարաբերությունը:

Հարցի ուսումնասիրման հետևանքով առաջ է եկել նաև երկու օրենսգրքերում միևնույն ինստիտուտը նկարագրելիս տարբեր հասկացությունների օգտագործման հարցը: Առաջին հայացքից երկու օրենսգրքերում առկա են նույնանման կարգավորումներ և երկու դեպքում էլ կանոնակարգվում է այն հարցը, թե որ դատարանը պետք է լուծի փոխկապակցված մի քանի պահանջներով գործը: Մակայն Քաղաքացիական դատավարության օրենսգրքում օգտագործվում է «ենթակա», իսկ վարչական դատավարության օրենսգրքում «ընդդատյա» եզրույթը:

Այսպես, ընդդատությունը դատական ինստիտուտ է, որը կարգավորում է դատարանին ենթակա բոլոր քաղաքացիական գործերի բաշխումը ՀՀ դատական համակարգի առաջին ատյանի կոնկրետ դատարանների միջև<sup>397</sup>:

Դատական ենթակայությունը գործերի շրջանակ է, որոնց քննարկումը և լուծումը ՀՀ օրենսդրությամբ հանձնված է դատական մարմինների իրավասությանը<sup>398</sup>:

Մասնագիտական գրականության շրջանակներում ընդդատությունը սահմանազատվում է ենթակայությունից այն մասով, որ ենթակայության պարագայում որոշվում է, թե արդյոք գործը ենթակա է դատական մարմիններին, թե՛ ոչ, իսկ ընդդատությամբ որոշվում է, թե կոնկրետ որ դատարանը կարող է քննել տվյալ գործը: Այսինքն՝ ընդդատությունը դա միայն դատարանների (և ոչ թե տարբեր պետական մարմինների) միջև իրավաբանական վեճ լուծելու լիազորության տեղաբաշխումն է, ենթակայությունն իրավաբանական գործերը լուծելու լիազորությունների տեղաբաշխումն է դատական և ոչ դատական մարմինների միջև, իսկ դատական ենթակայության դեպքում գործ ունենք դատական մարմինների իրավասությանը հանձնված գործերի շրջանակի հետ: Ընդդատությունն իրենից ներկայացնում է ենթակայության հետագա զարգացումը: Ենթակայությունը և ընդդատությունը, չնույնանալով միմյանց հետ, ուղղված են կոնկրետ գործը քննելու և լուծելու հարցում դատարանի լիազորությունների պարզմանը: Սկզբում դատարանին անհրաժեշտ է պարզել, թե տվյալ վեճը ենթակա է արդյոք ընդհանուր իրավասության դատարանին ընդհանրապես, որից հետո պարզել, թե միասեռ դատարաններից կոնկրետ որին է այն ընդդատյա:

Անգամ ՎՃճաբեկ դատարանը 2010 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ ՎԴ/3465/05/09 քաղաքացիական գործով հայտնել է դիրքորոշում առ այն, որ միմյանց հետ կապված մի քանի

<sup>397</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունը սխեմաներում/ Ս.Գ. Մեղրյան.- Եր: ԵՊՀ հրատ. 2011, էջ 75:

<sup>398</sup> Տ՛ես նույն տեղում, էջ 66:



պահանջներով վեճը, եթե այդ պահանջներից մեկն ընդդատյա է վարչական դատարանին, իսկ մյուսը՝ ընդհանուր իրավասության դատարանին, քննում է այն դատարանը, որին ընդդատյա է հիմնական պահանջը:

Ինչպես տեսնում ենք, Վճռաբեկ դատարանը միմյանց հետ կապված մի քանի պահանջներով վեճի առարկայական ընդդատության (ենթակայության) մասին խոսելիս կիրառում է «ընդդատություն» բառը: Մինչդեռ, Քաղաքացիական օրենսգրքի 2018 թվականի ապրիլի 9-ից ուժի մեջ մտած՝ գործող տարբերակում քննարկվող հարաբերությունների կարգավորման դեպքում օգտագործվում է «ենթակայություն» բառը, իսկ Վարչական դատավարության օրենսգրքում շարունակում է օգտագործվել «ընդդատությունը», ինչի հետևանքով նույնանում են երկու տարբեր ինստիտուտները, ինչն էլ գործնականում միմյանց հետ կապված մի քանի պահանջներով գործի քննության ժամանակ կարող է առաջացնել անհարթություններ:

*Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք նշված ակտերում կատարել համապատասխան լրացումներ և փոփոխություններ:*

**3. Աշխատավարձի նկատմամբ սնանկության վարույթում բռնագանձում տարածելու, սնանկության կառավարչի կողմի սնանկության վարույթի շրջանակներում պարտապանի գրություններին կամ հարցումներին պատասխանելու, ինչպես նաև սնանկության գործերով վարույթի հետ կապված այլ օրենսդրական խնդիրներ**

2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են սնանկության վարույթի և ոլորտը կարգավորող օրենսդրական բացերի վերաբերյալ բազմաթիվ բողոքներ: Բողոքներով բարձրաձայնվող բողոքներից մեկը վերաբերում էր աշխատավարձի նկատմամբ սնանկության վարույթում բռնագանձում տարածելու հարցն օրենքով բավարար կերպով կարգավորված չլինելուն: Այսպես, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 95-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ ֆինանսական առողջացման ծրագիր հաստատված չլինելու դեպքում պարտապան ֆիզիկական անձի վաճառքի ենթակա գույքի կազմում չի ներառվում վերջինիս սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ձեռք բերված գույքը, բացառությամբ դրան հաջորդող 180 օրվա ընթացքում ժառանգությամբ ստացված կամ ժառանգություն բացելու դեպքում ստացման ենթակա գույքի, ինչպես նաև այն գույքի, որը ստացվել է մինչև սնանկության դիմում ներկայացնելը պարտապանի կնքած գործարքի արդյունքում:

Սույն նորմի վերլուծությունը վկայում է, որ օրենսդրական հստակ կարգավորում չի ստացել այն հարցը, թե աշխատավարձը վաճառքի ենթակա գույք է, թե՛ ոչ: Գործնականում սույն մասով առաջացող հարաբերությունների ուսումնասիրությամբ պարզ է դարձել, որ վերը նշված նորմը տարակերպ մեկնաբանությունների է ենթարկվում և կիրառվում տարակերպ: Մասնավորապես, սնանկության կառավարիչներից շատերը ելնում են այն կանխավարկածից, որ աշխատավարձը վաճառքի ենթակա գույք է, քանի որ այն տրվում է ՀՀ դրամով: Սակայն պետք է նկատել, որ նշված հոդվածի իմաստով, ինչպես նաև քաղաքացիական օրենսդրության ուսումնասիրությամբ չենք կարող միանշանակ պնդել սնանկության կառավարիչների ներկայացրած դիրքորոշումը: Պետք է փաստել, սակայն, որ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են մի շարք դիմումներ, որոնցով ներկայացվել է վերը նշված պատկերը: Արդյունքում, օրենսդրական կարգավորումն ընկալվում և կիրառվում է տարակերպ՝ այդ կերպ առաջանում հակասություններ սնանկության կառավարիչների, սնանկ ճանաչվող անձանց միջև՝ ինչի հետևանքով էլ խաթարվում է ինչպես սնանկ ճանաչվող անձանց, այնպես էլ պարտատերի իրավունքների իրացումը:

*Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք՝ տարակերպ մեկնաբանություններից խուսափելու և կարգավորման որոշակիությունն ապահովելու համար «Մնանկության մասին» ՀՀ օրենքով կարգավորել այն հարցը, թե արդյոք աշխատավարձը պետք է համարել որպես վաճառքի ենթակա գույք, թե՛ ոչ:*

Շարունակելով սնանկության վարույթի վերաբերյալ թեման՝ հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներով բարձրացվել է նաև այն հարցը, որ օրենսդրորեն սահմանված չէ կոնկրետ ժամկետ, որի պահպանմամբ սնանկության կառավարիչը սնանկության վարույթի շրջանակներում պարտավոր է արձագանքել պարտապանի գրություններին կամ հարցումներին: Ավելին, դիմումներով բարձրացված այս հարցի հետ մեկտեղ ներկայացվում է պնդում առ այն, որ տվյալ օրենսդրական բացի պատճառով քննվող գործի նկատմամբ ցուցաբերվում է կամայականություն և անտարբեր վերաբերմունք: Մասնավորապես, դիմումներից մեկով ներկայացվում է, որ սնանկության գործով կառավարիչը ֆինանսական վիճակի վերլուծություն կատարելու պատճառաբանությամբ արդեն մի քանի ամիս է, ինչ չի պատասխանում անձի՝ իր աշխատավարձի բանակային հաշվի սահմանափակումների սպասարկելու վերաբերյալ ներկայացրած դիմումին: Նման պարագայում, բնականաբար, պետք է հաշվի առնել այն, որ սնանկության կառավարչին, որոշակի դեպքերում, ներկայացված դիմումներին պատասխանելու համար անհրաժեշտ է իրականացնել վերլուծական աշխատանքներ: Մակայն պետք է փաստել նաև, որ ժամկետներ սահմանող օրենսդրական կառուցակարգերի բացակայության պարագայում սնանկության գործերով կառավարիչները կաշկանդված չլինելու պարագայում կարող են անբարեխղճորեն երկարաձգել պատասխանի տրամադրումը: Արդյունքում, հնարավոր է, որ այդ իրավիճակը հանդիսանա մարդու այս կամ այն իրավունքի իրացման խոչընդոտ:

*«Մնանկության մասին» ՀՀ օրենքում կատարել լրացում՝ ըստ սնանկության գործի ծավալների և դիմումի բովանդակության սահմանելով սնանկության կառավարչի՝ ողջամիտ ժամկետում պարտապանի դիմումներին, հարցումներին պատասխանելու պարտավորություն:*

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 10-րդ մասի՝ եթե պարտատերերի ցանկում ընդգրկված ապահովված պարտատիրոջ պահանջն ապահովված է երրորդ անձի գույքի գրավով, ապա այդ անձն իրավունք ունի դադարեցնելու գույքի գրավադրումը՝ սնանկության հատուկ հաշվին որպես դեպոզիտ փոխանցելով՝

1) գույքի առաջիկա իրացման համար գնահատված կամ մեկնարկային գինը հիմնական ապահովված պարտավորության արժեքի չափը գերազանցելու դեպքում՝ ապահովված պահանջի, գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը.

2) գույքի առաջիկա իրացման համար գնահատված կամ մեկնարկային գինը հիմնական ապահովված պարտավորության արժեքի չափից պակաս լինելու դեպքում՝ վերջին չկայացած աճուրդի մեկնարկային գնի չափով»:

Նշված կարգավորման վերլուծությամբ պարզ է դառնում, որ երրորդ անձ գրավատուն իրավունք է ունենում տեղեկանալ և իր հայեցողությամբ որոշակի գործողություններ կատարելով իր գույքի գրավադրումը դադարեցնել:

Սակայն «Մնանկության մասին» ՀՀ օրենքը որևէ կերպ չի կարգավորում այն հարցը, թե երբ, ինչ ժամկետներում և ինչ կարգով պետք է երրորդ անձ գրավատուն տեղեկացվի օրենքի 43-րդ հոդվածի դրույթների ուժով ծագող իր իրավունքների մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում, ինչպես նաև ՀՀ դատական օրենսգրքում այս հարցը կարգավորող դրույթներ ևս առկա չեն:

Միննույն ժամանակ, հարկ է նշել, որ «Մնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» ինքնակարգավորվող կազմակերպությունից» ստացվել է պատասխան, որ վերը

նշված հարցն օրենքով չի կարգավորվում, միասնական պրակտիկա որպես այդպիսին գոյություն չունի և յուրաքանչյուր սնանկության գործով կառավարիչ աշխատում է յուրովի:

Վերոգրյալը ստեղծում է այնպիսի իրավիճակ, երբ օրենսդրորեն սահմանված չէ երրորդ անձ գրավատուին իր գույքի գրավադրումը դադարեցնելու իրավունքի մասին ծանուցելու ընթացակարգ և այդ հիմքով չի ապահովվում երրորդ անձ գրավատուի՝ իր գույքի գրավադրումը դադարեցնելու իրավունքի իրականացումը, ինչն իր հերթին կարող է խախտել մարդու սեփականության իրավունքը:

*Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Մսնակության մասին» ՀՀ օրենքում հստակ ամրագրել, թե ինչ ժամկետներում և ինչ կարգով պետք է երրորդ անձ գրավատուն տեղեկացվի նույն օրենքի 43-րդ հոդվածի դրույթների ուժով ծագող իր իրավունքների մասին:*

#### **4. Ճանապարհների անբարեկարգություն**

2018 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է մի շարք ահազանգեր ներքաղաքային և մարզային նշանակության ճանապարհների անբարեկարգ վիճակի վերաբերյալ: Խնդրի վերաբերյալ բարձրաձայնվել է նաև տեղեկատվության հրապարակային աղբյուրներով: Նշյալ համակարգային խնդրի մասին բարձրաձայնվում է դեռևս 2015 թվականից: Ճանապարհների անբարեկարգությունները խնդրահարույց են ինչպես մարդու տեղաշարժման և արժանավայել կյանքի տեսանկյունից, այնպես էլ ազդում են պետության զարգացման համար կարևոր նշանակություն ունեցող տուրիզմի, ապրանքափոխադրման և այլ ոլորտների վրա:

Մասնավորապես, 2018 թվականին բարձրացվել է այն խնդիրը, որ Միսիանի տարածաշրջանով անցնող միջպետական նշանակության ճանապարհի մի շարք հատվածներ, մասնավորապես Միսիանի Զանգերի հատվածից սկսված գտնվում են անբարեկարգ վիճակում: Փոսերի առկայության պատճառով ճանապարհը դժվարանցանելի և վտանգավոր է: Միևնույն ժամանակ, Միսիանի տարածաշրջանի ճանապարհների անբարեկարգության մասին տեղեկություններ են ստացվել նաև տեղեկատվության հրապարակային աղբյուրներով<sup>399</sup>: Մասնավորապես, քաղաքացիները բողոքում էին կատարվող ասֆալտապատման որակից՝ պնդելով, որ օրինակ Միսիանի Խանջյան, Որոտան և մի շարք այլ փողոցները ենթակա են ասֆալտապատման՝ չնայած այն հանգամանքին, որ վերջինն իրականացվել էր ընդամենը մի քանի տարի առաջ:

Անբարեկարգ և գերմաշված վիճակում է շարունակել գտնվել Մ4, Երեւան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 110+900 – 118+300 7.4 կմ երկարությամբ ճանապարհահատվածը: Հարկ է նշել, որ այն վերջին անգամ նորոգվել է 2002 թվականին: Սակայն պետք է նկատել, որ այս ճանապարհը Հայաստանի համար կարևոր է ոչ միայն տուրիզմի, այլ նաև այն տեսանկյունից, որ Մ6, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման ճանապարհը վերակառուցման պատճառով 2018 թվականի հոկտեմբեր ամսի դրությամբ փակ է եղել ավտոմեքենաների երթևեկության համար, ինչի պատճառով բեռնափոխադրումների մեծ մասը և մարդատար ավտոմեքենաների հոսքը դեպի Հայաստան և դուրս կատարվում են Մ4 ավտոճանապարհով<sup>400</sup>:

Հարկ է նշել, որ 2018 թվականի հոկտեմբերի 4-ին կայացվել է Կառավարության որոշում Մ4 Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջան սահմանի 110+900 կմ - 118+300 հատվածում պարբերական պահպանման՝ միջին նորոգման աշխատանքներ իրականացնելու

<sup>399</sup> Տե՛ս <http://haynews.am/hy/1531491165>, 2019 թվականի մարտի 29-ի դրությամբ:

<sup>400</sup>Տե՛ս

<https://www.aysor.am/am/news/2018/10/17/%D5%B3%D5%A1%D5%B6%D5%A1%D5%BA%D5%A1%D6%80%D5%B0/1478450>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

նպատակով պահուստային ֆոնդից տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը 439 մլն 268,7 հազար դրամ հատկացնելու վերաբերյալ<sup>401</sup>: Չնայած նշվածին և կատարված ընթացիկ բարեկարգման և վերանորոգման աշխատանքներին՝ այնուամենայնիվ ճանապարհի շատ հատվածներ 2018 թվականի ընթացքում շարունակել են մնալ անբարեկարգ:

Դեռևս Պաշտպանի 2017 թվականի տարեկան զեկույցում նշվել էր այն մասին, որ Վայոց ձորի մարզի Հերիեր գյուղ տանող ճանապարհի դժվարանցանելի և անբարեկարգ լինելու հարցը: Խնդիրը շարունակել է չլուծված մնալ նաև 2018 թվականին: Գյուղի բնակիչների պնդմամբ՝ ճանապարհի անբարեկարգության պատճառով գյուղի բազմաթիվ բնակիչներ ունենում են տեղաշարժի խնդիր, քանի որ տաքսի ծառայություն մատուցող մեքենաները հրաժարվում են սպասարկել՝ մատնանշելով ճանապարհային ոչ բարվոք վիճակը: Գյուղի բնակիչների հավաստմամբ՝ ճանապարհի բացակայությունը բացասաբար է անդրադառնում նաև տուրիզմի զարգացման վրա<sup>402</sup>: Հարկ է նշել, որ Վայոց ձորի մարզով անցնող միջպետական Մ2 ավտոճանապարհի 144-րդ կմ-ից դեպի Հերիեր և Կարմրաշեն գյուղական համայնքներ տանող ճանապարհահատվածում կատարվել են ճանապարհաշինական աշխատանքներ, մասնավորապես, «Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման» ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման շրջանակներում 11 կմ-ից ավելի երկարությամբ ճանապարհը հիմնանորոգվել է<sup>403</sup>:

Ճանապարհների անբարեկարգության մասին են բազմիցս բարձրաձայնել Բլագոդարնոյեի համայնքի բնակիչները՝ նշելով, որ դեպի Տաշիր տանող ճանապարհը վաղուց չի վերանորոգվել, կատարվել են փոսալցման աշխատանքներ: Միննույն իրավիճակն է նաև Բլագոդարնոյեից դեպի Կաթնառատ համայնք տանող 6 կիլոմետր երկարությամբ ճանապարհի դեպքում<sup>404</sup>:

2018 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մարզային տարբեր այցելությունների ժամանակ բարձրաձայնել են խնդիրներ կապված ճանապարհների անբարեկարգ վիճակի վերաբերյալ: Քաղաքացիների պնդմամբ՝ Արարատի մարզի Նորամարգ, Լոռու մարզի Գյուլագարակ, Ամրակից և այլ համայնքների ճանապարհներն ասֆալտապատված չեն, դժվար անցանելի են: Նույն իրավիճակն առկա է բոլոր մարզերում:

Ինչպես նշվեց՝ ճանապարհների անբարեկարգության խնդիրն իր հետ առաջ է բերում նաև տուրիզմի զարգացման արգելակման հետ կապված մի շարք հարցեր: Մասնավորապես՝ Սյունիքի մարզի Խնձորեսկ, Լոռու մարզի «Սոճուտ» դենդրոպայի, Տավուշի մարզի Պարզ լիճ, Սյունիքի մարզի «Սատանու կամուրջ» կոչվող հատվածից մինչև Տաթևի վանական համալիր տանող ճանապարհները գտնվում են անբարեկարգ վիճակում: Վերջիններիս վերաբերյալ առկա խնդիրը բարձրաձայնվել է ինչպես քաղաքացիների, այնպես էլ՝ տուրիստական կազմակերպությունների կողմից:

Հայաստանի ճանապարհներին առկա թունելների բարեկարգման խնդիրը չափազանց կարևոր է անվտանգության ապահովման տեսանկյունից: 2018 թվականի ընթացքում վարորդները բարձրացրել են խնդիր, որ Դիլիջանի թունելով անցնող ճանապարհին առկա են անհարթություններ և փոսեր, իսկ նույն թվականի սեպտեմբերի 29-ին տեղի ունեցած հրդեհից հետո առաջացել է ավելի մեծ և խորը փոս: Թեև նշված հրդեհից հետո թունելը երկկողմանի փակ էր և կատարվում էին վերանորոգման աշխատանքներ, այնուամենայնիվ վերը նշված խնդիրը շարունակել է մնալ չլուծված 2018 թվականին ևս:

<sup>401</sup> Տե՛ս <https://armtimes.com/hy/article/145630>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>402</sup> Տե՛ս <https://www.azatutyun.am/a/28886101.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>403</sup> Տե՛ս <https://www.aravot.am/2018/04/30/953897/>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>404</sup> Տե՛ս <https://hetq.am/hy/article/93807>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Վերոնշյալ փաստերի և տեղեկությունների ուսումնասիրության և վերլուծության արդյունքում վստահորեն կարող ենք նշել, որ չնայած կատարած աշխատանքների՝ այնուամենայնիվ, համակարգային առումով 2018 թվականին ճանապարհների անբարեկարգ վիճակի խնդիրը մնացել է չլուծված:

Այս մասին են վկայում նաև ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից ստացված տվյալներն այն մասին, որ շահագործվող 3477.6 կմ միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհներից 44.0 կմ միջպետական և 353.0 կմ հանրապետական նշանակության ճանապարհները գնահատված են «վատ» և ենթակա են հիմնանորոգման:

*Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ավելացնել ներքաղաքային և մարզային նշանակություն ունեցող ճանապարհների բարեկարգման համար նախատեսվող ֆինանսավորումը:*

### **5. Տրանսպորտի գերձանրաբեռնվածություն, սպասարկման որակ**

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում մշտապես անդրադարձ է առկա Հայաստանում գործող հասարակական տրանսպորտի որակի, հասանելիության և առկայության վերաբերյալ: Չնայած ի կատարումն Պաշտպանի ներկայացրած առաջարկների իրագործմանն ուղղված աշխատանքներին՝ այնուամենայնիվ, պետք է փաստենք, որ նշված խնդիրն ունի համակարգային բնույթ, թերությունները և բացթողումները բազմաթիվ են:

Հայաստանում դեռևս առկա են համայնքներ, որտեղ հասարակական տրանսպորտ առհասարակ չի գործում, ինչը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունենում մի շարք իրավունքների վրա՝ արգելակելով դրանց իրացումը: Այսպես՝ Լոռու մարզի Հալավար համայնքը չունի հասարակական տրանսպորտ ո՛չ մարզկենտրոնից, ո՛չ հարակից համայնքներից<sup>405</sup>: Տվյալ պարագայում վստահաբար կարող ենք փաստել, որ հասարակական տրանսպորտի բացակայության պայմաններում հնարավոր չէ, իսկ հնարավորության պարագայում բավականին դժվար է լինելու իրացնել, օրինակ՝ կրթության կամ առողջության պահպանման իրավունքների իրացումը, հատկապես այն պարագայում, երբ նշված համայնքում չի գործում անգամ բուժկետ, դպրոց և մանկապարտեզ:

Քննարկվող հարցի վերաբերյալ, տեղեկություններ են ստացվել ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունից առ այն, որ 2018 թվականի ընթացքում միջմարզային երթուղիներում շահագործվող ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներից փոփոխվել են 76-ը, որից 40-ն ամբողջովին նորացվել են ձեռք բերված նոր տրանսպորտային միջոցներով:

Ըստ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության՝ միջհամայնքային տրանսպորտի ծանրաբեռնվածության հարցը մշտապես գտնվում է ուշադրության կենտրոնում և անհրաժեշտության դեպքում վերանայվում է երթուղիներում տրանսպորտային միջոցների քանակը և տեսակը:

2018 թվականի ընթացքում միջմարզային երթուղիների գերձանրաբեռնվածության հարցի լուծման կապակցությամբ, ինչպես նաև որոշ երթուղիներում ուղևորահոսքի ծավալներից ելնելով՝ Երևան-Մեծամոր երթուղում ավելացվել են 6, Երևան-Ալավերդի երթուղում՝ 3, Երևան-Նոյեմբերյան երթուղում՝ 2, Երևան-Սասունիկ երթուղում՝ 2 տրանսպորտային միջոց:

Սույն հարցի վերաբերյալ Երևանի քաղաքապետարանից ստացված տվյալների համաձայն՝ 2018 թվականի ընթացքում Երևան քաղաքում նոր երթուղիներ չեն

<sup>405</sup>Տե՛ս <https://armtimes.com/hy/article/144943>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

կազմակերպվել: Ավելին, ներհամայնքային երթուղիներ սպասարկող մի քանի կազմակերպությունների սնանկ ճանաչվելու կամ դրանց կողմից երթուղու սպասարկումից հրաժարվելու պատճառով դադարեցվել է մի շարք ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիների աշխատանքը: Ըստ Երևանի քաղաքապետարանի՝ այդ երթուղիներից օգտվող քաղաքացիների սպասարկումը մասնակիորեն ապահովելու, ինչպես նաև առանձին թաղամասերի տրանսպորտային սպասարկումը բարելավելու նպատակով իրականացվել են մի շարք երթուղիների ուղեգծերի մասնակի փոփոխություններ, որոշ երթուղիներ երկարացվել են, մի դեպքում ավելացվել է շարժակազմի քանակը (Նոր Նորքի զանգվածներից դեպի Էրեբունի (Դավիթ Բեկի փողոցով)), մեկ այլ դեպքում՝ կազմակերպվել անվճար փոխադրում (Իոսիֆյան փողոցից մինչև Տ.Պետրոսյան-Սասնա Ծռերի խաչմերուկ): Միննույն ժամանակ հարկ է նշել, որ Երևանի ներհամայնքային հասարակական տրանսպորտի աշխատանքի հետ կապված 2018 թվականի ընթացքում քաղաքացիներից գրավոր և Երևանի քաղաքապետարանի «Թեժ գիծ» և «1-08» հեռախոսահամարներով ստացվել է 430 բողոք, որոնց տրվել է համապատասխան ընթացք:

Հասարակական տրանսպորտի որակի և հասանելիության հետ անքակտելիորեն կապված է նաև կանգառների և կանգառասրահների առկայությունը: Քիչ չեն այն դեպքերը, երբ հասարակական տրանսպորտից օգտվելու համար, մարդիկ ստիպված են լինում անցնել երկար ճանապարհ՝ կանգառ հասնելու համար: Այսպես՝ կարող ենք ներկայացնել Լոռու մարզի Ահնիձոր համայնքի օրինակը, երբ ըստ տեղեկատվության հրապարակային աղբյուրներից ստացված տվյալների համաձայն՝ համայնքի բնակիչները, ոտքով 3-4 կմ հատելով, հասնում են հարևան Լորուտի համայնք՝ մեկ այլ Շամուտի համայնքից եկող ավտոբուսով Վանաձոր գնալու համար<sup>406</sup>:

Երևանի քաղաքապետարանի տվյալների համաձայն՝ 2018 թվականի ընթացքում, ընդհանուր առմամբ, Երևանի հասարակական տրանսպորտի 184 կանգառասրահում իրականացվել են կարբոպլաստե թերթերի և ապակիների փոխարինում, մետաղապլաստե կարկասի, տանիքների, հատակի սալիկների և եզրաքարերի նորոգում, ներկման աշխատանքներ և այլն:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության տվյալներն էլ խոսում են այն մասին, որ 2018 թվականի ընթացքում ՀՀ մարզերում վերանորոգվել և բարեկարգվել է 80 կանգառասրահ, մասնավորապես՝ Արագածոտնի մարզում՝ 5, Արարատի մարզում՝ 48, Արմավիրի մարզում՝ 6, Լոռու մարզում՝ 2, Կոտայքի մարզում՝ 12, Սյունիքի մարզում՝ 4, Տավուշի մարզում՝ 3 կանգառասրահ: Սակայն այս ամենի հետ մեկտեղ ակնհայտ է, որ դեռևս բազմաթիվ բնակավայրերում առկա չէ հասարակական տրանսպորտի հասանելիություն, և խնդիրը կրում է համակարգային բնույթ՝ հատկապես մարզերում և մարզային համայնքներում:

Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում տարիներ շարունակ բարձրաձայնվել են հասարակական տրանսպորտի գերծանրաբեռնվածության, տրանսպորտի սպասարկման որակի և այլ խնդիրներ: Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի սպասարկման ընդհանուր որակի անբավարարության խնդիրները 2018 թվականին ևս շարունակվում են արդիական մնալ:

Երևանի քաղաքապետարանի տեղեկությունների համաձայն՝ Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի բարեփոխումների ծրագրի շրջանակներում նոր երթուղային ցանցի ներդրման աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2-4 տարվա ընթացքում:

Ինչպես նախորդ տարիների, այնպես էլ 2018 թվականի ընթացքում, քաղաքացիները բազմիցս արտահայտել են դժգոհություններ Երևանի հասարակական տրանսպորտի, հատկապես՝ ավտոբուսների ու միկրոավտոբուսների ոչ պատշաճ աշխատանքի վերաբերյալ:

<sup>406</sup> Տե՛ս <https://hetq.am/hy/article/91801>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Այսպես, Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Նոր Խարբերդ 4-րդ փողոց հասցեի բնակիչներն ընթացիկ տարում Պաշտպանին հասցեագրած դիմումով տեղեկացրել են, որ Շենգավիթ վարչական շրջանից դեպի Նուբարաշեն վարչական շրջան գործում է միայն մեկ երթուղի՝ 38 համարի ավտոբուսը, որը չի հասցնում պատշաճ սպասարկել ուղևորներին, ինչի արդյունքում քաղաքացիները գրկված են հասարակական տրանսպորտից անվտանգ, ապահով կերպով օգտվելու իրենց իրավունքից: 2018 թվականին բնակիչները Նոր Խարբերդ 4-րդ փողոցից կանգառ հասնելու համար ոտքով ստիպված են անցնել 4 կմ ճանապարհ: Նշված խնդրի վերաբերյալ քաղաքապետարանից պարզաբանել են, որ հաշվի առնելով, որ նշված ճանապարհահատվածում չկա կայուն ուղևորահոսք, ելնելով երթուղու շահագործման արդյունավետությունից՝ տարածքի սպասարկումը կազմակերպվել է Երևանի ներհամայնքային ավտոբուսային համար 38 երթուղու միջոցով՝ օրական իրականացնելով մեկական երթ՝ առավոտյան և երեկոյան ժամերին: Սպասարկման ժամերը նախապես ճշգրտվել են տարածքի բնակիչների հետ:

2018 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ դիմումներ են ստացվել նաև «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲ ընկերության կողմից մետրոյով երթևեկողների թվի աճին զուգընթաց ուղևորափոխադրումն անվտանգ կազմակերպելու համար շարժակազմի և վագոնների թվի ավելացման հարցի վերաբերյալ: Ըստ բողոքի՝ Երևանի մետրոպոլիտենն աշխատում է գերծանրաբեռնվածության պայմաններում, ինչի արդյունքում ուղևորափոխադրումներն իրականացվում են վտանգավոր և անհարմար պայմաններում:

Նշվածի կապակցությամբ Երևանի քաղաքապետարանից ստացվել է պարզաբանում առ այն, որ 2018 թվականին Երևանի մետրոպոլիտենից օգտվողների թվի աճին զուգընթաց ուղևորափոխադրումներն առավել անվտանգ և հարմարավետ ձևով կազմակերպելու, ուղևորների սպասարկման որակը բարելավելու նպատակով մշտապես դիտարկվել է գնացքների երթևեկության չվացուցակը՝ այն դարձնելով ավելի արդյունավետ, մասնավորապես, առավոտյան և երեկոյան գերծանրաբեռնված ժամերին երթևեկության գրաֆիկների մեջ կատարվել են փոփոխություններ՝ զիծ դուրս բերելով երկու լրացուցիչ գնացք:

Ըստ Քաղաքապետարանի՝ 2019 թվականին, կանխատեսելով մետրոպոլիտենով ուղևորափոխադրումների ծավալների հետագա աճ, վագոնների նորոգումից հետո նախատեսվում է ավելացնել ևս երկու շարժակազմ:

Կայարանային համալիրներում մշտապես ուշադրության տակ է պահվում լուսավորության և սանիտարական վիճակի բարելավումը՝ դրանք դարձնելով ուղևորների համար առավել գրավիչ:

Թեև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմը Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրումներն առավել անվտանգ և հարմարավետ կազմակերպելու ուղղությամբ ձեռնարկում է մի շարք միջոցառումներ, սակայն հաշվի առնելով խնդրի կարևորությունը՝ անհրաժեշտ է մշտական դիտարկումներ իրականացնել նշված աշխատանքներն ուղևորահոսքի աճին զուգընթաց կազմակերպելու ուղղությամբ:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝*

1. *բարձրացնել հասարակական տրանսպորտի սպասարկման որակը՝ սահմանելով վերահսկողության մեխանիզմներ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների մատուցած ծառայությունների որակի նկատմամբ,*

2. *միջոցներ ձեռնարկել Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի (երթուղային ցանցի) բարեփոխման ծրագիրը հնարավորինս սեղմ ժամկետներում իրականացնելու ուղղությամբ,*

3. Երևանի մետրոպոլիտենով ուղևորահոսքի աճի մշտական դիտարկումների միջոցով ուղևորավորապահումներն իրականացնել ուղևորահոսքի աճին զուգընթաց,

4. գերծանրաբեռնվածության հարցի լուծման կապակցությամբ ավելացնել միջհամայնքային հանրային տրանսպորտային միջոցների քանակը՝ ապահովելով մարզային բոլոր համայնքներում տրանսպորտի առկայությունը և հասանելիությունը:

### **6. Խտրականություն սեռական կողմնորոշման հիմքով**

Խտրականության, այդպիսի վերաբերմունքի արգելքը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնության պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթից այլ հանգամանքներից, սահմանված է ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածով:

Անձի խտրականության չենթարկվելու արգելքը սահմանող իրավունքի իրացման ապահովման համար անհրաժեշտ է օրենսդրական այնպիսի կարգավորումների և մեխանիզմների առկայություն, որոնք կօգնեն անձին իր իրավունքի իրականացման, իսկ խախտվելու դեպքում՝ վերականգնման համար: Մինչդեռ, օրենսդրության ուսումնասիրության արդյունքում վեր է հանվում այն խնդիրը, որ նման կարգավորումներ իսպառ բացակայում են, իսկ առանձին կարգավորման առարկա ունեցող իրավական ակտեր խտրականություն սահմանող դրույթներ չեն պարունակում, թեև խտրականության արգելքն օրենսդրորեն ամրագրված է:

Խտրականության դեմ պայքարի և իրավահավասարության համապարփակ օրենսդրության և խտրականության դեպքերի վերհանման և դրանց դեմ պայքարի գործուն մեխանիզմները բարդացնում են ոլորտում խախտումների դեմ պայքարը: Մի շարք օրենսդրական թերի կարգավորումների հետևանքով հնարավոր չի լինում լիարժեքորեն պայքարել խտրականության բոլոր դեպքերի դեմ:

Հայաստանում առկա է մի իրավիճակ, երբ անձի սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված ատելության հիմքով կատարված հանցագործությունները չեն ազդում հանցագործության որակման և պատժի չափի որոշման վրա: Նշվածը կապված է այն հանգամանքի հետ, որ ՀՀ քրեական օրենսգրքի «Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները» վերտառությամբ 63-րդ հոդվածով արարքն ատելության հիմքով կատարված լինելու շարժառիթ նախատեսված է միայն ազգային, ռասայական կամ կրոնական ատելությունը, անձի սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը՝ որպես ատելության հիմքով կատարված հանցագործության որակյալ հատկանիշ, ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի նորմերով նախատեսված չէ: Մինչդեռ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով անձի սեռական կողմնորոշման հիմքով խտրականության դրսևորմանը, նշել է, որ խտրականությունն անձի սեռական կողմնորոշման հիմքով նույնքան խնդրահարույց է, որքան «սեռի, ռասայի, մաշկի գույնի» հիմքով խտրականությունը: Այս հարցը խնդրահարույց է համարել նաև Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարը 2018 թվականին Հայաստան կատարած իր այցի արդյունքում ներկայացրած զեկույցում<sup>407</sup>:

2018 թվականին արձանագրվել են մի շարք միջադեպեր, որոնք վկայում են համակարգային խնդրի մասին: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի թեժ գծի հեռախոսահամարով «Նոր Մերունդ» հասարակական կազմակերպությունից ստացվել է տեղեկություն, որ ՀՀ Ոստիկանությունը տարածել է տեսանյութ նախորդ օրը

<sup>407</sup> Տե՛ս <https://rm.coe.int/-2018-16-20-/1680920149>, էջ 40



Ոստիկանության Կենտրոնական բաժնում ոստիկանության ծառայողների և ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների միջև տեղի ունեցած միջադեպի վերաբերյալ, որում երևում են վերջինների դեմքերը: Ահազանգում բարձրաձայնվում էր մտահոգություն, որ ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների անձի բացահայտումը կարող է վտանգավոր լինել նրանց կյանքի համար: Պաշտպանի աշխատակազմի միջամտությամբ Ոստիկանության հրապարակած տեսանյութում առկա անձանց դեմքերը փակվեցին, իսկ տեսանյութի նախկին տարբերակը հեռացվեց համացանցից:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի «թեժ գիծ» հեռախոսահամարին Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակից ստացվել է ահազանգ, որ Սյունիքի մարզի Շուռնուխ գյուղի բնակիչները նույն գյուղ այցելած մի խումբ անձանցից, պայմանավորված վերջիններիս սեռական կողմնորոշումով, պահանջում են հեռանալ բնակավայրից: Զանգահարողը հայտնել է նաև իր մտահոգությունը հիշյալ անձանց բռնության ենթարկվելու հնարավորության կապակցությամբ և խնդրել Պաշտպանի աջակցությունն իրավապահ մարմինների օպերատիվ արձագանքման հարցում:

Ահազանգից անմիջապես հետո Պաշտպանի աշխատակազմը կապ է հաստատել ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Գորիսի բաժնի հետ: Ստացվել է պարզաբանում այն մասին, որ Ոստիկանության օպերատիվ խումբն արդեն իսկ մեկնել է դեպքի վայր:

Դրանից հետո, ըստ Ոստիկանության լրացուցիչ պարզաբանման՝ Ոստիկանության ծառայողները տեղում պարզել են, որ մինչ իրենց ժամանելը տեղի է ունեցել միջադեպ գյուղի բնակիչների և գյուղ այցելած անձանց միջև, ինչի արդյունքում վերջիններից երկուսը ստացել են մարմնական վնասվածքներ: Ոստիկանության ծառայողների ուղեկցությամբ մարմնական վնասվածք ստացած անձինք տեղափոխվել են «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ, իսկ գյուղ այցելած մյուս անձինք հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու համար հրավիրվել են Ոստիկանության Գորիսի բաժին և գտնվում են բաժնում:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ստացած տեղեկությունները պարբերաբար փոխանցվել են ահազանգ ներկայացրած անձին, ինչպես նաև պահպանվել է օպերատիվ կապը Ոստիկանության հետ:

Հաշվի առնելով միջադեպի վերաբերյալ բազմակողմանի պատկերացում կազմելու և ամբողջական գնահատական ձևավորելու նպատակով գյուղի բնակիչներին լսելու կարևորությունը՝ Պաշտպանն աշխատանքային խումբ է գործուղել Սյունիքի մարզի Շուռնուխ գյուղ:

Ավելի ուշ դեպքի կապակցությամբ ահազանգել է նաև «Փինք Արմենիա» հասարակական կազմակերպության ներկայացուցիչը: Պարզաբանվել է նաև, որ Պաշտպանի իրավասության շրջանակում ձեռնարկվում են օրենքով նախատեսված բոլոր միջոցները: Նշվածից բացի, Պաշտպանի աշխատակազմում նախաձեռնվել է նաև գրավոր ընթացակարգ: Դեպքի հանգամանքների և դրա առնչությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ու պարզաբանումներ ստանալու նպատակով համապատասխան գրություն է ուղարկվել Ոստիկանություն: Բարձրացվել են հարցեր, որոնք, ի թիվս այլնի, կապված են միջադեպի պատճառների և տուժած անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքի հետ:

Նույն օրը մի շարք հարցեր լրացուցիչ քննարկվել են Ոստիկանության Սյունիքի մարզային վարչության հետ: Այդ պահի դրությամբ տրամադրված տեղեկությունների համաձայն՝ դեպքի առթիվ Ոստիկանությունում նախապատրաստվում են նյութեր, որի շրջանակում նշանակվել են նաև դատաբժշկական փորձաքննություններ:

Նկարագրված գործողությունների հիման վրա Պաշտպանի աշխատակազմը կապվել է «Փինք Արմենիա» կազմակերպության, ինչպես նաև հիվանդանոց տեղափոխված երկու

անձանց հետ: Այլ հարցերի թվում նրանք նշել են, որ ունեն իրենց անվտանգության առնչությամբ մտահոգություններ՝ կապված իրենց սեռական կողմնորոշման հետ: Նշված մտահոգությունները հաշվի առնելով՝ համապատասխան միջնորդությամբ ևս մեկ գրություն է ուղարկվել Ոստիկանություն:

Հայաստանի Սահմանադրությունը երաշխավորում է բոլորի հավասարությունն օրենքի առջև և արգելում խտրականությունը ցանկացած հիմքով: Անընդունելի է վատ վերաբերմունքի, այդ թվում՝ բռնության ցանկացած դրսևորում՝ անկախ նրանից, թե ում նկատմամբ է կատարվել և որտեղ: Յուրաքանչյուր դեպքի առնչությամբ պետությունը պարտավոր է ապահովել բոլոր հանգամանքների ուսումնասիրություն և գործի անաչառ քննություն: Պետք է միջոցներ ձեռնարկվեն նաև միջադեպից տուժած անձանց իրենց անվտանգության վերաբերյալ մտահոգությունների առնչությամբ: Նման պարտավորություն պետությունն ունի իր բոլոր քաղաքացիների հանդեպ:

### **7. Արտաքին լուսավորությամբ ապահովելու անհրաժեշտություն**

2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ հանրապետության մարզերի որոշ համայնքների փողոցներում արտաքին լուսավորության ցանցի բացակայության, ինչպես նաև մայրուղային ավտոճանապարհներն արտաքին լուսավորությամբ ապահովված չլինելու վերաբերյալ:

Հայտնի է, որ բարձրակարգ փողոցային լուսավորությունը նպաստում է մարդկային տեսողական ապարատի կատարողականի բարելավմանը և ճանապարհային վթարների և դժբախտ պատահարների նվազմանը:

Օրինակ, Գերմանիայի տրանսպորտի նախարարության հանձնարարությամբ, Լուսավորության միջազգային հանձնաժողովը (CIE) երկրի վեց խոշոր քաղաքներում ավտոճանապարհային վթարների քանակի վրա ճանապարհի լուսավորության ազդեցության վերաբերյալ իրականացրել է ուսումնասիրություն: Հայտնաբերվել է, որ լուսավորության բարձր մակարդակը նպաստել է հետիոտնի, հեծանվորդների և մոտոցիկլիստների մասնակցությամբ վթարների քանակի կրճատմանը՝ 70%-ի չափով:

Վերոնշյալ կազմակերպության վիճակագրության համաձայն՝ լուսավորության բարձր մակարդակը նվազեցնում է ավտոճանապարհային վթարների թիվը մոտ 30%-ով, խաչմերուկում և այլ վտանգավոր տարածքներում՝ 45%-ով: Ավելին, այս ցուցանիշները վերաբերելի ամբողջ աշխարհին<sup>408</sup>:

Պատշաճ ձևով անցկացված փողոցների արտաքին լուսավորությունը նպաստում է հանցագործության անկմանն օրվա երեկոյան և գիշերվա ժամերին: Փաստն այն է, որ գիշերային ժամերին վատ լուսավորությունն առավել նպաստավոր է դարձնում հանցավորության աճը: Ընթացիկ տարում Պաշտպանին հասցեագրած բողոքներից մեկով բարձրացվել է Երևանի վարչական շրջաններից մեկի փողոցների արտաքին լուսավորության բացակայության հարցը: Դեռևս նախորդ տարիներին նշված խնդրի կապակցությամբ Երևանի քաղաքապետարանից ստացվել է տեղեկություն, որ փողոցի արտաքին լուսավորության ցանցի վերականգնման աշխատանքներն ընդգրկված են Երևանի քաղաքապետարանի 2018 թվականի կապիտալ վերանորոգման ծրագրում: Մինչդեռ, մինչ օրս վերոնշյալ փողոցների արտաքին լուսավորության ցանցի վերականգնման աշխատանքներ չեն իրականացվել:

<sup>408</sup> Տե՛ս [www.arki-potolki.ru/kengineering/ulichnye\\_svetilniki.php](http://www.arki-potolki.ru/kengineering/ulichnye_svetilniki.php), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Նշվածի կապակցությամբ հարկ է նշել, որ շատ կարևոր է համայնքի ղեկավարի հետևողական հսկողությունը տարեկան ծրագրերի պատշաճ և ամբողջական կատարումն ապահովելու ուղղությամբ:

Արտաքին լուսավորությամբ ապահովելու ուղղությամբ ընթացիկ տարում ձեռնարկված միջոցների վերաբերյալ Երևանի քաղաքապետարանից ստացվել են տեղեկություններ, որ 2018 թվականի ընթացքում ապահովվել է 26 փողոցի և փողոցների հատվածների արտաքին լուսավորություն, իսկ առաջիկայում նախատեսվում է քննարկել չլուսավորված արտաքին լուսավորության ցանց կառուցելու հարցը:

Չնայած վերոգրյալ իրականացված քայլերին, հարկ է նշել, որ խնդիրը շարունակում է մնալ արդիական և շտապ լուծման կարիք ունի:

*Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է՝*

1. *առաջիկա տարիներին միջոցներ ձեռնարկել Երևան քաղաքի վարչական շրջանների բոլոր փողոցներն արտաքին լուսավորության ցանցով ամբողջովին ապահովելու ուղղությամբ,*

2. *առաջիկա տարիներին միջոցներ ձեռնարկել հանրապետության մարզերի համայնքների փողոցները, հատկապես՝ մարզեր տանող մայրուղային ավտոճանապարհներն արտաքին լուսավորության ցանցով ապահովելու ուղղությամբ:*

### **8. Ժամանակավոր-սեզոնային ծառայություն կազմակերպելու ընթացքում հարակից շենքերի բնակիչների հետ հարաբերվելու համակեցության կանոնների պահպանում**

2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացվել են մի շարք բողոքներ, որոնք վերաբերել են հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայություն կազմակերպելու հետևանքով հարակից շենքերի բնակիչների հետ հարաբերվելու համակեցության կանոնների խախտման խնդրին:

Այսպես, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքներից մեկով բարձրաձայնվել է այն հարցը, որ դիմում ներկայացրած անձի բնակարանի պատուհանին անմիջապես մոտ հատվածում գտնվող հանրային զվարճանքի օբյեկտի /սրճարան/ կողմից հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայություն կազմակերպելու ընթացքում առաջանում է աղմուկ, հաճախորդների ծխախոտի ծուխը ներթափանցում է բնակարան, ինչպես նաև առկա է բնակարանից տեսանելիության խնդիր, ինչի հետևանքով խախտվում են համակեցության կանոնները:

Ներկայացված խնդրի վերաբերյալ Երևանի քաղաքապետարանից ներկայացվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության պետի և սրճարանի տնօրենի միջև 2018 թվականին ապրիլ ամսին կնքված տարածքի օգտագործման ինչի ուսումնասիրությամբ պարզվել է, որ այն չի պարունակում որևէ դրույթ, որի ուժով հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայություն կազմակերպողը պարտավորված կլինի պահպանել այլ անձանց հետ հարաբերվելու համակեցության կանոնները:

Միաժամանակ, հատկանշական է, որ վերը նշված պայմանագիրը կնքվել է առանց նույն հասցեի բազմաբնակարան շենքի բնակիչների համաձայնության, ինչը տվյալ դեպքում պարտադիր է, քանի որ սրճարանը հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայությունը կազմակերպում էր նույն հասցեի բազմաբնակարան շենքի սպասարկման տարածքում:

Նշված հարցի իրավական կարգավորման մասին խոսելիս պետք է նշել, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի 1-

ին կետի համաձայն՝ հասարակական կարգի պահպանության բնագավառում քաղաքապետը հետևում է համակեցության կանոնների պահպանմանը:

ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 6-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վրա կառուցված բազմաբնակարան շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասը տվյալ շենքի բնակարանների և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով անհատույց փոխանցման կարգի մասին» թիվ 1855-Ն որոշման 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վրա կառուցված բազմաբնակարան շենքի պահպանման և սպասարկման համար տվյալ շենքի բնակարանների և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով անհատույց փոխանցվող անհրաժեշտ հողամաս է համարվում կցակառույցներ չունեցող բազմաբնակարան շենքի համար՝ շենքի պարագծով ինչպես անմիջականորեն շենքի տակ գտնվող հողատարածքը, այնպես էլ սալվածքի չափով (մինչև 1,5 մետր լայնությամբ) հողաշերտը, եթե այն չի հանդիսանում ճանապարհ, փողոց կամ դրանց հարող հատված կամ այլ անձի սեփականություն հանդիսացող հողամաս:

Պաշտպանի աշխատակազմի և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների համագործակցության արդյունքում թեև կոնկրետ գործով ներկայացված խնդիրը կարգավորվել է, սակայն համակարգային առումով ներկայացված խնդիրը մինչ օրս շարունակվում է չլուծված մնալ: Դրա պատճառը ժամանակավոր-սեզոնային ծառայություն կազմակերպելու ընթացքում հարակից շենքերի բնակիչների հետ հարաբերվելու համակեցության կանոններ սահմանող և խնդիրը համակարգային ձևով կանոնակարգող համապատասխան իրավական ակտի (օրինակ՝ Երևան քաղաքի ավագանու որոշում) բացակայությունն է:

Երևանի քաղաքապետարանի տեղեկությունների համաձայն՝ 2018 թվականի ընթացքում Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի տարածքում արձանագրվել է բազմաբնակարան շենքերի հարակից տարածքներում հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայություն կազմակերպելու հետևանքով շենքերի բնակիչների հետ հարաբերվելու համակեցության կանոնների խախտման 7 դեպք: Դրանց կապակցությամբ Երևան քաղաքի կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի առևտրի, սպասարկումների և գովազդի բաժնի աշխատակիցներն ակումբների տնօրեններին զգուշացրել են բնակչության անդորրը պահպանելու, ինչպես նաև որոշ դեպքերում հետիոտնի անցուդարձին չխոչընդոտելու նպատակով սննդի օբյեկտների սեղանները վերադասավորելու վերաբերյալ:

Քննարկվող խնդրի շրջանակներում հարկ է անդրադառնալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավակիրառ պրակտիկային: Այսպես, դատարանն իր որոշումներում անդրադարձել է անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքին՝ նշելով, որ թեև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան ուղղակիորեն չի պաշտպանում առողջ, խաղաղ միջավայր ունենալու իրավունքը<sup>409</sup>, բայց երբ անհատը լրջորեն և ուղղակիորեն վնաս է կրում աղմուկից կամ աղտոտումից, հարցը հայտնվում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի կարգավորման շրջանակներում<sup>410</sup>:

<sup>409</sup> Տե՛ս Կիրտատոսն ընդդեմ Հունաստանի (Kyrtatos v. Greece) գործով 2003 թվականի օգոստոսի 22-ի վճիռը, գանգատ թիվ 41666/98, կետ 52:

<sup>410</sup> Տե՛ս Հաթոնը և ուրիշներն ընդդեմ Միացյալ Թագավարության (Hatton and Others v. the United Kingdom) գործով 2003 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 36022/97, կետ 96:

Տե՛ս Մորենո Գոմեսն ընդդեմ Իսպանիայի (Moreno Gómez v. Spain) գործով 2005 թվականի փետրվարի 25-ի վճիռը, գանգատ թիվ 4143/02, կետ 54:

*Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել ներկայացված խնդրի լուծման և վերացման ուղղությամբ, ուստի, առաջարկվում է Երևանի և Հայաստանի բոլոր համայնքների ավագանիներին ընդունել խնդիրը համակարգային ձևով կանոնակարգող համապատասխան որոշումներ, որով կսահմանվեն համակեցության կանոններ, ինչպես նաև համակեցության կանոնների պահպանման լույսի ներքո կանոնակարգել հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայության կազմակերպման գործընթացը:*

### **9. Մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումներ կազմակերպելը**

2018 թվականի ընթացքում շարունակվում է չլուծված մնալ լիցենզիան ստանալուց հետո մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումներ չիրականացնելու, լիցենզիայի տրման համար սահմանված պետական տուրքի գումարը չվճարելու, այդ գումարը ժամանակին չհաշվարկելու և չզանձելու, սակայն ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից պետական տուրքի և համապատասխան տույժերի վճարման պահանջ առաջադրելու վերաբերյալ հարցը:

Ներկայացված հարցի կապակցությամբ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունից տեղեկացրել են, որ լիցենզիայի գործողության ամբողջ ընթացքում, անկախ լիցենզիայով վերապահված գործողությունների իրականացման հանգամանքից, պետական տուրքի չհաշվարկման և չզանձման իրավական հիմքեր չկան:

Ընթացիկ տարում լիցենզավորման և ոլորտում գործունեություն իրականացնող անձր ներկայացրել է բողոք, որի համաձայն՝ 2015 թվականի սեպտեմբեր ամսից մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումներ կազմակերպելու համար տրված լիցենզիայի համար սահմանված պետական տուրքի գումարը վճարվել է մինչև նույն տարվա դեկտեմբեր ամիսը: 2017 թվականի հունվար ամսին լիցենզիա ստացած անձը տուգանվել է առանց մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիայի տաքսամոտորային փոխադրումներ իրականացնելու համար այն դեպքում, երբ վերջինս ներկայացրել է իր մոտ առկա լիցենզիան: Նշվածի կապակցությամբ պարզաբանվել է, որ լիցենզիայի գործողությունը կասեցվել է պետական տուրքը չվճարելու պատճառով, մինչդեռ, անձին իրեն տրված լիցենզիայի գործողության կասեցման մասին վերջինս ծանուցում չի ստացել:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքով նախատեսված դեպքերում լիցենզավորող մարմինն իր որոշումներն ընդունում է համապատասխան հանձնաժողովի եզրակացության հիման վրա: Նույն օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիցենզավորող հանձնաժողովը լիցենզիայի գործողության կասեցման հարցը քննարկում և համապատասխան եզրակացություն է կայացնում նույն օրենքով և հանձնաժողովի կանոնադրությամբ նախատեսված կարգով:

Եթե լիցենզավորման հանձնաժողովի լիցենզիայի գործողությունը կասեցնելու մասին հարցի քննարկման վերաբերյալ եզրակացության կայացման օրվան հաջորդող 15 օրյա ժամկետում պատշաճ ձևով լիցենզիայի գործողության կասեցման մասին որոշում չի հանձնվում կամ ուղարկվում լիցենզավորված անձին, ապա լիցենզիայի գործողության կասեցման հարցը համարվում է մերժված: Այս դեպքում լիցենզավորող մարմինն իրավունք չունի նույն հիմքերով երկրորդ անգամ հարց բարձրացնել՝ լիցենզիայի գործողության կասեցման կամ դադարեցման համար:

Նշվածի կապակցությամբ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունից պարզաբանվել է, որ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ լիցենզիայի գործողությունը կարող է կասեցվել տարեկան պետական տուրքը չվճարելու դեպքում:

Հարկ է նշել, որ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը Պաշտպանի աշխատակազմ չի ներկայացրել պարզաբանում, որը կհավաստեր այն, որ լիցենզավորման մարմինը պահպանել է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի լիցենզիայի գործողության կասեցման վերոնշյալ ընթացակարգը և որ ամենակարևորն է լիցենզիայի գործողության կասեցման մասին որոշումը պատշաճ ձևով հանձնվել կամ ուղարկվել է բողոք ներկայացրած անձին:

Այսպիսով, լիցենզավորող մարմնի ոչ պատշաճ վարչարարության հետևանքով անձը չի իմացել լիցենզիայի գործողության կասեցման մասին, սակայն ենթարկվել է վարչական տույժի:

Վերը նշվածից բացի, հատկանշական է, որ ոլորտում գործունեություն իրականացնողները կուտակել են լիցենզավորման ենթական գործունեություն ծավալելու համար սահմանված պետական տուրքի չվճարման արդյունքում գոյացած մեծաքանակ տույժերի գումարներ, որոնք անընդհատ աճում են լիցենզավորված անձանց կողմից գործունեություն չծավալելու, սակայն լիցենզիաները չհանձնելու հետևանքով: Անընդհատ աճող տույժերից խուսափելու և ոլորտում գործունեություն իրականացնողների պահանջը հաշվի առնելով՝ անհրաժեշտ ենք համարում քննարկել կուտակված տույժերի նկատմամբ համաներում կիրառելու հնարավորության հարցը:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. «Պետական տուրքի մասին» և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքներում կատարել համապատասխան փոփոխություններ՝ լիցենզիայի գործողության ժամկետում սահմանելով առկա պարտավորությունների (պետական տուրքը վճարված չլինելու) մասին ծանուցելու որևէ ընթացակարգ,

2. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ, այն է՝ պետական տուրքը ժամանակին չվճարելու դեպքում լիցենզավորող մարմինը «իրավունք ունի» կասեցնել կամ լիցենզիայի գործողությունը «կարող է» կասեցվել եզրույթների փոխարեն՝ սահմանելով «պարտավոր է» և «պետք է» կասեցնի եզրույթները,

3. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածում կատարել համապատասխան փոփոխություններ, համաձայն որոնց՝ լիցենզիայի գործողությունը կասեցնելու դեպքում կասեցման համար դիմումը ներկայացնելու կամ լիցենզավորող մարմնի կողմից լիցենզիայի գործողությունը կասեցնելու պահից պետք է դադարեցվի ամսական պետական տուրքի և համապատասխան տույժերի հաշվարկման ընթացքը,

4. քննարկել լիցենզավորման ենթակա գործունեություն ծավալող անձանց պետական տուրքի չվճարման հետևանքով կուտակված տույժերի նկատմամբ համաներում կիրառելու հնարավորությունը,

5. իրականացնել պատշաճ վարչարարություն լիցենզավորված անձին օրենքով սահմանված կարգով իրազեկելու, հակառակ դեպքում՝ անհիմն չտուգանելու կապակցությամբ:

## **10. Պետության կողմից երաշխավորված անվճար ախտաբանաանատոմիական հերձման իրականացման խոչընդոտներ**

2018 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներով բարձրացվել են ախտաբանաանատոմիական հերձումների իրականացման շուրջ որոշ խնդիրներ:

ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի հուլիսի 16-ի թիվ 36-Ն հրամանով հաստատված «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ախտաբանաանատոմիական հերձումների և

ախտաբանաանատոմիական հերձման (աուտոպսիա) նյութի հիստոլոգիական հետազոտությունների կազմակերպման» չափորոշչով կարգավորվում են պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ախտաբանաանատոմիական հերձումների և ախտաբանաանատոմիական հերձման (աուտոպսիա) նյութի հիստոլոգիական հետազոտության կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

Այսպես, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ախտաբանաանատոմիական հերձումների և հետազոտությունների կազմակերպման արտոնություններից կարող են օգտվել ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման հավելված 1-ով սահմանված բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում ընդգրկված ՀՀ բոլոր քաղաքացիները: Ախտաբանաանատոմիական հերձումները և ախտաբանաանատոմիական հերձման (աուտոպսիա) նյութի հիստոլոգիական հետազոտությունները սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում ընդգրկված անձանց մահվան դեպքում իրականացվում են հիվանդանոցային և բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում (տուն-ինտերնատներում և մանկատներում) մահերի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից լիցենզավորված հիվանդանոցային բժշկական կազմակերպությունների դիահերձարաններում:

Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկի համաձայն՝ բժշկական կենտրոնում մահացած, երկրորդ խմբի հաշմանդամի ախտաբանաանատոմիական հերձման ծառայությունը մատուցելու համար պահանջել են վճարել 95000 դրամ, որը վճարվել է, քանի որ անձն իրազեկ չի եղել սահմանված արտոնությունների մասին: Նշվածի կապակցությամբ ՀՀ առողջապահության նախարարությունից ստացված պարզաբանումների համաձայն՝ բժշկական կենտրոնի դիահերձարանի տարածքում սգո ծառայությունը վարձակալում է տարածք, որտեղ մատուցվում է հուղարկավորության հետ կապված ծառայություններ և բժշկական կենտրոնի հետ առհասարակ որևէ մասնագիտական կապ չունի: Հավանաբար նշված ծառայությունն իրականացվել է սգո ծառայությունում: Դիմողը կատարված ծառայության համար վճարել է մի աշխատակցի, ով միաժամանակ հանդիսացել է և՛ բժշկական կենտրոնի, և սգո ծառայության աշխատակից: Խնդրի կապակցությամբ Պաշտպանի հաջորդ գրությանն առ այն, թե ի վերջո ո՞ր կազմակերպությանն է վճարել դիմողը, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնից տեղեկացվել է, որ երկրորդ կարգի հաշմանդամի դիահերձման համար բժշկական կենտրոնի գանձած գումարի վճարման վերաբերյալ վճարը հիմնավորող փաստաթղթի առկայության դեպքում, Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը կապահովի դրա ընթացքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

*Ուստի, անհրաժեշտ է ապահովել քաղաքացիների պատշաճ ծանուցումը մատուցվող ծառայություններից անվճար օգտվելու իրավունքի վերաբերյալ և մատուցող կազմակերպության մասին:*

### ***11. Ախտաբանաանատոմիական հերձման իրականացում պարտադրելը***

2018 թվականին Պաշտպանին հասցեագրված բողոքներում բարձրացվել է նաև մահացած մարդու հարազատներին ախտաբանաանատոմիական հերձում իրականացնել պարտադրելու հարցը:

ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի «Ախտաբանաանատոմիական հերձումների՝ ներառյալ պարտադիր կարգով իրականացվող ախտաբանաանատոմիական

հերձումների անցկացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 715 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1082-Ն որոշմամբ նախատեսված է դիախերձումի կատարումից հրաժարվելու հնարավորությունը: Մասնավորապես, որոշմամբ հաստատված հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ հերձումից հրաժարվելն արգելվում է, երբ պարտադիր են հերձումները կամ անհրաժեշտ է դատաբժշկական փորձաքննությունը կատարել հերձման միջոցով, իսկ պարտադիր հերձում կատարելու հիմքերը սահմանված են նույն որոշմամբ:

ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի «Ծննդի, պերինատալ մահվան և մահվան բժշկական վկայականների պատրաստման, հաշվառման ու տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 1156-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 16-րդ կետի համաձայն՝ առողջության առաջնային պահպանման բժշկական հաստատության բուժող բժիշկը կամ տեղամասային թերապևտը կամ ընտանեկան բժիշկը, կամ մանկաբույժը գնում է մահացածի դիակը՝ հավաստիանալով, որ չկան ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտադիր ախտաբանաանատոմիական հերձում կատարելու հիմքեր, մահացածի ազգականներից (ամուսին, ծնող, երեխա, թոռ, պսակ, տատ, հարազատ եղբայր և քույր) վերցնում է ախտաբանաանատոմիական հերձումից հրաժարվելու վերաբերյալ գրավոր փաստաթուղթ կամ էլ մահացողի՝ կենդանության օրոք ախտաբանաանատոմիական հերձումից հրաժարվելու մասին գրավոր փաստաթուղթ, այն հաստատում իր ստորագրությամբ և կցում կամ մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտին, կամ երեխայի հսկողության ամբուլատոր քարտին՝ կատարելով գրառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր ախտաբանաանատոմիական հերձում կատարելու հիմքերի բացակայության մասին:

ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի թիվ 1082-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 8-րդ կետի համաձայն՝ եթե մահը տեղի է ունեցել տանը, և առկա են նույն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված հիմքերը, տարածքային ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատությունը պարտավոր է արձանագրել մահվան փաստը և շտապօգնության դիակային բրիգադի միջոցով կազմակերպել դիակի տեղափոխումն ու հերձումը՝ նույն կարգին համապատասխան:

Փաստորեն, վերը թվարկված մասնագետներն են գնահատում, թե որքանով է հերձում կատարելը պարտադիր, և եթե մասնագետի գնահատմամբ այն պարտադիր չէ, ապա հերձումից հրաժարվելու վերաբերյալ մահացածի ազգականներից վերցված գրավոր փաստաթղթի հիման վրա անձի ամբուլատոր բժշկական քարտին կատարված գրառումը հիմք է տալիս հետագայում իրավաբանորեն ձևակերպելու անձի մահը:

Պաշտպանին հասցեագրված բողոքներով ՀՀ Տավուշի մարզի Բերդ քաղաքի մի խումբ բնակիչներ հայտնել են, որ «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրենը հրաժարվում է ախտաբանաանատոմիական հերձման չենթարկած մահացածների համար մահվան մասին բժշկական վկայականներ տրամադրել: Դիմողները տեղեկացրել են, որ նշված ծառայության համար մահացածի հարազատներից խոշոր գումարներ են պահանջվում: Բացի այդ, Բերդ քաղաքի դատական բժիշկն աշխատանքից ազատված է, իսկ մահացած անձանց ախտաբանաանատոմիական ծառայության համար են դատական բժիշկ հրավիրվում է Սևան քաղաքից, ինչը խնդրահարույց է ինչպես ժամանակի: Նշված և այլ հանգամանքների առկայության պատճառով մահացածի հարազատները հրաժարվում են դիախերձումից, ինչի հետևանքով զրկվում են մահվան մասին բժշկական տեղեկանք, ինչպես նաև մահվան վկայական ստանալուց:

Այսպիսով, Պաշտպանին դիմած քաղաքացիների պնդմամբ՝ իրենց հարազատների մահից հետո մահվան մասին բժշկական տեղեկանքներ ստանալու համար ստիպված համաձայնում են դիախերձման «պահանջին», ինչը պահանջում է մեծ ֆինանսական ծախսեր:



Նշված և այլ դեպքերով ներկայացված խնդիրները հետագայում բացառելու համար Պաշտպանի միջամտությամբ մարզպետարանի ենթակայության բժշկական կազմակերպությունների և հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ղեկավարներին տրվել են հանձնարարականներ:

Պետության կողմից երաշխավորված անվճար ախտաբանաանատոմիական հերձումը չիրականացնելու վերաբերյալ առողջապահության նախարարությունում գրանցվել է 15 բողոք, մասնավորապես սոցիալական խմբերում ընդգրկված անձանց հարազատներից հերձման, զմրսման, հարակից ծառայությունների՝ կոսմետիկ հարդարում, հանդերձավորում համար պահանջվել է կատարել վճարումներ: Նշված վճարովի ծառայություններն իրականացնելու համար բացակայել է հանգուցյալի օրինական ներկայացուցչի համաձայնագիրը: Նմանատիպ դեպքերը ստացել են արագ արձագանքում և խնդրին տրվել է օրենքով սահմանված կարգով լուծումներ:

*Ներկայացված խնդրին համակարգային լուծում տալու համար անհրաժեշտ է՝*

*1. Հանրապետությունում ախտաբանաանատոմիական ծառայության վերաբերյալ բնակչության շրջանում իրենց իրավունքների մասին իրազեկվածության բարձրացման նպատակով ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններում և հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում, ինչպես նաև հիվանդանոցային բժշկական կազմակերպությունների դիախերձարաններում բնակչության համար տեսանելի և մատչելի վայրերում փակցնել տեղեկատվական պաստառներ,*

*2. Բնակչության համար տեսանելի և մատչելի վայրերում փակցնել տեղեկատվական պաստառներ, որոնք պարունակում են վճարովի ծառայությունների, գների վերաբերյալ տեղեկություններ:*

## **12. Ճանապարհային երթևեկության կանոնի խախտման դեպքում տուգանքը տրանսպորտային միջոցի սեփականատիրոջն ուղարկելը**

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում 2015 թվականի դեկտեմբերի 21-ին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում (ՀՕ-178), օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվեց, որ այն դեպքերում, երբ ճանապարհային երթևեկության կանոնի խախտումն ամրագրվել է տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով, ապա նույն օրենսգրքով նախատեսված վարչական պատասխանատվությունը կրում է տրանսպորտային միջոցի սեփականատերը: Մինևնույն ժամանակ, սահմանվեց նաև, որ եթե տրանսպորտային միջոցը հանդիսանում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ սեփականություն, ապա՝ համապատասխանաբար՝ իրավաբանական անձի ղեկավարը կամ անհատ ձեռնարկատերը, եթե վերջիններս չեն ապացուցում, որ խախտումը կատարել է այլ անձ:

Այս փոփոխության իրականացումից հետո Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում և հաղորդմամբ մշտապես բարձրաձայնվել է տեսանկարահանող սարքերի արձանագրած տեսանյութերի հիման վրա արձանագրված վարչական իրավախախտումների վերաբերյալ կայացված որոշումներն ավտոմեքենան փաստացի տիրապետող և օգտագործող անձանց չուղարկելու հարցը, քանի որ վարչական իրավախախտումների վերաբերյալ կայացված որոշումներով նշանակված տուգանքներն ուղարկվում են ավտոմեքենայի սեփականատիրոջն անգամ այն պարագայում, երբ այն օգտագործման է տրվել մեկ այլ անձի և տարիներ շարունակ շահագործել վերջինս:

Պետական և համայնքային կազմակերպություններին պատկանող տրանսպորտային միջոցների պարագայում այն հարցն օրենսդրորեն կարգավորված է: Այս խնդիրը

Ֆիզիկական անձանց և մասնավոր իրավաբանական անձանց պատկանող ավտոմեքենաների դեպքում շարունակում է մնալ արդի՝ հետևյալի մատնանշմամբ: Այսպես, «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ, եթե իրավախախտումը կատարվել է պետական (պետական մարմին, պետական կառավարչական հիմնարկ, պետական հիմնարկ կամ որևէ այլ կարգավիճակ ունեցող պետական կազմակերպություն) կամ համայնքային (համայնքային կառավարչական հիմնարկ կամ որևէ այլ կարգավիճակ ունեցող համայնքային կազմակերպություն) կազմակերպությանն ամրացված (պատկանող) տրանսպորտային միջոցով, բացառությամբ նույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված տրանսպորտային միջոցների, ապա վարչական ակտի հասցեատիրոջը պարզելու նպատակով վարչական մարմինը, իրավախախտման հատկանիշները պարզելուց հետո՝ հինգ օրվա ընթացքում, գրավոր հարցում է կատարում համապատասխան կազմակերպությանը (հարցումը կարող է ուղարկվել նաև կազմակերպության պաշտոնական էլեկտրոնային փոստին):

Նշված կարգավորման վերլուծությամբ կարող ենք նշել, որ գործնականում տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական և իրավաբանական անձինք համապատասխան դիմումի հիման վրա տուգանքի վերահասցեագրում պահանջելու հնարավորություն ունեն, ինչն էլ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, անձի կողմից բավարար ապացույցների ներկայացման պարագայում, կիրականացվի՝ վարչական ակտը կվերահասցեագրվի համապատասխան անձին: Չնայած նման կառուցակարգի և յուրաքանչյուր դեպքով սեփականատիրոջ՝ խախտումն այլ անձի կողմից կատարելն ապացուցելու հնարավորության առկայության, ամեն դեպքում հարկ է նշել, որ իրավաբանական անձի պարագայում տրանսպորտային միջոցն այդ կազմակերպության աշխատակցին ամրակցելու պարագայում կամ երկարաժամկետ վարձակալության դեպքում, մեքենայի սեփականատիրոջ ստիպված է լինելու յուրաքանչյուր խախտման դեպքում կրել հավելյալ բեռ՝ ապացուցելով խախտումն այլ անձի կատարած լինելու փաստը:

*Ուստի, անհրաժեշտ է կատարել օրենսդրական այնպիսի փոփոխություններ, ըստ որոնց համապատասխան ապացույցների առկայության պարագայում տուգանքը միանգամից հասցեագրվի տրանսպորտային միջոցը փաստացի տիրապետողի անունով:*

### **13. Աղբահանության գործընթացի ոչ պատշաճ իրականացում**

2018 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին շարունակվել են հասցեագրվել աղբահանության ոլորտում պետության պատվիրակված լիազորություններն իրականացնող իրավաբանական անձի կողմից պարտավորությունների պատշաճ չկատարման, աղբամանները և կոնտեյներներն օրենքով չնախատեսված վայրերում տեղադրելու և աղբահանությունը սահմանված ժամանակացույցի խախտմամբ իրականացնելու վերաբերյալ բողոքներ:

Աղբահանության ոլորտում պետության պատվիրակված լիազորություններն իրականացնող իրավաբանական անձի կողմից պատվիրակված պարտավորությունների պատշաճ չկատարման բողոքների համատեքստում հարկ է նշել, որ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասի համաձայն՝ կենցաղային աղբը հավաքվում և (կամ) պահվում է համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների՝ այդ նպատակով հատուկ սահմանված կամ նախատեսված տեղերում և համայնքի կամ օպերատորի տրամադրած տարողություններում՝ աղբամաններում կամ

կոնտեյներներում, աղբախցերում՝ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահանջների պահպանմամբ: Համայնքի ընդհանուր օգտագործման տարածքներում առաջացող աղբի համար համայնքը կամ օպերատորը տեղադրում է աղբամաններ կամ կոնտեյներներ՝ սանիտարահիգիենիկ կանոններին և նորմերին, ինչպես նաև սանիտարական սխեմային համապատասխան:

Նույն օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օպերատորն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ համայնքի բյուջե վճարելով տուգանք՝ չկատարված կամ ոչ պատշաճ կատարված աղբահանության յուրաքանչյուր դեպքի համար՝ հիսուն հազար դրամի չափով, եթե օպերատորի և համայնքի միջև կնքված պայմանագրով ավելի մեծ տուգանք սահմանված չէ: Տուգանքի վճարումն օպերատորին չի ազատում չկատարված կամ ոչ պատշաճ կատարված պարտավորության կատարումից: Օպերատորի պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը կամ նրա լիազորած անձը (մարմինը):

Աղբահանության իրականացման կարգը, այդ թվում՝ աղբահանության իրականացման նվազագույն ժամանակացույցը, աղբամանների կամ կոնտեյներների տեղադրման վայրերը, դրանց տեսակները և քանակը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնները և նորմերի պահանջները: Ընդ որում, աղբը պետք է փոխադրվի մինչև կոնտեյներների ամբողջությամբ լցվելը:

«Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը, սպառման թափոնների հավաքմանը, պահմանը, փոխադրմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, վնասազերծմանը և թաղմանը, բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանման, սպառման թափոնների գործածության ոլորտում աշխատանքներ իրականացնող անձնակազմի աշխատանքային անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջները n 2.1.7.002-09 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի N 25-Ն հրամանի 10-րդ կետի համաձայն՝ կոնտեյներները տեղադրում են բնակելի և հասարակական շենքերի բակային կամ միջբակային տարածքներում՝ փոխադրամիջոցի մոտեցման համար հարմար դիրքով, ջրանթափանց, հարթ, բարեկարգ մակերեսով կոշտ պատվածքով տարածքների վրա: Կոշտ պատվածքով տարածքը երեք կողմից ունենում է պատնեշ կամ մետաղյա դեկորատիվ ցանկապատ: Կոնտեյներները չեն տեղադրում փողոցների և սիգամարզերի վրա:

Վերոնշյալ իրավակարգավորումների լույսի ներքո Պաշտպանը Երևանի քաղաքապետարան են հասցեագրվել հարցադրումներ 2018 թվականի ընթացքում Երևան քաղաքում աղբահանության կազմակերպման ժամանակացույցի խախտումների, Երևան քաղաքում աղբամանները կամ կոնտեյներները ոչ պատշաճ վայրերում տեղադրելու, ինչպես նաև, հաշվի առնելով օպերատորի կողմից խախտումների հաճախականությունը՝ նոր օպերատորի ներգրավման վերաբերյալ:

Քաղաքապետարանի ներկայացրած պարզաբանումների համաձայն՝ 2018 թվականին Երևան քաղաքում աղբահանության կազմակերպման թերացումները կապված են եղել ընկերության մեքենա-մեխանիզմների անսարքության հետ: Քաղաքապետարանից տեղեկացրել են նաև, որ առկա թերությունները վերացնելու ուղղությամբ դրսևորվում է հետևողականություն և ծրագրվում է ուսումնասիրել նոր օպերատորի ներգրավման անհրաժեշտությունը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. միջոցներ ձեռնարկել աղբահանության՝ յուրաքանչյուր օրվա ընթացքում պարբերաբար իրականացման ուղղությամբ՝ ապահովելու համար մինչև կոնտեյներների ամբողջությամբ լցվելն աղբի փոխադրման օրենքով սահմանված պահանջը,
2. սահմանել աղբահանության իրականացման հստակ ժամանակացույց,
3. պատշաճ վերահսկողություն իրականացնել աղբահանություն իրականացնող կազմակերպության ժամանակացույցի պահպանման նկատմամբ:

#### **14. Թափառող շների վնասագերծման և ստերիլիզացման խնդիր**

2018 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ մի շարք բողոքներ են ստացվել Երևան քաղաքի տարբեր վարչական շրջաններում մեծ քանակով թափառող շների առկայության վերաբերյալ, ինչը վտանգավոր է մարդկանց և կենդանիների անվտանգության տեսանկյունից:

Ըստ Երևանի քաղաքապետարանի տվյալների՝ 2018 թվականի ընթացքում ստացվել է թափառող շների վնասագերծման և ստերիլիզացման վերաբերյալ 1371 բողոք: Տվյալ բողոքների կապակցությամբ՝ թափառող կենդանիների վնասագերծման և ստերիլիզացման ծառայություն մատուցող «Յունիգրաֆ-Իքս» ՍՊ ընկերությունը ձեռնարկել է 430 կենդանու վնասագերծման աշխատանքներ:

Քաղաքապետարանի տվյալները վկայում են, որ 2018 թվականի հուլիսի 3-ից «Յունիգրաֆ-Իքս» ՍՊ ընկերությունը հրաժարվել է Երևան քաղաքում թափառող կենդանիների վնասագերծման աշխատանքներ իրականացնելուց և Երևանի քաղաքապետարանը միակողմանի լուծել է «Յունիգրաֆ-Իքս» ՍՊ ընկերության հետ կնքված պայմանագիրը: Ավելին, քաղաքապետարանի տվյալների համաձայն՝ ներկայումս թափառող շների վնասագերծման և ստերիլիզացման գործառույթների իրականացման խնդիրն ընթացքի մեջ է և կկարգավորվի մոտ ժամանակահատվածում:

Հարկ է նշել, որ շատ կարևոր է բարձրացված հարցի հրատապ կարգավորումը, որովհետև թափառող շները բնակվում են մարդկանց բնակավայրերի մոտ, սնունդ են հայթայթում աղբարկղերում և այլ տարատեսակ ոչ ստերիլ վայրերում, ինչի պատճառով վարակվում են տարատեսակ հիվանդություններով և դառնում հիվանդությունների տարածման աղբյուր: Ավելին՝ թափառող շներն արագ բազմանում են և շրջում խմբերով, ինչը մեծացնում է Երևան քաղաքի տարբեր բնակավայրերում բնակվող մարդկանց վրա հարձակվելու վտանգը:

Համանման խնդիրների անդրադարձել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, նշելով, որ «անձնական կյանք» հասկացությունն իր մեջ ներառում է անձի ֆիզիկական և հոգեկան ամբողջականությունը, և որ պետությունն ունի պոզիտիվ պարտականություն կանխելու անհատի ֆիզիկական և բարոյական ամբողջականության խախտումները, երբ իշխանությունները գիտեն կամ պարտավոր են իմանալ այդ խախտումների մասին<sup>411</sup>): Դատարանը վկայակոչել է Ընտանի կենդանիների պաշտպանության եվրոպական կոնվենցիայի 12-րդ հոդվածը, համաձայն որի՝ երբ կողմը համարում է, որ թափառող կենդանիների թիվն իրենից խնդիր է ներկայացնում, ապա պետք է ձեռնարկի համապատասխան օրենսդրական և/կամ վարչական միջոցառումներ դրանց թվի կրճատման համար, այն միջոցներով, որոնք չեն առաջացնում ցավ, խոշտանգում և տառապանք<sup>412</sup>:

<sup>411</sup> St' u Ջեորջելը և Ջեորջետա Ստոիչեսկուն ընդդեմ Ռումինիայի (Gerorgel and Georgeta Stoicescu v. Romania) գործով 2011 թվականի հոկտեմբերի 26-ի վճիռը, զանգատ թիվ 9718/03, կետ 49:

<sup>412</sup> St' u Ջեորջելը և Ջեորջետա Ստոիչեսկուն ընդդեմ Ռումինիայի (Gerorgel and Georgeta Stoicescu v. Romania) գործով 2011 թվականի հոկտեմբերի 26-ի վճիռը, զանգատ թիվ 9718/03, կետ 33:

Ամփոփելով՝ Դատարանը նշել է, որ իշխանությունների կողմից թափառող շների հարցի լուծման համար բավարար միջոցառումներ չձեռնարկելը և տուժողին փոխհատուցում չտրամադրելը հանդիսանում են Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված անհատի անձնական կյանքը հարգելու՝ պետության պոզիտիվ պարտականությունների խախտում<sup>413</sup>:

Բարձրացված հարցի վերաբերյալ ուսումնասիրվել նաև այլ երկրների փորձը: Այսպես, Վրաստանի փորձի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Վրաստանի Թբիլիսի քաղաքում թափառող կենդանիների (շուն) անկանոն բազմացման վերահսկողությամբ զբաղվում է Կենդանիների մշտադիտարկման մունիցիպալ ծառայությունը, որը պատասխանատու է կենդանիների ժամանակին պատվաստման, ստերիլիզացման, որձատման և վնասազերծման աշխատանքների իրականացման համար: Ծառայությունում գրանցված յուրաքանչյուր կենդանին (շուն) ականջի վրա կրում է համապատասխան պիտակ՝ գրանցման համարով:

*Հաշվի առնելով վերոգրյալը և խնդրի կարգավորման հրատապությունը՝ առաջարկվում է հնարավոր սեղմ ժամկետում ստեղծել համայնքային ծառայություն Երևան համայնքում կամ պատվիրակել նշված լիազորության իրականացումը մասնավոր որևէ կազմակերպությանը:*

---

<sup>413</sup> Տե՛ս Ջեորջելը և Ջեորջետա Ստոիչեսկուն ընդդեմ Ռումինիայի (Gerorgel and Georgeta Stoicescu v. Romania) գործով 2011 թվականի հոկտեմբերի 26-ի վճիռը, գանգատ թիվ 9718/03, կետ 62:

**ԲԱԺԻՆ 11. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ**

***1. Ինտերնետ շահումով խաղերի և վիճակախաղերի գովազդի սահմանափակումներ***

2018 թվականի ընթացքում Պաշտպանին շարունակվել են հասցեագրվել բողոքներ ինտերնետ շահումով խաղերի և վիճակախաղերի գովազդի հետևանքով առաջացած մի շարք խնդիրների վերաբերյալ:

Դեռ 2017 թվականին Պաշտպանի աշխատակազմում ՀՀ օրենսդրության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բացակայում է ինտերնետ շահումով խաղերի և վիճակախաղերի գովազդի մանրամասն իրավական կարգավորում՝ հանդիսանալով մարդկանց, այդ թվում նաև անչափահասների իրավունքների խախտման պատճառ: Հաշվի առնելով վերոնշյալը՝ Պաշտպանի աշխատակազմում մշակվել է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագիծ

«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծով առաջարկվում է՝ հեռուստահաղորդակցության այլքով վիճակախաղի և ինտերնետ շահումով խաղի, ինչպես նաև դրանց կազմակերպիչների գովազդի հեռարձակումը թույլատրել ժամը 24.00-ից մինչև 06.00-ը ներառյալ: Վիճակախաղի և ինտերնետ շահումով խաղի գովազդի ժամանակ արգելել որևէ կերպ դիմել անչափահասներին, մարդկանց կերպարների տեսաձայնային կամ այլ ձևով օգտագործելը, տպավորություն ստեղծել, թե խաղին մասնակցելն ապահովում է պարբերաբար եկամուտ (շահույթ) ստանալու հնարավորությունը կամ աշխատանքի այլընտրանք է, տպավորություն ստեղծել, թե եկամուտ (շահույթ) ստանալը երաշխավորված է, ներշնչել, որ խաղի միջոցով հնարավոր է հասնել հասարակական, մասնագիտական, սպորտային կամ անձնական հաջողության, քննադատել վիճակախաղին կամ ինտերնետ շահումով խաղին չմասնակցելը: Առաջարկվում է նաև օրենքում ամրագրել, որ վիճակախաղի և ինտերնետ շահումով խաղի գովազդը պետք է պարունակի ոչ սթափ կամ հոգեճնշող վիճակում խաղալու անթույլատրելիության վերաբերյալ նախազգուշացնող տեղեկատվություն:

Նախագծի փաթեթը համատեղ քննարկվել և լրամշակվել է ՀՀ կառավարության, ինչպես նաև Ազգային ժողովի հետ համատեղ աշխատանքային քննարկումների արդյունքում:

*Հաշվի առնելով խնդրի կարևորությունը՝ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել հնարավորինս սեղմ ժամկետում նախագիծն ընդունելու ուղղությամբ:*

***2. Հեռուստատեսությամբ և ռադիոյով հեռարձակվող շահումով խաղերի վերաբերյալ՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև հարակից այլ օրենքներով կարգավորման բացակայություն***

Դեռևս 2017 թվականին Պաշտպանի աշխատակազմում ՀՀ օրենսդրության ուսումնասիրությամբ պարզվել է, որ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև հարակից այլ օրենքներով բացակայում է հեռուստատեսությամբ և ռադիոյով հեռարձակվող շահումով խաղերի հեռարձակման իրավական կարգավորումը, մինչդեռ այդ իրավական բացը գործնականում կարող է դառնալ քաղաքացիների իրավունքների խախտման պատճառ:

Այսպես, «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանվում է շահումով խաղի հասկացությունը: Միևնույն

Ժամանակ, «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքի գործողությունը չի տարածվում հեռահաղորդակցության ոլորտի կապի միջոցով շահումով խաղերի կազմակերպման գործունեության վրա, բացառությամբ նույն օրենքով սահմանված դեպքերի: Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ սահմանելով «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի կարգավորումները չեն կարող տարածվել, օրինակ՝ «Օղից փող» հաղորդման վրա: Ավելին, հեռահաղորդակցության ոլորտը կարգավորող օրենսդրության, «Վիճակախաղերի մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքների համապատասխան դրույթների համապարփակ ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ հեռուստատեսությամբ և ռադիոյով հեռարձակվող շահումով խաղերի հեռարձակման և կազմակերպման գործունեությունը ՀՀ օրենսդրությամբ ներկայումս չի կարգավորվում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պաշտպանի աշխատակազմում մշակվել է օրենքի նախագիծ, որով առաջարկվում է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը փոփոխել այնպես, որ նման խաղերը հեռարձակել հնարավոր լինի միայն գիշերային ժամերին՝ 24:00-ից մինչև 06:00-ը: Դրանից բացի՝ առաջարկվում է սահմանել, որ հեռուստատեսությամբ կամ ռադիոյով հեռարձակողը պարտավոր է հրապարակել առկա զանգերի ծավալի և միացման հնարավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ողջ եթերի ընթացքում տեղյակ պահել զանգի վճարովի լինելու մասին և այդ ամենի հետ մեկտեղ սակագնի վերաբերյալ հավաստի ինֆորմացիան պետք է լինի տեսանելի կամ լսելի: Առաջարկվում է սահմանել նաև անչափահասների մասնակցության արգելքի վերաբերյալ նախագուշացման պարտադիր պահանջ:

Նախագիծը ներկայացվել է շրջանառության, շահագրգիռ մարմինների նկատառումների ու առաջարկությունների հիման վրա կազմվել է ամփոփաթերթ, և նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագիծը:*

### ***3. Ֆիզիկական ներգործության միջոցով գազահաշվիչի խափանման կամ վնասման դեպքում առանց մեղքի ասպացուցման բաժանորդին պատասխանատվության ենթարկելը***

2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ առևտրային հաշվառքի սարքերի (գազահաշվիչի) խափանման կամ վնասման դեպքում գազամատակարարում իրականացնող ընկերության կողմից բաժանորդներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Ըստ բողոքների՝ գազամատակարարում իրականացնող ընկերությունն իրականացրել է գազահաշվիչների փոխարինում և ստուգաչափումներ: Իրականացված ստուգաչափումների արդյունքների համաձայն՝ գազահաշվիչների վրա որևէ անձի ներգործությամբ իրականացվել են արտաքին միջամտություններ, ինչի հետևանքով ընկերությունը կատարել է գազի քանակի և արժեքի վերահաշվարկներ: Ներկայացված արդյունքների վերաբերյալ, սակայն բաժանորդները հայտնել են իրենց անհամաձայնությունը:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի N95 Ն որոշման 4.1 կետի համաձայն՝ բազմաբնակարան շենքերի բնակիչների գազամատակարարման համար առևտրային հաշվառքի սարքերը տեղակայվում են նրանց

բնակարաններից դուրս: Առանձնատների և կենցաղային սպառում ունեցող կազմակերպությունների գազամատակարարման համար առևտրային հաշվառքի սարքերը տեղակայվում են նրանց սեփականության տարածքից դուրս:

Ոչ կենցաղային սպառում ունեցող կազմակերպությունների առևտրային հաշվառքի սարքերի տեղակայման կետը սահմանվում է միացման պայմանագրով, որն ամրագրվում է նաև պայմանագրում: Այսպես, երբ առկա չէ հսկիչ հաշվառքի սարք և չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ փաստվել է առևտրային հաշվառքի սարքի խախտում և դա առևտրային հաշվառքի սարքի խախտման առաջին դեպքն է վերջին երկու տարիների ընթացքում, մատակարարն իրավունք ունի բաժանորդից պահանջել վճարել տույժ՝ վերահաշվարկված գազի արժեքի չափով:

Բաժանորդի մատակարարի տույժ վճարելու պահանջին համաձայնելու դեպքում մատակարարը հաշվարկված տույժը ներառում է վերահաշվարկի կատարմանը հաջորդող հաշվարկային ամսվա համար բաժանորդին ներկայացվող հաշվարկային (վճարման) փաստաթղթում: Բաժանորդի կողմից մատակարարի տույժ վճարելու պահանջին չհամաձայնելու դեպքում մատակարարը վեճը լուծում է դատական կարգով: Մատակարարն իրավունք չունի տույժի չվճարման համար դադարեցնել բաժանորդի գազամատակարարումը մինչև վեճի վերջնական լուծումը:

Միննույն բաժանորդի մոտ երկու տարվա ընթացքում առևտրային հաշվառքի սարքի 1-ից ավելի խախտում հայտնաբերելու դեպքում, երբ չափագիտական մարմնի եզրակացությամբ փաստված առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքերը, ըստ մատակարարի, պայմանավորված են եղել բաժանորդի միտումնավոր գործողություններով, մատակարարն իրավունք ունի վերահաշվարկված գազի արժեքի կրկնապատիկի չափով հաշվարկելու տույժ և այն հաշվի առնել վերահաշվարկի կատարմանը հաջորդող հաշվարկային ամսվա համար բաժանորդին ներկայացվող հաշվարկային (վճարման) փաստաթղթում:

Այդ դեպքում մատակարարն իրավունք ունի դադարեցնել բաժանորդի գազամատակարարումը՝ հաշվարկված տույժը՝ կազմակերպությունների դեպքում սույն կանոնների 6-րդ գլխով, իսկ բնակչության դեպքում՝ սույն կանոնների 8-րդ գլխով սահմանված կարգով չվճարելու համար: Մատակարարի հաշվարկված տույժին չհամաձայնելու դեպքում բաժանորդը վեճը լուծում է դատական կարգով:

Անհրաժեշտ է նշել, որ գործող իրավակարգավորումների համաձայն՝ բազմաբնակարան շենքերի և առանձնատների գազամատակարարման համար առևտրային հաշվառքի սարքերը տեղակայվում են բաժանորդի սեփականության տարածքից դուրս: Մինչդեռ, ֆիզիկական ներգործության միջոցով գազահաշվիչի խափանման կամ վնասման դեպքում պատասխանատվությունն առանց մեղքի ապացուցման դրվում է միայն բաժանորդի վրա:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է փոփոխություններ իրականացնել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի թիվ 95-Ն որոշման մեջ, որով կկարգավորվի առևտրային հաշվառքի սարքերի՝ բաժանորդների սեփականության և վերահսկողության տարածք տեղափոխելու կամ օպերատորի կողմից առևտրային հաշվառքի սարքերի անվտանգությունն ապահովող շուրջօրյա վերահսկողության համապատասխան մեխանիզմներ կիրառելու հարցը:*

#### **4. Զրամատակարարման ընդհատումներ**

2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ հատկապես ամռանն առկա են բնակելի տներում



ջրամատակարարումն ըստ սահմանված ժամանակացույցի չիրականացնելու, ջրանջատումների վերաբերյալ պատշաճ իրազեկում չիրականացնելու, ինչպես նաև մատակարար ընկերության թեժ գծի ծառայությունն անհասանելի լինելու խնդիրներ:

Բարձրացված հարցերի կապակցությամբ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության պարզաբանումների համաձայն՝ 2018 թվականի հունիս և հուլիս ամիսներին Երևան քաղաքում իրականացված պարբերական ջրանջատումների մի մասը պայմանավորված է եղել վթարավերականգնողական աշխատանքներով, ցանցի հնամաշության և ջրագծերի աշխատանքների ծանրաբեռնվածության պատճառով առաջացած վթարների հետ, իսկ թեժ գծի ծառայության անհասանելիությունը պայմանավորված է եղել զանգերի մեծ քանակով:

ՄԱԿ-ի սպառողների պաշտպանության 2016 թվականի ուղեցույցի 72-րդ կետում սահմանվում է ջրամատակարարման ոլորտում անդամ պետությունների՝ պարտավորությունը խմելու ջրի մատակարարման և սանիտարական տասնամյակի նպատակների և խնդիրների համատեքստում մշակել, իրականացնել և ամրապնդել խմելու ջրի մատակարարման, բաշխման և որակի բարելավման ազգային քաղաքականությունը: Ընդ որում՝ նշվում է, որ հատուկ ուշադրություն պետք է դարձնել ծառայությունների մատուցման մակարդակի, որակի և տեխնոլոգիայի բարձրացմանը, կարգավորող վերահսկողության իրականացմանը, ինչպես նաև սպառողների իրազեկման և ծրագրերին հասարակության մասնակցության կարևորությունը<sup>414</sup>:

2016 թվականի նոյեմբերի 21-ին ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի և «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության և «Վեոլիա Օ-Կոմպանի Ժեներալ դեզ Օ» ընկերության միջև կնքվել է «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր ակունք» ՓԲ ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագիր, որի կողմերն են ՀՀ ԷԵԲՊՆ ջրային պետական կոմիտեն՝ որպես վարձատու և «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությունը՝ որպես վարձակալ: Վարձակալության նշյալ պայմանագրի 7-րդ հոդվածի 7.2 կետի 7.2.1 ենթակետի համաձայն՝ վարձակալն ամբողջությամբ պատասխանատու է սպասարկման տարածքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի (ներառյալ գույքի) կառավարման, շահագործման, պահպանման և նորոգման համար (...):

*Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝*

- 1. ուսումնասիրել հաճախակի տեղի ունեցող վթարների պատճառները և աշխատանքներ իրականացնել հետագա վթարները կանխարգելելու ուղղությամբ,*
- 2. միջոցներ ձեռնարկել «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության թեժ գծի ծառայության անխափան աշխատանքն ապահովելու ուղղությամբ:*

##### **5. Մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի չվճարման դեպքում իրականացվող ջրանջատումների դեպքում ջրի նվազագույն քանակով չապահովելը**

2018 թվականի ընթացքում Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել մատուցված ծառայությունների համար սահմանված գումարը չվճարելու դեպքում ջրամատակարարում ապահովող ընկերության կողմից բաժանորդների ջրամատակարարումը դադարեցնելու վերաբերյալ:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի թիվ 378-Ն որոշման 74-րդ կետի համաձայն՝ մատակարարն իրավունք ունի առնվազն մեկ օր առաջ տեղեկացնելով՝ դադարեցնել բաժանորդին ծառայությունների մատուցումը բաժանորդի կողմից մատուցված ծառայությունների կամ մատուցված ծառայության վերահաշվարկված քանակի դիմաց

<sup>414</sup> Տե՛ս [http://unctad.org/en/PublicationsLibrary/ditccplpmisc2016d1\\_en.pdf](http://unctad.org/en/PublicationsLibrary/ditccplpmisc2016d1_en.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

վճարման ենթակա գումարի կամ հաշվարկված տուժանքի չվճարման դեպքում մատակարարի կողմից գրավոր կամ էլեկտրոնային եղանակով կամ շուրջօրյա հեռախոսակապի միջոցով բաժանորդին գուշացնելու պահից սկսած 3 օրվա ընթացքում կրկին չվճարելու դեպքում:

Ծառայությունների մատուցումը կարող է դադարեցվել նաև այն պարագայում, երբ մատակարարի ներկայացուցչին առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցման կամ ապահավաքակցման նպատակով իր սեփականություն հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող տարածք մուտք գործել թույլ չտալու կամ առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը չհաղորդելու դեպքում:

Բարձրացված հարցի կապակցությամբ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության պարզաբանումների համաձայն՝ 2018 թվականի ընթացքում ընկերության կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարումների սահմանված ժամկետներում չկատարելու հիմքով ՀՀ տարածքում իրականացվել է 381 ջրանջատում: Նմանատիպ դեպքերի առնչությամբ բողոքների ստացման դեպքում բաժանորդին բացատրվել են ջրանջատումների պատճառները, իսկ պարտքը մարելուց կամ պարտքի մարման ժամանակացույց կնքելուց հետո ջրամատակարարումը վերականգնվել է:

2010 թվականի հուլիսի 28-ի թիվ 64/292 հանձնարարականով<sup>415</sup> ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ջրի և սանիտացիայի իրավունքը ճանաչեց որպես մարդու իրավունք և ընդունվեց այն փաստը, որ ջրի և սանիտացիայի հասանելիությունը հիմնարար է մարդու իրավունքների իրացման համար<sup>416</sup>: Մասնավորապես, ջրի նկատմամբ մարդու իրավունքը ենթադրում է յուրաքանչյուր մարդու համար բավարար քանակությամբ անվտանգ, տնտեսապես և ֆիզիկապես հասանելի խմելու ջրի իրավունքը՝ նրա ամենօրյա պահանջումների բավարարման համար: Անվտանգ ջրի խելամիտ քանակությունն անհրաժեշտ պայման է ջրագրկման հետևանքով առաջացող մահերի կանխարգելման, ամենօրյա անորակ ջրի օգտագործումից առաջացող հիվանդությունների ռիսկերի նվազման համար<sup>417</sup>:

Այն պարագայում, երբ ջրամատակարարման ծառայություններն իրականացնում են ոչ պետական սուբյեկտները պետությունը շարունակում է պահպանել ջրի իրավունքի պաշտպանությունն իրականացնելու իր պարտավորությունը: Ջրի իրավունքի իրացման համար կարևորագույն երաշխիքներ են հավասարության և խտրականության արգելքի սկզբունքները: Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածի համաձայն՝ նույն կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելն ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից<sup>418</sup>:

Ինչպես մարդու մյուս իրավունքները, ջրի իրավունքը ևս ենթադրում է պետության պարտավորությունը հարգելու, պաշտպանելու և իրագործելու այդ իրավունքը: Ջրամատակարարման ծառայությունների տնտեսապես հասանելիության հետ անմիջականորեն կապված է ջրամատակարարման դադարեցման խնդիրը: Այն դեպքում, երբ իրականացվում է ջրամատակարարման դադարեցում, յուրաքանչյուր ոք պետք է

<sup>415</sup> Տե՛ս ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի բանաձև (64/292)

<sup>416</sup> Տե՛ս [http://www.un.org/waterforlifedecade/human\\_right\\_to\\_water.shtml](http://www.un.org/waterforlifedecade/human_right_to_water.shtml), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>417</sup> Տե՛ս ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային համաձայնագրի 11-12-րդ հոդվածներ:

<sup>418</sup> Խոցելիության առումով ռիսկային են համարվում հետևյալ սոցիալական խմբերը՝ բնիկ ժողովուրդներ, քոչվոր կամ ճանապարհորդող խմբեր, ապաստան հայցողներ, տեղահանվածներ և վերաբնակեցվածներ, բնական աղետներից տուժածներ, ազատությունից զրկված անձինք, տարեցներ, հաշմանդամներ, քրոնիկ կամ ծանր հիվանդություններ ունեցողներ, երեխաներ, կանայք, տրանսգենդեր կամ միջսեռային անհատներ:

ունենա նվազագույն չափաքանակով ջրի իրավունք՝ անկախ նրա անվճարունակ լինելու հանգամանքից:

Ջրի օգտագործման համար վճարումների չկատարելն անգամ չպետք է ջրից լրիվ զրկվելու պատճառ հանդիսանա և պետք է ապահովվի, որպեսզի յուրաքանչյուրը հնարավորություն ունենա օգտվել ջրի նվազագույն անհրաժեշտ քանակից: Կարևոր է նաև, որ ջրանջատումը չհանդիսանա սանիտացիայի իրավունքի իրացումից զրկվելու պատճառ<sup>419</sup>:

Արգենտինայում Միգել Անխելը և այլք ընդդեմ Ագուաս Կորդոբեսաս գործի շրջանակներում դատարանը պարզել էր, որ ջրամատակարարում իրականացնող մասնավոր Ագուաս Կորդոբեսաս ընկերությունը դադարեցրել էր Միգել Անխելի և այլ ցածր եկամուտ ունեցող ընտանիքների ջրամատակարարումը վճարումները չիրականացնելու հիմքով: Այս ընտանիքներն իրենց երեխաների հետ ապրում էին խոցելի սոցիալ-տնտեսական պայմաններում, մի մասն ընդհանրապես աշխատանք չունեին կամ ունեին ցածր եկամուտներ, ընտանիքների մյուս մասում էլ ապրում էին միայնակ ծնողներն իրենց երեխաների հետ: Նշված ընտանիքներն օգնություն ստանալու խնդրով դիմել էին տեղական իշխանություններին, սակայն մերժում էին ստացել: Բացի այդ, ընկերությունը չէր ապահովել նշված ընտանիքներին ամենօրյա 50 լիտր ջրով ապահովելու սեփական կանոնակարգի պահանջը:

Նշված գործով դատարանն արձանագրել է, որ ջրամատակարարման դադարեցմամբ վտանգի տակ է դրվում ազգային Սահմանադրությամբ և միջազգային համաձայնագրերով մարդու առողջության և ֆիզիկական անվտանգության իրավունքները: Բացի այդ, դատարանը նշեց, որ խմելու ջրի բացակայությունն առաջացնում է աղքատության մեջ ապրող անձանց համար առողջական բազմաթիվ խնդիրներ: Դատարանն արձանագրեց նաև, որ թեև ջրամատակարարումն իրականացնում են մասնավոր ընկերությունները, այնուամենայնիվ, պետությունը պահպանում է հանրային ծառայությունների մատուցման ոլորտում վերահսկողության և կարգավորման գործառույթը: Բացի այդ, դատարանը սահմանեց, որ ջրամատակարարում իրականացնող ընկերության կանոնակարգով նախատեսված ընտանիքներին ամենօրյա 50 լիտր ջրով ապահովելու պայմանը չի կարող բավարարել մարդուն անհրաժեշտ ջրի օրական պահանջումները: Դատարանը նշեց, որ հանրային ծառայություններ մատուցող մասնավոր ընկերությունները պարտավոր են յուրաքանչյուր տնտեսությանը մատակարարել առնվազն 200 լ ջուր այն դեպքում, երբ սպառած ջրի դիմաց վճարումը չի իրականացվում անվճարունակության պատճառով<sup>420</sup>:

Մեկ այլ գործով մասնավոր ջրամատակարար կազմակերպությունը դադարեցրել էր սպառողների ջրամատակարարումը վճարումներ չիրականացնելու պատճառով: Ջրօգտագործողների և սպառողների իրավունքների պաշտպանության քաղաքացիական սսոցիալական սպառողների սահմանադրական իրավունքների պաշտպանության համար դիմել էր դատարան:

Դատարանն իր հետևություններում նշել է, որ պրակտիկայում մենաշնորհային դիրք զբաղեցնող ջրամատակարար ընկերությունն արգելել էր օգտվել այլընտրանքային աղբյուրներից: Դատարանը նշեց, որ ջրամատակարարման ապահովումը չի կարող համեմատվել որևէ այլ ապրանքի կամ ծառայության մատուցման հետ: Դատարանն արձանագրեց, որ անվճարունակության պատճառով ջրամատակարարման դադարեցումն

<sup>419</sup> St 'u, UNHRC Independent Expert on the Issue of Human Rights Obligations Related to Access to Safe Drinking Water and Sanitation, «Good Practices» related to Access to Safe Drinking Water and Sanitation:Questionnaire» (2010)[Question no 3].

<sup>420</sup> Quevedo, Miguel Ángel y Otros c/ Aguas Cordobesas SA [2002] Juez Sustituta de Primera Instancia Civil y Comercial (Ciudad de Córdoba).

անթույլատրելի է այն դեպքում, երբ ընտանիքը չունի ֆինանսական միջոցներ և այլընտրանքային ջրի աղբյուրներից օգտվելու հնարավորություն: Դատարանը սահմանեց նաև, որ հանրային կարգավորման մարմինները չպետք է թույլատրեն ջրամատակարար մասնավոր ընկերություններին ամբողջությամբ դադարեցնել ջրամատակարարումը չվճարելու հիմքով, քանի որ պետական մարմիններն ունեն երեխաներին և ընտանիքներին մաքուր խմելու ջրով ապահովելու պոզիտիվ պարտավորություն: Դատարանն ընդգծեց, որ խմելու ջրի նկատմամբ իրավունքը պետք է երաշխավորվի երկրի բոլոր բնակիչների համար անկախ մատակարարվող ջրի համար վճարելու հնարավորություն չունենալու հանգամանքից:

Նշված գործով դատարանն արձանագրեց, որ անվճարունակության պատճառով սպառողի ջրամատակարարման դադարեցումը հակասահմանադրական է և տեղի է ունեցել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 25-րդ հոդվածի խախտում:

Դատարանն արգելեց Մորենոյում դադարեցնել մասնավոր անձանց ջրամատակարարումը չվճարելու պատճառով ցանկացած կազմակերպության կողմից: Դատարանը վճռեց 72 ժամվա ընթացքում վերականգնել ջրամատակարարումն այն վայրերում, որտեղ այն դադարեցվել էր<sup>421</sup>:

Բրազիլիայում Ադեմար Մանոել Պերեյրան ընդդեմ Կատարինիս դե Ակուա ի Մանիմենտո ընկերության գործի շրջանակներում դատարանը պարզել էր, որ Ադեմար Մանոել Պերեյրայի և նրա ընտանիքի բնակարանի հրդեհման արդյունքում ոչինչ հնարավոր չէր վերականգնել: Ֆինանսական դժվարությունների պատճառով դիմումատուն հարկերը վճարելու հնարավորություն չի ունեցել: Պերեյրայի կինը դիմել էր ջրամատակարար ընկերությանը կուտակված պարտքը մաս-մաս վճարելու խնդրով, սակայն ստացել էր մերժում և ջրամատակարարումը դադարեցվել էր վճարման հաշիվը չվճարելու հիմքով:

Նշված գործով դատարանն ընդգծեց, որ ջրամատակարար ընկերությունը պարտքերը հավաքագրելու այլ իրավական մեխանիզմներ պետք է օգտագործի ջրամատակարարման դադարեցման փոխարեն, քանի որ այն արդարադատությունն իր ձեռքում կենտրոնացնելու իրավասություն չունի և օրենքի գերակայության պայմաններում վեճերը լուծելու իրավասություն ունի միայն դատարանը և ոչ առանձին անհատները: Ջուրը հիմնական և անփոխարինելի բարիք է բնակչության առողջության և հիգիենայի համար: Ջրամատակարարումն անփոխարինելի հանրային ծառայություն է, որը պետք է իրականացվի շարունակական կերպով՝ անհնարին դարձնելով նրա ընդհատումը, հատկապես վճարման ուշացման արդյունքում:

1998 թվականի օգոստոսի 17-ին դատարանը սահմանեց, որ ջրամատակարարումը՝ որպես մարդու համար հիմնական, անփոխարինելի և կենսական նշանակություն ունեցող հիմնարար հանրային ծառայություն, չի կարող կախված լինեն վճարումների ուշացումից, քանի որ պետական ծառայությունն ունի այլ միջոցներ սպառողների պարտքերը հավաքագրելու համար: Ավելին, եթե հանրային ծառայությունները մատուցվում են համայնքի կողմից, չվճարման համար ջրամատակարարման դադարեցումը համարվում է անօրինական<sup>422</sup>:

Կոլումբիայի Սահմանադրական դատարանը Կարոլինա Մուրսիա Օտալորան ընդդեմ Էմպրեսաս Պուբլիկաս դե Նեյվա ընկերության գործի քննության ընթացքում պարզել էր, որ հայցվոր Մուրսիա Օտալորան ամուսնու և երկու երեխաների հետ ապրում էր Նեյվա քաղաքում: Ընտանիքը չունեի մշտական եկամտի աղբյուր: Ջրամատակարար ընկերության

<sup>421</sup> Usuarios y Consumidores en Defensa de sus Derechos Asociación Civil c/ Aguas del Gran Buenos Aires SA [2002] Juez de paz (Moreno, Buenos Aires)44.453.

<sup>422</sup> Ademar Manoel Pereira x Companhia Catarinense de Agua e Saneamento – CASAN [1999] Superior Tribunal de Justiça Resp no 201.112.

նկատմամբ հայցվորն ուներ 453.330 դոլարի չափով պարտք: 2008 թվականի սեպտեմբերին Մուրսիա Օտալորայի և Էմպրեսաս Պուբլիկաս դե Նեյվա ընկերության միջև կնքվում է համաձայնագիր, որի համաձայն՝ Մուրսիա Օտալորան վճարում է պարտքի մի մասը, որը կազմում է 50.000 դոլար, որից հետո պարտավորվում է պարտքը մարել առաջիկա երեք տարվա ընթացքում: Ի կատարումն համաձայնագրի՝ Մուրսիա Օտալորան վճարում է որոշակի գումարներ, սակայն գուգահեռաբար ջրամատակարարում իրականացնող ընկերության կողմից ստանում է խոշոր գումարային հաշիվներ, որոնք վճարելու հնարավորություն չի ունենում: 2008 թվականի դեկտեմբերին ընկերությունը Մուրսիա Օտալորայի բնակարանի ջրամատակարարումը դադարեցնում է: Մուրսիա Օտալորայի և ջրամատակարարում իրականացնող ընկերության միջև կնքվում է պարտքի մարման նոր համաձայնագիր և բնակարանի ջրամատակարարումը վերականգնվում է: Սակայն կրկին անգամ Մուրսիա Օտալորան չի կարողանում կատարել համաձայնագրի պայմանները և բնակարանի ջրամատակարարումը դադարեցվում է:

Նշված գործով Կոլումբիայի Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ թեև, որպես ընդհանուր կանոն, ջրի և սանիտարական ծառայությունները կարող են դադարեցվել վճարումները չիրականացնելու արդյունքում, այդ հնարավորության ամրագրումը սահմանադրության մեջ անթույլատրելի է և ջրամատակարարման ծառայությունը դադարեցնելիս պետք է հաշվի առնել վճարումները չիրականացնելու պատճառները և այն հիմնարար իրավունքները, որոնք կխախտվեն ջրամատակարարումը դադարեցնելու պարագայում<sup>423</sup>:

Տյոր Էնիդ Խիմենես դե Կորեան ընդդեմ Էմպրեսաս Պուբլիկաս դե Մեդելինի դեմ գործի քննության ընթացքում Կոլումբիայի Սահմանադրական դատարանը պարզել էր, որ Խիմենես դե Կորեան տառապում էր խրոնիկ երիկամային անբավարարություն հիվանդությամբ, որի բուժման ընթացքում պահանջվում էր ոչ միայն անձնական հիգիենայի պահպանում, ներառյալ հաճախակի ձեռքերը լվանալու և լոգանքն ընդունելու պահանջը, այլև լուսավորվածության լավ պայմաններ: Բուժումն իրականացվում էր տնային պայմաններում և ջրի առկայությունն անհրաժեշտ էր ոչ միայն բուժման, այլև ողջ օրվա ընթացքում: Հիվանդության պատճառով Խիմենես դե Կորեան չէր կարողանում աշխատել և եկամտի որևէ աղբյուր չուներ: Էմպրեսաս Պուբլիկաս դե Մեդելին ընկերությունը նրան առաջարկել էր կնքել պարտքի մարման համաձայնագիր, որից Խիմենես դե Կորեան հրաժարվել էր: Արդյունքում նրա բնակարանի ջրամատակարարումը և էլեկտրամատակարարումը դադարեցվել էր:

Նշված գործով Կոլումբիայի Սահմանադրական դատարանն արձանագրեց, որ ջրի իրավունքը հանդիսանում է ինքնուրույն սոցիալական իրավունք և պետական մարմինները պարտավոր են առանց որևէ խտրականության ապահովել այդ իրավունքի իրականացումը: Իսկ խոցելի խմբում գտնվող անվճարունակ անձի կողմից վճարում չիրականացնելու հետևանքով ջրի և էլեկտրաէներգիայի մատակարարման դադարեցումը հակասում է Կոլումբիայի Սահմանադրությանը և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրին<sup>424</sup>:

Սլովենիայում 82 բնակիչ ունեցող շենքի բնակիչները դիմել էին դատարան ջրամատակարարում իրականացնող ընկերության դեմ, որը դադարեցրել էր ողջ շենքի ջրամատակարարումը 19 բնակչի կողմից վճարումները չիրականացնելու պատճառով: Ողջ շենքի ջրամատակարարման դադարեցման պատճառ էր հանդիսացել այն, որ շենքի ջրամատակարարման համակարգն ընդհանուր էր և յուրաքանչյուր բնակչի համար այն առանձնացնել հնարավոր չէր:

<sup>423</sup> Carolina Murcia Otálora c/ Empresas Públicas de Neiva ESP [2009] Corte Constitucional T-546/09.

<sup>424</sup> Flor Enid Jiménez de Correa c/ Empresas Públicas de Medellín [2007] Corte Constitucional T-270/07.

Մլովենիայի Սահմանադրական դատարանն արձանագրեց, որ մարդու արժանապատիվ պայմաններում ապրելու իրավունքը խախտվում է այն դեպքում, երբ իրականացվում է ողջ շենքի ջրամատակարարման դադարեցումը շենքի բնակիչների մի մասի կողմից վճարում չիրականացնելու հետևանքով: Բացի այդ, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպության կողմից շենքի ջրամատակարարման դադարեցումը սպառողների ¼-ի կողմից վճարումներ չիրականացնելու պատճառով հանգեցնում է անձանց սեփականության իրավունքի ոտնահարմանը:

Նշված գործով դատարանն արձանագրեց, որ տվյալ դեպքում սեփականության իրավունքի խախտումը վերաբերում է ոչ միայն շենքի սեփականատիրոջը, այլ նաև շենքի բնակիչներին: Բացի այդ, տվյալ գործում ողջ շենքի ջրամատակարարման դադարեցումը խախտվել էր նաև համաչափության սկզբունքը<sup>425</sup>:

Մալազիայում Ռաջահ Ռամաչանդրան ընդդեմ Վերբադանան Բեկալան Էյր Պուլաու Պինանգի դեմ գործով Բարձր Դատարանը պարզեց, որ հայցվորը, համաձայն չլինելով ջրամատակարարում իրականացնող ընկերության վճարման հաշիվների հետ, բողոքարկել էր դրանք: Ջրամատակարարում իրականացնող ընկերության կողմից իրականացված ջրամատակարարման համակարգի ստուգումների արդյունքում թերություններ չէին հայտնաբերվել և ընկերությունը պնդել էր, որ հայցվորը պարտավոր էր վճարումներ իրականացնել: Ռաջահ Ռամաչանդրան վճարումները չէր իրականացրել և բնակարանի ջրամատակարարման դադարեցումն իրականացվել էր տոնակատարության ժամանակահատվածում, որն իր մեջ ներառում էր արարողակարգային լոգանքի ընդունումը:

Դատարանն արձանագրեց, որ հանրային ծառայություններ մատուցողն իրավունք չունի անարդարացի դադարեցնել բնակարանի ջրամատակարարումը պարտքի առկայության պատճառով: Ջրամատակարարում իրականացնող ընկերությունն իր իրավունքներն ապահովելիս պետք է ընտրի սպառողներին նվազագույն անհարմարություններ պատճառող տարբերակները<sup>426</sup>:

Պորտուգալիայում Ա Էքս Էպալ- Էմպրեսա Պուբլիկա դա Ագուաս դե Լիզբոա գործով Սահմանադրական տրիբունալը պարզել էր, որ հայցվորի բնակարանի ջրամատակարարումը դադարեցվել էր վճարում չիրականացնելու հետևանքով:

Նշված գործով Դատարանն արձանագրեց, որ մենաշնորհային դիրք զբաղեցնող ջրամատակարարում իրականացնող ընկերության կողմից կյանքի կարևորագույն աղբյուր հանդիսացող ջրի իրավունքը չի կարող սահմանափակվել պայմանագրային պարտավորություններով: Այն սահմանեց, որ Սահմանադրությամբ երաշխավորվում է բավարար կենսապայմանների անձի իրավունքը, որի իրագործման համար կարևոր նշանակություն ունի ջրի հասանելիությունը:

Դատարանն արձանագրեց նաև, որ պարտքերի պատճառով ջրամատակարարման դադարեցումը խախտում է Պորտուգալիայի Սահմանադրությամբ ամրագրված մարդու կյանքի, առողջության, կյանքի որակի իրավունքները: Մինչդեռ, նշված իրավունքները գերակայություն ունեն պայմանագրային պարտավորությունների նկատմամբ<sup>427</sup>:

ՌԴ Գերագույն դատարանի 2017 թվականի հունիսի 27-ի պարզաբանումների համաձայն՝ ՌԴ-ն, հանդիսանալով սոցիալական պետություն, սահմանում է սոցիալական աջակցության երաշխիքներ: Սոցիալական աջակցության միջոցներից են բնակելի տարածության և կոմունալ ծառայությունների վճարների համար սուբսիդիաների հատկացումը, կոմունալ վճարումների ծախսերի հատուցումը, սոցիալական աջակցության

<sup>425</sup> Ruling No Up-156/98 [1999] Constitutional Court Official Gazette RS, no 17/99; OdlUS VIII, 118.

<sup>426</sup> Rajah Ramachandran v Perbadanan Bekalan Air Pulau Pinang Sdn Bhd [2004] High Court (Malaya) 22-716-2003 <http://hba.org.my/laws/CourtCases/2004/rajah.htm>.

<sup>427</sup> A xEPAL – Empresa Pública das Águas de Lisboa [2004] Tribunal Constitucional 685/2004.

այլ միջոցներ սահմանելը (բնակելի տարածության և կոմունալ ծառայությունների վճարներից ազատվելը):

Այն անձանց շրջանակը, որոնց հատկացվելու են բնակելի տարածության և կոմունալ ծառայությունների վճարների համար սոցիալական աջակցության միջոցները, դրանց տրամադրման կարգը և պայմանները, ֆինանսավորման աղբյուրները սահմանվում է ֆեդերալ օրենքներով, գործադիր իշխանության մարմինների ակտերով:

Այսպիսով, ֆեդերալ օրենքներով սոցիալական աջակցության միջոցներ սահմանված են հաշմանդամների, հաշմանդամություն ունեցող երեխաներ ունեցող ընտանիքների, սոցիալական աշխատանքի հերոսների համար և այլն:

Բնակելի տարածության և կոմունալ ծառայությունների վճարների հատուցման ենթակա դեպքերը նույնպես սահմանվում են օրենքներով<sup>428</sup>:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. իրականացնել յուրաքանչյուր անձի համար անհրաժեշտ նվազագույն ջրի քանակի վերաբերյալ հաշվարկներ,*

*2. փոփոխություններ մտցնել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի թիվ 378-Ն որոշման մեջ՝ սահմանելով սպառած ջրի դիմաց սահմանված վարձավճարը չվճարելու դեպքում անձին նվազագույն ջրի քանակով ապահովելու պահանջ:*

## ***6. Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման կանոնների խախտման հիմքով վերահաշվարկ կատարելը***

2018 թվականի ընթացքում Պաշտպանին շարունակվել են բողոքներ հասցեագրվել առևտրային հաշվառքի սարքերը ջրամատակարարում իրականացնող ընկերության կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման կանոնների խախտմամբ բաժանորդների նկատմամբ նշանակված տուժանքների վերաբերյալ:

Բողոքների համաձայն՝ ջրամատակարարում իրականացնող ընկերության կողմից իրականացվել է առևտրային հաշվառքի սարքերի փոխարինում, այնուհետև առևտրային հաշվառքի սարքերը ստուգաչափվել են չափագիտական մարմնի կողմից: Չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ հաստատվել է, որ բացակայում է, վնասվել կամ կեղծվել է առևտրային հաշվառքի սարքի կապարակնիքը: Տվյալ դեպքերում կապարակնիքի հետ կապված խախտումների համար պատասխանատվություն է կրում բաժանորդ: Մինչդեռ կապարակնիքը կարող էր վնասվել, օրինակ, ջրամատակարարում իրականացնող ընկերության աշխատակցի կողմից այն ապահավաքակցելու ընթացքում: Հետևաբար նշված դեպքերում առանց բաժանորդի մեղքն ապացուցելու պատասխանատվությունը դրվում է վերջինիս վրա:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ներկայացված բողոքներում բարձրացված խնդիրների առավել արդյունավետ լուծման նպատակով սերտ համագործակցություն է ձևավորվել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և Պաշտպանի աշխատակազմի միջև:

Բարձրացված հարցերի կապակցությամբ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պարզաբանումների համաձայն՝ 2018 թվականի ընթացքում «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության՝ առևտրային հաշվառքի սարքերի փոխարինումից հետո ստուգաչափման արդյունքում կատարված վերահաշվարկին չհամաձայնելու վերաբերյալ Հանձնաժողով է ներկայացվել 286 դիմում: 15 դիմումով «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության

<sup>428</sup> Постановление Пленума Верховного Суда Российской Федерации от 27 июня 2017 г. N 22 г.

ներկայացրած վերահաշվարկը չեղարկվել է: 143 դիմումների մասով իրականացված ուսումնասիրությունների արդյունքում Հանձնաժողովը փաստել է վերահաշվարկի համապատասխանությունը Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի N 378-Ն որոշման պահանջներին: 128 դիմումների մասով առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման արձանագրությունը Հանձնաժողովի N 378-Ն որոշման համապատասխան չի կազմվել և ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 23-ի «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության նկատմամբ տուգանք կիրառելու մասին» N 167-Ս որոշման՝ Հանձնաժողովը փաստել է, որ օգտագործված խմելու ջրի վերահաշվարկված քանակի դիմաց վճարման ենթակա գումարը «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությունն իրավունք ունի բաժանորդից պահանջելու միայն դատական կարգով՝ մինչև վեճի վերջնական լուծումը չդադարեցնելով ծառայությունների մատուցումը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է առավել խիստ վերահսկողություն սահմանել մատակարար ընկերության կողմից ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումների կատարման նկատմամբ:*



## ԲԱԺԻՆ 12. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

Անվտանգությունը չպետք է հակադրել ժողովրդավարությանը: Ժողովրդավարական ցանկացած երկիր իր անվտանգությունն ապահովելու հիմնարար գործոններից պետք է համարի մարդու իրավունքների և ազատությունների հուսալի պաշտպանությունը՝ մշտապես կատարելագործելով պաշտպանական ներպետական մեխանիզմները: Պատահական չէ, որ Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, ի թիվս այլնի, ենթակա է կազմակերպման և իրականացման օրինականության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման, զինված ուժերի գործունեության նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության սկզբունքների հիման վրա<sup>429</sup>:

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) շրջանակներում 1994 թվականի դեկտեմբերի 3-ին ընդունված «Անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտների վերաբերյալ վարքագծի կանոններով» ամրագրվել է, որ զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական (քաղաքացիական) վերահսկողությունը կայունության և անվտանգության անբաժանելի մասն է: Նաև ընդգծվել է, որ քաղաքացիական հասարակությանը զինված ուժերի ինտեգրումը ոչ այլ ինչ է, քան ժողովրդավարության կարևորագույն դրսևորում<sup>430</sup>:

Վարքագծի այդ կանոններն ամրագրում են չորս հիմնական սկզբունքներ<sup>431</sup>, որոնցում ընդգծված է «*համազգեստով քաղաքացի*» գաղափարը: Այս գաղափարի կամ կոնցեպտի էությունն այն է, որ յուրաքանչյուր պետությունում, միջազգային իրավական նորմերի լույսի ներքո, պետք է ապահովվի զինձառայողների՝ մյուս քաղաքացիների հետ հավասար և նույն իրավունքներն ունենալու հնարավորությունը: Այն մշտապես զուգակցվում է զինված ուժերի նկատմամբ *քաղաքացիական վերահսկողության* սկզբունքի հետ, իսկ վերջինիս ամրապնդման և երաշխավորման գործում իր յուրահատուկ դերն ունեն Մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունները:

Ասվածը հատկապես արտահայտված է Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի գործունեության մեջ՝ նկատի ունենալով յուրաքանչյուր անձի՝ Պաշտպանի աջակցությունը ստանալու սահմանադրական իրավունքը և սահմանադրական օրենքով Պաշտպանին վերապահված լիազորությունների շրջանակը:

Սույն տարեկան հաղորդման մեջ արտացոլված են զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի, ոլորտում առկա խնդիրների, այդ թվում՝ գործնական և օրենսդրական թերությունների, ինչպես նաև զինապարտության փուլերում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության հետ կապված հարցերը:

Խնդիրները վեր են հանվել երեք հարթություններում՝ նախքան զինվորական ծառայությունը, զինվորական ծառայության ընթացքում և ծառայությունից հետո: Ուստի, վերլուծությունները չեն սահմանափակվում միայն զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության հարցերով, այլ ընդգրկում են ավելի լայն շրջանակ՝ ընդհանրապես զինված ուժերում համակարգային խնդիրները:

Սույն հաղորդմամբ ներկայացված խնդիրները վեր են հանվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, զինվորական հաստատություններ

<sup>429</sup> «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված:

<sup>430</sup> Տե՛ս Անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտների վերաբերյալ վարքագծի կանոններ, կետ 20 <http://www.osce.org/fsc/41355>:

<sup>431</sup> Այս մասին նաև՝ 2017 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջ 266:

չհայտարարված այցերի, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների՝ զինապարտների իրավունքների և ազատությունների պաշտպանությանն առնչվող հրապարակումների հիման վրա:

Նկատի ունենալով պաշտպանության և անվտանգության ոլորտի կարևորությունը և դրանում առկա խնդիրներին պատշաճ արձագանքելու անհրաժեշտությունը՝ Պաշտպանը, ինչպես և նախորդ տարիներին, չի սահմանափակվել հիմնական խնդիրների մատնանշմամբ, այլ ներկայացրել է նաև լուծմանն ուղղված կոնկրետ առաջարկներ:

**ԳԼՈՒԽ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

***1. Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության անկախ մեխանիզմ***

Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող խնդիրների լուծումը ժողովրդավարական յուրաքանչյուր պետության առաջնահերթություններից է: Հայաստանի համար այն է՝ ավելի կարևոր է, քանի որ հանրային ընկալումներում բանական արդարացիորեն համարվում է անկախ պետականության ամենաարժեքավոր ձեռքբերումներից մեկը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն՝ զինված ուժերը քաղաքացիական վերահսկողության ներքո են: Սա ենթադրում է, որ երկրում, ի թիվս այլնի, պետք է ձևավորված լինեն և անընդհատ կատարելագործվեն զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմները:

Զինված ուժերի անձնակազմի համար կարևոր է, որ նրանք ծառայության ընթացքում իրենց խախտված իրավունքները վերականգնելու նպատակով ունենան անկախ մարմիններին բողոք ներկայացնելու հնարավորություն: Ավելին՝ յուրաքանչյուր զինծառայող ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, ընդ որում՝ այդ մարմինը կարող է դատական չլինել, սակայն պետությունն, ըստ էության, պետք է ապահովի այն նույն երաշխիքները, որով օժտված են դատական մարմինները՝ իրավական պաշտպանության միջոցների արդյունավետությունն ապահովելու համար<sup>432</sup>:

2015 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես ինքնուրույն գործառույթներ իրականացնող և անկախ սահմանադրական ինստիտուտ, ըստ էության, դարձել է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության միակ հաստատությունը, որն ունի ընդհանուր մանդատ:

Պաշտպանի առաջնահերթություններից է զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունը, ներառյալ՝ զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների ապահովումը: Այդ պաշտպանության համար Պաշտպանն ունի մասնագիտացված և անհրաժեշտ ու բավարար կարողություններ՝ հետևելու զինված ուժերում իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների ապահովմանը:

<sup>432</sup> Զինված ուժերի անդամների իրավունքների մասին ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի Բացատրական հուշագիր, բաժին «ԻԲ»:

2016 թվականին ընդունվեց «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքը, որի շնորհիվ էլ ավելի ամրապնդվեց Մարդու իրավունքների պաշտպանի՝ զինված ուժերում անձանց իրավունքների ապահովման գործիքակազմը: Դեռևս 2016 թվականին Պաշտպանի աշխատակազմում ստեղծվեց Քրեադատավարական և զինձառայողների իրավունքների պաշտպանության վարչությունը, իսկ 2017 թվականին՝ Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժինը, որը մասնագիտական ստորաբաժանում է և գործում է Քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի կազմում: Բաժնի գործունեությունը համակարգում է Դեպարտամենտի ղեկավարը:

Առանձին բաժնի ստեղծումը պայմանավորված էր ինչպես Պաշտպանին հասցեագրվող բողոքների շարունակական աճով, այնպես էլ համակարգային ուսումնասիրությունների և ոլորտում առկա օրենսդրական խնդիրները լուծելու համար առաջարկություններ ներկայացնելու պահանջով: Բաժինը զբաղվում է քաղաքացիների զինապարտությանն առնչվող իրավունքների պաշտպանությամբ բոլոր փուլերում (զինվորական հաշվառում և գորակոչ, զինվորական ծառայության բուն ընթացք, պահեստագործ):

Պաշտպանին զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում աջակցող մյուս մարմինը Զինձառայողների իրավունքների հարցերով փորձագիտական խորհուրդն է: Պաշտպանին առընթեր գործող այդ խորհրդում ընդգրկված են հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և հոգեբանության, սոցիոլոգիայի ոլորտի անկախ մասնագետներ, ինչպես նաև կապիտան, ապրիլյան պատերազմի հերոս Արմենակ Ուրֆանյանի մայրը: Զինձառայողների իրավունքների պաշտպանության ոլորտում Պաշտպանի գործունեությանն աջակցելու նպատակով կազմակերպվել են խորհրդի նիստեր, որոնց ընթացքում կատարվել են զինձառայողների իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացմանն ուղղված ուսումնասիրություններ, վերլուծություններ, վեր են հանվել համակարգային խնդիրներ և դրանց հիման վրա մշակվել են համապատասխան առաջարկներ:

Խորհրդի աշխատանքների արդյունավետությունն ապահովող կարևոր գործոն է նաև այն, որ դրան մասնակցում են քաղաքացիական հասարակության և Պաշտպանության նախարարության իրավասու ներկայացուցիչներ: Խորհուրդը լայն հնարավորություն է տալիս քաղաքացիական հասարակության և իրավասու պետական կառույցների ներգրավմամբ կազմակերպելու մասնագիտական քննարկումներ՝ զինված ուժերում մարդու իրավունքներին առնչվող բազմաթիվ կարևորագույն հարցերի շուրջ<sup>433</sup>:

Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունն իրականացվում է 3 գլխավոր ուղղություններով՝ 1) մինչև զինվորական ծառայության անցնելը զինապարտների իրավունքների պաշտպանություն, 2) զինվորական ծառայության ընթացքում զինձառայողների իրավունքների պաշտպանություն, 3) զինվորական ծառայության ավարտից հետո նախկին զինձառայողների իրավունքների պաշտպանություն:

<sup>433</sup> Խորհրդի նիստում բարձրացվում են պաշտպանության և անվտանգության ոլորտում առկա խնդիրներ, դրանք համատեղ քննարկվում են, և առաջարկվում խնդրի լուծման տարբերակներ: Արդյունքում, այդ առաջարկները Պաշտպանի աշխատակազմում ամփոփվում և ըստ անհրաժեշտության ներկայացվում են իրավասու գերատեսչություններին: Օրինակ, 2018 թվականի հունիսի 8-ին տեղի է ունեցել Զինձառայողների իրավունքների հարցերով փորձագիտական խորհրդի ընդլայնված նիստը, որի ընթացքում ներկայացվել ու քննարկվել է Պաշտպանի 2017 թվականի տարեկան հաղորդման մեջ արտացոլված ՀՀ զինված ուժերում առկա խնդիրներն ու առաջարկվող լուծումները: Նիստին նաև մասնակցել են Պաշտպանության նախարարության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ (հասանելի է <http://www.pashtpan.am/media/13165.html> հղումով):

Այս ամենով հանդերձ՝ Պաշտպանի ուշադրության կենտրոնում են ոչ միայն զինապարտների, այլ նաև նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանությունը:

## **2. Հանրային մարմինների և քաղաքացիական հասարակության հետ զինված ուժերում մարդու իրավունքների հարցերով համագործակցությունը**

Մարդու իրավունքների պաշտպանի առաքելություններից է լինել կապող օղակ կամ կամուրջ պետության և քաղաքացիական հասարակության միջև: Պաշտպանի համար այս առաքելության իրականացումը մեծապես կարևորվում է բանակին առնչվող խնդիրների մասով: Այս առումով, 2018 թվականի ընթացքում ակտիվ է եղել համագործակցությունը պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների, բանակում մարդու իրավունքների հարցերով զբաղվող այլ հանրային կառույցների հետ:

Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում համագործակցություն է եղել ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի և մի շարք այլ մարմինների հետ:

Հատկապես կարևորվում է ՀՀ պաշտպանության նախարարության պատրաստակամությունը Պաշտպանի աշխատակազմի հետ գործուն համագործակցության առումով, որն արտահայտվել է ՊՆ մի շարք կառույցների, այդ թվում՝ Մարդու իրավունքների բարեկարգության կենտրոնի, զինկոմիսարիատների, ռազմաբժշկական վարչության, ռազմաբժշկական հանձնաժողովների, հոսպիտալների հետ ակտիվ աշխատանքով:

Պաշտպանի ներկայացուցիչների կողմից չհայտարարված այցեր են իրականացվել նաև կայագորային զինվորական հոսպիտալներ, որտեղ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների շրջանակներում ուսումնասիրվել են զինճառայողների բուժման ընթացքը, արդյունքները և զինճառայողների բժշկական փաստաթղթերը, տեղի են ունեցել քննարկումներ հոսպիտալների հրամանատարական կազմի հետ<sup>434</sup>: Պաշտպանի ներկայացուցիչները ներկա են գտնվել Կենտրոնական բժշկական և Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովների նիստերին, ստացված բողոքների շրջանակներում համատեղ քննարկվել են զինապարտ քաղաքացիների առողջական վիճակին առնչվող հարցերը: Պաշտպանության նախարարության հետ համատեղ քննարկումների և այցերի արդյունքում նշանակվել են առողջական վիճակի կրկնակի փորձաքննություններ, զորակոչիկները ստացել են տարկետման իրավունք, զինճառայողներն ուղեգրվել են զինվորական հոսպիտալներ և ստացել համապատասխան բուժում:

Դրականի հետ մեկտեղ՝ որոշ հարցեր շարունակում են մնալ չլուծված: Խոսքը մեծապես վերաբերում է Պաշտպանի նախորդ զեկույցներում կամ իրավունքների ու ազատությունների խախտում արձանագրող Պաշտպանի որոշումներում տեղ գտած առանձին առաջարկությունների չկատարմանը: Սա հատկապես մտահոգիչ է, երբ խոսքը ոչ թե համակարգային խնդիր վերհանող առաջարկությունների կատարման, այլ պարզ կարգավորում ենթադրող խնդրի լուծման մասին է: Օրինակ՝ 2017 թվականի զեկույցում առաջարկվել էր զինճառայողների կողմից իրավախախտում կատարելու մասին Մարդու իրավունքների պաշտպանի գրավոր հաղորդումը նախատեսել որպես ճառայողական քննության անցկացնելու հիմք: Այս առաջարկությունն ընդամենը ենթադրում է Պաշտպանության նախարարի հրամանում լրացում: Չնայած առաջարկի վերաբերյալ

<sup>434</sup> Տե՛ս <https://armenpress.am/arm/news/955108.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

**Պաշտպանության նախարարության միանշանակ դրական արձագանքին՝ հրամանում լրացումը դեռևս արված չէ:**

2018 թվականին Պաշտպանության նախարարության հրավերով Պաշտպանի աշխատակազմի Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժնի ներկայացուցիչները մասնակցել են կառավարության մի քանի որոշումների նախագծերի վերաբերյալ արդյունավետ քննարկմանը: Բացի դրանից, Պաշտպանի աշխատակազմի և Պաշտպանության նախարարության մի շարք ստորաբաժանումների միջև տեղի են ունեցել քննարկումներ՝ փոխգործակցության, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության որոշ խնդիրների կապակցությամբ: Կարևորվել է նաև Պաշտպանի գործունեության վերաբերյալ զինձառայողների իրազեկվածության բարձրացման անհրաժեշտությունը, ընդգծվել է երկու կառույցների թե՛ զժեռի միջև աշխատանքային կապերի ամրապնդման կարևորությունը<sup>435</sup>:

Դրական արդյունքներ է տվել նաև պետական մյուս կառույցների հետ համագործակցությունը՝ հատկապես զորակոչերի ընթացքում: Օրինակ՝ գիտության և կրթության բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող զորակոչիկներին տարկետում տրամադրելու կամ նախկին զինձառայողների ուսման վարձի մասնակի փոխհատուցման և այլ հարցերի առնչությամբ ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համագործակցության արդյունքում բարձրացված խնդիրները ստացել են լուծում:

Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների արդյունավետ պաշտպանության տեսանկյունից կարևոր է նաև համագործակցությունը փաստաբանների հետ, ինչը կրել է պարբերական և մասնագիտական բնույթ: Իրենց վստահորդներ հանդիսացող զինձառայողների իրավունքների համատեղ պաշտպանությունը դարձել է ամենօրյա աշխատանքի բաղկացուցիչ մասը:

Դիմումներ են ստացվել նաև ազգային փոքրամասնությունների խնդիրներով զբաղվող կառույցներից, այդ թվում՝ Հայաստանի ասորական և հրեական համայնքից: Օրինակ՝ զինվորական ծառայության հետ կապված հարցերից մեկով Պաշտպանը հանդիպել է Հայաստանում հրեական համայնքի ղեկավարի հետ, որի ընթացքում բարձրացվել է Իսրայել Պետությունում արդեն զինվորական ծառայություն անցած ՀՀ մի քանի քաղաքացու քրեական հետապնդմանն առնչվող խնդիր: Խնդրի կապակցությամբ հարցը քննարկվել է Պաշտպանության նախարարության հետ, որտեղից պարզաբանվել է, որ ներկայացված խնդիրը քննարկվում է և նախատեսված օրենսդրական փոփոխությունների օրակարգի մաս է կազմելու նաև տվյալ հարցը: 2019 թվականի մարտի 6-ին «Մահամանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում օրենքի գործողության ժամկետը երկարաձգվել է, որի շնորհիվ լուծվում է նաև նշված հարցը:

Լինելով կամուրջ հանրային մարմինների միջև՝ Մարդու իրավունքների պաշտպանի համար չափազանց կարևոր է միասնական հարթակ ստեղծել բանակում առկա խնդիրները վեր հանելու, դրանք քննարկելու և անհրաժեշտ լուծումներ գտնելու ուղղությամբ: Այստեղ չափազանց կարևոր է հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացումը, որը հնարավորություն կտա արդյունավետ և պրոֆեսիոնալ կերպով իրականացնել ոլորտի մշտադիտարկումն ու առկա թերությունների մասին իրազեկումը: Այս ուղղությամբ 2018 թվականին քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպվել են զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության գործնական և համակարգային խնդիրներին նվիրված մի շարք կլոր սեղան քննարկումներ և աշխատաժողովներ:

<sup>435</sup>Տե՛ս [http://www.mil.am/hy/news/5801?fbclid=IwAR0XMkM8n\\_j30TpItZAp5r\\_PUIyAKL9pGIpuArvUqmBw-SYkpLgAOL1LcA](http://www.mil.am/hy/news/5801?fbclid=IwAR0XMkM8n_j30TpItZAp5r_PUIyAKL9pGIpuArvUqmBw-SYkpLgAOL1LcA), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Պաշտպանի համար նաև խիստ կարևոր է սեփական գործունեության հրապարակայնությունը, ինչպես նաև իրավապաշտպան գործունեություն իրականացնողների աշխատանքի տեսանելի լինելը:

### **3. Միջազգային համագործակցությունը**

Մարդու իրավունքների պաշտպանի համար առաջնահերթություններից է միջազգային և եվրոպական իրավական չափանիշների՝ զինվորական օրենսդրությունում կիրարկումը: Այստեղ մեծապես կարևորվում է զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում միջազգային մասնագիտացված կառույցների հետ համագործակցության կատարելագործումը:

Մարդու իրավունքների իրավական չափանիշների ներդրման գործում կարևոր է եղել «Մարդու իրավունքների եվրոպական չափանիշների կիրառման ամրապնդումը Հայաստանի զինված ուժերում» ԵՄ ծրագիրը, որն ակտիվ իրականացվել է 2018 թվականի ընթացքում և որի հիմնական գործընկերներից է Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը:

Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են հանդիպումներ, կլոր սեղան քննարկումներ, աշխատաժողովներ, որոնք ուղղված են եղել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացմանը, միաժամանակ, այդ միջոցառումներին ներգրավված են եղել նաև հասարակական կազմակերպությունների և պետական այլ կառույցների ներկայացուցիչներ: Մի շարք աշխատաժողովների և ճանաչողական այցերի միջոցով Պաշտպանի ներկայացուցիչները միջազգային համագործակցության շրջանակներում ուսումնասիրել են առանձին օտարերկրյա օմբուդսմանների, այդ թվում՝ Նորվեգիայի ռազմական օմբուդսմանի փորձը, որն առաջինն է աշխարհում: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ, միջազգային փորձագետների մասնակցությամբ, ծրագրի շրջանակում կազմակերպվել են նաև վերապատրաստման հատուկ դասընթացներ՝ նվիրված կոնֆլիկտային, հետկոնֆլիկտային և ռազմական իրավիճակներում Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, այդ թվում՝ ճգնաժամային իրավիճակներում փաստահավաք աշխատանքներին<sup>436</sup>:

2018 թվականին Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանն իր գործունեության մեջ զարգացրեց նոր ուղղություն:

Առաջին անգամ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե ներկայացվեց հատուկ դիրքորոշում՝ կապված զինծառայողների իրավունքների հարցով «Մուրադյանն ընդդեմ Հայաստանի» ՄԻԵԴ վճռի կատարման հետ<sup>437</sup>: Սա էապես ամրապնդեց և նոր շունչ հաղորդեց Եվրոպայի խորհրդի մասնագիտացված կառույցների, այդ թվում՝ ԵՄ Նախարարների կոմիտեի ՄԻԵԴ վճիռների կատարման դեպարտամենտի հետ համագործակցությանը: Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ և Եվրոպայի խորհրդի աջակցությամբ Երևանում և Ստրասբուրգում նախաձեռնվել են խորհրդակցություններ՝ կապված զինծառայողների իրավունքներին, կյանքի իրավունքին և խոշտանգումների արգելքին առնչվող Հայաստանի վերաբերյալ ՄԻԵԴ վճիռների կատարման հետ:

ՄԻԵԴ վճիռների կատարմանը Հայաստանի մարդու իրավունքների ազգային հաստատության մասնակցությունը միջազգային լավագույն փորձի օրինակներից է, և այդ

<sup>436</sup> Տե՛ս <http://www.pashtpan.am/media/97986.html>:

<sup>437</sup> Հատուկ դիրքորոշման մեջ անդրադարձ է կատարվել «Մուրադյանն ընդդեմ Հայաստանի» վճռի կատարման համար սկզբունքային մի շարք խնդիրների, ներառյալ՝ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության և զինված ուժերի կարգապահության ամրապնդման անհրաժեշտության հարցերին: Այդ ուղղությամբ Պաշտպանի կողմից արվել են կոնկրետ առաջարկություններ:

գործում Պաշտպանի մասնակցությունը կիրականացվի՝ համագործակցելով նաև պետական համակարգի ու քաղաքացիական հասարակության գործընկերների հետ: Մարդու իրավունքների պաշտպանի կողմից նման դիրքորոշում ներկայացնելը կարևոր նշանակություն ունի զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության համակարգի կատարելագործման ու հետագայում նման խախտումները բացառելու գործում: Մա հատկապես կարևոր է այն առումով, որ Պաշտպանն օգտագործում է միջազգային կառուցակարգերի հավելյալ հնարավորությունները՝ զինված ուժերում մարդու իրավունքներին առնչվող համակարգային խնդիրները վեր հանելու, իր առաջարկություններն այլընտրանքային ուղիներով ներկայացնելու և դրանք կատարելուն հետևողականորեն խորամուխ լինելու առումով:

**ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ  
ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

**1. Պարտադիր զինվորական ծառայության ներկայանալու համար գորակոչիկներին ծանուցելու գործընթացը**

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 49-րդ կետի համաձայն՝ պոտենցիալ գորակոչիկները պետք է ստանան լիարժեք և մանրամասն տեղեկություններ գորակոչի բոլոր ասպեկտների, զինվորական ծառայությունը սկսելու և զինվորական ծառայություն անցնելու շրջանում ընդգրկված պարտավորությունների առանձնահատուկ բնույթի մասին:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայության գորակոչին քաղաքացու ներկայությունն ապահովելու նպատակով համապատասխան զինվորական կոմիսարիատը քաղաքացուն փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է զինկոմիսարիատ ներկայանալու պարտավորության մասին՝ ծանուցման մեջ նշելով ներկայանալու ժամկետը:

Նախորդ տարիներին զինապարտների համար որոշակի չէր ծանուցման գործընթացը, այդ թվում՝ հստակ չէր պատշաճ ծանուցված լինելու հանգամանքը, միասնական չէին զինվորական կոմիսարիատների տրամադրած ծանուցագրերի ձևերը, բացակայում էր միատեսակ պրակտիկան: Այդ իսկ պատճառով, Մարդու իրավունքների պաշտպանի 2017 թվականի տարեկան հաղորդման մեջ արձանագրվել էր, որ բացակայում է զինապարտ քաղաքացիներին պատշաճ ծանուցելու գործընթացը կանոնակարգող, այդ ընթացքում պաշտոնատար անձանց իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը սահմանող, **ծանուցագրի ձևը և դրանում ներառվող տեղեկությունների շրջանակը հստակեցնող իրավական ակտ:**

Դրա հիման վրա առաջարկվել էր կանոնակարգել զինապարտ քաղաքացիներին պատշաճ ծանուցելու գործընթացը, այդ թվում՝ սահմանել պաշտոնատար անձանց իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, ծանուցագրի ձևը և դրանում ներառվող տեղեկությունների շրջանակը: Միաժամանակ նշվել էր, որ անհրաժեշտ է պարտադիր զինվորական ծառայության գորակոչվող քաղաքացուն փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցելիս նրան տրամադրել նաև զինվորական հաշվառման և զինվորական **ծառայության ընթացքում զինապարտի իրավունքների և պարտականությունների մասին տեղեկատվական ուղեցույց:**

Այս իմաստով հասկանալի է, որ ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 1132-Ն որոշմամբ հաստատվել է «Պարտադիր զինվորական ծառայության գորակոչի անցկացման կարգը»:

Կարգի համաձայն՝ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության գորակոչը հայտարարվելուց հետո զինվորական կոմիսարիատը շարքային կազմի պարտադիր զինվորական գորակոչի ենթակա քաղաքացուն փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է զինվորական կոմիսարիատ ներկայանալու պարտավորության մասին՝ ծանուցման մեջ նշելով ներկայանալու ժամկետը: Փաստաթղթային եղանակով ծանուցումն իրականացվում է քաղաքացուն ծանուցագիրն առձեռն հանձնելու, իսկ էլեկտրոնային եղանակով ծանուցումը՝ զինվորական կոմիսարիատին քաղաքացու կողմից



Էլեկտրոնային հասցե տրամադրված լինելու դեպքում՝ այդ էլեկտրոնային հասցեին ծանուցագիր ուղարկելու միջոցով<sup>438</sup>:

Այսպիսով, Պաշտպանի առաջարկությունները, ներառյալ՝ միասնական կարգ և ծանուցագրի միասնական ձև սահմանելու մասին, ընդունվել են, ինչը դրական տեղաշարժ է: Մինևույն ժամանակ, անհրաժեշտ է նկատել, որ մինչև 2018 թվականի հոկտեմբեր (որոշման ընդունումը) խնդիրը շարունակել է մնալ չլուծված:

Ըստ Պաշտպանության նախարարության՝ իրենց իրավունքների երաշխիքների, զինվորական ծառայության առանձնահատկությունների վերաբերյալ գորակոչիկների իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով նախապատրաստվել և հրապարակվել է «Տեղեկատվական գրքույկ գորակոչիկների համար», որը վերջիններիս հանձնվում է գորակոչի ընթացքում:

Ձորամասերի անձնակազմի՝ ՀՀ սահմանադրությամբ, օրենքներով, զինվորական կանոնադրքերով սահմանված զինծառայողների իրավունքների, հիմնարար ազատությունների, երաշխիքների և պարտականությունների վերաբերյալ մշակվել է և ուղարկվել «Զինծառայողների իրավունքներն ու պարտականությունները» նյութը՝ զինծառայողներին պարբերաբար հասցնելու համար:

Իհարկե, ողջունելի են Պաշտպանության նախարարության ջանքերը տպագիր նյութերի միջոցով զինծառայողներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին իրազեկելու ուղղությամբ, սակայն անհրաժեշտ է, որպեսզի այս գործընթացը լինի շարունակական:

*Ուստի, առաջարկվում է հրապարակված տպագիր նյութերն էլեկտրոնայնացնել և տեղադրել Պաշտպանության նախարարության պաշտոնական կայքում, որի շնորհիվ մինչև գորակոչային տարիքի հասնելը քաղաքացիները կկարողանան իրազեկված լինել զինծառայողների իրավունքներին և պարտականություններին:*

Այս առումով, անհրաժեշտ է նշել, որ 2018 թվականի ամառային գորակոչի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում մշակվել է գորակոչիկների իրավունքների վերաբերյալ տեղեկատվական թերթիկ, որում ներկայացված են, թե ինչ իրավունքներ ունեն գորակոչիկները բժշկական հետազոտությունների և փորձաքննությունների ընթացքում, ինչպես կարող են դիմել Պաշտպանին և մի շարք այլ հարցերի պատասխաններ: Տեղեկատվական թերթիկները գորակոչերի ընթացքում տրամադրվել են գորակոչիկներին և նրանց ծնողներին:

Թերթիկի էլեկտրոնային տարբերակը տեղադրված է Պաշտպանի կայքում<sup>439</sup>:

## ***2. Զինվորական հաշվառման փաստաթղթեր ստանալու իրավունքը***

Մարդու իրավունքների պաշտպանի 2017 թվականի տարեկան հաղորդման մեջ արդեն իսկ անդրադարձ կատարվել է զինվորական հաշվառման փաստաթղթերի լրացման կարգի բացակայությանը: Առաջարկվել էր սահմանել զինապարտի կցագրման վկայականի, զինվորական գրքույկի ձևերն ու դրանք լրացնելու կարգը, ինչպես նաև կարգավորել դրանց տրամադրման հետ կապված հարաբերությունները, որը կապահովի զինվորական հաշվառման փաստաթղթերի միատեսակությունը, կսահմանի զինվորական հաշվառման

<sup>438</sup> Կարգով սահմանվել է նաև ծանուցագրի միասնական ձևը:

<sup>439</sup> Տե՛ս [http://www.pashtpan.am/images/FLYER\\_print\\_FINAL\\_-\\_02.08.2018.pdf](http://www.pashtpan.am/images/FLYER_print_FINAL_-_02.08.2018.pdf) , (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

փաստաթղթերում ներառվող տեղեկությունների հստակ շրջանակ և դրանք լրացնելու կարգ և իրավակիրառ պրակտիկան կդարձնի առավել հստակ և կանխատեսելի<sup>440</sup>:

Դրական է, որ այս առումով արվել են ուղղակի քայլեր: Մասնավորապես, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1269-Ն որոշմամբ հաստատվել է **Ջինվորական հաշվառման կարգը**: Կարգով սահմանվել են քաղաքացու զինվորական հաշվառման վերցված լինելու հանգամանքը հաստատող փաստաթղթերի տեսակները: Բացի դրանից, սահմանվել է, որ քաղաքացու զինվորական հաշվառման վերցված լինելու հանգամանքը կարող է հաստատվել նաև զինվորական կոմիսարիատի կողմից ըստ անհրաժեշտության տրված տեղեկանքով: Քաղաքացին իրավունք ունի ծանոթանալու իր զինվորական հաշվառման վերաբերյալ տվյալներին, դրանցում շտկումներ կատարելու համար ներկայացնել առաջարկություններ:

Այս կերպ՝ սահմանվել են զինվորական հաշվառման փաստաթղթերը:

Չնայած դրական որոշակի քայլերի՝ դեռևս շարունակվում են արձանագրվել խնդիրներ:

Սահմանամերձ բնակավայրեր Պաշտպանի կատարած այցերի ընթացքում բնակիչները տեղեկացրել են, որ զինվորական կոմիսարիատների վերակազմակերպման արդյունքում իրենք զինվորական հաշվառման տեղեկանք ստանալու կամ այլ անհրաժեշտությամբ պայմանավորված զինկոմիսարիատ այցելելու համար երբեմն ստիպված են երկար ճանապարհ անցնել, հասնել մարզկենտրոն այն պարագայում, երբ հաճախ հասարակական տրանսպորտը չի աշխատում:

Բացի այդ, 2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ զինկոմիսարիատի կողմից տեղեկանք կամ այլ զինվորական հաշվառման փաստաթղթեր չտրամադրելու վերաբերյալ:

Օրինակ՝ պահեստագործում հաշվառված զինապարտ քաղաքացին տեղեկացրել է, որ սեղմ ժամկետում նոր անձնագիր ստանալու համար իրենից պահանջվում է ներկայացնել զինգրքույկ կամ դրան փոխարինող փաստաթուղթ, մինչդեռ զինգրքույկն արտերկրում է: Զինգրքույկի կրկնօրինակը տրամադրելու համար զինկոմիսարիատը քաղաքացուց պահանջել է ներկայացրել զինգրքույկը կորցնելու վերաբերյալ հայտարարություն, մինչդեռ քաղաքացու խնդիրը հնարավոր էր կարգավորել զինհաշվառման փաստը հավաստող տեղեկանք տրամադրելով:

Արդյունքում՝ Պաշտպանի աջակցությամբ քաղաքացուն տրամադրվել է զինվորական հաշվառման փաստը հավաստող տեղեկանքը՝ ապահովելով սեղմ ժամկետում նոր անձնագիր ստանալու հնարավորությունը:

*Նմանատիպ դեպքերը բացառելու նպատակով անհրաժեշտ է ուժեղացնել քաղաքացիներին զինվորական հաշվառման փաստաթղթերը սեղմ ժամկետում և պատշաճ տրամադրելու գործընթացի նկատմամբ հսկողությունը:*

### **3. Ջինվորական գրքույկի պատշաճ լրացումը**

2017 և 2018 թվականների ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է բողոքներ՝ պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից արձակված զինապարտների զինվորական գրքույկներում մարտական գործողությունների մասնակցության մասին գրառումներ չկատարելու վերաբերյալ: Պաշտպանության նախարարությունից ստացված պարզաբանումների ճնշող մեծամասնության համաձայն՝

<sup>440</sup> Տես, 2017 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ 277:

տվյալ զինապարտները չեն մասնակցել մարտերի, այլ իրականացրել են մարտական հերթապահություն<sup>441</sup>:

Չնայած նշված պարզաբանումներին՝ Պաշտպանին դիմած անձինք պնդել են, որ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում անմիջական մասնակցություն են ունեցել 2016 թվականի ապրիլին տեղի ունեցած մարտերին, սակայն այդ մասին իրենց զինվորական գրքույկներում անհրաժեշտ գրառումներ չեն կատարվել<sup>442</sup>: Որոշ բողոքների ուսումնասիրությամբ պարզվել է, որ նույն ստորաբաժանման կազմում, նույն կարգավիճակով և նույն գծում ծառայություն իրականացրած անձանց զինգրքույկներում կատարված են միմյանցից էապես տարբերվող գրառումներ. մի դեպքում՝ «Մասնակցել է ապրիլյան մարտական գործողություններին», մյուս դեպքում՝ «Իրականացրել է մարտական հերթապահություն»:

Հարկ է նկատի ունենալ, որ խնդիրը մեծապես պայմանավորված է եղել զինվորական գրքույկի լրացման կարգ սահմանված չլինելու հանգամանքով՝ չնայած նրան, որ զինգրքույկում առկա է առանձին տող՝ մարտերին մասնակցելու մասին գրառումներ կատարելու համար: Այնուամենայնիվ, ստացվում է, որ միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ փաստացի դրսևորվել է տարբերակված մոտեցում, ինչն անթույլատրելի է:

Պաշտպանն ընդունել է ի գիտություն, որ նույն խնդրի վերաբերյալ բողոք է քննարկվել նաև Վարչական դատարանում<sup>443</sup>:

Վարչական դատարանը գտել է, որ «...սոցիալական պաշտպանության տեսանկյունից մարտական գործողությունների մասնակից զինվորականների և հակառակորդի շփման գծում մարտական հերթապահություն իրականացրած զինծառայողների միջև որևէ տարբերակում չի կատարվում. այս երկու խումբ զինծառայողները սոցիալական ապահովության նպատակների համատեքստում նույնացվում են: Պետության վերաբերմունքը հակառակորդի շփման գծում մարտական հերթապահություն իրականացրած և մարտական գործողություններին մասնակցած զինծառայողների նկատմամբ միասնական է: Վերոհիշյալի հիման վրա դատարանը եզրահանգում է, որ ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի «2016 թվականի ապրիլի 2-6-ը տեղի ունեցած մարտերին մասնակցած ժամկետային պարտադիր ծառայողների զինգրքույկներում գրառումներ կատարելու մասին» 2016 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 92/ԳՇ կարգադրությունը հավասարապես և արդարացիորեն կիրառելի է նաև հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահություն իրականացրած զինծառայողների նկատմամբ...»:

Ավելին՝ Վարչական դատարանը խնդրահարույց է համարել այն, որ Կարգադրության հիման վրա համապատասխան գրառում կատարվել է հայցվորի հետ նույն զորամասում,

<sup>441</sup> Ըստ Պաշտպանության նախարարության՝ զինվորական գրքույկներում մարտական գործողություններին չմասնակցելու վերաբերյալ ստացվել է 87 բողոք: Նշվել է նաև, որ բողոքների մեծ մասը չի բավարարվել, քանի որ ուսումնասիրման արդյունքում պարզվել է, որ դիմումատուները չեն մասնակցել տեղի ունեցած մարտերին:

<sup>442</sup> ՀՀ պաշտպանության նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 16-Ա հրամանով հաստատվել է «Զինվորական գրքույկի լրացման կարգը», որի 7-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն՝ մարտը՝ զորքերի մարտավարական գործողությունների հիմնական ձևն է՝ միավորումների, զորամասերի և ստորաբաժանումների ըստ նպատակի, տեղի և ժամանակի կազմակերպված և համաձայնեցված հարվածներով, կրակով և զորաշարժով հակառակորդին ոչնչացնելու (ջախջախելու) նրա հարվածները ետ մղելու և սահմանափակ շրջանում կարճ ժամանակահատվածում այլ մարտավարական խնդիրներ կատարելու նպատակով: Այնուամենայնիվ, հարկ է նկատի ունենալ, որ այս կարգավորումը նախկինում սահմանված չի եղել, հետևաբար, դեռևս լուծում չի ստացել 2016 թվականի ընթացքում պարտադիր զինվորական ծառայություն անցած զինապարտների զինգրքույկներում մարտերին մասնակցելու վերաբերյալ գրառում կատարելու հարցը:

<sup>443</sup> ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/13276/05/17 գործով 2018 թվականի դեկտեմբերի 26-ին կայացված վճիռը Պաշտպանության նախարարության կողմից չի բողոքարկվել և 2019 թվականի հունվարի 30-ին մտել է օրինական ուժի մեջ:

միննույն դասակում 2016 թվականի ապրիլի 2-6-ը մարտական հերթապահություն իրականացրած և նույն մարտական գործողություններն ու հանձնարարությունները կատարած այլ անձի զինվորական գրքույկում՝ նշելով որ հայցվորի զինգրքույկում խնդրո առարկա Կարգադրության հիման վրա համապատասխան գրառում չկատարելու արդյունքում դրսևորվել է տարբերակված մոտեցում:

*Հետևաբար, առաջարկվում է 2016 թվականի ապրիլի 2-6-ը հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահություն իրականացրած զինծառայողների զինվորական գրքույկներում կատարել մարտերին մասնակից լինելու վերաբերյալ գրառումներ:*

**ԳԼՈՒԽ 3. ԶԻՆԱՊԱՐՏ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՊԱՏՇԱՃ  
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ**

**1. Առողջական վիճակի պատշաճ բժշկական հետազոտության և փորձաքննության խնդիրները**

Միջազգային իրավական չափանիշները կարևորում են գորակոչիկների պատշաճ բժշկական հետազոտություն և փորձաքննություն անցնելու իրավունքի երաշխավորումը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր դիրքորոշումներում նշել է, որ թեև պետությունն է որոշում գորակոչիկների առողջության և պիտանիության չափանիշները, այնուամենայնիվ գորակոչիկները պետք է ֆիզիկապես և հոգեպես պատրաստ լինեն զինվորական ծառայության առանձնահատկություններով պայմանավորված փոփոխությունների մարտահրավերներին: Նրանք պետք է պատրաստ լինեն նաև զինված ուժերի անդամներին բնորոշ պարտականության ու պատասխանատվության բարձրացմանը: Երիտասարդ առողջ մարդու համար զինվորական ծառայությունը կարող է որևէ խնդիր չառաջացնել, մինչդեռ այն կարող է լուրջ բեռ դառնալ անձի համար, ով առողջական խնդիրների պատճառով չունի բավարար ֆիզիկական տոկոսություն: Հետևաբար, հաշվի առնելով զինվորական ծառայության պահանջները, պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն ներդնելու գորակոչիկի փաստացի առողջական վիճակը բժշկական փորձաքննությամբ ստուգելու չափանիշներ, որպեսզի նրանց առողջությունը զինվորական ծառայության ընթացքում վտանգի չենթարկվի<sup>444</sup>: Մեկ այլ գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ պետությունը պետք է գործնական միջոցներ ձեռնարկի գորակոչիկների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ՝ նվազագույնի հասցնելով առողջությանը սպառնացող ռիսկը՝ ի թիվս այլնի տրամադրելով նաև պահանջվող բժշկական օգնություն<sup>445</sup>:

Զինապարտ քաղաքացիների առողջական վիճակի բժշկական հետազոտության և փորձաքննության նպատակը նրանց պիտանիության աստիճանի որոշումն է: Եվ հատկանշական է, որ ներպետական օրենսդրությունը համապատասխան կարգավորումներ է ամրագրում տվյալ նպատակին հասնելու համար<sup>446</sup>:

Հարկ է նկատի ունենալ, որ զինապարտ քաղաքացու պիտանիության աստիճանից է կախված պարտադիր զինվորական ծառայության գորակոչից կամ զինվորական ծառայությունից առողջական վիճակի պատճառով տարկետում ստանալու, զինվորական ծառայությունից վաղաժամկետ արձակվելու հնարավորությունը: **Հետևաբար, զինապարտ քաղաքացու պիտանիության աստիճանի և առողջական վիճակի պատճառով գորակոչից տարկետում ստանալու կամ ծառայությունից արձակվելու միջև առկա է իրավաբանական նշանակություն ունեցող ուղղակի պատճառական կապ:** Միաժամանակ, առողջական վիճակի բժշկական հետազոտություն և փորձաքննություն պատշաճ անցկացնելն անհրաժեշտ է զինապարտ քաղաքացիների առողջության պահպանման համար:

Դրանով է պայմանավորված փորձաքննություն իրականացնող մարմինների դերի կարևորությունը: Այլ կերպ ասած, զինապարտ քաղաքացիների առողջական վիճակի հետազոտություն և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները պարտավոր

<sup>444</sup> Տե՛ս Կայանկինն ընդդեմ Ռուսաստանի գործով վճիռ, գանգատ թիվ 24427/02, կետ 87:

<sup>445</sup> Տե՛ս Քիլինջը և այլոք ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ, գանգատ թիվ 40145/98, կետեր 41, 42:

<sup>446</sup> Տե՛ս, օրինակ, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդված, ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշմամբ հաստատված Հավելված 1-ի 2-րդ կետ:

են իրականացնել առողջական վիճակի պատշաճ (մանրամասն և ամբողջական) փորձաքննություն՝ բացառելու համար առողջությամբ պայմանավորված ոչ պիտանի քաղաքացիների գորակոչը Հայաստանի Հանրապետության զինված ուժեր:

**Անհրաժեշտ է ընդգծել, որ 2018 թվականի ընթացքում զինապարտ քաղաքացիների և նրանց ընտանիքների անդամների կողմից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ճշտող մեծամասնությունը վերաբերել է զինապարտ քաղաքացիների պատշաճ բժշկական հետազոտություն և փորձաքննություն անցնելու իրավունքի ապահովման հետ կապված խնդիրներին:**

Բողոքների քննարկման ընթացքում գրավոր պարզաբանումներ են պահանջվել ՀՀ պաշտպանության նախարարությունից, իրականացվել են այցեր զինվորական հոսպիտալներ, Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները ներկա են գտնվել Կենտրոնական բժշկական հանձնաժողովի և Պաշտպանության նախարարության Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի նիստերին:

2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրության և քննարկման արդյունքում արձանագրվել են դեպքեր, երբ զինապարտ քաղաքացու պիտանիության վերաբերյալ եզրակացություն ներկայացվել է առանց նրա փաստացի առողջական վիճակն ամբողջությամբ պարզելու, չեն իրականացվել անհրաժեշտ բժշկական միջամտությունները:

Օրինակ, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքի համաձայն՝ զորակոչիկի մոտ առկա է եղել «Լեղապարկի պոլիպներ» հիվանդությունը, Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից անցել է փորձաքննություն և սահմանափակումով պիտանի ճանաչվել զինվորական ծառայության համար: Բողոքարկման արդյունքում անցել է կրկնակի փորձաքննություն, այնուհետ՝ նշանակվել է ստուգիչ հետազոտություն: Հետազոտության արդյունքում նշանակվել է վիրահատական բուժում, սակայն բժշկական կենտրոնի կողմից այն չի իրականացվել:

Պաշտպանը պարզաբանումներ է պահանջել Առողջապահության և Պաշտպանության նախարարություններից:

Ըստ Առողջապահության նախարարության՝ նույն բժշկական կենտրոնում շուրջ մեկ ամսվա տարբերությամբ կատարված որովայնի օրգանների երկու ՈԻՁ հետազոտությունների պատասխաններում կան զգալի իրարամերժ նկարագրեր՝ կապված զորակոչիկի մոտ առկա «Լեղապարկի պոլիպ» ախտորոշման հետ, որից ելնելով էլ Կենտրոնական բժշկական հանձնաժողովին ներկայացվել է միջնորդագիր՝ լրացուցիչ հետազոտություն կատարելու համար: Դրա հետ մեկտեղ, Պաշտպանության նախարարությունից ստացված պարզաբանման համաձայն՝ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի փորձաքննության արդյունքում զորակոչիկը սահմանափակումով պիտանի է ճանաչվել զինվորական ծառայության համար և զորակոչվել ՀՀ զինված ուժեր: Փաստորեն՝ առանց վիրահատական միջամտության քաղաքացին զորակոչվել է զինված ուժեր:

Լրացուցիչ գրությամբ՝ Պաշտպանն առաջարկել է կազմակերպել արդեն ծառայության մեջ գտնվող քաղաքացու վիրահատական բուժումը, այնուհետ՝ զինծառայության համար պիտանիության հարցը որոշելու նպատակով իրականացնել առողջական վիճակի փորձաքննություն:

Արդյունքում՝ իրականացվել է վիրահատական բուժում, զինծառայողը ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար և արձակվել ՀՀ զինված ուժերից:

Փաստորեն, ոչ ամբողջական բժշկական հետազոտության արդյունքում՝ պետությունը զինված ուժեր է զորակոչել, ըստ էության, ոչ պիտանի քաղաքացու և ստիպված եղել մինչև զորակոչվելը բուժման կարիք ունեցող անձին ծառայության ընթացքում բուժելուց հետո արձակել զինված ուժերից:

Նման վիճակը Պաշտպանը գնահատում է խիստ մտահոգիչ: Մտահոգիչ է նաև այն, որ առ այսօր, ըստ Պաշտպանության նախարարության, չի վարվում վիճակագրություն այն մասին, թե քանի զինճառայողի մոտ է մինչև զորակոչվելն առողջական վիճակի բժշկական հետազոտությունների արդյունքներով արձանագրվել վիրահատական միջամտության անհրաժեշտություն, և նրանցից քանիսն են զինվորական ծառայության ընթացքում ստացել վիրահատական բժշկական օգնություն: Նման վիճակագրության վերլուծությունը կարող է վեր հանել ոլորտում առկա հիմնական խնդիրները, այդ թվում՝ օրենսդրության կատարելագործման անհրաժեշտության տեսանկյունից:

Մեկ այլ դեպքում, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքով անձը դժգոհել է, որ իր որդին ունի գլխի հետ կապված առողջական խնդիրներ (կիստաներ), սակայն զորակոչի ընթացքում նրա բժշկական հետազոտությունների արդյունքներն արտացոլող բոլոր բժշկական փաստաթղթերը Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից պատշաճ չեն ուսումնասիրվել, արդյունքում՝ որդին սահմանափակումով պիտանի է ճանաչվել զինվորական ծառայության համար: Նույն օրը Պաշտպանի միջամտությամբ զորակոչիկն անցել է կրկնակի բժշկական փորձաքննություն և ստացել տարկետում:

Պաշտպանը չի բացառում, որ նման խնդիրը կարող է հետևանք լինել մեկ օրվա ընթացքում անսահմանափակ թվով անձանց փորձաքննելու պրակտիկայի, որն ունի նաև օրենսդրական տարր: Խնդիրն այն է, որ ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշմամբ հաստատվել է քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության կարգը, որում մեկ օրվա ընթացքում փորձաքննությունների անցկացման համար չկա քանակական սահմանափակում (համեմատության համար կարելի է վկայակոչել նախկինում գործող՝ ՀՀ պաշտպանության նախարարի 2013 թվականի ապրիլի 8-ի թիվ 410-Ն հրամանը, ըստ որի՝ պահեստագործում հաշվառված զինապարտների փորձաքննվողների թվաքանակը խաղաղ պայմաններում մեկ աշխատանքային օրվա ընթացքում չպետք է անցնի 50-ը):

*Ուստի, առաջարկվում է՝*

1. այն դեպքերում, երբ բժշկական միջամտության հետևանքն ունի էական նշանակություն զինապարտի պիտանիության աստիճանի որոշման հարցում, առողջական վիճակի վերաբերյալ փորձաքննություն իրականացնող հանձնաժողովները եզրակացություններ կայացնեն միայն անհրաժեշտ միջամտության ավարտից հետո կատարած բժշկական հետազոտությունների արդյունքները ստանալու դեպքում,

2. Պաշտպանության նախարարությունում վարել համապատասխան վիճակագրություն՝ պարզելու համար, թե քանի զինճառայող է մինչև զորակոչվելն ունեցել վիրահատական բուժման կարիք, նրանցից քանիսն են վիրահատվել զինվորական ծառայության ընթացքում, ինչպես նաև վիրահատությունից հետո քանի զինճառայողի պիտանիության աստիճան է փոխվել,

3. ուժեղացնել հսկողությունը փորձաքննություն իրականացնող հանձնաժողովների գործունեության նկատմամբ՝ բժշկական հետազոտությունների արդյունքներն արտացոլող բոլոր փաստաթղթերը ամբողջական ուսումնասիրելու նպատակով,

4. սահմանել մեկ օրվա ընթացքում առողջական վիճակի փորձաքննություն իրականացնելու զինապարտ քաղաքացիների առավելագույն թվաքանակը:

2018 թվականի ընթացքում շարունակել է չլուծված մնալ դեռևս 2017 թվականի տարեկան հաղորդման մեջ տեղ գտած մեկ այլ խնդիր: Նշվել էր, որ Պաշտպանի աշխատակազմ ներկայացված դիմումների քննարկման արդյունքում արձանագրվել են դեպքեր, երբ զորակոչի ընթացքում զորակոչիկն անցել է մի քանի բժշկական հետազոտություն, որոնց արդյունքներն էականորեն տարբերվել են միմյանցից, և

Կենտրոնական բժշկական հանձնաժողովը գորակոչիկի պիտանիության վերաբերյալ որոշում չի կայացրել, ինչը գնահատվել էր ոչ իրավաչափ՝ նկատի ունենալով, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասով հստակ սահմանված են քաղաքացու պիտանիության վերաբերյալ եզրակացությունների տեսակները: Հետևաբար, եզրահանգվել էր, որ այն դեպքերում, երբ մինչև գորակոչի ավարտը հնարավոր չի լինում որոշել գորակոչիկի պիտանիությունը զինվորական ծառայությանը, նրան պետք է տրամադրվի տարկետում<sup>447</sup>:

Հարցը կարող էր կարգավորվել **զինապարտ քաղաքացիների առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության կարգը հաստատելու մասին Կառավարության համապատասխան որոշման մշակման շրջանակներում**, որի ընթացքում համանման առաջարկություն էր ներկայացվել Պաշտպանի կողմից: Մինչդեռ, 2018 թվականի ապրիլի 12-ին ընդունված ՀՀ կառավարության թիվ 405-Ն որոշմամբ սահմանվել է, որ լրացուցիչ, ստուգիչ կամ հսկողական հետազոտությունը հայտարարված գորակոչի ընթացքում ավարտված չլինելու դեպքում ԿԲՀ-ն այդ անձի վերաբերյալ եզրակացություն չի ներկայացնում և նրա փորձաքննությունն իրականացնում է հաջորդ գորակոչի ժամանակ: Կարծում ենք, որ այս կարգավորումը խնդրահարույց է վերը նշված օրենքի 17-րդ հոդված 3-րդ մասի պահանջների տեսանկյունից:

*Առաջարկվում է վերանայել Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման կարգավորումը և ամրագրել, որ լրացուցիչ, ստուգիչ կամ հսկողական հետազոտությունը հայտարարված գորակոչի ընթացքում ավարտված չլինելու դեպքում գորակոչիկները ճանաչվում են բուժման կարիք ունեցող, և նրանց տրվում է տարկետում մինչև հաջորդ գորակոչ:*

Եվս մեկ խնդիր շարունակում է մնալ արդիական, չնայած այն հանգամանքին, որ 2017 թվականի համեմատությամբ 2018 թվականի ընթացքում բողոքների թիվն էականորեն նվազել է: Խոսքը վերաբերում է հետևյալ խնդրին. գորակոչի ընթացքում, երբ գորակոչիկները դիմում են սեփական նախաձեռնությամբ և միջոցների հաշվի հետազոտություն անցնելու համար, քաղաքացիական բժշկական հաստատությունները հրաժարվում են տրամադրել բժշկական սպասարկում (առողջական վիճակի հետազոտություն, հետազոտության մասին եզրակացության տրամադրում և այլն)<sup>448</sup>:

Օրինակ, քաղաքացին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին բանավոր բողոք է ներկայացրել այն մասին, որ այցելել է բժշկական կենտրոն իր միջոցներով ողնաշարի հետազոտություն անցնելու համար, սակայն բժշկական կենտրոնում հրաժարվել են հետազոտել՝ գորակոչիկ լինելու պատճառաբանությամբ: Նույնը օրը Պաշտպանի միջամտության արդյունքում գորակոչիկն անցել է անհրաժեշտ հետազոտությունը:

*Առաջարկվում է գորակոչի ընթացքում Առողջապահության նախարարության կողմից խիստ հսկողություն սահմանել՝ բացառելու անձի կարգավիճակով, տվյալ դեպքում՝ գորակոչիկ լինելու հանգամանքով պայմանավորված բժշկական սպասարկում չտրամադրելու դեպքերը:*

<sup>447</sup> Մանրամասն՝ 2017 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ 277-278:

<sup>448</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 278-279:



**2. Մի շարք հիվանդություններով զինվորական ծառայությանը սահմանափակումով պիտանի ճանաչված զինապարտների տարկետման իրավունքը**

Մի շարք հիվանդություններով զինվորական ծառայությանը սահմանափակումով պիտանի ճանաչված զորակոչիկներին առողջական վիճակի պատճառով տարկետման իրավունքի պաշտպանության խնդրին մանրամասն անդրադարձ է կատարվել նաև Մարդու իրավունքների պաշտպանի 2016 և 2017 թվականների տարեկան հաղորդումներով: Մասնավորապես նշվել է, որ բացակայում են «**հիվանդությունների որակական փունջ» (այլ ոչ թե որոշակի քանակի հիվանդություններ)** ունենալու դեպքում անձին զինվորական ծառայության զորակոչելու գնահատման մեխանիզմը և իրավական հիմքերը: Բժշկական հանձնաժողովը «հիվանդությունների որակական փունջ» չունենալու դեպքում այդ հիվանդությունները գնահատում է առանձին-առանձին՝ այլ ոչ թե ընդհանուր վերցրած, և արդյունքում ստացվում է, որ անձը ենթակա է զինվորական ծառայության: Սակայն, զինապարտը փաստացի պիտանի չէ զինվորական ծառայությանը, և նույնիսկ մեծ հավանականություն կա, որ ծառայության ընթացքում ձեռք կբերի հաշմանդամություն կամ ավելի կլիտրանան առկա հիվանդությունները:

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 8-ի թիվ 405-ն որոշման համաձայն՝ այն զորակոչիկները, որոնք հայտարարված զորակոչի ընթացքում հետազոտությունների արդյունքում ճանաչվում են պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով հինգ և ավելի տարբեր հիվանդություններով, ճանաչվում են բուժման կարիք ունեցող և նրանց տրվում է տարկետում մինչև մեկ տարի ժամկետով՝ բուժման նպատակով:

Մինչդեռ, որոշմամբ սահմանված չէ զինվորական ծառայությունից ազատելու հնարավորությունն այն դեպքերի համար, երբ հինգերորդ հիվանդությունն անձը ձեռք է բերում ծառայության ընթացքում: Արդյունքում ստացվում է, որ նույն առողջական վիճակն ունեցող զորակոչիկներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է, իսկ այն պարտադիր ժամկետային զինծառայողները, որոնց առողջական վիճակը վատթարանում է ծառայության ընթացքում, տարկետում չեն ստանում:

Հիվանդությունների որակական փնջի ազդեցության գնահատման համար՝ Պաշտպանության նախարարությունից պահանջվել էր տեղեկություն, թե քանի դեպք է գրանցվել, երբ պարտադիր ժամկետային զինծառայողը ժամկետից շուտ արձակվել է ծառայությունից՝ զորակոչման ժամանակ ախտորոշված հիվանդության (դրա զարգացման, սրացման) պատճառով: Ստացված պարզաբանման համաձայն՝ տարեցտարի նկատվում է հիվանդության պատճառով ժամկետներից շուտ զորացրվողների թվի նվազում:

Միաժամանակ անհասկանալիորեն նշվել է, որ այդ տեղեկությունը դասակարգված է (այսինքն՝ հրապարակման ենթակա չէ), ինչն առերևույթ խնդրահարույց է՝ հատկապես, որ 2017 թվականի տարեկան հաղորդմամբ նույն հարցման կապակցությամբ տրամադրվել էր տեղեկություն<sup>449</sup>, բացի դրանից՝ նման տեղեկությունը չի բացահայտում պետական կամ ծառայողական գաղտնիք:

*Առաջարկվում է՝*

*1. հիվանդությունների քանակական փնջի հետ միասին քննարկել «հիվանդությունների որակական փունջ», ինչպես նաև անձին զինվորական ծառայության զորակոչելու գնահատման մեխանիզմ սահմանելու հարցը՝ նաև վերանայելով հիվանդությունների սահմանված ցանկը,*

<sup>449</sup> 2017 թվականի ընթացքում 24 պարտադիր ժամկետային զինծառայողներ արձակվել են զինվորական ծառայությունից հիվանդության (դրա զարգացման, սրացման) պատճառով, որն ախտորոշվել էր զորակոչի ընթացքում:

2. նախատեսել, որ զինվորական ծառայության ընթացքում հինգերորդ հիվանդության ձեռքբերումը հիմք է զինծառայողի պիտանիության վերանայման համար:

**3. Չինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկի վերանայում**

2018 թվականի ապրիլի 12-ին ՀՀ կառավարության թիվ 404-Ն որոշմամբ հաստատվել է «**Չինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկը**»:

Մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարությամբ իրականացվել է համեմատություն ՀՀ պաշտպանության նախարարի 2013 թվականի ապրիլի 8-ի թիվ 410-Ն հրամանով հաստատված «Հիվանդությունների և ֆիզիկական թերությունների ցանկի» և ՀՀ կառավարության թիվ 404-Ն որոշմամբ հաստատված «Չինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկի» միջև: Այսպես՝

1) Պաշտպանության նախարարի հրամանով հաստատված հիվանդությունների և ֆիզիկական թերությունների ցանկի 36-րդ հոդվածի մեկնաբանություններում արձանագրված է, որ 3-րդ աստիճանի կիֆոզի ծովածության անկյունը կազմում է 66-80 աստիճան՝ առանց ողների օստեոխոնդրոպաթիայի նշանների, կամ 61-68 աստիճան՝ ողների օստեոխոնդրոպաթիայի առկայությամբ, իսկ կառավարության որոշմամբ հաստատված ցանկում ծովածության անկյունը կազմում է 68-80 աստիճան կամ 61-67 աստիճան՝ առնվազն 3 սեպաձև ողերի առկայությամբ:

2) Պաշտպանության նախարարի հրամանով հաստատված ցանկի 42-րդ հոդվածի «գ» կետի մեկնաբանություններով մատնանշված կետով փորձաքննվում է երկրորդ աստիճանի hallux-valgus-ը, երբ առաջին մատի առանցքի թեքվածությունը առաջին նախագարշապարային ոսկրի նկատմամբ 20-29 է: Առաջին աստիճանի hallux-valgus-ը, երբ առաջին մատի առանցքի թեքվածությունը առաջին գարշապարային ոսկրի նկատմամբ 15-19 է, կիրառվում է 43-րդ հոդվածի «դ» կետը: Իսկ կառավարության որոշմամբ հաստատված ցանկով ցուցանիշները փոփոխվել են, և 42-րդ հոդվածի «գ» կետով փորձաքննվում է երկրորդ աստիճանի hallux-valgus-ը, երբ առաջին մատի առանցքի թեքվածությունը առաջին նախագարշապարային ոսկրի նկատմամբ 30-39 է: Առաջին աստիճանի hallux-valgus-ը, երբ առաջին մատի առանցքի թեքվածությունը առաջին գարշապարային ոսկրի նկատմամբ 20-29 է, կիրառվում է 43 «դ» կետը:

3) Պաշտպանության նախարարի հրամանով հաստատված ցանկի 30-րդ հոդվածի պարզաբանումներում բարորակ հիպերբիլիռոբինեմիայով զորակոչիկները, եթե նրանց արյան մեջ անուղղակի բիլիռոբինը մինչև 25 մկմոլ/լ է, ճանաչվում են պիտանի՝ սահմանափակումով: Եթե արյան մեջ անուղղակի բիլիռոբինը կայուն 25 մկմոլ/լ-ից ավելի է, ապա զորակոչիկներին տրվում է տարկետում մինչև մեկ տարի, որից հետո նշանակվում է կրկնակի փորձաքննություն, իսկ զինծառայողները պիտանի չեն և փորձաքննվում են ըստ «բ» կետի: Իսկ կառավարության որոշմամբ հաստատված ցանկի՝ փորձաքննվողները ճանաչվում են «Սահմանափակումով պիտանի է զինվորական ծառայության համար», երբ բարորակ բիլիռոբինեմիայի դեպքում արյան մեջ անուղղակի բիլիռոբինը կայուն 30-ից մինչև 40 մկմոլ/լ է:

4) Փոփոխության է ենթարկվել նաև մոտոր-էվակուատոր ֆունկցիայի դանդաղման ցուցանիշը և այլն:

Ստացվում է, որ կատարվել են լաբորատոր-գործիքային ցուցանիշների փոփոխություններ (տարկետման համար նախատեսված շեմը բարձրացրել է):

Թեև պարզաբանվել է, որ հիվանդությունների ցանկը և դրանց չափորոշիչները քննարկվել ու համաձայնեցվել են ՀՀ առողջապահության նախարարության և բժշկական բուհի մասնագետների հետ, այնուամենայնիվ, այս փոփոխությունները խնդրահարույց են այնքանով, որ դրանց նախաձեռնման հիմնավորումներում չէր տրվում պատասխան մարդու իրավունքների տեսանկյունից կարևոր այն հարցին, թե արդյոք անձի առողջական վիճակը չի վատթարանա զինվորական ծառայության պայմաններում:

Բացի դրանից, ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսվել է, որ «Գիշերամիզություն» հիվանդությունն ունեցող զորակոչիկները սահմանափակումով պիտանի են ճանաչվում զինվորական ծառայության համար: Պաշտպանի աշխատակազմ մի շարք բանավոր բողոքներ են ներկայացվել «Գիշերամիզություն» հիվանդությունն ունեցող զորակոչիկների և նրանց ծնողների կողմից: Բողոք ներկայացրած անձինք նշել են, որ ծառայությունը հատկապես դժվարանում է այն զինծառայողների համար, ում մոտ առկա է նաև այլ հիվանդություն<sup>450</sup>:

Պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկության համաձայն՝ ՀՀ կառավարության թիվ 404-Ն որոշման վերանայման հարցը նախատեսված է քննարկել 2018 թվականի ձմեռային զորակոչի ավարտից հետո:

Մտահոգության տեղիք է տվել նաև մեկ այլ խնդիր: 2018 թվականի հուլիս ամսին՝ զորակոչի ընթացքում, փոփոխություններ են կատարվել **Զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկում**, որի արդյունքում՝ որոշակի խումբ հիվանդությունների պարագայում փոխվում է պիտանիության աստիճանը: Այսպես, Պաշտպանին ներկայացված բողոքով զորակոչիկը տեղեկացրել է, որ ունի ողնաշարի ճողվածքներ, ծովածություն, ինչպես նաև Շոյերման-Մաոյի հիվանդություն: Նախքան վերը նշված փոփոխություններն անցել է երկու բուժհետազոտություն, նման հիվանդություններով պետք է ճանաչվեր ժամանակավորապես ոչ պիտանի զինվորական ծառայությանը, սակայն նշանակվել է ստուգիչ հետազոտություն, որից հետո օրենսդրական փոփոխության արդյունքում ճանաչվել է պիտանի (սահմանափակումով)<sup>451</sup>:

Նախարարության տրամադրած պարզաբանման համաձայն՝ հիվանդությունների ցանկի փոփոխությունների և լրացումների կատարումը պայմանավորված է գործնական կիրառության մեջ դնելուց հետո ի հայտ եկած տեխնիկական բացթողումների և վրիպումների ուղղման, մասնագիտական ձևակերպումների շտկման անհրաժեշտությամբ:

**Հայտարարված զորակոչի ընթացքում օրենսդրական փոփոխություններ կատարելը և կիրառելը խիստ խնդրահարույց է՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից, այն է՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:**

Ավելին՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում (ՄԴՈ-630, ՄԴՈ-1142) անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և գտել, որ այն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ

<sup>450</sup> Համանման տեղեկություններ տարածվել են նաև զանգվածային լրատվության միջոցներով՝ <https://hetq.am/hy/article/100185>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>451</sup> Պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ զինվորական ծառայության պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկի փոփոխության ենթարկված հոդվածների վերաբերյալ զորակոչիկների կամ նրանց օրինական ներկայացուցիչների կողմից ստացվել է 18 բողոք:

լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերած իրավունքների և պարտավորությունների հարցում:

*Առաջարկվում է՝*

1) *փոփոխությունների կատարման ընթացքում հաշվի առնել որոշման կիրառման ընթացքում ի հայտ եկած խնդիրները և փոփոխությունները կատարելիս զինապարտների առողջության պահպանման իրավունքը համարել առաջնային,*

2) *հայտարարված գորակոչի ընթացքում բացառել այնպիսի օրենսդրական փոփոխությունների կատարումը և կիրառումը, որի արդյունքում հնարավոր է զինձառայությանը պիտանիության աստիճանի վերանայում:*

#### **4. Բժշկական և ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովների հայեցողության սահմանը**

Զինապարտ քաղաքացու առողջական վիճակի պատշաճ բժշկական հետազոտություն և փորձաքննություն անցնելու իրավունքի ապահովման գործում էական նշանակություն ունի բժշկական և ռազմաբժշկական հանձնաժողովների գործունեությունը:

Դեռևս 2017 թվականի տարեկան հաղորդման մեջ Պաշտպանն արձանագրել էր, որ հասցեագրված բողոքների շրջանակներում ռազմաբժշկական և բժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովների որոշումների, եզրակացությունների ուսումնասիրությունների համաձայն՝ գործող իրավակարգավորումներով հստակ սահմանված չեն եղել հանձնաժողովների կողմից կայացվող որոշումներին (եզրակացություններին) ներկայացվող պահանջները և դրանցում պարտադիր ներառվող տեղեկությունների շրջանակը:

Թեև 2017 թվականին ընդունվել է «Զինվորական ծառայության և զինձառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը, իսկ 2018 թվականին՝ ՀՀ կառավարության թիվ 405-Ն որոշումը («Քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության կարգը, հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները, դրանց գործունեության, ինչպես նաև հետազոտման և փորձաքննության ուղեգրման կարգերը, փորձաքննության եզրակացությունների ձևերը»), սակայն Պաշտպանին հասցեագրված բողոքների քննարկման և ուսումնասիրության ընթացքում արձանագրվել են զինապարտների առողջական վիճակի վերաբերյալ ոչ ամբողջական եզրակացություն ներկայացնելու, ինչպես նաև հանձնաժողովներին վերապահված **հայեցողական լիազորությունների** ոչ ճիշտ կիրառման դեպքեր<sup>452</sup>:

Օրինակ, գորակոչիկը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքով տեղեկացրել է, որ աչքերի և երիկամների հետ կապված առողջական խնդիրների կապակցությամբ անցել է մի շարք բժշկական հետազոտություններ: Կենտրոնական բժշկական հանձնաժողովը եզրակացություն է ներկայացրել այն մասին, որ նա ունի բուժման կարիք: Արդյունքում՝ գորակոչիկն աչքերի հետ կապված առողջական խնդիրների պատճառով ստացել է տարկետում մինչև մեկ տարի ժամանակով: Արձանագրվել են նաև երիկամների հետ կապված առողջական խնդիրներ, սակայն Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից դրանց վերաբերյալ եզրակացություն չի ներկայացվել: Ստացվում է, որ առողջական երկու խնդիրների կապակցությամբ Կենտրոնական բժշկական

<sup>452</sup> ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման համաձայն՝ ախտորոշումը ճշտելու նպատակով, բավարար տվյալների բացակայության կամ համապատասխան լաբորատոր-գործիքային հետազոտություն անցած չլինելու կամ հետազոտական փաստաթղթերի միջև հակասությունների դեպքերում, Կենտրոնական բժշկական հանձնաժողովը կարող է հետազոտությունը պահանջող բժշկ-մասնագետի գրավոր հիմնավորմամբ գորակոչիկին ռազմաբժշկական կամ քաղաքացիական բժշկական հաստատություն լրացուցիչ, ստուգիչ կամ հսկողական հետազոտության ուղեգրելու վերաբերյալ տալ եզրակացություն:

հանձնաժողովը եզրակացություն է ներկայացրել միայն աչքի հետ կապված խնդրի վերաբերյալ և չի անդրադարձել երիկամների բուժման հարցին:

**Այս օրինակը հատկապես խնդրահարույց է, քանի որ երիկամներին առնչվող խնդրին եզրակացությամբ անդրադարձ կատարված լինելու դեպքում կարող էր փոխվել գորակոչիկի պիտանիության աստիճանը:**

Պետք է նկատի ունենալ, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «հայեցողություն» եզրույթի ներքո պետք է նկատի ունենալ նպատակահարմարության և օրինականության ողջամիտ հարաբերակցություն՝ որպես ուղենիշ հիմք ընդունելով իրավունքի գերակայության սկզբունքը: Այսինքն՝ պետաիշխանական լիազորություններով օժտված որևէ պետական մարմին հայեցողական լիազորություն իրականացնելիս պարտավոր է թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրությունն իրականացնել՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կամայականության արգելքի սկզբունքներով՝ ապահովելով գործի ըստ էության ճիշտ քննությունը և լուծումը (դատական գործ թիվ ԵՇԴ/3780/02/14, ընդունված՝ 2015 թվականի, նոյեմբերի 27-ին):

Այս առումով, Պաշտպանն արձանագրում է, որ բժշկական և ռազմաբժշկական փորձաքննություն իրականացող հանձնաժողովները չպետք է դադարեցնեն զինապարտ քաղաքացու առողջական վիճակի հետազոտությունը և պետք է նրան ուղարկեն լրացուցիչ, ստուգիչ կամ հսկողական հետազոտության, եթե դա կարող է հանգեցնել պիտանիության աստիճանի փոփոխության:

Մինևույն ժամանակ անթույլատրելի է, որ մի քանի առողջական խնդիրներ ունեցող զինապարտի առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն ներկայացվի միայն մեկ առողջական խնդրի վերաբերյալ:

*Ուստի, առաջարկվում է՝*

1. *ախտորոշումը ճշտելու համար բավարար տվյալների բացակայության կամ համապատասխան լաբորատոր-գործիքային հետազոտություն անցած չլինելու կամ հետազոտական փաստաթղթերի միջև հակասությունների դեպքերում՝ գորակոչիկին ուղեգրել լրացուցիչ, ստուգիչ կամ հսկողական հետազոտության,*

2. *չդադարեցնել զինապարտ քաղաքացու առողջական վիճակի հետազոտությունն այն դեպքերում, երբ լրացուցիչ, ստուգիչ կամ հսկողական հետազոտությունը կարող է հանգեցնել պիտանիության աստիճանի փոփոխության,*

3. *մի քանի առողջական խնդիրներ ունեցող զինապարտի առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն ներկայացնել առողջական բոլոր խնդիրների վերաբերյալ:*

2018 թվականի ընթացքում հայեցողական լիազորությունների առումով ի հայտ է եկել մեկ այլ խնդիր:

Բողոք ներկայացրած անձինք տեղեկացրել են, որ «անգիոտրոֆոններով» հիվանդության պատճառով ձմեռային գորակոչին ստացել են տարկետում մինչև հաջորդ՝ ամառային գորակոչ: Նաև տեղեկացրել են, որ «անգիոտրոֆոններով» հիվանդության արդյունքներն

Էականորեն տարբերվում են՝ կախված եղանակից, հետևաբար ամառային գորակոչի ընթացքում պիտանի են ճանաչվել զինվորական ծառայության համար:

Պաշտպանի գրությունների հիման վրա զինվորական ծառայության ընթացքում բժշական հետազոտություններ են անցել «անգիոտրոֆոններով» հիվանդությունն ունեցող պարտադիր ժամկետային զինծառայողներ, ձմռանն իրականացված հետազոտությունների արդյունքներն էական տարբերվել են գորակոչի ընթացքում իրականացրած հետազոտությունների արդյունքներից:

*Նկատի ունենալով, որ բժշկական և ռազմաբժշկական հանձնաժողովներն ունեն հայեցողություն տրամադրել «մինչև մեկ տարի» ժամկետով տարկետում և հաշվի առնելով, որ «անգիոտրոֆոններով» հիվանդությունն առավել արտահայտվում է ցուրտ եղանակին՝ այդ հիվանդությունն ունեցող գորակոչիկների փաստացի առողջական վիճակը պարզելու համար առաջարկվում է նրանց բժշկական հետազոտությունները կազմակերպել ձմռանային գորակոչին, այսինքն՝ տարկետման ժամկետը որոշելիս պարտադիր հաշվի առնել, որ կախված եղանակից հիվանդության արդյունքներն էականորեն կարող են տարբերվել:*

Ուշագրավ է պետական իրավասու մարմինների տրամադրած վիճակագրությունը:

Ըստ Քննչական կոմիտեի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով (ժամկետային զինվորական ծառայության հերթական գորակոչից խուսափելը) նախատեսված հանցակազմի հատկանիշներով հարուցված քրեական գործերի քննության շրջանակներում 2018 թվականի ընթացքում կատարված դատաբժշկական-ռազմաբժշկական փորձաքննությունների եզրակացություններով զինվորական ծառայության համար ոչ պիտանի է ճանաչվել 38 անձ, որից 8-ը՝ ժամանակավորապես ոչ պիտանի և բուժման կարիք ունեցող:

Ըստ Պաշտպանության նախարարության՝ ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովի կողմից ներկայացված մեկ որոշում քաղաքացու կողմից գտնվում է բողոքարկման փուլում՝ վերաքննիչ դատարանում: Դատական կարգով բողոքարկվել է Հանրապետական գորակոչային հանձնաժողովի 10 որոշում, որոնցից 1-ը դատարանի վճռով ճանաչվել է ոչ իրավաչափ:

2018 թվականի ընթացքում 36 զինծառայող հոսպիտալային ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից ճանաչվել են ոչ պիտանի զինվորական ծառայության համար, որից հետո փորձաքննություն են անցել Պաշտպանության նախարարության կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից և ճանաչվել սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար: Միաժամանակ նշվել է, որ հնարավոր է զինծառայողները Պաշտպանության նախարարության կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի իրականացրած փորձաքննության արդյունքում պիտանի (կամ սահմանափակումով պիտանի) ճանաչվեն, սակայն հետագա մշտադիտարկման արդյունքում հիվանդության սրացման կամ նոր հիվանդության արդյունքում զինվորական ծառայության համար ճանաչվեն ոչ պիտանի:

Տրամադրված տեղեկության համաձայն՝ այդ մասին վիճակագրություն չի վարվում, ինչը մտահոգիչ է:

*Առաջարկվում է Պաշտպանության նախարարությունում վարել համապատասխան վիճակագրություն, թե քանի զինծառայող է Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից իրականացված փորձաքննության արդյունքում ճանաչվել պիտանի (կամ սահմանափակումով պիտանի) զինվորական ծառայության համար և հետագայում ոչ պիտանի ճանաչվել զինվորական ծառայության համար: Նաև պետք է ուշադրություն դարձնել այն հարցին, թե արդյոք ռազմաբժշկական փորձաքննությունների միջև ընկած ժամանակահատվածում զինծառայողի առողջական վիճակը վատթարացել է:*

## 5. Բժշկական փաստաթղթերը ստանալու իրավունքը

Ձինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 50-րդ կետի համաձայն՝ զինված ուժերի յուրաքանչյուր գործող կամ նախկին անդամ իրավունք ունի հարցմամբ ստանալ իրեն առնչվող տեղեկատվությունը, անձնական տվյալները, այդ թվում՝ բժշկական բնույթի տեղեկությունները:

«Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ քաղաքացին իրավունք ունի ծանոթանալու իր առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության ընթացքին և ստանալու դրանց արդյունքներով տրված եզրակացություններն ու այլ փաստաթղթերը, ներկայացնելու առաջարկություններ, բացատրություններ կամ առարկություններ, օրենքով սահմանված կարգով բողոքարկելու իր առողջական վիճակի վերաբերյալ տրված եզրակացությունը:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի մատչելի ձևով ստանալ տեղեկություն իր առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին:

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն հրամանով հաստատված «Քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության կարգը, հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները, դրանց գործունեության, ինչպես նաև հետազոտման և փորձաքննության ուղեգրման կարգերը, փորձաքննության եզրակացությունների ձևերի» 36-րդ կետով սահմանվել է, որ բուժհաստատությունը պարտավոր է քաղաքացուն կամ նրա օրինական ներկայացուցչին կամ նրա կողմից լիազորված անձին տրամադրել տեղեկություններ առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին:

2017 թվականի տարեկան հաղորդման մեջ նշվել էր, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին են հասցեագրվել բողոքներ առողջական վիճակի, բժշկական հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, արդյունքների վերաբերյալ տեղեկություն, ինչպես նաև ռազմաբժշկական ու բժշկական փորձաքննության արդյունքներով կայացված որոշումները և այլ բժշկական փաստաթղթերը չտրամադրելու վերաբերյալ:

Նախորդ տարվա համեմատ՝ 2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված՝ բժշկական փաստաթղթերի պատճենները զինապարտ քաղաքացիներին չտրամադրելու վերաբերյալ բողոքների քանակը նվազել է: Այնուամենայնիվ, մտահոգիչ է տվյալ հարցի վերաբերյալ բողոքների առկայությունը՝ օրենսդրական հստակ կարգավորումների առկայության պայմաններում:

Օրինակ, գորակոչիկը Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքով տեղեկացրել է, որ այցելել է տարածքային զինվորական կոմիսարիատ առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության արդյունքներով տրված եզրակացությունները ստանալու նպատակով, սակայն զինկոմիսարիատում հրաժարվել են դրանք տրամադրել:

Նույն օրը կապ է հաստատվել տարածքային զինվորական կոմիսարի հետ, արդյունքում՝ գորակոչիկին տրամադրվել են բժշկական փաստաթղթերի պատճենները:

Անհրաժեշտ է նաև հավելել, որ փաստաթղթեր ստանալու իրավունքի երաշխիքների մասին նշվել է նաև Պաշտպանի աշխատակազմում մշակված «Ինչպե՞ս ստանալ Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը՝ գորակոչի խնդիրներով» ուղեցույցում<sup>453</sup>:

---

<sup>453</sup> Տե՛ս [http://www.pashtpan.am/images/FLYER\\_print\\_FINAL\\_-\\_02.08.2018.pdf](http://www.pashtpan.am/images/FLYER_print_FINAL_-_02.08.2018.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):



#### ԳԼՈՒԽ 4. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՁՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

Կրթության իրավունքը՝ որպես անձի հիմնական իրավունք, ամրագրված է միջազգային և ներպետական մի շարք իրավական փաստաթղթերում և այդ իրավունքի երաշխավորումը չպետք է հակադրվի պետության պարտականությանը մասնակցելու սահմանադրական պարտականության հետ:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 26-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք կրթության իրավունք ունի: Կրթությունը, առնվազն տարրական և հանրակրթական փուլերում, պետք է անվճար լինի: Տարրական կրթությունը պետք է պարտադիր լինի: Տեխնիկական և մասնագիտական կրթությունը պետք է հանրամատչելի լինի, իսկ բարձրագույն կրթությունը, ընդունակություններին համապատասխան, հավասարապես մատչելի բոլորի համար:

Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետք է ապահովվի երեխաների և երիտասարդների՝ տարրական և միջնակարգ դպրոցներում անվճար կրթությունը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 38-րդ հոդվածում նույնպես ամրագրված է անձի կրթության իրավունքը:

Ուստի, զինվորական ծառայության կազմակերպման ընթացքում ՀՀ օրենսդիր և գործադիր իշխանությունները պետք է հաշվի առնեն քաղաքացու կրթություն ստանալու իրավունքը: Այլ կերպ ասած զինվորական ծառայությունը չպետք է պատճառ հանդիսանա քաղաքացուն կրթություն ստանալու իրավունքից զրկելու համար:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանվել է կրթություն ստանալու կամ շարունակելու համար զինապարտ քաղաքացիների տարկետման իրավունքը: Ըստ նշված հոդվածի մեկնաբանության՝ զինապարտ քաղաքացին կրթությունը շարունակելու համար տարկետում կարող է ստանալ հետևյալ դեպքերում.

1) Պաշտպանություն նախարարության հետ քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու դեպքում,

2) հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կրթական ծրագրերով սովորելու դեպքում մինչև 19-ը տարեկանը լրանալը (դրանից հետո կառավարության որոշմամբ ևս մեկ տարկետում կարող է ստանալ),

3) գիտության, կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունենալու դեպքում:

Պաշտպանի աշխատակազմում 2018 թվականին խնդիրներ են բացահայտվել կրթությունը շարունակելու համար տարկետում ստանալու իրավունքի հետ կապված: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ չնայած այն հանգամանքին, որ միջին մասնագիտական կրթությունը նույնպես ՀՀ-ում համարվում է պարտադիր կրթության տեսակ՝ այնուամենայնիվ, դրա համար տարկետում չի տրամադրվում:

Այսպես, «Կրթության մասին» ՀՀ օրենքի «Հանրակրթությունը» վերտառությամբ 18-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում տասներկուամյա միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ **միջին մասնագիտական կրթությունը պարտադիր է** մինչև սովորողի 19 տարին լրանալը, եթե այդ իրավունքը չի իրացվել ավելի վաղ: Մինչդեռ, «Զինվորական ծառայության և զինծառայողի

կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է միայն Հայաստանի Հանրապետությունում հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կրթական ծրագրերով սովորողին: **Քաղաքացուն տարկետում տրվում է մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան նրա 19 տարին լրանալու օրը:**

Արդյունքում, «Կրթության մասին» ՀՀ օրենքի «Հանրակրթությունը» վերտառությամբ 18-րդ հոդվածում ուղղակիորեն չի նշվում, որ միջին մասնագիտական կրթությունը համարվում է հանրակրթություն, սակայն այն համարվում է պարտադիր:

Ըստ Պաշտպանության նախարարության՝ խնդիրը կարգավորելու նպատակով մշակվում է օրենքի նախագիծ, որով միջին մասնագիտական կրթության համար նույնպես կտրամադրվի տարկետում:

Պետք է նշել, որ 2019 թվականի մարտի 29-ի դրությամբ նման նախագիծ ընդունված չի եղել:

Միաժամանակ, կարծում ենք՝ նույնիսկ գործող իրավակարգավորումների պարագայում հնարավոր է օրենսդրական նորմերի համադիր վերլուծության և մեկնաբանության հիման վրա մասնագիտական կրթությունն ստացող քաղաքացիներին տրամադրել տարկետում:

*Հետևաբար, առաջարկվում է՝*

*1) միջոցներ ձեռնարկել միջին մասնագիտական կրթությունն ստացող քաղաքացիների տարկետման իրավունքի վերաբերյալ օրենսդրական փոփոխության նախագիծը սեղմ ժամկետում Ազգային ժողով ներկայացնելու ուղղությամբ,*

*2) մինչև վերը նշված օրենսդրական փոփոխությունը մասնագիտական կրթությունն ստացող քաղաքացիներին տրամադրել տարկետում:*

2018 թվականի ընթացքում կրթությունը շարունակելու համար տարկետում ստանալու իրավունքն ապահովելու նպատակով Պաշտպանին հասցեագրվել են նաև այլ բողոքներ, որոնցում բարձրացված հարցերը լուծում են ստացել:

Օրինակ, Պաշտպանին հասցեագրած բողոքով քաղաքացին տեղեկացրել է, որ զորակոչիկ որդին, ֆիզիկայի բակալավրի կրթական ծրագրով սովորելու համար ընդունվել է Յյուրիխի տեխնիկական բարձրագույն դպրոց: Այնուհետև դիմել է գիտության և կրթության բնագավառում նշանակալի նվաճումներ ունենալու կապակցությամբ պարտադիր զինվորական ծառայության **զորակոչից տարկետում տրամադրելու խնդրանքով, ներկայացրել ուսման և կացության համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրների վերաբերյալ փաստաթղթեր:** Սակայն, բանավոր տեղեկացվել է, որ զորակոչիկին չի կարող տրամադրվել տարկետում, քանի որ չունի ֆինանսական աղբյուրներ (scholarship):

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 26-ի թիվ 451-Ն որոշմամբ հաստատված «Գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգի և պայմանների» 9.1-րդ կետի համաձայն՝ գերակայություն ճանաչված յուրաքանչյուր ոլորտի մասնագիտություններով նշանակալի նվաճում է համարվում քաղաքացու՝ աշխարհի լավագույն բարձրագույն ուսումնական հաստատությունների ակադեմիական վարկանիշավորման <http://www.shanghai ranking.com/#> կայքի տվյալ տարվա ցանկերի առաջին հինգ տասնյակում ընդգրկված հաստատություններ բակալավրի (դիպլոմավորված մասնագետի, ինտեգրացված), մագիստրատուրայի և ասպիրանտուրայի կրթական ծրագրերով սովորելու կամ դիմորդ հանդիսանալու հանգամանքը՝ ուսման և կացության

համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրների (scholarship) վերաբերյալ փաստաթղթերի առկայությամբ:

**Ուսման և կացության համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրներին վերաբերող փաստաթուղթ կարող է հանդիսանալ ցանկացած տեղեկանք կամ այլ փաստաթուղթ, որը հիմնավորում է դիմողի ուսման և կացության ծախսերը ժամանակին և պատշաճ վճարելու իրական հնարավորությունը:**

Բողոքի քննարկման արդյունքում գորակոչիկին կառավարության որոշմամբ տրվել է տարկետում մինչև ուսումնառության ավարտը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած մեկ այլ՝ խմբային բողոքով 5 գորակոչիկներ տեղեկացրել են, որ գիտության և կրթության բնագավառներում գործունեության համար պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում ստանալու նպատակով դիմել են ՀՀ կրթության և գիտության նախարարությանը, մասնակցել հանձնաժողովի կողմից իրականացված հարցազրույցներին: Ըստ քաղաքացիների՝ հանձնաժողովի գործունեությունն իրականացվել է մի շարք թերություններով: Մասնավորապես՝ առկա չեն եղել հստակ չափանիշներ, որոնց հիման վրա գնահատվել են մոտիվացիոն նամակները, հաշվի չեն առնվել գիտական և գիտատեխնիկական գործունեության կոնկրետ բնագավառի երկու ներկայացուցչի երաշխավորագրերը, սահմանված ժամկետը բավարար չի եղել անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու և պատրաստած հոդվածները տպագրելու համար, որոշ դեպքերում հանձնաժողովի կողմից չեն ընդունվել արտասահմանյան ամսագրերում տպագրված հոդվածները, հանձնաժողովը որոշ դիմորդների փաստաթղթերն ընդունել է դիմում ներկայացնելու համար սահմանված վերջնաժամկետից հետո, իսկ գիտական միջոցառումների կազմակերպիչների կողմից անհրաժեշտ տեղեկանքներն ուշ տրամադրելու պատճառով՝ սահմանված ժամկետից հետո ներկայացված փաստաթղթերը չեն ընդունվել, հաշվի չեն առնվել մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ընդունելության մրցույթների արդյունքները, հարցազրույցի հրավիրվել են միայն **այն դիմորդները, ովքեր, անկախ հարցազրույցի արդյունքից, ապահովել են հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն ստանալու համար բավարար միավոր:**

Բողոքի քննարկման արդյունքում վերանայվել են մի շարք գորակոչիկների գիտության և կրթության բնագավառներում ունեցած նշանակալի նվաճումների ցուցանիշները: Ըստ Կրթության և գիտության նախարարության՝ Կառավարության 2018 թվականի հուլիսի 26-ի նիստում քննարկվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի թիվ 796-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծը, որով ներկայացված անվանացանկում պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում իրավունք ստանալու համար ընդգրկվել են նաև Պաշտպանին բողոք ներկայացրած գորակոչիկները<sup>454</sup>:

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 451-Ն որոշման «Գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները» վերստառությամբ հավելվածի 2-րդ կետով սահմանվում է, որ քաղաքացուն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տրվում է ՀՀ կառավարության որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողովի կայացրած դրական եզրակացությունների հիման վրա: Միննույն ժամանակ, նույն մասով սահմանվում է նաև, որ Հանձնաժողովը ՀՀ

<sup>454</sup> Բողոք ներկայացրած հինգ անձանցից միայն մեկին չի տրվել տարկետում, քանի որ վերջինս չի համապատասխանել ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 451-ն որոշմամբ սահմանված պահանջներին:

կրթության և գիտության նախարարին կից խորհրդակցական մարմին է և նրա տված եզրակացություններն ունեն խորհրդատվական բնույթ:

Այսպես, մի դեպքում սահմանվում է, որ Կառավարության կողմից տարկետում տրվելու է Հանձնաժողովի կողմից տրված դրական եզրակացության հիման վրա, իսկ մյուս դեպքում նշվում է Հանձնաժողովի խորհրդակցական բնույթ ունենալու, այսինքն, եզրակացության ոչ պարտադիր լինելու վերաբերյալ:

Ներկայացված դրույթների համադրման արդյունքում, սակայն, հստակորեն չի երևում, թե Կառավարությունն արդյոք կաշկանդված է Հանձնաժողովի կողմից տրված դրական եզրակացությամբ, թե ելնելով վերջինիս խորհրդատվական բնույթից՝ Կառավարությունը կարող է չկայացնել տարկետում տրամադրելու որոշում՝ չնայած Հանձնաժողովի դրական եզրակացությանը: Մյուս կողմից, Հանձնաժողովի կողմից բացասական եզրակացություն տալու դեպքում, արդյոք Կառավարությունը կարող է, այնուամենայնիվ, կայացնել տարկետում տրամադրելու մասին որոշում, թե՛ ոչ: Բացի այդ սահմանված չեն այն դեպքերը, երբ հանձնաժողովի անդամը չի կարող մասնակցել հանձնաժողովի նիստին (օրինակ՝ դիմորդն իր ընտանիքի անդամն է կամ աշակերտը):

Բացի այդ, մի շարք դեպքերում սահմանված են վարչական վարույթի առանձնահատկություններ, որոնք դուրս են կառավարության որոշմամբ սահմանվող հարցերի շրջանակից: Օրինակ՝ նշվում է, որ զինվորական ծառայության գորակոչից տարկետում ստանալու նպատակով քաղաքացին կարող է մինչև տվյալ տարվա մայիսի 1-ը (իսկ 2018 թվականի համար՝ մինչև մայիսի 15-ը) կամ նոյեմբերի 1-ը դիմում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության բնագավառի պետական լիազոր մարմին: Նշվում է նաև, որ Հանձնաժողովի նիստին կարող են մասնակցել նաև դիմում ներկայացրած քաղաքացին կամ նրա ծնողները կամ նրա կողմից նշված այլ անձինք, սակայն յուրաքանչյուր քաղաքացու մասով՝ մեկ անձից ոչ ավելի:

Կարևոր է նկատի ունենալ, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով: **Հետևաբար, կառավարության որոշմամբ չէին կարող սահմանվել առանձին վարչական վարույթի առանձնահատկություններ:**

Ինչ վերաբերում է, այն հարցին, որ Հանձնաժողովի նիստին կարող է մասնակցել մեկից ոչ ավելի անձ, ապա նման կարգավորումն իրավաչափ համարվել չի կարող՝ հատկապես նկատի ունենալով, որ **վարչական վարույթի ընթացքում անձը չպետք է կաշկանդված լինի իր ներկայացուցիչների քանակով:** Սա բխում է նաև ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածում ամրագրված՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքից:

Հատկանշական է, որ վերը նշված խնդիրների կարգավորման նպատակով դեռևս նշված կառավարության որոշման նախագծի քննարկման շրջանակներում Պաշտպանի աշխատակազմի կողմից ներկայացվել էին նկատառումներ, որոնք սակայն դեռևս չեն իրացվել:

Մեկ այլ դեպքում՝ քաղաքացին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքով տեղեկացրել է, որ Կառավարության որոշմամբ կրթության և գիտության բնագավառում նշանակալի նվաճումներ ունենալու կապակցությամբ որդուն տրվել է տարկետում, սակայն գորակոչվել է ՀՀ զինված ուժեր:

Բողոքի քննարկման արդյունքում Պաշտպանության նախարարի համապատասխան հրամանը չեղարկվել է, և անձն արձակվել է պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից: Այդ մասին եղել է նաև հրապարակային հայտարարություն<sup>455</sup>:

*Հետևաբար, առաջարկվում է՝*

<sup>455</sup> Տե՛ս <http://www.pashtpan.am/media/54651.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

1. հստակեցնել գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու վերաբերյալ եզրակացություն սովոր հանձնաժողովի լիազորությունների շրջանակը,

2. սահմանել այն դեպքերը, երբ հանձնաժողովի անդամը չի կարող մասնակցել հանձնաժողովի նիստին,

3. քաղաքացիների դիմումների ներկայացման և քննարկման առանձնահատկություններ սահմանող դրույթները հանել վերը նշված կառավարության որոշումից և անհրաժեշտության դեպքում՝ կարգավորել օրենքով,

4. վերացնել Հանձնաժողովի նիստերին յուրաքանչյուր քաղաքացու կողմից մեկ անձ ներկա գտնվելու սահմանափակումը,

5. կրթության և գիտության բնագավառում նշանակալի նվաճումներ ունենալու կապակցությամբ տարկետում ստացած քաղաքացիների տվյալներն անմիջապես փոխանցել տարածքային զինվորական կոմիսարիատներ՝ նրանց զորակոչը կանխելու նպատակով:

**ԳԼՈՒԽ 5. ՊԱՏՇԱՃ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ  
ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

***1. Առողջության պահպանումը զինվորական ծառայության ընթացքում***

1966 թվականի դեկտեմբերի 16-ի ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածի համաձայն՝ Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի՝ ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակից օգտվելու իրավունքը: Դաշնագրի մասնակից պետությունների կողմից այս իրավունքի լիարժեք իրականացումն ապահովելու նպատակով ձեռնարկվող միջոցներն ընդգրկում են միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են այնպիսի պայմանների ստեղծման համար, որոնք հիվանդության ղեկավարում բոլորի համար կապահովեն բժշկական օգնություն և բժշկական խնամք:

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի՝ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 70-րդ կետի համաձայն՝ զինծառայողները պետք է օգտվեն առողջապահական ծառայությունների հասանելիությունից և բժշկական օգնություն ստանալու իրավունքից:

Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուրի, այդ թվում՝ զինծառայողների առողջության պահպանման իրավունքը ենթակա է լիարժեք պաշտպանության: Այդ իրավունքի երաշխավորման հիմքերն ամրագրված են ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածում, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք: Օրենքը սահմանում է անվճար հիմնական բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգը:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, տարիքից, առողջական վիճակից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, Հայաստանի Հանրապետությունում ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալ անվճար կամ արտոնյալ պայմաններով՝ պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում: Նույն օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ զինծառայողները և զորակոչիկներն իրավունք ունեն ստանալ բժշկական օգնություն և սպասարկում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի համաձայն՝ զինծառայողները, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ապահովվում են որակյալ բժշկական օգնությամբ՝ համապատասխան գերատեսչական ռազմաբժշկական հաստատություններում:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ պետք է փաստել, որ պատշաճ բժշկական օգնություն ստանալու իրավունքն ամրագրող միջազգային իրավական կարգավորումների և ներպետական օրենսդրության ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ զինծառայողների պատշաճ բժշկական օգնություն ստանալու իրավունքի իրականացման համար պետությունը պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք ուղղված են զինծառայողների առողջության պահպանմանը:

2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների մի զգալի մաս առնչվել է պատշաճ բժշկական հետազոտություն և բուժում իրականացնելու խնդիրներին:

Բողոքների քննարկման ընթացքում գրավոր պարզաբանումներ են պահանջվել ՀՀ պաշտպանության նախարարությունից, իրականացվել են այցեր զինվորական հոսպիտալներ, Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները ներկա են գտնվել Պաշտպանության նախարարության Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի նիստերին:

Բողոքներով արձանագրված յուրաքանչյուր դեպքում պարտադիր է ստուգել զինապարտ քաղաքացու փաստացի առողջական վիճակը և հավաստիանալ նրա մոտ առողջական խնդրի առկայության կամ բացակայության մասին:

2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրության և քննարկման արդյունքում արձանագրվել են դեպքեր, երբ պարտադիր ժամկետային զինճառայողին պատշաճ բժշկական օգնություն չի տրամադրվել:

Օրինակ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքով զինճառայողի ծնողը տեղեկացրել է, որ որդու ձախ ազդրի շրջանում առկա է ոսկրի գերած, որը հանգեցնում է քայքայի խանգարման:

Բողոքի քննարկման արդյունքում զինճառայողն անցել է համապատասխան բժշկական հետազոտություններ, և իրականացվել է նրա ձախ ազդրի օստեոմայի վիրահատական բուժումը:

Ըստ Պաշտպանության նախարարության՝ 2018 թվականի ընթացքում զինճառայողներին պատշաճ բժշկական օգնություն չտրամադրելու վերաբերյալ ստացվել է 715 բողոք՝ 523 զինճառայողի վերաբերյալ: Ստացված բողոքներով բոլոր զինճառայողները հետազոտվել են, որի արդյունքում 217 զինճառայող ստացել է բուժում ստացիոնար կամ ամբուլատոր պայմաններում, իսկ մնացած 276 զինճառայողները հետազոտվել են, սակայն բուժման կարիք չեն ունեցել:

2018 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների քննարկման արդյունքում *արձանագրվել են նաև մի շարք դեպքեր*, երբ պարտադիր ժամկետային զինճառայողին ցուցվել է պլանային վիրահատություն, սակայն վիրահատությունը չի իրականացվել կամ իրականացվել է ձգձգումներով:

Օրինակ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմումով զինճառայողի ծնողը տեղեկացրել է, որ շուրջ 4 ամիս առաջ որդին ստացիոնար բուժում է ստացել զինվորական հոսպիտալում, որտեղ, ի թիվս այլ հիվանդությունների, նրա մոտ ախտորոշվել է նաև քթի միջնապատի ծովածություն, և առաջարկվել է երեք ամսվա ընթացքում իրականացնել վիրահատություն: Բողոք ներկայացրած անձն իր դժգոհությունն է հայտնել առ այն, որ նշանակված քթի միջնապատի վիրահատությունը դեռևս չի իրականացվել:

Բողոքի քննարկման արդյունքում համապատասխան հետազոտություններից հետո զինճառայողի քթի միջնապատի վիրահատությունն իրականացվել է:

Այս կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, մատնանշելով նաև ձևավորված կայուն պրակտիկան, նշել է, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածը պետությանը պարտավորեցնում է պաշտպանել անձանց ֆիզիկական անվտանգությունը, որոնք հայտնվում են անօգնական վիճակում իշխանությունների հսկողության ներքո գտնվելու հետևանքով, ինչպիսիք են, օրինակ, ազատությունից զրկված անձինք կամ գորակոչված զինճառայողները: Այդուհանդերձ, հաշվի առնելով Կոնվենցիայի 3-րդ հոդվածի բացարձակ բնույթը, որի պահանջները թույլ չեն տալիս որևէ բացառություն, պետության այս

պարտականությունը չի կարելի ասել, թե ունի որոշակի սահմանափակումներ զինվորական կամ ուղղիչ հաստատություններում: Այդպես է նաև այն իրավիճակներում, երբ անձի ֆիզիկական անվտանգությունը մեծամասամբ կախված է իշխանությունների գործողություններից, որոնք օրենքի համաձայն պարտավոր են միջոցներ ձեռնարկել իրենց իրավասության սահմաններում, ինչը կարող է անհրաժեշտ լինել կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելուց խուսափելու համար<sup>456</sup>:

Ստացվում է, որ թե՛ ՀՀ Սահմանադրության, և թե՛ ոլորտին առնչվող միջազգային փաստաթղթերի և, հատկապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ պետության հոգածության ներքո գտնվելու հետևանքով պարտադիր զինճառայողները և ազատությունից զրկված անձինք օգտվում են պատշաճ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքից: Հետևաբար, ազատությունից զրկված անձանց պատշաճ բժշկական օգնություն ստանալու վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի եզրահանգումները վերաբերելի են նաև պարտադիր ժամկետային զինճառայողներին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր վճիռներում նշել է, որ միայն այն հանգամանքը, որ բժիշկը գննել է ազատությունից զրկված անձին (Եվրոպական դատարանի՝ վերը նշված մոտեցման համաձայն՝ նաև պարտադիր ժամկետային զինճառայողին) և համապատասխան բուժում նշանակել, չի կարող ինքնաբերաբար անձին պատշաճ բժշկական օգնություն տրամադրված լինելու մասին եզրահանգման հանգեցնել: Իշխանությունները պարտավոր են ապահովել ոչ միայն այն, որ բժիշկն այցելի և լսի հիվանդին, այլ պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն նշանակված բուժումը փաստացի իրականացվելու ուղղությամբ<sup>457</sup>:

**Ուստի, անհրաժեշտ է արձանագրել, որ պարտադիր ժամկետային զինճառայողները զինվորական ծառայության ընթացքում պետք է ստանան պատշաճ բժշկական օգնություն և սպասարկում: Միայն այն հանգամանքը, որ զինվորական ծառայության ընթացքում պարտադիր ժամկետային զինճառայողը գննվել է բժշկի կողմից, և գնման արդյունքում համապատասխան բուժում է նշանակել, չի կարող բավարար համարվել:**

Պլանային վիրահատությունների ձգձգումը կարող է պայմանավորված լինել նաև այն հանգամանքով, որ առկա չէ պլանային վիրահատությունների ժամանակացույց, ինչպես նաև զինճառայողների հաշվառման կարգ: Նշված խնդիրը վեր է հանվել 2018 թվականի ընթացքում գորամասեր կատարված այցերի արդյունքում:

Ըստ Պաշտպանության նախարարության՝ բժշկական գնումների և դիսպանսերիզացիայի արդյունքում հայտնաբերված այն զինճառայողները, ովքեր ունեն պլանային վիրահատության կարիք, ցուցակագրվում են գորամասային բժշկական ծառայության կողմից: Ցուցակագրումը կազմակերպվում է՝ համագործակցելով կայազորային ռազմաբժշկական հաստատությունների հետ: Պլանային վիրահատության կարիք ունեցող ցուցակագրված զինճառայողների բուժումն իրականացվում է՝ հաշվի առնելով բժշկական ցուցումները, գորակոչը և այլն: Պաշտպանության նախարարությունը նշել է, որ ելնելով զինված ուժերի կողմից իրականացվող գործառնություններից՝ օբյեկտիվ պատճառներով լինում են դեպքեր, երբ նախապես պլանավորված բուժման ժամկետները չեն ապահայանվում:

Միաժամանակ, պետք է նշել, որ գորամասեր կատարված այցերի ընթացքում բժիշկները տեղեկացրել են, որ նախորդ տարիների համեմատությամբ ներկայում դեղորայքն առավել

<sup>456</sup> Տե՛ս, օրինակ, *Վասիլյևն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2010 թվականի մարտի 17-ի վճիռը, գանգատ թիվ 32704/04, 115 կետ):

<sup>457</sup> Տե՛ս, *Հումմատովն ընդդեմ Ադրբեջանի* գործով 2008 թվականի փետրվարի 29-ի վճիռը, գանգատներ թիվ 9852/03 և 13413/04, 116 կետ):



շատ քանակությամբ է տրամադրվում, սակայն դեռևս առկա է որոշ դեղորայքի պակաս, հիմնականում՝ ցավազրկող և ջերմիջեցնող: Ի տարբերություն նախորդ տարիներին կատարված այցերի՝ գորամասերի դեղատներում ժամկետանց դեղորայք գրեթե չի հայտնաբերվել:

Ըստ Պաշտպանության նախարարության՝ 2018 թվականի երկրորդ եռամսյակից սկսած և ամբողջ տարվա ընթացքում ՀՀ զինված ուժերի գորամասերը ապահովվել են համապատասխան դեղերի պահանջվող քանակներով, իսկ բուժկետերը դեղերով չապահովելու դեպքեր չեն արձանագրվել: Թեժ գծով ստացված ահազանգերը չեն հաստատվել կամ լրացուցիչ ճշտվել են բուժօժանոթությունների հետ և կապված են եղել տեխնիկական խնդիրների հետ (պահանջվող դեղը հակացուցված է եղել տվյալ անձին, տրամադրված է եղել այլ անվանմամբ փոխարինող դեղամիջոց և այլն):

*Հետևաբար, անհրաժեշտ է՝*

- 1. առողջական վիճակի վերաբերյալ զանգատի դեպքում անհապաղ իրականացնել զինծառայողի պատշաճ հետազոտությունը և բուժումը,*
- 2. միջոցներ ձեռնարկել, որպեսզի զինվորական ծառայության ընթացքում զինծառայողի նկատմամբ նշանակված բուժումը փաստացի իրականացվի,*
- 3. մշակել պլանային վիրահատությունների ժամանակացույց, ինչպես նաև զինծառայողների հաշվառման կարգ,*
- 4. միջոցներ ձեռնարկել անհրաժեշտ դեղորայքը (հատկապես՝ ցավազրկող և ջերմիջեցնող) գորամասերին ժամանակին տրամադրելու ուղղությամբ:*

## ***2. Զինվորական ծառայության ավարտից հետո բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք***

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ երկարամյա ծառայության կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողները, զինվորական ծառայության ընթացքում ձեռք բերած հիվանդության կամ ստացած խեղման կամ վնասվածքի պատճառով զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամները բժշկական օգնությամբ ապահովվում են օրենքով սահմանված կարգով:

Պաշտպանին հասցեագրած բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ որոշակի դեպքերում ծառայության ընթացքում հիվանդություն ձեռքբերած նախկին զինծառայողները չեն օգտվում անվճար բժշկական սպասարկման իրավունքից: Մասնավորապես

1) Պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած այն քաղաքացիները, ովքեր զինվորական ծառայության ընթացքում ձեռք են բերել հիվանդություն, որը հիմք չի հանդիսացել նրանց ոչ պիտանի ճանաչելու համար, սակայն զորացրվել են ժամկետը լրանալու կապակցությամբ, չեն օգտվում անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունքից:

2) այն պայմանագրային զինծառայողները, ովքեր զինվորական ծառայությունից արձակվել են պահեստազոր ոչ թե երկարամյա ծառայության կամ ստացած խեղման, վնասվածքի, հիվանդության պատճառով, այլ կադրերի տրամադրության տակ գտնվելու ժամկետը լրանալու կապակցությամբ, չեն օգտվում անվճար բժշկական օգնությունից անգամ այն դեպքում, երբ հիվանդությունը ձեռք են բերել ծառայության ընթացքում:

Նշված խնդիրը բարձրացվել է նաև Պաշտպանի 2017 թվականի տարեկան հաղորդմամբ, որի հիման վրա առաջարկվել է սահմանել, որ պարտադիր ժամկետային

զինձառայողները ժամկետը լրանալու կապակցությամբ զինվորական ծառայությունից արձակվելու դեպքում իրավունք ունեն պահանջել հետազոտություն անցնել զորամասի բուժկետում կամ զինվորական հոսպիտալում: Բուժման կարիք պահանջող հիվանդության հայտնաբերման դեպքում նրանց տրվում է ուղեգիր անվճար բուժում ստանալու համար: Առաջարկվել է ամրագրել նաև, որ եթե զինվորական ծառայության ժամկետում չի իրականացվում պլանային վիրահատության կարիք ունեցող զինձառայողների վիրահատությունը, ապա նրանց տրամադրում է ուղեգիր անվճար հիմունքներով այն իրականացնելու համար:

Մինչդեռ, նշված խնդիրը դեռևս լուծում չի ստացել, ավելին՝ օրենսդրական փոփոխությունների արդյունքում ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման 81-րդ կետով նույնությամբ ամրագրվել է ՀՀ Պաշտպանության նախարարի 2013 թվականի ապրիլի 8-ի թիվ 410-Ն հրամանի մեջ 2016 թվականին լրացված՝ 72.1-րդ կետի կարգավորումը, որի համաձայն՝ առողջական վիճակի վերաբերյալ գանգատի առկայության դեպքում բժշկական զննության ենթակա են նաև պարտադիր զինվորական ծառայության ժամկետը լրանալու կապակցությամբ զինվորական ծառայությունից արձակվող ժամկետային զինձառայողները: Այս կարգավորումը բավարար չէ, քանի որ անորոշ է, թե այդ հետազոտությունից հետո ինչ ընթացք է տրվում հայտնաբերված հիվանդությունը բուժելու համար, կամ ինչու պայմանագրային զինձառայողները չպետք է օգտվեն այդ իրավունքից:

**Վերը նշված խնդրի վերաբերյալ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկի քննարկման արդյունքում Պաշտպանը կայացրել է մարդու իրավունքների խախտման առկայության մասին որոշում, որից հետո զորացրված նախկին զինձառայողին տրամադրվել է անվճար բժշկական օգնություն և սպասարկում:**

*Ուստի, առաջարկվում է՝*

1. *Կառավարության որոշմամբ սահմանել, որ ժամկետը լրանալու կապակցությամբ զինվորական ծառայությունից արձակվելիս պարտադիր ժամկետային զինձառայողների մոտ բուժման կարիք պահանջող հիվանդության հայտնաբերման դեպքում նրանց տրամադրել անվճար բժշկական օգնություն և սպասարկում կամ այդ նպատակով քաղաքացիները պետք է ուղեգրվեն այլ բժշկական հաստատություններ,*

2. *սահմանել, որ այն դեպքում, երբ զինվորական ծառայության ժամկետում չեն լուծվում պլանային բուժման կամ վիրահատության կարիք ունեցող զինձառայողների առողջական խնդիրները, ապա ցուցված բուժումը կամ վիրահատությունն անվճար հիմունքներով պետք է իրականացվի զինվորական ծառայությունից արձակվելուց հետո, կամ այդ նպատակով քաղաքացիները պետք է ուղեգրվեն այլ բժշկական հաստատություններ,*

3. *համանման կարգավորումներ սահմանել նաև պայմանագրային զինձառայողների համար:*

**3. *Զինվորական ծառայության ընթացքում առողջական վիճակին հակացուցված պայմանները պահպանելու իրավունք***

2018 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում առողջական վիճակին հակացուցված պայմանները չպահպանելու վերաբերյալ:

Օրինակ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքով զինձառայողի ծնողը տեղեկացրել է, որ որդին սահմանափակումով պիտանի է ճանաչվել զինվորական ծառայությանը՝ համաձայն ՀՀ պաշտպանության նախարարի 2013 թվականի ապրիլի 8-ի թիվ 410-Ն հրամանի «Հիվանդությունների և ֆիզիկական թերությունների ցանկի» 11-րդ և 13-

րդ հողվածների «գ» կետերի 1-ին սյունակի պահանջների և գորակոչվել ՀՀ զինված ուժեր: Նշվել է, որ զինվորական ծառայության սահմանափակումները չեն պահպանվում:

ՀՀ պաշտպանության նախարարի 2013 թվականի ապրիլի 8-ի թիվ 410-Ն հրամանի 2-րդ հավելվածի 11-րդ հողվածի համաձայն՝ 1-ին հավելվածի 11-րդ հողվածի «գ» կետով պիտանի ճանաչվելու դեպքում, սահմանափակվում է զինծառայողի 1 կմ և ավելի վազքը, ինչպես նաև ազատվում են 3000 մետր դիմացկունության վազքից:

Ըստ Պաշտպանության նախարարության՝ պարտադիր ժամկետային զինծառայողը պաշտոնի է նշանակվել՝ հաշվի առնելով զինվորական ծառայությանը հակացուցված պայմանները: Նշվել է, որ վերջինս ազատված է պտտաձողի վրա վարժություններ կատարելուց, 1000 և 3000 մետր վազքերից և արգելագոտու հաղթահարման վարժությունից:

Արդյունքում, բողոք ներկայացրած անձը տեղեկացրել է, որ որդուն հակացուցված զինվորական ծառայության պայմանները սկսել են պահպանվել:

Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2018 թվականի ընթացքում ստացվել են շուրջ 40 գրավոր և բանավոր բողոքներ, որոնցում բարձրացված հարցերը վերաբերել են նաև ծառայության ընթացքում առողջական վիճակի պատճառով կիրառված սահմանափակումները չպահպանելուն:

Այս կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ պետությունը պարտավոր է ապահովել, որպեսզի անձը զինվորական ծառայությունն անցնի այնպիսի պայմաններում, որոնք համատեղելի են նրա մարդկային արժանապատվությունը հարգելու հետ, իսկ զինվորական վարժանքների ընթացակարգը և մեթոդները չեն պատճառում նրան ֆիզիկական տառապանք կամ չեն անցնում զինվորական կարգուկանոնի հետ կապված անխուսափելի դժվարությունների չափն ու սահմանը, և որ նման ծառայության պրակտիկ պահանջների հետ մեկտեղ նրա առողջությունը և ինքնազգացողությունը համարժեքորեն պաշտպանված են՝ այլնի հետ մեկտեղ տրամադրելով նրան պահանջվող բժշկական օգնություն: Պետության առաջնային պարտականությունն է նվազագույնի հասցնել առողջությանը սպառնացող ռիսկը, որը կարող է առաջանալ ոչ միայն զինվորական գործողությունների և օպերացիաների բնույթից, այլ նաև մարդկային տարրի պատճառով, որը գործում է զինվորական ծառայության գորակոչելու դեպքում: Նման կանոնները պետք է պահանջեն պրակտիկ միջոցների իրականացում, որոնք նպատակ ունեն արդյունավետորեն պաշտպանել գորակոչվածների զինվորական կյանքին բնորոշ վտանգներից, ապահովեն պատշաճ ընթացակարգեր՝ պարզելու համար տարբեր մակարդակների ծառայողների կողմից թույլ տրվող բացթողումները և սխալները: Եթե նույնիսկ վիճարկվող ֆիզիկական վարժանքը կարող է լինել զինվորական կարգապահության մասը, այն պետք է համապատասխանի Կոնվենցիայի 3-րդ հողվածին, չպետք է անցնի այն սահմանը, երբ վտանգի տակ է դրվում զինակոչիկների առողջությունը և ինքնազգացողությունը կամ նվաստացնի նրանց արժանապատվությունը<sup>458</sup>:

*Հետևաբար, անհրաժեշտ է խստացնել հսկողությունը զինվորական ծառայության ընթացքում պարտադիր ժամկետային զինծառայողների առողջական վիճակին հակացուցված պայմանները հետևողականորեն պահպանելու նկատմամբ:*

<sup>458</sup> Տե՛ս, *Չեմբերն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2008 թվականի դեկտեմբերի 1-ի վճիռը, գանգատ թիվ 7188/03, 50-րդ և 52-րդ կետեր:

**ԳԼՈՒԽ 6. ԶԻՆԱՊԱՐՏ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ  
ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՁԱԿՎԵԼՈՒ ԳՈՐԾՆԹԱՅՈՒՄ**

**1. Պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու իրավունքը**

Հանրային ծառայության անցնելու իրավունքը ժողովրդավարական և իրավական պետությունում հանդիսանում է քաղաքացու կարևոր քաղաքական իրավունքներից մեկը, որը ամրագրում է ստացել միջազգային և ներպետական իրավական ակտերում և Հայաստանի Հանրապետությունում ենթակա է լիարժեք պաշտպանության:

Այսպես, ՄԱԿ-ի 1948 թվականի դեկտեմբերի 12-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր երկրում պետական ծառայության անցնելու հավասար հնարավորության իրավունք:

1966 թվականի դեկտեմբերի 16-ի Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ուժի մեջ է մտել 1976 թվականի մարտի 3-ին) 25-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր քաղաքացի, առանց 2-րդ հոդվածում հիշատակվող որևէ խտրականության և անհիմն սահմանափակումների, պետք է իրավունք և հնարավորություն ունենա իր երկրում հավասարության ընդհանուր պայմաններով մտնել պետական ծառայություն:

«Զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի կողմից 2008 թվականին տպագրված ձեռնարկի՝ «Մարդու իրավունքների կարևորությունը զինված ուժերի անձնակազմի համար» գլխում (2-րդ գլուխ) նշված է, որ պայմանագրային հիմունքներով զինվորական ծառայության անցնող քաղաքացին՝ որպես հանրային ծառայության ընդունվող քաղաքացի, պետք է հնարավորություն ունենա օգտվելու հանրային ծառայության անցնող քաղաքացիների իրավունքներից<sup>459</sup>:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ զինված ուժերի անդամների մարդու իրավունքների մասին թիվ 1742 (2006) հանձնարարականի 2-րդ կետի համաձայն՝ զինված ուժերի անդամները համազգեստով քաղաքացիներ են, ովքեր, հաշվի առնելով զինվորական ծառայության սահմանափակումները, ունեն նույն իրավունքները և ազատությունները և դրանց պաշտպանության իրավունքը, ինչպես մյուս քաղաքացիները:

Հետևաբար, պայմանագրային հիմունքներով զինվորական ծառայության անցնող քաղաքացին՝ որպես հանրային ծառայության ընդունվող քաղաքացի, պետք է հնարավորություն ունենա օգտվելու հանրային ծառայության անցնող քաղաքացիների իրավունքներից:

Այսպիսով, զինվորական ծառայությունը հանդիսանում է հանրային ծառայության տեսակ, և պայմանագրային հիմունքներով զինվորական ծառայության անցնելու իրավունքը պաշտպանվում է ինչպես ազգային, այնպես էլ միջազգային իրավական ակտերով:

ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2018 թվականի ընթացքում պարտադիր ժամկետային զինծառայության ավարտից հետո պայմանագրային հիմունքներով ծառայության է անցել 622 պահեստազորային, որից 2-ը՝ բժիշկ: Ըստ Պաշտպանության նախարարության՝ 2018 թվականի ընթացքում զինվորական

<sup>459</sup> Ձեռնարկ զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին, <http://www.osce.org/hy/odihr/88572>

ծառայություն անցնող քաղաքացիների նկատմամբ խտրական վերաբերմունքի դրսևորման դեպքեր չեն արձանագրվել:

Մինչդեռ, 2018 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը բողոքներ է ստացել քաղաքացիներին զինվորական ծառայության ընդունելը մերժելու վերաբերյալ:

Օրինակ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքով քաղաքացին տեղեկացրել է, որ 2009-2017 թվականներին ծառայել է ՀՀ ոստիկանությունում: 2017 թվականին օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռով իր նկատմամբ նշանակվել է տուգանք, և ինքը ազատվել է ծառայությունից: 2018 թվականին դիմել է ՀՀ պաշտպանության նախարարություն՝ պայմանագրային զինվորական ծառայության անցնելու նպատակով, սակայն մերժում է ստացել:

Բողոքի ուսումնասիրությամբ պարզվել է, որ քաղաքացու հետ զինվորական ծառայություն անցնելու մասին պայմանագիր կնքելը նպատակահարմար չի համարվել ՀՀ ոստիկանությունից ազատման հիմքի պատճառով:

Ըստ Պաշտպանության նախարարության՝ քաղաքացուն ծառայության ընդունելու համար իրավական առումով խոչընդոտներ առկա չեն, սակայն հաշվի առնելով նրա վերաբերյալ Ոստիկանության տրամադրած ծառայողական բնութագիրը, ինչպես նաև դատվածություն ունենալու հանգամանքը (թեկուզև մարված)՝ զինված ուժերում նրան պայմանագրային զինվորական ծառայության ընդունելը նպատակահարմար չի համարվել:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ քաղաքացներն իրավունք ունեն անցնելու հանրային ծառայության՝ առանց որևէ խտրականության: «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ զինվորական ծառայության կազմակերպման սկզբունքներն են նաև զինծառայողների պատվի և արժանապատվության նկատմամբ հարգանքն ու խտրականության արգելումը:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով ամրագրված չէ քաղաքացիների հանրային ծառայության անցնելու իրավունքը, սակայն կոնվենցիայի 14-րդ հոդվածն ամրագրում է, որ Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից: Այդ է պատճառը, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային որոշումներում նշել է, որ 14-րդ հոդվածի ներքո հարց առաջանալու համար պետք է տարբերություն լինի համեմատաբար նույն իրավիճակում հայտնված անձանց նկատմամբ վերաբերմունքում: Նման տարբերությունը խտրական է, եթե այն չունի որևէ օբյեկտիվ և հիմնավոր արդարացում, այլ կերպ ասած՝ եթե դա չի հետապնդում օրինական նպատակ կամ եթե չկա համապատասխան հիմնավոր կապ կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև: Պայմանավորվող պետությունները կիրառում են հայեցողության լայն շրջանակ, երբ գնահատում են, թե արդյոք առկա են տարբերություններ, և եթե՝ այո, ապա ինչ չափով են դրանք այլ նման իրավիճակներում արդարացում վերաբերմունքի տարբերությունները<sup>460</sup>:

Այսպիսով, Եվրոպական դատարանը խտրական վերաբերմունք է տեսնում այն դեպքերում, երբ նույն իրավիճակում հայտնված անձանց նկատմամբ կիրառվում է տարբեր մոտեցում, սակայն այն չի հետապնդում օրինական նպատակ: Ավելին՝ Եվրոպական

<sup>460</sup> Տե՛ս, *Բուրդենն ընդդեմ Անգլիայի* գործով 2008 թվականի ապրիլի 29-ի վճիռը, գանգատ թիվ 13378/05, կետ 60:

դատարանը խնդրահարույց է դիտել միայն դատվածություն ունենալու հիմքով անձին աշխատանքի չընդունելը<sup>461</sup>:

Քննարկվող իրավիճակում քաղաքացուն նախկինում դատվածություն ունենալու պատճառով պայմանագրային ծառայության չընդունելը կարող է դիտվել խտրական վերաբերմունք, քանի որ այն օրինական նպատակ չի հետապնդում:

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի՝ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 77-րդ կետի համաձայն՝ իրենց աշխատանքային և ծառայողական կյանքի համատեքստում, ինչպես նաև զինված ուժերի հասանելիության առումով, զինծառայողները պետք է զերծ լինեն մարդու իրավունքների և ազատությունների հետ կապված ցանկացած հիմքով խտրականությունից, օրինակ՝ պայմանավորված սեռով, ռասայով, մաշկի գույնով, լեզվով կրոնով, քաղաքական կամ այլ համոզմունքներով, ազգային կամ սոցիալական ծագմամբ, ազգային փոքրամասնության պատկանելով, գույքային դրությամբ, ծննդով կամ այլ դրությամբ: Խտրականության բացառման սկզբունքը չի խախտվի, եթե համանման իրավիճակներում հայտնված անձանց միջև տարբերակումն ունենա օբյեկտիվ և ողջամիտ բացատրություն և հետապնդի իրավաչափ նպատակ, ինչպես օրինակ մարտական արդյունավետության ապահովումը, և եթե գործադրված միջոցները ողջամտորեն համաչափ են հետապնդվող նպատակին:

Քննարկելով խտրականության արգելքի սկզբունքը՝ ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ այդ սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության արգելքի սկզբունքի խախտում է այն տարբերակված մոտեցումը, որը գուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից (ՄԴՈ 881, 2010 թվականի մայիսի 4, 5-րդ կետ):

ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը դատվածություն ունեցող է համարվում մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դատվածությունը մարվելու կամ հանվելու պահը: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատվածությունը մարվում է՝ ազատազրկումից ավելի մեղմ պատժի դատապարտված անձանց նկատմամբ՝ նշանակված պատիժը կրելուց մեկ տարի անցնելուց հետո:

Հետևաբար, նշված դեպքում քաղաքացու դատվածությունը պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու համար դիմելու պահին մարված է եղել:

ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ դատվածությունը հանելը կամ մարելը վերացնում է դատվածության հետ կապված իրավական բոլոր հետևանքները: Սույն նորմն արգելք չէ օրենքով սահմանափակումներ նախատեսելու՝ դատավորի, դատախազի, քննչական կոմիտեի ծառայողի, հատուկ քննչական ծառայության ծառայողի, ոստիկանության ծառայողի, քրեակատարողական ծառայողի, ազգային անվտանգության մարմիններում ծառայողի պաշտոններ զբաղեցնելու համար: Դրույթի վերլուծությունից ակնհայտ է դառնում երկու հանգամանք՝

1) դատվածությունը հանելը կամ մարելը վերացնում է դատվածության հետ կապված բոլոր իրավական հետևանքները,

2) օրենքով հստակ սահմանվել են այն աշխատանքները (ծառայության տեսակները), որոնցում նախկինում դատվածություն ունենալը կարող է խոչընդոտ հանդիսանալ պաշտոն

<sup>461</sup> Տե՛ս, *Թլիմանսն ընդդեմ Հունաստանի* գործով 2000 թվականի ապրիլի 6-ի վճիռը, գանգատ թիվ 34369/97, կետ 41:

զբաղեցնելու կամ ծառայության անցնելու համար: Այդ ցանկում նշված չէ զինված ուժերում պաշտոն զբաղեցնելը, այսինքն՝ նախկինում դատվածություն ունենալը չի կարող խոչընդոտ հանդիսանալ զինված ուժերում պաշտոն զբաղեցնելու համար:

Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագրային զինվորական ծառայության չի կարող ընդունվել այն քաղաքացին, ում նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում, կամ ով ունի չհանված կամ չմարված դատվածություն:

**Հետևաբար, միայն նախկինում դատվածություն ունենալու պատճառով քաղաքացու հետ զինվորական ծառայություն անցնելու մասին պայմանագիր կնքելուց հրաժարվելը խտրականության դրսևորում է:**

Հարկ է նկատի ունենալ նաև, որ 2016 թվականին Պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքի քննարկման արդյունքում Պաշտպանության նախարարությունը պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու մասին պայմանագիր է կնքել Ոստիկանության նախկին ծառայողի հետ, ում դատվածությունը մարված է եղել: Այսինքն՝ միննույն փաստական հանգամանքների առկայությամբ մի դեպքում քաղաքացին ընդունվել է պայմանագրային զինվորական ծառայության, իսկ այլ դեպքում՝ ոչ, ընդ որում՝ նշված երկու դեպքերում տարբեր որոշումներ կայացնելու համար որևէ օբյեկտիվ և հիմնավոր արդարացում չի եղել:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ 2018 թվականի դեկտեմբերին ընդունվել է ՀՀ զինված ուժերում պայմանագրային զինվորական ծառայության ընդունելու և պաշտոնի նշանակելու կարգ, որը կարող է հստակեցնել զինվորական ծառայության ընդունելու գործընթացը:

2018 թվականի ընթացքում բողոքներ են ստացվել նաև Ոստիկանությունում ծառայության ընդունելը մերժելու վերաբերյալ:

Այսպես, Պաշտպանին հասցեագրված բողոքով քաղաքացին նշել է, որ 2013-2016 թվականներին որպես հետաքննիչ ծառայել է Ոստիկանությունում, որից հետո ծառայությունից ազատվել է սեփական նախաձեռնությամբ: 2018 թվականին որպես հետաքննիչ ծառայություն անցնելու համար դիմում է ներկայացրել Ոստիկանություն, սակայն մերժում է ստացել:

Բողոքին ուսումնասիրությամբ պարզվել է, որ Ոստիկանությունում ծառայություն անցնելու մասին քաղաքացու դիմումը մերժվելու կապակցությամբ նրան հիմնավորում ու պատճառաբանություն չի ներկայացվել:

Ըստ ՀՀ ոստիկանության՝ Պաշտպանի գրության հիման վրա լրացուցիչ ուսումնասիրվել է գործը, հաստատվել, որ դիմումը մերժվել է առանց պատճառաբանության, ինչպես նաև պարզվել է, որ քաղաքացին համապատասխանում է ոստիկանության ծառայողի պաշտոնի համար ներկայացվող պահանջներին: Արդյունքում, քաղաքացին որպես հետաքննիչ ծառայության է անցել Ոստիկանությունում:

*Ուստի, առաջարկվում է խստացնել հսկողությունը «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» և «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգով քաղաքացիներին ծառայության ընդունելու և ծառայություն անցնելու պայմանագիրը կնքելը մերժելու գործընթացների նկատմամբ:*

## **2. Պլանային փոխարինման կարգով ծառայության նոր վայր տեղափոխության իրավունք**

ՀՀ օրենսդրությամբ սահմանված է հատուկ և կլիմայական ծանր պայմաններում ծառայող սպայական կազմի պայմանագրային զինծառայողներին ծառայության նոր վայր տեղափոխելու հնարավորություն:

Այսպես, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պլանային փոխարինման կարգով ծառայության նոր վայր տեղափոխման ենթակա են հատուկ և կլիմայական ծանր պայմաններում ծառայող սպայական կազմի պայմանագրային զինծառայողները: Հատուկ և կլիմայական ծանր պայմաններում ծառայության **տևողությունը և տեղափոխման կարգը** սահմանում է պետական լիազոր մարմնի ղեկավարը: Տեղափոխվող պայմանագրային զինծառայողները չեն օգտվում ծառայության նոր վայրն ընտրելու իրավունքից: Նրանք նշանակվում են հավասար կամ բարձր զինվորական պաշտոնի՝ իրավասու պաշտոնատար անձի հրամանով:

2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով սպայական կազմի պայմանագրային զինծառայողը նշել է, որ շուրջ 11 տարի իրականացնում է մարտական հերթապահություն:

Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ իրեն մարտական հերթապահություն չիրականացնող զորամաս տեղափոխելու նպատակով մի քանի անգամ զեկուցագրեր է ներկայացրել վերադաս հրամանատարությանը, սակայն բարձրացված հարցը լուծում չի ստացել:

Պետք է նշել, որ նախկինում Պաշտպանության նախարարությունից ստացված պարզաբանման համաձայն՝ ՀՀ զինված ուժերի սպայական կազմի **պլանային տեղափոխման կարգը սահմանված է ՀՀ պաշտպանության նախարարի գաղտնի հրամանով**, քանի որ պարունակում է զորամասերի տեղակայման վայրերի և կարգայնության հետ կապված տվյալներ:

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանվում են պետական և ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների շրջանակը:

Նշված օրենքի դրույթների մեկնաբանությունից պարզ է դառնում, որ որոշակի տեղեկությունների համար գաղտնիություն սահմանելը ինքնանպատակ չէ. գաղտնիության սահմանումը պետք է իրավաչափ նպատակ ունենա կանխարգելել դրանց տարածման հետևանքով առաջացող հնարավոր ռիսկերը: Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ թե ենթադրյալ, այլ իրական ռիսկերին:

Ճիշտ է, «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված տեղեկությունների շարքին է դասվում նաև զորամասերի տեղակայման վայրերի վերաբերյալ տեղեկությունը, սակայն նշված չեն և չէին էլ կարող նշված լինել հատուկ և կլիմայական ծանր պայմաններում ծառայության տևողությունը և տեղափոխման կարգը:

Բացի այդ, զինծառայողների իրավունքների վերաբերյալ տվյալները պետք է հասանելի լինեն նրանց, որպեսզի կարողանան արդյունավետ կերպով իրականացնել իրենց իրավունքների պաշտպանությունը:

Վերը նշված տեղեկությունների հրապարակային չլինելը կարող է հանդիսանալ այն հիմնական պատճառներից մեկը, որի հետևանքով հատուկ և կլիմայական ծանր պայմաններում ծառայող զինծառայողները սահմանված ժամկետը լրանալուց հետո չեն տեղափոխվում ծառայության նոր վայր:

*Հետևաբար, անհրաժեշտ է՝*

*1. հրապարակայնացնել հատուկ և կլիմայական ծանր պայմաններում ծառայության տևողության և տեղափոխման կարգի վերաբերյալ տեղեկությունները՝ առանց զորամասերի տեղակայման և կարգայնության վերաբերյալ տեղեկությունների: Ընդ որում, նշված տեղեկությունները կարելի է հանրայնացնել ինչպես «Զինվորական ծառայության և*



զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում, այնպես էլ ենթաօրենսդրական այլ ակտերում դրանք ամրագրելու միջոցով,

2. հսկողություն իրականացնել պլանային տեղափոխման գործընթացի նկատմամբ՝ հնարավոր ձգձգումներից խուսափելու նպատակով:

### **3. Զինվորական ծառայությունից արձակվելու իրավունքը**

Միջազգային մի շարք փաստաթղթեր արձանագրել են զինծառայողների՝ զինված ուժերի կազմից դուրս գալու իրավունքը: Այն ամրագրված է նաև ներպետական օրենսդրության մեջ:

Այսպես, Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 16-րդ կետի բովանդակության համաձայն՝ զինված ուժերի անդամներն ունեն զինված ուժերից դուրս գալու իրավունք:

Եվրոպայի խորհրդի սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն Իռլանդիայի վերաբերյալ 2012 թվականի իր եզրակացություններում նշել է, որ անձն ունի աշխատանքը դադարեցնելու ազատություն (XIV-1 եզրակացություն, 435-րդ և 436-րդ էջեր):

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ պայմանագրային զինծառայողը զինվորական ծառայությունից արձակվում է մինչև պայմանագրի ժամկետը լրանալը զինվորական ծառայությունից արձակվելու զեկուցագիր ներկայացնելիս, եթե չունի սույն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետ: Նույն օրենքի 55-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պայմանագրային զինծառայողը զինվորական ծառայությունից արձակվում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող հրամանատարի (պետի) հրամանով՝ արձակման հիմքեր ծագելուց ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում:

2018 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ պայմանագրային զինվորական ծառայությունից չարձակվելու վերաբերյալ:

Օրինակ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքով զինապարտ քաղաքացին տեղեկացրել է, որ ուսումն ավարտելուց հետո՝ 2015 թվականին ՀՀ զինված ուժերում անցել է պայմանագրային զինվորական ծառայության: 2018 թվականին զեկուցագիր է ներկայացրել վերադաս հրամանատարությանը զինվորական ծառայությունից վաղաժամկետ արձակվելու համար, իրեն ներկայացվել է ուսման ծախսերի փոխհատուցման ենթակա գումարի չափը, որի հետ ինքը համաձայն չէ:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի թիվ 393-Ն որոշման հավելվածի 10-րդ կետի համաձայն՝ զինվորական ծառայությունից արձակվելիս զինծառայողի կողմից ուսման ծախսերի փոխհատուցումից հրաժարվելու դեպքում՝ ուսման ծախսերի բռնագանձումն իրականացվում է դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխի պահանջների համաձայն:

ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի թիվ 347-Ն որոշման հավելվածի 8-րդ կետի համաձայն՝ օրենքով սահմանված հիմքով զինվորական ծառայությունից արձակման ենթակա զինծառայողի կողմից օրենքով սահմանված տուժանքը սահմանված ժամկետում չվճարելու կամ վճարելուց հրաժարվելու դեպքում, ինչպես նաև եթե զինծառայողը ցանկություն չի հայտնել շարունակելու զինվորական ծառայությունը, պետական լիազոր մարմնի կադրային ստորաբաժանումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում

իրականացնում է զինծառայողի արձակումը զինվորական ծառայությունից և արձակման մասին հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում զինծառայողի և տուժանքի ընդհանուր գումարի վերաբերյալ տեղեկությունները ներկայացնում է պետական լիազոր մարմնի իրավաբանական ստորաբաժանում՝ օրենքով սահմանված տուժանքը դատական կարգով բռնագանձելու համար:

**Հետևաբար, եթե զինծառայողը հրաժարվում է փոխհատուցել ուսման ծախսերը, ապա վերջինս պետք է ազատվի զինվորական ծառայությունից և հաշվառվի պահեստագործում, իսկ ուսման ծախսերի բռնագանձումն իրականացվի դատական կարգով:**

Բողոքի քննարկման արդյունքում զինծառայողը ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով արձակվել է ՀՀ զինված ուժերի պահեստագործ:

2018 թվականի ընթացքում ստացված մեկ այլ բողոքով քաղաքացին նշել է, որ արձակվել է ՀՀ զինված ուժերից, և պարտավորվել է վճարել իրեն տրամադրված զինվորական համազգեստի համար: Քաղաքացու պնդմամբ՝ զորամասի հրամանատարի ցուցումով իր անձնագիրը վերցրել են՝ պայմանով, որ այն կվերադարձվի համապատասխան գումարը վճարելուց հետո:

«ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ անձնագիրը Հայաստանի Հանրապետության քաղաքացու ինքնությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հավաստող փաստաթուղթ է, որը նախատեսված է Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու և Հայաստանի Հանրապետություն վերադառնալու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործելու համար:

Ըստ օրենսդրական բնորոշման՝ անձնագիրը հանդես է գալիս անձի ազատ տեղաշարժման, իբրև հասարակության լիիրավ անդամի գործունեության, քաղաքացիաիրավական ակտիվության և մի շարք իրավունքների լիարժեք իրացման անհրաժեշտ պայման:

Խնդրի կապակցությամբ պետք է նշել, որ «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» օրենքի 8-րդ հոդվածով հստակ սահմանված են քաղաքացու անձնագիրը վերցնելու իրավասություն ունեցող անձանց շրջանակը, ինչպես նաև անձնագիրը վերցնելու դեպքերը: Նշված դեպքերի մեջ բացակայում է զորամասի հրամանատարի կողմից որոշակի պարտավորությունների կատարման ապահովման նպատակով քաղաքացու անձնագիրը վերցնելու հնարավորությունը: Ավելին՝ նույն հոդվածի 5-րդ մասով հստակ ամրագրվում է, որ բացառությամբ հոդվածում նշված դեպքերի՝ արգելվում է քաղաքացու անձնագիրը վերցնելը կամ գրավ ընդունելը:

Վերը նշված բողոքի քննարկման արդյունքում քաղաքացու անձնագիրը վերադարձվել է:

*Հետևաբար, անհրաժեշտ է՝*

*1. խստացնել հսկողությունը պայմանագրային զինծառայողների կողմից ծառայությունից արձակվելու գործընթացի նկատմամբ,*

*2. կատարել ուսումնասիրություններ և վերլուծություններ՝ վեր հանելու պայմանագրային զինծառայողների՝ պայմանագրից հրաժարվելու և զինվորական ծառայությունից արձակվելու պատճառները: Միայն այդ պատճառների վերհանման և դրանց լուծման միջոցով հնարավոր կլինի ՀՀ զինված ուժերում ծառայությունը դարձնել գրավիչ, ինչն իր հերթին կավելացնի զինված ուժերում ծառայություն անցնելու ցանկություն հայտնող անձանց քանակը և կնվազեցնի զինված ուժերից արձակվող զինծառայողների թիվը:*

#### **4. Ձինձառայողների իրավունքների պաշտպանությունը գործատուի նախաձեռնությամբ պայմանագիրը լուծելիս**

2018 թվականի ընթացքում զինձառայողների կողմից Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել չօգտագործած արձակուրդների համար դրամական հատուցում չստանալու վերաբերյալ:

Այսպես, օրինակ, նախկին զինձառայողը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքով տեղեկացրել է, որ 2006-2016 թվականը զինվորական ծառայություն է անցել Պաշտպանության նախարարությունում, ծառայությունից արձակվել է սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ զինվորական ծառայության ընթացքում չի օգտվել տարվա հերթական արձակուրդներից, իսկ զինվորական ծառայությունից արձակվելիս չօգտագործած հերթական արձակուրդների համար իրեն որպես հատուցում տրամադրվել է ընդամենը 2016 թվականին չօգտագործված արձակուրդի գումարը:

Նախկին զինձառայողը խնդրել է Պաշտպանի աջակցությունը չօգտագործված բոլոր արձակուրդների համար դրամական հատուցում ստանալու հարցում:

Ըստ Պաշտպանության նախարարության՝ 2010 և 2015 թվականներին նախկին զինձառայողն ամբողջությամբ օգտվել է հերթական արձակուրդից, իսկ 2006-2009 թվականների ընթացքում հերթական արձակուրդից օգտվելու վերաբերյալ արխիվային տվյալներ առկա չեն: Նույն գրությամբ տրամադրված տեղեկության համաձայն՝ 2011-2014 թվականներին նախկին զինձառայողը հերթական արձակուրդներից չի օգտվել:

Պաշտպանության նախարարությունը ներկայացրել է դիրքորոշում, որի համաձայն՝ եթե նախկին զինձառայողի ենթադրյալ խախտված իրավունքները վերականգնվեն դատարանի վճռի հիման վրա, ապա այն պաշտպանության նախարարության համար հիմք կհանդիսանա պաշտոնատար անձանց նկատմամբ հետադարձ պահանջի իրավունք ներկայացնելու համար:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ «Ձինվորական ծառայության և զինձառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ «Ձինվորական ծառայությունից արձակվող և զինվորական ծառայության ընթացքում չօգտագործված արձակուրդ ունեցող զինձառայողներին տրվում է փոխհատուցում՝ ոչ ավելի, քան զինվորական ծառայությունից արձակվելու և դրան նախորդող երկու տարվա չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափով: Սույն մասում նշված դեպքում չօգտագործված արձակուրդի օրերի հաշվարկում չեն ներառվում զինձառայողի՝ սույն օրենքի համաձայն՝ զինվորական ծառայության ընդհանուր ժամկետում չներառվող ժամանակահատվածների օրերը»: Օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ կարգավորումը տարածվում է ՀՀ պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության, հանրապետական գործադիր մարմինների համակարգերում համապատասխան ծառայության մեջ գտնվող անձանց վրա:

Ստացվում է, որ այդ բոլոր անձինք կարող են ստանալ փոխհատուցում ոչ ավելի, քան զինվորական ծառայությունից արձակվելու և դրան նախորդող երկու տարվա չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց: Մինչդեռ, աշխատանքային հարաբերություններ կարգավորող այլ իրավական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նման կարգավորումներ ծառայության այլ տեսակների կամ աշխատանքների համար առկա չեն:

Այսպես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 158-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամենամյա արձակուրդն աշխատանքային օրերով հաշվարկվող ժամանակահատված է, որը տրամադրվում է աշխատողին հանգստանալու և աշխատունակությունը վերականգնելու համար: Այդ ընթացքում պահպանվում է նրա

աշխատատեղը (պաշտոնը) և վճարվում է միջին աշխատավարձը: Միաժամանակ, Օրենսգրքի 170-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ամենամյա արձակուրդը չօգտագործելու համար դրամական հատուցումը վճարվում է աշխատանքային պայմանագիրը լուծելիս: Հատուցման չափը որոշվում է տվյալ ժամանակահատվածի համար տրամադրման ենթակա ամենամյա արձակուրդի չօգտագործված օրերի քանակով, և այն վճարվում է չօգտագործված բոլոր արձակուրդների համար:

Օրենսգրքի 1-ին հոդվածի համաձայն՝ Օրենսգիրքը կարգավորում է կոլեկտիվ և անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերն ու իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաև աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները: Աշխատանքային հարաբերությունների առանձին բնագավառների կարգավորման առանձնահատկությունները կարող են սահմանվել օրենքով: Միաժամանակ, Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ, սույն օրենսգրքով, օրենքներով, այլ իրավական ակտերով, աշխատանքային և կոլեկտիվ պայմանագրերով:

Օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ քաղաքական, հայեցողական կամ քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև քաղաքացիական, օրենքով սահմանված այլ պետական (հատուկ) ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատողների աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ: **Հետևաբար, քաղաքական, հայեցողական կամ քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձինք, ինչպես նաև այլ պետական ծառայողներն իրավունք ունեն ստանալ չօգտագործված բոլոր արձակուրդների համար դրամական հատուցում, եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ:**

Այսպես, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասով և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 41<sup>1</sup>-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված է, որ այդ մարմինների ծառայողների վարձատրության, այդ թվում՝ հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի հաշվարկների և չափերի, աշխատավարձի բնականոն աճի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Միաժամանակ, «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված չեն կարգավորումներ չօգտագործած արձակուրդների դիմաց փոխհատուցում տրամադրելու կամ չտրամադրելու վերաբերյալ, ուստի այդ հարաբերությունները կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 170-րդ հոդվածի 2-րդ մասով: Ստացվում է, որ հարկային և մաքսային մարմինների ծառայողներն, ի տարբերություն զինծառայողների, իրավունք ունեն ծառայությունից դուրս գալուց ստանալ բոլոր չօգտագործված արձակուրդների դրամական հատուցում:

Չօգտագործված արձակուրդների համար դրամական հատուցում տրամադրելու վերաբերյալ առանձին կարգավորումներ ամրագրված չեն նաև «Դատախազության մասին», «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին», «Համայնքային ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքներում: Պետք է նշել նաև, որ 2018 թվականի մարտի 23-ին ընդունվել են «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» նոր օրենքներ, որոնցում

նույնպես չօգտագործված արձակուրդների համար դրամական հատուցում տրամադրելու վերաբերյալ առանձին կարգավորումներ ամրագրված չեն:

Արդյունքում, վերոնշյալ օրենքներով կարգավորվող հարաբերությունների մասնակից պետական ծառայողներն ու աշխատակիցները, ինչպես նաև մասնավոր ոլորտում աշխատող անձինք, իրավունք ունեն ծառայությունից կամ աշխատանքից ազատվելիս ստանալ դրամական հատուցում չօգտագործված բոլոր արձակուրդների համար, այնինչ զինծառայողների համար նշված իրավունքը սահմանափակվում է միայն կոնկրետ ժամանակահատվածում չօգտագործած արձակուրդի համար փոխհատուցման տրամադրմամբ:

Խնդրի կապակցությամբ ՀՀ վարչական դատարանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 16-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության որոշման խնդրանքով: Նշված դիմումի շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացվել է դիրքորոշում, որով նշվել է, որ **զինծառայողներին զինվորական ծառայությունից արձակվելիս չօգտագործված արձակուրդների համար դրամական հատուցում չտրամադրելը խտրականության դրսևորում է, բացի այդ հանգեցնում է անձի սեփականության իրավունքի խախտման:** Վկայակոչելով ոլորտի միջազգային և ներպետական իրավական կարգավորումները՝ նշվել է, որ չօգտագործված արձակուրդների համար դրամական հատուցում տրամադրելու հարցում զինծառայողների աշխատանքային հարաբերությունների կարգավորումները տարբերվում են այլ պետական ծառայողների ու աշխատակիցների, ինչպես նաև մասնավոր ոլորտում աշխատող անձանց աշխատանքային հարաբերությունների կարգավորումներից: Ընդ որում, պարզ չէ, թե ինչ օրինական նպատակ է հետապնդում կամ զինվորական ծառայության ինչ առանձնահատկություններով է պայմանավորված նման տարբերակված մոտեցումը: Ուստի, տվյալ դեպքում տարբերակված կարգավորումները օբյեկտիվ ու հիմնավոր չեն և հանգեցնում են աշխատանքային իրավահարաբերությունների մեջ գտնվող անձանց համար խտրական վերաբերմունքի:

Միաժամանակ, հիմնավորվել է, որ զինծառայողների նկատմամբ նման խտրականության դրսևորումն ուղղակիորեն միջամտում է նրանց սեփականության իրավունքին, և այն զինծառայողները, ովքեր հերթական արձակուրդից չեն օգտվել ավելի քան երկու տարի, զրկվել են չօգտագործած արձակուրդի դրամական հատուցում ստանալու իրավունքից, ուստի նաև խախտվել է վերջիններիս սեփականության իրավունքը:

Արդյունքում, ՀՀ Սահմանադրական դատարանը, քննելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 16-րդ մասի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը, նշել է. «... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավակարգավորման այդպիսի պայմաններում, երբ կոնկրետ ժամանակահատվածում չի եղել չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց փոխհատուցում ստանալու ժամկետային սահմանափակումը, սակայն զինծառայողը զրկված է եղել այդ արձակուրդային օրերն օգտագործելու կամ **դրանց դիմաց առանց ծառայությունից արձակվելու փոխհատուցում պահանջելու և ստանալու հնարավորությունից**, ապա զինծառայողի համար առկա են եղել «օրինական ակնկալիքի» հիմքեր: Հետևաբար, նշված դեպքերում պետք է երաշխավորվի փոխհատուցում ստանալու՝ անձի հնարավորությունը՝ որպես Սահմանադրությամբ նախատեսված սեփականության իրավունքի պաշտպանության իրագործում:»<sup>462</sup>:

Հետևաբար, նախկին զինծառայողին չօգտագործված բոլոր արձակուրդների դիմաց փոխհատուցում տրամադրելու համար առկա են եղել բավարար իրավական հիմքեր, և նոր իրավական ակտ, այդ թվում՝ դատական, ընդունելու անհրաժեշտությունը բացակայում է:

<sup>462</sup> Տե՛ս, ՀՀ Սահմանադրական դատարանի 2018 թվականի հուլիսի 10-ի թիվ ՍԴՈ 1424-րդ որոշման 4.2-րդ կետը

Ուստի, հաշվի առնելով միջազգային փաստաթղթերով և ՀՀ ներպետական օրենսդրությամբ ամրագրված վերը նշված չափանիշները՝ Մարդու իրավունքների պաշտպանը կայացրել է մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշում և առաջարկել նախկին զինծառայողին տրամադրել զինվորական ծառայության ընթացքում չօգտագործված հերթական արձակուրդների համար դրամական հատուցում, ինչպես նաև սահմանել հսկողություն զինծառայողներին հերթական արձակուրդը սահմանված ժամկետում տրամադրելու ուղղությամբ՝ հետագայում նմանատիպ դեպքերը բացառելու նպատակով:

*Ուստի, անհրաժեշտ է՝*

*1. միջոցներ ձեռնարկել ծառայությունից արձակվելիս նախկին զինծառայողների կողմից չօգտագործված բոլոր արձակուրդների դիմաց հատուցում տրամադրելու ուղղությամբ,*

*2. սահմանել հսկողություն զինծառայողներին հերթական արձակուրդը սահմանված ժամկետում տրամադրելու ուղղությամբ՝ հետագայում նմանատիպ դեպքերը բացառելու նպատակով:*

2018 թվականի ընթացքում զինծառայողների կողմից Պաշտպանին բողոքներ են նաև հասցեագրվել գործատուի նախաձեռնությամբ պայմանագիրը լուծելիս իրենց իրավունքները չապահովելու վերաբերյալ:

Այսպես, օրինակ, Պաշտպանին հասցեագրած բողոքով մի խումբ քաղաքացիներ նշել են, որ պայմանագրային հիմունքներով ծառայել են ՀՀ պաշտպանության նախարարությունում: 2018 թվականին իրենց բանավոր տեղեկացրել են, որ հաստիքների կրճատման պատճառով իրենք ազատվել են պաշտոնից: Ըստ քաղաքացիների՝ իրենց նախօրոք չեն ծանուցել հաստիքների կրճատման մասին և չեն առաջարկել այլ համարժեք աշխատանք, չեն տրամադրել պաշտոնից ազատելու մասին գրավոր հրամանի պատճենը, չեն ներկայացվել պատճառաբանություններ, թե ինչ հիմնավորմամբ են իրենց ազատել պաշտոնից:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրային զինծառայողները թողնվում են պետական լիազոր մարմնի կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ հաստիքների կրճատման, այդ թվում՝ ստորաբաժանման լուծարման պատճառով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հաստիքների կրճատման դեպքում աշխատանքային պայմանագիրը գործատուն կարող է լուծել, եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկված աշխատանքից:

Հետևաբար, չափազանց կարևոր է գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելիս օրենքով սահմանված ընթացակարգը պահպանելը: Ընդ որում, նշված ընթացակարգային երաշխիքները չպահպանելը կարող է հանգեցնել աշխատանքից ազատելու վերաբերյալ տրված հրամանի չեղարկման:

Բողոքի քննարկման արդյունքում բողոք ներկայացրած անձանց առաջարկվել է նոր աշխատանք, որի արդյունքում 3 զինժառայող նշանակվել է պաշտոնի, իսկ 4-րդ զինժառայողը հրաժարվել է առաջարկված պաշտոնից և արձակվել ՀՀ զինված ուժերի պահեստագոր:

*Ուստի, անհրաժեշտ է խստացնել հսկողությունը գործատուի նախաձեռնությամբ պայմանագիրը լուծելու գործընթացի նկատմամբ՝ ապահովելով աշխատողների ընթացակարգային իրավունքները:*

**ԳԼՈՒԽ 7. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

**1. Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես կարգապահական վարույթի մասնակիցների բողոքներ քննող անկախ մեխանիզմ**

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի՝ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի «ԻԲ» կետի համաձայն՝ զինծառայողներն իրենց իրավունքները պաշտպանելու համար պետք է ունենան անկախ մարմիններին բողոք ներկայացնելու հնարավորություն:

Չնայած զինված ուժերում գանգատարկման ընթացակարգերի գոյությանը՝ աշխարհի տարբեր երկրներ ունեն օմբուդսմանի ինստիտուտ, որի նպատակն է քննության առնել գանգատները՝ զինված ուժերում իրավունքներ խախտող վարքագծի դրսևորումների, զինվորական քաղաքականության բացերի, ինչպես նաև զինված ուժերի համակարգային հիմնախնդիրների մասին: Այս գանգատները և բացերը քննության առնելուց հետո օմբուդսմանը մշակում է իրավիճակը շտկող գործողությունների վերաբերյալ հանձնարարականներ<sup>463</sup>:

**Զինծառայողների իրավունքների պաշտպանությունն իրականացնելիս հատկապես կարևորվում է զինվորական կարգապահության ամրապնդումը, ինչպես նաև ծառայողական քննությունների ընթացքում զինծառայողների իրավունքների պաշտպանությունը:**

Զինվորական կարգապահության ամրապնդման, ինչպես նաև ծառայողական քննության ընթացքում զինծառայողների իրավունքների պաշտպանության ապահովման նպատակով դեռևս 2017 թվականին Պաշտպանի աշխատակազմի կողմից մշակվել և շրջանառվել էին ««Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի հրամանի նախագծերը:

Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» Հայաստանի Հանրապետության օրենքում առաջարկվել է՝

1) իրավախախտումը համարել ծանրացող միայն այն դեպքերում, երբ դատվածությունը հանված կամ մարված չէ:

2) կարգապահական տույժի ենթարկվելու մասին հրամանին ծանոթանալու պատշաճ ընթացակարգի և զինծառայողի կողմից այն բողոքարկելու իրավունքի ապահովման նպատակով սահմանել, որ կարգապահական տույժ տալու մասին գրավոր հրամանը և զինծառայողի հաշվառման (ծառայողական) քարտում կատարված գրառումը ստորագրությամբ ներկայացվում է զինծառայողի ծանոթացմանը: Զինծառայողի պահանջի դեպքում նրան տրամադրվում են նաև կարգապահական տույժ տալու մասին գրավոր հրամանի և զինծառայողի հաշվառման (ծառայողական) քարտում կատարված գրառման հրամանատարի կողմից հաստատված պատճենները:

3) ծառայողական քննության ընթացքում զինծառայողների ընթացակարգային իրավունքների պաշտպանության նպատակով սահմանել, որ ծառայողական քննություն իրականացնող անձը կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող

<sup>463</sup> Ձեռնարկ զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին, 2008 թվական, էջ 321:



զինճառայողին գրավոր բացատրում է օրենքով նրան վերապահված իրավունքները և պարտականությունները.

4) բողոքարկման արդյունքում զինճառայողին տրված կարգապահական տույժը հանելու կառուցակարգի հստակեցման նպատակով սահմանել, որ բողոքարկման արդյունքներով վերադաս հրամանատարը (պետը) իրավունք ունի գրավոր հրաման ընդունել զինճառայողին տրված կարգապահական տույժը չեղյալ ճանաչելու կամ ուժի մեջ թողնելու մասին:

ՀՀ պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանում առաջարկվել է.

1) զինճառայողների կողմից իրավախախտում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գրավոր հաղորդումը նախատեսել որպես ծառայողական քննություն անցկացնելու հիմք.

2) սահմանել ծառայողական քննությունը դադարեցնելու, ծառայողական քննությունը կասեցնելու և վերսկսելու հիմքերը և ընթացակարգը:

Ըստ Պաշտպանության նախարարության՝ 2019 թվականի 1-ին եռամսյակում նախատեսված է մշակել և ներկայացնել «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ: Միաժամանակ նշվել է, որ ՀՀ պաշտպանության նախարարի վերը նշված հրամանում փոփոխություններ կատարված չլինելը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծառայողական քննությունների հետ կապված մի շարք հարաբերություններ նախատեսվում է կարգավորել ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագրքով:

Հարկ է նկատի ունենալ, որ հատուկ դիրքորոշման մեջ ներկայացված առաջարկությունների ընդունման կապակցությամբ անհրաժեշտ քայլեր չեն ձեռնարկվել:

Վճիռների կատարման և բարեկամական կարգավորման պայմանների վերահսկողության 9-րդ կանոնը հնարավորություն է տալիս Մարդու իրավունքների պաշտպանին հետևողականություն դրսևորել և ներկայացած առաջարկությունները հատուկ դիրքորոշմամբ ներկայացնել նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին:

Այսպես, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ վճիռների կատարման և բարեկամական կարգավորման պայմանների վերահսկողության կանոնների 9-րդ կանոնի 2-րդ կետի համաձայն՝ նախարարների կոմիտեն իրավունք ունի դիտարկել ոչ կառավարական կազմակերպություններից, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների կողմից վճիռների կատարման ընթացքի մասին ուղարկված ցանկացած նկատառում:

Այս կարգավորման հիման վրա 2018 թվականի սեպտեմբերի 25-ին Պաշտպանը Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե է ներկայացրել հատուկ դիրքորոշում կապված «Մուրադյանն ընդդեմ Հայաստանի» ՄԻԵԴ վճռի կատարման հետ<sup>464</sup>, և բարձրացված խնդիրների առնչությամբ Պաշտպանի հատուկ դիրքորոշման մեջ ներկայացվել են կոնկրետ առաջարկություններ: Մասնավորապես՝ ներկայացված դիրքորոշման մեջ նշվել է վերը նկարագրված օրենսդրական փոփոխություններն իրականացնելու անհրաժեշտությունը՝ որպես զինվորական կարգապահության ամրապնդման միջոց: Բացի այդ, կարևորվել է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության զարգացման անհրաժեշտությունը: Այդ նպատակով նշվել է, որ անհրաժեշտ է կարգապահական վարույթի հարուցման կարգ սահմանող իրավական ակտով ամրագրել, որ Մարդու իրավունքների պաշտպանի հաղորդումը հիմք է հանդիսանում ծառայողական քննություն սկսելու համար:

<sup>464</sup> Տե՛ս [https://hudoc.exec.coe.int/eng#{%22EXECIdentifer%22:%22DH-DD\(2018\)961E%22}}](https://hudoc.exec.coe.int/eng#{%22EXECIdentifer%22:%22DH-DD(2018)961E%22}}), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Նշվել է նաև Պաշտպանության նախարարությունում շուրջօրյա թեժ գիծ ունենալու անհրաժեշտությունը:

Պաշտպանի ներկայացրած հատուկ դիրքորոշման կապակցությամբ ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցչության կողմից 2018 թվականի հոկտեմբերի 3-ին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե ներկայացված պատասխանում նշվել է, որ ՀՀ կառավարությունը բարձր է գնահատում զինված ուժերում զինձառայողների իրավունքների պաշտպանության գործում Պաշտպանի գործունեությունը և կարևորել ներկայացված առաջարկությունների նշանակությունը:

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունն ամրապնդելու տեսանկյունից կարևոր է, որ, ի թիվս այլ տեղեկությունների, հասարակությանը և Ազգային ժողովին ներկայացվեն կարգապահական վարույթների մասին տեղեկություններ այնքանով, որքանով դրանք չեն բացահայտի ծառայողական և պետական գաղտնիք<sup>465</sup>:

2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրած բանավոր և գրավոր բողոքների, ինչպես նաև զորամասեր կատարած այցելությունների ընթացքում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել են դեպքեր, երբ վարույթի մասնակիցները տեղեկացվել են իրենց իրավունքներին և պարտականություններին, սակայն կարգապահական տույժ նշանակելիս հաշվի չեն առնվել զինձառայողների պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, վերլուծություններ չեն կատարվել կարգապահական խախտումների պատճառների մասին, հրամաններում տեղեկություններ առկա չեն տույժի տեսակն ընտրելու մասին: Արձանագրվել են դեպքեր, երբ զինձառայողին չեն ծանոթացրել իր իրավունքներին և պարտականություններին կամ դրանք բանավոր ներկայացրել են, չի ապահովվել կարգապահական տույժերը բողոքարկելու զինձառայողների իրավունքը:

*Հետևաբար, կարգապահական վարույթի ընթացքում զինձառայողների իրավունքներն ապահովելու նպատակով անհրաժեշտ է սեղմ ժամկետում ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնադրքում կատարել փոփոխություններ՝ հաշվի առնելով նաև Պաշտպանի ներկայացրած առաջարկները:*

## **2. Կրկնակի պատասխանատվության հարցը կարգապահական և քրեական վարույթներում**

ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնադրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ զինվորական կարգապահությունը հիմնվում է օրինականության, մարդու իրավունքների և ազատությունների հարգման, հրապարակայնության, խրախուսման ու կարգապահական պատասխանատվության անխուսափելիության և անհատականացման, զինձառայողների զինվորական, իրավական ու բարոյական դաստիարակության սկզբունքների վրա:

Կանոնադրքի 13-րդ հոդվածով սահմանված է կարգապահական խախտման (զանցանքի) հասկացությունը, որի համաձայն՝ կարգապահական խախտում (զանցանք) է համարվում զինվորական ծառայության կարգի դեմ ոտնձգող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար

<sup>465</sup> Ըստ Պաշտպանության նախարարության՝ 2018 թվականի ընթացքում կարգապահական տույժի են ենթարկվել Պաշտպանության նախարարության ենթասպայական կազմի 438 և սպայական կազմի 1256 զինձառայողներ: Զինձառայողներն առավել շատ կարգապահական տույժի են ենթարկվել «Ներքին ծառայության կանոնադրքային կանոնները խախտելը» կարգապահական իրավախախտման համար: Կարգապահական տույժի ենթարկված զինձառայողներից վեցը բողոքարկել է տույժ տալու մասին հրամանը: Մեկ բողոք բավարարվել է, երկուսը՝ մերժվել, երեքի քննարկումը շարունակվել է 2019 թվականին:

սույն օրենքով նախատեսված է կարգապահական պատասխանատվություն: Կարգապահական խախտում է համարվում նաև սպայական կազմի զինծառայողի կողմից հաշվետու կամ ուսումնական տարվա արդյունքներով ծառայողական գործառնությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ սպայի պատվի կանոնների խախտումը: Սպայի պատվի կանոնները սահմանվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանով:

Կանոնագրքով ամրագրված է 15 կարգապահական զանցանքի տեսակ՝

1. Հրաման չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը,
2. Զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը,
3. Մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը,
4. Սահմանապահ ծառայություն կրելու կանոնները խախտելը,
5. Պահակային կամ կայազորային ծառայության կանոնագրքային կանոնները խախտելը,
6. Ներքին ծառայության կանոնագրքային կանոնները խախտելը,
7. Հասարակական կարգը պահպանելու և հասարակական անվտանգություն ապահովելու ժամանակ ծառայություն կրելու կանոնները խախտելը,
8. Ռազմական գույքն անգույքությամբ ոչնչացնելը կամ վնասելը,
9. Զենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը,
10. Զենքը, ռազմամթերքը, ռազմական այլ գույքը, ինչպես նաև շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերը կամ առարկաները մեկ ուրիշին հանձնելը,
11. Իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը,
12. Անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ,
13. Մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը,
14. Թոփչքների կամ դրանց նախապատրաստման կանոնները խախտելը,
15. Հրամանատարի (պետի) կողմից զինծառայողի նկատմամբ անհավասար մոտեցում ցուցաբերելը:

Գրեթե բոլոր կարգապահական զանցանքները (բացառություն է միայն Հրամանատարի (պետի) կողմից զինծառայողի նկատմամբ անհավասար մոտեցում ցուցաբերելը) դիսպոզիցիայով համընկնում են համանուն հանցագործությունների հետ, որոնք սահմանված են ՀՀ քրեական օրենսգրքի «*Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունները*» վերտառությամբ 12-րդ բաժնում:

Կանոնագրքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կարգապահական կանոնագրքով նախատեսված իրավախախտումների համար կարգապահական պատասխանատվություն առաջանում է **անկախ այն հանգամանքից, որ այդ խախտումներն իրենց բնույթով առաջացնում են քրեական պատասխանատվություն:**

Այս դրույթը համապատասխանում է կրկին դատվելու արգելքի սահմանադրական սկզբունքին, քանի որ կարգապահական և քրեական պատասխանատվության հիմքում ընկած է արարքի հանրային վտանգավորության աստիճանը: Մակայն, ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ բաժնում օգտագործվում են մի շարք գնահատողական հասկացություններ (օրինակ՝ էական վնաս, վնաս պատճառել, ծանր հետևանքներ և այլն), որոնց պարագայում պրակտիկայում խնդիրներ առաջանալու հավանականությունը մեծանում է<sup>466</sup>:

<sup>466</sup> Օրինակ, ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ՄԴ1/0033/01/16 գործով 2018 թվականի մարտի 20-ի որոշման մեջ նշել է, որ հրաման չկատարելու՝ կարգապահական զանցանքի և զինվորական հանցագործության տարբերակման հիմքում ընկած է արարքի հանրային վտանգավորության աստիճանը: Արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ

Կրկնակի պատասխանատվության ռիսկ կարող է առաջանալ շարունակվող իրավախախտումների դեպքում՝ հատկապես, երբ իրավախախտման տևողությունից կախված՝ այն կարող է վերաճել քրեական հանցագործության:

Օրինակ, Կանոնագրքի 32-րդ հոդվածի համաձայն՝ զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը, բայց ոչ ավելի, քան երեք օրից ավելի տևողությամբ, կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը կամ առանց հարգելի պատճառների ժամանակին ծառայության չներկայանալը, եթե դա չի առաջացնում քրեական պատասխանատվություն, առաջացնում է կարգապահական պատասխանատվություն:

ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործություն է համարվում երեք օրից ավելի, բայց մեկ ամսից ոչ ավելի տևողությամբ, ինչպես նաև երեք ամսվա ընթացքում երեք և ավելի անգամ մեկ ժամից մինչև երեք օր տևողությամբ զինծառայողի կողմից զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը կամ առանց հարգելի պատճառների ժամանակին ծառայության չներկայանալը:

Տվյալ պարագայում հնարավոր են իրավիճակներ, երբ զինծառայողը մինչև երեք օր տևողությամբ ծառայության վայրն ինքնակամ թողնելու կամ առանց հարգելի պատճառների ժամանակին ծառայության չներկայանալու համար երկու անգամ կարգապահական պատասխանատվության ենթարկվելուց հետո ենթարկվի նաև քրեական պատասխանատվության:

Կրկնակի պատասխանատվության հարցն անհրաժեշտ է նաև ուսումնասիրել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի լույսի ներքո:

Կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատապարտվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:

Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում սահմանված են երեք չափանիշներ (այսպես կոչված՝ «Էնգելի գործի չափանիշ»), որոնք անհրաժեշտ է հաշվի առնել «քրեական մեղադրանքի» առկայությունը կամ բացակայությունը որոշելիս: **Առաջին չափանիշը ներպետական օրենսդրությանը համապատասխան կատարված հանցագործության իրավական դասակարգումն է, երկրորդը՝ հանցագործության բուն էությունը, իսկ երրորդը՝ պատժի խստության աստիճանն է, որին կարող է ենթարկվել համապատասխան անձը:** Թեև երկրորդ և երրորդ չափանիշները, որպես կանոն, կիրառվում են այլընտրանքային հիմքով, դա չի բացառում դրանց համատեղ կիրառումն այն դեպքերում, երբ յուրաքանչյուր չափանիշի առանձին վերլուծությունը թույլ չի տալիս հստակ

---

հոդվածի 1-ին մասով որակելու համար անհրաժեշտ տարրը՝ ծառայության շահերին պատճառված էական վնասը, կարող է կրել ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական բնույթ: Առանձնակի բարդություն է ներկայացնում կատարվածի արդյունքում ծառայության շահերին էական վնաս պատճառելն արձանագրելն այն դեպքում, երբ այն ոչ նյութական բնույթ է կրում: Վճարելի դատարանը նշել է, որ որպես այդպիսին կարող են համարվել, ի թիվս այլոց, մարտական կոնկրետ խնդիրների կատարման դժվարեցումը, զորամասի, ստորաբաժանման օրակարգի լուրջ խախտումը, մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների խախտումը, զինծառայողների օրինական շահերի խախտումը, հրամանատարի (պետի) հեղինակության կորուստը, զորամիավորումներում զինվորական կարգապահության էական անկումը:

եզրահանգել խնդրո առարկա հանդիսացող գործում քրեական հանցակազմի առկայության մասին<sup>467</sup>:

Մինևս այն արարքի համար կրկնակի պատասխանատվության բացառման նպատակով անհրաժեշտ է նաև, որպեսզի ինչպես կարգապահական, այնպես էլ քրեական մեղադրանքները հիմնավորվեն՝ խստագույնս հետևելով իրավական որոշակիության սկզբունքի պահանջին՝ հատկապես, եթե խոսքը տևող կամ շարունակվող իրավախախտումների մասին է:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ այն դեպքերում, երբ անձին մեղադրանք է առաջադրվում «շարունակական» հանցագործության համար, իրավական որոշակիության սկզբունքը պահանջում է, որ մեղադրական եզրակացությունում հստակ կերպով նշվեն այն գործողությունները, որոնք հավասարազոր են հանցանքի և ենթադրում են քրեական պատասխանատվություն: Իրավական ցանկացած համակարգում ներպետական դատարանների գործառույթի մեջ է մտնում քրեաիրավական նյութական դրույթների մեկնաբանումն այնպես, որպեսզի որոշվի այն ժամանակահատվածը, երբ պատժելի արարքը կատարելիս առկա էին հանցակազմի բոլոր տարրերը: Կոնվենցիան չպետք է խոչընդոտի նման տեսակի դատական մեկնաբանմանը՝ պայմանով, որ ներպետական դատարանների եզրակացությունները՝ Դատարանի նախադեպային իրավունքի իմաստով ողջամտորեն կանխատեսելի են<sup>468</sup>:

*Հետևաբար, առաջարկվում է՝*

1. *Կարգապահական կանոնագրքի 2-րդ հոդվածում սահմանված կարգապահության ապահովման սկզբունքների թվում ավելացնել կրկնակի պատասխանատվության անթույլատրելիության սկզբունքը,*

2. *սահմանել ծառայողական քննությունը կասեցնելու հնարավորություն այն դեպքերի համար, երբ առերևույթ առկա են տվյալներ, որ կատարված իրավախախտման համար անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության,*

3. *ծառայողական քննություն իրականացնող զինծառայողների համար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ:*

### **3. «Հրաման չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը» կարգապահական տույժի կիրառման սրահստիկան**

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի՝ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 19-րդ կետի համաձայն՝ զինծառայողների գործողությունները կամ անգործությունները, որոնք հավասարազոր են կարգապահական խախտումների, կարգապահական վարույթի շրջանակներում կիրառվող ընթացակարգերը, նշանակվող պատիժների տեսակները և տևողությունը, նման պատիժ նշանակելու իրավասություն ունեցող մարմինը և այդ պատիժները բողոքարկելու իրավունքը պետք է նախատեսվեն օրենքով:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, ինչպես նաև կատարված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են խնդիրներ կարգապահական իրավախախտումը Կարգապահական կանոնագրքի 31-րդ հոդվածով (հրամանը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը) որակելու հետ կապված:

<sup>467</sup> Տե՛ս, այդ հարցով վերջին գործերի շարքում Եվրոպական դատարանի Մեծ Պալատի վճիռները Ջուսիլլան ընդդեմ Ֆինլանդիայի գործով, գանգատ թիվ 73053/01, 30 և 31 կետեր, Էզեիը և Քոննորսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով, գանգատներ թիվ 39665/98 և 40086/98, 82-86 կետեր:

<sup>468</sup> Տե՛ս, Ռոհլենան ընդդեմ Չեխիայի Հանրապետության գործով 2015 թվականի հունվարի 27-ի վճիռը, գանգատ թիվ 59552/08, կետ 57,58)

Օրինակ, սպան ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքով տեղեկացրել է, որ ծառայության վայր ոչ սթափ վիճակում ներկայանալու հանգամանքները պարզաբանելու նպատակով նշանակվել է ծառայողական քննություն, որի արդյունքում իրեն հայտարարվել է կարգապահական տույժ՝ «զինվորական ծառայությունից արձակում»:

Բողոքի քննարկման ընթացքում պարզվել է, որ սպան կարգապահական տույժի է ենթարկվել հրամանատարի (պետի) օրինական և սահմանված կարգով տրված հրամանը ստորադասի (ենթակայի) կողմից չկատարելու համար, քանի որ վերջինս զորամաս բազմիցս ներկայացել է անսթափ վիճակում, ինչի կապակցությամբ նրա հետ անհատական զրույց է անցկացվել և նա խոստացել է նման վարքագիծ այլևս չդրսևորել: Սակայն, հետագայում ևս շարունակել է ներկայանալ ծառայության ոչ սթափ վիճակում՝ այդ կերպ խախտելով ՀՀ պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի «ՀՀ զինված ուժերի սպայի պատվի կանոնները հաստատելու մասին» թիվ 992-Ն հրամանով հաստատված կանոնների 6-րդ (արժևորել սեփական խոսքը, խուսափել անհարկի խոստումներից, պահպանել տրված խոստումը՝ միաժամանակ գիտակցելով տրված խոստման հնարավոր բացասական հետևանքները) և 12-րդ (իր վարքով նպաստել հասարակության այն համոզմունքի ձևավորմանը և պահպանմանը, որ զինվորական ծառայության համակարգը հիմնված է ազնվության, արդարության ու Հայրենիքի պաշտպանության գաղափարի վրա) կետերի պահանջները:

Այս պարագայում, էական նշանակություն ունի այն հանգամանքը, թե արդյոք ՀՀ պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանով սահմանված վարքագծի կանոնները խախտելը կարող է որակվել Կարգապահական կանոնագրքի 31-րդ հոդվածով, և թե արդյոք հրամանը պետք է ուղղված լինի անորոշ շրջանակի, թե՛ կոնկրետ զինծառայողների:

Այսպես, 31-րդ հոդվածի համաձայն՝ հրամանատարի (պետի) օրինական և սահմանված կարգով տրված հրամանը ստորադասի (ենթակայի) կողմից չկատարելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն:

Զինծառայողները կարող են պատասխանատվության ենթարկվել միայն օրինական և սահմանված կարգով տրված հրամանը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

«Հրամանը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը» զանցանքի էությունը բացահայտելու համար անհրաժեշտ է պարզել «հրաման» և «պետ» հասկացությունների բովանդակությունը:

Այսպես, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքով (այսուհետ՝ Ներքին ծառայության կանոնագիրք) սահմանվում է հրաման հասկացությունը: Այսպես՝ 37-րդ հոդվածի համաձայն՝ հրամանը հրամանատարի (պետի) կարգադրություն է՝ ուղղված ենթականերին, որ պահանջում է որոշակի գործողություններ կատարել, այս կամ այն կանոնը պահպանել, սահմանում է ինչ-որ կարգ, դիրք:

Հրամանը կարող է տրվել գրավոր, բանավոր, կապի տեխնիկական միջոցներով՝ մեկ զինծառայողի, զինծառայողների խմբին կամ զորամասին (ստորաբաժանմանը):

Գրավոր հրամանը զինվորական կառավարման հիմնական կարգադրիչ, պաշտոնական փաստաթուղթ է (իրավական ակտ), որ միանձնյա ղեկավարման իրավունքով հրապարակում են զորամասերի հրամանատարները (հիմնարկների պետերը): Բանավոր հրամաններ տալիս են բոլոր հրամանատարները (պետերը):

Այսպիսով, որպեսզի հրամանը համարվի օրինական և սահմանված կարգով տրված, ի թիվս այլ պահանջների, այն պետք է **ուղղված լինի մեկ զինծառայողի, զինծառայողների խմբին կամ զորամասին (ստորաբաժանմանը):**

**Հետևաբար, Պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանի պահանջները չկատարելը չի կարող հանգեցնել Կանոնագրքի 31-րդ հոդվածով սահմանված զանցանքի կատարմանը, քանի որ դրանով վարքագծի կանոններ են սահմանվում բոլոր զինծառայողների**

**համար:** Ներքին ծառայության կանոնագրքի 41-րդ հոդվածի համաձայն՝ **հրամանատարի** (պետի) հրամանը պետք է կատարվի անվերապահորեն, ճշտորեն և նշված ժամկետում (Ավելին՝ զինծառայողը, ստանալով հրամանը, պատասխանում է «Լույս է» և հետո կատարում այն):

Կանոնագրքի դրույթը նաև հստակեցնում է, որ անհրաժեշտության դեպքում, տրված հրամանի ճիշտ ընկալումը ստուգելու նպատակով հրամանատարը (պետը) կարող է պահանջել նրա համառոտ կրկնությունը, իսկ զինծառայողը, ստանալով հրամանը, դիմել հրամանատարին (պետին) այն կրկնելու խնդրանքով: Ստացված հրամանի կատարման մասին զինծառայողը պարտավոր է զեկուցել հրաման տված պետին և իր անմիջական պետին:

Այնինչ, Պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանների դեպքում զինծառայողները դրա մասին չեն զեկուցում իրենց անմիջական պետերին, այդ հրամանների կատարման համար ժամկետ նշված չէ:

Ներքին ծառայության կանոնագրքի 33-րդ հոդվածի համաձայն՝ պետերը, որոնց զինծառայողները ենթարկվում են ծառայության բերումով, թեկուզ և ժամանակավորապես, ուղղակի պետեր են համարվում: Ենթակային ամենամոտ ուղղակի պետը կոչվում է անմիջական պետ:

Հատկանշական է, որ հրամանը՝ որպես իրավական ակտի տեսակ, օրենքից և կառավարության որոշումից ցածր իրավաբանական ուժ ունի, սակայն դրա համար նախատեսված է խիստ պատասխանատվություն, որը կապված է այն հանգամանքի հետ, որ դրանով խախտվում է զինվորական ծառայության կարևորագույն սկզբունքներից մեկը՝ «Միանձնյա ղեկավարությունը»: Համաձայն Ներքին ծառայության կանոնագրքի 31-րդ հոդվածի՝ միանձնյա ղեկավարությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կազմավորման, ղեկավարման և զինծառայողների փոխհարաբերության սկզբունքներից մեկն է: Դա հրամանատարին (պետին) իր ենթակաների նկատմամբ ողջ կարգադրողական իշխանությամբ օժտելն է և նրա վրա պետության հանդեպ անձնական պատասխանատվություն դնելը գորամասի, ստորաբաժանման և ամեն մի զինծառայողի կյանքի ու գործունեության բոլոր կողմերի համար:

Ավելին՝ միանձնյա ղեկավարությունը դրսևորվում է հրամանատարի (պետի)՝ իրադրության համակողմանի գնահատումից ելնելով՝ միանձնյա կերպով որոշումներ ընդունելու, օրենքներին ու զինվորական կանոնադրություններին խստիվ համապատասխան հրամաններ արձակելու և դրանց կատարումն ապահովելու իրավունքի մեջ:

Հարկ է նկատի ունենալ, որ ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածով սահմանված հանցագործությունը Կարգապահական կանոնագրքով սահմանված կարգապահական զանցանքից տարբերվում է միայն առաջացրած հետևանքով, այն է՝ ծառայության շահերին էական վնաս պատճառելը:

Հետևաբար, արարքը Կարգապահական կանոնագրքի 31-րդ հոդվածով որակելու համար անհրաժեշտ է հանցակազմի համար սահմանված բոլոր հատկանիշները՝ բացառությամբ հետևանքի:

Այս հանցագործության անմիջական օբյեկտը զինվորական ենթակայության կարգն է, և դրանով խախտվում է զինված ուժերի կազմավորման և գործունեության այնպիսի կարևոր սկզբունք, ինչպիսին է միանձնյա ղեկավարումը (այդ թվում՝ անմիջական ենթակայությունը):

Հրամանը պետի կողմից կոնկրետ ստորադասին կամ ստորադասների խմբին ուղղված պարտադիր պահանջ է՝ կատարելու կամ չկատարելու այս կամ այն գործողությունը:

Հրամանից պետք է տարբերել այն պահանջները, որոնք նախատեսված են զինվորական կանոնադրություններում ու կանոնագրքերում և ուղղված են զինծառայողների անորոշ շրջանակի<sup>469</sup>:

Ինչ վերաբերում է ՀՀ պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի «ՀՀ զինված ուժերի սպայի պատվի կանոնները հաստատելու մասին» թիվ 992-Ն հրամանով հաստատված կանոնները խախտելու համար սահմանված պատասխանատվությանը, ապա անհրաժեշտ է նշել, որ կարգապահական խախտում է համարվում, ի թիվս այլնի, նաև սպայական կազմի զինծառայողի կողմից հաշվետու կամ ուսումնական տարվա արդյունքներով ծառայողական գործառույթները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ **սպայի պատվի կանոնները խախտելը**:

Հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ զինվորական կարգապահությունն ապահովվում է յուրաքանչյուր զինծառայողի կողմից Հայաստանի Հանրապետության պաշտպանության, զինվորական պարտքի և իր պարտականությունների կատարման համար անձնական պատասխանատվության գիտակցմամբ, ինչպես նաև **հրամանատարների (պետերի) կողմից իրենց լիազորությունների շրջանակներում տրված հրամանների ճշգրիտ ու ժամանակին կատարմամբ**:

Այս բնորոշումից պարզ է դառնում, որ բոլոր իրավական ակտերը, որոնցով պարտականություններ են սահմանված զինծառայողների համար, զինվորական կարգապահության բաղկացուցիչ մասն են կազմում:

Այլ կերպ ասած, թեև Կարգապահական կանոնագրքով նշվում է, որ սպայի պատվի կանոնները խախտելը հանդիսանում է կարգապահական զանցանք, սակայն նշված չէ, թե Կարգապահական կանոնագրքով սահմանված 15 զանցանքից կոնկրետ որ զանցանքն է: Ավելին՝ սպայի պատվի կանոնները խախտելու համար ուղղակիորեն պատասխանատվություն կամ տույժի տեսակ սահմանված չէ: Հետևաբար, սպայի պատվի կանոնների խախտման դեպքում անհրաժեշտ է ծառայողական քննությամբ պարզել, թե զինծառայողը Կարգապահական կանոնագրքով նախատեսված որ զանցանքն է կատարել (օրինակ՝ հնարավոր է, որ դա հանգեցնի «Ներքին ծառայության կանոնագրքային կանոնները խախտելը» կամ «Անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ» կարգապահական զանցանքներին):

***Բոլոր դեպքերում զինծառայողներին վերագրվող իրավախախտումները պետք է համապատասխանեն իրավական որոշակիության չափանիշներին:***

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի<sup>470</sup>:

Հետևաբար, Կարգապահական կանոնագրքում սպայի պատվի կանոնները խախտելը որպես կարգապահական տույժ սահմանված լինելն ինքնին բավարար չէ այդ կանոնները խախտելը Կարգապահական կանոնագրքի 31-րդ հոդվածով որակելու համար:

*Հետևաբար, առաջարկվում է՝*

<sup>469</sup> Մա հստակ է նաև մասնագիտական տեսական գրականության մեջ, տես օրինակ՝ Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, հատուկ մաս, դասագիրք բուհերի համար, ԵՊՀ հրատարակչություն, Երևան 2012թ.:

<sup>470</sup> Տե՛ս, ՀՀ սահմանադրական դատարանի 2016 թվականի մայիսի 3-ի թիվ ՍԴՌ-1270 որոշումը:



1. Բացառել Պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանները խախտելու համար զինծառայողներին Կարգապահական կանոնագրքի 31-րդ հոդված նախատեսված զանցանք վերագրելու պրակտիկան,

2. Կարգապահական կանոնագրքում սպայի պատվի կանոնները խախտելու համար սահմանել առանձին զանցանք:

#### 4. Վարժական հավաքներից խուսափելու համար սահմանված պատասխանատվությունը

ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի համաձայն՝ Պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որը ոչ միայն հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, այլ նաև նպաստում է իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը: Ընդ որում՝ նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանն ուղղված առաջարկություններ ներկայացվում են, ինչպես պրակտիկայում առաջացած խնդիրների, այնպես էլ կատարված ուսումնասիրությունների արդյունքում:

Պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրվել է վարժական հավաքից խուսափելու համար սահմանված պատասխանատվության խնդիրը:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի համաձայն. «Ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական զորակոչից, **վարժական հավաքից** կամ զորավարժանքից խուսափելը՝ այդ ծառայությունից ազատվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում՝ պատժվում է...»:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 213.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պահեստագործում հաշվառված զինապարտ քաղաքացիների կողմից **վարժական հավաքներից խուսափելը**, որը կատարվել է զինկոմիսարիատի կողմից տրված ծանուցագրում նշված ժամկետում առանց հարգելի պատճառների զինկոմիսարիատ չներկայանալու ձևով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:

Ստացվում է, որ ֆորմալ առումով նույն արարքի համար նախատեսված է պատասխանատվության երկու տարբեր տեսակներ՝ քրեական և վարչական:

Այս առումով պետք է նկատել, որ ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգրքով նախատեսված իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն առաջանում է, եթե այդ խախտումներն իրենց բնույթով քրեական պատասխանատվություն չեն առաջացնում:

Հետևաբար, նշված իրավակարգավորումների պարագայում առաջանում է անորոշություն՝ վարժական հավաքներից խուսափելու դեպքում անձին ենթարկել վարչական, թե քրեական պատասխանատվություն:

*Ուստի, առաջարկվում է առաջին անգամ վարժական հավաքներին չներկայանալու համար սահմանել միայն վարչական պատասխանատվություն, իսկ մեկից ավելի անգամ չներկայանալու համար՝ քրեական պատասխանատվություն:*

**5. Մշտական տեղակայման գորամասից այլ գորամաս տեղափոխելու հետ կապված պրակտիկայի որոշ հարցեր**

ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական գործով նախաքննության իրականացման նկատառումներից ելնելով՝ զինձառայողները կարող են նախաքննության մարմնի գրավոր պահանջով տեղափոխվել իրենց մշտական տեղակայման գորամասից այլ գորամաս՝ կասեցնելով մշտական տեղակայման գորամասում զինձառայողի պաշտոնով նախատեսված զինվորական պարտականությունների կատարումը:

2018 թվականի ընթացքում պարտադիր ժամկետային զինձառայողների ծնողների կողմից Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ այն մասին, որ նախաքննության ավարտից հետո զինձառայողները չեն տեղափոխվում մշտական ծառայության գորամաս և շարունակում են պահվել այլ գորամասում:

Օրինակ, պարտադիր ժամկետային զինձառայողի ծնողը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքով տեղեկացրել է, որ զինվորական հոսպիտալն ինքնակամ լքելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործի շրջանակներում որդին տեղափոխվել է Պաշտպանության նախարարության Ռազմական ոստիկանության ստորաբաժանում: Նշել է, որ գործով նախաքննությունն ավարտվել է, սակայն որդուն չեն տեղափոխել մշտական ծառայության գորամաս:

Բողոքի քննարկման արդյունքում զինձառայողը տեղափոխվել է մշտական ծառայության գորամաս:

Խնդիրը կարևոր է ինչպես այլ գորամաս տեղափոխված զինձառայողների իրավունքների պաշտպանության, այդ թվում՝ զինվորական մասնագիտության հմտությունները սովորելու, այնպես էլ զինվորական ծառայությունն արդյունավետ կազմակերպելու առումով:

Խնդիրը կարևոր է նաև հրամանատարների մտահոգությամբ պայմանավորված: Մասնավորապես՝ գորամասերում ստորաբաժանումների հրամանատարները հարց են բարձրացրել, որ ենթակա ստորաբաժանման զինձառայողին այլ գորամասում պահելու պատճառով բարդանում է զինվորական ծառայության կազմակերպումը վերակարգի նշանակման, ինչպես նաև մարտական հերթապահության իրականացման հետ կապված:

*Ուստի, առաջարկվում է խիստ հսկողություն սահմանել, որ նախաքննության ավարտից անմիջապես հետո այլ գորամաս տեղափոխված զինձառայողները տեղափոխվեն մշտական ծառայության գորամաս:*

## ԳԼՈՒԽ 8. ԶԻՆՏԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### *1. Հայաստանի Հանրապետության զինված ուժերում մահվան և ինքնավնասման դեպքերը*

Կյանքի իրավունքը՝ որպես բնական, հիմնարար և անօտարելի արժեք, ամրագրված է թե՛ ՀՀ կողմից վավերացված միջազգային փաստաթղթերով, թե՛ ՀՀ Սահմանադրությամբ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում պաշտպանական ոլորտի գերատեսչության կողմից ներկայացված տվյալների հիման վրա ուսումնասիրվել է 2018 թվականի ընթացքում զինձառայողների կյանքի իրավունքի պաշտպանության վիճակը:

Մասնավորապես, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված տվյալների համաձայն՝ 2018 թվականի ընթացքում գրանցվել է 63 զինձառայողի մահվան ելքով դեպք: Հակառակորդի զինված ուժերի կողմից արձակված կրակոցների հետևանքով զոհվել է 7 զինձառայող: Մնացած 56 դեպքը տեղի է ունեցել՝ մարտական հերթապահության կրման և զինվորական ծառայության անվտանգության ապահովման, ինչպես նաև զինձառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնների խախտումների, ինքնասպանություն գործելու, հիվանդությունների, ճանապարհատրանսպորտային ու դժբախտ պատահարների հետևանքով: Ծառայության հետ կապված ավտովթարներից գրանցվել է 6 զինձառայողի մահվան դեպք:

Ըստ ներկայացված տեղեկությունների՝ 2018 թվականի ընթացքում գրանցվել է զինձառայողների կողմից ինքնավնասման (ինքնախեղման) 57 դեպք, որոնցից շուրջ 67%-ը կապված է ծառայության հետ:

Չնայած այն հանգամանքին, որ 2017 թվականի համեմատությամբ զինված ուժերում մահվան և ինքնավնասման դեպքերը նվազել են (2017 թվականին արձանագրվել էր մահվան 75, ինքնավնասման 69 դեպք, այսինքն՝ յուրաքանչյուրը նվազել է 12-ով)՝ այնուամենայնիվ, զինված ուժերում մահվան և ինքնավնասման դեպքերի քանակը խիստ մտահոգիչ է, և Պաշտպանության նախարարությունը պետք է հստակ և տեսանելի քայլեր ձեռնարկի դրանց պատճառներն ու նպաստող պայմանները վերհանելու, դրանց համակարգային լուծումներ տալու և արդյունքում՝ դրանք բացառելու ուղղությամբ:

ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած տեղեկությունների համաձայն՝ մահվան դեպքերի առնչությամբ անցկացվել են ծառայողական քննություններ՝ պարզելու ծառայության կազմակերպման ու իրականացման ժամանակ տեղ գտած թերություններն ու բացթողումները, արձակվել են հրամաններ և կրկնությունը բացառելու նպատակով զորամասերի հրամանատարական կազմին կոնկրետ հանձնարարականներ են տրվել, նախանշվել կանխարգելիչ աշխատանքների ուղղությունները: Ծառայողական քննությունների արդյունքներով վերադաս, ինչպես նաև զորամասերի հրամանատարության արձակված հրամաններով պարտականությունների կատարման մեջ թերացած զինձառայողները ենթարկվել են կարգապահական պատասխանատվության: Ինքնավնասման դեպքերի կանխարգելմանն ուղղված աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով զինվորական կոլեկտիվներում իրականացվել են սոցիալ-հոգեբանական գործընթացների, զինձառայողների անհատական-հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրություն, հոգեբանական խորհրդատվության տրամադրում և անհատական-դաստիարակչական աշխատանք, ինչպես նաև Երևանի պետական համալսարանի հետ համագործակցությամբ սպաների, կրտսեր հրամանատարական կազմի զինձառայողների հոգեբանական պատրաստության մակարդակը բարձրացնելու նպատակով կազմակերպվել են վերապատրաստման

դասընթացներ, համատեղ մշակվել է «Զինվորի հոգեկան հատկությունների գնահատման և զարգացման» մեթոդական ձեռնարկը, որը հրատարակվել և առօրյա գործածության համար ուղարկվել է գորքեր:

Կյանքի իրավունքի պաշտպանությունից բխում է և դրա հետ սերտորեն փոխկապակցված է զինծառայողների մահվան գործերով արդյունավետ քննություն իրականացնելու պարտականությունը՝ պարզելու մահվանը հանգեցրած հանգամանքները:

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 7-րդ կետը սահմանում է, որ անդամ պետությունները պետք է ստեղծեն անկախ և արդյունավետ մեխանիզմներ զինծառայողների մահվան կամ նրանց կյանքի իրավունքի դեմ կատարված ոտնձգությունների պատշաճ քննության համար: Հանձնարարականի համաձայն՝ զինված ուժերի յուրաքանչյուր անդամի համար պետք է երաշխավորվի արդար դատաքննության իրավունքը:

Հանձնարարականի մեկնաբանությունների «Ա» կետի համաձայն՝ քննությունն արդյունավետ համարելու համար անհրաժեշտ է բավարարել չորս պահանջ.

1) Գործի քննությունը պետք է լինի անկախ, մասնավորապես, երբ կան կասկածներ առ այն, թե ինչպես է զինծառայողը մահացել: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն այս կապակցությամբ նշել է, որ կյանքի իրավունքի դատավարական պաշտպանությունը պետք է ներառի անկախ քննություն իրականացնելու որոշակի հնարավորություն, որի նպատակն է պարզել, թե ինչ հանգամանքներում է մահը վրա հասել, և հաստատել, թե ով պետք է պատասխանատվություն կրի<sup>471</sup>: Քննություն իրականացնելու համար պատասխանատու անձինք պետք է լինեն իրադարձություններում ներգրավված անձանցից անկախ<sup>472</sup>:

2) Պետության պարտավորության մասն է արդյունավետ պաշտպանության համար օրենսդրական և վարչական կառուցակարգի ապահովումը, որը ներառում է ապացույցներ հավաքելու համար պատշաճ ընթացակարգերը՝ պատասխանատվության կարգապահական կամ քրեական բնույթը պարզելու համար<sup>473</sup>:

3) Քննությունը պետք է կատարվի անհապաղ և ողջամտորեն, մասնավորապես՝ երբ քննությունը վերաբերում է զինծառայողների կողմից ուժի գործադրման հետևանքով առաջացած մահվանը<sup>474</sup>: «Անհապաղ» նշանակում է, որ գործի քննությունը պետք է սկսել մահվան վրա հասնելուց հետո հնարավորին շուտ, և «ողջամիտ ժամկետում» եզրույթը ենթադրում է, որ քննությունը չպետք է անհարկի ձգձգվի: Այն դեպքերում, երբ մահը վրա է հասել ուժի կիրառման հետևանքով, Եվրոպական դատարանը համարել է, որ քննություն իրականացնող մարմինների կողմից անհապաղ քննություն իրականացնելն էական է՝ վերջիններիս օրենքի գերակայության սկզբունքներին *հավատարիմ* լինելու առումով հանրության վստահությունը պահպանելու, ինչպես նաև անօրինական արարքների շուրջ գաղտնի համաձայնության գալու կամ դրանց նկատմամբ հանդուրժողականության ցանկացած դրսևորում կանխելու համար<sup>475</sup>:

<sup>471</sup> Տե՛ս, Մալգինն ընդդեմ Թուրքիայի 2007 թվականի մայիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 46748/99, կետ 86

<sup>472</sup> Տե՛ս, ՄըքՔերն ընդդեմ Մեծ Բրիտանիայի 2001 թվականի օգոստոսի 4-ի վճիռը, գանգատ թիվ 28883/95, կետ 112

<sup>473</sup> Տե՛ս, Կիլինչը և այլք ընդդեմ Թուրքիայի 2005 թվականի սեպտեմբերի 7-ի վճիռը, գանգատ թիվ 40145/98, կետ 41:

<sup>474</sup> Տե՛ս, Հյու Ջորդանն ընդդեմ Մեծ Բրիտանիայի 2001 թվականի օգոստոսի 4-ի վճիռը, գանգատ թիվ 24746/94, 107 և 108 կետեր:

<sup>475</sup> Տե՛ս, Քեյլին և այլք ընդդեմ Մեծ Բրիտանիայի 2001 թվականի օգոստոսի 4-ի վճիռը, գանգատ թիվ 30054/96, կետ 97:

4) Պետք է առկա լինի քննության կամ դրա արդյունքների նկատմամբ հանրային վերահսկողության բավարար տարրը՝ ապահովելու համար քննության հաշվետվողականությունն ինչպես գործնականում, այնպես էլ տեսականորեն: Հանրային վերահսկողության նվազագույն պահանջն այն է, որ տուժողի իրավահաջորդը դատավարության գործընթացում պետք է լինի բավարար չափով ներգրավված, որպեսզի կարողանա երաշխավորել իր օրինական շահերի պաշտպանությունը<sup>476</sup>:

Այս ամենից բացի՝ գործի քննությունը պետք է լինի նաև մանրակրկիտ: Ըստ Եվրոպական դատարանի՝ իշխանությունները մշտապես պետք է լուրջ ջանքեր գործադրեն՝ պարզելու համար, թե ինչ է տեղի ունեցել, և չպետք է ապավինեն հապճեպ կամ վատ հիմնավորված հետևությունների՝ գործի քննությունը դադարեցնելու կամ այլ որոշումներ կայացնելու համար<sup>477</sup>:

Հատկանշական է, որ զինծառայողների մահվան դեպքերի արդյունավետ քննության անհրաժեշտությունը Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների հետ քննարկվել է նաև 2019 թվականի փետրվարի 15-ին «Զինված ուժերում մարդու իրավունքների եվրոպական չափանիշների կիրառման ամրապնդումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում Եվրոպայի խորհրդի կողմից կազմակերպված կլոր սեղան-քննարկման շրջանակներում, որին մասնակցել են նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցչության, դատական դեպարտամենտի, Պաշտպանության և Արդարադատության նախարարությունների, Ռազմական ոստիկանության, Քննչական կոմիտեի, Հատուկ քննչական ծառայության, Դատախազության, Արդարադատության ակադեմիայի, Եվրոպայի խորհրդի ՄԻԵԴ վճիռների կատարման դեպարտամենտի ներկայացուցիչները:

Հանդիպման ընթացքում քննարկվել են քրեական վարույթի արդյունավետ քննությանն առնչվող հարցեր, մասնավորապես՝ անդրադարձ է կատարվել ոլորտի հետ կապված Հայաստանի Հանրապետության դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարմանն ուղղված՝ Կառավարության կողմից ներկայացվող գործողությունների ծրագրերին, խնդիրների լուծմանն ուղղված համակարգային միջոցներին: Հատուկ ուշադրություն է դարձվել «Մուրադյանն ընդդեմ Հայաստանի» գործով ՄԻԵԴ վճիռի կատարման հետ կապված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե ներկայացված հատուկ դիրքորոշմանը:

Միաժամանակ, պետք է նշել, որ ՀՀ զինված ուժերը գտնվում են հասարակության ուշադրության կենտրոնում, ուստի զինված ուժերում յուրաքանչյուր մահվան դեպքի վերաբերյալ պետք է հանրությանը ճշգրիտ տեղեկատվություն տրամադրվի իրավասու աղբյուրից և ամենասեղմ ժամկետում:

Թեև 2018 թվականին զինծառայողների մահվան դեպքերի վերաբերյալ տեղեկությունների հրապարակման հապաղման վերաբերյալ տվյալներ չեն ստացվել, սակայն մտահոգիչ է 2019 թվականի հունվարի 1-ին պայմանագրային զինծառայողի մահվան դեպքի վերաբերյալ տեղեկությունը միայն օրեր անց, ընդ որում՝ ոչ Պաշտպանության նախարարության կողմից հրապարակվելու հանգամանքը: Ըստ զանգվածային լրատվության միջոցներով տարածված տեղեկությունների՝ նշված դեպքը եզակի չէ:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ զինված ուժերում մահվան դեպքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ցանկացած հապաղում կարող է հիմք հանդիսանալ չստուգված աղբյուրներից տեղեկությունների հրապարակման, ինչն իր հերթին կարող է խարխիլել հանրային վստահությունը: Զինված ուժերում մահվան յուրաքանչյուր դեպքի

<sup>476</sup> Տե՛ս, ՄըքՔերն ընդդեմ Մեծ Բրիտանիայի 2001 թվականի օգոստոսի 4-ի վճիռը, գանգատ թիվ 28883/95, կետ 115

<sup>477</sup> Տե՛ս, Ջելիլովին ընդդեմ հունաստանի 2007 թվականի օգոստոսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 17060/03, կետ 56:

վերաբերյալ տեղեկությունների ճշգրիտ և ժամանակին հրապարակումն ունի նաև հանրության շրջանում լարվածության մթնոլորտի ձևավորումը կանխարգելող նշանակություն:

*Հետևաբար, անհրաժեշտ է՝*

*1. զինված ուժերում մահվան և ինքնավնասման դեպքերի կանխարգելման և ընդհանուր իրազեկվածության բարձրացման ուղղությամբ ձեռնարկել գործուն միջոցներ, այդ թվում՝ զինճառայողների հետ տարվող անհատական հոգեբանական աշխատանքների իրականացման միջոցով,*

*2. յուրաքանչյուր մահվան դեպքի մասին հանրությանը ամենասեղմ ժամկետում տրամադրել ճշգրիտ տեղեկություններ,*

*3. արձանագրված մահվան և ինքնավնասման դեպքերի ուսումնասիրության հիման վրա իրականացնել դրանց պատճառների և նպաստող պայմանների համակողմանի վերլուծություն՝ միջոցներ ձեռնարկելով հետագայում նմանատիպ դեպքերի կանխարգելման ուղղությամբ:*

## **2. Հայաստանի Հանրապետության զինված ուժերում բռնության դեպքեր**

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի՝ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 10-րդ կետի համաձայն՝ անդամ պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն զինճառայողների խոշտանգումներից կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից պաշտպանելու համար: Հատուկ ուշադրություն պետք է դարձվի առավել խոցելի կատեգորիաներին, ինչպիսիք են, օրինակ, նորակոչիկները (պարտադիր ժամկետային զինճառայողները):

2018 թվականի ընթացքում Պաշտպանը ստացել է բողոքներ զինճառայողների նկատմամբ ենթադրյալ բռնություն և անմարդկային վերաբերմունք դրսևորելու վերաբերյալ:

Մասնավորապես, պարտադիր ժամկետային զինճառայողի պահման վայրի, նրան բժշկական օգնություն չտրամադրելու, նրա նկատմամբ անմարդկային վերաբերմունք դրսևորելու և խոշտանգելու, այդ թվում՝ Երևանի կայազորային զինվորական հոսպիտալում և Ռազմական ոստիկանությունում ծեծելու, ապօրինաբար Ռազմական ոստիկանությունում պահելու ենթադրյալ դեպքերի առթիվ Մարդու իրավունքների պաշտպանին է դիմել փաստաբանը և տեղեկացրել, որ վերը նշվածի վերաբերյալ հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն և ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

Մարդու իրավունքների պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ գլխավոր դատախազություն՝ առաջարկելով տրամադրել տեղեկություններ փաստաբանի ներկայացրած հաղորդման քննարկման ընթացքի և դրա արդյունքների մասին:

Պաշտպանի գրությանն ի պատասխան՝ Դատախազությունից տրամադրվել է տեղեկություն այն մասին, որ փաստաբանի կողմից ՀՀ գլխավոր դատախազին և ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին ներկայացրած «հանցագործության մասին հաղորդում» վերտառությամբ դիմումն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 4-րդ կայազորային քննչական բաժին և հանձնարարվել քննության առարկա դարձնել դիմումում ներկայացված փաստերն ու հանգամանքները:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ նշված քրեական գործի վարույթը դեռևս չի ավարտվել, և փաստաբանի կողմից բարձրացված հարցերը գտնվում են Պաշտպանի անմիջական ուշադրության ներքո:

Պաշտպանի աշխատակազմ ստացվել է նաև մեկ այլ բողոք պարտադիր ժամկետային զինծառայողին ծեծելու և ցուցմունք տալուն հարկադրելու վերաբերյալ:

Մարդու իրավունքների պաշտպանն անմիջապես գրություն է հասցեագրել ՀՀ գլխավոր դատախազություն՝ առաջարկելով քրեական վարույթի շրջանակներում ստուգել նկարագրված հանգամանքները, իսկ այդպիսի վարույթ նախաձեռնած լինելու դեպքում՝ տեղեկություններ տրամադրել դրա ընթացքի վերաբերյալ:

Պաշտպանի աշխատակազմում ընդունվել է ի գիտություն Դատախազության տրամադրած տեղեկությունն այն մասին, որ քրեական գործի օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննության արդյունքում սպայի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է:

Չնայած նշվածին՝ Պաշտպանին հասցեագրված բողոքների առկայությունն արդեն իսկ մտահոգիչ է: *Հետևաբար, անհրաժեշտ է՝*

*1. կանխարգելիչ միջոցներ ձեռնարկել զինված ուժերում զինծառայողներին խոշտանգումներից կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից պաշտպանելու համար: Հատուկ ուշադրություն պետք է դարձվի պարտադիր ժամկետային զինծառայողներին բռնություններից պաշտպանելու հարցին,*

*2. զինված ուժերում ցանկացած բռնության վերաբերյալ տեղեկություն դարձնել օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննության առարկա:*

## ԳԼՈՒԽ 9. ԿԱՆԱՅՔ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

### 1. Կանանց ընդհանուր վիճակը ՀՀ զինված ուժերում

Կանանց և տղամարդկանց՝ պատմականորեն արմատավորված անհավասարության վերացման, կանանց իրավունքների ճանաչման, դրանց պաշտպանության և հավելյալ երաշխիքների սահմանման համար Հայաստանը 1993 թվականին վավերացրել է «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան և կանանց իրավունքներն ամրագրող մի շարք միջազգային պայմանագրեր և կոնվենցիաներ: Օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածով: Միաժամանակ, կարևորելով կանանց և տղամարդկանց հավասարությունը՝ այս սկզբունքն իր ամրագրումն է ստացել ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածում, համաձայն որի՝ կանայք և տղամարդիկ իրավահավասար են:

Բացի այդ, ըստ Սահմանադրության 86-րդ հոդվածի՝ որպես պետության քաղաքականության հիմնական նպատակ է ամրագրվել կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը: Կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովման երաշխիքներ են նախատեսված նաև «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» 2013 թվականի ՀՀ օրենքում, որը սակայն գործուն մեխանիզմների բացակայության պատճառով, չնայած անընդհատ բարձրաձայնումների, շարունակել է մնալ չկիրառված: Ավելին, որպես կայուն զարգացման նպատակ է ամրագրված նաև կանանց և տղամարդկանց միջև հավասարության ապահովումը<sup>478</sup>:

Նախևառաջ, խնդիրն այն է, որ կանանց նկատմամբ խտրականության բացառման և կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ամրապնդման ուղղությամբ պետական միասնական քաղաքականություն առկա չէ: Այսպես, «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 483-Ն որոշմամբ ամրագրված՝ 2017 թվականին կատարման համար նախատեսված գործողություններից է եղել նաև «ՀՀ-ում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի» նախագծի մշակումը, որը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կատարվել և սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարություն, սակայն 2018 թվականին չի ընդունվել: Արդյունքում, չնայած առանձին օրենսդրական և գործնական բարեփոխումների, այնուամենայնիվ համակարգային առումով կանանց նկատմամբ խտրականության բացառման ուղղությամբ տարվող աշխատանքները բավարար ծավալով չեն իրականացվել:

Կանանց և տղամարդկանց հավասարության պահպանումն առավել կարևորվում է ՀՀ զինված ուժերում, քանի որ պաշտպանության բնագավառում կանայք առավել խոցելի են: Դրան է նպաստում նաև հանրության մոտ ձևավորված այն կարծրատիպը, թե զինվորական ծառայությունը նախատեսված է միայն տղամարդկանց համար: Այդ կարծրատիպի ձևավորմանը նպաստում է նաև այն, որ ՀՀ-ում պարտադիր զինվորական ծառայության ենթակա են միայն տղամարդիկ, իսկ կանայք զինվորական ծառայության ներգրավվում են միայն պայմանագրային հիմունքներով:

<sup>478</sup> Sustainable Development Goals (SDG) N 5



Պետք է նշել նաև, որ հայ ժողովրդի պատմության ամենաճանր ժամանակաշրջաններում տեղի ունեցած մարտական գործողությունների, այդ թվում՝ Արցախյան գոյամարտի ժամանակ իրենց ուրույն դերն են ունեցել նաև կանայք: Դժվար է թերագնահատել կանանց դերը նաև այժմյան զինված ուժերում: Հետևաբար, պետությունը պետք է ջանքեր չինայի ՀՀ զինված ուժերում կանանց իրավունքների երաշխավորման ուղղությամբ:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ «Կանայք զինված ուժերում. հավասարության խթանում, գենդերային հիմքով բռնության վերացում» 2016 թվականի թիվ 2120 բանաձևի 2-րդ կետում նշվում է, որ ավելի մեծ թվով կանանց անձնակազմում ներգրավելն ու պահելը դարձել է զինված ուժերի կարևորագույն խնդիրներից մեկը: Սակայն, չնայած այն փաստին, որ վերջին տասնամյակների ընթացքում Եվրոպայի բանակներն աստիճանաբար ավելի դրական են վերաբերվում զինված ուժերը կանանցով համալրելու հարցին՝ կանայք զինված ուժերում և հատկապես՝ հրամանատարական բարձր կոչումներ ունեցող անձանց շարքերում, դեռևս շարունակում են փոքրամասնություն կազմել: Բանաձևի 3-րդ կետում նշվում է, որ զինված ուժերին միացող կանայք հայտնվում են տղամարդկանց կողմից և հենց նրանց համար մշակված միջավայրում: Նրանք ենթարկվում են տարատեսակ խտրականությունների, բախվում են կոշտ աշխատանքային ռեժիմով աշխատելու և կարծր մտածելակերպի խնդիրներին, որոնք դեռևս արմատացած են զինված ուժերին բնորոշ «տղամարդկային մոտեցումներում»:

## ***2. Զինված ուժերում կանանց իրավունքների օրենսդրական երաշխիքները***

Միանշանակ է, որ կանանց իրավունքների պաշտպանությունը զինված ուժերում երաշխավորելու ամենակարևոր քայլերից մեկը զինվորական օրենսդրությամբ համապատասխան երաշխիքների ամրագրումն է: Ընդհանուր առմամբ, պետք է նշել, որ մեր զինվորական օրենսդրության ընդհանուր ուսումնասիրության արդյունքում կանանց նկատմամբ խտրականություն պարունակող իրավական նորմեր չեն հայտնաբերվել: Սակայն կին զինծառայողների իրավունքներն առավել արդյունավետ պաշտպանելու նպատակով անհրաժեշտ է կատարել մի քանի օրենսդրական փոփոխություններ: Այսպես.

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը բավարար երաշխիքներ չի սահմանում ամուսինների համատեղ ծառայության վերաբերյալ:

Մինչդեռ, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության անցնելու մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ազգային անվտանգության մարմիններում միաժամանակ ծառայող ամուսիններից մեկին ծառայության նոր վայր տեղափոխելու դեպքում որոշում է կայացվում նույն բնակավայր ծառայության տեղափոխել նաև ամուսնուն (կնոջը) նրա (նրանց) համաձայնությամբ, եթե փոխվում է մշտական բնակության վայրը: Դրա անհնարինության դեպքում ծառայության նոր վայր տեղափոխումը չի կատարվում:

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի բացատրական հուշագրի «Է» կետում նշվում է, որ զինծառայողների բարոյահոգեբանական վիճակի համար կարևոր է, որպեսզի նրանք հնարավորության սահմաններում կարողանան կապ պահպանել իրենց մտերիմների, այդ թվում՝ հարազատների և զուգընկերոջ հետ: Անդամ պետությունները պետք է համապատասխան պայմաններ ստեղծեն, որպեսզի զինծառայողներն օգտվեն այս հատուկ իրավունքից:

*Հետևաբար, անհրաժեշտ է՝*

*1. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում սահմանել, որ ծառայող ամուսիններից մեկին ծառայության նոր վայր տեղափոխելու*

դեպքում որոշում է կայացվում նույն բնակավայր ծառայության տեղափոխել նաև ամուսնուն (կնոջը) նրա (նրանց) համաձայնությամբ, եթե փոխվում է մշտական բնակության վայրը: Դրա անհնարինության դեպքում ծառայության նոր վայր տեղափոխումը չի կատարվում,

2. Օրենքում սահմանել, որ տարբեր համակարգերում ծառայող ամուսինները ծառայության են նշանակվում միմյանց հնարավորինս մոտ գորամասերում, որպեսզի կարողան միասին բնակվել:

Մեկ այլ խնդիր բացահայտվել է 2018 թվականի ընթացքում ՀՀ զինված ուժերի գորամասեր կատարված այցերի ընթացքում: Կին զինծառայողներն իրենց դժգոհությունն են հայտնել, որ իրենք ավելի քիչ հաճախականությամբ են զինվորական համազգեստ ստանում, քան տղամարդ զինծառայողները:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ զինծառայողները, քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին կարող են ստանալ իրային ապահովություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Իրային ապահովության կարգը ներառում է իրային միջոցներով ապահովման ենթակա անձնակազմի շրջանակը, ինչպես նաև իրային միջոցների ցանկը:

Նշված խնդրի կապակցությամբ ուսումնասիրվել է ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1457-Ն որոշմամբ սահմանված՝ զինծառայողների իրային ապահովության չափաքանակները:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նույն գործառույթներն իրականացնող կին զինծառայողներին տրվող իրային ապահովության չափաքանակները, բացառությամբ որոշակի տեսակների, էապես տարբերվում են (ավելի քիչ հաճախականությամբ են ստանում) տղամարդ զինծառայողներին տրվող իրային ապահովության չափաքանակներից:

Բացի այդ, պետք է նշել, որ տարբերություններ են առկա նաև մարտական հերթապահությունում ընդգրկված կին զինծառայողներին և մարտական հերթապահություն իրականացնող տղամարդ զինծառայողներին տրվող զինվորական համազգեստների չափաքանակներում:

Ընդ որում, կին զինծառայողներին տրամադրվող իրային ապահովումը տղամարդ զինծառայողների իրային ապահովումից պակաս լինելը պայմանավորված է ոչ թե նրանց ծառայության բնույթով, այլ միայն նրանց կին լինելու հանգամանքով, ինչն անթույլատրելի է:

Պետք է նկատել նաև, որ ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1457-Ն որոշմամբ սահմանազատված չեն գորամասային պայմաններում զինվորական ծառայություն անցնող զինծառայողների (այդ թվում՝ կին) և ոչ գորամասային պայմաններում (օրինակ՝ Պաշտպանության նախարարության վարչական շենքում) զինվորական ծառայություն անցնող զինծառայողների իրային ապահովման չափաքանակները: Մինչդեռ, ակնհայտ է, որ գորամասային պայմաններում ծառայություն իրականացնելու դեպքում զինծառայողների համազգեստի մաշվելու կամ այլ կերպ վնասվելու հավանականությունն ավելի մեծ է:

*Ուստի, առաջարկվում է՝*

1. մանրամասն ուսումնասիրել ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1457-Ն որոշման դրույթները և կին զինծառայողների իրային ապահովումը համապատասխանեցնել նույնաբնույթ ծառայություն անցնող տղամարդ զինծառայողների իրային ապահովմանը,

2. զինճառայողների իրային ապահովման հաճախականությունը սահմանազատել ըստ (պայմանական անվանմամբ) զորամասային և ոչ զորամասային պայմաններում ծառայություն իրականացնելու հանգամանքի:

### 3. Չինված ուժերում կանանց ցածր ներգրավվածությունը և առաջխաղացման խոչընդոտները

Պետք է նշել, որ սեռային հատկանիշներով պայմանավորված ցանկացած խտրականություն բացառելու նպատակով ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված են մի շարք երաշխիքներ:

Այսպես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային օրենսդրության հիմնական սկզբունքներն են աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարությունը, այդ թվում՝ անկախ նրանց սեռից: Նույն օրենսգրքի 180-րդ հոդվածով սահմանվում է, որ աշխատանքների որակավորման համակարգի կիրառման դեպքում միևնույն չափանիշները պետք է կիրառվեն ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց նկատմամբ, և այդ համակարգը պետք է մշակված լինի այնպես, որ բացառվի սեռային հատկանիշներով ցանկացած խտրականություն:

Չնայած առկա օրենսդրական կարգավորումներին՝ պետք է նշել, որ ՀՀ զինված ուժերում փաստացի գոյություն ունի կանանց նկատմամբ ուղղահայաց (կարիերայի աստիճանների ոչ հավասար մատչելիություն) և հորիզոնական (ըստ մասնագիտությունների և ոլորտների) խտրականություն: Խնդիրն այն է, որ կանայք բարդություններ են ունենում թե՛ զինվորական ծառայության անցնելիս (այդ թվում՝ զինվորական մասնագիտություն ընտրելիս), թե՛ աշխատանքը երեխայի ծննդյան պարագայում պահպանելիս, թե՛ զինվորական ծառայությունում առաջխաղացման տեսանկյունից<sup>479</sup>:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներով և հաղորդմամբ, ինչպես նաև մի շարք միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից տարիներ շարունակ բարձրաձայնվում է կանանց՝ հասարակական և քաղաքական կյանքում լիարժեք ներգրավման անհրաժեշտության հարցը: Թեև առկա ուսումնասիրությունները վկայում են, որ Հայաստանում կանայք իրենց կրթությամբ չեն զիջում տղամարդկանց<sup>480</sup>, այնուամենայնիվ, դեռևս առկա է զինվորական ծառայության պաշտոններում կանանց ցածր ներգրավվածության խնդիր:

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած տեղեկությունների՝ 2019 թվականի հունվարի դրությամբ զինված ուժերում սպայական և ենթասպայական կազմերի հաստիքներում հաշվառված են 1893 կին զինճառայողներ: Շարքային կազմի պայմանագրային զինճառայողների թվաքանակում կանայք կազմում են 10 %, ընդ որում՝ Երևանում՝ 7.4 %, իսկ մարզերում՝ 2.6%:

Վերոնշյալ վիճակագրությունը վկայում է, որ ՀՀ զինված ուժերում կին զինճառայողների տոկոսային հարաբերակցությունը՝ տղամարդ զինճառայողների համեմատությամբ, բավական ցածր է: Ավելին՝ կանայք դեռևս բավարար կերպով ներկայացված չեն բարձր պաշտոններում, և հասարակությունում առկա են կարծրատիպեր կանանց՝ որպես որոշում

<sup>479</sup> Կանանց աշխատանքային իրավունքների խնդիրներին առավել մանրամասն կարելի է ծանոթանալ սույն հաղորդման «Կանանց նկատմամբ խտրականության բացառում» գլխում

<sup>480</sup> ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, «Գենդերային ճեղքվածք. կանանց նկատմամբ խտրական դրսևորումների ախտորոշիչ ուսումնասիրություն», 2016 թվական, [http://www.unfpa.am/sites/default/files/2016\\_Gender-Gap-factsheet\\_Arm.pdf](http://www.unfpa.am/sites/default/files/2016_Gender-Gap-factsheet_Arm.pdf)

կայացնողների դիտարկման հարցում<sup>481</sup>: Արդյունքում, կին զինծառայողները հիմնականում զրկված են առաջխաղացման հնարավորությունից:

Խնդրի վերաբերյալ պետք է ընդգծել, մասնավորապես, ՄԱԿ-ի Կայուն զարգացման 5.5-րդ նպատակը, ըստ որի՝ պետք է ապահովել կանանց լիարժեք և արդյունավետ մասնակցությունը և առաջնորդության համար հավասար հնարավորությունների ապահովումը քաղաքական, տնտեսական և հասարակական կյանքում որոշումների կայացման բոլոր մակարդակներում:

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի բացատրական հուշագրի «ԺԹ» կետում նշվում է, որ կին զինծառայողները տղամարդ զինծառայողների նման պետք է պաշտոնեական առաջխաղացման հարցերում ունենան հավասար հնարավորություններ և զինված ուժերում աշխատելիս արժանանան հավասար վերաբերմունքի: Մեռի հիմքով նրանք չպետք է դուրս թողնվեն մասնագիտությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ հատուկ տեսակի մասնագիտական գործունեության բնույթով կամ համատեքստով պայմանավորված, սեռը հանդիսանում է իրական վճռորոշ հանգամանք:

Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2018 թվականի ընթացքում 2 կին զինծառայողներ դիմել են բարձր պաշտոնի խնդրանքով, սակայն մի դեպքում քրեական գործ հարուցված լինելու, մյուս դեպքում՝ հաստիքների կրճատման կապակցությամբ նպատակահարմար չլինելու պատճառաբանությամբ զինծառայողներին բարձր պաշտոն չի առաջարկվել, և նշված կին զինծառայողները սեփական դիմումի համաձայն ազատվել են զինվորական ծառայությունից:

Հատկանշական է նաև, որ ըստ իրավասու գերատեսչության՝ զինված ուժերի տարբեր օղակներում կանանց ծառայության ներգրավվածությունը խոչընդոտող հանգամանքներ, որպես այդպիսին, չեն գրանցվել, որի վկայությունն է նաև ՀՀ պաշտպանության նախարարության ռազմաուսումնական հաստատություններում իգական սեռի կուրսանտների հետաքրքրությունը զինվորական տարբեր մասնագիտությունների բնագավառում: Հնարավոր բացասական կարծրատիպերը կոտրելու, ինչպես նաև կանանց ներգրավվածությունը խթանելու նպատակով ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետ ՀՀ պաշտպանության նախարարության Մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի ամենամյա համագործակցության ծրագրի շրջանակում անցկացվել են իրազեկվածության բարձրացման, հավասար հնարավորությունների ապահովման, սեռով պայմանավորված խտրականության կանխարգելման և այլ հարակից թեմաներով միջոցառումներ: Համակարգում կանանց ներգրավվածության բարձրացման նպատակով 2017 թվականի ՀՀ պաշտպանության նախարարի կողմից հաստատվել է պլան-ժամանակացույց՝ ՀՀ ՊՆ զորամասերում կին զինծառայողներով համարված ստորաբաժանումների կազմավորման փորձնական ներդրման և ներքին ու պահակային ծառայությունների կատարելագործման աշխատանքների իրականացման համար: Ընտրվել են թիրախային ստորաբաժանումներ՝ կին զինծառայողներով համալրելու համար: Համաձայն պլան-ժամանակացույցի՝ շահագրգիռ վարչությունների պետերի, տարածքային զինկոմիսարների, զորամիավորումների, զորամասերի և ստորաբաժանումների հրամանատարների հետ համատեղ տարվել են աշխատանքներ տվյալ ստորաբաժանումները համալրելու համար կին զինծառայողներ հավաքագրելու ուղղությամբ: Օրինակ՝ ՊՆ N զորամասի դասակը 2019 թվականի հունվարի դրությամբ ամբողջությամբ համալրված է կին զինծառայողներով:

<sup>481</sup> Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ (CEDAW/C/ARM/CO/5-6), կետեր 20, 21:

Ըստ Պաշտպանության նախարարության՝ 2018 թվականի ընթացքում ՀՀ զինված ուժերում ծառայության են անցել շարքային կազմի պայմանագրային թվով 399 կին զինծառայողներ:

Ուղղունելի է կին զինծառայողների ներգրավվածության ուղղությամբ ձեռնարկված քայլերը, այնուամենայնիվ, անհրաժեշտ է, որ կին զինծառայողների ներգրավվումը տեղի ունենա ՀՀ զինված ուժերի բոլոր զորամասերում:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ «Կանայք զինված ուժերում. հավասարության խթանում, գենդերային հիմքով բռնության վերացում» 2016 թվականի թիվ 2120 բանաձևի 6-րդ կետով Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին ներկայացվում են հստակ առաջարկություններ:

*Ուստի, հաշվի առնելով նաև Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի առաջարկությունները, անհրաժեշտ է՝*

*1. միջոցներ ձեռնարկել հասարակությանը զինված ուժերում կանանց դերի և կարևորության ընդգծման ուղղությամբ,*

*2. զանգվածային լրատվության միջոցներով ավելացնել կանանց զինվորական առօրյան լուսաբանող տեղեկատվությունը՝ շեշտադրելով կանանց առանցքային դերը զինվորական ծառայության մեջ,*

*3. կատարել ակտիվ հանձնառություն՝ փոխելու մտածողությունը բոլոր հրամանատարական մակարդակներում և փոխելու զինված ուժերի ներքին մշակույթն այնպես, որ բոլոր տարբերությունները դրականորեն ընդունվեն և հաշվի առնվեն,*

*4. ներառել ուսուցում գենդերային հավասարության վերաբերյալ ռազմական ուսուցման բոլոր փուլերում և համոզվել, որ ռազմական ուսումնական հաստատություններում դասավանդում են թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ,*

*5. կատարել ուսումնասիրություններ (այդ թվում՝ հարցումների միջոցով)՝ ՀՀ զինված ուժերում ընդգրկված իգական սեռի ներկայացուցիչների՝ ծառայության անցնելու, այն շարունակելու կամ դադարեցնելու դրդապատճառները պարզելու նպատակով,*

*6. հետազոտություններ իրականացնել զինվորական պաշտոններում ավելի մեծ թվով կանանց համալրման խոչընդոտների պատճառների վերաբերյալ, ինչպես նաև այն պատճառների, թե ինչու կանանց զինվորական կարիերան հաճախ ավելի կարճ է, քան իրենց տղամարդ գործընկերներինը, և թե ինչու են կանայք ու տղամարդիկ լքում զինված ուժերը նախքան կենսաթոշակի տարիքի հասնելը կամ պայմանագրի ավարտը,*

*7. գործունե միջոցներ ձեռնարկել զինված ուժերի համալրման գործընթացում կարծրատիպերը վերացնելու, և զինված ուժերում ավելի մեծ թվով կանայք ներգրավվելու ուղղությամբ, ընդ որում՝ կարևոր և գործառնական դերերում,*

*8. կանանց համար հասանելի դարձնել ՀՀ զինված ուժերի բոլոր պաշտոնները բոլոր տեսակի զորքերում,*

*9. միջոցներ ձեռնարկել կանանց հավաքագրելու և նրանց այն դերերում ներգրավելու ուղղությամբ, որոնցից նրանք նախկինում դուրս են թողնվել, դիտարկել այդ մասնագիտությունների համալրման ժամանակ կիրառված ֆիզիկական չափանիշները և փորձնական ծրագրերի նպատակահարմարությունը՝ կանանց համալրումն այդ մասնագիտություններում խթանելու նպատակով,*

*10. զինվորական ծառայությանն առնչվող տարբեր քննարկումների ժամանակ կանոնավոր կերպով ընդգրկել բոլորի իրավահավասարության, տվյալ դեպքում՝ գենդերային հավասարության թեման,*

*11. ստեղծել կին զինծառայողների միավորումներ և աջակցել դրանց գործունեությանը:*

**ԳԼՈՒԽ 10. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

***1. Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովությունը***

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 62-րդ կետը սահմանում է, որ զինված ուժերի յուրաքանչյուր անդամ ունի համարժեք ստանդարտներին համապատասխանող, առողջության և հիգիենայի հիմնական պահանջները բավարարող բնակության վայր ունենալու իրավունք:

2018 թվականին կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ զինձառայողների և նրանց ընտանիքների բնակարանային ապահովման բնագավառում դեռևս առկա են բազմաթիվ խնդիրներ:

Այս առումով պետք է արձանագրել, որ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ամենախոցելի սոցիալական հիմնախնդիրներից է զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովության իրավունքի իրացումը:

2018 թվականի ընթացքում բնակարանային ապահովման վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բազմաթիվ բողոքներ: Բողոքները հիմնականում վերաբերել են ոչ բարվոք վիճակում գտնվող ծառայողական բնակարաններ տրամադրելուն, ծառայողական բնակարանների կամ բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցման հետ կապված խնդիրներին, նախկին զինձառայողներին բնակարան կամ այն ձեռք բերելու համար պետական ֆինանսական աջակցություն չտրամադրելուն, որպես բնակարանային պայմանների կարիքավոր հաշվառված նախկին զինձառայողների և զոհված (մահացած) զինձառայողների ընտանիքների բնակարանային գործերի «համապատասխանեցման» արդյունքում հերթացուցակից դուրս մնալուն, այլ գորքերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) կամ զինվորական ծառայության ժամանակ վնասվածքներից, խեղումներից և առաջացած հիվանդություններից հաշմանդամ դարձած զինձառայողների (ազատամարտիկների) ընտանիքներին բնակարանային ապահովում չտրամադրելուն, հիփոթեքային վարկավորման հետ կապված խնդիրներին և այլն: Այսպես.

2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ ծառայողական բնակարանների կամ բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցման վերաբերյալ:

Օրինակ, զինձառայողը նշել է, որ 2017 թվականին զորամասի հաշվեկշռում եղած բնակելի շենքից իրեն ծառայողական բնակարան են հատկացրել, այնուհետև իրեն զրկել են նշված ծառայողական բնակարանից: 2018 թվականի մայիսին զեկուցագիր է ներկայացրել զորամասի հրամանատարին՝ զինավանում գտնվող չբնակեցված հինգ ազատ բնակարաններից մեկն իրեն հատկացնելու խնդրանքով, սակայն մերժում է ստացել: Լրացուցիչ բողոքով զինձառայողը տեղեկացրել է, որ զորամասի հրամանատարության կողմից իրեն առաջարկվել է ոչ բարվոք վիճակում գտնվող ծառայողական բնակարան, որտեղ հնարավոր չէ բնակվել, քանի որ բնակարանը չունի կոյուղի, խմելու ջուր, դուռ, պատուհան: Զինձառայողը տեղեկացրել է, որ զինավանում առկա են 2 ազատ բնակարաններ, որտեղ բնակվելու համար առկա են անհրաժեշտ պայմանները:

Զինձառայողը խնդրել է Պաշտպանի աջակցությունն իրեն բարվոք վիճակում գտնվող ծառայողական բնակարան հատկացնելու հարցում:

Բողոքի քննարկման ընթացքն ապահովելու նպատակով Պաշտպանի ներկայացուցիչներն այցելել են զորամաս, ուսումնասիրել զինձառայողին առաջարկված բնակարաններից մեկը: Արդյունքում պարզվել է, որ բնակարանում չկա էլեկտրաէներգիա, այն ապահովված չէ կենցաղային տարրական պայմաններով: Ջորամասի ներկայացուցիչը պարզաբանել է, որ զինավանում առավել բարեկարգ ազատ բնակարաններ առկա չեն:

Արդյունքում, Պաշտպանության նախարարությունից ստացվել է տեղեկություն, որ զինավանում բարեկարգ պայմաններով 2 բնակարան է ազատվել, որից մեկը կտրամադրվի զինձառայողին:

Մեկ այլ զինձառայող Պաշտպանին հասցեագրված բողոքով նշել է, որ իրեն առաջարկվել է ծառայողական բնակարան, որն ապահովված չէ ընտանիքով բնակվելու համար անհրաժեշտ պայմաններով, ուստի ցանկանում է բնակարան վարձակալել, և բնակարանի վարձակալության դիմաց ստանալ դրամական փոխհատուցում: Ըստ զինձառայողի՝ իրենից հրաժարվել են զեկուցագիր ընդունել՝ նշելով, որ դրամական փոխհատուցում չի տրամադրվի:

Ջորամասի հրամանատարը տեղեկացրել է, որ սպաների համար նախատեսված ծառայողական բնակարանները բարեկարգ չեն, հաճախ սպաներն իրենք են վերանորոգում այդ բնակարանները և նշել, որ կընդունի զինձառայողի զեկուցագիրը և համապատասխան ընթացք կտա:

Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկության համաձայն՝ 2018 թվականի ընթացքում նմանատիպ բողոք ստացել է նաև Պաշտպանության նախարարությունը, ըստ որի՝ զինձառայողի ընտանիքին զորամասի տարածքում գտնվող զինավանում հատկացվել է ոչ բարվոք վիճակում գտնվող բնակարան (կաթացող տանիք, անմխիթար վիճակում գտնվող լոգարան և այլն): Զինձառայողը հրաժարվել է հատկացված բնակարանից, քանի որ ֆինանսական միջոցներ չունի շենքի տանիքը և բնակարանը վերանորոգելու համար: Արդյունքում, զինձառայողին բնակելի տարածության վարձակալության դիմաց ժամանակավորապես դրամական փոխհատուցման իրավունք է ընձեռվել, որից հետո զինձառայողն ապահովվել է ծառայողական բնակարանով:

ՀՀ պաշտպանության նախարարության տեղեկությունների համաձայն՝ 2018 թվականի ընթացքում զինձառայողներին և նրանց ընտանիքների անդամներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվել է 434 բնակարան: Նշվել է նաև, որ 2018 թվականի ընթացքում Ազարակ քաղաքում շահագործման է հանձնվել Պաշտպանության նախարարության բնակարանաշինության ծրագրով նախատեսված շենք, որն ունի 24 բնակարան: Ստացված տեղեկությունների համաձայն՝ 2019 թվականին նախատեսվում է կառուցել ևս յոթ բնակելի շենքեր (Կապան՝ 24 և 26 բնակարաններից բաղկացած), (Գորիս՝ 20), (Միսիան՝ 28), (Մեհրաբ՝ 20 բնակարան), (Գյումրի՝ 44), (Վանաձոր՝ 48):

2018 թվականի ընթացքում զորամասեր կատարված այցերի ընթացքում սպայական կազմի զինձառայողները բարձրացրել են մեկ այլ խնդիր: Սպաները բողոքել են, որ բնակարանի վարձակալության փոխհատուցման գումարը սահմանվում է այն չափով, որը համապատասխանում է զորամասի գտնվելու համայնքում բնակարանների վարձակալության գումարին: Արդյունքում, գյուղական համայնքում տեղակայված զորամասում ծառայություն անցնող զինձառայողներին բնակարանի վարձակալության գումար չի փոխհատուցվում այն դեպքերում, եթե վերջիններս բնակարան են վարձակալում գյուղական համայնքից ոչ հեռու գտնվող քաղաքային համայնքում: Այնինչ, գյուղական համայնքներում վարձակալությամբ տրվող բնակելի տարածությունները սահմանափակ են,

իսկ առկա բնակարաններն ընտանիքով ապրելու համար անհրաժեշտ պայմաններ չունեն: Բացի այդ, գյուղական համայնքներում հիմնականում առկա են մի քանի սենյականոց սեփական տներ, որոնց վարձակալության արժեքը բարձր է քաղաքային համայնքների բազմաբնակարան բնակելի շենքերի մեկ սենյականոց բնակարանների վարձակալության արժեքից:

Մեկ այլ խնդիր է վարձակալված բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցում ստացող զինծառայողին զինվորական ծառայությունից արձակելուց հետո նշված փոխհատուցման դադարեցումը:

Այսպես, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծառայության վայրում ծառայողական բնակարանով չապահովվելու դեպքում այլ բնակելի տարածություն վարձակալելու դիմաց պայմանագրային զինծառայողներին վճարվում է դրամական փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափերով: ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 1321-Ն որոշման Հավելվածի 16-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցում ստանալու իրավունքը դադարեցվում է շահառուի՝ ծառայությունից արձակվելու դեպքում:

Մինչդեռ, այլ է կարգավորումը այն դեպքում, երբ զինվորական ծառայությունից արձակվում է անհատույց օգտագործման իրավունքով ծառայողական բնակարան ստացած անձը:

Այսպես, ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 7-ի թիվ 384-Ն որոշման Հավելվածի 11-րդ կետի համաձայն՝ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված բնակարանները, առանց այլ բնակելի տարածք տրամադրելու, ազատում են՝ առողջության, տարիքի, երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու պատճառով զորացրված զինծառայողները, եթե Հայաստանի Հանրապետության տարածքում ապահովված են այլ բնակելի տարածությամբ: Այսինքն, ՀՀ տարածքում բնակելի տարածությամբ չապահովված և առողջության, տարիքի, երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու պատճառով զորացրված զինծառայողները չեն ազատում ծառայողական բնակարանները:

Նշված դրույթի առկայությունը տրամաբանական է, քանի որ առողջության, տարիքի, երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու պատճառով զորացրված զինծառայողները պահպանում են բնակարանային ապահովություն ստանալու իրավունքը, և արդարացի չի լինի, եթե պետությունը նրանց ստիպի ազատել ծառայողական բնակարանները, քանի դեռ չի իրականացրել նրանց բնակարանային ապահովության իրավունքը:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ ստացվում է, որ եթե զինծառայողին տրամադրվել է ծառայողական բնակարան, և վերջինս ՀՀ տարածքում ապահովված չէ այլ բնակելի տարածությամբ, առողջության, տարիքի, երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու պատճառով ծառայությունից արձակվելուց հետո շարունակում է բնակվել ծառայողական բնակարանում, իսկ նույն կարգավիճակում գտնվող այն զինծառայողը, ում ազատ ծառայողական բնակարան չլինելու պատճառով բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցում է տրամադրվում, առողջության, տարիքի, երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու պատճառով ծառայությունից արձակվելուց հետո դադարում է ստանալ փոխհատուցում: Արդյունքում, տարբերակված մոտեցում է դրսևորվում միննույն իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ, և նման մոտեցումը չունի օբյեկտիվ հիմք և իրավաչափ նպատակ:



Չինժառայողները և նրանց ընտանիքների անդամները 2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրել են բողոքներ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող զինժառայողների բնակարանային հաշվառման ցուցակներում հաշվառված լինելու, սակայն հերթում տարիների ընթացքում էական առաջխաղացում չլինելուն, ինչպես նաև զինվորական կենսաթոշակի անցած նախկին զինժառայողներին բնակարան չտրամադրելուն:

Այսպես, երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի անցած նախկին զինժառայողը նշել է, որ զինվորական ծառայության ընթացքում ընդգրկվել է բնակարանային հաշվառման, սակայն զինվորական ծառայության ընթացքում բնակարան կամ այն ձեռք բերելու համար պետական ֆինանսական աջակցություն չի ստացել: Նախկին զինժառայողն իր դժգոհությունն է հայտնել առ այն, որ զինվորական կենսաթոշակի անցնելուց հետո տեղափոխվել է զինվորական կենսաթոշակի անցած նախկին զինժառայողների բնակարանային ապահովման հերթացուցակ, և ներկայում իր բնակարանային պայմանները չեն բարելավվել:

Պետք է նշել, որ զինվորական կենսաթոշակի անցած նախկին զինժառայողներին բնակարան կամ այն ձեռք բերելու համար պետական ֆինանսական աջակցություն չտրամադրելու խնդրին անդրադարձ է կատարվել նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացրած տարեկան հաղորդմամբ<sup>482</sup>:

Նշված խնդիրը լուծում չի ստացել նաև 2018 թվականի ընթացքում: Ըստ Պաշտպանության նախարարության՝ 2018 թվականի ընթացքում բնակարան կամ բնակարանի գնման վկայագրեր չեն հատկացվել, ինչպես նաև բնակարանային պայմանների բարելավման համար դրամական աջակցություն չի տրամադրվել նաև հաշմանդամ դարձած և զոհված (մահացած) զինժառայողների ընտանիքներին:

Պաշտպանության նախարարությունը նշել է նաև, որ 2018 թվականի դեկտեմբերին ՀՀ պաշտպանության նախարարությանը հատկացվել է գումար՝ 2019-2020 թվականների ընթացքում նախկին զինժառայողների բնակարանային ապահովության իրավունքն իրացնելու համար:

Նշված խնդիրները կարգավորելու նպատակով 2019 թվականի փետրվարին շրջանառության մեջ է դրվել ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով նախատեսվում է բնակարանային հաշվառման վերցված և բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող զինժառայողներին կամ որոշակի հիմքերով զինվորական ծառայությունից արձակված նախկին զինժառայողներին անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրել յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանն այդ նպատակով հատկացված միջոցների հաշվին՝ բնակարանի գնման վկայագիր տրամադրելու միջոցով: Նախագծի վերաբերյալ Պաշտպանի կողմից ներկայացվել են նկատառումներ: Մասնավորապես, առաջարկվել է հստակեցնել, որ նախկին զինժառայողները աջակցության սահմանված չափով հնարավորություն կունենան բնակության համար նվազագույն պայմանները բավարարող բնակարան ձեռք բերել, ինչպես նաև սահմանել, որ ֆինանսական աջակցություն տրամադրելու համար հասանելիք սենյակների թիվը որոշելիս բնակարանային պայմանների բարելավման հաշվառման ցուցակում ընդգրկված անձինք հաշվի են առնվում՝ անկախ հաշվառումից հետո նրանց մահվան կամ կարգավիճակի փոփոխություններից:

<sup>482</sup> Տես, օրինակ, 2017 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, 291-293 էջեր:

Խնդրահարույց է նաև ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի թիվ 1016-Ն որոշման 2-րդ կետով սահմանված դրույթը, որով Հայաստանի Հանրապետության մարզպետներին հանձնարարվում, իսկ համայնքների ղեկավարներին (Երևանի քաղաքապետին) առաջարկվում էր բնակարանային հարցերի հանձնաժողովների միջոցով, մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը, ապահովել մինչև որոշումն ուժի մեջ մտնելը որպես բնակարանային պայմանների կարիքավոր հաշվառված՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների **բնակարանային գործերի համապատասխանեցումը** «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի թիվ 947-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին:

Փաստորեն, ՀՀ կառավարության որոշմամբ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու պահանջ է սահմանվել:

Ստացվում է՝ զինվորական ծառայության ընթացքում որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող հաշվառված և երկար տարիներ իրենց հերթին սպասող նախկին զինծառայողների և նրանց ընտանիքների բնակարանային բարելավման ժամանակ բնակարանային գործերի *համապատասխանեցման* հետևանքով նշված զինծառայողները և նրանց ընտանիքները դուրս են մնում բնակարանային բարելավման կարիք ունեցողների հերթացուցակից: Ավելին, նշված անձինք հերթացուցակից դուրս մնալու մասին տեղեկանում են գործընթացի ավարտից հետո, այն էլ միայն այն դեպքում, երբ դիմում են իրենց բնակարանային հերթի վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար: Արդյունքում, նշված անձինք չեն կարողանում արդյունավետ կերպով իրականացնել իրենց իրավունքների պաշտպանությունը:

Նշված խնդրի վերաբերյալ 2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ:

Օրինակ՝ նախկին զինծառայողը Պաշտպանին հասցեագրած բողոքով տեղեկացրել է, որ զինվորական ծառայությունից արձակվել է առողջական վիճակի պատճառով, իր նկատմամբ սահմանվել է հաշմանդամության 3-րդ խումբ և նշանակվել հաշմանդամության զինվորական կենսաթոշակ: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ զինվորական ծառայության ընթացքում հաշվառվել է բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող զինծառայողների հերթացուցակում, 2007 թվականին հանվել է բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող նախկին զինծառայողների հերթացուցակից և վերականգնվել է 2008 թվականին, սակայն մինչև այժմ իրեն չի հատկացվել բնակարան կամ բնակարան ձեռք բերելու համար պետական ֆինանսական աջակցություն:

Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ 2018 թվականին հանվել է բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող նախկին զինծառայողների հերթացուցակից, ընդ որում՝ ինքն այդ մասին բանավոր տեղեկացվել է վարույթի ավարտից հետո:

Մինչդեռ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդված 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

Փաստորեն, ստացվում է, որ նշված դեպքերում չի ապահովվում նախկին զինծառայողների և նրանց ընտանիքների՝ վարչական վարույթի ընթացքում լսված լինելու իրավունքը:

2018 թվականին միջոցներ չեն ձեռնարկվել 2017 թվականի տարեկան հաղորդմամբ բարձրացված՝ այլ գորքերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ գոհված (մահացած) կամ զինվորական ծառայության ժամանակ վնասվածքներից, խեղումներից և առաջացած հիվանդություններից հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) ընտանիքների բնակարանային ապահովման ուղղությամբ<sup>483</sup>: Նշված հարցի վերաբերյալ ներկայացված բողոքի քննարկման արդյունքում Պաշտպանը կայացրել է մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշում: Որոշմամբ առաջարկվել է՝

- բողոք ներկայացրած անձին և բնակարանային հաշվառման՝ նմանատիպ մերժում ստացած մյուս անձանց ընտանիքներին վերականգնել բնակարանային հաշվառման հերթացուցակում և միջոցներ ձեռնարկել նրանց բնակարանային ապահովության ուղղությամբ,

- ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի թիվ 947-Ն որոշման դրույթները այն մասով, որ բնակարան ձեռք բերելու համար պետական ֆինանսական աջակցություն ստանալու համար պահանջում են ներկայացնել ՀՀ պաշտպանության նախարարության սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանման կողմից տրված՝ կարգավիճակը հավաստող համապատասխան տեղեկանք, համապատասխանեցնել միջազգային իրավաբանությամբ և ՀՀ գործող օրենսդրությամբ ամրագրված պահանջներին:

Խնդրի կապակցությամբ Պաշտպանության նախարարությունը նշել է, որ պետական տարբեր մարմիններում ծառայություն անցած նախկին զինծառայողների բնակարանային պայմանների բարելավման միասնական կարգն ապահովելու ուղղությամբ քայլեր չեն ձեռնարկվում:

Զինծառայողների բնակարանային ապահովման հարցին համակարգային լուծում տալու նպատակով դեռևս 2016 թվականի տարեկան հաղորդմամբ Պաշտպանն առաջարկել է ներդնել արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման «Մատչելի բնակարան զինծառայողին» պետական աջակցության նպատակային ծրագիրը: Ծրագիրը 2018 թվականին ներդրվել է, սակայն գործնական կիրառություն դեռևս չի ստացել:

Դրանից բացի, մինչև «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ընդունումը բնակարանային հաշվառման կարող էին վերցվել բոլոր պայմանագրային զինծառայողները: Մինչդեռ, Օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և պայմաններով բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու կամ բնակելի տուն կառուցելու նպատակով մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագրերից կարող են օգտվել *միայն սպայական կազմի* պայմանագրային զինծառայողները: Ստացվում է՝ շարքային և ենթասպայական կազմի պայմանագրային զինծառայողներն այլևս չեն կարող վերցվել բնակարանային հաշվառման, ինչպես նաև չեն կարող օգտվել բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու կամ բնակելի տուն կառուցելու նպատակով մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագրերից: Նշված կարգավորման հետևանքով ստեղծված իրավիճակը մտահոգիչ է Մարդու իրավունքների պաշտպանի համար:

---

<sup>483</sup> Տես, 2017 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, 294-295 էջեր:

Հետևաբար, առաջարկվում է՝

1. միջոցներ հատկացնել Պաշտպանության նախարարության հաշվեկշռում առկա բնակարանները բարեկարգելու և նոր շենքեր կառուցելու նպատակով,
2. խստացնել հսկողությունը զինծառայողներին ծառայողական բնակարաններ կամ բնակարան վարձակալելու համար դրամական փոխհատուցում տրամադրելու գործընթացի նկատմամբ,
3. վերանայել գյուղական համայնքներում բնակարան վարձակալելու համար զինծառայողներին տրվող դրամական փոխհատուցման չափերը, որպեսզի զինծառայողները հնարավորություն ունենան վարձակալել բնակարան՝ առանց իրենց միջոցներից գումար ավելացնելու,
4. ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 1321-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ նախատեսելով, որ առողջության, տարիքի, երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու պատճառով զորացրված զինծառայողները շարունակում են վարձակալության դիմաց դրամական փոխհատուցում ստանալ, եթե ՀՀ տարածքում ապահովված չեն բնակելի տարածությամբ,
5. կոնկրետ միջոցներ ձեռնարկել այլ գորքերում (այդ թվում՝ Ոստիկանության գորքերում) պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) կամ զինվորական ծառայության ժամանակ վնասվածքներից, խեղումներից և առաջացած հիվանդություններից հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) ընտանիքների բնակարանային ապահովման ուղղությամբ,
6. հնարավորին սեղմ ժամկետներում ապահովել սպայական կազմի պայմանագրային զինծառայողների բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու կամ բնակելի տուն կառուցելու նպատակով մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագրերի գործնական կիրառությունը,
7. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան փոփոխություն՝ հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագրից օգտվելու հնարավորություն նախատեսելով նաև շարքային և ենթասպայական կազմի պայմանագրային զինծառայողների համար:

## **2. Զինծառայողների կենսաթոշակային իրավունքի ապահովումը**

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ «Մարդու իրավունքները զինված ուժերի անդամների համար» թիվ Rec 1742(2006) հանձնարարականի 10.4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ զինծառայողները պետք է օգտվեն տնտեսական և սոցիալական իրավունքներից, ներառյալ՝ արդար վարձատրության և կենսաթոշակի իրավունքները:

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 65-րդ կետի համաձայն՝ լրիվ դրույքով աշխատող պրոֆեսիոնալ զինծառայողները պետք է օգտվեն բավարար կենսաթոշակի իրավունքից, որը պետք է վճարվի ժամանակին և առանց որևէ խտրականության:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածը սահմանում է, որ անդամ պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի սոցիալական ապահովության իրավունքը:

2018 թվականին կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ զինծառայողների կենսաթոշակային ապահովման ոլորտում դեռևս առկա են խնդիրներ: Այս առումով պետք է արձանագրել, որ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ամենախոցելի սոցիալական հիմնախնդիրներից է նաև զինծառայողների կենսաթոշակային ապահովության իրավունքի իրացումը:

2018 թվականի ընթացքում զինծառայողների կենսաթոշակային ապահովման վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բազմաթիվ բողոքներ: Բողոքները հիմնականում վերաբերել են զինվորական կենսաթոշակ չնշանակելուն, զինվորական կենսաթոշակը դադարեցնելուն, երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելիս զինվորական ծառայություն չհամարվող աշխատանքային ստաժը հաշվի չառնելուն և այլն: Այսպես.

2018 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ զինվորական կենսաթոշակ չնշանակելու վերաբերյալ:

Օրինակ, նախկին զինծառայողը տեղեկացրել է, որ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ նշանակելու հարցով դիմել է ՀՀ պաշտպանության նախարարություն, սակայն մերժում է ստացել, քանի որ իր՝ 2005 թվականին զինվորական ծառայության անցնելու վերջին պայմանագիրը կնքվել է օրենքով նախատեսված սահմանային տարիքի (տվյալ դեպքում՝ 45 տարեկան) խախտմամբ: Պայմանագիր կնքելու պահին բողոք ներկայացրած անձի տարիքը եղել է 45 տարի 2 ամիս և 11 օր:

Նախկին զինծառայողի պնդմամբ՝ զինվորական ծառայության անցնելիս ներկայացրել է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որոնց ուսումնասիրության արդյունքում իր հետ կնքվել է զինվորական ծառայություն անցնելու մասին պայմանագիր:

«Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի (ուժը կորցրել է 16.12.2017 թվականից՝ 15.11.17 ՀՕ-195-Ն օրենք) 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագրային զինվորական ծառայության ընդունվող քաղաքացիների համար զինվորական ծառայության սկիզբ համարվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ զինվորական ծառայությունն ավարտված է համարվում զինծառայողին զինվորական ծառայությունից արձակելու կապակցությամբ գորամասի (զինվորական կառավարման մարմնի) անձնակազմի ցուցակներից հանելու օրը: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ զինվորական ծառայության ընդհանուր ժամկետում ներառվում է զինծառայողի՝ ժամկետային զինծառայության ամբողջ ժամանակաշրջանը:

«Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում են այն ժամանակահատվածները, որոնք չեն հաշվարկվում զինվորական ծառայության ժամկետում:

Ստացվում է՝ կոնկրետ դեպքում ձևական առումով պահպանված չէ զինվորական ծառայության անցնելու պահանջը, սակայն բողոք ներկայացրած անձը փաստացի անցել է զինվորական ծառայություն, և դրա ողջ ընթացքում նրա՝ օրենքի խախտմամբ ծառայության անցնելու հարց չի առաջացել: Առկա փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ բացակայում է նաև որևէ փաստաթուղթ, որը կվկայեր նախկին զինծառայողի անբարեխիղճ լինելու մասին:

Բողոքի քննարկման արդյունքում նախկին զինծառայողին նշանակվել է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ՝ վճարման սկիզբ սահմանելով զինծառայությունից արձակվելու վերջին դրամական բավարարման օրվա հաջորդ օրը:

Ըստ պաշտպանության նախարարության կողմից տրամադրված տեղեկությունների՝ 2018 թվականի ընթացքում նախկին զինծառայողներին կամ նրանց ընտանիքի անդամներին կենսաթոշակի նշանակման գործընթացի ձգձգումների վերաբերյալ ՀՀ ՊՆ «Թեժ գիծ» է դիմել 135 քաղաքացի, որոնց բողոքները աշխատանքային կարգով լուծվել են: Նշվել է, որ 2018

թվականի հունվարի 1ից ՀՀ պաշտպանության նախարարությունը ներառվել է «Էլեկտրոնային կենսաթոշակ» համակարգում, որից հետո բողոքների թիվը նվազել է:

*Հետևաբար, առաջարկվում է խստացնել հսկողությունը զինվորական կենսաթոշակ նշանակելու գործընթացի նկատմամբ՝ նմանատիպ դեպքերը հետազայում բացառելու նպատակով:*

2018 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են նաև բողոքներ զինվորական կենսաթոշակը դադարեցնելու վերաբերյալ:

Օրինակ, նախկին զինծառայողը նշել է, որ հաստիքների կրճատման հիմքով 1992 թվականին արձակվել է ՀՀ զինված ուժերից և 19 տարի 11 ամիս 4 օր զինվորական ծառայության ստաժով իրեն նշանակվել է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ, որը ստացել է 1992 թվականի օգոստոսից մինչև 2013 թվականի հուլիս ամիսը:

Ըստ բողոք ներկայացրած անձի՝ կենսաթոշակային գործը Հայաստանի Հանրապետությունից 2013 թվականին Ռուսաստանի Դաշնություն ուղարկելու հիմքով Հայաստանի Հանրապետությունում դադարեցվել է կենսաթոշակ ստանալու իրավունքը: 2017 թվականի նոյեմբերին իր կենսաթոշակի վերաբերյալ գործը Ռուսաստանի Դաշնությունից ուղարկվել է Հայաստանի Հանրապետություն, որից հետո դիմել է կենսաթոշակային մարմին երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերելու համար, սակայն մերժում է ստացել այն պատճառաբանությամբ, որ չունի 20 օրացուցային տարվա զինվորական ծառայության ստաժ:

Փաստորեն, նախկին զինծառայողը 1992-2013 թվականներին Հայաստանի Հանրապետությունում ստացել է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ, սակայն կենսաթոշակային գործը Ռուսաստանի Դաշնություն ուղարկելուց, այնուհետև հետ վերադարձնելուց հետո փաստացի զրկվել է այդ իրավունքից:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում առկա տեղեկատվությամբ նախկին զինծառայողը որպես կենսաթոշակառու հաշվառված չէ: Նշվել է նաև, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է՝ Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքած պետություններ մշտական բնակության մեկնող (մեկնած) անձանց կենսաթոշակի գործերն ուղարկելու հիմքով:

Ըստ նախարարության՝ քանի որ նախկին զինծառայողի կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվել է կենսաթոշակի գործը ՌԴ ուղարկելու հիմքով, նրա կենսաթոշակ ստանալու իրավունքը չի կարող վերականգնվել: Կարող է քննարկվել նրան ընդհանուր հիմունքներով, դիմելու օրվանից կենսաթոշակ նշանակելու հարցը:

Իսկ ՀՀ պաշտպանության նախարարությունը վկայակոչել է 1992 թվականի մարտի 13-ի «Կենսաթոշակային ապահովության բնագավառում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների քաղաքացիների իրավունքների երաշխիքների մասին» և 1992 թվականի մայիսի 15-ի «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության և պետական ապահովագրության մասին» համաձայնագրերը, որոնց համաձայն՝ համաձայնագրերի մասնակից պետությունից Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության մեկնած զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող քաղաքացիներին զինվորական կենսաթոշակ է նշանակվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պաշտպանության նախարարության պարզաբանմամբ՝ նախկին զինծառայողն ունի 19 տարի 10 ամիս 25 օր օրացույցային տարվա զինվորական ծառայության ստաժ, ուստի «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ նրան երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ նշանակել հնարավոր չէ, քանի որ չունի 20 օրացույցային տարվա զինվորական ծառայության ստաժ:

Վերը նկարագրված խնդիրն անհրաժեշտ է դիտարկել միջազգային և ներպատական իրավակարգավորումներում ամրագրված պահանջների, այդ թվում՝ զինծառայողների համար սահմանված սոցիալ-իրավական երաշխիքների լույսի ներքո:

Այսպես, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածի համաձայն՝ Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է իր ունեցած միջոցների առավելագույն սահմաններում, անհատապես և **միջազգային օգնության ու համագործակցության միջոցով**, ձեռնարկել միջոցներ, մասնավորապես, տնտեսական և տեխնիկական բնագավառներում, առաջադիմորեն հասնելու համար Դաշնագրում ճանաչվող իրավունքների լիարժեք իրականացմանը՝ բոլոր պատշաճ միջոցներով, այդ թվում՝ օրենսդրական միջոցների ընդունմամբ:

Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետությունները պարտավոր են երկկողմ և բազմակողմ համապատասխան համաձայնագրեր ստորագրելով կամ այլ միջոցներով և համաձայն այդպիսի համաձայնագրերում նշված պայմանների՝ ձեռնարկել միջոցներ երաշխավորելու համար՝

ա) հավասար վերաբերմունք իրենց սեփական երկրի քաղաքացիների և մյուս Կողմերի, քաղաքացիների նկատմամբ սոցիալական ապահովության իրավունքների առնչությամբ՝ ներառյալ սոցիալական ապահովության օրենսդրությունից բխող նպաստների պահումները՝ **անկախ նրանից, թե ինչ տեղաշարժեր կարող են պաշտպանյալ անձինք ձեռնարկել Կողմերի տարածքների միջև,**

բ) սոցիալական ապահովության իրավունքների շնորհում, պահպանում և վերականգնում այնպիսի միջոցներով, ինչպիսիք են ապահովագրական գումարների կուտակումը կամ **Կողմերից յուրաքանչյուրի օրենսդրության համաձայն կատարված աշխատանքային ժամանակահատվածները:**

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) կից թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ ի շահ հանրության և այն դեպքերի, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով...»:

Եվրոպական կոնվենցիային կից թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի մեկնաբանության համաձայն՝ «սեփականություն» հասկացությունն ունի ինքնավար նշանակություն, այն չի սահմանափակվում ֆիզիկական բարիքների սեփականությամբ: Որոշ գույքային այլ իրավունքներ և շահեր նույնպես կարող են համարվել «սեփականության իրավունքներ» և, հետևաբար, «սեփականություն» Կոնվենցիայի իմաստով<sup>484</sup>:

Եվրոպական դատարանը հաստատել է, որ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի առաջին և ամենակարևոր պահանջն այն է, որ պետության կողմից անձի սեփականության նկատմամբ ցանկացած միջամտություն պետք է լինի օրինական (իրավաչափ): Քանի որ հանրային իշխանություններն ուղղակիորեն տեղեկացված են

<sup>484</sup> Տե՛ս, *Բաթորիդիսն ընդդեմ Հունաստանի* գործով 1999 թվականի մարտի 25-ի վճիռը, գանգատ թիվ 31107/96, կետ 54):

սեփական հասարակության և նրա շահերի մասին, նրանք ավելի լավ կարող են սահմանել, թե որն է իրենց հասարակության օրինական շահը, քան միջազգային դատավորները: Այնուամենայնիվ, եթե անձը ներպետական օրենսդրությամբ ունի սոցիալական ապահովության կենսաթոշակի հիմնավոր (հաստատված) իրավունք, ապա այդպիսի կենսաթոշակը պետք է դիտել թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով գույքային շահ: Եթե կենսաթոշակի չափը նվազում է կամ կենսաթոշակը վերացվում է, ապա դա կարող է իրենից ներկայացնել գույքի նկատմամբ միջամտություն, որը ենթակա է հիմնավորման: Այդպիսի միջամտության գնահատման համար կարևոր է նաև այն, թե արդյոք այդ միջամտությունը եղել է այնպիսին, որ հանգեցրել է անձի կենսաթոշակային իրավունքի էության խաթարմանը<sup>485</sup>:

**Այսպիսով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ կենսաթոշակների ոլորտում պետություններն ունեն հայեցողության լայն շրջանակ, որը կարող է հանգեցնել վճարվող կենսաթոշակի գումարի փոփոխմանը, այդ թվում՝ նվազեցմանը, սակայն անձը չի կարող զրկվել արդեն իսկ ձեռք բերած կենսաթոշակի իրավունքից:**

ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում զարգացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային պրակտիկան: Սահմանադրական դատարանը 2006 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ ՄԴՈ-649 որոշման մեջ նշել է, որ **կենսաթոշակի վճարումը գործնականում սեփականությունը սեփականատիրոջը փոխանցելու միջոց է:**

Սահմանադրական դատարանի 2008 թվականի մարտի 18-ի թիվ ՄԴՈ-741 որոշման 8-րդ կետում արտահայտված դիրքորոշման համաձայն՝ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք:

ՀՀ սահմանադրական դատարանը 2016 թվականի նոյեմբերի 29-ի թիվ ՄԴՈ-1325 որոշման մեջ նշել է, որ Օրենքի 36-րդ և 41-րդ հոդվածներից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է միայն կենսաթոշակ **ստանալու իրավունքի դադարեցման, այլ ոչ թե կենսաթոշակի իրավունքի դադարեցման** հնարավորություն (5-րդ կետ): Նույն որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշել է, որ Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու հիմքերը: Նույն հոդվածի 2-րդ մասը, մասնավորապես, նախատեսում է, որ կենսաթոշակ վճարելը դադարեցվում է կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարելու դեպքում: Օրենքի 41-րդ հոդվածում հետևողական ու տարբերակված մոտեցում չի դրսևորվում **«դադարում»** և **«դադարեցում»** եզրույթների նկատմամբ: Եթե **«դադարումը»** ենթադրում է իրավունքի ուժով առաջացող իրավական հետևանք, ապա **«դադարեցումը» որոշակի իրավական գործընթացի հետևանք է, պետախիշխանական լիազորությամբ օժտված մարմնի կամաարտահայտման հետևանք:** Նման պարագայում կարող է առաջանալ նաև ընդհուպ դատական կարգով անձի իրավունքների պաշտպանության խնդիր: Բացի դրանից, նույն հոդվածի 1-ին մասի իրավապայմաններից հետևում է, որ կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցման հիմքերը բխում են կենսաթոշակի իրավունքի **դադարման** հանգամանքից (6-րդ կետ):

Սահմանադրական դատարանն իր 2008 թվականի հունվարի 15-ի թիվ ՄԴՈ-723 որոշման 8-րդ կետում արտահայտած իրավական դիրքորոշմամբ նշել է, որ եթե օրենքն արդեն սահմանել է կենսաթոշակի տեսակները, կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանները, **պետության**

<sup>485</sup> *Տե՛ս, Վեչորեկն ընդդեմ Լեհաստանի գործով 2010 թվականի մարտի 3-ի վճիռը, գանգատ թիվ 18176/05, 57, 58 և 59-րդ կետերը*



համար ծագում է պարտականություն երաշխավորելու կենսաթոշակի իրավունքի առնչությամբ իրավաչափ ակնկալիքների հանդեպ հարգանքի և իրավական որոշակիության սկզբունքների իրացումը:

Ըստ կենսաթոշակային հարաբերությունների իրավակարգավորման բնագավառում ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ «...օրենսդիրն իրավասու է օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանելու կենսաթոշակի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման լիովին նոր համակարգ: Մակայն նման փոփոխությունները չեն կարող վերացնել այն կենսաթոշակները, այդ թվում՝ արտոնյալ կարգով նշանակվող, որոնք ստանալու իրավունքն անձը ձեռք է բերել նախկինում գործող օրենսդրության հիման վրա: Եթե օրենքն արդեն սահմանել է կենսաթոշակի տեսակները, կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանները, կենսաթոշակի չափը և վճարման պայմանները, պետության համար ծագում է պարտականություն երաշխավորելու կենսաթոշակի իրավունքի առնչությամբ լեզիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի և իրավական որոշակիության սկզբունքների իրացումը»:

Տվյալ պարագայում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նախկին զինծառայողը երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի է անցել մինչև «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի ուժի մտնելը և շարունակել է ստանալ կենսաթոշակ նաև այդ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2013 թվականը:

Նշված օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակը նշանակվում է ցմահ:

Այսպիսով, կենսաթոշակային գործը Հայաստանի Հանրապետությունից այլ պետություն ուղարկելու, այնուհետև հետ վերադարձնելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունքը չվերականգնելը չի կարող հետապնդել իրավաչափ նպատակ, ուստի անհամաչափորեն սահմանափակում է անձի կենսաթոշակի իրավունքը: Այլ կերպ ասած՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստանալը, լինելով նախկինում կատարած ծառայության համար անժամկետ հատուցում, չպետք է վերացվի, քանի որ դա բերում է զինծառայողների կենսաթոշակի իրավունքի էության աղավաղմանը՝ միաժամանակ հանգեցնելով սոցիալական ապահովության իրավունքի իրականացման խախտման:

Փաստորեն ստացվում է, որ այն քաղաքացիները, ովքեր չեն օգտվում Համաձայնագրից և կենսաթոշակային գործը Հայաստանի Հանրապետությունից չեն ուղարկում Համաձայնագրի մասնակից պետություն, շարունակում են ստանալ կենսաթոշակ, իսկ այն քաղաքացիները, ովքեր օգտվում են Համաձայնագրով տրված արտոնությունից՝ հետագայում կենսաթոշակային գործը հետ բերելու դեպքում զրկվում են կենսաթոշակ ստանալու իրավունքից: Արդյունքում, նույն կարգավիճակում գտնվող անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում: Այս մոտեցումը չունի օբյեկտիվ հիմք և իրավաչափ նպատակ:

Հետևաբար, կենսաթոշակային գործը Հայաստանի Հանրապետությունից այլ պետություն տեղափոխելու հիմքով անձը չի կորցնում կենսաթոշակի իրավունքը, այլ դադարեցվում է նրա կենսաթոշակ ստանալու իրավունքը, ուստի անթույլատրելի, որ օրենսդրական թերի կարգավորումների հետևանքով անձը զրկվի Հայաստանի Հանրապետությունում ձեռք բերած կենսաթոշակի իրավունքից, երբ վերջինիս կենսաթոշակային գործն այլ պետությունից վերադարձվում է Հայաստանի Հանրապետություն:

*Հետևաբար, առաջարկվում է՝*

*1. հետագա պրակտիկան ձևավորել այն մոտեցմամբ, որ սահմանադրական և միջազգային իրավական մի շարք երաշխիքների առկայության պայմաններում ներպետական օրենսդրական կարգավորումները (առավել ևս ոչ լիարժեք նորմերը) չպետք է*

Ֆորմալ հիմք դառնան երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքը չվերականգնելու համար,

2. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանել, որ կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվում է Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջազգային պայմանագիր կնքած պետություններ մշտական բնակության մեկնած և կենսաթոշակային գործերն ուղարկած անձանց կենսաթոշակի գործերը Հայաստանի Հանրապետություն վերադարձնելու դեպքում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասում թվարկված կենսաթոշակ վճարելը վերսկսվելու դեպքերը կախվածության մեջ են նաև օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասում նշված պայմանների հետ, ուստի անհրաժեշտ է համապատասխան լրացում կատարել նաև օրենքի 41-րդ հոդված 4-րդ մասում:

Նախկին զինծառայողները 2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին բողոքներ են հասցեագրել նաև երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելիս զինվորական ծառայություն չհամարվող աշխատանքային ստաժը հաշվի չառնելու վերաբերյալ:

Խնդիրը կայանում է նրանում, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակը հաշվարկվում է  $Կ = Հ \times ԶԱԳ + ԶՍ \times ԶԱ$  բանաձևով, որտեղ՝ Կ-ն կենսաթոշակի ամսական գումարն է, Հ-ն՝ հիմնական կենսաթոշակի չափը, ԶՍ-ն՝ զինվորական ծառայության ստաժի տարիները, ԶԱ-ն՝ զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքը, ԶԱԳ-ն՝ զինծառայողի զբաղեցրած վերջին պաշտոնի համար «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված գործակիցը:

**Ստացվում է, որ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակը հաշվարկելիս որևէ կերպ հաշվի չի առնվում անձանց զինվորական ծառայություն չհամարվող աշխատանքային ստաժը:**

Ընդ որում, վերը նշված կարգավորումը սահմանվել է Օրենքում 2013 թվականի դեկտեմբերի 11-ին կատարված փոփոխությամբ (ուժի մեջ է մտել 2014 թվականի հուլիսի 1-ից): Մինչ փոփոխությունը երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելիս հաշվի են առնվել նաև զինվորական ծառայություն չհամարվող աշխատանքային ստաժը՝ յուրաքանչյուր տարվա համար 1 տոկոսի չափով:

Խնդրի կապակցությամբ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացված պարզաբանմամբ նշվել է, որ զինվորական կենսաթոշակի չափի հաշվարկման նոր կարգի շրջանակներում կենսաթոշակի չափը փոխկապակցվել է միայն զինվորական ծառայության ժամանակահատվածին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այլ հավասար պայմաններում ավելի երկար ժամանակահատված զինվորական ծառայության մեջ գտնվող անձի կենսաթոշակի չափը չի կարող ավելի ցածր լինել համեմատաբար պակաս ժամանակահատված զինվորական ծառայության մեջ գտնվող անձի կենսաթոշակից (ինչը հնարավոր է, եթե կենսաթոշակի չափում հաշվի առնվի նաև զինվորական ծառայության ժամանակահատված չհամարվող աշխատանքային ստաժը):

Մինչդեռ, նշված իրավիճակը հնարավոր է միայն զինվորական ծառայության ժամանակահատված չհամարվող աշխատանքային ստաժը զինվորական ծառայության ստաժին համարժեք չափով հաշվարկելու պարագայում: Այն դեպքում, եթե զինվորական ծառայության ժամանակահատված չհամարվող աշխատանքային ստաժը հաշվարկվի զինվորական ծառայության ստաժի որոշակի տոկոսի չափով, ավելի երկար

Ժամանակահատված զինվորական ծառայության մեջ գտնվող անձի կենսաթոշակի չափը չի կարող ավելի ցածր լինել համեմատաբար պակաս ժամանակահատված զինվորական ծառայության մեջ գտնվող անձի կենսաթոշակից:

Ներկա իրավակարգավորումների պարագայում ստացվում է, որ հավասարաչափ կենսաթոշակ են ստանում և՛ միայն երկարամյա զինվորական ծառայություն անցած անձինք, և՛ նույն ժամկետով երկարամյա զինվորական ծառայություն անցած անձինք, ովքեր, բացի զինվորական ծառայությունը, կատարել են նաև զինվորական ծառայություն չհամարվող այլ աշխատանք: Հետևաբար, այլ հավասար պայմաններում ավելի երկար ժամանակահատված զինվորական ծառայության մեջ գտնվող անձի կենսաթոշակի չափը համեմատաբար պակաս ժամանակահատված զինվորական ծառայության մեջ գտնվող անձի կենսաթոշակից ավել չլինելու մտավախությունից զատ անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ հավասար պայմաններում զինվորական ծառայություն անցած անձանց չի կարող հավասար չափի կենսաթոշակ նշանակվել, եթե նրանցից մեկը կատարել է նաև զինվորական ծառայություն չհամարվող այլ աշխատանք:

Խնդրի քննարկման արդյունքում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պարզաբանել է, որ նշված առաջարկությունն էապես կավելացնի կենսաթոշակային ապահովության համակարգի ծախսերը: Նշվել է, որ անհրաժեշտ լրացուցիչ միջոցները ներկա պահին հնարավոր չէ հաշվարկել՝ ելակետային տվյալների բացակայության պատճառով: Նշվել է, որ խնդրին հնարավոր է անդրադառնալ առաջիկայում՝ կենսաթոշակային ապահովության համակարգի ֆինանսավորմանը հատկացվող միջոցների չափը հստակեցնելու, ինչպես նաև ոլորտում վարվող քաղաքականության թիրախային նպատակադրումներն ու ծախսային առաջնահերթությունները որոշելու աշխատանքների շրջանակներում:

*Հետևաբար, անհրաժեշտ է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածում կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություն, որի շնորհիվ հնարավոր կլինի երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելիս զինվորական ծառայության ստաժի որոշակի տոկոսի չափով հաշվի առնել նաև անձանց՝ զինվորական ծառայության ժամանակահատված չհամարվող աշխատանքային ստաժը:*

Մեկ այլ խնդիր է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելիս կադրերի տրամադրության տակ գտնվելու ժամանակահատվածը հաշվի չառնելը:

Այսպես, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ է նշանակվում համապատասխան մարմիններում, ինչպես նաև քրեակատարողական և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություններում ծառայությունը կարգավորող օրենքներով սահմանված կարգով և ժամկետներով ծառայած այն անձին (այսուհետ՝ զինծառայող), որը՝ զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելու օրվա դրությամբ ունի առնվազն 20 օրացուցային տարվա զինվորական ծառայության ստաժ կամ սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ, կամ պայմանագրի գործողության ժամկետը լրանալու կապակցությամբ (սահմանային տարիքը լրացած լինելու դեպքում) զինվորական ծառայությունից արձակվելու օրվա դրությամբ ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որում զինվորական ծառայության ստաժը կազմում է առնվազն 12 օրացուցային տարի, 6 օրացուցային ամիս, կամ հաստիքների կրճատման կամ առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայությունից արձակվելու օրվա դրությամբ առնվազն 45 տարեկան է և ունի առնվազն 25 օրացուցային տարվա

աշխատանքային ստաժ, որում զինվորական ծառայության ստաժը կազմում է առնվազն 12 օրացուցային տարի, 6 օրացուցային ամիս:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ զինծառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ զինվորական ծառայության ստաժում օրացուցային հաշվարկով հաշվառվում են՝ համապատասխան մարմինների համակարգերի **հրամանատարական և ոչ հրամանատարական (սպայական, ենթասպայական, շարքային) կազմերի պաշտոններում զինծառայության, քրեակատարողական ծառայողի և հարկադիր կատարողի ծառայության, ինչպես նաև համապատասխան մարմինների ուսումնական հաստատություններում ուսման ժամանակահատվածները**՝ անկախ զինվորական կամ հատուկ կոչման առկայությունից:

Ստացվում է՝ եթե անձը անցել է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ զինվորական ծառայությունը, որի ընթացքում որոշակի ժամանակ եղել է կադրերի տրամադրության տակ, չի կարող օգտվել իր նկատմամբ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ նշանակվելու իրավունքից, քանի որ գործող օրենսդրական կարգավորումների պարագայում կադրերի տրամադրության տակ գտնվելու ժամանակահատվածը զինվորական ծառայության ստաժում չի հաշվարկվում:

Մինչդեռ, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ հաստիքների կրճատման, այդ թվում՝ ստորաբաժանման լուծարման կամ հիվանդանոցային բուժման մեջ գտնվող պայմանագրային զինծառայողի՝ զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու կամ պայմանագրային զինծառայողին այլ պետական մարմիններ տեղափոխելու պատճառով զինվորական պաշտոնից ազատված և կադրերի տրամադրության տակ թողնված զինծառայողների համար պահպանվում է պաշտոնային դրույքաչափը՝ օրենքով սահմանված կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ թողնելու ժամանակահատվածում:

Նույն հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ արձակուրդում (բացառությամբ երեխայի խնամքի համար արձակուրդի) կամ գործուղման մեջ գտնվող զինծառայողների, ինչպես նաև սույն օրենքով սահմանված կարգով վեց ամիսը գերազանցող ժամկետով ռազմաուսումնական (կամ առկա ուսուցմամբ ոստիկանական ուսումնական) հաստատություններ, համապատասխան սպայական կամ սերժանտական դասընթացներ, ասպիրանտուրա, դոկտորանտուրա, կլինիկական օրդինատուրա կամ ինտերնատուրա ընդունվելու կամ Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության ռազմաուսումնական կամ այլ հաստատությունում վերապատրաստման գործուղվելու պատճառով զինվորական պաշտոնից ազատված և կադրերի տրամադրության տակ թողնված զինծառայողների համար պահպանվում է դրամական ապահովությունը՝ արձակուրդում կամ գործուղման մեջ գտնվելու կամ օրենքով սահմանված կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ թողնելու ժամանակահատվածում:

Հետևաբար, օրենսդրի տրամաբանությունն այն է, որ որոշակի հիմքերով կադրերի տրամադրության տակ գտնվելու ժամանակահատվածում անձը պետք է ստանա դրամական ապահովում, ուստի անտրամաբանական է նշված ժամկետը զինվորական ծառայությունում չհաշվարկելը:

*Ուստի, առաջարկվում է համապատասխան օրենսդրական փոփոխությունների արդյունքում զինծառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ զինվորական ծառայության ստաժում օրացուցային հաշվարկում ներառել նաև հաստիքների կրճատման, այդ թվում՝ ստորաբաժանման լուծարման կամ հիվանդանոցային բուժման մեջ գտնվող պայմանագրային զինծառայողի՝ զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու կամ պայմանագրային զինծառայողին այլ*

պետական մարմիններ տեղափոխելու, ինչպես նաև արձակուրդում (բացառությամբ երեխայի խնամքի համար արձակուրդի) կամ գործուղման մեջ գտնվող զինծառայողների, ինչպես նաև սույն օրենքով սահմանված կարգով վեց ամիսը գերազանցող ժամկետով ռազմաուսումնական (կամ առկա ուսուցմամբ ուստիկանական ուսումնական) հաստատություններ, համապատասխան սպայական կամ սերժանտական դասընթացներ, ասպիրանտուրա, դոկտորանտուրա, կլինիկական օրդինատուրա կամ ինտերնատուրա ընդունվելու կամ Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության ռազմաուսումնական կամ այլ հաստատությունում վերապատրաստման գործուղվելու պատճառով զինվորական պաշտոնից ազատված լինելու և կադրերի տրամադրության տակ գտնվելու ժամանակահատվածները:

### **3. Պարգևավճար ստանալու իրավունք**

Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելիս զինվորական ծառայություն չհամարվող աշխատանքային ստաժը հաշվի չառնելու խնդիրն իր հերթին առաջացնում է կենսաթոշակի փոփոխմամբ պայմանավորված՝ նախկին զինծառայողին պարգևավճար վճարելը դադարեցնելու խնդիր:

Այսպես, նախկին զինծառայողներն իրենց դժգոհությունն են հայտնել առ այն, որ զինվորական ծառայություն չհամարվող աշխատանքային ստաժը հաշվի չառնելու պատճառով երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի փոխարեն ստիպված ընտրում են երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակ՝ դրանով իսկ զրկվելով նաև երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքի դեպքում նշանակվող պարգևավճար ստանալու իրավունքից:

2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով նախկին զինծառայողը տեղեկացրել է, որ 1990-1998 թվականներին անցել է զինվորական ծառայություն, որից հետո արձակվել է ՀՀ զինված ուժերի պահեստագործ: 1998-2015 թվականներին ստացել է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ և մարտական գործողությունների մասնակցության համար սահմանված ամսական պարգևավճար: 2015 թվականին հրաժարվել է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքից և անցել տարիքային աշխատանքային կենսաթոշակի, որպեսզի կենսաթոշակի չափն ավելի բարձր լինի: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ տարիքային աշխատանքային կենսաթոշակի անցնելուց հետո դադարեցվել է մարտական գործողությունների մասնակցության համար սահմանված ամսական պարգևավճարի վճարումը:

Բողոքին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նախկին զինծառայողը մարտական գործողությունների մասնակցության համար սահմանված ամսական պարգևավճար ստանալու իրավունքը վերականգնելու հարցով դիմել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, սակայն մերժում է ստացել այն պատճառաբանությամբ, որ չի ստանում զինվորական կենսաթոշակ:

Բողոքի քննարկման ընթացքում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տեղեկացրել է, որ նախկին զինծառայողը երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքը 2015 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ դադարեցված լինելու մասին տեղեկատվության և ներկայացված փաստաթղթերի հիման վրա նրան նշանակվել և վճարվում է տարիքային աշխատանքային կենսաթոշակ:

Ըստ ներկայացված պարզաբանումների՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ խնդրո առարկա պարգևավճարը տրվում է զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձին և հիմք ընդունելով «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ

հողվածի 1-ին մասի 10-րդ ենթակետը՝ դադարեցվել է նաև նախկին զինծառայողի պարգևավճար ստանալու իրավունքը:

Վերոնշյալ խնդրի կապակցությամբ անհրաժեշտ է համադիր վերլուծության ենթարկել միջազգային և ներպետական իրավական կարգավորումները:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ «Մարդու իրավունքները զինված ուժերի անդամների համար» թիվ Rec 1742(2006) հանձնարարականի 10.4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ զինծառայողները պետք է օգտվեն տնտեսական և սոցիալական իրավունքներից, ներառյալ՝ արդար վարձատրության և կենսաթոշակի իրավունքները:

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 65-րդ կետի համաձայն՝ լրիվ դրույքով աշխատող պրոֆեսիոնալ զինծառայողները պետք է օգտվեն բավարար կենսաթոշակի իրավունքից, որը պետք է վճարվի ժամանակին և առանց որևէ խտրականության:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ զինծառայողների կենսաթոշակային ապահովությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի<sup>486</sup> 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքով կենսաթոշակի իրավունք ունեցող անձը կենսաթոշակ ստանալու իրավունք ունի, եթե օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել է կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի համապատասխան ստորաբաժանում, և նրան նշանակվել է կենսաթոշակ:

ՀՀ սահմանադրական դատարանը 2016 թվականի նոյեմբերի 29-ի թիվ ՄԴՈ-1325 որոշման մեջ անդրադարձել է Օրենքում օգտագործվող «կենսաթոշակի իրավունք» և «կենսաթոշակ ստանալու իրավունք» եզրույթների սահմանադրաիրավական բովանդակությանը և նշել. «Տարբեր են կենսաթոշակի իրավունքի և կենսաթոշակ ստանալու իրավունքի ծագման նախադրյալները. եթե, կոնկրետ դեպքում, տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունքի ծագման նախադրյալներն են որոշակի տարիքը լրանալը և որոշակի աշխատանքային ստաժի առկայությունը, ապա կենսաթոշակ ստանալու իրավունքի ծագման նախադրյալներն են կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի համապատասխան ստորաբաժանում դիմում ու անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելը:» (5-րդ կետ): Ավելին՝ Սահմանադրական դատարանը հստակ տարանջատել է «կենսաթոշակ ստանալու իրավունք» և «կենսաթոշակի իրավունք» հասկացությունները և ամրագրել, որ կենսաթոշակ ստանալու իրավունքը բխում է կենսաթոշակի իրավունքից: Միաժամանակ, Սահմանադրական դատարանը առանձնացրել է կենսաթոշակի իրավունքի և կենսաթոշակ ստանալու իրավունքի ծագման նախադրյալները:

Նույն տրամաբանությունը պետք է վերաբերելի լինի նաև քննարկվող խնդրին: Այլ խոսքով՝ զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքը անհրաժեշտ է հստակ տարանջատել զինվորական կենսաթոշակի իրավունքից, քանի որ զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքը բխում է զինվորական կենսաթոշակի իրավունքից, և բացի այդ, տարբեր են նաև դրանց ծագման նախադրյալները:

Տվյալ պարագայում, այն, որ նախկին զինծառայողը 1998-2015 թվականներին ստացել է զինվորական կենսաթոշակ, ակնհայտ է դարձնում, որ նա ունի զինվորական կենսաթոշակի իրավունք, քանի որ զինվորական կենսաթոշակ նշանակելու պահին բավարարել է Օրենքով սահմանված պահանջներին, և միաժամանակ ունի նաև զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք, քանի որ դիմել է կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի համապատասխան ստորաբաժանում: Զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքի

<sup>486</sup> Այսուհետ՝ Օրենք

հիման վրա էլ նախկին զինծառայողին նշանակվել և մինչև 2015 թվականը վճարվել է պարգևավճար:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը նախկին զինծառայողին պարգևավճարի վճարման դադարեցումը պայմանավորել է վերջինիս կենսաթոշակի տեսակի փոփոխմամբ: Նման հնարավորության առկայությունը պարզելու նպատակով անհրաժեշտ է համապարփակ վերլուծության ենթարկել ոլորտը կարգավորող ներպետական օրենսդրությունը:

Այսպես, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի (խնդրո առարկա իրավահարաբերությունների ծագման ժամանակահատվածում գործող՝ «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 34.1-ին հոդվածի 1-ին մասի) համաձայն՝ ամենամյա պարգևավճարի իրավունք ունեն **զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող**՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցները: Ամենամյա պարգևավճարի չափը, պարգևավճար նշանակելու և վճարելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 668-Ն որոշման 1-ին հավելվածի 3-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ պարգևավճար ստանալու իրավունք ունեն **զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող** Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցները՝ 5000 դրամի չափով: Նույն հավելվածի 15-րդ կետի համաձայն՝ պարգևավճար ստանալու իրավունքը դադարեցվում, վերականգնվում, պարգևավճար վճարելը դադարեցվում և վերսկսվում է կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու, վերականգնելու, կենսաթոշակ վճարելը դադարեցնելու և վերսկսելու՝ Օրենքի 41-րդ հոդվածով սահմանված կարգով:

Քանի որ վերը նշված կարգավորումների համաձայն՝ պարգևավճար ստանալու իրավունքը և պարգևավճար վճարելը դադարեցվում է Օրենքի 41-րդ հոդվածով սահմանված՝ կենսաթոշակ ստանալու իրավունքի և կենսաթոշակ վճարելու դադարեցման կարգով, ուստի անհրաժեշտ է մանրամասն վերլուծել Օրենքի 41-րդ հոդվածով սահմանված կարգավորումները և դրանց վերաբերյալ Սահմանադրական դատարանի հայտնած դիրքորոշումները: Այսպես.

Օրենքի 41-րդ հոդվածով սահմանված են այն հիմքերը, երբ անձի կենսաթոշակ ստանալու իրավունքը և կենսաթոշակ վճարելը կարող է դադարեցվել: Հարկ է նկատել, որ նշված հիմքերի մեջ առկա չէ կենսաթոշակի տեսակի փոփոխմամբ պայմանավորված՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը և կենսաթոշակ վճարելը դադարեցնելու հնարավորություն: Միաժամանակ, պետք է նշել, որ Օրենքով սահմանված չէ, թե որ դեպքերում է անձը կորցնում կենսաթոշակի իրավունքը:

ՀՀ սահմանադրական դատարանը 2016 թվականի նոյեմբերի 29-ի թիվ ՍԴՈ-1325 որոշման մեջ անդրադարձել է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36-րդ և 41-րդ հոդվածներին և արձանագրել, որ օրենսդիրը նախատեսել է միայն կենսաթոշակ **ստանալու իրավունքի դադարեցման, այլ ոչ թե կենսաթոշակի իրավունքի դադարեցման** հնարավորություն (5-րդ կետ): Նույն որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշել է, որ Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու հիմքերը: Նույն հոդվածի 2-րդ մասը, մասնավորապես, նախատեսում է, որ կենսաթոշակ վճարելը դադարեցվում է կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարելու դեպքում: Օրենքի 41-րդ հոդվածում հետևողական ու տարբերակված մոտեցում չի դրսևորվում **«դադարում»** և **«դադարեցում»** եզրույթների նկատմամբ: Եթե **«դադարումը»** ենթադրում է իրավունքի ուժով առաջացող իրավական հետևանք, ապա **«դադարեցումը»**

որոշակի իրավական գործընթացի հետևանք է, պետաիշխանական լիազորությամբ օժտված մարմնի կամաարտահայտման հետևանք: Նման պարագայում կարող է առաջանալ նաև ընդհուպ դատական կարգով անձի իրավունքների պաշտպանության խնդիր: Բացի դրանից, նույն հոդվածի 1-ին մասի իրավապայմաններից հետևում է, որ կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցման հիմքերը բխում են կենսաթոշակի իրավունքի դադարման հանգամանքից (6-րդ կետ):

Այսպիսով, ամփոփելով «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով սահմանված կարգավորումները և դրանց վերաբերյալ Սահմանադրական դատարանի հայտնած դիրքորոշումները՝ պետք է փաստել, որ **Օրենքի 41-րդ հոդվածով սահմանված հիմքերի մեջ առկա չէ կենսաթոշակի տեսակի փոփոխմամբ պայմանավորված՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը և կենսաթոշակ վճարելը դադարեցնելու հնարավորություն: Հետևաբար, առկա չէ նաև կենսաթոշակի տեսակի փոփոխմամբ պայմանավորված՝ պարզևավճար ստանալու իրավունքը և պարզևավճարի վճարումը դադարեցնելու որևէ հիմք: Միաժամանակ, ի տարբերություն կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու հիմքերի՝ Օրենքում առկա չեն կարգավորումներ, թե որ դեպքերում է անձը կորցնում կենսաթոշակի իրավունքը:**

Այսպիսով, կենսաթոշակի տեսակը փոփոխելը չի հանգեցնում նախկինում նշանակված կենսաթոշակի իրավունքը կորցնելուն: Միաժամանակ, կենսաթոշակի տեսակը փոփոխելու հիմքով արդեն իսկ նշանակված պարզևավճարի վճարումը չի կարող դադարեցվել:

*Ուստի, առաջարկվում է կենսաթոշակի փոփոխմամբ պայմանավորված՝ նախկին զինծառայողներին պարզևավճար վճարելը դադարեցված լինելու դեպքում միջոցներ ձեռնարկել նրանց պարզևավճար ստանալու իրավունքը վերականգնելու, ինչպես նաև չվճարված բոլոր ամիսների դիմաց պարզևավճարի գումարը վճարելու ուղղությամբ՝ միաժամանակ միջոցներ ձեռնարկելով հետագայում նմանատիպ դեպքերը կանխարգելելու ուղղությամբ:*

#### **4. Մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տրամադրելու հետ կապված խնդիրներ**

2018 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ չտրամադրելու և կարգավիճակից զրկելու, ինչպես նաև մարտական գործողություններին մասնակցելու վերաբերյալ տեղեկանք չտրամադրելու վերաբերյալ:

Պետք է նշել, որ անձին մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տրամադրելն ինքնանպատակ չէ. այն ունի որոշակի սոցիալական ուղղվածություն և, ըստ էության, նշված կարգավիճակով զինծառայողին տրվում է որոշակի կարգավիճակ, որը հիմք է հանդիսանում հետագայում այդ զինծառայողների կողմից որոշակի արտոնություններից և սոցիալական ապահովության միջոցներից օգտվելու համար:

Այսպես, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի համաձայն՝ զինծառայողների դրամական և սոցիալական ապահովության վերաբերյալ դրույթների կիրառման իմաստով զինծառայողներին հավասարեցված անձինք են նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակցի կամ երկրապահ կամավորականի կարգավիճակ ունեցող անձինք: Նրանք պետական բյուջեի միջոցների հաշվին ապահովվում են որակյալ բժշկական օգնությամբ, ունեն բնակարանային ապահովության, քաղաքային ուղևորատար տրանսպորտի բոլոր տեսակներից՝ անկախ սեփականության ձևից (բացի տաքսիից), անվճար երթևեկելու, դրամական աջակցության, զինվորական կենսաթոշակի իրավունք:



Նրանց հուղարկավորության հետ կապված ծախսերը հատուցվում են պետական բյուջեի հաշվին:

Հետևաբար, անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել զինծառայողներին մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տրամադրելու գործընթացին՝ դրանով իսկ բացառելով նրանց սոցիալական արտոնությունների հնարավոր անհիմն սահմանափակումները:

2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրած բողոքներից մեկով նախկին զինծառայողը տեղեկացրել է, որ 1993 թվականի փետրվարի 5-ից մինչև նույն թվականի մարտի 6-ը Ոստիկանության գորքերի կազմում մասնակցել է ինքնապաշտպանական մարտական գործողությունների: 2002 թվականին մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ստանալու համար դիմում է ներկայացրել ՀՀ ներքին գործերի նախարարի առաջին տեղակալին, որի հիման վրա ՀՀ ոստիկանության համակարգի աշխատակիցների մարտական գործողությունների մասնակցությունը հաստատող փաստաթղթերն ուսումնասիրելու համար ստեղծված հանձնաժողովի 2003 թվականի օգոստոսի 18-ին ընդունած որոշմամբ ճանաչվել է մարտական գործողությունների մասնակից և 2004 թվականի հուլիսի 7-ին ՀՀ պաշտպանության նախարարության զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչության կողմից իրեն տրամադրվել է մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակը հաստատող վկայական:

Այնուհետև, անհրաժեշտություն է առաջացել մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակը հաստատող վկայականը փոխել նոր վկայականով, սակայն նոր վկայական չի տրամադրվել, քանի որ մարտական գործողությունների է մասնակցել երեք ամսից քիչ ընդհանուր տևողությամբ:

Արդյունքում, մերժվել է բողոք ներկայացրած անձին մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տրամադրելը: Մինչդեռ, բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ստանալու համար դիմում չի ներկայացրել:

ՀՀ կառավարության 2000 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 778-Ն որոշմամբ սահմանվել է «Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտերին մասնակցած անձանց մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տալու» կարգը: Կարգի 2-րդ կետով սահմանվել է, որ մարտական գործողություններին 3 ամսից պակաս տևողությամբ մասնակցած, ինչպես նաև մարտական գործողություններին օժանդակած անձինք մարտական գործողությունների մասնակից կարող են համարվել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության կողմից ստեղծված հանձնաժողովի որոշմամբ:

ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ին վերը նշված կարգի 2-րդ կետը վերախմբագրվել է, և բացառվել է երեք ամսից քիչ ժամկետով մարտական գործողությունների մասնակցած անձանց գերատեսչական հանձնաժողովների կողմից մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակը տալը:

ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն: Հետևաբար, նշված փոփոխության արդյունքում բողոք ներկայացրած անձը չէր կարող գրկվել մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակից:

ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1267-Ն որոշման 2-րդ կետով սահմանվել է, որ մինչև այդ որոշումն ուժի մեջ մտնելը մարտական գործողությունների

մասնակցի կարգավիճակ ստացած անձանց վկայականներն ուժի մեջ են մինչև 2017 թվականի հունվարի 1-ը: Իսկ ՀՀ կառավարության 2017 մարտի 9-ի թիվ 225-Ն որոշմամբ վկայականների ուժի մեջ մտնելու ժամկետները երկարաձգվել են մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Արդյունքում, մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակը հաստատող վկայականը 2017 թվականի դեկտեմբերի 31-ից հետո ուժը կորցրել է:

**Հարկ է նկատի ունենալ, որ մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակը հաստատող վկայականի ուժը կորցնելը չի կարող հանգեցնել անձին մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակից զրկելուն:**

Մինչդեռ, ըստ Պաշտպանության նախարարության՝ Միջգերատեսչական հանձնաժողովը գործունեությունը իրականացրել է «Երկրապահ կամավորականի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2000 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 778-Ն որոշմամբ սահմանված կարգով վերապահված իրավասության շրջանակներում, որոնցով չէր նախատեսվում անձին տրված փաստաթղթի, տվյալ դեպքում՝ Մարտական գործողությունների մասնակցի վկայականի մեխանիկական փոխարինումը նոր վկայականով, այլ սահմանում էր կարգավիճակի տրման ամբողջությամբ նոր ընթացակարգ:

Այնուամենայնիվ, Պաշտպանության նախարարությունը նշել է, որ մշակվում է «Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցած անձանց մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տալու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որի շրջանակներում կքննարկվի նաև նշված դեպքերում նախկինում տրված վկայականների (կարգավիճակների) ուժի մեջ թողնելու հնարավորության հարցը:

Պետք է նշել, որ 2019 թվականի մարտի 29-ի դրությամբ նման նախագիծ ընդունված չի եղել:

2018 թվականին ի հայտ է եկել նաև մեկ այլ խնդիր: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքով նախկին զինծառայողը տեղեկացրել է, որ ունի մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ: Նշել է, որ կենսաթոշակը վերահաշվարկելու համար անհրաժեշտ տեղեկանք ստանալու նպատակով՝ 2017 թվականի հունվար ամսին դիմում է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարություն՝ պահանջելով տրամադրել մարտական գործողությունների մասնակցության վերաբերյալ համապատասխան տեղեկանք, սակայն մերժում է ստացել:

Բողոքին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակը հավաստող վկայական ստանալու համար նախկին զինծառայողը ներկայացրել է նաև մարտական ուղու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ, որում նշված են մարտական գործողություններին նրա մասնակցության վերաբերյալ տեղեկություններ:

Բողոքի քննարկման ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարությունից ներկայացվել է պարզաբանում այն մասին, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշման համաձայն՝ ՀՀ պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցելու ժամանակահատվածը որպես զինվորական ստաժ հաշվարկելու համար անհրաժեշտ են մարտական գոտի գործուղելու և գործուղումից վերադառնալու վերաբերյալ **արխիվային հրամանների քաղվածքներ՝ կոնկրետ ամսաթվերով:** Միաժամանակ, նշվել է, որ ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ստանալու համար ներկայացված փաստաթղթերում նախկին զինծառայողի մասնակցության վերաբերյալ կոնկրետ ժամկետներով և օրերով համապատասխան փաստաթղթեր առկա չեն:

Հարկ է նկատի ունենալ, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի և 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետի «բ» կետի համաձայն՝ աշխատանքային ստաժում եռակի չափով հաշվառվում է ՀՀ պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցելու ժամանակահատվածը:

ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշմամբ հաստատված՝ «Կենսաթոշակ նշանակելու համար աշխատանքային ստաժը հաշվարկելու կանոնների» 29.1-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակցելու ժամանակահատվածը հաստատվում է Պաշտպանության նախարարության տված տեղեկանքով: Տեղեկանքում նշվում են մարտական գործողությունների մասնակցելու ժամանակահատվածի սկիզբը (օրը, ամիսը, տարեթիվը) և վերջը (օրը, ամիսը, տարեթիվը):

ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշմամբ հաստատված՝ «Կենսաթոշակ նշանակելու համար զինվորական ծառայության ստաժը հաշվարկելու կանոնների» 4-րդ կետի համաձայն՝ զինվորական ծառայության ստաժը հաստատվում է՝ զինվորական ծառայության մասին աշխատանքային գրքույկում առկա գրառումներով, զինվորական գրքույկով, արխիվային տեղեկանքով, Պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցելու ժամանակահատվածը հաստատվում է համապատասխան զինվորական կոմիսարիատի կամ Պաշտպանության նախարարության տված տեղեկանքով:

ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշմամբ հաստատված՝ «Կենսաթոշակ նշանակելու համար զինվորական ծառայության ստաժը հաշվարկելու կանոնների» 5-րդ կետի համաձայն՝ զինվորական ծառայության ժամանակահատվածները հաստատող փաստաթղթերը պետք է պարունակեն դրանք տալու օրը, ամիսը, տարեթիվը, հիմքերը (հրամաններ, անձնական հաշվառման քարտեր և այլ փաստաթղթեր), անձի ազգանունը, անունը, հայրանունը, մարտական գործողություններին մասնակցելու կամ ծառայության ժամանակահատվածի սկիզբը (օրը, ամիսը, տարեթիվը) և վերջը (օրը, ամիսը, տարեթիվը):

Այսպիսով, Պաշտպանության նախարարությունից նախկին զինծառայողի կենսաթոշակը վերահաշվարկելու նպատակով անհրաժեշտ տեղեկանք տրամադրելու համար հիմք չեն ընդունվել մարտական ուղու վերաբերյալ համապատասխան փաստաթղթի տվյալները, քանի որ վերը նշված կանոնների 4-րդ կետում մարտական ուղու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթը նշված չէ: Բացի այդ, նախկին զինծառայողի զինվորական գրքույկում և այլ փաստաթղթերում կոնկրետ ամսաթվերով լրացված չեն մարտական գործողությունների ժամկետները:

Մինչդեռ, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշմամբ սահմանված չէ պահանջ այն մասին, որ զինվորական ծառայության ժամանակահատվածը աշխատանքային ստաժում հաշվառելու համար անհրաժեշտ են արխիվային հրամանների քաղվածքներ:

*Հետևաբար, անհրաժեշտ է գործուն միջոցներ ձեռնարկել խնդրին լուծում տալու նպատակով:*

Մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ստանալու համար ներկայացված փաստաթղթերի հիման վրա անհրաժեշտ տեղեկանքը տրամադրելու խնդրի լուծման համար հարկավոր է առաջնորդվել վարչարարության հիմնարար սկզբունքներով:

Այսպես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմիններն իրավունք չունեն անձանցից պահանջել կատարելու այնպիսի գործողություններ, որոնք արդեն իսկ կատարվել են այդ անձանց կողմից այլ գործողությունների շրջանակներում կամ էլ իրենց բովանդակությամբ

ներառվում են կամ կարող են ներառվել այդ շրջանակներում: Նույն օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Խնդիրը կայանում է նրանում, որ կամավորական հիմունքներով մարտական գործողություններին մասնակցած անձինք, ովքեր մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ձեռք բերելիս ներկայացրել են մարտական գործողություններին մասնակցելու ժամանակահատվածի վերաբերյալ տեղեկություններ, հետագայում կենսաթոշակ նշանակելիս մարտական գործողությունների ժամանակահատվածը որպես ստաժ հաշվարկելու համար պրակտիկորեն չեն կարող, և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն, պարտավոր չեն ներկայացնել նույն փաստաթղթերը:

*Հետևաբար, առաջարկվում է՝*

1. միջոցներ ձեռնարկել «Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցած անձանց մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տալու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելու ուղղությամբ: Նախագծով անհրաժեշտ է հստակ սահմանել, որ նախկինում մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ստացած և վկայականն ուժը կորցրած անձանց տրամադրվում է նոր վկայական՝ առանց կարգավիճակի վերանայման հնարավորության,

2. օրենսդրական փոփոխությունների միջոցով սահմանել, որ կենսաթոշակ նշանակելու համար մարտական գործողությունների ժամանակահատվածը որպես ստաժ հաշվարկելիս նախկինում ներկայացրած փաստաթղթերը բավարար են մարտական գործողությունների ժամանակահատվածի որոշման համար:

### **5. Չինձառայողներին և նրանց ընտանիքների անդամների ոչ ֆինանսական բնույթի արտոնություններ**

ՀՀ մարդու իրավունքների 2017 թվականի տարեկան հաղորդման շրջանակներում ուսումնասիրվել էին առաջատար երկրներում զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների համար արտոնություններ և սոցիալական երաշխիքներ սահմանող իրավական ակտերը: Ուսումնասիրությամբ առանձնացվել էին զինձառայողներին և նրանց ընտանիքների անդամներին վերապահված ոչ ֆինանսական և այլ արտոնությունները, որոնք համեմատական-իրավական վերլուծության են ենթարկվել ՀՀ գործող օրենսդրության իրավակարգավորումների հետ և արդյունքում մշակվել են զինձառայողներին և նրանց ընտանիքների անդամներին ոչ ֆինանսական արտոնություններ տրամադրելու առաջարկներ: Մասնավորապես, առաջարկվել էր՝

1. ՀՀ աշխատանքային օրենսգրքով աշխատանքի պահպանման նախապատվության իրավունք վերապահել ժամկետային պայմանագրային զինվորական ծառայություն անցած կամ անցնող շարքային, ենթասպայական, սպայական կազմի (այդ թվում՝ ռազմաուսումնական հաստատություններ կամ համապատասխան սպայական կամ սերժանտական դասընթացներ ավարտած) զինձառայողների, պարտադիր ժամկետային զինձառայություն անցնող զինձառայողների ընտանիքների անդամներին (զինվորական ծառայության ժամկետում), Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցների, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած զինձառայողներին և նրանց ընտանիքների

անդամներին, ինչպես նաև պաշտպանության ժամանակ կամ զինվորական պարտականությունների կատարման ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներին,

2. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասում՝ ի թիվս պարտադիր կարգով չվճարվող արձակուրդ ստացող այլ անձանց, ներառել նաև պաշտպանության ժամանակ զոհված (մահացած), հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների ծնողներին և ամուսիններին,

3. սահմանել մինչև անընդմեջ աշխատանքի վեց ամիսը լրանալը և դրա լրանալուց հետո ամենամյա արձակուրդի ժամանակի ընտրության առաջնահերթության իրավունք, ինչպես նաև մինչև անընդմեջ աշխատանքի վեց ամիսը լրանալը արձակուրդի իրավունք՝ ժամկետային պայմանագրային զինվորական ծառայություն անցած կամ անցնող շարքային, ենթասպայական, սպայական կազմի (այդ թվում՝ ռազմաուսումնական հաստատություններ կամ համապատասխան սպայական կամ սերժանտական դասընթացներ ավարտած) զինծառայողների, պարտադիր ժամկետային զինծառայություն անցնող զինծառայողների ընտանիքների անդամներին (զինվորական ծառայության ժամկետում), Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցների ընտանիքների անդամների, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների, ինչպես նաև պաշտպանության ժամանակ կամ զինվորական պարտականությունների կատարման ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամների համար,

4. պատասխանատու գերատեսչությունների մասնակցությամբ մշակել մեխանիզմ, որով յուրաքանչյուր պետական մարմին թափուր աշխատատեղերի առկայության կամ նոր աշխատատեղերի ստեղծման դեպքում այդ աշխատատեղերից մի մասը կառանձնացնի և կնախատեսի համապատասխան մասնագիտություն ունեցող և պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակված անձանց համար:

Նմանատիպ «աշխատատեղի ամրագրման» մեխանիզմ մշակել նաև բոլոր մասնավոր կազմակերպությունների համար: Բացի այդ, իրավասու պետական մարմինները և ուսումնական հաստատությունները պետք է մինչև գորացրված զինվորական ծառայողի աշխատանքի ընդունվելը՝ անհրաժեշտության դեպքում ապահովեն նրա վերապատրաստման գործընթացը,

5. սահմանել, որ պաշտպանության ժամանակ զոհված կամ մահացած զինծառայողների գործագուրկ ամուսին կամ ընտանիքի անդամ (որոշակի լրացուցիչ պայմաններով) լինելը աշխատաշուկայում անմրցունակ ճանաչելու չափանիշ է՝ դրանով իսկ ապահովելով նրանց ՀՀ աշխատանքային օրենսգրքի 23-րդ հոդվածի առաջին մասի 1-ին, 4-րդ, 5-րդ և 7-րդ կետերով սահմանված լրացուցիչ իրավունքներից օգտվելը,

6. ժամկետային պայմանագրային և պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվելու ժամանակահատվածում զինծառայողի ծառայության վայրի փոփոխությամբ պայմանավորված ընտանիքի բնակության վայրը փոխելու դեպքում զինվորական ծառայության նոր վայրում գործող ուսումնական հաստատություններում ընդունելության իրավունք վերապահել զինծառայողի ամուսնու (կնոջ) կամ ընտանիքի անդամի վրա, ով մինչև բնակության նոր վայր տեղափոխվելը սովորել է պետական կամ ոչ պետական՝ հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններում<sup>487</sup>:

<sup>487</sup> Տե՛ս, 2017 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, 296-302 էջեր:

Վերը նշված առաջարկությունները ներկայացվել են նաև 2018 թվականի հունիսի 8-ին տեղի ունեցած ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր զինծառայողների իրավունքների հարցերով փորձագիտական խորհրդի ընդլայնված նիստի ընթացքում, ինչպես նաև 2018 թվականի հոկտեմբերի 18-ին հրապարակված ինֆոգրաֆիկայով, սակայն առաջարկները դեռևս չեն կենսագործվել:

*Ուստի, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել վերը թվարկված՝ ոչ ֆինանսական բնույթի արտոնությունները զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին վերապահելու ուղղությամբ:*

### ԲԱԺԻՆ 13. ԱՌԱՆՁԻՆ ԽՈՒՄԲ ԱՆՁԱՆՅ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

#### ԳԼՈՒԽ 1. ԿԱՆԱՆՅ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՅԱՌՈՒՄ

1993 թվականին վավերացնելով «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան և կանանց իրավունքներն ամրագրող միջազգային պայմանագրեր և կոնվենցիաներ՝ Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է կանանց և տղամարդկանց՝ պատմականորեն արմատավորված անհավասարության վերացման, կանանց իրավունքների ճանաչման, դրանց պաշտպանության և հավելյալ երաշխիքների սահմանման պարտականություն:

Ավելին, օրենքի առջև հավասարությունը և խտրականության արգելքն ամրագրվել է նաև ՀՀ Սահմանադրությամբ, որի 29-րդ հոդվածի համաձայն՝ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է: Կարևորելով կանանց և տղամարդկանց հավասարությունը՝ այս սկզբունքն առանձին ամրագրումն է ստացել 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածով, համաձայն որի՝ կանայք և տղամարդիկ իրավահավասար են:

Բացի այդ, ըստ Սահմանադրության 86-րդ հոդվածի՝ որպես պետության քաղաքականության հիմնական նպատակ է ամրագրվել կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը: Կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովման երաշխիքներ են նախատեսված նաև «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» 2013 թվականի ՀՀ օրենքում, որը սակայն գործուն մեխանիզմների բացակայության պատճառով չի կիրարկվել:

Չնայած առկա օրենսդրական կարգավորումներին՝ կանանց և տղամարդկանց իրավահավասարության փաստացի իրագործման համար դեռևս առկա չեն բավարար երաշխիքներ, ինչի արդյունքում 2018 թվականի ընթացքում Հայաստանում շարունակվել են արձանագրվել կանանց իրավունքների ոտնահարման և նրանց նկատմամբ խտրականության դրսևորման դեպքեր:

**Նախնառաջ, խնդիրն այն է, որ դեռևս հաղթահարված չեն կանանց նկատմամբ առկա կարծրատիպերը, որոնք խոչընդոտ են ոլորտի քաղաքականության որոշման հարցում:** Կարծրատիպերի դեմ պայքարը պետության առաջնահերթություններից պետք է լինի և դրանց վերացման դեմ քայլերը պետք է իրագործվեն հրատապության կարգով և կրեն պարբերական բնույթ: **Չնայած դրա, առ այսօր միասնական պետական քաղաքականություն չի վարվում:** Ավելին, շատ հաճախ տարբեր պետական մարմինների կողմից ոլորտում առկա կարծրատիպերը բերվում են որպես քաղաքականության չմշակման հիմնավորում, ինչն անթույլատրելի է:

Անհրաժեշտ է հատուկ ընդգծել, որ կանանց նկատմամբ խտրականության բացառման և կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ամրապնդման ուղղությամբ պետական միասնական քաղաքականություն առհասարակ առկա չէ: «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 483-Ն որոշմամբ ամրագրված՝ 2017 թվականին կատարման համար նախատեսված գործողություններից է եղել նաև «ՀՀ-ում

կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի» նախագծի մշակումը, որը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կատարվել և սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարություն, սակայն 2018 թվականին չի ընդունվել: Արդյունքում, չնայած առանձին օրենսդրական և գործնական բարեփոխումներին, այնուամենայնիվ, կանանց նկատմամբ խտրականության բացառման ուղղությամբ տարվող աշխատանքները բավարար չեն:

**Կանանց իրավունքների պաշտպանությունը և կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի բացառումը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի հիմնարար ուղղություններից է:** Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետազոտական և կրթական կենտրոնի ղեկավարն ի պաշտոնե իրականացնում է կանանց իրավունքների պաշտպանություն և պատասխանատու է ռազմավարական ուղղությունների իրականացման համար: Այս աշխատանքներում ներգրավված է նաև նույն կենտրոնի իրավասու մասնագետը: 2018 թվականին Մարդու իրավունքների պաշտպան կողմից իրականացվել են մի քանի ծրագրեր այս ոլորտում:

ԵՄ բյուջետային աջակցման ծրագրի շրջանակներում ՄԱԿ-ի հիմնադրամների հետ համագործակցությամբ իրականացվել է կանանց իրավունքների և ընտանիքում բռնության կանխարգելման ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կարողությունների զարգացում: Այն իրենից ենթադրում է ինչպես վերապատրաստումների շարք, որոնք իրականացրել են միջազգային և տեղական փորձագետները, այնպես էլ աշխատակազմի ներկայացուցիչների համար ձեռնարկների և ուղեցույցերի մշակում (ընտանիքում բռնության ենթարկված անձանց հետ աշխատանքի հմտություններ ապահովելու համար):

Եվրոպայի խորհրդի և ՀՀ արդարադատության ակադեմիայի հետ համագործակցության շրջանակներում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հետազոտական և կրթական կենտրոնի ղեկավարը Եվրոպայի խորհրդի «HELP» հեռահար ուսուցման շրջանակներում ներգրավված է եղել որպես դասավանդող դատավորների, դատախազների, քննիչների և փաստաբանների վերապատրաստումներ իրականացնելու համար: 2018 թվականին վերապատրաստում է իրականացվել երկու խմբի համար:

Մարդու իրավունքների պաշտպանի հետազոտական և կրթական կենտրոնի մասնագետը միջազգային գործընկերների, ինչպես նաև տեղական հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում 2018 թվականի ընթացքում նաև պարբերական իրականացրել են գործող փաստաբանների, ոստիկանության աշխատողների, ինչպես նաև սոցիալական աշխատողների և զանգվածային լրատվության միջոցների վերապատրաստում «Ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության» թեմաներով: Ավելին, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության կանխարգելման թեմաներով դասախոսություններ է ներկայացրել նաև Երևանի պետական համալսարանի տարբեր ֆակուլտետների ուսանողների համար:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ձեռնամուխ է եղել նաև հանրապետության տարբեր մարզերում կանանց իրավունքների պաշտպանության և պահպանության վերաբերյալ իրազեկման բարձրացման նոր արշավի իրականացման ծրագրի: Ծրագիրն իրականացվել է ԱՄՆ զարգացման գործակալության աջակցությամբ: Իրավահավասարության և այլ խնդիրների քննարկման հետ զուգընթաց նաև քննարկվում է ընտանիքում բռնության խնդիրը և դրա դեմ պայքարի համար ընդունված ներպետական օրենսդրությունը, ինչպես նաև միջազգային չափանիշները: Արդյունքում, տարածքային



կառավարման և ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ՀՀ դատախազության և ՀՀ ոստիկանության տարածքային ներկայացուցիչների հետ քննարկումներ են տեղի ունեցել Գեղարքունիքի, Վայոց ձորի, Տավուշի և Լոռու մարզերում:

2018 թվականի ընթացքում ՎԻՆԵԹ Հայաստան կազմակերպության հետ համատեղ պարբերական հանդիպումներ են տեղի ունեցել Նոյեմբերյան քաղաքի մի խումբ կանանց հետ՝ քննարկումներ իրականացնելով աշխատանքային և տնտեսական իրավունքների իրականացմանը, տնտեսական զարգացման և կայունացման հնարավորությունների և մարդկանց աշխատանքային թրաֆիքինգի և շահագործման այլ տեսակների վտանգների հարցերի վերաբերյալ: Կազմակերպվել է նաև վերապատրաստման դասընթաց, որի ընթացքում ներկայացվել է իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնելու իրավական կարգավորումները, հարկման կարգը, գնագոյացման մեթոդները և այլ հարցեր:

Վերոնշյալ բոլոր ծրագրերի իրականացման արդյունքում փաստվել են այն բոլոր խնդիրները, որոնք տարիներ շարունակ բարձրաձայնվում են Պաշտպանի կողմից և որոնք ներկայացվում են ստորև:

### **1. Կանանց նկատմամբ բռնություն**

Կանանց նկատմամբ խտրականության առավել տարածված ձևերից է բռնությունը, որը, համարվելով մարդու հիմնական իրավունքների և ազատությունների խախտում,<sup>488</sup> հիմնականում տեղի է ունենում ընտանեկան միջավայրում և դրսևորվում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական, սեռական և տնտեսական ձևերով:

**Ավելին, թե՛ միջազգային կազմակերպությունների կողմից<sup>489</sup>, թե՛ ուլտրաի մասնագետների կողմից մատնանշվում է, որ կանանց նկատմամբ բռնությունը և ընտանիքում բռնությունն ունեն ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ազդեցություն:** Մասնավորապես, այս երևույթը բացասաբար է ազդում բռնության ենթարկված անձի ֆիզիկական և հոգեկան առողջության վրա, ինչպես նաև կնոջ՝ տվյալ հասարակության մեջ հարմարվելու, ինքնադրսևորվելու և ինքնահաստատվելու, պաշտպանված լինելու հնարավորությունների վրա: Բռնության այս տեսակն անուղղակի կերպով բացասական ազդեցություն է ունենում բռնությանն ակնատես եղած երեխաների<sup>490</sup>, ընտանիքի այլ անդամների վրա: Ավելին, ընտանիքում բռնությունը խարխլում է ընտանեկան արժեքները: Ընտանիքում բռնության կանխարգելումն ընտանեկան համերաշխության ապահովման միջոց է: Առանց բռնության ընտանիքն ապահովում է հասարակության բնականոն զարգացումը և ընտանիքի անդամների իրավունքների լիարժեք իրացման հիմնաքարերից է, որը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի կարևոր ուղղություններից է:

Այս երևույթը տարածված է ամբողջ աշխարհում, ունի տարբեր դրսևորումներ և տարածվածության մակարդակ: Այն նաև Հայաստանում տարածում ունեցող երևույթ է, որի մասին արձագանքում է թե՛ ՀՀ կառավարությունը, թե՛ հասարակական ու միջազգային կազմակերպությունները և թե՛ հասարակությունը: Իրավահավասարության ամրապնդումը և կանանց նկատմամբ բռնության հաղթահարումը ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներից մեկն է<sup>491</sup>: Ավելին, դեռևս 2015 թվականին ՄԱԿ-ի Համընդհանուր

<sup>488</sup> Տե՛ս օրինակ՝ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդված 3, Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի թիվ 19 Ընդհանուր հանձնարարական, <http://www.un.org/womenwatch/daw/cedaw/recommendations/recomm.htm>

<sup>489</sup> Տե՛ս Օփուզն ընդդեմ Թուրքիայի (Opuz v. Turkey) գործով 2009 թվականի սեպտեմբերի 9-ի վճիռը, գանգատ թիվ 33401/02, կետ 132

<sup>490</sup> Մանրամասն տե՛ս սույն հաղորդման «Երեխաների իրավունքներ» բաժնում

<sup>491</sup> Sustainable Development Goals (SDG)

պարբերական դիտարկման ժամանակ բազմաթիվ երկրներ Հայաստանին առաջարկել են քայլեր ձեռնարկել այս ոլորտում խնդիրների լուծման ուղղությամբ:

Կանանց նկատմամբ բռնությանն է անդրադարձել նաև Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարը 2018 թվականին Հայաստան կատարած այցի հիման վրա մշակված զեկույցում<sup>492</sup>:

Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և բռնության ենթարկված անձանց աջակցության տրամադրման համար զգալի աշխատանքներ է կատարել Մարդու իրավունքների պաշտպանը՝ համագործակցելով նաև իրավասու պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները, ներգրավված լինելով տարբեր ծրագրերում, 2018 թվականի ընթացքում պարբերաբար իրականացրել են վերապատրաստումներ դատավորների, քննիչների, դատախազների, փաստաբանների, ոստիկանության աշխատողների, ինչպես նաև սոցիալական աշխատողների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների համար կանանց նկատմամբ բռնության, ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության թեմաներով: Ավելին, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության կանխարգելման թեմաներով դասախոսություններ է ներկայացրել նաև Երևանի պետական համալսարանի տարբեր ֆակուլտետների ուսանողների համար:

Մարդու իրավունքների պաշտպանը ձեռնամուխ է եղել նաև հանրապետության տարբեր մարզերում կանանց իրավունքների պաշտպանության և պահպանության վերաբերյալ իրազեկման բարձրացման նոր արշավի իրականացման ծրագրի, որտեղ իրավահավասարության և այլ խնդիրների քննարկման հետ զուգընթաց նաև քննարկվում է ընտանիքում բռնության խնդիրը և դրա դեմ պայքարի համար ընդունված ներպետական օրենսդրությունը, ինչպես նաև միջազգային չափանիշները: Արդյունքում, տարածքային կառավարման և ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ՀՀ դատախազության և ՀՀ ոստիկանության տարածքային ներկայացուցիչների հետ քննարկումներ են տեղի ունեցել Գեղարքունիքի, Վայոց ձորի, Տավուշի և Լոռու մարզերում:

Մարդու իրավունքների պաշտպանը 2018 թվականին ստացել է ահազանգեր կանանց նկատմամբ բռնության, հատկապես ընտանիքում բռնության դեպքերի մասին: Անհատական դեպքերի ուսումնասիրությունն իրականացվել է այնպես, որ հնարավոր է եղել վերհանել խնդիրներ, որոնք իրենց բնույթով համակարգային են և դրանք պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի մասի՝

**1.1 ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ ճշգրիտ վիճակագրական տվյալների բացակայություն,**

**1.2 նման դեպքերի դեմ պայքարի և կանխարգելման հարցում օրենսդրական թերի կարգավորումներ կամ կարգավորումների բացակայություն,**

**1.3 տուժողներին պետության կողմից տրամադրվող ծառայությունների բացակայություն, ինչպես նաև պետական մարմինների միջև համագործակցության բացակայություն,**

**1.4 կարծրատիպեր, իրավագիտակցության անհամարժեք մակարդակ և անվստահություն պետական մարմինների նկատմամբ,**

**1.5 պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց անբավարար մասնագիտական պատրաստվածությունը և իրազեկման պակասը:**

Այս բոլոր խնդիրներն, ըստ էության, ազդում են նաև կանանց արդարադատության մատչելիության իրավունքի իրացման վրա, որն էլ իր հերթին բերում է մի շարք

<sup>492</sup> Տե՛ս <https://rm.coe.int/-/2018-16-20-/1680920149>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

իրավունքների խախտման և այդ խախտված իրավունքների վերականգնման դժվարությունների:

### **1.1 Ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ ճշգրիտ վիճակագրական տվյալների բացակայություն**

Կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության վերաբերյալ առկա վիճակագրական տվյալները չեն արտացոլում բռնության այս տեսակի ամբողջական և իրական պատկերը, քանի որ դեռևս Հայաստանում ընտանիքում բռնության դեպքերի միասնական վիճակագրություն չի վարվում: Այս մասին տարիներ շարունակ բարձրաձայնվել է Պաշտպանի, պետական իրավասու մարմինների, ինչպես նաև հասարակական և միջազգային կազմակերպությունների կողմից<sup>493</sup>:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի (սույն հաղորդման սույն բաժնում այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ որպես լիազոր մարմին իրականացնում է ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառում՝ կառավարության որոշմամբ սահմանված կարգով, ինչպես նաև այդ վիճակագրության ամենամյա հրապարակում իր պաշտոնական կայքում: Անհրաժեշտ է ընդգծել, սակայն, որ 2018 թվականի ընթացքում կառավարության համապատասխան որոշումը չի ընդունվել, ինչի արդյունքում էլ դեռևս առկա չեն միասնական վիճակագրական տվյալներ ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ:

**Ավելին, ընտանիքում բռնությունը հայտնի է որպես լատենտային բնույթ ունեցող բռնության տեսակ, ինչը նշանակում է, որ բռնության այս տեսակի վերաբերյալ տեղեկությունները և վիճակագրական ցուցանիշներն ամբողջությամբ չեն արտացոլում բռնության իրավիճակի իրական պատկերը:** Վիճակագրական ճշգրտության վրա ազդում է նաև այն, որ այս երևույթը հասարակության կողմից ընկալվում է որպես մասնավոր դեպք, որի մասին բարձրաձայնելն ամոթալի է, ուստի հասարակության շատ անդամներ խուսափում են բռնության՝ իրենց հայտնի դեպքերի վերաբերյալ հաղորդում ներկայացնելուց:

Այնուամենայնիվ, առկա վիճակագրական տվյալները թույլ են տալիս փաստել երևույթի առկայության մասին: Ավելին, վիճակագրական տվյալների համադրումը թույլ է տալիս ենթադրել, որ բռնության դեպքերի վերաբերյալ իրավասու պետական մարմիններին դիմելիությունը բարձրացել է, ինչը պայմանավորված է թե՛ երևույթի վերաբերյալ իրազեկման բարձրացմամբ, թե՛ իրավասու պետական մարմինների կողմից բռնության դեպքերին արձագանքելուն առավել պատրաստ լինելու և թե՛ օրենսդրությամբ պաշտպանության հնարավորությունների ավելացմամբ: Իրավասու մարմինների կողմից տրամադրված տվյալները վկայում են, որ ընտանիքում բռնությունն անհամամասնորեն ազդում է հատկապես կանանց վրա:

ՀՀ ոստիկանության տվյալների համաձայն՝ 2018 թվականի 12 ամիսների ընթացքում գրանցվել է 707 դեպք, որից 673-ը՝ ֆիզիկական, 33-ը՝ հոգեբանական, 1-ը՝ տնտեսական բռնության դեպքեր: 707 դեպքից 441 դեպքում բռնություն է կիրառվել ամուսնու կողմից կնոջ նկատմամբ, 32 դեպքում՝ կնոջ կողմից ամուսնու նկատմամբ, 48 դեպքում՝ ծնողի կողմից զավակի նկատմամբ, 70 դեպքում՝ զավակի կողմից ծնողի նկատմամբ և 116 դեպքում՝

<sup>493</sup> Այս մասին նշվել է նաև «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման» ՄԱԿ-ի կոմիտեի կողմից, Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ (CEDAW/C/ARM/CO/5-6), կետ 37:

ընտանիքի այլ անդամների միջև: Նշված 707 դեպքերից քրեական գործեր են հարուցվել 159 դեպքով և նյութեր նախապատրաստվել 548-ով: Հարուցված քրեական գործերից կարճվել են 130-ը, իսկ 29-ն ուղարկվել է դատարան:

Ըստ ՀՀ ոստիկանության տվյալների՝ 2018 թվականի ընթացքում բռնության դեպքերով կայացվել է 435 նախազգուշացման և 132 անհետաձգելի միջամտության որոշումներ:

2018 թվականի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի վարույթում քննվել է ընտանիքում բռնության վերաբերյալ 519 քրեական գործ (2017 թվականի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի մարմինների և ստորաբաժանումների վարույթում եղել է ընտանիքում բռնությունների վերաբերյալ 458 քրեական գործ): Ըստ ՀՀ քննչական կոմիտեի տվյալների՝ 2018 թվականի ընթացքում ավարտվել է ընտանիքում բռնության վերաբերյալ 393 քրեական գործ, 297 քրեական գործի վարույթ կարճվել է, որոնցից 91-ը՝ արդարացման հիմքով, 206-ը՝ ոչ արդարացման հիմքով:

Մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 82 քրեական գործ 85 անձի վերաբերյալ: Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ դատարան է ներկայացվել 14 միջնորդություն: Կասեցվել է 23 քրեական գործով վարույթ, որից 18-ը՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով, 5-ը՝ այլ հիմքով:

Ըստ ՀՀ դատախազության տվյալների՝ 2018 թվականի ընթացքում ընտանիքում բռնության 406 դեպքի առթիվ հարուցվել է նույնքան քրեական գործ: Այդ քրեական գործերից 5-ը հարուցված են եղել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով (սպանությունը), 1-ը՝ 106-րդ հոդվածով (**մոր կողմից նորածին երեխայի սպանությունը**), 2-ը՝ 110-րդ հոդվածով (ինքնասպանության հասցնելը), 8-ը՝ 112-րդ հոդվածով (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը), 8-ը՝ 113-րդ հոդվածով (դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը), 36-ը՝ 117-րդ հոդվածով (դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը), 241-ը՝ 118-րդ հոդվածով (ծեծը), 11-ը՝ 119-րդ հոդվածով (ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը), 1-ը՝ 120-րդ հոդվածով (անզգուշությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը), 1-ը՝ 121-րդ հոդվածով (անզգուշությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը), 2-ը՝ 131-րդ հոդվածով (մարդուն առևանգելը), 3-ը՝ 133-րդ հոդվածով (ազատությունից ապօրինի զրկելը), 1-ը՝ 134-րդ հոդվածով, 50-ը՝ 137-րդ հոդվածով (սպանության կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու, կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը), 3-ը՝ 138-րդ հոդվածով (բռնաբարությունը), 11-ը՝ 141-րդ հոդվածով (սեռական հարաբերությունը 16 տարին չլրացած անձի հետ կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը 16 տարին չլրացած անձի հետ), 3-ը՝ 142, 1-ը՝ 147, 3-ը՝ 167.1-րդ հոդվածով (ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացմանը խոչընդոտելը), 7-ը՝ 173-րդ հոդվածով (ծնողի կողմից երեխային պահելուց չարամտորեն խուսափելը), 1-ը՝ 176, 1-ը՝ 177, 2-ը՝ 185-րդ հոդվածով (գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը), 1-ը՝ 322, 1-ը՝ 353, 2-ը՝ 353.1-րդ հոդվածով (**անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը դիտավորությամբ չկատարելը**), իսկ 31-ը՝ այլ հոդվածներով: Վերոնշյալ դեպքերի առթիվ հարուցված 67 քրեական գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 224-ով վարույթը կարճվել է (արդարացնող հիմքով՝ 65-ը, ոչ արդարացնող հիմքով՝ 167-ը, այդ թվում՝ հաշտության հիմքով՝ 131-ը) և քրեական հետապնդումը դադարեցվել է, 9-ով վարույթը կասեցվել է (ՀՀ ՔԴՕ 31-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետ):

## **1.2 Ընտանիքում բռնության դեմ պայքարի ոլորտի օրենսդրական կարգավորման խնդիրներ**

Օրենսդրական թերի կարգավորումները խոչընդոտներ են ստեղծում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և նման դեպքերի հետագա կանխարգելման ուղղությամբ: Ուսումնասիրությունները վկայում են, որ չնայած 2017 թվականին կատարված օրենսդրական փոփոխություններին, որոնց հիմնական մասն ուժի մեջ է մտել արդեն 2018 թվականից, դեռևս առկա են օրենսդրական բացեր և թերի կարգավորումներ:

Ի հակադրություն «Կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (սույն հաղորդման սույն բաժնում այսուհետ՝ Կոնվենցիա), որով նախատեսվում է անհետաձգելի արգելող որոշման կայացում միակողմանի կարգով՝ անմիջապես ուժի մեջ մտնելով՝ Հայաստանում դրանք ուժի մեջ են մտնում բռնություն գործադրած անձին հետախոսով ծանուցելուց, նրա հաշվառման վայր էլեկտրոնային փոստի կամ պատվիրված փոստի միջոցով հանձնելուց և հանձնման մասին վերջինիս ստորագրություն ստանալուց հետո («Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մաս): Ավելին, գրանցման հասցեն կարող է լինել այն տունը, որտեղ գտնվելը բռնություն գործադրող անձին պետք է արգելվի: Արդյունքում՝ բռնություն գործադրած անձի՝ այնտեղ պահանջվող ներկայությունը (ծանուցում ստանալու համար) կարող է վտանգել տուժողի անվտանգությունը: Այլ կերպ ասած՝ Հայաստանում այս որոշման ուժի մեջ մտնելու ժամկետն անորոշ է, այլ ոչ թե անմիջապես:

**Վերոնշյալ ընթացակարգը կարող է ժամանակատար լինել, և դրանով, ինչն ավելի խնդրահարույց է, բռնություն գործադրած անձի դատավարական իրավունքները գերադասվում են տուժողի կյանքի և ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ՝ խախտելով միջազգային չափանիշները:** Տուժողի հետ կապ հաստատելու շարունակական քայլերը չեն համարվի անհետաձգելի միջամտության որոշումների խախտում, քանի որ այն ուժի մեջ մտած չի լինի՝ ընթացակարգային ձգձգումների պատճառով: Վերջապես, անհետաձգելի միջամտության որոշումների կատարման ուշացումները կարող են հիմք հանդիսանալ այդ որոշումների խախտումների համար:

Ավելին, «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսվում է, որ նախազգուշացում կիրառելու մասին որոշումը ենթակա է բողոքարկման դրա մասին իրազեկելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում: Քանի որ ոստիկանության որոշումները վարչական ակտեր են, ապա բողոքարկումները կարգավորվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով, որով նախատեսվում է կասեցնող ազդեցություն<sup>494</sup>: Ըստ ՀՀ ոստիկանության տվյալների՝ 2018 թվականի ընթացքում վերադատության և դատական կարգով բողոքարկվել է 4 որոշում, որից 2-ը՝ վերադատության կարգով, 2-ը՝ դատական կարգով: Վերադատության կարգով բողոքների հիմքով հարուցվել է վարչական վարույթ և որոշում է կայացվել բողոքը մերժելու մասին: Դատական կարգով բողոքարկված որոշումներից մեկով վճիռ է կայացվել անհետաձգելի միջամտության որոշումը վերացնելու մասին, իսկ մեկով վճիռ է կայացվել որոշումը թողնել անփոփոխ:

<sup>494</sup> «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի համաձայն՝ վարչական բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող վարչական ակտի կատարումը՝ բացառությամբ օրենքով նախատեսված այն դեպքերի, երբ վարչական ակտը ենթակա է անհապաղ կատարման, եւ այն դեպքերի, երբ անհապաղ կատարումն անհրաժեշտ է հանրային շահերից ելնելով:

Նախագգուշացում կիրառելու որոշումը բողոքարկելու կասեցնող ազդեցությունը կարող է վտանգներ պարունակել, քանի որ այդ ընթացքում բռնություն գործադրած անձը կարող է խախտել նախագգուշացումը, որը սակայն այդպիսին չի համարվի՝ այդպիսով նվազեցնելով տուժողին տրամադրված պաշտպանության մակարդակը:

Մեկ այլ խնդիր է նաև ՀՀ ոստիկանության պետի՝ ընտանիքում բռնության կանխարգելման և բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում ՀՀ ոստիկանության «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով վերապահված լիազորությունների կատարումը կարգավորելուն ուղղված գործող հրամանները<sup>495</sup>, որպես անհատական իրավական ակտեր սահմանելը, ինչն իր հերթին նշանակում է, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված նորմատիվ իրավական ակտերին վերաբերող պարտադիր պահանջները չեն տարածվում դրանց վրա:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտը պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար, իսկ նույն մասի 5-րդ կետը սահմանում է, որ անհատական իրավական ակտը նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված գրավոր իրավական ակտ է, որը սահմանում է վարքագծի կանոն կամ առաջացնում է փաստական հետևանքներ և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձի կամ անձանց:

Հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտի բնույթը և կարգավորման շրջանակը՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը լրացուցիչ պահանջներ է սահմանում դրանց ընդունման համար: Այսպես, նշված օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածները սահմանում են նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումներ կազմակերպելու պահանջը, 6-րդ հոդվածով սահմանվում է պետական-իրավական փորձաքննության ենթարկելու պարտադիր պահանջը, իսկ 25-րդ հոդվածով՝ նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման պահանջը:

Նշված հրամանների ուսումնասիրությունը վկայում է, որ դրանք պարունակում են իրավական նորմեր, որոնք սահմանում են վարքագծի կանոններ անձանց անորոշ շրջանակի համար, օրինակ՝ ՀՀ ոստիկանության պետի 2018 թվականի ապրիլի 5-ի թիվ 1090-Ա հրամանի հավելվածով հաստատվել են ընտանիքում բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի գնահատման չափորոշիչները: Նման վտանգի առկայության դեպքում ՀՀ ոստիկանության իրավասու ծառայողը, համաձայն «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի, ընտանիքի մյուս անդամի կյանքի և առողջության ապահովման նպատակով անհապաղ կայացնում է անհետաձգելի միջամտության որոշում, ինչն առաջացնում է բռնություն գործադրած անձի համար իրավական հետևանքներ, մասնավորապես՝ կարող է սահմանափակել անձի մուտքը համատեղ բնակելի տարածք և այլն:

Ավելին, նորմատիվ իրավական ակտերի հրապարակումն օրենսդիրը համարել է պարտադիր, իսկ գերատեսչականինը՝ թողնվել է ընդունող մարմնի հայեցողությանը: Վերոնշյալ հրամանների պարագայում դրանք չեն հրապարակվել՝ դրանով իսկ սահմանափակելով նշված ակտերի հասանելիություն, այդ թվում՝ այն անձանց համար, ում

<sup>495</sup> Տե՛ս 2018 թվականի ապրիլի 5-ի թիվ 1086-Ա, 2018 թվականի ապրիլի 5-ի թիվ 1088-Ա, 2018 թվականի ապրիլի 5-ի թիվ 1090-Ա, 2018 թվականի ապրիլի 7-ի թիվ 1091-Ա, 2018 թվականի հունիսի 22-ի թիվ 1940-Ա

նկատմամբ դրանք կիրառվում են: Ըստ այդմ՝ հրամաններով խախտվում է նաև իրավական որոշակիության սկզբունքը:

**Ընտանիքում բռնության ոչ բոլոր տեսակների համար է նախատեսված պատասխանատվության մեխանիզմ ներպետական օրենսդրությամբ, ըստ այդմ, իրավասու մարմինները չեն կարողանում համապատասխան արձագանք տալ այդ դեպքերին:** ՀՀ քրեական օրենսդրությամբ քրեորեն պատժելի արարքներ են համարվում ֆիզիկական բռնության որոշ տեսակները, ինչպես նաև սեռական բռնությունը: ՀՀ օրենսդրությունը որոշ առումով կարգավորում է նաև հոգեբանական բռնությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածը սահմանում է ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը):

**Այնուամենայնիվ, ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չէ, օրինակ, հետամտումը** («պարբերաբար մեկ այլ անձի հետապնդելը, մեկ այլ անձի հետ անցանկալի հաղորդակցության մեջ ներգրավվելը կամ անձին հետևելու մասին իմաց տալը»): Խոսքը տուժողին ֆիզիկապես հետևելու, նրա աշխատանքի վայր, սպորտային կամ կրթական հաստատություն այցելելու, ինչպես նաև տուժողին վիրտուալ աշխարհում հետևելու, (...) մեկ այլ անձի գույքը վնասելու, անձի անձնական իրերի վրա աննշան հետքեր թողնելու, անձի տվյալներով առցանց կեղծ անուններով հաշիվներ բացելու կամ սուտ տեղեկություններ տարածելու մասին է), հարկադիր ամուսնությունը, հղիության արհեստական ընդհատումը հարկադիր կատարելը և այլն:

Մինչդեռ, միջազգային փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ բռնության դեմ պայքարի միջոցներից է այդ արարքը կատարած անձանց համար պատասխանատվության միջոցների նախատեսումը<sup>496</sup>: Միջազգային փաստաթղթերի և միջառք երկրների օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընտանիքում բռնության դեմ պայքարի արդյունավետ միջոց է դրա քրեականացումը: Ընդ որում, դա կարող է դրսևորվել կամ մեկ հանցակազմի նախատեսմամբ կամ ընդհանուր հանցակազմերով՝ գործը քննելիս որպես պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք՝ տուժողի և բռնություն գործադրած անձի միջև ընտանեկան կապը նախատեսելը<sup>497</sup>:

**Ընտանիքում բռնության դեպքերին արդյունավետ արձագանքելուն կարող է խոչընդոտել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքը, այն է՝ տուժողի վարքագծի հակաօրինականությունը կամ հակաբարոյականությունը, որով պայմանավորվել է հանցագործությունը:** Ընտանիքում բռնության դեպքում նման մեղմացնող հանգամանք նախատեսելը համահունչ չէ միջազգային չափանիշներին: Մասնավորապես, «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 42-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործությունների անընդունելի արդարացումներ են համարվում՝ այսպես կոչված, «հանուն պատվի» կատարվող հանցագործությունները: Սա վերաբերում է, մասնավորապես, այն պնդումներին, որ տուժողի կողմից խախտվել են պատշաճ վարքագծի մշակութային, կրոնական, սոցիալական կամ ավանդույթային նորմերը կամ սովորույթները, որոնք արդարացումներ են հանդիսանում բռնության գործադրման համար:

**Մեկ այլ խնդիր է ընտանիքում բռնության դեպքերում հանրային և մասնավոր մեղադրանքի կարգով քննվող գործերի իրավական կարգավորումները:** Նշված խնդրի լուծման կապակցությամբ 2017 թվականի օրենսդրական փոփոխությունների արդյունքում ՀՀ

<sup>496</sup> Տե՛ս «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդվածներ 33-40:

<sup>497</sup> Տե՛ս «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդված 46:

քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածը լրացվեց 4-րդ մասով՝ նախատեսելով, որ անկախ տուժողի կողմից բողոք ներկայացնելուց դատախազն իրավասու է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություններով հարուցել քրեական գործ ընտանիքում բռնության դեպքերում, եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը: Այս դեպքում քրեական գործը հարուցվում և քննվում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով, և տուժողի ու մեղադրյալի հաշտության դեպքում քրեական հետապնդումը չի դադարեցվում<sup>498</sup>:

Քրեական դատավարության օրենսգրքում հստակ ձևակերպված նոր չափանիշը գնահատելիս կարևոր է հաշվի առնել այն, որ, ի տարբերություն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից օգտագործված չափորոշիչների, որոնցով գնահատվում է ոսնձգողի վարքագիծը՝ Հայաստանում ուշադրության կենտրոնում է տուժողը:

Վերոնշյալ չափանիշները չեն արտացոլում նաև Կոնվենցիայի 55-րդ հոդվածով սահմանված հարցերը, մասնավորապես՝ իրավախախտման ծանրությունը: Դրանք նաև չեն արտացոլում *Օփուզն ընդդեմ Թուրքիայի* գործում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից սահմանված չափանիշները, այն է՝ իրավախախտման ծանրությունը, զոհի վնասվածքները ֆիզիկական են, թե՛ հոգեբանական, եթե բռնություն գործադրած անձը զենք է կիրառել, եթե բռնություն գործադրած անձը հարձակումից հետո որևէ ձևով սպառնացել է, եթե բռնություն գործադրած անձը պլանավորել է հարձակումը, ընտանիքում ապրող որևէ երեխայի վրա ազդեցությունը (այդ թվում՝ հոգեբանական), բռնություն գործադրած անձի՝ նորից իրավախախտում կատարելու հնարավորությունները, տուժողի կամ ցանկացած այլ անձի, որը կարող էր ներգրավված լինել, առողջությանը և անվտանգությանը ներկայացվող շարունակական սպառնալիքը, զոհի ներկայիս հարաբերությունը բռնություն գործադրած անձի հետ և զոհի ցանկություններին հակառակ իրականացվող քրեական հետապնդման հետ մեկտեղ շարունակվող հարաբերության վրա ազդեցությունը, հարաբերության պատմությունը, մասնավորապես, եթե նախկինում տեղի է ունեցել բռնության այլ դեպք, ինչպես նաև բռնություն գործադրած անձի քրեական անցյալը, մասնավորապես՝ նախկինում բռնություն կատարելը<sup>499</sup>:

Չնայած վերոնշյալի՝ ընտանիքում բռնության գործերը հանրային մեղադրանքի կարգով քննելու պրակտիկան արդեն իսկ կիրառվել է ՀՀ դատախազության կողմից: Այսպես, 2018 թվականի ընթացքում մասնավոր մեղադրանքի 34 դեպքով, անկախ տուժողի կողմից բողոք ներկայացնելու հանգամանքից, ընտանիքում բռնության դեպքերում, երբ անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարողացել պաշտպանել իր իրավաչափ շահերը, համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ մասի, դատախազի կողմից հարուցվել է 34 քրեական գործ:

**Ընտանիքում բռնության դեմ արդյունավետ պայքարին խոչընդոտում է նաև տուժողների համար պաշտպանական բավարար միջոցների բացակայությունը:** Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար, ինչի հետևանքով կարող են վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք:

<sup>498</sup> Նշված կարգավորումն ուժի մեջ է մտել 2018 թվականից:

<sup>499</sup> Տե՛ս Օփուզն ընդդեմ Թուրքիայի (*Opuz v. Turkey*) գործով 2009 թվականի սեպտեմբերի 9-ի վճիռը, գանգատ թիվ 33401/02, 138-րդ կետ:



Նույն օրենսգրքի 98-րդ հոդվածի համաձայն՝ պաշտպանության միջոցներն են, օրինակ՝ անձին պաշտոնապես նախազգուշացնելը, ումից սպասվում է պաշտպանվող անձի նկատմամբ բռնության վտանգ կամ այլ հանցանքի կատարում, պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը, պաշտպանվող անձի անձնական անվտանգությունն ապահովելը, բնակարանը և այլ գույքը պահպանելը և այլն: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, սակայն, որ օրենքով սահմանված այս միջոցները և դրանց ապահովման համար անհրաժեշտ իրավական կարգավորումները բավարար չեն և ընտանիքում բռնության դեպքերում չեն կիրառվում: Այսպես, ՀՀ քննչական կոմիտեի կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ ընտանիքում բռնությունից տուժած անձանց պաշտպանության համար 2018 թվականի ընթացքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ գլխով նախատեսված պաշտպանության միջոց չի կիրառվել:

**Վերոնշյալ խնդիրները դեռևս 2017 թվականից բարձրացվել են Պաշտպանի կողմից Եվրոպայի խորհրդի աջակցությամբ իրականացված՝ ՀՀ քրեական օրենսդրության և միջազգային չափանիշների համեմատական վերլուծության զեկույցում, որտեղ ներկայացվել են նաև հստակ առաջարկներ: Այնուամենայնիվ, առաջարկներն առ այսօր չեն կատարվել, ինչը խնդրահարույց է:**

### ***1.3 Ծառայությունների, ինչպես նաև պետական մարմինների միջև համագործակցության բացակայություն***

Հաշվի առնելով ընտանիքում բռնության առանձնահատկությունները, ինչպես նաև բռնության այս տեսակի բացասական հոգեբանական ազդեցությունը դրանից տուժած և դրան ականատես եղած անձանց նկատմամբ՝ պետությունը պետք է քայլեր ձեռնարկի աջակցության տարբեր միջոցների հասանելի դարձնելու ուղղությամբ: Ըստ այդմ՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ նախատեսվել է բռնությունից տուժած անձանց համար բազմաթիվ ծառայությունների մատուցման անհրաժեշտություն: Այսպես, նշյալ օրենքը նախատեսում է աջակցման կենտրոնների և ապաստարանների ստեղծում (հոդված 19 և 20):

Սակայն անհրաժեշտ է արձանագրել, որ 2018 թվականին պետության կողմից բռնության ենթարկված անձանց և նրանց ընտանիքի անդամներին լիարժեք աջակցություն չի ցուցաբերվել: Մասնավորապես, 2018 թվականի ողջ ընթացքում Հայաստանում չեն գործել պետության կողմից շահագործվող կացարաններ, հատուկ թեժ գծեր, որոնք մատչելի կլինեն յուրաքանչյուրի համար (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար), որոնք շուրջօրյա աջակցություն և խորհրդատվություն կտրամադրեն դրա կարիքն ունեցող անձանց: Հայաստանում նշված և այլ ծառայություններն ընտանիքում բռնությունից տուժած անձանց համար 2018 թվականին շարունակվել են տրամադրվել հասարակական կազմակերպությունների կողմից:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով սահմանվում է պետության կողմից ապաստարանների, աջակցման կենտրոնների ստեղծման, ինչպես նաև այլ ծառայությունների մատուցման հնարավորությունը: Ըստ նույն օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասի՝ աջակցության կենտրոնների և ապաստարանների կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ դրույթներն ուժի մեջ են մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից մեկ տարի հետո: **Ըստ այդմ՝ 2018 թվականի նշյալ ծառայությունները հասանելի չեն եղել տուժողների համար:** Ավելին, նույն օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապաստարան հիմնադրելու համար

համապատասխան կազմակերպությունները պետք է ստանան Լիազոր մարմնի կողմից տրամադրվող հավաստագրում, որի տրամադրման կարգը սահմանում է կառավարությունը: **Անհրաժեշտ է ընդգծել, որ նշված կարգը 2018 թվականի ընթացքում ընդունված չի եղել:**

Ըստ ՀՀ ոստիկանության տվյալների՝ 2018 թվականի ընթացքում ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից կիրառված 435 նախազգուշացման որոշումներից խախտվել են 14-ը, որոնց կապակցությամբ կիրառվել են անհետաձգելի միջամտության որոշումներ, իսկ 132 անհետաձգելի միջամտության որոշումներից խախտվել են 16-ը: *Պետք է ընդգծել, որ բոլոր այս դեպքերում պաշտպանության միջոցների խախտումների վերաբերյալ ահազանգերը եղել են ընտանիքի անդամների կողմից, ինչը վկայում է ՀՀ ոստիկանության ծառայողների կամ այլ մասնագիտական վերահսկողության բացակայության կամ անարդյունավետության մասին:*

Խնդիրն այն է, որ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընտանիքում բռնություն գործադրած անձը, որի նկատմամբ կայացվել է նախազգուշացման, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում, ինչպես նաև ընտանիքում բռնության հետ կապված հանցանքի համար դատվածություն ունեցող չափահաս անձը ՀՀ ոստիկանության կողմից վերցվում են կանխարգելիչ հաշվառման: Կանխարգելիչ հաշվառման շրջանակում չափահաս անձի կողմից ընտանիքում բռնություն գործադրելը կանխարգելելու նկատմամբ մշտադիտարկումն իրականացնում է «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի՝ սոցիալական աշխատողը, իսկ անչափահաս անձի պարագայում՝ ՀՀ ոստիկանությունը՝ համապատասխանաբար ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կամ ՀՀ ոստիկանության պետի սահմանած կարգով: Հաշվառման վերցնելու գործառույթը չափազանց կարևոր նշանակություն ունի անձի վարքագծի դրսևորումների մշտադիտարկման տեսանկյունից, ինչն ինքնին կանխարգելիչ ու պաշտպանական նշանակություն ունի: *Սակայն ստացվում է, որ գործնականում պատշաճ հաշվառում չի իրականացվում, ինչի մասին են վկայում ՀՀ ոստիկանության տվյալներն առ այն, որ պաշտպանության միջոցների խախտումների վերաբերյալ ահազանգերը եղել են ընտանիքի անդամների կողմից:*

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրության արդյունքում վեր է հանվել մեկ այլ խնդիր ընտանիքում բռնության ենթադրյալ դեպքերի կապակցությամբ նյութերի նախապատրաստության փուլում ՀՀ ոստիկանության ծառայողների և ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում մասնագիտացված ստորաբաժանման ծառայողների միջև համագործակցության բացակայության մասին: Չնայած նման համագործակցության իրականացումը կարգավորվում է ՀՀ ոստիկանության պետի հրամանով՝ այդուհանդերձ, գործնականում առաջանում են բազմաթիվ խնդիրներ:

Համագործակցության անխափան իրականացումը չափազանց կարևոր է անձին ճիշտ ուղղորդման և ենթադրյալ տուժողին աջակցությանն ուղղված այլ գործողությունների իրականացման, մասնավորապես՝ զոհակենտրոն և տուժողների կարիքներին համապատասխան մասնագիտական օգնության տրամադրման նպատակով: *Պաշտպանին հասցեագրված բողոքների քննությունը ցույց է տվել, որ համակարգի անկատարության և պետական մարմինների միջև համագործակցության բացակայության արդյունքում բազմաթիվ դեպքերում հնարավոր չի եղել նաև աջակցություն ցուցաբերել օրենքով ամրագրված միջոցների օգտագործմամբ:* Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է ընտանիքում բռնությունից տուժած անձանց կյանքի և առողջության պահպանմանն ուղղված

պոզիտիվ պարտականություն ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական իրավական կանոնների ուժով: Ընդ որում, թե՛ ներպետական իրավական կարգավորումները և թե՛ միջազգային չափանիշներն ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանությունն ապահովելու համար նախատեսում են բազմամասնագիտական աջակցության տրամադրման սկզբունքներ և բռնության ենթարկված անձանց պաշտպանության առաջնահերթության չափանիշներ:

Այսպես, Կոնվենցիայի (Հայաստանի կողմից ստորագրվել է 2018 թվականի հունվարի 18-ին, սակայն դեռ չի վավերացվել) 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ցուցաբերելու պատշաճ ջանասիրություն պետության անունից հանդես չեկող անձանց կողմից կատարվող բռնության այն արարքները կանխելու, դրանց նկատմամբ քննություն իրականացնելու, պատասխանատվության ենթարկելու և հատուցում ապահովելու ուղղությամբ, որոնք մտնում են Կոնվենցիայի գործողության շրջանակների մեջ:

Ավելին, Կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները պետք է ապահովեն, որպեսզի բռնության ենթարկված անձի իրավունքները դիտարկվեն որպես բոլոր միջոցների կենտրոնում գտնվող և իրականացվեն բոլոր շահագրգիռ գերատեսչությունների, ինստիտուտների և կազմակերպությունների միջև արդյունավետ համագործակցության միջոցով: Սույն հոդվածի ներքո ձեռնարկված բոլոր միջոցառումները պետք է ընդգրկեն բոլոր շահագրգիռ դերակատարներին, ինչպիսիք են՝ պետական, համապետական, տարածքային և տեղական մարմինները, մարդու իրավունքների ազգային ինստիտուտները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները:

Կոնվենցիայի 19-րդ հոդվածը սահմանում է, որ պետությունները պետք է ապահովեն օրենսդրական և անհրաժեշտ այլ միջոցները տուժողներին հասանելի աջակցության և իրավական պաշտպանության միջոցների մասին իրենց համար հասկանալի լեզվով ժամանակին պատշաճ տեղեկատվություն տրամադրելու համար:

«Բռնությունից կանանց պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2002)5 հանձնարարականը<sup>500</sup> ճանաչում է այն, որ պետությունները պետք է ցուցաբերեն պատշաճ ջանասիրություն, որպեսզի կանխվի, քննություն իրականացվի և պատասխանատվություն կիրառվի բռնություն գործադրած անձանց նկատմամբ: Հանձնարարականի 3-րդ կետի համաձայն՝ *պետությունները պետք է բռնության դեմ պայքարի քաղաքականություն մշակելիս հիմք ընդունեն բռնության ենթարկված անձանց անվտանգությունը*: Հանձնարարականի 58-րդ կետի «դ» ենթակետի համաձայն՝ *անդամ պետությունները պետք է քաջալերեն բռնությունից տուժած անձանց պաշտպանության նախաձեռնող (pro-active) ծառայություններ, որոնց շնորհիվ բռնությունից տուժած անձանց հետ կապ կհաստատվի անմիջապես ոստիկանությանը դեպքի մասին հայտնի դատնալու պահից*: Նույն կետի «ե» ենթակետը նախատեսում է նաև, որ *անդամ պետությունները պետք է ապահովեն արդյունավետ համագործակցություն բոլոր իրավասու մարմինների միջև, ինչպիսիք են ոստիկանությունը, դատարանները և բռնությունից տուժած անձանց պաշտպանության ծառայությունները, որպեսզի տուժողներին հնարավորություն ընձեռվի կիրառելու աջակցություն ստանալու համար անհրաժեշտ բոլոր հնարավոր իրավական և գործնական քայլերը*:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով ամրագրվում են ընտանիքում բռնության կանխարգելումը և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանությունն իրենց գործառնությունների

<sup>500</sup> Տե՛ս [https://search.coe.int/cm/Pages/result\\_details.aspx?ObjectID=09000016805e2612](https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805e2612), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

շրջանակներում իրականացնող իրավասու պետական մարմինները, որոնց թվում է նաև ՀՀ ոստիկանությունը: Ավելին, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց լիազորությունների շրջանակներում աջակցում են ընտանիքում բռնության դեմ պայքարին և այդ բնագավառում համագործակցում են լիազոր մարմնի հետ<sup>501</sup>: Ստացվում է, որ նշյալ օրենքը ևս նախատեսում է բազմամասնագիտական աջակցության ցուցաբերում ընտանիքում բռնության ենթարկված անձանց համար:

Ըստ այդմ՝ Օրենքի 15-րդ հոդվածով ամրագրվում են ոստիկանության լիազորություններն ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում: Այդ գործառնությունները ենթադրում են թե՛ իրենց նկատմամբ ընտանիքում բռնություն կիրառված լինելու մասին հաղորդմամբ դիմած անձանց նրանց իրավունքների և հասանելի ծառայություններից օգտվելու հնարավորության վերաբերյալ պարզաբանման ներկայացում (Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ), թե՛ օրենքով նախատեսված երեք պաշտպանական միջոցներից ոստիկանության կողմից կիրառման ենթակա երկու պաշտպանական միջոցների կիրառում (Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցներն են՝ նախազգուշացումը, անհետաձգելի միջամտության որոշումը, որոնք կիրառվում են ՀՀ ոստիկանության կողմից, ինչպես նաև պաշտպանական որոշումը, որը կիրառվում է դատարանի որոշման հիման վրա): Ընդ որում, նույն հոդվածի 2-րդ մասը նախատեսում է երաշխիքներ առ այն, որ պաշտպանության միջոցները կիրառվում են՝ առաջնորդվելով սույն օրենքով սահմանված սկզբունքներով և ապահովելով միջամտության համաչափությունը: Դրանց կիրառումը չի խոչընդոտում օրենքով սահմանված կարգով քրեական գործ հարուցելուն և քրեական հետապնդում իրականացնելուն: Այսինքն՝ սույն կարգավորումը թույլ է տալիս ենթադրել, որ անձի պաշտպանությունը կապված չէ քրեական հետապնդում իրականացնելու հետ և որպես առաջնային հարց է դիտարկվում բռնության ենթարկված անձի պաշտպանությունը:

Օրենքով նախատեսվում են ընտանիքում բռնությունից տուժած անձանց պաշտպանության համար առկա նաև այլ միջոցներ: Այսպես՝ Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ ընտանիքում բռնության կանխարգելումը և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանությունն իրենց գործառնությունների շրջանակներում իրականացնում են նաև ընտանիքում բռնության ենթարկվածներին աջակցություն ցույց տվող հատուկ կառույցները, որոնք են՝ աջակցության կենտրոնները և ապաստարանները: Ավելին, 14-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ լիազոր մարմինը հանրության համար հասանելի կերպով պարբերաբար հրապարակում է կապի այն միջոցների ցանկը (ներառյալ՝ ընտանիքում բռնության ենթարկվածների համար նախատեսված անվճար «Թեժ գիծ» ծառայության հեռախոսահամարները, որոնք աջակցության կենտրոնները պարտավոր են ունենալ), որոնցով ընտանիքում բռնության ենթարկվածները, նրանց ընտանիքի անդամները և այլ անձինք կարող են անհապաղ կապվել աջակցության կենտրոնների աշխատողի կամ կենտրոնի կողմից ներգրավված համապատասխան մասնագետի հետ և ստանալ անհրաժեշտ անհատույց, իսկ հաշմանդամություն ունեցող անձանց դեպքում նաև նրանց համար մատչելի օգնություն:

Պաշտպանության համար առկա բոլոր մեխանիզմների կիրառման համար Օրենքով ամրագրվել են նաև այլ հստակ կարգավորումներ: Օրինակ՝ Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում ոստիկանությունը սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով որոշում է կայացնում ընտանիքում բռնության

<sup>501</sup> Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ լիազոր մարմինն է սոցիալական հարցերի ոլորտում լիազոր հանրապետական գործադիր մարմինը

ենթարկվածներին ապաստարանում տեղավորելու մասին: Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ընտանիքում բռնության ենթարկվածներն իրենց դիմումի դեպքում կարող են ապաստարանում տեղավորվել, եթե առկա է բռնության կրկնման կամ շարունակման վտանգի վերաբերյալ հիմնավոր ենթադրություն:

Ըստ այդմ՝ Օրենքով նախատեսվում է ընտանիքում բռնության ենթարկված անձի պաշտպանության համակարգ, որը կարող է արդյունավետ գործել բացառապես դրանց փաստացի գործարկման (օրինակ՝ ապաստարանների և աջակցման կենտրոնների հիմնադրման), ինչպես նաև իրավասու մարմինների միջև համագործակցության գործուն մեխանիզմների նախատեսման պարագայում: Ընդ որում, բոլոր այն դեպքերում, երբ պետական աջակցությունը կազմակերպելը հնարավոր չէ, այն պետք է իրականացվի նաև ոլորտում մասնագիտացված և ծառայություններ մատուցող հասարակական կազմակերպությունների ներգրավմամբ, որի հնարավորությունը նախատեսում է նաև Օրենքը: Այսպես, Օրենքի 2-րդ հոդվածով ամրագրվում են ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության սկզբունքները, որոնցից է համագործակցությունը պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության միջև համագործակցության սկզբունքներով:

Օրենքն ամրագրում է պաշտպանության կարիք ունեցող անձանց պաշտպանության գործիքակազմ, որի շրջանակներում գործիքներից մեկի բացակայությունը կամ առկա գործիքի չկիրառումը խարխլում է բռնության ենթարկված անձանց պաշտպանության համակարգը՝ վտանգելով անձի կյանքը և առողջությունը:

Ըստ ՀՀ դատախազության տվյալների՝ ընտանիքում բռնության դեպքերի կանխարգելման, հայտնաբերման և բացահայտման առումով, հաշվի առնելով ընտանիքում բռնության դեպքերի լատենտային բնույթը, ՀՀ դատախազության կողմից կարևորվել է տնային մահացությունների դեպքերով հաղորդումների գրանցման պրակտիկայի և ոլորտի իրավական կարգավորումների ուսումնասիրության անհրաժեշտությունը: Տնային մահացությունների դեպքերով ուսումնասիրության արդյունքները փաստել են, որ քրեական վարույթի շրջանակներում ստուգում պահանջող որոշ դեպքեր դուրս են մնացել իրավապահ մարմինների տեսադաշտից: Ելնելով ուսումնասիրությամբ ի հայտ բերված հիմնահարցերից և հաշվի առնելով ընտանիքում բռնությունների լատենտայնության հավանականությունը՝ ՀՀ գլխավոր դատախազը գործնական առաջարկներ է ներկայացրել ՀՀ առողջապահության նախարարին:

Մասնավորապես, առաջարկվել է միջոցներ ձեռնարկել տանը, ստացիոնար պայմաններում մահվան, բուժհաստատություն դիակ տեղափոխելու դեպքերում մահվան փաստի հաստատումը միայն համապատասխան մասնագետների կողմից իրականացնելու ուղղությամբ, մշակել մարդու մահվան փաստի հավաստման արձանագրության միասնական՝ համապատասխան բժշկական և անհրաժեշտ այլ տվյալներ ներառող ձև, արգելել առանց այդ արձանագրության լրացման դիակի ախտաբանաանատոմիական հետազոտության իրականացումը և/կամ մահվան վերաբերյալ բժշկական վկայագիր տալը: Իսկ տնային մահացությունների այն դեպքերում, երբ ախտորոշումը հայտնի չէ և չկան վերջին մեկ ամսվա ընթացքում տվյալ անձի հետազոտման, բուժման կամ ախտորոշման վերաբերյալ բժշկական փաստաթղթեր, ինչպես նաև, երբ դիակի վրա առկա են մարմնական վնասվածքների տեսանելի հետքեր, պարտավորեցնել համապատասխան բուժաշխատողին ահազանգել իրավապահ մարմիններին: Առաջարկվել է նաև սահմանել դիակի գտնվելու վայրում բուժզննումն իրականացնող բուժաշխատակցի կողմից դիակի հերձման ուղեգրման գործողությունների հաջորդական քայլերի վերաբերյալ հստակ չափանիշներ՝ ներառյալ սահմանելով, թե տնային և ստացիոնար պայմաններում մահերի ո՞ր դեպքերում կարող է դիակը չենթարկվել դիահերձման, ո՞ր դեպքերում պետք է իրականացնել

ախտաբանաանատոմիական և ո՞ր դեպքերում՝ դատաբժշկական հետազոտություն /հերձում/:

Հաշվի առնելով խնդրի բացառիկ կարևորությունը և իրավաչափ լուծումների անհետաձգելիությունը՝ ՀՀ դատախազությունը պատրաստակամություն է հայտնել ակտիվորեն մասնակցելու նշված առաջարկությունների շահագրգիռ, բազմակողմ քննարկումներին և ներգրավվելու համապատասխան իրավական ակտերի մշակման աշխատանքներում: ՀՀ առողջապահության նախարարի գրության համաձայն՝ նշված առաջարկները, ըստ էության, ամբողջությամբ ընդունվել են և իրավական կարգավորման փուլում են:

Համակարգի անկատարությանը նպաստում է նաև այն, որ իրավասու գերատեսչությունները չեն ձեռնարկում քայլեր այս ուղղությամբ: Ավելին, շատ հաճախ այդ քայլերը կրում են էպիզոդիկ բնույթ և չեն իրականացվում համակարգված կերպով: Այսպես, ըստ ՀՀ առողջապահության նախարարության տվյալների՝ 2018 թվականի ընթացքում ՀՀ առողջապահության նախարարության կողմից ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության գործողություններ չեն իրականացվել (չնայած նրան, որ Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ ընտանիքում բռնության կանխարգելումը և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանությունն իրենց գործառույթների շրջանակներում իրականացնում է նաև առողջապահության ոլորտի լիազոր հանրապետական գործադիր մարմինը): Մինևույն ժամանակ, ըստ նշյալ նախարարության տվյալների Հայաստանի 4 մարզի առողջության առաջնային պահպանման ոլորտի բուժաշխատողների համար իրականացվել են «Վաղ տարիքի երեխաների պատրոնաժ խնամք՝ պրոգրեսիվ պատրոնաժ» թեմայով դասընթացներ, որի 3 կրթական մոդուլներից մեկը նվիրված էր երեխաների նկատմամբ դաժան վերաբերմունքի հարցերին, այդ թվում՝ բռնության կանխարգելմանը, բռնության առողջապահական հետևանքներին, դրանք ճանաչելու և բացահայտելու հմտություններին և այլ ոլորտների հետ աշխատանքի խնդիրներին: Դասընթացի շրջանակներում վերապատրաստվել են 485 առողջության առաջնային պահպանման համակարգում ներգրավված բուժաշխատող:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությանը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի գերակա ուղղություններից մեկը «Ընտանիքում բռնության երևույթի կանխարգելումը և դրա դեմ պայքարն է»: Խնդիրն այն է, որ ընտանիքում բռնության ոլորտում օրենսդրության ընդունումից հետո անհրաժեշտ է առավել համապարփակ քաղաքականության մշակում, որի արդյունքում կներդրվի բազմամասնագիտական աջակցություն տրամադրելու ինստիտուտը: Վերջինս հնարավոր է ապահովել առանձին գործողությունների ծրագրի միջոցով:

Այսպիսով, ընտանիքում բռնության դեմ պայքարի և դրանից տուժած անձանց բազմամասնագիտական պայքարի համակարգը կայացած չէ, ինչի պատճառով 2018 թվականի Մարդու իրավունքների պաշտպանի կողմից կայացվել է մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշում:

#### 1.4 Կարծրատիպեր, իրավագիտակցության ցածր մակարդակ և անվստահություն պետական մարմինների նկատմամբ

Բռնության դեմ պայքարի և կանխարգելման հարցում մեծագույն մարտահրավեր է կանանց նկատմամբ և ընտանիքում բռնության վերաբերյալ առկա թյուր պատկերացումները և կարծրատիպերը: Հանրապետության մի շարք մարզերում Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ իրականացված քննարկումների, ինչպես նաև Պաշտպանին հասցեագրված բողոքների քննությամբ պարզ է դառնում, որ այս կարծրատիպերն առկա են ինչպես բռնության ենթարկված պաշտպանությամբ զբաղվելու իրավասություն ունեցող իրավասու մարմինների ներկայացուցիչների, այնպես էլ հասարակության մյուս անդամների մոտ:

Ավելին, բազմաթիվ դեպքերում նման կարծրատիպային մտածելակերպն ուղղակիորեն բացասական ազդեցություն է ունենում բռնության ենթարկված անձի կողմից բռնության մասին բարձրաձայնելու հարցում: Խնդիրը, հատկապես ակնհայտ է գյուղական համայնքներում, որտեղ պատմականորեն ձևավորվել է հարաբերականորեն փակ սոցիալական միջավայր, և հիմնահարցերի քննարկումը կրում է ներընտանեկան բնույթ: Անգամ իրավասու մարմնի ներկայացուցչի կողմից այստեղ կարող է հորդոր հնչել «չքանդել ընտանիքը» և համակերպվել բռնության հետ «երեխաներին հետագայում պիտակավորումից (բաժանված ծնողների երեխա կոչելուց) ազատ պահելու համար»:

Կարծրատիպային մտեցումն իրավասու պետական մարմինների ներկայացուցիչների կողմից շատ հաճախ բերում է կրկնակի զոհացման, ինչը կարող է հանդիսանալ խոչընդոտ հետագայում նման դեպքերի բացահայտման համար, քանզի գերակշռող դեպքերում տուժողները չեն ցանկանա կրկին դիմել իրավասու մարմիններին<sup>502,503</sup>:

Հասարակությունում առկա կարծրատիպերի մասին են վկայում ուսումնասիրություններ: Այսպես, ընտանիքում բռնության դրսևորումների վերաբերյալ քննարկումների անքակտելի մաս է բռնության հրահրման և առաջացման համար կողմերից որևէ մեկի վրա ընտանիքում լարվածության էսկալացիայի մեղքը բարդելը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հարցվածների 35.7 %-ը, որից 44.6 %-ը տղամարդ են և 27.8 %-ը՝ կանայք, համաձայն են, որ կինը պետք է հանդուրժի բռնությունը՝ հանուն ընտանիքի միասնության<sup>504</sup>: Որոշ դեպքերում «կինը ծեծի է արժանի» պնդման հետ համաձայն է հարցվածների 27.7 %-ը, որից 35.2 %-ը՝ տղամարդ և 21 %-ը կին են<sup>505</sup>:

<sup>502</sup> Հասարակական կազմակերպությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արձանագրվել է նաև դատարանի ու նախաքննության մարմինների կողմից երկակի ստանդարտների կիրառման դեպքեր, որի հիմքով էլ խախտվել է տուժողի արդյունավետ իրավական պաշտպանության միջոցների իրավունքը <http://coalitionagainstviolence.org/wp-content/uploads/2017/01/Report-short.pdf?x24321>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>503</sup> Խնդրի մասին բարձրաձայնել է նաև Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոմիտեն, որը նշել է, որ բռնության դեպքերի մասին բարձրաձայնման խոչընդոտ է հանդիսանում իրավապահ մարմինների կողմից կարծրատիպերի պատճառով բռնությունն արդարացնելը: Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոմիտեի Հայաստանի 4-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, [http://tbinternet.ohchr.org/Treaties/CAT/Shared%20Documents/ARM/INT\\_CAT\\_COC\\_ARM\\_25977\\_E.pdf](http://tbinternet.ohchr.org/Treaties/CAT/Shared%20Documents/ARM/INT_CAT_COC_ARM_25977_E.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>504</sup> Տե՛ս <http://www.unfpa.am/sites/default/files/IMAGES-executive%20summary-Arm.pdf>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>505</sup> Տե՛ս նույն տեղում:

Որոշ դեպքերում կնոջը համարում են ընտանիքում լարվածության, վեճերի ու կոնֆլիկտների էսկալացիայի հրահրող<sup>506</sup>: Հատկանշական է, սակայն, որ մեղքը կնոջ վրա բարդելու միտումը հատուկ է միայն բռնության ոչ պարբերական դրվագների վերաբերյալ քննարկումներին, մինչդեռ բռնության շարունակական, պարբերաբար կրկնվող և ծայրահեղ դրսևորումների պարագայում մասնակիցները հակված չեն էսկալացիայի մեղքը բարդել կնոջ վրա<sup>507</sup>: Մասնակիցները նշում են դեպքեր, երբ իրենց կարծիքով կնոջ վարքագիծը նպաստում է ընտանիքում լարվածությունը բռնության վերաճելուն, ամուսնու գործազրկության կամ ընտանիքի բարեկեցության ակնկալիքներին անհամապատասխան վաստակի դեպքում տնտեսական անհամարժեք պահանջներ ներկայացնելը, ակոհողի կամ թմրադեղերի ազդեցության տակ գտնվող ամուսնուն որոշակի պահանջներ ներկայացնելը, դիտավորյալ թաքցրած հաշմանդամությունը<sup>508</sup>:

Հասարակությունում կանանց դերի և բռնության վերաբերյալ թյուր պատկերացումներ են ձևավորվում նաև զանգվածային լրատվության միջոցների կողմից բռնության վերաբերյալ սխալ տեղեկատվության ներկայացնելու պատճառով: Ավելին, հեռուստատեսությամբ հեռարձակվող հաղորդումները և ֆիլմերը ևս կարող են բացասական ազդեցություն ունենալ բռնության վերաբերյալ սխալ պատկերացումների ձևավորման մասին:

Նշված խնդրի մասին բազմիցս բարձրաձայնվել է մարզերում Պաշտպանի ներկայացուցիչների հետ քննարկումներում ինչպես պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, այնպես էլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից: Խնդրի մասին բարձրաձայնել են նաև բազմաթիվ ուսումնասիրություններ: Այսպես, ուսումնասիրությանը մասնակցած անձինք նշել են, որ լրատվամիջոցների և, հատկապես, հեռուստատեսության ազդեցություն է ունենում ընտանիքում կոնֆլիկտները լուծելու մոդելների վրա: Նման ազդեցության հիմքում բռնության այս կամ այն տեսակն է՝ հատկապես հոգեբանական և տնտեսական: Ըստ մասնակիցներից շատերի՝ դրանք ակնհայտորեն նպաստում են կնոջ և տղամարդու դերերի ավանդական ընկալման և հայրիշխանական կարծրատիպերի վերարտադրությանը: Մասնակիցները միաձայն են այն հարցում, որ ընտանիքում բռնություն հրահրող գործոններից մեկն էլ հայկական հեռուստատեսիվներն են, որոնց հիմնական լսարանը կանայք են, և որտեղ տղամարդու դրական կերպարը հաճախ ներկայացվում է որպես իշխող, կնոջը որոշումների գործընթացում չներառող, կոնֆլիկտներն ուժի, երբեմն անգամ ծեծի միջոցով լուծող, իսկ կինը՝ որպես հնազանդ, առօրյան սուրճի բաժակի շուրջ անցկացնող և մանր դավադրություններ հյուսող: Մասնակիցների կարծիքով՝ քանի որ մեղիան նման կերպարները չի ներկայացնում որպես անընդունելի և անգամ դատապարտելի, այլ հակառակը, արդարացնում է նման մոտեցումը նրանով, թե «մենք արտապատկերում ենք իրականությունը», նույն անընդունելի իրականությունը շարունակվում է վերարտադրվել, հատկապես երիտասարդների շրջանում<sup>509</sup>:

<sup>506</sup> Տե՛ս [https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Reserach\\_Arm-Final%20with%20logos-upd\\_0.pdf](https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Reserach_Arm-Final%20with%20logos-upd_0.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>507</sup> Տե՛ս [https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Reserach\\_Arm-Final%20with%20logos-upd\\_0.pdf](https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Reserach_Arm-Final%20with%20logos-upd_0.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>508</sup> Տե՛ս [https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Reserach\\_Arm-Final%20with%20logos-upd\\_0.pdf](https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Reserach_Arm-Final%20with%20logos-upd_0.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>509</sup> Տե՛ս [https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Reserach\\_Arm-Final%20with%20logos-upd\\_0.pdf](https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Reserach_Arm-Final%20with%20logos-upd_0.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):



**1.5 Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց անբավարար մասնագիտական պատրաստվածությունը և իրազեկման պակասը**

Մարդու իրավունքների պաշտպանին շարունակում են հասցեագրվել բողոքներ առ այն, որ իրավասու մարմինների կողմից ընտանիքում բռնությունից տուժած անձանց, հատկապես՝ կանանց չի տրամադրվում բավարար աջակցություն: Խնդիրն այն է, որ կարծրատիպեր առկա են նաև տարբեր իրավասու մարմինների ներկայացուցիչների շրջանում, որը խոչընդոտ է պաշտպանություն տրամադրելուն: Պաշտպանին հասցեագրված բողոքները վկայում են նաև, որ կարծրատիպեր են առկա նաև դատական համակարգում: Խնդիրն այն է, որ որոշ դեպքերում դատարանի կողմից գործի քննության ընթացքում դատավորի կողմից փորձ է կատարվում «հաշտեցնել» ընտանիքի անդամներին, որը սակայն արվում է ոչ թե հավասարության, ազատ կամաարտահայտման սկզբունքի հիման վրա, այլ բռնությունից տուժած կնոջ նկատմամբ ճնշումների գործադրմամբ: Նշված պրակտիկան չափազանց վտանգավոր է առաջին հերթին հենց բռնությունից տուժած անձի իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Խնդրի մասին բարձրաձայնում են նաև տարբեր հասարակական կազմակերպություններ: «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի համաձայն՝ դատական պրակտիկան ցույց է տալիս, որ ընտանիքում բռնության գործեր քննելիս՝ դատարանները շատ հաճախ հաշվի չեն առնում հանցագործության նախապատմությունը, ամբաստանյալի գործած հանցանքի շարժառիթը, հասարակության համար վտանգավորության աստիճանը: Հակառակ՝ ընտանիքում բռնության և կնասպանության գործերի մեծ մասով դատարանները պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք դատաքննությամբ առհասարակ չեն հայտնաբերում:

Ըստ առկա տվյալների՝ 2018 թվականին «Կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության դեմ պայքարը և կանխարգելումը ՀՀ-ում» թեմայով Եվրոպայի խորհրդի «HELP» հեռավար ուսուցման եռամսյա դասընթացին մասնակցել են դատավորներ, դատախազներ, քննիչներ և փաստաբաններ:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ 2018 թվականի նոյեմբերի 29-ին Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտում իրականացվել է նախարարության համակարգի երեխայի և ընտանիքի աջակցության, ցերեկային հոգաձության կենտրոնների մասնագետների վերապատրաստում և մեթոդական խորհրդատվություն «Երեխայի հանդեպ բռնության կանխարգելման, հայտնաբերման, ընտանիքում բռնության վերաբերյալ օրենսդրությունը» թեմայով:

Համաձայն ՀՀ ոստիկանության տվյալների՝ ընտանիքում բռնության ոլորտում ՀՀ ոստիկանության ծառայողների կարողությունները զարգացնելու նպատակով 2018 թվականի մայիս ամսին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում, ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժնի, բաժանմունքների (խմբերի) ավագ և միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողների համար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ: Միջազգային կառույցների՝ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի կողմից ՀՀ ոստիկանության ծառայողների համար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ՝ միջազգային փորձագետների և հոգեբանների մասնակցությամբ: Ներկայումս ընտանիքում բռնության կանխարգելման ոլորտում աշխատում են վերապատրաստված 306 մասնագիտական ստորաբաժանման ծառայողներ:

Բացի այդ, ՀՀ ոստիկանության ղեկավար անձնակազմի և ծառայողների համար անց են կացվել սեմինար-պարապմունքներ, որի ընթացքում ներկայացվել է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերի դրույթները, դրանք պրակտիկ գործունեության ընթացքում

կիրառելու մեթոդները: Վերապատրաստման դասընթացի անցկացումը կրում է շարունակական բնույթ: Պետք է նշել, որ դրանք հիմնականում իրականացվում են մասնագիտացված ստորաբաժանման ներկայացուցիչների համար, սակայն այլ ստորաբաժանման աշխատակիցների համար դասընթացների կազմակերպում հավասարապես կարևոր է՝ անձի ճիշտ ուղղորդման և ենթադրյալ տուժողի աջակցությանն ուղղված այլ գործողությունների իրականացման պատշաճ ապահովման նպատակով:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ձևավորվել է ընտանիքում բռնության կանխարգելման խորհուրդ, Ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի անհատական կազմը հաստատվել է ՀՀ վարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 1685-Ս որոշմամբ, սակայն 2018 թվականին նիստ չի գումարել:

*Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. փոփոխություններ կատարել ՀՀ քրեական օրենսգրքում՝ այն համապատասխանեցնելով կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության վերաբերյալ միջազգային չափանիշներին, մասնավորապես նախատեսելով պատասխանատվության միջոցներ կանանց նկատմամբ և ընտանիքում բռնություն համարվող բոլոր արարքների համար,

2. փոփոխություններ կատարել ՀՀ քրեական օրենսգրքում՝ բացառելով տուժողի հակաբարոյական արարքը՝ որպես պատիժը մեղմացնող հանգամանք դիտարկելը,

3. փոփոխություններ կատարել ՀՀ քրեական դատարավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ մասում՝ այն համապատասխանեցնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի սահմանած չափանիշներին,

4. հնարավորինս սեղմ ժամկետում ընդունել ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառում վարելու կարգը հաստատող կառավարության որոշումը,

5. հնարավորինս սեղմ ժամկետում ընդունել ապաստարան հիմնադրելու հավաստագրի տրամադրման կարգը սահմանող կառավարության որոշումը,

6. կազմակերպել համապատասխան մասնագետների (քննիչներ, դատախազներ, դատավորներ և այլն) պարտադիր և շարունակական դասընթացներ ՀՀ նոր օրենսդրական կարգավորումների, ինչպես նաև միջազգային չափանիշների վերաբերյալ, որոնք նաև ուղղված կլինեն կանանց նկատմամբ բռնության մասին կարծրատիպերի վերացմանը,

7. բարձրացնել կանանց իրազեկվածությունն իրենց իրավունքների և դրանց պաշտպանության առկա մեխանիզմների վերաբերյալ,

8. մշակել և իրականացնել քարոզչական ծրագրեր (սոցիալական գովազդներ, պաստառներ, կարճամետրաժ ֆիլմեր), որոնք ուղղված կլինեն ընտանիքում բռնության կանխարգելմանը,

9. մշակել և ընդունել համապարփակ գործողությունների ծրագիր ընտանիքում բռնության կանխարգելման, դրա դեմ պայքարի և բռնությունից տուժած անձանց պաշտպանության համար,

10. ներդնել ընտանիքում բռնությունից տուժած անձանց բազմամասնագիտական աջակցության տրամադրման գործուն մեխանիզմ:

## **2. Թրաֆիքինգ և շահագործում**

Կանանց նկատմամբ բռնության ձև է նաև թրաֆիքինգը: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ՀՀ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի հարցերով խորհրդի

անդամ է, որին կից աշխատանքային խմբում ներկայացված են նաև աշխատակազմի համապատասխան ներկայացուցիչներ:

Առկա տվյալները վկայում են այն մասին, որ թրաֆիքինգի և շահագործման ենթարկվող անձանց մեծամասնությունը կանայք են: Ուստի, բռնության այս տեսակը ևս համամասնորեն է ազդում հենց կանանց վրա:

Մարդու իրավունքների պաշտպանը ձեռնամուխ է եղել հանրապետության տարբեր մարզերում մարդկանց իրավունքների պաշտպանության և պահպանության վերաբերյալ իրազեկման բարձրացման նոր արշավի իրականացման ծրագրի, որի ընթացքում այլ խնդիրների քննարկման հետ զուգընթաց նաև քննարկվում է մարդկանց թրաֆիքինգի և շահագործման վերաբերյալ խնդիրները և դրա դեմ պայքարի համար ընդունված ներպետական օրենսդրությունն, ինչպես նաև միջազգային չափանիշները: Ծրագրի շրջանակներում տարածքային կառավարման և ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ՀՀ դատախազության և ՀՀ ոստիկանության տարածքային ներկայացուցիչների հետ քննարկումներ են տեղի ունեցել Գեղարքունիքի, Վայոց ձորի, Տավուշի և Լոռու մարզերում:

Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կանխարգելիչ մեխանիզմներից է նաև կանանց տնտեսական զարգացումը և դրան ուղղված քայլերի իրականացումը, հատկապես գյուղական բնակավայրերում:

Թրաֆիքինգի և շահագործման ենթարկման պատճառները բազմազան են, սակայն ի թիվս այլ դրոշմների պետք է նշել հենց տնտեսական կայունության բացակայությունը կամ սոցիալ-տնտեսական այլ խնդիրները: Ուստի, խնդրի դեմ պայքարում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացվում են տարբեր ձեռնարկումներ, որոնց շարքում, օրինակ՝ 2018 թվականին շարունակվել է իրականացվել կանանց տնտեսական հզորացմանն ուղղված ծրագիր միջազգային և տեղական գործընկերների հետ համագործակցությամբ: Ծրագրի իրականացման համար ընտրվել է Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքը: 2018 թվականի ընթացքում պարբերական հանդիպումներ են տեղի ունեցել Նոյեմբերյան քաղաքի մի խումբ կանանց հետ՝ քննարկումներ իրականացնելով աշխատանքային և տնտեսական իրավունքների իրականացման, տնտեսական զարգացման և կայունացման հնարավորությունների և մարդկանց աշխատանքային թրաֆիքինգի և շահագործման այլ տեսակների վտանգների հարցերի վերաբերյալ:

Կազմակերպվել է նաև վերապատրաստման դասընթաց, որի ընթացքում ներկայացվել է իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնելու իրավական կարգավորումները, հարկման կարգը, գնագոյացման մեթոդները և այլ հարցեր: Քննարկվել են կանանց զբաղվածության ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի աջակցության ուղիները, կանանց կարողությունների զարգացման և տնտեսական առաջխաղացման հնարավորությունները:

Այս միջոցառումների շարքի իրականացման նպատակն է աջակցել մարզերում բնակվող կանանց տնտեսական կարողությունների զարգացմանը, ինչպես նաև նպաստել տնտեսական գործունեությամբ զբաղվելու հնարավորությունների ստեղծմանը և հասարակության մեջ կնոջ դերի վերաբերյալ կարծրատիպերի հաղթահարմանը, ինչը կանխարգելիչ միջոց է մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարում:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը պարբերաբար կազմակերպում է տեղեկացվածության բարձրացմանն ուղղված արշավներ և քննարկումներ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ձեռնամուխ է եղել հանրապետության տարբեր մարզերում մարդու իրավունքների պաշտպանության և պահպանության վերաբերյալ իրազեկման բարձրացման նոր արշավի իրականացման ծրագրի, որի ընթացքում այլ խնդիրների քննարկման հետ զուգընթաց նաև քննարկվում է

մարդկանց թրաֆիքինգի և շահագործման վերաբերյալ խնդիրները: Այսպես, նման քննարկումներ են իրականացվել Գեղարքունիքի, Վայոց ձորի, Տավուշի և Լոռու մարզերում:

Ավելին, ճանաչողական այցով Պաշտպանի աշխատակազմ են այցելել նաև Երևանի և ՀՀ մարզերի մի շարք ուսումնական հաստատություններից կամ երեխաների խնամք իրականացնող կենտրոններից: Այցերի ընթացքում քննարկվել են մարդու իրավունքների պահպանության ու պաշտպանությանն ուղղված հարցեր, որոնց ընթացքում ներկայացվել են նաև մարդկանց թրաֆիքինգի և շահագործման վերաբերյալ հարցեր: Այցերը կրում են շարունակական բնույթ և իրականացվել են նաև 2018 թվականի ամբողջ ընթացքում:

Թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարում կանխարգելիչ միջոցառումների շարքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից հասարակական կազմակերպության գործընկերների հետ մեկտեղ դպրոցահասակ երեխաների համար մշակվել են մարդու իրավունքների պաշտպանության և պահպանության հիմնախնդիրների վերաբերյալ ուղեցույցներ, որում ներառված են եղել նաև մարդկանց թրաֆիքինգի և շահագործման խնդիրը և դրա դեմ պայքարը:

*Ուստի, անհրաժեշտ է շարունակել իրազեկման արշավները մարդկանց թրաֆիքինգի և շահագործման երևույթի, դրանից զերծ մնալու ուղիների և այդ դեպքերում առկա պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ:*

### **3. Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումներ**

Համակարգային առումով դեռևս լուծված չէ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների խնդիրը: Խնդիրն այն է, որ նախապատվություն է տրվում տղա երեխաներին, ինչի պատճառով հղիությունն ընդհատվում է, երբ պարզվում է երեխայի սեռը: Այս երևույթը կանանց նկատմամբ խտրականության դրսևորում է, ինչի պատճառ են ինչպես հասարակությունում ավանդաբար հաստատված պատկերացումները (օրինակ՝ արու զավակ ունենալու նախապատվությունը), այնպես էլ կանանց դերի վերաբերյալ առկա կարծրատիպային մոտեցումները: Ավելին, որոշ ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ հաճախ կնոջն են մեղադրում տղա երեխա չունենալու համար: Դեռևս մինչ հղիությունը, հղիության ողջ ընթացքում, ծննդաբերությունից հետո և հատկապես միայն աղջիկ երեխաներ ունեցող կանայք մշտապես քննադատվում են<sup>510</sup>: Առկա է նաև կարծիք, որ կանայք ևս շատ են ձգտում անպայման տղա ունենալ, քանի որ դա իրական հնարավորություն է ընտանիքում դիրքավորվելու, կարգավիճակն ամրապնդելու և ապագայի համար կայունության երաշխիք ունենալու: Ընտանիքներում երիտասարդ կանանց/հարսների ավելի ստորադասված և ենթակա դիրքով պայմանավորված «տղա ունեցավ, ոտքը տեղ բռնեց» արտահայտության արժեքը նկատվում է նաև մեր օրերում<sup>511</sup>:

Տարբեր մարզերում տեղի ունեցած քննարկումների ժամանակ Մարդու իրավունքների պաշտպանին և ներկայացուցիչներին ներկայացվել են տվյալներ առ այն, որ շատ հաճախ կանայք իրենք չեն կայացնում սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման որոշում: Նրանք այդ քայլին դիմում են ընտանիքի անդամների կողմից սպառնալիքների և հարկադրանքի ներքո:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ մի շարք միջազգային կազմակերպություններ կոչ են արել հրատապ միջոցներ ձեռնարկել խնդրի լուծման ուղղությամբ<sup>512</sup>: Հայաստանում

<sup>510</sup> St' u <https://www.wvi.org/sites/default/files/How%20to%20have%20boy--arm.pdf>, էջ 10, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>511</sup> St' u <https://www.wvi.org/sites/default/files/How%20to%20have%20boy--arm.pdf>, էջ 10, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>512</sup> 1995 թվականին Պեկինում անցկացված «Կանանց մասին» 4-րդ համաշխարհային գիտաժողովի ժամանակ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումը նկարագրվել է որպես կանանց դեմ բռնության

կանանց և տղամարդկանց սեռերի հարաբերակցության նորմայից շեղումը սկսել է նկատվել դեռևս 1991 թվականից, իսկ 2000 թվականին այն հասել է մինչև 120 տղա - 100 աղջիկ հարաբերակցության այն դեպքում, երբ նման հարաբերակցության համար սահմանված նորման կազմում է 102-103 տղա - 100 աղջիկ հարաբերակցությունը<sup>513</sup>:

2017 թվականի տվյալները վկայում են դրական տեղաշարժի մասին: Այսպես՝ նորածինների սեռերի հարաբերակցության գործակիցը 2015 թվականին եղել է 1.13, իսկ արդեն 2017 թվականին դարձել է 1.10<sup>514</sup>: ՀՀ առողջապահության նախարարության տրամադրած տվյալները ևս վկայում են որոշակի դրական տեղաշարժի մասին: Այսպես, եթե սելեկտիվ արքորսների դեմ պայքարին ուղղված միջոցառումներին նախորդող՝ 2008-2012 թվականների ժամանակահատվածում ծնվածների մեջ աղջիկ-տղա հարաբերակցության միջին ցուցանիշը կազմել է 100-115, ապա 2014 թվականին՝ 100-113.4, 2015 թվականին՝ 100-112.7, 2016 թվականին՝ 100-111.9, իսկ 2017 թվականին՝ 100-109.8, 2018 թվականին առաջին 10 ամիսների ընթացքում՝ 100-108.5:

Անգամ այս տվյալները վկայում են խնդրի առկայության մասին: Ավելին, խնդիրը, հատկապես ընդգծվում է երրորդ երեխայի դեպքում: Ըստ տվյալների, որոնք ներկայացնում են սեռերի հարաբերակցության գործակիցն, ըստ ծննդի կարգի՝ առաջին երեխայի դեպքում գործակիցը 1.07 է, երկրորդ երեխայի դեպքում՝ 1.03, իսկ արդեն երրորդ երեխայի դեպքում՝ 1.30-ը<sup>515</sup>:

Խնդրի իրական պատկերը վերհանելու նպատակով մի շարք ուսումնասիրություններ են իրականացվել հասարակական կազմակերպությունների կողմից: Այսպես, 2017 թվականին հրապարակված հետազոտություններից մեկի շրջանակներում պարզվել է նաև, որ Հայաստանի բոլոր մարզերում հստակ արտահայտված է տղա առաջնեկ ունենալու նախապատվությունը: Նման նախապատվությունն առավել արտահայտված է Վայոց ձորի, Արարատի, Շիրակի և Լոռու մարզերում, մինչդեռ Երևանի և Սյունիքի կանանց մեծամասնությունը (համապատասխանաբար՝ 61.6% և 62.4%) առաջին հղիության ժամանակ առաջնեկի սեռը չի կարևորել<sup>516</sup>:

Ըստ հետազոտությունների՝ սեռով պայմանավորված հղիության ընդհատման երկու մեխանիզմ է կիրառվում՝ սեփական ուժերով և բժշկական արքորս: Որոշ հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ հատկապես մարզերում որոշ բուժաշխատակիցներ ևս ներգրավված են տղա երեխայի ընտրության հաշվարկներում<sup>517</sup>: Ավելին, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սեռի ընտրության վերջին փուլը հղիության արհեստական ընդհատումն է այն պարագայում, երբ երեխան աղջիկ է:

---

դրսևորում: Երեք տարի անց ՄԱԿ-ի Գլխավոր գազաթաժողովում «Աղջիկ երեխաների մասին» բանաձևը հավանության արժանացավ և Պետություններին կոչ արվեց «ընդունել և կիրառել օրենսդրություն»: Դեռևս 2011 թվականի ԵՆԽՎ-ի թիվ 1829 հանձնարարականով Հայաստանին հանձնարարվել է, ի թիվս այլ գործողությունների, առաջին հերթին ուսումնասիրել սեռով պայմանավորված հղիությունների ընդհատման պատճառները, քայլեր ձեռնարկել կանանց դերի բարձրացման ուղղությամբ, ապահովել կանանց նկատմամբ խտրականությունն արգելող իրավական նորմերի կիրառումը, աշխատանքներ իրականացնել համապատասխան բուժաշխատողների հետ՝ ներկայացնելով խնդիրը և վերջինիս հնարավոր հետևանքները [http://assembly.coe.int/Main.asp?link=/Documents/AdoptedText/ta11/ERES1829.htm#P7\\_28](http://assembly.coe.int/Main.asp?link=/Documents/AdoptedText/ta11/ERES1829.htm#P7_28), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>513</sup> Տե՛ս [http://unfpa.am/sites/default/files/Sex-selective\\_abortions\\_report\\_Arm.pdf](http://unfpa.am/sites/default/files/Sex-selective_abortions_report_Arm.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>514</sup> Տե՛ս [https://www.armstat.am/file/article/demog\\_2018\\_3.pdf](https://www.armstat.am/file/article/demog_2018_3.pdf), էջ 72, 2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>515</sup> Տե՛ս [https://www.armstat.am/file/article/demog\\_2018\\_3.pdf](https://www.armstat.am/file/article/demog_2018_3.pdf), էջ 72, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>516</sup> Տե՛ս «Զեկույց. սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների տարածվածությունն ու պատճառները Հայաստանում», <https://ichd.org/?laid=2&com=module&module=menu&id=8>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>517</sup> Տե՛ս <https://www.wvi.org/sites/default/files/How%20to%20have%20boy--arm.pdf>, էջ 27, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Բացի այդ, խնդիրը նաև այն է, որ բուժաշխատողների կողմից հղիության 12 շաբաթից հետո իրականացվող արհեստական ընդհատումների համար օրենքով անհրաժեշտ բժշկասոցիալական ցուցիչների պահպանման նկատմամբ բավարար վերահսկողություն առկա չէ: ՀՀ առողջապահության նախարարության տեղեկությունների համաձայն՝ 2018 թվականին ևս 12-րդ շաբաթը լրանալուց հետո հղիության արհեստական ընդհատում իրականացնելիս բուժաշխատողի կողմից հղիության բժշկասոցիալական ցուցումների դիտավորյալ կեղծ կիրառման դեպքեր չեն արձանագրվել: Այս պարագայում հարց է առաջանում, թե ինչպես են կատարվել սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումները՝ հաշվի առնելով այն, որ երեխայի սեռը հիմնականում հնարավոր է նշել հղիության 12-րդ շաբաթից հետո:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սովորաբար մարզային փոքր բժշկական կենտրոններում սեռով պայմանավորված աբորտներ չեն իրականացվում, մասնակիցների կարծիքներով տեղական բժշկական այն կենտրոններում, որտեղ հնարավոր է աբորտ իրականացնել, այն իրականացնում են գաղտնի, առանց գրանցման, երեկոյան ժամերին կամ ոչ աշխատանքային օրերին: Առավել տարածված է դիմել բժշկի աջակցությանն ավելի մեծ քաղաքներում և հատկապես Երևանում<sup>518</sup>:

Հաշվի առնելով խնդրի կարևորությունը՝ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման խնդրին լուծում տալու համար միջոցառում է նախատեսվել նաև «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» № 483-Ն որոշմամբ: Ըստ ՀՀ առողջապահության նախարարության տվյալների՝ մշակվել է «Պտղի սեռով պայմանավորված հղիության ընդհատումների կանխարգելման 2018-2022 թվականների ծրագրի» Հաղորդակցության ռազմավարության նախագիծը, որն առաջիկայում կքննարկվի համապատասխան գերատեսչությունների հետ:

Ավելին, 2018 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում Երևան քաղաքի մանկաբարձագինեկոլոգիական հիվանդանոցային ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպությունների 29 և Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Շիրակի մարզերի 41 մանկաբարձ-գինեկոլոգների և սոնոգրաֆիստների համար իրականացվել է 1-օրյա դասընթաց:

2018 թվականի դեկտեմբերի 27-ին հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարի «Հղիության արհեստական ընդհատումների կազմակերպման ընթացակարգը, հղիության արհեստական ընդհատման բժշկական քարտի ձևը, հղիության արհեստական ընդհատման բժշկական քարտի լրացման կարգը և պտղի սեռով պայմանավորված աբորտի կանխարգելման խորհրդատվական թերթիկը հաստատելու մասին» թիվ 3403-Ա հրամանը:

Չնայած վերոնշյալ քայլերին՝ խնդիրը համակարգային առումով դեռևս լուծված չէ: Հաշվի առնելով այն, որ խնդիրը կրում է համակարգային բնույթ՝ խնդրի լուծումը բացառապես բուժաշխատակիցների և պացիենտների հետ տարվող աշխատանքներով չի կարող սահմանափակվել: Անհրաժեշտ է այն կանխարգելել շարունակական բնույթ կրող միջոցառումների իրականացման միջոցով՝ կանանց կարողությունների զարգացման, որոշումների կայացման ազատության և այլ իրավունքների մասին իրազեկելու, ինչպես նաև բուժաշխատողների նկատմամբ վերահսկողության ուժեղացման միջոցով:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝*

*1. զանգվածային լրատվության միջոցներով, կրթական ծրագրերում՝ համապատասխան ուղղություններ ներառելով, ինչպես նաև այլ միջոցներով՝ ընդգծել կնոջ՝ որպես որոշում կայացնողի, հասարակության լիիրավ անդամի,*

<sup>518</sup> St' u <https://www.wvi.org/sites/default/files/How%20to%20have%20boy--arm.pdf>, էջ 39, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

2. ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ մշակել և կիրառել պարտադիր բնույթ կրող մեխանիզմներ՝ վերահսկելու բուժաշխատողների կողմից հղիության 12-րդ շաբաթից հետո արհեստական ընդհատման ժամանակ բժշկասոցիալական ցուցիչների պահպանումը:

#### **4. Կանանց մասնակցությունը քաղաքական և հասարակական կյանքին**

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներով և հաղորդմամբ, ինչպես նաև միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից տարիներ շարունակ բարձրաձայնվում է կանանց՝ հասարակական և քաղաքական կյանքում լիարժեք ներգրավման անհրաժեշտության հարցը: Թեև առկա ուսումնասիրությունները վկայում են, որ Հայաստանում կանայք իրենց կրթությամբ չեն զիջում տղամարդկանց<sup>519</sup>, այնուամենայնիվ, դեռևս առկա է քաղաքական կյանքին կանանց ցածր ներգրավվածության խնդիրը:

Խնդիրն այն է, որ հասարակությունում կանանց դերի մասին առկա պատկերացումների պատճառով կանայք հաճախ չեն դիտարկվում որպես որոշում կայացնողներ, ինչի պատճառով չեն կարողանում ակտիվորեն ներգրավված լինել հասարակական և քաղաքական գործընթացներում: Բացի այդ, Հայաստանում քաղաքական իշխանությունն ուղղակիորեն առնչվում է տնտեսական իշխանության և ռեսուրսների վերահսկման հետ, ուստի և իշխանություն ունեցողները շահագրգռված չեն նորեկների, այդ թվում՝ կանանց ակտիվ քաղաքական ներգրավվածության մեջ: Բացի այդ, քաղաքականության ոլորտում ընդունված ոչ բոլոր «խաղի կանոններն» են ծանոթ և ընդունելի կանանց համար, ուստի և անգամ քաղաքականապես ակտիվ կանայք հաճախ նախընտրում են ստանձնել երկրորդական դերեր: Ստացվում է մի իրավիճակ, երբ կանանց ներգրավվածությունը որոշակի ոլորտներում բավականին ցածր է, կանայք ունեն նաև ցածր ներգրավվածություն բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող անձանց շարքում:

Ըստ ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի տվյալների՝ ներկայացվում է քաղաքացիական ծառայողների թվաքանակ, ըստ պաշտոնների խմբերի, 2018 թվականի հունիսի 30-ի դրությամբ: Այսպես, բարձրագույն պաշտոնի խմբի 103 ծառայողներից ընդամենը 15-ն են կին, գլխավոր պաշտոնի խմբի 3221 ծառայողներից 1582 են կին, իսկ առաջատար պաշտոնի խմբի ծառայողների 2189 ընդհանուր թվից կին ծառայողներ են 1319-ը, սակայն հատկանշական է, որ կրտսեր պաշտոնի խմբի ծառայողների 860 ընդհանուր թվից 612 կին ծառայողներ են, իսկ 248-ը՝ տղամարդ: Վիճակագրական այս տվյալներն առավել ակնառու են դարձնում խնդիրը:

Նշված տվյալների համադիր վերլուծությունը վկայում է, որ կանանց թիվը գերակայում է տղամարդկանց թվին միայն ցածր աստիճանի պաշտոններում: Ինչ վերաբերում է արդեն բարձրագույն պաշտոններին՝ այստեղ ակնհայտ գերակայում է տղամարդկանց թիվը: Ավելին, այն հարցին ի պատասխան, թե ի՞նչ գործողություններ են ձեռնարկվել բարձրագույն պաշտոններում կանանց ներգրավման բարձրացման ուղղությամբ՝ ստացվել է պատասխան առ այն, որ ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի երկարաժամկետ ռազմավարության ծրագրերից է քաղաքացիական ծառայության համակարգի բարձրագույն պաշտոններում կանանց ներգրավվածության ուղղությամբ կատարվելիք աշխատանքները: Մասնավորապես, բարձրագույն պաշտոններում կանանց

<sup>519</sup> Տե՛ս ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, «Գենդերային ճեղքվածք. կանանց նկատմամբ խտրական դրսևորումների ախտորոշիչ ուսումնասիրություն», 2016 թվական, [http://www.unfpa.am/sites/default/files/2016\\_Gender-Gap-factsheet\\_Arm.pdf](http://www.unfpa.am/sites/default/files/2016_Gender-Gap-factsheet_Arm.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

ներգրավվածությունն ապահովելու նպատակով նշյալ գրասենյակը նախատեսում է միջոցառումներ կարողությունների հզորացման ուղղությամբ: Նման մեկնաբանության հետևանքով ստացվում է, որ անուղղակիորեն մատնանշվում է այն, որ կանայք չեն զբաղեցնում բարձրագույն պաշտոններ իրենց կարողությունների ցածր լինելու պատճառով, ինչն արդեն իսկ խտրականության դրսևորում է:

Կանանց ներգրավվածությունը շարունակում է ցածր մնալ նաև դատական համակարգում: Այսպես, ըստ Բարձրագույն դատական խորհրդի տվյալների՝ դատավորների միայն 26 %-ն են կազմում կին դատավորներ:

Ըստ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տրամադրած տվյալների՝ Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրությունների արդյունքում պատգամավորի մանդատ ստացած 132 թեկնածուներից միայն 32-ն է կին:

Ավելին, 2018 թվականի ընթացքում ՀՀ կառավարությունում բարձր պաշտոններ զբաղեցնող կանանց թիվը ևս ցածր է եղել: 2018 թվականին կին նախարարների թիվը եղել է 2-ը, իսկ 50 փոխնախարարներից միայն 9-ն է իգական սեռի ներկայացուցիչ:

Դեռևս 2017 թվականից շրջանառվում է «Հայաստանի Հանրապետությունում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի նպատակներից է նաև սեռի հատկանիշով պայմանավորված ոչ խտրական մոտեցումների արմատավորում երկրի տնտեսական, սոցիալական և քաղաքական ոլորտներում, կանանց և տղամարդկանց իրավիճակի գնահատում, նրանց կարգավիճակի միջև առկա տարբերությունների վերհանում, քաղաքացիական հասարակության կայացման և երկրի քաղաքական կյանքին կանանց լիարժեք մասնակցության ապահովում: Նախագիծը, սակայն սույն հաղորդման հրապարակման դրությամբ չի ընդունվել:

Այսպես, վերոնշյալ տվյալները վկայում են այն մասին, որ կանայք դեռևս բավարար կերպով ներկայացված չեն բարձր պաշտոններում և հասարակությունում առկա են կարծրատիպեր կանանց՝ որպես որոշում կայացնողների դիտարկման հարցում<sup>520</sup>: Խնդրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սեռային տարբերությունների հաշվազրմամբ պետք է ստեղծվեն նախապայմաններ կանանց ներուժի լիարժեք, արդյունավետ և թիրախային օգտագործման համար: Այսինքն, խնդրի լուծման նպատակով սկզբնական քայլեր կարող են հանդիսանալ հատուկ թիրախային ծրագրերի իրականացմամբ, այն է՝ արհեստական խթանիչների, քվոտաների կամ այլ մեխանիզմների նախատեսում:

*Ուստի, անհրաժեշտ է ձեռնարկել համակարգային քայլեր՝*

*12. հասարակությանն իրազեկել կանանց դերի, կանանց քաղաքական ներգրավվածության և հասարակական կյանքին կանանց մասնակցության կարևորության ընդգծման ուղղությամբ,*

*13. բարձրացնել կանանց քաղաքական և իրավական գիտակցության մակարդակը, նպաստել երիտասարդ կանանց մոտ քաղաքական համակարգի, գործընթացների և արդյունավետ որոշումների ընդունման մեթոդաբանության վերաբերյալ մասնագիտական գիտելիքների և հմտությունների զարգացմանը, երաշխավորել քաղաքական մրցակցության հավասար պայմաններ,*

*14. զանգվածային լրատվության, տարբեր քննարկումների և սեմինարների պարբերական իրականացման միջոցով կանանց իրազեկել իրենց իրավունքների վերաբերյալ:*

<sup>520</sup> Տե՛ս Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄՄԿ-ի կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ (CEDAW/C/ARM/CO/5-6), կետեր 20, 21:



## 5. Առողջության պահպանման իրավունք

Դեռևս համակարգային առումով շարունակվում է չլուծված մնալ կանանց համար առողջապահական ծառայությունների անմատչելիության խնդիրը, որը Մարդու իրավունքների պաշտպանների կողմից բարձրաձայնվել է դեռևս 2015 թվականից:

2018 թվականի ընթացքում Պաշտպանը շարունակել է ստանալ ահազանգեր առ այն, որ հատկապես մարզերում և գյուղական համայնքներում առողջապահական ծառայություններն անմատչելի են: Որպես հետևանք, կանայք հնարավորություն չեն ունենում լիարժեք կերպով հետազոտվել և ստանալ համապատասխան բուժօգնություն:

Բացի այդ, բժշկական ծառայությունների անմատչելիության, բժշկական անձնակազմերի ոչ լիարժեք պատրաստվածության և կարծրատիպային կամ ոչ պատշաճ վերաբերմունքի, վերարտադրողական ծառայություններից օգտվելիս հաշմանդամություն ունեցող կանայք հաճախ ենթարկվում են խտրականության: Ոլորտում 2018 թվականի ընթացքում կատարված աշխատանքների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այս ուղղությունը տարիներ շարունակ որևէ փոփոխության չի ենթարկվել: Այսպես, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2018 թվականին ըստ նախարարության տվյալների՝ առանձնահատուկ քայլեր վերարտադրողական բժշկական ծառայությունները հաշմանդամություն ունեցող կանանց համար մատչելի դարձնելու ուղղությամբ չեն ձեռնարկվել: Իհարկե, ընդհանուր առմամբ առողջապահական ծառայությունների՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնելուն ուղղված քայլերը ևս կարող են որոշակի առումով լուծել վերարտադրողական առողջության համար դիմած հաշմանդամություն ունեցող կանանց որոշակի խնդիրներ, այնուամենայնիվ, առանձնակի քայլերի ձեռնարկման բացակայությունը չի ապահովի խնդիրների համակարգային լուծումներ: Հատկապես խնդրահարույց է առողջապահական տեղեկությունների, առողջապահական օժանդակ նյութերի՝ տեսողական խնդիրներ ունեցող կանանց անմատչելիությունը՝ հանդիսանալով մեծ խոչընդոտ հաշմանդամություն ունեցող անձանց առողջապահական իրավունքի իրականացման համար: Նման տեղեկատվության պատշաճ առկայության համար պահանջվում է ընտանիքի անդամների կամ ծանոթների աջակցությունը, ինչը կարող է խախտել գաղտնիության իրավունքը:

*Դեռևս տարիներ առաջ իրականացված ուսումնասիրությունը վկայում է, որ խտրական վերաբերմունքը հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ սեռական և վերարտադրողական առողջության, այդ թվում՝ հղիության արհեստական ընդհատումների և հետաքրորտային բուժօգնության իրավունքների առումով նույնպես կապված է կարծրատիպերի, ենթադրությունների և համատարած կեղծ համոզմունքների հետ, ըստ որոնց՝ հաշմանդամություն ունեցող անձինք չեն կարող օգտվել իրենց վերարտադրողական իրավունքներից, հատկապես եթե խոսքը մտավոր հաշմանդամություն ունեցող կանանց մասին է<sup>521</sup>:*

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից տարիներ շարունակ քաղաքականություն մշակող մարմին է առաջադրվում հարցադրում առ այն, թե արդյոք ձեռնարկվել են քայլեր՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց հետ շփվելու և վերջիններիս սպասարկելու էթիկայի վերաբերյալ բժշկական հաստատության աշխատակիցների իրազեկվածության բարձրացմանը՝ վերջիններիս վերապատրաստումների ընթացքում առանձին մաս հատկացնելով այդ թեմային: Սակայն յուրաքանչյուր տարի ստացվում է բացասական

<sup>521</sup> Տե՛ս [https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Public%20inquiry%20report\\_arm\\_0.pdf](https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Public%20inquiry%20report_arm_0.pdf), էջ 105, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ)

պատասխան, և պետք է ընդգծել, որ քայլերի ձեռնարկման բացակայության մասին այս տեղեկությունները խնդրահարույց են<sup>522</sup>:

**Հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների իրացման տեսանկյունից հատուկ քայլեր չեն ձեռնարկվում և խնդիրը համակարգային առումով մնում է չլուծված:**

*Ուստի, անհրաժեշտ է ձեռնարկել համակարգային քայլեր՝*

*1. կանանց համար առողջապահական ծառայությունների մատչելիության ապահովման նպատակով,*

*2. բարձրացնել կանանց առողջապահական ծառայությունների վերաբերյալ ծառայությունների մատուցում իրականացնող բուժաշխատողների մասնագիտական գիտելիքները և հմտությունները՝ երաշխավորելով ծառայությունների անխտրական պատշաճ իրականացում,*

*3. զանգվածային լրատվության, տարբեր քննարկումների և սեմինարների պարբերական իրականացման միջոցով կանանց իրազեկել իրենց առողջապահական իրավունքների վերաբերյալ:*

## **6. Աշխատանքային իրավունքներ**

Թեև օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ աշխատանքային իրավահարաբերությունների հարցում կանանց և տղամարդկանց միջև խտրական նորմեր առկա չեն, այնուամենայնիվ, 2018 թվականին շարունակվել է համակարգային առումով չլուծված մնալ աշխատաշուկայում կանանց և տղամարդկանց անհավասարության խնդիրը, որը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրաձայնվում է տարիներ շարունակ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային օրենսդրության հիմնական սկզբունքներից է աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարությունը, այդ թվում՝ անկախ նրանց սեռից: Նույն օրենսգրքի 180-րդ հոդվածով սահմանվում է, որ աշխատանքների որակավորման համակարգի կիրառման դեպքում միևնույն չափանիշները պետք է կիրառվեն ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց նկատմամբ, և այդ համակարգը պետք է մշակված լինի այնպես, որ բացառի սեռային հատկանիշներով ցանկացած խտրականություն: Չնայած առկա օրենսդրական կարգավորումներին՝ փաստացի գոյություն ունի կանանց նկատմամբ ուղղահայաց (կարիերայի աստիճանների ոչ հավասար մատչելիություն) և հորիզոնական (ըստ մասնագիտությունների և հատվածների) խտրականություն: Սա վկայում է այն մասին, որ նախ առկա են որոշակի կարծրատիպեր կանանց աշխատանքային ներգրավվածության հարցում, ինչպես նաև կա կանանց աշխատանքային իրավունքների իրացման հարցում հավելյալ երաշխիքների անհրաժեշտություն:

Խնդիրն այն է, որ կանայք բարդություններ են ունենում թե՛ աշխատանքի ընդունվելիս, թե՛ աշխատանքը երեխայի ծննդյան պարագայում պահպանելիս, թե՛ աշխատավայրում առաջխաղացման տեսանկյունից: Աշխատանքի թափուր տեղերի համար տրվող հայտարարությունների և այդ թափուր հաստիքների համալրման գործընթացի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք շատ հաճախ պարունակում են խտրական դրսևորումներ: Մասնավորապես, հաճախ հանդիպում են աշխատանքի հայտարարություններ, որտեղ աշխատանքի ընդունման հիմնական նախապայմանն է, օրինակ՝ կնոջ տարիքը կամ բարետես արտաքինը: Որոշ դեպքերում խտրականության դրսևորման հետևանքով կնոջն աշխատանքի չեն ընդունում, և նախապատվություն է տրվում ավելի ցածր որակավորում ունեցող տղամարդ դիմորդին (նման խնդիրը հատկապես նկատելի

<sup>522</sup> Տե՛ս սույն հաղորդման «Հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքներ» բաժնում

**է երիտասարդ կանանց պարագայում, ում դեպքում գործատուները վախենում են կնոջ՝ մայրության արձակուրդի գնալու հավանականությունից):**

Աշխատանքի ընդունվելու պարագայում մայրության արձակուրդից վերադառնալու հարցը ևս համակարգային խնդիր է: Նախ՝ կանայք իրենց երեխաների խնամքի կազմակերպման հարցում ունենում են բարդություններ: Մասնավորապես, նախադպրոցական կրթական հաստատությունները երեխաների ընդունելությունը հազվադեպ դեպքերում են կազմակերպում մինչև երեխայի 2-3 տարեկան լրանալը, իսկ աջակցության այլ ծրագրեր առկա չեն: Նշվածի հետևանքով կինը շատ հաճախ կանգնում է մայրանալու կամ աշխատելու ընտրության առջև, ինչը կարող է նաև բացասական ազդեցություն ունենալ ծնելիության ցուցանիշի վրա՝ առաջացնելով ժողովրդագրական խնդիրներ: Ավելին, գաղտնիք չէ, որ նախադպրոցական կրթական հաստատություններում երեխաների նախադպրոցական կրթությունն իրականացվում է մինչև ժամը 17:00-ն, իսկ աշխատանքային ժամերը Հայաստանում մինչև 18:00-ն են: Նշվածը հավելյալ բարդություններ է ստեղծում աշխատող ծնողների, հատկապես՝ աշխատող մայրերի համար: Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ աշխատանքային օրենսգիրքը որևէ արտոնություն չի նախատեսում նման դեպքերի համար:

Դրական է, որ ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի նիստում հաստատվել է մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատանք փնտրող անձանց՝ մինչև երեխայի երկու տարին լրանալն աշխատանքի վերադառնալու դեպքում երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրման ծրագրի իրականացման կարգը: Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատանք փնտրող անձինք, որոնք մինչև երեխայի երկու տարին լրանալը ցանկանում են վերադառնալ աշխատանքի՝ երեխայի խնամքը ծրագրի միջոցով կազմակերպելով, պետք է նախապես հաշվառված լինեն իրենց բնակության վայրի զբաղվածության տարածքային կենտրոններում: Ծրագրում ընդգրկվել ցանկացող անձանց թիվը ՀՀ պետական բյուջեով սահմանված ծրագրերի թիվը գերազանցելու դեպքում (նախատեսված է ծրագիրն իրականացնել 200 շահառուի համար) ծրագրում ընդգրկվելու առաջնահերթություն տրվում է հետևյալ անձանց

1) ում միջին ամսական աշխատավարձը չի գերազանցում Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված՝ Հայաստանի Հանրապետությունում ձևավորված նախորդ տարվա միջին ամսական աշխատավարձի չափը, որը 2017 թվականի նախնական տվյալներով կազմել է 195 074 դրամ կամ

- 2) ընտանեկան նպաստ ստացող ընտանիքի անդամ են կամ
- 3) ունեն մինչև երկու տարեկան երկու և ավելի երեխա կամ
- 4) ունեն երեք և ավելի երեխա կամ
- 5) ունեն հաշմանդամություն ունեցող երեխա:

Նշված պայմանների հավասարության կամ բացակայության դեպքում ծրագրում ընդգրկվելու նախապատվությունը տրվում է տարածքային կենտրոնում առավել երկար ժամկետով հաշվառված անձանց: Խնդիրն այն է սակայն, որ այս ծրագիրը վերաբերում է միայն սահմանափակ թվով շահառուներին, ինչի արդյունքում համակարգային առումով խնդիրը շարունակել է արդիական լինել 2018 թվականին ևս:

Առկա չեն նաև աջակցության ծրագրեր այն կանանց համար (ինչպիսին կարող է լինել, օրինակ՝ վերապատրաստման դասընթացներ), որոնք երեխայի խնամքի արձակուրդից հետո վերադառնում են աշխատավայր և հաճախ մրցունակ չլինելով՝ կորցնում են իրենց աշխատանքը:

Բացի այդ, դեռևս առկա են կնոջը «հարիր» և «հարմար» աշխատատեղերի մասին հանրային կարծրատիպեր: Այսպես, կանանց թվաքանակը հատկապես մեծ է կրթության, առողջապահության, բնակչության սոցիալական ապահովության, առևտրի, մշակող արդյունաբերության, իսկ տղամարդկանցը՝ պետական կառավարման և պաշտպանության, առևտրի, մշակող արդյունաբերության և շինարարության ոլորտներում<sup>523</sup>:

Ավելին, դեռևս 2016 թվականին իրականացված ուսումնասիրությունները վկայում են, որ Հայաստանում կանանց ամսական միջին աշխատավարձը տնտեսության բոլոր հատվածներում զիջում է տղամարդկանց միջին աշխատավարձին, և այդ ձեռքովածքը կազմում է 35.9 % <sup>524</sup>: Ըստ նույն ուսումնասիրության՝ կանանց աշխատավարձի ձեռքովածքը տարբերվում է՝ ըստ տնտեսության ոլորտների: Գյուղատնտեսությունում կանանց միջին աշխատավարձը կազմում է տղամարդկանց աշխատավարձի 83.8 %-ը, կրթությունում՝ 81.3, առողջապահությունում և սոցիալական ծառայությունների ոլորտում՝ 75.1, հանրային կառավարման հատվածում՝ 67.9 և ֆինանսական ու ապահովագրական հատվածում՝ 54.9 %-ը: Նման պրակտիկան բխում է ոչ միայն աշխատաշուկայի կառուցվածքից, այլև առաջին հերթին հասարակությունում կնոջ դերի վերաբերյալ առկա կարծրատիպերից (օրինակ՝ փոքր քաղաքներում և գյուղական համայնքներում ընդունված է կարծել, որ տղամարդը պետք է աշխատի, կինը՝ խնամի երեխաներին և զբաղվի տնտեսությամբ):

Դրա հետ մեկտեղ աշխատանքային իրավունքների և աշխատող-գործատու հարաբերությունների ստուգման և համակարգման համար պատասխանատու պետական իրավասու մարմնի բացակայության պարագայում խնդրի վերհանումն էլ ավելի է բարդանում<sup>525</sup>:

Ավելին, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ փոքր է կանանց ներգրավվածությունը պետական որոշ համակարգերում ևս: Դրանք նաև կարծրատիպերի արդյունք են, քանի որ որոշ մասնագիտություններ չեն համարվում կանանց համար «հարմար»: Այդ աշխատանքներում կանանց ներգրավվածությունը կազմում է միջինում 10 %: Ըստ ՀՀ քննչական կոմիտեի տվյալների՝ 2019 թվականի հունվարի 25-ի դրությամբ ՀՀ քննչական կոմիտեում համալրված է 658 հաստիք, որից իգական սեռի ներկայացուցիչ քննիչների թիվը 57-ն է:

Ի պատասխան այն հարցին, թե ի՞նչ քայլեր են ձեռնարկվել 2018 թվականի ընթացքում համակարգում կանանց ներգրավվածության բարձրացման ուղղությամբ՝ ՀՀ քննչական կոմիտեից ստացվել է պատասխան, որ ՀՀ քննչական կոմիտեի համակարգում ծառայության անցնելու պահանջները սահմանված են «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 17-րդ և 18-րդ հոդվածներով, որոնց համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեում ծառայության կարող է անցնել ՀՀ քննչական կոմիտեի թեկնածուներին ցուցակում ընդգրկված, արդարադատության ակադեմիայում ուսումնառության ծրագիր անցած և որակավորման քննություն հանձնած անձը: Ըստ կոմիտեի՝ նշված օրենքով սահմանված են նաև ուսումնառությունից ազատվելու դեպքերը (եթե անձն ունի դատախազի, դատավորի, քննիչի, հետաքննության մարմնի պետի կամ աշխատակցի պաշտոնում կամ փաստաբանի 3 տարվա մասնագիտական աշխատանքի ստաժ, եթե չի անցել այդ պաշտոնը թողնելուց հետո 5 տարի կամ իրավաբանական գիտությունների դոկտոր է և այլն): Այս պատասխանից կարելի է ենթադրել, որ հատուկ քայլեր ծառայությունում կին քննիչների ներգրավման ուղղությամբ չեն իրականացվել և միայն

<sup>523</sup> Տե՛ս <http://ampop.am/unemployment-in-armenia/#imageclose-2735>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>524</sup>Տե՛ս ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, «Գենդերային ձեռքովածք. կանանց նկատմամբ խտրական դրսևորումների ախտորոշիչ ուսումնասիրություն», 2016 թվական, [http://www.unfpa.am/sites/default/files/2016\\_Gender-Gap-factsheet\\_Arm.pdf](http://www.unfpa.am/sites/default/files/2016_Gender-Gap-factsheet_Arm.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>525</sup> Մանրամասն տե՛ս սույն հաղորդման «Աշխատանքային իրավունքներ» բաժնում:

ներկայացվել են իրավական ակտերից կարգավորումներ: Մինչդեռ, կանանց ցածր ներգրավման խնդիրը կարծրատիպերի արդյունք է և քայլերը պետք է այդ ուղղությամբ իրականացվեն:

2019 թվականի հունվարի դրությամբ ՀՀ դատախազությունում կին դատախազների թիվը կազմում է 39-ը (գործող դատախազների 12%): ՀՀ գլխավոր դատախազությունում կանանց ներգրավվածության պատկերը հետևյալն է 14 կին դատախազ (1-ը՝ ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ, 2-ը՝ ՀՀ գլխավոր դատախազության վարչության պետի տեղակալ, 5-ը՝ ՀՀ գլխավոր դատախազության վարչության ավագ դատախազ և 6-ը՝ ՀՀ գլխավոր դատախազության վարչության դատախազ),

որոնցից՝

արդարադատության առաջին դասի խորհրդական - 3

արդարադատության երկրորդ դասի խորհրդական - 5

արդարադատության երրորդ դասի խորհրդական - 2

երկրորդ դասի խորհրդական - 3

երրորդ դասի խորհրդական - 1:

Երևան քաղաքի և վարչական շրջանների դատախազություններում աշխատում են 12 կին դատախազ (1-ը՝ Երևան քաղաքի դատախազի տեղակալ, 2-ը՝ վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ և 9-ը՝ վարչական շրջանների դատախազության դատախազ),

որոնցից՝

ՀՀ դատախազության մարզային ստորաբաժանումներում ներգրավված են 6 կին դատախազ (2-ը՝ մարզի դատախազի տեղակալ, 4-ը՝ մարզի դատախազության դատախազ), իսկ զինվորական կենտրոնական դատախազությունում և կայազորներում՝ 7 կին դատախազ՝ 3-ը՝ ավագ դատախազ, 4-ը՝ դատախազության դատախազ:

Ըստ ՀՀ գլխավոր դատախազության տվյալների՝ վերջին տարիներին նկատվում է դատախազության համակարգում իգական սեռի դատախազների նշանակումների աճ, մասնավորապես, 2015-2018 թվականների ընթացքում նշանակվել են ընդհանուր թվով ընդամենը 12 կին դատախազ, այսպես՝ 2015 թվականին՝ 2 իգական սեռի դատախազ, 2016 թվականին՝ առհասարակ իգական սեռի ներկայացուցիչների նշանակումներ չեն իրականացվել, 2017 թվականին՝ 3 իգական սեռի դատախազ, 2018 թվականին՝ 7 իգական սեռի դատախազ:

Ավելին, ՀՀ գլխավոր դատախազությունում ևս կանանց ներգրավվածությունը բարձրացնելու ուղղությամբ հատուկ միջոցառումներ չեն իրականացվում:

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության տվյալների՝ 2019 թվականի հունվարի դրությամբ զինված ուժերում սպայական և ենթասպայական կազմերի հաստիքներում հաշվառված է 1893 կին զինծառայող: Շարքային կազմի պայմանագրային զինծառայողների թվաքանակում կանայք կազմում են 10 %, ընդ որում, Երևանում՝ 7.4 %, իսկ մարզերում՝ 2.6%:

Ըստ նշյալ նախարարության՝ զինված ուժերի տարբեր օղակներում կանանց ծառայության ներգրավվածությանը խոչընդոտող հանգամանքներ, որպես այդպիսին, չեն գրանցվել: Հնարավոր բացասական կարծրատիպերը կոտրելու, ինչպես նաև կանանց ներգրավվածությունը խթանելու նպատակով ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետ ՀՀ ՊՆ ՄԻԲԿ ամենամյա համագործակցության ծրագրի շրջանակներում անցկացվել են իրազեկվածության բարձրացման, հավասար հնարավորությունների ապահովման, սեռով պայմանավորված խտրականության կանխարգելման և այլ հարակից թեմաներով միջոցառումներ:

Համակարգում կանանց ներգրավվածության բարձրացման նպատակով 2017 թվականին ՀՀ պաշտպանության նախարարի կողմից հաստատվել է պլան-ժամանակացույց՝ ՀՀ ՊՆ

գործառնաբերում կին զինծառայողներով համալրված ստորաբաժանումների կազմավորման փորձնական ներդրման և ներքին ու պահակային ծառայությունների կատարելագործման աշխատանքների իրականացման համար:

Ընտրվել են թիրախային ստորաբաժանումներ կին զինծառայողներով համալրելու համար: Համաձայն պլան-ժամանակացույցի՝ շահագրգիռ վարչությունների պետերի, տարածքային զինկոմիսարիատների զինկոմիսարների, գործառնաբերումների, գործառնաբերի և ստորաբաժանումների հրամանատարների հետ համատեղ տարվել են աշխատանքներ տվյալ ստորաբաժանումները համալրելու համար կին զինծառայողներ հավաքագրելու ուղղությամբ: Օրինակ՝ ՊՆ N գործառնաբերի դասակը, 2019 թվականի հունվարի դրությամբ ամբողջությամբ համալրված է կին զինծառայողով: 2018 թվականին ՀՀ զինված ուժերում ծառայության են անցել շարքային կազմի պայմանագրային թվով 399 կին զինծառայողներ:

ՀՀ ոստիկանությունում կին ծառայողները կազմում են ՀՀ ոստիկանության ծառայողների ընդամենը 8%-ը, կենտրոնական ապարատում՝ 25%-ը, Երևան քաղաքի վարչությունում՝ 9%-ը, մարզային վարչությունում՝ 6%-ը, գլխավոր խմբի պաշտոններ զբաղեցնող կանայք կազմում են գլխավոր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների 6%-ը, ավագ խմբում կին ծառայողները կազմում են ընդհանուր թվի 10%-ը, միջին խմբի պաշտոններ զբաղեցնող կանայք կազմում են նույն խմբի 13%-ը, կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող կանայք 5%-ն են կազմում, գլխավոր խմբի կոչում ունեցող կանայք կազմում են գլխավոր խմբի կոչում ունեցող ծառայողների 7%-ը, ավագ խմբի կոչում ունեցող կանայք 16%-ը, միջին խմբի կոչումներ ունեցող կանայք՝ 12%-ը, կրտսեր խմբի կոչումներ ունեցող կանայք՝ 5%-ը: Ըստ անհրաժեշտության սեռական բռնության, երեխաների և կանանց ներգրավվածությամբ գործերի քննությանն իգական սեռի ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանների ներգրավման համար իգական սեռի ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանների թիվն, ըստ ՀՀ ոստիկանության տեղեկության, բավարար է: Սակայն 2018 թվականի ընթացքում համակարգում կանանց ներգրավվածության բարձրացման ուղղությամբ, նշվել է, որ ՀՀ ոստիկանության կին ծառայողները, մասնավորապես՝ անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման ստորաբաժանման ղեկավար կազմի բարձրաստիճան սպաները, իրենց ամենօրյա գործունեության ընթացքում, այդ թվում՝ դպրոցներ կատարած այցելությունների շրջանակներում մշտապես անդրադարձել են կանանց ներգրավվածության խնդրի կարևորությանը, լսարանին պարզաբանվել է կանանց դերն ու նշանակությունը ՀՀ ոստիկանության կոնկրետ ստորաբաժանումներում, պաշտոնական առաջընթացի հեռանկարները և այլն:

Այսպես, քանակական տվյալներն առավել ցայտուն են դարձնում կանանց ներգրավվածության ցածր մակարդակի համակարգային այս խնդիրը, որը տարածում ունի բոլոր ոլորտներում և մակարդակներում:

Ավելին, մեկ այլ խնդիր է «Մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2005 թվականի թիվ 2308-Ն որոշումը: Հարցին անդրադարձել է նաև Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման ՄԱԿ-ի կոմիտեն<sup>526</sup>: Այս ցանկում, կարծրատիպերից ելնելով, սահմանվել է աշխատանքների արգելք միայն երեխա խնամող կանանց համար, սակայն երեխայի խնամքով զբաղվող երեխայի հայրը նույնպես պետք է հնարավորություն ունենա օգտվել դրանում առկա երաշխիքներից: Նման ցանկերի առկայությունը խոսում է երեխայի խնամքով զբաղվելու վերաբերյալ հասարակությունում առկա կարծրատիպերի առկայության մասին:

<sup>526</sup> Տե՛ս <https://www.refworld.org/publisher,CEDAW,,ARM,,0.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ)<https://www.refworld.org/publisher,CEDAW,,ARM,583863b34,0.html>, էջ 8, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. խթանել կանանց հնարավորությունները՝ հաշվարկելով վերջիններիս կրթական, տնտեսական, սոցիալական ներուժը և կիրառելիությունն աշխատաշուկայի համապատասխան հատվածներում,

2. մշակել և ներդնել աշխատաշուկայում տղամարդկանց և կանանց միջև մրցակցության ապահովման բաց և արդյունավետ մեխանիզմներ,

3. նախատեսել ծրագրեր մայրության արձակուրդից վերադարձող կանանց՝ աշխատավայրում վերաինտեգրելու ուղղությամբ,

4. նախատեսել մեխանիզմներ երեխաների խնամքը նախադպրոցական ուսումնական հաստատություններում մինչև ծնողի աշխատանքային ժամի ավարտը կազմակերպելու համար,

5. զանգվածային լրատվական միջոցներով նպաստել աշխատաշուկայում կանանց դերի վերաբերյալ գոյություն ունեցող կարծրատիպերի վերացմանը,

6. փոփոխել «Մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2005 թվականի թիվ 2308-Ն որոշումը՝ դրանում առկա կարգավորումները կիրառելի դարձնելով նաև երեխա խնամող տղամարդկանց համար:

## ԳԼՈՒԽ 2. ՀԱՇՄԱՆՂԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Հասարակությունում կարծրատիպերի, օրենսդրական թերի կարգավորումների, ինչպես նաև ֆիզիկական միջավայրի անհարմարությունների հետևանքով հաշմանդամություն ունեցող մարդիկ հաճախ չեն դիտվում որպես իրավունքի ինքնուրույն սուբյեկտ, հասարակության լիիրավ անդամ և առօրյա կյանքում բազմիցս հանդիպում են խոչընդոտների իրենց իրավունքների ինքնուրույն իրացման, սոցիալական ներառման և անկախ կյանք վարելու հարցերում:

2010 թվականին «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի<sup>527</sup> վավերացմամբ պետությունը պարտավոր է ապահովել հաշմանդամություն ունեցող մարդկանց համար մյուսների հետ հավասար հիմունքներով իրենց իրավունքների ինքնուրույն իրացման համար միջավայրի ստեղծմանը: Չնայած այս պարտավորության, այնուամենայնիվ, տարբեր ոլորտներում դեռ նկատվում է թե՛ օրենսդրության ու իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման, թե՛ իրավունքների մասին իրազեկման ու կարծրատիպերը վերացնելու անհրաժեշտություն:

2018 թվականին կարևոր իրադարձություն էր այն, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին վերապահվեց Կոնվենցիայի կիրարկման և հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների պաշտպանության վիճակի վերաբերյալ մշտադիտարկում իրականացնելու լիազորությունը<sup>528</sup>: Այս փոփոխության համար հիմք դարձավ Կոնվենցիայի 33-րդ հոդվածը, որը նախատեսում է այդ կարգավիճակի վերապահումն անկախ մարմնի: Իհարկե, այս գործառույթն իրականացվելու է ոլորտի ՀԿ-ների հետ համագործակցությամբ:

Կարևորելով հաշմանդամություն ունեցող մարդկանց հիմնախնդիրների վերաբերյալ իրազեկվածության հարցը, ինչպես նաև խտրականությունը և խարանք վերացնելու անհրաժեշտությունը՝ Մարդու իրավունքների պաշտպանը և աշխատակազմի ներկայացուցիչները 2018 թվականի ընթացքում աշխատանքային հանդիպումներ են ունեցել պետական մարմինների, զանգվածային լրատվության միջոցների, հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների և միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ: Ընդ որում՝ քննարկումները կազմակերպվել են ոչ միայն Երևանում, այլ նաև ՀՀ մարզերում: Հանդիպումների ժամանակ քննարկվել են հաշմանդամություն ունեցող մարդկանց հիմնախնդիրները և ոլորտում առկա խնդիրների լուծման նպատակով համագործակցության հնարավոր ուղղությունները:

Ավելին, 2018 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է «ՀՀ կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտականությունների կատարման վիճակի վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցը: 2018 թվականին ՀՀ Ազգային ժողովի նախագահի մոտ տեղի է ունեցել «Հաշմանդամություն ունեցող երեխաների խնդիրների մասին» թեմայով քննարկում: Մասնավորապես, խորհրդակցության արդյունքում որոշվել է Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցում բարձրացված խնդիրները դարձնել քննարկման առարկա, մշակել օրենսդրական լուծումների առաջարկներ, կառավարության համապատասխան օղակներում, ինչպես նաև այլ շահառուների հետ քննարկումների արդյունքում հանդես գալ օրենսդրական նախաձեռնություններով՝ Ազգային ժողովում օրենսդրական փոփոխություններ անելու նպատակով: Խորհրդակցությանը մասնակցել են նաև ՀՀ առողջապահության և ՀՀ կրթության և գիտության նախարարները, ՀՀ ԱԺ

<sup>527</sup> Սույն հաղորդման սույն բաժնում այսուհետ՝ Կոնվենցիա

<sup>528</sup> «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, հոդված 2, մաս 4:



առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը, ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (UNICEF), ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի (UNFPA) և Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) ներկայացուցիչներ և փորձագետներ<sup>529</sup>:

Պաշտպանի կողմից հրապարակվել են նաև իրազեկող նյութեր և տեսանյութեր, որոնց նպատակն է բարձրացնել հասարակության իրազեկվածությունը հաշմանդամության մարդու իրավունքների կամ սոցիալական մոդելի վերաբերյալ և տեղեկություններ տրամադրել հաշմանդամություն ունեցող մարդկանց՝ որպես իրավունքի լիիրավ սուբյեկտի վերաբերյալ<sup>530</sup>:

Չնայած վերոնշյալի և ոլորտում իրականացվող քայլերի՝ հաշմանդամություն ունեցող մարդիկ հաճախ են բախվում խտրականության և իրենց իրավունքների իրացման դժվարությունների, որի արդյունքում խախտվում են վերջիններիս կրթության, աշխատանքային, սպորտային և մշակութային կյանքին մասնակցելու, ազատ տեղաշարժի, ընտրելու, առողջության պահպանման և այլ իրավունքներ, որոնք ներկայացվում են սույն բաժնում:

### ***1. Հասարակությունում առկա կարծրատիպեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ***

Տարիներ շարունակ կիրառվող հաշմանդամության բժշկական մոդելի պատճառով հաշմանդամություն ունեցող անձինք չեն դիտվել որպես իրավունքի լիիրավ սուբյեկտներ և չի կարևորվել նրանց անկախ ապրելու իրավունքը: Հանրապետության մի շարք մարզերում Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ իրականացված քննարկումների, ինչպես նաև Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների և վերջիններիս կողմից իրենց իրավունքների ինքնուրույն իրացման վերաբերյալ առկա են բազմաթիվ կարծրատիպեր: Խնդիրն այն է, որ հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների իրացումն առնչվել է բացառապես վերջիններիս օգնություն տրամադրելու (օրինակ՝ նպաստների, բարեգործական օգնության) ձևով: Արդյունքում, հաշմանդամություն ունեցող մարդիկ մեկուսացվել են հասարակությունից և զրկվել իրենց իրավունքներն ինքնուրույն իրացնելու հնարավորությունից:

Մինչդեռ, Կոնվենցիայի 8-րդ հոդվածն ամրագրում է պետությունների պարտավորությունն անհապաղ, արդյունավետ և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել պայքարելու համար հաշմանդամություն ունեցող անձանց առնչվող, նաև սեռային ու տարիքային առանձնահատկություններով պայմանավորված կարծրատիպերի, նախապաշարմունքների և վնասակար ավանդույթների դեմ կյանքի բոլոր բնագավառներում:

Հասարակությունում հաշմանդամություն ունեցող անձանց կարծրատիպերն ու խտրական վերաբերմունքն իր արտահայտումն է ստանում ինչպես կենսագործունեության ամենատարբեր ոլորտներում, այնպես էլ գործածվող տերմինաբանության մեջ:

Կարծրատիպեր առկա են տարբեր իրավասու մարմինների ներկայացուցիչների շրջանում: Այսպես, Պաշտպանին կարծիքի ներկայացված իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաշմանդամություն ունեցող մարդկանց վերաբերող ձևակերպումները խնդրահարույց են վերջիններիս իրավունքների, այդ թվում՝

<sup>529</sup> Տե՛ս <http://www.ombuds.am/media/12365.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>530</sup> Տե՛ս <http://pashtpan.am/media/kuyreri-mijazgayin-or.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

արժանապատվության հարգման տեսանկյունից: Օրինակ՝ նախագծերում շարունակվում են օգտագործվել «հաշմանդամ», «տեսողությունից հաշմանդամ», «տառապում է ծանր հիվանդությամբ» տերմինները, որոնք համարվում են արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունք, որի պատճառով էլ հասարակությունում ձևավորվում են կարծրատիպեր հաշմանդամություն ունեցող մարդկանց նկատմամբ:

Նման ձևակերպումները կիրառվում նաև գործող իրավական ակտերում: Օրինակ՝ «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը մինչ օրս օգտագործում է «հաշմանդամ» տերմինը:

Մի շարք դեպքերում կարծրատիպային մտածելակերպն ուղղակիորեն բացասական ազդեցություն է ունենում հաշմանդամություն ունեցող մարդկանց խնդիրները բարձրաձայնելու հարցում: Օրինակ՝ «Արև երեխաներ» ՀԿ-ի ներկայացուցչի փոխանցմամբ՝ դառնի համախտանիշով մարդիկ և նրանց ծնողներն առօրյայում բախվում են բազմաթիվ խնդիրների ինչպես կրթական, այնպես էլ առողջապահական ոլորտներում, որի հետևանքով վերջիններս խարանի ու խտրականության են ենթարկվում<sup>531</sup>: Մինչդեռ, անհրաժեշտ է գիտակցել, որ դառնի համախտանիշը հիվանդություն չէ, նրանք ուղղակի առանձնահատուկ են: Ուստի, դառնի համախտանիշ ունեցող երեխաներին պետք է սովորեցնել ինքնուրույն կյանք վարելու հմտություններ, գնահատել նրանց ներուժը և բացառել որևէ տեսակի մեկուսացում:

Պաշտպանին հասցեագրված բողոքները վկայում են կարծրատիպերի առկայությունը նաև հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների իրացման ոլորտում, ինչի արդյունքում խախտվում է նրանց կրթություն ստանալու իրավունքը: Այսպես, առկա է խտրականության և երեխաներին խարանի ենթարկելու վտանգ պայմանավորված որոշ հաստատությունների անվանումներով, որի մասին Պաշտպանը դեռևս բարձրաձայնել է 2017 թվականի տարեկան հաղորդմամբ: ՀՀ-ում շարունակում են գործել ուսումնական հաստատություններ, որոնք անվանման մեջ ունեն «մտավոր թերզարգացում» ձևակերպումը: Պատճառը խորհրդային ժամանակներից գործող հաստատությունների անվանումների հետևանքն է և ամրագրված է ՀՀ կառավարության որոշումներում՝ որպես հաստատության առանձին տեսակ<sup>532</sup>: Օրինակ՝ Գյումրու մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 3 հատուկ դպրոցը: Մի շարք դեպքերում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներն, ովքեր չունեն հաշմանդամություն, որոշ ժամանակ հաճախելով նման անվանում ունեցող հաստատություններ, ենթարկվում են խարանի հենց հաստատությունների անվանման պատճառով: Տվյալ հարցն առավել խնդրահարույց է ՀՀ մարզերում:

Խնդրահարույց են նաև այն դեպքերը, երբ որոշ ծնողներ հրաժարվել են իրենց երեխաներին ուղարկել հանրակրթական դպրոցներ կամ իրենց երեխաներին ուղարկել են հատուկ հաստատություններ՝ խարանից վախի պատճառով: Նրանց պնդմամբ, հատկապես

<sup>531</sup>Տե՛ս [http://surbzoravor.am/post/view/arev-erekhaner-hk-n-handipec-mardu-iravunqneri-pashtpanin?fbclid=IwAR2qGrKkDcqb0LKD6gAbaftYo99\\_dTTZx7Ufjo6K\\_5X4IHftMhUJq1Lf9z4](http://surbzoravor.am/post/view/arev-erekhaner-hk-n-handipec-mardu-iravunqneri-pashtpanin?fbclid=IwAR2qGrKkDcqb0LKD6gAbaftYo99_dTTZx7Ufjo6K_5X4IHftMhUJq1Lf9z4)

<sup>532</sup> Մասնավորապես, ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 2179-Ն որոշման 4-րդ կետի «ե» ենթակետի համաձայն՝ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերից է «Մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հատուկ (օժանդակ) հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը: ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետությունում երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերի ցանկը, դրանցում երեխաների տեղավորման չափանիշները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 2179-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» թիվ 381-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետով նշվում է, որ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերից է մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հատուկ (օժանդակ) հանրակրթական ուսումնական հաստատությունը:

շատ են մտավոր կամ սոցիալ-հոգեբանական հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ հասակակիցների կողմից խտրական վերաբերմունքի դեպքերը<sup>533</sup>:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 1-ին հոդվածի 7-րդ մասի իմաստով երեխայի նկատմամբ իրականացվող ցանկացած գործողություն պետք է բխի նրա լավագույն շահերից: Մինչդեռ, տվյալ պարագայումը հասարակությունում կարծրատիպերի պատճառով խաթարվում է երեխայի լավագույն շահերի ապահովումը:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ զարգացած եվրոպական երկրներում<sup>534</sup> երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների ընտրված անվանումները չեզոք են և որևէ կերպ հիմք չեն ստեղծում երեխաներին խտրականության ենթարկելու համար: Ուստի, նմանատիպ անվանումներն ավելի ընդունելի են և երեխայի վրա խարանի ազդեցություն չեն թողնում:

*Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է կազմակերպել համապատասխան մասնագետների (բուժաշխատակիցներ, ուսուցիչներ և այլն) պարտադիր և շարունակական դասընթացներ ՀՀ նոր օրենսդրական կարգավորումների, ինչպես նաև միջազգային չափանիշների վերաբերյալ, որոնք ուղղված կլինեն հաշմանդամություն ունեցող մարդկանց վերաբերյալ կարծրատիպերի վերացմանը:*

## **2. Հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների պաշտպանության իրավական համակարգ**

Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող մարդկանց սոցիալական պաշտպանության հետ կապված հարցերը մինչ օրս կարգավորվում են «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» 1993 թվականին ընդունված ՀՀ օրենքով: Նշված օրենքում ամրագրված մոտեցումները չեն համապատասխանում միջազգային չափանիշներին, քանի որ այն ամբողջական չի ներառում մարդու իրավունքների կամ սոցիալական մոդելների սկզբունքները:

Հաշմանդամություն ունեցող մարդկանց հասարակություն ինտեգրելուն ուղղված քաղաքականությունը և օրենսդրությունը **Կոնվենցիայի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով դեռ** 2013 թվականից մշակվել և բազմիցս շրջանառվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» նոր օրենքի նախագիծը<sup>535</sup>: Նախագծի նպատակն է հաշմանդամություն ունեցող մարդկանց՝ մյուսների հետ համահավասար հիմունքներով ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված, ինչպես նաև միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում գտած սկզբունքներին և նորմերին, միջազգային պայմանագրերին համապատասխան քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ու ազատությունների իրականացման համար բարենպաստ պայմանների, հասարակության կյանքում նրանց հավասար մասնակցության և արդյունավետ սոցիալական ներառման ապահովումը<sup>536</sup>:

Խնդիրներ են առաջացել նաև այդ նախագծի քննարկման փուլում: 2018 թվականի մարտի 28-ին ՀՀ ԱԺ առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից կազմակերպված խորհրդարանական լսումների շրջանակում

<sup>533</sup> Տե՛ս <https://www.hrw.org/hy/news/2017/02/22/300237>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>534</sup> Օրինակ՝ Դանիայում և Նիդեռլանդներում օգտագործվում են «Մնամքի տներ» կամ պարզապես «Տներ» և այլն:

<sup>535</sup> Նախագիծը 2019 թվականի մարտի 30-ի դրությամբ դեռևս չի ընդունվել:

<sup>536</sup> Տե՛ս [http://www.parliament.am/news.php?cat\\_id=2&NewsID=8968&year=2016&month=12&day=15](http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=8968&year=2016&month=12&day=15), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

քննարկվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը<sup>537</sup>: Մինչդեռ, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 165-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջը չի կատարվել, համաձայն որի՝ Ազգային ժողովի, հանձնաժողովների հրապարակային նիստերը, ինչպես նաև խորհրդարանական լսումներն առցանց հեռարձակվում են Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում: Մարդը Կոնվենցիայով սահմանված հաղորդակցության իր նախընտրած բոլոր միջոցներով մյուսների հետ հավասար հիմունքներով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու իրավունք ունի, որը տվյալ պարագայում չի ապահովվել: Տվյալ խնդրի կապակցությամբ բողոք է հասցեագրվել նաև Մարդու իրավունքների պաշտպանին: Պաշտպանի կողմից բողոքի քննարկման և դրա ուսումնասիրման արդյունքում պարզ է դարձել, որ խորհրդարանական լսումների ուղիղ հեռարձակումը չապահովելու համար ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավասու աշխատակիցը ենթարկվել է կարգապահական տույժի:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է հատուկ ընդգծել քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործում հաշմանդամություն ունեցող մարդկանց ներգրավման կարևորությունը և շարունակականությունը, ինչն օրենսդրական գործընթացը դարձնում է լիակատար և ներառական:

Հայաստանը դեռևս չի վավերացրել Կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը, որի հետևանքով հնարավոր չէ անհատական և խմբային բողոքներ հասցեագրել ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեին<sup>538</sup> Կոնվենցիայի դրույթների վերաբերյալ պետության խախտումների մասին: Հարցի վերաբերյալ մտահոգություն է հայտնել նաև Կոմիտեն՝ 2017 թվականի Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում<sup>539</sup>:

Կոնվենցիայի իրականացման վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից ներկայացված հաշվետվության մեջ նշվել է, որ Կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը կվավերացվի առաջիկա տարիներին՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց կողմից իրենց իրավունքների լիակատար իրացման համար անհրաժեշտ հավասար հնարավորությունների և պայմանների էական բարելավումից հետո<sup>540</sup>, սակայն հարկ է արձանագրել, որ մինչ օրս քայլեր չեն ձեռնարկվում արձանագրության վավերացման ուղղությամբ:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. *հրատապ կերպով ընդունել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» նոր օրենքի նախագիծը,*

2. *ապահովել որոշումների կայացմանը հաշմանդամություն ունեցող մարդկանց մասնակցությունը՝ ի թիվս այլնի նաև տեղեկատվությունը և միջավայրը վերջիններիս համար մատչելի դարձնելու միջոցով,*

3. *աշխատանքներ իրականացնել Կոնվենցիայի Կամընտիր արձանագրության վավերացման ուղղությամբ:*

<sup>537</sup> Տե՛ս <http://www.mlsa.am/?p=13911>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>538</sup>Սույն հաղորդման սույն բաժնում այսուհետ՝ Կոմիտե

<sup>539</sup>[http://tbinternet.ohchr.org/\\_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2fC%2fARM%2fCO%2f1&Lang=en](http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2fC%2fARM%2fCO%2f1&Lang=en)

Տե՛ս <sup>540</sup>Կոնվենցիայի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության առաջին զեկույցը (հաշվետու ժամանակաշրջան՝ 2010-2012 թթ.) հաստատելու մասին ՀՀ կառավարության նիստի արձանագրությունից քաղվածք <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=80687>

### 3. Ֆիզիկական միջավայրի մատչելիություն

Ֆիզիկական միջավայրի հաշմանդամություն ունեցող մարդկանց հարմարեցված չլինելու խնդիրը համակարգային առումով լուծում չի ստացել նաև 2018 թվականի ընթացքում: Այս մասին մշտապես բարձրաձայնվել է Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում և հաղորդումներում: Ընդ որում, դեռևս հարմարեցված չեն թե՛ որոշ պետական կառույցներ, թե՛ մասնավոր ծառայություն մատուցող կազմակերպությունների շինություններ (օրինակ՝ սրճարանները, խանութները և ժամանցային ու սպասարկման ոլորտի բազմաթիվ այլ վայրերը): Անհրաժեշտ է հատուկ ընդգծել, որ տուն-ինտերնատներ Պաշտպանի և Պաշտպանի ներկայացուցիչների կողմից կատարված այցերի ժամանակ պարզվել է, որ այստեղ ևս կա հարմարեցումների խնդիր<sup>541</sup>:

Հաշմանդամություն ունեցող մարդկանց համար ֆիզիկական մատչելի միջավայրի ապահովումն առաջանային է նրանց կողմից իրենց իրավունքներից ինքնուրույն օգտվելու տեսանկյունից: Կոնվենցիայի 9-րդ հոդվածի համաձայն՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիակատար մասնակցության հնարավորություն ընձեռելու նպատակով մասնակից պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ, որպեսզի նրանց համար մյուսների հետ հավասար հիմունքներով ապահովեն ֆիզիկական միջավայրի մատչելիությունը: Ընդ որում՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար պետք է ապահովվի կառույցների, ճանապարհների, բացօթյա և փակ հաստատությունների, դպրոցների, բնակելի տարածքների, ինչպես նաև բժշկական հաստատությունների մատչելիությունը<sup>542</sup>: **Անհրաժեշտ է հատկապես ընդգծել, որ մատչելի ֆիզիկական միջավայրն օգտակար է ոչ միայն հաշմանդամություն ունեցող մարդու, այլ բոլորի համար<sup>543</sup>, և այն ենթադրում է ոչ միայն շինությունների մատչելիությունը, այլ նաև մայթերի հարմարեցումը և հետիոտների շարժը սահմանափակող այլ խոչընդոտների վերացումը<sup>544</sup>: Միջավայրը մատչելի պետք է լինի ոչ միայն տեղաշարժման, այլ նաև տեսողական, լսողական, և այլ խնդիրներ ունեցող մարդկանց համար:**

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածն արգելում է բնակավայրերի նախագծումն ու կառուցապատումը, բնակելի շրջանների ձևավորումը, նախագծային լուծումների մշակումը, շենքերի, կառուցվածքների շինարարությունն ու վերակառուցումը, եթե դրանք հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության և օգտագործման համար: «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի համակարգը սահմանում է հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման մատչելիությունն ապահովող և այլ անհրաժեշտ նորմեր, կանոններ, ցուցանիշներ, որոնց կատարումը պարտադիր է քաղաքաշինական գործունեության սուբյեկտների, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմինների համար<sup>545</sup>: Վերջիններս (մասնավորապես՝ համայնքի ղեկավարը<sup>546</sup>) տալիս են քաղաքաշինական գործունեություն իրականացնելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանք<sup>547</sup> (ՃՀԱ), որում նշվում են նաև

<sup>541</sup> Մանրամասն տե՛ս սույն հաղորդման՝ «Տարեցների իրավունքները» բաժնում

<sup>542</sup> Տե՛ս Կոնվենցիա, հոդված 9, կետ 1, ենթակետ ա):

<sup>543</sup> Տե՛ս <http://www.un.org/esa/socdev/enable/disacc.htm>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>544</sup> Տե՛ս <http://www.un.org/esa/socdev/enable/disacc.htm>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>545</sup> Տե՛ս «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 4:

<sup>546</sup> Տե՛ս «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 22.1, կետ 6:

<sup>547</sup> Տե՛ս «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 6:

հաշմանդամություն ունեցող անձանց ու բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության և այլ նորմատիվ ակտերով սահմանված պահանջներ<sup>548</sup>:

Չնայած առկա օրենսդրական պահանջներին՝ ֆիզիկական մատչելիության ապահովման բավարար մեխանիզմեր գործնականում առկա չեն, ինչի պատճառով հաշմանդամություն ունեցող մարդիկ գրկվում են ազատ տեղաշարժի հնարավորությունից: **Խնդիրն այն է, որ մի շարք դեպքերում հարմարեցումները սահմանափակվում են մուտքի և ելքի մոտ թեքահարթակի առկայությամբ, սակայն շենքի ներսում տեղաշարժը և ենթակառուցվածքներից օգտվելը շարունակում է մնալ անհնար հաշմանդամություն ունեցող մարդկանց համար:** Ավելին, մի շարք հասարակական կազմակերպություններ նշում են, որ **հարմարեցումները նախատեսված չեն հաշմանդամության բոլոր տեսակների համար:** Օրինակ՝ տեսողական խնդիրներ ունեցող մարդկանց համար նախատեսված հարմարեցումները հազվադեպ են ապահովվում<sup>549</sup>, որի պատճառով հաշմանդամություն ունեցող մարդիկ ստիպված են լինում դիմել օգնության, ինչը չի ապահովում ինքնուրույն իրավունքներն իրացնելու սկզբունքի իրացումը:

Խնդիրը նաև այն է, որ մի շարք կառույցների շինարարությունն իրականացվել է մինչև համապատասխան շինարարական նորմերի և կանոնների հաստատումը, ինչի արդյունքում բազմաթիվ շինություններ հարմարեցված չեն:

Հաշմանդամություն ունեցող մարդկանց անխոչընդոտ տեղաշարժի հնարավորության սահմանափակումը համակարգային խնդիր է, որի հետևանքով սահմանափակվում է հաշմանդամություն ունեցող մարդկանց կրթություն ստանալու, աշխատանքային գործունեությամբ զբաղվելու, ինչպես նաև առողջության պահպանման, մշակութային կյանքին մասնակցելու և այլ իրավունքների ինքնուրույն իրականացումը:

Ավելին, մի շարք դեպքերում էլ հարմարեցումներն իրականացվում են շինարարական նորմերի խախտմամբ<sup>550</sup> կամ տեղաշարժը սահմանափակվում է թեքահարթակների դիմաց մեքենաների կայանման արդյունքում: Սա նաև վկայում է այն համակարգային խնդրի մասին, որ շատերն իրազեկված չեն թեքահարթակների օգտագործման կարևորության մասին<sup>551</sup>:

Մեկ այլ խնդիր է մայրաքաղաքում, ինչպես նաև մարզերում ստորգետնյա և վերգետնյա անցումների անմատչելիության խնդիրը: Չնայած տարեցտարի աճում է այդպիսի անցումների թիվը, այնուամենայնիվ, հաշմանդամություն ունեցող մարդիկ չեն կարողանում օգտվել դրանցից անհրաժեշտ վերելակների կամ հատուկ հարմարանքների բացակայության պատճառով: Ընդ որում, տվյալ խնդիրը խոչընդոտներ է ստեղծում ոչ միայն հաշմանդամություն ունեցող մարդկանց, այլ նաև տեղաշարժման խնդիրներ ունեցող մարդկանց համար<sup>552</sup>:

2018 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող մարդկանց ակտիվ կենսագործունեության համար ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման համար ձեռնարկվել են որոշ քայլեր: Երևանի քաղաքապետարանի տեղեկությունների համաձայն՝ 2018 թվականին կառուցվել է 207 թեքահարթակ և տեսողական խնդիրներ

<sup>548</sup>Տե՛ս «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 22.1, կետ 2:

<sup>549</sup>Օրինակ՝ տեսողության խնդիրներ ունեցող մարդկանց համար անհրաժեշտ են այնպիսի հարմարություններ, ինչպես օրինակ՝ զոգավոր ծածկույթներով հատվածներ, որը կզգուշացնի մայթի մոտալուտ ավարտի վերաբերյալ, խաչմերուկներում ձայնային ազդանշաններով լուսացույցներ փողոց անցնելու համար և այլն:

<sup>550</sup> Տե՛ս <https://www.tert.am/am/news/2018/06/23/teqahartak/2722536>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>551</sup>Տե՛ս <https://www.panorama.am/am/news/2017/09/19/%D5%83%D5%88-%D5%B0%D5%B8%D6%80%D5%A4%D5%B8%D6%80/1836863>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>552</sup>Տե՛ս <https://www.youtube.com/watch?v=yomjcbOJ88E&fbclid=IwAR2DYdJdb5k4b0VrmM-8IX7iGYdCGhXFDSL44uqbEzUZGT6F30rihD0yHzY>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

ունեցող մարդկանց համար 5 վարչական շրջանների 48 հասցեներում տեղադրվել են դեղին գույնի գոգավոր սալիկներ:

*ՀՀ մարզերում ֆիզիկական միջավայրի մատչելիության հարցն առավել խնդրահարույց է:* Տարբեր մարզերից ստացված տվյալների ուսումնասիրությունը վկայում է, որ կան մարզեր, որտեղ 2018 թվականի ընթացքում հարմարեցումներ չեն իրականացվել: Օրինակ՝ ՀՀ Կոտայքի մարզում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող կառուցապատման օբյեկտների մուտքի և կառույցի ներսում ազատ տեղաշարժի ապահովման համար աշխատանքներ չեն իրականացվել:

Չնայած վերջին տարիներին հաշմանդամություն ունեցող մարդկանց կենսագործունեության համար անարգել միջավայրի ձևավորմանն ուղղված միջոցառումներին՝ իրավիճակը Երևանում, ինչպես նաև մարզերում շարունակում է մնալ անբավարար:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. *հնարավորինս սեղմ ժամկետներում ապահովել հանրային՝ այդ թվում՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության, տեղական ինքնակառավարման ու բոլոր մյուս մարմինների սեփականություն հանդիսացող շինությունների մատչելիությունը հաշմանդամություն ունեցող մարդկանց համար,*

2. *ապահովել շարունակական վերահսկողություն նոր կառուցվող կամ հիմնովին վերանորոգվող քաղաքաշինական օբյեկտների մատչելիության ապահովման նպատակով:*

#### **4. Փոխադրամիջոցների մատչելիություն**

2018 թվականի ընթացքում ՀՀ-ում միջմարզային և քաղաքային տրանսպորտային միջոցներում հաշմանդամություն ունեցող մարդկանց համար անհրաժեշտ պայմանների ապահովման խնդիրը շարունակում է մնալ չլուծված: Խնդիրը տարիներ շարունակ բարձրաձայնվել է Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցներում և տարեկան հաղորդումներում: Փոխադրամիջոցների հարմարեցումը չափազանց կարևոր է, քանի որ այն նպաստում է բոլոր իրավունքների ինքնուրույն իրացմանը և ստեղծում է համապատասխան միջավայր հավասար հիմունքներով ազատություններից օգտվելու համար: Հարցը, հատկապես խնդրահարույց է մարզերում, քանի որ նույնիսկ մարզային մեծ քաղաքներում, ինչպիսիք են Գյումրին և Վանաձորը, չունեն ոչ մի մատչելի տրանսպորտային միջոց, որոնցից կկարողանան օգտվել հաշմանդամություն ունեցող մարդիկ<sup>553</sup>:

Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով Կոնվենցիան, պարտավորություն է ստանձնել հաշմանդամություն ունեցող մարդկանց համար մյուսների հետ հավասար հիմունքներով փոխադրամիջոցների մատչելիության ապահովման նպատակով ձեռնարկել համապատասխան միջոցներ<sup>554</sup>: Ավելին, այս սկզբունքն ամրագրված է նաև ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով և «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով:

Փոխադրամիջոցների մատչելիության ապահովման օրինակ է այն, որ ավտոբուսներն ունենում են վերելակ, իսկ սրահում միշտ կան ազատ տեղեր սայլակով մարդկանց համար՝ համալրված հատուկ ազդանշանով ու բռնակով: Մետրոյում տեսողական հաշմանդամություն ունեցող մարդկանց համար տեղադրվում են վառ գունավորմամբ ռելիեֆային հարթակներ: Կանգառներում տրանսպորտի ժամանակացույցը գրվում է նաև Բրայլյան այբուբենով, իսկ սրահում ամեն կանգառ բարձրաձայն հայտարարվում է:

<sup>553</sup> «Ազաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ

<sup>554</sup>Տե՛ս Կոնվենցիա, հոդված 9, կետ 1

Հարմարություններ պետք է ստեղծված լինեն նաև լսողական խնդիրներ ունեցող մարդկանց համար: Հանրային տրանսպորտում կանգառները պետք է հատուկ տեսատախտակի վրա գրվեն, ինչպես նաև կահավորված լինեն ավտոբուսից իջնելու մասին տեղեկացման ազդանշան<sup>555</sup>: Իսկ հասարակական տրանսպորտի կայանների կողքին հաշմանդամություն ունեցող մարդկանց համար անհրաժեշտ է նախատեսել ծածկած հարթակներ, պետք է տեղակայված լինեն նաև թիկնակով նստարաններ և ազատ տարածություն՝ սայլակների համար: Հաշմանդամություն ունեցող մարդկանց կողմից օգտագործվող հետիոտնուղիների վերնածածկույթը պետք է լինի կոշտ, ամուր՝ բացառելով սայթաքումները<sup>556</sup>:

**Վերոնշյալը վկայում է, որ հարցի լուծման համար անհրաժեշտ են համակարգային լուծումներ, քանի որ մի քանի տրանսպորտային միջոցի հարմարեցումը չի կարող բավարար կերպով ապահովել հավասար հնարավորություններ:**

Ավելին, 2018 թվականի ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ տրանսպորտային միջոցների վարորդները ցուցաբերել են անհարգալից ու արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունք հաշմանդամություն ունեցող մարդկանց նկատմամբ<sup>557</sup>: Մասնավորապես, եղել են դեպքեր, երբ վարորդը հրաժարվել է բացել թեքահարթակը՝ պատճառաբանելով, որ ուշանում է իր ժամից<sup>558</sup>, ինչի արդյունքում հաշմանդամություն ունեցող մարդը հնարավորություն չի ունեցել անգամ անխոչընդոտ օգտվել արդեն իսկ հարմարեցված տրանսպորտային միջոցից:

2018 թվականին շարունակվել է չլուծված մնալ Երևանի մետրոպոլիտենի մատչելիության հարցը: Չնայած նրա, որ մետրոպոլիտենի գետնանցումի մուտքերը կահավորված են թեքահարթակներով, այնուամենայնիվ հաշմանդամություն ունեցող (հենաշարժական համակարգի կամ տեսողության հետ խնդիրներ ունեցող) մարդը չի կարող օգտվել Երևանի մետրոպոլիտենից: Ըստ Երևանի քաղաքապետարանի՝ մետրոպոլիտենի հարմարեցման ուղղությամբ 2018 թվականի ընթացքում միջոցառում չի ձեռնարկվել, քանի որ այն կպահանջի զգալի ֆինանսական ներդրումներ, ինչի հնարավորությունը ներկայում չկա:

Տրանսպորտային միջոցների մատչելիության ապահովման համար իրավասու պետական մարմինների կողմից 2018 թվականին իրականացվել են որոշակի աշխատանքներ: Մասնավորապես, ըստ Երևանի քաղաքապետարանի՝ տեսողական խնդիրներ ունեցող մարդկանց համար քաղաքային հասարակական տրանսպորտից օգտվելու մատչելիության հարմարավետության ապահովման նպատակով 18 ավտոբուսների ուղեսրահներում տեղադրվել են կանգառների անվանումների հայտարարման (հայերեն և անգլերեն լեզուներով) ավտոմատ սարքեր: 2018 թվականին տեղաշարժվելու դժվարություն ունեցող հաշմանդամություն ունեցող կամ այդ մարդկանց

<sup>555</sup>Տե՛ս

<https://www.civilnet.am/news/2018/05/06/%D5%8D%D5%BA%D5%A1%D5%BD%D5%A5%D5%AC%D5%B8%D5%BE-%D5%BF%D6%80%D5%A1%D5%B6%D5%BD%D5%BA%D5%B8%D6%80%D5%BF%D5%AB-%D5%B8%D5%AC%D5%B8%D6%80%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4-%D5%B0%D5%A5%D5%B2%D5%A1%D5%B7%D6%80%D5%BB%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A8/336085>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>556</sup> Տե՛ս <https://fulllife.am/wp-content/uploads/2017/07/DPO-Zekuyc.pdf>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>557</sup>Տե՛ս <https://www.facebook.com/groups/GRIMINALNEWS/permalink/1552236444886970/>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>558</sup>Տե՛ս

<https://www.civilnet.am/news/2018/05/06/%D5%8D%D5%BA%D5%A1%D5%BD%D5%A5%D5%AC%D5%B8%D5%BE-%D5%BF%D6%80%D5%A1%D5%B6%D5%BD%D5%BA%D5%B8%D6%80%D5%BF%D5%AB-%D5%B8%D5%AC%D5%B8%D6%80%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4-%D5%B0%D5%A5%D5%B2%D5%A1%D5%B7%D6%80%D5%BB%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A8/336085>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):



փոխադրող տրանսպորտային միջոց ղեկավարող մարդկանց տրանսպորտային միջոցների համար տրամադրվել է 111 կտրոն<sup>559</sup>:

Ըստ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության տվյալների՝ 2018 թվականից սահմանված չվացուցակով Երևան-Գյումրի-Երևան երթուղով ուղևորափոխադրում է իրականացնում նոր էլեկտրագնացքը, որը հազեցված է լսողության խնդիր ունեցող ուղևորների կարիքներին համապատասխանող լուսատախտակներով և հաշմանդամություն ունեցող և սակավաշարժ՝ սայլակներով տեղափոխվող մարդկանց համար վագոն բարձրացնելու կամ իջեցնելու սարքավորումներով, նրանց և ուղեկցող մարդկանց համար հատուկ նստատեղերով:

Խնդրահարույց է այն, որ 2018 թվականի ընթացքում տրանսպորտային միջոցները հաշմանդամություն ունեցող և սակավաշարժ մարդկանց կարիքներին համապատասխանեցնելու ուղղությամբ առանձին աշխատանքներ չեն կատարվել, ինչպես նաև միջմարզային երթուղիներում չեն ներգրավվել հաշմանդամություն ունեցող և սակավաշարժ մարդկանց նստեցման և իջեցման համար հարմարեցված կամ վերասարքավորված ավտոբուսներ, ինչի մասին են վկայում նաև ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության տվյալները:

Ավելին, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության պարզաբանումներից հետևում է, որ ՀՀ մարզերում հաշմանդամություն ունեցող մարդկանց կարիքների համար հարմարեցված հասարակական տրանսպորտային միջոցներ չկան, և 2018 թվականին վերոնշյալ խնդրի լուծման նպատակով քայլեր չեն ձեռնարկվել: Միայն Տավուշի մարզում հաշմանդամություն ունեցող մարդկանց կարիքների համար հարմարեցվել է 1 ավտոբուս (վերելակի առկայությամբ):

Մեկ այլ խնդիր է նաև այն, որ կանգառները ևս հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող մարդկանց համար: 2018 թվականի ընթացքում ՀՀ մարզերում հասարակական տրանսպորտի կանգառներում տեսողական խնդիր ունեցող կամ կույր մարդկանց համար հատուկ սայլիկների տեղադրման կամ այլ հարմարեցումներ նախատեսելու ուղղությամբ քայլեր չեն ձեռնարկվել: Այդ մասին են վկայում նաև ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության տվյալները:

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանով որոշակի գործողություններ նախատեսված են: Մասնավորապես, միջոցառումների ցանկի 2.2-րդ կետով նախատեսվում է մատչելի տրանսպորտով ապահովում, մասնավորապես՝ միջքաղաքային, ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների մատչելիության ապահովում, ինչպես նաև մայթերի, կանգառների, ավտոկայանատեղերի, ավտոկայանների, ավտոկայարանների հարմարեցում, հատուկ ձայնային ազդանշանների տեղադրում լուսացույցների վրա: Նշյալ գործողությունների համար վերջնաժամկետ է նախատեսված 2021 թվականը: Ավելին, ակնկալվող ցուցանիշների ուսումնասիրությունը նաև վկայում է, որ համակարգն ամբողջովին հարմարեցված չի լինելու: Այսպես, ցուցանիշն է՝ հանրապետություն ներկրվող տրանսպորտային միջոցների առնվազն 30%-ը մատչելի է, կանոնավոր ուղևորափոխադրումներում ներգրավված տրանսպորտային միջոցների առնվազն 25%-ը վերազինվել են հատուկ սարքավորումներով, իսկ մյուս թիրախային ցուցանիշների համար նախատեսված է 50%: Այստեղից ակնհայտ է դառնում, որ մինչև 2021 թվականը Հայաստանում դեռևս հնարավոր չի լինի ապահովել ամբողջական մատչելիություն:

<sup>559</sup>Տե՛ս <https://www.yerevan.am/am/transport-department/>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Ուստի, չնայած իրականացված որոշ քայլերին՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար տրանսպորտի մատչելիության հարցը համակարգային առումով շարունակում է մնալ չլուծված: Այն մեր երկրում առաջնահերթ լուծում պահանջող հարցերից է:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել հաշմանդամություն ունեցող մարդկանց համար մատչելի տրանսպորտային համակարգի ստեղծման ուղղությամբ՝ նախատեսելով՝*

1. *առանձնացված և մանրամասն գործողությունների ծրագիր Երևանում և ՀՀ բոլոր մարզերում տրանսպորտի համակարգի ամբողջական հարմարեցման համար հաշմանդամություն ունեցող մարդկանց համար,*

2. *իրազեկել տրանսպորտային միջոցներով ծառայություն մատուցողներին, այդ թվում՝ վարորդներին, հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների և նրանց հավասար հնարավորությունների վերաբերյալ:*

### **5. Տեղեկությունների և հաղորդակցության մատչելիություն**

Տարիներ շարունակ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրաձայնվում է հաշմանդամություն ունեցող մարդկանց համար տեղեկատվության մատչելիության բացակայության հարցը, որը լուծում չի ստացել նաև 2018 թվականին: Վերոնշյալ խնդիրների մասին մտահոգություն է հայտնել նաև Կոմիտեն<sup>560</sup>: Հաշմանդամություն ունեցող մարդկանց տեղեկություններ ստանալու ազատությունը նպաստում է հաշմանդամություն ունեցող մարդկանց կողմից ինքնուրույն որոշումների կայացմանը, իրենց իրավունքների և հնարավորությունների մասին իրազեկմանը և հասարակություն լիարժեք ինտեգրմանը:

Տեղեկությունների մատչելիությունը ենթադրում է այնպիսի միջոցների առկայություն, որոնք հնարավորություն կտան մարդուն ինքնուրույն և առանց այլ անձի օգնությամբ ստանալ անհրաժեշտ տեղեկություն: Ըստ այդմ, չափազանց կարևոր է, որպեսզի օրինակ՝ գնապիտակները, հայտարարություններն առողջապահական տեղեկատվություն պարունակող բուկլետները, կայքէջերը մատչելի և հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող մարդկանց համար:

Մարդու տեղեկություններ ստանալու իրավունքը նախատեսված է ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով: Երաշխիքներ են նախատեսված նաև Կոնվենցիայի 21-րդ հոդվածով և «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով: Ըստ այդմ, պետությունը պետք է ձեռնարկի անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ կարողանան իրականացնել խոսքի ու կարծիքի ազատության իրավունքը, ինչպես նաև փնտրել, ստանալ և տարածել տեղեկություններ ու գաղափարներ մյուսների հետ հավասար հիմունքներով և հաղորդակցության իրենց նախընտրած բոլոր միջոցներով: Անհրաժեշտ է երաշխավորել հաշմանդամություն ունեցող մարդկանց տեղեկություն ստանալու իրավունքը մատչելի ձևով, ճիշտ ժամանակին և առանց հավելյալ ծախսերի:

Խնդիրը նաև պայմանավորված է օրենսդրական կարգավորման բացերով: Օրինակ՝ «Մպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում հաշմանդամություն ունեցող մարդկանց համար տեղեկությունների մատչելիության վերաբերյալ կարգավորումներ առկա չեն: «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքն ամրագրում է յուրաքանչյուրի՝ մատչելի ձևով իր առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների,

<sup>560</sup>Տե՛ս Կոմիտեի 2017 թվականի Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ:

հետևանքների և բուժման արդյունքների մասին տեղեկություն ստանալու իրավունքը, սակայն դրանում բացակայում են գործուն մեխանիզմներ հենց տեղեկատվական նյութերի մատչելիության վերաբերյալ: 2018 թվականին ՀՀ առողջապահության նախարարության շրջանառել է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով ամրագրվում է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների պարտականությունը՝ պացիենտին բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելուց առաջ, իսկ անգիտակից կամ կյանքին սպառնացող վիճակում գտնվող պացիենտներին գիտակցության գալուց կամ կյանքին սպառնացող վտանգի վերացումից հետո իրազեկել պացիենտի իրավունքների, ներառյալ՝ պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք) և պարտականությունների մասին՝ նրան կամ նրա օրինական ներկայացուցչին տրամադրելով իրազեկման թերթիկ:

Մինչդեռ, սույն դրույթն ինքնին խնդրահարույց է, որի մասին բարձրաձայնել է Մարդու իրավունքների պաշտպանը՝ նշելով, որ այն գործնականում կիրառելու համար անհրաժեշտ է Նախագծով ամրագրել գործուն կարգավորումներ մարդու (պացիենտ) իրավունքների և պարտականությունների մասին իրազեկման թերթիկը մատչելի ձևով տրամադրելու համար: Հակառակ դեպքում կառուցակարգերի բացակայության պարագայում օրենքը գործնականում միատեսակ չի կիրառվի, ինչի արդյունքում հնարավոր չի լինի իրացնել յուրաքանչյուրի, այդ թվում նաև հաշմանդամություն ունեցող մարդկանց տեղեկություններ ստանալու իրավունքը:

Մանրամասն կարգավորումներ նախատեսված չեն նաև «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, որը չի նախատեսել մեխանիզմներ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար տեղեկատվության ազատության իրավունքի լիարժեք իրացումն ապահովելու համար:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 5.1-րդ հոդվածն ամրագրում է, որ հանրային հեռուստատառադիոընկերությունը և ՀՀ-ում գործող այլ մասնավոր հեռուստաընկերություններ, որոնք հեռարձակում են մանկական և (կամ) լրատվական հեռուստահաղորդումներ, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողական խնդիրներ ունեցող անձանց համար տեղեկատվության ստացման մատչելիությունը, ինչպես նաև օրվա եթերաժամում առնվազն մեկական մանկական և լրատվական հեռուստահաղորդում հեռարձակել ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն լուսագրերով: Նշյալ օրենսդրական կարգավորման արդյունավետության գնահատման համար պետության կողմից քայլեր չեն ձեռնարկվել:

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի տրամադրած տեղեկությունները թույլ են տալիս եզրակացնել, որ վիճակագրություն չի վարվում հեռուստաընկերությունների կողմից այս պահանջի կատարման մանրամասների վերաբերյալ: Մասնավորապես, չի ուսումնասիրվել, թե արդյոք Հանրային հեռուստաընկերության և Հայաստանի Հանրապետությունում գործող և մանկական և (կամ) լրատվական հեռուստահաղորդումներ հեռարձակող մասնավոր հեռուստաընկերությունների կողմից իրենց ծրագրերում ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն լուսագրով հեռարձակվող քանի հաղորդում է ցուցադրվում և որ ժամերին:

Ավելին, հանձնաժողովից տեղեկացվել է, որ հանձնաժողովն իրականացնում է օրենքով իրեն վերապահված գործառնություններ և վերահսկում է հեռուստատառադիոընկերությունների գործունեության համապատասխանությունն օրենսդրության և լիցենզիայի պայմաններին, իսկ հանձնաժողովին համապատասխան հաղորդումների, որոնք ուղեկցվում են ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն լուսագրով, հեռարձակման պարբերականության, ժամերի տևողության և քանակի վերաբերյալ առանձին ուսումնասիրություններ

իրականացնելու գործառույթ օրենքով վերապահված չէ և հանձնաժողովը նման ուսումնասիրություններ չի իրականացնում:

Նշված մոտեցումը բնականաբար անընդունելի է՝ հաշվի առնելով այն, որ խնդրո առարկա պահանջը ևս նախատեսված է օրենքով և դրա իրականացումը պետք է վերահսկվի Հանձնաժողովի կողմից: Ավելին, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը նաև իրականացնում է հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկում: Ուստի, օրենսդրական հիմքը մշտադիտարկում իրականացնելու առկա է: Լսողության խնդիրներ ունեցող մարդիկ փաստում են նաև, որ լուրերի թողարկումների ժամանակ տեսապատկերները չեն համապատասխանում ենթագրերի հետ<sup>561</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ուսումնասիրության են ենթարկվել նաև մի շարք կայքէջեր, որոնցում զետեղված տեղեկատվությունն առաջնային են իրավունքի սուբյեկտի համար: Այսպես, 2018 թվականին «Իրավական ակտերի նախագծերի միասնական կայքէջ» «e-draft.am» և Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ՝ «arlis.am» կայքերի մատչելիության ապահովման հարցը դեռևս լուծում չի ստացել, ինչը լուրջ խոչընդոտներ է ստեղծում հաշմանդամություն ունեցող մարդկանց ինքնուրույն որոշումների կայացման, իրենց իրավունքների և հնարավորությունների մասին իրազեկման և սոցիալական ներառման համար: Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկով նախատեսվում է միայն 2019-2020 թվականներին տեսողության և լսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովել պետական մարմինների պաշտոնական էլեկտրոնային կայքէջերի հասանելիություն<sup>562</sup>:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ 2018 թվականին կատարվել են ուսումնասիրություններ, որի արդյունքում նախատեսվում է մշակել մեկ մատչելի կայքէջ, որտեղ ներառված կլինեն անհրաժեշտ տեղեկությունները:

Չնայած նկարագրված որոշակի քայլերի՝ հարցը համակարգային առումով չի լուծվել և բազմաթիվ կայքեր անմատչելի են հաշմանդամություն ունեցող մարդկանց համար: Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարելի է արձանագրել, որ պետությունը դեռևս բավարար չափով չի երաշխավորում հաշմանդամություն ունեցող մարդկանց տեղեկատվության մատչելիության ազատությունը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. իրավական ակտերում համապատասխան փոփոխությունների միջոցով նախատեսել գործուն մեխանիզմներ (օրինակ՝ խանութներում Բրայլյան գրերով կամ մատչելի ձևով տպագրված գնապիտակների առկայության պարտադիր պահանջ, առողջապահական հաստատություններում մատչելի տեղեկատվական նյութերի պարտադիր պահանջ, ինտերնետային կայքերի մատչելիության պարտադիր պահանջ, տեղեկատվության մատչելիության ապահովման համար՝ օրինակ՝*

*- «Մպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում,*

*- «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում,*

*2. «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով ամրագրել հատուկ կարգավորումներ՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար ճիշտ ժամանակին, մատչելի ձևով և առանց հավելյալ ֆինանսական բեռի տեղեկատվության տրամադրումն ապահովելու վերաբերյալ,*

<sup>561</sup> Տե՛ս «Ազգաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ-ի կողմից տրամադրած տեղեկություններ:

<sup>562</sup> Տե՛ս ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի նիստի թիվ 1 արձանագրային որոշում, Հավելված թիվ 2, կետ 2.3.2.

3. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով ամրագրել գործուն կարգավորումներ մարդու (պացիենտ) իրավունքների և պարտականությունների մասին իրազեկման թերթիկը մատչելի ձևով տրամադրելու համար,

4. ուսումնասիրել Հանրային հեռուստաընկերության, Հայաստանի Հանրապետությունում գործող ու մանկական և (կամ) լրատվական հեռուստահաղորդումներ հեռարձակող մասնավոր հեռուստաընկերությունների կողմից իրենց ծրագրերում ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն լուսագրով հեռարձակվող քանի հաղորդում է ցուցադրվում և որ ժամերին՝ օրենքի համապատասխան կարգավորման արդյունավետությունը գնահատելու համար:

### **6. Մասնակցությունը մշակութային կյանքին, հանգստին, ժամանցային ու սպորտային միջոցառումներին**

2018 թվականին համակարգային լուծում չի ստացել Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցներում և տարեկան հաղորդումներում բարձրաձայնված՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց մշակութային հիմնարկների և մարզական կառույցների մատչելիության խնդիրը:

#### *Մշակույթ*

Հաշմանդամություն ունեցող մարդկանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով մշակութային կյանքին մասնակցելու իրավունքն ամրագրված է Կոնվենցիայի 30-րդ հոդվածով: Համապատասխան կարգավորումներ են նախատեսված նաև «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով:

Կոմիտեի 2014 թվականի թիվ 2 Ընդհանուր մեկնաբանությունը նշում է, որ անհրաժեշտ են նաև այնպիսի հարմարեցումներ, ինչպիսիք են պատկերասրահներում՝ ցուցադրվող նկարի նկարագրությունը, ֆիլմերի համար՝ տիտրերը, թատրոնների համար՝ ժեստերի լեզվով թարգմանությունը, մտավոր հաշմանդամություն ունեցող մարդկանց համար՝ այլընտրանքային գրքերը<sup>563</sup>: Մինչդեռ, լսողական, տեսողական կամ այլ տիպի հաշմանդամություն ունեցող մարդկանց համար հարմարեցված ներկայացումներ ու համերգներ գրեթե չեն լինում<sup>564</sup>: Ավելին, մշակութային օբյեկտների անմատչելիությունը խոչընդոտում է, որպեսզի հաշմանդամություն ունեցող մարդիկ մասնակից դառնան մշակութային կյանքին: Մասնավորապես, Հայաստանում գրեթե չեն գործում այնպիսի արվեստի խմբակներ (թատերական, նկարչություն, երգի, պարի և արվեստի այլ խմբակներ), որտեղ ներգրավված կլինեն հաշմանդամություն ունեցող մարդիկ<sup>565</sup>:

<sup>563</sup>Տե՛ս <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G14/033/13/PDF/G1403313.pdf?OpenElement>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>564</sup>Տե՛ս <https://www.civilnet.am/news/2018/02/27/%D4%BC%D5%A1%D5%BE-%D5%AA%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF-%D5%A1%D5%B6%D6%81%D5%AF%D5%A1%D6%81%D5%B6%D5%A5%D5%AC%D5%B8%D6%82-%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%A8/330671>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>565</sup>Տե՛ս <https://www.civilnet.am/news/2018/02/27/%D4%BC%D5%A1%D5%BE-%D5%AA%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF-%D5%A1%D5%B6%D6%81%D5%AF%D5%A1%D6%81%D5%B6%D5%A5%D5%AC%D5%B8%D6%82-%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%A8/330671>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Դրա հետ մեկտեղ դեռ գործում են մշակութային հաստատություններ, որոնք մատչելի չեն հաշմանդամություն ունեցող մարդկանց մուտքի և ելքի, ինչպես նաև նշված շինությունների ներսում նրանց ազատ տեղաշարժի համար: Ընդ որում, հենաշարժողական, ինչպես նաև լսողական և տեսողական խնդիրներ ունեցող մարդկանց համար հատուկ հարմարեցված տարածքներ ընդհանրապես նախատեսված չեն մի շարք կինոթատրոնների, թատրոնների և այլ մշակութային կառույցների դահլիճներում:

Վերոնշյալ խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկվել են որոշակի քայլեր: Ըստ ՀՀ մշակույթի նախարարության՝ խնդիրը (ազատ տեղաշարժ և սանհանգույցներ) լուծված է Հայոց ցեղասպանության և Կոմիտասի թանգարան-ինստիտուտներում, Մ. Սարյանի տուն-թանգարանում, Երևանի Պ. Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտական դպրոցում և 29 մշակութային կազմակերպություններից 7-ը գտնվում են առաջին հարկում:

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2018 թվականի տարեկան ծրագրից բխող ՀՀ մշակույթի նախարարությանը վերապահված՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց ինտեգրումը հասարակություն մշակույթի և սպորտի միջոցով ծրագրերի շրջանակում «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ը Երևանի, Լոռու, Շիրակի և Գեղարքունիքի մարզերի մասնաճյուղերում իրականացրել է գեղագիտական, արհեստագործության ուսուցման ծրագիրը, որի շրջանակում կազմակերպվել է արվեստի և արհեստների անվճար ուսուցում 614 հաշմանդամություն ունեցող երեխաների համար 12 մասնագիտությամբ:

Մինչդեռ, Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2018 թվականի տարեկան ծրագրով նախատեսված որոշ միջոցառումների իրականացման վերաբերյալ ՀՀ մշակույթի նախարարությունը տեղեկություն չի տրամադրել: Օրինակ՝ վերոնշյալ ծրագրով 2018 թվականին նախատեսվում էր մշակութային ծրագրեր իրականացնել թանգարաններում, գրադարաններում, թանգարաններում տեսողության խնդիրներով այցելուների համար մատուցել աուդիոգիդ ծառայություն, լսողության խնդիրներ ունեցող անձանց համար ներդնել սուրդո ծառայություն և այլն: Ակնհայտ է, որ Մշակույթի նախարարությունն այս միջոցառումները չի իրականացրել և չի էլ նշել, թե ինչու հնարավոր չի եղել իրականացնել դրանք:

ՀՀ մշակույթի նախարարի 2017 թվականի հուլիսի 6-ի թիվ 368-Ա հրամանով նախատեսվել են ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության թանգարանների մշտական ցուցադրության այցելության և բացատրության (էքսկուրսիա) տոմսերի գները և արտոնությունները: Մասնավորապես, թանգարանի մշտական ցուցադրության անվճար այցելության արտոնություններ են սահմանվել հաշմանդամություն ունեցող անձանց՝ 1-ին խմբի (ուղեկցողի հետ), հաշմանդամություն ունեցող անձանց՝ 2-րդ և 3-րդ խմբերի (առանց ուղեկցողի) համար՝ աշխատանքային բոլոր օրերին: Մինչդեռ, հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ տարբեր հանրային քննարկումների ժամանակ բազմիցս բարձրաձայնում են, որ արտոնության տրամադրումը չպետք է պայմանավորված լինի մարդու մոտ բացառապես հաշմանդամություն ունենալու փաստով: Այն կարող է պայմանավորված լինել, օրինակ, սոցիալ-տնտեսական վիճակի և հաշմանդամության փաստի համակցությամբ: *Ավելին, առ այսօր շարունակում է չլուծված մնալ հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար նախատեսված արտոնությունների հարցը: Խնդրի վերաբերյալ մտահոգություն է հայտնել նաև Կոմիտեն<sup>566</sup>:*

## Սպորտ

<sup>566</sup>Տե՛ս ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2017 թվականի Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ:

Կոնվենցիայի 30-րդ հոդվածն ամրագրում է, որ մասնակից պետությունն ապահովում է հատուկ սպորտային միջոցառումներին հաշմանդամություն ունեցող մարդկանց մասնակցության հնարավորությունը, ինչպես նաև խրախուսում է անհրաժեշտ ուսուցման, վերապատրաստման և այլ միջոցների ապահովումը՝ մյուսների հետ հավասար հիմունքներով:

Չնայած նշված պահանջի՝ ըստ Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված դիմումների ու բողոքների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացրած տվյալների՝ մարզադպրոցների շենքերում բացակայում են թեքահարթակները, շենքերի ներսում՝ հանդերձարանները, սանհանգույցները, ինչպես նաև հենց մարզադահլիճները հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող մարդկանց համար: Ավելին, շենքերի ներսում ազատ տեղաշարժի համար առկա չեն անհրաժեշտ հարմարանքներ<sup>567</sup>:

Սպորտային այնպիսի կառույցներ, ինչպիսին լողավազաններն են, որոնք հատկապես կարող են առողջարար և օգտակար լինել որոշ տեսակի հաշմանդամություն ունեցող երեխաների համար, ֆիզիկապես մատչելի չեն հաշմանդամություն ունեցող մարդկանց և երեխաների համար, առկա չեն իրենց տարածքներում կամ անհասանելի են որևէ այլ պատճառով: «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ»-ի հայաստանյան ներկայացուցչության տեղեկությունների համաձայն՝ երբեմն ծնողները ստիպված են համայնքի մարզիչներին կրկնակի գին վճարել իրենց հաշմանդամություն ունեցող երեխային լողալ սովորեցնելու համար<sup>568</sup>:

Խնդրի լուծման կապակցությամբ 2018 թվականին ձեռնարկվել են որոշակի քայլեր, օրինակ՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության տեղեկությունների համաձայն՝ 2018 թվականին ավարտվել են Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի մարզադպրոցի շինարարական աշխատանքները, որի արդյունքում հաշմանդամություն ունեցող մարդկանց համար նախատեսվել են թեքահարթակ և սանհանգույցից օգտվելու հնարավորություն: ՀՀ մշակույթի նախարարությանը պետական աջակցություն է տրամադրել «Հայաստանի ազգային պարաօլիմպիկ կոմիտե», «Հայաստանի կույրերի միավորում», «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» կազմակերպություններին:

Չնայած վերոնշյալի՝ սույն բաժնում տեղ գտած տվյալները վկայում են, որ դեռևս համակարգային առումով լուծում չի ստացել մշակութային կյանքին, հանգստին, ժամանցային ու սպորտային միջոցառումներին հաշմանդամություն ունեցող մարդկանց լիարժեք մասնակցության հարցը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեին, ՀՀ մշակույթի, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություններին, ինչպես նաև ՀՀ տեղական կառավարման մարմիններին առաջարկվում է քայլեր ձեռնարկել, անհրաժեշտության դեպքում նախատեսելով նաև ժամանակավոր լուծումներ (թեքահարթակներ կամ այլ անհրաժեշտ հարմարանքներ)՝ մշակութային շենքերը, վայրերը, միջոցառումները, ինչպես նաև մարզադպրոցներն ու սպորտային միջոցառումները հաշմանդամություն ունեցող մարդկանց համար մատչելի դարձնելու ուղղությամբ: Անհրաժեշտ է նաև մատչելի դարձնել ֆիլմերը, ներկայացումները, ցուցահանդեսները՝ ապահովելով դրանց ձայնային կամ տիտրային լուծումները:*

<sup>567</sup>Օրինակ՝ վերելակ և (կամ) ամբարձիչ, տեղաշարժման խնդիրներ ունեցող մարդկանց համար սանհանգույցների և դռների մատչելիություն և այլն:

<sup>568</sup>Տե՛ս <https://www.hrw.org/hy/report/2017/02/22/300330>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

## 7. Կրթության իրավունք

### Նախադպրոցական կրթություն

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների (ՆՈՒՀ) մատչելիության խնդիրը շարունակում է չլուծված մնալ Հայաստանում: Խնդիրը մշտապես բարձրաձայնվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում և հաղորդումներում:

Նախևառաջ, խնդիրն այստեղ շենքային պայմանների անբավարարությունն է, որը հատկապես ընդգծված է որոշ մարզերում: Խնդիրը նաև այն է, որ ակնհայտ քիչ է ներառական նախադպրոցական ուսուցում կազմակերպող հաստատությունների թիվը:

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում է 160 մանկապարտեզ, որից միայն 8-ն է իրականացնում ներառական կրթություն<sup>569</sup>, ինչը բնականաբար խնդրահարույց է և չի կարող բավարար համարվել հաշմանդամություն ունեցող երեխաների ներառական նախադպրոցական կրթության կազմակերպման համար: Խնդիրը հատկապես ընդգծված է որոշ մարզերում: Որոշ մանկապարտեզները հրաժարվում են ընդունել հաշմանդամություն ունեցող երեխաներին՝ հաշվի առնելով այն, որ իրենք պատրաստ չեն իրականացնել այդ երեխաների խնամք ինչպես շենքային պայմանների, այնպես էլ թիմի կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունեցող երեխայի հետ աշխատելու որակավորման պատճառով<sup>570</sup>:

Տեղական ինքնակառավարման մարմինների տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մարզերում հարմարեցված ՆՈՒՀ-երի թիվը ևս բավարար չէ: ՀՀ Կոտայքի մարզում 2018 թվականին գործել է 54 նախադպրոցական ուսումնական հաստատություն, որոնցից միայն 7-ում առկա են արտաքին թեքահարթակներ և միայն Եղվարդ քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատությունն ունի շենքում ազատ տեղաշարժի համար նախատեսված հարմարեցումներ: Իսկ որոշ մարզերում էլ 2018 թվականի ընթացքում նախադպրոցական ուսումնական հաստատություններում հաշմանդամություն ունեցող երեխաների համար մատչելի դարձնելու ուղղությամբ աշխատանքներ չեն իրականացվել (օրինակ՝ ՀՀ Արագածոտնի և Սյունիքի, Վայոց Ձորի մարզեր):

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների՝ 2018 թվականի ՀՀ պետական բյուջեի շրջանակում իրականացվել է «Հաշմանդամ երեխաների ցերեկային խնամքի ծառայությունների մատուցում Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի թիվ 92 ներառական մանկապարտեզում» ծրագիրը, որի արդյունքում այդտեղ ծառայություններ է տրամադրվել միջինը 16 երեխայի: Այս մանկապարտեզում գործում է 3 նախաներառական և 6 ներառական խումբ, որտեղ հաճախում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող թեթև, միջին և ծանր զարգացման խնդիրներով 42 երեխա<sup>571</sup>:

«Կայուն զարգացման նպատակների իրականացման աջակցություն, ջրի և սանիտարական պայմանների առկայությունը, որպես մարդու իրավունք» ծրագրի շրջանակում 2018 թվականի մայիս-հունիս ամիսներին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մոնիթորինգային այցեր են իրականացրել Երևանի և մարզերի ավելի քան 200 ուսումնական հաստատություններ, որոնցից 80-ը՝ նախադպրոցական ուսումնական հաստատություն: Այցերի ընթացքում ուսումնասիրվել է նախադպրոցական, հանրակրթական և երեխաների խնամքի հաստատություններում ջրամատակարարման և սանիտարական ծառայությունների հասանելիությունը, ստուգվել

<sup>569</sup>Տե՛ս <https://www.yerevan.am/am/pre-school-education/>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>570</sup>Տե՛ս <https://www.lragir.am/2018/10/30/391134/>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ), «Կոնտակտ Պլյուս» ՀԿ

<sup>571</sup>Տե՛ս <https://www.yerevan.am/am/news/apahovel-liarzhkek-paymanner-nerarhakan-nakhnakan-krt-owt-yan-hamar-k-aghak-apetn-ayts-elel-e-t-iv-92/>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):



են հաստատություններում գործող սանհանգույցները, ջրի և սանիտարական պայմանները, հատուկ ուշադրություն է դարձվել հաշմանդամություն ունեցող երեխաներին և հատուկ խմբերին ծառայություններ մատուցող հաստատություններին: Մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ նախադպրոցական ուսումնական հաստատություններից միայն 2 սանհանգույց է հարմարեցված եղել հաշմանդամություն ունեցող և սակավաշարժուն խմբերի երեխաների համար<sup>572</sup>:

Խնդիրն այն է, որ **հաշմանդամություն ունեցող և/կամ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի նախադպրոցական ուսումնական հաստատություն ընդգրկման և հաստատությունում ուսուցման կազմակերպման մեխանիզմները որևէ փաստաթղթով կամ իրավական ակտով կարգավորված չեն:**

Դեռևս 2017 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից շրջանառության մեջ է դրվել **նոր խմբագրությամբ «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի նախագիծը**: Սույն օրենքի նախագիծը երաշխավորում է համընդհանուր ներառական կրթության միջոցով նախադպրոցական կրթությունը դարձնել մատչելի և հասանելի քաղաքաբնակ և գյուղաբնակ բոլոր երեխաների համար, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև սոցիալական և տնտեսական պատճառներով խոցելի երեխաների համար: **Նախագծով նախատեսվում են որոշակի երաշխիքներ հաշմանդամություն ունեցող երեխաների համար, օրինակ՝** հաշմանդամություն ունեցող երեխաների՝ նախադպրոցական ուսումնական հաստատություններ ընդունվելու առաջնահերթ իրավունքից օգտվելու հնարավորություն<sup>573</sup>: Սակայն անհրաժեշտ է հատուկ ընդգծել, որ Նախագիծը 2019 թվականի մարտի 30-ի դրությամբ դեռևս չի ընդունվել, ինչը խնդրահարույց է, քանի որ անհրաժեշտ է հրատապ քայլեր ձեռնարկել հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության իրավունքը երաշխավորելու նպատակով:

Որոշ ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ տարբեր են նաև ներառական նախադպրոցական կրթության վերաբերյալ ընկալումները: Մասնավորապես, «Հայաստանում նախադպրոցական կրթության մատչելիության» հետազոտության մեջ նշվում է, որ գյուղական համայնքներում հարցվողների 92.6%-ը նշում է, որ այն մանկապարտեզում, ուր հաճախում է իրենց երեխան, **կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող** երեխաներ ընդգրկված չեն, այդ ցուցանիշը քաղաքային համայնքներում կազմել է 83.7%: Հարցվողների 14.5%-ը պնդում է, որ բացասաբար կվերաբերվեին, եթե իրենց երեխայի խումբ կամ մանկապարտեզ հաճախեին **կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող** կամ հաշմանդամություն ունեցող երեխաներ: Գյուղական համայնքների բնակիչներն ավելի հանդուրժող են ներառական նախադպրոցական կրթության հարցում, քան քաղաքային բնակչությունը: Մանկապարտեզներում **կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող** երեխաների ընդգրկվածության վերաբերյալ դրական ընկալման ամենացածր ցուցանիշն ու չեզոք ընկալման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել են Երևանում: Այն հարցվողները, ում երեխան հաճախում է մանկապարտեզ, որտեղ կան **կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող** երեխաներ, ավելի դրական են տրամադրված նրանց ներառվածության հարցում<sup>574</sup>: Բացի այդ, ուսումնասիրությունները ցույց են տալիս, ծնողները նախաձեռնող չեն իրենց **կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող** երեխաներին նախադպրոցական ուսումնական հաստատություն տանելու հարցում՝

<sup>572</sup>Մանրամասն տե՛ս «Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքի ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցում

<sup>573</sup>Տե՛ս <https://www.e-draft.am/projects/504/justification>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>574</sup>Տե՛ս

[https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/Assessment%20on%20Access%20to%20Pre-school%20Education%20Services\\_ARM.pdf](https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/Assessment%20on%20Access%20to%20Pre-school%20Education%20Services_ARM.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

նախընտրելով հատուկ վերականգնողական կամ զարգացման կենտրոնները, մյուս կողմից՝ նաև նախակրթարանների տնօրենները ցանկություն չունեն ներգրավել **կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող** երեխաներին՝ հիմնականում պատճառաբանելով, որ մանկապարտեզում չկան համապատասխան պարագաներ, մասնագետներ և հատուկ խնամքի պայմաններ<sup>575</sup>:

Ներառական նախադպրոցական կրթությունը լիարժեք մատչելի չէ հաշմանդամություն ունեցող բոլոր երեխաների համար, որի հետևանքով վերջիններս զրկվում են կրթություն ստանալու իրավունքից:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

- 1. Ֆինանսական միջոցներ հատկացնել նախադպրոցական ուսումնական հաստատությունները մատչելի դարձնելու համար (ֆիզիկական մատչելիություն),*
- 2. նախատեսել հաշմանդամություն ունեցող և/կամ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի նախադպրոցական ուսումնական հաստատություն ընդգրկման և հաստատությունում ուսուցման կազմակերպման հստակ մեխանիզմներ,*
- 3. ծնողների, երեխաների, ինչպես նաև մասնագետների շրջանում շարունակել ներառական կրթության վերաբերյալ իրազեկման աշխատանքները:*

### *Հանրակրթություն*

Համակարգային առումով դեռևս լուծված չէ արդյունավետ ներառական կրթության իրականացման խնդիրը: Այս խնդիրների մասին Մարդու իրավունքների պաշտպանը մշտապես բարձրաձայնել է տարեկան զեկույցներով և հաղորդամբ, ինչպես նաև խնդիրների մասին նշում են մի շարք հասարակական և միջազգային կազմակերպություններ և Կոմիտեն<sup>576</sup>:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում տեղաշարժման դժվարություն ունեցող մարդկանց համար բացակայում են վերելակները, դռները դժվար են հրվում, ունեն շեմեր, չկան բռնակներ, բացակայում են հարմար սանհանգույցներ: Շենքերը նաև հարմարեցված չեն տեսողության և լսողության խնդիրներ, մտավոր առանձնահատկություններ և այլ դժվարություններ ունեցող մարդկանց համար (բացակայում են, օրինակ, գունային գծանշումներ և այլն): Առկա է նաև դասագրքերի մատչելիության խնդիրը<sup>577</sup>:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունվել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով նախատեսվել է մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը հանրապետությունում ներդնել համընդհանուր ներառական կրթության համակարգը:

Ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարության տվյալների՝ 2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակում հանրապետությունում գործել է ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով ճանաչված 150 ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոց, համընդհանուր ներառական կրթություն է իրականացվում ՀՀ

<sup>575</sup>Տե՛ս

[https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/Assessment%20on%20Access%20to%20Pre-school%20Education%20Services\\_ARM.pdf](https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/Assessment%20on%20Access%20to%20Pre-school%20Education%20Services_ARM.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>576</sup>Տե՛ս ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեի 2017 թվականի Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, [http://tbinternet.ohchr.org/\\_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=INT%2fCRPD%2fGEC%2f8631&Lang=en](http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=INT%2fCRPD%2fGEC%2f8631&Lang=en), <https://www.hrw.org/hy/report/2017/02/22/300330>

<sup>577</sup>Մանրամասն տե՛ս սույն հաղորդման «Կրթության իրավունք» բաժնում

Մյունիքի (120 դպրոց) Տավուշի (81 դպրոց), Լոռու (151 դպրոց), Արմավիրի (111 դպրոց) մարզերում: Ընդ որում՝ Երևանում ներառական կրթություն է իրականացվում 54 դպրոցում<sup>578</sup>:

Թեև Կոմիտեն ողջունել է անցումը համընդհանուր ներառական կրթություն, այնուամենայնիվ Կոմիտեին մտահոգել է, որ չնայած ներառական կրթության ավելացող միտումերին, հաշմանդամություն ունեցող բազմաթիվ երեխաներ, ովքեր ապրում են խնամքի հաստատություններում և գյուղական շրջաններում, ֆորմալ կրթություն չեն ստանում, կրթական հաստատություններն ու ծրագրերը պետք է համապատասխանեցվեն համընդհանուր դիզայնի պահանջներին, որպեսզի նվազագույնի հասցվեն հաշմանդամություն ունեցող երեխաների հատուկ դպրոցներում կրթության տրամադրումը: Կոմիտեն առաջարկել է շարունակել ջանքեր գործադրել՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին ներառելու ընդհանուր կրթական համակարգում, ընդ որում՝ այդ ընթացքում առանձնակի ուշադրություն դարձնել խնամքի հաստատություններում և գյուղական շրջաններում բնակվող հաշմանդամություն ունեցող երեխաներին<sup>579</sup>:

Հանրակրթական դպրոցներում սովորող հաշմանդամություն ունեցող երեխաները շարունակում են առանձնացվել մյուս երեխաներից: Բազմաթիվ դպրոցներում երեխաներին պիտակավորում են «ներառական երեխաներ» արտահայտությամբ: Թեև իրականացվում են վերապատրաստումներ դպրոցների տնօրենների, ուսուցիչների համար, բայց դեռևս պարզ չէ, թե որքանով են դրանք արդյունավետ, որքանով են ուսուցիչները կարողանում արդյունավետ կիրառել ներառականությունը: Լուրջ անելիքներ կան նաև ուսուցչի օգնականի հաստիքն առավելապես արդյունավետ օգտագործելու ուղղությամբ<sup>580</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ հաշմանդամություն ունեցող երեխաներն, այդ թվում՝ ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցներում, հաճախ չեն ստանում որակյալ կրթություն մյուսների հետ հավասար հիմունքներով: Մասնավորապես, ողջամիտ հարմարեցումների բացակայությունն, այդ թվում՝ շենքերի տարրական ֆիզիկական և տրանսպորտային միջոցների մատչելիությունը, բավարար թվով վերապատրաստված աշխատակիցների՝ երեխաների կրթության նկատմամբ անհատականացված մոտեցման և իրազեկման պակասը խոչընդոտում են հաշմանդամություն ունեցող շատ երեխաների որակյալ կրթություն ստանալուն: Բացի այդ, ներառական դպրոցներում անհրաժեշտ շենքային պայմաններ չկան. հաշմանդամություն ունեցող երեխաների համար հարմարեցումները սահմանափակվում են հիմնականում դպրոցների մուտքի մոտ կառուցված թեքահարթակով: Ավելին, ֆիզիկական մատչելիության բացակայության պատճառով դպրոցներում երբեմն հաշմանդամություն ունեցող երեխաների ուսումը կազմակերպում են առաջին հարկում: Բացի այդ, առկա է նաև ծրագրերի մատչելիության հարցը<sup>581</sup>:

«Կայուն զարգացման նպատակների իրականացման աջակցություն, ջրի և սանիտարական պայմանների առկայությունը՝ որպես մարդու իրավունք» ծրագրի շրջանակում 2018 թվականի մայիս-հունիս ամիսներին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մոնիթորինգային այցեր են իրականացրել Երևանի և մարզերի ավելի քան 200 ուսումնական հաստատություններ, որոնցից 121-ը՝ հանրակրթական ուսումնական հաստատություն: Այցերի ընթացքում ուսումնասիրվել է

<sup>578</sup>Տե՛ս <https://www.yerevan.am/am/education/>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>579</sup>Տե՛ս <http://pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/25916e056fa49cb25bdba4ffde02141f.pdf>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>580</sup>Տե՛ս Հայաստանի Հանրապետության կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցում

<sup>581</sup>Տե՛ս սույն հաղորդման «Կրթության իրավունք» բաժնում

նախադպրոցական, հանրակրթական և երեխաների խնամքի հաստատություններում ջրամատակարարման և սանիտարական ծառայությունների հասանելիությունը, ստուգվել են հաստատություններում գործող սանհանգույցները, ջրի և սանիտարական պայմանները, հատուկ ուշադրություն է դարձվել հաշմանդամություն ունեցող երեխաներին և հատուկ խմբերին ծառայություններ մատուցող հաստատություններին: Մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ հետազոտությանը մասնակցած 121 դպրոցներից միայն 8 դպրոցում է առկա եղել սանհանգույցներ հաշմանդամություն ունեցող և սակավաշարժուն խմբերի երեխաների համար<sup>582</sup>:

Վերոնշյալ խնդիրների լուծման կապակցությամբ ձեռնարկվել են որոշակի քայլեր: ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության 2018 թվականի տվյալների համաձայն՝ Արարատի մարզի ենթակայության 107 հանրակրթական դպրոցներից ներառական կրթություն իրականացնելու իրավունք ունեն 24-ը, որոնցից 21-ն այդ իրավունքը ստացել են 2016 թվականին: Ներառական կրթություն իրականացնող դպրոցներից 9-ում կառուցված են թեքահարթակներ: Մինչդեռ, 2018 թվականի ընթացքում օրինակ՝ ՀՀ Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում ներառական կրթություն իրականացնող դպրոցներում հաշմանդամություն ունեցող մարդկանց մուտքի և դրանցում ազատ տեղաշարժի համար միջոցառումներ չեն իրականացվել:

Ավելին, ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարության՝ 2018 թվականին կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար ձեռք են բերվել Բրայլյան համակարգով գրելու համար տետրեր (2000 հատ):

Չնայած երկրում հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության իրավունքի իրացումն ապահովելու ուղղությամբ իրականացվում են որոշակի քայլեր, այնուամենայնիվ, համակարգային բնույթի մի շարք խնդիրներ շարունակում են մնալ չլուծված:

*Ուստի անհրաժեշտ է, որպեսզի ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի, ինչպես նաև ՀՀ տեղական կառավարման մարմինների կողմից ներառական կրթություն իրականացնող դպրոցներում իրականացվեն շարունակական համակարգային միջոցառումներ՝*

- *դպրոցների ֆիզիկական մատչելիության,*
- *կրթության և ուսումնական ծրագրերի բովանդակային մատչելիության*
- *ուսուցիչների շարունակական վերապատրաստման ապահովման ուղղությամբ:*

#### *Բարձրագույն կրթություն*

Կոնվենցիայի 24-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետություններն ապահովում են հաշմանդամություն ունեցող մարդկանց համար առանց խտրականության ու մյուսների հետ հավասար հիմունքներով մատչելի բարձրագույն կրթությունը: Մինչդեռ, ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող մարդկանց համար բարձրագույն կրթությունը շարունակում է մնալ անմատչելի: Ինչպես հանրակրթական ուսումնական հաստատություններում, ԲՈՒՀ-երում ևս մատչելիությունը սահմանափակվում է մուտքի թեքահարթակի և վերելակի առկայությամբ: Խնդիրը ոչ միայն Խորհրդային միության տարիներին կառուցված շենքերը և հարմարեցումները կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների սակավությունն է այլ նաև՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց ոչ բավարար ներգրավվածությունն իրենց վերաբերող խնդիրների լուծման գործընթացում և հիմնախնդրի վերաբերյալ իրազեկվածության պակասը:

«Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագրի» կրթության ոլորտին վերաբերող միջոցառումների շրջանակում 2018

<sup>582</sup>Մանրամասն տե՛ս «Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքի ապահովման վերաբերյալ» արտահերթ գեկույցում

թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարության միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում 2018-2019 ուսումնական տարում ընդունելության մրցույթով և պահուստային տեղերի հաշվին անվճար համակարգ են ընդունվել 1-ին և 2-րդ խմբի, ինչպես նաև մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամ 80 ուսանողներ: 2018-2019 ուսումնական տարում բակալավրի կրթական ծրագրով ՀՀ բուհեր են ընդունվել հաշմանդամություն ունեցող 45 ուսանողներ, որոնցից 31-ի ուսման վարձն օրենքով սահմանված կարգով փոխհատուցվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին<sup>583</sup>:

Հարկ է նկատել, որ «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների» համալիր ծրագրով նախատեսվում է մինչև 2021 թվականը բարձրագույն, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ապահովել հաշմանդամություն ունեցող մարդկանց համար ուսուցման մատչելի պայմաններ: Ծրագրի շրջանակում, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը մշակում է Հայաստանում ներառական բարձրագույն կրթության ներդրման գործողությունների ծրագիրը: Հայաստանի ամերիկյան համալսարանի կողմից ձեռք է բերվել տպագրական սարք, որով հնարավոր է գրքեր տպել Բրայլյան տառատեսակով: Ծրագրի շրջանակում նախատեսվում է նաև այլ սարքավորումների ձեռքբերում:

Մինչդեռ, հաշմանդամություն ունեցող ուսանողները դժգոհում են, որ իրենց բարձրագույն կրթության իրավունքն իրացնելիս հանդիպում են բազմաթիվ խոչընդոտների: Մասնավորապես, հաստատություններում առկա է ուսումնական նյութերի, ինչպես նաև ֆիզիկական մատչելիության խնդիր: Դասախոսները հաճախ պարզապես գնահատական են նշանակում՝ խուսափելով քննություն անցկացնելուց և ժամանակ տրամադրելուց<sup>584</sup>: Ոլորտի փորձագետի կարծիքով Հայաստանի բարձրագույն կրթության ամենամեծ խնդիրներից մեկն այն է, որ բուհերի (դասախոսների) և ուսանողների միջև կա լուր համաձայնություն հետևյալի շուրջ. մենք ձեզ նշանակում ենք դրական գնահատականներ, իսկ դուք չեք խոսում մեր դասավանդման որակի մասին<sup>585</sup>:

Դեռևս 2014 թվականից Մարդու իրավունքների պաշտպանն իր տարեկան զեկույցներում և հաղորդմամբ բարձրաձայնում է հաշմանդամություն ունեցող մարդկանց՝ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ ընդունվելու և սովորելու հնարավորությունից զրկված լինելու խնդիրը: Մասնավորապես, ՀՀ կառավարության որոշմամբ, որով կարգավորվում է ՀՀ պետական և ոչ պետական ԲՈՒՀ-եր ընդունելության գործընթացը, նախատեսվում է, որ ինստիտուտի մասնագիտական առարկաների քննությունները ներբուհական քննություններ են և անցկացվում են տվյալ մասնագիտության առանձնահատկություններին և ծրագրերի պահանջներին համապատասխան<sup>586</sup>: ԲՈՒՀ-ի ընդունման կարգից, սակայն բխում է, որ անկախ ընտրած մասնագիտությունից՝ բոլոր դիմորդները պարտավոր են հանձնել «Ընդհանուր ֆիզիկական պատրաստություն» առարկան<sup>587</sup>, ինչպես նաև ներկայացնել բժշկական գննության եզրակացություն<sup>588</sup>: Անտեսվում են հաշմանդամություն ունեցող մարդկանց առանձնահատուկ կարիքները, որի հետևանքով հենաշարժողական խնդիրներ ունեցող

<sup>583</sup>ՀՀ կրթության և գիտության նախարարության տվյալներ

<sup>584</sup>Տե՛ս <https://www.azatutyun.am/a/29035412.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>585</sup>Տե՛ս <https://168.am/2018/03/02/915038.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>586</sup>Տե՛ս ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 597-Ն որոշում:

<sup>587</sup>Ներառում է վազք, եռացատկ, ձգումներ և այլն:

<sup>588</sup>Տե՛ս «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտության ընդունելության քննության ծրագիրը և գնահատման չափանիշները «Ընդհանուր ֆիզիկական պատրաստություն» առարկայից հաստատվել են ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից 2009 թվականին, <http://www.asipc.am/index.php?lng=am&p=page53>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

մարդիկ գրկվում են տվյալ ԲՈՒՀ-ում կրթություն ստանալու հնարավորությունից՝ վերոնշյալ առարկայից քննություն հանձնելու հնարավորություն չունենալու պատճառով:

ՀՀ կրթության և գիտության նախարարության տվյալների համաձայն՝ 2018 թվականի ընթացքում Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում հաշմանդամություն ունեցող մարդկանց լիարժեք կրթությունն ապահովելու նպատակով ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում չի հատկացվել: Ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարության տվյալների՝ ներկայում Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում սովորում են հաշմանդամություն ունեցող 5 ուսանողներ: Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի կողմից իրականացվում են աշխատանքներ՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց կրթությունը բուհում կազմակերպելու ուղղությամբ:

Չնայած նրան, որ 2018 թվականին իրականացվել են որոշ գործողություններ, այնուամենայնիվ, կրթության իրավունքի լիարժեք իրագործմանը խոչընդոտող թե՛ իրավական, թե՛ գործնական խնդիրների լուծման ուղղությամբ անհրաժեշտ է կատարել համակարգային անհետաձգելի բարեփոխումներ:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝*

*1. ՀՀ կրթության և գիտության նախարարությանը, ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեին, ինչպես նաև ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ապահովել ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ֆիզիկական միջավայրի և կրթական ծրագրերի մատչելիությունը,*

*2. նախատեսել համապատասխան ֆինանսական միջոցներ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում հաշմանդամություն ունեցող մարդկանց կրթությունը կազմակերպելու համար:*

## **8. Առողջապահական ծառայությունների մատչելիություն**

Ըստ Կոնվենցիայի 4-րդ և 25-րդ հոդվածների՝ պետությունները պետք է ապահովեն և օժանդակեն հաշմանդամություն ունեցող մարդկանց՝ մարդու իրավունքների, այդ թվում՝ առողջության պահպանման իրավունքի լիակատար իրականացումն առանց հաշմանդամության պատճառով որևէ խտրականության: Չնայած նշված պահանջին՝ 2018 թվականի ընթացքում ևս հաշմանդամություն ունեցող մարդիկ առողջապահական ծառայություններից օգտվելիս բախվել են բազմաթիվ խոչընդոտների, որի մասին տարիներ շարունակ բարձրաձայնում են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանները: Մասնավորապես, խնդիրն այն է, որ բժշկական հաստատությունների աշխատակիցները հաշմանդամություն ունեցող մարդկանց հետ աշխատելու վերաբերյալ չունեն բավարար մասնագիտական պատրաստվածություն և իրազեկվածության բավարար մակարդակ, իսկ առողջապահական ծառայություններն ու շենքերը շարունակում են մնալ անմատչելի հաշմանդամություն ունեցող շատ մարդկանց համար:

Խնդիրն առավել նկատելի է մարզերում: ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2018 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող մարդկանց համար առողջապահական ծառայությունները մատչելի դարձնելու ուղղությամբ համապատասխան աշխատանքներ չեն իրականացվել ՀՀ Շիրակի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում:

Խնդիրների լուծման ուղղությամբ որոշ քայլեր են ձեռնարկվել: Ըստ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության Կոտայքի մարզում 2018 թվականի ընթացքում 6 բժշկական հաստատություններում կառուցվել են թեքահարթակներ և հարմարեցվել են հաշմանդամություն ունեցող մարդկանց համար, իսկ Գեղարքունիքի

մարզում՝ 3 թեքահարթակ, որից 1-ում նաև վերելակ: Ըստ ՀՀ առողջապահության նախարարության՝ 2018 թվականին շահագործման է հանձնվել թվով 3 բժշկական հաստատություն, որոնք նախագծանախահաշվային փաստաթղթերին համապատասխան հարմարեցված են հաշմանդամություն ունեցող մարդկանց մատչելի մուտքի, ելքի, հաստատություններում ազատ տեղաշարժի հնարավորություններով, ինչպես նաև առկա են համապատասխան սանհանգույցներ:

Հաստատության համապատասխան ծառայություններից օգտվելու համար նաև լսողության խնդիրներ ունեցող մարդկանց անհրաժեշտ են ժեստերի լեզվով թարգմանչի ծառայություններ, իսկ տեսողական խնդիրներ ունեցող մարդկանց համար համապատասխան տեղեկատվական նյութեր (բրայլյան համակարգով, խոշոր տառատեսակով կամ աուդիոգրքերով): Մինչդեռ, վերը նշվածի ուղղությամբ 2018 թվականին ՀՀ առողջապահության նախարարության կողմից միջոցառումներ չեն իրականացվել:

Ելնելով վերոգրյալից՝ պարզ է դառնում, որ անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ համակարգային խնդիրների լուծման ուղղությամբ, որպեսզի հաշմանդամություն ունեցող մարդիկ հնարավորություն ունենան լիարժեք իրացնել Կոնվենցիայով և ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված առողջության պահպանման իրավունքը:

*Ուստի, անհրաժեշտ է՝*

1. ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ապահովել հաշմանդամություն ունեցող մարդկանց համար առողջության պահպանման իրավունքի լիակատար իրականացումը, այդ թվում՝ ապահովելով բժշկական ծառայությունների և բուժտեխնիկայի մատչելիությունը վերջիններիս համար,

2. ՀՀ առողջապահության նախարարության կողմից բուժանձնակազմի համար իրականացնել շարունակական վերապատրաստումներ՝ հաշվի առնելով հաշմանդամության մարդու իրավունքների սկզբունքի վրա հիմնված մոդելը,

3. ՀՀ առողջապահության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի և ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ապահովել բուժհաստատությունների մատչելիությունը:

## **9. Աշխատանք և զբաղվածություն**

2018 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող մարդկանց աշխատանքի ապահովման հարցը շարունակել է մնալ արդիական: Խնդիրը համակարգային է, քանզի այն իրականացվող զբաղվածության խթանմանն ուղղված ոչ բավարար պետական ծրագրերի, միջավայրային արգելքների և հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող մարդկանց վերաբերյալ կարծրատիպերի առկայության արդյունք է:

Ըստ այդմ՝ «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» № 483-Ն որոշմամբ նախատեսվում է 2017-2019 թվականների ընթացքում ևս պարբերաբար գործատուին տրամադրել պետական աջակցություն զբաղվածության կարգավորման պետական ծրագրերով աշխատաշուկայում անմրցունակ և հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման դեպքում: Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների՝ 2018 թվականին «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում» ծրագրում ընդգրկվել է աշխատաշուկայում անմրցունակ 831 մարդ, որից 29 հաշմանդամություն ունեցող մարդն ընդունվել է աշխատանքի:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների համաձայն՝ 2018 թվականի տարեսկզբից զբաղվածության պետական գործակալության աջակցությամբ աշխատանքի է տեղավորվել 12000 աշխատանք փնտրող, որից 234-ը՝ հաշմանդամություն ունեցող մարդ: Զբաղվածության պետական ծրագրի շրջանակում աշխատանքի է ընդունվել 62 հաշմանդամություն ունեցող մարդ:

Հաշվի առնելով Կոնվենցիայի պահանջները<sup>589</sup> և հաշմանդամություն ունեցող մարդկանց զբաղվածության հարցը լուծելու անհրաժեշտությունը՝ 2016 թվականի հունվարի 1-ից պետական մարմինների համար, որոնք ունեն 100-ից ավել աշխատող, գործում էր հաշմանդամություն ունեցող մարդկանց համար աշխատանքի տեղավորման համար պարտադիր ապահովման քվոտայի պարտադիր կատարման պահանջ<sup>590</sup>, որը ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 453-Ն որոշմամբ ժամանակավոր կասեցվել է մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ հաշմանդամություն ունեցող և տարիքային կենսաթոշակի իրավունք տվող՝ տարիքը չլրացած մարդկանց աշխատանքի տեղավորման համար աշխատատեղերի պարտադիր ապահովման նորմատիվի (քվոտա) համակարգի փոփոխության ուղղությամբ մշակվել է «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որը սակայն 2019 թվականի մարտի 29-ի դրությամբ չի ընդունվել:

Ոլորտում առկա է նաև մեկ այլ համակարգային խնդիր, որի հետևանքով հաշմանդամություն ունեցող մի շարք մարդիկ հնարավորություն չեն ստանում իրականացնել հանրային ծառայություն: Այսպես, 2018 թվականին շրջանառության մեջ է դրվել «Հանրային ծառայության պաշտոնը զբաղեցնելու դեպքում լիազորությունների իրականացմանը, ինչպես նաև ուսումնական հաստատություններում մանկավարժական կամ վարչական գործունեությանը խոչընդոտող հիվանդությունների ցանկը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 1801-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որն ընդունվել է 2019 թվականի փետրվարի 15-ին: Որոշմամբ հաստատվել է հանրային ծառայության պաշտոնը զբաղեցնելու դեպքում լիազորությունների իրականացմանը, ինչպես նաև ուսումնական հաստատություններում մանկավարժական կամ վարչական գործունեությանը խոչընդոտող հիվանդությունների ցանկը: Նշյալ հիվանդությունների ցանկի սահմանումը հաշմանդամության հիմքով խտրականություն է:

Մեկ այլ խնդիր է նաև հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների աշխատանքային իրավունքների պաշտպանությունը: Պաշտպանին հասցեագրված մի շարք բողոքներով ծնողները վկայակոչել են այն փաստը, որ ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ որևէ երաշխիք (օրինակ՝ Դաունի համախտանիշով երեխայի խնամքով զբաղվելու համար հավելյալ ազատ ժամանակ) նախատեսված չէ հաշմանդամություն ունեցող երեխա խնամող ծնողների համար: Այս իրավիճակը բարդեցնում է երեխայի խնամքի կազմակերպման գործընթացը, որի հետևանքով ծնողները մի շարք դեպքերում ստիպված են լինում հրաժարվել իրենց աշխատանքից:

Չնայած ձեռնարկված վերոնշյալ քայլերին, հաշմանդամություն ունեցող մարդկանց աշխատանքային իրավունքների պաշտպանության և հավասար հնարավորությունների հարցը համակարգային առումով մնում է չլուծված:

*Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է՝*

<sup>589</sup>Տե՛ս Կոնվենցիա, հոդված 27, կետ 1, ենթակետ «ե»:

<sup>590</sup>Տե՛ս «Զբաղվածության մասին» ՀՀ օրենք, հոդված 20, ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1308-Ն որոշում



1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից քայլեր ձեռնարկել հաշմանդամություն ունեցող մարդկանց աշխատանքի, զբաղվածության ապահովման համար արդյունավետ ծրագրերի մշակման և ներդրման ուղղությամբ,

2. հնարավորինս սեղմ ժամկետում վերանայել քվտավորման համակարգը և ներդնել գործուն համակարգ հաշմանդամություն ունեցող մարդկանց աշխատանքային իրավունքների իրացման տեսանկյունից,

3. փոփոխել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը՝ վերացնելով հանրային ծառայությանը խոչընդոտող հիվանդությունների ցանկը,

4. ՀՀ աշխատանքային օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ նախատեսելով երաշխիքներ հաշմանդամություն ունեցող երեխայի խնամք իրականացնող ծնողների համար:

## **10. Հաշմանդամություն ունեցող երեխաների՝ ընտանեկան միջավայրում ապրելու իրավունք**

Հաշմանդամություն ունեցող երեխաների խնամքն ընտանեկան կամ ընտանեկանին մոտ միջավայրում կազմակերպելու, ինչպես նաև նշված երեխաների որդեգրման պրակտիկայի ներդրման և խթանման հարցը շարունակում է համակարգային առումով չլուծված մնալ: Խնդիրը տարիներ շարունակ բարձրաձայնվել է Մարդու իրավունքների պաշտպանի կողմից:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների՝ 2018 թվականի դրությամբ մանկատներում խնամվել է շուրջ 600 երեխա, որից ճնշող մեծամասնությունը՝ 450-ը, մասնագիտացված մանկատներում: Վիճակագրական այս տվյալները վկայում են, որ հատկապես հաշմանդամություն ունեցող երեխաների՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացումն է վտանգված: Ավելին, մանկատներում գտնվող և հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը և տոկոսաբաժինն աճում է պայմանավորված ընտանեկան օժանդակության պակասով և ընտանիքահեն և համայնքահեն խնամքի այլընտրանքային տարբերակների անբավարարությամբ, որի մասին իր մտահոգությունն է հայտնել ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն<sup>591</sup>:

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան ամրագրում է յուրաքանչյուր երեխայի՝ ընտանեկան միջավայրում ապրելու իրավունքը<sup>592</sup>: Իրավունքն ունիվերսալ է, ուստի նաև ընտանեկան միջավայրում ապրելու իրավունք ունեն հաշմանդամություն ունեցող երեխաները: Վերջիններս պետք է գտնվեն հատուկ և մշտական ուշադրության ներքո՝ առանցքում ունենալով ընտանիքում ապրելու և մեծանալու երեխայի կարևորագույն իրավունքը:

Խնդրի լուծման ուղղությամբ 2018 թվականին ձեռնարկվել են որոշակի քայլեր: Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ին ընդունված Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի հիմնական գերակայություններից է՝ «Հաշմանդամություն ունեցող երեխաների ներառումը հասարակություն», որի ուղղությամբ իրականացվում են հետևյալ միջոցառումները.

<sup>591</sup>Տե՛ս <http://pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/25916e056fa49cb25bdba4ffde02141f.pdf> , (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>592</sup>«Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույց», 64/142 բանաձև, ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից (A/RES/64/142\*), կետ 14:

- Բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատություններում խնամվող երեխաների կարիքների համապարփակ գնահատում և առաջարկությունների ներկայացում,

- Հաշմանդամություն ունեցող երեխաներին ներառական ծառայությունների տրամադրում նախադպրոցական հաստատություններում,

- Հաշմանդամություն ունեցող երեխաներին աջակցություն տրամադրելուն ուղղված միջոցառումների իրականացումը:

«Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 483-Ն որոշմամբ նախատեսվել է 2018 թվականին ընդլայնել հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրող համայնքային կենտրոնների ցանկը: Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների՝ 2018 թվականի ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվել նոր նախաձեռնություն, համաձայն որի՝ 2019 թվականի ՀՀ պետական բյուջեի «Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն ծախսային ծրագրում» որպես նոր նախաձեռնություն ներառվել է «Համայնքահեն ծառայություններ հաշմանդամություն ունեցող երեխաների համար» միջոցառումը՝ Արմավիրում:

Սակայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների համաձայն՝ հաշմանդամություն ունեցող երեխաների դեինստիտուցիոնալացման ուղղությամբ առաջիկա տարիների ընթացքում դեռևս չի նախատեսվում միջոցառումների ձեռնարկում՝ հաշվի առնելով այն, որ երկրում բավարար չեն հաշմանդամություն ունեցող երեխաներին ուղղված ծառայությունները:

Շարունակում է խնդրահարույց մնալ ՀՀ քաղաքացիների կողմից հաշմանդամություն ունեցող երեխաների որդեգրման ցածր թիվը: Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների՝ 2018 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում որդեգրվել է շուրջ 43 երեխա: Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից որդեգրվել է 18 երեխա, որից 6-ը՝ առողջական խնդիրներով, իսկ օտարերկրյա քաղաքացիների կողմից 25-ը՝ բոլորն էլ առողջական խնդիրներով: Խնդիրն աջակցության ծրագրերի բացակայությունն է և հաշմանդամություն ունեցող մարդկանց վերաբերյալ առկա կարծրատիպերը:

*Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է՝*

1. *ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ շարունակել մշակել ծրագրեր հաշմանդամություն ունեցող երեխաների՝ ընտանեկան միջավայրում ապրելու իրավունքի ապահովման, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների որդեգրման կամ խնամատար ընտանիքներ տեղափոխվելու նպատակով,*

2. *ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ ինստիտուցիոնալացումը կանխելու նպատակով հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների համար ստեղծել արդյունավետ համայնքահեն ծառայություններ:*

### **11. Մասնագիտացված հատուկ մանկատների հաշմանդամություն ունեցող սաների համար համապատասխան կացարանների և խնամքի հաստատությունների բացակայությունը**

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից դեռևս 2017 թվականից բարձրացվել է երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում 18 տարեկանը լրացած մարդկանց խնամքի իրականացման հարցը: Դեռևս 2017 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի և Պաշտպանի ներկայացուցիչների կողմից իրականացված մշտադիտարկման այցերի ժամանակ պարզվել է, որ Կապանի թիվ 3 հատուկ դպրոցում

խնամվում է 20-30 տարեկան 15 մարդ, որոնք նախկինում տեղափոխվել են Նուբարաշենի հատուկ դպրոցից ՀՀ կրթության և գիտության նախարարության և մարզպետարանի թույլտվությամբ: Խնդիրն առաջացել է այն պատճառով, որ ուսումն ավարտելուց հետո նրանք չունեին բնակվելու վայր: Պաշտպանի կողմից խնդիրը բարձրացվելուց հետո 2018 թվականի ընթացքում հաստատությունում խնամվող 18 տարին լրացած 15 մարդկանցից 8-ը տեղավորվել են «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի Առինջ գյուղում գտնվող խմբային տանը:

Բացի այդ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տեղեկատվության համաձայն՝ 2017 թվականին մի քանի մանկատներում (Խարբերդի մանկատուն, Մարի Իզմիրյանի անվան մանկատուն, Վանաձորի մանկատուն) խնամվում էին 18 տարեկանը լրացած շուրջ 140 մարդ:

2018 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի կողմից կատարված մշտադիտարկման այցերի ժամանակ պարզվել է, որ խնդիրը համակարգային առումով չի լուծվել նաև 2018 թվականին: Պարզվել է, որ հանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիրում 149 խնամվողներից 107-ը մինչև 30 տարեկանը լրացած մարդիկ են: Կապանի թիվ 3 հատուկ դպրոցում խնամվում է 7 չափահաս մարդ, Խարբերդի մասնագիտացված մանկատանը՝ 124, Մարի Իզմիրյանի անվան մանկատանը՝ 12, Վանաձորի մանկատանը՝ 3 չափահաս մարդ:

Հատկանշական է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնել է, որ մանկատանը խնամվող 18 տարին լրացած սաների վերաբերյալ չունի որևէ տեղեկություն:

Խնդիրն այն է, որ բացի այն, որ այդ մարդիկ չունեն բնակության այլ վայր, վերջիններս չունեն նաև պատրաստվածություն ինքնուրույն կյանք վարելու համար: «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մի շարք երաշխիքներ, որոնցից է նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի տեղավորումը, բնակարանի իրավունքի ապահովումը:

Ստացվում է, որ պետության կողմից սահմանված են երաշխիքներ ինչպես հաստատություններում բնակվող, այնպես էլ հաստատություններից դուրս եկած առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների պաշտպանության նպատակով: Մակայն հաստատություններում բնակվող 18 տարին լրացած մարդկանց մեծ թիվը վկայում է, որ բավարար քայլեր չեն ձեռնարկվում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների իրացման ապահովման ուղղությամբ:

Այս խնդրի մասին իր եզրափակիչ դիտարկումներում նշել է ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեն<sup>593</sup>: Մասնավորապես, նշյալ կոմիտեն իր մտահոգությունն է հայտնել, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ շարունակում են մնալ հաստատություններում նույնիսկ այն ժամանակ, երբ հաստատությունում խնամվելու իրենց տարիքը լրացել է, և որ պետությունը բավարար աջակցություն չի ցուցաբերում հաստատությունների շրջանավարտներին: Հիշյալ կոմիտեն առաջարկել է, որ պետությունն առավելագույն աջակցություն ցուցաբերի հաստատությունների շրջանավարտներին կրթություն ստանալու, աշխատանք ունենալու հարցերում և տրամադրի պատշաճ բնակելի տարածք:

Ըստ Աշխատանքի և սոցիալական նախարարության պաշտոնական տեղեկատվության՝ սոցիալական կացարան ստանալու համար հերթագրված են մանկական խնամակալական կազմակերպությունների 220 շրջանավարտներ (2003-2013 թվականներ) և որևէ տեղեկատվություն չի տրամադրել 2013 թվականից հետո մանկատներն ավարտած

<sup>593</sup>Տե՛ս <https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf> , (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

մարդկանց մասին: Ստացվում է, որ նախարարությունը չի պատրաստվում որևէ աջակցություն ցուցաբերել վերջիններիս, ինչպես նաև պարզաբանել է, որ տեղեկատվություն չունի, թե 2018 թվականի ընթացքում մանկատան քանի շրջանավարտ է ապահովվել ժամանակավոր կացարանով:

Անհրաժեշտ է նշել, որ դեռևս 2003 թվականին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 983-Ն որոշումը: Հետագայում, 2013 թվականին ընդունվել է ՀՀ կառավարության թիվ 894-Ն որոշումը, որով ուժը կորցրած է ճանաչվել թիվ 983-Ն որոշումը: Ըստ այդ որոշման՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 23-ի թիվ 983-Ն որոշման համաձայն բնակարանային ապահովության համար հաշվառված առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին դասվող անձինք հերթով տեղափոխվում են բնակելի տարածության կարիք ունեցող անձանց հերթացուցակ՝ սույն որոշման թիվ 2 հավելվածի 27-29-րդ կետերով սահմանված կարգով՝ համայնքի ավագանու որոշման ընդունման ամսաթվին համապատասխան: Իսկ արդեն 2015 թվականին ՀՀ կառավարության թիվ 1069-Ն որոշումը ուժը կորցրած է ճանաչվել նաև 2013 թվականին ընդունված ՀՀ կառավարության թիվ 894-Ն որոշում: Թիվ 1069-Ն որոշումը ամրագրվել է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 1-ի թիվ 894-Ն որոշման համաձայն բնակելի տարածության կարիք ունեցող անձանց հերթացուցակում ներառված անձինք (ընտանիքները) հերթով տեղափոխվում են սույն որոշման թիվ 2 հավելվածով նախատեսված՝ բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող անձանց (ընտանիքների) հերթացուցակ: Ստացվում է, որ 2013 թվականից հետո որևէ հերթագրում չի իրականացվել և բնակարանային ապահովության հարցն անգամ այս փուլում է մնացել բաց:

Ինչ վերաբերում է 2018 թվականի ընթացքում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից առանց կացարանի մնացած մանկատների շրջանավարտներին ժամանակավոր կացարանով ապահովելու ուղղությամբ իրականացված քայլերին, (մասնավորապես այն շրջանավարտներին, ովքեր չափահաս դառնալուց հետո շարունակում են մնալ անչափահասների համար նախատեսված պետական հաստատությունում), ապա Նախարարությունն այս հարցի կապակցությամբ ևս տեղեկություն չունի:

Պարզ է դառնում, որ խնդիրը համակարգային առումով լուծված չէ:

*Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք առանձնացնել այլընտրանքային խնամքի հաստատություններ և բնակելի տարածքներ՝ մանկատան շրջանավարտներին տրամադրելու համար, ներդնել համայնքային ծառայություններ՝ հաշվի առնելով նրանց կարիքներն ու հասարակություն ինտեգրվելու անհրաժեշտությունը:*

## **12. Քաղաքական իրավունքներ**

2018 թվականին Երևան քաղաքում, ինչպես նաև ՀՀ մարզերում հաշմանդամություն ունեցող քաղաքացիներն ընտրական իրավունքն իրացնելիս բախվել են լուրջ խոչընդոտների: 2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայացած Ազգային ժողովի արտահերթ ընտրություններին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կենտրոնական և մարզային ստորաբաժանումների, ինչպես նաև ստորաբաժանում չունեցող մարզեր գործուղված աշխատանքային խմբերի թեժ-գիծ հեռախոսահամարներին ստացվել է ընտրական գործընթացին վերաբերող 89 ահազանգ, որից 22 ահազանգ վերաբերել է տեղամասային կենտրոններ ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող (այդ թվում՝ տուն-ինտերնատում բնակվող, բժշկական կենտրոնում բուժվող, անկողնային

հիվանդ, ինքնուրույն տեղաշարժվելու խնդիր ունեցող) մարդկանց ընտրական իրավունքի իրացմանը, իսկ 3-ը՝ ընտրատեղամասերի մատչելիությանը և կահավորմանը<sup>594</sup>:

Միննույն ժամանակ, սեպտեմբերի 23-ին՝ Երևանի ավագանու ընտրության օրը, հաշմանդամություն ունեցող մարդկանց ընտրական իրավունքի իրացման ապահովումը ևս խնդիր է եղել: Մասնավորապես, Պաշտպանի աշխատակազմի թեժ գծին ստացվել է ընտրական գործընթացին վերաբերող 46 ահազանգ, որից 12 ահազանգ վերաբերել է հաշմանդամություն ունեցող մարդկանց ընտրական իրավունքի ապահովմանը, այդ թվում՝ ընտրատեղամասերի անմատչելիությանը<sup>595</sup>:

Նախևառաջ, խնդիրն այն է, որ ՀՀ ընտրական օրենսգրքում բացակայում են ընտրական իրավունքի իրական ապահովման համար գործուն կառուցակարգեր: Մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգրքի 17-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները սահմանափակ ֆիզիկական հնարավորություններ ունեցող<sup>596</sup> ընտրողների ընտրական իրավունքի իրականացման մատչելիությունն ապահովելու համար տեղամասային կենտրոններում ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ: Օրենսգրքի 65-րդ հոդվածի 8-րդ մասն ընդհանրական անդրադարձ է կատարում քննարկվող հարցին՝ նշելով, որ քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների համար քվեարկությունը մատչելի դարձնելու նպատակով ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարտավոր է սահմանել լրացուցիչ հնարավորություններ՝ ապահովելով քվեարկողի կամքի ազատ արտահայտման հնարավորությունն ու քվեարկության գաղտնիությունը: Վերոնշյալ կարգավորումները բավարար հստակ չեն և չեն նախանշում այն քայլերը, որոնք պետք է և կարող են ձեռնարկել:

Խնդիրը համակարգային է, քանի որ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար մատչելի ֆիզիկական միջավայրի ապահովումն էլ է պահանջում համակարգային լուծումներ: Այսպես, խնդրի լուծման կապակցությամբ 2011 թվականին «Քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների համար քվեարկությունը մատչելի դարձնելու նպատակով լրացուցիչ հնարավորություններ սահմանելու մասին» ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 30-ի թիվ 19-Ն որոշմամբ՝ տեսողության պատճառով քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող քաղաքացիների համար քվեարկությունը մատչելի դարձնելու նպատակով սահմանվել է հատուկ ընթացակարգ: Ավելին, հաշվի առնելով, որ տեղամասային կենտրոնների տեղակայման շենքերի մեծ մասը հարմարեցված չեն շարժասայլակներով տեղաշարժվելու համար՝ շարժասայլակով տեղաշարժվող ընտրողների համար քվեարկությունը մատչելի դարձնելու նպատակով վերոնշյալ կարգով սահմանվում է, որ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, տեղեկանալով, որ տեղամասային կենտրոնի տեղակայման շենքի մոտ է գտնվում շարժասայլակով տեղաշարժվող ընտրող, տեղամասային կենտրոնում հայտարարում է այդ մասին, մոտենում է ընտրողին և նրան բացատրում որոշման համապատասխան քվեարկությանը մասնակցելու կարգը<sup>597</sup>: Մինչդեռ, վերոնշյալ դրույթների ձևակերպումը թույլ է տալիս եզրակացնել, որ նշված մարդկանց աջակցություն է տրամադրվում միայն տեղամասային կենտրոններում, այնինչ ընտրական իրավունքի իրական երաշխավորման համար նրանց աջակցություն է հարկավոր տրամադրել նաև տեղամասային կենտրոններ հասնելու համար:

<sup>594</sup>Տե՛ս <http://pashtpan.am/media/8656.html>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>595</sup>Տե՛ս [http://pashtpan.am/media/ampopich-haghordum\\_pashtpan.html](http://pashtpan.am/media/ampopich-haghordum_pashtpan.html), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>596</sup>ՀՀ ընտրական օրենսգրքում կիրառվող ձևակերպում:

<sup>597</sup>Տե՛ս <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=69693>

2018 թվականին տեղի ունեցած ընտրություններին հաշմանդամություն ունեցող մարդկանց ընտրական իրավունքի խախտումներ են արձանագրել նաև ոլորտի հասարակական կազմակերպությունները:

Այսպես, 2018 թվականի *դեկտեմբերին* անցկացված խորհրդարանական ընտրությունների ընթացքում «Ընտրություններ բոլորի համար» ծրագրի շրջանակում «Ազաթ» հասարակական կազմակերպության կողմից արձանագրված հիմնական խախտումները վերաբերել են ընտրատեղամասերի անմատչելիությանը: Դիտարկված ընտրատեղամասերի 6%-ը մուտքի թեքահարթակի կարիք չի ունեցել, սակայն անվասայլակով տեղաշարժվող մարդիկ իրենց ընտրական իրավունքն իրացնելիս բախվել են դժվարության շենքերի ներսում, որոնց 10%-ում քվեարկության սենյակը տեղակայված է եղել երկրորդ հարկում կամ նկուղային մասում և վերելակներ չեն եղել: Դիտորդները նաև նշել են սանհանգույցի անմատչելիության խնդիրը: Ավելին, ընտրատեղամասերի մեծ մասում չեն եղել խոշորացույցեր՝ նախատեսված տեսողության խնդիրներ ունեցող մարդկանց համար, իսկ որոշ ընտրատեղամասերում ոչ բավարար լուսավորության պատճառով վերջիններս դժվարացել են ինքնուրույն քվեարկել: Մինևույն ժամանակ, մի շարք ընտրատեղամասերում քվեախցիկները տեղադրված են եղել պատին շատ մոտ, որի պատճառով անվասայլակով տեղաշարժվող մարդը չէր կարողանա ինքնուրույն քվեարկել<sup>598</sup>:

Բացի այդ, հարկ է նշել, որ հաշմանդամություն ունեցող մարդկանց ընտրական իրավունքի իրացումն ապահովելու նպատակով, բացի ընտրատեղամասերում ողջամիտ տարածքի ապահովումից, պետք է ձեռնարկվեն այլ միջոցներ ևս՝ ընտրական իրավունքի ֆիզիկական, տեղեկատվական և հաղորդակցությունների մատչելիությունն ապահովելու համար: Բացի այդ, ոլորտի հասարակական կազմակերպությունները նշում են նաև, որ պետք է լուծում տրվի կուսակցությունների գրասենյակների մատչելիության<sup>599</sup>, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող մարդկանց համար ընտրական հանձնաժողովներում ընդգրկվելու մեխանիզմների հարցին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել, որ պետք է գործադրվեն բոլոր ջանքերն ընտրատեղամասերի մատչելիությունն ապահովելու ու հաշմանդամություն ունեցող ընտրողների իրավունքի իրականացման համար բոլորի հետ հավասար հնարավորություններ ստեղծելու ուղղությամբ:

*Ուստի, առաջարկվում է՝*

1. քայլեր ձեռնարկել հաշմանդամություն ունեցող մարդկանց քաղաքական կյանքին մասնակից դարձնելու, այդ թվում՝ ընտրելու իրավունքի լիարժեք իրացման ուղղությամբ, ներառյալ տեղամասային կենտրոններ հասնելու, կենտրոններում ազատորեն տեղաշարժվելու և տեղեկատվություն ստանալու, ինչպես նաև այլ օրենսդրական կարգավորումների սահմանման միջոցով,

2. ՀՀ ընտրական օրենսգրքով և հարակից իրավական ակտերով կարգավորել հաշմանդամություն ունեցող մարդկանց ընտրական հանձնաժողովներում ընդգրկվելու մեխանիզմների հարցը:

<sup>598</sup>Տե՛ս

<http://agatengo.org/%D5%A1%D5%B4%D6%83%D5%B8%D6%83%D5%BE%D5%A5%D6%81%D5%AB%D5%B6-%D5%A8%D5%B6%D5%BF%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80-%D5%A2%D5%B8%D5%AC%D5%B8%D6%80%D5%AB-%D5%B0/?lang=hy&fbclid=IwAR1qtBljRq9-dqegRaz9mwr2Z8KIXsHwApMHDaDcHH7TXfkZ39G2DCU55jk>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>599</sup>Տե՛ս <https://www.aravot.am/2018/07/13/970228/>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

### 13. Հաշմանդամություն ունեցող կանայք

Հաշմանդամություն ունեցող կանայք ենթարկվում են կրկնակի խտրականության, որի մասին Մարդու իրավունքների պաշտպանը բարձրաձայնում է դեռևս 2015 թվականից: Հաշմանդամություն ունեցող կանանց խնդիրների վերաբերյալ մտահոգություն է հայտնել նաև Կոմիտեն<sup>600</sup>:

Հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների խնդիրները պետք է ենթարկվեն հատուկ ուսումնասիրության, և ըստ նրանց հատուկ կարիքների՝ պետք է իրականացվեն առանձնահատուկ քայլեր վերջիններիս իրավունքների իրացման հարցում: Կոնվենցիան վավերացրած մասնակից պետությունները պարտավորվում են միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու մարդու բոլոր իրավունքներից և հիմնարար ազատություններից նրանց լիակատար և հավասար օգտվելը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հաշմանդամություն ունեցող կանայք ենթարկվում են հատկապես խտրականության վերարտադրողական առողջության իրավունքներն իրացնելիս: Վերարտադրողական ծառայությունների անմատչելիության պատճառով հաշմանդամություն ունեցող կանայք հնարավորություն չեն ունենում լիարժեքորեն և ինքնուրույն իրացնել իրենց իրավունքները<sup>601</sup>:

Կոմիտեն արձանագրում է հաշմանդամություն ունեցող կանանց վերաբերյալ հատուկ անդրադարձի բացակայությունը, հաշմանդամությանը և կանանց առնչվող ազգային՝ օրենսդրությունում և քաղաքականություններում հաշմանդամություն՝ հատկապես՝ հոգեբանասոցիալական և (կամ) մտավոր, ունեցող կանանց համար հիմնական ծառայությունների մատչելիության և ողջամիտ հարմարեցումների բացակայությունը, հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկներին գենդերային հիմքով բռնությունից, մասնավորապես՝ տանը և հաստատություններում, պաշտպանող օրենսդրության և համապատասխան կարգավորումների բացակայությամբ, ինչպես նաև գոհերի համար ապաստարանների և համապատասխան ծառայությունների բացակայությամբ<sup>602</sup>:

Հաշմանդամություն ունեցող կանայք աշխատանքի ընդունվելիս հանդիպում են բազմաթիվ դժվարությունների: Մասնավորապես, վերջիններս չեն ընդունվում աշխատանքի գուտ հաշմանդամության հիմքով, քանի որ հիմնականում սպասարկման ոլորտներում գործատուները չեն ցանկանում աշխատանքի ընդունել անձի, ով ունի ֆիզիկական կամ արտաքին տեսքի հետ կապված խնդիր<sup>603</sup>:

2018 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող կանանց համար շարունակում են անհասանելի մնալ նաև վերարտադրողական ծառայությունները<sup>604</sup>: Խնդիրը ոչ միայն

<sup>600</sup>Տե՛ս Կոմիտեի 2017 թվականի Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ:

<sup>601</sup>Նշված խնդիրների մասին մանրամասն ներկայացված է ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի «Մեռական և վերարտադրողական առողջության ծառայությունների հզորացում» ծրագրի և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ համագործակցությամբ իրականացված «Հայաստանում սեռական և վերարտադրողական առողջության իրավունքների իրացման վերաբերյալ հանրային հետազոտության» (Հետազոտություն) շրջանակում

<sup>602</sup>Տե՛ս

[http://tbinternet.ohchr.org/\\_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2fC%2fARM%2fCO%2f1&Lang=en](http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2fC%2fARM%2fCO%2f1&Lang=en), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>603</sup> «Ազաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ-ի կողմից տրամադրած տեղեկություններ:

<sup>604</sup>Նշված խնդիրների մասին մանրամասն ներկայացված է ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի «Մեռական և վերարտադրողական առողջության ծառայությունների հզորացում» ծրագրի և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ համագործակցությամբ իրականացված «Հայաստանում սեռական և վերարտադրողական առողջության իրավունքների իրացման վերաբերյալ հանրային հետազոտության» (Հետազոտություն) շրջանակում:

ֆիզիկական միջավայրի և տեղեկատվական նյութերի անմատչելիությունն է, այլ նաև բուժաշխատողների իրազեկման պակասը հաշմանդամություն ունեցող կանանց վերարտադրողական առողջության իրավունքի իրացման վերաբերյալ:

Շատ հաճախ հաշմանդամություն ունեցող կանայք վերարտադրողական ծառայություններից օգտվում են իրենց հարազատների, իսկ երբեմն՝ անձանոթ մարդկանց օգնությամբ: Մինչդեռ, «Վերարտադրողական առողջության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան՝ յուրաքանչյուր ոք ունի կենսական անհրաժեշտության սեռական և վերարտադրողական իրավունքներ, այն է՝ ստանալ բժշկական խորհրդատվություն և ծառայություններ սեռական և վերարտադրողական առողջության հարցերի շուրջ՝ մեկուսի ու գաղտնի պայմաններում:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն նշել է, որ կանանց սեռական և վերարտադրողական իրավունքի պաշտպանության համար անհրաժեշտ է, որ «բոլոր առողջապահական ծառայությունները [...] համապատասխանեն կանանց, ներառյալ ինքնուրույնության, անձնական կյանքի, գաղտնիության, իրազեկ համաձայնության և ընտրության իրավունքներին»<sup>605</sup>: Անհրաժեշտ պայմանների բացակայության պարագայում հաշմանդամություն ունեցող կանայք չեն կարողանում ինքնուրույն, առանց որևէ մեկի օժանդակության օգտվել օրենքով ամրագրված իրավունքից:

ՀՀ առողջապահության նախարարության տվյալների համաձայն՝ 2018 թվականի ընթացքում վերարտադրողական բժշկական ծառայությունները հաշմանդամություն ունեցող կանանց համար մատչելի դարձնելու նպատակով առանձնահատուկ միջոցառումներ չեն իրականացվել: Ավելին, 2016 թվականին ընդունված «Վերարտադրողական առողջության բարելավման ռազմավարությանը և 2016-2020 թվականների գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության նիստի արձանագրության քաղվածքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ որևէ միջոցառում նախատեսված չէ հաշմանդամություն ունեցող կանանց վերարտադրողական առողջության բարելավման ուղղությամբ:

*Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է՝*

1. *ապահովել հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների համար կրթության, աշխատանքի, առողջապահական և այլ հիմնարար իրավունքների իրականացումը, այդ թվում՝ օրենսդրական կարգավորումներ նախատեսելու միջոցով,*

2. *համապատասխան միջոցառումների միջոցով բարձրացնել հասարակության և հաշմանդամություն ունեցող կանանց իրազեկվածությունը վերջիններիս իրավունքների վերաբերյալ,*

3. *իրականացնել իրազեկման աշխատանքներ բուժաշխատակիցների և բժշկական ծառայություններ մատուցող հաստատությունների այլ աշխատակիցների շրջանում հաշմանդամություն ունեցող կանանց վերարտադրողական առողջության պահպանման առանձնահատկությունների վերաբերյալ:*

#### **14. Հաշմանդամության սահմանման ոլորտում առկա խնդիրներ**

2018 թվականի ընթացքում ստացված բողոքների ընդհանուր ուսումնասիրությունը վկայում է, որ անձինք հաշմանդամության սահմանման ոլորտում շարունակում են որոշ խնդիրների բխվել:

<sup>605</sup>Տե՛ս <http://disabilityinfo.am/16238/>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):



Հաշմանդամության սահմանման ոլորտի խնդիրներից մեկը բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովների կողմից հաշմանդամության խմբերի սահմանման համար կիրառվող ՀՀ կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի «Բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 780-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչների ընդհանուր ձևակերպումների մեջ է: Այն իր հերթին լայն հայեցողության հնարավորություն է ստեղծում հանձնաժողովի անդամների համար որոշում կայացնելիս՝ երբեմն հանգեցնելով նաև երկակի ստանդարտների:

Բարձրացված խնդրի կապակցությամբ անհրաժեշտ է վկայակոչել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած այն դիրքորոշումը, ըստ որի՝ օրենքի կանխատեսելիության, որոշակիության և հստակության սկզբունքի երաշխավորումը, ի թիվս այլոց՝ կոչված է նաև կանխելու, բացառելու «կամայականության վտանգը»<sup>606</sup>: Եվրոպական դատարանի այս դիրքորոշման լույսի ներքո վերլուծելով նշված որոշմամբ սահմանված չափորոշիչները՝ պետք է դարձյալ արձանագրել, որ նման ընդհանրական բնույթի չափորոշիչների առկայությունը գործնականում հանգեցնում է միևնույն իրավիճակներում մարդկանց նկատմամբ տարբերակված մոտեցումների, ինչն էլ իր հերթին հանգեցնում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված կամայականության արգելքի սկզբունքի խախտման:

Հաշմանդամության սահմանման ոլորտի խնդիրներից է ԲՄՓ հանձնաժողովների անդամների կողմից ոչ պատշաճ վարչարարություն իրականացնելը, փորձաքննությունների իրականացման արդյունավետ ընթակառուցների բացակայությունը, յուրաքանչյուր քննվող դեպքի նկատմամբ անհատական մոտեցում չցուցաբերելը և այլն:

Ընթացիկ տարում հաշմանդամության չսահմանման կամ հաշմանդամության խմբերի իջեցման վերաբերյալ Պաշտպանին հասցեագրված բազմաթիվ բողոքների կապակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ներկայացվել են նույնաբնույթ և նույնաբովանդակ պարզաբանումներ, մասնավորապես ըստ պարզաբանումների՝ անձի նկատմամբ հաշմանդամության այս կամ այն խումբը չսահմանելը պայմանավորված է եղել նրանով, որ անձի հիվանդությունը, վնասվածքը կամ խեղումը կենսագործունեության սահմանափակման չեն հանգեցրել:

Ստահոգիչ է, որ դիմողների նկատմամբ հերթական բժշկասոցիալական փորձաքննության հետևանքով հաշմանդամության խումբ չսահմանելու դեպքերում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը բարձրացված խնդրի այլընտրանքային լուծումը մշտապես տեսնում է անձի առողջական վիճակը վատթարանալու և այն հավաստող *նոր բժշկական փաստաթղթեր* ներկայացնելու դեպքում վերափորձաքննություն իրականացնելու մեջ: Խնդրահարույցն այն է, որ անձի առողջական վիճակի վատթարացման դեպքում այն հավաստող նոր բժշկական փաստաթղթեր ձեռք բերելը կապված է ֆինանսական զգալի ծախսերի հետ, իսկ հաշմանդամության կարգավիճակ չունեցող անձի համար դա մեծ դժվարություններ է առաջացնում: Ստացված բողոքների ընդհանուր ուսումնասիրությունը վկայում է, որ շատ քաղաքացիներ ֆինանսական միջոցների անբավարարության պատճառով չեն կարողանում ոչ պատշաճ վերականգնողական բուժօգնություն ձեռք բերել, ոչ անցնելով համապատասխան բժշկական հետազոտություններ ձեռք բերել նոր բժշկական փաստաթղթեր՝ չնայած իրենց առողջական վիճակի փաստացի վատթարացմանը:

Խնդիրն այն է, որ հաշմանդամության կարգավիճակ ունենալու դեպքում անձը համապատասխան բուժօգնությունն ու բուժապասարկումն օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է ստանալ անվճար կամ արտոնյալ հիմունքներով, մինչդեռ

<sup>606</sup> St´u Հիլդա Հաֆստեյնսդոտիրն ընդդեմ Իսլանդիայի (Hilda Hafsteinsdottir v. Iceland) գործով 2004 թվականի հունիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 40905/98, կետ 56:

փորձաքննության արդյունքում հաշմանդամ չճանաչվելուց հետո բուժզննումն իրականացվելու է անձի անձնական միջոցների հաշվին:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից մշտապես վկայակոչվում է ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների կողմից իրականացվող փորձաքննություններին փորձաքննություն անցնող անձանց կողմից իրենց ընտրած բուժող բժիշկներին կամ այլ բժիշկ այլ բժիշկ մասնագետներին որպես ներկայացուցիչ ներգրավելու կարգը հաստատելու մասին» թիվ 1527-Ն որոշումը, որի կարգավորումների հիման վրա քաղաքացին կարող է իր փորձաքննությանը մասնակից դարձնել նաև իր կողմից ընտրած բուժող բժիշկին կամ այլ բժիշկ մասնագետի՝ որպես ներկայացուցիչ: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ փորձաքննությանն անձի ընտրած բուժող բժիշկին կամ այլ բժիշկ մասնագետի մասնակից դարձնելը գործնականում չկիրառվող և անարդյունավետ է: Նախ, բուժող բժիշկին կամ այլ բժիշկ մասնագետի փորձաքննությանը մասնակից դարձնելուն խրախուսող և շահագրգռող ընթացակարգային նորմեր չկան, քանի որ շատ դեպքերում բժիշկները պարզապես հրաժարվում են մասնակցել փորձաքննություններին: Փորձաքննություններին նրանց մասնակցությունն անարդյունավետ է, քանի որ չկան մեխանիզմներ նրանց ձայնը լսելի և որոշիչ դարձնելու կապակցությամբ: Այսինքն, ԲՄՓ հանձնաժողովի և փորձաքննությանը մասնակից դարձված բուժող բժիշկի կամ այլ բժիշկ մասնագետի կարծիքների անհամապատասխանության դեպքում դրանից բխող հետևանքներ չեն առաջանում, որպիսի պայմաններում կայացվում է այնպիսի որոշում, որը կկայացվեր նաև բուժող բժիշկի կամ այլ բժիշկ մասնագետի բացակայության դեպքում:

Նոր բժշկական փաստաթղթեր ներկայացնելու պահանջ առաջադրելուց բացի խնդրահարույց է նաև անձի մոտ առկա հիվանդություններն ու խանգարումները հանձնաժողովի անդամների կողմից օբյեկտիվորեն չգնահատելը:

Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկի համաձայն օրինակ՝ դիմողի նկատմամբ տարիներ շարունակ սահմանվել է հաշմանդամության 3-րդ խումբ, որից զրկվել է 2018 թվականին իրականացված հերթական բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում: Ուշագրավ է, որ դիմողի կողմից ներկայացված բժշկական փաստաթղթերի համաձայն՝ վերջինիս մասնագիտացված բժշկական հաստատության կողմից ախտորոշվել է սրտային անբավարարություն, դասն ըստ NYHA դասակարգման՝ II, որն էլ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թվականի հունվարի 29-ի թիվ 18-Ա/1 հրամանով հաստատված Բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող չափորոշիչների կիրարկման՝ հաշմանդամության հանգեցնող հիվանդությունների և ախտաբանական վիճակների վերաբերյալ մեթոդական ուղեցույցով հաշմանդամության 3-րդ խումբ սահմանելու հիմք է:

ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 2-ի «Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 276-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 12-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը գնում է անձին, ձևակերպում փորձաքննական ախտորոշումը, *գնահատում նրա կենսագործունեության սահմանափակման աստիճանը*, քննարկում ստացված արդյունքները և դրանց հիման վրա ընդունում որոշում: Այս կապակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պարզաբանումների համաձայն՝ ԲՄՓ հանձնաժողովի նախագահը հարուցված վարչական վարույթը բոլոր փաստաթղթերով ներկայացնում է հանձնաժողովի անդամներին: Հանձնաժողովը գնում է անձին, ձևակերպում փորձաքննական ախտորոշում, քննարկում ստացված արդյունքները և դրանց հիման վրա ընդունում որոշում:

ԲՄՓ հանձնաժողովն օրգանիզմի որևէ ֆունկցիայի կամ ֆունկցիաների կայուն խանգարումների հետևանքով առաջացած կենսագործունեության սահմանափակման տեսակն ու աստիճանը որոշելու համար հիմք է ընդունում ոչ միայն անձի կողմից ներկայացված բժշկական փաստաթղթերում առկա հետազոտման և բուժման արդյունքները, այլև ԲՄՓ հանձնաժողովի համապատասխան մասնագետների կողմից իրականացրած օբյեկտիվ գննման արդյունքները: Մինչդեռ, ըստ բողոքի՝ փորձաքննության ընթացքում միայն դիմողի ճնշումն է չափվել՝ որով բավարարվելով՝ ԲՄՓ հանձնաժողովը եկել է եզրակացության, որ դիմողի մոտ առկա պաթոլոգիան արյան շրջանառության ֆունկցիայի աննշան խանգարումով, չի հանգեցրել կենսագործունեության որևէ սահմանափակման: Փաստորեն, հանձնաժողովը հաշվի չի առել դիմողի կողմից ներկայացված և նրա նկատմամբ 3-րդ խմբի հաշմանդամություն սահմանելը հիմնավորող բժշկական փաստաթղթերը:

Փաստերի նման դասավորվածության պայմաններում չբացահայտված է մնում այն, թե կոնկրետ դեպքով ինչպիսի հետազոտություններ են իրականացվել բժշկասոցիալական փորձաքննության ընթացքում, որի հետևանքով էլ ձևակերպվել է փորձաքննական ախտորոշում, քանի որ սրտային անբավարարության ֆունկցիոնալ դասակարգումը որոշվում է գործիքային հետազոտության արդյունքում, ինչպես նաև այն, թե ինչպես է իրականացվել ԲՄՓ հանձնաժողովի համապատասխան մասնագետների կողմից իրականացրած օբյեկտիվ գննումը, որի արդյունքում էլ որոշվել է սրտային անբավարարության ֆունկցիոնալ դասը:

Տեղին է փաստել, որ մարդկանց նկատմամբ հաշմանդամության խումբ սահմանելու հարցը որոշելիս ԲՄՓ հանձնաժողովների անդամների կողմից չի իրականացվում ներկայացված բժշկական փաստաթղթերի լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ ուսումնասիրություն, հաշմանդամության խումբ չսահմանելիս հանձնաժողովը երբեմն հիմնվում է միայն այն փաստի վրա, որ անձը բուժում է ստացել՝ առանց հավաստիանալու, թե արդյոք այդ բուժումն անձի առողջական վիճակն այս կամ այն աստիճանով բարելավել է, թե ոչ:

Այնուամենայնիվ, փորձաքննությունների արդյունքում կայացված որոշումների հետ համաձայն չլինելու դեպքում, իհարկե, անձը կարող է այն բողոքարկել, սակայն ընթացիկ տարում Պաշտպանին հասցեագրված բողոքներում արտացոլված տվյալների ընդհանուր ուսումնասիրությունը վկայում է, որ ԲՄՓ հանձնաժողովի որոշումների բողոքարկման արդյունավետ մեխանիզմներ չկան, քանի որ վերափորձաքննություններն իրականացվում են առաջնային փորձաքննություններն իրականացրած մասնագետները, որոնց դեմ ուղղված են բողոքները: Այս կապակցությամբ դիմողների դժգոհությունը հիմնականում պայմանավորված է նաև հանձնաժողովի ընդլայնված կազմով բժշկասոցիալական փորձաքննությունների չիրականացման հետ, ուրում մասնակից են դառնում առողջապահության նախարարության բժիշկ մասնագետներ:

Այս հանգամանքը հաշվի առնելով՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը Պաշտպանի կողմից տարիներ շարունակ առաջարկվել է հանձնաժողովի ընդլայնված կազմով վերափորձաքննության իրականացումը, քանի որ այդ դեպքում հնարավորինս բարձրանում է վերափորձաքննության արդյունքում օբյեկտիվ որոշման հավանականությունը՝ հնարավորություն տալով փոխել նախկինում կայացված որոշումը:

Ընթացիկ տարում ևս Պաշտպանի գրություններով բարձրացվել է հանձնաժողովի ընդլայնված կազմով վերափորձաքննություն իրականացնելու հնարավորության հարցը, սակայն Նախարարությունից տեղեկացվել է, որ հանձնաժողովի ընդլայնված կազմով վերափորձաքննություն իրականացնելը հնարավոր չէ, քանի որ առաջացել է խնդիր՝ կապված ՀՀ առողջապահության նախարարության բժիշկների վարձավճարների հետ:

Այնուհետև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը շարունակաբար ոչ նպատակահարմար է համարել դիմողների՝ ընդլայնված կազմով վերափորձաքննության իրականացումը: Փաստորեն, հանձնաժողովի ընդլայնված կազմով վերափորձաքննություն իրականացնելու հնարավորությունը, որպես անձի նկատմամբ օբյեկտիվ որոշման կայացման լրացուցիչ երաշխիք՝ սահմանափակվում է Նախարարության կողմից՝ դրանով կարծես արդարացնելով քաղաքացիների դժգոհությունն իրականացված փորձաքննության օբյեկտիվության կապակցությամբ: Ընթացիկ տարում Պաշտպանին հասցեագրված բողոքներով բարձրացվել է նաև ԲՄՓ հանձնաժողովի անդամների ոչ պրոֆեսիոնալ գործելաձևի, անգործության դրսևորման և այդ ամենի պատճառով մարդու իրավունքների ռոտահարման համար նրանց պատասխանատվության չենթարկելու հարցը:

Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով օրինակ՝ դիմողի որդու նկատմամբ տարիներ շարունակ սահմանվել է «հաշմանդամ երեխա» կարգավիճակը, որից, սակայն զրկվել է 2017 թվականի ընթացքում իրականացված փորձաքննության հետևանքով՝ չնայած այն փաստին, որ այդ տարիների ընթացքում երեխայի վիճակն ավելի է վատթարացել, ինչը հավաստվել է «Արաբկիր» բժշկական համալիր-Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի կողմից 2018 թվականի հունվար ամսին տրամադրված ամփոփագրով: Դիմողը ԲՄՓ հանձնաժողովի կայացրած որոշումը բողոքարկել է, սակայն իրականացված վերափորձաքննության հետևանքով այն մնացել է անփոփոխ: Ինչպես բազմաթիվ այլ, այնպես էլ այս դեպքում հանձնաժողովի ընդլայնված կազմով վերափորձաքննություն կազմակերպելը Նախարարության կողմից նպատակահարմար չի համարվել:

Դիմողի որդին 2018 թվականի ապրիլ ամսին կրկին ենթարկվել է վերափորձաքննության, որի ժամանակ որպես նրա առողջական վիճակի վատթարացումը հավաստող ապացույց ներկայացվել է նախորդ փորձաքննության ժամանակ արդեն ներկայացված՝ «Արաբկիր» բժշկական համալիր-Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի կողմից 2018 թվականի հունվար ամսին տրամադրված ամփոփագիրը: Վեց ամիս տևած քաջքուկներից հետո ի վերջո դիմողի որդու նկատմամբ սահմանվել է «հաշմանդամ երեխա» կարգավիճակը: Խնդրահարույց է այն, որ «հաշմանդամ երեխա» կարգավիճակը սահմանելու հիմքում դրվել է մի փաստաթուղթ, որը ներկայացված է եղել նաև նախորդ փորձաքննության ժամանակ, որը, սակայն, ԲՄՓ հանձնաժողովի անդամների կողմից պատշաճ ուշադրության չի արժանացել: Ընդ որում, երկու դեպքում էլ խոսքը ԲՄՓ նույն հանձնաժողովի, հանձնաժողովի նույն կազմի մասին է: ԲՄՓ հանձնաժողովի անդամների ոչ պրոֆեսիոնալ գործելաձևի պատճառով դիմողի որդին 6 ամիս շարունակ զրկված է եղել հաշմանդամի կարգավիճակից բխող սոցիալական պաշտպանությունից և օրենսդրությամբ նախատեսված արտոնություններից: Բերված օրինակում մեծագույն խնդիրն այն է, որ մարդու՝ այս տեսակ իրավունքների ռոտահարման համար որևէ մեկը պատասխանատվության չի ենթարկվում, այսինքն չկան ԲՄՓ հանձնաժողովի անդամների ոչ պրոֆեսիոնալ գործելաձևի, անգործության դրսևորման և այդ ամենի պատճառով մարդու իրավունքների ռոտահարման համար նրանց պատասխանատվության ենթարկելու հստակ մեխանիզմներ, ինչպիսին կարող էր լինել, օրինակ, հաշմանդամության կենսաթոշակի՝ 6 ամսվա գումարը ԲՄՓ հանձնաժողովի անդամներից հոգուտ դիմողի գանձելը:

2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բազմաթիվ բողոքներով քաղաքացիներն իրենց դժգոհությունն են հայտնել նաև բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովի անդամների կողմից իրենց ներկայացրած բժշկական փաստաթղթերն օբյեկտիվորեն չուսումնասիրելու, հանձնաժողովի անդամների ոչ պրոֆեսիոնալ պահելաձևի և բազմաթիվ այլ խնդիրների վերաբերյալ:

Մասնավորապես, Պաշտպանին հասցեագրված բողոքներով դիմողները տեղեկացրել են, որ ԲՄՓ հանձնաժողովի անդամներն իրենց նկատմամբ անհարգալից վերաբերմունք են

ցուցաբերել, ծաղրանքով են դիմում իրենց, եղել են կոպիտ, բացի այդ՝ շատ դեպքերում պատշաճ ուշադրության չեն արժանացրել իրենց կողմից ներկայացված փաստաթղթերը՝ միաժամանակ թույլ չտալով որևէ առարկություն ներկայացնել: Մեկ այլ դեպքով էլ ԲՍԳ հանձնաժողովի նախագահը կասկածի տակ է դրել անձի ներկայացրած՝ առողջության վատթարացումը հավաստող բժշկական փաստաթղթերի արժանահավատությունը՝ հայտարարելով, որ չի հավատում դրանց իսկությանը:

2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով՝ դիմողը 10 տարի անընդմեջ հանդիսացել է զինվորական 2-րդ խմբի անժամկետ հաշմանդամ, ընթացիկ տարում (ապրիլ ամսին) հսկողական կարգով ենթարկվել է բժշկասոցիալական վերափորձաքննության, որի ընթացքում բժիշկ-փորձագետները պահանջել են ներկայացնել ՄՌՏ հետազոտություն: Ըստ քննվող բողոքի՝ բժշկասոցիալական վերափորձաքննական հանձնաժողովը փորձաքննական որոշում է կայացրել (դիմողի նկատմամբ հաշմանդամություն չի սահմանել) առանց ՄՌՏ հետազոտության արդյունքներին սպասելու (քանի որ հետազոտությունը նշանակված է եղել մայիս ամսին):

Ընթացիկ տարում Պաշտպանին հասցեագրված բողոքներում բարձրացվել է հաշմանդամության անժամկետ սահմանման հետ կապված խնդիր: Այսպես, ՀՀ կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի «Բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 780-Ն որոշման հավելված 1-ի 31-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ հաշմանդամության խումբը սահմանվում է անժամկետ՝ իրականացված վերականգնողական միջոցառումների անարդյունավետության դեպքում, որը բերում է հաշմանդամի մշտական սոցիալական պաշտպանության անհրաժեշտության (առնվազն 7 տարվա ընթացքում բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինների դիտման պայմաններում, իսկ 2 և 4 տարի դիտման պայմաններում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 780-Ն որոշման NN 2 և 3 հավելվածների):

2018 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով՝ դիմողը 8 տարի շարունակ բժշկասոցիալական փորձաքննությունների հետևանքով ճանաչվել է 2-րդ խմբի հաշմանդամ, իսկ տարիներ շարունակ նրա առողջության վերականգնման նպատակով իրականացվող միջոցառումները եղել են անարդյունավետ: Ընթացիկ տարում դիմողը մասնակցել է բժշկասոցիալական վերափորձաքննության՝ ներկայացնելով հիվանդությունը հաստատող բժշկական փաստաթղթեր, սակայն վերափորձաքննությանը մասնակից բժիշկ-մասնագետների կողմից առանց բժշկական փաստաթղթերն ուսումնասիրելու և նրան լսելու, ինչպես նաև առանց որևէ հիմնավորում ներկայացնելու՝ որոշում է կայացվել նրան մեկ տարի ժամկետով 2-րդ խմբի հաշմանդամ ճանաչելու մասին այն դեպքում, երբ իրականացված վերականգնողական միջոցառումների անարդյունավետության դեպքում, որը բերում է հաշմանդամի մշտական սոցիալական պաշտպանության անհրաժեշտության (առնվազն 7 տարվա ընթացքում բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինների դիտման պայմաններում), առկա են եղել մարդուն 2-րդ խմբի անժամկետ հաշմանդամ ճանաչելու հիմքերը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից պարզաբանվել է, որ ՀՀ կառավարության 2003 թվականի թիվ 780-Ն որոշման 31-րդ կետի «գ» ենթակետի՝ հաշմանդամությունն անժամկետ սահմանելու դրույթը հստակեցնելու նպատակով ներկայումս քննարկվում է ենթակետից «առնվազն» բառը հանելու հարցը, իսկ քննարկումների արդյունքում լուծում կտրվի այն քաղաքացիների խնդրին, որոնց հաշմանդամությունն առնվազն 7 տարվա ընթացքում բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինների դիտման պայմաններում անժամկետ չի

սահմանվել: Նախարարությունից պարզաբանվել է նաև, որ 2018 թվականի նոյեմբերի 26-ին հաստատվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի թիվ 125-Ա/1 հրամանը, ըստ որի՝ բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովների կողմից առնվազն 7 տարվա դիտման պայմաններում հաշմանդամությունն անժամկետ սահմանելու դեպքում պետք է առաջնորդվել ՀՀ կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի թիվ 780-Ն որոշման հավելված 1-ի 31-րդ կետի դրույթներով, մասնավորապես՝ իրականացված վերականգնողական միջոցառումների անարդյունավետության դեպքում հաշմանդամությունը սահմանել անժամկետ, հակառակ դեպքում՝ հիմնավորել իրականացված վերականգնողական միջոցառումների արդյունավետությունը: Պաշտպանի միջամտությունից հետո նախարարությունից տեղեկացրել են, որ անձն այդ պահին կարող է դիմել համապատասխան բժշկասոցիալական հանձնաժողով և վերջինիս նկատմամբ հաշմանդամությունը կսահմանվի անժամկետ, որի արդյունքում հարցը ստացել է դրական լուծում: Հաշմանդամության սահմանման ոլորտում առկա խնդիրների լուծման կապակցությամբ ողջունելի է այն, որ 2018 թվականի հունվարի 29-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի թիվ 18-Ա/1 հրամանով հաստատվել է «Բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող չափորոշիչների կիրարկման՝ հաշմանդամության հանգեցնող հիվանդությունների և ախտաբանական վիճակների վերաբերյալ մեթոդական ուղեցույցը», որով, համագործակցելով ՀՀ առողջապահության նախարարության համապատասխան ոլորտների գլխավոր մասնագետների հետ, լրամշակվել և հստակեցվել է հաշմանդամության սահմանման չափորոշիչների կիրառման մինչ այդ գործող մեթոդական ուղեցույցը՝ հիմնական շեշտը դնելով առավել հաճախ հաշմանդամության հանգեցնող հիվանդությունների և ախտաբանական վիճակների (արյան շրջանառության և էնդոկրին համակարգի հիվանդություններին) երրորդ խմբի հաշմանդամության սահմանման չափանիշների հստակեցման վրա, քանի որ հին ուղեցույցում հստակ չեն եղել երրորդ խմբի հաշմանդամության շեմերը: Նշված ուղեցույցում հիմնական հստակեցումները կատարվել են սրտի իշեմիկ հիվանդության, սրտի աորտոկորոնար շունտավորում տարած, շաքարային դիաբետ և գերձնշումային հիվանդություն ունեցող անձանց բժշկասոցիալական փորձաքննության ուղեցույցներում՝ «հիվանդություն ունեցող անձ» և «հաշմանդամություն ունեցող անձ» հասկացությունները հստակեցնելու, տարանջատելու նպատակով (մինչև ուղեցույցի լրամշակումը՝ նշված հիվանդություններով հաշմանդամության երրորդ խմբի սահմանման չափանիշներն առավել ընդհանրական էին, տարանջատումները հստակ չէին):

*Այսպիսով՝ անհրաժեշտ է՝*

*1. բացահայտել ԲՄՓ ոլորտում կոռուպցիայի դեպքերը, համակարգից հեռացնել ոլորտում չարաշահումներ թույլ տված կամ չարաշահումների հետ որևէ առնչություն ունեցած ԲՄՓ գործակալության մասնագետներին,*

*2. հաշմանդամության խումբ սահմանելու յուրաքանչյուր դեպքով իրականացնել մարդկանց կողմից ներկայացված բժշկական փաստաթղթերի բազմակողմանի և լրիվ ուսումնասիրություն, ինչպես նաև փորձաքննության ենթարկվող անձի օբյեկտիվ գնություն՝ միաժամանակ չսահմանափակելով հանձնաժողովի ընդլայնված կազմով վերափորձաքննություն իրականացնելու հնարավորությունը,*

*3. ներդնել բժշկասոցիալական փորձաքննական որոշումների բողոքարկման արդյունավետ մեխանիզմներ:*

**15. Չինվորական անժամկետ հաշմանդամություն ունեցող մարդկանց հսկողական կարգով վերափորձաքննության ենթարկելը և անժամկետ սահմանված հաշմանդամությունը վերացնելը**

2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքներում բարձրացվել է հսկողական կարգով իրականացված վերափորձաքննությունների հետևանքով անժամկետ սահմանված հաշմանդամությունը վերացնելու խնդիրը: Խնդիրը հատկապես նկատելի է զինվորական անժամկետ հաշմանդամություն ունեցող մարդկանց շրջանում:

Այսպես, ընթացիկ տարում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից հանձնարարական է տրվել հաշմանդամություն ունեցող որոշ մարդկանց ԲՄՓ գործերն ուսումնասիրելու մասին, որին զուգահեռ ՀՀ պաշտպանության նախարարության զինձառայողների սոցիալական պաշտպանության վարչության կողմից ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալությանը ներկայացվել է հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինձառայողների ցուցակ, որում ընդգրկված մարդկանց ԲՄՓ գործերը ևս ենթակա են եղել ուսումնասիրության:

Ուշագրավ է, որ ուսումնասիրվել են այն մարդկանց ԲՄՓ գործերը, որոնց նկատմամբ հաշմանդամության խումբը սահմանված է եղել դեռևս 1990-ական թվականներին: Խնդրահարույց է այն, թե ինչ փաստերի վրա հիմնվելով և ինչ հիմնավորմամբ է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից հանձնարարական տրվել հաշմանդամություն ունեցող որոշ մարդկանց ԲՄՓ գործերն ուսումնասիրելու մասին կամ ՀՀ պաշտպանության նախարարության զինձառայողների սոցիալական պաշտպանության վարչության կողմից ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալությանը ներկայացված հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինձառայողների ցուցակն ինչ չափանիշների հիման վրա է կազմվել: Հաշմանդամության խումբ սահմանելու այս կամ այն չափանիշի փոփոխության ժամանակ ԲՄՓ գործերի ուսումնասիրություն իրականացնելը կարող էր փոքր-ինչ արդարացված լինել, սակայն նման փոփոխությունների բացակայության պայմաններում որևէ կերպ չի հիմնավորվում ԲՄՓ գործերի ուսումնասիրություն իրականացնելու անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը: Եվս մեկ անգամ պետք է նշել, որ հաշմանդամություն ունեցող մարդկանց ԲՄՓ գործերի ուսումնասիրությունը չպետք է կամայականորեն իրականացվի, անհրաժեշտ է ներկայացնել հիմնավորում մարդկանց ԲՄՓ գործերի ուսումնասիրության անհրաժեշտության վերաբերյալ:

Պաշտպանին հասցեագրված բողոքների ընդհանուր քանակը թույլ է տալիս ենթադրելու, որ ԲՄՓ գործերի ուսումնասիրությունն իրականացվել է մասսայականորեն, որի ժամանակ գործերի բազմաթիվ առանձնահատկություններ պարզապես հաշվի չեն առնվել: Այսպես, օրինակ, Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով՝ դիմողի նկատմամբ սահմանվել է անժամկետ հաշմանդամություն 2008 թվականին, իսկ հսկողական կարգով վերափորձաքննության է ենթարկվել 2018 թվականին (այսինքն՝ վարչական ակտի ընդունման օրվանից 10 տարի անց), որի ժամանակ նրա նկատմամբ հաշմանդամության խումբ չի սահմանվել: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ վարչական ակտն անվիճարկելի է դառնում, և վարչական մարմինը զրկվում է նույն հոդվածով նախատեսված իրավունքից (այսինքն այն անվավեր ճանաչելու իրավունքից), եթե վարչական ակտի ընդունման օրվանից անցել է **10 տարի**, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Փաստորեն, վարչական ակտի ընդունման օրվանից 10 տարի անց անձի նկատմամբ հսկողական կարգով իրականացված վերափորձաքննության հետևանքով հաշմանդամության խումբ չի սահմանվել, այլ կերպ ասած՝ անվավեր է ճանաչվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի

կարգավորումների ուժով անվիճարկելի դարձած վարչական ակտը: Բերված օրինակն ապացույցն է այն բանի, որ ԲՄՓ հանձնաժողովի անդամների կողմից ԲՄՓ գործերի նկատմամբ անհատական մոտեցում չի ցուցաբերվում, որով բազմակողմանի և հանգամանորեն չեն ուսումնասիրվում կոնկրետ գործի փաստական հանգամանքները:

Պաշտպանին հասցեագրված բողոքների համաձայն՝ դիմողների նկատմամբ սահմանված է եղել անժամկետ հաշմանդամություն զինվորական պատճառական կապով, ընթացիկ տարում բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի նախաձեռնությամբ ենթարկվել են վերափորձաքննության, ինչի պատճառով հաշմանդամ չեն ճանաչվել: Դիմողների դժգոհությունն արդարև պայմանավորված է նրանով, որ հաշմանդամ ճանաչվելու օրվանից ի վեր առողջական վիճակը չի բարելավվել, ավելին՝ վատթարացել է:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պարզաբանումների համաձայն՝ զինվորական անժամկետ սահմանված հաշմանդամություն ունեցող մարդկանց հսկողական կարգով վերափորձաքննության ենթարկելու հիմք է հանդիսացել ՀՀ պաշտպանության նախարարության զինձառայողների սոցիալական պաշտպանության վարչության պետի գրությունը, որով ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալությանն է ներկայացվել հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինձառայողների ցուցակ: Այդ ցուցակում ընդգրկված մարդկանց ԲՄՓ գործերի ուսումնասիրության արդյունքում՝ ԲՄՓ մարմինների կողմից հայտնաբերվել են հաշմանդամության խմբերի, պատճառական կապերի և բժշկական փաստաթղթերի անհամապատասխանություններ:

2017 թվականի նոյեմբերի 30-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում հրավիրվել է Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի վթարի հետևանքների վերացման աշխատանքների մասնակիցների կարգավիճակի հարցերով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովի նիստ, որի հետևանքով բժշկասոցիալական փորձաքննական մարմիններին տրվել է հանձնարարական, համաձայն որի՝ իրականացվել է Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի վթարի հետևանքների վերացման աշխատանքների մասնակից, հաշմանդամություն ունեցող մարդկանց ԲՄՓ գործերի ուսումնասիրություն:

Հաշվի առնելով, որ իրավասու մարմնի կողմից տրված հանձնարարականի համաձայն իրականացված՝ զինվորական պատճառական կապով, անժամկետ հաշմանդամություն ունեցող մարդկանց հսկողական կարգով վերափորձաքննության արդյունքում կատարվել է մի խումբ մարդկանց փորձաքննական որոշման փոփոխություն, որն էլ առաջացրել է նրանց անհամաձայնությունն ու դժգոհությունը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում կատարվել են մի շարք քննարկումներ, որոնց հետևանքով նշված խնդրահարույց հարցերին իրավական լուծում տալու նպատակով մշակվել և ՀՀ կառավարություն և շահագրգիռ գերատեսչություններ է ներկայացվել **«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ**<sup>607</sup>: Նախագծով առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել 2018 թվականի ապրիլի 1-ից մինչև 2018 թվականի մայիսի 1-ն ընկած ժամանակահատվածում վերադաս վարչական մարմնի կողմից վերահսկողության կարգով իրականացված վերափորձաքննության հետևանքով ընդունված վարչական ակտերը՝ ուժի մեջ թողնելով նախկին որոշումները, իսկ ուժը կորցրած ճանաչված վարչական ակտերի կատարման (կիրառման) արդյունքում՝ վերոգրյալ քաղաքացիներին վճարել կենսաթոշակների, նպաստների, պարգևավճարների և այլ դրամական վճարների չվճարված գումարները:

<sup>607</sup> Նախագիծը լրամշակման փուլում է, տե՛ս <https://www.e-draft.am/projects/931>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):



2018 թվականի ապրիլի 1-ից մինչև 2018 թվականի մայիսի 1-ն ընկած ժամանակահատվածում հսկողական կարգով վերափորձաքննված քաղաքացիների նկատմամբ կգործեն «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում կատարվող փոփոխությունները: Հարկ է նշել, սակայն, որ Նախագիծը քննարկման է ներկայացված եղել 2018 թվականի օգոստոսի 20-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածում, և առ այսօր այն ընդունված չէ: Հետևաբար՝ շարունակում է չլուծված մնալ նշված մարդկանց նկատմամբ հաշմանդամության սահմանման խնդիրը, և վերջիններիս նկատմամբ շարունակում են գործել հաշմանդամություն չսահմանելու մասին փորձաքննական որոշումները, ինչի պատճառով վերջիններս չեն ստանում զինվորական հաշմանդամության կենսաթոշակ և չեն օգնվում այդ կարգավիճակից բխող օրենսդրությամբ սահմանված այլ արտոնություններից:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է անհապաղ ընդունել «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:*

### ԳԼՈՒԽ 3. ԵՐԵՒԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 4-րդ հոդվածը պարտավորեցնում է կոնվենցիայի մասնակից երկրներին «ձեռնարկել անհրաժեշտ բոլոր օրենսդրական, վարչական և այլ միջոցները՝ սույն Կոնվենցիայով ճանաչված իրավունքների իրականացման համար»: Մարդու իրավունքների ազգային անկախ ինստիտուտները Կոնվենցիայի խթանման և իրականացման կարևոր մեխանիզմներ են և ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեն համարում է, որ նման մարմնի ստեղծումը Կոնվենցիայի մասնակից երկրների պարտավորությունների իրականացման մաս է կազմում: 2002 թվականի թիվ 2 Ընդհանուր մեկնաբանությամբ Կոմիտեն խրախուսեց մասնակից երկրներին հիմնել Կոնվենցիայի մշտադիտարկման անկախ ինստիտուտներ: Կոմիտեի առաջարկությամբ Մարդու իրավունքների ազգային ինստիտուտները պետք է ունենան մանդատ, որը կընդգրկի մարդու իրավունքների լայն շրջանակը՝ ներառելով Կոնվենցիան և Կոնվենցիայի կամընտիր արձանագրությունները:

2017 թվականից Պաշտպանի աշխատակազմի Քաղաքացիական, սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանության դեպարտամենտի կազմում գործում է Երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը: Բաժնի գործունեության հիմնական նպատակներն են վերաբերելի օրենսդրական դաշտի վերլուծությունը վերը նշված կոնվենցիայի դրույթների տեսանկյունից, պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության այցերի իրականացումը, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատություններ: Օրենքով նախատեսված լիազորությունների շրջանակում սույն բաժինն իրականացնում է նաև Պաշտպանին հասցեագրված բողոքների քննարկում և քաղաքացիներին տրամադրում է խորհրդատվություն:

2018 թվականի ընթացքում Պաշտպանին երեխաների իրավունքների վերաբերյալ հասցեագրվել է 445 գրավոր և բանավոր բողոք, որոնց մեծամասնությունը վերաբերել է Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների (սույն հաղորդման սույն բաժնում այսուհետ՝ ԽՀՀ) գործունեությանը, երեխայի՝ ծնողի հետ շփվելու իրավունքի իրացմանը, դպրոցում երեխաների նկատմամբ վերաբերմունքին և իրավունքների պաշտպանությանը:

2018 թվականին Պաշտպանի աշխատակազմի մասնագետները կատարել են մշտադիտարկման այցեր երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող թվով 10 հաստատություններ երեխաների իրավունքների պաշտպանվածության իրավիճակին ծանոթանալու, նրանց խնամքի պայմաններն ուսումնասիրելու և հնարավոր խախտումների դեպքում դրանց վերացմանը նպաստելու նպատակով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2018 թվականին հրապարակվել է հետևյալ արտահերթ զեկույցը և ուղեցույցները.

1. **«ՀՀ կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտականությունների կատարման վիճակի վերաբերյալ»** Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը<sup>608</sup>: Ձեկույցի նպատակն է ներկայացնել, թե որքանով է Հայաստանի Հանրապետությունը կատարել և շարունակում կատարել Կոնվենցիայի և կից երկու արձանագրությունների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող Երեխաների իրավունքների կոմիտեի՝ 2013 թվականի ամփոփիչ դիտարկումներում տեղ գտած առաջարկությունները: Ձեկույցն ընդգրկում է 2013 թվականից մինչև 2017 թվականի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածը, որի շրջանակում ուսումնասիրվել են կոմիտեի երեք ամփոփիչ

<sup>608</sup> Տե՛ս [http://www.ombuds.am/images/DCI\\_guide\\_\\_\\_Armenian.pdf](http://www.ombuds.am/images/DCI_guide___Armenian.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

դիտարկումները, վեր են հանվել դրանցում ներկայացված առաջարկությունները և դրանցից յուրաքանչյուրի կատարման վերաբերյալ ներկայացվել են Պաշտպանի գնահատականները և առաջարկությունները:

2. «Երեխաներին անազատության մեջ պահելու վայրերի մշտադիտարկում» գործնական ուղեցույցի<sup>609</sup> հայերեն թարգմանությունն ու տեղայնացումը: Ուղեցույցը նպատակ ունի բարելավել երեխաներին անազատության մեջ պահելու պայմանները՝ մշտադիտարկում իրականացնող մարմիններին ապահովելով կիրառական գործիքներով:

3. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից հրապարակել են նաև **իրավական չափանիշներ լրագրողի՝ անձնական տվյալներ պարունակող տեղեկություններ ստանալու հարցման և այդ առնչությամբ պետական մարմնի պարտականության վերաբերյալ**<sup>610</sup> և **Եվրոպայի խորհրդի «Թվային միջավայրում երեխայի իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրացնելու համար ուղեցույց»**-ի հայերեն տարբերակը<sup>611</sup>:

2018 թվականի ընթացքում Պաշտպանը մասնակցել է Երեխաների օմբուդսմենների եվրոպական ցանցի աշխատանքներին, որը միավորում է 42 անկախ անդամների և որի նպատակն է խրախուսել երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի լիարժեք իրականացումը, տեղեկատվության և լավագույն փորձի փոխանակումը<sup>612</sup>: Պաշտպանի աշխատակազմի Երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետը մասնակցել է Եվրոպայի խորհրդի երեխաների իրավունքների կոմիտեի աշխատանքներին որպես Երեխայի իրավունքների կոմիտեի բյուրոյի անդամ:

### ***1. Մշտադիտարկման այցեր երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ***

2018 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները մշտադիտարկման այցեր են կատարել երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող 10 հաստատություն (այդ թվում՝ ոչ պետական)<sup>613</sup>: Երկու հաստատությունում կատարվել է կրկնակի այց՝ նախկինում բացահայտված խնդիրների լուծման ընթացքին հետևելու, ինչպես նաև առավել մանրամասն տեղեկություններ ստանալու նպատակով:

Բոլոր այցերը եղել են չհայտարարված և իրականացվել են՝ այդ նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից 2018 թվականին մշակված մեթոդաբանության համաձայն՝ Հայաստանի իրավական համակարգին տեղայնացված ուղեցույցի հիման վրա:

Այցերի ընթացքում իրականացվել է երեխաների խնամքի պայմանների և հաստատությունում գտնվելու հիմք հանդիսացող փաստաթղթերի ուսումնասիրություն: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներն առանձնագրույցներ են ունեցել երեխաների (ինչպես երեխաների խմբերի, այնպես էլ պատահականության սկզբունքով ընտրված առանձին երեխաների հետ), ինչպես նաև հաստատությունների աշխատակիցների հետ: Բարձրացված խնդիրներն արձանագրվել են, դրանց վերաբերյալ քննարկումներ են

<sup>609</sup> Տե՛ս [http://www.ombuds.am/images/DCI\\_guide\\_\\_\\_Armenian.pdf](http://www.ombuds.am/images/DCI_guide___Armenian.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>610</sup> Տե՛ս [http://www.ombuds.am/images/Media\\_Personal\\_Data\\_30.03.2018.pdf](http://www.ombuds.am/images/Media_Personal_Data_30.03.2018.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>611</sup> Տե՛ս [http://www.ombuds.am/images/CoE\\_IT\\_Guidelines\\_-\\_ARM\\_-\\_final.pdf](http://www.ombuds.am/images/CoE_IT_Guidelines_-_ARM_-_final.pdf), ((2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>612</sup> Տե՛ս <http://enoc.eu/>, ((2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>613</sup> Երևանի թիվ 2 հատուկ դպրոց, Հանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիր, Երևանի թիվ 6 հատուկ դպրոց, Երևանի թիվ 12 հատուկ դպրոց, Երևանի թիվ 14 հատուկ դպրոց, Երևանի թիվ 16 հատուկ դպրոց, Երևանի թիվ 17 հատուկ դպրոց, Գյումրու «Ֆրիտոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն, Գյումրու թիվ 3 հատուկ դպրոց, «Թռչունյան տուն» կրթահամալիր-մանկատուն:

տեղի ունեցել հաստատությունների տնօրինության և անձնակազմի հետ: Ձեռք բերված տեղեկությունների, փաստաթղթերի և ոլորտի օրենսդրական կարգավորումների համադրման և վերլուծությամբ արձանագրվել են ինչպես գործնական խնդիրներ, այնպես էլ օրենսդրական կարգավորման բացեր և թերություններ: Հայտնաբերված խնդիրները համադրվել են նաև Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված անհատական բողոքների, ինչպես նաև միջազգային կառույցների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների հրապարակած նյութերի ու ուսումնասիրությունների հետ, որոնք հնարավորություն են ստեղծվել ներկայացնել այդ խնդիրների լուծման առաջարկներ: Ստորև ներկայացվում են վեր հանված խնդիրները, դրանց կապակցությամբ կատարված մասնագիտական վերլուծությունները և լուծմանն ուղղված առաջարկները:

Այցերի արդյունքներն ամփոփվել և ուղարկվել են ՀՀ կրթության և գիտության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Երևանի քաղաքապետարան, ինչպես նաև Շիրակի մարզպետարան: Մի քանի քննարկումներ են կազմակերպվել ՀՀ կրթության և գիտության նախարարությունում: Սակայն անհրաժեշտ է նշել, որ վերոնշյալ գերատեսչությունների պատասխանները հիմնականում ընդհանրական բնույթի են եղել կամ վերահասցեագրել են տվյալ հաստատություններից ստացված պատասխանները՝ առանց նշելու իրենց կողմից ձեռնարկված քայլերի մասին:

Վերոնշյալ այցերի ընթացքում բացահայտված խնդիրների մասին Պաշտպանի կողմից ներկայացվել են հայտարարություններ: Պաշտպանը հետևողական է լինելու, որ վերացվեն հայտնաբերված թերությունները, ինչպես նաև առանձնահատուկ ուշադրություն դարձվի հաստատություններում խնամվող երեխաների իրավունքների պաշտպանությանը:

### ***1.1 Մեկ հաստատությունում տարբեր խնդիրներ ունեցող երեխաների գտնվելը***

Մշտադիտարկման ընթացքում պարզվել է, որ գործնականում մի շարք հատուկ հանրակրթական հաստատությունների տիպեր չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 2179-Ն և ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 24-ի թիվ 381-Ն որոշումներով սահմանված տիպերին, որի հետևանքով, այդտեղ միաժամանակ ծառայություններ են մատուցվում տարբեր կարիքներ ունեցող երեխաների: Խնդիրն այն է, որ այդ պարագայում մատուցվող ծառայությունները լիարժեք և արդյունավետ չեն, քանի որ մատուցվող ծառայությունները չեն համապատասխանում տարբեր առանձնահատկություններ ունեցող երեխաների կարիքներին:

Հատուկ հանրակրթական դպրոցների կանոնադրությունները հիմնականում հաստատվել են 2003 թվականին, այսինքն ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 2179-Ն որոշման ընդունումից հետո: Վերոնշյալ որոշմամբ սահմանված են պետական հատուկ հանրակրթական հաստատությունների հետևյալ տիպերը.

*ա) լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն.*

*բ) տեսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն.*

*գ) խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն.*

*դ) հենաշարժողական համակարգի խախտումներ ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն.*

ե) մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հատուկ (օժանդակ) հանրակրթական ուսումնական հաստատություն.

զ) հակասոցիալական վարք ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն.

է) արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն:

Այսինքն՝ ՀՀ կառավարությունը չի սահմանել հաստատության այնպիսի տեսակ, որը հնարավորություն կտար մեկ հաստատությունում իրականացնել տարբեր կրթական կարիքներ ունեցող երեխաների խնամքն ու դաստիարակությունը: Ավելին, ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետությունում երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերի ցանկը, դրանցում երեխաների տեղավորման չափանիշները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 2179-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» թիվ 381-Ն որոշմամբ ևս մեկ անգամ հաստատվել են երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերը, այդ թվում՝ հատուկ հանրակրթական:

Վերը շարադրվածը վկայում է, որ ՀՀ օրենսդրությամբ հատուկ կարիքներ ունեցող և առանց ծնողական խնամքի մնացած անձանց համար նախատեսված հաստատությունները տարանջատված են:

Մինչդեռ, մշտադիտարկված հաստատությունների կանոնադրություններում նշված է, որ այդտեղ կարող են խնամք և դաստիարակություն ստանալ «մտավոր թերզարգացում ունեցող» երեխաները, ինչպես նաև ծնողազուրկ երեխաները (օրինակ՝ Երևանի թիվ 12 հատուկ դպրոց, Երևանի թիվ 17 հատուկ դպրոց) կամ «մտավոր թերզարգացում ունեցող» երեխաները, ինչպես նաև 18 տարեկանից բարձր անձինք (օրինակ՝ Հանրակրթական թիվ 2 հատուկ կրթահամալիր):

Մեկ հաստատությունում տարբեր խնդիրներ ունեցող անձանց գտնվելու փաստը դպրոցների վարչակազմերը հիմնականում հիմնավորում է կանոնադրությամբ նախատեսված լինելով, իսկ չափահաս անձանց գտնվելը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության հատուկ գրավոր թույլտվությամբ (Հանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիրում սովորող չափահաս անձանց անձնական գործերում կային նմանատիպ թույլտվություններ): Օրինակ՝ Հանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիրի կանոնադրության 25-րդ կետի համաձայն՝ կրթահամալիր կարող են ընդունվել որբ, ծնողական խնամքից զրկված, սոցիալապես վտանգավոր վարք, տեսողության, լսողության, խոսքի ծանր, հենաշարժողական համակարգի խախտումներ ունեցող և մտավոր թերզարգացում ունեցող երեխաները, ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաները:

Նմանատիպ խնդիր կա նաև «Թռչունյան տուն» կրթահամալիր-մանկատանը, որն ըստ կանոնադրության՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է, որը գործունեություն է իրականացնում ծնողազուրկ, սոցիալապես անապահով դպրոցահասակ երեխաների խնամքի, ուսուցման և դաստիարակման ոլորտում: «Թռչունյան տուն» ՄՊԸ-ի 100% բաժնեմասը պատկանում է «Գյումրիի հաշմանդամ որբերի տուն» բարեգործական հիմնադրամին: Փաստացի՝ հաստատությունն իրականացնում է մանկապարտեզի, հանրակրթական դպրոցի և մանկատան գործառույթներ:

ՄԱԿ-ի Գլխավոր Վեհաժողովի կողմից հաստատված «Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույցի»<sup>614</sup> պահանջների համաձայն աղքատությունը չպետք է լինի այն միակ

<sup>614</sup> Տե՛ս [https://www.unicef.org/protection/alternative\\_care\\_Guidelines-English.pdf](https://www.unicef.org/protection/alternative_care_Guidelines-English.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

հիմնավորումը, որի պատճառով երեխան հնարավորություն չի ստանում խնամվել ընտանիքում: Այնինչ «Թռչունյան տուն» կրթահամալիր-մանկատան կանոնադրությամբ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հետ մեկտեղ հաստատությունում խնամվում են նաև սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները: Անհրաժեշտ է գնահատել երեխաների և նրանց ընտանիքների կարիքները և երեխաներին վերադարձնել իրենց կենսաբանական ընտանիքներ՝ հաստատությունում երեխայի խնամքի և դաստիարակության համար նախատեսված միջոցներն ուղղելով ընտանիքների աջակցմանը:

Բոլոր այն դեպքերում, երբ հնարավոր չէ երեխաներին վերադարձնել իրենց կենսաբանական ընտանիքներ, պետք է գտնել հաստատությանն այլընտրանք հանդիսացող խնամքի ձևեր: Դրանցից կարող են լինել խնամակալ ընտանիքները և խնամատար ընտանիքները: Հարկ է նշել, որ 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված էին ֆինանսական միջոցներ՝ 99 երեխայի խնամքը խնամատար ընտանիքներում կազմակերպելու համար: Այնինչ ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2018 թվականին խնամատար ընտանիքներում խնամվել է ընդամենը 34 երեխա:

Այսպիսով, հաստատությունների կանոնադրությունները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 24-ի թիվ 381-Ն և ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 2179-Ն որոշումներով սահմանված տիպերին:

Ավելին, ըստ Կրթության և գիտության նախարարության՝ հաստատությունների տիպերը կհամապատասխանեցվեն օրենքի պահանջներին միայն 2019 թվականին մի շարք հաստատությունների փակման կամ վերակազմակերպման գործընթացից հետո: Նշվածը բնականաբար անթույլատրելի է, քանի որ այդ երեխաներին անհրաժեշտ է մասնագիտական աջակցություն և ծառայություններ, որոնք հնարավոր կլինի լիարժեք կերպով մատուցել միայն, եթե հաստատությունը համապատասխանում է օրենքով նախատեսված չափանիշներին:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. հաստատությունների տիպերը համապատասխանեցնել ՀՀ կառավարության վերոնշյալ իրավական ակտերով հաստատված տիպերին և համապատասխան փոփոխություններ կատարել կանոնադրություններում՝ հստակեցնելով, թե որ հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաներին պետք է ծառայություններ մատուցվեն,*

*2. իրականացնել հաստատություններում սովորող երեխաների և չափահաս անձանց հատուկ կրթական կարիքների վերագնահատումը, ինչպես նաև գնահատել նրանց ընտանիքների սոցիալական կարիքները՝ նրանց ընտանիքներ կամ այլ հաստատություններ տեղափոխելու գործընթաց սկսելու նպատակով,*

*3. կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար ապահովել նրանց հետագա ուսումն իրենց կարիքներին համապատասխան, այդ թվում՝ հատուկ կրթություն տրամադրող հաստատությունում կամ հնարավորության դեպքում, ներառական կրթություն տրամադրող հանրակրթական դպրոցում:*

## **1.2 Ընդունելության համար օրենսդրությամբ անհրաժեշտ համարվող փաստաթղթերի ոչ լիարժեք լինելը**

Հաստատություններում կատարած այցերի ընթացքում կատարված ուսումնասիրություններից պարզվել է, որ այցի պահին երեխաների մեծ մասի անձնական գործերում բացակայել են ընդունելության համար անհրաժեշտ փաստաթղթերը կամ դրանք ամբողջական չեն եղել:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ *հատուկ հանրակրթական դպրոց է համարվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ինչպես նաև հակասոցիալական վարք դրսևորող սովորողների համար հանրակրթական հիմնական ընդհանուր և (կամ) հանրակրթական հիմնական հատուկ ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունը*: Նույն օրենքի 17.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *կրթության առանձնահատուկ պայմաններ սահմանելու նպատակով երեխան կարող է ներկայացվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման՝ ծնողի (օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա կամ երեխայի կրթության վայր հանդիսացող ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի դիմումի հիման վրա, եթե դիմումին կցված է ծնողի ստորագրած համաձայնագիրը*:

Վերոնշյալ օրենքի 17.3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ *տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի տված՝ երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ եզրակացության հիման վրա տարածքային կառավարման պետական մարմինը վկայագրում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը*: Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար պահանջվում է ծնողի կամ ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի դիմումը, եթե առկա է ծնողի համաձայնությունը: Այնուհետև, երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը հաստատում է տարածքային կառավարման պետական մարմինը՝ տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի եզրակացության հիման վրա:

2016 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1058-Ն ՀՀ կառավարության «Հանրապետական և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների օրինակելի կանոնադրությունները և ցանկը սահմանելու մասին» հավելված թիվ 2-ի 20-րդ կետի համաձայն՝ *եզրակացությունը տրամադրում է կենտրոնը՝ գնահատելով երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը*: *Դրա հիման վրա՝ տարածքային կառավարման պետական մարմինը վկայագրում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը*: Այսինքն՝ նշյալ օրենքով ամրագրված պահանջն այն մասին, որ երեխայի կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունենալու փաստը պետք է ամրագրվի նախ համապատասխան եզրակացությամբ, իսկ հետո տրամադրվի վկայագիր տարածքային կառավարման մարմնի կողմից, սահմանվում է նաև նշված որոշմամբ:

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 1640-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 15-րդ կետով էլ հստակ ամրագրվում է փաստաթղթերի ցանկը, որոնք անհրաժեշտ են սովորողին դպրոց ընդունելու համար և ներկայացվում են ծնողի կողմից<sup>615</sup>:

<sup>615</sup> Այդ փաստաթղթերն են՝

- 1) դիմում՝ ուղղված տնօրենին,
- 2) բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին տեղեկանք՝ առաջին դասարան ընդունվելու դեպքում,
- 3) ծննդյան վկայականի կամ անձնագրի բնօրինակը և պատճենը: Տնօրենի «Իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ պատճենը պահպանվում է սովորողի անձնական գործում,
- 4) 2 լուսանկար՝ 3x4 չափսի,
- 5) սովորողի «Անձնական գործ» գրքույկը (բացառությամբ առաջին դասարան և ուսումնական տարվա սկզբում ավագ դպրոցի 10-րդ դասարան ընդունվելիս),
- 6) տեղեկանք՝ ընթացիկ գնահատականների և բացակայությունների քանակի մասին, նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից տեղափոխվելու դեպքում՝ նաև տեղեկանք՝ ուսումնասիրած առարկաների մասին, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի դեպքում՝ նաև անհատական ուսուցման պլանը,

Այցերի ընթացքում ուսումնասիրվել են հաստատություններում խնամք և դաստիարակություն ստացող երեխաների և չափահաս անձանց անձնական գործերը՝ ընդունելության փաստաթղթերի ամբողջականությունը և դրանց համապատասխանությունը պարզելու նպատակով: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ այցի պահին երեխաների մեծ մասի անձնական գործերում բացակայում են ընդունելության համար անհրաժեշտ փաստաթղթերը կամ դրանք ամբողջական չեն: Մասնավորապես, այլ հատուկ հանրակրթական հաստատություններից տեղափոխված մի շարք երեխաների անձնական գործերում առկա էր միայն հիմնական դպրոցի ավարտական վկայականը, բացակայում էր կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ վկայագիրը, ծնողների դիմումները, ուղեգրերը:

Օրինակ՝ Երևանի թիվ 6 հատուկ դպրոցում սովորող 10 երեխա, Երևանի թիվ 17 հատուկ դպրոցում սովորող 16 երեխա չունեին վկայագրեր, ընդ որում՝ նրանցից երկուսն՝ արդեն երկրորդ տարին: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է նաև, որ Երևանի թիվ 17 հատուկ դպրոց առանց վկայագրի ընդունված երկու երեխա գնահատման արդյունքներով հատուկ կրթական կարիք չունի, սակայն շարունակում են խնամք և կրթություն ստանալ դպրոցում: Առանց վկայագրի առկայության երեխաների ընդունելության կազմակերպումը հակասում է երեխայի լավագույն շահին:

Սաների մի մասի անձնական գործերում բացակայում էին նաև հաստատություն ընդունվելու համար ծնողի կողմից ներկայացված դիմումները, չնայած վերոնշյալ որոշման համաձայն՝ դա հաստատություն ընդունելու պարտադիր պայման է: Դիմումը բացակայում էր հիմնականում Հանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիր նոր ընդունված՝ 9-րդ դասարանի աշակերտների անձնական գործերում: Տնօրենը և զարգացման ծրագրերի ղեկավարը դա պատճառաբանում էին նրանով, որ երեխաները նոր էին ընդունվել և ծնողները չէին հասցրել ներկայացնել դիմումներ, այնինչ, դիմումներն անհրաժեշտ էր ներկայացնել ընդունելությունից առաջ:

Նմանատիպ իրավիճակ էր նաև «Թռչունյան տուն» կրթահամալիր-մանկատանը, որտեղ խնամվող 35 երեխա չունեին ուղեգիր՝ տրված ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից և եզրակացություն՝ տրված մարզպետարանի կողմից: Մի քանի երեխաներ, որոնք տեղափոխվել են այլ մանկատանից (Գյումրու Ֆ.Նանսենի անվան նախկին մանկատանից) չունեին նոր ուղեգրեր:

*Նշված խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ է՝*

*1. անհապաղ իրականացնել անհատական սկզբունքով ստուգում և ապահովել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված՝ հատուկ հանրակրթական հաստատություններ ընդունելության համար անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը,*

---

7) վկայագիր՝ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ» տրված տարածքային կառավարման պետական մարմնի կողմից, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողին հատուկ դպրոց ընդունելու համար,

8) տեղեկանք՝ «Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների տեղեկատվական համակարգում» հաշվառված լինելու վերաբերյալ՝ տրված տարածքային կառավարման պետական մարմնի կողմից, հակասոցիալական վարք դրսևորած սովորողներին համապատասխան դպրոց ընդունելու համար (չորրորդ դասարանից սկսած),

9) սովորողի տեղափոխման թերթիկը՝ դպրոցից դպրոց տեղափոխվելիս (բացառությամբ ուսումնական տարվա սկզբում հիմնական դպրոցից ավագ դպրոցի 10-րդ դասարան ընդունվելիս): Նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից տեղափոխվելու դեպքում՝ տեղեկանք տվյալ հաստատությունում ուսումնառության ժամկետների մասին,

10) հիմնական կրթության վկայականի բնօրինակը՝ 10-12-րդ դասարաններ ընդունվելիս,

11) սույն կարգի 19-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետով սահմանված դեպքում՝ փաստաթուղթ զինկոմիսարիատից:



*2.բացառել առանց համապատասխան փաստաթղթերի առկայության երեխաների հաստատություն ընդունումը կամ գտնվելը:*

### **1.3 Շենքային և բնակության պայմանները**

Այցերի ընթացքում ուսումնասիրվել են հաստատությունների շենքային և բնակության պայմանները: Հատուկ ուշադրություն է դարձվել ննջարանների, սանհանգույցների, լոգարանների, խոհանոցի, ճաշարանի, դասասենյակների, մարզադահլիճի, պահեստային ու նկուղային, ինչպես նաև հաստատությունների մյուս հատվածների պայմաններին, որոնց ընթացքում հայտնաբերվել են բազմաթիվ խնդիրներ:

Այցելած հաստատություններից երկուսում (Երևանի թիվ 17 հատուկ դպրոց և Հանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիր) իրականացվում էին շինարարական աշխատանքներ: Հատկանշական է, որ միայն Երևանի թիվ 17 հատուկ դպրոցն էր հարմարեցված հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների կարիքներին, մնացած բոլոր հաստատություններում բացակայում էին հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց տեղաշարժվելու համար անհրաժեշտ հատուկ հարմարությունները:

#### *Լոգարաններ և սանհանգույցներ*

Մաքուր ջուրը, զուգարանները և հիգիենայի լավ վարվելակերպը կարևոր են երեխաների առողջության պահպանման և զարգացման համար: Այսօր աշխարհում շուրջ 2,4 միլիարդ մարդ չեն օգտագործում բարելավված սանիտարական միջոցներ, իսկ 663 միլիոնը չունեն մաքուր ջուր: Հինգ տարեկան երեխաների համար ջրի և սանիտարահիգիենիկ պայմանների հետ կապված հիվանդությունները մահվան գլխավոր պատճառներից մեկն են: Ամբողջ աշխարհում ամեն օր 800-ից ավելի երեխաներ են մահանում վատ ջրից առաջացող կանխարգելվող հիվանդություններից և վատ սանիտարահիգիենիկ պայմաններից<sup>616</sup>:

Կատարած այցերի ընթացքում բացահայտվել են հաստատությունների սանիտարահիգիենիկ և երեխաների մասնավոր կյանքի անձեռնմխելիությանն առնչվող խնդիրներ: Ավելին, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների համար հաստատված չեն նաև սանհանգույցի չափորոշիչներ:

Արձանագրվել է, որ որոշ հաստատությունների լոգարանների պատուհանների ապակիները թափանցիկ էին և առկա չէր վարագույր կամ պատուհանը որևէ այլ կերպ ծածկված չէր: Մասնավորապես՝ Հանրապետական թիվ 2 կրթահամալիրում գործում էր երկու լոգարան՝ աղջիկների և տղաների համար: Այցի պահին աղջիկների՝ կացարանի երկրորդ հարկում գտնվող լոգարանի ապակիները թափանցիկ էին, իսկ պատուհանի անմիջապես դիմացի հատվածում՝ բակում, գտնվում էր խաղահրապարակը: Լոգարանը և խաղահրապարակը գտնվում էին նույն մակարդակի վրա և այդ մասից լոգարանի ներսի հատվածը պարզ երևում էր: Այսինքն՝ յուրաքանչյուր անձի համար տեսանելի էր աղջիկների լոգանքը: Սա խիստ մտահոգիչ է և անթույլատրելի: Նշվածը կարող է բացասաբար անդրադառնալ ինչպես լոգանք ընդունող երեխաների մասնավոր կյանքի անձեռնմխելիության, այնպես էլ այդ տեսարանը տեսնող երեխաների սեռական բնականոն հասունացման վրա:

Որոշ հաստատություններում (օրինակ՝ Երևանի թիվ 12 հատուկ դպրոցում) երեխաները լոգանք էին ընդունում մեկ սենյակում՝ բոլոր աղջիկները միաժամանակ և բոլոր տղաները միաժամանակ: Ցնցողներն առանձնացված չէին միջնորմներով, ինչը նույնպես խնդրահարույց է:

<sup>616</sup> Տե՛ս <https://www.unicef.org/wash/>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Հանրապետական թիվ 2 կրթահամալիրում տեղաշարժվելու դժվարություն ունեցող տղաներին լոգանքի ընթացքում աջակցում են դայակները և սաների շրջանում հայտնի «դայակների օգնական» տղաները: Մտահոգիչ է, որ չնայած վերջիններս չունեն համապատասխան հմտություններ, չեն անցնում խնամքի վերաբերյալ ուսուցման դասընթացներ, ինչպես նաև չեն վարձատրվում, այնուամենայնիվ, իրականացնում են նման աշխատանք:

Այցերի ընթացքում հայտնաբերվել են նաև լոգարանի և սանհանգույցների սանիտարահիգիենիկ պայմանների հետ կապված խնդիրներ: Օրինակ՝ Հանրապետական թիվ 2 կրթահամալիրի կացարանի առաջին հարկում գործող լոգարանը գտնվում էր սանիտարահիգիենիկ անբավարար պայմաններում: Մասնավորապես, պատերին և կոտրված աթոռներին առկա էր բորբոս և օձառի մնացորդներ, գետնին գոյացած էր ջուր: Ճաշարանին կից գործող սանհանգույցում և դրան հարակից հատվածում տարածվում էր զարշահոտություն: Կացարանի՝ տղաների համար նախատեսված սանհանգույցը նույնպես գտնվում էր անմխիթար վիճակում, բացակայում էր զուգարանի թուղթը և դրա համար նախատեսված կախիչը: Գյումրու թիվ 3 հատուկ դպրոցի լոգարանը ևս անմխիթար սանիտարահիգիենիկ վիճակում էր:

Երևանի թիվ 12 հատուկ դպրոցի սանհանգույցները մաքուր չէին, սանհանգույցներից մեկում գտնվող ձեռքերի չորացման սարքն անջատված էր այն պատրվակով, որ «երեխաներն էլեկտրահարության չենթարկվեն», զուգարանի թուղթն ամբողջովին նոր էր, ակնհայտորեն դրված Պաշտպանի աշխատակազմի այցի պահին, ձեռքի օձառ չկար (կար միայն խոհանոցի մոտ գտնվող լվացարաններում):

Զուգարանի թղթի և օձառի բացակայության խնդիրն առկա էր մի շարք հաստատություններում: Հաստատությունների աշխատակիցների պնդմամբ՝ նրանք երեխաներին զուգարանի թուղթ են տալիս, երբ երեխաներն իրենց խնդրում են այդ մասին: Սակայն օրինակ, Հանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիրի սաների պնդմամբ՝ լինում են դեպքեր, երբ կարիք է առաջանում լրացուցիչ թղթի կամ պահանջն առաջանում է գիշերային ժամերին, ինչը դժվարության ու անհարմարության պատճառ է դառնում: Սա խիստ բացասական է անդրադառնում սաների անձնական հիգիենայի պահպանման վրա: Այդ պայմաններում նշյալ կրթահամալիրի սաները ստիպված են եղել զուգարանի թղթի փոխարեն օգտագործել այլ իրեր՝ սրբիչներ, սավաններ և այլն: Աշխատողների պատճառաբանմամբ իրենք են տալիս թուղթը, քանի որ «երեխաները զուգարանի թուղթը պատռում և թափում են» կամ «թղթի գլանը նետում են զուգարանակոնքի մեջ, որի հետևանքով առաջանում է կոյուղու խցանում»: Հատկապես պետք է նշել, որ նման պարզաբանումներ ներկայացվել են մի շարք հաստատություններում, որտեղ այցեր են կատարել Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները (օրինակ Երևանի թիվ 6 հատուկ դպրոց, Հանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիր): Ներկայացված պարզաբանումներն անընդունելի են: Անհրաժեշտ է սաներին զուգարանի թղթից զրկելու փոխարեն իրականացնել հաստատության աշխատողների կողմից պատշաճ հսկողություն և համապատասխան աշխատանք երեխաների հետ՝ բացառելու նմանօրինակ դեպքերը և դրանց պատճառով սաների շահերի ոտնահարումը:

Անհրաժեշտ է նշել, որ Երևանի թիվ 17 հատուկ դպրոցի սանհանգույցները մաքուր էին, առկա էր օձառ և զուգարանի թուղթ: Աշխատակիցները նշել էին, որ եղել են դեպքեր, երբ երեխաները զուգարանի թուղթը գցել են զուգարանակոնքի մեջ, սակայն ոչ հաճախ (հիշեցին նմանատիպ մեկ-երկու դեպք), իսկ աշխատակազմը երեխաներին ներկայացրել է զուգարանից օգտվելու կանոնները: Սա նշանակում է, որ երեխաների հետ համապատասխան աշխատանքի դեպքում կարիք չի լինում նրանց զրկել զուգարանի թղթից և օձառից, ինչպես եղել է այլ հաստատությունների դեպքում:

Երեխայի իրավունքների կոմիտեի 2016 թվականի «Երեխաները և միջավայրը» զեկույցի Երեխաների իրավունքների պաշտպանությունը միջավայրի վնասից 4.1 բաժնում նշվում է, որ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի (սույն հաղորդման սույն բաժնում այսուհետ՝ Կոնվենցիա) 24-րդ հոդվածի համատեքստում պետություններից պահանջվում է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու երեխաների համար առողջ միջավայր, որը սերտորեն կապված է այլ իրավունքների հետ: Մա ներառում է կյանքի, գոյատևման և զարգացման, սննդի, ջրի և սանիտարահիգիենիկ պայմանների, կրթության, տնտեսական շահագործման չենթարկվելու, տեղեկացված լինելու և ապրուստի բավարար պայմանների իրավունք: Հավասարության և խտրական մոտեցման չենթարկվելու իրավունքները ենթադրում են, որ բոլոր երեխաները պետք է ունենան առողջ և ապահով միջավայր<sup>617</sup>:

Անդրադարձնալով բարձրացված խնդրի վերաբերյալ միջազգային կարգավորումներին՝ հարկ է ընդգծել նաև, որ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ուղեցույցը սահմանում է դպրոցների համար սանիտարահիգիենիկ պահանջները: Դրանց համաձայն՝ դպրոցների սանհանգույցները պետք է մաքրվեն օրական առնվազն մեկ անգամ՝ օգտագործելով ախտահանիչ նյութեր, որոնք չպետք է օգտագործվեն մեծ քանակությամբ, որպեսզի չվնասեն սովորողների առողջությանը: Սանհանգույցները պետք է ապահովված լինեն թղթով և օձառով<sup>618</sup>:

Ավելին, Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն (սույն հաղորդման սույն բաժնում այսուհետ՝ ԽԿԿ) Մոլդովայի Հանրապետության վերաբերյալ 2016 թվականի զեկույցում, նկարագրելով նյարդահոգեբուժական կենտրոնի սանհանգույցի և լոգարանի անմխիթար, կեղտոտ և դրա տարբեր հատվածների վնասված վիճակը, անընդունելի է համարել դա և առաջարկել՝ ձեռնարկել համապատասխան միջոցներ նշված հատվածներն ամբողջությամբ վերանորոգելու ուղղությամբ<sup>619</sup>:

«Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմին ճանաչելու և երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն որոշմամբ (սույն հաղորդման սույն բաժնում այսուհետ՝ Որոշում) հաստատված հավելվածի 15-րդ կետի համաձայն՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունն ապահովում է առանձնացված պայմաններում երեխաների նեղ անձնական պահանջմունքները, կարիքները (անձնական հիգիենա) ինքնուրույն բավարարելու հնարավորությունը, անհրաժեշտության դեպքում՝ աշխատողների օգնությամբ: Նույն որոշման 17-րդ կետի համաձայն՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունը երեխային ապահովում է կյանքի համար անվտանգ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան բնակելի տարածությամբ՝ հաշվի առնելով նրա սեռը, տարիքը և առողջական վիճակը:

Բացի այդ, ինչպես արդեն նշվել է, հաստատության ընդհանուր շենքային պայմանները հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող մարդկանց համար: Հատուկ պայմաններ բացակայում են նաև սանհանգույցներում: Հաշմանդամություն ունեցող մարդկանց համար

<sup>617</sup> Տե՛ս Երեխայի իրավունքների կոմիտեի 2016 թվականի «Երեխաները և միջավայրը» զեկույցի Երեխաների իրավունքների պաշտպանությունը միջավայրի վնասից 4.1 բաժինը, <https://www.ohchr.org/Documents/HRBodies/CRC/Discussions/2016/DGDoutcomereport-May2017.pdf>:

<sup>618</sup> Տե՛ս Առողջապահության համաշխարհային կազմակերպության ուղեցույցը, էջ 24, [http://www.who.int/water\\_sanitation\\_health/publications/wash\\_standards\\_school.pdf](http://www.who.int/water_sanitation_health/publications/wash_standards_school.pdf):

<sup>619</sup> Տե՛ս Մոլդովայի Հանրապետության վերաբերյալ ԽԿԿ-ի 2016 թվականի զեկույցի 181-րդ կետը, <http://hudoc.cpt.coe.int/eng?i=p-mda-20150914-en-37>:

ֆիզիկական միջավայրի մատչելիության և հարմարեցվածության անհրաժեշտությունն ամրագրված է թե՛ ներպետական և թե՛ միջազգային փաստաթղթերով:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 7-րդ հոդվածը սահմանում է, որ *հաշմանդամություն ունեցող երեխայի համար պետք է ապահովվի մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից մյուս երեխաների հետ հավասար հիմունքներով օգտվելը, իսկ հաշմանդամություն ունեցող երեխաներին վերաբերող բոլոր գործողություններում երեխայի բարձրագույն շահերը համարվում են առաջնահերթ*: Նույն կոնվենցիայի 9-րդ հոդվածով սահմանվում է, որ *հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիակատար մասնակցության հնարավորություն ընձեռելու նպատակով մասնակից պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ, որպեսզի նրանց համար մյուսների հետ հավասար հիմունքներով ապահովեն ֆիզիկական միջավայրի, փոխադրամիջոցների, տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաներն ու համակարգերը, ինչպես նաև այլ հարմարությունների ու ծառայությունների մատչելիությունը, որոնք հասանելի են հասարակությանը և քաղաքներում, և գյուղական վայրերում*<sup>620</sup>:

Ուաշտայանի աշխատակազմում կատարվել է տվյալ խնդրի կապակցությամբ տարբեր երկրների փորձի ուսումնասիրություն: Օրինակ՝ Միացյալ Թագավորության Կրթության դեպարտամենտի դպրոցների համար սահմանված չափորոշիչներ համաձայն (կիրառելի են նաև համայնքային կենտրոնների, հատուկ դպրոցների և այլ հաստատությունների համար)՝ *երեխաների և անձնակազմի սանհանգույցները պետք է լինեն առանձին, երեխաների զուգարանները պետք է ունենան դռներ, որոնք փակվում են ներսից և նախատեսված են միաժամանակ միայն մեկ երեխայի օգտվելու համար: Հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների համար զուգարաններում պետք է բացառվեն աստիճանները և այլ խոչընդոտները, իսկ զուգարանները պետք է լինեն այնպիսի վայրում, որ երեխաները ստիպված չլինեն անցնել 40 մետրից ավել տարածք*<sup>621</sup>:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության ուղեցույցով սահմանվում են դպրոցների համար սանիտարահիգիենիկ պահանջներ: Հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված սանհանգույցների համար սահմանված չափորոշիչները ներառում են *թեքահարթակ, լայն դուռ, ներսում բավականաչափ տարածք անվասայլակով տեղաշարժման համար, հարմարեցված զուգարանակոնք և բռնակներ*<sup>622</sup>: Նշված չափորոշիչներով ևս պահանջվում է, որպեսզի յուրաքանչյուր սանհանգույց պարտադիր ունենա դռներ:

Նման օրինակ առկա է նաև Մինգապուրի Հանրապետությունում, որտեղ սանիտարական նորմերով պահանջվում է, որ *սանհանգույցները հարմարեցված լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար և ունենան դռներ*<sup>623</sup>:

<sup>620</sup> Տե՛ս «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 7-րդ և 9-րդ հոդվածները, [http://www.un.am/res/UN%20Treaties/III\\_15.pdf](http://www.un.am/res/UN%20Treaties/III_15.pdf):

<sup>621</sup> Տե՛ս Միացյալ Թագավորության Կրթության դեպարտամենտի՝ դպրոցների համար սահմանված չափորոշիչները,

[https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment\\_data/file/410294/Advice\\_on\\_standards\\_for\\_school\\_premises.pdf](https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/410294/Advice_on_standards_for_school_premises.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>622</sup> Տե՛ս Առողջապահության համաշխարհային կազմակերպության ուղեցույցը, էջ 22, [http://www.who.int/water\\_sanitation\\_health/publications/wash\\_standards\\_school.pdf](http://www.who.int/water_sanitation_health/publications/wash_standards_school.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>623</sup> Տե՛ս սանիտարահիգիենիկ պայմանների վերաբերյալ չափանիշները (Մինգապուրի Հանրապետություն), [https://www.bca.gov.sg/data/ImgCont/439/05\\_Sanitary%20Provisions.pdf](https://www.bca.gov.sg/data/ImgCont/439/05_Sanitary%20Provisions.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Ուստի, խնդրահարույց է նաև հաստատությունների տարածքում հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց տեղաշարժման համար անհրաժեշտ պայմանների բացակայությունը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝*

*1. ապահովել հաստատությունների ողջ տարածքում, ներառյալ՝ մասնաշենքերի ներսում, հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց տեղաշարժման համար անհրաժեշտ պայմաններ,*

*2. ապահովել լոգարանի պատուհանների անթափանցելիությունը՝ տեղադրելով անհրաժեշտ շերտավարագույրներ կամ ոչ թափանցիկ սպակիներ,*

*3. բացառել լոգանք ընդունելու ընթացքում սաների կողմից միմյանց օգնելը,*

*4. ապահովել լոգարանի և սանհանգույցների սանիտարահիգիենիկ պատշաճ պայմանները,*

*5. սանհանգույցներում ապահովել զուգարանի թղթի, իսկ լվացարաններում՝ հեղուկ օձառի մշտական առկայությունը,*

*6. երեխաների համար դասընթացներ կազմակերպել սանհանգույցներից օգտվելու կարգի վերաբերյալ, ինչպես նաև սանհանգույցներում փակցնել սանհանգույցներից օգտվելու վերաբերյալ տեղեկատվական թերթիկներ,*

*7. հաստատել սանհանգույցի չափորոշիչներ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների համար՝ հիմք ընդունելով միջազգային փորձը:*

*Ննջասենյակների պայմաններ և գերբնակեցում*

Այցերի ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչներն արձանագրել են բազմաթիվ խնդիրներ հաստատությունների ննջարաններում:

Մասնավորապես, Հանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիրի մասնաշենքի մուտքից ձախակողմյան ննջասենյակների պատուհաններին բացակայում էին վարագույրները, իսկ դրանց դիմաց նույն հարթության վրա խաղահրապարակն էր: Խաղահրապարակից, այսինքն՝ դրսից, ակնհայտ տեսանելի էր սենյակների ներսի հատվածը: Այդ կողմում առկա էին ինչպես տղաների, այնպես էլ աղջիկների ննջասենյակներ: Նշվածն անթույլատրելի է, քանի որ այն առաջացնում է նաև սաների մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ոչ իրավաչափ միջամտության խնդիր՝ երեխաների կամքից անկախ այլ անձանց հասանելի դարձնելով վերջիններիս անձնական կյանքի տարբեր դրվագներ:

Չկային ներքնակներ, կրթահամալիրի սաները քնում էին չոր մատրասների վրա, որոնք առանձին դեպքերում մահճակալից կարճ էին կամ վնասված: Արձանագրվել է նաև, որ չնայած եղանակային ցուրտ պայմաններին՝ ծածկոցներն առանց վերմակների էին:

Թեև կրթահամալիրի աշխատակիցների պնդմամբ՝ անկողնային պարագաները փոխվում են շաբաթվա ընթացքում մեկ անգամ, իսկ անկողնու ծածկոցները՝ երկու անգամ, Պաշտպանի ներկայացուցիչների ուսումնասիրությունները բոլորովին այլ բան են վկայում: Մասնավորապես, անկողինների սպիտակեղենը եղել է կեղտոտ, բավականին հնամաշ, ծածկոցների մի մասը՝ կարկատած: Հատկանշական է, որ այցի պահին պահեստում արձանագրվել են բարվոք վիճակում գտնվող անկողնային պարագաներ:

Մահճակալների վրա առկա էին սրբիչներ, որոնք կրթահամալիրի սաների կողմից օգտագործվում են լվացվելուց հետո: Այցի պահին բազմաթիվ սրբիչներ ակնհայտ կեղտոտ էին: Դրանց վրայի հետքերը վկայում էին այն մասին, որ դրանք օգտագործվել էին սաների կողմից՝ սանհանգույց այցելելուց հետո՝ մարմնի համապատասխան մասերը մաքրելու համար: Նշվածը սաներին զուգարանի թուղթ չտրամադրելու հետևանքն է: Նման մոտեցումն

անընդունելի է և խիստ մտահոգիչ: Նշված խնդրի վերաբերյալ դիտարկումները մանրամասն ներկայացված են «Լոգարաններ և սանհանգույցներ» մասում:

Միջազգային փաստաթղթերի ուսումնասիրությունը թույլ է տալիս վկայել, որ այս հարցը դիտարկվում է նաև վատ վերաբերմունքի տեսանկյունից: Մասնավորապես, ԽԿԿ-ի Մոլդովայի Հանրապետության վերաբերյալ 2016 թվականի գեկույցի 182-րդ կետի համաձայն՝ ԽԿԿ-ն մտահոգիչ է համարել նյարդահոգեբուժական կենտրոնում կանանց սանիտարական սրբիչներ չտրամադրելը և հորդորել է ձեռնարկել անհրաժեշտ քայլեր դրանք ապահովելու համար:

Աշխատակիցների պնդմամբ՝ կրթահամալիրում բնակվում էին նաև գիշերամիզող սաներ՝ 7 տղա և 7 աղջիկ: Նրանց ննջասենյակների մահճակալների մի մասից բացակայում էին ներքնակները (մատրասները), իսկ այն պահող փայտերը խոնավ էին: Աշխատակիցների պնդմամբ՝ իրենք են հեռացրել ներքնակները, որպեսզի փայտերը չորանան: Որոշ մահճակալների անկողնային պարագաներ՝ ներքնակներ, սավաններ, ծածկոցներ այցի պահին թաց են եղել: Մահճակալների մի մասից բացակայել են ծածկոցները:

Այցի պահին սաներից մեկի մահճակալի վրա դրված ջրակայուն սավանի վրա առկա էր դեղնավուն հեղուկ: Ենթադրաբար այն գիշերամիզող երեխայի անկողին էր: Նույն անկողնու սպիտակեղենի մի հատվածն օգտագործվել է երեխայի կողմից սանհանգույց հաճախելուց հետո: Նշվածը ևս մեկ անգամ հաստատում էր այն միտքը, որ զուգարան հաճախելուց հետո սաների կողմից տարբեր կտորներ օգտագործելը դա զուգարանի թուղթ չտրամադրելու հետևանք է:

Խնդրահարույց է հաստատությունների (Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ խնամքի հաստատություն, «Թոչունյան տուն» կրթահամալիր-մանկատուն) ննջասենյակներում մեծ թվով մահճակալների տեղակայումը: Օրինակ՝ «Թոչունյան-տուն» կրթահամալիր-մանկատունն ունի 10 ննջասենյակ, որոնցից 8-ը՝ 17քմ է, 1-ը՝ 12քմ և 1-ը՝ 15քմ: Յուրաքանչյուր ննջասենյակում քնում էին 2-6 երեխա: ՀՀ օրենսդրությունը չի սահմանում բնակելի տարածքի չափորոշիչներ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների համար, այդ պատճառով Պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրվել է այլ ոլորտներում նմանատիպ չափորոշիչների առկայությունը, ինչպես նաև այլ երկրների և միջազգային կազմակերպությունների փորձը՝ առանց նույնացնելու տարբեր ոլորտներում գործող հաստատությունների գործունեությունը:

Օրինակ՝ ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը սահմանում է ազատագրվման դատապարտված անձի բնակելի տարածքին ներկայացվող պահանջները: Համաձայն նշյալ օրենսգրքի 72-րդ հոդվածի՝ ուղղիչ հիմնարկում դատապարտյալին հատկացված բնակելի տարածքը պետք է համապատասխանի ընդհանուր բնակելի տարածքների համար սահմանված շինարարական և սանիտարահիգիենիկ չափանիշներին, ինչպես նաև ապահովի նրա առողջության պահպանումը: Ուղղիչ հիմնարկում մեկ դատապարտյալին հատկացվող բնակելի տարածության չափը չի կարող պակաս լինել չորս քառակուսի մետրից:

ԽԿԿ-ի Նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետության վերաբերյալ 2016 թվականի գեկույցի համաձայն՝ հոգեբուժական կազմակերպությունում բնակելիության մակարդակի վերաբերյալ ուսումնասիրությամբ պարզվել է, որ 36քմ մակերես ունեցող սենյակում պահվել է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 8 անձ: Վերը նշվածի հետ կապված ԽԿԿ-ն կոչ է արել ջանքեր գործադրել հոգեբուժական կազմակերպություններում պահվող անձանց կենսապայմանների բարելավման, մասնավորապես՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող յուրաքանչյուր անձի հասանելի բնակելի տարածության

մակերեսն ավելացնելու ուղղությամբ՝ բազմաբնակելի սենյակներում յուրաքանչյուր անձի համար ապահովելով առնվազն 6քմ անձնական տարածություն:

Այսպիսով՝ խնդրահարույց է այն, որ երեխաները ստիպված են քնել նման խտությամբ ննջասենյակներում:

Հաստատություններում առկա էին նաև խնդիրներ՝ կապված զգեստապահարանների և կոդապահարանների հետ:

Գյումրու թիվ 3 հատուկ դպրոցի ննջասենյակների մահճակալների մոտ չկային կոդապահարաններ, երեխաների անձնական իրերը մեկ ընդհանուր պահարանում էին պահվում: Անձնական իրերի մեջ չկային հիգիենայի պարագաներ (ատամի մածուկ, խոզանակ և այլն). տնօրենի պարզաբանմամբ դրանք ամեն առավոտ՝ օգտագործումից հետո, հավաքվում են երեխաներից և պահվում փակվող պահարանում, իսկ հաջորդ առավոտ գիշերային դայակը դրանք նորից տալիս է երեխաներին: Դա պարզաբանվում էր այն հանգամանքով, որ երեխաները կոտրում են ատամի խոզանակները կամ դատարկում են մածուկի պարունակությունը:

Երևանի թիվ 6 և թիվ 2 հատուկ դպրոցներում ննջասենյակներում տեղադրված էին մեկ կամ երկու կոդապահարան, սակայն դրանց քանակը չէր համապատասխանում սենյակներում բնակվող երեխաների թվաքանակին:

Հանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիրի ննջասենյակներում առկա էին զգեստապահարաններ և պահարաններ կրթահամալիրի սաների անձնական իրերի համար, սակայն ոչ բոլորն էին ապահովված զգեստապահարաններով և կոդապահարաններով: Սաների սոցիալ-հոգեբանական ռեաբիլիտացիայի տեսանկյունից չափազանց կարևոր է, որ չնայած ընդհանուր սենյակում բնակվելուն՝ վերջիններս ունենան անձնական տարածք:

Այս հարցը պետք է դիտարկել անձնական կյանքի իրավունքի տեսանկյունից: Յուրաքանչյուրի համար առանձնացված պահարանի առկայությունն անձնական կյանքի իրավունքի իրացման համար բացարձակ անհրաժեշտ է: Այս հարցին անդրադարձ է կատարվել նաև ԽԿԿ-ի Մոլդովայի Հանրապետության վերաբերյալ 2016 թվականի զեկույցում, որտեղ անդրադարձ է կատարվել հոգենյարդաբանական հաստատության պայմաններին: Մասնավորապես, նշյալ զեկույցի 176-րդ կետի համաձայն՝ *(...) ԽԿԿ-ի կարծիքով անձանց սոցիալ-հոգեբանական ռեաբիլիտացիայի աջակցման տեսանկյունից ցանկալի կլինի, որպեսզի բնակիչներն ունենան անձնական, կողպելու հնարավորություն ունեցող պահարան և հատուկ իրենց համար նախատեսված հագուստ (...)*<sup>624</sup>:

Ավելին, ԽԿԿ-ի Նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետության վերաբերյալ 2016 թվականի զեկույցի 97-րդ կետի համաձայն՝ *ԽԿԿ-ն ցանկանում է ստանալ հաստատում առ այն, որ ի լրացումն մահճակալների՝ հաստատության կացարանները կահավորված են ազատությունից զրկված անչափահասների քանակին համապատասխան սեղաններով և աթոռներով, ինչպես նաև հաստատում, որ յուրաքանչյուր անչափահասի տրամադրվել է անձնական, կողպելու հնարավորություն ունեցող պահարան (...)*<sup>625</sup>:

Ավելին, ԽԿԿ-ն Հայաստանի Հանրապետության վերաբերյալ 2016 թվականի զեկույցում նշել է, որ «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի և՛ կանանց, և՛ տղամարդկանց բաժանմունքներում անձնական տարածքն ապահովված չի եղել, մասնավորապես՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք չեն ունեցել կողպելու հնարավորություն ընձեռող անձնական տարածություն: ԽԿԿ-ն առաջարկել է

<sup>624</sup> Տե՛ս ԽԿԿ-ի Մոլդովայի Հանրապետության վերաբերյալ 2016 թվականի զեկույցի 176-րդ կետը, <http://hudoc.cpt.coe.int/eng?i=p-mda-20150914-en-37>:

<sup>625</sup> Տե՛ս ԽԿԿ-ի Նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետության վերաբերյալ 2016 թվականի զեկույցի 97-րդ կետը, <http://hudoc.cpt.coe.int/eng?i=p-mkd-20141007-en-31>:

*Հայաստանի իշխանություններին անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ում պահվող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող բոլոր անձանց՝ կողպելու հնարավորություն ընձեռող, անձնական տարածությամբ ապահովելու ուղղությամբ, որտեղ նրանք կարող են պահել իրենց իրերը»<sup>626</sup>:*

Հաշվի առնելով վերը նշված չափանիշները, ինչպես նաև հաստատությունների սաների սոցիալ-հոգեբանական ռեաբիլիտացիայի կարևորությունը՝ խիստ մտահոգիչ է այցերի ընթացքում արձանագրված այն փաստը, որ ոչ բոլոր սաների համար է նախատեսված անձնական տարածք, պահարան կամ կողպահարան:

Ավելին, հարկ է նշել նաև, որ մտահոգիչ է հաստատությունների ննջասենյակներում սաների անձնական իրերի կամ նրանց հետաքրքրությունների վերաբերյալ առարկաների բացակայությունը: Սաների պատճառաբանությամբ՝ նրանք չեն փակցնում նկարներ, քանի որ դա կարող է վնասել պատերը:

Այս կապակցությամբ ԽԿԿ-ն Խորվաթիայի Հանրապետության վերաբերյալ 2013, ինչպես նաև Ադրբեջանի Հանրապետության վերաբերյալ 2014 թվականների զեկույցներում սոցիալական խնամքի հաստատությունների առնչությամբ կարևորել է բնակիչների՝ *անձնական, կողպելու հնարավորություն ունեցող պահարան, ինչպես նաև սենյակներում բնակիչների անհատականության և դա ընդգծող անձնական իրերի առկայության խթանումը*<sup>627</sup>:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. հաստատություններում գիշերող անձանց տրամադրել անհատական կողպահարաններ և վերանորոգել ննջասենյակների պահարանները,*

*2. ննջասենյակներում տեղադրել ոչ թափանցիկ վարագույրներ՝ բացառելու բակից ննջասենյակների ներսի հատվածի տեսանելիությունը,*

*3. անկողիններն ապահովել անհրաժեշտ պարագաներով՝ դռակ, ներքնակ, ծածկոց, ինչպես նաև ապահովել դրանց և անձնական սրբիչների մաքրությունը, ինչպես նաև հատուկ ուշադրություն դարձնել գիշերամիզող սաների անկողնային պարագաների մաքրությանը:*

#### **1.4 Բժշկական օգնություն և սպասարկում**

Հաստատություններում բացահայտվել են խնդիրներ՝ կապված բուժօժանայության կազմակերպման, դեղամիջոցների պահպանման և տրամադրման, մեկուսարանների, խոհանոցի աշխատակիցների և պատրաստվող սննդի նկատմամբ վերահսկողության հետ և այլն:

Հանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիրում բժշկական ծառայությունը կազմակերպվում է երկու բուժքրոջ և մեկ բժշկի օգնությամբ: Բուժքույրերն աշխատում են ամենօրյա գրաֆիկով՝ առավոտյան 9:00-ից մինչև երեկոյան 18:30՝ փոխարինելով մեկը մյուսին, իսկ կիրակի օրը հերթապահության կարգով աշխատում են 10:00-ից 19:30-ը: Բժիշկը հանգստյան օրերին այցելում է խիստ անհրաժեշտության դեպքում:

«Թոչունյան տուն» կրթահամալիր-մանկատունը սպասարկում է մեկ բուժքույր, որի հավաստմամբ՝ նա իրականացնում է առաջին օգնությունը, մինչդեռ լուրջ խնդիրների դեպքում հրավիրվում է բժիշկ:

<sup>626</sup> Տե՛ս ԽԿԿ-ի Հայաստանի Հանրապետության վերաբերյալ 2016 թվականի զեկույցի 121-րդ և 122-րդ կետերը, <https://rm.coe.int/16806bf46f>:

<sup>627</sup> Տե՛ս ԽԿԿ-ի Խորվաթիայի Հանրապետության վերաբերյալ 2013 թվականի զեկույցի 117-րդ կետը, <http://hudoc.cpt.coe.int/eng?i=p-hrv-20120918-en-35>:

Տե՛ս նաև ԽԿԿ-ի Ադրբեջանի Հանրապետության վերաբերյալ 2014 թվականի զեկույցի 52-րդ կետը, <http://hudoc.cpt.coe.int/eng?i=p-aze-20131119-en-14>:



Թիվ 17 հատուկ դպրոցի բժշկական ծառայությունը կազմակերպվում է մեկ բժշկի (նյարդաբան) և երկու բուժքրոջ միջոցով: Բժիշկ-նյարդաբանն աշխատում է 1 (լրիվ) դրույքով՝ երկուշաբթիից մինչև ուրբաթ օրերին՝ 9:00-17:00-ն: Բուժքույրերն աշխատում են հերթափոխով (օրվա 1-ին կես/ 2-րդ կես): Բուժկետը հերթապահություններ չի ներառում: Հանգստյան կամ ոչ աշխատանքային օրերին, ինչպես նաև ոչ աշխատանքային ժամերին բուժկետը գործնականում փակ է: Նույն իրավիճակն է Երևանի թիվ 6 հատուկ դպրոցում, Երևանի թիվ 12 հատուկ դպրոցում, Գյումրու թիվ 3 հատուկ դպրոցում:

**Այսպիսով՝ մտահոգիչ է, որ հաշմանդամություն ունեցող երեխաների խնամք իրականացնող հաստատություններում չի կազմակերպվում շուրջօրյա բուժծառայություն:**

**Մի շարք հաստատություններում չեն պահպանվում դեղորայքի տրամադրման կանոնները:** Օրինակ՝ երեկոյան ժամերին կրթահամալիրի սաներին դեղորայքը, այդ թվում՝ **հոգեմետ դեղերը, տրամադրվում է ոչ բժշկական կրթությամբ աշխատակիցների դայակների կողմից:** Նշված դեղորայքը բժշկի գիտությամբ դրվում է բուժկետի ընդունարանի դեմ դիմաց տեղակայված, շահագործվող սանհանգույցի չհրկիզվող պահարանի դարակում, որն այցի պահին բաց էր: Ավելին, այնտեղ պահվում էին նաև ախտահանիչ նյութեր: **Այս իրավիճակը հակասում է ՀՀ առողջապահության նախարարի 2018 թվականի օգոստոսի 18-ի «Բժշկական նպատակներով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի օգտագործման կարգը և պայմանները հաստատելու մասին» թիվ 17-Ն հրամանով հաստատված հավելվածով սահմանված կարգին:** Մտահոգիչ է նաև այն, որ ախտահանիչ նյութերը հասանելի են կրթահամալիրի սաներին:

Այս առումով անհրաժեշտ է ընդգծել, որ Որոշմամբ հաստատված հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ *երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունն ապահովում է երեխայի անվտանգությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անվտանգության կանոններին համապատասխան:* Նույն հավելվածի 6-րդ կետի «գ» ենթակետով նախատեսվում է, որ *երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է երեխայի պաշտպանությունն առողջությունը վտանգող նյութերից և կյանքը վտանգող պայմաններից:* **Ուստի, ախտահանիչ նյութերի անվերահսկելի պահպանումն անթույլատրելի է:**

Կրթահամալիրում երեկոյան ժամերին դեղորայքը տրամադրվում է մասնաշենքի բնակելի հատվածի միջանցքում, որտեղ կրթահամալիրի բոլոր սաները հավաքվում են կինոդիտման: Դաստիարակը 1 շիշ ջրով և 1 միանգամյա օգտագործման բաժակով դեղորայք է տրամադրում դեղերն ընդունող սաներին: Վերջիններից մեկն իր նախաձեռնությամբ ջուր լցնողն է: Ջրից օգտվողները նույն բաժակից, նույնիսկ առանց ջուրը թարմացնելու շարունակաբար խմում են հատկացված դեղամիջոցները: Դրանք դրվում են յուրաքանչյուրի անվամբ առանձնացված պոլիէթիլենային տոպրակներում: **Չեն պահպանվում անձնական հիգիենայի և դրանց ներկայացվող սանիտարահիգիենիկ պահանջները:**

Բժշկական անձնակազմն ամբուլատոր բժշկական օգնությունն իրականացնում է բուժկետում և արձանագրում է համապատասխան մատյանում, որը չի կարվում և չի կնքվում, այն պարագայում, երբ կրթահամալիրի թվով 22 սաներ ստանում են հոգեմետ դեղամիջոցներ: Ավելին, կրթահամալիրի սաներին հոգեմետ դեղորայք տրամադրելու կարգ սահմանված չէ, դրանք պահվում են բուժկետի ընդունարանի սեղանի դարակում առանց փակի և սաներին տրամադրվում երեկոյան ժամերին դայակների կողմից: Հարկ է նշել, որ հոգեմետ դեղորայք կրթահամալիրի սաների համար ձեռք են բերում ծնողները կամ հաստատությունը, որտեղ հիմնականում բնակվում է երեխան, օրինակ՝ Մարի Իզմիրյանի անվան մանկատունը:

Ավելին, կրթահամալիրում սաներին տրամադրվում է դեղորայք առանց հիմնավորման՝ ամբուլատոր մատյանում արձանագրելով միայն ախտորոշումը կամ ախտանիշը և հատկացվող դեղատեսակը:

«Թռչունյան տուն» կրթահամալիր-մանկատանը խնամվող երեխաները տեղեկացրին, որ երեկոյան ժամերին իրենք չեն կարողանում ստանալ նույնիսկ գլխացավի կամ ջերմիջեցնող դեղորայք, քանի որ բուժկետը փակ է լինում:

**Հաստատություններում խնդրահարույց է մեկուսարանների հետ կապված իրավիճակը:** Մասնավորապես, Հանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիրի մեկուսարանը գտնվել է սանիտարահիգիենիկ անթույլատրելի վիճակում: **Անկողիններին առկա աղբի ուսումնասիրությունն առերևույթ վկայում է, որ դրանք կրծողների (առնետների) կղանքի մնացորդներ են: Նշվածն անթույլատրելի է և խիստ մտահոգիչ:**

**Գյումրու թիվ 3 հատուկ դպրոցի մեկուսարանը 2017 թվականի այցի ժամանակ օգտագործվում էր որպես պահեստ:** Պաշտպանի աշխատակազմի 2018 թվական այցի ժամանակ պարզվեց, որ մեկուսարանի մի մասն ազատվել է ավելորդ իրերից և տեղադրվել է մահճակալ, որը սակայն երբեք չի օգտագործվել, իսկ սենյակի ազատ մասը շարունակվում էր օգտագործվել որպես պահեստ:

Խնդրահարույց է հաստատությունների անձնակազմի և հատկապես՝ խոհանոցի աշխատակիցների առողջության ստուգման և պատշաճ արձանագրման գործընթացը: ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» 2.3.1-02-2014 սանիտարական կանոնների և նորմեր հաստատելու մասին» թիվ 32-Ն հրամանի 65-րդ, 66-րդ և 67-րդ կետերի համաձայն՝ ամեն օր, աշխատանքները սկսելուց առաջ, բուժաշխատողի կողմից կատարվում է ուսումնական հաստատության խոհանոցի աշխատողների ձեռքերի և մարմնի բաց հատվածների մաշկի զննում՝ թարախային վերքերի առկայության, ինչպես նաև վերին շնչուղիների կատարյալ երևույթների և անզինաների նկատմամբ: Զննումների արդյունքները գրանցվում են «Առողջության մատյան»-ում՝ համաձայն նույն կանոնների ձև 6-ի: Մատյանը լրացնելիս օգտագործվում են հետևյալ պայմանական նշանները՝ Առ-առողջ է, Մ-մեկուսացված է, Արձ-գտնվում է արձակուրդում, Հ-հանգստյան օր, Ան/թ-անաշխատունակության թերթիկ: Մատյանում նշվում են տվյալ օրը ներկա բոլոր աշխատողների անուն-ազգանունները:

Չնայած վերոնշյալ կարգավորմանը՝ **մի շարք հաստատություններում խնդիրներ են արձանագրվել՝ կապված խոհանոցի աշխատակիցների զննման գործընթացի հետ:** Օրինակ, Հանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիրի բժշկական ծառայությունում իրականացվում է խոհանոցի աշխատակիցների, մասնավորապես, խոհարարների նկատմամբ սանիտարական հսկողություն՝ բկանցքի, ձեռքերի և սկլերաների, որն արձանագրվում է համապատասխան մատյանում՝ նշելով, որ մաքուր է: Հարկ է ընդգծել, որ վերը նշված զննումներն իրականացվում են միայն նախաձաշի մատուցումից հետո, երբ բժշկական անձնակազմը հաճախում է կրթահամալիր:

Երևանի թիվ 12 հատուկ դպրոցի «Խոհանոցի աշխատողների առողջության» մատյանում գրառում կատարում է բուժքույրը, ըստ իր խոսքի, ամեն օր առավոտյան ստուգելով խոհանոցի 3 աշխատակիցներին: Գրառումները միօրինակ և բոլոր աշխատակիցների և օրերի համար նույնն են («առողջ»): Մատյանում բացակայում էին գրառումներն այցին նախորդող 4 օրերի համար: Այսպիսով, մտահոգիչ են, որ խոհարարների նկատմամբ սանիտարական հսկողությունը կրում է ձևական բնույթ, իսկ մշտադիտարկման այցից առաջ 4 օրվա ստուգում ընդհանրապես չի կատարվել: Նույն հաստատության «Խոհանոցի ստուգման տետրում» գրառումներ կատարում է բուժքույրը, ըստ իր խոսքի, ամեն օր առավոտյան: Գրառումները միօրինակ են և բոլոր օրերի համար նույնն են («Ստուգել եմ

խոհանոցի և ճաշարանի սանիտարական վիճակը: Մպասքը՝ մաքուր լվացված, ծածկված, սննդամթերքն՝ իր տեղում, ընդհանուր սանիտարական վիճակը բավարար է»): Բուժքույրը նշում է, որ չունի խոհանոցի (և ընդհանուր առմամբ՝ այլ տարածքների) սանիտարահիգիենիկ վիճակի ստուգման կոնկրետ չափորոշիչ, իր կողմից ստուգումը կատարվում է միայն արտաքին դիտարկման-գնման միջոցով: Այցին նախորդող 2 օրերի համար գրառումներ ընդհանրապես չկային:

Հարկ է նշել, որ ՀՀ առողջապահության նախարարի վերոնշյալ հրամանի 60-րդ կետի համաձայն՝ *նմուշառված ճաշատեսակի գնահատումը զգայորոշման ցուցանիշների նկատմամբ կատարվում է խոտանորոշման հանձնաժողովի կողմից*: Ավելին, նույն հրամանի 61-րդ կետը սահմանում է, որ *պատրաստի կերակրատեսակի, խոհարարական արտադրանքի գնահատումն իրականացվում է՝ ըստ զգայորոշման ցուցանիշների, ինչի արդյունքները լրացվում են «Պատրաստի կերակրատեսակի, խոհարարական արտադրանքի խոտանորոշման մատյան»-ում՝ համաձայն սույն կանոնների ձև 4-ի*: Ինչպես նաև 62-րդ կետի համաձայն՝ *յուրաքանչյուր պատրաստի կերակրատեսակի բացթողումն իրականացվում է նմուշառումից և զգայորոշման ցուցանիշների նկատմամբ գնահատումից հետո*: Իսկ բուժաշխատողների կողմից սննդի նկատմամբ հսկողությունն իրականացվում է նույն հրամանի 64-րդ կետի պահանջների համաձայն, այն է՝ *ուսումնական հաստատության բուժաշխատողը սննդի օրաբաժնի որակական և քանակական կազմի, նրա սննդային և էներգետիկ արժեքի հաշվարկը և գնահատումը կատարում է 2 շաբաթը մեկ, ինչի տվյալները գրանցում են «Մսնդի օրաբաժնի հսկողության, սննդային և էներգետիկ արժեքի հաշվարկի մատյան»-ում՝ համաձայն սույն կանոնների ձև 5-ում*: *Գնահատման արդյունքների հիման վրա, անհրաժեշտության դեպքում, հաջորդ 10-14 օրվա համար նախատեսված ճաշացուցակում կատարվում են ուղղումներ և լրացումներ*:

**«Թոչունյան տուն» կրթահամալիր-մանկատանը և Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատությունում խոհանոցի աշխատակիցների առողջության ստուգման հետ կապված որևէ մատյան չի ներկայացվել:**

Խնդիրներ են արձանագրվել հաստատություններում ժամկետանց դեղորայքի և բժշկական թափոնների խոտանման հետ:

**Երևանի թիվ 6 և թիվ 17 հատուկ դպրոցներում արձանագրվել են ժամկետանց դեղեր, իսկ մշտադիտարկման ենթարկված գրեթե բոլոր հաստատություններում պահպանված չեն եղել ժամկետանց դեղորայքի խոտանման, ինչպես նաև սրածայր թափոնների պահպանման կարգերը:**

Մասնավորապես, Հանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիրում բժշկական թափոնները, այդ թվում՝ ժամկետանց դեղորայքը թափվում են կենցաղային աղբի հետ: Ավելին, բժշկական անձնակազմի ներկայացուցիչների հավաստմամբ՝ մինչ կենցաղային աղբամանը նետելը կոտրվում են օգտագործված ներարկիչների ասեղները կամ ծովում՝ զցելով դրանք ոտքի տակ: Հարկ է նշել, որ նման մոտեցումն անթույլատրելի է և կարող է վտանգ ներկայացնել նաև հենց օգտագործված ներարկիչը կոտրող անձի՝ բուժաշխատողի համար:

Այսպես, ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 03-Ն հրամանով հաստատված հավելված 1-ի (այսուհետ՝ Հավելված) 21-րդ կետի համաձայն՝ *սրածայր թափոնները, դրանց գոյացման վայրում, օգտագործելուց անմիջապես հետո տեղադրվում են մեկանգամյա օգտագործման կարծր (օրինակ՝ պլաստիկ շշերի, մետաղյա կամ կարծր պլաստմասե բեռնարկղի մեջ), կենսաբանական վտանգի նշանը և «Զգույշ*

սրածայրեր» մակնշումը կրող տարողությունների մեջ: Արգելվում է տեղադրելուց առաջ ներարկիչների ասեղների կրկնակի փակելը կափարիչով և (կամ) ախտահանելը:

Հավելվածի 25-րդ կետի համաձայն՝ բոլոր տեսակի բժշկական թափոնները տարողությունների մեջ տեղադրվելուց հետո հերմետիկորեն փակվում են, իսկ ախտաբանաանատոմիական, միկրոկենսաբանական, սրածայր և քիմիական թափոնները նաև կնքվում, ինչից հետո բժշկական թափոնի հավաքելու, տեղադրելու, փակելու և տեղափոխելու պարտականություն ունեցող աշխատողը լրացնում է պիտակ՝ դրա վրա նշելով տեղադրված բժշկական թափոնի տեսակը, դրա՝ տարողությունում տեղավորելու կոնկրետ ժամը, օրը, ամիսը, տարեթիվը, իր անունը և ազգանունը, ինչպես նաև կազմակերպության անվանումը: Լրացված պիտակն ամրացվում է տարողությանը, որն անմիջապես տեղափոխվում է բժշկական թափոնների ժամանակավոր պահման հատուկ տարածք: Լրացված պիտակը տարողությունից տարանջատվելու հնարավորությունը բացառվում է: Նշված կարգավորումների և ուսումնասիրության արդյունքների համեմատական վերլուծությունը վկայում է, որ խնդրահարույց է կրթահամալիրի բուժաշխատողների մոտեցումը բժշկական թափոնների աղբանետման իրականացմանը: Անհրաժեշտ է նշել, որ գրեթե բոլոր հաստատություններում չէին պահպանվում բժշկական թափոնների գործածությանը ներկայացված պահանջները, այսինքն՝ խնդիրն ունի համակարգային բնույթ:

*Հիմք ընդունելով վերը նշվածը՝ անհրաժեշտ է՝*

*1. կանոնակարգել հաստատություններում դեղորայքի, ներառյալ՝ հոգեմետ դեղերի տրամադրման ընթացակարգերը, այդ թվում՝ գիշերային ժամերին: Բացառել հաստատություններում բնակվող մարդկանց դեղորայք ընդունելու ընթացքում միևնույն բաժակից օգտվելը,*

*2. ապահովել դեղորայքի, ախտահանիչ նյութերի պահման անվտանգ և պատշաճ պայմաններ,*

*3. ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ հաստատություններում կրծողների և միջատների առկայությունը բացառելու համար: Ապահովել մեկուսարանների անկողնային պարագաների սանիտարահիգիենիկ պատշաճ պայմանները և մաքրությունը,*

*4. մշակել բժշկական փաստաթղթերի, ինչպես նաև առողջական վիճակի վերաբերյալ տվյալների հավաքագրման, պահպանման և վարման կարգեր,*

*5. բուժանձնակազմի կողմից իրականացնել խոհանոցի աշխատողների նկատմամբ բժշկական պատշաճ հսկողություն,*

*6. բուժանձնակազմի կողմից իրականացնել տրամադրվող սննդի որակական և քանակական կազմի նկատմամբ պատշաճ հսկողություն,*

*7. ապահովել բժշկական թափոնների՝ օրենքով նախատեսված կարգով հեռացումը,*

*8. բուժաշխատողների կողմից իրականացնել պատշաճ հսկողություն հաստատությունների սանիտարահիգիենիկ պայմանների նկատմամբ:*

### **1.5 Մննդի կազմակերպում**

Մի շարք հաստատություններում առկա էին խնդիրներ կապված խոհանոցների սանիտարահիգիենիկ վիճակի, հացի պահման պայմանների, ճաշատեսակների նմուշների պահման, ճաշացանկերի հետ:

Մի քանի հաստատությունների խոհանոցներում առկա էին սանիտարահիգիենիկ անբավարար պայմաններ: Մասնավորապես, Հանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիրի խոհանոցի տարբեր հատվածներում առկա էին կրծողների դեմ պայքարի համար նախատեսված դեղամիջոցներ, որոնք տարածվել էին նաև սենյակի ամբողջ

հատակով: Սա անթույլատրելի է և վտանգավոր կրթահամալիրի սաների կյանքի և առողջության համար: Հարկ է նշել նաև, որ խոհանոցի և սննդամթերքի մշակման արտադրամասերում հատակը հակասանիտարահիգիենիկ վիճակում էր:

Գրեթե բոլոր հաստատություններում ապահովված չէին հացի պահպանման համար անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պայմանները: Հացը պահվում էր պահարաններում, որտեղ չկային օդափոխության համար համապատասխան անցքեր: Պահարաններն ախտահանվում էին սողայաջրով կամ քլորաջրով:

Այս առումով հարկ է ընդգծել, որ ՀՀ առողջապահության նախարարի 2003 թվականի մայիսի 2-ի «Հանրային սննդի կազմակերպություններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-4.2-01-2003 սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմերը հաստատելու մասին» թիվ 302 հրամանի 10.21-րդ կետի պահանջների համաձայն՝ հացի պահարանի դռները պետք է ունենան օդափոխիչ անցքեր: Պահարանները մաքրվում են հացի փշուրներից հատուկ խոզանակներով և շաքարը մեկ անգամ մանրակրկիտ մշակվում քացախաթթվի 1%-անոց լուծույթով՝ հացի կարտոֆիլային հիվանդության կանխարգելման նպատակով: Ապահովված չէին հացի պահպանման համար անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պայմանները:

Մի շարք հաստատություններում ապահովված չէին ճաշատեսակների նմուշների պահպանման պայմանները: Մասնավորապես, Հանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիրում, Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատությունում առկա էին ճաշատեսակների նմուշները, որոնց տարաների վրա նշված չէր պատրաստի սնունդ վերցնելու ժամը: Գյումրու թիվ 3 հատուկ դպրոցում, «Թռչունյան տուն» մանկատուն-կրթահամալիրում և Երևանի թիվ 14 հատուկ դպրոցում այցին նախորդող օրերի ճաշատեսակների նմուշները բացակայում էին:

Այս խնդրի հետ կապված պետք է նշել, որ ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» 2.3.1-02-2014 սանիտարական կանոնների և նորմեր հաստատելու մասին» թիվ 32-Ն հրամանի 58-րդ կետով ամրագրված է, որ *վերցված նմուշները պահպանում են 48 ժամից ոչ պակաս (չհաշված հանգստյան և տոն օրերը) հատուկ սառնարանում կամ սառնարանի հատուկ առանձնացված տեղում 4±20 C ջերմաստիճանի պայմաններում՝ նշելով նմուշառման ժամը, օրը, ամիսը:*

Ճաշացանկերի ուսումնասիրությունից պարզվել է, որ հաստատություններում խնամվող երեխաներին տրամադրվում է ոչ բավարար քանակի ձկնեղեն, կաթնեղեն, միրգ: ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» 2.3.1-02-2014 սանիտարական կանոնների և նորմեր հաստատելու մասին» թիվ 32-Ն հրամանի 24-րդ կետի համաձայն՝ ամենօրյա ճաշացուցակում ներառվում են միսը, կաթը, սերուցքային կարագը և բուսական յուղը, հացը՝ ցորենի և տարեկանի, շաքարը, կարտոֆիլը, բանջարեղենը, միրգը, հյութերը, ձավարեղենը և յոդացված աղը: Ձուկը, ձուն (հավկիթը), պանիրը, կաթնաշոռը և կաթնաթթվային սննդամթերքը տրվում են 2-3 օրը մեկ: Պարզվել է, որ օրինակ Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատությունում ձուկ մատուցվել է ամսական 2 անգամ, Գյումրու թիվ 3 հատուկ դպրոցում, Հանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիրում՝ ամսական 3-4 անգամ, իսկ Երևանի թիվ 14 դպրոցի ճաշացանկից ձուկն ընդհանրապես բացակայում էր: Երևանի թիվ 17 հատուկ դպրոցի պահեստում ընդհանրապես չկար միրգ, թեն պահեստապետի խոսքերով՝ «հաստատությունում միրգ միշտ առկա է լինում»: Մրգի բացակայությունը պատճառաբանվել է առկա սեզոնով:

Մշտադիտարկման ընթացքում կրթահամալիրի սաներից ոմանք նկարագրում էին այցին նախորդող օրվանից ունեցած այնպիսի նախանշաններ, որոնք վկայում էին դիարեայի մասին: Նույն օրվա ճաշացանկի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ կրթահամալիրի սաներին ճաշին տրամադրվել է սալ, երշիկ, ինչը կարող էր դրա պատճառ հանդիսանալ:

Ճաշացանկերի ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ չի ապահովվում սննդի բազմազանությունը: Կրթահամալիրի սաներին երկու օր շարունակ մատուցվել է նույն տեսակի ճաշատեսակ՝ մակարոնով փլավ: Այդ մասին էին վկայում խոհանոցի սառնարանում պահվող, այցին նախորդող երկու օրերին պատրաստված սննդի նմուշները: Ավելին, խոհանոցի սեղանին տեղադրված մակարոնի տուփից պարզ դարձավ, որ այցի օրը նույնպես սաների համար մակարոն է պատրաստվելու, ինչը հաստատեցին հաստատության խոհարարները:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝*

- 1. ապահովել ճաշարանի նախասրահի և խոհանոցի սանիտարահիգիենիկ պատշաճ պայմաններ,*
- 2. ապահովել հացի պահման պատշաճ պայմաններ,*
- 3. ճաշատեսակների նմուշների տարաների վրա բացի օրվանից նշել նաև ժամը,*
- 4. մշակել նոր՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չափորոշիչներին համապատասխան ամենօրյա ճաշացանկ, բացառել անթույլատրելի սննդատեսակների տրամադրումը, ինչպես նաև ժամանակին տրամադրել անհրաժեշտ տեսակի և քանակի սննդամթերք:*

### **1.6 Վերաբերմունքը հաստատությունների սաների նկատմամբ**

Այցերի շրջանակներում հատուկ ուշադրություն է դարձվել հաստատություններում խնամվող երեխաների միջև հարաբերություններին, ինչպես նաև նրանց հանդեպ աշխատակիցների վերաբերմունքին: Այդ նպատակով տեղի են ունեցել առանձնագրույցներ և խմբային զրույցներ երեխաների ու աշխատակիցների հետ:

Առանձնագրույցների ընթացքում ստացվել է տեղեկություն մի շարք հաստատություններում երեխաների նկատմամբ տեղի ունեցած բռնության և շահագործման դեպքերի մասին:

Մասնավորապես, Հանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիրի աղջիկներից առնվազն երեքը, իսկ տղաներից բոլորը, բացառությամբ՝ նորեկների և նրանց, ում ծնողներն առարկում են, իրականացնում են տարբեր բնույթի աշխատանքներ ինչպես կրթահամալիրի տարածքում, այնպես էլ դրանից դուրս: Մաների փոխանցմամբ՝ կրթահամալիրի տարածքից դուրս աշխատանքները հիմնականում իրականացվում են հաստատության մոտ գտնվող բնակավայրերում՝ իրենց պնդմամբ՝ «տարբեր անհատների հրավերներով»: Նրանք հավելել են նաև, որ աշխատանքի վերաբերյալ տեղեկությունն իրենց է փոխանցում կրթահամալիրի դաստիարակներից մեկը: Տեղեկությունը ստանալուց հետո սաները դուրս են գալիս կրթահամալիրից և գնում աշխատանքն իրականացնելու վայր: Մաներն ընդգրկվում են այգեգործական, շինարարական, բեռնափոխադրման և այլ աշխատանքներում: Աշխատանքն ավարտելուց և տեղում վարձատրվելուց հետո մինչև ընթրիքի ժամը վերադառնում են կրթահամալիր: Ավելին, առանձնագրույցների ընթացքում սաները նշել են, որ առանձին դեպքերում ստացված վարձատրության մի մասը փոխանցում են վերոնշյալ դաստիարակին կամ կրթահամալիրի այլ աշխատողների: Կրթահամալիրի աշխատողների նման մոտեցումն անթույլատրելի է:

Աշխատանքի միջազգային կազմակերպության տվյալներով<sup>628</sup> ծնողական խնամքից զրկված լինելը կամ հաստատությունում գտնվելը մեծացնում է երեխայի՝ աշխատանքի վատթարագույն ձևերում ընդգրկված լինելը: Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է «Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին» և «Երեխայի աշխատանքի վատագույն ձևերի մասին» կոնվենցիաները և պարտավորվել է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները կոնվենցիաների կատարմանն ուղղված դրույթների արդյունավետ կիրառումն ապահովելու համար:

Այցի պահին սաներից մեկն աշխատանքներ էր իրականացնում կրթահամալիրի այն մասնաշենքում, որտեղ ննջասենյակներն էին: Մասնավորապես, նա մաքրում էր միջանցքի հատակը, պահարանները: Նշվածի կապակցությամբ աշխատողները նշեցին, որ սաները երբեմն օգնում են իրենց կրթահամալիրի մաքրության հարցում:

Առանձնագրույցների ընթացքում տեղեկություններ են փոխանցվել նաև արձանագրված դեպքի մասին, որ տղա սաների վատ վարքի պատճառով ուսուցիչներից մեկը զայրացել է և ոտքերով հարվածներ հասցրել նրանց:

Կրթահամալիրի աշխատակիցների հետ տեղի ունեցած զրույցի, ինչպես նաև սաների հետ տեղի ունեցած առանձնագրույցների ընթացքում պարզ է դարձել, որ տեղի են ունեցել նաև սաների միջև վիճաբանություններ: Մասնավորապես, ստացված տեղեկության համաձայն՝ դեպքերից մեկի ժամանակ վեճի մասնակիցները միմյանց նկատմամբ գործադրել են ֆիզիկական ուժ, որի պատճառով ստացել են վնասվածքներ: Դա նկատել են նաև կրթահամալիրի աշխատակիցները և երեխաներին ցուցաբերվել է բժշկական օգնություն:

*Որոշման հավելվածի 2-րդ չափորոշիչի 7-րդ կետով նախատեսված պահանջները, այն է՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունը պետք է ունենա երեխաների հանդեպ և նրանց միջև բռնության կասկածելի կամ հաստատված դեպքերի գրանցման և իրավասու մարմիններին նման դեպքերի մասին հաղորդումների գրանցամատյան: Այնուամենայնիվ, հատկանշական է, որ կրթահամալիրում չի վարվում սաների հանդեպ և նրանց միջև բռնության կասկածելի կամ հաստատված դեպքերի գրանցման և իրավասու մարմիններին նման դեպքերի մասին հաղորդումների գրանցամատյան, ինչպես նաև նշված դեպքերի մասին իրավասու մարմիններին որևէ կերպ չի հաղորդվում:*

Մշտադիտարկման ընթացքում պաշտպանի ներկայացուցիչներն արձանագրել են կրթահամալիրի սաների միջև ֆիզիկական բռնության, միմյանց հարվածներ հասցնելու, ինչպես նաև անձի կոնֆլիկտայնության և մերկ մարմինն ի ցույց դնելու երևույթներ, սակայն շատ դեպքերում դայակները նույնիսկ չէին էլ նկատում դրանք, իսկ սաներն իրենք էին փորձում հարթել մյուսների կոնֆլիկտները, միջամտել բռունցքով կամ կոշիկով իրար փոխադարձ հարվածներ հասցնողներին: Ավելին, տարիքով ավագ սաներն իրենց հեղինակային հրամայական խոսքով հանդարտեցնում էին իրավիճակը և վստահեցնում, որ սովորական երևույթ է: Մտացվում է, որ այցի ընթացքում տեղի ունեցած միջադեպի ընթացքում սաների կողմից փորձ չարվեց նույնիսկ նման իրավիճակում կանչել դաստիարակներին միջադեպը հարթելու համար՝ այդ ամենն իրականացնելով սեփական ուժերով, վստահեցնելով, որ իրենք սովոր են և իրենց ավելի լավ են լսում:

Կրթահամալիրում երեխաների նկատմամբ, ինչպես նաև նրանց միջև բռնության դեպքերի հետ կապված կատարվել է նաև միջազգային չափանիշների ուսումնասիրություն: Մասնավորապես, Կոնվենցիայի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ բոլոր օրենսդրական, վարչական, սոցիալական և կրթական միջոցները՝ պաշտպանելու երեխային ծնողների, խնամակալների*

<sup>628</sup> Տե՛ս Երեխայի հարկադիր աշխատանքի վատագույն ձևերը. Արագ գնահատման և ազգային զեկույցների միասնական զեկույցը, [https://www.ilo.org/ipec/Informationresources/WCMS\\_IPEC\\_PUB\\_1308](https://www.ilo.org/ipec/Informationresources/WCMS_IPEC_PUB_1308):

կամ երեխայի մասին հոգ տանող ցանկացած այլ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեկան բռնության բոլոր ձևերից, վիրավորանքից կամ չարաշահումից, անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից, ներառյալ սեռական շահագործում:

Կոնվենցիայի 13-րդ ընդհանուր մեկնաբանությունների 4-րդ կետով նախատեսվում է, որ այդ փաստաթղթի իմաստով «բռնություն» նշանակում է «ֆիզիկական կամ մտավոր որևէ տեսակի բռնություն, վնասվածք կամ չարաշահում, անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունք, վատ վերաբերմունք կամ շահագործում, ներառյալ սեռական շահագործում» ինչպես նշված է Կոնվենցիայի 19-րդ հոդվածի 1-ին մասում:

Նշյալ մեկնաբանությունների 5-րդ կետի համաձայն՝ անդամ պետությունները պետք է ապահովեն, որպեսզի բոլոր անձինք, ովքեր իրենց աշխատանքի շրջանակներում պատասխանատու են բռնությունների կանխարգելման, դրանցից պաշտպանության և դրանց արձագանքելու համար, ինչպես նաև դատական համակարգում աշխատող անձինք հաշվի առնեն երեխաների կարիքները և հարգեն նրանց իրավունքները: Նույն փաստաթղթի 17-րդ կետով սահմանվում է, որ բռնության արգելքի որևէ բացառություն չի կարող լինել:

Նույն մեկնաբանությունների 19-րդ կետի համաձայն՝ բռնությունների տեսակների ոչ սպառնիչ ցանկը վերաբերում է բոլոր պայմաններում կամ պայմանների անցման փուլերում գտնվող բոլոր երեխաներին: Երեխաները կարող են ենթարկվել բռնության մեծահասակների կողմից, ինչպես նաև բռնությունը կարող է տեղի ունենալ երեխաների միջև: Առկա է ինչպես տղաների, այնպես էլ աղջիկների՝ յուրաքանչյուր տեսակի բռնության ենթարկվելու վտանգ:

Ավելին, նշյալ մեկնաբանությունների 20-րդ կետի համաձայն՝ երեխաների «անուշադրություն» նշանակում է երեխաների ֆիզիկական և հոգեբանական կարիքները չբավարարելը, նրանց վտանգից չպաշտպանելը, չտրամադրելը բժշկական, ծննդի գրանցման կամ այլ ծառայություններ, երբ երեխաների խնամքի համար պատասխանատու անձինք ունեն դրանք մատուցելու համար անհրաժեշտ միջոցներ, գիտելիք և ծառայությունների հասանելիություն: Այս առումով նույն կետի ա) ենթակետում նշվում է, որ «ֆիզիկական անուշադրություն» նշանակում է չպաշտպանելը երեխային վնասից, ներառյալ՝ վերահսկողության պակասի կամ երեխայի համար անհրաժեշտ նվազագույն պայմաններ՝ բավարար սնունդ, կացարան, հագուստ և նվազագույն բժշկական սպասարկում, չտրամադրելու պատճառով:

Անդրադառնալով երեխաների միջև բռնությանը, ինչպիսի դեպքերի վերաբերյալ տեղեկություններ ստացվել էին նաև կատարված այցերի ընթացքում՝ հարկ է նշել, որ նույն փաստաթղթի 27-րդ կետով նախատեսվում է «երեխաների միջև բռնության» մեկնաբանությունը: Դա ներառում է ֆիզիկական, հոգեբանական և սեռական բռնությունը, հաճախ ահաբեկելու միջոցով, որն իրականացվում է երեխաների կողմից այլ երեխաների դեմ՝ հաճախ երեխաների խմբի կողմից: Այն ոչ միայն վնասում է երեխայի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությանն ու բարեկեցությանը, այլ նաև բացասաբար է անդրադառնում նրա զարգացման, կրթության և սոցիալական ինտեգրման վրա: Նույն կետում նշվում է նաև, որ չնայած երեխաներն են դա իրականացնում, այնուամենայնիվ, նրանց համար պատասխանատու մեծահասակների դերը կարևոր է յուրաքանչյուր դեպքում՝ պատշաճ կերպով դրանց արձագանքելու և բռնությունը կանխարգելելու, ապահովելու, որպեսզի բռնության դեպքերը չկրեն պատժիչ բնույթ և չկիրառվի բռնություն բռնության դեմ:

Անդրադառնալով իրավասու մարմինների պարտականություններին՝ անհրաժեշտ է նշել, որ նույն փաստաթղթի 32-րդ կետը տալիս է «երեխայի իրավունքների համակարգային և պարբերական խախտումներ» եզրույթի մեկնաբանությունը: Դրա համաձայն՝ «երեխայի իրավունքների համակարգային և պարբերական խախտումներ» է համարվում որևէ մակարդակում գտնվող իրավասու պետական մարմինների կողմից, որոնք



պատասխանատու են երեխաներին բոլոր տեսակի բռնություններից պաշտպանելու համար, Կոնվենցիայով նախատեսված պարտականությունն արդյունավետ չկատարելու եղանակով ուղղակիորեն կամ անուղղակիորեն վնաս պատճառելը: Նման բացթողումները ներառում են օրենսդրական և այլ դրույթներ չընդունելը, օրենքներին և այլ կարգավորումներին չհետևելը, ինչպես նաև անհրաժեշտ նյութական, տեխնիկական և մարդկային ռեսուրսների ու կարողությունների բացակայությունը՝ բացահայտելու, կանխելու և արձագանքելու երեխաների հանդեպ բռնությանը<sup>629</sup>:

Հիմք ընդունելով Կոնվենցիայի մեջբերված դրույթը, ինչպես նաև դրա մեկնաբանությունները՝ անհրաժեշտ է ընդգծել, որ իրավասու անձինք և մարմինները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ բոլոր միջոցները երեխաների հանդեպ և նրանց միջև բռնության բոլոր տեսակի դեպքերը բացառելու ուղղությամբ: Դրանց կանխարգելումը նույնպես իրավասու մարմինների պարտականությունների շրջանակներում է: Ուստի, կրթահամալիրի սաների նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական բռնության որևէ դրսևորում, անկախ նրանից, թե դա իրականացվել է աշխատակիցների կողմից թե նրանց միջև, անընդունելի է: Արձանագրված խնդիրները մտահոգիչ են նաև երեխաների նկատմամբ հոգ տանող անձանց՝ աշխատողների անուշադրության տեսանկյունից:

Այցերի ընթացքում արձանագրվել է, որ կրթահամալիրի մասնաշենքերում՝ սաներին հասանելի վայրերում և իրենց օգտագործման նպատակով հեռախոսներ տեղադրված չեն եղել: Առանձնագրույցների ընթացքում պարզ է դարձել, որ սաները ծնողների և հարազատների հետ կապ են հաստատում անձնական բջջային հեռախոսների միջոցով: Մտացված տեղեկության համաձայն՝ այն սաները, ովքեր չունեն հեռախոս, ծնողների հետ կապ են հաստատում հաստատության դաստիարակի կամ բջջային հեռախոսներ ունեցող սաների օգնությամբ: Նշվածը մտահոգիչ է կրթահամալիրի սաների մասնավոր և ընտանեկան կյանքի, ինչպես նաև հաղորդակցության ազատության տեսանկյունից: Մասնավորապես, ստեղծված պայմաններում նրանք չեն կարողանում մշտական կապի մեջ լինել, օրինակ՝ իրենց ընտանիքի անդամների հետ:

Այս առումով հարկ է մեջբերել Կոնվենցիայի 37-րդ հոդվածի «գ» կետը, որի համաձայն՝ *մասնակից պետություններն ապահովում են, որ ազատությունից զրկված յուրաքանչյուր երեխա օգտվի մարդասիրական վերաբերմունքից և մարդկային անօտարելի արժանապատվության նկատմամբ հարգանքից՝ հաշվի առնելով նրա տարիքի անձանց պահանջմունքները: Մասնավորապես, ազատությունից զրկված յուրաքանչյուր երեխա պետք է առանձնացվի մեծահասակներից, եթե միայն չի համարվում, որ երեխայի լավագույն շահերից ելնելով, հարկավոր չէ այդ անել և պետք է իրավունք ունենա կապ պահպանել իր ընտանիքի հետ՝ նամակագրության և տեսակցությունների միջոցով, բացառությամբ հատուկ հանգամանքների:*

Երեխաների նկատմամբ վերաբերմունքի տեսանկյունից մտահոգիչ է նաև նրանց հագուստով և կոշիկներով ապահովման հարցը: Այցի պահին կրթահամալիրի պահեստում առկա էին ձմեռային հագուստ, սպիտակեղեն, բարձեր, վերարկուներ, կոշիկներ: Աշխատակիցների պնդմամբ՝ պահեստում առկա հագուստն արդեն բաշխված էր սաների միջև: Այնուամենայնիվ, կրթահամալիրի սաներից շատերի հագին հնամաշ և պատռված հագուստ էր: Հատկանշական է նաև, որ պահեստում առկա էր նոր հագուստ: Իսկ կոշիկները, որոնք կրթահամալիրում առկա էին նաև 2013 և 2014 թվականներին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների այցի ժամանակ, չեն օգտագործվել, այն պարագայում, երբ կրթահամալիրի սաներից շատերը պատռված կոշիկներով էին:

<sup>629</sup> Տե՛ս Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 13-րդ ընդհանուր մեկնաբանությունների 4-րդ, 5-րդ, 17-րդ, 19-րդ, 20-րդ, 27-րդ և 32-րդ կետերը, [https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/CRC.C.GC.13\\_en.pdf](https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/CRC.C.GC.13_en.pdf):

Ստացվել է նաև տեղեկություն այն մասին, որ կրթահամալիրի սաների մի մասն իրենք են լվանում իրենց հագուստը: Վերջիններս դա պատճառաբանում են նրանով, որ կրթահամալիրի աշխատակիցները մաքուր հագուստը սաներին են բաժանում առանց անհատականացման՝ պատահականության սկզբունքով: Նշված մոտեցումն անընդունելի է:

Նշված խնդրի առնչությամբ հարկ է անդրադարձ կատարել ԽԿԿ-ի Մոլդովայի Հանրապետության վերաբերյալ 2016 թվականի զեկույցին, որտեղ անդրադարձ է կատարվել հոգեկայրդաբանական հաստատության պայմաններին: Մասնավորապես, դրա 176-րդ կետի համաձայն՝ (...) *ԽԿԿ-ի կարծիքով, անձանց սոցիալ-հոգեբանական ռեաբիլիտացիայի աջակցման տեսանկյունից ցանկալի կլինի, որպեսզի բնակիչներն ունենան անձնական, կողպելու հնարավորություն ունեցող պահարան և հատուկ իրենց համար նախատեսված հագուստ (...)*<sup>630</sup>:

Կրթահամալիրում անհրաժեշտության դեպքում աղջիկներին տրամադրվում են 3 հատ կանացի հիգիենիկ միջադիր, ըստ անհրաժեշտության հատկացվում են նաև լրացուցիչ միջադիրներ: ՀՀ կառավարության «Մանկատանը, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում (անկախ դրա տիպից) խնամվող, ինչպես նաև հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորող երեխայի խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» 2007 թվականի մայիսի 31-ի թիվ 815-Ն որոշման 8-րդ հավելվածով նախատեսվում է, որ դպրոցահասակ տարիքի աղջկան պետք է հատկացվի տարեկան 12 փաթեթ (առնվազն՝ 10 հատ) կանացի հիգիենիկ միջադիր: Տրամադրվող և նախատեսվող քանակների տարբերությունն ակնհայտ է: Նշվածի հետևանքով կրթահամալիրի սաներն ստիպված են լինում միջադիրներն օգտագործել երկարատև սահմանափակ քանակով: Դա կարող է խնդրահարույց լինել նաև նրանց սեռական առողջության և դաստիարակության տեսանկյունից:

Այս առումով հարկ է ընդգծել, որ Հյուսիսային Ռայթս Վոչի «Կյանք հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ Բրազիլիայի հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված հաստատություններում» զեկույցում խնդրահարույց է համարվել կանացի միջադիրների բացակայությունը<sup>631</sup>:

Երևանի թիվ 17 հատուկ դպրոցում ևս արձանագրվել են երեխաների նկատմամբ բռնության դեպքեր, որոնք գրանցվել են «Աշակերտների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի և հաստատված դեպքերի գրանցման մատյանում»:

Մասնավորապես, երեխաներից մեկի ծնողը նկատել է, որ երեխայի ձեռքերի վրա կան քերծվածքներ, մեկ երեխա «ընկել է սայլակից» և ստացել լուրջ վնասվածքներ, ևս մեկ երեխայի «մոռացել են դասասենյակում», կողպել դասասենյակի դուռը և նրա բացակայության մասին տեղեկացել են միայն ծնողից, երբ վերջինս դպրոցի մեքենային դիմավորելուց հետո տեսել է, որ իր երեխան այնտեղ չէ: Վերոնշյալ դեպքերի հետ կապված՝ կան անձնակազմի բացատրագրերը, սակայն որևէ նշում չկա դպրոցի ղեկավարության իրականացրած քայլերի մասին: Ավելին, փոխտնօրենը նշեց, որ ոչ մի դեպքի մասին ՀՀ կրթության և գիտության նախարարությանը չեն տեղեկացրել:

Արձանագրված այս պրակտիկան անթույլատրելի է: Նկարագրված յուրաքանչյուր դեպքով անհրաժեշտ է իրականացնել լիարժեք ստուգում, որպեսզի այդ ստուգման արդյունքում հնարավոր լինի կատարել օբյեկտիվ եզրահանգում ու դրանով պայմանավորված՝ ձեռնարկել կոնկրետ դեպքով անհրաժեշտ քայլեր: Առկա պրակտիկան

<sup>630</sup> Տե՛ս ԽԿԿ-ի Մոլդովայի Հանրապետության վերաբերյալ 2016 թվականի զեկույցի 176-րդ կետը, <http://hudoc.cpt.coe.int/eng?i=p-mda-20150914-en-37>:

<sup>631</sup> Տե՛ս Հյուսիսային Ռայթս Վոչի «Կյանք հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ Բրազիլիայի հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված հաստատություններում» զեկույցը, <https://www.hrw.org/report/2018/05/23/they-stay-until-they-die/lifetime-isolation-and-neglect-institutions-people>:

անթույլատրելի է, քանի որ որևէ կերպ չի ծառայում նշված երևույթների կանխարգելմանը, ինչպես նաև ստեղծում է երեխաների իրավունքների ոտնահարման համար նպաստավոր պայմաններ:

Գյումրու թիվ 3 հատուկ դպրոցում առանձնագրույցների արդյունքում պարզվել է, որ երեխաներից մի քանիսը բողոքում էին աշխատակազմի վերաբերմունքից, հատկապես այն աշխատակիցների, որոնք հերթապահում էին դասերից հետո և գիշերը: Մասնավորապես, երեխաներից մի քանիսը նշեցին մեկ դաստիարակի անուն, ով պարբերաբար ձայնը բարձրացնում է երեխաների վրա, նրանց պիտակավորում է վիրավորական արտահայտություններով, ինչպես նաև հարվածում է: Նման երևույթները որևէ կերպ չեն արձանագրվել, իսկ հաստատության տնօրինությունը տեղյակ չի եղել:

*Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. բացառել հաստատությունների տարածքում և դրանից դուրս սաների՝ որպես աշխատուժի օգտագործման հնարավոր ցանկացած դեպք՝ այլ անձին կամ հաստատությանն օգուտ բերելու նպատակով,*

*2. ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հաստատություններում խնամվող անձանց հանդեպ և նրանց միջև հնարավոր բռնության դեպքերը բացառելու համար: Ներկայացնել նման կասկածելի կամ հաստատված դեպքերի գրանցման և իրավասու մարմիններին նման դեպքերի մասին հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմ,*

*3. հաստատություններում վարել սաների հանդեպ և նրանց միջև բռնության կասկածելի կամ հաստատված դեպքերի գրանցման և իրավասու մարմիններին նման դեպքերի մասին հաղորդումների գրանցամատյան,*

*4. հաստատություններում խնամվող երեխաների՝ իրենց ընտանիքի անդամների և այլ անձանց հետ կապն ապահովելու, այդ թվում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի թե՛ զծին զանգահարելու նպատակով՝ տեղադրել հեռախոս ու ապահովել հեռախոսակապի հասանելիությունը,*

*5. աղջիկներին տրամադրել բավարար քանակի հիգիենիկ պարագաներ,*

*6. հաստատություններում խնամվող, դրա կարիքն ունեցող անձանց հատկացնել բարվոք վիճակում գտնվող հագուստ և կոշիկ,*

*7. ապահովել հաստատություններում խնամվող անձանց հագուստի պատշաճ լվացման և ախտահանման կազմակերպումը՝ բացառելով լվացքատուն հանձնված հագուստի առանց անհատականացման վերադարձը:*

### **1.7 Հաստատության սաների բողոք ներկայացնելու իրավունքի ապահովումը**

Հաստատություններում չկային սաների կողմից բողոք ներկայացնելու կառուցակարգեր, ինչպես նաև գրեթե բոլոր հաստատություններում չկային բողոքների և առաջարկությունների համար նախատեսված արկղեր կամ դրանք գտնվում էին հաստատության վարչակազմի ներկայացուցիչներից մեկի սենյակում, ինչը հակասում է երեխայի լսված լինելու իրավունքին, որն ամրագրված է թե՛ ներպետական և թե՛ միջազգային օրենսդրությամբ: Նշված իրավիճակը բարդացնում է նաև հաստատություններում բռնության դեպքերի բացահայտումը և դրանց կանխարգելումը:

Հաստատություններից և ոչ մեկում չկար բողոքարկման արկղերը բացելու, բողոքները հաշվառելու և բողոքներին արձագանքելու ընթացակարգ: Հաստատությունները չունեն նաև երեխաներին մատչելի ձևով պատրաստված տեղեկատվական նյութեր՝ երեխաների կողմից որևէ պետական մարմնին կամ Մարդու իրավունքների պաշտպանին բողոք հասցեագրելու վերաբերյալ:

Ավելին, երեխաների հետ առանձնազրույցներից պարզվել է, որ իրենք չունեն բավարար տեղեկություններ իրենց իրավունքների խախտումների դեպքում իրավասու մարմիններին դիմելու վերաբերյալ, ինչը ևս մեկ խոչընդոտ է երեխաների իրավունքների և լավագույն շահի ապահովման տեսանկյունից:

ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի համաձայն՝ *երեխան ունի ազատ արտահայտվելու և լաված լինելու սահմանադրական իրավունք:*

Կոնվենցիայի 12-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ *իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն:*

Երեխայի՝ սեփական կարծիքն արտահայտելու իրավունքը երաշխավորվում է նաև «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով: Ավելին, Որոշումով հաստատվել են երեխաների խնամքի և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները: Նշյալ որոշման 2-րդ չափորոշիչի համաձայն՝ *երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունն ապահովում է երեխայի և նրա շահերից հանդես եկող անձանց (ծնողական իրավունքից չզրկված ծնողներ կամ օրինական ներկայացուցիչներ, հարազատներ)՝ մանկատան անձնակազմի անօրինական գործողությունները բողոքարկելու իրավունքի իրացումը, սահմանում է օրենքին համապատասխանող բողոքարկման ներքին կարգ և պահում հատուկ արկղ՝ բողոքների և առաջարկությունների համար:*

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի թիվ 12 ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ *բոլոր այն գործընթացներում, որտեղ ներգրավված են երեխաները, պետք է հարգվեն մի շարք սկզբունքներ, այդ թվում՝ տեղեկացվածությունը, երեխայակենտրոն միջավայրը և աշխատելու մեթոդները, անվտանգության ապահովումը: Տեղեկացվածության սկզբունքը ենթադրում է, որ երեխաները պետք է տեղեկացված լինեն նաև լաված լինելու իրենց իրավունքի վերաբերյալ: Երեխաների հետ աշխատելու մեթոդները պետք է լինեն երեխաների համար հարմարեցված, քանի որ երեխաներն ունեն տարբեր կարիքներ և նրանք պետք է պատրաստ լինեն, որպեսզի կարողանան արտահայտել իրենց կարծիքը: Մինևույն ժամանակ, անվտանգության սկզբունքը ենթադրում է, որ երեխան իր կարծիքն արտահայտելիս պետք է համոզված լինի, որ նրան վտանգ չի սպառնա, եթե նա խոսի իրեն հուզող հարցերից:*

Խնդրին Պաշտպանն անդրադարձել է նաև առանձին վերլուծությամբ<sup>632</sup>, որտեղ ներկայացվել են երեխաների հետ իրականացված ֆոկուս-խմբերի քննարկումների արդյունքները, ինչպես նաև խնդրին վերաբերվող միջազգային փորձը: Օրինակ՝ Անգլիայի անչափահաս իրավախախտների հաստատություններում գործում է բողոքարկման հատուկ մեխանիզմ: Մասնավորապես, երեխաներն իրենց բողոքները ներկայացնում են փակ ծրարով, ինչն անմիջապես փոխանցվում է հաստատությունը վերահսկող մարմնին:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. *հաստատություններում տեղադրել սաների համար մատչելի բողոքարկման արկղ, սահմանել դրանք բացելու, հաշվառելու և հասցեատիրոջն ուղարկելու ընթացակարգ՝ ապահովելով գաղտնիության պահպանմամբ դիմում-բողոք գրելու հնարավորությունը,*

2. *նշված արկղերի վրա կամ տեսանելի այլ վայրում փակցնել դիմում-բողոքներ գրելու վերաբերյալ տեղեկություններ,*

<sup>632</sup> [http://children.ombuds.am/wp-content/uploads/2017/12/Guidelines-for-Ombudsman\\_arm.pdf](http://children.ombuds.am/wp-content/uploads/2017/12/Guidelines-for-Ombudsman_arm.pdf)

3. Բարձրացնել երեխաների տեղեկացվածությունը գործող բողոքարկման մեխանիզմների մասին առանձին դասընթացների միջոցով,

4. Իրագեցնել երեխաներին Պաշտպանի աշխատակազմում գործող՝ բողոք կամ դիմում ներկայացնելու և կարծիք արտահայտելու հեռախոսային և առցանց հնարավորությունների մասին,

5. ստեղծել առանձնացված հեռախոսային կապի հնարավորություն, որի միջոցով երեխաները կարող են ներկայացնել իրենց բողոքը Մարդու իրավունքների պաշտպանին կամ տվյալ հաստատության գործունեությունը վերահսկող լիազոր պետական մարմին:

## **2. Երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող 18 տարեկանը լրացածների և շրջանավարտների հիմնահարցերը**

Հաստատություններում 18 տարին լրացած սաների խնամքի խնդիրը մնում է չլուծված նաև 2018 թվականին: 2018 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի կողմից կատարված մշտադիտարկման այցերի ժամանակ, ինչպես նաև հաստատություններ կատարված հեռախոսազանգերի միջոցով պարզվել է, որ 2018 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ Հանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիրում 149 խնամվողներից 107-ը մինչև 30 տարեկանը լրացած անձինք են: Կապանի թիվ 3 հատուկ դպրոցում խնամվում է 7 չափահաս անձ, Խարբերդի մասնագիտացված մանկատանը՝ 124, Մարի Իզմիրլյանի անվան մանկատանը՝ 12, Վանաձորի մանկատանը՝ 3 չափահաս անձ:

Հատկանշական է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից տեղեկացրել են, որ մանկատանը խնամվող 18 տարին լրացած սաների վերաբերյալ չունեն որևէ տեղեկություն, ուստի դրա վերաբերյալ տվյալներ ստացվել են հեռախոսազանգերի միջոցով: Մինչդեռ, դեռևս 2017 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցում բարձրացվել էր երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում 18 տարեկանը լրացած անձանց հիմնահարցերը: Մշտադիտարկման այցի արդյունքում պարզվել էր, որ Կապանի թիվ 3 հատուկ դպրոցում խնամվում է 20-30 տարեկան 15 անձ, որոնք նախկինում տեղափոխվել էին Նուբարաշենի հատուկ դպրոցից՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության և մարզպետարանի թույլտվությամբ: Խնդիրն առաջացել էր այն պատճառով, որ ուսումն ավարտելուց հետո նրանք չունեին բնակվելու վայր: Պաշտպանի կողմից խնդիրը բարձրացվելուց հետո 2018 թվականի ընթացքում հաստատությունում խնամվող 18 տարին լրացած 15 անձանցից 8-ը տեղավորվել են «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի Առինջ գյուղում գտնվող խմբային տանը:

Բացի այդ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2017 թվականին մի քանի մանկատաներում (Խարբերդի մանկատուն, Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն, Վանաձորի մանկատուն) խնամվում էին 18 տարեկանը լրացած շուրջ 140 անձ:

Մինչդեռ, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 700-Լ որոշմամբ հաստատված հավելվածով սահմանված են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գործառնությունները երեխաների իրավունքների պաշտպանության ուղղությամբ:

Մասնավորապես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության խնդիրներից են սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության հիմնական և գերակա ուղղությունների մշակումն ու իրականացումը, սոցիալական ապահովության ոլորտի պետական նպատակային ծրագրերի մշակումը և

դրանց իրականացման աշխատանքների համակարգումը, երեխաների իրավունքների պաշտպանության քաղաքականության մշակումն ու դրա իրականացման համակարգումը:

Նախարարության գործառնություններից են սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց կացարանի խնդրի լուծման պետական ծրագրերի, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների սոցիալական պաշտպանության պետական ծրագրերի, անօթևան, մուրացիկ և թափառաշրջիկ անձանց, այդ թվում՝ երեխաների համար սոցիալական աջակցության պետական ծրագրերի իրականացման մոնիթորինգների, երեխաների, այդ թվում՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հիմնահարցերի ուսումնասիրության իրականացումը, դրանց լուծման պետական ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքների համակարգման և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների այլընտրանքային խնամքի կազմակերպումը, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված տարեցների, 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության, այդ թվում՝ խնամքի այլընտրանքային ծառայությունների տրամադրման վերաբերյալ պետական ծրագրերի մշակում և դրանց իրականացման ապահովումը: Ուստի, կարելի է եզրակացնել, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է հենց պատասխանատու այդ տվյալների հավաքագրման և նշված խնդիրների լուծման համար:

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մի շարք երաշխիքներ, որոնցից են անվճար բժշկական օգնությունն ու սպասարկումը, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սննդի ապահովումը՝ սննդի նվազագույն չափորոշիչներին համապատասխան, հանրակրթական, մրցութային կարգով միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթությունը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի տեղավորումը, **բնակարանի իրավունքի ապահովումը** և այլն<sup>633</sup>:

Ստացվում է, որ պետության կողմից սահմանված են երաշխիքներ ինչպես հաստատություններում բնակվող, այնպես էլ հաստատություններից դուրս եկած առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների պաշտպանության նպատակով: Մակայն հաստատություններում բնակվող 18 տարին լրացած անձանց մեծ թիվը վկայում է, որ բավարար քայլեր չեն ձեռնարկվում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների իրացման ապահովման ուղղությամբ:

Ավելին, հաստատություններից դուրս եկած և որևէ աջակցություն չստացած անձանց թիվը նույնպես աճում է, սակայն նրանց աջակցություն տրամադրելու ուղղությամբ ևս գործնական քայլեր չեն իրականացվում:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն այս խնդրի մասին նշել է իր եզրափակիչ դիտարկումներում<sup>634</sup>: Մասնավորապես, նշյալ կոմիտեն իր մտահոգությունն է հայտնել այն փաստի կապակցությամբ, որ հաշմանդամություն ունեցող երեխաները շարունակում են մնալ հաստատություններում նույնիսկ այն ժամանակ, երբ հաստատությունում խնամվելու իրենց տարիքը լրացել է, և որ պետությունը բավարար աջակցություն չի ցուցաբերում հաստատությունների շրջանավարտներին: Նշյալ կոմիտեն առաջարկել է, որ պետությունն առավելագույն աջակցություն ցուցաբերի հաստատությունների շրջանավարտներին

<sup>633</sup> Մանրամասն վերլուծություն տե՛ս սույն հաղորդման «Հաշմանդամություն ունեցող իրավունքներ» բաժնում

<sup>634</sup> Տե՛ս <https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

կրթություն ստանալու, աշխատանք ունենալու հարցերում և տրամադրի պատշաճ բնակելի տարածք:

Մինչդեռ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ նախարարությունը չի տիրապետում այնպիսի տվյալների, թե մանկատների (այդ թվում՝ մասնագիտացված) 18 տարեկանը լրացած սաներից 2018 թվականի ընթացքում քանիսն են ապահովվել աշխատանքով և բնակարանով և քանիսն են դեռևս բնակվում մանկատներում: Ըստ նախարարությունից ստացված պաշտոնական տեղեկության՝ սոցիալական կացարան ստանալու համար հերթագրված է մանկական ինամակալական կազմակերպությունների 220 շրջանավարտ (2003-2013 թվականներ): Նախարարությունից որևէ տեղեկություն չի տրամադրվել 2013 թվականից հետո մանկատներն ավարտած անձանց մասին: Ստացվում է, որ **նախարարությունը չի պատրաստվում որևէ աջակցություն ցուցաբերել վերջիններիս, ինչպես նաև պարզաբանվել է, որ տեղեկատվություն առկա չէ այն մասին, թե 2018 թվականի ընթացքում մանկատան քանի շրջանավարտ է ապահովվել ժամանակավոր կացարանով:**

Նշված խնդրի վերլուծության շրջանակներում վեր է հանվել և ուսումնասիրվել է տարբեր երկրներում գործող կարգեր: Այսպես, ԱՄՆ-ում գործող Ջոն Հ. Չաֆիի հետմանկատնային անկախության 1999 թվականին ընդունված պետական ծրագրի համաձայն՝ պետական միջոցներն օգտագործվում են երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների չափահաս սաների (18-21 տարեկան) համար անցումային աջակցության որակի բարելավումն ապահովելու նպատակով, որը ներառում է՝ բժշկական ապահովագրություն, կրթական գործընթացում դրամական աջակցություն, հետմանկատնային խորհրդատվության տրամադրում, բնակության վայրի ապահովում կամ ժամանակավոր ֆինանսական աջակցություն:

Իռլանդիայի Հանրապետության առողջապահության նախարարության մաս կազմող առողջապահության ծառայությունը (H.S.E) անհրաժեշտության դեպքում երաշխավորում է իր աջակցությունը՝ պարբերական խորհրդատվական այցելություններով, կրթության ընթացքի և բարեհաջող ավարտի ընթացքում ֆինանսական և մասնագիտական խորհրդատվությամբ, կացարանների ձևավորմամբ կամ բնակարանի մատչելի վարձման հարցում: Ներկայումս H.S.E.-ն նախագծում է անցումային տարիքային շեմը բարձրացնել 18-ից մինչև 25 տարեկանը<sup>635</sup>:

Միացյալ Թագավորությունում գործում է պետության կողմից խնդրի լուծման համար 2 տարբերակ: Պետական ֆինանսավորմամբ գործող «Junior ISA» ծրագիրը, որը դրամական աջակցություն է տրամադրում առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին չափահաս դառնալուն պես: Մասնավորապես, երեխայի մեկ տարեկանը լրանալուն պես բացվում է խնայողական հաշիվ, որտեղ պարբերաբար գումար է կուտակվում: Հաշիվը երեխային հասանելի է դառնում 18 տարեկանը լրանալուց հետո: Ներկայումս երկրում առկա է 75000 ակտիվ հաշիվ: Ծրագրով նաև աջակցություն է տրամադրվում կրթական, առողջապահական, բնակելի տարածքով ապահովման հարցերում:

Երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններից դուրս գալուն պես տեղական ինքնակառավարման մարմինները սաներին տրամադրում են 2000 ֆունտ ստերլինգի չափով «խնամքից դուրս գալու» գրանտներ<sup>636</sup>:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝*

<sup>635</sup> Տե՛ս [http://www.ifca.ie/files/1514/7738/9858/Irish\\_Foster\\_Care\\_Association\\_1.pdf](http://www.ifca.ie/files/1514/7738/9858/Irish_Foster_Care_Association_1.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>636</sup> Տե՛ս [https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment\\_data/file/535899/Care-Leaver-Strategy.pdf](https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/535899/Care-Leaver-Strategy.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

1. հիմնել նոր համայնքահեն ծառայություններ կամ ընդլայնել գոյություն ունեցողների թիվը, որոնք կարող են ծառայություններ մատուցել հաշմանդամություն ունեցող երեխաներին և չափահասներին,

2. առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ներառյալ՝ մանկատների շրջանավարտներին, ապահովել բնակելի տարածությամբ,

3. հաստատություններում սովորող երեխաների համար կազմակերպել ինքնուրույն կյանքին նախապատրաստվելու դասընթացներ,

4. աջակցել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և նրանց թվին պատկանող անձանց կրթական, առողջապահական և օրենքով սահմանված այլ իրավունքների իրացմանը:

### 3. Մանկական աղքատության հիմնախնդիրը

Մանկական աղքատությունը կարող է երկարաժամկետ հետևանքներ ունենալ երեխաների կյանքի որակի վրա, քանի որ աղքատ երեխաները հաճախ են զրկվում առողջապահական ծառայություններից, կրթությունն ավարտին հասցնելու հնարավորությունից, ինչպես նաև թերսնված են:

Այն երեխաները, ովքեր չեն իրացնում իրենց լիարժեք ներուժը, չեն կարող ամբողջական մասնակցություն ունենալ սոցիալական, քաղաքական և տնտեսական աճին: Աղքատության մեջ մեծացող երեխաներն, առավել հավանական է, որ չափահաս տարիքում ևս լինեն անապահով<sup>637</sup>: Յուրաքանչյուր պետության երկարաժամկետ քաղաքականությունը պետք է լինի երեխաների զարգացումը և երեխայակենտրոն սոցիալական պաշտպանության ծրագրերի ստեղծումը՝ մանկական աղքատության կանխարգելման և հաղթահարման համար:

Սոցիալական պաշտպանությունը ենթադրում է ինչպես նպաստների տրամադրման պետական ծրագրերը, այնպես էլ ինտեգրված ծառայությունները, որոնք աջակցություն կցուցաբերեն առավել խոցելի ընտանիքներին և երեխաներին:

Մանկության շրջանում աղքատությունն առաջ բերող ռիսկերն առավել մեծ են, քան՝ չափահաս տարիքում: Ավելին, աղքատությունը շատ դեպքերում առավել խոցելի է դարձնում հաշմանդամություն ունեցող, բազմանդամ ընտանիքներում, հեռավոր գյուղական համայնքներում ապրող երեխաներին:

Հայաստանի Հանրապետության կողմից վավերացրած միջազգային իրավական փաստաթղթերով, ինչպես նաև ներպետական իրավական ակտերով ամրագրված են երաշխիքներ՝ ուղղված երեխայի բարեկեցության պահպանմանը:

Կոնվենցիայի 26-րդ հոդվածի համաձայն՝ երեխան իրավունք ունի օգտվելու սոցիալական ապահովությունից (ներառյալ՝ սոցիալական ապահովագրությունից), և տվյալ պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի այդ իրավունքի լիակատար իրականացմանը հասնելու համար՝ համաձայն իր ազգային օրենսդրության:

Կոնվենցիայի 27-րդ հոդվածով ամրագրված է, որ պետությունը պետք է ծնողներին և երեխային դաստիարակող այլ անձանց օգնություն ցույց տա և հարկ եղած դեպքում ցուցաբերի նյութական աջակցություն ու սատարում հատկապես՝ սննդով, հագուստով և բնակարանով ապահովվելու ծրագրերով:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքով սահմանված է երեխայի սոցիալական ապահովության իրավունքը, իսկ Կոնվենցիայով ամրագրված է նաև երեխայի՝ անհրաժեշտ կենսամակարդակի իրավունքը: Կոնվենցիան վավերացրած բոլոր երկրներն ընդունել են, որ յուրաքանչյուր երեխա իր ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական

<sup>637</sup> Տե՛ս <https://www.unicef.org/eca/what-we-do/ending-child-poverty>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):



զարգացման համար անհրաժեշտ կենսամակարդակի իրավունք ունի, որի ապահովման իրացման գործում կարևոր դեր ունի պետությունը:

2016 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած՝ ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգ»-ի<sup>638</sup> առաջին նպատակի համաձայն՝ մինչև 2030 թվականը պետք է առնվազն կիսով չափ կրճատվի ըստ ազգային սահմանումների աղքատության բոլոր ձևերի մեջ ապրող բոլոր տարիքների տղամարդկանց, կանանց և երեխաների համամասնությունը:

Սակայն պետք է նշել, որ չնայած վերոգրյալ երաշխիքներին՝ Հայաստանում դեռևս կան բազմաթիվ երեխաներ, ովքեր աղքատ կամ ծայրահեղ աղքատ են:

Երեխաների աղքատության վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացված են ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2017 թվականի վիճակագրական վերլուծական զեկույցում<sup>639</sup>: Չեկույցի համաձայն՝ 2017թ-ին մինչև 18 տարեկան երեխաների 2.1%-ն ապրում է ծայրահեղ աղքատության, իսկ 30.8%-ն՝ աղքատության մեջ: Ծայրահեղ աղքատ և աղքատ է հանրապետության բնակչության համապատասխանաբար՝ 1.4%-ը և 25.7%-ը:

Նշված վիճակագրական տվյալները համեմատելով «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վերտառությամբ 2016 թվականի զեկույցի շրջանակներում հրապարակված տվյալների հետ, ըստ որոնց երեխաների 2%-ն է ապրում է ծայրահեղ աղքատության, իսկ 34.2%-ն՝ աղքատության մեջ՝ կարող ենք աներկբայորեն նշել, որ 2016 թվականի համեմատ երեխաների աղքատության ցուցանիշները 2017 թվականին աճել են, ինչը բնականաբար բացասաբար է անդրադարձել երեխաների իրավունքների իրացման վրա:

ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2017 թվականի վիճակագրական վերլուծական զեկույցում մանկական աղքատությունը ներկայացված է՝ նաև ըստ տարածաշրջանների: Մասնավորապես, ըստ զեկույցի՝ քաղաքային բնակավայրերում բնակվող երեխաների ծայրահեղ աղքատության մակարդակը կազմել է 1.7%, իսկ գյուղական բնակավայրերում՝ 2.7%, իսկ երեխաների ընդհանուր աղքատության մակարդակը համապատասխանաբար՝ 29.9% և 32.0%: Արագածոտնի մարզում երեխաների աղքատության մակարդակն ամենացածրն է՝ 10.9%, իսկ Շիրակի մարզում ամենաբարձրը՝ 51.8%:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տեղեկությունների համաձայն՝ 2018 թվականի ընթացքում շարունակվել են «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրի իրականացման աշխատանքները, որի շրջանակներում տրամադրվող ընտանեկան նպաստը սահմանում է ընտանիքի յուրաքանչյուր՝ մինչև 18 տարեկան անդամներին տրվող հավելումներ, որոնց չափը տարբերակվում է՝ ելնելով ընտանիքի անապահովությունից, ընտանիքում մինչև 18 տարեկան անդամների թվից և ընտանիքի բնակության վայրից (բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրեր): Ըստ ներկայացված տվյալների՝ 2018 թվականին ընտանեկան նպաստ է ստացել միջինը՝ շուրջ 71224 ընտանիք, որտեղ մինչև 18 տարեկան անդամների միջին թիվը կազմում է շուրջ 166567:

Ըստ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2017 թվականի զեկույցի՝ 2017 թվականին մինչև 18 տարեկան երեխաներ ունեցող տնային տնտեսությունների 22.7%-ը ստացել է ընտանեկան նպաստ: Ընտանեկան նպաստ ստացել է աղքատ տնային տնտեսությունների 38.1%-ը, ծայրահեղ աղքատների՝ 55.3%-ը և ոչ աղքատների՝ 15.9%-ը: 2017 թվականի տվյալները ցույց են տալիս նաև մանկական աղքատության

<sup>638</sup> Sustainable Development Goals (SDG)

<sup>639</sup> Տե՛ս <https://www.armstat.am/am/?nid=82&id=2095>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

տարբերություններն՝ ըստ սեռի. աղքատ է աղջիկների 32.4%-ը և տղաների՝ 29.4%-ը (բոլոր երեխաների 30.8%-ը):

Ստացվում է, որ ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների գրեթե կեսը չի ստանում ընտանեկան նպաստ, իսկ ոչ աղքատ տնային տնտեսությունների զգալի մասը՝ 15.9%-ը, օգտվում է ընտանեկան նպաստի տրամադրման պետական ծրագրերից, իսկ ընտանեկան նպաստի համակարգը, պետք է նշել, որ կարևոր գործոն է աղքատության նվազեցման ուղղությամբ: Տնային տնտեսության ընդհանուր ծախսերից ընտանեկան նպաստները հանելու դեպքում մանկական ծայրահեղ աղքատության մակարդակն աճում է՝ 2.1%-ից հասնելով 7.2%-ի, իսկ մանկական աղքատության ընդհանուր մակարդակը 30.8%-ից հասնում է 35.2%-ի:

Նշված վիճակագրական տվյալներից երևում է, որ խնդիրը դեռևս չի լուծվել և դարձել է վերջին տարիներին երեխաների իրավունքների պաշտպանության լրջագույն մարտահրավերներից մեկը: Պետությունը պետք է անհապաղ քայլեր իրականացնի մանկական աղքատության կրճատման վերացման ուղղությամբ:

Աշխարհի տարբեր երկրներում մանկական աղքատության վերաբերյալ տվյալները վկայում են, որ անհրաժեշտ են աղքատության անմիջական հետևանքների մեղմմանն, աղքատության հաղթահարմանն ուղղված գործուն միջոցներ: Դա կարող է արվել առանձին ռազմավարական ծրագրերի միջոցով, որոնք կվերաբերեն հենց աղքատության հիմնահարցին:

Երեխաների աղքատության դեմ պայքարի վերաբերյալ ուսումնասիրված միջազգային փորձը ցույց է տալիս, որ շատ երկրներում կան առանձին ծրագրեր՝ ուղղված աղքատության և երեխաների աղքատության վերացմանը և կանխարգելմանը: Երեխաների աղքատության վերացման ուղղությամբ գործուն քայլեր են ձեռնարկվում մի շարք երկրներում, օրինակ՝ Մեծ Բրիտանիայում, Ռումինիայում, Բուլղարիայում և այլն:

Մեծ Բրիտանիայում ընդունվել է «Երեխաների աղքատության մասին» օրենք<sup>640</sup>, որով սահմանվում է մանկական աղքատության նվազեցման թիրախները, ռազմավարությունը, գործունեությունը երեխաների աղքատության վերացման նպատակով:

Հատկանշական է, որ նշված օրենսդրական ակտը երեխաների աղքատության հաղթահարման գործում առանձին պարտականություններ է սահմանել տեղական իշխանությունների և պետական մարմինների համար՝ ընդգծելով նշանակալի արդյունքների հասնելու համար համագործակցության կարևորությունը: Սահմանված նպատակներին հասնելու համար ստեղծվել է նաև Երեխաների աղքատության հանձնաժողովը: Նշյալ օրենքի ընդունմամբ Մեծ Բրիտանիայի կառավարությունն ակնկալում էր մինչև 2020 թվականը հաղթահարել երեխաների աղքատությունը:

«Երեխաների աղքատության մասին» օրենքի հիման վրա Մեծ Բրիտանիայում սկսվել է երեխաների աղքատության ռազմավարական ծրագրերի իրականացում<sup>641</sup>: Նկատի ունենալով, որ ընտանիքների աղքատության հիմնական պատճառն ընտանիքի անդամների գործազրկությունը կամ ցածր վարձատրությունն է՝ 2014-2017 թվականների ռազմավարական ծրագրով նախատեսվել են աշխատանքի աջակցության և վարձատրության բարձրացմանն ուղղված միջոցառումներ: Ծրագրով սահմանվել է միայնակ ծնողների, երեք և ավելի երեխա ունեցող ընտանիքների աշխատանքով ապահովելու առաջնահերթություն, զբաղվածության ծառայության աջակցության ընդլայնում, վերջիններիս անվճար

<sup>640</sup> Տե՛ս [http://www.legislation.gov.uk/ukpga/2010/9/pdfs/ukpga\\_20100009\\_en.pdf](http://www.legislation.gov.uk/ukpga/2010/9/pdfs/ukpga_20100009_en.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>641</sup>Տե՛ս

[https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment\\_data/file/324103/Child\\_poverty\\_strategy.pdf](https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/324103/Child_poverty_strategy.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

խորհրդատվությունների անցկացում: Ծրագրով նախատեսվել է նաև առավել խոցելի ընտանիքներին մատուցվող կոմունալ ծառայությունների սակագների նվազեցում:

Մեծ Բրիտանիայի հաջողված փորձը ցույց է տալիս, որ երեխաների աղքատության հաղթահարումը գլխավորապես կապված է նախնառաջ ընտանիքների աղքատության հաղթահարման հետ, ուստի ռազմավարությունը պետք է կառուցել այնպես, որ պետության հովանավորությունից և նպաստային համակարգից առաջնահերթ օգտվեն խոցելի խավերից առավել խոցելիները՝ բազմազավակ ընտանիքները, միայնակ ծնողի գլխավորությամբ ընտանիքները, հաշմանդամություն ունեցող ծնողի գլխավորությամբ ընտանիքները և այլն: Համեմատական անցկացնելով ՀՀ-ում առկա տվյալների հետ<sup>642</sup>՝ կարող ենք փաստել, որ ՀՀ-ում բազմանդամ և երեխաներ ունեցող տնային տնտեսությունների շրջանում աղքատ լինելու հավանականությունն ավելի մեծ է: Այսինքն՝ ընտանիքների կարիքներին ուղղված աջակցության ծրագրերի միջոցով հնարավորություն կստեղծվի նաև մանկական աղքատության վերացման և կանխարգելման համար:

Ռումինիայում, թեև երեխաների աղքատության հաղթահարմանն ուղղված առանձին ռազմավարական ծրագրեր մշակված չեն, այնուամենայնիվ, երեխաների աղքատության կրճատմանն ուղղված միջոցառումներ նախատեսված են 2015-2020 թվականների «Աղքատության մակարդակի նվազեցման և սոցիալական ներառման» ազգային ռազմավարական ծրագրում<sup>643</sup>: Բուլղարիայի Հանրապետությունում գործում է «Աղքատության հաղթահարման և սոցիալական ներառման» մինչև 2020 թվականն ազգային ռազմավարական ծրագիր<sup>644</sup>, որտեղ ներառված է երեխաների աղքատության հիմնահարցը:

Այսպիսով, ամփոփելով վերը նշվածը՝ հարկ է նշել, որ երեխաների աղքատության դեմ պայքարի համար կարևոր նշանակություն ունի պետության կողմից ընտանիքի աջակցության ծրագրերի իրականացումը, երեխաների աղքատության ռազմավարության մշակումը և իրականացումը, ինչպես նաև թիրախավորված սոցիալական ծրագրերի ներդրումը:

*Ելնելով վերոգրյալից՝ երեխաների աղքատության հիմնախնդրի լուծման համար առաջարկվում է՝*

*1. բարձրացնել բնակչության իրազեկվածությունը գործող սոցիալական աջակցության ծրագրերի վերաբերյալ,*

*2. մշակել թիրախային աջակցության ծրագրեր՝ հաշվի առնելով երեխաների աղքատության ցուցանիշներն՝ ըստ մարզերի,*

*3. բարեփոխել ընտանեկան նպաստի գործող համակարգը՝ բարձրացնելով ծայրահեղ աղքատ և աղքատ ընտանիքների ընդգրկվածության մակարդակը:*

#### **4. Երեխայի նկատմամբ վատ վերաբերմունքը, այդ թվում՝ բռնությունը**

Երեխայի նկատմամբ բռնությունը դպրոցներում, ընտանիքում և այլ վայրերում համընդհանուր խնդիր է, որի վերաբերյալ տեղեկություններ և բողոքներ են ստացվել նաև 2018 թվականի ընթացքում: Երեխաներին բռնության դրսևորումներից պաշտպանելու գործում կարևոր դեր են խաղում դպրոցները: Շատ երեխաների համար, սակայն հենց դպրոցն է դառնում այն վայրը, որտեղ նրանք ենթարկվում են բռնության:

<sup>642</sup> Տե՛ս [https://www.armstat.am/file/article/poverty\\_2018\\_a\\_2.pdf](https://www.armstat.am/file/article/poverty_2018_a_2.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>643</sup> Տե՛ս [http://www.mmuncii.ro/j33/images/Documente/Familie/2016/StrategyVol1EN\\_web.pdf](http://www.mmuncii.ro/j33/images/Documente/Familie/2016/StrategyVol1EN_web.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>644</sup> Տե՛ս

<file:///C:/Users/569A~/AppData/Local/Temp/National%2520strategy%2520for%2520Reducing%2520Poverty%2520and%2520Promoting%2520social%2520inclusion%25202020-1.pdf>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի՝ երեխաների նկատմամբ բռնության հարցերով հատուկ ներկայացուցիչն իր զեկույցում ներկայացրել է դպրոցներում երեխաների նկատմամբ բռնության չորս տեսակ՝ բուլիինգ, ֆիզիկական բռնություն, հոգեբանական բռնություն և դպրոցից դուրս կատարվող բռնություն<sup>645</sup>: Չեկույցը նաև առանձնացնում է սեռական բռնությունը՝ որպես տարածված երևույթ: Ամբողջ աշխարհում 13-15 տարեկան 150 միլիոն երեխա դպրոցի տարածքում կամ դպրոցի տարածքից դուրս իրենց հասակակիցների կողմից ենթարկվում է բռնության: 720 միլիոն դպրոցահասակ երեխա ապրում է այն երկրներում, որտեղ դպրոցներում մարմնական պատիժներն ամբողջությամբ արգելված չեն<sup>646</sup>:

Դպրոցը կարող է կանխարգելիչ նշանակություն ունենալ երեխային աշխատանքի մեջ ներգրավման, վաղ ամուսնության համար, ինչպես նաև բռնության ենթարկված երեխայի համար լինել ապահով վայր: Մակայն պետք է նշել, որ ապահով, երեխայակենտրոն, ներառական և ընկերական միջավայրի փոխարեն դպրոցում կարող ենք հանդիպել նաև երեխայի նկատմամբ վատ վերաբերմունքի:

Բռնության բոլոր ձևերից պաշտպանված լինելու երեխայի իրավունքը երաշխավորվում է մի շարք ներպետական և միջազգային իրավական ակտերով: Այն ամրագրված է Կոնվենցիայով, որի 19-րդ հոդվածով սահմանվում է երեխայի՝ ծնողների, օրինական խնամակալների կամ երեխայի մասին հոգ տանող ցանկացած այլ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեբանական բռնության բոլոր ձևերից, վիրավորանքից կամ չարաշահումից, հոգատարության բացակայությունից կամ անուշադրությունից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից պաշտպանված լինելու իրավունքը:

Կոնվենցիայի 28-րդ հոդվածով հստակ ամրագրված է, որ դպրոցական կարգապահությունն իրականացվում է երեխայի մարդկային արժանապատվության հետ համատեղելի մեթոդներով: Ավելին, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ հանրակրթությունը նպատակաուղղված է, ի թիվս այլնի, յուրաքանչյուր սովորողի մարդկային արժանապատվության պահպանմանը: Բացի այդ, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին, արգելվում է երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի, կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի:

ՄԱԿ-ի կողմից հրապարակված երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ անկախ փորձագիտական ուսումնասիրությամբ նշվում է, որ երեխայի նկատմամբ բռնությունը հաճախ թաքնված երևույթ է, քանի որ երեխաները վախենում են հայտնել բռնության դեպքերի վերաբերյալ: Բռնության մասին չի բարձրաձայնվում, քանի որ այն ընդունելի է հասարակության կողմից որպես կարգապահական մեթոդ<sup>647</sup>:

Երեխաների նկատմամբ բռնության լատենտայնությունը նպաստում է հասարակության կողմից այդ երևույթի ոչ ճիշտ ընկալումը: «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրին և երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի նիստի թիվ 30 արձանագրային որոշման

<sup>645</sup>Տե՛ս

[https://violenceagainstchildren.un.org/sites/violenceagainstchildren.un.org/files/documents/publications/10\\_tackling\\_violence\\_in\\_schools\\_a\\_global\\_perspective.pdf](https://violenceagainstchildren.un.org/sites/violenceagainstchildren.un.org/files/documents/publications/10_tackling_violence_in_schools_a_global_perspective.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>646</sup> Տե՛ս [https://www.unicef.org/publications/files/An\\_Everyday\\_Lesson-ENDviolence\\_in\\_Schools.pdf](https://www.unicef.org/publications/files/An_Everyday_Lesson-ENDviolence_in_Schools.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>647</sup> Տե՛ս [https://www.unicef.org/violencestudy/reports/SG\\_violencestudy\\_en.pdf](https://www.unicef.org/violencestudy/reports/SG_violencestudy_en.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

թիվ 1 հավելվածի հիմնախնդիրներ բաժնում որպես **երեխաների իրավունքների հիմնախնդիր նշվում է երեխայի նկատմամբ բռնության երևույթի հանդեպ հասարակական հանդուրժողականությունը:**

Դրական է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թվականի հունվարի 27-ի N7-Ս/1 և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017 թվականի ապրիլի 28-ի N464Ս/2 համատեղ՝ «Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և (կամ) սովորող երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի դեպքերի հայտնաբերման ընթացակարգը և բռնության կասկածելի և հաստատված դեպքերի գրանցման մատյանի ձևը հաստատելու մասին» հրամանով ստեղծվել են հաստատություններում սովորողների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի դեպքերի հայտնաբերման, բռնության կասկածելի և հաստատված դեպքերի գրանցման համար ընթացակարգեր: Նմանատիպ դրական փորձը կարող է կիրառվել նաև հանրակրթական դպրոցներում բռնության կանխարգելման և վերացման նպատակով: Պետք է նշել նաև, որ 2018 թվականին Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից իրականացված այցերի ընթացքում պարզվել է, որ միայն Երևան քաղաքի թիվ 17 հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների հատուկ դպրոցում է լրացվում նկարագրված մատյանը, իսկ մի շարք հաստատություններում վերոնշյալ հրամանից տեղյակ չէին:

Հիմնվելով Պաշտպանին հասցեագրվող բողոքների, դեպքերի ուսումնասիրության և աշակերտների հետ զրույցների վրա՝ Պաշտպանի տարեկան հաղորդումներում բազմիցս բարձրաձայնվել է բռնության դեպքերի հայտնաբերման և կանխարգելման մասին: 2018 թվականի ընթացքում ևս Պաշտպանի աշխատակազմը ստացել է դպրոցներում անձնակազմի կամ այլ երեխաների կողմից երեխայի նկատմամբ բռնություն գործադրելու դեպքերի վերաբերյալ մի շարք բողոքներ, որոնք հիմնականում ներկայացվել են ծնողների կողմից: Պաշտպանի աշխատակազմ ճանաչողական այցով Հայաստանի տարբեր մարզերից և Երևանից այցելած շուրջ 500 երեխաներ նույնպես հայտնել են դպրոցում բռնության դեպքերի մասին:

Բողոքների մեծ մասը վերաբերել է ուսուցչի կողմից երեխաների նկատմամբ գործադրված ֆիզիկական և հոգեբանական բռնությանը: Ստացվել են նաև բողոքներ երեխաների միջև բռնության դեպքերի (բուլիինգի) վերաբերյալ:

Պաշտպանին հասցեագրվել է 4 բողոք Երևանի դպրոցներից մեկում ուսուցչուհու կողմից աշակերտին հարված հասցնելու նույն դեպքի վերաբերյալ: Հարկ է նշել, որ ըստ Երևանի քաղաքապետարանի տվյալների՝ տվյալ դեպքում ուսուցիչը եղել է անփորձ, իսկ հարուցված քրեական գործով վարույթը կարճվել է հանցակազմի բացակայության հիմքով:

Դատախազությունից ստացվել և Պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրվել է քրեական գործը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման պատճենը:

Ուսումնասիրմամբ վեր են հանվել գործի արդյունավետ քննությանն առնչվող հետևյալ հանգամանքները՝

1. քրեական գործով տուժողի դատավարական կարգավիճակ է տրվել այն աշակերտին, ում նկատմամբ, ըստ գործում առկա ցուցմունքների, իրականում ուսուցիչը ցանկացել է ֆիզիկական ուժ կիրառել, սակայն այն աշակերտին, ում նկատմամբ փաստացի այդ ուժը կիրառվել է, գործի շրջանակներում հարցաքննվել է վկայի դատավարական կարգավիճակով: Վերջինիս ծնողը՝ մայրը, ևս հարցաքննվել է վկայի դատավարական կարգավիճակով և ոչ թե տուժողի ներկայացուցչի կարգավիճակով: Վկայի դատավարական կարգավիճակով հարցաքննվելով, ըստ կարճման որոշման բովանդակության, ծնողը հայտնել է, որ չի ցանկանում՝ երեխան առերեսվի ուսուցչուհու հետ, բացի այդ որոշման բովանդակությունից

հստակ չէ՝ արդյոք վարույթն իրականացնողը ճշտել է, արդյոք տվյալ անձը բողոք ներկայացնում է, թե ոչ:

2. հատկանշական է, որ հաղորդում ներկայացրած անձը քննության ընթացքում հայտնել է, որ չի ցանկանում՝ երեխան առերեսվի ուսուցչուհու հետ, քանի որ կրկին հոգեբանական ծանր ապրումներ կունենա, միաժամանակ նշել է, որ ուսուցչուհու դեմ բողոք չունի: Այս առումով հարկ է ընդգծել, որ եզրափակիչ որոշման բովանդակությունից պարզ չէ՝ արդյոք ծնողները տեղեկացված են ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսված՝ մինչև տասնվեց տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը մանկավարժի մասնակցությամբ իրականացնելու, իսկ օրինական ներկայացուցիչի ցանկության դեպքում՝ նաև նրա մասնակցությունը հարցաքննությանը, այդ թվում՝ առերեսման ընթացքում ապահովելու համար: Որոշման բովանդակությունից պարզ չէ, թե ինչ պատճառով է հաղորդում ներկայացրած անձը նշել, որ որևէ բողոք չունի և արդյոք վարույթն իրականացնող մարմինը նրան պարզաբանել է մասնավոր մեղադրանքի դեպքում տուժողի բողոք չունենալու մասին հայտարարության իրավական հետևանքների մասին: Կարճման որոշման բովանդակությունից հստակ չէ նաև՝ արդյոք փաստացի տուժած երեխայի ծնողը հրաժարվել է որևէ բողոք ներկայացնել, թե ոչ:

Այս ամենի հետևանքով բռնություն գործադրած ուսուցիչը որևէ ձևով պատասխանատվության չի ենթարկվել:

Չնայած վերոգրյալ արձանագրված դեպքին՝ Երևանի քաղաքապետարանից ստացվել է տեղեկություն, որ քաղաքապետարանի ենթակայության դպրոցներում բռնության դեպքեր չեն արձանագրվել: Սա վկայում է, որ չկան երեխաների նկատմամբ բռնության դեպքերի կանխարգելման, արձանագրման և հաղորդման հստակ ընթացակարգեր: Պատշաճ վերահսկողություն չի իրականացվում դպրոցներում երեխաների նկատմամբ բռնության դեպքերի հայտնաբերման և վերացման նկատմամբ:

Պաշտպանին հասցեագրված բողոքների մի մասով ներկայացվել է երեխաների կողմից իրար նկատմամբ հոգեբանական բռնությանը ոչ պատշաճ արձագանքելու դեպքեր: Մասնավորապես, բողոքներից մեկում նշված է, որ ուսուցիչն այնպես է խոսել երեխայի հետ մյուս աշակերտների ներկայությամբ, որ հետագայում համադասարանցիները ծաղրել են երեխային՝ տղային կոչելով համահունչ կամ համանման աղջկա անունով: Պաշտպանի գրությունից հետո տվյալ խնդիրը համապատասխան արձագանք է ստացել մարզապետարանի կողմից, իսկ ուսուցիչը կարգապահական տույժի է ենթարկվել:

Ստացված բողոքներից մեկով էլ ներկայացվել է դեպքը, երբ մարզային դպրոցներից մեկի ուսուցիչը կարգադրել է երեխաներին մաքրել դպրոցի սանհանգույցները, տնօրենի և նրա տեղակալների աշխատասենյակները, որպես պատիժ իր բացակայության ժամանակ դասաժամին աղմկելու համար: Հարկ է նշել, որ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ սովորողն իրավունք ունի պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը: Ներկայացված դեպքում ուսուցիչը ստացել է նկատողություն, սակայն երեխայի ծնողը որոշել է երեխային տեղափոխել այլ դպրոց:

Երեխայի նկատմամբ վատ վերաբերմունքի վերաբերյալ ստացված բողոքներից է նաև մարզային դպրոցներից մեկում ուսուցչի կողմից երեխային դասարանի աշակերտներից առանձնացնելու դեպքը: Ուսուցիչը, կանխակալ վերաբերմունք դրսևորելով, երեխային չի թույլատրել մասնակցել արտադասարանային միջոցառումներին՝ նշելով, որ միայն որոշ (անձնակազմի կողմց լավը համարվող) երեխաները պետք է մասնակցեն նշված միջոցառումներին: Տվյալ դպրոցի կողմից ևս տրվել է նկատողություն ուսուցչին, սակայն, այս

դեպքում էլ ծնողը որոշել է, որ երեխայի համար առավել բարենպաստ է կրթությունը շարունակել մեկ այլ դպրոցում:

Վերոգրյալ դեպքերը ցույց են տալիս, որ դպրոցներում պատշաճ արձագանք չի տրվում ուսուցիչների կողմից երեխաների նկատմամբ հոգեբանական և ֆիզիկական բռնության դրսևորումներին կամ ստեղծվում է այնպիսի մթնոլորտ, որ երեխան այլևս չի կարողանում հաճախել այդ դպրոց, ինչն անթույլատրելի է երեխայի զարգացման, աշխարհընկալման և մի շարք հիմնարար իրավունքների իրացման տեսանկյունից:

Երեխայի նկատմամբ բռնության կանխարգելման և վերացման տեսանկյունից կարևոր է, որ երեխաները բարձր տեղեկացվածություն ունենան իրենց իրավունքների վերաբերյալ:

2017 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ ճանաչողական այցերով պարբերաբար այցելող երեխաները պատմել են դպրոցներում ուսուցիչների կողմից աշակերտների նկատմամբ թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեբանական բռնության դեպքերի առկայության մասին: Այդ երեխաներից շատերը չգիտեին, որ ուսուցիչներն իրավունք չունեն հարվածել աշակերտներին, եթե, օրինակ՝ նրանք խանգարում են դասընթացի անցկացմանը: Նույն պատկերն է արձանագրվել նաև 2018 թվականին Պաշտպանի աշխատակազմ այցելած երեխաների պարագայում, ովքեր ևս քիչ են տեղեկացված բռնությունից պաշտպանված լինելու իրենց իրավունքի վերաբերյալ: Թեև Պաշտպանի աշխատակազմում երեխաներին մանրամասն ներկայացվում են իրենց իրավունքները, սակայն խնդրի վերաբերյալ պետք է աշխատանք տարվի նաև դպրոցներում երեխաների՝ իրենց իրավունքների մասին իրազեկվածության, բռնության դեպքերի հաղորդման վերաբերյալ ընթացակարգերի միջոցով:

Երեխայի նկատմամբ բռնության դրսևորումները լինում են նաև ընտանիքում: Համաձայն ոստիկանության տեղեկատվության՝ 2018 թվականի ընթացքում գրանցվել է երեխաների նկատմամբ բռնության 149 դեպք:

2018 թվականի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի մարմինների և ստորաբաժանումների վարույթում քննվել է երեխաների նկատմամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ 317 քրեական գործ՝ նախորդ տարվա 265 քրեական գործի դիմաց<sup>648</sup>:

Ընտանիքում երեխայի նկատմամբ բռնության դեպքերը հաճախ լինում են ծնողավարման հմտությունների բացակայության պատճառով: Ծնողներին, խնամակալներին և ընտանիքներին վաղ մանկական զարգացման վերաբերյալ տեղեկություններ հաղորդելը կարող է մեծացնել դրական ծնողավարման մեթոդների կիրառման հավանականությունը, ինչը բնականաբար նվազեցնում է ընտանիքում բռնության վտանգը:

Խնդիրների համակարգային լուծման և նման դեպքերի կանխարգելման համար, ի թիվս այլնի անհրաժեշտ է ստեղծել նաև երեխաների պաշտպանության գործուն համակարգ: Դրա մասին բազմիցս նշվել է ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման գործընթացում Հայաստանին ուղղված առաջարկներում<sup>649</sup>: Մի շարք կազմակերպություններ մշակել են դրական ծնողավարության վերաբերյալ տարբեր ձեռնարկներ և պարբերաբար իրականացնում են իրազեկման ծրագրեր՝ բարձրաձայնելով դրական ծնողավարման անչափ

<sup>648</sup>Տե՛ս

<http://investigative.am/news/view/%D5%A5%D6%80%D5%A5%D5%AD%D5%A1%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B6%D5%AF%D5%A1%D5%BF%D5%B4%D5%A1%D5%B4%D5%A2-%D5%A2%D5%BC%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.html> (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ)

<sup>649</sup> Universal Periodic Review (UPR), [https://www.upr-info.org/database/index.php?limit=0&f\\_SUR=8&f\\_SMR=All&order=&orderDir=ASC&orderP=true&f\\_Issue=All&searchReco=&resultMax=300&response=&action\\_type=&session=&SuRRgrp=&SuROrg=&SMRRgrp=&SMROrg=&pledges=RecoOnly](https://www.upr-info.org/database/index.php?limit=0&f_SUR=8&f_SMR=All&order=&orderDir=ASC&orderP=true&f_Issue=All&searchReco=&resultMax=300&response=&action_type=&session=&SuRRgrp=&SuROrg=&SMRRgrp=&SMROrg=&pledges=RecoOnly), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

կարևոր դերակատարումը երեխաների նկատմամբ բռնությունների կանխարգելման գործընթացում:

Մասնավորապես, դրական ծնողավարման ձեռնարկներ մշակվել են տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից, օրինակ՝ Կանանց աջակցման կենտրոնը մշակել է «Երեխաները և ընտանեկան բռնությունը» ձեռնարկը, որտեղ ներկայացված են ծնողավարության հասկացությունը, դրա առանձնահատկությունները և երեխայի հետ դրական շփման հմտությունները:

Դրական ծնողավարման թեմային հատուկ անդրադարձ է կատարվել «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպության մշակած «Դրական ծնողավարման ձեռնարկ: Երեխաների դեմ բռնության կանխարգելում» ձեռնարկով:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը ներկայացրել է երեխաների հանդեպ կիրառվող բռնությունը կանխելուն ուղղված որոշակի քայլեր<sup>650</sup>: Նշված քայլերն են ծնողներին, խնամակալներին և ընտանիքներին աջակցելը, նրանց վաղ մանկական զարգացման վերաբերյալ տեղեկություններ հաղորդելը, երեխաներին ու դեռահասներին ռիսկերն ու մարտահրավերները կառավարելու հարցում օգնելը և աջակցելը բռնություն գործադրելու խնդիրներն ու մարտահրավերները հաղթահարելու գործում, բռնությունը և խտրականությունը քաջալերող սոցիալական նորմերն ու սովորույթները փոխելը:

Հաշվի առնելով դրական ծնողավարության անչափ կարևոր դերակատարումը երեխաների նկատմամբ բռնությունների կանխարգելման գործընթացում՝ հարկ է ընդգծել, որ տարբեր կազմակերպությունների կողմից դրական ծնողավարության վերաբերյալ պարբերաբար իրականացվող ծրագրերն ու մշակվող ձեռնարկները դեռևս բավարար երաշխիք չեն երեխաների նկատմամբ բռնությունների կանխարգելմանն ուղղված գործընթացի արդյունավետության համար: Տվյալ խնդրի լուծմանն ուղղված գործընթացի շարունակականության և կայունության ապահովման երաշխավորը պետք է լինի պետությունը: Մասնավորապես, դա կարող է դրսևորվել պետության կողմից դրական ծնողավարության վերաբերյալ նոր ծրագրերի ներդրմամբ, երիտասարդ ընտանիքների համար իրագրելի դասընթացների/սեմինարների կազմակերպմամբ, ինչպես նաև դրանց իրականացման նկատմամբ վերահսկողությամբ:

Ցավոք մեծ թիվ են կազմում նաև երեխաների սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները: 2018 թվականի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի մարմինների և ստորաբաժանումների վարույթում քննված՝ երեխաների նկատմամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ 317 քրեական գործ, որից՝

36-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով նախատեսված հանցագործությանը՝ սեռական հարաբերությունը 16 տարին չլրացած անձի հետ կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը 16 տարին չլրացած անձի նկատմամբ,

16-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածով նախատեսված՝ սեքսուալ բնույթի բռնի գործողություններին,

13-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածով նախատեսված՝ անառակաբարձ գործողություններին,

11-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածով նախատեսված՝ բռնաբարությանը և այլն:

Երեխաների սեռական շահագործումը, ինչպես նաև երեխաների սեռական չարաշահման բոլոր ձևերը կործանիչ են երեխայի առողջության և հոգեբանական ու սոցիալական զարգացման համար: 2007 թվականին Եվրոպայի խորհուրդն ընդունեց

<sup>650</sup> Տե՛ս <https://www.unicef.org/armenia>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):



«Մեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» կոնվենցիան<sup>651</sup>, որի երեք հիմնական նպատակներն են.

1. երեխաների սեռական շահագործման և սեռական չարաշահման կանխարգելումը և դրանց դեմ պայքարը,
2. սեռական շահագործումից և սեռական չարաշահումից տուժող երեխաների իրավունքների պաշտպանությունը,
3. նշված երևույթի դեմ պայքարում ներպետական և միջազգային համագործակցության խթանումը:

Կոնվենցիայում առաջին անգամ սահմանվում է երեխայի նկատմամբ սեռական չարաշահման հանցագործությունը:

Հայաստանի Հանրապետությունը 2010 թվականին ստորագրել է վերոնշյալ Կոնվենցիան, սակայն այն դեռևս չի վավերացվել: Կոնվենցիայի վավերացմամբ հնարավորություն կստեղծվի ՀՀ-ում համապատասխան օրենսդրական փոփոխություններ կատարել ուղղված երեխաների սեռական շահագործման և նրանց հանդեպ սեռական բնույթի բռնության դեմ կանխարգելմանն ու պայքարելուն և սեռական շահագործումից ու սեռական բռնությունից տուժած երեխաների իրավունքները պաշտպանելուն: Ավելին, Կոնվենցիայի վավերացումը կնպաստի երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում երեխայի լավագույն շահերի ապահովման առաջնահերթ ուշադրություն դարձնելուն և կխթանի Կոնվենցիայի կողմերի միջև միջազգային համագործակցությունը:

*Ուստի, անհրաժեշտ է՝*

*1. մշակել երեխաների հանդեպ կամ նրանց կողմից միմյանց նկատմամբ բռնության կասկածելի դեպքերի կանխարգելման, հայտնաբերման և հաղորդման ընթացակարգեր հանրակրթական դպրոցների համար,*

*2. երեխաներին մշտապես իրազեկել իրենց իրավունքների վերաբերյալ,*

*3. իրականացնել վերապատրաստումներ ուսուցիչների համար՝ երեխաների և ուսուցիչների իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով,*

*4. ներդնել դրական ծնողավարության զարգացմանն ուղղված համայնքահեն ծրագրեր՝ մեծ ուշադրություն դարձնելով ընտանիքում երեխայի նկատմամբ բռնության դեպքերի կանխարգելմանը և վերացմանը,*

*5. ՀՀ օրենսդրությունը համապատասխանեցնել կոնվենցիայի դրույթներին և վավերացնել Լանսարոտեի կոնվենցիան:*

## **5. Երեխայի ինքնության իրավունքը**

Պաշտպանին 2018 թվականին հասցեագրվել են բողոքներ երեխաների ինքնության իրավունքի ճանաչման ոչ իրավաչափ սահմանափակումների վերաբերյալ:

Երեխան, ում ծննդյան փաստը գրանցված չէ, զրկվում է անվան և քաղաքացիության իրավունքներից՝ կանգնելով հասարակությունից դուրս մնալու վտանգի առաջ: Ծննդյան վկայական չունեցող երեխան զրկվում է նաև կրթության, առողջության պահպանման, մասնակցության և պաշտպանված լինելու իրավունքների իրացման հնարավորությունից: Չգրանցված երեխան առավել «գրավիչ» կարող է լինել թրաֆիքինգի և շահագործման ենթարկվելու տեսանկյունից, իսկ առավել մեծ տարիքում չգրանցված երեխան չի կարող դիմել անձնագիր ստանալու, բանկային հաշիվ բացելու կամ աշխատանք ունենալու համար

<sup>651</sup>Տե՛ս <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=090000168046e1e4>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

և այլն: Չգրանցված երեխան առավել հաճախ կարող է ենթարկվել խտրականության, անուշադրության կամ բռնության<sup>652</sup>:

Ծննդի գրանցումը նաև Պետության կողմից մշակվող երեխաների իրավունքների արդյունավետ ռազմավարության ձևավորման էական տարր է:

Կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն՝ երեխան գրանցվում է ծնվելուց անմիջապես հետո և ծննդյան պահից ձեռք է բերում անվան և քաղաքացիության իրավունք: Կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանվում է երեխայի ինքնություն ունենալու իրավունք:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի՝ Կոնվենցիայի իրականացման ձեռնարկի<sup>653</sup> համաձայն՝ Կոնվենցիայի 7-րդ հոդվածն արտացոլում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 24-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով ամրագրված դրույթները: Մասնավորապես, նշյալ դաշնագրով սահմանվում է, որ յուրաքանչյուր երեխա պետք է գրանցվի իր ծնվելուց անմիջապես հետո, ունենա անուն, նշվում է նաև յուրաքանչյուր երեխայի՝ քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք ունենալու մասին:

Կոնվենցիայի 7-րդ հոդվածի դրույթներից բխում է նաև երեխայի՝ իր ծնողներին ձանաչելու և իր ծնողների կողմից խնամվելու իրավունքը: Երեխայի ծննդյան փաստի գրանցումը փոխկապակցված է Կոնվենցիայով սահմանված երեխայի այնպիսի իրավունքների հետ, ինչպիսիք են երեխայի ինքնությունը՝ ներառյալ քաղաքացիությունը, անունը և ընտանեկան կապերը պահպանելու, ընտանիքում ապրելու, ընտանիքի վերամիավորման և պետության կողմից հատուկ պաշտպանության ստանալու իրավունքները:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով ևս ամրագրված է, որ յուրաքանչյուր երեխա ծննդյան պահից ունի անվան և քաղաքացիության իրավունք: Երեխայի ծննդյան փաստն օրենքով սահմանված կարգով գրանցվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինը:

Չնայած երեխայի ծննդյան փաստի գրանցման համար առկա են անհրաժեշտ ներպետական և միջազգային իրավական կարգավորումներ, այնուամենայնիվ, 2018 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմը ստացել է բողոքներ երեխային ծննդյան վկայական չտրամադրելու կամ տրամադրման գործընթացը երկարաձգելու վերաբերյալ:

Ստացված բողոքներից մեկում օրինակ՝ բարձրաձայնվել է այն խնդիրը, որ երեխայի ծննդյան փաստի գրանցումն արդեն երեք տարի է ՀՀ ԱՆ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունը չի կատարել, ինչի հետևանքով, փաստորեն, երեխան 3 տարի չի կարողացել իրացնել իր մի շարք իրավունքներ, որոնք սերտորեն կապված են ծննդյան փաստի գրանցման հետ:

Խնդիրն այն է, որ երեխայի մոր և հոր ամուսնալուծության դատական կարգով լուծվելու և ՀՀ ԱՆ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունում գրանցվելու ժամանակահատվածների միջև անցել էր գրեթե մեկ տարի, որի ընթացքում երեխայի մայրը և իր երկրորդ ամուսինը երեխա էին ունեցել: Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինը հրաժարվել էր գրանցել երեխայի ծնունդը՝ պատճառաբանելով, որ երեխայի մոր երկրորդ ամուսինը, ով երեխայի կենսաբանական հայրն է, չի կարող երեխայի հայրությունը ձանաչել, քանզի երեխայի մոր և նրա առաջին ամուսնու ամուսնալուծության գրանցումը տեղի է ունեցել երեխայի ծնվելուց հետո: Քաղաքացիական կացության ակտերի գրանցման

<sup>652</sup> Տե՛ս <https://www.unicef-irc.org/publications/pdf/digest9e.pdf>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>653</sup>Տե՛ս

[https://www.unicef.org/publications/files/Implementation\\_Handbook\\_for\\_the\\_Convention\\_on\\_the\\_Rights\\_of\\_the\\_Child\\_Part\\_1\\_of\\_3.pdf](https://www.unicef.org/publications/files/Implementation_Handbook_for_the_Convention_on_the_Rights_of_the_Child_Part_1_of_3.pdf), (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

մարմինն իր մերժումը պատճառաբանել է ՀՀ արդարադատության նախարարի 2007 թվականի մայիսի 14-ի թիվ 97-Ն հրամանով, համաձայն որի՝ եթե երեխան ծնվել է ամուսնալուծության կամ ամուսնությունն անվավեր ճանաչելու օրվանից 300 օր անցնելուց հետո, ապա նախկին ամուսինը՝ որպես երեխայի հայր կարող է գրանցվել միայն հայրության որոշման գրանցման հիման վրա և եթե երեխայի մայրը, որը գտնվում է գրանցված ամուսնության մեջ, երեխայի ծննդի գրանցման ժամանակ հայտարարում է, որ իր ամուսինը երեխայի հայրը չէ ու խնդրում է երեխայի ծննդի գրանցման մեջ նրան հայր չնշել, ապա նրա խնդրանքը կարող է բավարարվել միայն այդ մասին մոր և նրա ամուսնու գրավոր դիմումի առկայության դեպքում: Տվյալ դեպքում երեխայի մոր առաջին ամուսինը չի ցանկացել գրավոր դիմում ներկայացնել և երեխան երկար ժամանակ մնացել է առանց ծննդյան վկայականի:

Պաշտպանի աշխատակազմի և ՀՀ արդարադատության նախարարության համագործակցության արդյունքում երեխայի ծննդյան փաստը սահմանված կարգով գրանցվել է:

Ծննդյան փաստի գրանցման հետ կապված մեկ այլ բողոքով բարձրացվել է այն հարցը, որ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինը ՀՀ-ում բնակվող այլ երկրի քաղաքացուն մերժել է գրանցել նրա երեխայի ծննդյան փաստը, քանի որ երեխայի մոր անձը հաստատող փաստաթուղթը եղել է ժամանակավոր անձնագիր: Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինը հաշվի չի առել, որ երեխայի հայրն ունի ՀՀ անձնագիր:

«Քաղաքացիության կացության ակտերի գրանցման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ երեխայի ծննդյան մասին հայտարարության հետ պետք է ներկայացվի երեխայի ծնունդը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև ծնողների (ծնողներից մեկի) կամ դիմողի անձը հաստատող, երեխայի ծննդի ակտի գրառման մեջ հոր մասին տեղեկություններ լրացնելու համար հիմք համարվող փաստաթղթեր: Ստացվում է, որ օրենքը չի սահմանում, թե կոնկրետ որ ծնողի անձը հաստատող փաստաթղթի հիման վրա է գրանցվում երեխան: Այսինքն, նկարագրված դեպքում երեխայի ծննդյան փաստի գրանցման հետ կապված խնդիրներ չպետք է ծագեին: Տվյալ դեպքում ևս Պաշտպանի աշխատակազմի և ՀՀ արդարադատության նախարարության միջև համագործակցության շնորհիվ երեխային տրամադրվել է ծննդյան վկայական:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարող ենք նշել, որ երեխայի ծննդյան փաստի գրանցումը պետք է լինի անմիջապես, իսկ այն դեպքերում, երբ ծագում են խնդիրներ՝ ծնողների փաստաթղթերի հետ կապված, հարկավոր է ստեղծել գործուն մեխանիզմներ երեխայի ծնունդն օրենքով սահմանված ժամկետներում գրանցելու համար:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝*

*1. ապահովել երեխաների ծննդյան հետ կապված բոլոր օղակների միջև համագործակցություն՝ ներառելով բուժհաստատությունները, սոցիալական ծառայությունները, խնամակալության և հոգաբարձության մարմինները,*

*2. ՔԿԱԳ-ները, ծննդատները, պոլիկլինիկաներն ապահովել երեխաների իրավունքների և մասնավորապես ծննդյան փաստի գրանցման վերաբերյալ տեղեկատվական պաստառներով և թերթիկներով,*

*3. վերապատրաստել ՔԿԱԳ աշխատակիցներին՝ բարձրացնելով վերջիններիս կարողությունները, որպեսզի հնարավոր լինի օրենքով կամ այլ իրավական ակտերով չսահմանված դեպքերում խորհրդատվություն տրամադրել ծնողներին և աջակցել նրանց երեխայի ծննդյան փաստը գրանցելու համար:*

## **6. Խնամակալության և հոգաբարձության մարմինների (հանձնաժողովների) գործունեություն**

Պաշտպանը տարիներ շարունակ բարձրաձայնել է խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության հետ կապված բազմաթիվ խնդիրներ: 2018 թվականին ևս Պաշտպանի աշխատակազմ ստացվել են Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների (սույն հաղորդման սույն բաժնում այսուհետ՝ ԽՀՀ) գործունեության վերաբերյալ մեծ թվով դիմում-բողոքներ, որոնք հիմնականում վերաբերել են երեխայի՝ իր ծնողների հետ շփվելու և նրանց կողմից դաստիարակություն ստանալու իրավունքի իրացմանը:

Մարդու իրավունքների պաշտպանը 2018 թվականին ներկայացրել է «Խնամակալության և հոգաբարձության մարմինների ու Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույց<sup>654</sup>, որով ներկայացվել են նախորդ տարեկան հաղորդումների, ինչպես նաև Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքներում առկա տվյալների ուսումնասիրության արդյունքում առանձնացված մի շարք հիմնական խնդիրներ:

Մասնավորապես, զեկույցով նշվել է, որ ԽՀՀ գործունեությունն իրականացվում է կամավորության սկզբունքով: ԽՀՀ անդամները, զբաղված լինելով իրենց հիմնական գործունեությամբ, լիարժեք ներգրավվածություն չեն ունենում ԽՀՄ/ԽՀՀ գործառույթների իրականացմանը, իսկ երբեմն էլ վերաբերում են տվյալ աշխատանքին որպես ավելորդ ծանրաբեռնվածություն:

Արտահերթ զեկույցով նշվել է նաև, որ ԽՀՄ/ԽՀՀ անդամների ճնշող մեծամասնության մոտ չկա համապատասխան որակավորում: Նրանց գործունեությունը սերտորեն կապված լինելով երեխաների սոցիալ-հոգեբանական և առողջական բարօրության հետ, պետք է զուգորդվի հոգեբանական գիտելիքներ և հաղորդակցման հմտությունների հետ:

Խնդրահարույց է նաև այն, որ ԽՀՄ/ԽՀՀ անդամների մեծամասնությունը, հատկապես մարզային համայնքներում, լիարժեք իրազեկված չէ երեխաների իրավունքների պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ, իրենց գործունեության ընթացքում պատշաճ կերպով չեն գնահատում երեխայի և ընտանիքի կարիքները և տալիս են եզրակացություններ, որոնց հիմքում հաճախ ընդամենը մեկ տնային այցելությունն է: Այցելություններին, որպես կանոն, չեն մասնակցում համապատասխան մասնագետներ(օրինակ՝ հոգեբան, սոցիալական աշխատող):

ԽՀՄ/ԽՀՀ գործունեության համար չկա պատշաճ վերահսկողություն, իսկ անդամների պատասխանատվության ենթարկելու մեխանիզմները ոչ լիարժեք են, ուստի ԽՀՄ/ԽՀՀ գործունեությունը սկսում է կրել արհեստական և սուբյեկտիվ բնույթ:

Հարկ է նշել, որ ԽՀՀ կանոնադրությամբ նշված չէ երեխայի կարծիքը հաշվի առնելու և երեխայի լսված լինելու իրավունքի իրացումն ապահովելու համար անհրաժեշտ մեխանիզմներ և սկզբունքներ, մինչդեռ համայնքում երեխայի իրավունքների պաշտպանության պատասխանատու մարմնի գործունեության կարևոր սկզբունքներից պետք է լինեն իրեն վերաբերող հարցերում երեխայի կարծիքը լսելը և հաշվի առնելը:

ԽՀՀ-ների հետ կապված խնդիրների մասին նշվել է նաև Հայաստանի Հանրապետությունում Երեխաների իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրում<sup>655</sup>, որտեղ որպես երեխաների իրավունքների պաշտպանության հիմնախնդիր նշվել է երեխաների իրավունքների պաշտպանության

<sup>654</sup> Տե՛ս <http://children.ombuds.am/wp-content/uploads/2017/12/GTC-report.pdf>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>655</sup> Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=114901>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

ազգային հանձնաժողովի, ԽՀՀ-ների ոչ արդյունավետ գործունեությունը, մասնավորապես երեխաների իրավունքների պաշտպանության համար պատասխանատուների բացակայությունը, գործառույթների վարչարարական բնույթը և համանման պահանջներով կրկնությունները:

Վերոնշյալ ռազմավարական ծրագրով նախատեսվել են մի շարք գործողություններ (օրինակ՝ նշյալ ռազմավարական ծրագրի հավելվածի 1.1.3, 1.1.4 կետերը), որով նախատեսվում է գնահատել ԽՀՀ-ների գործունեությունը և անհրաժեշտության դեպքում ներկայացնել փոփոխությունների առաջարկներ, ինչպես նաև 2017-2018 թվականներին վերապատրաստել ԽՀՀ-ների անդամների 50 տոկոսին:

Ռազմավարական ծրագրի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կատարման հաշվետվության համաձայն՝ 2018 թվականին իրականացվել է ԽՀՀ-ների գործունեության գնահատում, իսկ վերջինիս արդյունքները և համապատասխան առաջարկներ ներկայացվել են շահագրգիռ կողմերի քննարկմանը: Սակայն հարկ է նշել, որ հաշվետվության մեջ բացակայում է տեղեկատվություն, թե ինչ առաջարկներ են ներկայացվել ԽՀՀ-ների գործունեության փոփոխության վերաբերյալ և դրանցից քանիսն է ընդունել ՀՀ կառավարությունը:

Հաշվետվության շրջանակներում նշվում է նաև հանրային քննարկումներ, կլոր սեղանների իրականացման, ինչպես նաև հեռուստատեսությամբ ու ռադիոյով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների զարգացման համակարգի նպատակի, խնդիրների, ներդրման ուղղությամբ իրականացվող քաղաքականության հիմնական ուղղությունների, ներդրմանը խոչընդոտող գործոնների վերաբերյալ հաղորդումների պատրաստման մասին: Ինչ վերաբերում է ԽՀՀ-ների անդամների և համայնքների համապատասխան ոլորտի աշխատակիցների 50 տոկոսի վերապատրաստմանը, ապա պետք է նշել, որ վերջինիս վերաբերյալ տվյալներ հաշվետվությունը չի պարունակում, ուստի չի բացահայտվում դրանց իրագործված լինել կամ չլինելու փաստը:

Ելնելով վերոգրյալից կարող ենք նշել, որ 2018 թվականին համայնքային մակարդակում երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի բարելավման ուղղությամբ գործուն քայլեր չեն իրականացվել, ուստի՝ վերահաստատելով նաև «Խնամակալության և հոգաբարձության մարմինների ու Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների վերաբերյալ» Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցում կատարած նկատառումները՝ քննարկվող հարցի կապակցությամբ *առաջարկվում է՝*

- 1. աշխատանքներ տանել ԽՀՀ-ի անդամների մասնագիտական կարողությունների բարձրացման ուղղությամբ,*
- 2. հնարավորության սահմաններում բացառել ԽՀՀ-ի անդամների աշխատանքի կամավորության սկզբունքը և մասնագետներ ներգրավել վճարովի հիմունքներով (օրինակ՝ սոցիալական աշխատող, հոգեբան),*
- 3. ԽՀՀ-ների համար մշակել մեթոդաբանական ուղեցույց, ինչպես նաև համապատասխան միջոցներ տրամադրել գործառույթների լիարժեք իրականացման համար,*
- 4. ԽՀՄ կանոնադրությամբ ամրագրել երեխային վերաբերող հարցերում իր մասնակցության և լսված լինելու սկզբունքը:*

## **7. Թափառաշրջիկ ու մուրացիկ երեխաներին հայտնաբերելը և աջակցություն տրամադրելը**

Շարունակում է չլուծված մնալ երեխաների՝ մուրացիկությամբ զբաղվելու հարցը, որը Պաշտպանը բարձրացնում է արդեն տարիներ շարունակ:

ՄԱԿ-ի տվյալների համաձայն՝ գրեթե 150 միլիոն երեխա գտնվում է փողոցում՝ տարբեր պատճառներից ելնելով: Դժվարին իրավիճակում հայտնվելու հետևանքով այդ երեխաներից շատերը զբաղվում են մանր աշխատանքներով: Նրանք զրկվում են կրթություն ստանալուց և արժանապատիվ ապագա ունենալուց<sup>656</sup>:

Թափառաշրջիկ ու մուրացիկ երեխաներին հայտնաբերելու և աջակցություն տրամադրելու արդյունավետ մեխանիզմների հարցը տարիներ շարունակ բարձրացվում է Պաշտպանի տարեկան հաղորդումներում:

ՀՀ ոստիկանության տվյալների համաձայն՝ 2018 թվականի ընթացքում ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ 3-րդ վարչության և տարածքային ստորաբաժանումները ոստիկանություն են ներկայացրել թափառաշրջիկությամբ և մուրացկանությամբ զբաղվող 51 երեխա (մի քանի երեխա ներկայացվել են կրկնակի), որոնցից 1-ը՝ 9 տարեկան, 4-ը՝ 10 տարեկան, 4-ը՝ 11 տարեկան, 4-ը՝ 12 տարեկան, 4-ը՝ 13 տարեկան, 1-ը՝ 14 տարեկան, 15-ը՝ 15 տարեկան, 7-ը՝ 16 տարեկան, 7-ը՝ 17 տարեկան: Երեխաներից իգական սեռի է եղել մեկը:

Թափառաշրջիկությամբ և մուրացկանությամբ զբաղվող 51 երեխայից 43-ը հայտնաբերվել են Երևան, 7-ը՝ Մայիսակ և 1-ը՝ Վանաձոր քաղաքներում:

Բացի այդ, Երևանի քաղաքապետարանի տվյալների համաձայն՝ ՀՀ ոստիկանությունը 2018 թվականի ընթացքում ստացել է մուրացիկ, թափառաշրջիկ և առևտրով զբաղվող 25 երեխայի վերաբերյալ տեղեկատվություն: Երևանի քաղաքապետարանի հայտնած տեղեկության համաձայն՝ ՀՀ ոստիկանությունից ստացված տեղեկության և ծնողի դիմումի հիման վրա հայտնաբերված 2 երեխան տեղափոխվել են հատուկ կրթահամալիր:

Հարկ է նշել, որ մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների վերաբերյալ որևէ տեղեկատվություն չի սովել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:

Մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների խնդիրներին դեռևս 2013 թվականին անդրադարձել է ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն՝ նշելով, որ մտահոգիչ է մուրացկանության մեջ ներգրավված երեխաների աճող թիվը<sup>657</sup>:

ՀՀ ոստիկանության տվյալների համաձայն՝ պարբերաբար իրականացվում են ստուգայցեր մարդաշատ, թափառաշրջիկությամբ և մուրացկանությամբ զբաղվելու համար նպաստավոր, անչափահասների ժամանցի վայրեր, ինչպես նաև եկեղեցիների բակեր և առևտրի կենտրոններ: ՀՀ ոստիկանության հայտնած տեղեկության համաձայն՝ ՀՀ ոստիկանության համապատասխան ծառայողների կողմից դպրոցներում պարբերաբար անց են կացվել հանդիպում-գրույցներ, որոնց ընթացքում անդրադարձ է կատարվել նաև թափառաշրջիկության և մուրացկանության երևույթին, ինչպես նաև երեխաներին մուրացկանության մեջ ներգրավելու և շահագործելու վտանգավորությանը:

Չնայած ձեռնարկվող քայլերին 2017 և 2018 թվականների տվյալների երեխաների՝ մուրացկանությամբ զբաղվելու վերաբերյալ տվյալները գրեթե չեն փոխվել<sup>658</sup>: Երեխաների

<sup>656</sup> Տե՛ս <http://www.unesco.org/new/en/social-and-human-sciences/themes/fight-against-discrimination/education-of-children-in-need/street-children/>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>657</sup> Տե՛ս <https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf>, (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

<sup>658</sup> Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2017 թվականի տարեկան հաղորդման էջ 378.: ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված տեղեկությունների համաձայն՝ 2017 թվականի ընթացքում ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից տարածքային ստորաբաժանումներ են ներկայացվել

շրջանում մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվելը կանխարգելելու և վերացնելու ուղղությամբ պետք է իրականացվի կայուն համագործակցություն իրավասու մարմինների միջև: Երեխաներին հայտնաբերելուց և համայնքային մարմին ուղղորդելուց հետո պետք է յուրաքանչյուր երեխայի համար մշակվի աջակցության ծրագիր, որպեսզի կանխարգելվի այդ երեխայի կրկին մուրացկանությամբ զբաղվելու ռիսկը:

Տվյալ գործում կարևոր է ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգը, որը «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և ֆիզիկական անձանց, սոցիալական աջակցության շրջանակներում նրանց կողմից իրականացվող գործառույթների (լիազորությունների) և միջոցառումների ամբողջությունն է: Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի էությունն է համագործակցության միջոցով կանխարգելել անձի (ընտանիքի, այլ սոցիալական խմբի) կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելը, վերացնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու պատճառները և հետևանքները: Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի հիմնական բաղադրիչներից են միջգերատեսչական սոցիալական համագործակցության կողմերը:

Մուրացկանությամբ զբաղվող երեխաների և նրանց ընտանիքների հետ մշտապես պետք է վարվի աշխատանք համայնքային մարմինների և սոցիալական ծառայությունների հետ: Մուրացկանությամբ զբաղվող երեխաներին ժամանակին հայտնաբերելու գործում կարևոր նշանակություն ունեն դպրոցները, որոնք պետք է հետևեն երեխաների հաճախելիությանը դպրոցներում և ժամանակին ահազանգեն խնդրի մասին:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝*

*1. ուժեղացնել ՀՀ ոստիկանության, տեղական ինքնակառավարման մարմինների և սոցիալական ծառայությունների համագործակցությունը՝ ուղղված մուրացկանությամբ ու թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հայտնաբերմանը և աջակցության տրամադրմանը,*

*2. հաստատել կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման, հաշվառման և ուղղորդման կարգ:*

#### ԳԼՈՒԽ 4. ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՅՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների պահպանությունը պահանջում է հատուկ ուշադրություն պետության կողմից: Մա պայմանավորված է նրանց կողմից իրենց կարգավիճակով պայմանավորված իրավունքներին, ապաստանի ընթացակարգին և այլ կարևոր հարցերին իրազեկ չլինելու վտանգով: Ավելին, փախստականներն ու ապաստան հայցող անձանց համար սոցիալական բավարար երաշխիքների ապահովումը նույնպես կարևոր է, քանի որ վերջիններս, հաճախ իրենց քաղաքացիության երկրում թողնելով իրենց սեփականությունը, տեղափոխվում են այլ պետություն և կարիք են ունենում բարեկեցիկ կյանքի համար անհրաժեշտ նվազագույն պայմաններ ունենալու:

ՄԱԿ ՓԳՀ-ի պաշտոնական տվյալների համաձայն՝ աշխարհում հարկադրաբար տեղահանված անձանց թիվը կազմում է 68.5 մլն, որից 40 մլն. ներքին տեղահանված անձինք են, 3.1 մլն. ապաստան հայցող անձինք, 25.4 մլն. փախստականի կարգավիճակ ստացած անձինք են, որոնց մոտ հիսուն տոկոսը տասնութ տարեկանից ցածր տարիք ունեցող<sup>659</sup>:

Առաջին խոշոր ներհուսքը Հայաստան եղել է Ադրբեջանից 1988-ից 1992 թվականների ընթացքում: Միգրացիոն ծառայության պաշտոնական տվյալների համաձայն՝ ազգությամբ հայերի թիվն Ադրբեջանի ԽՍՀ խոշոր քաղաքներում կազմել է առավել քան 360,000<sup>660</sup>:

Հաջորդ ներհուսքը եղել է Սիրիայի Արաբական Հանրապետությունից, որը պատճառ հանդիսացավ այդ տարածքում տարիներ շարունակ բնակվող ազգությամբ հայերի համար ապաստան հայցելու Հայաստանի Հանրապետությունում: ՄԱԿ ՓԳՀ-ի պաշտոնական տվյալների համաձայն՝ 2011 թվականից ի վեր ավելի քան 5.5 մլն մարդ լքել է Սիրիան, իսկ 6.6 մլն սիրիացիներ համարվում են ներքին տեղահանված անձինք<sup>661</sup>:

Միգրացիոն ծառայության վիճակագրական տվյալները վկայում են, որ 2010-ից մինչև 2018 թվականը Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ են ստացել Սիրիայի Արաբական Հանրապետության 882 քաղաքացի: Խնդրի առկայությամբ պայմանավորված՝ մինչ օրս շարունակվում է սիրիացիների ներհուսքը հանրապետություն<sup>662</sup>:

2016 թվականի ապրիլին Լեռնային Ղարաբաղի հակամարտության սրման արդյունքում՝ Արցախից Հայաստանի Հանրապետություն հարկադրաբար տեղափոխվեցին և ապաստան ստացան այնտեղ բնակվող մեծ թվով ազգությամբ հայեր: Նշվածին անդրադարձ է կատարվել նաև «Հայաստանի Հանրապետությունում փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցում<sup>663</sup>: Մասնավորապես, *ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի տվյալներին համապատասխան՝ ապրիլյան ռազմական գործողությունների արդյունքում Հայաստանի Հանրապետությունում պաշտպանություն են փնտրել 2247 անձ (մոտավորապես 681 ընտանիք), որոնցից 1429-ը (411 ընտանիք) օգտվել է ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից տրամադրված դրամական աջակցությունից*: ՄԱԿ ՓԳՀ պաշտոնական տվյալների համաձայն՝ 2016թ-ի ապրիլին Լեռնային Ղարաբաղի հակամարտության սրման արդյունքում տեղահանված

<sup>659</sup> Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ պաշտոնական կայքէջը, <http://www.unhcr.org/figures-at-a-glance.html>:

<sup>660</sup> Տե՛ս Միգրացիոն ծառայության պաշտոնական կայքէջը, [http://www.smsmta.am/?menu\\_id=93](http://www.smsmta.am/?menu_id=93):

<sup>661</sup> Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ պաշտոնական կայքէջը, <http://www.unhcr.org/syria-emergency.html>:

<sup>662</sup> Տե՛ս Միգրացիոն ծառայության պաշտոնական կայքէջը, [http://www.smsmta.am/?menu\\_id=3](http://www.smsmta.am/?menu_id=3):

<sup>663</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցը:

Այսուհետև սույն բաժնում՝ Արտահերթ զեկույց:

<http://pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/20f0503aafb55a1154e9ddd605d71bca.pdf>:




անձանցից մոտ 600-ը մնում են Հայաստանում և ընդգրկված են աջակցության և ինտեգրման հիմնական ծրագրերում<sup>664</sup>:

Վերը նշված հիմնական ներհոսքերից զատ, Հայաստանի Հանրապետությունում ապաստան են հայցել և փախստականի կարգավիճակ ստացել նաև այլ երկրների քաղաքացիներ, այդ թվում՝ Իրանից, Աֆրիկյան պետություններից (Կոտ Դիվուար, Մալի, Կոնգո), Ուկրաինայից և այլն:

ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի կողմից արձանագրված տվյալներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունում 2017 թվականի հունիսի դրությամբ ՄԱԿ ՓԳՀ մանդատի շրջանակներում մտահոգության առարկա հանդիսացող անձանց թիվը կազմել է 18,606<sup>665</sup>:

Ուսումնասիրվել են Միգրացիոն ծառայության՝ 2018 թվականի ընթացքում Հայաստանի




Հանրապետությունում ապաստան հայցողներին և փախստականի կարգավիճակ ստացած անձանց առնչվող վիճակագրական տվյալները: Միգրացիոն ծառայության տրամադրած տեղեկության համաձայն՝ նշված ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում ապաստան է հայցել 213 անձ, փախստականի կարգավիճակ է ստացել 73 անձ, իսկ մերժում ստացած ապաստան հայցող անձանց թիվը կազմում է 33:

<sup>664</sup> Տե՛ս ՄԱԿ Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան ներկայացուցչության պաշտոնական կայքէջը, <http://www.un.am/hy/agency/UNHCR>:

<sup>665</sup> Տե՛ս ՄԱԿ Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան ներկայացուցչության պաշտոնական կայքէջը, <http://www.un.am/hy/agency/UNHCR>:


Վիճակագրական տվյալներ 2018 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող, փախստականի կարգավիճակ ստացած և ապաստանի տրամադրման մերժում ստացած անձանց վերաբերյալ




Ընդգծման ենթակա է այն, որ հնարավոր է 2018 թվականի ընթացքում քննարկվեն և դրական կամ բացասական եզրահանգում ստանան նախորդ տարվա ընթացքում ստացված ապաստանի դիմումները, ինչպես նաև հնարավոր է, որ 2018 թվականի ընթացքում ստացված ապաստանի դիմումների քննարկումը տեղափոխվի 2019 թվական: Հետևաբար, ապաստանի դիմումների և փախստականի կարգավիճակի տրամադրման դեպքերի թվաքանակների միասնական վերլուծության իրականացումը պարզելու համար դրանց հարաբերակցությունը, հնարավոր չէ:

Ստորև ներկայացվում են վիճակագրական տվյալներ նաև հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող և փախստականի կարգավիճակ ստացած անձանց վերաբերյալ ըստ երկրների:

Վիճակագրական տվյալներ 2018 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող անձանց թվաքանակի վերաբերյալ ըստ երկրների




**Վիճակագրական տվյալներ 2018 թվականի ընթացքում  
Հայաստանի Հանրապետությունում փախստականի  
կարգավիճակ ստացած անձանց թվաքանակի  
վերաբերյալ ըստ երկրների**




Ըստ վիճակագրական տվյալների՝ Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ստացածները մեծամասամբ եղել են Իրաքից՝ 26 անձ: Թվաքանակով երկրորդը Սիրիայի քաղաքացիներն են՝ 212 անձ: Նշված երկրներից զատ, փախստականի կարգավիճակ են ստացել նաև Նիգերիայի, Իրանի, Ադրբեջանի, Թաիլանդի և Ուկրաինայի քաղաքացիներ:

Ստորև ներկայացվում են նաև վիճակագրական տվյալներ 2018 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող 218 անձանց սեռի և տարիքի վերաբերյալ:

**Վիճակագրական տվյալներ 2018 թվականի  
ընթացքում Հայաստանի  
Հանրապետությունում ապաստան հայցող  
անձանց տարիքի վերաբերյալ**





Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող անձանց սեռի վերաբերյալ վիճակագրական տվյալները վկայում են, որ քննարկվող ժամանակահատվածում արական ապաստան հայցողների թիվը գրեթե կրկնակի ավելի է եղել: 2018 թվականի ընթացքում ապաստան հայցող անչափահասների թիվը մոտ եռակի պակաս է եղել չափահասների թվից:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովման հետ կապված մարտահրավերները և ոլորտի կարևորությունը, իրականացվել է համապարփակ ուսումնասիրություն: Կատարված ուսումնասիրությունները հիմնականում վերաբերել են Հայաստանի Հանրապետությունում փախստականների և ապաստան հայցող անձանց ծագման երկրների, տարիքի, սեռի վերաբերյալ վիճակագրական տվյալներին, օրենսդրական դաշտի ձեռքբերումներին և մարտահրավերներին, հատուկ հաստատություններում նրանց իրավունքների ապահովմանը, ինչպես նաև ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության Միգրացիոն ծառայության<sup>666</sup> փախստական ճանաչելու և ապաստանի տրամադրումը մերժելու որոշումների հիմնավորվածությանը:

Արձանագրված խնդիրների մի մասը 2018 թվականի ընթացքում ստացել են լուծումներ: Դրանք հատկապես վերաբերում են հատուկ հաստատություններում փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովմանը: Օրինակ՝ ՀՀ պետական սահմանի որոշ անցման կետերում գործող՝ ապաստան հայցող անձանց հատուկ կացարանները կահավորվել են անհրաժեշտ գույքով:

Միգրացիոն ծառայության «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ում<sup>667</sup> բնակության ներքին կարգապահական կանոնները թարգմանվել են ապաստան հայցող անձանց շրջանում առավել տարածված լեզուներով: Հաջորդ հարցը վերաբերում է Հատուկ կացարանի բնակիչների սանիտարահիգիենիկ պայմաններին: 2017 թվականին իրականացված այցի ժամանակ տեղի ունեցած առանձնագրույցների ընթացքում ապաստան հայցողների կողմից հնչել են բողոքներ՝ կապված խոհանոցի սանիտարական վիճակի հետ: Այնուամենայնիվ, նշված խնդիրը նույնպես լուծվել է՝ խոհանոցը վերանորոգվել է և կահավորվել:

Ներկայացված առաջարկությունն առ այն, որ անհրաժեշտ է մշակել և ընդունել տեսազանգի ներդրման համար անհրաժեշտ օրենսդրական կարգավորումները նույնպես կատարվել է: Որոշ քրեակատարողական հիմնարկներում տեղադրվել են տեսազանգն իրականացնելու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ: Արձանագրված այլ խնդիրներ 2018 թվականի ընթացքում նույնպես լուծում են ստացել: Այնուամենայնիվ,

<sup>666</sup> Այսուհետ սույն բաժնում՝ Միգրացիոն ծառայություն:

<sup>667</sup> Այսուհետև սույն բաժնում՝ Հատուկ կացարան:

փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովման ոլորտում շարունակում են արդիական մնալ մի շարք օրենսդրական և գործնական խնդիրներ:

Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի թվին են դասվում 1951 թվականի Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիան<sup>668</sup> և դրան կից 1967 թվականի Արձանագրությունը<sup>669</sup>: Կոնվենցիան վավերացվել է 1993 թվականի հոկտեմբերի 4-ին, իսկ Արձանագրությունը՝ նույն թվականի հուլիսի 6-ին: Արդեն 1999 թվականին ընդունվել է «Փախստականների մասին» ՀՀ օրենքը: Չնայած օրենքի ընդունումը բավականին առաջադիմական քայլ էր, այնուամենայնիվ, դրանում առկա էին դրույթներ, որոնք հետագա մշակման ու կատարելագործման կարիք ունեին: Ուստի, 2008 թվականի նոյեմբերի 27-ին ընդունվեց «Փախստականների և ապաստանի մասին» նոր օրենքը<sup>670</sup>, որն ուժի մեջ մտավ 2009 թվականի հունվարի 24-ին: Օրենքն է համարվում փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքներ ապահովման ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտը:

Փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքները, սոցիալական երաշխիքները, ոլորտի իրավասու մարմինների լիազորություններն ու պարտականությունները և այլ հարցեր կարգավորվում են նաև այլ օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով:

Չնայած քննարկվող տարվա և դրան նախորդող տարիների ընթացքում փախստականների և ապաստան հայցողների իրավունքների ապահովմանն ու պաշտպանությանն առնչվող օրենսդրության զարգացումներին, ոլորտում դեռևս առկա են խնդիրներ, որոնք պահանջում են օրենսդրական լուծումներ: Դրանց անդրադարձ է կատարվել նաև Արտահերթ զեկույցի համապատասխան հատվածում<sup>671</sup>:

### ***1. Մահապատժի ենթարկվելու վտանգի առկայության պարագայում անձի արտաքսման կամ հանձման օրենսդրական արգելքի բացակայությունը***

Օրենքի 9-րդ հոդված 1-ին մասով սահմանվում է չվերադարձելիության սկզբունքը, ըստ որի *արգելվում է փախստականին որևէ կերպ վերադարձնել այն տարածքների սահմանները, որտեղ նրա կյանքին կամ ազատությանը կարող է վտանգ սպառնալ ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության, քաղաքական հայացքների կամ համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների հիմքով*: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը չի կարող արտաքսվել, վերադարձվել կամ հանձնվել այլ երկիր, որտեղ հիմնավոր պատճառներով վտանգ կա, որ նա կենթարկվի դաժան և անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի, ներառյալ՝ խոշտանգումների»*:

Նշվածի հետ կապված անընդունելի է մեջբերված պատճառների թվում կյանքի իրավունքին առնչվող բացառության բացակայությունը: Մասնավորապես, 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Մահմանադրության 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Ոչ ոք չի կարող արտաքսվել կամ հանձնվել օտարերկրյա պետությանը, եթե իրական սպառնալիք կա, որ տվյալ անձը կարող է այդ երկրում ենթարկվել մահապատժի, խոշտանգման,*

<sup>668</sup>Այսուհետև՝ Կոնվենցիա:

<sup>669</sup>Այսուհետև՝ Արձանագրություն:

<sup>670</sup>Այսուհետև՝ Օրենք:

անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»։ Նման մոտեցումը համահունչ է Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 19-րդ 2-րդ մասի հոդվածի կարգավորումներին<sup>672</sup>։

*Ուստի, անհրաժեշտ է Օրենքի՝ չվերադարձելիության սկզբունքն ամրագրող համապատասխան հոդվածում ներառել նաև մահապատժի ենթարկվելու վտանգի առկայության պարագայում անձի արտաքսման կամ հանձման արգելքը։*

**2. Փախստականի կարգավիճակի համար անհրաժեշտ չափանիշներին չբավարարող, սակայն չվերադարձելիության սկզբունքի պաշտպանությունից օգտվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար օրենսդրությամբ հատուկ կարգավիճակի բացակայություն**

Օրենքը, սահմանելով փախստականի հասկացությունը 6-րդ հոդվածի 1-ին մասով, արտացոլել է Կոնվենցիայի և Արձանագրության համապատասխան դրույթով ամրագրված հասկացությունը, այն է՝ «Փախստական է համարվում այն օտարերկրյա քաղաքացին, որը ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղի հետևանքով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և չի կարող կամ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում օգտվել իր քաղաքացիության երկրի պաշտպանությունից, կամ նա, ով, չունենալով քաղաքացիություն և գտնվելով իր նախկին մշտական բնակության երկրից դուրս, չի կարող կամ այդ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում վերադառնալ այնտեղ»։ Նույն մասի 2-րդ կետը վերաբերում է այն դեպքերին, երբ անձը լքել է իր քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության երկիրը համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների պատճառով։

Օրենքը պաշտպանության որևէ այլ միջոց չի նախատեսում, և օրենսդրությունն ընդհանրապես չի սահմանում լրացուցիչ պաշտպանություն տրամադրելու կարգ, որը հնարավորություն կտար չվերադարձնելու սկզբունքով սահմանված հիմքերի առկայության դեպքում անձին նման պաշտպանություն և համապատասխան կարգավիճակ տալ՝ ապահովելով նրա անվտանգությունը Հայաստանի Հանրապետությունում։ Հատկանշական է, որ Օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ Ոստիկանությունը պատասխանատվություն է կրում ապաստանի տրամադրումը մերժելու մասին վերջնական որոշում ստացած օտարերկրյա քաղաքացու կացության կարգավիճակի հարցը ՀՀ օրենսդրությանը համապատասխան լուծելու համար։ Սա հատկապես կարևորվում է այն դեպքերում, երբ ապաստանի տրամադրման մերժում ստացած անձի վերադարձն անհնարին է՝ պայմանավորված մարդու իրավունքների պաշտպանության միջազգային իրավունքի նորմերով։

Այս առումով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի<sup>673</sup> վճիռներում, օրինակ, սահմանված է պետության հայեցողությունը հիմնավոր պատճառների առկայության դեպքում անձին թույլ չտալու մուտք գործել երկիր կամ արտաքսելու հարցում։ Այնուամենայնիվ, դատարանը կարևորել է նաև դրա շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի արգելքի ապահովումը, որն ունի բացարձակ բնույթ։ Մասնավորապես, Մայիդոն ընդդեմ Նիդեռլանդների գործով 2005 թվականի հուլիսի 5-ի

<sup>672</sup>Տե՛ս Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, [http://www.europarl.europa.eu/charter/pdf/text\\_en.pdf](http://www.europarl.europa.eu/charter/pdf/text_en.pdf)։

<sup>673</sup>Այսուհետև՝ Եվրոպական դատարան։

վճռի 46-րդ կետի համաձայն՝ *պետությունները, հաշվի առնելով միջազգային իրավունքի նորմերը և պայմանագրային պարտավորությունները, իրավունք ունեն վերահսկել օտարերկրացիների մուտքը, բնակությունը և արտաքսումը (...): Այնուամենայնիվ, պետության կողմից արտաքսումը կարող է առաջացնել խնդիրներ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի՝ խոշտանգումների արգելքի լույսի ներքո և պատասխանատվություն տվյալ պետության համար, եթե առկա են լուրջ հիմքեր, որ արտաքսվելու դեպքում անձը կարող է ենթարկվել 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքի<sup>674</sup>:*

Ավելին, եթե Կոնվենցիան նախատեսում է որոշ բացառություններ չվերադարձելիության սկզբունքից, ապա Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ 1984 թվականի կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ *«Ոչ մի մասնակից պետություն չպետք է որևէ անձի արտաքսի, վերադարձնի կամ հանձնի մեկ այլ պետության, եթե լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ նրան կարող է սպառնալ խոշտանգումների ենթարկվելու վտանգ»<sup>675</sup>:*

Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին 2002 թվականի կոնվենցիայի 89-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետով նախատեսված է, որ *«Հանձնում չի կատարվում, եթե ծանրակշիռ հիմքեր կան ենթադրելու, որ հանձնման վերաբերյալ հարցումը կապված է ռասայի, սեռի, դավանանքի, էթնիկական պատկանելության կամ քաղաքական հայացքների համար անձին հետապնդելու հետ»<sup>676</sup>:*

Նշված դիրքորոշման, ներպետական օրենսդրության և դրա կիրառման փորձի վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ հնարավոր են դեպքեր, երբ անձը, չստանալով փախստականի կարգավիճակ կամ այդ կարգավիճակի դադարման դեպքում պետք է արտաքսվի ծագման երկիր: Այնուամենայնիվ, դա անհնար է, եթե կա հիմնավոր վտանգ, որ նա կենթարկվի խոշտանգման, դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

Գործնականում այս խնդրի լուծման համար անհրաժեշտ իրավական հիմքերի բացակայությունը տվյալ անձանց, իրավական պաշտպանվածության առումով, թողնում է անապահով վիճակում: Միջազգային իրավաբանությունը նման պարագայում սահմանում է լրացուցիչ պաշտպանության տրամադրման հնարավորություն: Օրինակ՝ Վրաստանում, *բացի փախստականի կարգավիճակից, տրամադրվում է նաև մարդասիրական կարգավիճակ, որը ժամանակավորապես տրվում է այն անձանց, ովքեր չեն համապատասխանում փախստականի կարգավիճակի համար սահմանված չափանիշներին, սակայն ստիպված լքել են իրենց երկիրը բռնության, արտաքին ագրեսիայի, բռնազավթման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների և հասարակական կարգի զանգվածային խախտումների հետևանքով, ինչպես նաև այն անձանց, որոնք հարևան երկրներից են եկել և ապաստան են փնտրում բնական աղետներից<sup>677</sup>:*

<sup>674</sup>Տե՛ս 2005 թվականի հուլիսի 5-ի Սայիդն ընդդեմ Նիդեռլանդների գործով Եվրոպական դատարանի (գանգատ թիվ 2345/02) վճռի 46-րդ կետը, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-69614>,

Տե՛ս 2014թ. նոյեմբերի 18-ի Մ.Ա.-ն ընդդեմ Շվեյցարիայի գործով Եվրոպական դատարանի վճռի (գանգատ թիվ 52589/13) 52-րդ կետը, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-148078>:

<sup>675</sup>Տե՛ս 1984 թվականի դեկտեմբերի 10-ի ՄԱԿ-ի Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասը, <http://www.ohchr.org/documents/professionalinterest/cat.pdf> :

<sup>676</sup>Տե՛ս 2002 թվականի Քաղաքացիական, ընտանեկան եվ քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին կոնվենցիայի 89-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետը, <http://www.parliament.am/library/APH/195.pdf>:

<sup>677</sup>Տե՛ս «Փախստականի և մարդասիրական կարգավիճակի մասին» Վրաստանի օրենքի 4-րդ հոդվածը, <http://mra.gov.ge/res/docs/2014022416564743748.pdf>:



Պաշտպանության նման մեխանիզմ ամրագրված է նաև Պորտուգալիայի օրենսդրությամբ: Մասնավորապես, *սուբսիդիար պաշտպանություն է նախատեսված այն ապաստան հայցողների համար, ում նկատմամբ կիրառելի չեն փախստականի կարգավիճակի համար անհրաժեշտ չափանիշները, սակայն վերջիններս չեն կարող վերադառնալ իրենց քաղաքացիության կամ մշտական բնակության երկիր՝ մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ զգալի վնաս կրելու վտանգի պատճառով*<sup>678</sup>: Նշվածը հնարավորություն է տալիս չվերադարձնելու իրավունքից օգտվող անձանց կոնկրետ իրավական կարգավիճակով բնակվել օտար երկրում և ստանալ միջազգային պաշտպանություն իր՝ ոչ արդյունավետ ազգային պաշտպանության փոխարեն:

Այս առումով հարկ է ընդգծել, որ 2018 թվականի ընթացքում նշված խնդրի լուծման ուղղությամբ պետության կողմից ձեռնարկվել են քայլեր: Մասնավորապես, ՀՀ ոստիկանության կողմից մշակվել և շրջանառվել է «Օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Այն նախատեսում է կարճատև կացության կարգավիճակի տրամադրում ի թիվս այլոց, նաև բոլոր այն օտարերկրացիները կամ քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր չեն կարող արտաքսվել, վերադարձվել կամ հանձնվել այլ երկիր, որտեղ հիմնավոր պատճառներով վտանգ կա, որ նրանք կենթարկվեն դաժան և անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի, ներառյալ՝ խոշտանգումների կստանան կարճաժամկետ կացության կարգավիճակ:

Նախագծի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ներկայացրել է առաջարկություններ, որոնք հիմնականում վերաբերում *քուլտը* դեպքերում վերը նշված խումբ անձանց կացության կարգավիճակ տրամադրելուն, օտարերկրացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց կողմից կարգավիճակի ճանաչման վերաբերյալ դիմում ներկայացնելու ընթացակարգին և այլ հարցերին:

*Այնուամենայնիվ, անդրադառնալով գործող օրենսդրական կարգավորումներին և հաշվի առնելով բարձրացված խնդրի արդիականությունը՝ անհրաժեշտ է ամրագրել անձանց նոր իրավական կարգավիճակ, որը հնարավորություն կտա լրացուցիչ պաշտպանություն սահմանել փախստականի կարգավիճակի համար անհրաժեշտ չափանիշներին չբավարարող, սակայն չվերադարձնելու սկզբունքի պաշտպանությունից օգտվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար:*

### **3. Միասնական ապաստանի հայց ներկայացրած անձի փախստականի կարգավիճակը չեղյալ հայտարարելու և դադարելու դեպքում նրա ընտանիքի անդամների կամ խնամարկյալների կարգավիճակի դադարումը**

Օրենքի 7-րդ հոդված 5-րդ մասի համաձայն՝ *«Փախստականի կարգավիճակ ստացած անձի ընտանիքի անդամների՝ սույն հոդվածի 1-ին, 2-րդ կամ 3-րդ մասերի համաձայն ստացած փախստականի կարգավիճակը չեղյալ է հայտարարվում, եթե ընտանիքի անունից միասնական ապաստանի հայց ներկայացրած անձի փախստականի կարգավիճակը, սույն օրենքի 53-րդ հոդվածի համաձայն, չեղյալ է հայտարարվել: Այդ անձի ընտանիքի անդամները չեն զրկվում դրանից անմիջապես հետո ապաստանի հայց ներկայացնելու հնարավորությունից՝ հիմնվելով իրենց անձնական պատճառների վրա»:* Օրենքի նույն հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ *«Փախստականի կարգավիճակ ստացած անձի ընտանիքի անդամների՝ սույն հոդվածի 1-ին, 2-րդ կամ 3-րդ մասերի համաձայն ստացած փախստականի կարգավիճակը դադարում է, եթե ընտանիքի անունից միասնական ապաստանի հայց ներկայացրած անձի փախստականի կարգավիճակը, սույն օրենքի 53-րդ հոդվածի համաձայն, դադարում է, բացառությամբ սույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով*

<sup>678</sup>Տե՛ս 27/2008 Ապաստանի օրենքի 7-րդ հոդվածը, <http://www.refworld.org/docid/48e5c13c8.html>:



*նախատեսված դեպքի: Այդ անձի ընտանիքի անդամները չեն զրկվում դրանից անմիջապես հետո ապաստանի հայց ներկայացնելու հնարավորությունից՝ հիմնվելով իրենց անձնական պատճառների վրա:»:* Նշված կարգավորումները սահմանում են համապատասխանաբար փախստականի ընտանիքի անդամների կամ խնամարկյալների փախստականի կարգավիճակի չեղյալ հայտարարելն ու դադարելը՝ ընտանիքի անունից միասնական ապաստանի հայց ներկայացրած անձի փախստականի կարգավիճակը չեղյալ հայտարարելու կամ դադարելու դեպքում: Այս ձևակերպումը որոշակի առումով շեղվում է ապաստանի որոշման ընթացակարգի միջազգային չափանիշներից: Մասնավորապես, նշվածը հնարավորություն չի տալիս անհատապես ուսումնասիրել փախստականի կարգավիճակ ստացած անձի ընտանիքի անդամների կարգավիճակի դադարեցման կամ չեղյալ հայտարարելու հիմքերը, ինչը կարող է հանգեցնել նրանց իրավունքների ոչ պատշաճ իրացման:

Ավելին, Պաշտպանին հասցեագրված բողոքների վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ ընտանիքի անունից միասնական ապաստանի հայց ներկայացրած անձի փախստականի կարգավիճակը չեղյալ հայտարարելու կամ դադարելու դեպքում ընտանիքի մյուս անդամների փախստականի կարգավիճակը չեղյալ հայտարարելը կամ դադարեցնելը գործնականում առաջացնում անտեղի բարդություններ: Մասնավորապես, Օրենքի 7-րդ հոդվածի ինչպես 5-րդ, այնպես էլ 6-րդ մասը նախատեսում է միասնական ապաստանի հայց ներկայացրած անձի ընտանիքի անդամներին փախստականի կարգավիճակը չեղյալ հայտարարելուց կամ դադարեցնելուց անմիջապես հետո **ապաստանի նոր հայց ներկայացնելու հնարավորություն**՝ հիմնվելով իրենց անձնական պատճառների վրա: Նշված դեպքում անձն ունենում է ապաստանի նոր հայց ներկայացնելու, ինչպես նաև Միգրացիոն ծառայության կողմից դրա լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննարկման իրավունք: Սա առաջացնում է կրկնակի աշխատանք պետական մարմնի, իսկ անտեղի բարդեցված գործընթաց ապաստան հայցողի համար: Ուստի, ինչպես պետական լիազոր մարմնի ռեսուրսների խնայողության, այնպես էլ ապաստան հայցողի իրավունքների ապահովման արդյունավետ միջոցներ ստեղծելու տեսանկյունից առավել նպատակահարմար է ընտանիքի յուրաքանչյուր անդամի փախստականի կարգավիճակը չեղյալ հայտարարելու կամ դադարեցնելու վերաբերյալ հարցերը քննարկել անհատական սկզբունքով:

*Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է Օրենքով սահմանել այնպիսի կարգավորում, ըստ որի, միասնական ապաստանի հայց ներկայացրած անձի փախստականի կարգավիճակը չեղյալ հայտարարելու և դադարելու դեպքում նրա ընտանիքի անդամների կամ խնամարկյալների կարգավիճակը կդադարի միայն դրա համար սահմանված անհատական վարույթով քննություն անցկացնելու և կարգավիճակը չեղյալ հայտարարելու ու դադարելու համար բավարար հիմքերի առկայության դեպքում:*

#### **4. Ապաստանի հայցեր ընդունող պետական մարմիններում հարցազրույցի ընթացքում անվճար թարգմանության բացակայություն**

Օրենքի՝ հարցազրույցի անցկացմանն առնչվող 51-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվում է, որ *«Եթե ապաստան հայցողը չունի հայերենի բավարար իմացություն, ապա միգրացիայի հարցերով լիազոր մարմինը նրան տրամադրում է անվճար թարգմանիչ (...):»:* Հետևաբար, Միգրացիոն ծառայությունն օրենքով սահմանված դեպքերում պարտավոր է հարցազրույցի ընթացքում ապահովել անվճար թարգմանություն: Հատկանշական է նաև, որ Օրենքի 46-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Միգրացիոն ծառայությունից զատ հարցազրույց ապաստան հայցողի հետ անցկացնելու լիազորություն ունեն նաև Մահմանապահ զորքերը, Ոստիկանությունը և ազատագրկման վայրի վարչակազմը: Դրա հետ

միասին անհասկանալի է թարգմանչական ծառայությունների մատուցման պարտավորությունների մասին դրույթների բացակայությունն ապաստանի հայց ընդունող մարմինների լիազորությունները սահմանող դրույթներում: Մասնավորապես, այն պարագայում, երբ ապաստանի հայց ընդունող մարմինները պարտավոր են տրամադրել անհրաժեշտ տեղեկություն և վարել հարցազրույցներ Հայաստանի Հանրապետությունում ապաստանի հայց ներկայացնել ցանկացող անձանց հետ, այնուամենայնիվ, նման դեպքերում թարգմանչի ծառայություններից օգտվելու հնարավորությունն օրենսդրական ամրագրում չի ստացել:

*Հետևաբար, անհրաժեշտ է Օրենքում լրացում կատարելու միջոցով ապաստանի հայցեր ընդունող բոլոր պետական մարմինների համար նախատեսել հարցազրույցի ընթացքում անվճար թարգմանչական ծառայություններ տրամադրելու պարտավորություն:*

##### **5. Ապաստան հայցող անձանց բացակայությունն առանց աշխատանքի թույլտվության աշխատելու իրավունք ունեցող անձանց ցանկում**

Օրենքը, կոնվենցիոն չափանիշներից դրականորեն շեղվելով, վարձատրվող աշխատանքի իրավունքով օժտում է և՛ ապաստան հայցողներին, և՛ արդեն իսկ փախստականի կարգավիճակ ստացած անձանց՝ հավասարեցնելով նրանց ՀՀ քաղաքացիների հետ: Մասնավորապես, 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **«Ապաստան հայցողներն ու Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականներն իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության տարածքում աշխատանք փնտրելու և աշխատելու նույն պայմաններով, ինչ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ»:**

Մինչդեռ ժամանակ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի ժ) կետը, ամրագրելով աշխատանքի թույլտվության բացառությունները, կարգավորման շրջանակից դուրս է թողել ապաստան հայցող անձանց. **«Առանց աշխատանքի թույլտվության Հայաստանի Հանրապետությունում կարող են աշխատել փախստականի կարգավիճակ ունեցող, Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ապաստան ստացած օտարերկրյա քաղաքացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք՝ կացության ժամկետը չգերազանցող ժամանակահատվածով»:** Նշվածը կարող է անհարկի շփոթություն առաջացնել և գործնականում սահմանափակել ապաստան հայցող անձանց կողմից իրենց աշխատանքի իրավունքի իրացման հնարավորությունը: Հետևաբար, անհրաժեշտ է օրենսդրական դաշտի միանման կարգավորումների համապատասխանեցնելու միջոցով, սահմանել Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող անձանց աշխատանքի թույլտվություն:

*Ուստի, պետք է «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու միջոցով՝ առանց աշխատանքի թույլտվության աշխատելու իրավունք ունեցող անձանց ցանկում ավելացնել նաև ապաստան հայցող անձանց:*

##### **6. Կացարանում բնակվելու իրավունք ստացած ապաստան հայցող անձանց ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու լիազորությունն օրենքով նախատեսված չլինելը**

«Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակության ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» 2016 թվականի օգոստոսի 10-ի ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի հրամանի հավելված հանդիսացող՝ Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակության ներքին կարգապահական կանոնների 44-րդ կետը սահմանում է. **«Բնակության ներքին կարգապահական կանոնները 2 և ավելի անգամ խախտելու դեպքում՝ բնակչին**

տրված «Ժամանակավոր տեղավորման Կենտրոնում տեղավորման» ուղեգիրը, Կենտրոնի տնօրենի առաջարկության հիման վրա, կարող է ուժը կորցրած ճանաչվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն ծառայության կողմից»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն»: Քանի որ Միգրացիոն ծառայության՝ «Ժամանակավոր տեղավորման Կենտրոնում տեղավորման» ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումն ընդունվում է վարչական մարմնի կողմից հանրային իրավունքի բնագավառում, ունի արտաքին ներգործություն և ուղղված է ապաստան հայցողի իրավունքները վերացնելուն՝ այն համարվում է վարչական ակտ: Ուստի, հարցն անհրաժեշտ է քննարկել նաև վարչական վարույթի շրջանակներում:

Այսպես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդված 3-րդ մասով ամրագրված են բարենպաստ վարչական ակտի ուժը կորցնելու համար սահմանված հիմքերը: Նույն մասի բ) կետի համաձայն՝ բարենպաստ վարչական ակտը կարող է ուժը կորցրած ճանաչվել, եթե դա թույլատրվում է օրենքով կամ պայմանավորված է իրավաչափ վարչական ակտում այդպիսի վերապահմամբ: Նշվածից ակնհայտ է դառնում, որ եթե վերապահում նախատեսված չէ, ապա նման սահմանափակում ամրագրող նորմը, որով բարենպաստ վարչական ակտն ուժը կորցրած կճանաչվի, անհրաժեշտ է սահմանել օրենքով:

Նշվածը թույլ է տալիս եզրահանգել, որ անհրաժեշտ է Միգրացիոն ծառայության Ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակվելու իրավունք ստացած ապաստան հայցող անձանց ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու լիազորությունը նախատեսել օրենքով և ուժը կորցրած ճանաչել Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակության ներքին կարգապահական կանոնների 44-րդ կետը:

## **7. Բնակության և կենսաապահովման պայմաններին առնչվող խնդիրներ. Կացարանի գերբնակեցում**

Օրենքի՝ ապաստան հայցող անձանց կենսաապահովման պայմանների վերաբերյալ 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կացարանի կարիք ունեցող ապաստան հայցողները մինչև նրանց ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշում կայացվելը տեղավորվում են ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում, որն այդ նպատակով ստեղծված հատուկ հաստատություն է:

Ավելին, Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվում է, որ (...) լիազոր մարմինն ղեկավարում է կացարանի կարիք ունեցող ապաստան հայցողներին և (...) նրանց ընտանիքի անդամներին լիազոր մարմինը տեղավորում է (...) Ժամանակավոր տեղավորման կենտրոնում, որտեղ նրանց տրամադրվում են սնունդ (օրական երեք անգամ), սպիտակեղեն, անձնական հիգիենայի պարագաներ, անհրաժեշտության դեպքում՝ հագուստ և կոշիկ (այսուհետ՝ կենսաապահովման պայմաններ): Տարակերպ ընկալումից խուսափելու նպատակով անհրաժեշտ է նշել, որ Օրենքում կիրառվող «Ժամանակավոր տեղավորման կենտրոն» եզրույթը վերաբերում է Հատուկ կացարանին:

Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողների՝ Կացարանում տեղավորելու և կենսաապահովման պայմաններ տրամադրելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են նաև ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի

19-ի N 1440-Ն որոշմամբ հաստատված կարգով: Նշված կարգի 6-րդ կետով սահմանվում է, որ *Ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորվելու մասին ապաստան հայցողների դիմումի հիման վրա լիազոր մարմնի կողմից նրանց տրվում է ուղեգիր:*

Հատուկ կացարանում ապաստան հայցող անձանց բնակության և կենսաապահովման պայմաններն, ինչպես նաև նրանց իրավունքների ապահովման վերաբերյալ այլ հարցեր ուսումնասիրելու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի իրավասու ներկայացուցիչները 2018 թվականի ընթացքում իրականացրել են պարբերական այցեր: Դրանց նպատակն է եղել նաև ուսումնասիրել Արտահերթ զեկույցում տեղ գտած վերաբերելի առաջարկությունների կատարման մակարդակը:

Հատկանշական է, որ այցերին ներգրավվել են Հատուկ կացարանում բնակվող անձանց հետ շփման համար անհրաժեշտ, համապատասխան լեզուների թարգմանիչներ: Այցերի ընթացքում բացի մշտադիտարկումից առանձնագրույցներ են տեղի ունեցել տեղի բնակիչների հետ, ինչպես նաև վերջիններիս համար կազմակերպվել են Մարդու իրավունքների պաշտպանի մանդատի, ոլորտում Աշխատակազմի գործունեության հիմնական ուղղությունների, ինչպես նաև նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված հանդիպումներ:

Այցերի ընթացքում պարզ է դարձել, որ Արտահերթ զեկույցում ներկայացված որոշ առաջարկություններ (դրանք նկարագրված են սույն բաժնի ներածական մասում) մասնակի լուծվել են: Այնուամենայնիվ այցի ընթացքում արձանագրվել են այլ խնդիրներ, իսկ նախկինում հայտնաբերված որոշ խնդիրներ շարունակում են արդիական մնալ: Խնդրահարույց է, օրինակ՝ Հատուկ կացարանում սենյակների սահմանափակ լինելու և գերբնակեցման հարցը: Մասնավորապես, 2018 թվականի ընթացքում տեղի ունեցած բոլոր այցերի ժամանակ Հատուկ կացարանում արձանագրվել է գերբնակեցում:

Ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորվելու և կենսաապահովման պայմաններ տրամադրելու կարգի 7-րդ կետի համաձայն՝ *ուղեգիրը տրվում է Ժամանակավոր տեղավորման կենտրոնում ազատ սենյակների առկայության դեպքում:* Հատկանշական է, որ նույն կարգի 10-րդ կետով սահմանվում է, որ *Ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորվելիս հաշվի են առնվում ապաստան հայցողների ընտանիքի անդամների թիվը, սեռը, տարիքը և այլ հանգամանքներ:*

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության «Ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորման անհնարինության դեպքում՝ կենսաապահովման հիմնական կարիքները հոգալու հնարավորություն չունեցող ապաստան հայցողներին դրամական օգնություն տրամադրելու կարգը սահմանելու մասին» 2016 թվականի սեպտեմբերի 15-ի N 951-Ն որոշման 2-րդ կետով սահմանվում է, որ *Ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորման անհնարինության դեպքում՝ կենսաապահովման հիմնական կարիքները հոգալու հնարավորություն չունեցող ապաստան հայցողներին տրամադրվող դրամական օգնության չափը սահմանել՝ դիմումատուին՝ 20.000 դրամ, իսկ նրա ընտանիքի յուրաքանչյուր անդամին՝ 15.000-ական դրամ:*

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ նշված գումարը հաճախ չի բավականացնում ապաստան հայցող դիմումատուին և նրա ընտանիքի անդամներին հոգալ իրենց նվազագույն կարիքները: Ընդ որում, դրանց մեջ է մտնում նաև բնակարանի վարձը:

*Ուստի, անհրաժեշտ է ձեռնարկել ապաստան հայցող անձանց տրամադրվող սենյակների ավելացում, որը կարող է լուծվել նոր կացարան կառուցելու միջոցով: Հատուկ կացարանում չբնակվող անձանց նվազագույն կենսաապահովման պայմանների բավարարման նպատակով անհրաժեշտ է մեծացնել տրամադրվող ֆինանսական աջակցության չափը:*

## 8. Կրոնի հիմքով հատուկ սննդի բացակայություն

Արդիական է նաև կրոնի կամ ազգության հիմքով ապաստան հայցող անձանց հատուկ սնունդ չհատկացնելու հարցը: Մասնավորապես, Հատուկ կացարանում տեղավորելու և կենսաապահովման պայմաններ տրամադրելու կարգի 19-րդ կետի համաձայն՝ *Կացարանում տեղավորված ապաստան հայցողներին կենտրոնի տնօրինության կողմից տրամադրվում են կենսաապահովման պայմաններ՝ սնունդ (օրական երեք անգամ), սպիտակեղեն, անձնական հիգիենայի պարագաներ, անհրաժեշտության դեպքում՝ հազուստ և կոշիկ:* Նույն կարգի 21-րդ կետով սահմանվում է, որ *Կացարանում տեղավորված ապաստան հայցողներին օրական հատկացվող սննդամթերքի չափաքանակները և նրանց անկողնային պարագաներով ապահովումը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի «Օերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 730-Ն որոշման համապատասխանաբար NN 2 և 4 հավելվածներով սահմանված նվազագույն չափորոշիչներով:*

Քննարկվող հարցի կապակցությամբ խնդիրն առնչվում է առաջին հերթին սննդին և ապաստան հայցողներին տրամադրվող սննդատեսակներին: Մասնավորապես, առանց հաշվի առնելու Կացարանում բնակվող ապաստան հայցողների կրոնական ու ազգային պատկանելությունը և դրանով պայմանավորված որոշակի սննդատեսակներից օգտվելու անհնարինությունը՝ ապաստան հայցողներին տրամադրվում է նույն տեսակի սնունդ: Այնուամենայնիվ, գործնականում այս խնդիրը փորձ է արվում լուծել՝ քննարկելով սննդատեսակը բոլոր բնակիչների հետ: Չնայած դրան, այս դեպքում նույնպես խնդիրը շարունակվում է մնալ այդպիսին:

Այս խնդիրը բարձրացվել է նաև Կացարանում բնակվող ապաստան հայցողների հետ ունեցած առանձնազրույցների ընթացքում: Մասնավորապես, վերջիններս նշել են, որ իրենց կրոնական առանձնահատկություններով պայմանավորված հաճախ ունենում են խնդիրներ մատուցվող սննդատեսակների հետ կապված:

Հատուկ հաստատություններում պահվող ապաստան հայցող անձանց տրամադրվող սննդի չափորոշիչներ և առանձնահատկություններ են սահմանվել նաև ՄԱԿ ՓԳՀ-ի «Ապաստան հայցող անձանց ազատությունից զրկմանը և դրա այլընտրանքներին առնչվող չափանիշների և ստանդարտների վերաբերյալ» 2012 թվականի ուղեցույցում: Մասնավորապես, փաստաթղթի 48-րդ կետի (xi) պարբերությունը սահմանում է, որ *«Կալանավորվածներին պետք է տրամադրվի **սննդաբար արժեք ունեցող՝ տարիքին, առողջական վիճակին և մշակութային/կրոնական առանձնահատկություններին համապատասխան սնունդ:** Հղի կանանց և կերակրող մայրերի համար պետք է ապահովվի համապատասխան սննդակարգ: **Մննդի պատրաստման և ընդունման տարածքները պետք է համապատասխանեն սանիտարահիգիենիկ տարրական պահանջներին:**»<sup>679</sup>*

Ուստի, անհրաժեշտ է Կացարանում ապաստան հայցողների սննդի տրամադրման հիմքում դնել յուրաքանչյուրի ազգային և կրոնական պատկանելության առանձնահատկությունները, ինչպես նաև ֆիզիկական վիճակը:

<sup>679</sup> Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ-ի «Ապաստան հայցող անձանց ազատությունից զրկմանը և դրա այլընտրանքներին առնչվող չափանիշների և ստանդարտների վերաբերյալ» 2012 թվականի ուղեցույցի 48-րդ կետի (xi) պարբերությունը, <https://www.unhcr.org/publications/legal/505b10ee9/unhcr-detention-guidelines.html>:

## 9. Կացարանի սանիտարահիգիենիկ պայմանները

Հաջորդ հարցը վերաբերում է Կացարանի բնակիչների սանիտարահիգիենիկ պայմաններին: Արտահերթ զեկույցում արձանագրված Կացարանում սանիտարահիգիենիկ պայմանների վերաբերյալ խնդիրները հիմնականում վերաբերում են ընդհանուր օգտագործման խոհանոցին: 2018 թվականի ընթացքում կատարված այցերը վկայում են, որ դրանք հիմնականում լուծվել են՝ խոհանոցը վերանորոգվել է, իրականացվել է ախտահանում հատուկ հեղուկով և տեղադրվել են նոր սառնարաններ և գազօջախ: Այնուամենայնիվ, այցի ընթացքում արձանագրվել են ոչ բավարար սանիտարահիգիենիկ պայմաններ ապաստան հայցող անձանցից մեկի սենյակում (լվացարանի տակ տեղադրված պահարանում առկա էին միջատներ):

Ապաստան հայցող անձանց կացարաններում սանիտարահիգիենիկ պայմանների հետ կապված հարցին անդրադարձ է կատարել նաև Եվրոպական դատարանը: Իր՝ Մ.Ս.Ս.-ն ընդդեմ Բելգիայի և Հունաստանի գործով 2011 թվականի հունվարի 21-ի վճռում դատարանի արտահայտած դիրքորոշման համաձայն՝ *միզքանոցների համար նախատեսված հատուկ կացարաններում առկա գերծանրաբեռնվածությունը, ինչպես նաև ոչ բավարար սանիտարահիգիենիկ պայմանների ապահովումը կարող է հանգեցնել պետության կողմից Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված խոշտանգումների արգելման սկզբունքի խախտման*<sup>680</sup>:

*Կացարանում, մասնավորապես անհատական սենյակներում, անհրաժեշտ է ապահովել պատշաճ սանիտարահիգիենիկ պայմաններ:*

## 10. Փախստականների բնակապահովում

2018 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացվել են 1988 թվականին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթելու, տարատեսակ վատթար պայմաններով ժամանակավոր կացարաններում բնակվելու՝ (հանրակացարաններ, հյուրանոցներ, տնակներ և այլն), սակայն մինչ օրս պետության կողմից բնակարաններով չապահովվելու հարցի վերաբերյալ:

Բացի այդ, ՀՀ կառավարության նոր ծրագրում ներառելու նպատակով ծառայությունն առաջարկելու է համապատասխան միջոցառում:

«Արդեն 30 տարի հանրակացարաններում բնակվող Ադրբեջանից բռնագաղթած առավել կարիքավոր փախստական ընտանիքների բնակարանային հիմնախնդիրը լուծելու նպատակով իրականացվելու են համապարփակ ծրագրեր՝ հիմնված պետություն-մասնավոր հատված համագործակցության վրա «895 ընտանիքներ, որից 641-ը Երևան քաղաքում և 254-ը մարզերում համարվում են առաջնահերթ կարիքավորներ»»:

Այսպես, ընթացիկ տարում Պաշտպանին հասցեագրած բողոքներից մեկով ներկայացվել է, որ Հայաստանում տուրիզմի զարգացման հիմնադրամին պատկանող «Նաիրի» հյուրանոցում ապաստանած փախստական ընտանիքները շուրջ 30 տարի է բնակվում են վերոնշյալ հյուրանոցում, բնակվում են շատ վատթար պայմաններում (3-4 անդամ ունեցող ընտանիքները բնակվում են 12 քմ մակերես ունեցող և չջեռուցվող, խոնավ սենյակներում, որոնք չունեն խոհանոց, իսկ ջրամատակարարումն իրականացվում է օրն ընդամենը մի քանի ժամով է):

Նշված ընտանիքներին բնակարաններով ապահովվելու կապակցությամբ ձեռնարկվող միջոցների վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունից

<sup>680</sup>Տե՛ս 2011թ. հունվարի 21-ի Մ.Ս.Ս.-ն ընդդեմ Բելգիայի և Հունաստանի գործով Եվրոպական դատարանի վճռի (գանգատ թիվ 30696/09) 222-րդ կետը, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-103050>:

տեղեկացրել են, որ ՀՀ կառավարությունը 2004 թվականի մայիսի 20-ի N 747-Ն որոշմամբ հաստատել է Ադրբեջանից բռնագաղթված անձանց բնակապահովության առաջնահերթ ծրագիրը:

Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Ա. Արմենակյան 121/6 հասցեում գտնվող «Նաիրի» հյուրանոցի մասնաճյուղը սեփականության իրավունքով պատկանում է Հայաստանում տուրիզմի զարգացման հիմնադրամին: 2013 թվականի փետրվար ամսվա դրությամբ Նորք-Մարաշ վարչական շրջանի աշխատակիցների կատարած ուսումնասիրությունների ժամանակ արձանագրվել է վերոգրյալ ծրագրում ընդգրկված հավակնորդ շահառու 61 ընտանիքի փաստացի բնակությունը:

Ծրագրի իրականացման նպատակով սկսած 2005 թվականից ՀՀ պետական բյուջեում նախատեսվել են համապատասխան գումարներ, որոնցով 1065 ընտանիք ստացել են բնակարանի գնման վկայագրեր, որոնցից 718-ն իրացրել են դրանք՝ ձեռք բերելով բնակարաններ Երևան քաղաքում և մարզերում:

Ըստ նախարարության տվյալների՝ 2009 թվականից հետո ծրագրի իրականացման համար ՀՀ պետական բյուջեում ընդհանրապես միջոցներ չեն նախատեսվել, չնայած որ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն ծառայությունը յուրաքանչյուր տարի ներկայացրել է համապատասխան գումարի հայտը:

Ստեղծված իրավիճակը խնդրահարույց է նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների տեսանկյունից ևս: Այսպես, «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիայի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանավորվող պետություններն իրենց օրենքներին և սահմանադրություններին համապատասխան գործադրում են իրենց լավագույն ջանքերը՝ ապահովելու նման փախստականների բնակեցումը:

Նույն կոնվենցիայի 21-րդ հոդվածը սահմանում է, որ բնակարանով ապահովելու կապակցությամբ Պայմանավորվող պետություններն իրենց տարածքում օրինական կարգով բնակվող փախստականների հանդեպ հնարավորության սահմաններում ցուցաբերում են բարեհաճ վերաբերմունք, ինչպիսին ցուցաբերվում է նույն հանգամանքներում օտարերկրացիներին:

Հատկանշական է, որ դեռևս ՀՀ կառավարությունը 2011 թվականի նոյեմբերի 10-ին ընդունել է «**Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին**» թիվ 1593-Ն որոշումը, որում բարձրացվել են 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած փախստականներին՝ հասարակության մեջ ինտեգրման քաղաքականության իրականացման շարունակականության ապահովման հիմնախնդիրները, որոնց իրականացման կապակցությամբ 2012-2016 թվականներին նախատեսվել է իրականացնել համապատասխան միջոցառումներ և գործողություններ (օրինակ՝ Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրի իրականացման համար ֆինանսական միջոցների հայթայթման շուրջ բանակցությունների վարում միջազգային դոնոր կազմակերպությունների հետ, Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրով սահմանված չափանիշներին համապատասխան՝ փախստական ընտանիքների բնակարանային պայմանների բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացում և այլն):

Այսպիսով, ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշմամբ նախատեսված միջոցառումները և գործողությունները ծրագրվել էր իրականացնել 2012-2016 թվականներին, սակայն մինչ օրս բավարար քայլեր չեն ձեռնարկվել դրանք իրականացնելու ուղղությամբ և

փախստականների բնակապահովման և այլ սոցիալական խնդիրները դեռևս մնում են չլուծված և արդիական:

Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունների կողմից փախստականների գույքային իրավունքների վերականգնման վերաբերյալ իր իրավական դիրքորոշումն է արտահայտել Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որի համաձայն՝ Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունները պետք է ստեղծեն մեխանիզմ, որի օգնությամբ Ղարաբաղյան պատերազմի հետևանքով իրենց վերահսկողության տակ գտնվող տարածքներում ունեզրկված անձինք կկարողանան վերականգնել իրենց գույքային իրավունքները և փոխհատուցում ստանալ:

Կախված նրանից, թե ինչ միջոցներ կարող է և պետք է ձեռնարկի պետությունը պաշտպանելու անձի սեփականության իրավունքը, անհրաժեշտ է, որ դա բխի միջազգային չափորոշիչներից, մասնավորապես, Պինհիրոյի սկզբունքներից: Ներկա փուլում և մինչև համապարփակ խաղաղության համաձայնագրի կնքումը, շատ կարևոր է գույքային պահանջների այնպիսի մեխանիզմների սահմանումը, որը պետք է լինի մատչելի, ապահովի ընթացակարգերը ճկուն գործող չափանիշների միջոցով՝ թույլ տալով իրենց վերահսկողության տակ գտնվող տարածքներում ունեզրկված անձանց կարողանալու վերականգնել իրենց գույքային իրավունքները և ստանալ փոխհատուցում<sup>681</sup>:

Ինչ վերաբերում է խնդիրների լուծման շուրջ 2018 թվականին ձեռնարկված քայլերին, ապա ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունից պարզաբանվել է, որ ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի թիվ 747-Ն որոշմամբ հաստատված 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթված փախստական ընտանիքների բնակապահովության առաջնահերթ ծրագրի իրականացման նպատակով ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայությունը 2019 թվականի համար ներկայացրել է 1168000.0 բյուջետային հայտ՝ ծայրահեղ վատթար ժամանակավոր կացարաններում բնակվող 78 ընտանիքների համար: Շուրջ 5 միլիարդ դրամի հայտ էլ ներկայացվել է միջնաժամկետ ծախսային ծրագրերում ընդգրկելու համար:

Չնայած ձեռնարկված վերոնշյալ քայլերին՝ Պաշտպանին հասցեագրված բողոքները վկայում են, որ դեռևս համակարգային առումով խնդիրը լուծված չէ:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝*

1. *առաջիկա տարիներին պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերում նախատեսել միջոցներ 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթված փախստական ընտանիքների բնակապահովության առաջնահերթ ծրագրի իրականացման նպատակով:*

2. *առաջիկա տարիներին ձեռնարկել միջոցներ ՀՀ կառավարությունը 2011 թվականի նոյեմբերի 10-ին թիվ 1593-Ն որոշմամբ սահմանված՝ 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած փախստականներին՝ հասարակության մեջ ինտեգրման քաղաքականության իրականացման շարունակականության ապահովման հիմնախնդիրների արդյունավետ լուծման ուղղությամբ:*

<sup>681</sup> Տե՛ս Չիրագովը և Ուրիշներն ըննդեմ Հայաստանի (Chiragov and Others v. Armenia) գործով 2015 թվականի հունիսի 16-ի վճիռը, գանգատ թիվ 13216/058, կետ 199:



## ԳԼՈՒԽ 5. ՏԱՐԵՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ՀՀ Սահմանադրության 84-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր կարիքավոր և տարեց մարդ, օրենքին համապատասխան, ունի արժանապատիվ գոյության իրավունք: Մարդու իրավունքների միջազգային սկզբունքները ևս կոչ են անում լիարժեքորեն ճանաչել տարեց անձանց իրավունքները, ինչը կապահովի տարեցների՝ որպես հասարակության խոցելի խավի առողջ, լիարժեք և արժանավայել կյանքի իրացումը: ՄԱԿ-ի 1948 թվականին ընդունած Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 1-ին հոդվածը սահմանում է, որ բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Սա նշանակում է, որ տարեց կանայք և տղամարդիկ նույնպես օգտվում են նույն իրավունքներից ինչպես բոլորը, և հավասարությունը չի փոխվում կախված տարիքից:

Թեև մարդու իրավունքները չպետք է փոխվեն կախված տարիքից, սակայն տարեցներն իրենց իրավունքներն իրացնելիս բախվում են տարաբնույթ խնդիրների, մասնավորապես, կենսաթոշակների, առողջապահության մատչելիության, աշխատանքում տարիքային խտրականության, խնամքի հարցում աջակցության և տարեցների նկատմամբ բռնություն գործադրելու հարցերում:

«Ծերացման հետևանքների հաղթահարման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարությանը և ռազմավարության իրականացման 2017-2021 թվականների միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 20 արձանագրային որոշման համաձայն՝ բնակչության ծերացման հետևանքների հաղթահարումն, ինչպես նաև տարեցների սոցիալական պաշտպանության խնդիրները պետության սոցիալական քաղաքականության գերակա ուղղություններից են:

Տարեցների սոցիալական և առողջական հիմնախնդիրների լուծումը, կարիքների բավարարումը և նրանց իրավունքների իրացումն ապահովվում է սոցիալական պաշտպանության հաստատությունների միջոցով: Չնայած ծերացման հետևանքների հաղթահարման և տարեցների սոցիալական պաշտպանության ոլորտում սոցիալական պաշտպանության հաստատություններում վերջին տարիներին իրականացված տարբեր միջոցառումների և ծրագրերի առկայությանը՝ մեր պետությունում տարեցների իրավունքների պաշտպանության հարցում դեռևս առկա են բազում խնդիրներ:

Խնդիրները հիմնականում տնտեսական և սոցիալ-հոգեբանական բնույթի են և վերաբերում են տուն-ինտերնատների, խնամքի տների և ամոքիչ (պալեատիվ) ծառայությունների համար անհրաժեշտ միջոցների անբավարարությանը, տարեցների հասարակությունից մեկուսացմանը, առողջապահական ծառայություններից օգտվելու անմատչելիությանը, կենսամակարդակի ապահովմանն, աշխատանքում տարիքային խտրականության, խնամքի հարցում աջակցության և տարեցների նկատմամբ բռնություն գործադրելու և այլ հարցերի:

### ***1. Օրենսդրությամբ տարեցների իրավունքների ճանաչման և հասուկ կարգավորումների բացակայությունը***

Տարեցների իրավունքների պաշտպանության վերաբերյալ տարբեր իրավական կարգավորումների առկայության կարևորությունը միտված չէ նրանց համար նոր իրավունքներ սահմանելուն, այլ ուղղված է տարեցների իրավունքների լիարժեք իրականացմանը՝ հասարակության մյուս անդամների հետ հավասար հիմունքներով:

Տարեց անձանց իրավունքների պաշտպանության մեխանիզմներ են նախատեսված միջազգային տարբեր կառույցներ, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպությունը և Եվրոպայի խորհուրդը: Երկու կազմակերպություններն էլ ընդունել են բանաձևեր, որոնք ճանաչում են տարեցների իրավունքները և պետություններին կոչ են անում պաշտպանել

դրանք: Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը 2017 թվականի մայիսին ընդունել է «Տարեցների իրավունքների ու նրանց համապարփակ խնամքի մասին» զեկույցը, որտեղ առաջարկվում է մշակել տարեցների և երիտասարդների շրջանում սոցիալական ընդհանրության դեմ պայքարելու և բուժօգնության բարելավմանն ուղղված գործողություններ: Զեկույցում նշվում է, որ տարեցների իրավունքների և ազատությունների վերաբերյալ իրազեկումը պետք է նպաստի լրատվամիջոցներում, հասարակությունում, քաղաքականության մեջ, գործատուների և այլ ծառայություններ մատուցող կազմակերպությունների մոտ տարեցների և ծերություն հասկացության վերաբերյալ գիտելիքների բարձրացմանը<sup>682</sup>: Այն նաև կարևորում է տարեցների խոցելիության խնդիրը բռնության և սոցիալական մեկուսացման տեսանկյունից<sup>683</sup>:

Տարեցների իրավունքներն ու ազատություններն ամրագրված են մի շարք միջազգային իրավական ակտերում, մասնավորապես՝ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր» (1948թ.), «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա» (1979 թ.)՝ կանանց սոցիալական ապահովության հավասար իրավունք, այդ թվում, ծերության շրջանում (11.1.), «Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիա» (1990)՝ արգելում է խտրականությունը կախված տարիքից (1.1 և 7), համապատասխան միջոցների գործադրումը տարեցների բռնության կանխարգելման հարցում (16.2), համապատասխան տեղեկատվություն վերարտադրողական առողջության մասին (23.1), ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ապահովությունը և աղքատության կրճատումը (28.7): Սակայն տարեցների իրավունքներին վերաբերող հատուկ դրույթներ ՀՀ օրենսդրությունում բավարար կերպով նախատեսված չեն, իսկ հատուկ դրույթները, որոնք ընդգրկում են սահմանափակ թվով իրավունքներ, հիմնականում չեն համապատասխանում միջազգային կամ տարածաշրջանային փաստաթղթերին:

Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեան 1982 թվականին հրավիրել է ծերացման վերաբերյալ առաջին համաշխարհային վեհաժողովը, «Վիեննայի ծերացման վերաբերյալ միջազգային գործողությունների ծրագրում» ընդունվել է 62 սկզբունք: Այն կոչ է անում հստակ քայլեր ձեռնարկել տարեցների իրավունքների պաշտպանության այնպիսի հարցերում, ինչպիսիք են առողջապահությունը, տարեց սպառողների իրավունքների պաշտպանությունը, բնակարանային պայմաններն ու շրջակա միջավայրը, ընտանիքը, սոցիալական ապահովությունը, եկամուտների անվտանգությունն ու զբաղվածությունը, կրթությունը և այլն: 1991 թվականին Գլխավոր ասամբլեան ընդունել է տարեցների վերաբերյալ ՄԱԿ-ի սկզբունքները՝ թվարկելով 18 իրավունքներ (իրավասություններ), որոնք առնչվում են տարեցների անկախության, խնամքի, արժանապատվության և այլ հարցերի: 1992 թվականին Գլխավոր ասամբլեան ընդունել է Ծերության մասին հռչակագիրը: Իրականացված գործողությունների ծրագիրը շարունակվել է 2002 թվականին Մադրիդում տեղի ունեցած Ծերության մասին երկրորդ համաշխարհային վեհաժողովի շրջանակներում: ՄԱԿ-ի Ծերության մասին երկրորդ համաշխարհային վեհաժողովում ընդունվել է Մադրիդի ծերացման գործողությունների միջազգային ծրագիրը: Ծրագրի նպատակն էր ապահովել, որ տարեց մարդիկ ամենուրեք պաշտպանված լինեն, հարզվի նրանց արժանապատվությունը և շարունակեն մնալ հասարակությունում որպես լիիրավ քաղաքացիներ<sup>684</sup>: Գործողությունների ծրագրում նախատեսվում էր կատարել փոփոխություններ ռազմավարության, վերաբերմունքի, գործելակերպի տարբեր

<sup>682</sup> Տե՛ս <https://researchbriefings.parliament.uk/ResearchBriefing/Summary/LLN-2017-0079>, էջ 3

<sup>683</sup> Տե՛ս նույն տեղում էջ 4

<sup>684</sup> United Nations, Political Declaration and Madrid International Plan of Action on Ageing, April 2002, p 10

մակարդակներում: Գլխավոր ասամբլեայի կազմում 2010 թվականին հիմնադրվել է Ծերացման հարցերով աշխատանքային խումբ, որն իր գործունեությունն իրականացնում է Եյու-Յորքում: Այս աշխատանքային խմբի ստեղծումից ի վեր տեղի է ունեցել 8 նիստ<sup>685</sup>:

Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի 23-րդ հոդվածով, որն ընդունվել է 1996 թվականին, ամրագրված է տարեց անձանց սոցիալական պաշտպանվածության իրավունքը, անդամ պետությունները պարտավորվում են ապահովել, որպեսզի տարեց անձինք հնարավորինս երկար մնան որպես հասարակության լիարժեք անդամներ, ազատորեն ընտրեն իրենց ապրելակերպը, ունենան ազատ կյանք իրենց նախընտրած միջավայրում, ինչպես նրանք ցանկանում են և կարող են, երաշխավորելու տարեցների համար նախատեսված հաստատություններում համապատասխան աջակցություն՝ հարգելով նրանց ազատությունն ու մասնակցությունը հաստատություններում նրանց կենսապայմանների վերաբերյալ որոշումների ընդունմանը<sup>686</sup>: Հաշվի առնելով վերոգրյալը՝ շատ կարևոր է տարեցների սոցիալական պաշտպանության ապահովումը, նրանց կյանքի որակի բարձրացումը և արժանավայել ծերություն ունենալու համար անհրաժեշտ ու բավարար նախադրյալների ստեղծումը: Չնայած վերոնշյալի, իրականացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մեր երկրում տարեցների իրավունքների իրացման հարցում առկա են որոշակի խնդիրներ:

Ներկա կարգավորումների պարագայում տարեցների սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող քաղաքականության մեջ դեռևս հստակեցված չէ նաև այն, թե տարիքային որ խմբին պատկանող անձը կարող է համարվել տարեց: Այսպիսով, «Սոցիալական աջակցության մասին» նախկին օրենքը (ընդունվել է 2005 թվականի հոկտեմբերի 24-ին, ուժը կորցրել է 2015 թվականի հունվարի 1-ին) կիրառում էր «ծեր» եզրույթը և այն մեկնաբանում որպես անձ, ով հասել է ծերության սոցիալական կենսաթոշակի տարիքի: Այնուհետև, «Սոցիալական աջակցության մասին» նոր օրենքի ընդունմամբ (2014 թվականի դեկտեմբերի 17) սոցիալական քաղաքականության մեջ սկսեց օգտագործվել «տարեց» եզրույթը և որպես տարեց սկսեց համարվել 65 տարեկան և բարձր տարիք ունեցող անձը: Այս ամենից զատ, անհրաժեշտ է նշել նաև, որ կենսաթոշակային ոլորտում իրականացվող քաղաքականության շրջանակներում տարիքային աշխատանքային կենսաթոշակի անցնելու տարիքը սահմանված է 63-ը, այդ տարիքից անձը համարվում է կենսաթոշակառու կամ տարեց:

Այսպիսով, ներկայումս իրականացվող սոցիալական քաղաքականության շրջանակներում տարակարծություններ են առաջանում «տարեց» հասկացության սահմանման հարցի կապակցությամբ, որի հետևանքով 63-65 տարեկան անձինք դուրս են մնում սոցիալական աջակցության ծառայություններից օգտվելու հնարավորությունից՝ ինամքի տրամադրումը տնային պայմաններում, տուն-ինտերնատներում անձի ինամքի կազմակերպումից, վերականգնողական աջակցություն տրամադրումից և այլն:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝*

*1. Հայաստանում տարեցների իրավունքներն առավելագույնս պաշտպանելու նպատակով ապահովել միջազգային նորմերի ու սկզբունքների առկայությունն ազգային օրենսդրության մեջ և ազգային նորմերի համապատասխանությունը միջազգային պահանջներին և չափանիշներին,*

*2. օրենսդրությամբ հստակեցնել այն, թե տարիքային որ խմբին պատկանող անձը կարող է համարվել տարեց, որպեսզի որոշակի տարիքի հասած անձինք դուրս չմնան սոցիալական տարբեր ծառայություններից օգտվելու հնարավորությունից:*

<sup>685</sup> Տե՛ս <http://www.rightsofolderpeople.org/open-ended-working-group/>

<sup>686</sup> Council of Europe, European Social Charter (Revised), 1996, article 23

## **2. Տարեցների իրավունքների պաշտպանության համար նախատեսված սոցիալական պաշտպանության հաստատություններ**

Պետության իրականացրած սոցիալական աջակցությունը ներառում է սոցիալական տարատեսակ ծառայությունների ամբողջություն՝ ներառելով նաև հասարակության խոցելի, կարիքավոր, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող խնամքը, սննդի կազմակերպումը, բժշկական, իրավական, սոցիալ-հոգեբանական աջակցությունը, ժամանցի կազմակերպումը, որոնք իրականացվում են սոցիալական տարբեր հաստատությունների միջոցով:

Սոցիալական ծառայությունները մատուցվում են պետական և ոչ պետական հաստատություններում: Սոցիալական ծառայությունները պետք է բխեն բնակչության պահանջմունքներից և պետք է հիմնված լինեն կարիքների գնահատման վրա: Սոցիալական ծառայությունների հավասար հասանելիությունը և միատեսակ որակի ապահովումը մնում են կարևոր և առաջնահերթ խնդիր Հայաստանի Հանրապետության համար: Տարեցներին սպասարկող պետական ծառայությունները, որոնց շարքում հիմնականները սոցիալական և առողջապահական ծառայություններն են, այսօր տարեց կանանց և տղամարդկանց սոցիալական և առողջական հիմնախնդիրների լուծման, կարիքների բավարարման կարևորագույն և հիմնական հաստատություններն են:

Ներկայումս Հայաստանում գործում է տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող (այդ թվում՝ հոգեկան առողջության կամ մտավոր խնդիրներ ունեցող) անձանց շուրջօրյա խնամքի ծառայություն մատուցող 11 հաստատություն (տուն-ինտերնատ, խնամքի կենտրոն, խնամքի տուն), այդ թվում՝ 6 ոչ պետական: Բոլոր հաստատություններում միասին բնակվում է շուրջ 1370 մարդ, իսկ տնային պայմաններում սպասարկվում է շուրջ 4000 մարդ, ցերեկային կենտրոններ են այցելում՝ 2040-ը: Բացի այդ, Երևանի անօթևան մարդկանց ժամանակավոր կացարանում ապաստանում է 100 անօթևան, իսկ հանրապետության 4 սոցիալական տներում բնակվում և ծառայություններ է ստանում 60 տարեց անձ<sup>687</sup>:

2018 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության կարևորագույն ուղղություններից է եղել տարեց անձանց խնամքի և պաշտպանությամբ զբաղվող պետական և ոչ պետական հաստատությունների մշտադիտարկումը, դրա արդյունքում խնդիրների վերհանումը և համապատասխան առաջարկներով պետական իրավասու մարմիններին դիմելը: 2018 թվականի ընթացքում այցեր են իրականացվել «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ», «Երևանի Նորքի տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպություններ և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամ: «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամը ոչ պետական կազմակերպություն է, հաստատության հիմնադիրն է Ամերիկայի միացյալ նահանգներում հիմնադրված Հայ Օգնության Ֆոնդ միավորումը, սակայն հարկ է նշել, որ 2009 թվականից «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տրամադրում է նաև պետական աջակցություն: Մինչդեռ, պետությունը, տրամադրելով «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամին պետական աջակցություն, հիմնադրամի խնամքի տակ գտնվող տարեցների շուրջօրյա խնամքը **պատշաճ կազմակերպելու, նրանց սոցիալական պահանջմունքները բավարարելու** և հաստատությունում ապրելու համար նպաստավոր պայմաններ ստեղծելու գործընթացի նկատմամբ վերահսկողական գործառույթներ չի իրականացնում: «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի արդյունավետ գործունեությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ

<sup>687</sup>«Օբերացման հետևանքների հաղթահարման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարությանը և ռազմավարության իրականացման 2017-2021 թվականների միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 20 արձանագրային որոշում:

է մշակել այնպիսի մեխանիզմներ, որոնց միջոցով կիրականացվեն վերահսկողական գործառնություններ: Այցերի ընթացքում հայտնաբերվել են մի շարք համակարգային խնդիրներ, որոնց հիման վրա իրավասու պետական մարմիններ ներկայացվել են առաջարկներ:

### **2.1 Տարեցների բնակության պայմանները տուն-ինտերնատներում**

2018 թվականին Պաշտպանի ներկայացուցիչների իրականացրած այցերի և ուսումնասիրությունների արդյունքում մի շարք տուն ինտերնատներում հայտնաբերվել են շենքային և ենթակառուցվածքների անբավարար պայմաններ, որոնք խախտում են այնտեղ բնակվող տարեց մարդկանց մի շարք իրավունքներ և հակասում են միջազգային չափանիշներին:

Տուն-ինտերնատների շենքային պայմանները պետք է լինեն այնպիսին, որպեսզի ապահովվեն նրանցում բնակվող տարեցների կարիքներն ու բարեկեցությունը և՛ ֆիզիկական, և՛ հոգեբանական տեսանկյունից: ՀՀ կառավարության 2007 թվականի «Ծերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 730-Ն որոշմամբ հաստատված ծերերի և հաշմանդամների տուն-ինտերնատի գործունեության համար անհրաժեշտ ընդհանուր և բնակելի տարածքի նվազագույն չափորոշիչների համաձայն՝ շենքի ներքին կառուցվածքը պետք է հնարավորություն ընձեռի սայլակներով հաշմանդամների ազատ տեղաշարժմանը:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի 9-րդ հոդվածով սահմանված է, որ հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիակատար մասնակցության հնարավորություն ընձեռելու նպատակով մասնակից պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ, որպեսզի նրանց համար մյուսների հետ հավասար հիմունքներով ապահովվեն ֆիզիկական միջավայրի, փոխադրամիջոցների, տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաներն ու համակարգերը, ինչպես նաև այլ հարմարությունների ու ծառայությունների մատչելիությունը, որոնք հասանելի են հասարակությանը և՛ քաղաքներում, և՛ գյուղական վայրերում:

Չնայած ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին 2018 թվականի ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչների տուն-ինտերնատներ կատարած այցերի ընթացքում արձանագրվել են, որ շենքերի մատչելիությունն ամբողջությամբ ապահովված չէ: Այսպես, Երևանի թիվ 1 տուն-ինտերնատում հարմարեցված է միայն անկողնային մասնաշենքը՝ (առկա են թեքահարթակներ և վերելակ), հիմնական և անկողնային խնամքի մասնաշենքերի մուտքերն ապահովվել են թեքահարթակներով, մինչդեռ հիմնական մասնաշենքի ներսում, անհրաժեշտ վայրերում չեն տեղադրվել թեքահարթակներ և վերելակներ: Համանման խնդիրներ են բացահայտվել նաև «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամում և Երևանի Նորքի տուն-ինտերնատում: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պարզաբանումների համաձայն՝ Երևանի Նորքի տուն-ինտերնատի շենքերի մուտքերը և շենքերում տեղաշարժվելու համար այլ վայրերն ապահովվել են թեքահարթակներով, իսկ հարկից հարկ տեղաշարժվելու համար բոլոր մասնաշենքերն ապահովվել են վերելակներով:

2018 թվականի ընթացքում վերը նշված հաստատություններ իրականացված այցերի ընթացքում արձանագրվել է, որ գրեթե բոլոր հաստատությունների մասնաշենքերն ունեն վերանորոգման կարիք: Հաստատություններ իրականացրած այցերի ընթացքում արձանագրվել է նաև դրանք պատշաճ չջեռուցելու հետ կապված խնդիրներ: Դրա մասին Պաշտպանի ներկայացուցիչներին առանձնազրույցների ընթացքում տեղեկացրել են նաև Երևանի թիվ 1 տուն-ինտերնատում բնակվող խնամյալները: Հաստատության ղեկավարը

նույնպես իր մտահոգությունն է հայտնել ջեռուցման խնդրի կապակցությամբ՝ նշելով, որ հաստատությունում չեն կարող միացնել ջեռուցման համակարգը, քանի որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ունեն հստակ ցուցում այն 2018 թվականի նոյեմբերի 15-ից միացնելու վերաբերյալ: 2018 թվականի նոյեմբերի 9-ին Պաշտպանի ներկայացուցիչների կողմից Երևանի Նորքի տուն-ինտերնատ կատարված այցի ընթացքում նույնպես արձանագրվել են խնդիրներ ջեռուցման հետ կապված: Մասնավորապես, Երևանի Նորքի տուն-ինտերնատ կատարված այցի ժամանակ հաստատությունում ջերմաստիճանը բավականին ցածր է եղել, չնայած տնօրենի պնդմամբ մի քանի օր միացված է եղել ջեռուցումը: Ըստ խնամյալների՝ ջեռուցումը միացվել է միայն երեկոյան ժամերին մի քանի օր ընդամենը: Մինչդեռ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պարզաբանումների համաձայն՝ 2018 թվականի գարնանը Երևանի թիվ 1 տուն-ինտերնատում ջեռուցման համակարգն անջատվել է մարտի 15-ին և միացվել նոյեմբերի 15-ին, որի հետևանքով հաստատության խնամյալներն աշնան ցուրտ օրերին սենյակների ջերմությունն ապահովել են էլեկտրական տաքացուցիչներով: Եղանակային պայմաններից ելնելով՝ որոշ խնամյալներ ներկայացրել են առաջարկություններ՝ ցանկություն հայտնելով ջեռուցումը միացնել նոյեմբերի 1-ից: Երևանի թիվ 1 տուն-ինտերնատի անկողնային մասնաշենքում ջեռուցման համակարգը գործում է ըստ անհրաժեշտության՝ խնամյալների առողջական վիճակից ելնելով: Նախարարության պարզաբանումների համաձայն՝ Երևանի Նորքի տուն-ինտերնատում մարտի 15-ին ջեռուցման համակարգն անջատվել է և հաշվի առնելով, որ տաք աշուն է՝ միացվել է նոյեմբերի 15-ին: Նորքի տուն ինտերնատում ջեռուցման խնդիրների վերաբերյալ բողոքներ չեն եղել: Ներկայացված տեղեկատվության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ տուն-ինտերնատներում ջեռուցման խնդիրները շարունակում են չլուծված մնալ: Այս կապակցությամբ նաև հարկ է նշել, որ հաստատությունները ջեռուցելու ժամանակի վերաբերյալ իրավական որևէ ամրագրում (այդ թվում՝ սահմանափակում) առկա չէ:

Տուն-ինտերնատներում բնակվող տարեցների ննջասենյակները պետք է համապատասխանեն բնակիչների անհատական կարիքներին: Ննջասենյակը բնակչի անձնական տարածքի առանցքն է, որտեղ խնամյալն անցկացնում է օրվա մեծ մասը (քնում է, հարդարվում, հագնվում): Այն պետք է լինի հարմարավետ, անվտանգ և ապահովի խնամյալների անկախությունը, արժանապատվությունը և առավելագույն գաղտնիությունը<sup>688</sup>:

«Վանաձորի տարեցների տուն» հաստատություն կատարած այցի ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչներն ուսումնասիրել են սենյակներում խնամյալների համար անհատական պահարանների առկայությունն ու համապատասխանությունը սահմանված չափորոշիչներին: Մասնավորապես, արձանագրվել է, որ բոլոր խնամյալներն ունեն անհատական պահարաններ: Մինչդեռ, հարկ է նշել, որ խնամյալների անձնական իրերի համար նախատեսված են զգեստապահարաններ և կողապահարաններ, որոնցից միայն մի քանիսն են ունեցել կողպելու հնարավորություն, մյուսները, որպես կանոն, փակվում են այլ առարկաներով (թելեր, կտորներ):

Մոլդովայի վերաբերյալ ԽԿԿ 2016 թվականի զեկույցում անդրադարձ է կատարվել հոգեկայարդարանական հաստատության պայմաններին, մասնավորապես զեկույցի 176-րդ կետում նշվել է, որ (...) ԽԿԿ կարծիքով, անձանց սոցիալ-հոգեբանական ռեաբիլիտացիայի աջակցման տեսանկյունից ցանկալի կլինի, որպեսզի բնակիչներն ունենան անձնական,

<sup>688</sup>Տե՛ս <https://www2.gnb.ca/content/dam/gnb/Departments/sd-ds/pdf/NursingHomes/NursingHomeDesignStandards-e.pdf> page 2

կողպելու հնարավորություն ունեցող պահարան և հատուկ իրենց համար նախատեսված հագուստ (...)»<sup>689</sup>:

Միաժամանակ, Հայաստանի վերաբերյալ 2016 թվականի զեկույցի 121-րդ կետում ԽԿԿ-ն նշել է, որ «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության և՛ կանանց և՛ տղամարդկանց բաժանմունքներում անձնական տարածքն ապահովված չի եղել, մասնավորապես՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք չեն ունեցել կողպելու հնարավորություն ընձեռող անձնական տարածություն: ԽԿԿ-ն առաջարկել է Հայաստանի իշխանություններին անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել Գյումրու հոգեկան առողջության կենտրոնում պահվող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող բոլոր անձանց կողպելու հնարավորություն ընձեռող անձնական տարածությամբ ապահովելու ուղղությամբ, որտեղ նրանք կարող են պահել իրենց իրերը»:

Երևանի թիվ 1 տուն-ինտերնատում, Երևանի Նորքի տուն-ինտերնատում և «Վանաձորի տարեցների տուն» հաստատությունում Պաշտպանի ներկայացուցիչների կատարած ուսումնասիրություններով արձանագրվել է հաստատության սենյակներում տաք ջրի բացակայության խնդիրը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պարզաբանումների համաձայն՝ Երևանի Նորքի տուն-ինտերնատում 2018 թվականի ընթացքում շենքային պայմանները բարելավելու նպատակով վերանորոգվել և տաք ջրով ապահովվել են ֆիզիոթերապևտիկ պրոցեդուրաների և անկողնային խնամվողների սենյակները: Երևանի թիվ 1 տուն-ինտերնատի վերանորոգված բնակելի որոշ սենյակներում առկա է տաք ջուր, իսկ անկողնային մասնաշենքն ապահովված է կենտրոնացված տաք ջրի համակարգով: Ըստ Նախարարության պարզաբանումների՝ բոլոր տուն-ինտերնատներում անհրաժեշտ է իրականացնել վերանորոգման աշխատանքներ, սակայն ֆինանսական միջոցների բացակայության պատճառով մնացած բնակելի սենյակները տաք ջրով հնարավոր չէ ապահովել:

Այցերի ընթացքում կատարված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են նաև լոգարանների և սանհանգույցների սանիտարահիգիենիկ անբավարար պայմաններ, օրինակ՝ Երևանի Նորքի տուն-ինտերնատում լոգարաններում բացակայել են միջնապատերը, «Վանաձորի տարեցների տուն» հաստատությունում հատակը թաց ժամանակ եղել է վտանգավոր: Ավելին, Պաշտպանի ներկայացուցիչների տուն-ինտերնատներ կատարած այցերի ընթացքում պարզվել է, որ լոգարաններում և սանհանգույցներում առկա չեն օժանդակ հարմարանքներ, որոնց կբացառեն թաց հատակի դեպքում սահելը: Օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս ՀՀ օրենսդրությամբ պարտադիր պայմանների բացակայությունը: Մինչդեռ, Հյուսիսային Իռլանդիայի Կարգավորման և որակի բարելավման անկախ մարմնի հաստատած տուն-ինտերնատների խնամքի 43-րդ չափանիշների 8-րդ կետի համաձայն՝ լոգարաններում պետք է տեղադրվեն համապատասխան օժանդակ միջոցներ և հարմարանքներ, որոնք թույլ կտան խուսափել, որ խնամյալները չսահեն՝ հատակին ջրի կուտակման պատճառով<sup>690</sup>:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝*

*1. հաստատությունների շենքային պայմաններն ամբողջական հարմարեցնել հենաշարժողական խնդիրներ ունեցող տարեցների համար,*

*2. շարունակաբար իրականացնել հաստատությունների շենքերի վերանորոգման աշխատանքներ,*

<sup>689</sup>Մոլդովայի վերաբերյալ ԽԿԿ 2016 թվականի զեկույցի վերաբերյալ 176-րդ կետը, <https://rm.coe.int/16806975da>:

<sup>690</sup> Տե՛ս [https://www.rqia.org.uk/RQIA/media/RQIA/Resources/Standards/nursing\\_homes\\_standards\\_-\\_april\\_2015.pdf](https://www.rqia.org.uk/RQIA/media/RQIA/Resources/Standards/nursing_homes_standards_-_april_2015.pdf) էջ

3. ապահովել հաստատություններում օդային և ջերմային ռեժիմի պատշաճ պահպանումը՝ հաշվի առնելով հաստատության տեղակայվածությունը, ինչպես նաև տվյալ տարվա բնակլիմայական պայմանները, ուժեղացնել վերահսկողությունը հաստատությունների պատշաճ ջեռուցման հետ կապված խնդիրների բացահայտման ուղղությամբ,

4. քայլեր ձեռնարկել կարգավորելու համար հաստատությունների լոգարանների և սանհանգույցների սանիտարահիգիենիկ պատշաճ պայմանները (օրինակ՝ անհրաժեշտ է իրականացնել ենթակառուցվածքների վերանորոգում, հսկողություն իրականացնել մաքրության ապահովման ուղղությամբ, իրականացնել հաշմանդամություն ունեցող անձանց համար անհրաժեշտ հարմարեցումներ),

5. ապահովել սանհանգույցներն ու լոգարանները համապատասխան օժանդակ հարմարանքներով՝ սահելուց խուսափելու նպատակով,

6. ապահովել բոլոր խնամյալների համար կողպելու հնարավորություն ունեցող պահարանների առկայությունը:

## **2.2 Տարեցների անձնական խնամքը տուն-ինտերնատներում**

Տարեցներին մատուցվող խնամքը պետք է հասանելի լինի միասնական և ինտեգրված ձևով՝ ի շահ տարեց անձանց<sup>691</sup>: Չնայած խնամքի համընդհանուր ընդունված սահմանում չկա, այն սովորաբար ներառում է այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են օժանդակությունն առօրյա կյանքում, անվտանգությունը և եկամուտների պաշտպանությունը, ինչպես նաև առողջության խթանումը՝ հիվանդությունների կանխարգելման, բուժման, վերականգնման և առողջության պահպանման հարցերում՝ համապատասխան սոցիալական հաստատություններում, հիվանդանոցային կամ տնային պայմաններում<sup>692</sup>:

Անձնական խնամքը մասնավոր կյանքի գաղտնիության մի մասն է, որը ներառում է անձին որպես անհատականություն ու արժանապատվությունը հարգելը: Ուստի, շատ կարևոր է, որ տուն-ինտերնատները հաշվի առնեն այն և խնամքը տրամադրեն այնպես, որ հարգվեն բնակիչների ֆիզիկական և բարոյական իրավունքները:

ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 26-ի «Պետության կողմից երաշխավորված՝ պետական մարմինների ենթակայության ներքո գտնվող սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների կողմից անվճար տրամադրվող սոցիալական ծառայությունների ու սոցիալական աջակցության վճարովի ծառայությունների ցանկերը և սոցիալական աջակցության վճարովի ծառայությունների տրամադրման, սոցիալական աջակցության վճարովի ծառայություններից ձևավորված ֆինանսական միջոցներից սոցիալական աջակցության ֆինանսավորման դեպքերն ու կարգը սահմանելու մասին» թիվ 1112-Ն որոշման թիվ 1 հավելվածի 1-ին կետի համաձայն՝ կենցաղային սպասարկումն իր մեջ ներառում է նաև լոգանքի կազմակերպումը, ընդ որում, ինքնասպասարկման ունակության մասնակի կորստի դեպքում՝ խնամվողին լողանալիս օգնության ցուցաբերում, իսկ ինքնասպասարկման ունակության լրիվ կորստի դեպքում՝ խնամվողին լողացնելը: Անձնական խնամքի հետ կապված տուն-ինտերնատների նվազագույն չափորոշիչները վերաբերում են լվացվելու, լոգանք ընդունելու և հագնվելու հետ կապված հարցերին: Անհատական խնամքի իրականացման ընթացքում գաղտնիության

<sup>691</sup>Տե՛ս <http://website-pace.net/documents/19855/3313570/20170327-Droitshumains-personnesagees-EN.pdf/a5c148bd-a577-4ffd-a212-c5e5f5b0c3f1>, էջ 9

<sup>692</sup>Տե՛ս <http://website-pace.net/documents/19855/3313570/20170327-Droitshumains-personnesagees-EN.pdf/a5c148bd-a577-4ffd-a212-c5e5f5b0c3f1> էջ 7



ապահովման տեսանկյունից ըստ տարեցների իրավունքների պաշտպանության միջազգային չափորոշիչների՝ անհատական և առողջապահական խնամքը պետք է տրամադրվի այնպես, որպեսզի հարգվի բնակչի անձնական խնամքի գաղտնիությունը և արժանապատվությունը<sup>693</sup>:

«Վանաձորի տարեցների տուն» հաստատությունում այցի պահին ուսումնասիրվել են անկողնային պարագաները, որոնք փոխվել են այցի պահին: Մենյակներից մեկի մահճակալից բացակայել է սպիտակեղենը, իսկ ներքնակը, սավանը, ծածկոցն այդ պահին թաց են եղել, դրանց վրա առկա է եղել դեղնավուն հեղուկ: Հաստատության աշխատակիցը նշվածը պարզաբանել է տվյալ պահին տակդիրների բացակայությամբ: Խնամյալների պահարաններում բացակայել են նաև անձնական հիգիենայի պարագաներ՝ ատամի մածուկներն ու խոզանակները, մինչդեռ պահեստում եղել է մեծ քանակությամբ ատամի մածուկ և խոզանակ: *Նշվածն անթույլատրելի է խնամյալների անձնական հիգիենայի, առողջության պահպանման տեսանկյունից և չի համապատասխանում միջազգային չափանիշներին:*

Խնամյալների անձնական խնամքի տեսանկյունից նմանօրինակ խնդիրներ են արձանագրվել Պաշտպանի ներկայացուցիչների՝ «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամ կատարված այցի ընթացքում: Այսպիսով, հաստատության խնամյալների հետ տեղի ունեցած առանձնագրույցներից պարզ է դարձել, որ խնամյալները հիմնականում լոգանք են ընդունում ըստ անհրաժեշտության: Առաջին հարկում գործող երկու ընդհանուր տիպի լոգարանները նախատեսված են միաժամանակ կլին և տղամարդ խնամյալների համար, ինչն անընդունելի է և կարող է խնդիրներ առաջացնել վերջիններիս մասնավոր կյանքի ապահովման տեսանկյունից: Լոգարանների և սանհանգույցների հատակին այցի պահին առկա է եղել մեզի և ջրի կուտակում, որն առաջացրել է ոչ հիգիենիկ վիճակ:

Խնդրահարույց է նաև հակառակ սեռի խնամյալի կամ աշխատակցի կողմից լողանալիս օգնության ցուցաբերումն այլ խնամյալի: Նշված խնդիրն արձանագրվել է «Երևանի Նորքի տուն-ինտերնատ» և «Վանաձորի տարեցների տուն» կատարված այցերի ընթացքում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պարզաբանումների համաձայն՝ բոլոր տուն-ինտերնատներում 2018 թվականի ընթացքում իրականացվել են ծերերի և հաշմանդամների, ըստ նրանց առողջական վիճակի, ինքնասպասարկման ունակությունների, սոցիալական հմտությունների և կարողությունների գնահատման անհրաժեշտության 4 ենթախմբի բաժանումները («Ա» ենթախումբ, «Բ» ենթախումբ, «Գ» ենթախումբ, «Դ» ենթախումբ), ըստ որի՝ շահառուները ստացել են համապատասխան խնամքի ծառայություններ: ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարության ներկայացրած տեղեկությունների համաձայն՝ հաստատություններ ընդունված յուրաքանչյուր տարեցի համար ցուցաբերվել է մաքսիմալ անհատական մոտեցում: Ենթախմբերի բաժանումը դրական արդյունքներ է գրանցել: Ըստ Նախարարության՝ իսպառ վերացել են մեկը մյուսին խնամելու, նրա փոխարեն հարկադրված կենցաղային բնույթի օգնություն ցուցաբերելու խնդիրները, նպաստել տարեցների միջանձնային հարաբերությունների ակտիվացմանը: 2018 թվականի ընթացքում գրանցվել են դեպքեր խնամյալներից ստացված բողոքներով, որ վերջիններս շատ դեպքերում ստիպված և հարկադրված են լինում իրականացնել այլ խնամյալների խնամքը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝*

*1. համապատասխան միջոցներ ձեռնարկել առավելագույնս ապահովելու տուն-ինտերնատներում խնամյալների անհատական խնամքի գաղտնիությունն ու անհատական խնամքի տարբեր հարցերում խնամյալների արժանապատվության հարգումը,*

<sup>693</sup> Տե՛ս [https://www.rqia.org.uk/RQIA/media/RQIA/Resources/Standards/nursing\\_homes\\_standards\\_-\\_april\\_2015.pdf](https://www.rqia.org.uk/RQIA/media/RQIA/Resources/Standards/nursing_homes_standards_-_april_2015.pdf) p 27

2. անձնական խնամքը պատշաճ իրականացնելու համար ապահովել լոգարանների և սանհանգույցների սանիտարահիգիենիկ պատշաճ պայմանները,

3. հաստատություններում բնակվող խնամյալներին ապահովել անհատական օգտագործման պարագաներով՝ ատամի մածուկներ, խոզանակներ, անհրաժեշտության դեպքում խնամյալներին ապահովել անհրաժեշտ քանակի տակդիրներով և այլն,

4. խնամյալների խնամքը կազմակերպել այնպես, որպեսզի խնամյալը ստիպված չլինի իրականացնել այլ խնամյալի խնամքը:

### **2.3 Տարեցների սննդի կազմակերպումը, բժշկական օգնությունն ու սպասարկումը տուն-ինտերնատներում**

Տուն-ինտերնատներ կատարված այցերի շրջանակներում Պաշտպանի ներկայացուցիչներն ուսումնասիրել են հաստատությունների խոհանոցը, ճաշարանը, սառնարանային և պահուստային սննդի պահման սենյակները: Ուսումնասիրվել են նաև տրամադրվող սննդի ճաշացանկերը: Հաստատություններ կատարված այցերի շրջանակներում պարզվել է, որ տրամադրվող սնունդը միատեսակ է, կրկնվող, որի վերաբերյալ դժգոհություն են հայտնել խնամյալները: Պարզվել է նաև, որ չի պատրաստվում դիետիկ սնունդ:

Մասնավորապես, «Երևանի Նորքի տուն-ինտերնատ» իրականացված այցի ընթացքում երկու շաբաթվա ճաշացանկի ուսումնասիրությամբ պարզվել է, որ տրամադրվող սնունդը միատեսակ է, կրկնվող, որի վերաբերյալ դժգոհություն են հայտնել խնամյալները: Պարզվել է նաև, որ չի պատրաստվում դիետիկ սնունդ: Դիետիկ սննդի ճաշացանկ թեև կազմված եղել է, սակայն այն արտագրված է եղել սովորական ճաշացանկից: Նախաճաշին հիմնականում տրամադրվում է սպիտակաձավարով կամ կաթով և բրնձով շիլա: Ընթրիքին գրեթե ամեն օր տրամադրվում է տապակած, հազվադեպ՝ խաշած ձուկ: Երկու շաբաթվա կտրվածքով ձկան փոխարեն մեկ անգամ տրամադրվել է խաշած հավի միս: «Վանաձորի տարեցների տուն» կատարված այցի ընթացքում ճաշացանկերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ տրամադրվող սննդի չափաբաժինները հիմնականում չեն համապատասխանում սահմանված չափորոշիչներին, միատեսակ են և կրկնվող: Խոհանոցում առկա են սանիտարահիգիենիկ անբավարար պայմաններ. սառնարանները կեղտոտ վիճակում են եղել և՛ ներսից, և՛ դրսից, դրանք դրված են եղել սննդի պահման (հաց, շաքարավազ, մակարոնեղեն, ձավարեղեն, խտացրած կաթ, լոբի, ձեթ և այլն) սենյակում, խնդիրներ են արձանագրվել նաև սննդի պահման և կազմակերպման գործընթացում:

Տարեցների վերաբերյալ ՄԱԿ-ի սկզբունքներից 1-ը սահմանում է, որ տարեցները պետք է ապահովված լինեն սնունդով, ջրով, ապաստանով, հագուստով և ունենան առողջապահական խնամքի իրավունք, որը պետք է տրամադրվի ընտանիքի, համայնքային աջակցության և ինքնօգնության շրջանակներում: ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի «Ծերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 730-Ն որոշման թիվ 2 և թիվ 3 հավելվածներով հաստատված է ծերերի և հաշմանդամների ընդհանուր և հատուկ տիպի տուն-ինտերնատներում խնամվողներին հատկացվող սննդամթերքի չափաքանակների և էներգետիկ արժեքի նվազագույն չափորոշիչները: Չնայած վերոնշյալ իրավական կարգավորումներին ուսումնասիրությունները փաստում են, որ դրանք գործնականում չեն ապահովվում:

ՀՀ առողջապահության նախարարի 2003 թվականի մայիսի 2-ի ««Հանրային սննդի կազմակերպություններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-4.2-01-2003 սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմերը հաստատելու մասին» թիվ 302 հրամանով

հաստատված են հանրային սննդի կազմակերպություններին ներկայացվող հիգիենիկ պահանջները, որոնց կապակցությամբ Պաշտպանի ներկայացուցիչների տուն-ինտերնատներ կատարված այցերի ընթացքում արձանագրվել են խնդիրներ:

Ընդ որում, հարկ է նշել նաև, որ ՀՀ առողջապահության նախարարի վերոնշյալ հրամանը վերաբերում է հանրային սննդի կազմակերպություններին՝ նրանց տարածքին, դրանց հագեցվածությանը, սննդի պատրաստմանը, փոխադրմանը, իրացմանը, ինչպես նաև աշխատողների աշխատանքային պայմաններին ներկայացվող սանիտարահիգիենիկ պահանջներին: «Վանաձորի տարեցների տուն» հաստատության ղեկավարի պատճառաբանությամբ վերը նշված հրամանով հաստատված պահանջները չեն տարածվում հաստատության կենսապայմանների և խնամյալների կենսագործունեությունը կազմակերպելու գործընթացի վրա: Նշվածն անթույլատրելի է, քանի որ դրա հետևանքով տարեցների խնամքն իրականացվում է սահմանված չափորոշիչներին ոչ համապատասխան և չի ապահովվում գործընթացի նկատմամբ վերահսկողության իրականացումը, ինչն էլ իր հերթին գործընթացում բազում թերությունների է հանգեցնում:

Տուն-ինտերնատներ կատարված այցերի ընթացքում խնդիրներ են արձանագրվել նաև խնամյալների՝ ճաշացանկի կազմման գործընթացին չմասնակցելու վերաբերյալ: Ճաշացանկի կազմմանը խնամյալներին մասնակից դարձնելը նույնպես տուն-ինտերնատներին ներկայացվող կարևոր չափանիշներից է: Դա արվում է նրա համար, որպեսզի բնակիչները կարողանան որոշակի չափով ընտրություն կատարել սննդի հարցում: Ճաշացանկ մշակելու հետ կապված կարող են կիրառվել որոշակի մեխանիզմներ, որպեսզի հաշվի առնվեն տարեցների նախասիրությունները (օրինակ՝ հարցաթերթիկների տրամադրում՝ սննդային նախասիրությունները հասկանալու համար): Հասկանալի է, որ սննդային նախասիրություններն ամբողջովին չեն կարող ներգրավվել ճաշացանկում, այնուամենայնիվ, որքան հնարավոր է բնակիչների ցանկությունները պետք է հաշվի առնվեն տուն-ինտերնատների ներկայացրած ճաշացանկերում:

Սննդի կազմակերպման տեխնոլոգիական գործընթացի պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով անհրաժեշտ է յուրաքանչյուր պատրաստի կերակրատեսակից կատարել նմուշառում:

Հարկ է նշել, որ ծերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման չափորոշիչները սահմանող իրավական ակտում նախատեսված չէ պատրաստի կերակրատեսակից նմուշառում կատարելու պահանջ: Մինչդեռ, հանրակրթական ուսումնական հաստատությունների համար սահմանված են այնտեղ սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ, որտեղ հստակ և մանրամասն սահմանված են նմուշառման անհրաժեշտ դեպքերը և գործընթացը (ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի N 32-Ն հրաման): Այսպիսով, քանի որ սահմանված են հաստատություններում տարեցների սննդի տրամադրման չափորոշիչներ, անհրաժեշտ է սահմանել նաև դրանց պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելու հստակ մեխանիզմներ, որոնցից կարող է լինել նաև սննդի տեսակների նմուշառումը: Սննդի կազմակերպման, այդ թվում՝ սննդի օրաբաժնի որակական կազմի, նրա սննդային և էներգետիկ արժեքի, ձեռքբերվող սննդամթերքի տեսականու և որակի, ինչպես նաև կերակրատեսակների պատրաստման, խոհարարական մշակման եղանակի նկատմամբ հսկողություն իրականացնելու արդյունավետ միջոցներից է նմուշագրումը:

2018 թվականի ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչների Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ, Երևանի Նորքի տուն-ինտերնատ և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամ կատարված այցերի ընթացքում խնդիրներ են արձանագրվել նաև խնամյալներին տրամադրվող բժշկական սպասարկման տրամադրման կապակցությամբ:

Մասնավորապես, «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի բուժկետում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները հայտնաբերել են ժամկետանց դեղամիջոցներ և օգտագործված ներարկիչներ: Օգտագործած ներարկիչների մի մասը լցված են եղել նախատեսված պլաստմասե տարայի մեջ, սակայն մի մասը՝ թղթե արկղի մեջ, մյուս մասը՝ պոլիէթիլենային բաց տոպրակի մեջ:

ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 03-Ն հրամանով հաստատված հավելված 1-ի 21-րդ կետի համաձայն՝ սրածայր թափոնները, դրանց գոյացման վայրում, օգտագործելուց անմիջապես հետո տեղադրվում են մեկանգամյա օգտագործման կարծր (օրինակ՝ պլաստիկ շշերի, մետաղյա կամ կարծր պլաստմասե բեռնարկղի մեջ)՝ կենսաբանական վտանգի նշանը և «Զգույշ սրածայրեր» մակնշումը կրող տարողությունների մեջ: Արգելվում է տեղադրելուց առաջ ներարկիչների ասեղների կրկնակի փակելը կափարիչով և (կամ) ախտահանելը:

Հավելվածի 25-րդ կետի համաձայն՝ բոլոր տեսակի բժշկական թափոնները տարողությունների մեջ տեղադրվելուց հետո հերմետիկորեն փակվում են, իսկ ախտաբանաանատոմիական, միկրոկենսաբանական, սրածայր և քիմիական թափոնները նաև կնքվում, ինչից հետո բժշկական թափոնի հավաքելու, տեղադրելու, փակելու և տեղափոխելու պարտականություն ունեցող աշխատողը լրացնում է պիտակ՝ դրա վրա նշելով տեղադրված բժշկական թափոնի տեսակը, դրա տարողությունում տեղավորելու կոնկրետ ժամը, օրը, ամիսը, տարեթիվը, իր անունը և ազգանունը, ինչպես նաև կազմակերպության անվանումը: Լրացված պիտակն ամրացվում է տարողությանը, որն անմիջապես տեղափոխվում է բժշկական թափոնների ժամանակավոր պահման հատուկ տարածք: Լրացված պիտակը տարողությունից տարանջատվելու հնարավորությունը բացառվում է:

Նշված կարգավորումների և ուսումնասիրությունների արդյունքների համեմատական վերլուծությունը վկայում է այն մասին, որ խնդրահարույց է հաստատության բուժաշխատողների մոտեցումը բժշկական թափոնների և աղբանետման իրականացմանը:

*Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է՝*

- 1. ապահովել հաստատությունների ճաշարանների, խոհանոցների սանիտարահիգիենիկ պատշաճ պայմանները,*
- 2. «Երևանի Նորքի տուն-ինտերնատ»-ում ապահովել դիետ սնունդի տրամադրում,*
- 3. «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամում ապահովել սննդի կազմակերպման պատշաճ պայմաններ,*
- 4. սահմանել տարեցների խնամքի հաստատություններում պատրաստվող ճաշատեսակների նմուշառման դրույթներ,*
- 5. մշակել նոր՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չափորոշիչներին համապատասխան ամենօրյա ճաշացանկ և ապահովել ըստ դրա սննդի տրամադրումը,*
- 6. հաստատություններում ապահովել խնամյալների մասնակցությունը ճաշացանկի ընտրության հարցում,*
- 7. հաստատություններում բացառել ժամկետանց դեղորայքի առկայությունը,*
- 8. բժշկական թափոնների հավաքումը և պահմանումը կազմակերպել ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի թիվ 03-Ն հրամանի դրույթների:*

#### **2.4 Մշակութային կյանքին մասնակցությունը, զբաղվածությունը, կապն արտաքին աշխարհի հետ, ինչպես նաև բողոք ներկայացնելու իրավունքը**

Տարեցների ներգրավվածությունը մշակութային կյանքին և նրանց զբաղվածությունը տարեցների իրավունքների իրացման երաշխիքներից է: Դրա մասին նշվում է մի շարք միջազգային փաստաթղթերում, ինչպես օրինակ՝ Տարեցների վերաբերյալ ՄԱԿ-ի 7-րդ և 16-րդ սկզբունքները: Վիեննայի ծերացման վերաբերյալ գործողությունների ծրագրի 48-րդ հանձնարարականը և «Տարեց մարդկանց իրավունքների և նրանց համապարփակ խնամքի մասին» գեկույցը<sup>694</sup>: Հարցի մասին բարձրաձայնել են նաև միջազգային կազմակերպությունները, ինչպես օրինակ՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն <sup>695</sup>:

Տարեցների մեկուսացման և միայնակության վտանգն առավել շատ առկա է տարեցների խնամքն իրականացնող կազմակերպություններում, քանի որ ընտանիքի, ընկերների և տեղական համայնքի հետ կապը հիմնականում կտրված է նրանց խնամքն իրականացնող հաստատություններում գտնվելու ընթացքում: Սոցիալական շփման տեսանկյունից շատ կարևորվում է ընտանիքի, ընկերների և տեղական համայնքի հետ կապի պահպանումը և այցելուների մուտքը տուն-ինտերնատներ կազմակերպելը: Այնուամենայնիվ նաև կարևոր է այնպիսի զբաղմունքներով ապահովելը, ինչպիսիք են երաժշտություն լսելը և աշխատակիցների օգնությամբ ընթերցանությունը: Միջոցառումների կազմակերպման տեսանկյունից շատ կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ ոչ բոլոր բնակիչներն են ցանկություն հայտնում մասնակցել դրանց: Այն բնակիչները, ովքեր ունեն ֆիզիկական հաշմանդամություն և տեղաշարժվելու հետ կապված դժվարություններ կամ ուղղակի չեն ցանկանում մասնակցել այդ միջոցառումներին՝ նախատեսվում են միջոցառումների հստակ ծրագրեր այդպիսի անձանց համար, որոնք պետք է իրականացվեն՝ նույնիսկ կարճ ժամանակով:

Օրական զբոսանքների հետ կապված, ճիշտ է, հնարավոր չէ բոլոր խնամյալների մասնակցությունը տուն-ինտերնատներից դուրս իրականացվող զբոսանքներին, սակայն շատ կարևոր է կազմակերպել զբոսանքներն այնպես, որ ապահովվի բոլոր խնամյալների համար արտաքին միջավայրի հասանելիությունը, այդ թվում այն տարեցների համար, որոնց խնամքն առավելապես կախված է անձնակազմից: Տուն-ինտերնատների միջազգային նվազագույն չափորոշիչներում շեշտադրվում է նաև տուն-ինտերնատի խնամյալների և նրանց ընտանիքի, ընկերների և տեղական համայնքի հետ կապի կարևորությունը, սակայն միշտ չէ, որ տուն-ինտերնատում ապրող խնամյալներին այցելում են իրենց հարազատներն ու բարեկամները, ուստի այս դեպքում կարևոր է անձնակազմի և խնամյալների միջև հաղորդակցությունը: Տուն-ինտերնատների խնամյալների համար կարևոր է, որ անձնակազմը տրամադրի որոշակի ժամանակ նրանց հետ շփվելու և հաղորդակցվելու, քանի որ շատ խնամյալների համար անձնակազմը միակ հաղորդակցման աղբյուրն է մարդկային շփման, ուստի նրանց սոցիալական և էմոցիոնալ բարեկեցությունը կախված է նաև այդ հանգամանքից<sup>696</sup>:

Պաշտպանի ներկայացուցիչների տուն-ինտերնատներ կատարած այցերի արդյունքում արտաքին աշխարհի հետ ունեցած կապի տեսանկյունից արձանագրվել են խնդիրներ: Մասնավորապես, «Վանաձորի տարեցների տուն» հաստատության պահակակետում տեղադրված է եղել մեկ հեռախոս, որից, ըստ տնօրենի՝ կարող են օգտվել խնամյալները,

<sup>694</sup> Տե՛ս <http://website-pace.net/documents/19855/3313570/20170327-Droitshumains-personnesagees-EN.pdf/a5c148bd-a577-4ffd-a212-c5e5f5b0c3f1>, էջ 10

<sup>695</sup> Տե՛ս [https://www.nichibenren.or.jp/library/ja/kokusai/humanrights\\_library/treaty/data/CESCR\\_GC\\_06e.pdf](https://www.nichibenren.or.jp/library/ja/kokusai/humanrights_library/treaty/data/CESCR_GC_06e.pdf), էջ 6

<sup>696</sup> Տե՛ս [https://www.rqia.org.uk/RQIA/media/RQIA/Resources/Standards/nursing\\_homes\\_standards\\_-\\_april\\_2015.pdf](https://www.rqia.org.uk/RQIA/media/RQIA/Resources/Standards/nursing_homes_standards_-_april_2015.pdf)

սակայն կատարել միայն միջքաղաքային զանգեր: Խնամյալները շենքի ներսում չեն կարող  
օգտվել բջջային հեռախոսից, քանի որ բջջային ծածկույթը գրեթե բացակայում է,  
առկայության դեպքում էլ՝ շատ թույլ է: Փաստորեն, ստացվում է, որ հենաշարժական  
խնդիրներ ունեցող խնամյալներին հասանելի վայրերում և նրանց օգտագործման  
նպատակով հեռախոսներ տեղադրված չեն: Հաստատության վարչակազմի պարզաբանման  
համաձայն՝ տարեցները ցանկության դեպքում օգտվում են պահակակետի հեռախոսից:  
Նշվածը մտահոգիչ է հաստատության խնամյալների մասնավոր և ընտանեկան կյանքի,  
ինչպես նաև հաղորդակցության ազատության տեսանկյունից: Այս իսկ պատճառով  
տարեցները չեն կարողանում մշտական կապի մեջ լինել իրենց ընտանիքի անդամների,  
հարազատների հետ այն դեպքում, երբ մեծամասամբ խնամյալներն այլ մարզերի նախկին  
բնակիչ են, և հարազատները բնակվում են այդ մարզերում: Ավելին, համապատասխան  
կապի բացակայությունը նաև դժվարություններ է ստեղծում իրավասու մարմիններին կամ  
մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հաստատություններ (օրինակ՝ Մարդու  
իրավունքների պաշտպանին) բողոք ներկայացնելու տեսանկյունից: 2018 թվականի  
ընթացում տուն-ինտերնատներ կատարված այցերի ընթացքում Պաշտպանի  
աշխատակազմում ուսումնասիրություն է իրականացվել բողոքների և առաջարկությունների  
համար նախատեսված արկղերի առկայության կապակցությամբ: Մասնավորապես,  
«Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամում ընդհանրապես բացակայում է հաստատված  
բողոքարկման ընթացակարգը, ինչպես նաև բողոքների և առաջարկությունների համար  
նախատեսված արկղը: Երևանի Նորքի տուն ինտերնատի հանգստի սենյակում առկա են  
բողոքների և առաջարկությունների համար նախատեսված արկղեր, սակայն դրանք, ըստ  
խնամյալների՝ ընդհանրապես չեն օգտագործվում:

Նշվածը խնդրահարույց է, քանի որ այդտեղ բնակվող մարդիկ հնարավորություն չեն  
ունենում իրենց ձայնը լսելի դարձնել իրավասու պետական մարմիններին: Ավելին,  
առանձնագրույցները վկայում են նաև, որ ցածր է իրավասու մարմիններին բողոք  
ներկայացնելու հնարավորության վերաբերյալ իրազեկման մակարդակը:

Արտաքին աշխարհի հետ ունեցած կապի տեսանկյունից 2018 թվականի ընթացքում  
Պաշտպանին հասցեագրվել է բողոք Երևանի թիվ 1 տուն-ինտերնատի մոտ ուղևորների  
նստեցման-իջեցման համար նախատեսված և համապատասխան ճանապարհային  
նշաններով կահավորված կանգառի կետ առկա չլինելու, իսկ մոտակա կանգառը մոտ 300  
մետր հեռավորության վրա գտնվելու խնդրի կապակցությամբ, քանի որ կանգառ չլինելու  
հանգամանքն էական դժվարություններ է առաջացնում տուն-ինտերնատի տարեց,  
սակավաշարժ և հաշմանդամություն ունեցող խնամյալների և տուն-ինտերնատի  
աշխատակիցների համար: Նշված խնդրի կապակցությամբ Պաշտպանի որոշմամբ սկսվել է  
սեփական նախաձեռնությամբ հարցի քննարկման ընթացակարգ: Խնդրի վերաբերյալ  
Երևանի քաղաքապետարանից պարզաբանվել է, որ Երևանի թիվ 1 տուն-ինտերնատին  
հարակից ճանապարհահատվածներում չկա կայուն ուղևորահոսք, իսկ Հաղթանակի 6-րդ և  
9-րդ փողոցների խաչմերուկին մոտ գործող հասարակական տրանսպորտի կանգառը տուն-  
ինտերնատից գտնվում է մոտ 300 մետր հեռավորության վրա, ինչը հետիոտնի  
մատչելիության սահմաններում է: Երևանի թիվ 1 տուն-ինտերնատի տրանսպորտային  
սպասարկման վիճակի բարելավման և, մասնավորապես, դրան հարակից փողոցներով  
երթուղիների շահագործման, ինչպես նաև նոր կանգառների սահմանման և կահավորման  
խնդիրների կապակցությամբ տեղեկացվել է, որ դրանք լրացուցիչ կքննարկվեն Երևանի  
հասարակական տրանսպորտի նոր երթուղային ցանցի մշակման աշխատանքների  
ընդհանուր համատեքստում: Նշվածը չի կարող բավարար հիմնավորում համարվել հարցին  
կարգավորում չտալու համար, քանի որ հասարակական տրանսպորտի նոր երթուղային  
ցանցը դեռ մշակման փուլում է և մոտ ապագայում խնդիրը կարգավորում չի ստանա, իսկ

հետիոտնի մատչելիության սահմանների տեսանկյունից անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ պարագայում որպես հետիոտն՝ հաստատության խնամյալների առանձնահատկությունը:

*Հիմք ընդունելով վերը նշվածը՝ առաջարկվում է՝*

1. *ապահովել էքսկուրսիաներ և հաճախակի կազմակերպել հաստատություններից դուրս միջոցառումներին խնամյալների մասնակցությունը,*

2. *հաստատություններում բնակվող խնամյալների՝ իրենց ընտանիքի անդամների և այլ անձանց հետ կապն ապահովելու, այդ թվում՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի թեժ գծին զանգահարելու նպատակով տեղադրել հեռախոս և ապահովել հեռախոսակապի հասանելիությունը,*

3. *հաստատություններում ապահովել համապատասխան տեխնիկական սարքավորումներով կահավորված սենյակում մերձավոր ազգականների հետ տեսազանգ ունենալու հնարավորություն,*

4. *հաստատություններում տեղադրել տարեցների համար մատչելի բողոքարկման արկղ, սահմանել դրանք բացելու, հաշվառելու ընթացակարգ: Նշված արկղերի վրա տեսանելի մասում փակցնել դիմում-բողոքներ գրելու վերաբերյալ տեղեկություններ,*

5. *ապահովել տուն-ինտերնատների տարեց, սակավաշարժ և հաշմանդամություն ունեցող խնամյալների և տուն-ինտերնատների աշխատակիցների համար հասարակական տրանսպորտի մատչելիությունը:*

## **2.5 Խտրականությունը և վատ վերաբերմունքը, այդ թվում՝ բռնությունը տարեցների հանդեպ**

2018 թվականի ընթացքում Պաշտպանի հասցեագրվել են բողոքներ տարեց անձանց խնամքի հաստատություններում բնակության հիմքով խտրականության դեպքերի կապակցությամբ՝ կապված կենսաթոշակների վճարման, ինչպես նաև խնամյալների մահվան դեպքում թաղման նպաստի վճարման հնարավորությունների օրենսդրությամբ նախատեսված չլինելու հետ<sup>697</sup>:

Խտրականության հասկացությանն անդրադարձել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ արձանագրելով, որ խտրականությունը տարբերակված վերաբերմունքի դրսևորումն է համեմատաբար նույն իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ՝ առանց որևէ օբյեկտիվ կամ հիմնավորված պատճառի<sup>698</sup>:

Խտրականության ձևերից մեկն էլ տարեց անձանց նկատմամբ դրսևորվող տարիքային խտրականությունն է: Մոցիալ-տնտեսական (սեռ, զբաղվածություն, ամուսնական կարգավիճակ), սոցիալական գործոնները (աղքատություն, բնակարանային պայմաններ, սոցիալական շփումներ), ինչպես նաև հասարակական գործոնները (կարծրատիպեր, սերունդների միջև անվստահություն) կարող են կապված լինել տարիքային խտրականության հետ, կարող են դիտվել որպես տարեցների նկատմամբ խտրականության ռիսկի գործոններ: Ընդհանրապես, սեռը և սոցիալ-տնտեսական կարգավիճակն ըստ էության կապված են տարիքային խտրականության հետ: Տարբեր ուսումնասիրությունները ենթադրում են, որ խտրականություն ի հայտ է գալիս առողջության վիճակով պայմանավորված և ինչ-որ հանգամանքներից կախում ունենալու դեպքերում<sup>699</sup>: Մտահոգիչ

<sup>697</sup> Մանրամասն տե՛ս սույն հաղորդման «Սոցիալական ապահովության իրավունքներ» բաժնում

<sup>698</sup> Տե՛ս Վիլլիսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Willis v. United Kingdom) գործով 2002 թվականի հունիսի 11-ի վճիռը, գանգատ թիվ 36042/97, կետ 48:

Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, գանգատ թիվ 40094/05, կետ 199:

<sup>699</sup> [https://www.researchgate.net/profile/Wim\\_Heuvel/publication/228160245\\_Discrimination\\_against\\_older\\_people/links/00463531ed151a1592000000/Discrimination-against-older-people.pdf?origin=publication\\_detail](https://www.researchgate.net/profile/Wim_Heuvel/publication/228160245_Discrimination_against_older_people/links/00463531ed151a1592000000/Discrimination-against-older-people.pdf?origin=publication_detail) p 296

է նաև տարեցների նկատմամբ բռնությունը, որը կարող է տարբեր ձևերով արտահայտվել : Բռնությունը կարող է լինել ֆիզիկական, հոգեբանական, հուզական, սեռական կամ ֆինանսական կամ նույնիսկ անտեսվել: Այն կարող է տեղի ունենալ ինչպես տանը, այնպես էլ խնամքն իրականացնող հաստատություններում»<sup>700</sup>:

Մարդու իրավունքների միջազգային չափորոշիչներն ապահովում են ֆիզիկական և մտավոր առողջության ամենաբարձր որակի ստանդարտներ, որոնք պահանջում են ապահովել առողջապահական հաստատությունների, ապրանքների և ծառայությունների մատչելիությունը, հասանելիությունն ու առողջապահական հաստատություններ ընդունելիությունն առանց խտրականության: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն կարևորում է խնամքի ինտեգրված մոդելի կարևորությունը՝ ժամանակին իրականացնելու համար կանխարգելիչ, բուժիչ և վերականգնողական բուժում<sup>701</sup>: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն նաև ուշադրություն է դարձրել տարեցների առողջության ազգային ռազմավարության, առողջապահության մատչելիության, հասանելիության, ընդունելիության և որակի ապահովման պարտավորություններին<sup>702</sup>:

2018 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ տուն-ինտերնատների խնամյալների կողմից խնամյալների միջև հաճախակի անհաշտություններ և վեճեր առաջանալու կապակցությամբ: Մասնավորապես, Երևանի թիվ 1 տուն-ինտերնատի խնամյալներից մեկը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին բազմիցս տեղեկություն է ներկայացրել առ այն, որ բնակվում է մեկ այլ խնամյալի հետ, ով ունի հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ, անհաշտ ու կռվարար է, հաճախակի ստեղծում է անհիմն վեճեր: Ըստ խնամյալի՝ մյուս խնամյալը նախկինում միշտ բնակվել է միայնակ, քանի որ անհնար և վտանգավոր է համատեղ բնակվել վերջինիս հետ: Նշվածի կապակցությամբ վարչակազմը քայլեր չի ձեռնարկել: Ավելին, որոշ խնամյալների պնդմամբ՝ վարչակազմի կողմից վատ վերաբերմունքի դրսևորում է խնամյալներին «պատժելու» համար այլ խնամյալների վերջինիս դեմ տրամադրումը, նույն սենյակում անհաշտ խնամյալների բնակեցումն և այլն:

Նշվածի կապակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պարզաբանումների համաձայն՝ ինչպես տվյալ խնամյալները, այնպես էլ տուն-ինտերնատի մյուս շահառուները, ժամանակ առ ժամանակ ունենում են միջանձնային կոնֆլիկտներ, հիմնականում պայմանավորված թեթև կենցաղային խնդիրներով, որոնք հարթվում են հոգեբանի և սոցիալական աշխատողի համատեղ աշխատանքի արդյունքում: Բացի այդ, ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պարզաբանումների՝ տարիների աշխատանքային փորձը ցույց է տվել, որ հերթական վեճերից հետո տեղափոխությունները երկուստեք բացասաբար են անդրադառնում ինչպես նոր սենյակակցի, այնպես էլ՝ տվյալ սենյակում բնակվողի հոգեվիճակի վրա: Շահառուներն իրենց խնդիրները փորձում են լուծել սենյակից սենյակ տեղափոխվելով, կամ մի քանի

<sup>700</sup> Council of Europe Parliamentary Assembly, Human Rights of Older Persons and their Comprehensive Care, 9 May 2017, p 9.

<sup>701</sup> Office of the High Commissioner for Human Rights: CESCR General Comment No. 14: The Right to the Highest Attainable Standard of Health (Art. 12). August 2000, <https://www.refworld.org/pdfile/4538838d0.pdf> p 1

<sup>702</sup> CESCR: Concluding Observations on the Kingdom of the Netherlands (E/C.12/NDL/CO/4-5), November 2010, [https://www.google.com/search?q=CESCR%3A+Concluding+Observations+on+the+Kingdom+of+the+Netherlands+\(E%2FC.12%2FNLD%2FCO%2F4-5\)%2C+November+2010&rlz=1C1GCEU\\_enAM821AM821&oq=CESCR%3A+Concluding+Observations+on+the+Kingdom+of+the+Netherlands+\(E%2FC.12%2FNLD%2FCO%2F4-5\)%2C+November+2010&aqs=chrome..69i57j69i58.726j0j7&sourceid=chrome&ie=UTF-8](https://www.google.com/search?q=CESCR%3A+Concluding+Observations+on+the+Kingdom+of+the+Netherlands+(E%2FC.12%2FNLD%2FCO%2F4-5)%2C+November+2010&rlz=1C1GCEU_enAM821AM821&oq=CESCR%3A+Concluding+Observations+on+the+Kingdom+of+the+Netherlands+(E%2FC.12%2FNLD%2FCO%2F4-5)%2C+November+2010&aqs=chrome..69i57j69i58.726j0j7&sourceid=chrome&ie=UTF-8) p 8



տեղանոց սենյակում առանձին ապրելու ցանկություն հայտնելով, այնինչ տուն-ինտերնատում մեկ տեղանոց սենյակներ չկան:

Մտահոգիչ է այն, որ տարբեր պատճառներով պայմանավորված հաճախակի միջանձնային վեճերն ու կոնֆլիկտները (որոնք չեն հարթվում հոգեբանի և սոցիալական աշխատողի համատեղ աշխատանքի արդյունքում) կարող են լուրջ վտանգ լինել խնամյալների հոգեկան և ֆիզիկական առողջության համար, ինչպես նաև հաստատությունում ստեղծել բարոյահոգեբանական, անառողջ մթնոլորտ:

Այսպիսով, հաստատության աշխատակիցների վերապատրաստումների բացակայությունը կարող է հանգեցնել կլինիկական բուժման ոչ պիտանի լինելուն, քանի որ աշխատակիցներն ունեն քիչ գիտելիքներ տարեցների հատուկ խնամքի վերաբերյալ<sup>703</sup>: Վերապատրաստումների կազմակերպումը շատ կարևոր է հատկապես տուն-ինտերնատներում տարեցների խնամքով զբաղվող աշխատակիցների համար: Այսպիսով, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պարզաբանումների համաձայն՝ 2018 թվականի ընթացքում բոլոր տուն-ինտերնատների աշխատակիցների համար պարբերաբար իրականացվել են վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներ, վերապատրաստման բոլոր մասնակիցները ստացել են համապատասխան սերտիֆիկատներ: Մասնավորապես, վերապատրաստումներն անց են կացվել հետևյալ թեմաներով՝ «Անձի և տարիքային հոգեբանություն» (հոգեբաններ), «Գնումների կարգավորման գործընթացները և ընթացակարգերը» ծրագրով (իրավախորհրդատու, պահեստապետ, «Բուժքրոջ դերը գերիատրիայում» (ավագ բուժքույրեր, բուժքույրեր), Գործավարության կանոնակարգումն ու փաստաթղթաշրջանառության կազմակերպումը» (գործավարներ, կադրերի գծով տեսուչներ), «Նոր ստանդարտներով հաշվապահական հաշվառման վարում» (գլխավոր հաշվապահներ, հաշվապահներ), «Այցիայների հիվանդություն» – (սոցիալական աշխատողներ, հոգեբաններ, ավագ բուժքույրեր, բուժքույրեր), «Հաշմանդամություն ունեցող անձանց ծառայությունների մատուցման առանձնահատկությունները» (սոցիալական աշխատողներ, հոգեբաններ, բուժքույրեր):

*Հաշվի առնելով վերոնշյալը՝ առաջարկվում է՝*

- 1. ուժեղացնել վերահսկողությունն աշխատակիցների և խնամյալների միջև առաջացող անհաշտությունները բացահայտելու և դրանց լուծում տալու ուղղությամբ,*
- 2. սոցիալական հաստատություններում բնակվող անձանց կենսապայմանները բարելավելու և խնամքն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով ապահովել տարեցների խնամքի հարցերով զբաղվող սոցիալական հաստատությունների աշխատակիցների վերապատրաստումների շարունակականությունն ու հետևողականությունը,*
- 3. խնամյալների միջև հաճախակի առաջացող անհաշտություններն ու վեճերը լուծելու նպատակով ապահովել պատշաճ վերապատրաստումներ անցած սոցիալական աշխատողների և հոգեբանների ներգրավվումը:*

### **3. Տարեցների եկամուտների պաշտպանությունը**

Տարեցների իրավունքների պաշտպանությանը վերաբերող կարևոր խնդիրներից է տարեցների աղքատությունը: Տարեցների պատշաճ կենսամակարդակի ապահովումը կարևոր երաշխիք է նրանց մյուս բոլոր իրավունքների պաշտպանությունն ապահովելու

<sup>703</sup>Տե՛ս

[https://www.researchgate.net/profile/Wim\\_Heuvel/publication/228160245\\_Discrimination\\_against\\_older\\_people/links/00463531ed151a1592000000/Discrimination-against-older-people.pdf?origin=publication\\_detail](https://www.researchgate.net/profile/Wim_Heuvel/publication/228160245_Discrimination_against_older_people/links/00463531ed151a1592000000/Discrimination-against-older-people.pdf?origin=publication_detail) (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ),

համար: Հետևաբար, թե՛ ներպետական և թե՛ միջազգային իրավական ակտերով պետք է կարևորվի տարեց անձանց սոցիալական ապահովության և աջակցության իրավունքների ապահովումը: Աղքատությունն ազդում է տարեցների իրավունքների վրա բազմաթիվ պատճառներով: Բազմաթիվ տարեցներ աշխարհում չունեն կենսաթոշակների կամ համապատասխան սոցիալական օգնություն ստանալու հնարավորություն, ինչպես նաև չունեն կանոնավոր եկամուտ: Նվազագույն եկամտի պակասը շատ տարեցների և նրանց ընտանիքներին հանգեցնում է աղքատության<sup>704</sup>:

Տարեցների եկամուտների պաշտպանությանն առնչվող խնդիր Պաշտպանն արձանագրել է «Վանաձորի տարեցներ տուն» հիմնադրամ կատարված այցի շրջանակներում: Մասնավորապես, տնօրենի հետ առանձնազրույցի ընթացքում պարզ է դարձել, որ կենսաթոշակառու խնամյալների հետ կնքվում են անժամկետ պայմանագրեր սոցիալական աջակցության տրամադրման և «Վանաձոր տարեցների տուն» հաստատությունում բնակվելու մասին: Կնքվող պայմանագրի համաձայն՝ հիմնադրամը պարտավորվում է հոգ տանել խնամյալի մասին՝ տրամադրելով սոցիալական աջակցություն և թույլատրելով բնակվել տարեցների տանը: Միաժամանակ հաստատությունը խնամյալի հետ կնքում է նվիրաբերության պայմանագիր, որով խնամյալը պարտավորվում է իր կենսաթոշակի որոշակի մասը (չափը որոշում է հաստատության ղեկավարությունը) նվիրաբերել հաստատությանը, իսկ խնամյալին հասանելիք կենսաթոշակի գումարը սահմանված է ոչ պակաս, քան հիմնական կենսաթոշակի չափն է (16000 ՀՀ դրամ): Ըստ պայմանագրի՝ Հաստատությունում բավարարվում են ծերերի հիմնական պահանջումները (սնունդ, հագուստ, կացարան, բուժօգնություն, հիմնական ընդհանուր զբաղվածություն և այլն): Պայմանագրի համաձայն՝ նվիրաբերության գումարները փոխանցվում Հաստատության բանկային հաշվին: Նվիրաբերությունը կարող է տրամադրվել նաև կանխիկ: Տրամադրված նվիրաբերության գումարները ծախսվում են տարեցների տան պահպանման համար, ինչպես նաև այլ խնամյալների կամ հենց իր՝ խնամյալի համար:

Գործնականում տարածված այս պրակտիկան խնդրահարույց է այն տեսանկյունից, որ չկան համապատասխան հատուկ օրենսդրական կարգավորումներ գործընթացի վերաբերյալ: Այսպես, եթե համեմատություն անցկացնենք բնակչության սոցիալական պաշտպանության պետական կազմակերպությունում ապրող անձին նշանակված կենսաթոշակի վճարման սահմանված կարգի հետ, ապա համաձայն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի՝ բնակչության սոցիալական պաշտպանության պետական կազմակերպությունում (ծերանոցում) ապրող կենսաթոշակառուին վճարվում է նշանակված կենսաթոշակի աշխատանքային մասը, իսկ այդ կազմակերպությունում ապրող՝ զինվորական կենսաթոշակ ստացողներին՝ նշանակված կենսաթոշակի 50 տոկոսը: Այսինքն՝ վերը նշված կազմակերպություններում ապրող բոլոր կենսաթոշակառուներին չի վճարվում հիմնական կենսաթոշակի մասը, սակայն վճարվում է յուրաքանչյուրի աշխատանքային ստաժի հաշվառմամբ կենսաթոշակի հասանելիք մասը: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ, թեև «Վանաձորի տարեցնի տուն» հիմնադրամը հանդիսանում է ոչ պետական հաստատություն, և «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի պահանջը վերաբերում է բնակչության սոցիալական պաշտպանության պետական հաստատություններում խնամվող անձանց, սակայն, քանի որ խոսքը գնում է հասարակության սոցիալական խավ հանդիսացող անձանց սոցիալական ապահովության իրավունքի պատշաճ իրականացմանը, գտնում ենք, որ վերահսկողական մեխանիզմներ ներդնելու պայմաններում անհրաժեշտ է նաև վերահսկողություն իրականացնել նշվածի կապակցությամբ:

<sup>704</sup> St' u <https://social.un.org/ageing-working-group/documents/fourth/Rightsfolderpersons.pdf> p 18 (2019 թվականի մարտի 29-ի դրությամբ):

Խնդրահարույց է նաև բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում ապրող խնամյալների մահվան դեպքում թաղման նպաստի վճարման հարցը: «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի համաձայն՝ կենսաթոշակառուի մահվան դեպքում, ինչպես նաև հաշմանդամ ճանաչված անձի՝ հաշմանդամության վերափորձաքննության ժամկետը լրանալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, վերափորձաքննության չներկայանալու և մահանալու դեպքում հուղարկավորությունը կատարած անձին նշանակվում և վճարվում է թաղման նպաստ: «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նպաստառուի մահվան կամ հաշմանդամության նպաստի իրավունք ունեցող անձի հաշմանդամության վերափորձաքննության ժամկետը լրանալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, վերափորձաքննության չներկայանալու և նրա մահանալու դեպքում հուղարկավորությունը կատարած անձին նշանակվում և վճարվում է թաղման նպաստ: Նույն օրենքով սահմանված է, որ բնակչության սոցիալական պաշտպանության պետական հաստատությունում բնակվող անձին ծերության կամ հաշմանդամության կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստ չի նշանակվում և չի վճարվում: Այսպես, ոլորտը կարգավորող օրենսդրության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ թաղման նպաստը ենթակա է վճարման կենսաթոշակառուի կամ նպաստառուի մահվան դեպքում, միաժամանակ եթե մարդը բնակվում է բնակչության պաշտպանության հաստատությունում և չունի կենսաթոշակի իրավունք, ինչպես նաև վերը նշված կարգավորումների ուժով չի ստանում նաև նպաստ, հետևաբար վերջինիս մահվան դեպքում չի վճարվում թաղման նպաստ: Այսպիսով, բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպությունում ապրող կենսաթոշակառուի մահվան դեպքում թաղման նպաստ չի վճարվում, եթե հուղարկավորությունը կատարում է այդ կազմակերպությունը: Մինչդեռ բնակչության սոցիալական պաշտպանության պետական հաստատությունում բնակվող ծերության կամ հաշմանդամության կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստ չստացող անձին մահվան դեպքում թաղման նպաստ չի վճարվում, երբ հուղարկավորությունը չի կատարել այդ կազմակերպությունը: Խնդրահարույց է նաև կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց մահվան դեպքում հուղարկավորություն կատարած անձանց թաղման նպաստի վճարման դեպքերը: 2018 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքներով բարձրացվել է օրենսդրական որոշ կարգավորումների արդյունքում հուղարկավորություն կատարած անձին թաղման նպաստ չվճարելու վերաբերյալ խնդիրը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2004 թվականի մարտի 23-ի «Պետության լրիվ խնամքի տակ գտնվող և խնամակալական կազմակերպություններում ապրող կենսաթոշակառուներին կենսաթոշակը վճարելու կարգը սահմանելու մասին» թիվ 34-Ն հրամանով հաստատված հավելված 2-ով սահմանված է խնամակալական այն կազմակերպությունների ցանկը, որտեղ ապրող կենսաթոշակառուներին կենսաթոշակ է վճարվում: Ուշագրավ է, որ այդ ցանկում ներառված չեն, օրինակ՝ «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» և «Չորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունները: Մտահոգիչ է, որ այդ ՊՈԱԿ-ները չեն ներառվել նաև ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 665-Ն որոշմամբ հաստատված հավելված 9-ի 4-րդ բաժնով սահմանված այն կազմակերպությունների ցանկում, որտեղ ապրող կենսաթոշակառուներին կենսաթոշակ է նշանակվում և վճարվում: Փաստորեն, եթե կենսաթոշակառուն բնակվում է վերը նշված ցանկում չնախատեսված կազմակերպությունում, ապա վերջինիս կենսաթոշակ չի վճարվում: Սա իր հերթին հանգեցնում է մահվան դեպքում թաղման նպաստի չվճարման:

Այսպես, ընթացիկ տարում Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով դիմողը տեղեկացրել է, որ քույրը 2000 թվականին ընդունվել է «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ, վերջինս 2008 թվականին ճանաչվել է 2-րդ խմբի անժամկետ հաշմանդամ, որի հիման վրա ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի սոցիալական ապահովության տարածքային բաժինը նրան նշանակել է հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ, որը չի վճարվել նրան: Դիմողի քույրը 2017 թվականի սեպտեմբեր ամսին մահացել է, հուղարկավորությունը կատարել է դիմողը, որից հետո վերջինս դիմել է թաղման նպաստ ստանալու պահանջով, սակայն մերժվել է՝ պատճառաբանությամբ, որ դիմողի քույրը մահվան պահին կենսաթոշակ ստանալու իրավունք չի ունեցել:

Բարձրացված հարցի ընդհանուր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերոգրյալի հիմքում այլ խնդիր է ընկած, որն առնչվում է 2017 թվականի դեկտեմբերի 23-ին օրինական ուժի մեջ մտած «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-200-Ն օրենքով կատարված փոփոխությանը, որով ուժը կորցրած է ճանաչվել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը, որի համաձայն՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է աշխատանքային և զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող կենսաթոշակատուին կամ նրա փոխարեն կենսաթոշակն ստանալու իրավունք ունեցող անձին *հինգ տարի անընդմեջ կենսաթոշակ չվճարելու դեպքում*: ՀՀ սահմանադրական դատարանի 2016 թվականի նոյեմբերի 29-ի թիվ ՍԴՈ-1325 որոշմամբ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը՝ իրավակիրառ պրակտիկայում դրան տրված իրավական բովանդակության շրջանակներում ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ եթե կենսաթոշակ ստանալու իրավունքը հինգ տարի անընդմեջ կենսաթոշակ չվճարելու հիմքով դադարեցվել է մինչև 2017 թվականի հոկտեմբերի 1-ը, ապա անձի մահանալու դեպքում հուղարկավորությունը կատարած անձին թաղման նպաստ չի նշանակվում (չի վճարվում):

Փաստորեն, 2008 թվականին նշանակված հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակը դիմողի քրոջը չի վճարվել, քանի որ վերջինս գտնվել է հաստատությունում, որը նախատեսված չի եղել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2004 թվականի մարտի 23-ի թիվ 34-Ն հրամանով և ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 665-Ն որոշմամբ հաստատված հավելված 9-ի 4-րդ բաժնով սահմանված կազմակերպությունների ցանկում: «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող կարգավորումների ուժով դիմողի քրոջ կենսաթոշակ ստանալու իրավունքը 2013 թվականից դադարեցվել է նրան 5 տարի անընդմեջ կենսաթոշակ չվճարելու պատճառով: Արդյունքում, մահվան օրվա դրությամբ՝ մինչև 2017 թվականի հոկտեմբերի 1-ը, դիմողի քույրը կենսաթոշակատու չի համարվել, որով պայմանավորված էլ՝ դիմողին չի վճարվել թաղման նպաստ:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝*

*1. սահմանել կարգավորումներ տարեցների խնամքի ոչ պետական հաստատություններում կենսաթոշակների վճարման վերաբերյալ,*

*2. թաղման նպաստի վճարման դեպք սահմանել բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների բոլոր խնամյալների մահվան դեպքում, երբ հուղարկավորությունը չի կատարել այդ հաստատությունը:*